ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

ՀԱՏԸՆՏԻՐ

Հրատարակիչ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ

«Ամարաս»
Երեւան, 2006թ.

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ

(կենսագրական ակնարկ)

«Ապագա պատմաբանը Դիոգենեսի պես լապտեր վերցրած պետք է քրքրե մեր ներկա դարի պատմությունը, որ գտնե այն գաղափարական գործիչներին, որոնց գործը նմանվում է հին հեքիաթների դարու հերոսների գործունեությանը: Հայ ներկա իրականության մեջ ապագա անաչառ պատմաբանը շատ քչերին կգտնի, որոնց անունը արժանի կլինի հավերժացնելու... Անշուշտ ու անկասկած, դրանց թվում կլինի եւ Գարեգին Նժդեհի անունը...»:

«Սյունիք», Գորիս, 1920թ., թիվ 7

Հայոց պատմության ալեծուփ օվկիանում, մեր նվիրական հերոսների շարքում, իբրեւ գաղափարական եւ կազմակերպական առաջնորդ, վեր է հառնում Գարեգին Նժդեհի կերպարը:

Նժդեհը մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվել են զինվորականն ու մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը եւ որն իր՝ հիրավի պատմաստեղծ կյանքով, հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքը:

Նժդեհը (Գարեգին Տեր-Հարությունյան) ծնվել է 1886թ. հունվարի 1-ին, Նախիջեւանի գավառի Կզնութ գյուղում: Մանուկ հասակում կորցրել է հորը (հայրը՝ Եղիշեն, գյուղի քահանան էր) եւ մնացել մոր՝ Տիրուհու խնամքին: Ընտանիքում եղել են չորս երեխա, ինքը փոքրն էր:

Սկզբնական կրթությունը ստացել է Նախիջեւան քաղաքի ռուսական դպրոցում, ապա՝ Թիֆլիսի ռուսական գիմնազիայում, որտեղ սովորելու ընթացքում էլ, 17 տարեկան հասակից, միացել է հայ ազատագրական շարժմանը: Այնուհետեւ անցել է Պետերբուրգ եւ երկու տարի տեղի համալսարանի իրավաբանական բաժնում սովորելով՝ լքել է համալսարանն ու ամբողջովին նվիրվել հայ հեղափոխության գործին՝ ցարիզմի ու սուլթանականության դեմ: 1906թ. անցնում է Բուլղարիա, ուր Ռոստոմի աջակցությամբ եւ մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարների միջնորդությամբ ընդունվում է Սոֆիայի սպայական դպրոցը եւ այն հաջողությամբ ավարտելով՝ 1907թ. վերադառնում է Կովկաս:

1907-1908թթ. մտնում է Հ.Յ.Դ. շարքերը եւ, իբրեւ կուսակցական նշանավոր գործիչ Սամսոն Թադեւոսյանի օգնական, մասնակցություն բերում պարսկական հեղափոխական շարժմանը: Զենք եւ ռազմամթերք

տեղափոխելու համար Նժդեհը 1909թ. վերադառնում է Կովկաս եւ ձերբակալվում ցարական իշխանությունների կողմից: Բանտերում՝ Ջուլֆայից մինչեւ Պետերբուրգ, մնացել է ավելի քան երեք տարի, ապա՝ անցել Բուլղարիա:

Երբ 1912թ. սկսվեց Բալկանյան առաջին պատերազմը, հայերը Թուրքիայի դեմ կռվելու համար (հանուն Մակեդոնիայի եւ Թրակիայի ազատագրության), բուլղարական բանակի կողքին ստեղծեցին կամավորական վաշտ, որի ղեկավարները եղան Նժդեհն ու Անդրանիկը: Այդ պատերազմում Նժդեհը վիրավորվել է: Հայկական վաշտը աչքի ընկավ մի շարք հաղթական կռիվներով եւ 1913թ. զորացրվեց՝ հրաժարվելով մասնակցել բալկանյան ժողովուրդների ներքին կռիվներին (իմա՛ Բալկանյան 2-րդ՝ թուրքանպաստ պատերազմին):

Բալկանյան պատերազմի տարիներին, իրավասությունների հետ կապված, ցավալի վեճ տեղի ունեցավ հայկական վաշտի երկու ղեկավարների միջեւ, որի արդյունքում վաշտը բաժանվեց Նժդեհի ու Անդրանիկի կողմնակիցների: Բարեբախտաբար, վաշտի զորացրումից շատ չանցած, Գ. Նժդեհը, 1913թ. հոկտեմբերին, Հ.Յ.Դ. Բալկանյան Կենտրոնական կոմիտեին ուղղեց մի գրություն, որով փակված հայտարարեց իր ու Անդրանիկի միջեւ ամիսներ տեւած անախորժ վեճը (1):

Առաջին աշխարհամարտի նախօրյակին, «ներման» արժանանալով ցարական կառավարության կողմից, Նժդեհը վերադառնում է Կովկաս՝ Թուրքիայի դեմ մղվելիք պատերազմին մասնակցելու պայմանով: Կռիվների սկզբնական շրջանում եղել է հայկական կամավորական երկրորդ գնդի փոխհրամանատարը, վերջին շրջանում՝ ղեկավարել հայ-եզիդական առանձին մի զորամաս:

1917թ. սակավաթիվ ուժերով օգնության է հասել Կողբին եւ փրկել տեղի հայությանը կոտորածից:

1918թ. գարնանը վարել է Ալաջայի (բնակավայր Անիի շրջակայքում) կռիվները, որոնցով կարելիություն է ընձեռվել նահանջող հայկական զորամասերին՝ անկորուստ անցնելու Ալեքսանդրապոլ. միաժամանակ, իր մարդկանցով ապահովել է Նիկողայոս Մառի պեղումների արդյունքը հանդիսացող արժեքավոր հնություններ փոխադրումը Անիից:

Մոտենում էր 1918թ. մայիսը, վճռվում էր հայոց ճակատագիրը: Ալեքսանդրապոլում կռվի բռնվելով թուրքական զորքերի դեմ՝ Նժդեհն իր խմբով նահանջում է Ղարաքիլիսա: Այստեղ էին նահանջել խուճապի մատնված բազմահազար հայ փախստականներ. տեղի ժողովուրդը նույնպես տագնապի մեջ էր: Ահա՛ այս օրհասական պահին, երբ տիրում էր համատարած հուսալքում, լսվում է Նժդեհի ռազմաշունչ, ամենափրկիչ

ձայնը. Դիլիջանի եկեղեցու բակում նրա արտասանած ճառը հոգեփոխեց հուսալքված, բայց ոգեշունչ խոսքի կարոտ հայերին եւ նրանց առաջնորդեց դեպի սրբազան ճակատամարտ: *«Դեպի՛ ճակատ, այնտե՛ղ է մեր փրկությունը,*- կհնչեր Նժդեհի հուժկու, վճռական եւ ինքնավստահ ձայնը» (2): Ղարաքիլիսայի եռօրյա հերոսականով հայությունը հաստատեց իր հարատեւելու կամքը, եւ այդ հավաքական կամքի զորացման գործում, անշուշտ, անուրանալի է Նժդեհի դերը: Ղարաքիլիսայում վարած կռիվների համար (որոնց ընթացքում վիրավորվել է) Նժդեհն արժանացել է ամենաբարձր քաջության շքանշանի:

Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո, 1918թ. վերջին, Նժդեհը ՀՀ կառավարության կողմից նշանակվում է Նախիջեւանի գավառապետ, իսկ 1919թ. օգոստոսից՝ Կապանի, Արեւիքի եւ Գողթանի (Կապարգողթ) ընդհանուր հրամանատար:

Այստեղ հարկ ենք համարում, թեեւ ընդհանուր գծերով, բայց մի փոքր հանգամանալից, անդրադառնալ այն հերոսականին, որ վարեց Նժդեհը 1919-1921թթ., Զանգեզուրի լեռներում, որը նրա կյանքի եւ հայոց նորագույն պատմության ամենափառավոր էջերից է (3):

* * *

Առանց դրսի օժանդակության, ապավինած հայրենի լեռներին ու սեփական ոգու զորությանը՝ Սյունիքի հայությունը, Նժդեհի ղեկավարությամբ, վարեց իր հաղթական դյուցազնամարտը: Լեռնահայության դիմումներին՝ որեւէ կերպ օգնելու, ՀՀ կառավարությունը, բացի մեկումեջ արվող քաջալերանքի կամ համակրանքի խոսքերից, ո՛չ մի կերպ չարձագանքեց:

Իսկ Նժդեհը երբեմն ստիպված էր լինում չհնազանդվել վերին իշխանության հրամաններին: Մասնավորապես, երբ Խատիսյանի կառավարության կողմից նրան հրամայված էր գաղթեցնել պաշարված Գողթանի հայությունը, Նժդեհը մերժեց այն եւ, փոխարենը, սրբեց ու տեղահանեց գավառի թուրքական բնակավայրերը (4): Ավելին, 1920 թվականի օգոստոսին ՀՀ զինվորական նախարար Ռուբեն Տեր-Մինասյանը, համաձայն բոլշեւիկների հետ կնքված զինադադարի (իմա՛ 1920թ. օգոստոսի 10-ին Թիֆլիսում Բորիս Լեգրանի ու Արշակ Ջամալյանի միջեւ կնքված համաձայնագիրը, որով ՀՀ-ն համաձայնություն էր տալիս Կարմիր բանակի մուտքին Զանգեզուր, Ղարաբաղ եւ Նախիջեւան), Դրոյի միջոցով հեռագրում էր Նժդեհին՝ թողնել Կապանն ու Գենվազը եւ անցնել Երեւան (5): Բայց Նժդեհը, չընդունելով ՀՀ զինվորական նախարարի՝ Զանգեզուրը թողնելու հրամանը եւ մերժելով Դրոյի առաջարկը՝ անցնել Երեւան ապաքինվելու (Գորիսի ձորում վիրավոր-

վել էր), նախընտրեց մնալ Սյունիքում եւ մենակ չթողնել լեռնահայությանը:

Այդ ծանր օրերին էր, որ Նժդեհը հղացավ եւ գործի դրեց Դավիթ-բեկյան Ուխտերը: 1920թ. օգոստոսի 25-ին, Կապանի Կավարտ գյուղի եկեղեցում, Նժդեհի զինվորներն ուխտեցին Դավիթ-Բեկի անունով՝ *«հավատարիմ մնալ հայրենի երկրի ազատության, իրենց հրամանատար Նժդեհին եւ կռվել մինչեւ վերջին շունչը»* (6): Այսպես ծնունդ առան Դավիթբեկյան Ուխտերը, որոնց նշանաբանն էր. *«Հանուն հայրենիքի՝ Դավիթ Բեկաբար»*:

Բացահայտած թուրք-բոլշեւիկյան միացյալ դավադրությունն ու չընդունելով ՀՀ կառավարության կրավորական կեցվածքը, որը Մոսկվայի ներկայացուցիչ Լեգրանի հետ կնքած վերոհիշյալ համաձայնագրով, փաստորեն, Զանգեզուրը Ադրբեջանին հանձնելու նախաքայլ էր անում (7), Սյունիքը շարունակեց կռիվը եւ Հայաստանի խորհրդայնացումից հետո, 1920թ. դեկտեմբերին, իրեն հռչակեց ինքնավար:

1921թ. հունվարին Դրոն Բաքվից մի հեռագիր հղեց Նժդեհին, առաջարկելով նրան՝ թույլ տալ Զանգեզուրի խորհրդայնացումը, հավատացնելով եւ վստահեցնելով, որ այդպիսով Մոսկվայի առաջիկա կոնֆերանսում, ուր լուծվելու էին նաեւ վիճելի հողային հարցեր, Խորհրդային Ռուսաստանը բարյացակամ կլինի դեպի Հայաստանը եւ կպաշտպանի հայ աշխատավորության շահերը (8): Այս անգամ եւս Նժդեհը, իբրեւ հեռատես քաղաքագետ, չհեռացավ Սյունիքից եւ շարունակեց մաքառել:

1921թ., Գորիսում լույս տեսավ Նժդեհի **«Խուստուպյան կանչեր»** փոքրածավալ գրքույկը, որը պարունակում է կոչեր՝ լեռնահայությանը եւ պատվիրաններ՝ իր զինվորներին:

Իր զինվորական հմտությամբ, կազմակերպչական տաղանդով եւ ոգեշունչ խոսքով Նժդեհին հաջողվեց ստեղծել «ժողովրդական կուռ բանակ մը, որ պատրաստ էր իր հրամանատարի ձեռքի մեկ շարժումին անսալով՝ կրակի մեջն անգամ նետվելու» (9): Նժդեհն էր, որ պարտության դառնությունը ճաշակել տվեց Դենիկինի, Կոլչակի ու Վրանգելի բանակները ջարդած եւ «անպարտելի» հռչակված 11-րդ Կարմիր բանակի հեծելազորի պետ Կուրոչկինին:

Նույնիսկ Փետրվարյան ապստամբության պարտությունը եւ դրա հետեւանքով՝ 12 հազար գաղթականության (որից 4 հազարը՝ զորք) նահանջը,- որոնք զգալիորեն ազդեցին լեռնահայության բարոյա-հոգեբանական վիճակի վրա,- չընկճեցին Սյունիքը, եւ նա շարունակեց իր հաղթական կռիվները: 1921թ. ապրիլին հռչակվեց Լեռնահայաստանի Հանրապետություն՝ սպարապետ Նժդեհի վարչապետությամբ:

Հունիսի 1-ին, Զանգեզուր անցած ՀՀ կառավարության նախաձեռնությամբ, Լեռնահայաստանը հայտարարվեց Հայաստան՝ Սիմոն Վրացյանին նշանակելով վարչապետ (Նժդեհը մնում էր իբրեւ սպարապետ): Նոր կառավարությունը թույլ տվեց մի շարք կոպիտ սխալներ, որոնց մեջ ամենից ճակատագրականը եղավ երեք հազար թաթար-թուրքերի՝ իբրեւ քոչվոր, իսկ իրականում՝ որպես ծպտյալ դավադիրներ, Սիսիան ազատ մուտքի արտոնումը: Իսկ Երեւանից նահանջած զորքը կամավոր անձնատուր եղավ կարմիրներին:

Այս պայմաններում, մի կողմից՝ Վրաստանի ու Հայաստանի բոլշեւիկացումը, Արարատյան գաղթականության՝ դեպի Սյունիք նահանջը (մասնավորապես, նահանջող մտավորականության եւ երիտասարդության վաղաժամ անցնելը Պարսկաստան), որոնք բարոյալքիչ ու հոռի ազդեցություն ունեցան լեռնաշխարհի հայության վրա, մյուս կողմից՝ պարենի ու հացահատիկի չգոյությունը, վարչական եւ զինվորական մարմինների միջեւ առաջ եկած անհամաձայնությունները, միաժամանակ՝ խուսափելու համար ավելորդ հալածանքներից, որին կարող էր ենթարկվել Խորհրդային Հայաստանի հայությունը եւ հաշվի առնելով, որ Հայաստանի բոլշեւիկյան ղեկավարությունն իր 1921թ. հունիսի հռչակագրով Սյունիքը հայտարարում էր կցված Մայր երկրին, Լեռնահայաստանը հուլիսին տեղի տվեց խորհրդայնացման առաջ: Թողնելով Զանգեզուրը՝ Նժդեհը հրաժեշտից առաջ հավաստեց լեռնահայությանը, որ ինքն ընդմիշտ չի՛ հեռանում եւ պիտի վերադառնա, եթե Երեւանի փոխարեն Բաքուն լինի Սյունիքի տերը: Իսկ Խորհրդային Հայաստանի Հեղկոմին ուղղած իր դիմումը հաղթական սպարապետն ավարտում էր սաստող տողերով. *«Դուք գիտեք, որ ցանկության դեպքում ես միշտ էլ հնարավորություն կունենամ մի քանի տասնյակ զինվորներով վերագրավել Լեռնահայաստանը: Որպեսզի այս երկրի աշխատավոր գյուղացիությունը ստիպված չլինի մեկ էլ ինձ օգնության կանչելու, աշխատեք բավարարել հայ գյուղացիության եւ նրա մտավորականության արդար պահանջը»* (10):

Երկու տարվա կռիվների ընթացքում, թշնամու 15 հազար սպանվածի դիմաց Սյունիքը տվեց ընդամենը մի քանի տասնյակ զոհ, իսկ մոտ 200 գյուղեր մաքրագործվեցին թուրքերից ու վերադարձվեցին հայերին:

Շնորհիվ Լեռնահայաստանի հերոսամարտի՝ հնարավոր եղավ՝

ա) փրկել լեռնահայությանը կոտորածից,

բ) Սյունիքը կցել Մայր հայրենիքին՝ մահացու անդամահատումից զերծ պահելով Հայաստանը (11),

գ) հոգեբանորեն ու ռազմագիտորեն հնարավոր դարձնել Փետրվարյան ապստամբությունը (12),

դ) ապահովել հայ մտավորականության եւ մարտական ուժերի նահանջն ու անցումը Պարսկաստան:

Եվ այս ամենը, հիմնականում, շնորհիվ Նժդեհի անհատականության:

* * *

Այսպիսով, 1921թ. հուլիսին Նժդեհը թողնում է Զանգեզուրը եւ անցնում Թավրիզ: Այստեղ լրջորեն սրվում են հարաբերությունները նրա եւ Հ.Յ.Դ. Բյուրոյի միջեւ, ինչը սկիզբ էր առել դեռեւս Սյունիքի կռիվների շրջանում: Արաքսի պարսկական ափին գտնվելու ժամանակ Հ.Յ.Դ. որոշ ղեկավար անդամներ (այդ թվում՝ պարենավորման նախարար Հակոբ Տեր-Հակոբյանը) Նժդեհի ներկայությամբ ծեծի ենթարկվեցին, գնդակահարվեց Ասլանյան ազգանունով դաշնակցական մի սպա: Այս կապակցությամբ (ու մի շարք այլ պատճառներով, որոնց թվում, ով զարմանք, Նժդեհին մեղադրում էին նաեւ Լեռնահայաստանի անկումը արագացնելու մեջ), Թավրիզում, Նժդեհը Հ.Յ.Դ. Բյուրոյի կողմից կուսակցության Գերագույն Դատական Ատյանի մոտ պատասխանատվության կանչվեց (13): Թեեւ Նժդեհը դատարանին (նաեւ՝ ՀՀ Նախարարական խորհրդին ու Հ.Յ.Դ. Ատրպատականի ԿԿ-ին) մանրամասն բացատրագիր ներկայացրեց Լեռնահայաստանի անկման պատճառների մասին (14), սակայն, 1921թ. սեպտեմբերին կուսակցական դատարանը, Ս. Վրացյանի առաջարկով, վճռեց «հեռացնել Գ. Նժդեհին Դաշնակցության շարքերից եւ ներկայացնել նրա գործը կուսակցության ապագա 10-րդ Ընդհանուր Ժողովին» (15):

1925թ., Հ.Յ.Դ. 10-րդ Ընդհանուր ժողովի կողմից Նժդեհը վերականգնվում է կուսակցության շարքերում (16):

Թավրիզում եղած ժամանակ անգլիացիները Նժդեհին առաջարկում են վերադառնալ Հայաստան եւ այնտեղ ապստամբություն բարձրացնել (այդ ժամանակ Լենքորանում տեղի բնակչությունն ապստամբել էր խորհրդային իշխանության դեմ), որը Նժդեհի կողմից մերժվում է:

Թավրիզում մոտ չորս ամիս գաղտնի ապրելուց հետո Նժդեհը մեկնում է Բուլղարիա եւ հաստատվում Սոֆիայում: Այստեղ, հավանաբար 1922թ., նա ամուսնանում է էփիմե անունով հայուհու հետ (17):

1922թ. լինելով Բուխարեստում՝ այնտեղ գտնվող Վարդան Գեւորգյանին առաջարկում է իր (իմա՛ Նժդեհի) տրամադրության տակ գտնվող նյութերի հիման վրա գրել «Լեռնահայաստանի հերոսամարտը», որը գրքույկով լույս տեսավ 1923թ. (18):

1923թ. կրկին լինելով Բուխարեստում (19)՝ Նժդեհը տեղի «Նոր Արշալույս» թերթում հանդես է գալիս «Իմ խոսքը - Թե ինչո՞ւ զենք բարձրացրի խորհրդային զորքերի դեմ» հոդվածաշարով (20):

Այդ տարիներին Նժդեհը հանգամանալից անդրադառնում է Սյունիքի կռիվների պատմությանը՝ 1923-1925թթ. ընդարձակ հոդվածաշարով հանդես գալով Բոստոնի «Հայրենիք» ամսագրում: 1924-1925թթ. նա հրապարակումներ է ունենում Պլովդիվում լույս տեսնող «Հայաստան» դաշնակցական թերթում: Մասնավորապես, 1924թ. այստեղ տպագրվում են առանձին գլուխներ նրա **«Էջեր իմ օրագրեն»**-ից, որը նույն տարի լույս է տեսնում առանձին գրքույկով, Կահիրեում:

1926թ. Նժդեհը սկսում է հանդես գալ Սոֆիայում լույս տեսնող «Արաքս» դաշնակցական թերթում, ուր տպագրվում է նրա **«Բաց նամակներ հայ մտավորականությանը»** շարքը (այն 1929թ. Բեյրութում լույս է տեսնում առանձին գրքույկով):

1926 թվականից Բուլղարիայի կուսակցական կազմակերպությունը (Նժդեհը տեղի Հ.Յ.Դ. ԿԿ անդամ էր) բաժանվում է Նժդեհի եւ Բյուրոյի կողմնակիցների: Կուսակցության բյուրոն գտնում էր, որ կարելի եւ ցանկալի է ընդհանուր լեզու գտնել Թուրքիայի հետ. այդ մտայնության հաստատմանը նպաստող մի շարք հրապարակումներ եղան, որոնց թվում՝ Բյուրոյի քարտուղար Ռուբենի «Հայ-թուրքական կնճիռը» (1924թ.): Նժդեհը, որպես պատասխան այդ գրքի, 1927թ. Սալոնիկում լույս ընծայեց **«Որդիների պայքարը հայրերի դեմ»** գրքույկը: Միաժամանակ, որոշ հրապարակումներ ունեցավ Շահան Նաթալիի կողմից Փարիզում 1928-1929թթ. խմբագրվող, ընդգծված հակաթուրքական ուղղվածությամբ «Ազատամարտ» շաբաթաթերթում, ինչպես նաեւ Բուլղարիայի դաշնակցական «Նոր Արաքս» եւ «Ազատ խոսք» թերթերում (21):

1932թ. Սոֆիայում լույս տեսավ նրա հերթական գրքույկը՝ **«Ցեղի ոգու շարժը»** վերնագրով, որում (ինչպես նաեւ «Խռովք» ամսագրում նույն թվին լույս տեսած «Ցեղակրոնությունն իբրեւ հաղթանակի զորույթ» հոդվածում) նախանշվեց հայկական ցեղային շարժումը:

1933թ. Փարիզում կայացավ Հ.Յ.Դ. 12-րդ Ընդհանուր ժողովը, որին Նժդեհը մասնակցում էր իբրեւ պատգամավոր Բուլղարիայից: Վերջինս ժողովի առջեւ բարձրացրեց եւ անցկացնել տվեց երեք հիմնական հարցեր.

ա) ձգտել, որ գաղթահայությունը դառնա զինական գործոն Հայաստանի ինքնապաշտպանության գործում,

բ) կազմակերպել հայ երիտասարդ սերունդը ապակուսակցական հողի վրա,

գ) բոլոր ուժերը կենտրոնացնել հակաթուրքական ճակատում (22):

Բ կետի հիման վրա, 1933թ. ամռանը Նժդեհը մեկնեց ԱՄՆ: Նժդեհի հետ, Ընդհանուր ժողովի որոշումով, ԱՄՆ անցավ կուսակցական հայտնի գործիչ Կոպեռնիկ Թանդրճյանը, որին հանձնարարված էր կազմակերպել

ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Մուխտար-բեյի սպանությունը (վերջինս մասնակից էր արեւմտահայերի ջարդերին եւ արտասահմանում հակահայկական քարոզչության ղեկավարներից էր): Նժդեհը պիտի աջակցեր Թանդրճյանին այդ գործում (23):

ԱՄՆ-ում Նժդեհը ձեռնամուխ է լինում Ցեղակրոն շարժման ծավալմանը՝ երկրի հայաշատ վայրերում Ցեղակրոն Ուխտեր հիմնելով:

1934թ. սկզբին, Նյու Յորքի Սբ Խաչ եկեղեցում, դաշնակցական խմբապետի ձեռքով դաշունահարվեց ամերիկահայոց հոգեւոր առաջնորդ Ղեւոնդ արքեպս. Դուրյանը: Դուրյանի սպանության կազմակերպման պատասխանատվությունը տարբեր ուժեր փորձեցին վերագրել Նժդեհին՝ Ցեղակրոն շարժումը չեզոքացնելու դավադիր մտայնությամբ (24):

«Իմ այդ ազգահոգ քարոզչության համար հայության հատվածակառնացած, ապահայրենացած ու պարտվողական տարրերը դավադրեցին ինձ»,- գրում է Նժդեհն իր «Ինքնակենսագրություն»-ում:

Ամեն դեպքում, Ցեղակրոն շարժումը զգալի հաջողություններ ունեցավ ԱՄՆ-ում, իսկ Նժդեհը 1934թ. աշնանը վերադարձավ Սոֆիա: Այստեղ, 1935թ. նա լույս ընծայեց **«Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը»** աշխատությունը՝ միաժամանակ նպատակ ունենալով ընդլայնել Ցեղակրոն շարժումը եւ այն դարձնել համագաղութային: Սակայն նրա հարաբերությունները Հ.Յ.Դ. ղեկավարության (հատկապես՝ կուսակցության փաստացի բյուրոյապետ Ռուբենի) հետ խիստ լարվեցին: Այդ հողի վրա, 1936թ., Բուլղարիայի կուսակցական կազմակերպությունը պառակտվեց: Հակասությունները Նժդեհի ու կուսբյուրոյի միջեւ այնքան էին սրվել, որ Բուլղարիայում Մայիսի 28-ը Ցեղակրոն Ուխտերն ու տեղի Դաշնակցության ԿԿ-ն նշում էին առանձին. ցեղակրոնները՝ Պլովդիվում, Վառնայում, ԿԿ-ն՝ Սոֆիայում ու Բուրգասում (25):

Այդ տարիներին ռուսների վտարանդիական, հակաբոլշեւիկյան «ՌՕՎՍ» (Ռուսաստանյան համազորային միություն) կազմակերպությունը Բուլղարիայում դիմում է Նժդեհին՝ տալ 2-3 ահաբեկիչներ՝ Ստալինին մահապատժելու համար: Առաջարկը մերժվում է:

1937թ. Նժդեհը կանչվում է Կահիրե՝ կուսակցության բյուրո, որտեղ նրան փորձում են հաշտեցնել Ռուբենի հետ: Սակայն, Բյուրոյի հետ հանդիպումը ոչինչ չի տալիս, եւ Նժդեհը վերադառնալով Սոֆիա՝ նույն թվին հայտարարություն է անում Հ.Յ.Դ.-ից իր հեռանալու մասին: Բյուրոն եւս, առանց դանդաղելու, «պառակտողական գործունեության» որակումով՝ Նժդեհին կուսակցությունից հեռացնելու որոշում ընդունեց: Իսկ 1938թ. Կահիրեում գումարված Հ.Յ.Դ. 13-րդ Ընդհ. ժողովը Նժդեհին կուսակցության շարքերից՝ այս անգամ արդեն արտաքսելու վճիռ տվեց (26):

* * *

Կուսակցությունից հեռանալուց հետո Նժդեհը շարունակում է Ցեղակրոն կազմակերպությունների ընդլայնումը, եւ 1937թ. Հ.Յ.Դ.-ից արդեն հեռացված Հայկ Ասատրյանի հետ Պլովդիվում (1938-ից՝ Սոֆիայում) սկսում են հրատարակել «Ռազմիկ» ազգայնական թերթը: «Ռազմիկ»-ում (տպագրվել է մինչեւ 1943թ. ներառյալ) Նժդեհն ունի բազմաթիվ հրապարակումներ:

1937թ. Սոֆիայում լույս է տեսնում Նժդեհի **«Իմ պատասխանը»** ուսումնասիրությունը՝ նվիրված Սյունիքի հերոսականին (27): Հիշատակելի է նաեւ «Հերկ» ամսագրում (որը խմբագրում էր Կարապետ Պալճյանը՝ ապագա Վազգեն Ա. Ամենայն Հայոց կաթողիկոսը) Նժդեհի մեկ գրությունը ժամանակի հայ երիտասարդության ու նրա անելիքների վերաբերյալ՝ իբրեւ պատասխան «Հերկ»-ի խմբագրության հարցումներին (28):

Այդ տարիներին Նժդեհի համար վերստին կարեւորվում եւ հրատապ է դառնում հայությանը մոտեցող պատերազմին հոգեբանորեն նախապատրաստելու եւ նոր բարոյականով սպառազինելու խնդիրը: Այդ նպատակով, 1937-1938թթ., Հ. Ասատրյանի, Ն. Աստվածատուրյանի եւ այլոց հետ նախաձեռնում է Տարոնական շարժումը (1938-1939թթ. հանդես է գալիս շարժման պաշտոնական օրգան «Տարոնի Արծիվ»-ում):

1938թ., Հ.Յ.Դ. 13-րդ Ընդհանուր ժողովից հետո, կուսբյուրոյի լիազորությամբ, Սոֆիա է ժամանում դաշնակցական գործիչ Կարո Սասունին, որը հայտնում է Նժդեհին, թե Բյուրոն պատրաստ է ընդառաջել իր պահանջներին, միայն թե ինքը չստեղծի նոր կազմակերպություն: Նժդեհը, փաստարկելով, որ թուրքական թերթերն անընդհատ հարձակումներ են գործում ի՛ր վրա, բայց ո՛չ Հ.Յ.Դ.-ի, որ կուսբյուրոյի ամեն անդամ կարող է բնակվել Թուրքիային դաշնակից որեւէ երկրում, իսկ իրեն նույնիսկ արգելվում է տարանցիկ ճանապարհ այդ երկրներով, որ Հ.Յ.Դ. ղեկավարությունը թշնամանք է տածում Ցեղակրոնության եւ Տարոնականության նկատմամբ..., ինքը հիմք չունի հավատալու, թե Հ.Յ.Դ. նոր բյուրոն քաղաքականապես ավելի իմաստուն կգտնվի, քան նախորդը (29): Նմանօրինակ առաքելությամբ, 1939թ. Նժդեհի հետ տեսակցություն է ունենում Դրոն, հորդորելով նրան՝ խզել կապերը Բուլղարիայի ցեղակրոն կազմակերպության իր ընկերների հետ: Սակայն Նժդեհը մնում է անդրդվելի (30): Եվ Նժդեհը սկսում է գործնական աշխատանքներ տանել՝ հրավիրելու Հ.Յ.Դ.-ից հեռացածների եւ Ցեղակրոն շարժմանը հարողների համագումար: Սակայն

պայթեց Երկրորդ աշխարհամարտը, եւ ստեղծված իրադրությունը թելադրեց այլ պայմաններ:

* * *

Պատերազմի հենց սկզբից Գերմանիայում հակահայկական ալիք բարձրացավ. գերմանական շատ թերթեր արդարացնում էին հայերի 1915թ. ցեղասպանությունը, նացիստական մարդաբանական գիտությունը հայերին դասում էր «առաջավորասիական» (ոչ արիական) ժողովուրդների շարքում եւ ուներ խիստ բացասական կարծիք հայերի մասին (31), Բեռլինում պաշտոնապես հայտարարում էին, որ հայերն անցել են Գերմանիայի թշնամիների կողմը եւ այլն: Արձագանքելով դրան՝ Երկրորդ աշխարհամարտի առաջին օրերին Բուլղարիայում, Ռումինիայում ու եվրոպական այլ երկրներում բարձրացան հակահայկական տրամադրություններ: Բուլղարիայում կային թերթեր եւ կազմակերպություններ, որոնք կոչ էին անում՝ հայերին արտաքսել երկրից, նրանց հետ վարվել հրեաների նման: Ռումինիայի վարչապետ Անտոնեսկուն հանձնարարել էր՝ հայերին տեղահանել հայաշատ քաղաքներից...

Այս իրավիճակում, Նժդեհը, «Մշակութային մերձեցման բուլղարահայկական կոմիտեի» (որի փոխնախագահն էր ինքը եւ, միաժամանակ, թղթակցում էր Սոֆիայում լույս տեսնող «Սվետոգլաս» բուլղարական գրական թերթին) միջոցով կապվում է Սոֆիայի գերմանական դեսպանության հետ, իսկ 1942թ. անցնում Բեռլին՝ հարցերը տեղում լուծելու համար: Բեռլին մեկնելու նյութական հնարավորություն ունենալու համար նա վաճառում է պատվո թրի վրայի ոսկին, որը 1936թ. նրան էր նվիրել հայ մայրերի 12 հազարանոց կազմակերպությունը՝ ի նշան երախտագիտության իր հակաթուրքական-հայրենասիրական բազմամյա գործունեության:

Բեռլինում նա հանդիպում է նացիստական կուսակցության ներկայացուցչի հետ ու իր անհանգստությունը հայտնում գերմանացիների կողմից տարվող հակահայկական քարոզչության համար: Առաջնորդվելով «գերմանական գայլին կուշտ պահելու եւ հայ գառնուկին փրկելու» քաղաքական սկզբունքով՝ Նժդեհը վերջինիս հետ պայմանավորվում է Բուլղարիայում հավաքագրել հայերի մի խումբ՝ Բեռլինում վարժվելու եւ Գերմանիայի՝ Թուրքիայի դեմ հնարավոր պատերազմում օգտագործելու համար: Նա կապվում է Հ. Ասատրյանի հետ, որի միջոցով Բուլղարիայում հավաքագրվում եւ Գերմանիա են մեկնում 30 արեւմտահայ երիտասարդ ցեղակրոններ: Այնտեղ որոշ ժամանակ վարժվելուց հետո, հակառակ Նժդեհի հետ պայմանավորվածության, 1943թ. աշնանը խումբը ուղարկ-

վում է Ղրիմ՝ Կարմիր բանակի թիկունքում օգտագործելու համար: Սակայն, գերմանական հրամանատարության հետ խոսելուց հետո, Նժդեհը կարողանում է հիմնավորել իր մարտիկների՝ ո՛չ թե Ղրիմում, այլ՝ Թրակիայում գտնվելու անհրաժեշտությունը (այդ ժամանակ խիստ սրվել էին գերմանա-թուրքական հարաբերությունները) եւ անձամբ ժամանում է Ղրիմ, ու խումբը վերադարձվում է Բուլղարիա:

Այսպիսով, Նժդեհի համագործակցությունը նացիստների հետ եղել է գաղթաշխարհի հայությանը գերմանական սպառնալիքից փրկելու մտահոգությամբ եւ հակաթուրքական հողի վրա:

Նժդեհն իր մասնակցությունն է բերել 1942թ. դեկտեմբերին Բեռլինում ստեղծված ու մինչեւ 1943թ. վերջը գործած Հայ Ազգային խորհրդի աշխատանքներին (խորհրդի նախագահն էր Արտաշես Աբեղյանը), որի օրգան «Ազատ Հայաստան»-ի փոխխմբագիրն էր (խմբագիր՝ Աբրահամ Գյուլխանդանյան):

Բեռլինում եղած ժամանակ, գերմանացիների միջնորդությամբ, հանդիպել է Դրոյի հետ՝ նացիստների հետ համագործակցության ձեւի ու համատեղ գործելու խնդիրների շուրջ առաջ եկած հակասությունները հարթելու համար: Սակայն Նժդեհի եւ Դրոյի միջեւ հաշտեցում չկայացավ (32):

1944թ. սեպտեմբերին խորհրդային զորքերը մտան Բուլղարիա: *«Գիտեմ, թե ինչ է սպասվում ինձ, բայց եւ այնպես որոշել եմ մնալ, հակառակ որ կարելիություն ունեմ օդանավով ինձ նետելու Վիեննա: Չեմ հեռանում, որ հալածանքի չենթարկվեն մեր կազմակերպությունները* (իմա՛ Բուլղարիայի Ցեղակրոն Ուխտերը - Մ. Լ.): *Մնալու ավելի լուրջ պատճառներ ունեմ... Այսօր կյանքին ես կապված եմ այն չափով միայն, ինչ չափով որ ինձ դեռ պարտական եմ զգում ծառայելու Հայաստանին»*,- գրում էր Նժդեհը 1944թ. սեպտեմբերին, ձերբակալությունից քիչ առաջ (33):

1944թ. հոկտեմբերի վերջերին, խորհրդային «Սմերշ» (ռուսերեն смерть шпионам - «մահ լրտեսներին» բառակապակցության հապավումն է) բանակային հակահետախուզության գլխավոր վարչության աշխատակիցների կողմից Նժդեհը ձերբակալվում է: Նրան տեղափոխում են Բուխարեստ, այնտեղից՝ ինքնաթիռով Մոսկվա եւ բանտարկում Լյուբյանկայում:

Որո՞նք էին Նժդեհի՝ Բուլղարիայում մնալու լուրջ պատճառները:

Հանձնվելով կարմիրներին՝ Նժդեհը հույս ուներ, թե խորհրդային իշխանությունները իրեն, որպես հայ ազգայնականի, կօգտագործեն Թուրքիայի դեմ: Դրա համար, անշուշտ, իրական հիմքեր կային: Նա ենթադրում էր, որ Թուրքիան թիրախ կդառնա Խորհրդային Միության համար (1945թ. խորհրդային բանակը, իրոք, պատրաստվում էր մտնել

Թուրքիա), եւ Կարմիր բանակի՝ Թուրքիային հարվածի դեպքում, հնարավոր կլիներ ազատագրել Արեւմտյան Հայաստանն ու այն կցել Խորհրդային Հայաստանին: Ճիշտ է եզրակացնում պատմաբան Ռուբեն Խուրշուդյանը. «Նժդեհը համոզված էր, որ սվինների վրա կանգնած խորհրդային կայսրությունը վաղ թե ուշ անպայման կփլվի: Նա ուզում էր, որ կայսրության բեկորների վրա վերածնվեր ո՛չ թե փոքր հայկական պետություն, այլ՝ մեծ, միացյալ Հայաստանը, որի իրականացման գաղափարին էր նվիրել նա իր ողջ կյանքը» (34):

Փաստորեն, Արեւմտահայաստանի ազատագրման համար Նժդեհն իր քառասնամյա հակաթուրքական պայքարի փորձն էր առաջարկում խորհրդային իշխանություններին (այս խնդրի հետ կապված՝ Մոսկվայում նա հատուկ խոսակցություն է ունենում գեներալ Աբակումովի հետ): Սակայն, միջազգային քաղաքական կյանքում իրադարձությունների հետագա փոփոխությունները ի նպաստ Թուրքիայի, չարդարացրին Նժդեհի հույսերը. խորհրդային բանակը չշարժվեց Թուրքիայի վրա:

1946թ. նոյեմբերին Նժդեհին Մոսկվայից ուղարկում են Երեւան, ուր դատաքննությունն ավարտվում է 1948թ.: Նժդեհը դատապարտվում է 25 տարվա բանտարկության՝ ժամկետը հաշվելով 1944 թվականից (ի դեպ, դատավճիռը կայացվել է ապրիլի 24-ին):

Նժդեհի ձերբակալությունից հետո ընտանիքը (կինը եւ զավակը) Սոֆիայից աքսորվում է Բուլղարիայի Պավլիկենի քաղաքը (35):

1947թ. Նժդեհը խորհրդային կառավարությանն առաջարկում է հանդուգն մի ծրագիր. սփյուռքում ստեղծել համագաղութային ռազմաքաղաքական կազմակերպություն՝ «Հայկական իռեդենտա», որի նպատակը պետք է լիներ Արեւմտյան Հայաստանի ազատագրումը եւ նրա վերամիավորումը Խորհրդային Հայաստանին: Առաջարկության մեջ Նժդեհը հանգամանալից անդրադառնում էր այդ կազմակերպության ստեղծման՝ պատմականորեն թելադրված անհրաժեշտությանը, նրա ապագա գործունեության ձեւերին, կառուցվածքին եւ այլն: Թեեւ Նժդեհի առաջարկությունը լրջորեն հետաքրքրեց խորհրդային ղեկավարներին եւ մի քանի տարի շարունակ ուսումնասիրվում էր ամենատարբեր ատյաններում, սակայն, ի վերջո, այն մերժվեց:

1948-1952թթ. Նժդեհը գտնվել է Վլադիմիրի բանտում, այնուհետեւ, մինչեւ 1953թ. ամառը՝ Երեւանի բանտում: Նժդեհի երկրորդ անգամ Երեւան բերվելը, ինչպես վկայում է նրա բանտակից Հովհաննես Դեւեջյանը (36), պայմանավորված էր նրանով, որ Նժդեհը դիմում էր գրել խորհրդային ղեկավարությանը՝ «առաջարկելով իր միջնորդությունը Դաշնակցության եւ խորհրդային իշխանության միջեւ հասկացողություն մը եւ գործակցություն մը ստեղծելու համար» (37): Այս խնդրի շուրջ

երկար խոսակցություններ են տեղի ունենում Հայաստանի անվտանգության նախարարի հետ, որոնց արդյունքում, 1953թ., Նժդեհն ու Դեւեջյանը Երեւանի բանտից, համատեղ, նամակ են գրում Ս. Վրացյանին (որն այդ ժամանակ Դաշնակցության հետախուզական դպրոցի տնօրենն էր), հորդորելով նրան մերձենալ ռուսներին՝ հակաթուրքական հողի վրա: Սակայն Մոսկվայում նպատակահարմար չգտան նամակն ուղարկել, եւ այն մնաց որպես միայն փաստաթուղթ (38):

Այնուհետեւ, Նժդեհին նորից տեղափոխում են Վլադիմիր, ուր եւ մահանում է 1955թ. դեկտեմբերի 21-ին (Դեւեջյանը նշում է նոյեմբերի 21-ը, որը ճիշտ չէ):

Խորհրդային ղեկավարությունը Նժդեհին զրկեց ընդհանուր ներումից օգտվելու իրավունքից. դա ա՛յն դեպքում, երբ դրան արժանացան զգալի թվով հակախորհրդային գործիչներ եւ գերմանական բանակի զորավարներ:

Ստանալով բանտային վարչության հեռագիրը Նժդեհի մահվան մասին, եղբայրը՝ Լեւոն Տեր-Հարությունյանը, Երեւանից շտապ մեկնում է Վլադիմիր: Նրան հանձնվում են եղբոր զգեստն ու ժամացույցը, իսկ ձեռագրերը՝ ոչ: Թույլ չի տրվում նաեւ մարմինը տեղափոխել Հայաստան: Լեւոնը կատարում է եղբոր թաղումը, գերեզմանը ցանկապատել տալիս ու տախտակի վրա, ռուսերեն, պատվիրում գրել՝ *«Տեր-Հարությունյան Գարեգին Եղիշի (1886-1955)»* (39):

* * *

Սակայն, ինչպես ամեն մի իրական հերոս, Նժդեհը չմոռացվեց:

1963թ. սեպտեմբերին Բոստոնի «Հայրենիք» ակումբում բացվեց Նժդեհի կիսանդրին, որը պատրաստվել էր Բեյրութում, արձանագործ Զավեն Խտշյանի ձեռքով (40): Այս առթիվ տեղի ունեցավ մեծ հանդիսություն, «Հայրենիք» օրաթերթը բացառիկ համար լույս ընծայեց՝ գրեթե ամբողջովին նվիրված Նժդեհին (1963թ., 13 սեպտեմբերի), բացառիկ թիվ հրատարակեց նաեւ Հայ երիտասարդաց դաշնակցության պաշտոնաթերթ «Հայրենիք» անգլերեն շաբաթաթերթը: Իսկ 1968թ., Բեյրութում, «Համազգային»-ը հրատարակեց Նժդեհին նվիրված ծավալուն եւ շքեղ մի գիրք՝ կազմված Ավոյի (Ավետիս Թումայան) կողմից (1989թ. այն վերատպվեց Լոս Անջելոսում՝ Հ.Յ.Դ. «Ռոստոմ» կոմիտեի հրատարակությամբ): Այս ամենը վկայում է, որ անկուսակցական դարձած Նժդեհը Դաշնակցության կողմից վերարժեքավորվում էր:

1993թ., Երեւանում, Հ.Յ.Դ. «Դեպի Երկիր» մատենաշարով լույս տեսավ Նժդեհի **«Խորհրդածությունները»,** որում ներկայացված են նրա սովետական բանտախցերում գրած մտածումներն ու խոհերը, ինչի

գոյության մասին (իբրեւ ձեռագիր) դեռեւս վկայել է Նժդեհի բանտակից Դեւեջյանը:

1983թ. Նժդեհի աճյունը, գերեզմանի լուսանկարի օգնությամբ եւ Նժդեհի հարազատներից մեկի միջոցով, Վլադիմիր քաղաքի գերեզմանատնից գաղտնի տեղափոխվում է Երեւան: Նույն տարի, աճյունից մի նշխար ամփոփվում է Խուստուփ լեռան լանջին՝ Կոզնի կոչված աղբյուրի մոտ, իսկ հիմնական աճյունը, ցինկե արկղի մեջ մի քանի տարի պահելուց հետո, 1987թ. հանգրվանում է Գլաձորի Սպիտակավոր վանքի բակում (41):

Իր մահից տասնամյակներ անց միայն՝ 1992թ. մարտի 30-ին, Նժդեհը ՀՀ դատախազության կողմից արդարացվեց, ինչի կարիքը երբեւէ չուներ:

---

1. Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1962թ., էջ 158, 162-163:

2. Ավո, «Նժդեհ», էջ 67:

3. Մենք չենք անդրադառնա Սյունիքի կռիվների մանրամասներին. դրանք հանգամանալից շարադրված են Վարդան Գեւորգյանի «Լեռնահայաստանի հերոսամարտը (1919-1921)», Գ. Նժդեհի «Իմ պատասխանը» գրքերում եւ վերջինիս՝ Բոստոնի «Հայրենիք» ամսագրում 1923-1925թթ. լույս տեսած հոդվածաշարում: Կարծում ենք, որ ճշմարիտ չափանիշներով առաջնորդվող պատմագիտությունը դեռ կվերարժեքավորի Սյունիքի հերոսամարտը՝ տալով նրա արժանի գնահատականն ու տեղը ո՛չ միայն 20-րդ դարի, այլեւ ողջ Հայոց պատմության մեջ:

4. Գ. Նժդեհ, «Իմ պատասխանը», Սոֆիա, 1937թ., էջ 31:

5. Վ. Գեւորգյան, «Լեռնահայաստանի հերոսամարտը», Բուխարեստ, 1923թ., էջ 51:

6. «Արնոտ գիրք», Գորիս, 1921թ., էջ 33-34:

Դավիթբեկյան Ուխտերի օրինակով էր, որ Նժդեհը հետագայում հիմնադրեց Ցեղակրոն Ուխտերը:

7. Գ. Նժդեհ, «Ինքնակենսագրություն»:

8. Վ. Գեւորգյան, նշվ. աշխ., էջ 114-115:

9. Ավո, «Նժդեհ», էջ 210:

10. Վ. Գեւորգյան, նշվ. աշխ., էջ 160:

11. Երբեմն կարծամտորեն պնդվում է, թե առանց Նժդեհի վարած կռիվների էլ Խորհրդային Ռուսաստանը Զանգեզուրը կթողներ Հայաստանին, քանզի, հակառակ դեպքում, Նժդեհի հեռանալուց հետո, այն կարող էր կցել Ադրբեջանին: Ըստ մեզ, եթե 1921թ. մարտի ռուս-թուրքական պայմանագրի նախօրյակին Զանգեզուրում լինեին ո՛չ թե Նժդեհի մի խումբ ուխտյալները, այլ՝ Կարաբեքիրի զորքը (եւ այդ դեպքում ո՛չ միայն շատ գյուղեր թուրքաբնակ կլինեին, այլ՝ մնացածներն էլ՝ հայաթափ), միանշանակ կարելի է պնդել, որ Ռուսաստանը Սյունիքը կարժանացներ Նախիջեւանի ու Ղարա-

բաղի ճակատագրին: Ավելի՛ն, Սյունիքը Ադրբեջանին թողնելուց հետո, արդյոք Խորհրդային Ռուսաստանը հետագայում կհանդուրժե՞ր Հայաստանի՝ իբրեւ առանձին խորհրդային հանրապետության գոյությունը, թե՞ այն կտարրալուծեր Վրաստանի եւ Ադրբեջանի մեջ:

12. Ի դեպ, Նժդեհը եղել է Փետրվարյան ապստամբության նախաձեռնողներից եւ ինքն է տվել «Հայրենիքի փրկության կոմիտե» անվանումը (տե՛ս Խմբապետ Մարտիրոս Աբրահամյան, «Իմ հիշելի հուշերը», Թեհրան, 1978թ., էջ 28-30):

13. Դատը հարուցվել է ՀՀ կառավարության վարչապետ Սիմոն Վրացյանի եւ մի շարք հասարակական գործիչների կողմից: Դատը սկսվել է 1921թ. հուլիսի 24-ին, իսկ դատավճիռն արձակվել է նույն թվականի սեպտեմբերի 29-ին: Սույն դատական գործը կազմում է 487 էջ եւ պահվում է Հ.Յ.Դ. Բոստոնի կենտրոնական արխիվում (թիվ 1611-28):

Դատի մասին հպանցիկորեն հիշում է նաեւ հայտնի դաշնակցական գործիչ Անդրե Ամուրյանը (Ավո, «Նժդեհ», էջ 444-445):

14. Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ, գործ 1611-28, էջ 108-162, 213-230: Տե՛ս նաեւ՝ «Նորք» հանդես, Երեւան 1923թ., թիվ 3, էջ 328-363:

15. Հ.Յ.Դ. Կենտրոնական արխիվ, գործ 1611-28, էջ 375-378: Տե՛ս նաեւ՝ «Նոր Աշխարհ» ամսագիր, Թիֆլիս, 1922թ., թիվ 3, էջ 138-141:

16. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 3:

17. 1919թ. դեկտեմբերին, Երեւանում, Նժդեհին աղջիկ է ծնվել՝ Գոհար Մելիք-Դադայանից: Երեխայի ծննդի մասին Նժդեհն իմացել է Զանգեզուրում եղած ժամանակ եւ, հավանաբար, նրան չի տեսել: Այդ են վկայում նաեւ երեխայի ոչ հայկական անունը եւ մոր ազգանունով գրվելը՝ Լիլիա Մելիք-Դադայան:

18. Նժդեհը կարդացել է ձեռագիրը եւ հավանություն տվել (Ավո, «Նժդեհ», էջ 452):

19. Բուխարեստում, Հովհաննես Քաջազնունու հետ, կարճ ժամանակ բնակվել են Սարգիս Արարատյանի (ՀՀ օրոք՝ ֆինանսների նախարար, հետագայում հեռացավ Հ.Յ.Դ.-ից) բնակարանում եւ երեքով բազմիցս քննարկել Քաջազնունու «Հ. Յ. Դաշնակցությունը անելիք չունի այլեւս» հայտնի աշխատությունը՝ մինչեւ հրատարակվելը:

Մասնավորապես Նժդեհը, ամենից առաջ, ճիշտ էր համարում դնել Հ.Յ.Դ. պատասխանատվությա՛ն հարցը, այլ ո՛չ ինքնալուծարման, ինչպես գտնում էր Քաջազնունին (ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 2):

20. «Նոր Արշալույս», Բուխարեստ, 1923թ., թիվ 10-11:

21. Ուշագրավ է «Նոր Արաքս» թերթում Նժդեհի «Բաց նամակ Մայքլ Առլենին» հոդվածաշարը («Նոր Արաքս», Սոֆիա, 1930թ., թիվ 11, 12, 15–18):

22. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 2:

23. Նույնը, հտ. 3:

24. Նժդեհը թեեւ խիստ բացասաբար էր վերաբերվում Ղեւոնդ արքեպս.

Դուրյանի անձին, սակայն գտնում էր նաեւ, որ այդ սպանությունը հնարավորություն տվեց ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպան Մուխտար-բեյին՝ թաքնվելու եւ փրկվելու իրեն սպասվող հարվածից: Ըստ Նժդեհի, Դուրյանի սպանությունը կազմակերպված է եղել անմիջականորեն Ռուբեն Տեր-Մինասյանի կողմից: Տեր-Մինասյանն ու մի խումբ Դաշնակցական ղեկավարներ փորձում էին մտերիմ հարաբերություններ հաստատել Թուրքիայի հետ, եւ որպեսզի կանխվեր Մուխտար-բեյի սպանությունը (ինչը կսրեր հարաբերությունները թուրքերի հետ), Ռուբենի անմիջական հրահանգով իրականացվեց (միգուցե արագացվե՞ց - Մ. Լ.) Դուրյանի սպանությունը: Սպանության շուրջ մեծ աղմուկ բարձրացավ: Դա ազդանշան հանդիսացավ Մուխտար-բեյին՝ ամերիկյան կառավարության մոտ բարձրացնելու իր անվտանգության ապահովման հարցը եւ խույս տալու հայ վրիժառու բազկի հարվածից (ԱԱՆ արխիվ, գործ 11278, հտ. 3):

25. Ռ. Մարտիրոսյան, «Դաշնակցության հակաժողովրդական գործունեությունը 2-րդ համաշխարհային պատերազմի տարիներին», էջ 48-49:

26. Պիտի ասել, որ Նժդեհի պես անհատականությունները կուսակցական կյանքի մարդիկ չեն: Նրա նման հեղինակությունը կարող էր լինել միայն առաջնորդ: Սա Նժդեհի եւ Հ.Յ.Դ. ղեկավարության հակադրության հոգեբանական պատճառներից է:

Տարածում է գտել այն կարծիքը, թե Նժդեհի հեռացումը Հ.Յ.Դ.-ից կապված է Ցեղակրոնության հետ, ինչը, մեր կարծիքով, մասամբ է ճիշտ:

Հայաստանի խորհրդայնացումից հետո, տարագրության մեջ եղած ժամանակ, Նժդեհը, մինչեւ 1932թ., իր հրապարակումներում, ելույթներում երբեւէ հանդես չի եկել որպես Դաշնակցության շեփորահար, այլ՝ արծարծել է համահայկական, համագաղութային խնդիրներ: Ցեղակրոն շարժման ծավալման նախաշեմին նա սկսում է իր գործերում պանծացնել Դաշնակցության՝ փառաբանության արժանի էջերը եւ խոսել *դաշնակցականության* (իմա՝ ճշմարիտ Դաշնակցականի գաղափարախոսության, բարոյականի) մասին: Նժդեհը հասկանում էր, որ Ցեղակրոն շարժումը կարող է հաջողություն ունենալ միայն ամուր եւ համահայկական կառույցի միջոցով, իսկ Հ.Յ.Դ.-ն՝ իբրեւ այն ժամանակվա սփյուռքահայ ամենաազդեցիկ կազմակերպությունը, կարող էր լինել այդպիսին: Եվ Նժդեհը փորձեց գործը գլուխ բերել կուսակցության միջոցով, որի համար նախ անհրաժեշտ էր այն վերակառուցել՝ տալ նրան նոր գաղափարախոսություն եւ ունենալ դրան համապատասխան ղեկավարություն:

Իր կողմից, Հ.Յ.Դ. գործող բյուրոն հանդուրժեց Նժդեհին քարոզել Ցեղակրոնությունը ԱՄՆ-ում՝ այնտեղի կուսակցական կառույցները վերակենդանացնելու համար: Սակայն, Նժդեհի անձնական հեղինակության բարձրացմանը զուգահեռ, խորացավ ներկուսակցական հակամարտությունը Նժդեհի եւ բյուրոյապետ Ռուբենի միջեւ, որի արդյունքը եղավ Նժդեհի հեռացումը կուսակցությունից: Պատահական չէ, որ իր վերջին դատական քննութ-

յան ժամանակ նա հայտարարել է, թե կուսակցությունից հեռացել է Ռուբենի հետ անձնական թշնամության հանգամանքի բերումով *(այս մասին տե՛ս նաեւ Նժդեհի «Մատնությո՞ւն, թե՞ պրովոկացիա» գրությունը. «Ռազմիկ», Սոֆիա, 1938թ., թիվ 59):* Փաստորեն, այդ հեռացումը պայմանավորված է Նժդեհ–Ռուբեն պայքարով, պայքար կուսակցության լինելիք քաղաքական գծի, գաղափարախոսության, որով եւ՝ ղեկավարության համար: Իսկ դա Ցեղակրոնության հետ կապված է այնքանով, որքանով այդ ուսմունքի հեղինակը Նժդեհն էր:

Ի դեպ, 1935թ. Ռ. Դարբինյանին գրած նամակում Ռուբենը, առանց շատ թե քիչ լուրջ հիմնավորումների, Ցեղակրոնությունը համարում էր վտանգավոր, իսկ նրա գաղափարը՝ անհեթեթ (տե՛ս «Հայրենիք» ամսագիր, Բոստոն, 1963թ., թիվ 11, էջ 24):

27. Նժդեհը հեղինակ է նաեւ **«Դաշնակցության պանթեոնը»** վերնագրով փոքրիկ գրքույկի, որը տպագրվել է 1917թ., Ալեքսանդրապոլում, ինչպես նաեւ՝ Շերամի հետ, իբրեւ նվեր հայ զինվորներին, պատրաստել է *«Զինվորական մարգանք եւ կանոնադրություն»*, որը տպագրվել է 1918թ., Երեւանում:

28. «Հերկ», Բուխարեստ, 1938թ., թիվ 9, էջ 5-6:

29. ՀՀ ԱԱՆ արխիվ, ԿԳՖ, գործ 11278, հտ. 2:

30. Տե՛ս Դրոյի՝ 15 օգոստոս 1939թ., Բուխարեստ նշումներով նամակը Ս. Վրացյանին, որը պահվում է Հ.Յ.Դ. Բոստոնի կենտրոնական արխիվում: Այն մեզ է տրամադրել պատմաբան Համլետ Գեւորգյանը:

31. Նման մտայնության դեմն առնելու համար, դեռ 1934թ., Բեռլինի գերմանա-հայկական ընկերությունը (նախագահ՝ Ռորբախ, փոխնախագահ՝ Բեռլինի համալսարանի հայագիտության ամբիոնի վարիչ Արտաշես Աբեղյան) Պոտսդամում գերմաներենով հրատարակեց «Հայերն արիացիներ են» ուսումնասիրությունը: Այն, իտալերեն թարգմանությամբ, 1939թ. լույս տեսավ Հռոմում:

Ուսումնասիրությունը, որում մի շարք հեղինակավոր գիտնականներ հիմնավորում էին հայերի արիական ծագումը, ինչպես երեւում է, առանձնակի ազդեցություն չի ունեցել նացիստ տեսաբանների կարծիքի վրա. այլապես, Երկրորդ աշխարհամարտի սկզբին այդ խնդիրը վերստին չէր արծարծվի: Այստեղից երեւում է նաեւ, որ նացիստների համար արիական ծագման խնդիրն ավելի քաղաքական շահարկման առարկա է եղել, քան զուտ գաղափարախոսական իրողություն:

32. Պետք է ասել, որ Նժդեհի ու Դրոյի միջեւ տարաձայնություններ եղել են նաեւ մինչ այդ: Դեռ 1920թ., Գորիսի պատմական ժողովում, ուր վճռվում էր Կարմիր բանակի ներխուժման դեմն առնելու հարցը, եւ ժողովականները, հակառակ Նժդեհի կռվելու կոչերին, որոշեցին դիմադրություն ցույց չտալ, Դրոն խիստ քննադատվեց Նժդեհի կողմից՝ բռնած կրավորական դիրքի համար (Ավո, «Նժդեհ», էջ 490-491): Նրանց միջեւ տարաձայնություններ

կային նաեւ 1920թ. հունվարի Շուռնուխի արշավանքի նպատակահարմարության շուրջ (հետագան ցույց տվեց, որ տեղին էին Նժդեհի նախազգուշացումները): Դրոն գործուն մասնակցություն ունեցավ Բուլղարիայի կուսակցական կառույցում Նժդեհի դիրքերի թուլացման (մասնավորապես, Հ.Յ.Դ.-ից Հայկ Ասատրյանի հեռացման) գործում՝ այդ ժամանակ լինելով Բյուրոյի ներկայացուցիչը Բալկաններում: Նրանց միջեւ եղել են նաեւ անձնական բնույթի ընդհարումներ (օրինակ՝ տե՛ս Եղիշե Իշխանյան, «Լեռնային Ղարաբաղ. 1917-1920», Երեւան, 1999թ., էջ 681):

33. Գ. Նժդեհ, «Ինքնակենսագրություն»:

34. Գ. Նժդեհ, «Խորհրդածություններ», Երեւան 1993թ., էջ 14-15:

35. Կարո Գեւորգյանը հաղորդում է, որ Բուլղարիայի նրա զավակը եղել է որդեգիր (Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», Բեյրութ, 1958թ., էջ 160): Իր հուշերում Հովի. Դեւեջյանը բերում է Նժդեհի զավակի անունը՝ Սուքիաս Վրեժ (տե՛ս Արմեն Սեւան, «Բանտարկյալի մը հուշերը», Բուենոս Այրես, 1970թ., էջ 72): Հավանաբար, ծնունդի անունը Սուքիաս է, Նժդեհը կնքել է նաեւ Վրեժ: Նույն Դեւեջյանը հիշում է, որ Նժդեհի՝ բանտում գրված ձեռագրերից մեկը, մի քանի տասնյակ էջ, նվիրված էր իր զավակին եւ կրում էր *«Իմ ողբերգությունս՝ զավակս»* վերնագիրը (նույնը, էջ 101):

Կինը (ծնվ. 1902թ.) տառապեց սրտի հիվանդությամբ եւ 1958թ. մեռավ հիվանդանոցում, անտեր: Իսկ զավակը (ծնվ. 1936թ.), որ նույնպես ծանր կյանք է ունեցել, մահացել է Բուլղարիայում, 1997թ.:

36. Նժդեհի եւ Դեւեջյանի հարաբերությունները, մինչեւ բանտում հանդիպելը, կազմակերպական ներքին տարակարծությունների հետեւանքով, խիստ անբաղձալի վիճակի մեջ էին: 1948թ., Վլադիմիրի բանտում հանդիպելով (թեեւ մինչ այդ Երեւանի բանտում եղել են հարեւան խցիկներում, բայց առիթ չեն ունեցել տեսնվելու), ընդհանուր տառապանքի թելադրումով, հաշտվել են: Մինչեւ 1954թ. հոկտեմբերը եղել են միասին ու այլեւս չեն տեսնվել: 1955թ., ընդհանուր ներման շնորհիվ, Դեւեջյանը բանտից ազատվել է եւ 15 տարի հետո, Արմեն Սեւան գրական ծածկանունով, գրել իր հայտնի հուշերը Նժդեհի բանտային կյանքի մասին:

37. Արմեն Սեւան, «Բանտարկյալի մը հուշերը», Բուենոս Այրես, 1970թ., էջ 107:

38. «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթ, Երեւան, 1993թ., թիվ 34: «Երկիր» օրաթերթ, Երեւան, 1992թ., 31 դեկտեմբերի:

39. Արմեն Սեւան, «Բանտարկյալի մը հուշերը», էջ 133: էջ 134-ում զետեղված է Վլադիմիրում Նժդեհի գերեզմանի լուսանկարը:

40. Կ. Գեւորգյան, «Ամենուն տարեգիրքը», 1964թ., էջ 577:

41. Վ. Առաքելյան, «Նժդեհ», Երեւան, 1989թ., էջ 72: Ա. Բունիաթյան, «Նժդեհի վերադարձը», Երեւան, 1999թ.:

Մուշեղ Լալայան

ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԷՆ*

«Ժողովո՛ւրդ, ասա՛ ինձ
քո իդէալն եւ ես ասեմ
քո ապագան»:

ՄՈՆԹԷՆ

* *Գրքույկով տպագրվել է Կահիրեում, 1924թ.:*

ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆ

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ես ճշմարտութիւններ գիտեմ, որոնցից մէկն ասում է՝ ուզո՞ւմ ես գուշակել, տեսնել մի ժողովրդի ապագան՝ նայի՛ր նրա երիտասարդութեան:

Նայելով քեզ, հա՛յ երիտասարդութիւն, վարդագոյն լաւատեսութեամբ չեմ լցւում ես:

Երէկ դու աւելի յուսատու էիր քան այսօր: Իսկ մեր վաղը, մեր ապագան կախուած է մեր ներկայից:

Վաղը ազգովին պիտի հնձենք այն, ինչ որ սերմանում ենք այսօր - այսօր, երբ դու նւազ խոստմնալից ես, երբ քո մէջ, շնորհիւ մեր օրերի նիւթապաշտական ոգու եւ համատարած յուսալքութեան, թուլացել է պաշտամունքը երկու աստուածութիւնների՝ հայրենի ժողովուրդի եւ երկրի, քո շարքերում, գիտես այդ, օրէցօր աճում է յոգնածների, ուղեկորոյսների եւ դարպլընթաց եղածների թիւը:

Քո մի մասի մտքի ու սրտի սնունդը, աւա՜ղ, չի կազմում «առիւծոսկրի ուղնուծուծը»:

Տկարանալով բարոյապէս, դու մեր մէջ թուլացնում ես մեր ժողովրդի լաւագոյն ապագայի յոյսը:

Ահա թէ ինչո՞ւ ուզեցի մտերմաբար մի քիչ խօսել քեզ հետ, ուզեցի օրագրիս մի քանի անարուեստ էջերով - ծնունդը իմ խորհրդածութիւնների - ստիպել քե՛զ եւս մտածելու մեր վաղւայ մասին:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

I

ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹԵԱՆ ՕՐԷՆՔԸ

«Մի զինուոր սպանում է Արքիմեդին»:

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Ժողովուրդների պատմութիւնն այլ բան չէ, քան իրենց գոյամարտի, իրենց յաղթութեանց եւ պարտութիւնների պատմութիւնը:

Պատերազմներն են օրօրել մարդկութեան մանկութիւնը եւ ո՛չ խաղաղութիւնը, որը բնական վիճակը չի եղել, այլ՝ պատերազմների կարճատեւ դադար միայն:

Աշխարհը կառավարում է հակամարտութեան օրէնքը: «Մի զինուոր սպանում է Արքիմեդին»:

Յաղթում է ուժեղը եւ ո՛չ արդարը:

Վա՜յ թոյլերին:

—

Բոլոր ժողովուրդները, լուսաւորեալ թէ վայրենի, ձգտում են արեւի տակ յարմար եւ կայուն մի տեղ գրաւել:

Նրանք զէնքի են դիմում երբեմն ռազմասիրութիւնից, երբեմն մրցակցութիւնից, երբեմն կոյր ատելութիւնից մղուած:

Պատերազմում են, երբ պէտք է նորանոր շուկաներ ձեռք բերել, ծովերի տէր դառնալ, երբ պէտք է ինքնապաշտպանուել կամ ապահովել այս կամ այն երկրի անկախութիւնը:

Քիչ անգամ չեն նրանց իրար դէմ հանում նաեւ ամենաանբնական եւ չնչին պատճառները, օրինակ՝ իրենց միապետների դինաստիական շահերը, նրանց հիւանդոտ փառասիրութիւնը, կրօնների եւ բարութեան մասին ունեցած ըմբռնումների տարբերութիւնը, եւլն.:

Պատերազմի համար են աշխատում եւրոպական իմպերեալիզմը, անգլիական ծովատիրութիւնը, ամերիկեան դոլարապաշտութիւնը, համիսլամականութիւնը, դեղին վտանգը, պանսլավիզմը եւլն.:

Պատերազմ է անվերջ, եւ եթէ երբեմն ժողովուրդները կռւադաշտում չեն, ապա նրանք զօրանոցներում են, ուր խելայեղօրէն պատրաստւում են նորանոր բաղխումների համար:

—

Չէզոքութեան են դիմում թոյլերը միայն, յաճախ բաժանելով պարտուածների ճակատագիրը: Էապէս չկան չէզոքներ: Եթէ երկուսն այսօր բարեկամ են - նշանակում է թէ նրանք զինակցել են մի երրորդի դէմ:

Ամէն մի պատերազմ երկու նորերի պատճառ է դառնում, որովհետեւ չափուած կողմերից ոչ ոք է իրեն վերջնականապէս պարտուած կամ յաղթական համարում:

Եւ միշտ էլ պարտուած կողմը դեռ իր նահանջի ճանապարհին մշակում է իր փոխվրէժի ծրագիրը:

—

Մէկը յարձակւում է, միւսը՝ պաշտպանւում. այդ երկուսից ո՞րն է մեղաւոր:

- Եւ ո՛չ մէկը, իրաւունք ունեն երկուսն էլ, պատերազմն արդար է երկուսի համար էլ,- ասում է ֆրանսացին:

- Ես սիրում եմ թղթախաղում տանողին, ինչպէս եւ կռւում յաղթողին,- ասում է անգլիացին:

- Եթէ մեզ համար օգտակար է, ուրեմն եւ կարելի է,- ասում է գերմանացին:

- Կա՛մ բոլորի բարեկամը, կա՛մ բոլորի թշնամին,- ասում է ամերիկացին: Եւ որովհետեւ հնարաւոր չէ բոլորի բարեկամը լինել, նա գործնականում մնում է բոլորի թշնամին:

—

Պատերազմի դէմ մարգարէական խանդով ու զայրոյթով խօսել են մարդկութեան ամենաընտիր ներկայացուցիչները, բայց եւ այնպէս նա շարունակում է պահել իր գոյութիւնը, հեգնելով իմաստասէրների ճշմարիտ խօսքը, սրանց ոսկի երազը:

«Գազանների խնճոյք», «ազգամիջեան սպանդ», «խելագար իրերակերութիւն», «մարդկութիւնը կրծող սեւ վէրք», «օրինականացած կողոպուտ», եւլն. - ահա՛ պատերազմն իր թշնամիների համար:

«Չէ՛,- ասել է անմահ Հիւգոն,- կեանքը չի կարող աշխատել մահւան համար: Սպանութիւնը մնում է սպանութիւն, միեւնոյն է թէ ի՞նչ ես կրում՝ ոճրագործի գլխա՞րկ, թէ՞ ֆրանսիական կայսեր թագը»:

«Չէ՛, չէ՛, նրանք բնաւ կիսաաստուածներ չեն, նրանք մարդ էլ չեն»,- աշխարհակալների մասին ասել է Ֆէնելոնը:

«Լուսաւոր ազգերը նման են որսկան շների: Մի անբարոյական բնազդ գրգռում է նրանց ոչնչացնելու իրար, առանց օգուտի եւ իմաստի»,- ասում է Անատոլ Ֆրանսը:

«Նա,- ասել է Լակտենցին,- որն սպանել է միայն մէկին, դատապարտուած է որպէս յանցագործ: Բայց մորթեցէ՛ք հազար հոգի, արիւնով հեղեղէ՛ք երկիրը, դիակներով վարակէ՛ք գետերը եւ ձեզ տեղ կը տան Ողիմպի վրայ...»:

—

Պատերազմն ունեցել է եւ ունի իր պաշտպանները, որոնց համար այդ մշտական չարիքը իր բնախօսական եւ բարոյական արդարացումն ունի:

- «Առանց պատերազմների աշխարհը կը վերածուի մի նիւթապաշտական ճահճի», - ասում են սրանք:

- «Պատերազմը - դա լաւերի յաղթանակն է»:

- «Առանց պատերազմների աշխարհը կ՚ընկնի մի վտանգաւոր քնախտի մէջ»:

- «Անբարոյականանում են անմարտունակ ազգերը», եւլն.:

Սրանք ժխտում են պատերազմների պատահական բնոյթը, համարելով վերջինը որոշ ճակատագրական օրէնքների ծնունդ, որպէս մարդկային բարեշրջման բուռն եւ խոշոր արտայայտութիւններից մէկը:

—

Քսան երկար ու ձիգ դարեր են անցել Գողգոթայից մինչեւ մեր օրերը, եւ, աւա՜ղ, խաղաղութեան, եղբայրութեան ու սիրոյ Ուսուցչի աստուածաշունչ խօսքը շարունակում է մնալ որպէս «ձայն բարբառոյ յանապատի»:

Երկու հակամարտ ոյժերի արնոտ պատմութիւնը - սրի եւ սիրոյ խօսքի պայքարը - երկու ոյժեր, որոնցից մէկը երազում է վերացնել սահմանները երկրների եւ ժողովուրդների միջից, իսկ միւսը յամառում է հաստատ պահել այդ սահմանները, ասել է եւ ազգամիջեան թշնամանքը՝ իր գոյութիւնը յաւերժացնելու համար: Եւ դեռ իշխում է վերջինը, դեռ ուժեղ ու յաղթական է վերջինը ու յոյս չկայ թէ մեր դարում սուրը կը վերածուի արօրի:

«Խաղաղութի՞ւն ես ուզում՝ պատրաստուիր կռուի» - ա՛յս է մնում օրուայ հրամայականը:

Եւ՝ կարծէք խաբուսիկ խաղաղութիւնից սարսափած՝ բոլորը, բոլորը պատրաստւում են, զինւում:

Եւ ոչ ոք է ապահով, որ վաղը աշխարհի վրայով վերստին չի անցնի պատերազմի գունատ ճիւաղը՝ արնոտ սուրը ձեռքին:

II

ՄԵՐ ԱՊԱԳԱՆ ՎՏԱՆԳՈՒԱԾ

«Թուլութիւնն ստեղծուած է սնուցանելու ոյժը»:

Պիտ ապրի՛ եւ հայ ժողովուրդը: Պիտ ապրի՛, որովհետեւ այդպէ՛ս է ուզում ինքը:

Բայց ի՞նչպէս, ինչի՞ շնորհիւ, ի՞նչ տեսլներով, գրաւակա՞նը:

Չգիտեմ, մեր ժողովուրդը գիտակցո՞ւմ է, թէ երբեք իր գլխովին կորչելու վտանգն այնքան մեծ չի եղել, ինչպէս այսօր:

Գիտակցո՞ւմ է, թէ անցեալում իր վիճակը, իր ֆիզիքական գոյութեան ապահովութեան տեսակէտից աւելի նւազ մտահոգիչ է եղել, քան այսօր:

Մինչեւ իր ազատագրական ընդվզումները օտար լծերի տակ, մի տեղ որպէս պարզ ստրուկ, մի այլ տեղ՝ հաւատարիմ հպատակ եւ ամէն տեղ՝ իր քրտինքով տիրող տարրը կերակրող - նա հանդուրժելի էր իշխող ժողովուրդների կողմից: Սակայն այսօր նա այն չէ, ինչ որ էր երկու-երեք տասնեակ տարի առաջ: Նրա հոգեբանութեան հետ փոխուել է եւ իր վիճակը:

Թրքահայկական նահանգներն այժմ անհայաբնակ են, ինչպէս մեծ գերեզմաններ: Արարատեան դաշտի մի մասն է այժմ հայի հայրենիքը, ընկած մահմեդական երկրների ճանապարհի վրայ - մի կամուրջ՝ Արեւմուտքի եւ Արեւելքի մահմեդականութեան համար:

Այժմ նրա աշխարհագրական դիրքը աւելի մտահոգիչ է, քան իր քաղաքական ճակատագիրը:

—

Հանրածանօթ իրողութիւն է, որ ռուսական տիրապետութիւնից ազատուելու ցանկութեամբ թաթար Ադրբէյջանն երազել է եւ պիտ երազի մի օր տաճիկներին տեսնելու Անդրկովկասում:

Ծանօթ իրողութիւն է եւ այն, որ Տաճկաստանը փորձել է եւ պիտի փորձի մի օր Ադրբէյջանի եւ Դաղստանի իսլամութիւնը, ինչպէս եւ Անդրկովկասի բնական ամրութիւնները դարձնելու պատնէշ Ռուսաստանի դէմ:

Ասել է՝ մեզ, մեր ժողովրդին վիճակուած է մի օր կենաց ու մահու կռիւ մղելու համիսլամ երկրների՝ մեր վրայով իրար միանալու ձգտման դէմ:

Դժուարի՛ն պայքար:

—

Բացէ՛ք քարտէսը եւ ձեր տեսողութիւնը սեւեռէ՛ք այն փոքրիկ տարածութեան վրայ, որը կազմում է այսօրւայ Հայաստանը՝ Արարատեան դաշտի մի մասը եւ Սիւնեաց երկիրը:

Աչքի անցկացրէ՛ք այն գիծը, որը նրա արդի սահմաններն է կազմում: Տաճիկները Իգտիրում՝ Էջմիածնի պատերի տակ: Թաթարը Շարուրում՝ Երեւանի պատերի տակ: Նոյնը Նախիջեւան-Օրդուբադում՝ դարանամուտ՝ Սիւնիքի թիկունքում: Արեւելքից էլ՝ Ադրբէյջանը: Տեսնո՞ւմ էք. դա այլ բան չէ, քան մի երկաթէ օղակ հայ երկրի շուրջը:

—

Կայ՝ մեր երկրի եւ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը դժւարացնող եւ մի այլ պարագայ:

Դիմէ՛ք քարտէսին, նա կը պարզի ձեզ եւ այդ դժբախտ պարագան: Վտանգի դէպքում թշնամին ժամերի ընթացքում կը բաժանի Ալէքսանդրապօլը Երեւանից, իսկ վերջինը՝ Սիւնիքից: Քարտէսը ցոյց կը տայ եւ հետեւեալը. Արաքսի ափով Ադրբէյջանին միանալու համար մահմեդականութեանը հարկաւոր է 2-3 ժամ:

Նոյնը մի այլ գծով՝ Սիսիանի վրայով, կարող է միանալ Ադրբէյջանին գրեթէ նոյնքան ժամանակի ընթացքում: Նոյնը ժամերի ընթացքում կարող է անել եւ Կապանի վրայով: Սեղմ ասած՝ Արեւելքի եւ Արեւմուտքի մահմեդականութիւնը ժամերի ընթացքում առնւազն եօթը տեղով կարող է զատել իրարից հայկական գաւառակները եւ միանալ, ի հարկէ, հայ ժողովրդի վրայով:

—

Եթէ Հայաստանի աշխարհագրական դժբախտ դիրքի եւ նրա փոքրիկ ծաւալի հետ հաշւի առնէք նաեւ մեր ժողովրդի քանակը, նրա հատւածականութիւնը, նրա քաղաքական իդէալը, նրա եւ իր իսլամ հարեւանների փոխյարաբերութեանց առանձնայատկութիւնը, ձեզ համար իր բովանդակ սպառնալիութեամբ կը պարզւի մեր ժողովրդի վտանգւած ապագան:

Ծանօթ վիճակի մէջ հայ ժողովուրդը իր արդի հոգեկան կառուցւածքով կարող է իր գոյութիւնը հրաշքով պահել: Այդ դրութեան մէջ վտանգւած է նրա ապագան: Բայց եւ այնպէս նա ուզում է ապրել որպէս ազգ եւ պիտ ապրի:

Բայց ինչպէ՞ս, ի՞նչ տւեալներով: Չկորչելու համար, մեր դարը եւ մեր աշխարհագրական դիրքն ու ծանօթ դժբախտ պայմանները, որոնց մէջ ապրում է մեր ժողովուրդը, պահանջում են լինել ուժեղ, էլի՛ ուժեղ եւ մի՛շտ ուժեղ:

Ապրե՞լ ենք ուզում՝ լինենք ուժեղ ազգովին:

Լինենք ուժեղ, ուժեղ ազգովին. ահա՛ հրամայականը:

Լինենք ուժեղ այնքան, որ մեր անպարտելիութիւնը առ ոչինչ դարձնի մեզ ծանօթ այն բոլոր դժբախտ պայմանները, որոնք դժուարացնում են մեր ցեղի ինքնապաշտպանութեան գործը:

Թուական, թեքնիք, ընդհանրապէս նիւթական տեսակէտից մեր ժողովուրդը, հասկանալի պատճառներով, երբեք չի կարող ուժեղ լինել իր հարեւաններից: Սակայն ոյժը՝ միայն նիւթական ազդակները չեն, այլ եւ մի ժողովրդի առաքինութիւնները:

Կայ հոգեբանական գերադասութիւնը, կայ բարոյական ոյժը - աշխարհի պէս հին, բայց միշտ էլ թարմ եւ հրաշագործ, որին տիրապետող ազգը քիչ անգամ է գլուխ ծռել իրենից նիւթապէս տասնապատիկ ուժեղ թշնամու առաջ:

Բարոյակա՛ն ոյժն է գօտեպնդում փոքր ժողովուրդներին ու բանակներին անհաւասար կռւում. նա՛ է դէպի յաջողութիւն ու յաղթանակ առաջնորդում թւապէս թոյլերին՝ մեծամեծ հակառակորդների դէմ: Նա՛ եղել է եւ է՛ այսօր միակ ապաւէնը մեզ նման փոքր ժողովուրդների:

Եւ այսօր, մեր դրութեան մէջ, միայն նա՛ - բարոյական ոյժը, կարող է ապրեցնել մեզ: Ուրեմն, ճանաչենք նա որպէս մի ընդհանուր Աստուածութիւն, լինենք ուժեղ - արեւի տակ մեր տեղն ու գոյութեան իրաւունքը պահելու համար:

III

ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ

«Ո՛չ, ախոռը, ուր անասունները կ'ուտեն եւ կը պառկեն՝ հայրենիք չէ»:

ԼԱՄԸՆԷ

Հայրենասիրութի՛ւն - մարդկային առաքինութիւնների թագն ու պսակն է դա: Մարդկային բարոյական յատկութիւնները իր մէջ միացնող այդ գերագոյն առաքինութիւնն է ազգերի գոյութեան անհրաժեշտ պայմանը եւ անսպառ աղբիւրը նրանց ոյժի եւ մեծութեան: Նա այնքան ջերմ է մի ժողովրդի մէջ, որքան փոքր է այդ ժողովուրդը եւ որքան ամբարիշտ են նրա հարեւանները: Եթէ այդպէս չէ ամենուրեք, այդպէս պիտ լինի:

—

Այդ նուիրական զգացումը զարգանում է աստիճանաբար:

Սկզբում՝ բնազդական, զարգանալով՝ նա դառնում է իմացական՝ ոգիանում է նա:

Առաջին դէպքում անհատը թելադրւում է, մղւում մի բնազդային զգացումից, երկրորդ դէպքում՝ նա գիտակցօրէ՛ն կատարում է մի պարտականութիւն:

Նա զարգանում է ժողովուրդների ինքնագիտակցութեան եւ արժանապատուութեան զգացումի հետ, ընկնում՝ նրանց նիւթակրօնութեան, շռայլութեան, սեղմ ասած՝ նրանց բարքերի ապականութեան հետ, մեծապէս արագացնելով նրանց անկումը:

Հայրենիքներն ապրում են հայրենասիրութեամբ, ընկնում՝ նրանց պակասի պատճառով:

—

Մեր ժողովուրդն առանց հայրենասիրութեան այն է, ինչ որ մի մարմին՝ առանց հոգու:

Դա մայրն է - իր նման փրկարար - մի շարք առաքինութիւնների՝ գաղափարականութեան, անձնուիրութեան, արիութեան:

Դա պատերազմողի բարոյական ամրութիւնն է, կախարդական զրահը, անվրէպ զէնքը:

Հայրենասիրութեամբ հարուստ ժողովուրդը դէպքերի խաղալիքը չէ, այլ՝ նրանց հրամայողը:

Այդպիսին սովորական «նաւաբեկութիւններ»-ի ժամանակ չի զինաթափւում բարոյապէս: Վստահ իր բարոյական ոյժերին, նա շատ շուտ է ուղղում իր մէջքը՝ վերագրաւում իր նախկին դիրքերը, դրութիւնը:

Հայրենասիրութեան հետ բարձրանում են ազգերը, ընկնում՝ նրա հետ:

Փոքր ազգերը պարտադրօրէն աւելի հայրենասէր պիտ լինեն, քան մեծերը, մենք՝ աւելի՛ քան բոլորը:

Հայրենապա՛շտ պիտի լինենք մենք:

IV

ՎՏԱՆԳԱՒՈՐ ՄՈԼՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

«Հակաճառութիւնները ճշմարտութեան համար այն են, ինչ որ ստուերը պատկերների համար»:

Ոչի՛նչ է ունեցել աշխարհը, որ իր որոշ թշնամիները չունենար:

Անստուեր, անբիծ, անթերի միաժամանակ բոլորի կողմից չի համարուել եւ ո՛չ մի սկզբունք, ո՛չ մի սրբութիւն, ո՛չ մի արժէք:

Քննադատելի են համարուել աստուածներն ու աստուածութիւններն անգամ: Նոյն ճակատագիրն է ունեցել եւ հայրենասիրութիւնը: Եւ լաւ է, որ այդպէս է աշխարհը, այլապէս իրենց բովանդակ արժէքով երեւան պիտի չգային շատ բաներ, որոնցով կ՚արժէքաւորուի, կ՚իմաստնանայ, կը վեհանայ կեանքը:

—

Տգիտութիւն, եսականութիւն եւ աշխարհաքաղաքացիութիւն - ահա երեքը հայրենասիրութեան անհաշտ թշնամիներից:

Առաջինի մասին պիտի չխօսեմ:

Կոյրը մեղաւոր չէ, որ չի տեսնում:

Մտաւոր կուրութիւն է տգիտութիւնը:

Ձգւելի է եսասէրը: Նա թշնամի է իր նմաններին, իր հասարակութեան, մարդկութեան: Նա ստանում է՝ առանց տալու: Նա անիշխանական է, որովհետեւ իրաւունքներ ունի՝ առանց պարտականութիւնների: Նա գող է, տգրուկ, որովհետեւ ապրում է ուրիշների հաշւին: Իր յանցաւոր եսի մէջ փակւած, ինչպէս խխունջն իր պատեանի մէջ, նա արհամարհում է եւ հեգնում այն ամէնը, ինչ որ հենց այժմ անձնապէս չի շահեցնում, չի պարարտացնում:

Ուր շահ, ուր լաւ՝ այնտեղ հայրենիք:

Սա՛ է նրա շնական նշանաբանը:

Այլ պիտի լինէր աշխարհը, եթէ գոյութիւն չունենար այդ մարդատիպ հրէշը՝ եսասէրը: Դա՛ է առաջին դասալիքը, դա՛ է վախկոտը, փոքրոգին ու խաբեբան: Դա՛ է բարձրացնում անձնական կաշւի արժէքը, դա՛ է պսակազրկում սրբութիւնները, իդէալները, հայրենիքը:

Դա յաճախ փորձում է իր հոգու այլանդակութիւնները քօղարկել այս կամ այն մոլար տեսութեամբ, այս կամ այն ուռուցիկ եւ գեղեցիկ խօսքով:

Բայց, ի զո՜ւր աշխատանք. նրա կեանքը, նրա բարոյական վարքագիծը գալիս է մատնելու հրէշը մարդու պատկերով: Եթէ մի երկրի ղեկն ու ղեկավարութիւնն ունենայի ձեռքիս, բոլոր եսասէրներին, առնւազը, կը զրկէի այդ երկրի հողից ու ջրից օգտուելու իրաւունքից: Որքան շատ են սրանք մի ժողովրդի մէջ, այնքան անապահով է նրա ապագան: Չկա՛յ, մի հասարակութեան համար չկա՛յ աւելի մեծ չարիք՝ քան սրանց տխուր գոյութիւնը: Սրանց մասին է Շարլ Վագները ասել՝ «Մա՛րդ, դու աւելի քիչ արժես, քան այն շունը, որը նետւում է դեպի գողը, առանց վախենալու նրա հարւածներից»:

—

Հայրենիքի եւ հայրենասիրութեան թշնամին աշխարհաքաղաքացին է՝ կոսմոպոլիտը:

Սրա հայրենիքը, իր յայտարարութեամբ, համայն աշխարհն է, ազգը՝ համայն մարդկութիւնը:

Չկա՛ն ազգեր, կայ մարդկութիւնը,- ասում է այդ միամիտ երազատեսը եւ հայեացքն ուղղում դէպ անորոշ հեռուները:

Պիտ սիրել,- ասում է սա. պիտ սիրել բոլոր մարդկանց՝ առանց ցեղի, գոյնի, կուլտուրայի խտրութեան: Այո՛, պիտ սիրել, պիտ կարեկցել, աւելին՝ պիտ օգնութեան փութալ իր նմաններին: Սէրը դէպ մեր նմանները եղել է եւ կը մնայ կրօնների եւ յեղափոխութիւնների հռչակած առաքինութիւններից գերագոյնը: Պիտ ապրի մարդասիրութիւնը: Բայց մի՞թէ մեր դէպ մարդկութիւնն ունեցած սէրը ազատում է մեզ եւ մե՛ր ժողովուրդը սիրելուց, հայրենասէր լինելուց:

Մերը պիտի չսիրե՞լ, որովհետեւ պէտք է սիրել եւ օտարի՞նը: Մի մասը պիտի չսիրե՞լ, որովհետեւ սիրում ենք ամբողջութի՞ւնը: Անհեթեթութիւն չէ՞ դա: Իսկ եթէ բոլորն էլ, ի դժբախտութիւն աշխարհի, իրենց աշխարհաքաղաքացի յայտարարէին, այսինքն դադարէին իրենց ազգը սիրելուց, իրենց ազգային պարտականութիւնները կատարելուց - կը շահէ՞ր մարդկութիւնը: Եւ ինչո՞ւ միայն մե՛ր ազգը չսիրել, ինչո՞ւ միայն մերի՛ն չօգնել, չէ՞ որ դա էլ մի մասն է կազմում մարդկային ցեղի: Անհեթեթ վարդապետութիւն, որը պղատոնական սէր քարոզելով դէպ մարդկութիւնը, քար անտարբերութիւն է յանձնարարում դէպ մարդկութիւնը կազմող ազգերը: Չէ՛, լրջօրէն կաղում է այդ մոլար վարդապետութիւնը. նրան պակասում են տրամաբանութիւնը եւ բարոյականութիւնը:

Հեռո՛ւ մեզնից այդ մոլորութիւնը:

—

Բացարձակապէս հաշտելի են հայրենասիրութիւնն ու մարդասիրութիւնը: Բարեկամներ են սրանք եւ ոչ թշնամիներ: Միայն ազգասէ՛րը կարող է սիրել ե՛ւ մարդկութիւնը:

Աշխարհաքաղաքացին իրապէս սիրում է - եթէ սիրում է - ոչ այս, ոչ այն, այլ մի մեծ քիմերա, մի ոչնչութիւն: Ծառայելով իր ազգին, հայրենասէրը անուղղակի կերպով ծառայում է եւ մարդկութեան: Նոյնը չի կարելի ասել աշխարհաքաղաքացու մասին: Մարդկութիւնն իրենից չի ներկայացնում մի կազմակերպւած միութիւն, ինչպիսին է ազգը, որպէսզի նրա նկատմամբ կարողանանք որոշել մեր անելիքը, մեր պարտականութիւնները: Մեզնից որոշ եւ կոնկրետ զոհողութիւններ պահանջում է ազգը, որը եւ մեզ բարոյապէս կապում է մարդկութեան հետ, յարաբերութեան դնում նրա հետ:

Սեղմ ասած, աշխարհաքաղաքացին իրապէս ոչ ոքի հանդէպ իրեն պարտական չի համարում: Ահա՛ թէ ինչո՛ւ իրականում նա մօտենում է աւելի եսասէրին, քան այլասէրին: Իսկ եթէ եսասէր չէ, ապա ցնորապաշտ է, որի սէրը դեպ մարդկութիւնը պլատոնական է, անարժէք:

—

Աշխարհաքաղաքացիների մի մասը միամիտ ցնորապաշտներ են, զուրկ իրականութեան զգացումից, միւս մասը՝ պարտականութեանց փոքրոգի դասալիքներ, որոնք զանազան սոփեստութիւններով քօղարկում են իրենց դաւաճանութիւնը մարդկային առաքինութիւններից ամենագերագոյնի - հայրենասիրութեան հանդէպ: Սրանց աշխարհաքաղաքացիութիւնը այլ բան չէ, բայց եթէ բացասումն բոլոր տեսակի պարտականութեանց:

«Օգտակար անդամը ազգերի դաշնակցութեան մէջ նա է, որն ամենաուժեղ կերպով է թափանցւած ազգայնականութեան գաղափարներով»,- ասում է Ռուզվելթը:

«Հակահայրենասիրութեան տեսութիւնը,- ասում է եւրոպացի մի գրող,- միշտ էլ հանդիսանում է որպէս մարդկային ստորնութեան տեսութիւնը»:

V

ՄԵՐ ՄԱՄՈՒԼԸ

Թերթեր ունենք, որոնք աւելի օգտակար պիտ լինէին հայ ժողովրդին, եթէ բնաւ լոյս չտեսնէին:

Ժողովուրդը դաստիարակելու գործում մեծագոյն դերը մամուլինն է: Սակայն, շատ չնչին դեր է կատարում այն մամուլը, որը հանդիսանում է իր ժողովրդի մտա-բարոյականի հայելին միայն ու ուրիշ ոչինչ: Քիչ արժէք ունեն այն թերթերը, որոնք հասարակութեան հրամցնում են նրա սեփական մտա-բարոյական կեանքի պատկերը միայն: Առօրեայ անհամ անցքերի ու դէպքերի նկարագրութիւնը հրապարակախօսութիւն չէ: Խօսքի լուսանկարչութիւն պիտի չլինի մամուլը: Մերը, որոշ բացառութեամբ, շարունակում է մասնագիտանալ ժխտական քննադատութեան մէջ, արծագանքը հանդիսանալով կա՛մ մեր առօրեայ իդէազուրկ կեանքի, կա՛մ կողմնապահ պաշտպանը իր նեղ կուսակցական տեսակէտների եւ շահերի:

—

Թերթեր ունենք, որոնք աւելի օգտակար պիտ լինէին հայ ժողովրդին, եթէ բնաւ լոյս չտեսնէին:

Թերթեր ունենք, որոնց, ինչպէս եղինճին, չի կարելի ձեռք տալ՝ առանց խայթելու: Մաղձ, յիմարական ծաղր, շուկայիկ յիշոցներ, քաշքշուկ, սեւացում, զրախօսութիւն - ահա՛ մեր «խայթող» թերթերի հրապարակախօսութիւնը: Երբ պակասում են լուրջ ապացոյցներ, սրանք «մաքրասիրաբար» դիմում են իրենց այլանդակ փաստաբերութեան, լցնելով իրենց էջերը ոճական նման մարգարիտներով - «սրիկայ», «առաւ-փախաւ», «քառանկիւն գլուխ», «բարոյական ոչնչութիւն», «խայտառակութեան դրօշ», եւլն.:

Այդ թերթերի բովանդակութեան չափ եւ աւելի զզուելի է իրենց բազարի լեզուն: Սրանց համար գոյութիւն չունի հրապարակախօսական էթիկան: Սրանց համար չէ գրի եւ գրչի մաքրութիւնը: Չգիտեմ, այդ թերթերի խմբագիրները գիտե՞ն թէ խօսքը - դա մարդուս բարոյական շունչն է, թէ ինչ որ մտքերն՝ այն էլ խօսքերը, եւ որ խօսքը մատնում է մեր ներքին մարդը:

—

Միշտ էլ երբ ձեռքս եմ առնում որոշ թերթեր, ակամայից յիշում եմ «թերթերի իրար ոչնչացումը» խորհրդանշող մի ծաղրանկար՝«օձերի կռիւը» խորագրութեամբ:

Ոչնչացնելով իրանց շուրջը եղածներին, մնացած երկու օձերը ուտում են իրար եւ կռւադաշտում մնում է... երկու պոչ միայն...

—

Ժողովրդի հաւաքական սիրտը, նրա ինքնագիտակցութիւնը մշակելու փոխարէն, նրա մի մասը թշնամացնել միւսի հետ, նրա մի մասի անունից հայհոյել միւսին, յարձակւել միւսի վրայ - դա առնւազն հրէշութիւն է, դա ասել է՝ հեշտացնել մեր գիշատիչ հարեւանների գործը, դա ասել է՝ նորանոր աղէտների համար նախապատրաստել հայրենի ժողովուրդը:

Դա ազգովին ինքնաոչնչացում է, անձնասպանութիւն:

Թողնե՛նք փոքրիկ եսերի եւ փառասիրութիւնների ամօթալի եւ վտանգաւոր կռիւը՝ կռւադաշտում մի օր «երկու պոչ» չթողնելու համար:

—

«Օրինակը, թող որ համր, ամենակարող ուսուցիչներից մէկն է աշխարհի»:

Քիչ խօսք, շատ օրինակ՝ ժողովրդասիրութեան, պարտաճանաչութեան, անձնւիրութեան: Առանց վեհ եւ հրահանգիչ օրինակների՝ չկայ դաստիարակութիւն:

Թող գիտակցեն այդ հայ մամուլը վարողները եւ մեծապէս օգտւեն անցեալի բարոյա-գաղափարական հարստութիւնից: Թող յաճախ նրանք բնութագրեն հայ ժողովրդի ընտիր որդիներին, որոնք իրենց կեանքով թէ մահով մի բան աւելացրել են ազգ կոչւելու մեր իրաւունքին: Թող նրանք յաճախ պատմեն իրենց ընթերցողներին, թէ ինչպէս սիրեց հայրենիքն Ա-ն, թէ ի՞նչպէս ծառայեց իր ժողովրդին Բ-ն, թէ ինչպէս ընկաւ իր ժողովրդի համար Գ-ն, եւլն.: Թող գիտակցեն հետեւեալը.

- «Մարդկութիւնը հոգեպէս աճում է, մեծանում է դէպի վեհն ու հազւագիւտն ունեցած իր հիացումի շնորհիւ միայն» (Նիցշէ):

Թող մեր ցեղի հերոսականով ու մարտիրոսագրութեամբ յաճախ հիացմունքի ժամեր տան իրենց ընթերցողներին:

Թող մտքով իրենց ընթերցողին յաճախ տեղափոխեն Երկիր, թող այցի տանեն նրան պատմական այն բոլոր վայրերին, որոնց հետ կապւած է հայ ժողովրդի հմայքն ու փառքը: Թող ուխտի տանեն նրան այն նւիրա-

կան գերեզմաններին՝ մեր մեծ մեռելների հողաթմբերին, որոնք աւելի դաստիարակիչ են, քան մեր այսօրուայ դպրոցը, բեմը, եկեղեցին:

«Մեծ սիրտ եւ ազնիւ զգացումներ» - ահա՛ թէ ինչը ուժեղ կը դարձնի մեր ժողովուրդը եւ ահա՛ թէ ինչ պիտի տայ մեր ժողովրդին հայ մամուլը:

Կարո՞ղ են այդ անել մեր թերթերը - յուսալի է մեր ապագան:

Չե՞ն կարող - թող դադարեն թուղթ սեւացնելուց:

Աւելի պիտ հիանալ այն խմբագիրների լռութեամբ, որոնք չեն ուզում միայն աղմուկ եւ «փոշի» բարձրացնել:

VI

ԿՈՒՍԱԿՑԱՄՈԼՈՒԹԻՒՆ

Կուսակցամոլը - դա թշնամին է իր ժողովրդի, բարեկամը՝ իր ժողովրդի թշնամիների:

Չկայ աւելի մեծ չարիք, աւելի մեծ աղէտ ժողովրդի համար - մասնաւորապէս մեզ նման փոքրիկ ժողովրդի համար - քան կոյր կուսակցամոլութիւնը: Այդ տարամերժ ոգիի համար չկան բացարձակ ճշմարտութիւններ, նրա համար չկայ հասարակական շահ, պետական բարոյական: Նրա համար օտար է այն ամէնը, ինչ որ իր կուսակցութեան կնիքը չի կրում: Ինչ որ իր կուսակցութեան ծնունդը չէ - անընդունելի է եւ անհանդուրժելի: Ծափահարելի է միայն այն, ինչ որ բղխում է իր կուսակցութիւնից: Կուսակցականօրէն կոյր այդ դժբախտ արարածի համար երկու անգամ երկու հաւասար է ամէն ինչի, միայն ոչ չորսի:

Նմանը ե՛ւ տեսնում է ե՛ւ չի տեսնում, ե՛ւ հասկանում է ե՛ւ չի հասկանում:

Սեւամորթին աւելի հեշտ է ճերմակցնել, քան սրան ընդունել տալ ամենապարզ ճշմարտութիւնը, օրինակ՝ համոզել թէ ամբողջութիւնը մեծ է, շատ է իր մի մասից:

Կուսակցամոլութեան չար ոգին աստիճանաբար մթագնում է սրանց բանականութիւնը, կլանում խիղճը, եւ, վերջ ի վերջոյ, ի սպառ սպանելով այդ դժբախտի բարոյական կարողութիւնները, դարձնում է սրան բարոյական ապուշ:

Քաղաքական ստախօսութիւն, հայհոյանք, կեղծիք, բանսարկութիւն, դաւեր - ահա՛ սրա «կուսակցաշէն գործունէութիւնը»:

Նա թունաւորիչն է ազգային կեանքի: Նա թշնամանք, ատելութիւն,

անհամբերողութիւն է սերմանում միեւնոյն ժողովրդին պատկանող անհատների եւ խմբակցութիւնների միջեւ:

Նա ստեղծում է ներքին ճակատներ, ջլատում ժողովրդի ոյժերը: Նա հասարակութեան թշնամին է, բարեկամը իր ժողովրդի թշնամիների: Դա անէծքն է մեր կեանքի: Կուսակցամոլութեան թունալի ախտով բռնուած ժողովրդի ներկան տխուր է, ապագան՝ անյուսալի:

Այդ ախտով հիւանդ ժողովուրդը միշտ էլ ներքուստ պառակտուած է, միշտ էլ պատրաստի որս իր գիշատիչ հարեւանների համար:

Կուսակցամոլութիւն, կուսակցական եսականութիւն, անհամբերողութիւն - այս զզուելի ախտերը հետեւանք են երկու բանի. առաջինը՝ հոգեկան աղքատ կուլտուրայի, երկրորդը՝ ազգային եւ հասարակական զգացումների տհասութեան.

Հոգեպէս անառողջ է կուսակցամոլը: Ամէն ինչ կուսակցութեանս համար - ահա՛ սրա հասարակական բարոյականը:

«Պետութիւնը՝ դա ես եմ»,- ահա՛ նրա պետական բարոյականը:

Սրա կուսակցական «զարգացումը», ասացինք, վերջ ի վերջոյ պսակւում է բարոյական ապշութեամբ. տխո՜ւր վախճան, որին դեռ ձգտում են հազարաւորները, որը, ի դժբախտութիւն հայ ժողովրդի, մեր որոշ կուսակցութիւնների կողմից դեռ համարւում է քաղաքական առաքինութիւն:

VII

ՊԱՇՏԱՄՈՒՆՔԸ ՄԵԾ ՄԵՌԵԼՆԵՐԻ

«Յիշէ զանոնք, որ գերեզմանին մէջ ննջելով
սուրն իրենց գլխուն ներքեւը դրին:
Քաջաց բարձն է սուրը»:

Նահատակնե՜րը...

Այդ մեծ մեռելները ամենէն քիչ իրենց եւ իրենց կուսակցութեանց կը պատկանին, ամբողջովին՝ իրենց ցեղին եւ պատմութեան:

Իրենց ընտրած ճանապարհի բերմամբ նրանք կ՚աշխատեն ու կը զոհաբերեն այս կամ այն կուսակցութեան դրօշի տակ, նահատակւելով՝ նրանք **կ՚ազգայնանան,** կը դառնան սրբազան սեփականութիւնը ողջ ազգի:

Չկան կուսակցական նահատակներ ու հերոսներ, կայ ու կը մնայ ազգային մարտիրոսագրութիւնը եւ հերոսականը:

Սակայն այդպէ՞ս է հասկացել մեր ժողովուրդը. ո՛չ, դժբախտաբար:

Հետեւանքը: Մեր նկուն եւ ողբալի վիճակը:

Պատճառը: Կոյր եւ բարբարոս կուսակցամոլութիւնը - մի զարհուրելի ախտ, որ պիտ թուլանայ, որ ուժեղանանք ազգովին:

Այդ ուղղութեամբ պիտ աշխատեն դպրոցը, մամուլը եւ ի՛նքը՝ ժողովուրդը:

—

- Իր ընտիր մեռելների պաշտամունքը չունեցող ժողովուրդը՝ ապերախտ ու բարբարոս, անարժան է անկախ հայրենիքի, որը միշտ էլ նահատակների սրբազան աճիւնից կը բարձրանայ:

- Մի ժողովուրդ բարոյապէս այնքան է ուժեղ, որքան ջերմ է նրա պաշտամունքը դէպի իր մեծ մեռելները:

- Իր նահատակների, իր անմահների դէմ մեղանչող ժողովուրդը մեծապէս մեղանչում է իր ապագայի դէմ:

- Կրօններն այլ բան չեն, բայց եթէ պաշտամունք մեծ մեռելների:

Անկրօն է դէպ իր նահատակներն անտարբեր ժողովուրդը, ասել է՝ եւ անհոգի, դատապարտուած բարոյական փտութեան:

- Մի ժողովրդի հզօրագոյն զինակիցները պատերազմի ժամանակ նախ եւ առաջ իր մեծ մեռելներն են:

- Խեղճ է այն ժողովուրդն, որն իր պայքարի եւ խոյանքների ժամանակ չի զգում, թէ իրեն աներեւութաբար զօրավիգում են իր մեծ մեռելները:

Չափւում են բանակները, ժողովուրդները, յաղթում՝ մեռելները:

- Իր անմահներից չօգտւող, ասել է՝ սրանց պաշտամունքը չունեցող ժողովրդի բովանդակ ոյժը իր թւի, իր քանակի մէջ է միայն:

Եօթնիցս վա՜յ նման ժողովուրդին՝ անփառունակ մահ ու մոռացում - ահա՛ նրա փայն ու բաժինը աշխարհից:

VIII

ԴԱՍՏԻԱՐԱԿԻՉ ՏՕՆԵՐ

«Ամենափառաւորը տեսարաններից - դա ժողովն է մի ժողովրդի»:

Իմ օտարազգի բարեկամներից մէկը մի օր հարցնում էր ինձ. «Մի՞թէ հայերդ ազգային որեւէ տօն չունէք: Հրեաների խանութները կարելի է յաճախ փակ տեսնել, իսկ հայերինը միշտ էլ բաց են»:

Նոյն զարմանքը կարող է յայտնել ե՛ւ յոյն ե՛ւ ռոման ե՛ւ եւրոպացի մտաւորականը:

Մեր ազգային տօները շարունակում են մնալ մեր Եկեղեցու սեփականութիւնը:

Հայ ժողովրդի նիւթականապէս ապահով եւ նիւթականացած մասը իրեն ազգայնօրէն եւ մարդկօրէն պարտական չի զգում յարգելու իր ազգային տօները:

Այդ նւիրական օրերին հանդիսատեղիներում կարելի է տեսնել մեր ժողովրդի խոնարհ տարրերին միայն, իսկ նիւթականացած բարեկեցիկը, հարուստը - չնչին բացառութիւնով - չի երեւայ այդ օրերին: Նա միջոցներ ունի, օտար երկնքի տակ ապրելու լայն հնարաւորութիւն ունի նա:

Նրան պէտք չէ հայրենասիրութիւնը: Կա՞յ հայրենիք - լա՛ւ, չկա՞յ - ոչի՛նչ, առանց նրան էլ կարելի է ապրել:

—

Իսկ հայ կապիտալիստնե՞րը. արժէ խօսել սրանց մասին: Չէ՞ որ սրանք ազգ չունեն, հայրենիք չեն ճանաչում: Չէ՞ որ սրանց սրբազան հայրենիքը շահաշատ շուկան եւ մեծածախս հաճոյավայրերն են: Սրանք դուրս են ապրում ազգերից ու մարդկութիւնից: Պարտականութիւններ չունեն սրանք: Մարդ չեն սրանք:

Ա՜հ, այդ «վատ սրտի ու լաւ ստամոքսի» տէրերը. իրենց նիւթական բաւականութիւնների համար միայն ապրող մարդատիպ անասուններ, որոնք օտարի համար աշխատող ազնիւ անասունի արժէքն իսկ չունեն: Տմա՛րդ արարածներ, որոնց մասին ասել է մի գրող. «Ձա՛րկ կրծքին, դատարկ ձայն կը տայ»:

—

«Կայ մի կարգադրութիւն,- ասում է հռչակաւոր Ռոբեսպիէրը - որը պէտք է համարել որպէս էական մասը ընդհանուր դաստիարակութեան»: Խօսքս ժողովրդական տօների մասին է: Հաւաքէ՛ք մարդկանց եւ դուք նրանց կը դարձնէք աւելի բարի: Հաւաքւած մարդիկ պիտ աշխատին հաճոյանալ իրար, իսկ հաճոյանալ կարող են միայն գործերով, որոնք նրանց դարձնում են յարգանքի արժանի: Տէ՛ք նրանց միութեան մի ուժեղ մղում - բարոյական, քաղաքական - եւ սէրը դէպի ազնիւ գործերը, բաւականութեան հետ, կը թափանցեն նրանց սրտերի մեջ... Ամենափառաւորը տեսարաններից՝ դա ժողովն է մի մեծ ժողովրդի:

Տօները անկասկած կը լինեն միաժամանակ եւ ամենահաճելի կապը եղբայրութեան եւ ամենաուժեղ միջոցը վերածնութեան:

Ունեցէ՛ք ընդհանուր տօներ հանրապետութեան համար:

Ունեցէ՛ք մասնաւոր տօներ ամէն տեղի համար, որոնք պիտի վերականգնեն այն, ինչ որ եղծել են, կործանել անցքերը:

Թող բոլորը ճգնեն արծարծել ազնիւ զգացումներ - հրապոյրն ու զարդը մարդկային կեանքի - ազատասիրական ոգեւորութիւն, հայրենասիրութիւն»...

IX

ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԻՒՆ

Ինքնապաշտպանութիւն - դա միակն է արուեստներից, որի թերութիւնները գրչի, վրձինի, մուրճի փոխարէն սրբագրում է թշնամու արնոտ սուրը:

Ինքն իրեն յարգող ժողովուրդը իր ինքնապաշտպանութեան յոյսը դնում է նախ ի՛ր բազուկի, ի՛ր զէնքի վրայ:

Իր ոյժերից զատ ամէն ինչի ապաւինող ժողովուրդն արժանի չէ անկախ հայրենիք ունենալու, ազատ ապրելու:

Ահա՛ թէ ինչու անկախութեան բարիքներից լիուլի օգտուելու իրաւունքը ձեռք բերելու համար, ժողովուրդները նախ հրամայողաբար ձեռք են բերում ինքնապաշտպանութեան բարդ արուեստը, որը պահանջում է լինել ուժեղ, էլի՛ ուժեղ եւ մի՛շտ ուժեղ:

Եղի՛ր այնքան ուժեղ, խրատում է պատմութիւնը, որ թշնամիդ չյանդգնի յարձակուելու:

Զգացնել տուր թշնամիիդ, որ ամէն վայրկեան պատրաստ ես պատերազմելու, եւ նա կը հրաժարուի զինու ոյժով քեզ անհանգստացնելու մտքից - ահա՛ սկիզբն ու վախճանը քաղաքական իմաստութեան:

—

Ինքնապաշտպանութիւն - դա միակն է արուեստներից, որի թերութիւնները գրչի, վրձինի, մուրճի փոխարէն սրբագրում է թշնամու արնոտ սուրը:

Ապահով չէ այն ժողովուրդը, որը կատարելապէս չի տիրապետում այդ արուեստին:

«Մի զինուոր սպանում է Արքիմեդին»:

Ոչինչ արժէ բազմարուեստ ժողովուրդը, եթէ նա անվարժ է, թոյլ է այդ արուեստի մէջ:

Տխուր ապացոյց ասածներիս - արեւմտահայութեան մի մասի կրաւորական ոչնչացումը:

Մի ժողովրդի՝ անկախ կեանքի բարիքներից յարատեւօրէն օգտուելու համար անհրաժեշտ է երկու բան, առաջինը՝ ինքնայարգանք, երկրորդը՝ ռազմունակութիւն:

—

Մեր պատմութեան մէջ մի բան միշտ էլ ինձ ցաւով եւ ամօթով է լցրել: Դա մեր ժողովրդի մի մասի կրաւորական նահատակութիւնն է: Հարիւր հազարաւորները հեզաբար առաջնորդւել են դէպի ձորերն ու ծովափերը՝ ոչնչացւելու:

Արգահատելի է կրաւորաբար նահատակւող ժողովուրդը: Նա տուժում է եւ բարոյապէս: Նա իր նկատմամբ առաջացնում է արգահատանք եւ ոչ յարգանք: Նրա համար գուցէ եւ ցաւեն, բայց նրան չեն զինակցի: Թոյլերը զինակից չեն ունենում: Անբարեկամ են մնում այն ժողովուրդները, որոնց մէջ մեծ թիւ են կազմում անհայրենասէրները, անմարտունակները, անարիները - տարրեր, որոնց վտանգի ժամանակ միշտ էլ վիճակւում է աճեցնելու կրաւորական զոհերի թիւը:

—

Մի ժողովրդի բարոյա-քաղաքական արժէքը մատնում է նրա ինքնապաշտպանութիւնը:

Նա այն է, ինչ որ են իր որդիները՝ կռւում, կռւադաշտում: Նրա մարտիկները գիտե՞ն հեգնել մահը - նա ուժեղ է եւ արժանի յարգանքի:

Նա կարող է ժամանակաւորապէս պարտւել, տեղի տալ, բայց չի կորչի: Նրա բարեկամութիւնը կը փնտռեն բոլորը, նրան կը զինակցեն բոլորը:

Անփառունա՞կ է նրա մարտիկների մահը - նա թոյլ է, յարգանք չներշնչող, անբարեկամ, անզինակից եւ յաճախ՝ ողբերգօրէն մենակ: Արիութիւնը, Կարլայլի անմահ արտայայտութեամբ, եղել եւ շարունակում է մնալ որպէս «յաւիտենական պարտականութիւն»: Այս բարձր յատկութիւնն է փրկում ազգերը ֆիզիքական եւ բարոյական անկումից: Արիութիւնը - դա այն արժէքն է, որով ժողովուրդները գնում են իրենց անկախութիւնը: Ազատ եւ անկախ հայրենիք ունենալու, ազատ եւ անկախ ապրելու իրաւունքն է արիութիւնը:

—

Ամէն մի կռւից յետոյ պարզւում է հետեւեալը. սպանւած՝ այսքան, վիրաւոր՝ այսքան, անյայտ կորած՝ այսքան:

Անյայտ կորածները - դա վատասիրտ դասալիքներն են, թշնամու բարեկամները: Տարբերութիւնը սրանց եւ կրաւորական զոհերի միջեւ այն է, որ սրանք մեռնում են միայն բարոյապէս:

Ողբալի է այն ժողովուրդը, որն իր ինքնապաշտպանութեան կռիւներում կրաւորաբար մեռածների - ֆիզիքապէս թէ բարոյապէս - մեծ թիւ է տալիս:

Խղճալի՛ է նման ժողովուրդը, որի մէջ «անյայտ կորածները» վտանգի ժամանակ լեգէոն են կազմում:

Նման ժողովրդի ամէն մի պարտութիւնը դառնում է նրա Վատերլօն, նրա վերջնական պարտութիւնը:

Դա կարող է մի օր անյայտանալ, կորչել, տալով իր տեղը զօրաւորին, ռազմունակին, արիին:

—

Եթէ քա՛ջ ես, ժողովո՛ւրդ, քեզ հետ են անգամ քո երկրի դէմ պատերազմական գործողութիւններ սկսած թշնամիներդ, քեզ հետ է նրանց համակրանքը: Ահա՛ ոյժն ու արժէքը արիութեան, քաջութեան: Եթէ քաջանուն ես, ժողովո՛ւրդ, քեզ հետ են շատերը, քեզ հետ են բոլորը:

«Մի օր մեզ պէտք կը գայ»,- մտածում են քաջ ժողովրդի հարեւանները եւ խախտելով իրենց չէզոքութիւնը, նետւում են կռւադաշտ նրա համար եւ նրա հետ կողք-կողքի կռւելու թշնամու դէմ:

Չքանալու դատապարտուած անարի ժողովրդի հետ ոչ ոք է կապում իր ճակատագիրը: Ոչ ոք թոյլերի անխուսափելի պարտութիւնը բաժանելու յիմարութիւնը ունի: Ոչ ոք է իր զէնքի պատիւը վտանգի դնում մարդասիրաբար:

Ժողովուրդները եւ սրանց կառավարութիւնները մարդասէր չեն եւ չեն լինում: Եւ ոչ ոք իրաւունք ունի պահանջելու սրանից՝ մեռնել մեռնողի հետ:

Ահա՛ թէ ինչու ժողովուրդներն անկախ ապրելու համար պարտադրօրէն նախ ցոյց են տալիս, որ իրենց մէջ երկաթ կայ, որ իրենց որդիները արիաբար մեռնել գիտեն, որ կրաւորական զոհերը՝ գերեզմանում, իսկ դասալիքները՝ իրենց երկրում տեղ չունեն:

Աշխարհը ճանապարհ է տալիս ուժեղներին, որոնց առաջ խոչերն ու խոչընդոտները վերածւում են մարմարիոնէ սանդուխների դէպ առաջ ու վերեւ, դէպ յուսալի ապագան:

Լինենք ուժե՛ղ:

X

ՂԵԿԱՎԱՐՈՒԹԻՒՆ

Ռազմավարի հանճարը բղխում է իր հոգու վեհութիւնից:

Ասել ենք, թէ ժողովուրդները իրենք են դարբինը իրենց ճակատագրի: Աւելի ճիշտ պիտ լինէր, եթէ ասէինք - մի ժողովրդի ճակատագրի դարբինը նրա մտաւորականութիւնն է:

Յանձին իրենց ժողովուրդների, իրապէս չափւում են - սկզբունքային թէ ռազմական բաղխումների ժամանակ - մտաւորականութիւնները, ժողովուրդների ղեկավար տարրերը:

Միեւնոյն ժողովուրդը, բանակը՝ նայած իր ղեկավարներին, կարող է եւ հրաշագործութիւններ կատարել, եւ խայտառակօրէն ծունկի գալ հակառակորդի առաջ:

Ուզում եմ ասել, թէ մի բանակ, մի ժողովուրդ հոգեբանօրէն այն է միայն, ինչ որ նրա հաւաքական հոգու մէջ դրել են նրա ղեկավարները - դա այն է, ինչ որ իր ղեկավարներն են:

—

Ո՞վ է, սակայն, կատարեալ ղեկավարը:

Ոչ անշուշտ բոլոր սպաները, բոլոր «մեծերը», որոնք բանակի հետ շարժւում են դէպի կռւադաշտ:

Շատերը սպաներից այլ բան չեն, քան մի զոյգ ուսադիր, մի աստիճան, մի տիտղոս: Իսկական առաջնորդը շատ անգամ չի նշանակւում, նա երեւան է գալիս, երբ նրա կարիքն է զգացւում, նա յայտնւում է վտանգի ժամանակ:

Մէկը կարող է աստիճանով զօրավար լինել, բայց ոչ՝ եւ առաջնորդ: Մի ուրիշը, կրելով պարզ հարիւրապետի ուսադիրները, կարող է կատարեալ առաջնորդ լինել:

Եթէ չեն ծնւում, ապա՛ դառնո՛ւմ են առաջնորդներ:

—

Նա յաճախ սրտի եւ գործողութեան մարդ է, քան մտքի:

Դա՝ հակառակ նրանց, որոնք յաճախ լաւագոյն բանակները վերածում են հօտերի, գիտի հօտերը վերածել լաւ բանակների:

Նա՝ առիւծների խումբը ղեկավարելու նշանակւած ոչխարը չէ, այլ՝ ոչխարների հօտը կառավարող առիւծը:

Նրա համար զինւորը, մարդը այն չէ, որ տեսնում ենք, մարմինը չէ մարդ նրա համար, այլ այն, որ կարող է լինել, այն, որ ընդունակ է լինելու մարդը, այն, ինչ որ ինքն է ուզում, որ լինի իր զինւորը, իր առաջնորդութեան յանձնւած մարդը:

Նրա համար երեք բարձր ճշմարտութիւններ ունի ժողովրդական ինքնապաշտպանութիւնը - հոգեբանականը՝ պէտք է լինել արի, բարոյականը՝ պէտք լինել անձնազոհ, քաղաքականը՝ պէտք է լինել ինքնայարգ:

Ահա՛ թէ ինչու կատարեալ առաջնորդը նախ հոգեբանօրէն վերստեղծում է իր բանակը, տալով նրան իր հոգին:

Դա՝ ասել է միաժամանակ եւ դաստիարակ:

—

Եւ հոգեբան է նա:

Նա իր բանակի հոգիի մոգական բանալին ունի: Նա գիտի, որ հաւատ ներշնչել զինւորին, կը նշանակի տասնապատկել նրա ոյժերը:

Քիչ անգամ է նա դիմում զինւորների բանականութեան, բայց միշտ էլ՝ սրտին: Նա սիրտ է դնում իր ամէն մի խօսքի մէջ, ահա՛ թէ ինչո՛ւ եթէ կտրէք նրա խօսքերը՝ նրանցից արիւն կը կաթի: Նա գիտի, որ կռւի ժամանակ զինւորը աւելի բարոյական մենակութիւնից է վախենում, քան մահից, ահա՛ թէ ինչո՛ւ նա երեւում է ամէն տեղ, հասնում ամէնին, որպէսզի ոչ ոք - զինւոր թէ ղեկավար - իրեն մենակ չզգայ, որ անխաթար պահի զօրքերի ներքին բարոյական կապը, որ ամէն մէկին զգացնել տայ, թէ իր հետ է ամբողջ բանակը, ազգը, ցեղը եւ ի՛նքը՝ յաջողութեան Աստուածը: Նա գիտի եւ հետեւեալը.

- Զինւորի համար կռւի ժամանակ դրօշակը, ազգը, հայրենի երկիրը եւ սրա սրբութիւնները խորհրդանշողը՝ դա իր առաջնորդն է. ահա՛ թէ ինչո՛ւ կատարեալ առաջնորդը միշտ էլ իր զօրքերի հետ է, նրանց կողքին եւ նրանցից առաջ:

—

Թշնամիները - դեռ մարզադաշտում ու զօրանոցում նա ներշնչում է իր զօրքին - թշնամիները նման են շների, որքան որ վախեցար, այնքան կը յարձակւեն:

Այսքան արհամարհոտ է նրա խօսքը:

Ո՞վ ասաց, որ միայն մենք, որ միայն մեր ազգն իրաւունք չունի ապրելու. յառա՜ջ, ցոյց տանք, որ ապրելու իրաւունք եւ արժանիք ունենք, - այսպէ՛ս է նրա խօսքը կռւադաշտում:

Ամէն մի կռւի վրայ նա նայում է որպէս «դրօշամարտ»ի վրայ, որպէս դրօշի համար մղւող կռւի, եւ լարում իր եւ իր բանակի բովանդակ կարողութիւնները:

Ամէն մի արնոտ բաղխում նրա համար մի նոր քննութիւն է, ուր իր ժողովուրդը մի աւելորդ անգամ եւս պիտ ապացուցի, թէ արեւի տակ տեղն իր ունենալու իրաւունքն ունի:

—

Նա ասում է.

- Իր հողի վրայ պարտւելը կրկնակի եւ աններելի պարտութիւն է: Իր երկրի սահմաններում պարտւող ժողովուրդն իրաւունք չունի խօսելու անկախ հայրենիքի մասին:

Իր հողի վրայ կռւող, ինքնապաշտպանւող ժողովուրդի հետ են իր մեծ մեռելները - մի ոյժ, որի առաջ անզօր են բոլոր տեսակի ոյժերը:

Նրա հետ է իր երկրի արեւը, որի առաջ թշնամին «ձիւնէ մեծութիւն է միայն»:

Նրա սիրտը լցնում է իր դաշտերի շունչը, իր լեռների սէգութիւնը:

Նրան օրհնում է հայրենի երկինքը:

Յաղթութի՜ւն - աղօթում են կանայք ու կոյսերը նրա համար:

Յաղթութի՜ւն - երգում են մանուկները:

Յաղթութի՜ւն - ղօղանջում են զանգերը:

Բոլորը եւ ամէն ինչ կանչում է, ասում՝ «Քեզ հետ ենք, յառա՜ջ»: Ամէն ինչ եւ բոլորը կանչում եւ հրամայում են նրան՝ «Յաղթի՜ր մեզ համար»:

Եւ յաղթում է նա:

Այսպէս, ե՛ւ գաղափարապաշտ է կատարեալ ղեկավարը:

—

Նա իր առաջնորդն ունի, որը, սակայն, ոչ աստիճանով իրենից բարձր զինւորական է եւ ոչ էլ երկրի իշխանութիւնը:

Աներեւոյթ է, բարոյական է նրան առաջնորդող ոյժը:

Կառավարութիւն, բարձր հրամանատարութիւն, ձեւական օրէնք - այդ բոլորը շատ քիչ բան կարող են տալ նրան: Դիմադրութիւն - հնարաւորութեան սահմաններում յաղթութիւն - եթէ ձեզ տրւած են նիւթական գերադաս ոյժեր: Այսքան համեստ են ձեւական իշխանութեան եւ օրէնքի պահանջները:

Կայ աւելին:

Կառավարութիւնը, բարձր իշխանութիւնը, օրէնսդիրը կ'արդարացնեն ձեր պարտութիւնը, եթէ կարողացաք ձեւականօրէն արդարացնել ձեր յանցաւոր քայլը:

Չէ՞ որ միշտ էլ «երկու բերանով» կարելի է «ապացուցել», որ պարտութեան օրը հացը ժամանակին չհասաւ, թշնամին թւական գերազանցութիւն ունէր, մեր նահանջի ճանապարհը վտանգւելու վրայ էր, եւլն.:

Եւ հասկանալի է դա:

Կառավարութիւն, բարձր հրամանատարութիւն, դատաւորներ - սովորական մարդիկ են սրանք, որոնք վաղը միեւնոյն դրութեան մէջ կարող են ընկնել եւ իրենք:

Ահա՛ թէ ինչո՛ւ սրանցով եւ սրանց հրահանգներով առաջնորդւող ռազմավարը, եթէ գերադաս ոյժեր չունի, կարող է երբեմն դիպւածով մասնակի յաջողութիւն ունենալ, սակայն երբեք բախտ չի ունենայ հաղորդագրելու ռազմադաշտերից՝ «Եկայ, տեսայ, յաղթեցի»:

Ահա՛ եւ թէ ինչո՛ւ կատարեալ ղեկավարը երկրի ձեւական իշխանութիւնից զատ միշտ էլ ունի նաեւ մի այլ իշխանութիւն - իր ժողովրդի մեծ մեռելների բարոյական իշխանութիւնը, որը հարիւրապատկելով նրա ոյժերը, հարիւրապատիկ պահանջկոտ է եւ աններող:

—

Նրա համար միշտ էլ ճիշտ է հետեւեալը. մի բանակ, որն իր մէջ յաղթել է մահւան վախը՝ անպարտելի է եւ ամենակարող:

Նա գիտի այդ ճշմարտութիւնը, ասել է՝ գիտի եւ յաղթելու գաղտնիքը:

Թշնամուց աւելի վտանգաւոր է համարում իր բանակի շարքերում եղած վախկոտներին:

Վախը - դա միայն «սրտի յիմարութիւն» կամ «ջղերի խաղ» չէ: Դա անինքնավստահութիւնն է, անվստահութիւն դէպ իր եւ իր բանակի կարողութիւնները, դա հակառակորդի գերազանցութեան սպանիչ գիտակցութիւնն է:

Ահա՛ թէ ինչո՛ւ վախկոտի համար միշտ էլ ուժեղ է թշնամին, անգամ այն ժամանակ, երբ իր դէմ կռւողը իրենից թոյլ է բոլոր տեսակէտներից:

Վախկոտներն են արիացնում, ուժեղացնում թշնամուն: Սրանք են հեշտացնում թշնամու գործը: Սրանց երեսից են կորչում հայրենիքները:

Սրանք են իրական թշնամին:

Կռի՞ւ նախ սրա՛նց դէմ:

Այսպէս է հասկանում նա բանակի հոգեբանութիւնը:

—

Նա գիտի, որ չկայ զինւոր, անգամ ամենաանարին, որն ընդունակ չլինէր կարող առաջնորդի ազդեցութեան տակ հերոսին վայել գործեր կատարելու:

Նա գիտի, որ չկայ մարդ, որ ընդունակ չլինէր հոգեկան խոր յուզում-

ների, խանդավառութեան, ինքնամոռացութեան - հոգեկան վիճակներ, երբ մարդու մէջ մեռնելու աստիճան թուլանում է կենդանական բնազդն ու վախը:

Եւ որովհետեւ համոզելու, ցնցելու, ներշնչելու արուեստն ունի, ահա, օրեր անց, նրա բանակը ծփում է վտանգն արհամարհող, մահն անգիտացող ռազմաշունչ տրամադրութեամբ:

Նա յաղթել է այլեւս, յաղթել իր բանակի անինքնավստահութեանը, վախին:

Այժմ կարող է երեւալ թշնամին՝ նա պատրաստ է:

—

Նա ռազմարուեստագէտ է եւ ոչ զինուորական արհեստաւոր:

Նրա համար կռիւը արուեստագիտական ստեղծագործութիւն է եւ ոչ արհեստ: Իր ռազմավարութիւնը նա մշակում է պատերազմի էութեան մասին իր ըմբռնումի եւ իր երկրի տեղագրական պայմանների համաձայն: Եւ ոչ մի «զմռսւած կանոն» ու ոչ մի մեռեալ շաբլոն: Վճռականութիւն եւ տարերայնութիւն - ահա՛ նրա վարած կռիւը: Գայլը խեղդել բնի մէջ - երբ յարձակւում է: Որեւէ յամառ կէտի վրայ ուժաթափել թշնամուն եւ ապա անցնել յարձակողականի - ահա՛ նրա պաշտպանողականը: Ոչինչ է անհանգստացնում նրան իր երկրում:

Ցո՞ւրտ է, աւելի լաւ, թո՞յլ է թշնամին - յարձակւի՛ր: Անձրեւո՞ւմ է, աւելի լաւ, թո՞յլ է թշնամին - յառաջացի՛ր: Բո՞ւք է, մառախո՞ւղ - ուրախացի՛ր որպէս գայլը, եւ առա՜ջ: Իսկ երբ իջաւ եօթնիցս օրհնւած գիշերը - ցնծա՜, դու արդէն յաղթել ես: Դու չես կարող չյաղթել, որովհետեւ կռիւը տարւում է քո նւիրական հողի վրայ, քո երկրի սահմաններում, ուր ամէն ինչ քեզ հետ է, ուր ամէն ոք եւ ամէն ինչ կանչում են՝ «քեզ հե՛տ ենք, յառա՜ջ»:

—

Վերջապէս, նա ընկերն է իր զինուորի: Զօրքը եթէ ոչ առաջին, ամենաուշը երկրորդ օրը բնազդաբար ճանաչում է իր առաջնորդներին: Նա շատ շուտ է տարբերում «մեծ»-ը «փքւած»-ից: Նա յարգում է գիտակցական կարգապահութիւնը, բայց չի սիրում պաղ եւ անհոգի պաշտօնականութիւնը: Նա ուզում է, որ իր առաջնորդը լինի աւելի սրտի մարդ, եւ, ամենագլխաւորը, նաեւ զինուոր: Եւ այդպիսին է կատարեալ առաջնորդը. նրան պաշտում են, բայց չեն վախենում նրանից եւ պիտի չվախենան:

Անբարոյացուցիչ է վախը: Կեղծ է այն ամէնը, որ հիմնւած է վախի վրայ - կրօն, բարոյականութիւն, կարգապահութիւն, եւլն.:

Նա «ներքին պահակն է» իր բանակի, նրա կենդանի խիղճը՝ միշտ արթուն ու հսկող:

Երեւաց նա եւ ահա բոլորը թափւեցին նրա շուրջը - եւ այլեւս ոչ ոք է յոգնած, սոված, դառնացած: Կառավարելու մի հատիկ միջոց ունի նա՝ խօսքը, խիստ, բայց ընկերական, խօսքը՝ երբեմն որպէս սանձ եւ միշտ էլ որպէս խթան: Նա կառավարում է անձամբ, արհամարհելով ճանապարհը մատով ցոյց տւող ղեկավարներին: Ներշնչւած պատմութիւնից, նա իր զինւորներին եւ ղեկավար տարրերին փոխանցում է իր ապրումներն ու գաղափարները: Խիստ է, բայց ոչ կոպիտ: Հպարտ է, բայց ոչ փառասէր: Պարզ է, չարքաշ, անշահասէր: Հաննիբալին յաղթող, Հռոմի կոնսուլներից յանիրաւի աքսորւած Սքիպիոնը չէ նա, որ մեռնելով աղքատութեան մէջ, կտակում է գրել իր գերեզմանաքարին վրայ՝ «Ապերա՜խտ հայրենիք, դու տէր պիտի չլինես իմ ոսկորներին»:

Նա Հելլադայի մէծ ռազմավարներից Ֆոկիոնն է, որը յանիրաւի մահւան դատապարտւած, թոյնը խմելուց առաջ ասում է որդուն. «Յանձնարարում եմ քեզ ծառայել հայրենիքիդ սրտանց եւ հաւատարմօրէն, եւ, ամենագլխաւորը՝ մոռանալ, որ իմ ծառայութեան համար նա ինձ վարձատրեց մահւամբ»:

Այսպէս է կատարեալ ղեկավարը: Նա միաժամանակ ե՛ւ դաստիարակն է, ե՛ւ ռազմարւեստագէտը, ե՛ւ կախարդը, ե՛ւ ընկերը - նա Աստւածն է իր բանակին:

XI

ԲԱՐՈՅԱՇՈՒՆՉ ՄԹՆՈԼՈՐՏ

Ազգերին, որպէս իրենց ստւերը,
հետեւում է իրենց արժանի բախտը:

Իր ճակատագրի դարբինն է ամէն մի ժողովուրդ: Վաղ թէ ուշ, նա դառնում է այն, ինչ որ ուզում է լինել այսօր:

Այսօրուայ նրա իդէալը - դա միաժամանակ ե՛ւ մարգարէացումն է, ե՛ւ խոստումն այն բանի, ինչ որ վերջ ի վերջոյ պիտ դառնայ նա:

Անհատ, խմբակցութիւն, ժողովուրդ - հոգեբանօրէն այլ բան չեն այդ բոլորը, քան իրենց իդէալի ստեղծագործութիւնը:

Մարդկային բոլոր ցեղերը բոլոր ժամանակներում ունեցել են մի որոշ իդէալ - որպէս մի իւրատեսակ ոգի, որը իմաստ եւ վեհութիւն հաղորդելով նրանց կեանքին՝ փրկել է նրանց բարոյական փտութիւնից:

—

Չկա՛յ աւելի զարհուրելի բան, քան աննպատակ գոյութիւնը:

Յանցանք է դա, մահացու յանցանք:

Նպատակն է թելադրում գերագոյն պարտականութիւններ. նա պահանջում է ճիգեր ու զոհողութիւններ, որոնց մէջ կոփւում են անհատի եւ ժողովրդի լաւագոյն առաքինութիւնները, որոնց կատարումը, Աքիլլէսի նիզակի նման, բուժում է իր հասցրած վէրքերը:

Նպատակն է բարոյապէս շարժում անհատներն ու ժողովուրդները: Նա փրկում է մահացու ճահճացումից եւ բարոյական անկումից: Անհատի եւ ազգի գոյութեան արեւն է նպատակը: Նա լուսաւորում է եւ ջերմացնում մեր անցնելիք ճանապարհը: Նա համախմբում է մեր ոյժերը, լարում մեր կամքերը, եւ անդիմադրելիօրէն քաշում մեզ դէպ իրեն՝ դէպ յաղթանակ:

Դժւարին, բայց թագաւորական է իդէալի ճանապարհը: Նրա ծայրին՝ դէպ իդէալի հեւիհեւ առաջացող ժողովրդին թագն է սպասում: Նրա ճանապարհով անցնողը դառնում է թագաւոր-ժողովուրդ:

—

Գերագոյն նպատակ ունի եւ մեր ժողովուրդը՝ միացեալ եւ անկախ հայրենիք:

Բայց շնորհիւ տիրող հասկացութիւնների, տեսակէտների, ձգտումների քաոսի եւ սրա առաջացրած առօրէական աննպաստ հոգեբանութեան, նրա մի մասի մէջ սկսել է գունատւել այդ նպատակը: Նրա մէջ թուլանալ է սկսել ձգտումը դէպի նպատակը: Եւ նա, որ գոյութեան կռւում չկորչելու համար հրամայողաբար պիտ լինէր անխորտակելի ժայռ, իր աննպատակ գոյութեամբ պիտ դառնայ փոշէ բլուր:

—

Խոզերն ու նիւթապաշտները չեն սիրում կտրել իրենց հայեացքը ցեխից:

Մենք, որ նիւթակրօն խոզութեան մէջ անհատի եւ ժողովրդի բարոյական անձնասպանութիւն ենք տեսնում, աւելի յաճախ նայենք վերեւ եւ հեռուն:

Մարքսից գերադասենք Կարլէյլը, Հեգէլից՝ Էմերսընը:

Լինե՛նք գաղափարապաշտ:

Նիւթապաշտութեան առջեւից ընթանում է զզւելի ֆիլիստերականութիւնը (քաղքենիութիւնը - խմբ.), իսկ այդ վերջինը նախապատրաստում է բարոյական անկումը անհատի, ազգի:

—

Փրկարար դեր պիտ կատարէին մեր թերթերն ու գրողները, եթէ իրենց ընթերցողներին յաճախ հնարաւորութիւն ընծեռնէին, մոռացութեան տալու անփառունակ եւ տխուր ներկան եւ ապրելու անցեալի փառքերով ու ապագայի յոյսերով:

Հոգեպէս մանրանում եւ ճահճանում են միայն ներկայով կլանուած հասարակութիւնները: Կէս կեանքով են ապրում այն ժողովուրդները, որոնք - հեռու անցեալի եւ ապագայի ազդեցութիւններից - իրենց կեանքին չեն խառնում իրենց անցեալի փառքերն ու ապագայի յոյսերը: Այդպիսիները վտանգում են իրենց ապագան, փորում իրենց սեփական գերեզմանը:

—

Կայ բարոյական մթնոլորտը, ուր, ինչպէս եւ մեզ շրջապատող մթնոլորտում, տեղի են ունենում մակընթացութիւններ ու տեղատուութիւններ մտքերի, գաղափարների, զգացումների, որոնք շնչում է մարդս, իւրացնում եւ փոխանցում իր նմաններին:

Վսեմ ու ազնիւ գաղափարներով լցնենք այդ մթնոլորտը - գաղափարներ, որոնք սրբէին, մաքրէին մեր կեանքը, արի եւ առաքինի դարձնէին մեզ, մեծ եւ փառահեղ գործերի մղէին մեզ:

Գաղափարներ, որոնք հակաթոյն լինէին բոլոր տեսակի անբարոյացուցիչ եւ քայքայեցուցիչ ազդեցութիւնների դէմ:

Գաղափարներ, որոնք փրկել ու փրկում են անհատներն ու ժողովուրդները բարոյական նեխութիւնից:

XII

ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ

«Տէ՛ր ինձ դաստիարակութիւնը
եւ ես փոխեմ եւրոպացիի դէմքը»:

ԼԱՅԲՆԻՑ

«Դաստիարակութիւնը կարող է մեզ տալ անհրաժեշտ յատկութիւններն այն ազգերի, որոնք չեն ուզում մեռնել»:

Այո՛, դաստիարակութիւնը, բայց ո՛չ այն, որն այսօր տրւում է մեր մատաղ սերնդին:

Ամէն ինչից մի քիչ, առանց որեւէ գերիշխող գաղափարի:

Մի՛ քիչ հայերէն, մի քիչ տեղական լեզու եւ սովորական առարկաներ - այդ է գաղութային դպրոցի տւածը:

Կուսակցամիջեան անվերջ պայքար եւ ժխտական քննադատութիւն - ահա՛ մեր մամուլի դաստիարակչական գործը:

Անհատապաշտական ճռւողիւններ - սրանից, կարծեմ, աւելի բան չէ մեր օրւայ գրականութիւնը:

Չկայ, պակասում է բոլորին - դպրոցին, մամուլին, գրողին - այն աստւածաշունչ զգացումը, որն իր մէջ խտացնում է մարդկային բոլոր բարձր յատկութիւնները:

Չկայ բարձր հայրենասիրութիւնը, հայրենապաշտութիւնը չկայ...

—

Հայրենապաշտական դաստիարակութիւն - ահա՛ մեր փրկութեան խարիսխը:

Ահա՛ թէ ինչու հայրենասիրութեան, չէ՛, հայրենապաշտութեան - մարդկային առաքինութիւնների այդ աստւածային մօր - համար պէտք է ջահ բարձրացնել մեր հոգիների մէջ, մեր դպրոցներում, մեր ընտանեկան յարկի տակ, մեր գաղթականական վրանների տակ, ամէն տեղ, ուր կ՚ապրի, կը շնչի հայ մարդը:

Ահա՛ թէ ինչու պէտք է երես դարձնել այն բոլոր վարդապետութիւններից, որոնք հաշտ չեն հայրենասիրութեան հետ:

Եւ ահա՛ թէ ինչու պէտք է կեղծ ու մոլար յայտարարել բոլոր կրօնները, բարոյականները, սկզբունքները, որոնք չեն դարբնում կուռ կամքեր, ուժեղ նկարագիրներ, արիներ, որոնց չգոյութիւնը ազգերին յաճախ է ստիպում դիմելու իրենց թշնամիների մեծահոգութեան:

—

«Այն օրը,- մի տեղ ասում է պատմաբան Միշելէն,- երբ Ֆրանսան կը հաւաքի իր որդիներին իր շուրջը եւ նրանց կը դասաւանդի Ֆրանսան որպէս դաւանութիւն եւ կրօն, այն օրը նա վերստին իրեն կը զգայ կենսունակ եւ հաստատ, ինչպէս երկրագունդը»:

Այո՛, հայրենիքը՝ ընդհանուր աստւածութիւն, հայրենասիրութիւնը՝ կրօն:

Հայրենասիրութիւնը - միայն ոչ որպէս գեղեցիկ խօսք, այլ զգացում եւ գիտակցութիւն, ոչ որպէս շրթունքի սէր, կամ իդէազուրկ խուժանավարի բարոյական մերկութիւնը ծածկող գեղեցիկ պատմուճան, այլ՝ պաշտամունք, կրօն:

Միայն այսպէս, միայն այսպիսով մեր ժողովուրդը կարող կը լինի հեգնել ժամանակն ու իր վտանգները:

—

Բարոյական մեծութիւններով եւ փառքի գործերով հարուստ է մեր պատմութիւնը:

Նա ունի փառահեղ էջեր՝ մեր Ոսկեդարը:

Եղիշէի եւ իր անմահ ժամանակակիցների դարը հերիք պիտ լինէր - եթէ գունատուած չլինէր մեր յիշողութեան մէջ - մեր ժողովրդի սրտի մէջ վառ պահելու հայրենասիրութեան բոցը:

Աւարայրը կը մնայ մարդկային պատմութեան ամենավեհափառ գործերից մէկը:

Իր յաղթական նահատակների աստուածային խիզախումներով ու դիւցազնական խոյանքներով նա ավելի վեհ է ու գեղեցիկ, քան մեր դարի ամենամեծ ճակատամարտերը:

—

Անմահ էջեր ունի եւ մեր նորագոյն պատմութիւնը:

Նոր եւ հերոսական Աւարայրներ շա՜տ եւ անմահ մեռելների մի ամբողջ պլէադա - նահատակներ, մեծ իրենց գործերով, հրահանգիչ իրենց բարձր նկարագրով.

Կա՛յ, կա՛յ այդ բոլորը, կա՛յ այն, որն իրաւունք է տալիս մարդկային մի զանգուածի ազգ կոչուելու:

Բայց, չկայ, աւա՜ղ, այդ բոլորի պաշտամունքը մեր հաւաքական հոգու մէջ:

Եւ միայն հայրենապաշտական դաստիարակութիւնն է, որ ուժեղ եւ անմեռ պիտի դարձնի մեր ժողովուրդը:

«Ցեղի հոգին միակ ոյժն է, որի առաջ անզօր են բոլոր ոյժերը»:

Դաստիարակենք մեր սերունդները հայրենապաշտօրէն ու ցեղօրէն՝ արեւի տակ մեր տեղը չկորցնելու համար:

—

Այն պիտի չլինի մեր դպրոցը, ինչ որ է այսօր:

Շեշտուած նպատակը, ջերմութիւնը, հոգին է պակասում մեր արդի դպրոցին:

Նա չէ, բայց պիտի լինի հայրենագիտութեան ամբիոն, տաճար:

Դեռ այնտեղ հայ մանուկը պիտ ճանաչի եւ սովորի սիրել հայրենի ժողովուրդն ու երկիրը:

Նա է, որ հայ մանուկի հոգու մէջ պիտ քամի մեր պատմութեան բովանդակ գեղեցկութիւնն ու վեհութիւնը:

—

Բաւական չեն մութ եւ շփոթ տեղեկութիւնները հայրենի երկրի եւ ժողովրդի մասին:

Անպէտք են այն դասագրքերը, ցամաք եւ անհոգի, որոնց մէջ հայրենիքի մասին խօսւում է ճիշտ այնպէս, ինչպէս նկարագրւում է Սահարայի անապատը կամ մի հեռաւոր կղզի:

Կրօնական երկիւղածութեամբ եւ անսահման քաղցրութեամբ պիտ դասաւանդւի հայրենագիտութիւնը:

Սրտի եւ մտքի կրակով պիտ խօսւի հայրենի երկրի մասին՝ հրահրելով վերջինի պաշտամունքը մանկական հոգիների մէջ:

Փաստերի հետ եւ խորհրդածութիւններ, որոնք հարստացնելով յիշողութիւնը, բեղմնաւորէին նաեւ միտքը, ջերմացնէին նաեւ սրտերը:

—

«Կը գայ ժամանակ,- ասում է մեր դարի իմաստասէրներից մէկը,- որ ամէն բանից առաջ կը մտածեն դաստիարակութեան մասին»:

Մի մեծ քայլ անենք դէպի այդ ժամանակը:

Ընդունենք, որ նա եկել է - այո՛, նա եկել է արդէն մեզ համար - եւ ամէն բանից առաջ մտածենք հայրենապաշտական փրկարար դաստիարակութեան մասին:

Նման դաստիարակութեամբ պատրաստենք մեր ապահով ապագան:

Եւ չմոռանանք, որ դպրոցն ու մամուլը փաստերից աւելի բարձր գաղափարներ պիտի տան:

Չմոռանանք, որ նիւթապաշտութիւնը թոյն է մեզ նման փոքր ժողովրդի համար:

Ասենք եւ մի այլ ճշմարտութիւն - **ով հայրենապաշտ ու գաղափարապաշտ երիտասարդութիւն ունի, նա էլ ապագայ ունի:**

Փրկութիւնը սրա մէջ է կամ եւ ոչ մի բանի, չմոռանանք եւ այդ:

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ
ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ*

Քննադատել - հոգեպէս տառապել է նշանակում:

* *Գրքույկով տպագրվել է Բեյրութում, 1929թ.:*

Մեղքերն եմ ասում եւ ո՛չ մեղաւորը:

Բուլղարական առած

Ա

Վերջին տասնամեակի դէպքերը - թրքահայոց կոտորածը, Հայաստանի ստեղծուիլը, նրա կորուստը, ռուս-տաճկական նոր սահմանագծումը, սրա հետեւանքով Մերձաւոր Արեւելքում մեզ համար առաջ եկած ծանր պայմանները, հայրենազուրկ հայութեան տագնապի վիճակն արեւմտեան գաղութներում եւ այլն - մեզ դրին նոր իրողութիւնների առաջ:

Ցնցուեց մեր կեանքն իր էական բոլոր կողմերով: Հսկայական փոփոխութիւններ առաջ եկան, ուշագրաւ երեւոյթներ: Եւ հանրածանօթ իրողութիւն է, որ այս դէպքերը զարգացան բոլորովին հակառակ՝ մեր տրամադրութեանց՝ արտաքին իրողութիւնների թելադրութեամբ: Մենք անզօր եղանք ուղղութիւն տալ նրանց: Այս նշանակում է, թէ ներքուստ մենք պատրաստ չէինք դէպքերի իմաստը հասկանալու, զանոնք մեր քաղաքական ձգտումներին համընթաց դարձնելու:

Մենք ունէինք հոգեբանական սարսափելի թերի եւ բնական է, որ հետեւանքը այլ բան չէր կարող լինել, քան այսօրուայ անմխիթար կացութիւնը:

Սակայն կացութիւնը առանձնապէս ողբերգական բնոյթ է ստանում այն պատճառով, որ մինչ մի կողմից աղէտներից ու փորձութիւններից յետոյ պատմութեան բերումով մեր ժողովուրդը հասունանում է, նրա մէջ անկախութեան գաղափարը ժողովրդականանալով դառնում է հոգեբանութիւն, միւս կողմից նա տկարացել է, փոքրացել եւ Արեւելքի պայմաններում մի ինքնուրոյն պետութիւն ստեղծելու համար - թւական ուժի տեսակէտից - դարձել է խնդրական:

Բնական է, որ հայոց պետութեան կորիզը պիտի կազմէ Խորհրդային Հայաստանը իր 28,000 քառ. քիլօմետր տարածութեամբ եւ մօտ մի միլիոն բնակչութեամբ: Չլինէին մահմեդական Արեւելքի իւրայատուկ պայմանները եւ իսլամ ժողովուրդի փոխյարաբերութիւնները դարերի արիւնոտ իրողութիւններով հոգեբանութիւն դարձած անհանդուրժողութիւնը, թուրք-թաթար ժողովուրդների քաղաքական ձգտումները, գուցէ անկարելի չլինէր Խորհրդային Հայաստանի աստիճանական զարգացումը եւ աւելորդ՝ մեր մտահոգութիւնը:

Սակայն մի ակնարկ քարտէսի վրայ կը բաւի հասկանալու այն, թէ ինչ է սպասում մեզ:

Այդ փոքրիկ Հայաստանի ռազմագիտական բոլոր կարեւոր կէտերը խլւած են: Նա պաշարւած է մեր դարաւոր թշնամու կողմից: Այդ պաշարումը դրւած է այնպիսի հաշիւներու վրայ, որոնք մի ակնյայտնի իմաստ ունին՝ **յարմար պարագային նւազագոյն զոհողութիւններով եւ ամենակարճ ժամանակամիջոցում բնաջնջել հայութիւնը:**

Հայաստանը խոցելի է մի շարք տարբեր կէտերից. ընդամէնը մի քանի ժամւայ ընթացքում այդ կէտերով Թուրքիան* կարող է կտրել, իրարից բաժանել հայկական գաւառակները եւ միանալ Ազրբէյջանին:

Թշնամին ունի մեզ բնաջնջելու վճիռ, մենք չունինք ինքնապաշտպանութեան ծրագիր եւ ինքնապաշտպանունակ զէնք:

Սակայն տարիներն անցնում են եւ ոչ մի փորձ այդ ուղղութեամբ:

Մի չափազանց ուշագրաւ եւ ցաւալի պարագայ է սա: Այդ նշանակում է, թէ մեր ժողովուրդը ոչ միայն պատերազմի եւ խաղաղութեան մասին սխալ ըմբռնում ունի, այլեւ անուղղայ է իր անփութութեան մէջ՝ դէպ սեփական գոյութիւնը, զուրկ խրատւելու եւ հրահանգւելու ընդունակութիւնից, անկարող ըմբռնելու մի տարրական ճշմարտութիւն, թէ՝ խաղաղապաշտ եւ անարի ժողովուրդները պատերազմից անհամեմատօրէն աւելի են տուժում:

Բարոյա-նիւթական առաջընթաց - ասել է՝ ներոյժ ինքնապաշտպանութիւն: Առաջընթացի հրամայականն է ինքնապաշտպանութիւնը: Այլեւս ոչ ոք է հաւատում-մեր ժողովրդից զատ - թէ կարելի է կանգնեցնել առաջընթացի յաղթական կառքը՝ գետինը փռւած պարտւածների եւ թոյլերի հառաչանքներով:

Այլեւս ոչ ոքի համար է գաղտնիք, թէ պետութիւնները բնական հակառակորդներ են, որոնցից ամէն մէկը ձգտում է տարածւել, ուժեղանալ, շահել իր հարեւանների հաշւին: Յարձակւում է, ով իրեն ուժեղ եւ պատրաստ է զգում յարձակւելու՝ լաւագոյն պաշտպանողականը համարելով նախայարձակողականը:

Յարձակւում է նա, ով որ իր դիմացը թուլութիւն է տեսնում:

Ամէն մի ժողովուրդ, երկաթէ անհրաժեշտութիւնից մղւած, նախապատրաստւում է, անում այն, ինչ որ անում են բոլորը:

Թոյլը սարսափում է՝ չլինի թէ կուլ գնայ ուժեղին, իսկ ուժեղը արթուն հսկում է, որ իր հակառակորդը չգերազանցէ իրեն:

---

* *Պայմանագրերն ապրում են այնքան ժամանակ, որքան ապրում են նրանց ծնունդ տւող պայմանները: Թրքо-բոլշէւիկեան պայմանագրին կարող են ապաւինել միայն նրանք, որոնց տգիտութիւնը ներելի չէ մեր դարում:*

Եւ խաղաղապաշտ ու անարի ժողովուրդները տկարանում են եւ դառնում որսը նրանց, որոնց ոյժը աճում է եւ ծաւալւում անդիմադրելիօրէն:

Հասկանանք եւ հետեւեալը.

- Յանուն խաղաղութեան չեն կնքում պայմանագրերը, այլ յանուն պետութեանց օրւայ կենսական շահերի:

Պետութիւնները հաշւի են առնում միջազգային իրաւունքը եւ յարգում իրենց ստորագրած պայմանագրերը քանի դեռ շահում են գոյութիւն ունեցող դրութիւնից. սակայն հենց որ մի այլ դրութիւն, հենց որ մի ուրիշի թղթէ բարեկամութիւնը իրենց աւելի շահաւէտ թւաց՝ նրանք թքում են պայմանագրերի վրայ, լքում իրենց նախկին զինակիցներին եւ սպառնում աշխարհի խաղաղութեան:

Այս է իրերի առարկայական դրութիւնը, այս է իրական աշխարհը եւ ոչ այն, որի սխալ եւ խաբուսիկ պատկերացումով օրօրւել եւ օրօրւում է մեր զգացմունքային ազգը:

Բ

Մի աշխատասէր եւ նիւթական ապագայի համար այնքան ձիրքերով օժտւած ժողովուրդ, որ նիւթական բարիքներ կուտել եւ ամբարել գիտէ տարւայ բոլոր եղանակների համար, որ ծիծաղելի կը համարէ, եթէ մէկը ամրան միայն արեւի գեղեցկութեամբ հիանայ եւ չմտածէ ձմրան մասին - զարմանալիօրէն իդէալիստ է դէպի խաղաղութիւնը, աղօթում է նրա արեւին եւ բնաւ չի հաւատում, թէ պատերազմի ձմեռ կայ:

Սակայն պատերազմը գալիս է հակառակ մեր ցանկութեան, որովհետեւ հակամարտութեան օրէնքն է կառավարում աշխարհը:

Այս ճշմարտութիւնը չէ ուզում հասկանալ մեր ժողովուրդը - դրա համար էլ խաղաղ տարիների քրտնաջան աշխատանքով կուտակած բարիքները պատերազմի օրերին տալիս է թշնամուն, իսկ ինքն իբրեւ մուրացկան ծանրանում է օտարների վրայ:

Մենք կ'ուզէինք, որ մեր ժողովուրդը եւս վերջապէս ըմբռնէր, թէ խաղաղութիւնը ոչ թէ յաւերժական չէ, այլ ժամանակաւոր զինադադար միայն:

Խաղաղութիւնը նոյնիսկ նորմալ վիճակ չէ, խաղաղութիւն չկայ մեր երկրագնդի վրայ, չի կարող լինել եւ մարդկային պատմութեան մէջ:

Պատերազմը ժողովուրդների կեանքում անխուսափելի պահ է - դա չի մղւում սոսկ գիտակցական հաշիւների համար, դա մէկն է մարդկային բարեշրջման (էւոլիւցիա) ամենաբուռն արտայայտութիւններից: Պա-

տերազմը բնազդ է, - այդ է պատճառը, որ մարդիկ պատերազմում են համարեայ ակամայից, դէմ գալով գիտակցութեան պահանջքներին, բարոյական օրէնքներին, եւ հետեւանքներին գիտակցաբար անդրադառնում հաշուեյարդարից, յաղթութիւնից կամ պարտութիւնից յետոյ:

Խաղաղութիւնը օրւայ մարդկութեան համար ոչ այլ ինչ է, քան յոգնածութիւն:

Պարտւած է այն ժողովուրդը, որը շուտ է յոգնում:

Պատերազմի է ձգտում նա, որ կազդուրւած է:

Պատերազմը կազդուրւածի, առողջի ցանկութիւնն է, ինչպէս որ խաղաղութիւնը թոյլի բաղձանքն է, յոգնածի՝ երազը:

Անշուշտ, խաղաղութիւնը յոգնած ժողովուրդների համար բարիք կը լինէր, եթէ պատերազմից յաղթական դուրս եկածները խաղաղութիւնը չարաշահել չիմանային:

Խաղաղութեան չարաշահումն աւելի՛ է աղիտաւոր պարտւած ժողովուրդի համար, քան նոյնիսկ պատերազմը:

Պատմութեան մէջ քիչ են կոտորածային ոչնչացումների դէպքերը, մինչ հսկայական ժողովուրդներ աննպաստ խաղաղութեան մէջ, առանց արիւնոտ հարւածների, անհետացել են դանդաղօրէն:

Դանդաղ ոչնչացումի մի խաղաղութիւն է մեզ համար, ինչ այսօր իշխում է Մերձաւոր Արեւելքում:

Թշնամին հսկում է ոչ միայն գերեզմանացած Թրքահայաստանի, այլ Խորհրդային Հայաստանի խաղաղութեան վրայ: Ամէն րոպէ նա կարող է խանգարել այդ խաղաղութիւնը եւ եթէ մինչեւ այժմ չփորձեց խանգարել - դա նշանակում է, թէ այդպէս աւելի է նպաստաւոր իր քաղաքական նպատակների համար:

Բացի այդ դժբախտ պարագան, կան հոգեբանական եւ այլ կարգի պատճառներ, որոնք մեզ աւելի յոռետես են դարձրել դէպի մեր ժողովուրդի ապագան:

Նախ չափազանց նեղ եւ աղքատ է ներկայ Հայաստանը:

Ինքնախաբէութիւն է յուսալ, թէ կովկասեան իւրայատուկ պայմաններում, օտար ազդեցութեան ներքոյ, շրջապատւած թշնամի ժողովուրդներով, հայութիւնը կուլտուրա-տնտեսապէս բարգաւաճի, քաղաքական ոյժ դառնայ՝ պետութիւն ստեղծէ:

Ներկայ Հայաստանը կազմում է հազիւ 1/12ը մեր պատմական հայրենիքի: Դա հայրենիք չէ, այլ հայրենի անկիւն:

Այժմու իր սահմաններում նա չի կարող տեղ տալ ի սփիւռս աշխարհի ցաք ու ցրիւ եղած հայրենազուրկ հայութեան՝ գաղութահայութեան, որի թափառիկ վիճակն աղիտաւոր է երկու տեսակէտից. նախ որ նա

ենթակայ է ստոյգ կորստեան, օրինակ՝ Թուրքիայում կոտորածի, այլ վայրերում՝ խաղաղ բնաջնջումի, ձուլումի:

Հայրենի անկիւն եւ թափառական ժողովուրդ: Մի ճակատագիր, որ երկմտութեան եւ տատանումի է մատնել մեր ժողովուրդը, այսինքն՝ ազգային յոռետեսութեան: Իսկ վայ այն ժողովուրդին, որ վարակւած է այս հիւանդութեամբ. այդպիսին կանգնած է գերեզմանի ափին:

Չսարսափի՜նք, բայց եւ առանց սին պատրանքների եւ աւելորդ նախապաշարումների ընդունենք այդ դառնադառն ճշմարտութիւնը - մեր ապագան վտանգւած է:

Գ

Անիմաստ կը լինէր այս ճշմարտութինն ընդունիլ, եթէ դա մեզ միայն սարսափի պիտի մատնէ եւ ոչ ցնցէ:

Ցնցումները ժողովուրդների կեանքում փրկութեան լծակներ են: Անբարոյական է եւ կորած մի ժողովուրդ, եթէ գոյութիւնն ապահովելու համար անընդունակ է խոր ցնցումների:

Հոգեկան ցնցումների ընդունակ ժողովուրդները միայն կարող են վերանորոգւել: Աղիտաւոր չէ կորուստներ ունենալը, աղիտաւոր է զուր կորուստներ ունենալը, այսինքն՝ անցեալի դէպքերից խրատւիլ, փորձւիլ, սթափւիլ չիմանալը. պարզ՝ աղիտաւոր է վերագնահատումների անընդունակ լինելը:

Առանց վերագնահատումի՝ անիմաստ է որոնումը, իսկ առանց որոնումների՝ ոչ թէ միայն ժողովուրդների միտքն է մեռնում, այլ եւ հենց իրենք՝ ժողովուրդները:

Վերագնահատումի պիտի ենթարկենք ոչ միայն դէպքերի առարկայական բնոյթը, այլ մանաւանդ մեր հոգեւոր կեանքի ենթակայական տարրերը:

Պիտի որոնենք, փնտռենք, գտնենք մեր դժբախտութեանց իրական պատճառները, ճանաչենք մեր իսկական վէրքերը, ախտորոշանքի պիտի ենթարկենք մեր ժողովուրդի հոգին, որից յետոյ միայն խօսք կարող է լինել բուժումի մասին:

Իսկապէս, ինչո՞ւ պարտւեց եւ բարեկամներից լքւեց հայ ժողովուրդը:

Ո՞վ է մեղաւոր, երկրի աշխարհագրական դի՞րքը, քրիստոնէական Եւրոպա՞ն. մահմեդական Ասիա՞ն, ճակատագի՞րը:

- Բոլորը՝ բացի մեզնից,- այսպէս կը տրամաբանէ մեր անուղղայ քաղքենիամտութիւնը:

Այս մտայնութի՜ւնը... գանգատւում, դժգոհում է նա, անիծում է ճակա-

տագիրը եւ կրկնում անվերջ, թէ ընկած ենք աշխարհի մեծ ճամբաների վրայ, թէ աշխարհագրական ճամբաները վատ են:

Այստեղ կայ մի խղճուկ ճշմարտութիւն, բայց դրա հանդէպ ի՜նչ հոյակապ առաւելութիւններ: Չէ՞ որ մեր բարձրաւանդակն անառիկ է, մեր լեռները՝ մէկ մէկ անխոցելի պատնէշներ: Անտեսել այս իրողութիւնը եւ ողբալ ճակատագիրը ոչ այլ ինչ է, քան թոյլի, անարիի ինքնարդարացում: Թոյլի ինքնարդարացում - տկարի հոգեբանութիւն: Այստեղ ոչ միայն նախապաշարում կայ, այլ եւ առաքինութեան թերի:

Անարդար կը լինէր հաւատալ հիւանդներին, երբ սրանք գանգատւում են աշխարհից:

Աշխարհը պատկերացում է, իսկ պատկերումի աղբիւրը հոգին է:

Հոգու հիւանդութիւն ունին ժողովուրդները, երբ դժգոհում են իրենց հայրենիքից:

Գուցէ իրօք աշխարհի ամենէն անառիկ բարձրաւանդակներից մէկի վրայ բազմած ժողովուրդը անարժան է իր ճակատագրին, բայց ճակատագիրը՝ երբեք ապերախտ:

Լինէր հզօր՝ աշխարհի այդ հոյակապ կամուրջի վրայ հրաշքներ կը գործէր հայութիւնը: Տկար էր, տկարացաւ - դառաւ անարժան իր բնաշխարհին:

Հիւա՜նդ, դժբախտ ժողովուրդ, որ մինչեւ այժմ երկու առաքինութիւն է ունեցել՝ **իր դժբախտութիւնները վերագրել արտաքին պատճառների եւ փրկութինը յուսալ արտաքին ոյժերից:**

Այստեղ է պատճառը մեր տարօրինակ հաւատի եւ խանդավառութեան, երբ օտարը խոստումներ է կատարում, եւ նոյնքան տարօրինակ հիասթափութեան եւ յուսալքումի, երբ նա դրժում է խոստումները:

Աղիտալի ինքնաժխտում, որ մեզ հոգեբանօրէն այնքան անարժէք է դարձրել, որ անգամ մեր դժբախտութեանց մէջ մեղքի որոշ բաժին էլ մեզ տալը զլանում ենք: Մենք այնքան անարժէք ենք թւում մեզ, որ չենք կարծում, թէ քաղաքական աշխարհում ոեւէ բանի պատճառ - անգամ դժբախտութեան - մենք կարող ենք լինել: Ամէն ինչ լինում է, գուցէ մեզ համար, բայց մեզնից դուրս, անկախ մեզնից: Քաղաքական մի կոյր պատեհապաշտութիւն, որ մթագնել է մեր բանականութիւնը անգամ մի կոպիտ, մի աղաղակող ճշմարտութիւն տեսնելու - այն է, թէ **մեր դժբախտութիւնների համար մեղաւոր են ոչ թէ բոլորը, բացի մեզնից, այլ նախ եւ առաջ մենք:**

Դ

Տարօրինակ է - տրամաբանում է մեր քաղքենիամտութիւնը - մեր հաւատքը դէպ Եւրոպան կոյր զգացում էր, մեր ներողամտութիւնը դէպ թշնամին՝ քրիստոսային, բայց եւ այնպէս մենք ջարդուեցինք ու լքուեցինք:

Ոչինչ կայ տարօրինակ, ջարդուեցինք եւ լքուեցինք, որովհետեւ եւրոպացու հոգեբանութեան բոլորովին անծանօթ էինք:

Դէպի Եւրոպան մենք ունէինք մի քրիստոնէական զգացում եւ շնորհիւ մեր տարօրինակ խորհրդապաշտութեան - մեր ազգային հիւանդութեան - մեր սեփական տրամադրութիւնները դրել էինք եւրոպացու հոգու մէջ եւ ամենախոր կերպով հաւատացել, թէ բոլոր քրիստոնեայ ժողովուրդները նոյն զգացումներն ունին մեր հանդէպ, թէ բոլոր պատերազմները մղւում են յանուն մեր փրկութեան:

Այս ինքնախաբէութիւնը մղեց մեզ քաղաքական մուրացկանութեան, եւ քանի որ մենք նաեւ թոյլ էինք՝ անձնատուր եղանք լալկանութեան:

Մուրացկանութիւն եւ լալկանութիւն - մի ամբողջ ժամանակի հոգեբանութիւն, քաղաքական մեր միակ զէնքը: Լալկանութիւնը, սակայն, ապացոյց է հոգեւոր տհասութեան կամ անարիութեան: Մուրացկանութիւնը զզուելի է ընդհանրապէս: Մուրացկանին օգնում են ոչ միայն կարեկցանքից դրդուած, այլ եւ յաճախ զզւանքից:

Աւելի սարսափելի է քաղաքական մուրացկանութիւնը, քանի որ քաղաքականութեան մէջ կարեկցանք չկայ, իսկ զզւանք՝ շատ քիչ:

Անորակելի է մուրացկանութիւնը քաղաքականութեան մէջ:

Աներես մուրացկանի եսականութիւնը բոլորովին բնական է համարում, որ մարդիկ, թէկուզ ամենէն ինկածները, գթան իրեն:

Էլ ավելի աներես է մուրացկանը եւ պահանջկոտ, եթէ նա միաժամանակ եւ հաշմանդամ է: Ահա մուրացկանի այս եսականութիւնը եւ հաշմանդամի պահանջկոտութիւնը դարձել են հոգեբանութիւն:

Հոգեբանական այս երկու կողմերն Աւետարանի ներշնչմամբ ստացել են քաղաքական իմաստութեան, դիւանագիտական զէնքի բնոյթ:

Քրիստոնէական մի հօտի համար չքնաղ առաքինութիւն, սակայն միայն քրիստոնէական հօտի:

Այսօր մենք անիծում ենք քաղաքական բարերարներին, սակայն մոռանում, թէ մուրացկանին եւ հաշմանդամին անկելանոց են տալիս եւ ոչ անկախ հայրենիք:

Երէկ այսպէս էինք, երբ կրօնական հօտ էինք. այսօր յաւակնութիւն ունինք մեզ քաղաքական ոյժ համարելու, բայց չենք ազատագրուել հօտա-

յին հոգեբանութիւնից, որը թափանցել է քաղաքական հոսանքների մտայնութեան մէջ, որոնք դրա շնորհիւ անգիտակցաբար կառչել են կողմնորոշումների գաղափարին:

Ճիշտ է, նկատելի է մի քայլ առաջ - քրիստոնէական նախապաշարումից մինչեւ կողմնորոշում - սակայն այդ բոլորի մէջ կայ մի խոստովանութիւն, այն է՝ թէ մեր ժողովրդի որոշ տարրերը քաղաքական կեանքի համար թերեւս պատրաստ չեն, խակ, անոյժ, անարի եւ ապա՝ բոլորովին չազատագրուած նախկին մտայնութիւնից:

Հայ քաղաքական մտքի դեգերումների մէջ սա մի երկրորդ շրջան է - մտքի կիսանկախ դառնալու շրջանը:

Այս շրջանը կարճ ժամանակում այնքան աղիտաւոր հետեւանքներ ունեցաւ եւ թւում է թէ շարունակում է էլ աւելի մթագնել, արիւնոտել մեր ճակատագիրը՝ պառակտելով, ներքուստ թուլացնելով մեր ժողովուրդը:

Այս հոսանքներն արդէն արտայայտութիւն են ստացել մեր կեանքում իբրեւ ռուսական կամ արեւմտեան կողմնորոշման - խօսք կայ անգամ Տաճկաստանի մասին - ձգտող քաղաքական խմբաւորումներ, որոնց խելակորոյս, ազգային տեսակէտից անիմաստ բաղխումների հետեւանքով մեծապէս դիւրացուց Հայաստանի անկումը եւ բաժանումը Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ:

Սակայն այս մտայնութեան հետեւանքը միայն քաղաքական կորուստը չէ:

Ամենասարսափելին ա՛յն է, որ դա անվերջ պիտի ներշնչէ մեր ժողովուրդին այն համոզումը, թէ ինքը տկար է, կարօտ ուրիշների հովանաւորութեան եւ այսպիսով կամազրկի, թուլացնի նրան՝ անընդունակ դարձնի թէկուզ իր ինքնապաշտպանութիւնը սեփական ոյժերով կազմակերպելու:

Անկախութեան հաւակնութիւն ունեցող ժողովուրդները նախ պէտք է այս մտայնութիւնից ազատուին:

Ինքնուրոյնութիւնից զուրկ ժողովուրդները չեն կարող պետութիւն ստեղծել: **Պետութիւնը նախատեսում է ինքնուրոյն քաղաքական միտք, պայքարելու ինքնավստահութիւն, կառավարելու նախաձեռնութիւն, իսկ յաղթանակն այլ բան չէ, քան ինքնավստահ նախաձեռնութեան պտուղը:**

Եղան դէպքեր, երբ մեր այս կամ այն գաւառը մենակ էր, բայց վճռական մենակի հոգեբանութեան շնորհիւ յաջող կերպով տարաւ իր ինքնապաշտպանութեան դժուարին պայքարը:

Եւ ընդհակառակը, այն դէպքերում, երբ մեր քաղաքականութիւնը արտաքին ոյժերի վրայ հաշիւներ արեց - մենք պարտուեցինք չարաչար:

Պարտուեցինք, որովհետեւ այսպիսի հաշիւներով ղեկավարուողը զուրկ է վճռական մենակի հոգեբանութիւնից, այսինքն՝ յաղթելու ամէն հաւանականութիւնից:

Քաղաքականութիւնն ընդհանրապէս սարսափում է մենակութիւնից, իսկ կողմնորոշումների քաղաքականութիւնը այլ բան չէ, եթէ ոչ մենակութեան սարսափը:

Համակւե՞լ է մի ժողովուրդ այս սարսափով - պարտւած է, կորած:

Այստեղ է մեր դժբախտութեան մի այլ պատճառը. ընդունինք այս ճշմարտութիւնը եւս:

Մեր մի շարք հոսանքների օտարահակ տրամադրութեանց, մեր ինքնավստահութեան պակասի եւ մեր մենակութիւնից սարսափելու պատճառով, մեր ժողովուրդը, որ այլ դէպքում պիտի կարողանար իր ինքնապաշտպանութեան գործը կազմակերպել յաջողաբար - դարձաւ կամազուրկ մի ամբոխ ու պարտւեց:

Մեր պարտութիւնները հոգեբանական էին, պարտուեցինք ոչ թէ նրա համար, որ թւապէս ու թեքնիքապէս թոյլ էինք, տկար, այլ որովհետեւ այդպիսին էինք հոգեպէս:

Մի օտարի հովանու տակ հայը եզակի եւ ռազմաշունչ կռւող է, իր սեփական դրօշի տակ՝ յաճախ անարի, պարտւողական:

Կարսում մենք ունէինք բնական ու արհեստական դիրքերի գերազանցութիւն, թւական առաւելութիւն, աւելի լաւ պարենաւորում, բայց եւ այնպէս պարտուեցինք, որովհետեւ չունէինք վճռական մենակի հոգեբանութիւն, ինքնուրոյն կերպով որեւէ բան անելու հաւատ: Պարտուեցինք, որովհետեւ մենք միայն որպէս ազգ, մասամբ գիտակցեցինք մեր պարտականութիւնը, մասամբ հասկացանք աշխարհի իրական պայմանները, փորձեցինք ոտքի կանգնիլ, բայց ոչ ամբողջովին եւ ոչ մեր ներքին ոյժերի դրդումով:

Պարտուեցինք, որովհետեւ մեր ցեղի ոգու բովանդակ ոյժերն օգտագործելու փոխարէն հովանաւորներ փնտռեցինք:

Վաղը կը կորչենք իսպառ - եթէ մնացինք այս մտայնութեամբ: Կը փրկւենք, եթէ ազատուեցինք նախապաշարումներից, եթէ փորձեցինք ոտքի կանգնել, սակայն ոչ արտաքին դրդումով, օտարների ցանկութեամբ, այլ մեր ներքին, բնական, անզուսպ մղումով:

Այսպիսով միայն կ՚ազատագրւի եւ կ՚ազատւի որեւէ ժողովուրդ:

Այդ ճանապարհին եթէ եղան օժանդակիչ ուժեր, պիտ օգտագործենք որպէս զինակից, բարեկամ:

Օգտագործել, եւ ոչ աղերսել - ըմբռնե՞ց հայն այս տարբերութիւնը - կանգնած է փրկութեան ուղիղ ճամբին:

Մինչեւ հիմա բարեգործներ եւ հովանաւորներ ենք փնտռում - հիւանդ ենք, թոյլ եւ տհաս մտահոգեպէս:

Սրանից յետոյ զինակիցների մասին պիտ խօսենք, որովհետեւ հոգով առողջանալ, արիանալ ենք ուզում:

Զինակիցներ եւ ոչ բարերարներ - այդ նշանակում է, թէ հայն արի է եւ ինքնապաշտպանուելու, պատերազմելու ընկեր է փնտռում: Քաջի իրաւունքն է դա, նրա, որ վճռել է մենակ յաղթել եւ զինակցում է միայն աւելի հեշտ յաղթելու համար:

Արի՛ ժողովուրդ - սրա՛ն են միայն զինակցում, ձեռք մեկնում պետութիւնները: Հասկանանք եւ այս ճշմարտութիւնը:

Փրկուելու համար պէտք է նաեւ արիանալ, այսինքն՝ յաղթահարել սեփական սարսափը:

Սարսափից ազատագրուած հոգին միայն ընդունակ է աշխարհն առարկայօրէն տեսնել, պատկերացնել:

Երկիւղը միշտ էլ ճիւաղներ է ստեղծում՝ մտացածին հրէշներ:

Ժողովուրդները յաճախ մեռնում են հենց այս ճիւաղներից:

Քաղաքական գիտակցութեան թերին, անինքնավստահութիւն, սարսափի հոգեբանութիւն - ահա մեր եռագլխեան թշնամին:

Եւ մինչեւ որ չկարողանանք այս ներքին թշնամին սպանել, անկարելի է, որ արտաքին թշնամուց ազատուել կարողանանք:

Ասուած է. «Մարդս մի բան է, որ պիտ յաղթահարուի»:

Այսպէս. մինչեւ որ հայ մարդը չկարողանայ ինքզինքը յաղթահարել - սպանել սարսափի անասունն իր մէջ, ներշնչուել նոր մտայնութեամբ, հոգեփոխուել, կարճ՝ մինչեւ որ չդառնայ արի եւ արիանուն ժողովուրդ՝ անհնար է, որ նա կարողանայ ո՛չ միայն քաղաքականապէս ազատուել, այլ եւ ազգովին ոչնչանալու վտանգից խուսափել:

Արեւելքում մեզ համար ստեղծուած պայմանների մէջ կարող է ապրել արի եւ արիապաշտ հայութիւնը, բայց ոչ այսօրուանը:

Պատերազմների մէջ յաղթանակում է արին - այս նշանակում է՝ յաղթում է նա, ով սանձահարել է իր սեփական սարսափը, ով թշնամու հետ չափուելուց առաջ կառուցել է յաղթանակի շէնքն իր հոգում:

Մեքենական կոպիտ ոյժերի բաղխումը չէ պատերազմը, այլ՝ ժողովուրդների հոգեկան կարողութեանց:

Դեռ աւելին՝ պատերազմը ժողովուրդների աստուածների գօտեմարտն է: Թեքնիքան՝ զէնքն է, միջոցը, հոգին՝ պատերազմի դարբինը:

Զէնքն անհրաժեշտ է - սակայն արի բազուկների մէջ:

Պայքարի պատրաստուող ժողովուրդները նախ սպառազինուում են հոգեբանօրէն:

Անտեսա՞ծ է այս պայմանը - անխուսափելի է պարտութիւնը եւ թեքնիք միջոցների յանձնումը թշնամուն:

Յաղթելու համար պէտք է սեփական պարտութիւնը յաղթահարել:

Յաղթահարել սեփական պարտութիւնը - նշանակում է ընդունակ լինել ինքնապաշտպանութեան, որը ուրիշ բան չէ, քան թշնամու պարտութիւնը:

—

Ինքնապաշտպանութիւն՝ ահա թէ ինչ են թելադրում ժամանակն ու առաջընթացը:

Ինքնապաշտպանութիւն - ահա՛ մեր նոր կրօնը:

Ինքնապաշտպանութիւն - միակ միջոցը, որ թէ՛ ժողովուրդների եւ թէ՛ սրանց աստուածների գոյութիւնն է ապահովում:

Եսականութիւն չէ՛ բնաւ, երբ մի ժողովուրդ իր ինքնապաշտպանութիւնը իր կրօնն է յայտարարում:

Ընդհակառակը, մի արիւնոտ ողբերգութիւն է մղում ժողովուրդներին այս համոզման եւ ամենէն արդար ժողովուրդները իրաւունք ունին այսպէս վարուելու:

Ինքնապաշտպանութիւնը ոչ թէ բնական իրաւունք է իւրաքանչիւր ժողովուրդի, այլ եւ պարտականութիւն դէպ մարդկութիւնը:

Ժողովուրդները ապրում են իրենց, ստեղծագործում մարդկութեան համար:

Ապրելու արժանի չէ միայն իրեն համար ապրողը:

Ժողովուրդներն ստեղծագործելու պարտականութիւն ունեն - հետեւաբար եւ ապրելու իրաւունք:

Մի ժողովուրդ, որ անընդունակ է ինքնապաշտպանութեան, նշանակում է զուրկ է այդ տարրական առաքինութիւններից - առաքինութիւններ, որոնց չափանիշը ինքնապաշտպանութեան համար ցուցահանուած ընդունակութիւնն է միայն: Զո՞ւրկ է մի ժողովուրդ ինքնապաշտպանութեան ընդունակութիւնից - նշանակում է նա զուրկ է ամէն առաքինութիւնից, զուրկ՝ գոյութեան բարոյական իրաւունքից:

Երկար ժամանակ աղերսում էինք կեանքի, գոյքի, պատւի ապահովութիւն - այնժամ ոչ միայն տկար էինք, այլ եւ զուրկ առաքինութիւնից:

Ժողովուրդների կեանքը բռնաւորների շնորհը չէ, նրանք չեն կարող ողորմութեամբ ապրիլ եւ պէտք չէ ապրին:

Մակաբոյծ է մի ժողովուրդ, եթէ իր ինքնապաշտպանութեան համար յենւում է միայն օտար ոյժի շնորհին: Կեանքում մակաբոյծն անբարոյական է, իսկ նմանը տեղ չունի պատմութեան մէջ:

Առանց զայրանալու ընդունինք եւ այս ճշմարտութիւնը:

Ինքնապաշտպանութիւնը մի պարգեւ չէ ուրիշից իրեն, այլ մի բան իրենից - իրեն, մի ազդեցութիւն ենթակայից - ենթակային:

Ինքնապաշտպանութիւնը մի ժողովուրդի գոյութեան ներքին ճիգն է: Մինչեւ հիմա այդ ճիգն արտայայտուեց որպէս աղօթք, աղերսանք, մուրացկանութիւն - հետեւանքը՝ հազար եւ հազար կրաւորական զոհեր: Հիմա ճիգը մեր ներքին ոյժի արտայայտութիւնը պիտ լինի:

Փտած են մեր հին զէնքերը, եղծանուած է հին մագաղաթը: Նոր աւետարանի խօսքը պիտ լսենք հիմա - Աւետարանը Արիութեան:

Վահագնի հետ պիտ խօսենք հիմա - Աստուածը հին արիական հայութեան: Մի նոր գիրք պիտ դրւի մեր ժողովուրդի ձեռքը - Աւետարանը Արիների:

Արիութիւն - այս պիտ լինի մեր սերունդների կոչումը, քանզի այդ բարձր յատկութիւնն է փրկում ժողովուրդները ֆիզիքական եւ բարոյական անկումներից, քանզի աստուածային միակ արժէքն է արիութիւնը, որով ժողովուրդները կը գնեն իրենց անկախութիւնը եւ կ'ապահովեն զայն:

Արդ թէ ինչո՞ւ արիութեան պատգամախօսները պիտ դառնան հայ մտաւոր եւ հոգեւոր կեանքի բոլոր ղեկավարները:

Ե՛ւ դպրոց, ե՛ւ եկեղեցի, ե՛ւ քաղաքական կուսակցութիւններ, ե՛ւ մամուլ, ե՛ւ ապակուսակցական կազմակերպութիւններ - բոլորը, բոլորը պիտ համակւին նոր մտայնութեամբ, պիտ կրկնեն նոր ճշմարտութիւններ, կրկնեն անվերջ, անդադրում, մինչեւ որ արիական ինքնապաշտպանութեան գաղափարը դառնայ ժողովրդական մտայնութիւն, ազնիւ կիրք, հոգեբանութիւն, մինչեւ որ հայութիւնը դառնայ ինքնապաշտպանունակ:

Ե

Եկեղեցին:

Դա վերագնահատումի պիտի ենթարկէ քրիստոնէական սիրոյ իր սխալ ըմբռնումը, որպէսզի դադարի թուլութիւնը առաքինութիւն համարել եւ սպանել մեր ժողովուրդի կամքը:

Սխալ է ըմբռնել դա քրիստոնէական սիրոյ խորհուրդը եւ դրա հետեւանքով ամբողջ դարեր պատճառ դարձել մեր ժողովուրդի անօրինակ ողբերգութեան:

Սիրում է նա, ով ուժեղ է, ով հոգու առատութիւն ունի, ում ոյժի բաժակը լցւած է յորդելու, թափւելու աստիճան:

Արգասաւոր չէ՛ թոյլի սէրը:

Քծնանքն է թոյլի ներումը:

Քրիստոսը սիրում էր, որովհետեւ ուժեղ էր. նա սիրում էր, որովհետեւ սիրելու եւ ներելու չափ հզօր էր:

Նրա անձնական կեանքը պիտ դառնայ Եկեղեցուն ուղեցոյց:

Նրա մահւան խորհուրդը - հերոսական զոհաբերութիւն:

Նա զոհաբերեց, որովհետեւ գաղափարի հերոս էր:

Միայն արին, քաջը, միայն հերոսը կարող է զոհաբերել:

Անընդունակ է թոյլը ինչպէս սիրոյ, նոյնպէս եւ զոհաբերութեան:

Մի ժողովուրդ, որն ընդունակ չէ այս երկու առաքինութեան - դիպուածների կը պարտի իր գոյութիւնը:

Քրիստոնեան նա՛ չէ, ով քրիստոնէական վարդապետութեան տարերքը սխալ է հասկացել, ընկել նախապաշարումների ցանցի մէջ եւ տկարացել կորչելու աստիճան, այլ նա, ում մէջ մի քիչ քրիստոսութիւն կայ - մի կայծ ամենահզօր աստուածամարդու հոգուց:

Նա ամենակարողն էր, ամենահզօր - մենք առնւազն կարող եւ հզօր պիտի լինինք, որպէսզի կարողանանք սիրել եւ զոհաբերել:

Սխալւել, չարաչար սխալւել է մեր Եկեղեցին՝ «տնանկ»ների եւ «սնանկ»ների բարոյականութիւն քարոզելով:

Սրանից յետոյ սիրոյ եւ զոհաբերութեան ընդունակ արի ժողովուրդի մասին պիտ խօսի, եթե ուզում է, որ քրիստոնէութեան հետքերը մնան Փոքր Ասիայում եւ Հայաստանում:

Ուժե՛ղ եւ արիակա՛ն ժողովուրդ, այնպիսին, որ ընդունակ լինի արհամարհել մահը՝ յանուն իր սեփական գոյութեան:

Այսպիսով կ'ապրի ոչ միայն հայութիւնը, այլ եւ Հայոց եկեղեցին:

Ինքնապաշտպանութիւնը հայ ժողովուրդի - ահա Հայ եկեղեցւոյ նոր հաւատամքը:

Չընդունե՞ց այս ճշմարտութիւնը, չքարոզե՞ց, չտարածե՞ց ամէն օր այս փրկարար գաղափարը, իր բոլոր միջոցներով չնպաստե՞ց մեր ինքնապաշտպանութեան գործին - կործանւած է դա:

—

Մամուլը:

Նրա պարտականութիւնն է - խտացած ճշմարտութիւններ տալ ժողովուրդին:

Նպատակը - այս ճշմարտութիւններով լուսաւորել ժողովուրդին դէպի ապագան:

Չունի՞ մամուլն այս կոչումը՝ աւելորդ մակաբոյծ է դա եւ զուր տեղը ժողովուրդները կերակրում են զայն իրենց հաշւին:

Դժբախտաբար, որոշ բացառութեամբ, այսպիսին է՝ մերը, հայկականը:

Լրագրութիւն եւ ո՛չ մամուլ - այս նշանակում է, թէ մենք դեռեւս տհաս ենք, թէ չենք կարողանում մեր կեանքի ներքին կնճիռները գտնել, լուսաբանել զանոնք եւ մեր միտքն զբաղեցնում ենք արտաքին եղելութիւններով, լուրերով:

Մեզ համար դեռ այն է հետաքրքիրը, ինչ մեզնից դուրս է կատարւում կամ միայն արտաքուստ առնչութիւն ունի մեզ հետ:

Այս մտայնութիւնը իշխել է մեր լրագրութեան մէջ համարեայ իր սկզբնաւորութեան օրից:

Փրկութիւնը դրսից է - այս բաւական է, որ լրագրութիւնը խանդավառւի արտաքին բարենպաստ նշաններով, մի դիւանագէտի կարեկից ժպիտով, մի անւանի եւրոպացու հայասէր արտայայտութիւնով, մի միսիոնարական ընկերութեան հայանւէր ջանքերով, մի խաղաղասիրական վեհաժողովի հայանպաստ բանաձեւով, մի պարլամենտական գործիչի զգացւած ճառով որեւէ կոտորածից յետոյ եւ վերջապէս այնպիսի բաներով, որոնք ժողովուրդների ինքնապաշտպանութեան կամ փրկութեան համար ոչ մէկ իրական նշանակութիւն ունին:

Եւ այսպէս ամբողջ տասնամեակնե՞ր... **եւ ոչ ոք է զգացել, թէ այդպիսով մեղսակից է դառնում հայկական ողբերգութեան՝ վրիպեցնելով ժողովուրդի ուշադրութիւնը իր փրկութեան միակ զէնքից - ինքնապաշտպանութիւնից:**

Եղել են լրագրային արտայայտութիւններ, յաճախ նոյնիսկ ինքնապաշտպանութեան քարոզչութիւն, սակայն այդ բոլորը թերի, ոչ զերծ արտաքին ոյժերի հանդէպ ունեցած նախապաշարումներից, հետեւաբար ոչ ամբողջովին ճշգրիտ, ոչ օգտակար:

Լրագրութիւն, որ տասնեակ տարիների ընթացքում չի կարողացել իր ժողովուրդի դժբախտութեան իսկական պատճառները մատնանշել, հազար եւ հազար զոհերից յետոյ մի ընդհանուր ճշմարտութիւն գտնել եւ ջանալ այդ ճշմարտութիւնը զանգւածների հոգեբանութիւնը դարձնել:

Լրագրութիւն, որի որոշ օրգանները արտաքին ոյժերի հանդէպ ներող են, քծնող, խնկարկող, իսկ ներքուստ՝ պառակտիչ, անհանդուրժող եւ ամբարտաւան:

Լրագրութիւն, որի որոշ օրգանները ղեկավարւում են փողոցի առաքինութիւններով կամ տարփողելով մեծ ժողովուրդների ոյժն ու հմայքը, վատաբար արհամարհում են սեփականը:

Լրագրութիւն՝ որ բորբոքում է թայֆայական կրքերը եւ ընդունակ չէ

մի տարրական ճշմարտութիւն ըմբռնելու. այն է, թէ ժողովրդի ինքնապաշտպանութիւնը մի գործ է, որի մէջ ամէն հոսանքի եւ ուղղութեան մարդիկ միակամ պիտ լինեն:

Լրագրութիւն, որ տարիների խանդավառութիւնից՝ դէպ օտար յոյսերը, այսօր հիասթափւած հայհոյում է աջ ու ձախ բոլոր ազգերին ու լեզուներին, եւ անընդունակ է ըմբռնելու, թէ մեղաւորը օտարները չէին, որ հայ ժողովուրդը չմղուեց, չդիմեց ինքնապաշտպանութեան եւ ջարդուեց:

Լրագրութիւն, որ ամէն օր աղաղակում է, թէ հայութիւնը զոհ գնաց աշխարհակալ ժողովուրդների քաղաքականութեան, եւ անգիտակցաբար մխրճուել է դիւանագիտական կնճիռների մէջ, խօսում է կողմնորոշումների մասին՝ դիւանագիտական ծիծաղելի մակերեսայնութեամբ:

Այսպիսի լրագրութիւնը աւելորդ է հայ ժողովուրդին:

Ինչպէս Հայ եկեղեցին, նոյնպէս եւ մեր մամուլը պիտ հոգեփոխւի:

Լրագիր մենք շատ ունենք, նոյնիսկ աւելորդ, հիմա պէտք է վերադաստիարակիչ հրապարակախօսութիւն:

- Հրապարակախօսութիւն, որ անսխալ կերպով ախտանշէ մեր ցեղին հոգերը եւ արմատական միջոցներ առաջարկի, որ վերագնահատումի ենթարկէ մեր անցեալը եւ նոր ճշմարտութիւններ որոնէ, որ լուսաբանի մեր ժողովուրդի կնճիռները, որ կռահի իր ժողովուրդին սպառնացող վտանգը եւ դառնայ նրա հոգեւոր սպառազինումի ահազանգը:

Մամուլ, վերջապէս, որ ազատւի օտարահակ մտայնութիւնից եւ արիութիւն քարոզի, որ խլեակների փոխարէն հերոսական ժողովուրդի մասին խօսի եւ այդ այդպէս , մինչեւ որ հայութիւնը՝ խրոխտաբար կանգնած իր բարձրաւանդակի վրայ ապացուցէ աշխարհին, թէ ինքը արի է - տէր իր հայրենիքին եւ ճակատագրին:

Զ

Կուսակցութիւնները:

Հրամայողաբար պիտ հոգեփոխւեն նաեւ կուսակցութիւնները - սրանք՝ մասնաւորապէս: Մեր ներքին հակամարտութիւնները զինակցում են արտաքին թշնամուն՝ ընդդէմ մեր ժողովուրդին եւ երկրին:

Դժւար է հաւատալ, թէ կուսակցամիջեան այլանդակ պայքարի կատաղութիւնը բղխում է միայն դէպ հարազատ ժողովուրդն ունեցած սիրուց. - ժողովուրդ, որի փրկութեան մասին տարբեր ըմբռնում ունեն պայքարող կողմերը:

Մեր կուսակցութեանց պայքարի միակ «մարտական միջոցը» պիտ լինէր բարոյական կշտամբումը եւ ո՛չ աւելին. ո՛չ սուտը, զրպարտութիւնը, իրողութեանց խեղաթիւրումը, եւ նման բարոյազուրկ ու դատապարտելի դէմքերը:

Մանկօրէն միամիտ են այն կուսակցութիւնները, որոնք ժխտելով բարոյականութիւնը քաղաքական պայքարի մէջ՝ կարծում են, թէ կարող կը լինեն բարոյական մաքրութիւն պահել իրենց շարքերում:

Բարոյականի աղքատութիւն - ասել է բարոյական ոյժերի աղքատութիւն:

Ժողովուրդի մի մասի անունից հայհոյել միւսին՝ հակառակորդին եւ տղայաբար ժխտել նրա գոյութեան իրաւունքը - դեռ չի նշանակում դաստիարակել իր շարքերը:

Անիմաստ եւ զզւելի է քննադատութիւնը, եթէ ստեղծագործութիւն չէ դա:

Ով օրն ի բուն զբաղւում է իր հակառակորդի թերութեանց քննադատութեամբ - նա առնւազն զիջումներ է կատարում իր սեփական յոռութիւնների հետ:

Այդպիսին կարող է շահել, բայց շահած կը լինի ի հաշիւ իր բարոյական առողջութեան:

Այդպիսին կարող է եւ վնասել իր հակառակորդին, բայց ինքը ոչինչ կը շահի:

Ստորնութիւնը մնում է ստորնութիւն անգամ այն դէպքում, երբ նա կատարւում է յանուն ամենանուիրական շահերի. դա նախ բարոյազրկում է եւ տկարացնում իրենից օգտուողին:

Անվերջ բարի խօսել իր կուսակցութեան եւ չար այլոց մասին - ե՛ւ ծիծաղելի է, ե՛ւ անարդար:

Հոգեպէս անառողջ է նմանը:

Խուժանավարել՝ չարաշահել զանգւածների մութ զգացումները եւ կոյր ատելութիւն ստեղծել հակառակորդների հանդէպ - չի նշանակում գաղափարական պայքար վարել:

Այդպիսին ընկածութեան է մղում իր շարքերը. այդպիսին չարիք է ե՛ւ իրեն, ե՛ւ իր հակառակորդի, ե՛ւ իր ժողովուրդի համար:

Կոյր ատելութեամբ հիւանդ՝ մեր կուսակցութիւններից ոմանք մոռացել են հայ ժողովուրդի ինքնապաշտպանութեան սրբազան գործը. յանուն որի - իբրեւ թէ - կեանքի են կոչւած:

Նրանք շարունակում են նեղսիրտ եւ իրարամերժ կռիւը՝ տկարանալով եւ տկարացնելով մեր ժողովուրդը, խաթարում նրա հաւաքական հոգին՝ կատարում այն, ինչ որ պէտք է արտաքին թշնամուն:

Եւ այդ ամէնը միամտօրէն կոչում են ժողովրդասիրութիւն, երբ էապէս **ժողովրդասպանութիւն է տեղի ունեցողը:**

Այո, ժողովրդասպանութիւն:

—

Մտաւոր կարճատեսութիւն է չհասկանալ, թէ անվերջ ու անդադրում վերանորոգութիւն է կեանքը:

Հոգեւոր անշարժութիւն - ասել է բարոյական մահ, մահացում:

Անտարբերութիւն, յոռատեսութիւն, բարոյական մահացում - ժողովուրդների անձնասպանութեան դանդաղ ձեւեր են սրանք:

Վերանորոգելու անընդունակ ժողովուրդները մեռնում են ամէն ժամ, ամէն վայրկեան:

Այո՛, հոգեվարում են այն ժողովուրդները, որոնք հոգեպէս ծոյլ են ապրում, որոնք ղեկավարւում են պատահականութեամբ, խճճւած քաղաքական մոլորութիւնների եւ հոգեբանական սխալանքների մէջ:

Մեր կուսակցութիւնները կամ չեն հասկանում այդ, կամ ժամանակ չունեն հասկանալու:

Նրանց պակասում են ճշմարտութիւններ, որ փրկել գիտեն: Չկայ, չի նկատւում մտքի ու ոգու լարում, իսկ ճշմարտութիւնները կարելի է հասկանալ միայն այդ լարումով:

Չկայ ստեղծագործութիւն, չկայ բարոյական ոյժերի մթերում: Կայ ընդհակառակը, կայ հասկացողութիւնների քաոս եւ անիշխանութիւն, կայ հոգեկան լճացում, կայ բարոյական մակաբուծութիւն - հոգեբանական մի աղիտալի մթնոլորտ, որի մէջ չեն աճում, չեն փթթում բարոյական ոյժեր:

Իսկ նման մթնոլորտում կը դաստիարակւեն անարի, փոքրոգի եւ պարտուողական սերունդներ միայն - անարի ժողովուրդ, որի ոյժերի մեծագոյն մասը սպառւում է վախի եւ անհանգստութեան մէջ:

Կայ օտարահակ կողմնորոշումների գերագնահատումն եւ սրանց խելագար հակամարտութիւնը՝ ծնունդ թոյլերի հոգեբանութեան:

Կայ անվճռականութիւն - ասել է թուլութիւն, որը ցոյց տւող ազգը մեծապէս արագացնում է եւ ուժեղացնում թշնամու հարւածը:

Կայ այն ամէնը, ինչ որ անյոյս եւ վտանգւած է դարձնում մեր ժողովուրդի ապագան:

Մեղմ ասած՝ ստեղծւել է մի դրութիւն, որ մահւամբ է սպառնում մեր ժողովուրդին:

է

Նա - անհատ թէ հաւաքականութիւն - որը բարոյապէս կատարելագործւում է՝ ուղղակի թէ անուղղակի կերպով նպաստում է իր շրջապատի բարոյական զարգացման:

Մեր կուսակցութիւնները՝ թողած բիւզանդական վէճերը եւ ամէն գնով իրար գետին զարկելու անմիտ ցանկութիւնը, թողած հակառակորդի թերութեանց ամենօրեայ ցուցադրութեամբ իր սեփական այլանդակութիւնները քօղարկելու սին ճիգերը, - թողած ամէնը, հրամայողաբար պիտ զբաղւեն ինքնադաստիարակութեամբ:

Անհատ թէ ժողովուրդ - սրանք միշտ էլ աւելի ուժեղ են, քան կարիքը, քան վտանգը, քան թշնամին - սրանք միշտ էլ կարող են գերազանցել իրենց, բարձրանալ իրենցից, եթէ սրանց չի պակասում սեփական ոյժերով ոտքի կանգնելու կամքը:

Բարձրանալով՝ հոգեպէս բարձրացնել մեր ժողովուրդը, ինքնուղղումով սրբագրել ժողովուրդի հոգին:

Գիտակցելով, թէ **ժողովուրդները չեն պարտւում, եթէ չեն ուզում պարտւել** - գիտակցելով այդ ճշմարտութիւնը, մեր կուսակցութիւնները զայն իրենց շարքերի միջոցաւ պիտ ներշնչեն մեր ժողովուրդին՝ սրան հոգեպէս գօտեպնդելու համար: Մեր կուսակցութիւնները, սրանց միջոցաւ ե՛ւ ժողովուրդը խորապէս պիտ գիտակցեն.

- Քանի դեռ տրտնջում է, աղերսում, լալիս մի ժողովուրդ՝ պէտք չէ օգնել նրան, քանզի այդպիսին կամովին հրաժարւում է իր գոյութեան իրաւունքից:

- Չարժէ եւ չի կարելի օգնել ընկածին, եթէ նրան պակասում է ինքնօգնութեամբ ոտքի կանգնելու կամքը:

- Ով չի աշխատում իր բովանդակ ոյժերով՝ իրաւունք չունի ուրիշներից օգնութիւն սպասելու:

- Սեփական ոյժերով ինքնապաշտպանւելու անընդունակ ժողովուրդները պատժւում են մահւամբ:

- **Իրաւունքը ոյժի հասկացողութիւն է եւ ոչ տրամաբանական,** ինչպէս եւ պայքարը յանուն իրաւունքի - բարոյական հիմքը ժողովուրդների գոյութեան - անէծք չէ, այլ օրհնութիւն:

Դատապարտւած է մի ժողովուրդ, եթէ նա իրաւունքը զոհաբերում է իր յանցաւոր հանգստին եւ ոչ ընդհակառակը:

- **Թոյլը մեղաւոր է, որ թոյլ է:** Անբարոյականութիւն է թուլութիւնը՝ ստեղծւած սնուցանելու ոյժը: Ժողովուրդները իրենց թուլութեանց մեղ-

քերը կը քաւեն որպէս պարտութիւն, ստրկութիւն, որպէս անփառունակ գոյութիւն:

- **Անպարտելի է այն ժողովուրդը, որ ղեկավարում է ոգու ձեռքով:**

Այնտեղ, ուր կայ ոգու, ասել է՝ բարոյական ոյժերի ապացոյցը - այնտեղ թւական գերազանցութիւնը, քարը, մետաղը, գրեթէ կորցնում են իրենց նշանակութիւնը: Ոգու հետ զինակցողը բարոյական ոյժերի հետ է զինակցում, որի միջոցներն աճում են անհաւատալիութեան աստիճան, դառնում անսպառելի:

- **Գլխաւոր դերը** ժողովուրդների պատմութեան մէջ խաղում են ո՛չ արտաքին պայմանները, ո՛չ քաղաքական կողմնորոշումը, ո՛չ էլ դիպուածները, այլ՝ **իրենց հոգեբանական նկարագիրը:**

- **Մի ժողովուրդի գոյութեան արտաքին պայմանները հարազատօրէն կապուած են նրա ներքին հոգեկան դրութեան հետ:** Ասել է՝ **ամէն ժողովուրդ այնտեղ է, ուր նա հասել է իր բարոյական ոյժերի մղումով:**

Գիտակցելով այդ ամէնը՝ մեր կուսակցութիւնները, մեր Եկեղեցին, մեր դպրոցը, մամուլը պիտ հոգեփոխեն մեր ժողովուրդը:

Գիտակցելով, հարազատելով եւ գործադրելով այդ փրկարար ճշմարտութիւնները՝ մեր մտաւորականութիւնը պիտ յաջողի վերադաստիարակութեամբ հոգեբանօրէն բարձրացնել հայութիւնը, նրան պիտ յաջողի մեր ժողովուրդի **ոգու անպարտելիութեամբ ապահովել նրա անպարտելիութիւնը** - նրա ֆիզիքական եւ բարոյական գոյութիւնը:

—

Պէտք է վերադաստիարակութիւն - իմաստուն դաստիարակութիւն է պէտք՝ վերջին խաղաթուղթը ապագան վտանգուած ժողովուրդների:

Դաստիարակութի՛ւն, որ յեղաշրջէր մինչայժմեայ թոյլի մեր հասկացողութիւնը իրաւունքի եւ քաղաքական բարոյականի, քրիստոնէութեան, ոյժի եւ թուլութեան, պատերազմի եւ խաղաղութեան մասին:

Դաստիարակութի՛ւն, որ ազգային հզօր զգացումով եւ արթուն գիտակցութեամբ զինէր հայութիւնը, որ արիացնէր եւ դառնար մայրը բարձր ժողովրդասիրութեան եւ գաղափարապաշտութեան, մղէր ընդհանուրի շահը միշտ էլ գերադասել անձնականից, թելադրէր անհատին ընդհանուրի երջանկութեան մէջ փնտռել իր անձնական երջանկութիւնը, մտատրամադրէր բոլորին, բոլորին՝ աւելի պարտականութեանց տէր զգալ իրենց, քան իրաւունքների, որ մղէր հայ մարդուն **մեռնել ապրելու եւ ապրեցնելու եւ ոչ թէ ապրել՝ մեռնելու համար,** որ իրականացնէր **սոցիալական հնարաւոր արդարութիւնը մեր ժողովուրդի մէջ - միակ**

պատճառը անարիների, ընչազուրկների եւ վատերի չգոյութեան, ասել է եւ հայրենիքների անպարտելիութեան:

Փրկարար դաստիարակութիւն, որ տար մեզ անհրաժեշտ առաքինութիւններն այն ժողովուրդների, որոնք արի են եւ վստահութեամբ կը նային իրենց ապագային, որ բարձրացնէր մեզ մինչեւ գերագոյն ըմբռնումն ու զգայնութիւնը, - յատկութիւններ, որոնք կը հարիւրապատկեն ժողովուրդների բարոյական կորովը:

Դաստիարակութիւն, որ հոգեփոխէր եւ փրկէր մեր ժողովուրդը:

—

Ահա՛ այս նոր դաստիարակութեան ստեղծագործ եւ փրկարար գործին է, որ անվերապահօրէն եւ վճռաբար պիտի լծուեն մեր կեանքի եւ պատմութեան ընթացքը շարժող բոլոր հաւաքականութիւնները՝ **ազգային մի բարձր մարմինի հսկողութեան տակ, ընտրուած բոլոր հոսանքներից:**

Հրապարակ հանելով մեր ժողովուրդի հոգեւոր վերանորոգման անհրաժեշտութեան խնդիրը - կ'ուզէի հաւատալ, թէ մեր մտաւորականութիւնը հոգեպէս անհանգիստ է մեր ժողովուրդի ապագայի նկատմամբ, թէ նա - մեր ունեցած ահաւոր կորուստներից յետոյ - ժողովրդասպանութեան համազօր կը համարի հինի շարունակութիւնը եւ երկաթէ անհրաժեշտութիւնից մղուած՝ առաքինութիւն կ'ունենայ անկուսակցականանալ գո՛նէ մեր ժողովուրդի ինքնապաշտպանութեան խնդրում:

- Մեր պատմութիւնը յետ այսու աղիտալի սխալների կրկնութիւնը պէտք չէ լինի, այլ՝ սրբագրութիւնը:

Էլ ոչի՛նչ այն ամէնից, ինչ որ արուել է եւ արւում է արտաքին թշնամու գործը հեշտացնելու համար - սա պիտ լինի ինքնազգաստացումի եւ փրկութեան հրաւիրող մեր օրւայ աղաղակը:

Արե՞ց այդ, վարե՞ց այսպէս մեր մտաւորականութիւնը - վաղն ազգովին պիտ լինենք այն, ինչ որ ուզում ենք լինել:

Մարդկային աչքը դեռ չի տեսել այն մեծութիւնը, որին կարող են հասնել անհատներն ու ազգերը՝ իրենց հոգեկան ոյժերի զարգացմամբ:

Վաղն այն ժողովուրդներին է, որոնք գիտակցում եւ գործադրում են այս ճշմարտութիւնը:

Վաղը յաղթելու է նա, որը մինչ այդ վաղը իր հոգու մէջ կը տանի յաղթանակը:

Հասկանա՛նք, հարազատե՛նք այս ճշմարտութիւնը եւ աշխատե՛նք վաղւայ համար - եթէ չենք ուզում կորչել որպէս ազգ:

ՈՐԴԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՐԵՐԻ ԴԷՄ*

* *Տպագրվել է Սալոնիկում, 1927թ.:*

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Կ՚ուզէի որ իմ խօսքը՝ ուղղած քեզ, հա՛յ երիտասարդութիւն, կ՚ուզէի որ դա առաջին հաղորդութեան ազդեցութիւնն ունենար:

Կ՚ուզէի որ քեզ համար գրուած խորհրդածութեանց այս էջերն ընդունէիր, ինչպէս ծարաւ դաշտը ցօղն է ընդունում:

Հոգեփոխել քե՛զ կ՚ուզէի ճշմարտութեան ոյժով. փրկել քեզ եւ քո միջոցաւ գաղութահայութիւնը կեղծիքի գերութիւնից:

Եթէ դու չես - թող խոստովանիմ՝ գաղութներում միայն քեզ եմ հաւատում - եթէ չես կամ պիտի չդառնաս ճանապարհ փրկութեան մեր ժողովրդի համար, նրա համար կը մնայ մի հատիկ ճամբայ... դէպի գերեզմանատուն:

Եթէ դու էլ պիտ նմանիս այն սերունդներին, որոնցից «մի բուռ հող» իսկ չի մնացել - օտարի լուծը եւ տառապանքը պիտ մնան քո ժողովրդի բաժինը: Որբ, գաղթական, հայ անունները պիտ շարունակեն մնալ որպես նոյնանիշ բառեր: Եւ պիտ երկարի խաչելութեան հոգեվարքը եւ ուշանայ յարութիւնը ցեղիդ:

Չէ՛, չէ՛, ես հաւատում եմ քեզ, քո ներքին մարդուն եւ Հային: Հաւատում եմ, որ դու հրամայողաբար պիտ դառնաս ուխտուած եւ վրիժակ սերունդ - դիւցազնախառն սերունդը մեր, որի ջանքերով Հայաստան երկիրը պիտ դառնայ Նոր Սպարտա՝ Արեւելքի սրտի մեջ: Ես հաւատում եմ քեզ եւ ահա՛ թէ ինչո՞ւ եմ քեզ ուղղում իմ առաջին «Bon quart»ը: Դա քառորդապահի իմ աղաղակն է, ուղղուած քեզ - աղաղակը, կանչը նաւաստիների, որ գիշերներն իրար կ՚ուղղեն ամէն քառորդ ժամ:

Bon quart! Խռովայոյզ է ծովը. խաւարն անթափանց. վտա՛նգ, վտա՛նգ կայ նաւի համար:

Սակայն, նաւազներն արթուն են, պատրաստ եւ սթափ: Նաւը՝ ալեկոծ, բայց անսոյզ, պիտ հասնի նաւահանգիստ:

Այս խռով, խաւար եւ նենգ ժամանակներում, երբ այնքան մեծ եւ իրական է վտանգը մեր ցեղի համար, քե՛զ, հայ երիտասարդութիւն, ես քե՛զ իմ անհանգստացուցիչ աղաղակն եմ ուղղում:

Bon quart!

1.

ԱՆԴՈՒՆԴԻ ԵԶԵՐՔԻՆ

Ազգերի կեանքը ժամանակաշրջաններ ունի, երբ որդիները հարկադրաբար իրենց հայրերի դաստիարակիչը կը հանդիսանան:

Նման մի ժամանակաշրջան է ապրում օրեայ հայութիւնը, աւելի ճիշտ՝ գաղութահայութիւնը: Երբեք, հա՛յ երիտասարդութիւն, մեր ազգն ու ազգայնութիւնը այնքան լրջօրէն վտանգուած չեն եղել, որքան այսօր: Ինչպէս եւ երբեք մեր ժողովուրդը այն աստիճան պառակտուած ու տկարացած չի եղել, ինչպէս այժմ: Քո ժողովուրդը բաց աչքերով աշխատում է իր մահացու թշնամիների համար. կատարում ամէն ինչ, որ գալիք աղէտը - թրքական վտանգը, որ դամոկլեան սրի նման կախուած է իր գլխին - որ վաղուայ աղէտը լինի անչափելիօրէն մեծ, անդիմագրաւելի եւ անդարմանելի, որ դա լինի «իններորդ ալիք»ը մեզ համար:

Մենք պառակտուած ենք: Իսկ նման ժողովուրդը նւազ է ուշադրութիւն դարձնում արտաքին իրական թէ հաւանական վտանգի վրայ: Հայութեան հայեացքն ուղղուած չէ արտաքին թշնամուն, որ հարկադրուած լինի չափաւորելու կամ ի սպառ արգիլելու ներքին տարակարծութիւնները: Երբ ազգերը այսօր կ'եռան հոգով, գիտութեան նորագոյն զէնքերով իրենց միտքն ու բազուկը կը զինեն՝ ցեղամիջեան անողոք պայքարում յաղթանակելու կամ յաջողութեամբ դիմագրաւ լինելու համար, հայութիւնը կը շարունակէ կորովաթափ լինել ներքին անփառունակ ճակատների վրայ. նա կը պատրաստուի վաղուայ մահաբեր պարտութեան համար:

Մի ժողովուրդ, որի որոշ տարրերը, կարծէք արդէն հաշտուել են իրենց ցեղի գլխովին կորչելու մտքի հետ եւ կը ցուցադրեն մահւան դատապարտուածի հոգեբանութիւն: Սրանք արեւելեան ճակատագրապաշտութեամբ ամէն ինչ թողել են բախտի կամքին եւ անհանգստանալու պատճառ չունին: Կան եւ այնպիսիները, որոնք կ'ուզեն ե՛ւ անկախ հայրենիք ունենալ, ե՛ւ վաղը պարտուած տեսնել արտաքին թշնամուն, բայց նախապատրաստելու փոխարէն, կը խօսեն ու կը գրեն միայն: Եւ գրեթէ բոլորն էլ կը շարունակեն զարմանալ միամտօրէն, թէ ինչո՞ւ աշխարհն անտարբեր կը մնայ մեր Գողգոթայի հանդէպ. թէ ինչո՞ւ մենք սպեղանի կը սպասենք, բայց նորանոր վէրքեր կը ստանանք:

* * *

Դժւար է, ընթերցո՛ղ, անկարելիութեան աստիճան դժւար է ընդհանուր գծերով բնութագրել հոգեբանական այն հեղձուցիչ մթնոլորտը, որի մէջ շնչում է գաղութահայութիւնը:

Սպանի՜չ իրականութիւն, ուր գոյութիւն չունի մի հատիկ օրէնք, կանոն իսկ, պարտադիր բոլորի, բոլորի համար. ուր որոշ տարրեր յանցապարտօրէն ժխտում են ե՛ւ ազգային սրբութիւններ, ե՛ւ բարոյական արժէքներ. ուր կայ առատօրէն՝ թոյն, մաղձ, գռեհկութիւն, կայ դիմածռութիւն, ծաղրանք, չարաւեստ խծբծանք, ուր մարդիկ դառել են դառնախօս, նեղսիրտ, եսական, ուր տիրող հոգեւոր մրափողութեան պատճառով նոր հեղինակութիւններ չեն ստեղծւում եւ հիները չեն յարգւում. ուր մտաբարոյական ընդհանուր աղաւաղութեան մէջ մարդիկ, կարծէք դադարել են իրար հասկանալուց եւ ուր հնարաւոր չէ գլուխ հանել որեւէ ազգաշէն գործ. ուր կեղծիքն է կազմում որոշ քաղաքական հոսանքների բարոյական դրամագլուխը, ուր ամբողջ կազմակերպութիւններ ապրում են կեղծիքի եւ մտաւոր կուրութեան մէջ՝ շրջելով անդունդի եզերքին:

Եւ այդ, եւ այդ ամէնը այն ժամանակ, երբ թրքութիւնը տապարն է դրել մեր ցեղի գոյութեան ծառի արմատին: Աննպատակ եւ ուղեկորոյս ժողովո՛ւրդ, որ կորցնելով իր ազգային իդէալը՝ վերածւել է «անհատների փոշու»: Գողգոթաների տէ՛ր ժողովուրդ, որ չի սարսափում իր ողբերգանքի մէջ տկար եւ ծիծաղելի լինելուց:

Մի ժողովուրդ, որի որոշ տարրերի համար ազգային դատ չկայ, արտաքին պայքար գոյութիւն չունի, տարրեր, որոնք այլեւս ոչինչ չեն ուզում աշխարհից, բացի ժամանակաւոր կերն ու հանգիստը. յանցաւոր տարրեր, որոնք մեր դերն այլեւս վերջացած են համարում մարդկութեան պատմութեան մէջ եւ անվրդով թեքւում՝ դէպ այլասերում եւ դանդաղ անհետացում:

Ահա՛ մօտաւորապէս այն սպանիչ մթնոլորտը, ստեղծւած քո հայրերի կողմից - անուղղայ հայրեր, որոնք շարունակում են իրենց հին մեղքերն ու սխալները սնուցանել նորերով, ազգ եւ ազգայնութիւն վտանգի մատնած հայրեր, որոնց վերադաստիարակիչը, դո՛ւ, հարկադրաբար դո՛ւ պիտ լինես, հա՛յ երիտասարդութիւն:

* * *

Դժբախտութիւն է, սակայն, երբ դաստիարակիչն ինքը եւս կարիք ունի դաստիարակութեան: Որպէս հարազատ ծնունդը մեր տխուր միջա-

վայրի՝ դու էլ, հա՛յ երիտասարդութիւն, հոգեբանօրէն դո՛ւ էլ զերծ չես ստուերային կողմերից:

Վերադաստիարակչի վսեմ առաքելութիւնդ յաջողութեամբ պսակելու համար, քեզ պէտք է նախ ամօթով երես դարձնել այն անիմաստ կեանքէն, զոր քարշ կու տան կեղծապաշտ հայրերդ, անասնացուցիչ կեանք, որ մարդը կը դարձնէ այն, որին՝ աշխարհածանօթ Թոլսթոյի զզւանքը «յիմար միս» անունն է տուել:

Քե՛զ, նախ քե՛զ պէտք է հոգեփոխուել, իսկ այդ անելու համար, դու, օրւայ հայրերիդ երեսին պիտ շպրտես քո վճռական ոչը եւ ապա հռչակես քո նոր ուխտը, թէ հայրերիդ դատապարտելի ընթացքի պատճառով վտանգւած մեր ցեղի ապագան փրկելու սրբազան մտահոգութեամբ, վճռած ես յետ այսու ապրիլ միայն երկու բանի - **Հայրենիքիդ եւ իր Անկախութեան համար:** Այո՛, դու պիտի լինես ուխտւածների սերունդ եւ որպէս այդպիսին, պիտ վերադաստիարակես քեզ եւ ապա դառնաս դաստիարակիչը հայրերիդ: Այլ կերպ, հայութիւնը կը մնայ մէկն այն դժբախտ ժողովուրդներից, որոնք գոյութիւն ունին, բայց չեն ապրում, որոնք «աշխարհում են, բայց աշխարհից չեն»: Այլապէս, քո ժողովուրդը իր տեղն արեւի տակ աստիճանաբար պիտ զիջի իրեն շրջապատող այն գայլ ցեղերին, որոնց համար կեանքը լոկ առեւտուր կամ լումայափոխութիւն չէ:

Քեզ պէտք է հոգեփոխուել, իսկ դա նշանակում է, թէ դու պիտ դառնաս հակապատկերը հայրերիդ: Նրանցից շատերը դեռ այն են, որոնց կը խարազանէր Նազովրեցու խօսքը - «ծոյլ եւ նենգ ստրուկներ»: Շատերը նրանցից չուզեցին գիտենալ, թէ ինչպէ՛ս մեր ժողովրդի մի մասը պայքարեց յանուն ազատ եւ անկախ Հայրենիքի: Մեր անհաւասար Ազատամարտի օրերին, երբ հայութիւնը աստիճանաբար կը բարձրանար դարերի ստրկութեան ճահճից, եւ երբ մարդկութեան լաւագոյն ներկայացուցիչները հոգեպէս կը զինակցէին մեզ, նրանցից շատերը, անընտել՝ յանդգնելու եւ զոհաբերելու աստւածային արւեստին, խուսափեցին ազգային դատի խաչակիր զինւորը լինելու պատւից: Հեռուներից խօսեցին Հայաստանի մասին, առանց այդ եօթնիցս սուրբ եւ հերոսական երկիրը ճանաչած լինելու: Հայհոյեցին յաճախ յեղափոխութեանը եւ խծբծեցին նրա Աստւածաշունչ Նահատակներին, առանց հասկանալու թէ «Աստւածութիւնը հայհոյւած չի՛ լինիր»:

Հանրապետութեան օրով չվերադարձան երկիր, որովհետեւ մեր նորազատ Հայրենիքում դեռ բաւարար քանակութեամբ նոյնիսկ չոր հաց չկար: Կար, սակայն, արտաքին վտանգը, սեւ ամպի պէս կախւած հանրապետութեան գլխին: Շատերը դուրս մնացին Հայաստան երկրից, մնացին անտարբեր ու անկարեկիր, բայց մեծապէս օգտւեցին մեր ժողովրդի

վարած գոռ ազատամարտի շնորհիւ մարդկութեան մէջ դէպ հայութիւնը առաջացած համակրանքից:

Բարոյապէս չարաշահեցին ե՛ւ անօրինակ մարտիրոսագրութիւնը, ե՛ւ նորագոյն հերոսականը մեր ժողովրդի: Ամենուրեք եւ մի՛շտ էլ, այդ տարրերը հայրենասիրութեան սրբազան կրակից օգտուեցին «իրենց ծխափողը վառելով կամ ապուրը տաքացնելով»: Այդպէս էին երէկ. այդպէս են եւ այսօ՛ր:

Զուրկ աստուածութեան զգացումից՝ սրբութիւն չճանաչեցին նրանք եւ մնացին անհասանելիօրէն հեռու՝ ճշմարիտ Հայ եւ մարդ կոչուելու իրաւունքից: Կեանք վատնեցին առանց հոգեպէս վառուելու եւ մի հատիկ կայծ վառելու իրենց շրջապատի մէջ: Իմաստասիրութիւն եւ բարոյականութիւն ունեցան - որոճող կենդանու, կեղծիքներ՝ որոնցով կը շարունակեն դեռ իրենց տկարութիւններն ու կեղտերը արդարացնել:

Օտար ազգութեանց մէջ, նիւթական դիրքի տէր այդ տարրերը, զոհաբերութեան իրենց լիաբուռն բաժինն են բերած եւ կը բերեն ընդհանուր գործին, մնալով հիացողն ու խնկարկողը իրենց ցեղի հերոսականի: Այդ տարրը, մեզանում, անընդունակ՝ յափշտակուելու վսեմ գաղափարներով՝ սովոր է ե՛ւ մեծութիւնները դիտել անտարբերութեամբ:

Ա՜հ, քո հայրերը ... նրանցից շատերը հոգով նպարավաճառ են մնում եւ ա՛յն դէպքում, երբ ապրում են աշխարհի մեծագոյն եւ մեծածախք ոստաններում: Եւրոպական խօսքեր, ասիական արարքներ! Եղել է այդ տարրը եւ շարունակում է մնալ տկարը, անփառունակն ու ամօթալին մեր պատմութեան մէջ - այն ամէնը, որ յաճախ հեշտացրել է օտար տիրապետութիւնը Հայաստանում:

* * *

- Մեզ պէտք չէ՛ Անկախ Հայաստան,- դեռ այսօր էլ աղմկում են քո հայրերէն ոմանք:

- Անկախ Հայրենիքը անհրաժեշտ է հենց նրա համար, որ ձեզ՝ հոգով թզուկներիդ դարձնի կատարեալ մարդ եւ Հայ, արժանի Անկախութեան,- պատասխանում է Մայիս Քսանութի շէնքը իր ուսերին կրող ժողովուրդ - հսկան:

- Պէտք չէ՛,- յամառում են մտքի մանկաբարոյութեամբ բռնաւածները, առանց հասկանալու, թէ անկախութիւնից զուրկ ժողովուրդները դատապարտուած են մահուան, ծառայելով գերիշխան ազգերի համար որպէս պարարտացուցիչ աղբ, ապաւառ:

- Պէ՛տք է,- կարճ կտրում է ժողովուրդը:

* * *

Այսպէս, բորբոքւում է ներքին կռիւը եւ մեր ցեղի տկար տարրերը դժւարանում են հասկանալ, թէ «պէտք չէ» - ասել է՝ պէտք չէ որ ապրի հայութիւնը:

Նրանք չեն ուզում հասկանալ, որ իրենց յաղթանակը պիտի լինի արտաքին թշնամու յաղթանակը:

Պէ՛տք է՝ ասա դու, հա՛յ երիտասարդութիւն, ապա հասկացրու հայրերիդ, թէ իրենց վերջնական պարտութեան մէջ է մեր ցեղի քաղաքական իդէալի յաղթանակը, թէ իրենց պարտութիւնը պիտ դառնայ պարտութիւնը այն բոլոր տարրերի - յաւիտենապէս ստրկահոգի, տկար, զէնընկէց - պարտուողականութեան այն ցաւագար ոգու, որի նիւթած վատութեանց պատճառով դարերով օտարի լուծն ու ամօթն է եղել մեր ժողովրդի բաժինը:

Այո՛, պէտք է: Կրկնի՛ր, մէկ է՛լ, հազար անգամ, - պէ՞տք է, որովհետեւ Անկախ Հայրենիք ունենալը իրաւունք լինելուց զատ եւ պարտականութիւն է: Որովհետեւ ցեղերի ուրոյն հանճարը անկաշկանդօրէն աճում է եւ ստեղծագործում միայն բացարձակ Անկախութեան մէջ: Որովհետեւ միայն գերիշխանութեամբ են ժողովուրդներն արդարացնում իրենց գոյութեան իրաւունքը:

2.

ԿԵՂԾԻՔԻ ԳԵՐՈՒԹԻՒՆԸ

Տարիներից ի վեր հրապարակի վրայ մի կեղծիք կայ, մի հրէշային կեղծիք, որին կը շարունակի խունկ ծխել հայրերիդ մի մասը, հա՛յ երիտասարդութիւն: Կեղծ դառնութեամբ սրանք դեռ սգում են յեղափոխութեան զոհերի վրայ: Փարսեցիօրէն կուրծք են ծեծում, իմաստութիւն ծախում, երբեմն էլ արամազդեան կեցւածք ընդունելով, այդ դասալիքները երեւան են գալիս դատաւորի դերում եւ անիծում Անկախութեան գաղափարը:

Ա՜խ, տխմար յեղափոխականներ,- միամիտների ականջին փսփսում են սրանք,- ի՞նչպէս կարելի էր զոհեր տալ. ի՞նչպէս կարելի էր չգիտենալ, թէ ազատութիւնը տարւոյ եղանակների նման գալիս է ինքնին, առանց պայքարի եւ արեան. պտուղի պէս,- պնդում է ծպտւած ստրուկը,- պտուղի պէս բան է ազատութիւնը, ընկնում է հենց որ հասունացաւ...

Այս եւ այսպէս են թշւառաբանում հայրերէդ ոմանք, որոնք կեղծում են, թէ չգիտեն որ ազգերը երկաթով ու արիւնով են հարթել իրենց պատմական ճամբան, որ ազգերի բարօրութիւնը ձեռք է բերւում արիւնով ու արցունքով, որ ազգերի անցած ճամբաները շարունակում են ծածկւած մնալ մարդկային գանգերով: «Յաղթութիւնը չի պտղաբերի, մինչեւ որ դաշտերը չոռոգւին արեամբ»:

Արեան հեղեղներով են ներկւած բոլոր հայրենիքները: Անհաշիւ է զոհերի թիւը, անչափելի՝ ժողովուրդների թափած արիւնը յանուն անկախութեան: Այդ գիտեն մեր ցեղի տկար տարրերը, գիտեն, բայց կեղծիք կոչւած հրէշի դէմ չմեղանչելու համար, դեռ կը պնդեն, թէ Հայոց աշխարհը կարող էր բացառութիւն կազմել ծանօթ երկաթէ օրէնքից - արեան տուրքից:

Եւ զայրացած են սրանք - երկրորդ կեղծիքը - զայրացած են, որ մեզ չի յաջողել զինաթափելու այն մեծ ու փոքր ազգերը, որոնք սուր մերկացրին աշխարհի խաղաղութեան դէմ !?!

Սրանք կ'ուզէին որ չպայթէր համաշխարհային պատերազմը. կ'ուզէին որ ազգերի իրար անցնելուց յետոյ հայութիւնը մնար չէզոք. եւ կը հաւատան, թէ թրքութիւնը, - դարերի գազանն ու խուժը - պատերազմի օրերին կարող էր դառնալ մարդ եւ հայասէր !?... Չէզոքութի՜ւն... Համաշխարհային պատերազմի օրերին չէզոքութիւն պահանջելը հայ ժողովրդից, կը նշանակէր մահացիօրէն տգէտ եւ վատ լինել, կը նշանակէր տարրական հասկացողութիւն չունենալ ստրկութեան մէջ հոգեվարող ժողովուրդների հոգեբանութեան մասին: Չեխը, Լեհը, Մակեդոնացին, Սերբը, Սիրիացին - քաղաքականապէս անիրաւուած բոլոր ժողովուրդները կողմ դառան, դարերի իրենց երազը իրականացած տեսնելու համար:

Հոգեբանօրէն աւելի քան հասկանալի շարժումներ էին՝ կամաւորականը՝ ռուսահայ իրականութեան, լեգէոներականը՝ գաղութահայութեան մէջ:

- Արդեօք մեր բացարձակ չէզոքութեան դէպքում, եթէ դա նոյնիսկ հոգեբանօրէն հնարաւոր լինէր, թուրք կառավարութիւնը պիտի չտեղահանէ՞ր հայութիւնը:

- Նա պիտ վարուէր մեզ հետ ճիշտ այնպէս, ինչպէս որ վարուեց:

- Ինչո՞ւ:

- Որովհետեւ Թուրքն աւելի դրական կարծիք ունէր եւ ունի հայ ցեղի մասին, քան մեր հայանուն ստրկամիտները, որոնք ազնուութեան վկայական տալով թրքութեան, վատութիւնն ունին կարծելու, թէ հայութեան մէջ այլեւս մեռած է մարդն ու Հայը, թէ հայութիւնը կարող էր եւ չյուզւել, չուրախանալ, թէ ահա՛ կ'երեւան եւրոպական գայլերը եւ իսլամ շունը կը թողնի, կը հեռանայ հայկական նահանգներէն, թէ ահա կը յայտնւին քրիստոնեայ զօրքերը եւ հայութիւնը կը թօթափի դարերի ստրկութեան լուծը:

Վատերը միայն վատ կարծիք ունին մեր ժողովրդի մասին: Սրանց համար այնքան զուլումներից զարնուած հայութիւնը, փայտէ ժողովուրդ է, անընդունակ նոյնիսկ զգալու եւ երազելու լաւ օրերի մասին:

Եօթնիցս տգէտ եւ զզուելի՛ կարծիք...

Մեր բարեացակամ չէզոքութեան դէպքում իսկ - եթէ դա, կրկնում եմ, նոյնիսկ հնարաւոր լինէր - թրքութիւնը պիտ վարուէր մեզ հետ ճիշտ այն ձեւով, ինչպէս որ վարուեց: Նա չէր կարող հաւատալ մեր բարեկամութեան, քանզի կար մօտիկ անցեալի խրատական պատմութիւնը: Յունաստան, Ռումանիա, Սերբիա, Բուլղարիա, Սեւ Լեռ, Բոսնիա, Հերցէք - այդ բոլոր ժողովուրդները իրար յետեւից, գարշանքով էին թօթափել թրքական լուծը: Հայը չէր կարող սեւ բացառութիւն կազմել: Որպէսզի Թուրքը վստահէր մեզ՝ յիշատակածս ազգերը ժամանակին պէտք չէ ծառացած լինէին թրքութեան դէմ: Կարո՞ղ էինք այնպէս անել, որ մեր «սեւ աչքերի» համար այդ ժողովուրդները շարունակէին մնալ ստրուկ: Ո՛չ: Կարո՞ղ էինք այնպէս անել, որ թրքութիւնը մոռանար մօտիկ անցեալի խրատական պատմութիւնը եւ հաւատար մեզ: Ո՛չ: Ուրեմն, տեղի պիտ ունենար այն, ինչ որ տեղի ունեցաւ:

* * *

Կայ երրորդ կեղծիքը, որին «պաշտօն եւ ժամերգութիւն» է կատարում քո անդարձ, անապաշխար հայրերի որոշ մասը: Դա մեծ կեղծիքն է Կարսի մասին:

Չի եղել, հա՛յ երիտասարդ, ու չկայ մի ժողովուրդ, որի պատմութիւնը միայն եւ միայն փայլուն յաղթանակներ արձանագրած լինէր: Ժամանակաւոր պարտութեան դառն բաժակը դատարկել են բոլոր ժողովուրդները, ինչպէս եւ աշխարհակալ Հռոմը: Երէկւայ գոռ ու գոռոզ յաղթականը պարտուում է այսօր, առանց, սակայն, կորցնելու վաղւայ յաղթանակի յոյսը: Հարուածներ է, որ կը փոխանակեն ժողովուրդները, եւ վա՜յ նրան, որ միայն ստանում է առանց վերադարձնելու, առանց հակահարուածելու: Այդպիսին իր տեղն արեւի տակ ընդմիշտ կ'ազատէր նրանց համար, որոնք կեանքն ու պատերազմը նոյնանիշ երեւոյթներ են համարում, որոնք խօսում են խաղաղութեան մասին, բայց չեն դադարում պատրաստուելու հարուած տալու կամ իրենց տրուելիք հարուածը յետ մղելու համար:

Եւ սովորութիւն կայ, գրչի ու գիրքի տէր բոլոր ժողովուրդների մօտ իմաստուն սովորութիւն կայ, պատերազմից յետոյ հաշուի նստել, պարզել իրենց յաջողութեանց եւ պարտութեանց պատճառները: Յաղթականը կ'ուսումնասիրէ իր յաղթանակի պատճառները՝ վաղը եւս յաղթանակելու համար, պարտուածը կ'անդրադառնայ իր պարտութեան պատճառներին՝ վաղը նրանցից խուսափելու նպատակով: Համաշխարհային պատերազ-

մին մասնակցութիւն բերած կողմերը վաղուց են պարզել ճշմարտութիւնն իրենց զէնքի յաջողութեան ու ձախողանքի մասին, եւ զինուած այդ ճշմարտութեամբ, լռիկ ու մնջիկ պատրաստւում են վաղւայ համար:

Մի տխուր բացառութիւն է կազմում աստուածապահ մեր ժողովուրդը միայն: Տարիներ են անցել Կարսի անկման օրէն, տարիներ, եւ ... այդ բերդի շուրջը տեղի ունեցած ողբերգութեան մասին հրապարակում կայ ամէն ինչ, միայն ոչ ճշմարտութիւն: Մի նշանախեց անգամ: Շատ բան գրւեց, աւելի շատ խօսւեց, եւ դեռ գրում են, խօսում Կարսի անկման պատճառների մասին, բայց ոչ ճշմարտութիւնը երեւան հանելու մտահոգութեամբ: Կարծիք յայտնեց մտաւորականը, սրճեփը, դիւանագիտական մարզանքներով զբաղւողը, նպարավաճառը, սափրիչը. չմնաց արհեստ եւ արւեստ, որի ներկայացուցիչը լեզու չթրջէր Կարսի պատերի տակ հայ զէնքի կրած անյաջողութեան պատճառների մասին: Բայց ոչ ոք ձեռնահասութիւն եւ արիութիւն ունեցաւ մազաչափ անգամ մօտենալու ճշմարտութեան, ոչ ոք ուզեց եւ կարողացաւ տեսնել ճշմարտութիւնը:

- Հայաստանի կառավարութեան անհեռատեսութեան կը պարտինք Կարսի անկումը. պատերազմը դիւանագիտօրէն կազմակերպւած չէր, - ասացին եւ ասում են ոմանք:

- Ձիւնորական նախարարի ապիկարութեան երեսից ընկաւ Կարսը, որովհետեւ զօրք չկար, որովհետեւ եղածը զօրք չէր:

- Կարսը թշնամուն յանձնեց բարձր հրամանատարութեան անճարակութիւնը. զօրք կար, բայց կռւեցնող չկար:

Սրանցով չէ սպառւում մեղադրականը: Շա՜տ են նրա կէտերը եւ բազմապիսի:

Եւ ամէն մէկը՝ երեւակայական այս կամ այն պատճառներին վերագրելով հայկական բերդի անփառունակ անկումը, հագաւ դատաւորի պատմուճանը եւ գռեհկօրէն հայհոյեց, զրպարտեց, բամբասեց նրանց, որոնց ձեւականօրէն յանձնւած էր Հայաստանի ծանօթ ամրութեան պաշտպանութիւնը: Եւ ամէն մէկը, որ տգիտութիւն եւ վատութիւն ունեցաւ իրենից դուրս փնտրելու աղէտի պատճառները՝ կրկնեց յիմարութիւններ միայն:

Հետեւա՞նքը: Փողոցում եւ հոգիների մէջ ամէն ինչ - տգիտութիւն, միամտութիւն, կեղծիք, իսկ ճշմարտութիւն՝ բնա՛ւ:

Հետեւէ՛ք, ընթերցո՛ղ, կատարւող «քննադատութիւններին» եւ փութաւճիռ դատաստաններին եւ պիտ մղւէք համոզւելու, թէ հայրերիդ շարքերում կան ամէն գնով ծիծաղելի դառնալու մարմաջով բռնւած մտաւորականներ:

Ինչի՞, սակայն, վերագրել այդ տխուր երեւոյթը. արդեօք, միայն տգիտութեա՞ն: Ճի՛շտ է, հասկանալի պատճառներով մեր ժողովրդի մի որոշ

մասը - որ անհայրենասիրութիւնն ունեցաւ հեռու մնալու ազգային պայքարից - ամենադոյզն չափով իսկ հասկացողութիւն չունի պատերազմ կոչւած բարդ երեւոյթի մասին: Բայց եւ այնպէս օրւայ դատապարտելի վարքագիծը չի կարելի բացատրել իր տգիտութեամբը միայն:

Այդ տարրերի մէջ տգիտութեան հետ զինակցած է վատութիւնը: Երեք գլխաւոր պատճառներ ունին սրանք - գիտակցօրէն խուսափելու ճշմարտութիւնից:

Սրանց կուսակցական շահը պահանջում է տեւականացնել Կարսի անկման առաջին օրերին ՀՀ կառավարութեան դէմ ստեղծւած հասկանալի դժգոհութիւնը: Այդ դժգոհութիւնը մի զէնք է, որից՝ ազգային իշխանութեան հակառակորդները չեն ուզում զրկւել:

Այստեղ, ինչպէս տեսնում էք, կայ մտքի անազնւութիւն:

- Ընդունել ճշմարտութիւնը հանրապետական բանակի անյաջողութեանց մասին, պարզել Կարսի անկման իսկական պատճառները - կը նշանակի պատասխանատւութեան բաժին ընդունել: Ճշմարտութիւնն ընդունողը առաքինութիւն պիտ ունենար զբաղւելու ինքնաուղղումով, վաղը իր աղիտաբեր սխալներն ու պակասութիւնները չկրկնելու համար: Իսկ ինքնաուղղումը պահանջում է մտքի եւ հոգու ճիգեր, մի բան, որ այնքան էլ հաճելի չէ հոգեպէս ծոյլերի եւ նիւթականացածների համար:

Այստեղ էլ տեսնում ենք բարոյականի պակասը:

- Ճշմարտութիւնից երես դարձնելու երրորդ պատճառը - դա իրենց դասալքութիւնն արդարացնելու յանցաւոր միտումն է: Հեռատես պիտ համարւէին, եթէ կարողանային լռել: Չկարողացան եւ մատնեցին իրենց: Իմաստութիւնը չէր, որ նրանց հեռու էր պահել ազատագրական պայքարից, այլ՝ փոքրոգութիւնը:

Հին ծանօթ դասալիքներն են դրանք, որ միշտ էլ փորձել են փիլիսոփայել ու արդարացնել իրենց փախուստը ազգային պարտականութիւններից:

* * *

- Հառաչող ազգերը, ստրուկ, անիրաւուած, իրենց տառապանքին վերջ տալու յոյսով մի՛շտ էլ դիմած են յեղափոխութեան, որպէս ծայրայեղ եւ հերոսական միջոցի, մասնաւորապէս Արեւելքում: Այդ նոյն միջոցին պիտ դիմէր եւ հայ ժողովուրդը:

Փա՜ռք իր խոյանքին, իր զոհերին եւ մայիսեան պատմական շարժուձեւին:

- Համաշխարհային պատերազմի բերումով հայ տարրի տեղահանութիւնը օսմանեան սպայակոյտի համար ռազմագիտական անհրաժեշտութիւն լինելուց զատ, աշխարհի հզօրներից ծեծւած ու թքւած թուրք ցեղի

գրգռած բարբարոսութեան յագուրդ տալու հոգեբանական մի միջոց էր, որին անվարան կերպով դիմեց թուրք կառավարութիւնը:

- Կարսի ամօթը Հ.Հանրապետական կառավարութեանը չէ միայն, այլ ողջ հայ ժողովրդին: Չափւում են, բաղխւում բանակները, բայց յաղթում կամ պարտւում են ազգերը, ցեղերը: Կարսի պատերի տակ պարտւողը հայ զինւորն ու զօրավարը չէին միայն, այլ բովանդակ հայութիւնը, հայ ժողովրդի՝ իր ամբողջութեան մէջ անմարտունակ, անարի, անմշակ հոգին:

Ահա՛ ճշմարտութիւնը, հա՛յ երիտասարդ - սպանիչը կեղծիքի, ճշմարտութիւնը, որով զինւած, դու աննահանջ կռւի պիտ դուրս գաս տգիտութեան ու վատութեան դէմ: Դու պիտ սպանես կեղծիք հրէշը, որ սպառնում է մեր ազգի նիւթական եւ բարոյական գոյութեան: Վաղուց է, ինչ այդ եռագլխանի հրէշը, յենւած մեր հասարակական կեանքի գռեհկութեան, չաստւածաբար պաշտւում է եւ իշխում մեր ժողովրդի որոշ տարրերի հոգու եւ մտքի վրայ: Նա մեհեաններ ունի ցցւած ամէն տեղ, ուր կը սողայ տկար, անարի, անանձ հայը: Նա անսուրբ բագիններ ունի, որոնք դո՛ւ, Աւարայրի հերոս Երէցի սրբազան կատաղութեամբ պիտ խորտակես: Վե՛րջ կեղծիքի թագաւորութեանը մեր կեանքում, որ բազմիցս փորել է հիմերը մեր ազգային գերիշխանութեան եւ կործանել զայն: Թագաւորող կեղծիքի երեսից, հալածական է ճշմարտութիւնը մեր իրականութիւնից: Չկա՛յ, ճշմարտութիւն չկա՛յ մեր կեանքում եւ դրա համար էլ այնքան անլոյս ու անյոյս է մեր կեանքը, դրա համար էլ այնքան տգեղ են մեր բարքերը, այնքան խոպան մեր հոգիները: Չկա՛յ ճշմարտութիւն, դրա համար էլ ներքին համերաշխութիւնը շարունակում է մնալ որպէս սնամէջ խօսք, դրա համար էլ մտքի, զգացումի, ոգու աղքատութիւնն այնքա՜ն աղաղակող է մեր ազգային կեանքում: Չկա՛յ ճշմարտութիւն, եւ դրա համար էլ մեր ժողովուրդի մի մասը Մետերլինգեան կոյրերի նման մոլորւած է «տգիտութեան անտառում»:

Կայ փիլիսոփայող եսականութիւն, ատելութիւն, նախանձ, փոքրոգութիւն, քաղաքական շաղակրատանք: Կայ այն ամէնը, որ դժոխքն իսկապէս դժոխք է դարձնում: Կայ այդ ամէնը, որովհետեւ ճշմարտութիւն չկայ: Կայ կեղծիքը եւ - յուրախութիւն թուրքերի - շարունակւում է ներքին իրարակերութիւնը: Կայ կեղծիքը - եւ հայութիւնը կը շարունակի գրավաստակ լինել - մի մասը շինարարելով, միւսը՝ քանդելով:

Կեղծիքի մէջ կը շնչեն, կ'ապրեն շատերը - եւ ահա՛, հայութիւնն իր ամբողջութեան մէջ շարունակում է մնալ հոգեպէս տկար, ասել է եւ անկարող ու անարժան անկախ հայրենիք ունենալու: Ճշմարտութեան թագաւորութիւնը մեր կեանքում, իրական եւ անսասան պիտ դարձնի մեր ժողովրդի յաղթանակը իր արտաքին թշնամիների հանդէպ:

- Ճշմարտութիւնը - ա՜հ, երիտասարդ հայութիւն - դա աստուածային այն լոյսն ու ջերմութիւնն է, որով կը սնի ու կը հզօրանայ հոգին՝ անհատի եւ ժողովրդի:

Կեղծիքը կը ստրկացնի, ճշմարտութիւնը՝ կը փրկի:

Վերջինն ոյժ է, առաջինը՝ տկարութիւն:

Վախկոտն ու ստորը - ահա՛ կեղծիքի աշակերտները:

Ճշմարտութիւնը կը դաստիարակէ արին ու ազնիւը:

Պարտութիւն, ստրկութիւն, տառապանք - ահա՛ կեղծիքին հարկատու ժողովուրդների ճակատագիրը:

Ճշմարտութիւնն, ընդհակառակը, կը հզօրացնէ ու կը փրկի, դարձնելով ազգերին յաղթական:

Առաջինը տխուր ախտանիշն է հոգիների խանգարման:

Երկրորդը, կրկնենք իմաստունի հետ՝ ամենամեծ Աստուածութիւնն է, որ բնութիւնը յայտնաբերել է մարդկութեան համար եւ օժտել զայն ամենամեծ ոյժով:

Ճշմարտութեան մէջ ապրող անհատի եւ հաւաքականութեան հիմքը դրուած է լինում ժայռի, կեղծիքի մէջ խարխափողինը՝ աւազի վրայ:

* * *

Չե՞ս զգում, երիտասարդ ընթերցող, թէ ինչպէ՛ս մահաշունչ կեղծիքից խորշակահար է լինում այն ամէնը, ինչ որ գեղեցիկ, վսեմ, հերոսական է մեր կեանքում: Չե՞ս տեսնում, թէ ինչպէ՛ս մանրացել ու գռեհկացել են մեր ժողովրդի որո՛շ տարրերը: Թէ որքան մեծ է ստորութեան ոյժը մեր կեանքում: Չե՞ս զգում, արդեօք, թէ խեղդւում ես շրջապատիդ մահաշունչ կեղծիքի մէջ: Կեղծիք՝ մահ ասել է, դանդաղ մահացում, իսկ մեզ պէտք է ապրել որպէս ժողովուրդ:

Տե՛ս, հայրերդ իրար աւելի են ատում, քան արտաքին թշնամուն: Եւ արդէն շատերի մէջ սկսել է խօսիլ ներումը դէպ թրքութիւնը: Նշան՝ ազգային նւաստութեան:

Տե՛ս, թէ ի՞նչպէս ծաղրելի կերպով ինքնաբաւ են շատերը, քչով բաւականացող, փառասիրութեամբ ծոյլ եւ սակաւապէտ:

Որքա՛ն անխռով են, մտահոգութեան ստւեր իսկ չի նկատւում սրանց մէջ՝ իրենց ժողովրդի ապագայի մասին: Կարծէք Թովմաս Մուրի իդէալական կղզում ապրելիս լինէր հայութիւնը եւ ոչ թէ մեր տխուր Արեւելքում, շրջապատւած բարբարոս եւ քրիստոնեաւէր իսլամութեամբ:

Կեղծաւորնե՛րը ... Յովտ գրի մասին աւելի են աղմկում, քան հայ ժողովրդի վտանգւած ապագայի:

Երբեք ջրի եւ հովի հոսանքին հակառակ չնաւել. յաւէտ սպասել

յաջող հովի ու մակընթացութեան - այս է այն «զգաստ քաղաքականութիւնը», որով կ'առաջնորդուեն եւ կ'ուզեն առաջնորդել հայութիւնը:

Տե՛ս, թէ ինչպիսի՜ մոլեռանդութեամբ նրանք ազգային գործիչների մեծագործութիւնները սառոյցի, իսկ սխալները մարմարիոնի վրայ են քանդակում: Իսկ նրանց կեցւա՞ծքը, ծառայական՝ օտարի, ամբարտաւան՝ հայ մարդու հանդէպ: Իսկ իրենց հոգեւոր ծուլութիւնն ու չքաւորութիւնը սքօղելու զաւեշտական ճիգե՞րը: Իսկ սրանց նիւթակրօն վարդապետութի՞ւնը, որ մարդկային կեանքը համարելով մի օրւայ ճամփորդութիւն՝ յորդորում է - կե՛ր, խմի՛ր, խնդա՛, աշխարհի եւ ազգիդ ցաւերը թողնելով ուրիշներին: Հետեւա՞նքը: - Մի յոռենշան վիճակ, մտաբարոյական ընդհանուր քաոս, որի մէջ վաղուց է սկսւել եղծումն ու խաթարումը մեր ազգային հաւաքական հոգու: Իսկ գիտենք, որ «մի ժողովրդի ոյժը աւելի նւազ չափով է գտնւում իր բանակների՝ քան իր զգացումների ընդհանրութեան, քան ազգային հոգու մէջ: Ազգային հոգին Հռոմէացիներին դարձրեց աշխարհի տէրը. կորցնելով այդ հոգին՝ կորաւ Հռոմը»:

Հետեւա՞նքը. - մի դրութիւն, որ սպառնում է մեզ մահւամբ:

* * *

Ի՞նչ, հայ երիտասարդութիւն, մեռելի ականջի՞ն է հնչում իմ խօսքը: Ո՛չ, ես հաւատում եմ քո ներքին վերանորոգիչ ոյժին, ինչպէս եւ քո ջահիլ թեւերի թափին:

Ես զգում եմ, թէ ինչպէ՛ս, զայրոյթն ու ամօթը, միացած՝ սրբազան ինքնադժգոհութեան՝ այրում են քեզ: Ես տեսնում եմ, թէ ինչպէ՛ս սեղմւում է քո բռունցքը կեղծիք կոչւած հրէշի դէմ: Դու դողում ես կատաղութիւնից եւ արդէն նախաճաշակում քաղցրութիւնը պայքարի, որի մէջ պիտ սպանւի կեղծիք հսկան:

Ահա՛, դու զայրոյթով յետ ես մղում անզիղջ հայրերիդ հոգեւոր խնամակալութիւնը եւ նրան պարտադրում քոնը:

Սկսում է պայքարը որդիների եւ հայրերի միջեւ: Ճշմարտութեան եւ կեղծիքի միջեւ: Կռիւը Դաւիթի եւ Գողիաթի միջեւ!...

- «Ինձ թեթեւ գործ մի տաք, ես ուզում եմ բարձրացնել այն հսկայ լեռը եւ նետել ծովը»:

Ա՜հ, այդ՝ ձայնն է քո ազնիւ փառասիրութեան, հա՛յ երիտասարդութիւն, որի համար անկարելին հայկական բառ չէ:

- Պիտ պարտւի, պիտ մեռնի կեղծիքը մեր կեանքում, որ ապրի մեր ժողովուրդը:

- Ձա՛ն, այդ՝ քո ձայնն է, իդէալի ընդունակ երիտասարդութիւն, որ սիրում եմ լսել:

3.

ԿԵՂԾԻՔԸ ՁԻՆԱԹԱՓԱԾ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ժողովուրդներն աւելի ուժեղ են,
քան ժամանակաւոր դժբախտութիւնը,
կարիքը, բռնութիւնը:

Քո սկսած պայքարի մէջ, ուղղուած՝ հայրերիդ դէմ, կը զարնուի կեղծիքը: Ճշմարտութիւնը կը տօնէ իր յաղթանակը՝ վերագրաւելով իր գահը մեր հասարակական եւ անհատական կեանքում: Նրա արեւը կը լուսաւորէ մեր հոգեւոր կեանքը, փրկելով մեզ մտաւոր կուրութիւնից: Կը բացւին աչքերը, եւ նրանք, որոնք բաց աչքերով կ'ապրէին աշխարհում, բայց չէին տեսնի - իրերը եւ երեւոյթները տեսնել ու հասկանալ կը սկսին իրենց ճշմարիտ լոյսի մէջ: Շարժւիլ կը սկսին ճշմարտութեամբ օծուն գրիչներ: Ստեղծագործ ոգեւորութեան մի հեղեղ կ'անցնի հայ աշխարհի վրայով, աճեցնելով հոգիներն ու կամքերը: Հայ մարդը, ծանօթ՝ ինքնաճանաչութեան օրէնքներին, կը զարգացնի իր ներքին թաքուն ոյժերը, իր ներքին մարդը, որի բաղդատմամբ ինքն այժմ թզուկ է միայն: Կը հրապարակախօսեն վսեմ ու խանդավառ շրթունքներ, եւ երէկի, հակասութիւններով այնքան հարուստ մեր կեանքը կ'իմաստնանայ բարոյական ճշմարտութիւններով: Խօսելուց առաջ ամէն ոք ոսկէ կշռով նախ կը կշռի իր խօսքը:

Մայրերը զգաստութեան եւ ուղղութեան կը հրաւիրեն ազգայնօրէն տկարացածներին, դաստիարակելով իրենց զաւակները, նախ հայրենիքի՛ համար:

Դպրոցը կը դառնայ ազգային ոգու եւ ուխտի դպրոց:

Մամուլը՝ լոյս եւ ջերմութիւն սփռող:

Կինը՝ ընկերն ու օգնականը եւ ոչ աղախինը տղամարդի:

Ուսուցիչն ու աշակերտը կ'ունենան իրենց ընդհանուր ուսուցիչը - լուսաւոր ժողովրդասիրութիւնը, այսինքն, որ բաւարարէր անհատի իմացականութիւնը, ջերմացնէր սիրտը, զօրացնէր յոյսը: Վսեմ ժողովրդասիրութիւն, որից հայութիւնը կարողանար ստեղծել մի հրաշագործ ոյժ:

Հայը կ'ունենայ աւելի բարձր ըմբռնում կեանքի մասին:

Պարտականութեան գիտակցութիւնը կը հետեւի մարդկանց՝ որպէս խստապահանջ Աստուածութիւն:

Գոյութիւն կ'ունենայ մրցումի մի հատիկ ձեւ միայն - բարոյական մրցում: Մարդիկ կը պերճախօսեն գործով միայն, հայրենասիրական եւ առաքինի:

Քննադատութեան լաւագոյն ու արդար ձեւը կը համարուի քննադատելիից աւելի բարձր ու օգտակար լինելը:

Բարեկեցիկ տարրերը եւս, գիտակցած, թէ պէտք է նախ մարդ եւ Հայ լինել եւ ոչ թէ հարուստ՝ կը ձգտեն իրենց երջանկութիւնը ապահովել իրենց ժողովրդի երջանկութեան հոգը տանելով: Ազնիւ փառասիրութիւնից մղուած՝ Հայը կը ճգնի գերազանցել իր հարեւանին արիութեամբ, հայրենապաշտութեամբ ու անձնուիրութեամբ:

Կուսակցականի նշանաբանը կը դառնայ, - կուսակցութեանս հետ, բայց ազգիս համար:

Նուիրո՜ւմ, աւելի՜ նուիրում,- կը լինի մեռնողի վերջին խօսքը:

Երկիւղածօրէն կը պաշտուի աճիւնը հայրենապաշտ մեռելների, նուիրական աճիւն, որ Հայրենիք կը ստեղծի:

Եւ որպէս հետեւանք ստեղծուած այդ բարոյաշունչ մթնոլորտի, հայ մարտիկն իր կրծքի տակ կը կրի գիտակցական մահը, ասել է եւ յաղթանակը արտաքին թշնամու հանդէպ, ապահովելով գոյութիւնը զօրեղ, յարգուած եւ երջանիկ Հայրենիքի:

* * *

Թօթափած կեղծիքի լուծը, հայութիւնն այժմ իր ամբողջութեան մէջ խորապէս գիտակցած է մեր դարի եւ օրերի հրամայականը՝ հզօրացի՛ր կամ մեռի՛ր: Այժմ նա չի թաքցնում, թէ ինքը պարտուեց ու պատժուեց խստիւ, քանզի չկարողացաւ օգտուել իր ցեղի ոգու անսպառ ոյժերից: Պատմութեան դառնադառն դասերից խրատուած՝ նա գիտի այժմ, որ անիրաւուած ժողովուրդների արիւնն ու արցունքը պիտի չդադարի մինչեւ որ նրանք ինքնօգնութեամբ ոտքի չկանգնեն, մինչեւ չհզօրանան հոգւով:

Նա չի հաշտուել անիրաւուածի իր դրութեան հետ. հակառակը կը նշանակէր գիտակցօրէն ստորագրել իր մահուան դատավճիռը: Նա գիտի, որ ժողովուրդներն աւելի ուժեղ են, քան ժամանակաւոր կարիքը, դժբախտութիւնը, բռնութիւնը: Եւ, ահա՛, գերմարդկային ճիգեր է կատարում յաղթահարելու իր տառապանքը եւ օրէ ցօր լցւում է ներքին ուրախութեամբ եւ ոյժով:

Նա գիտի, որ դեռ ազգերն ապրում են իրենց կազմակերպուած եսականութեան շրջանը, որոնց «մարդասիրութեան» ապաւինելը միամտութիւն լինելուց զատ եւ վտանգաւոր է: Գիտակցած այդ ճշմարտութիւնը՝ հայութիւնը վճռած է այլեւս չմնալ որպէս նիւթական եւ բարոյական խաղալիք աշխարհի հզօրների ձեռքին, եւ, ահա՛ գործի է դրել իր ցեղային հանճարը, որի ոյժերը եւ կարողութիւնները յարմար առիթ կը սպասէին՝ զարթնելու եւ ծառայելու իրեն:

Նա խաղաղ է այժմ, բայց ուժեղ: Նա սիրում է խաղաղութիւնը, բայց պատրաստւում է կռւի, որովհետեւ գիտի որ ամէն ժամ, այս կամ այն պետութիւնը կարող է «բաց թողնել պատերազմի շները»: Նրա ճակտին այժմ, որպէս արդար դատի տէր եւ մարտնչող ժողովուրդի, կայ եւ կը փայլի կատարւած պարտականութիւնների կնիքը: Կատարելով իր պարտականութիւնները իր հաւաքական անձի նկատմամբ, նա աստիճանաբար ցրում է իր շրջապատի խաւարն ու հոգեկան անհանգստութիւնը: Նա այլեւս կեղծիքի մէջ ապրող դժբախտ ժողովուրդը չէ, որ իր ուժերի կէսից աւելին կը սպառէր վախի եւ անյուսութեան մէջ: Ձինաթափ արած կեղծիքը՝ նա գիտի այժմ թէ ի՞նչ է ուզում աշխարհից, եւ թէ դէպի ո՞ւր է ուղղւած իր հերոսական չուն:

Ճշմարտութիւնը բուժիչ ջրի նման սրբել, մաքրել է նրա աչքերը, պայծառացրել նրա հոգեւոր տեսողութիւնը:

Այժմ նա տէր է ճշմարտութիւնների, որ սփոփել, հզօրացնել եւ փրկել գիտեն:

Այժմ նա գտնւում է փրկութեան իսկական ճամբին:

* * *

Այլեւս ոչինչ կարող է խախտել իր ժողովրդի գրանիտէ հաւատը: Այժմ ոչինչ կարող է յուսալքել նրան, քանզի խորապէս գիտակցած է, թէ մի ժողովուրդի հայրենի հողը չի կարող ուրիշի մնայուն Հայրենիքը դառնալ: Նա գիտէ, որ Մնայուն Արդարութեան Օրէնքի ոյժով բռնագրաւուած երկրամասերը միշտ էլ, վաղ թէ ուշ, անցնում են իրենց պատմական տէրերի ձեռքը՝ պայմանաւ, որ այդ վերջինի մէջ ժամանակը տկարացրած չլինի սէրը, կարօտն ու պաշտամունքը դէպ Հայրենի Երկիրը:

* * *

Կա՛յ, հա՛յ երիտասարդութիւն, կա՛յ Մեծ Հայրենիքը, որ քոնը պիտ լինի վաղը:

Բայց ասա՛, օրւայ քո հոգեկան կառուցւածքով պիտ կարողանա՞ս նրան տէր դառնալ ու մնալ: Խոստովանի՛ր, արժանի՞ ես նրան:

- Այո՛, եթէ հոգեփոխւեցիր եւ հոգեփոխեցիր ժողովուրդդ:

4.

ՆԱԽ ՄԱՐԴ

Կեանքի խորհուրդը կայանում է հոգեւոր եւ ոչ թէ նիւթական շինարարութեան մէջ:

Չի կարելի միաժամանակ վատ մարդ, բայց եւ այնպէս լաւ Հայ լինել: Անկարելի է անհատի համար, առանց կեղծիքի, անձնական կեանքում նիւթակրօն, իսկ ազգային գործերում գաղափարապաշտ լինել: Նա, որ իրեն զգում է որպէս «ժամանակաւոր շունչ եւ կենդանութիւն առած մեքենայ»՝ չի կարող հասարակական ասպարէզում երեւան գալ որպէս կենդանի հոգեկանութիւն: Նա, որ որպէս մարդ, իդէալականացնում է նիւթն ու նրանից բղխող բաւականութիւնները, որ կեանքի նպատակը համարում է կրաւորական հաճոյքները - որպէս Հայ չի կարող լինել անձնուէր, արի, հայրենապաշտ: Միեւնոյն մարդու մէջ չեն ապրիր միաժամանակ ստրկամիտն ու ազատատենչը: Նա կա՛մ մէկն է, կա՛մ միւսը: Սեղմ ասած՝ չի կարելի որպէս մարդ, կեանքում դաւանել անձնական երջանկութեան վարդապետութիւնը, իսկ որպէս գործիչ, առանց կեղծիքի, ընդունել Տոսթոեւսքուն, թէ մարդկութիւնն ապրում է ոչ թէ երջանկութեան, այլ անսահման կատարելագործման համար: Այո՛, չի կարելի անկատար մարդ, բայց կատարեալ Հայ լինել: Միայն մարդ կոչւելու արժանին կարող է արժանաբար Հայ կոչւել: Դա այբուբենական մի ճշմարտութիւն է, որ երկար իմաստասիրութիւն չի վերցնում:

* * *

Նախ մա՛րդ: Դա նշանակում է զգալ իր հոգու մէջ ներկայութիւնը որեւէ բարձր բարոյական իդէալի: Դա նշանակում է իր էութեան մէջ զգալ անվերջ բոցավառումն այդ իդէալի սրբազան կրակի:

Իդէա՞լ եւ աննւաղ ձգտում դէպ այդ վերջինը, - ահա՛ թէ ի՛նչն է մեզ իրաւունք տալիս մարդ կոչւելու:

Կենդանի արե՞ւ, որ այրւում է ներքուստ եւ լուսաւորում ու ջերմացնում իր հոգեւոր շրջապատը:

Այդ դէպքում միայն մարդս դադարում է մնալ այն տխուր արարածը, որի ճակտին ծանօթ բարոյագէտի զայրոյթը «կենդանի դիակ» անունն է դրոշմել:

* * *

Նազովրեցին կ'ուսուցանէր, թէ մարդուս մէջ ապրող հոգին աւելի արժի, քան ողջ աշխարհը:

Նոյնը - գեղեցկագոյն բանն այս աշխարհում նկարագիրն է, վսեմ ու ազնւական:

Իդէալ, իդէալապաշտութիւն - դա միակ միջոցն է, որի շնորհիւ տգեղ ու տկար հոգիներն ու նկարագրերը կը գեղեցկանան, կը բարձրանան, կը փարթամանան:

Անիմաստ ու դատապարտելի է մարդկային կեանքը, եթէ դա ծառայութիւնը չէ իդէալի, կատարումը բարոյական պարտականութեանց:

«Երկու բան է լցնում իմ հոգին միշտ նոր հիացումով ու յարգանքով - աստղալից երկինքը՝ գլխիս վերեւ, բարոյական օրէնքը՝ սրտիս մէջ»,- ասել է մեծ իմաստասէրը:

Նոյնը - «վարւիր այնպէս, որ կարողանաս ասել ամէն մէկին՝ վարւիր ի՛նձ պէս»:

Եղի՛ր իդէալիստ, երիտասա՛րդ ընթերցող, քանզի նիւթապաշտը դառնում է մարդ - մեքենայ, կոկորդ ու ստամոքս միայն. իսկ նմանը ե՛ւ ապրում է, ե՛ւ չի ապրում. իսկ նմանը աւելի անասուն է, քան մարդ: Եղի՛ր իդէալի ընդունակ, եւ բաւական մի՛ համարիր իմացականութեամբ զարգացումը, որ առանց սրտի կրթութեան, աշխարհի չարիքները մեղմացնելու փոխարէն աճեցնում է յաճախ: Եղի՛ր ընդունակ՝ ինքնանորոգումի ճամբով սատար հանդիսանալ հասարակութեան բարոյական վերանորոգումին, խորապէս գիտակցելով, թէ միակ մարդը, որին կարող ես բարձրացնել - դա ի՛նքդ ես: Սկսի՛ր քեզնից: Եւ իմաստունի հարցին, թէ «ի՞նչ կ'ուզէիր լինել կեանքում,- յանուն ճշմարտութեան թոյնի բաժակը դատարկելու դատապարտուած Սոկրատէ՞սը, թէ՞ ճշմարտութիւնից դուրս ապրող խոզաբարոյ մի էակ», դու պատասխանիր - առաջի՛նը:

* * *

Ճշմարիտ է այն կարծիքը, թէ մարդկութիւնը դառնացնող տառապանքների մեծագոյն մասը հետեւանք է իրերի եւ երեւոյթների սխալ գնահատումի:

Չե՞ս յիշում, ընթերցո՛ղ, այն ծանօթ պատկերը, որ երջանկութիւնը կը խորհրդանշէ: Կախարդական զօրութեամբ օժտուած կանացի մի թեւաւոր էակ, մի բան ձեռքում, փախչում է՝ իրեն հետ վազեցնելով մարդկային ցեղը:

Փախչում է մտացածին ըղձանոյշը եւ հազարներն ու հազարները

խելայեղօրէն վազում են իր յետեւից: Հեւում են, հառաչում եւ աղմկում - ի՜նձ է՛լ, ի՜նձ էլ... իսկ թեւաւոր էակը ժպտում է ու փախչում, թողնելով իր ետեւը դժբախտների, յուսախաբների, ձախողւածների անթիւ ու անհամար բանակը:

Եւ ահա՛, երեւակայական ըղձանոյշի ժպիտներին ու շնորհին չարժանացածների մի մասը, իր «դժբախտութեան» վերջ տալու համար դիմեց գնդակին, թոկին, դաշոյնին, թոյնին՝ անձնասպանութեան: Մի մասը իրեն յանձնեց արբեցողութեան եւ նման այլասերիչ մոլութիւնների: Մի այլ մասը գազազած, դառաւ թունաւորիչը եւ անէծքը հասարակական կեանքի:

Տղամարդը, որ կարող էր իր մեծագործութիւններով անմահանալ, յաւերժացաւ իր չարագործութիւններով:

Կինը, որ կարող էր առաքինութեան օրինակ ծառայել աշխարհին, դառաւ փողոցի սեփականութիւնը:

Հետեւա՞նքը: - Լիքն են բանտերը, յիմարանոցները, հիւանդանոցները:

Ինչո՞ւ, ինչո՞ւ այդպէս: Ինչո՞ւ կը տառապի մարդկային ցեղը: - Որովհետեւ միամիտ մարդը, իրենից, իր հոգուց դուրս փնտռեց եւ կը փնտռի երջանկութիւնը: Որովհետեւ նիւթականացած մարդը չճանաչեց ճշմարիտ երջանկութիւնը եւ իր կեանքը վերածեց դժոխքի:

* * *

Մշտատեւ անհանգստութիւն - ահա՛ այն սպանիչ տրամադրութիւնը, որ տիրում է արդի հասարակութեան եւ անհատի հոգում:

Մի բան պակասում է բոլորին, բոլորի՜ն:

Անորոշ ձանձրոյթ, ջղայնութիւն, ինքնապատճառ թախիծ,- ահա՛ անհատի հանապազօրեայ կեանքը:

Հարուստն իրեն աղքատ է զգում իր հարստութեան մէջ, նիւթապէս երջանիկը՝ բարոյապէս դժբախտ:

Կա՛յ, կա՛յ մի բան, որ թունաւորում է մեր կարճատեւ ուրախութեան վայրկեանները, սպանում՝ ժպիտը մեր շրթունքների վրայ, խլում՝ մեր քունը, մեր հոգեկան անդորրութիւնը եւ սարսափեցնում՝ անարեւ ծերութեան ու մահւան ուրւականներով:

Կա՛յ մի խորհրդաւոր ձեռք, որ աներեւութաբար թոյն եւ արտօսր է կաթեցնում մեր շրթունքներին մօտեցող գինու եւ հաճոյքի բաժակի մէջ:

Կա՛յ մի պատուհասող ոյժ, մի ձեռք, որ դատում է մեզ, պատժում ամէն օր, ժամ, վայրկեան:

Ի՞նչ է նշանակում սա: Ո՞վ է, ի՞նչ է այդ խորհրդաւոր ոյժը:

- Դա մեր խիղճն է, ընթերցո՛ղ, մեր գիտակցութիւնը, թէ բարի չենք, առաքինի չենք, հայրենասէր չենք. թէ՝ կատարեալ Հայ եւ մարդ չենք:

* * *

Արտաքին երջանկութիւնը, զոր խելագարօրէն կը փնտռեն այն բոլորը, որոնց կեանքի նպատակը հաճոյքներն են եւ ոչ բարոյական պարտականութիւնների կատարումը - խաբուսիկ եւ խոզաբարոյ երջանկութիւն է, որ պէտք չէ լինի առարկան քո ձգտումների: Դու պիտ չճանաչես երջանիկ լինելու մի այլ միջոց, քան ցեղիդ եւ նմաններիդ համար աշխատելն ու տառապելը:

Քո երջանկութիւնը - ծնունդ իմաստութեան - պիտ լինի յանուն ցեղային իդէալի զոհաբերուողների գերագոյն երջանկութիւնը, քանզի մարդս տէրն է միայն իր զոհաբերածի, եւ դա՛ է միայն նրա արժէքը, եւ ոչ թէ այն կարողութիւնները, որոնցից իրենից զատ ոչ ոք է օգտւում:

Քեզնից դուրս չկայ եւ պիտի չփնտռես երջանկութիւն:

Փնտռածդ երջանկատու ըղձանոյշը ապրում է մի խորհրդաւոր դղեակում, որ քո սիրտն է, բաժանելով հարեւանութիւնը մաքուր խիղճ կոչւած աստուածութեան:

Քո երջանկութիւնը պիտ լինի՝ ծառայել ժողովրդիդ երջանկութեան: Իսկ դա նշանակում է, թէ քո սերունդը զգւանքով երես պիտ դարձնի իր օրւայ կեանքից, որ նա պիտ թողնի փողոցն իր բազմապիսի հրապոյրներով: Նա պիտ յետ մղի այն բոլոր նիւթակրօն եւ անասնացուցիչ վարդապետութիւնները, որոնք տկարացնում են մեզ, որպէս Հայ եւ մարդ:

Իսկ դա նշանակում է, որ դու պիտ չնմանւես այն սերունդներին, որոնք կորչել են առանց ազգային օգտակարութեան, ինչպէս խոռոչներում ընկած արեւի ճառագայթը: Որոնք գոյութիւն են ունեցել, բայց չեն ապրել: Որոնք չեն թողել մի բան, որ ապրէր իրենցից յետոյ:

Դու բարոյապէս ազատ չես դառնալու սերունդը անասնօրէն երջանիկ դատարկապորտների, որովհետեւ եւ ոչ մի ժամանակ քո ժողովրդի գոյութիւնն այնքան լուրջ կերպով վտանգւած չի եղել, որքան այսօր: Ինչպէս եւ երբեք քո ժողովուրդը այնքան հրամայողաբար չի զգացել կարիքը մի ուխտւած եւ հերոսական սերունդի:

Եղել են սերունդներ, որոնք իրենց կեանքը վատնել են խաբէական «կրկներեւոյթներ»ի կամ «թիթեռնիկներ»ի յետեւից վազելով: Դու, սակայն, պիտ լինես անձնական երջանկութիւնը չճանաչող սերունդ: Ահա թէ ինչո՛ւ եմ ասում քեզ,- վերցրո՛ւ խաչդ եւ հետեւի՛ր ինձ: Այո՛, քո սերունդը պիտ լինի խաչակիր: Նա պիտ քաւի մեղքերն իր հայրերի՝ հանդիսանալով նրանց վերադաստիարակիչը: Իսկ այդպիսին դառնալու համար, պէտք է որ քո ամէն մի օրը լինի «ճերմակ քարով նշանակելի օր». պէտք է

որ քո կեանքը լինի բարոյական լրջութիւն, գրաւչութիւն եւ առողջութիւն: Իսկ այդպիսին լինելու համար՝ ապրի՛ր չմեռնելու, մեռի՛ր ապրելու համար: Կեանքդ նուիրի՛ր բաների, որ չեն մեռնում:

Եղել են սերունդներ, որոնք աւելի ժամանակ են վատնել իրենց արտաքինը յարդարելու, քան իրենց մտքի եւ սրտի մշակոյթի համար: Դու պիտ ապրես ժողովրդիդ համար, այլապէս պիտ երկարի նրա հոգեվարքը եւ շատ պիտ ուշանայ նրա քաղաքական յարութիւնը:

* * *

Հոգեպէս ծոյլերն են ստեղծել **դժուարին** ու **անկարելի** խօսքերը: Քոյր ու եղբայր են **չկամենալն** ու **չկարողանալը**: Հազարամղոն ճամփորդութիւնն սկսւում է մի հատիկ քայլով: Չկա՛յ անկարելին, երբ կայ զօրեղ ու վճռական կամքը: Գիտցի՛ր, եղել են կամքի հսկաներ, որոնք առաջարկել են Ալեքսանդր Մակեդոնացուն՝ իր արձանը կերտել Աթոս լեռը տաշելով:

«Թագաւորը նա՛ է, ով կարող է»:

Ես ուզում եմ, որ դու լինես թագաւոր սերունդ:

Քանի դեռ գետափին ես - տկար ես: Անցա՞ր - կեսար ես:

Անցի՛ր, հա՛յ երիտասարդութիւն, անցի՛ր Ռուբիկոնը, որի հանդիպակաց ափին քեզ յաղթութեան դափնին է սպասում:

«Յաղթութեան ու պարտութեան միջեւ ամբողջ պետութիւններ կան»,- ասել է Բոնապարտը:

Քո վաղուայ յաղթանակի եւ պարտութեան միջեւ հայ ժողովրդի լինել-չլինելու հարցը կայ, հա՛յ երիտասարդութիւն:

Ահա՛ թէ ինչու քեզ պէտք է յաղթականի լուսապսակ ստեղծել քո ժողովրդի անւան ու ճակտի շուրջը:

Իսկ դրա համար քեզ պէտք է լինել՝ աւելի քան Հայ եւ մարդ:

5.

ԻՆՔՆԱՃԱՆԱՉՈՒԹԻՒՆ

Սահման չի տրուած ինքնաճանաչ անհատի հոգեկան ոյժերին:

Կ'ուզէի, որ դո՛ւ, հա՛յ երիտասարդ, որ դու իւրացնէիր ինքնաճանաչութիւնը՝ որպէս ոյժի, յաղթանակի եւ բարձր երջանկութեան ամենակարճ եւ ամենաստոյգ ճամբան:

Ծանի՛ր զքեզ:

Գիտցի՛ր - ասում է դելփեան այդ պատգամը, գիտցի՛ր, որ մարդս գաճաճ է իր ներքին հսկայի բաղդատմամբ:

Ծանի՛ր զքեզ:

Կ'ուզէի, որ իմաստասիրական այդ հրամայականը քանդակւած լինէր մեր դպրոցական շէնքերի ճակտին, ապա եւ մեր աշակերտութեան ուղեղի մեջ:

Այն ողորմելիօրէն տկար էակը չէ մարդը, որպիսին ճգնում է զայն ներկայացնել նիւթապաշտական կարճատես գիտութիւնը: Նա գրեթէ ամենակարող է, երբ գիտակցում է, թէ իր մէջ թաքուն ոյժերի մի ամբողջ ծով կայ, որից ազատօրէն օգտւում է ինքնաճանաչ անհատը:

Դու աւելի ուժեղ ես, քան կարող ես երեւակայել եւ զգալ քեզ:

Դու օժտւած ես անսպառ հոգեկան ոյժով, որոնց մեծագոյն մասը անինքնաճանաչութեան պատճառով շարունակում է մնալ քնած վիճակի մէջ եւ անօգտագործելի:

Քեզ տրւած ներքին ոյժերի բերումով դու գրեթէ ամենակարող ես, հրաշագործ, եթէ վստահելով քո ներքին մարդուն, նրա ոյժերից օգտւես միայն բարձր նպատակների համար:

* * *

«Ձեր մէջ ապրում է մի աստւածութիւն, որի միակ փափաքն է ծառայել ձեզ, որ սրտառուչ համբերութեամբ սպասում է, որ կանչէք իրեն»: Հոգեբանական բացարձակ ճշմարտութեամբ կը շնչեն այդ ոսկէ խօսքերը:

Սահման չի տրւած ինքնաճանաչ անհատի հոգեկան ոյժերին: Գիտենալ եւ կամենալ - նշանակում է կարողանալ:

Ինքնաճանաչ լինել - ասել է՝ կարող լինել ցանկացած վայրկեանի գործի դնել այն բոլոր ոյժերը, որոնց տէրն ես - իմաստութիւն, սէր, աշխատունակութիւն եւ այլն:

Ինքնաճանաչութեամբ կարելի է դառնալ մագնիսական մի ամպ, որ չի խորտակւում եւ ո՛չ մի ոյժից:

Անյուսօրէն տգէտները միայն չգիտեն այսօր, որ չօգտագործւող ոյժերի մի հսկայական պահեստ է մարդս, որից դժբախտաբար կարողանում են օգտւել քիչերը միայն:

Մեր ոյժերի մեծագոյն մասը շարունակում է մնալ թմրած վիճակի մէջ, երբ նրանց մասին գաղափար չունենք:

Բայց երբ ձգտել սկսեցինք որեւէ բարձր նպատակի եւ նոր ոյժերի կարիքն զգացինք - մեր մէջ անմիջապէս զգում ենք ներկայութիւնը մեր թաքուն ոյժերի:

Ո՞վ չի զգացել երբեմն իր մէջ կորովի յանկարծական ծովացում: Ո՞վ չի ունեցել երբեմն հանճարեղ ներշնչումներ, յայտնութիւն, պարզատեսութիւն:

Ո՞ւմ յաճախ չի թւացել, որ ինքը որոշ արտասովոր վայրկեաններում ընդունակ է զարգացնելու իր մէջ շատ աւելի մեծ ոյժ, քան այն, որ զգում է իր մէջ սովորական վիճակում:

* * *

Մարդս այն է, ինչ որ կամ ինչպէս որ մտածում է իր մասին: Անինքնաճանաչը, որ իրեն կենդանի մեքենայ է համարում, եւ ոչ աւելին - դատապարտուած է ապրելու եւ գործելու իր տկար «ես»ի աղքատիկ միջոցներով: Նմանի համար չեն աշխարհ զարմացնող մեծագործութիւնները: Նմանը, անինքնաճանաչ եւ անընդունակ վերանորոգումի, կուրօրէն մասնակցում է իր ամենօրեայ թաղման: Աստիճանական անձնասպանութիւն է նմանի կեանքը:

Իսկ նա, որ գերագոյն երջանկութեան հասնելու համար ձգտում է տիպար կատարելութեան, նա, որ գիտի, թէ բոլոր մարդիկ կատարելութեան կարելիութիւններ են - նա կ'ասի ձեզ՝ ընդունեցի՞ր մի բանի անհրաժեշտութիւնը, նշանակում է որ այդ բանը ոչ միայն կարելի է, այլ եւ կիսով չափ արդէն կատարուած:

Ուրեմն, եղի՛ր ինքնաճանաչ, երիտասա՛րդ բարեկամ, հաւատա՛ թաքուն ոյժերիդ, օգնութեան կանչի՛ր քո ներքին մարդուն, որ աւելի Աստուած է, քան տկար արարած, որպէսզի աշխարհը չկարողանայ սահման դնել քո հոգու աւիւնի թափին, թռիչքին:

* * *

Եղի՛ր անկախ՝ հոգեպէս:

Եւ ո՛չ մի տուրք այնպիսիների ազդեցութեան, որոնք աւելի բարի չեն, արի չեն, անձնուէր չեն քեզնից:

Հեռո՜ւ բանուկ ուղիներից:

Նրանցից՝ որոնք անընդունակ են խանդավառութեան: Աշխարհն առաջ հրող լծակն է խանդավառութիւնը: Եւ նրանցից՝ որոնք յաճախ են գործածում **դժուար** եւ **անկարելի** բառերը:

Աշխարհը եւ երեւոյթները մի՛ դիտեր ուրիշի աչքերով: Յիմարութիւն է թուքակօրէն կրկնել ուրիշի խօսքերը: Աւելի մեծ յիմարութիւն՝ կուրօրէն բաժանել այլոց կարծիքը:

Մի՛ լինիր ուրիշի ստուերը, արձագանքը, եթէ այդ ուրիշը անգա՛մ աշխարհածանօթ համբաւ լինի:

Ստեղծագործո՛ղ եւ ո՛չ ընդօրինակող:

Անձնասպանութիւն է նմանուելը:

Ունեցիր քո՛նը - խօսք, խօսելու եղանակ: Եւ երբեք քեզ կատարեալ մի՛ համարիր, որ չդանդաղի վերելքդ: Կատարելութեան չես ձգտում, եթէ մտահոգեպէս նոյնն ես այսօր, ինչ որ էիր երէկ:

Սիրի՛ր վեհը, գեղեցիկը եւ հերոսականը նոյնիսկ թշնամիներիդ մէջ: Մի՛ նախանձիր, քանզի աշխարհը ոչինչ ունի, որ չունենար քո հոգին: Թուլութիւն է չարութիւնը: Մեզանում քիչերն են ուժեղ: Դրա համար էլ չար են շատերը, չար, պարսաւասէր, աններող: Մի՛ գարշիր հասարակութիւնից, բայց յաճախ գերադասիր իմաստուն մենութիւնը: Ասւած է՝ «արծիւը թռչում է մենակ, ագռաւները՝ խմբով»: Գոռոզութիւնը ոյժ չէ, այլ՝ տկարութիւն: Մարդկանց մի՛ նայիր վերեւից - դա հեղինակութիւն չէ՛: Տկարն է ձգտում հաճոյանալ ամբոխի, արժանանալ **փողոցի** ուշադրութեան: Ասպետ եղիր նա՛խ անձիդ նկատմամբ: Դժւարանո՞ւմ ես յարգել քեզ - բարոյապէս կորած ես արդէն: Զո՞ւրկ ես ինքնայարգանքի եւ ինքնատիրապետումի զօրեղ զգացումներից - աշխարհն էլ ոչինչ ունի քեզ ուժեղ դարձնելու: Հեռո՛ւ ունայնամտութիւնից, գռեհկութիւնից եւ ունակութիւնից *(հնց.՝* սովորականություն, շաբլոն - *խմբ.)՝* երրեակ թշնամին բարձր նկարագրի: Մեռելութիւն է ունակութիւնը: Դու խոկմամբ եւ փորձով հարազատի՛ր ճշմարտութիւնները:

Հեռո՛ւ եւ հոգով ծոյլերից, որոնք ճշմարտութիւնները, սկզբունքները եւ սրբութիւնները սրբապղծօրէն կ'իջեցնեն մինչեւ իրենց տափակ հասկացողութեանց աստիճանը: Դու բարձրացի՛ր, ձգտի՛ր հասնելու նրանց բարձրութեան, այլապէս զուրկ պիտ մնաս հոգեկան մշակոյթից:

* * *

Ինքնաճանաչութեամբ մարդ դառնում է ներքնապէս խաղաղ, ինքնավստահ եւ աներկիւղ:

Նրա կեանքի նաւը, որ առաջ խաղալիք էր գոյութեան ալիքների ձեռքին, ստանում է հաստատ եւ անշեղ ընթացք:

Ծանի՛ր զքեզ, հա՛յ երիտասարդ:

Քո մէջ մի գանձարկղ կայ, անբաւ ու անհաշիւ հարստութեամբ, բայց դու չես օգտւում նրանից, որովհետեւ քեզ պակասում է այդ արկղի ոսկէ բանալին - ինքնաճանաչութիւնը:

Ծանի՛ր զքեզ ... Նոյնացիր քո ներքին մարդու հետ, եւ դու պիտ զգաս քո մէջ ծովացումը հոգեկան նորանոր ոյժերի. դու պիտ դառնաս աւելի քան զօրեղ եւ ապա պիտ կարողանաս կապել բախտի անիւը եւ քաշ տալ ցանկացածդ ուղղութեամբ:

* * *

Եղի՛ր պարզակեաց:

Բազում կարիքների տէր անհատներն ու ժողովուրդները կլանուած են լինում ներկայով եւ մոռանում իրենց անցեալն ու ապագան: Ունայնամտանում եւ տկարանում են նմանները:

Դո՛ւ, հա՛յ երիտասարդութիւն, ուխտիդ բերումով, դու պիտ լինես ուժեղ՝ ամենակարողութեան աստիճան:

Իսկ ուժեղ եւ կարող դառնալու իմաստուն միջոցներից մէկն էլ պարզակեացութիւնն է:

Եղի՛ր պարզ, պարզակեաց, որպէս Սպարտացի, քանզի որքան նւազ կարիքներ ունենաս, այնքան աւելի օգտակար կը լինես ժողովրդիդ:

Կարիքներ կան, որոնց բաւարարումը ստրկացնում է մեզ, դարձնելով մեզ գերի՝ մեր կրքերի եւ ցանկութեանց: Իսկ չկայ աւելի աղիտալի բան, քան կրքերի եւ անիմաստ կարիքների լուծը: Կան աւելորդ կարիքներ, զորս ապրեցնում, սնուցում ենք որպէս մակաբոյծներ, որոնց բաւարարումը սպանում է մարդու հոգեւոր ազատութիւնն ու կարողութիւնները: Հազար յիմարութիւններ փնտռողը միշտ էլ կ'ունենայ հազարումէկ կարիք: Իսկ նմանը չի կարող չզգալ իրեն դժբախտ ու տկար:

Նա, որի ամէնօրեայ մտահոգութեան առարկան իր հագուստի եւ կաշւի մեռեալ գեղեցկութիւնն է եւ ոչ թէ սրտի եւ մտքի մշակումը - նա կը մնայ աղքատ հոգով, ասել է՝ եւ տկար: Նա, որ սովոր է ականջ տալ ունայնամիտ հասարակութեան եւ ոչ իր ներքին բարոյական օրէնքի ձայնին, - դժբախտ է երիցս եւ տկար:

Նա, որ իր ժամանակն ու միջոցները վատնում է գեղեցկացնելու իր էութեան շրջանակը եւ ոչ պատկերը, արտաքին երեւոյթը եւ ոչ բովանդակութիւնը, նա, որ շարունակելով մնալ յիմարական արձագանքը սնոտիասէր ամբոխի, դժւարանում է իր հանապազօրեայ հացին չաւելացնել եւ «կրկէս»ը - նման բարոյապէս թեթեւամիտը դառնում է մեռեալ թիւ եւ ոչ ստեղծագործ անհատ իր ժողովրդի համար:

* * *

Վայելչասէրների շրջանը - ահա՛ անբարոյականը ու անբարոյացուցիչը, թշնամին մաքրութեան ու պարզակեացութեան: Հեռո՛ւ այդ շրջանից, որ նեխութիւն կը հոտի: Գիտես, Դիոգենէսն իրեն աւելի երջանիկ կը զգար՝ քան իրեն այցի եկած աշխարհակալը:

Զգո՛յշ հրապուրիչ երեւոյթներից: Դալարների տակ յաճախ մահաթոյն օձ է թաքնւած լինում: Թող քո հաճոյքները լինեն մաքուր, ողջապահիկ,

բարոյական: Կրքերն ու կարիքները ծառաներ պիտ լինեն եւ ոչ թէ տէր ու բռնակալ: Եղի՛ր Սպարտացի, եւ բնաւորութեամբ անձնադիւր ու մեղկ երիտասարդներին համարիր անգոյ, նետուած՝ էվրոտ գետը, ուր Սպարտան կը թափէր իր հեղգ եւ երկչոտ զաւակները:

«Երբ երիտասարդները, սանձարձակ կեանքից յոգնած՝ քնքշօրէն կը քնանան փափուկ բարձերի վրայ՝ հաւատո՞ւմ էք, որ եթէ երթանք արթնացնելու որ ելնեն ու քշեն թշնամուն, հաւատո՞ւմ էք, թէ նրանք վեր կը թռչեն տեղերից եւ իրենց մէջ կը զգան ոյժն ու կորովը այն դասական Աթենացիների, որոնք սովոր էին պառկել իրենց զէնքերի կողքին, մերկ գետնի վրայ, եւ գիտէին արհամարհել զգայական հաճոյքները»:

Եթէ վաղը, վերստին, արտաքին վտանգը պայթեց հայ ժողովրդի գլխին - դու վստա՞հ ես, որ հազարաւորները քո շարքերից իրենց վահանն ու դրօշակը չեն խոնարհի թշնամու ոտների առջեւ:

Ես ազատ եմ խոստովանելու, թէ հայ երիտասարդութիւնը եթէ չհոգեփոխուեց, մեր Եռագոյնի առջեւ ծունկի չի բերի թրքութեանը:

Պարզակեացութեամբ եւ մշտատեւ ջանասիրութեամբ էին հզօր եւ անպարտ Հին Հելլադան, Սպարտան եւ Հռոմը: Ձիւնոր թէ զօրավար, խաղաղութեան օրերին կը մշակէին դաշտերը եւ առաջին ահակոչը լսելու պէս, կը թողնէին արօրը ու կը կապէին սուրը: Ցինցինատին գտան դաշտում, արօրելիս, երբ կը փնտռէին իրեն որպէս զօրագլուխ հռոմէական լեգէոնների: Բայց, երբ մի օր Յոյնի եւ Հռոմէացու մէջ տկարացաւ պարզակեացութեան ոգին, երբ այդ առնական եւ խրոխտ ժողովուրդները մեղկացան ճոխութեան եւ քնքշանքի մէջ՝ ընկան, կորան բարբարոսների կրունկի տակ:

Ահա թէ ինչո՛ւ քո սերունդը, հա՛յ երիտասարդ, պիտ լինի պարզակեաց, ազատ՝ կարիքների ու կրքերի լծից - ուժե՛ղ լինելու համար:

6.

ՊԱՏՃԱՌ ԵՒ ՀԵՏԵՒԱՆՔ

Ամրացի՛ր վսեմ մտածումների մէջ:

Մի՛ լինիր ստւերը, արծագանքը, նմանութիւնը ուրիշների, որ հարկադրուած չլինես ծիծաղելիօրէն կրելու այլոց գաղափարներն ու տեսակէտները, ինչպէս կրում ես ուրիշի ձեռքով պատրաստուած զգեստներդ: Ամենաէականը՝ որպէսզի արթնանան հոգուդ հեքեաթական ոյժերը եւ ծառայեն քեզ:

Այդ մասին խօսել եմ քեզ: Աւելացնեմ, թէ բաւական չէ դեռ սեփական խոկում ու խորհրդածութիւններ ունենալը: Պէտք է, որ այդ վերջինները լինեն մաքուր, վեհ, արդար: Քանզի մեր նկարագիրն այլ բան չէ, եթէ ոչ գումարը մեր մտածումների: Մեր արարքները ծնունդ են առնում եւ կազմակերպւում նախ մեր ուղեղի եւ հոգու մէջ: Անհատի եւ ազգի ճակատագիրը բնորոշւում եւ դարբնւում է այն մտածումներով, զորս այդ վերջինները երկարօրէն սնուցել են իրեն մէջ:

Տկարութիւն թէ հզօրութիւն, պարտութիւն թէ յաղթանակ, տառապանք թէ երջանկութիւն, - այդ բոլորի հեղինակը ի՛նքը, անհա՛տն է, ժողովո՛ւրդը, եւ ոչ սրանց թշնամիները, եւ ոչ դիպւածը:

Պատճառ ու հետեւանք - միեւնոյն փոխյարաբերութիւնն ունին ինչպէս նիւթական, այնպէս էլ մտա-բարոյական աշխարհում: Ահա թէ ինչո՛ւ մեր պայքարը պարագաների եւ հետեւանքների դէմ պիտի չլինի ուղղւած, որ դուրս են մեզնից, այլ՝ պատճառների դէմ, որ մեր մէջ են:

Մտածումներից ծնունդ է առնում ցանկութիւնը, սրանից՝ ձգտումը. իսկ այդ վերջինը ունենում է իր այս կամ այն առարկան, որով եւ անհատը մատնում է իր մտածումների բնոյթը:

Պարբերաբար ընդունւած ներքին ներշնչումներից մենք մշակում ենք մեզ համար յատկութիւններ, պայմաններ, եւ որպէս արդիւնք այդ բոլորի - մեր ճակատագիրը:

* * *

Հսկի՛ր մտածումներիդ մաքրութեան ու վսեմութեան վրայ: Յաճախ «քաղհանք»ի ենթարկիր մտքերդ, զտի՛ր:

Ամէն մտածում, հենց որ տեղ գրաւեց գլխիդ մէջ, պիտ ձգտի արտայայտւել: Չար, ստոր, եսական մտածումները քեզ պիտ մղեն համապատասխան քայլեր առնելու: Արդար, անձնւէր, ասպետական մտածումներն, ընդհակառակը, քեզ պիտ դարձնեն հեղինակը ազնիւ գործերի:

Սովորի՛ր ղեկավարել ուղեղդ: Դժւար չէ դա, քանզի մարդս իշխանութիւն ունի իր մտածումների վրայ:

«Մենք,- ասել է իմաստասէրը,- մենք չենք կարող արգիլել թռչուններին անցնելու մեր գլխի վրայով, բայց իշխանութիւնն ունենք թոյլ չտալու նրանց, որ իրենց բոյնը շինեն մեր գլխի վրայ»:

Այս ձեւով վարւիր մտածումներիդ հետ: Թոյլ մի տար, որ վատերը իրենց բոյնը հիւսեն ուղեղիդ մէջ:

Ամրացի՛ր վսեմ մտածումների մէջ - եւ դու կը տիրես ներքին խաղաղութեան: Իսկ գիտե՞ս, որ որքան հոգեպէս անդորր է մարդս, այնքան ուժեղ եւ ազդեցիկ է նա:

Քո կեանքի արտաքին պայմանները - ինչպէս եւ քո ժողովրդի - հարա-

զատ ծնունդն են քո հոգեկան վիճակի, իսկ այդ վերջինը՝ քո մտածումների:

Արդարեւ, մեզնից ամէն մէկը, մի հոգեբանի պատկերաւոր արտայայտութեամբ, «հաւաքում է քաղցր ու դառն պտուղները իր մտքի տնտեսութեան»:

Տանջանքն ու տխրութիւնը միշտ էլ հետեւանք են վատառողջ մտքերի, որոնք ցոյց են տալիս, թէ անհատը հաշտ ու համերաշխ չէ իր խղճի հետ:

Հեռո՛ւ, ուրեմն, այն ստոր մտածումներից, որոնք բիւրեղանում են որպէս դատապարտելի սովորութիւններ եւ տանջող պայմաններ մեզ համար:

Հեռո՛ւ նւաստ ու երկչոտ խոհերից, որոնք սնուցում են մեր վարանոտ ու անվճռական յատկութիւնները, դարձնելով մեզ հոգեւոր ստրուկ, միշտ ենթակայ նւաստացումի եւ զրկանքների:

Միշտ վեհ, ազնիւ, արիական մտածումներ, որոնք բիւրեղանում են որպէս ուրախութիւն, ներքին հանգիստ, քաղցրութիւն, դարձնելով մեր հոգին թարմ, պայծառ ու կորովի:

Երկաթը մաշւում է իր ծնած ժանգից: Մարդս տառապում է իր անկատարելութիւնից, որ արդիւնք է իր անմաքուր, իր «ժանգոտ» մտածումների:

Մտածումը, նայած իր բնոյթին, ե՛ւ սպանիչ է, ե՛ւ յարուցիչ, փրկիչ:

Հրաշագործ է մտքի ոյժը: Դո՛ւ, երիտասարդ զրուցընկեր, դո՛ւ, որ հրամայողաբար պիտ լինես ուժեղ, դու եւս ապաւինիր վսեմ մտածումի փրկարար ոյժին:

Եւ որովհետեւ ուխտիդ բերումով քեզ վիճակւած է եւ ղեկավարի պատասխանատու դեր, սովորի՛ր իմաստնօրէն ղեկավարել նա՛խ սեփական մտածումներդ ու ցանկութիւններդ:

7.

ԱՆԲԱՐՈՅԱՒԷՏ ԽՕՍՔԸ

Մարդս իր խօսքի մէջ դրսեւորում է իր հոգու բովանդակութիւնը:

Ոչինչ այնքան հեշտութեամբ չի մատնում մեր ապրումները, մտածումները, մեր նկարագիրը, որքան խօսքը:

Դա միաժամանակ մեր բարոյական շունչն է:

Մէկին մտերմօրէն ճանաչելու համար, հարկաւոր է լսել նրա խօսքը, անշուշտ երբ որ չի կեղծում:

Մի ընտանիք, մի հասարակութիւն, մի ժողովուրդ ճանաչելու համար պէտք է լսել նրա մէջ հնչող խօսքը:

Երբ որ դա գործածւում է որպէս քօղ մտածումների համար, եթէ դա աւելի արտաքին բարեկրթութեան է ծառայում քան բարոյականութեան, երբ որ դա լսւում է որպէս ծաղր սրբութեանց եւ սկզբունքների դէմ, երբ դա դառնում է ծառայական, օգտախնդիր ու թունաւորիչ, եւ այդ ամէնի պատճառով՝ տարտամ, դա նշան է բարոյական անկման ու ապականութեան:

Երբ մի ժողովրդի մէջ - ինչպէս մեզանում - որոշ տարրեր ազատօրէն ժխտում են ե՛ւ սրբութիւն, ե՛ւ սկզբունք, ե՛ւ Հայրենիք, առանց հասարակութեան ցասումը բորբոքելու իրենց դէմ, երբ մի ժողովրդի մէջ խօսքը աւելի գրգռում է, պառակտում, բաժանում, երբ դա կորցնում է լոյսն ու ջերմութիւնը - դա նշան է, թէ այդ ժողովուրդը նւաստացած է, ընկած՝ իր խօսքի հետ:

Այսպիսին է, չնչին բացառութեամբ, գաղութահայ խօսքն այսօր:

Հետեւա՞նքը: - Հաւասար չափով՝ կեղծիքի ահաւորութիւն եւ ճշմարտութեան թշւառութիւն մեր կեանքում:

Չարութեան թոյն, կատաղութեան լորձունք եւ քացախ - ահա՛ թէ ի՞նչ են գործածում որոշ գրիչներ ու գրչակներ:

Էլ ոչինչ է մնացել մեր գռեհկացած իրականութեան մէջ, որ հայհոյւած չլինէր:

Պոռոտ, տգէտ ու չար ճառատողներ!

Կարծէք, պետք է հայհոյել համոզելու կամ տարհամոզելու համար, զրպարտել, անւանարկել:

Կարծէք, անհրաժեշտ է դաստիարակելու համար խօսքը լինի բարձր եւ հայհոյալից, որ կարողանան ընթերցողին խաբել, թէ իրենք արդար են, ուժեղ, հեղինակաւոր:

Այնպէս են խօսում եւ գրում մեր գաղութներում, որ կարծէք իրենք են տէրը աշխարհի ողջ իմաստութեան եւ միակ տէրը Հայաստանի, զոր շատշատերը գուցէ եւ չեն էլ ճանաչում, նոյնիսկ քարտէսի վրայ:

- «Ես էլ աքացի տւի նրան, առիւծին: Թող աւանակի սմբակի ոյժն էլ զգայ !?...»:

Այս է շատերի խօսքի իմաստը ու շեշտը՝ իրենց հակառակորդների մասին: Կատաղի՜ գրչամարտ: Գրում են, անձանձիր գրում, մրոտում անվերջ իրենց հակառակորդների մասին, առանց կարդացւելու նրանց կողմից, բայց եւ այնպէս ոչ ոք է յուսահատւում:

Թոլսթոյի երրորդ որդին սկսել էր մամուլի մէջ քննադատել թոլսթոյականութիւնը: Հայրը՝ դժգոհ որդու արարքից, գանգատւում է իր մի բարեկամին.

- Կատարւեց, ինչ որ պիտ կատարւէր: Լսեցի որդուս գրածների մասին

եւ չկարողացայ չկիտել յօնքերս: Սակայն, մի բան ուրախացնում է ինձ: Վէճը վարելու համար որդիս ստիպւած պիտ լինի կարդալու իմ որոշ աշխատութիւնները եւ խորհրդածելու նրանց մասին: Այդ ինձ յուսադրում է, թէ մի օր նա էլ կը հասկանայ ինձ...

Հայ գրիչ շարժողներն ունի՞ն այդ յոյսը, թէ իրենց հակառակորդները մի օր կը հասկանան իրենց: Ի հարկէ՝ ոչ: Հասկանալու համար պէտք է կարդալ հակառակորդի գրածները, մի բան, որ մեզանում չի արւում, իսկ չի արւում, որովհետեւ ծաղրով, հայհոյանքներով խնկւած յօդւածները գուցէ եւ հաճոյքով գրւում են, բայց ոչ կարդացւում:

Ընկած է հայ տպագրական խօսքը, որից ամէն մէկն օգտւում է իր ցանկութեանց համաձայն:

Օրւայ հայ խօսքը - երբեմն՝ մերկ սուսեր, երբեմն՝ բութ տապար, եւ միշտ էլ՝ անբարոյաւէտ:

Բանակռւողներին ցաւագինօրէն պակասում է տարրական բարեկրթութիւն, պարկեշտութիւն, արդարախոհութիւն:

Ընդդիմախօսողի մէջ ոչ ոք է ազնւութիւն ու շիտակութիւն տեսնում:

Անխնայ են, որպիսին չէին եւ վաղը չեն լինելու թուրքի հանդէպ:

* * *

«Պտոյտի ժամանակ հանդիպակաց բլուրի վրայ նշմարեցի մի հրէշային պատկեր: Երբ մի քիչ մօտեցայ, նկատեցի, որ դա մարդ է: Հասնելով նրան՝ տեսայ, որ դա իմ եղբայրներից մէկն է»...

Որքա՜ն հարուստ հոգեբանութիւն եւ գեղեցկութիւն, եւրոպացի քարոզչի այդ անպաճոյճ օրինակի մէջ:

Դադարում է մարդկանց միջեւ գոյութիւն ունեցող սառնութիւնը, երբ նրանք յաճախ են հանդիպում իրար: Տարակարծութիւնները տեղի են տալիս հասկացողութեան: Մեր կասկածը, հակակրանքը, թշնամանքը շարունակում են աճել, երբ դեռ հեռու են իրենց առարկայից: Ընդհակառակը, մեր այդ զգացումները ամէն անգամ աստիճանական շոգիացումներ են կրում, երբ մօտենում են իրենց առարկային:

«Իմ կարծածը չէ այդ պարոնը»,- յաճախ ասում ենք այն մարդկանց մասին, որոնցից անհիմաստնաբար խուսափել էինք, որոնց թիւրիմացաբար չար էինք համարել: Իսկ մեզանում - Աստա՜ծ իմ - մեր իրականութիւնն աւելի զարհուրելի է, քան երկու ցեղերի միջեւ բորբոքւած պատերազմը: Պատերազմող կողմերի համար գոյութիւն ունին զինադադարը, հաշտութիւնը, իսկ մեր կեանքում՝ անվերջ իրարակերութիւն:

Մենք չենք սիրում զինադադարը ներքին ճակատների վրայ, որովհետեւ սովոր ենք ծունկի գալ արտաքին թշնամու առաջ:

Մենք չենք ներում իրար, որովհետեւ ստրուկին յատուկ հոգեբանութեամբ ներում ենք արտաքին թշնամիներին:

«Ամէն օր տեսնում ենք, թէ ինչպէս մարդիկ, յանուն իրենց կուսակցութեան, կատարում են այն, որ չէին կատարի իրենց համար, եթէ դրանով վտանգելու լինէին իրենց կեանքն իսկ»:

Ատելութիւնն ու ոխը, բոլորին, գրեթէ բոլորին դարձրել են կրքից կուրացած եւ աչառու: Քչերն են այլեւս խտիր դնում միջոցների մէջ, եւ ոչ ոք է ուզում հասկանալ, թէ կրքոտ վէճերի ժամանակ ի սպառ մոռացւում է ճշմարտութիւնը, որ հայկական վէճը ընդհանրապէս թշնամացնում է եւ ոչ թէ համոզում:

Հետեւա՞նքը: Կատարեալ բաբելոնեան աշտարակաշինութիւն, երբ այլեւս մարդիկ իրար չեն հասկանում:

Հետեւա՞նքը: Բարոյական մի մեծ դժբախտութիւն: Հասկանա՛նք, սակայն, որ դրանք դեռ դժբախտութեան ծաղիկներն են, պտուղները կը վայելենք վաղը, մօտիկ ապագայում, երբ մեր երկրի գլխին կը պայթի թրքական վտանգը, երբ կարիք կը զգանք միակամ, կուռ եւ միահիդէալ ժողովրդի:

* * *

Խօսքը միաժամանակ մեր բարոյական պատկերն է. հասկանա՛նք այդ: Ծնունդը մտքի՝ նա իր հերթին ազդում է մեր մտածումների վրայ:

Օրինակ՝ չի կարելի ծաղրել սրբութիւնը եւ շարունակել երկիւղած լինել նրա նկատմամբ:

Չի կարելի քամահրել մէկին եւ շարունակել յարգալից լինել դէպ նրա անձը:

Մեր արտաբերած ամէն մի խօսք, ուրիշներից աւելի մեզ է ազդում:

Չի կարելի զազրախօս լինել եւ բարձր ու կիրթ նկարագիր ունենալ: Ինչպէս եւ չի կարելի անբարոյական, բայց եւ սրբախօս լինել: Գռեհկաբանելով, մարդս խրախուսում է եւ սնուցանում իր ստոր մտածումները՝ ուժեղացնելով նրանց: Խուսափի՛ր վայրաբանութիւնից: Ազնւացրո՛ւ լեզուդ, խօսքդ, իսկ այդ անելու համար, նախ ազնւացրո՛ւ մտաւոր կեանքդ:

Թոյլ մի՛ տար, որ «անկոչ հիւրերը» տեղ գրաւեն ուղեղիդ մէջ: Մտածումների խստաբարոյութիւն, - ահա՛ թէ ի՛նչ պիտ լինի քո մտաւոր կեանքը: Եղա՞ր այդպիսին - դու կը լինես վսեմախոհ, ուժեղ եւ գրաւիչ:

Եղի՛ր ճշմարտութեան քարոզիչը, առաւել՝ ճշմարտութեան ուսուցիչը մեր կեանքում:

Երկու դէպքում էլ՝ եղի՛ր առաքեալ եւ ոչ անաղ ու անհամ դպիր: Երկու դէպքում էլ՝ վսեմաբան: Քարոզիչը բազմութիւններ է փնտռում եւ նրանց ուղղում իր խօսքը: Ուսուցիչը՝ քիչերին:

Առաջինին՝ զանգւածն է պէտք, երկրորդին՝ աշակերտողներ, հետեւորդներ: Աւելի՝ ուսուցի՛չ: Կեղծիքը զինաթափելուց յետոյ, եղի՛ր կարեկցող եւ ոչ դատաւոր. կարեկցող ուսուցիչ եւ ոչ անսիրտ մերկացնող: Այդպիսի՛ն եղիր, որովհետեւ գրեթէ անանձնական սխալանքների եւ հաւաքական թերութիւնների արդիւնք է մեր ժողովրդի ապրած անլուր աղէտը: Աւելի բարւոք վիճակ չեն ունենում չկատարւած պարտականութեանց կնիքը իրենց ճակտին կրող ժողովուրդները: Քո ժողովուրդի մի մասը միայն որպէս Հայ եւ մարդ կատարեց իր պարտականութիւնը եւ այսօր հաւասարապէս կը տառապի՝ միւս մասի տկարութեան եւ անպարտաճանաչութեան երեսից:

Մօտեցի՛ր բոլորին, բոլորի՛ն ուղղիր խօսքդ սիրոյ եւ համերաշխութեան: Եւ եթէ քեզ հարցրին, թէ ի՞նչ պէտք է անել, որ այսուհետեւ մեր ժողովուրդը հեռու մնայ նորանոր աղէտներից - պատասխանիր անմահ Դեմոսթենէսի խօսքերով՝ «ոչի՜նչ այն ամէնից, ինչ որ անում էք»:

Երեւա՛ բոլորին, կանչի՛ր, յորդորի՛ր բոլորին, որպէս անհանգիստ հոգին վիրաւոր Հայրենիքիդ:

Եւ թող գիտնան բոլորը, որ քեզ զբաղեցնողը ցեղիդ գոյութիւնն է, որ վտանգւած է:

Ասա՛ ամէն մէկին, մէ՛կ էլ, հազար անգամ կրկնիր բոլորին, մինչեւ որ հասկանան ու հարազատեն Ռընանի խօսքերի վսեմ իմաստը. «Հոգեւոր եղբայրներ են մի ժողովրդի անդամները: Եւ որպէսզի համերաշխութիւն տիրի եղբայրների միջեւ, անհրաժեշտ է, որ ամէն մէկը որոշ բաներ մոռացութեան տայ եւ մտահոգւի միայն ամենաէականով»:

Դարձի՛ր - ժամանակի պահանջն է դա - դարձի՛ր կենդանի արձագանքը ճակատագրի մարգարէի, որ վաղուց է քարոզում. «Ժողովուրդնե՜ր, պատրաստւեցէ՛ք արեան օրւայ համար: Պատրաստւեցէ՛ք երկոտասան ժամւայ համար: Ձիթենու իւղի փոխարէն պատրաստեցէ՛ք արիւն եւ արցունք...»:

Պատրա՞ստ ես դու, հա՛յ ժողովուրդ:

* * *

Ես արդէն լսում եմ քո ձայնը, Հա՛յ երիտասարդ, քո խօսքը, որ ազդում է որպէս ջահել գինի:

Ոգեւորութեան հեղեղ են առաջացնում քո հայրենապաշտ շրթունքները:

Անցնում ես, որպէս կենդանի մագնիս, որ անդիմադրելիօրէն դէպ իրեն է ձգում իր անցած ճամբաների ցանցնւած երկաթի փշրանքները - հոգիները:

Դու դառնում ես այն հրաբերան պերճախօսը, որ, դասական ժողովուրդների պատկերացմամբ, իր շրթունքներից դուրս եկած ոսկէ շղթաներով իր յետեւից քաշ կը տար ունկնդիր բազմութիւնները:

Դու այդպիսին պիտ լինես, քանզի միտքն ու սիրտը թեւ ու թռիչք են առնում, երբ վեհ է իրենց առարկան, քանզի չի կարելի ողջ էութեամբ նուիրուած լինել մի վսեմ առաքելութեան - եւ չդառնալ ոսկեբերան:

8.

ԱՐԻԱԴԱՒԱՆ ԺՈՂՈՎՈՒՐԴ

Արիութի՛ւն, մեզ պէտք է արիութիւն, այնպիսին, որը չափաւորելու կարիքն զգայինք:

Արիութիւնն է ոստայնանկում ազգերի անկախութեան ու հզօրութեան դրօշը: Անարիութիւնը՝ պատանքն ազգերի:

Այն օրից, ընթերցո՛ղ, երբ Հայը վախենալ սկսեց մահից, այն օրից օտարը թագաւորեց Հայաստանում:

Ես տեսայ մեր վարած ճակատամարտներում, տեսայ ամենաընտիրը Հայու - մեռնելու մտքի հետ հաշտուած, ամէն գնով յաղթելու անտեղիտալի վճռականութեամբ դէպ թշնամին խոյացող հայ զինուորը: Ճանաչեցի եւ ամենավատը Հայու - վախկոտութեան յանցանքի մէջ բռնուած անարին:

Առաջինը կը մեռնէր ապրեցնելու համար իր ազգն ու նրա զէնքի հմայքը. երկրորդը կ'ապրէր ամէն գնով՝ ապրեցնելու համար թշնամու փառքը:

Առաջինը ինձ համար աւելի բարձր էակ է, քան մարդ:

Երկրորդը՝ աւելի անասուն, քան Հայ եւ մարդ:

Եւ քանի կայ այդ վերջինը - թրքութիւնը իր գոյութեան ապահովութիւնը պիտ փնտռի մեր ժողովրդի չգոյութեան մէջ:

* * *

Հանգիստ սրտով պիտ մեռնիմ, երիտասա՛րդ Հայ, եթէ քո սերնդի օրով **հայօրէն** բառը, մեր ժողովրդի բարեկամների եւ թշնամիների կողմից գործածւի **քաջօրէն** բառի իմաստով: Քանզի գիտեմ, թէ քանի դեռ իր ամբողջութեան մէջ քաջ եւ քաջանուն չէ հայութիւնը, նրա համար անցած չէ դեռ աշխարհի քարտէսից ազգովին անհետանալու վտանգը:

Ժողովուրդ, պետութիւն, անհատ - սրանց իրաւունք է տրւում ապրելու եւ ապրում են, երբ պատրաստ են ամէն վայրկեան ապացուցելու, թէ

գիտեն մահւամբ պաշտպանել իրենց գոյութեան իրաւունքը: Այլապէս, սրանք որպէս աւելորդ տեղ գրաւող իրեր, հարկադրւում են ազատելու իրենց տեղն արեւի տակ:

* * *

- Մի՞թէ,- Արաքսի ափին, պահախարոյկի շուրջը կը խօսակցէին հայ զօրավարները,- մի՞թէ անցեալ գիշեր չլսւեցաւ գետնի տակէն խուլ որոտում մը, նման զինուց շառաչման:

Վայրագ տիտանն էր, որ կը զարթնէր ու կը կանգնէր ի վեր:

- Անտեղի է ասածդ: Իրեն մօտ կը հանգչի յաղթականն Հայկ ու զինքը սպաննողը: Եթէ զարթնու Նեբրովթ՝ Հայկ չի ննջեր... (*Յուլիոս Պարիլի*):

Քանի դեռ ամենահամեստ Հայն իսկ - տղամարդ թէ կին - չի կարող այդ խրոխտ անձնապաստանութեամբ անգիտանալ թրքական վտանգը, քանի դեռ «Քաջ, ահաւոր եւ անողոքելին Հայկ, իբրեւ կայծականց Աստուած» չի արթնացել հայ մարդու մէջ - բախտին, այո՜, անարժանաբար, միայն բախտին կը պարտինք մեր գոյութիւնը եւ ոչ մեր բազկին:

* * *

Պատժւած անարիութիւն - ահա երկու բառ, որոնցմով պիտ բնորոշել մեր արդի քաղաքական տխուր կացութիւնը:

Վաղւայ մեր վիճակը կարելի պիտ լինի բնորոշել **վարձատրւած արիութիւն** բառերով, եթէ մինչեւ այդ վաղը, հայութիւնը հոգեփոխւելով դառաւ արի եւ արիապաշտ:

Արիութիւն! Գրեթէ ոչինչ արժեն մարդկային բոլոր դրական յատկութիւնները, եթէ պակասում է արիութիւնը: Չկան ներգործօն առաքինութիւններ առանց արիութեան:

Ճշմարիտ է իմաստուն խօսքը, թէ «մեռեալ են անոնց գործերը, որոնք վախ ունին մահից»:

Անհատ թէ ժողովուրդ - սրանք չեն կարող ինքնիշխան տէր դառնալ իրենց կեանքին, ճակատագրին, մինչեւ որ չյաղթահարեն իրենց անասնական վախը եւ նրա պատճառները:

«Ես շատ թոյլ էի»,- մի հրեայ ասում է միւսին: Այդ խօսքերը, ըստ Հայնէի, կարող են յանձնարարւել որպէս moto, հրէութեան մասին գրւելիք պատմութեան:

Արդեո՛ք, այս երեք բառերի մէջ պէտք չէ՞ փնտռել եւ հայութեան դարաւոր տառապանքի իսկական պատճառը:

* * *

Անարին - դա խրտուիլակն է, որով կարելի է միայն ճնճղուկներից պաշտպանուել, բայց ոչ եւ անգղերից:

Անարի լինել եւ անկախ հայրենիք երազել - ծիծաղելի չէ՞ դա:

Անմտութիւն չէ՞ ե՛ւ ոչխար լինել, ե՛ւ գանգատուել գայլերից:

Դառար ոչխար՝ պատրաստ են գայլերը:

Արիութեանն է աշխարհն ու անկախութիւնը, քանզի «արիներն են անցնում Աստուծոյ ճանապարհով»:

Անկախ Հայրենիքը - որպէս Աւետեաց Երկիր - տրւում է մեզ, անապատներում մեր վարած բաղխումներում արիանալուց յետոյ: Իսկ արի է նա, որ իր մէջ սպանել է իր կաշւի համար դողացող անասունը եւ գիտի զինաթափել վտանգն ու մահը, ծիծաղելով նրանց երեսին: Իսկ արի է նա, ով զինակցել է Ամենակարող Ոգու հետ:

Արին նա է, որ գիտի լրիւ կերպով արտայայտել իր մէջ ծփացող անծանօթ ծովը ոյժերի:

Արի է ինքնաճանաչը, նա՛, որ ծիծաղում է թւի, նիւթի, զէնքի գերազանցութեան, ինչպէս եւ գիտութիւնների վրայ, եւ ճանաչում է մի հատիկ հոգեբանական արւեստ միայն - մեռնել, երբ պահանջում է պահը, ինչպէս արեւն է մեռնում:

Արիութիւն, որ իր մէջ կրում է իր վարձատրութիւնը - ներքին ուրախութիւնը՝ թէ պիտի յաղթի, եւ արտաքին յաջողութիւնը՝ յաղթանակը:

Հայրենասիրութիւնը միշտ էլ յաղթել է, երբ իր զինակիցը արիութիւնն է եղել:

* * *

- Հռոմէացիք, պաշարւած հին գաղիացիներից, քաշւում են բերդատաճարը Հռոմի եւ զգւանքով յետ մղում թշնամու առաջարկը - զէնքը վայր դնել եւ յանձնւել:

Իսկ ծերակուտականները, որոնք չէին կարող զէնքի դիմել, բայց չէին կարող եւ որեւէ կերպով չմասնակցել հայրենի երդիկների համար մղւող ճակատամարտին - հագնում են իրենց ամենաշքեղ զգեստները, դուրս գալիս մեծ հրապարակ, ուր դրւած կը մնային իրենց փղոսկրեայ աթոռները, հանդիսաւորապէս կատարում իրենց վերջին աղօթքը եւ վերջ տալիս իրենց կեանքին... Առաքինական այդ օրինակով նրանք հաստատում են թշնամու դէմ ծառացած իրենց որդիներին, թէ որքան քա՜ղցր էր մեռնել Հայրենիքի համար: Եւ յաղթում է Հռոմէական Արծիւը:

* * *

Լոզենգրադում է: Խռպոտ շեփորները, ռազմադաշտային թմբուկները եւ սուր սուլիչները գրոհի հրամանն են տալիս:

Հուռռա՜, յառա՜ջ... Բուլղար գումարտակները շարժւում են առաջ: Գլխապետ Զաբրանսկին հրաման է ստացել սկսելու գրոհը:

Հրացանածիգների մի վաշտի գլուխն անցած՝ նա խթանում է իր ձին, որ վայրկենաբար փռւում է գետնին, գլուխը ցրուած՝ հրանօթով: Սպան ոտքի է թռչում, վերցնում սուրը, քաշում ատրճանակը եւ նետւում առաջ՝ իր զինւորներին հասնելու համար... եւ գնդացիրային մի համազարկից, փռւում գետին՝ ծեծւած ծնօտով:

Նա նորից ոտքի վրայ է արնաթաթախ, բայց դժւարանում է խօսել եւ հրամայել բերանացի, եւ ահա՛, որպէս զօրավար Marguerite-ը Floing-ի մօտ, նա նշանացի, մի յաղթական շարժուածեւով ցոյց է տալիս ամրութիւնը, որ պիտ գրաւել:

Եւ նա նետւում է առաջ, թաշկինակով սեղմած իր զարհուրելի վէրքը: Սուսերամերկ, անմատչելի ու վեհափառ՝ նա հասնում է... Նա առաջինը պիտ լինի, բայց ո՛չ... Մի գնդակ փշրում է նրա ծունկը եւ վերստին փռում գետնին: Սակայն ահա, յենւած մի զինւորի, նա նորէն գրոհում է: Ընկնում է եւ այս անգամ, երբ յաղթական աղաղակները, վերջապէս, ազդարարում են յաղթանակը բուլղար առիւծի...

Մի պատգարակի վրայ, կազմւած թրքական սւիններից, զինւորները իրենց հրամանատարին տեղափոխում են հիւանդանոց, կիսամեռ, բայց յաղթական:

* * *

Ռուս-ճապոնական պատերազմի սկզբի օրերն են: Պէտք է փակել Պորտ Արթուրի մուտքը: Հարկաւոր են հարիւրի չափ կամաւորներ: Ներկայանում են երկու հազար հոգի: Կամաւորները՝ փոքրիկ խմբակներով նստած շոգենաւերը, թշնամու նավային եւ ծովափեայ մարտկոցների փոթորկային կրակի տակ պիտ հասնին նաւահանգիստ, մուտքի առջեւ պիտի խորտակեն իրենց նաւերը եւ, եթէ կարողացան, պիտ փորձեն վերադառնալ փոքրիկ նաւակներով: Նաւապետ Եաշիրան՝ «Ասամա» զրահաւորի հրամանատարը, ճամբայ դնելով այդ խիզախներին, որպէս հրաժեշտի նշան, տալիս է նրանց խմելու արծաթէ գաւաթից եւ ասում. «Եթէ ունենայի հարիւր որդի, պիտ ուղարկէի բոլորին էլ այդ վտանգաւոր ձեռնարկի համար. եթէ ունենայի մէկը, պիտ ուղարկէի եւ նրան:

«Ձեզ ուղարկում եմ դէպ ստոյգ մահ եւ գիտեմ, որ պատրաստ էք մեռնելու: Այժմ վստահէք երկնքին ձեր կեանքը եւ դէպ գո՛րծ...»:

Ի՞նչ կայ աւելի վեհափառ, քան ճապոնացի զինուորի այդ արիամարհանքը դէպ կեանքը եւ մահը!

Արիները, «Գայ է Նիպոն բանզայ»* աղաղակներով, խորտակում են նաւերը, խորտակում են նաեւ իրենց կեանքը, բայց ապահովում հայրենի զէնքի յաջողութիւնը:

* * *

Բախտ ժպտի խիզախաց:

«Հողմերն ու ալիքները միշտ էլ զօրավիգ են հանդիսանում համարձակ նաւորդներին»: Ինչպէս բնութեան գեղեցկութիւնը մի՛շտ էլ զգեստաւորում է մարդկային մեծագործութիւնները - արիութեան գործերը:

Այն գիշերը, ասում է շւէյցարական աւանդութիւնը, երբ որ երեսուներեք հայրենասէրները, հաւաքւած՝ Լիւցերն լճի ափին, կ'երդւէին մեռնել հայրենիքի ազատութեան համար, անսպասելիօրէն քչքչալ սկսեցին երեք առւակներ, հակառակ որ ձմեռ էր եւ երկիրը ծածկւած խոր ձիւնով: Այդ առւակները մինչեւ օրս էլ կոչւում են սուրբ աղբիւրներ:

Երբ որ Արնոլդը, ուխտւած շւէյցարական լեռնականներից մէկը, Ալպէրի գագաթին, սառցակոյտերի շուքի տակ գրկում է դէպ իրեն ուղղւած աւստրիական սւիններին մի ամբողջ խուրձ եւ խրում կրծքի մէջ, որպէսզի պատռի թշնամու շղթան իր ընկերների համար, այն ժամանակ այդ հերոսները իրաւունք չունե՞ն իրենց գործի գեղեցկութեան միացնելու եւ շրջապատի գեղեցկութիւնը:

Ամենաանշուք իրերի շրջանում, ճշմարտութեան կամ հերոսութեան գործը, կարծէք անմիջապէս դարձնում է երկինքն իր տաճարը, արեւն՝ իր կերոնը... « Բնութիւնը մեկնում է իր ձեռքերը՝ գրկելու մարդը, բաւական է, որ նրա մտածումները լինեն նոյնքան վեհ, որքան իրենը»:

Երեւակայում եւ օրհնում եմ քաջութիւնը հեթանոս Հայի, որպէս տղամարդու բարձր յատկութիւն: Նախաքրիստոնէական հայութեան մօտ այն աստիճան զարգացած էին քաջութիւնն ու իր պաշտամունքը, որ Վահագն Արքան, ժողովրդի կողմից արձանացած է հեթանոս երգերի մէջ, որպէս գերբնական ծնունդ «երկնի, երկրի եւ ծիրանի ծովի»: Նախապատկերը քաջութեան, Աստւածացեալ Վահագն, որ իր անհուն քաջութեամբ կը քաղէր վիշապները Հայոց աշխարհէն! Վիշապաքաղ Արքան Հայոց, որի պատկերը կը պաշտւէր Տարօնի Վահեվանեան մեհեաններում:

Երեւակայում եմ եւ ապրում գեղեցկութիւնը Աւարայրի եւ նրա հերոսների անմեռ գործի, երբ, ըստ Խորենացու, «ամենայն մարդ յանձն իւր եկեղեցի էր, նոյն ինքն քահանայ». երբ հայկական արիութիւնը կը

---

* *Թող ապրէ՛ մեծ Ճապոնիան:*

սրբացնէր հայ ռազմիկն ու այն վայրերը, ուր կը թափուէր նրա նուիրական արիւնը:

* * *

Այսօ՞ր...

Կասկածելի եւ անօգուտ եմ համարում անարի Հայու հայրենասիրութիւնը:

Արիութիւն - սա պիտ լինի քո սերունդի կրօնը, հա՛յ երիտասարդ: Արի եւ արիադաւան, - այդպիսի՛ն պիտ լինի հայութիւնը, եթէ ուզում է որպէս ազգ ապրել եւ վա՛ղը: Հա՛յ երիտասարդութիւն, պիտ կարողանա՞ս, արտաքին վտանգի ժամանակ ձեռքդ խղճիդ գոչել. - ես քո կենդանի սուրն եմ, Հայրենի՛ք, որ քեզ յաղթութիւն պիտ բերի:

Պիտի չկարողանա՞ս, - ի զո՞ւր ես ապրում:

Պիտի չարիանա՞ս, - վա՛յ քո ժողովրդին...

9.

ՀԱՅՐԵՆԻՔ ԵՒ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ

Երբե՛ք եւ ոչ մի տեղ՝
առանց հոգեւոր Հայրենիքի:

Քրքրի՛ ազգերի պատմութիւնը եւ երես առ երես պիտ հանդիպես հետեւեալ ճշմարտութեան. ժողովուրդները նախ եւ առաջ իրենց ամենաընտիր որդիների արիւնով կը սրբեն իրենց երկիրը եւ ապա այդ սրբացած հողի վրայ կը բարձրացնեն շէնքն իրենց անկախութեան:

Այո՛, նախ հերոսների եւ նահատակների գերեզմանատուն, ապա՝ ազատ եւ երջանիկ Հայրենիք:

Այլ կերպ չի ստեղծուել եւ ոչ մի հայրենիք, այլ կերպ չի ստեղծուելու եւ եօթնիցս սրբազան քո՛ Հայրենիքը:

* * *

Որո՞նք են լինելու վաղուայ Հայաստանի սահմանները:

- Անոնք, որ պիտ գծեն հայ զինուորի արիութիւնն ու հայրենասիրութիւնը:

Ուիլսընն, բախտ, հայկական սուին - սրանցից միայն վերջինի գծած սահմանները կը լինեն իրական եւ կայուն:

Ինչպիսի՞ Հայրենիք կ'ունենանք վաղը:

- Ինչպիսին որ կառուցում է այսօր մեր մտքի եւ հոգու մէջ:

Երբ որ մեր սիրտը եւ ուղեղը լցնողը ապառաժահիմն ու յաղթական հայրենիքի գաղափարն է՝ վաղուայ Հայաստանը չի կարող աւազահիմն, ապազօր եւ դժբախտ լինել:

* * *

Ազգերն ունեցել են, ունեն ու պիտ ունենան իրենց արժանի ճակատագիրը: Արի եւ հայրենապաշտ, որ ասել է՝ հզօր - ահա՛ անկախութեան արժանի ժողովուրդը:

Քեզնից զատ - խրատում է պատմութիւնը - ո՛չ ոք կարող է բարեփոխել քո դրութիւնը:

Ինքնափրկութիւն - ահա՛ պատմութեան թելադրանքը:

Հայը հասկացա՞ւ այդ - նա կանգնած կը լինի փրկութեան անշեղ ճամբին:

Բայց կան, դեռ կան որոշ տարրեր մեզանում, միամիտ, «յիմա՛ր սրբութեան աստիճան», որ կարծում են, թէ կարելի է ե՛ւ ազգ կոչւել, ե՛ւ քաղաքական մուրացիկ մնալ, թէ կարելի է մուրալ անգամ պետականօրէն անկախ ապրելու իրաւունքը: Սրանք կ'ուզէին, որ աշխարհի ուժեղները ե՛ւ շնորհ անէին իրենց, ե՛ւ պաշտպանէին այդ շնորհը արտաքին վտանգից: Սրանք դժբախտութիւն ունեն ուժեղ համարելու հայութիւնից զատ բոլորին, բոլոր ժողովուրդներին: Չեն հասկանում, թէ հզօրութիւնն ու տկարութիւնը յարաբերական հասկացողութիւններ են, թէ ժողովուրդներից եւ ոչ մէկն է առանձինն բացարձակօրէն ուժեղ, ինչպէս եւ ոչ մէկն է նոյն ձեւով ամենաթոյլը: Գոյութիւն ունեցող զանազան դաշինքների դրութիւնը թւապէս տկար ժողովուրդներից շատերին է դարձրել ուժեղ եւ ապահով: Տկարացնել ուժեղ հարեւաններին եւ պաշտպանութիւն ցոյց տալ տկարներին ի գին սրանց զէնքի բարեկամութեան - ահա՛, յաճախ, պետութեանց արտաքին քաղաքականութիւնը: Հեռատես ժողովրդի քաղաքականութիւնը իր գործունէութեան համար ընդգրկում է մի առաջնորդող նպատակ եւ, նրա համաձայն, որոշում իր հաւանական թշնամին եւ զինակիցը - նպատակ, որի ուղութեամբ առաջանում է յամառ ու վճռական քայլերով, եւ, օգտւելով սեփական եւ զինակից ոյժերից՝ չէզոքացնում է խոչ ու խոչընդոտներն իր ճամբին: Նա նախապատրաստում է բարեյաջող պայմաններ իր ռազմագիտութեան համար, երբ պէտք է զէնքի դիմել: Դաշինքների միջոցաւ նա ապահովում է այս կամ այն պետութեան զինակցութիւնը կամ չէզոքութիւնը, օգտագործում հասարակական կարծիքն իր դատի համար, երբ պէտք է պատերազմել: Նա չի արհամարհում ամենատկար զինակցին անգամ, բայց միշտ էլ գերադասում է ուժեղը, այդպիսին համարելով ոչ թէ

թւով մեծ ժողովուրդը, այլ նկարագրով, մշակոյթով եւ ռազմունակութեամբ գերազանցը:

Միեւնոյն նպատակի համար աշխատում են երբեմն մէկից աւելի սերունդներ: Յաջողութիւնը կախուած է լինում պայքարը վարողի ծայրայեղ հետեւողականութիւնից եւ յամառանքից:

Քաղաքականութեան մէջ պարտւում, ձախողում են այն ժողովուրդները, որոնք չունեն որոշ եւ յստակ նպատակ, կամ երբ ունեցածը խստօրէն ազգային չէ:

* * *

Պատերազմը - դա քաղաքականութեան շարունակութիւնն է եւ մի վճռական միջոց քաղաքականութեան համար: «Նա այնպէս է զարգանում քաղաքականութեան մէջ, ինչպէս երեխան՝ մօր արգանդի մէջ»:

Քաղաքականութիւնն է վարում աշխարհի եւ անհատ պետութեանց բախտը, մեծապէս հեշտացնելով վերջիններին սրի գործը:

Ուզում եմ կրկնել, թէ իմաստուն քաղաքականութիւնից մեծապէս շահել են եւ շահում են թւապէս, թեքնիկ տեսակէտով եւ աշխարհագրօրէն տկար ժողովուրդները:

Ուրեմն, մեզ մնում է որոշ ոյժ եւ արժէք ներկայացնել միջազգային փոխյարաբերութիւնների մէջ, ողբերգօրէն մենակ եւ տկար չմնալու համար:

Այդ նպատակին պիտ ծգտի հայութիւնը, խորապէս գիտակցելով, թէ ազգերն այն են, ինչպէս որ կը զգան իրենց - եթէ չեն՝ կը դառնան վաղը. թէ աղիտալի է տկարութեան ինքնաներշնչումը, որից պիտ ազատւի մեր ժողովուրդը. այլապէս նա կը մնայ անյուսօրէն տկար, ինչպէս որ զգում է իրեն, այլապէս կը մնայ անհայրենիք, այսինքն՝ պարարտացուցիչ աղբ իրենից ուժեղ ժողովուրդների համար:

* * *

Հայրենի՛ք: Այդ հասկացողութիւնը կը պատկանի աւելի բարոյական իրերի կարգին, քան նիւթական:

Դա, հայրենի հողը լինելուց զատ, «որին նախախնամութիւնը շղթայել է մեր մարմինը ու հոգին», միութիւնն է նաեւ նրանց, որոնք ապրել են, որոնք կ'ապրեն եւ որոնք պիտ ապրեն:

«Մեռելների աճիւնն է ստեղծում Հայրենիքը»,- ասել է Լամարտինը:

«Ուր հայրեր՝ այնտեղ Հայրենիք»,- պատգամել է Նիցշէն:

«Դուք,- ասել է Ժորէսը,- դուք կապւած էք այդ հողին այն ամէնով, որ գոյութիւն է ունեցել ձեզնից առաջ, այն ամէնով, որ ստեղծել է ձեզ, այն

ամէնով, որ դուք կը ստեղծէք, անցեալով եւ ապագայով, գերեզմանների անշարժութեամբ եւ օրօրոցների երգով»:

* * *

Հայրենի՛ք: Երկիւղած սէր եւ յարգանք դէպ մեր նախահայրերի յիշատակը, դէպ մեր կրօնը, որ ցեղի սիրտն է, դէպ մայրենի լեզուն, որ հայրենասիրութեան թթխմորն է, դէպ տոհմիկ գրականութիւնը եւ արուեստները, որ ցեղի մտքի եւ հոգու կեանքն են, ազգային պատմութիւնը, որ «ցեղի հոգին ամրացնելու ճիգերի պատմութիւնն է», իրար յաջորդող սերունդների հայրենի հողի վրայ թափած քրտինքն ու արիւնը, գեղջուկի հորովելն ու Տիգրան աշխարհակալի սուրը, դէպ Անիի աւերակներն ու Հայկայ եռաթեւ աղեղը, դէպ մեր հեթանոս աստուածներն ու փառատաճարները, անսասան հաւատը դէպ մեր մեծ յոյսը... Գումարի՛ր, ընթերցո՛ղ, գումարի՛ր այդ բոլորը եւ կը ստացուի հոգեւոր Հայրենիքը:

Նաւեալի է նիւթական Հայրենիքը, հոգեւորը՝ գրեթէ ոչ:

Երբ կորցնելով իրենց անկախութիւնը, շատ անգամ՝ եւ հայրենի երկիրը, ժողովուրդները կը շարունակեն իրենց հոգու մէջ ապրեցնել աննիւթեղէն, միստիկ Հայրենիքը - նրանց աշխարհագրական Հայրենիքը երկար չի մնար օտարների ձեռքին:

Երբ թրքութիւնն այսօր կաշւից դուրս է գալիս սրբելու մեր ցեղագրական հետքերն իսկ մեր պատմական Հայրենիքում, ես ծիծաղում եմ նորա անյատակ տգիտութեան վրայ եւ հարց տալիս. - Պիտ կարողանա՞ս սպանել հայ ժողովրդի պատմական յիշողութիւնը: - Ո՛չ,- նրա փոխարէն պատասխանում է իրականութիւնը: Ասել է՝ իմ երկիրը ժամանակաւորապէս մնալով օտար լծի տակ, չի կարող դառնալ այդ օտարի Հայրենիքը, քանզի Արեւելքի անուղղայ խուժը, որ թրքութիւն կը կոչւի, ոչինչ ունի տուած այդ երկրին - ո՛չ մեծ մեռելներ, ո՛չ միտք, ո՛չ զգացում... այն ամէնը, որ աննիւթեղէն Հայրենիքը կը ստեղծէ:

* * *

Այո՛, մարդկային ոյժերից վեր է մի ժողովրդի պատմութիւնն սպանել, մի ժողովրդի հոգեւոր Հայրենիքը նաւեալ: Սակայն, եթէ նոյնիսկ դա հնարաւոր լինէր, արդեօք թոյլատրելի՞ է դա: Ո՛չ, հազար անգամ ո՛չ: Որովհետեւ սպանել մի ժողովրդի ազգայնութիւնը, կը նշանակի սպանել նրա ցեղային հանճարը, կը նշանակի մարդկութիւնը զրկել քաղաքակրթական մի ստեղծագործ ազդակից, որպիսին կը հանդիսանան ազգութիւնները: Աշխարհն ու իր խաղաղութիւնը ոչինչ կը շահին, եթէ միայն մենք վայր դնենք սուրը, որ մերկացրել ենք յանուն մեր ազգային անկախութեան եւ

ի պաշտպանութիւն մեր ցեղի առանձնայատուկ հանճարի: Չկայ միահիդէալ եւ միակամ մարդկութիւն: Կան ինքնանկախ ու ինքնիշխան ազգեր միայն - մի դրութիւն, որ պիտ շարունակւի մնալ նոյնը եւ մեր՝ որպէս ուրոյն ազգութիւն չքանալուց յետոյ: Միջազգային մրցումներն ու բաղխումները պիտ շարունակեն տեղի տւած ազգութեան գերեզմանի վրայ:

Մեր օրերում, երբ մեծագոյն թագաւորութիւնները բաժանում են ճակատագիրն «այն նաւերի, որոնք չափից աւելի են բեռնաւորւած», երբ մեծ պետութիւնները դատապարտւած են կորչելու, վերածւելով ազգային ուրոյն միաւորների, հայ համայնավարները, որոնք ճգնում են սպանել հայ ազգայնութեան գաղափարը, կամենալով, որ Հայաստան երկիրը բաժանւած մնայ Ռուսիոյ եւ Թուրքիոյ միջեւ, կատարում են միաժամանակ եւ հակաքաղաքակրթական մի քստմնելի դեր:

Իսկ մենք, դաւանելով անկախ Հայրենիքի գաղափարը, պաշտպանում ենք քաղաքակրթական մի լուրջ ազդակ:

Ազգերի հանճարը ստեղծագործ, իսկ նրա արտայայտութիւնը յորդաբուխ է լինում միայն բացարձակ անկախութեան մթնոլորտում: Ահա՛ թէ ինչու մարդկութեան աւելի օգտակար լինելու համար, ժողովուրդները պիտ լինեն ինքիշխանօրէն ազատ եւ անկախ:

Անկախութիւնը, անկախ Հայրենիքը, ինչպէս տեսնում ես, հա՛յ երիտասարդ, իրաւունք լինելուց զատ եւ պարտականութիւն է, որից խուսափող ժողովուրդները կորցնում են իրենց բարոյական գոյութեան իրաւունքը:

* * *

Չկան մեծ ու փոքր ազգեր: Կան հաւասար իրաւունքներով անդամները մարդկութեան ընտանիքի: Եւրոպական դիւանագիտութեան կեղծ լեզուն է ստեղծել «մեծ» եւ «փոքր» անունները: Ճշմարիտ մեծութիւն չի թւական գերազանցութիւնը: Փոքրիկ Հելլադան կ'իշխէր պարսից անծայրածիր թագաւորութեան վրայ: Այսօր էլ երկայնամազ Չինաստանը չի համարւում ազգերից մեծագոյնը: Կարմիր լաթը երկրպագող սակաւաթիւ հայերի համար գուցէ եւ թրքութիւնը «մեծ» ազգ է, որին պիտ ծառայի «փոքրիկ» հայութիւնը. մեզ համար սակայն, Անիի փլատակների մէջ աւելի մեծութիւն կայ, քան թուրք ցեղի խուժական հոգու մէջ:

* * *

Ձինւորական եմ, չեմ սիրում երկարաբանել. - թող, ընթերցո՛ղ, թող միտքերս հայրենասիրութեան մասին արտայայտեմ աֆորիզմների ձեւով.-

- Վաղը պիտ անասնանան ու կործանւեն այն ժողովուրդները, որոնց

որդիներն այսօր ուսումնասիրում են իրենց պատմութիւնը Մարքսից կամ Լենինից եւ ոչ իրենց նախահայրերից սկսած:

- Չկա՞յ հայրենասիրութիւն - չկայ հոգեւոր Հայրենիք: Եղածը լոկ աշխարհագրական սահմաններ են, իսկ նմանը աւազահիմն է, դիւրակործան, անապագայ:

- Չկայ հրէշ, որ կարողանար գերազանցել անհայրենասէրին, որ հոգեբանօրէն անտարբեր է դէպ իր երկիրն ու ժողովուրդը:

- Անհայրենասէր ժողովուրդը, եթէ այսօր չէ, անհայրենիք կը դառնայ վաղը:

- Սուրբ, հերոս, բարեգործ - սրանք կենդանի անհեթեթութիւններ են մեր կեանքում, եթէ միաժամանակ հայրենասէր եւ արի չեն:

- Անհայրենասէր Հայ - այդ դժբախտը կը նմանի այն թագաւորին, որի մասին պատմութիւնն ասում է հեգնանքով, - «միայն գահ բարձրացաւ»:

- Ժողովուրդների մէջ մի ստոր տարր կայ՝ անհայրենասէրները:

- Անհայրենասէր ժողովուրդ, ասել է՝ անիդէալ եւ աննպատակ ժողովուրդ, որ իրենից կը ներկայացնի մի տրցակ, բայց ոչ թէ մի մարմին, «անհատների փոշի», բայց ոչ գրանիտէ ժայռ, որպիսին պիտ լինեն ժողովուրդները՝ միջազգային արնոտ փոթորիկներից պաշտպանուելու համար:

- Հերիք է որ մի ժողովուրդ դառնայ անհայրենասէր, որպէսզի համարւի պատրաստի որս եւ նրա երկիրը բաժանւի իր հարեւանների միջեւ:

- Ապագան վտանգւած ժողովուրդը, ինչպիսին է մերը, նորանոր աղէտներից խուսափելու համար մի հատիկ միջոց ունի - բարձր հայրենասիրութիւնը, այնպիսին, որով քաղցրանում են մեր հաւաքական թէ անձնական ցաւերը:

- Հայրենասիրութիւնը ժողովուրդներին ներշնչում է առաքինութիւններ, որոնց շնորհիւ նրանք դառնում են եւ մնում ապահով եւ յարգւած:

- Գինետնային հայրենասիրութիւնը, որ բաւականին դաւանողներ ունի մեր մէջ, այնքան էլ հեռու չէ անհայրենասիրութիւնից:

- Դատապարտելի է նաեւ պայմանական հայրենասիրութիւնը: Հայրենիքը պիտ սիրել անկախ իր քաղաքական ռէժիմից, ինչպէս եւ անկախ մեր քաղաքական համոզումներից:

- Կան այնպիսիները, որոնք իբրեւ թէ սիրում են Հայրենիքը, բայց որովհետեւ սիրում են եւ մարդկութիւնը, գործնականում մնում են անտարբեր թէ՛ դէպի մէկը եւ թէ՛ դէպի միւսը: Հակազգային ոյժ են ե՛ւ սրանք: Սխալւում են ազգային պարտականութեանց դասալիքները՝ կեղծ ընկերվարականը, համայնավարը, անիշխանականը: Հայրենասէր լինել՝ չի նշանակում օտար ժողովուրդների թշնամին լինել: Դա նշանակում է, թէ այդ օտարները կարող են մեր թշնամին դառնալ:

- Հզօրանալու մի իմաստուն ճիգ է հայրենասիրութիւնը:

- Ինքնապաշտպանութեան բնազդից մղուած՝ ժողովուրդները ոյժի եւ կորովի նորանոր աղբիւրներ կը փնտռեն, որովհետեւ գիտեն, որ «Աստուածներն իսկ անցան ուժեղի, յաղթողի կողմը»:

10.

ՉԱՐԱՐԻԵՍՏ ՏԱԿԱՆՔՆԵՐԸ

Ազգերն ամէնից շատ տառապել են եւ կը տառապեն իրենց տականքների երեսից:

Պատմութեան մէջ նախընթացը չունեցող մի ողբերգութիւն է խաղացւում Հայոց աշխարհում, մի արնոտ խաղ, որի գործող անձինք, որի դերակատարներն են բռնութիւնը, բռնութեան կենդանի գործիքները՝ հայ ժողովրդի տականքը, եւ բռնութեան զոհերը՝ ի՛նքը, հայ ժողովուրդը:

Առաջին դերակատարին պէտք է յարատեւել իր ոճրառատ գոյութիւնը, եւ ահա՛ նա դիմել է աշխարհի պէս հին, ծանօթ միջոցին. նա պաշտօնի ու ծառայութեան է հրաւիրել հայօրէն ու մարդկօրէն ընկածներին, վարձելով սրանց չարարեստ միտքը, կամքը, ցանկութիւնը:

Նոր գիւտ չէ այն բարոյազուրկ գործելակերպը, որին դիմել է հայութիւնը գիշատող կարմիր բռնութիւնը: Նա համարձակ կրկնութիւնն է դասական այն տմարդ միջոցների, որոնց յենւած՝ արեւստապէս յարատեւել են անցեալի բոլոր տեսակի բռնակալութիւնները:

Երկրորդին՝ բռնութեան ծառաներին պէտք է ապահովել իրենց հանապազօրեայ անսուրբ հացը:

Երրորդին՝ ապրելու համար պէտք է անբռնադատօրէն զարգանալու եւ ստեղծագործելու հնարաւորութիւն:

Երեք կողմերն էլ ապրել են ուզում - ե՛ւ բռնակալը, ե՛ւ իր գործիքները, ե՛ւ իր զոհերը:

Անխուսափելի պարտութեան սարսափով խելագար բռնակալութիւնը, իր մոլեգնութեան հետ կրկնապատկում է ժողովուրդի չարչարանքները:

Չարչրկւող ժողովուրդն իր հերթին՝ վերջնական յաղթանակի անմեռ յոյսերով սպառազէն, կրկնապատկում է իր յամառութիւնը - հրաժարւում զինաթափւել հոգեբանօրէն:

Ահա՛, այսպէս, կեանքը Հայոց աշխարհում դառել է միահեծան իշխանութիւն Կարմիրների, երեսուն արծաթ՝ սրանց գործիքների, ամենօրեայ Գողգոթայ՝ մեր ժողովուրդի համար:

* * *

Այլ պիտ լինէր ժողովուրդների պատմութիւնը, եթէ գոյութիւն չունենային ընկածներն ու ընկածութիւնը մարդկային: Առանց սրանց, գոյութիւն պիտի չունենար բռնութիւնը, որ անզիջող վատերի սեւ գործերովն է շնչել բոլոր դարերում:

Աներեւակայելի է բռնութիւնը՝ առանց իրեն ոյժ տւող եւ իր գազանութիւններն արդարացնող չարագործների: Աներեւակայելի է բռնաւորը հոգեբանական մի այնպիսի մթնոլորտում, ուր չի ծախւում մարդը բարոյապէս, ուր մարդը գայլ չէ իր նմանների համար:

Մարդկային ազգը տառապել է եւ կը տառապի իր տականքների երեսից:

Իրենց տականքները - ահա՛ ազգերի իրական թշնամին:

Իրենց տականքները - ահա՛ ազգերի գոյութիւնը յաճախ եւ յաճախ դժոխքի վերածող ամենազօրեղ ազդակը:

Ազգօրէն ու մարդկօրէն ընկածներն են կարելի դարձրել ապերասան բռնակալութիւնը Ներոնների, Ցեզար Բորջիաների, Համիդների եւ նմանների:

«Պիտ ուզենայի անգրագէտ լինել»,- կը բացագանչէր մէկը Հռոմի թագաւորներից՝ մի դժբախտի մահւան դատավճիռն ստորագրելիս: Դա Ներոնն էր, երբ դեռ կ'աշակերտէր Սենեկային:

Մի օր, սակայն, իմաստասէր խորհրդականի փոխարէն Ներոնին կը շրջապատեն ընկածները, չարերը եւ... նա իր հրէշութիւններով կը գերազանցի պատմութեան ծանօթ բոլոր բռնակալներին:

Այսպէս է աշխարհը: Ժողովուրդները կը շարունակեն տառապել իրենց տականքների երեսից: Դեռ ժողովուրդների կեանքը կը շարունակի մնալ մի արնոտ ողբերգութիւն, որի գործող անձինքը երեքն են - բռնութիւնը, սրա ծառաները եւ սրա զոհերը:

* * *

Միշտ էլ, երբ քաղաքական իրերի դժբախտ բերումով օտարն է իշխել Հայաստանում, համարձակ գլուխ է բարձրացրել մեր ժողովրդի տականքը՝ ազգօրէն հերձւածողը, հոգով ստրուկը, տկարը, սեղմ ասած՝ ազգային ինքնագիտակցութեան եւ ինքնայարգանքի զգացումից զուրկ ցանցառաթիւ տարրերը:

Այսօր կարմիր սատրապութիւն է Հայաստան երկիրը եւ բռնութիւնը վերստին կեանքի եւ պաշտօնի է կոչել ծանօթ տարրերը: Այս անգամ, սակայն, ոչ թէ երկրի սահմաններում, ուր այդ տարրերի թիւը - պատի՜ւ

երկրի հայութեան - անշշան է, գոյութիւն չունենալու աստիճան, այլ մեր գաղութներում: Տարաշխարհիկ հայութեան որոշ տարրերը, անցեալի իրենց պատմական փոքրոգութիւնը, իրենց դասալքութիւնը մեր վարած ազատագրական պայքարում՝ «խորքով ու մոխրով» ապաշխարհելու եւ երկրի հայութեան հոգեպէս չարչարակից լինելու փոխարէն, իրենց դաւաճան ընթացքով չարչարել են տալիս նրան:

* * *

Հոգեբանական անդամահատութիւն - ահա՛ երկրում տեղի ունեցողը: Կարմիր հիւսիսից տրուած հրամանի հիման վրայ, բարոյական անդամահատութեան է ենթարկւում երկրի հայութիւնը, նրա հոգեւոր էութիւնը: Բռնի փորձեր են կատարւում մեր ժողովրդի հաւաքական սրտից կտրել, նետել իր բոլոր սրբութիւնները, ինչպէս եւ մարդկային այն բոլոր առաքելութիւնները, որոնց շնորհիւ միայն ազգերը կ'ապրեն իրենց, կը ստեղծագործեն մարդկութեան համար:

Զոհը կը գալարւի ցաւերի մէջ, մերթ աղերսելով, մերթ սեղմելով բռունցքը:

- Կտրէ՛, պարո՛ն, կտրէ՛, - կ'ասէր բոնապարտեան զինուորը իր վէրքը մաքրող բժշկին, - մի քիչ էլ. եւ ահա՛ դուք կը տեսնէք թագաւորը:

- Կտրատէ՛ք, քրքրէ՛ք հոգիս, մի քիչ էլ - եւ դուք իմ էութեան խորքում կը տեսնէք Մայիս Քսանութի հպարտ հեղինակին,- ասում է Երկրի հայութիւնը, իրեն հոգեբանօրէն անդամահատութեան ենթարկողներին:

* * *

Շարունակւում է անդամահատութիւնը:

Մէկիկ մէկիկ հայութեան սրտից եւ ուղեղից հեռացնել են փորձում այն ամէնը, որի շնորհիւ միայն, որպէս ազգ նա կարողացել է դարերով դիմագրաւ լինել իսլամ Արեւելքի հայասպան փորձերին:

Ո՞ր մէկը, սակայն, Հայոց սրբութիւններից ո՞ր մէկը արմատախլել հայ հոգուց: Բոլորը: Բայց դա կը նշանակէր դիակի վերածել, սպանել հայութիւնը:

- Մոռացի՛ր Մայիս Քսանութը,- գոչում են, սպառնում Երկրի հայութեան, գաղութի ապազգայնացած տականքները:

Աղմկում, հայհոյում, բռունցք են սեղմում հայօրէն ընկածները, առանց հասկանալու, որ դա միեւնոյն է՝ թէ ասէին Մասիս լեռան - գնա՛, կորի՛ր տեղիցդ:

- Բոլշեւիզմը սպանում է Հին Աստուածները, առանց նորերը տալու, իսկ ազգերը չեն ապրել եւ չեն կարող ապրել առանց Աստուածների,- պատասխանում է Երկրի դառնացած հայութիւնը:

- Մոռացի՛ր սրբութիւններդ, մեռելներդ, հերոսներդ, քանզի այդպէս են կամենում հրեայ Զինովիեւը եւ թուրք Քեմալը,- մոլեգնած կանչում են Կարմիրների գաղութային կապարճակիրները, առանց հասկանալու, որ իրենց «մոռացի՛ր»ը նշանակում է «մեռի՛ր»:

- «Տարաշխարհներում օտարացածի եւ այլասերուածի ձեր այլանդակ ապրումներով մի՛ չափէք իմ ազատապաշտ հոգին, լռէ՛ք, եթէ չէք կարող վահան ու պաշտպանութիւն ընծեռել ինձ, լռէ՛ք եւ մի՛ խրախուսէք իմ դահիճների հոգեսպանութեան փորձը: Մի՛ գրգռէք Կարմիր գազանը»:

Հայութեան, մասնաւորապէս Երկրի հայութեան այդ հերոսական կեցուածքից կատաղած, ծանօթ «փողոցը» աղմկում է անլսելի. «Խա՛չ հան այդ ապստամբ ժողովուրդը, խա՛չ»:

* * *

Ամէն անգամ, երբ կը մտածեմ այդ չարաբաստ հայանունների մասին, կը պատկերացնեմ այն տեսարանը, որ տեղի է ունեցած հրէական ամբոխի եւ Հրէաստանի փոխարքայի միջեւ:

Ամբոխը. – Եթէ,- մատնանշելով Նազովրեցուն,- եթէ ազատ արձակես սրան, կը նշանակի Կեսարի բարեկամը չես:

Պիղատոսը. – Ձեր թագաւորի՞ն խաչ հանել տամ:

Ամբոխը. – Մենք ուրիշ թագաւոր չունենք Կեսարից զատ:

Պատմութիւնը. Ինչպիսի՜ խոստովանութիւն. հրէական շրթունքներից: Դա յանձնումն էր մի ժողովրդի ազատութեան ու պատմութեան: Պիղատոսը հաճոյքով ընդունում է այդ հաստատումը եւ Նազովրեցուն յանձնում խաչելու:

* * *

Նոյն տխուր տեսարանը եւ այսօր, մեզանում:

Նոյն ամբոխը, դատաւորը՝ նոյն: Տարբեր է միայն զոհը գերագոյն: Այսօրուանը Յիսուսը չէ, այլ՝ մեր Անկախութեան Գաղափարը: Նոյն աստուածասպան ամբոխն է, մեր ցեղի վատասերուած տականքը, որ օտարի միջոցով խաչել է տալիս այն ամէնը, ինչ որ ազգային է: Նա կատարում է յանձնումը մեր Ազատութեան ու Պատմութեան եւ շնականօրէն յայտարարում.

- Մենք այլ թագաւոր չունենք Կեսարից զատ:

* * *

Մի սրտառուչ համերաշխութիւն՝ ստելու, դաւելու, քծնելու մի չտեսնուած մոլեռանդութիւն, յամառանք եւ վճռականութիւն է տիրում մարդկօրէն ընկած այդ ազգադաւ արարածների շարքերում, որոնք ազգ ճանաչե-

լու եւ սիրելու ո՛չ արժանիքն ունեն, ո՛չ էլ երջանկութիւնը, որոնք մի կտոր անսուրբ հացի եւ իրենց անասնական հանգստի համար միշտ էլ արտաքին թշնամու հետն են եղել: Իրար բերան թքած կարծէք լինեն բոլորը, բոլոր հակամայիսքսանութականները:

Մշակած ու սրբագործած մի գործելակերպ ունեն սրանք, որքան հանճարեղ, այնքան բարոյազուրկ:

- Իրենց դէմ ուղղուած ամէն մի հարուածը, չարամիտ վարպետութեամբ, ընդունել ուղղուած խորհրդային իշխանութեան հասցէին, այդ վերջինը աւելի եւս գրգռելու Երկրի հայութեան դէմ:

Քննադատեցէ՛ք, թքէ՛ք, խարազանէ՛ք այդ հոգեպէս բորոտներին, եւ վաղը իրենց թերթերում կը կարդաք, թէ ձեր զայրոյթի քննադատական խօսքը ուղղուած է եղել Հայաստանի օրւայ վարիչների հասցէին:

Ծաղրէ՛ք, ծանակէ՛ք, ձաղկէ՛ք այդ հոգեպէս խեղճ արարածներին եւ վաղը իրենց փողոցային թերթուկներում պիտ տեսնէք, որ ձեր զգւանքի խօսքը հայադաւ նպատակով ընդունել են իրենց տէրերի եւ ոչ իրենց հասցէին:

Փորձէք որեւէ տեղ, այս կամ այն առթիւ բանախօսել ամենաակադեմիական նիւթի մասին, այդ հայանուն վատերը, անսպասելիօրէն կը նետուեն առաջ, հիստերիկ ճիչեր կ'արձակեն, ռեկլամային աղմուկ կը հանեն, խուճապ կը ստեղծեն, որ ժամեր անց սկսեն իրենց թղթէ յարձակողականը - թզուկների արշաւանքը հսկաների դէմ - որ հայհոյեն, հայհոյեն մէ՛կ էլ, մինչեւ եօթներորդ քրտինքը, մինչեւ որ ուժասպառ կը լինեն, մինչեւ որ Երեւանը կը լսի այդ շնորհունակների դոնքիշոտութեան մասին:

Այս է, այսպիսին է մեր ցեղի տականքը, ներքին թշնամին - դրուժան, դաւադիր, հակահայ գործնականում:

Իր անսուրբ հացը կամ քաղաքական սիրախաղը ծանօթ հոսանքի հետ ապահովելու համար, մի աննախընթաց մոլեռանդութեամբ, նա գրգռում է խորհրդային իշխանութիւնը Երկրի ժողովրդի դէմ, իր չարագործութիւնը հակադաշնակցականութիւն համարելով, երբ կատարածը իրապէս հակահայկականութիւն է:

Այսպէս, հա՛յ երիտասարդ, երկրի սահմաններից դուրս որոշ տականքներ Հայաստանի ժողովրդի նկատմամբ կատարում են գրգռիչի դեր:

Քո անողոք դատաստանին յանձնելով սեւ արարքներն այդ տականքների, որոնք տմարդօրէն թոյն ու քացախ կ'աւելացնեն մեր՝ քաղաքականապէս դժբախտ ժողովրդին խմելու վիճակւած դառնադառն բաժակին, զայրոյթի եւ զգւանքի իմ խօսքը կ'ուղղեմ ո՛չ թէ բռնութեան, այլ իր հայակերպ գործիքներին:

11.

ԱՌԻՒԾԱԾԻՆ ՄԱՅՐԵՐ

Մայրերի ափի մէջ պիտ փնտռել
ազգերի ճակատագիրը:

Տկարութեան եւ կեղծիքի դէմ սկսածդ պայքարի մէջ մենակ չես դու, հա՛յ երիտասարդ: Դու պիտ ունենաս քո մեծ ու վճռական զինակիցը - հայ մայրը:

Ինչպիսի՜ աստուածային հաճոյք մարտնչողի համար՝ լսել խրախուսիչ ձայնը հայրենակրօն մօր:

Ո՞վ չգիտի, թէ ազգային տագնապների օրերին, երբ հայրենասիրօրէն կը բաբախի տառապող կնոջ սիրտը՝ կորած չէ դեռ ամէն յոյս:

«Միշտ էլ յիշենք, - ասում է գաղիական պատմութիւնը, - յիշենք, թէ մեր հայրենիքը ծնուած է մի կնոջ ստինքից, նրա սիրուց եւ արցունքներից, այն արիւնից, որ նա թափեց մեզ համար»:

* * *

Մօր ազդեցութիւնը - որպէս դաստիարակչուհին եւ հոգեւորիչը մարտնչող սերունդների - նրա հրաշագործ ազդեցութիւնը այն ժողովուրդների համար, ինչպիսին է մերը, կը մնայ միակ լծակը, որ պիտ բարձրացնի եւ մեր ազգային դատը, որի ծանրութիւնը այսօր սարսափեցնում է միայն անհայրենասէրներին:

Բնութիւնը - ասուած է - կնոջ ձեռքով կը գրի տղամարդկանց սրտի մէջ:

Ահա թէ ինչո՛ւ հայ կինը պիտ դառնայ հայրենապաշտութեան տաճարի Վեստեան Կոյսը, նշանակուած՝ անշէջ պահելու նրա սրբազան կրակը:

Հայուհին, որին կարելի է ճանաչել հազարաւոր օտարուհիների մէջ այն կնիքով, որ նրա ճակտին դրել է ձիգ դարերի տառապանքը, որ կարող է փոխարինել խաչափայտի առջեւ իր աստուածանման որդու վէրքերը սգացող Տիրամօրը - հայ կինը աւելի հերոսուհի, քան թախծութեան մայր պիտ լինի: Նրա շրթունքներից պիտի չպակասեն Ժանդարկեան բառերը՝ ուղղուած մեր սերունդներին. «Եթէ յոգնած էք, դադար առէք, բայց մի՛ լքէք կռւադաշտը, մի՜ դասալքէ՛ք»:

Նա միայն պիտի չողբայ վէրքերն իր Հայրենիքի, այլ եւ մեր սերունդներին անսահման սէր ու պաշտամունք պիտ ներշնչի դէպ այդ վէրքերը:

Նա աւելի պիտ սիրի եւ հպարտանայ, քան կարեկցի:

Նրա հայրենասիրութիւնը եւս - աստուածային կրակ, բոց ու ջերմութիւն - պիտ արթնացնի թմրած առիւծը իր ժողովրդի մէջ, պիտ բարձրացնի մեր առօրեայ կեանքի թափը, պիտ քաղցրացնի ու հեշտացնի անձնազոհութիւնը: Ոգիացած հայրենասիրութիւն, որից ժողովուրդները ստեղծում են մի հրաշագործ ոյժ, անհրաժեշտ՝ Հայրենիքների անկախութեան ու հզօրութեան համար:

* * *

Յաճախ վիրաւոր, բայց հոգեպէս անպարտելի - միայն նման ժողովուրդներն են յաջողում պատմութեան մէջ:

Յաջողում են նրանք, որոնք ծանօթ չեն յուսահատութիւն կոչւած տկարութեան: Իսկ չեն յուսահատւում ժողովուրդները, որովհետեւ մարդկութեան ընտանիքի բոլոր անդամները, մեր մտաւորականութեան որոշ մասից զատ, գիտեն, որ մէկի հայրենի հողը չի կարող միւսի համար մնայուն հայրենիք դառնալ, որ դա, Յաւիտենական Արդարութեան Օրէնքի ոյժով, վաղ թէ ուշ, վերադարձւում է իր տէրերին, եթէ այդ վերջինների մէջ չի նւազել սէրը դէպ հարազատ երկրամասը:

Իսկ սէր եւ նւիրում դէպ Հայրենիքը, ներշնչում եւ սնուցանում է հայրենասէր մայրը:

Ահա թէ ինչո՛ւ մեր իրականութեան մէջ՝ ՄԱՅՐ անունը պիտ դառնայ ու մնայ սրբազան մենաշնորհը միայն եւ միայն հայրենակրօն մայրերի, եւ ոչ թէ բոլորի:

Իրենց որդիներով պիտ ճանաչել եւ գնահատել կանանց:

Անհայրենասէր ու անարի որդիների մայրը, անկախ՝ իր հասարակական դիրքից, մեր կեանքում պիտի չվայելի յարգանք:

Ամէն ինչ - սէր, խնամք, ակնածանք հայրենասէր մօրը: Եւ ամէն ինչ հայրենասէր մօրից - հերոս որդիներ, յաղթական դափնիներ, անկախ Հայրենիք:

Իդէալ մայրեր ունենանք երջանիկ Հայրենիք ունենալու համար: Այլապէս, քանի դեռ հայրենաշունչ մայրը կը մնայ որպէս «բացակայող աստուածութիւն» հայ ընտանիքների համար, թուրքը պիտ շարունակի իր արնոտ խրախճանքը մեր սգւոր Հայրենիքում:

* * *

Կան ժողովուրդներ, որոնք դեռ հեռու են անկախութեան եւ քաղաքակրթութեան բարիքները վայելելու բախտից, որովհետեւ կնոջ ազդեցութիւնը տկար է նրանց մէջ:

Մի ժողովրդի բարքերը - գովելի թէ պարսաւելի - կախում ունեն մայրերից:

Մայրը, միշտ էլ, իր հոգուց մի բան տեղափոխում է իր զաւակների կրծքի տակ:

«Ոչ իմաստասէրներ, ոչ էլ թագաւորներ օգնութեան կանչենք Հայրենիքին, այլ մայրական ազդեցութիւնը միայն»:

Կը կասկածեմ այն մօր հայրենասիրութեան մասին, որի զաւակները հայրենասէր չեն:

Կ'ողբամ հայրենասիրութիւնը այն ընտանիքների, որոնք հոգեւոր Հայրենիքի մանրանկարը չեն:

Կը գարշեմ այն բոլորի հայրենասիրութիւնից, որոնք դեռ թուրքերէն կը խօսեն: Թրքախօս Հայ, հայրենասէ՞ր! ... Ողորմելի, փափկամարմին, ծոյլ հայրենասիրութիւն, որ իր մայրենի լեզուն իւրացնելու ճիգն իսկ չի փորձում: Անհեթեթութիւն: Լա՛ւ է համր, քան թրքախօս լինել:

- Սպարտան կը հասցնէր հայրենապաշտ եւ աներկիւղ մարտիկներ, որովհետեւ մայրերի ցանկութիւնն էր՝ նման սերունդ տալ Հայրենիքին:

«Կեանքի ընկեր ընտրենք կանայք, որոնց կաթը արիւն լինէր, որոնց ծնունդը՝ հերոս եւ վրիժակ». այսպէս կ'երգէր հին Գաղիացին:

* * *

Հայ կինը:

Սրա միջոցաւ հոգեփոխենք հայ ընտանիքը: Այդ վերջինի միջոցաւ՝ հայութիւնը:

Սկսենք հայ կնոջից. աշխատենք անդուլ, մինչեւ որ սրա կաթը դառնայ հայրենապաշտութեան սրբազան կաթը:

Հայրենապաշտօրէն դաստիարակենք հայ կինը եւ նրան թողնենք մեր մատաղ սերնդի դաստիարակութեան գործը:

Հայ կնոջ միջոցաւ դարձի եւ զգաստութեան հրաւիրենք գաղութահայութեան ազգայնօրէն տկարացած տարրերը: Նրա պաշտպանութեան ու գուրգուրանքին յանձնենք մեր մայրենի լեզուն, Եռագոյնը, անկախութեան Մայիսը - սրբութիւնները մեր ցեղի:

Ապագան վտանգւած մեր որբախնամ ժողովուրդը - մէկ էլ կրկնենք - չկորչելու համար, հրամայողաբար պիտ դառնայ արիադաւան եւ արիախնամ: Հայ կնոջից սպասենք հոգեբանական այդ հրաշքը:

Ունենանք առիւծածին մայրեր, որոնց արիական որդիները աւելորդ դարձնէին Հայաստանը պաշտպանող արւեստական ամրութիւնները:

12.

ՄԻ ՆԱԽԱԳԻԾ

Կամքեր ու հոգիներ թրծող աշխատանք է պէտք, որ պիտ ստեղծի վաղւայ համար ազգովին նախապատրաստելու մեր հաւաքական ճիգը:

Դժւար թե գտնւի դիտելու եւ տեսնելու ընդունակ մի հայ մարդ, որ չտեսնէր Հայաստան երկրի վրա կախւած մեծ եւ աղիտալի գալիքի ստւերը:

Գիտենք, որ օրւայ Թուրքիոյ գոյութեան համար աւելի քան անհրաժեշտ է մեր ժողովրդի չգոյութիւնը: Գիտակցում ենք, թէ յանուն իր յանցաւոր գոյութեան, թրքութիւնը դաւել է եւ պիտ շարունակի դաւել մեր ամբողջական գոյութեան դէմ: Որ նա առիթ պիտի չփախցնի՝ ոչնչացնելու ե՛ւ Արարատեան դաշտում խճողւած մի բուռ հայութիւնը, հայկական հարցը բացասական լուծումի յանգեցնելու համար: Այլեւս միամիտ չենք կարծելու, թէ մի փոքրիկ եւ անզօր Հայաստանի գոյութիւնը - որպէս բուֆեր պետութիւն - անհրաժեշտ եւ ցանկալի է Տաճկաստանի համար, քանզի գիտենք, որ այդ վերջինի կողմից Հայաստանի անկախութիւնը ճանաչելը ժամանակաւոր մի զիջում էր՝ արւած հայութեան, մի բան, որ թելադրում էր մեր հակառակորդին պատմական վայրկեանը: Ժամ առաջ թրքական զօրամասերը պիտ նետւէին Բաքու՝ դաշնակիցներին զրկելու այն անհրաժեշտ նիւթերից, որոնք այնքան մեծ դեր խաղացին համաշխարհային պատերազմում: Այդ զիջումը պահանջում էին նաեւ զինակիցների ռազմագիտական եւ քաղաքական հաշիւները: Բաքուին տէր դառնալու համար թրքական ոյժերը պիտ ազատւէին հայկական ռազմաճակատներից. ահա՛ թէ ինչի հետեւանք էր տաճիկների կողմից մեզ արւած ժամանակաւոր եւ ակամայ զիջումը:

Դաշնակիցների համար՝ պատերազմի անյաջող ելքի դէպքում, Տաճկաստանը, մեր տկար Անկախութիւնը ստորագրելու փոխարէն, պիտի չտատանւէր գրելու Անդրկովկասում փակւած հայութեան տապանագիրը: Եւ մարդկութեան ծանօթ մասը - որ յաղթական լինելով հանդերձ թրքութեան ներեց հայութեան կէսի բնաջնջումը - իր պարտութեան դէպքում գուցէ եւ շնականութիւնն ունենար ոչ միայն սեղմելու, այլ եւ համբուրելու այն արնոտ ձեռքը, որ բռնամահ դարձրեց մեր ժողովրդի մի մասը:

Տաճկաստանը, չարաչար խրատուած բալկանեան ժողովուրդների ընթացքից, խորապէս համոզուած է, որ Հայաստանը - ինչ աշխարհագրական սահմաններով էլ լինի դա - իրեն համար ցանկալի թումբ - պետութեան դերը չի կատարի:

Տաճկաստանին պէտք է հայկական գերեզմանատուն եւ ոչ մի դէպքում կենդանի թումբ:

Վաղուայ Ռուսիոյ սարսափից խթանուած՝ իրերի թելադրանքով նա վերստին պիտ նետուի Անդրկովկաս, օգտուելով երրորդ Ռուսիոյ ժամանակաւոր, բայց անխուսափելի խռովայոյզ վիճակից: Նա պիտ առնի այդ քայլը, որովհետեւ նրա համար աւելի հեշտ է ռուսական վտանգից պաշտպանուել՝ յենուած կովկասեան լեռնային զանգուածին եւ իսլամ զանգուածներին, քան Արարատեան դաշտում, ուր հայ տարրը, հասկանալի պատճառներով, ո՛չ կը զինակցի Թուրքին, ոչ էլ կարող է հոգեբանօրէն չէզոք մնալ նրա նկատմամբ: Պարզ է, ուրեմն, որ բացի քաղաքական ձգտումը, Թուրքիան ունի զուտ ռազմագիտական պատճառ, վաղն առաջանալու դէպ Հայաստան, կոխելու Երեւանը եւ անցնելու հեռուները:

Այդ բոլորին հետ գիտենք եւ այն, որ կովկասեան իսլամ հանրապետութեանց մէջ քեմալական ազդեցութիւնն աւելի մեծ է, քան խորհրդային իշխանութեան. որ Անդրկովկասի ռազմագիտական բոլոր բանալիները այսօր գտնուում են Թուրքիոյ ձեռքին - Նախիջեւան, Ադրբէյջան, Դաղստան, շրջաններ, ուր, քեմալական սրի վաղուայ յաջողութեան համար, անաղմուկ գործի է լծուած համիսլամականների միտքն ու ձեռքը: Գիտենք այդ ամէնը: Պարզ է մեզ համար եւ այն, որ գալիքն աւելի ահաւոր պիտ լինի, քան այն, որ անցկացրինք 1918-ին: Թրքо-պարսիկ մերձեցմամբ Հայաստանը պիտ կորցնի դէպ արտաքին աշխարհը բացուող իր փոքրիկ դռնակը: Վաղը մեզ սպասում է անհաւասար եւ դռնփակ գոյամարտը:

Գիտենք այդ ամէնը, տեսնում ենք, թէ ի՛նչպէս աստիճանաբար բարձրանում է թրքական տապարը՝ մեր ցեղի գոյութեան ծառի արմատին իջնելու համար:

Գիտենք այդ ամէնը, անհանգիստ ենք, բայց ոչի՛նչ, ոչինչ չենք անում գալիք վտանգը ժամանակին զինաթափել կարողանալու համար:

* * *

Եթէ դո՛ւ, հա՛յ երիտասարդութիւն, պիտ շարունակես ապրել փոքրիկ հարցերի, փոքրիկ գործերի եւ նոյնքան փոքրիկ օգուտների սպանիչ մթնոլորտում, երբ կայ մեր հաւաքական գոյութեան սպառնացող մեծ վտանգը. եթէ դու էլ - նման անցեալ սերունդների - պիտ շարունակես փորձել սովորական, փոքրիկ ճիգերով կամ արտաքին օգնութեան յոյսերով լուծել մեր լինել - չլինելու ահաւոր խնդիրը, գլխովին չկորչելու, ինչպէս եւ

մարդկութեան արգահատանքից միանգամընդմիշտ ազատելու խնդիրը, դու արդարացրած չես լինի ո՛չ քեզ, ո՛չ էլ քո ժողովրդի յոյսերը:

Եթէ ցանկութեան դէպքում դու պիտի չկարողանաս լինել աւելին, քան այն ինչ որ ես - այդ դէպքում վա՜յ ե՛ւ քեզ, ե՛ւ քո ժողովրդին: Ստեղծուած հոգեբանական մթնոլորտում հաւատաւորների եւ վրիժակների սերունդ դառնալու փոխարէն, դու նորանոր զոհեր կը հասցնես թրքական եաթաղանի համար: Սպասողական դրութիւնը ժողովուրդների կեանքում ժամանակաւոր զինադադար է էապէս եւ ոչ թէ զինաթափութիւն եւ non-agir, ինչպիսին է մերը: Ժողովուրդ, բանակ, կուսակցութիւն - սրանք երբեք այնքան ուժականական եւ լարուած չեն լինում, որքան իրենց սպասողական վիճակում, երբ այդ հաւաքականութիւնների մէջ կուտակուած կարողական ոյժերի մի մասը դառնում է կենդանի, ներգործօն, գիտակցական, որի ընթացքում հոգեպէս աճում են, հզօրանում այդ վերջինները:

Խորապէս գիտակցուած չէ մեր անցեալը, ստեղծագործ չէ մեր ներկան:

Դու տկար ես եւ անպատրաստ - ահա թէ ինչո՛ւմն է քո ժողովրդի դժբախտութիւնը:

Դու այսօր այն չե՛ս, ինչպիսին որ պիտ դառնաս հրամայողաբար: Տկարութիւնը, միշտ էլ պատժւում է՝ վաղ թէ ուշ: Եւ վաղը քո տկարութեան պատճառով, չարաչար պիտ պատժւի մեր ժողովուրդը: Չէ՛, չէ՛, դու իրաւունք չունես տկար լինելու, գօտելոյծ վիճակում՝ երբե՛ք, որովհետեւ քե՛զ պիտ վիճակւի վաղը վարելու հայութեան ճակատագիրը: Դու պիտ լինես հզօր՝ հրաշագործելու աստիճան, որպիսին դառնալու համար, իմաստութեամբ օգտւել պիտ կարողանաս Գիտութիւնից եւ Դաստիարակութիւնից, որոնք շարունակում են մնալ վերջին խաղաթղթերը մեզ նման ապագան վտանգւած ժողովուրդների համար:

Դու պիտ առաջնորդւես ցեղային բարոյականով, որ պահանջում է զարգացումը որոշ հոգեկան յատկութիւնների եւ արւեստագիտական կարողութիւնների՝ էապէս անհրաժեշտ մեր ժողովրդի գոյութեան պահպանման համար:

Թողած ներքին անփառունակ ճակատները, որոնց վրայ հայրերդ տարիներէ ի վեր ընդունայն կորովաթափ կը լինեն, դու բովանդակ ոյժերդ գործի պիտ դնես, գլուխ հանելու մեր ժողովրդի կատարեալ հոգեբանական եւ թեքնիքական սպառազինութիւնը:

* * *

Գիտեմ, ընթերցո՛ղ, երկարօրէն ինձ լսելուց յետոյ, պիտ ուզէիր, որ քեզ տրւէր մի գործնական նախագիծ:

Ահա՛ դա, ընդհանուր գծերով, որ գործի եւ փառքի ընդարձակ դաշտ պիտ բանայ քո սերունդի առջեւ:

* * *

1. - Վտանգը

Աւելի քան հաւանական է, վաղ թէ ուշ, թուրքերի ներխուժումը Անդրկովկաս, որի դէպքում երկրի հայութիւնը դարձեալ պիտ ապաւինի միայն եւ միայն իր ոյժերին՝ չգաղթելու եւ չբնաջնջուելու համար: Ներխուժումը հնարաւոր եւ հաւանական է.

Ա) Ռուսիոյ մէջ մեծամասնականների պարտութեան դէպքում:

Բ) Եւրոպական որոշ պետութեան կամ զինակցութեան կողմից Տաճկաստանը որպէս գործիք Խորհրդային Ռուսիոյ դէմ գործածելու դէպքում:

Գ) Տաճկաստանի՝ իր արեւելեան սահմանները ռազմագիտօրէն ապահովելու փորձի դէպքում, որ ասել է՝ Երկրի հայութեան բնաջնջմամբ կամ տեղահանութեամբ, թաթար Ադրբէյջանին միանալու եւ այլ հաւանական դէպքերում:

2. - Վաղուայ մտահոգութիւնը

Վաղ թէ ուշ, հայութեան պիտ տրուի տաճկահայկական հողերի մի մասը, որի պաշտպանութիւնը կազմակերպելու եւ վարելու համար մեր ժողովուրդը պիտ յենուի նոյնպէս, նախ իր սեփական ոյժերին:

3. - Փոխվրէժի անհրաժեշտութիւնը

Սարսափի եւ պարտուողականութեան հոգեբանութիւնից սրբագրուելու համար - հետեւանք՝ դարեր տեւող օտար տիրապետութեանց մեր հայրենիքում, եւ մասնաւորապէս, տաճիկների՝ Հայաստանում պարբերաբար սարքած կոտորածների եւ ունեցած զէնքի յաջողութեան - հայութիւնը, մենակ թէ զինակցաբար, պիտ կազմակերպի իր փոխվրէժի պատմական գործը, հրամայականօրէն պարտութեան պիտ մատնի Տաճկաստանը, որպէսզի հոգեփոխուի ու ապահովի իր ֆիզիքական եւ հոգեւոր գոյութիւնը:

4. - Նախապատրաստութիւն

Տաճկական վտանգը, Արեւելքի եւ արեւմտեան իսլամների Հայաստանի վրայով իրար միանալու քաղաքական ձգտումը, հայութեան երկրամասային պահանջը Տաճկաստանից, մեր փոխվրէժի հոգեբանական անհրաժեշտութիւնը - այդ պատճառներից ամէն մէկն առանձին պահանջում է անյապաղ եւ լրջօրէն նախապարաստուել վաղուայ համար:

5. - Վաղուայ պատերազմը

Դա, ըստ ամենայնի, պիտ լինի գերազանցօրէն քիմիական:

Հոգեբանականից եւ թեքնիքականից զատ բոլոր տեսակի գերակշռութիւնները - թւական, քաղաքական, աշխարհագրական եւ այլն - պիտ դադարին վաղը վճռական եւ բախտորոշ դեր կատարելուց: Վաղուայ

ճակատամարտերի բախտը պիտ վճռի մարդկային հնարագէտ միտքը եւ ոչ կենդանի ոյժը: Արուեստագիտութեան, տարրաբանութեան, էլեկտրոարուեստագիտութեան արագ եւ հրաշագործ յառաջադիմութեան մեր օրերում, երբ այդ վերջինների օգտագործման կարելիութիւնները պատերազմում դառնում են անսպասելի, մահացու գործիքների եւ ռազմանիւթերի յարաճուն ճոխացումն ու կատարելագործումը հնարաւոր պիտ դարձնի մեզ նման թեքնիքապէս տկար ժողովրդի գլխովին բնաջնջումը:

6. - Գերազանցելու միջոցներ

Թրքութեան ծանօթ առաւելութիւնները կարելի է եւ պէտք է արհամարհելի դարձնել մեր հոգեբանական եւ թեքնիքական գերազանցութեամբ, որպիսին հնարաւոր է եւ պիտ ձեռք բերել՝

Ա) Մեր գոյութեան եւ բնաշխարհի առարկայական պայմաններին համապատասխանող դաստիարակութեամբ: Վերադաստիարակութեամբ պիտ սրբագրել մեր ժողովրդի հոգեբանութիւնը, դարձնելով նրան իր ամբողջութեան մէջ ազգօրէն ինքնագիտակից, կորովի եւ մարտունակ:

Բ) Եւ անհրաժեշտ մասնագիտութիւններով: Մեր թեքնիքական գերակշռութիւնը պիտ ապահովենք, հասցնելով վաղւայ համար անհրաժեշտ քանակութեամբ հրաւեստագէտներ, մեքենագէտներ, քիմիագէտներ, ռազմագէտներ, հանքագէտներ, օդագնացներ, ինչպէս եւ ռազմամթերքի, թունաւոր կազերի, մահացու գործիքների արտադրութեանց մասնագէտներ:

7. - Վարիչ մարմին

Հայ զանգւածների վերադաստիարակութեան եւ անհրաժեշտ մասնագէտներ հասցնելու գործը վարում է Ազգային Ինքնապաշտպանութեան Վարիչ Մարմինը, ընտրւած՝ տեղական մարմինների կողմից:

8. - Տեղական մարմին

Ստեղծւում է ամէն մի հայաբնակ վայրում, նպատակ ունենալով՝

Ա) Ժողովրդականացնել ազգովին նախապատրաստելու անհրաժեշտութեան գաղափարը:

Բ) Հսկել տեղի հայ տարրի վերադաստիարակութեան գործին:

Գ) Հովանաւորել իր վայրի խոստմնալի եւ հայրենապաշտ պատանի - երիտասարդներին:

Դ) Ստեղծել նիւթական միջոցներ:

9. - Զինւորական յանձնախումբ

Նշանակւում է վարիչ մարմնի կողմից, որի գործը պիտ լինի՝

Ա) Հայ եւ օտար ռազմագէտների աջակցութեամբ մշակել Երկրի հայութեան քիմիական ինքնապաշտպանութեան ծրագիրը:

Բ) Եւրոպական եւ ամերիկեան քիմիարաններում, բարձր թեքնիք դպրոցներում, զինուորական ակադեմիաներում, հրարւեստագիտական գործարաններում հասցնել անհրաժեշտ թւով մասնագէտներ:

Գ) Իրազեկ լինել այն բոլոր ռազմարւեստային գիւտերին եւ նորոյթներին, որոնցով յարաճուն կերպով հարստանում է եւրոպական եւ նոր աշխարհի զինուորական միտքը:

Դ) Զինուորականացնել բոլոր տեսակի պատանի-երիտասարդական միութիւնները:

Ե) Ստեղծել զինուորական գրականութիւն:

10. - Հրատարակչական յանձնախումբ

Ունենում է իր օրգանը, որով՝

Ա) Հայ միտքն զբաղեցնում է մեր ժողովրդի գոյութեան պաշտպանութեան խնդրով:

Բ) Պայքարում է պարտւողականութեան ոգու, անգրագիտութեան եւ օտարացումի դէմ:

11. - Ազգային ուխտի դպրոց

Անսահմանօրէն անձնւէր, հայրենապաշտ եւ գաղափարական երիտասարդ գործիչներ հասցնելու համար, հաստատել ազգային ուխտի եւ ոգու դպրոց, որի կողմից՝ մեր ցեղի նիւթական եւ բարոյական ինքնապաշտպանութեան գործը դասաւանդւէր եւ հռչակւէր որպէս նոր կրօն:

12. - Նիւթական միջոցներ

Մեր ժողովրդի փրկութեան գործը վարելու համար անհրաժեշտ նիւթական միջոցները պարտադրօրէն հոգում է ի՛նքը՝ հայութիւնը, հետեւեալ ձեւով:

Ամէն մի հայ մարդ, ազգային տուրքի անւան տակ, վճարում է գաղիական մի ֆրանկ: Ամէն հայ ընտանիք՝ այնքան ֆրանկ, որքան անդամ ունի*:

---

* Չնչին տուրք, բայց հայրենասիրական, գիտակցական, փրկարար:

Կաթիլն ընկնելով ծովը՝ դառնում է ծով:

Նիւթականը չէ պակասելու: Օրւայ հայութիւնը հազարիցս աւելի մեռեալ ծախքեր է կատարում քան պէտք պիտ լինի՝ գծածս նախաշաւղի սահմաններում կազմակերպել ու վարել իր գոյութեան պահպանման գործը:

Միացրե՞ց Հայը իր չնչին նիւթական զոհաբերութեան՝ գիտակցութիւն եւ հայրենապաշտութիւն - ապահովւած է նրա փրկութեան գործը:

Նպատակադրւե՞ց՝ ցեղամիջեան պայքարում չկորչելու համար սպառազինւել հոգեբանօրէն եւ արւեստագիտաբար - հայութեան կը մնայ հայեացքը դարձնել դէպ վերեւ, տեսնելու համար հրեղէն նշանը - այն միջոցը, որով պիտ յաղթի դժւարութիւններին ու իր դարաւոր թշնամուն:

* * *

Անտառում նեղ ու դարձդարձիկ ճամբաների վրայ երես առ երես իրար կը հանդիպին առիւծն ու վագրը:

Նրանք կանգ կ'առնեն, գետնին մխւածի պէս, մարմինները կծկած ետեւի երկու ճկուն ոտների վրայ, պատրաստ ոստիւնի:

Ճիրանները դուրս, մազերը փշաքաղ, բերանաբաց, ամէն մէկը կամենում է զարհուրելի ծամածռութիւններով ահաբեկել, սրտաթափ դարձնել հակառակորդին եւ խեղդել...

Անսահման զգուշութեամբ, մէկը - միաժամանակ եւ միւսը - իր մի ոտը շարժում է քիչ ետ:

Քիչ անց, անաղմուկ եւ կամաց, նոյնն են կատարում մնացած ոտները: Եւ, գրեթէ աննկատելի՝ հակառակորդի համար, միաժամանակ հեռանում են իրարից: Սակայն, միշտ երես առ երես, մինչեւ որ երկուստեք նահանջը նրանց միջի տարածութիւնը կը դարձնի աւելի մեծ, քան պէտք է մի յանկարծական եւ դաւադիր ոստիւնի համար:

Այլեւս հակառակորդները դարձնում են իրենց թիկունքները, վերստանում իրենց բնական կեցւածքը, եւ, քաշւելով իրենց թագաւորութեան սահմաններից ներս, կորչում են անտառի մէջ:

* * *

Նոյնը, գրեթէ նոյն բանն է կատարւում եւ ազգերի կեանքում, երբ նրանք երես առ երես եւ սպառազէն հանդիպում են իրար, իրենց երկրի սահմանագլխին:

Վա՜յ նրան, ով տկարութիւն ցոյց տւեց. մա՛հ է:

Վա՜յ նրան, ով անկարող եղաւ անթարթափ ու շեշտակի նայելու հակառակորդի աչքի մէջ. մա՛հ է ստոյգ:

Կորած է այն կողմը, որ անզօր է սարսափ ազդելու, աւելին՝ աւելի սարսափելի լինելու, քան հակառակորդը:

Հա՛յ երիտասարդութիւն, վաղը, երբ թրքութիւնը փորձեց պղծել Հայրենիքիդ սահմանների սրբութիւնը, պիտ կարողանա՞ս աւելի սարսափելի լինել, քան թշնամին: Պիտ կարողանա՞ս վագրային կեցւածք ցուցադրել:

Պատասխանի՛ր, պիտ կարողանա՞ս...

13.

ԲԱԽՏՈՐՈՇ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Երբեք տեսնուած չէ, որ ժողովուրդն աւելին չտար, քան կարող են պահանջել իր առաջնորդները:

Ժողովուրդներն այն են, աւելի ճիշտը՝ դառնում են այն, ինչպիսին որ համարւում են իրենց մտաւորականութեան կողմից:

Մի ժողովուրդ, որ իր ղեկավար տարրերի կողմից համարւում է «փափկամարմին» կենդանիների տեսակից, երբեք չի լինի յաղթական ու յարգւած: Տկար, քաղաքականապէս մուրացիկ եւ դիպւածով գոյութիւնը քարշ տւող - ահա՛ նման ժողովուրդը:

Պարտւում է մի ժողովուրդ, հենց որ իրեն պարտւած է զգում իր մտաւորականութիւնը:

Կորած է այն ազգային դատը, որի ղեկավարները կորած են համարում զայն: Պայքարում տեղի է տալիս այն կողմը, որի առաջնորդող տարրերն առաջինն են յուսահատւում:

Այո՛, յանձին ժողովուրդների, միշտ էլ չափւում են իրենց մտաւորականութիւնները, յաղթում կամ պարտւում իրենց առաջնորդող տարրերը: Եւ չի պարտւում այն կողմը, որ չի ուզում պարտւել:

* * *

Պիտի չպարտւէր հայ ժողովուրդը եւ հոգեբանօրէն, եթէ նրա մտաւորականութեան մի խոշոր մասը չնետւէր պարտւողական ոգու գիրկը: Դժբախտաբար, այսօր նա ոչ թէ իրեն պարտւած է զգում, այլ եւ պարտւողական:

Նրա որոշ տարրերը մեր պարտութեան եւ բարոյալքումի օրերին ոչ թէ չկարողացան բարոյական շանթարգել հանդիսանալ զանգւածների համար, այլեւ պարտւողականութեան քարոզիչներ եւ բարոյալքիչներ դառան: Զուրկ՝ ապագայի զգացումից, ինչպէս եւ ազգային բարոյականից, նա առանց մի հատիկ իսկ հարւած փոխանակելու փորձի, թշնամուն յանձնեց իր դիրքերը, որին այնքա՜ն մեծացրել էր տկարի իր երկչոտ երեւակայութիւնը: Նա բառացիօրէն բաժանեց ճակատագիրը ծանօթ առակի այն դժբախտ եղնիկի, որը օդի մէջ քամուց տարուբերւող փետուրից սարսափահար, նետւում է... ուղղակի որսորդի գիրկը:

Նա նմանւեց այն զօրամասին, որ ոչխարների հօտի բարձրացրած

փոշու ամպը թշնամի համարելով, փախչում է գլուխը կորցրած եւ ընկնում... թշնամու ամրացրած բանակատեղին:

* * *

Ամենակարող է այն առաջնորդը, որ կարողանում է անպարտելիութեան հաւատ ներշնչել իր ժողովրդին:

Ժողովրդասպան է նա, որ իր նկուն կեցւածքով տկարացնում է իր ժողովրդի ոյժի եւ կարողութեան գիտակցութիւնը:

Վերջինին նմանուեց մեր մտաւորականութեան մի մասը: Տեղի տուեց առանց մի հատիկ պատւոյ վէրք ստանալու, նա փախաւ եւ ոչ նահանջեց կռւադաշտից եւ իր դասալիքի հոգեբանութեամբ բարոյալքեց թիկունքը:

«Վա՜տ է մեր ժողովուրդը, տգէտ, անարի»,- ամենուրեք յայտարարեց մեր սրտաթափ եղած մտաւորականը:

«Նա չի կռւում, նա չկռւեց եւ ի՞նչպէս կարող էր կռւել տաճիկ բանակի դէմ»,- գրեց ու տարփողեց ծանօթ մտաւորականը:

«Լինենք համեստ եւ բաւականանանք քիչով, ո՞վ ասեց, որ անպայման պէտք է անկախ լինել՝ ապրելու համար, ապրենք այնպէս, ինչպէս որ կ՚ուզեն թուրքն ու բոլշեւիկը եւ ոչ թէ այնպէս, ինչպէս որ հայ ժողովուրդն է ուզում»... ահա՛ այսպէս գրեց, խօսեց եւ դեռ չարախօսում է անմիտ պարտուողականը:

Տխուր, մեռօրէն տխուր է պարտուողական մտաւորականի պատկերը: Գլուխը կորցրած, նա այսօր ոչինչ չի խնայում վերջնական դարձնելու հայ ժողովրդի պարտութիւնը: Ազգային աստուածութիւնները մի ամաան ապուրի հետ փոխելուց յետոյ, նա այժմ իր վատութիւնը փիլիսոփայելով է զբաղուած:

* * *

Այլազան են, ընթերցո՛ղ, պարտուողական հայ մտաւորականի հոգեւոր դիմադրութիւնները:

Մէկն այդ փաղանգից հոգեւոր ստրկութիւն է քարոզում, յորդորելով հայութեան ապրել «խոնարհութեան հովտում» եւ էլ չերազել անկախութեան մասին:

Երկրորդը գտնում է, թէ թուրքից լաւը բոլշեւիզմն է, որի կարմիր փորձարկութեանց համար հայութիւնը հաւատարմօրէն պիտ նիւթեր մատակարարի:

Երրորդը՝ կենդանի հողմացոյց, ե՛ւ այս է, ե՛ւ այն:

Չորրորդը չգիտի, թէ ինչ է ուզում, ամէն ինչ է եւ ոչինչ:

Հինգերորդը... Նոյնն են բոլորն էլ էութեամբ՝ ստրկամիտ, տկար, պարտուողական:

Սրանք կ'ուզեն ապրեցնել հայութիւնը որպէս կենդանի ողորմելիութիւն, արտաքին ողորմութիւններով:

Խօսէ՛ք հետները, լսէ՛ք իրենց եւ պիտ հասկանաք սրանց խորշակահար հոգին, զոր մատնում են իրենց ամէն մի խօսքի եւ շարժուձեւի մէջ:

Սրանք ասում են, - եթէ ամէն ինչ դեռ կորած չէ, եթէ կարելի է եւ պէտք է որեւէ բան անել հայ ժողովրդի ճակատագրի դաժանութիւնը մեղմելու համար, այդ պիտ արւի վաղւայ սերունդների ձեռքով, եւ ոչ մեր, որովհետեւ այլեւս չենք ուզում մեր կերն ու հանգիստը զոհաբերել:

Օ՜, այդ եսապաշտ ու անարի արարածները: Եթէ սրանք հնարաւորութիւն ունենային հայ ժողովրդի գոյութիւնը զրընգ դրամի վերածելու եւ տրամադրելու իրենց հոգեպէս հաշմ եւ դիւրասէր սերունդին՝ այդ վերջինի հացն ու անդորրը ապահովելու համար, պիտի չնեղւէին ասելու՝ «մեզնից յետոյ թէկուզ ջրհեղեղ»:

* * *

Ուր մարդիկ խոստովանում են իրենց տկարութիւնը, բայց չեն ամաչում տկար լինելուց - հոգեւոր ստրկութիւն է տիրում այնտեղ: Այդպիսին են մերոնք, մեր պարտւողականները, տկար, բայց տկարութիւնից չամաչող:

Հոգեպէս կաթնեղբայր, իրար նման, որոնց մէջ կայ, սակայն, ամենավտանգաւորը: Դա ջատագովն է թրքական կողմնորոշման: Հոգեբանօրէն հասկանալի է եւ այդ ամօթալի երեւոյթը հայ մտաւորականութեան որոշ մասի մէջ: Վախը, սարսափը թշնամուց՝ սպանում է դէպ այդ թշնամին տածած մեր ատելութիւնը: Պիտ ներել թրքութեան եւ մօտենալ նրան,- ասում է այդ վերջինը,- քանզի մեզ ճակատագրուած է նրա անմիջական դրկիցը լինել, տկար հարեւանը:

Մտքի եւ հոգու ինչպիսի՜ աղքատութիւն:

Հեռատես դիւանագէտ չէ խօսողը, այլ՝ ծանօթ պարտւողականը, որ չի ամաչում ծիծաղելի դառնալ իր ողբերգանքի մէջ:

Ներե՜լ նրան, որից ծեծւել ես, թքւել, անարգւել:

Ներե՜լ նրան, որին քեզնից ուժեղ ես զգացել եւ ծունկի եկել նրա առջեւ:

Ներե՜լ իր տիրոջը, իր բռնակալին, իրեն յաղթողին: Ինչպիսի՜ մահացու տգիտութիւն եւ բարոյական անկում:

Իսկ եթէ թրքութիւնը, հա՛յ պարտւողական, կարիք չզգաց քո ներումի ստրկական արտայայտութեան եւ թքեց քո եւ քո ներումի երեսի՛ն: Իսկ եթէ թրքութիւնն ասեց. «Սրի քաշելով հայութեան կէսը՝ ես արձանի ու պսակի արժանի գործ եմ կատարել իսլամի համար: Եւ եթէ վաղը սուրս երկարեց քո միւս կէսի վզին, քո ստրկական ներումը չի փրկի քեզ»:

Եթէ այսպէ՛ս խօսեց Արեւելքի մարդատիպ բորենին:

Եթէ լեզուն դրուած լինէր միայն ճշմարտութիւններ ասելու համար՝ թրքութիւնը պիտ ասէր մեզ.

- Գիտեմ, որ իմ ներկայութիւնը Եւրոպայում շատ կարճ ժամանակի խնդիր է: Գիտեմ, որ այսուհետեւ առաջանալու մի հատիկ ճամբայ ունեմ՝ ռուսահայութեան գերեզմանի վրայով դէպ Անդրկովկաս: Գիտեմ, զգում եմ եւ այն, որ յետ այսու իմ գործը պիտ լինի - ծեծուել եւրոպական ոյժերից եւ ծեծել հայութիւնը, ծեծել ձեզ՝ վերջնականօրէն պարտուածի սպանիչ հոգեբանութիւնից զերծ մնալու համար: Աւելացնեմ եւ այն, թէ յաղթականի իրաւունքն է՝ զրկել պարտուածին փոխվրէժի դիմելու, ինձ վնասելու հնարաւորութիւնից:

Եթէ դարաւոր թշնամիդ այսպէ՛ս խօսեց քեզ հետ: Եւ կարիք կա՞յ խօսքի՝ թրքութիւնը ճանաչելու համար: Մի՞թէ խօսուն եւ հասկանալի չէ նրա հայադաւ լռութիւնը: Միջազգային բարոյակա՞նը: Բայց այդ երբւանի՞ց է որ գոյութիւն ունի դա: Արեւելքի խուժն ու ստրո՞ւկը, հակաբարոյական թուրքն ու հայ պարտուողակա՞նը հիմքը պիտի դնեն ցեղամիջեան բարոյականութեան: Վա՜յ ե՛ւ այդ բարոյականին, ե՛ւ հայութեան:

* * *

Երբեմն աշխարհի կարեկցութիւնը, երբեմն ծիծաղը շարժող մեր պարտուողականները կիսով չափ քաւած պիտ լինէին իրենց մեղքը, եթէ հայութիւնը ծիծաղելի չդարձնէին իր խոր դժբախտութեան մէջ: Այո՛, ծիծաղելի է տկարի ներումը, ինչպէս եւ նրա հաշտարար ոգին: Մարդկութիւնը, եւ ամէնից առաջ թրքութիւնը, իրաւացիօրէն, մեր ներումն ու հաշտ ոգին պիտ վերագրի մեր նւաստութեան եւ ոչ մեր մեծահոգութեան: Տկարին իրաւունք չէ տրուած մեծահոգի լինելու: Նա չի էլ կարող այդպիսին լինել: Մեր ներումը կը շարժէր աշխարհի նողկանքը միայն: Ներելով, մենք հաստատած կը լինէինք, թէ մենք արժանի էինք այն ամէնին, ինչ որ ապրեցրեց մեզ թրքութիւնը: Ապացուցած կը լինէինք եւ այն, թէ իսկապէս անկախութեան անարժան հաւաքականութիւն ենք, գոհ՝ մեր վիճակից:

Ներելով, մենք մատնած կը լինենք մի այլ բան, թէ մահացիօրէն տկար ենք, եւ թէ այդպիսին էլ պիտ մնանք յաւէտ: Իսկ նմանը պիտի չյանդգնի անկախ Հայրենիքի մասին երազելու, ինչպիսի աշխարհագրական սահմաններով էլ որ լինի դա:

Ներե՞լ էք ուզում - յաղթէ՛ք նախ:

Բայց թող չանհանգստանան մեր պարտուողականները: Մի օր հայութիւնը պիտ ների թրքութեան, բայց ոչ ծունկի եկած նրա առջեւ, պարտուելուց յետոյ, այլ նրան ծնկի բերած՝ ծեծելուց յետոյ:

Պիտ ներենք մի օր Արեւելքի չարագործին, բայց նրան պարտութեան մատնելուց յետոյ:

Ասւած է՝ «յաղթի՛ր եւ ապա անցիր պարտեալի կողմը»:

Մի յաղթութիւն - եւ մենք կը ներենք թրքութեան:

Կասկածո՞ւմ է մեր անօրինակ մարդկայնութեան մասին հայ պարտուողականը: Թող լսի, ուրեմն, մեր յաղթական նահապետի խօսքը.

«Բայց Հայկ վեհանձն ու բարեպաշտ, կուտայ դիականց պատուաւոր գերեզման բլուրին վրայ: Իսկ Նեբրովթայ մեծազանգւած մարմինը դիապատելով մեծաճոխ հանդերձանօք կը տանեն ի Հայս լեռնակեաց յաղթական արծիւք, ուր հիմա Թորգոմայ արքայական տան մօտ կը ննջէ զքուն յաւիտենական ազատազգաց ոխերիմ թշնամին»:

Ճիշտ այսպէս, հայկաբա՛ր պիտ վարւենք եւ մե՛նք թրքութեան մեռելոտիի հետ, նրա «մեծազանգւած դիակի» հետ, երբ որ յաղթեց մեր սուրը:

Մենք չենք ջախջախի մեր սւինից վիրաւոր թուրք զինւորի գանգը, որովհետեւ մերը չէ այն շնական վարդապետութիւնը, որ տարբերութիւն չի դներ չարի եւ բարու միջեւ:

Մենք չենք շնանայ նրա գեղեցկուհիների հետ, չենք կրօնափոխի նրա որբերը, քանզի մերը չէ այն ցեղը, որի մէջ դարերով եւ դարերով շունը աւելի՛ ոյժով է եղել, քան մարդը:

Մենք մարդ, աւելի քան մարդ կը լինենք թրքութեան հանդէպ, երբ մեր սուրը նրան ծունկի բերեց մեր առջեւ:

Իսկ մինչեւ այդ օրը, նա մեր գլուխը, իսկ մենք նրա գարշապարը պիտ փնտռենք: Որովհետեւ նա չի կարող մարդ լինել մեր նկատմամբ: Նա չի զղջայ մեզ հասցրած անլուր չարիքների համար, իսկ մենք ներելու համար պիտ ճգնենք լինել նրանից ուժեղ:

Ա՜հ, գիտեմ, չկայ աստւածօրէն աւելի վսեմ եւ գեղեցիկ շարժուձեւ, քան մեր սրից ու գնդակից զարնւած հակառակորդի վէրքերը կապելը: Ինչպէս չկայ աւելի բարբարոս արարք, քան վիրաւորներին նոր վէրքեր հասցնելը:

Գիտե՜մ, գիտե՜մ, արժի ներել, իրեն ուժեղ զգալու համար: Գիտե՜մ, աստւածային արարք է ներումը, բայց ուժեղի, յաղթականի:

Ներե՞լ էք ուզում - արիացէ՛ք, հզօրացէ՛ք, յաղթէ՛ք նախ:

* * *

Ասում են՝ մեր տխուր Արեւելքում նւաստութիւնը ծառայել է որպէս ինքնապաշտպանութեան միջոց:

Հայ պարտուողականները այդ զազիր զէնքից զատ այլ բան չեն գտել յանձնարարելու մեր ժողովրդին:

Չեն հասկանում կարծէք, որ նաստութիւն - ասել է շպարուած թուլութիւն, որ միշտ էլ - վաղ թէ ուշ - պատժւում է չարաչար:

Մեր միամիտները չեն հասկանում, որ նաստութիւնը ժողովուրդների համար աւելին չէ, քան փտած եղէգն, որին կռթնել են հրաւիրում հայութեանը:

Նաստութիւն, ներողամտութիւն, խոնարհութիւն. - սրանցով գուցէ եւ կարելի լինի երկարել հիւանդութիւնը, բայց այս բարոյազուրկ միջոցները չեն փրկի նրան ո՛չ հիւանդութիւնից, ո՛չ էլ մահից:

Փրկութիւն չէ հոգեվարքի երկարումը: Ինչպէս եւ ցաւերի ժամանակաւոր մեղմացումը, երբ հիւանդութիւնը պիտ շարունակի մնալ եւ սպառնալ մահւամբ:

Ցաւերը վերացնելու համար՝ հիւանդութիւնը, պատճառներն են, որ պէտք է բառնալ:

Թուլութիւնն է, որ պէտք է խաչ հանւի:

Անիծւած թուլութիւնը, որի պատճառով դարերով տառապանքի եւ ստորացումի դառն բաժակն է դատարկել մեր ժողովուրդը:

Գիտակցենք վերջապէս, որ ժողովուրդների բախտաւորութեան եւ անբախտութեան, հզօրութեան եւ տկարութեան աղբիւրը գտնւում է իրենց մէջ: Հայ հոգուց դուրս չէ եւ հայ տառապանքի, անլուր քաղաքական զրկանքների աղբիւրը: Հարազատե՛նք այդ ճշմարտութիւնը, հա՛յ երիտասարդ, հասկանա՛նք՝ փրկւելու համար:

Բայց մի՞թէ տկար ժողովուրդ է օրւայ հայութիւնը: Մի՞թէ նա կարող էր եւ տկար մնալ՝ իր կէսը թրքական վայրագութեան սրին յանձնելուց յետոյ: Մինչեւ մեր ցեղի մի մասի ողջակիզումը, դեռ հոգեբանօրէն հասկանալի էր մեր տկարութիւնը: Իսկ այսօր, երբ կայ թրքութեան կողմից մի միլիոն հայութեան ոչնչացումի աղաղակող փաստը, իրեն այսօր էլ տկար զգալ - կը նշանակի ապրելու անարժան լինել:

Չէ՛, չէ՛, չի կարելի հազար եւ հազար զոհեր տալ եւ մնալ նոյնը հոգեպէս: Չի՛ կարելի հազար եւ հազար մեռելներ ունենալ եւ բարոյական անզօրութեամբ տառապել: Դա կը նշանակէր մարդկային ցեղից չլինել:

Ա՜հ, մեռելների անչափելիօրէն զարհուրելի ոյժը:

Մի միլիոն անհանգիստ եւ վրէժխնդիր ուրւականներ - ահա՛ մեր ոյժը, որի նմանը չի ունեցել աշխարհի ոչ մի ժողովուրդ:

Բայց - ամօ՜թ մեզ - հայութիւնը չօգտւեց այդ ոյժէն, չօգտւեց, որովհետեւ շուտ, շատ շուտ մոռացաւ իր մեռելները:

Աշխարհը կը սպասէր, որ այն հրէշային չարչարանքներից, որոնց դատապարտեց մեզ «վայրագութեան, ծուլութեան եւ գողութեան միայն ընդունակ ցեղը», աշխարհը կը սպասէր, որ, ահա՛, հայ մտաւորականութեան շարքերից դուրս կը գան ծայրայեղապաշտներ, անհաշտներ՝ գայլի

հոգեբանութեամբ. կը սպասէր, որ ահա՛ հայ տառապանքը կը ծնի ուխտ-ւածներ, դեմոնական տիպեր՝ սրբազան խենթութեամբ: Կը սպասուէր, որ այլեւս հայութիւնը պիտ սովորի խօսել մարդկութեան հետ այնպէս, ինչ-պէս որ կարող էր եւ պէ՛տք է խօսէր բազմաբիւր ողջակէզների տէր ժողո-վուրդը: Բայց, աւա՜ղ, հայութիւնը, աննշան բացառութեամբ, շարունակեց մնալ նոյնը - տկար ու մուրացող:

Հայութեան ճակատագրի վարողները չգիտցան խօսել աշխարհի հետ, որ բնազդական արհամարհանք ունի դէպ տկարն ու լալկանը:

Գերմարդկային ցաւերից խելագարուածի լեզուով խօսելու փոխարէն, նա խօսեց կանացի քրիստոնէութեան լեզուով: Գերագոյն վշտի մէջ կատղե-լու փոխարէն, նա մնաց միեւնոյն «բնականոն ջղեր»ի տէր ժողովուրդը: Նա չխօսեց բռնամահ եղած հայութեան կէսի լեզուով: Նա, որ կարող էր այնպէս վարուել, որ թուրք պետութեան ներկայացուցիչները, Թուրքիոյ սահմաններից դուրս չերեւան. նա, որ կարող էր մի միլիոն չարչարամահ եղած Հայերի ուրուականներով - առանց բանակների եւ մարտանաւերի - սարսափով պաշարել Թուրքիան, կտրելով նրա յարաբերութիւնները արտաքին աշխարհի հետ. նա, որ կարող էր ահաբեկել մարդկութեան խղճմտանքը վարող հրէշների երեւակայութիւնը, որի վրէժխնդրական ամէն մի շարժուածեւը հիացումով պիտ լցնէր մարդկութեան սիրտը - նա ոչինչ արեց իր գերագոյն վշտից մղուած:

Եւ աշխարհը հիացում ու սարսափ զգալու փոխարէն, զզուանք ու զայրոյթ զգաց մեր նողկալի կանացիութեան հանդէպ:

Ինչո՞ւ այդպէս: Ինչո՞վ բացատրել այդ տխուր երեւոյթը:

- Մեր կուլտուրականութեամբ,- պիտ աճապարեն պատասխանել մեր պարտուողականները:

Կե՜ղծ եւ թքելի՛ կուլտուրականութիւն, որ կայանում է անհամ ոտա-նաւորներ գրելու եւ մի քանի եւրոպական լեզուներ գործածելու կարողու-թեան մէջ:

Ցիծաղելի՜ կուլտուրականութիւն, որ մեր ժողովուրդը դարձրել է որբ եւ որբախնամ:

* * *

Զայրոյթից չե՞ս դողում դու, հա՛յ երիտասարդութիւն, որ մի միլիոն արենակիցներիդ ողջակիզումն իսկ չկարողացաւ խռովել հայրերիդ մի մասի հոգեւոր մրափը: Դու չե՞ս դողում սրբազան կատաղութիւնից, որ մեր ցեղի միտքն ու բազուկը, իրենց վրէժխնդրական մոլուցքի մէջ, սատանայի հետ իսկ զինակցելու փոխարէն, մնացին գերին քաղաքական թոլսթոյականութեան:

Վրէժի ու քանդումի - աշխարհին ծանօթ եւ անծանօթ արուեստներին

աշակերտելու փոխարէն, որ վաղը ի վիճակի լինի հրով եւ երկաթով պատժելու բարբարոսութեամբ հիւանդ թրքութիւնը, քո սերունդն այսօր, իր հայրերի շնչով թրծուած, հետեւում է մի կտոր հաց ապահովող գիտութեանց:

Սթափի՛ր, հա՛յ մարդ, ուշքի՛ եկ, քանի դեռ ուշ չէ, այլապէս՝ մարդկութիւնը, որ դեռ սպասում է քո սրբազան խենթութեան, մի օր, յուսախաբ, պիտ թքի մեր ժողովրդի անունին:

* * *

Մարդը, որ ստրկացած է պարտուողական հայու մէջ, պիտ մարդկայնանայ:

Հայ մտաւորականութիւնը իր ամբողջութեան մէջ պիտ ազատուի ստրկական եւ սարսափի հոգեբանութիւնից:

Պիտ արիանայ նա:

Պէտք է ազատուել եւ ոչ թէ միայն ազատագրուել:

Մինչեւ որ հայ մարդը չզգայ իր ոյժի գերազանցութիւնը, չի ազատուի պարտուողական հոգեբանութիւնից, չի փրկուի նա:

Թրքական կողմնորոշում, ներում, հաշտութիւն - այդ ամէնը կոչուած է սնուցանելու մեր տկարութիւնը եւ նախապատրաստելու թուրք զէնքի վաղուայ յաղթանակը Հայաստանում:

* * *

Այսպէս, մեր մտաւորականութեան թեւաբեկ մասը, իր առաջնորդութեան ապաւինած ժողովուրդը վաղուայ յաղթանակի համար նախապատրաստելու փոխարէն, կլանուած է մի ամօթալի խնդրով.

- Օտար լուծերից ո՞րն է տանելին, ցանկալին, - ահա՛ հարցը, որով նա զբաղեցրել է հայութիւնը: Օտար տիրապետութեան դէմ անողոք պայքար կազմակերպելու եւ վարելու փոխարէն, նա առաջարկում է իր ժողովրդին ընտրել այս կամ այն օտար լուծը: Փոքրոգութի՜ւն, տգիտութի՜ւն, ստրկամտութի՜ւն:

Այդ հրէշները, միացած՝ հայ պարտուողականի մէջ, նրան մղել են ժողովրդասպանութեան:

Ժողովրդասպանութիւն, այո՛:

* * *

Ներսէս Մեծը, լսելով Հայաստանի գլխին եկած դժբախտութիւնների մասին, յունական օժանդակ զօրքերով կը մտնի Հայաստան:

Մերուժանը, հրամայելով բերդի պատերից կախ տալ հայ նախա-

րարների կանանց, կը թողնի Հայաստանի սահմանները եւ օգնութիւն կը խնդրի Շապուհից: Կը հասնեն պարսից զօրքերը եւ դաւաճանը կը շարժի Հայաստանի դէմ:

Կռիւը կը սկսուի Ձիրաւի տափարակի վրայ... երբ Ներսէս Մեծը կը բարձրանայ Նպատ լեռը, ձեռքերը կը բարձրացնէ դէպ երկինք եւ աղօթելով, կ'իջեցնի ձեռքերը, մինչեւ որ չեն յաղթի Հայերը:

Ահա՛ յաղթելու գաղտնիքը:

Ներսէս Մեծը լեռան վրայ! Ինչպիսի՜ վեհ պատկեր:

Ինչպիսի՜ վսեմական նիւթ հանճարեղ վրձինի եւ մտահայեցութեան համար:

Իսկ առաջնորդի համար՝ սկիզբն ու վախճանը իմաստութեան:

Ռազմավարի համար՝ յաղթելու գաղտնիքը, նշանակը այդ աստուածային գաղտնիքի, որ շարունակում է արձանացած մնալ մեր պատմութեան ոսկէ էջերից մէկի վրայ:

Մեծ Պարթեւը լեռան վրայ! Սիրում եմ ապրել ու վերապրել այդ կախարդիչ պատկերի գեղեցկութիւնն ու վեհութիւնը:

Նրա՝ իմ մէջ առաջացրած խոկումներից թելադրուած, ես յաճախ մտովի կ'այցելեմ մեր հին ու նորագոյն ռազմավայրերը, մեր պարտութեանց եւ յաջողութեանց պատճառներն ինձ համար պարզելու ցանկութեամբ:

Եւ գտել եմ, որ այն բոլոր դէպքերում, երբ Ներսէս Մեծի նման մէկը «բարձրացել է լեռը», երբ մեր ցեղը լարել է իր բովանդակ ոյժերը եւ չի տկարացել հոգով, մինչեւ որ տեղի կը տար թշնամին - մի՛շտ էլ յաղթութեան դիցուհին իր ոսկէ մատներով պսակադրել է հայ զինուորի ճակատը:

Իսկ երբ չի գտնուել պարթեւատիպ առաջնորդը, որ կարողանար լարուած պահել ժողովրդի ոյժերը, չթուլացնել ժողովրդի բազուկը, մինչեւ որ կը տկարանար թշնամին - երբ պակասել է կատարեալ առաջնորդը, պարտութիւնն ու ամօթն են եղել հայ զօրքի բաժինը:

* * *

Մի ժողովուրդ, որ եղել է եւ կարող է լինել ուժեղ, բայց իր մտաւորականութեան մի մասի հոգեւոր ծուլութեան բերումով շարունակում է մնալ տկար:

Եւ աշխարհը ասում է նրան - արիացի՛ր կամ մեռի՛ր:

Ոչ մի չար աստուածութիւն յաւիտենական թուլութեան չի դատապարտել քեզ, հա՛յ պարտուողական:

Դու տկար ես, որովհետեւ քեզ պակասում է գիտակցութիւնը ուժեղ լինելու կարելիութեան:

Քեզ տկար ես զգում, որովհետեւ հոգու արիութիւն չես ունեցել թրքութիւնը տկար տեսնելու:

Ոյժը չի պակասում քեզ, այլ՝ ուժեղ լինելու կամքը:

Պակասում է հայրենապաշտութիւնը, որ հզօրացնել գիտի:

Քեզ պակասում է բարձր նպատակը եւ ոչ զայն իրագործելու միջոցները:

Գարշի՛ր, գարշի՛ր թուլութիւնից - եւ պիտ ուզենաս լինել, եւ պիտ լինես ուժեղ:

Իսկ երբ քեզ հոգով ուժեղ զգացիր, պիտ տկարանայ թրքութիւնը, որին եւ պարտութեան պիտ մատնես, ներելու համար:

* * *

Ապառաժ լեռան կռթնած չեն մեր մտաւորականութեան եւ այն տարրերը, որոնք օրւայ անելիքները թողել են՝ մասամբ գալոց սերունդներին, մասամբ էլ՝ եւրոպական դիւանագիտութեան:

Կարծէք, սրանք էլ դեռ համոզւած չեն, թէ եւրոպական մարդկութեան համար միշտ էլ գետին փռւածը, միշտ էլ ընկածն է մեղաւոր:

Տկարը մեղաւոր է, որ տկար է - ահա՛ դատավճիռը:

Իր պետութեան շա՛հը, - ահա՛ գերբարոյականը պետական գործիչների համար: Սրանց սիրտը - Նապոլէոնի արտայայտութեամբ - գլխումն է լինում: Սրանց համար, նպատակը բարոյականացնում է այն բոլոր միջոցները, որոնք իրենց պետութեան ուժեղացման եւ բարեկեցութեան կը ծառայեն: Ազգային եսականութեան հզօրացումը - սա՛ է տիրող իրապաշտ քաղաքականութիւնը:

Ահա՛ թէ ինչու այս կամ այն պետութեան ճակատագիրը վարողները երբեմն իրենց թոյլ են տալիս արարքներ, որ թոյլ չէին տայ որպէս սոսկական մարդ: Արդ, թէ ինչու պիտ հասկանալ, եւ ոչ թէ դժգոհել եւ անիծել աշխարհը:

Ergo, միամտօրէն չպահանջենք որ աշխարհը լինի այն, ինչպէս որ մենք ենք ուզում, այլ՝ ազգովին մենք դառնանք այն, ինչպիսին լինել դա՛ է թելադրում:

- Եղի՛ր աւելի բարձր էակ, քան մարդը:

Ի՞նչ, երիտասա՛րդ հայութիւն, պիտ դառնա՞ս մեր դիւցազնախառն սերունդը, պիտ կարողանա՞ս կատարել ժամանակի պահանջը ու փրկել՝ ապագան վտանգւած մեր ժողովուրդը:

Ցանկութեան դեպքում՝ ԱՅՈ՛:

ՎԵՐՋԻՆ ԽՕՍՔ

Գերագոյն հաճոյք է ինձ համար՝ վերյիշել - թող յիշեցնեմ եւ քեզ, ընթերցո՛ղ - մի այլաբանական եւ իմաստալի պատկեր. Կարլ Հաուպտմանի ծանօթ թատրերգութիւնից:

Տարւայ այն եղանակն է, երբ բոլորը ձգտում են դէպ լեռները: Անսպասելիօրէն, «Հսկաների Լեռան» վրայ պայթում է փոթորիկը: Մարդիկ ապաստան են գտնում փրկարար տանը: Այնտեղ երգ, երաժշտութիւն, հանգիստ կայ: Դուրսը փոթորիկը կրկնապատկել է իր կատաղութիւնը: Երկնահաս կատարների վրայ յայտնւում է արծւահայեաց մի տղամարդ՝ ջահել, գլխաբաց, գանգրահեր: Նրա կողքից ընթանում է մի ամեհի զամբիկ՝ իր թեթեւօրէն թամբւած եւ ապերասան ձին:

Մէկը՝ պատկերը ոյժի, միւսը՝ խելայեղ թռիչքի:

Մարդը կանգ է առնում ժայռերի վրայ եւ խօսում ինքն իրեն: Յայտնւում է մի ուրիշը, սպառազէն հրեշտակի պատկերով: Առաջինը «Լեռների Պահակն» է, երկրորդը՝ համագերմանական Ազատութեան եւ Միութեան թեւաւոր բանբերը: Նայի՛ր եւ տե՛ս,- ասում է այդ վերջինը եւ նշանացի ցոյց տալիս ընկերոջ, բարձրացող փոթորկի ալիքները: Անհամար զինավառ զանգւածներ՝ ատելութեամբ գինով եւ ոգեւոր: Նրանք կուտակւում են Արեւելքում, Հարաւում, Արեւմուտքում: Շարժւում են լեռներով, գետերով, ծովերով: Նրանց ոտքի տակ տրորւում է եւ երկինքը, օդը: Գալիս են գերման մշտաջահել հայրենիքի դէմ:

Ժամանա՛կն է, ահազանգի ժամը: Լեռների Պահակը պիտ արձակի իր ճիչը, նա հեռուները պիտ նետի իր աղաղակը.

- «Հայրենիքը վտանգի մէ՞ջ է, արթնացէ՞ք»...

Կանչը գնում է, հասնում հեռուները, բայց մնում անարձագանք:

- «Մէկ է՛լ»,- թելադրում է Ազատութեան Ոգին:

- «Հայրենիքը վտանգի մէ՞ջ է, արթնացէ՞ք»...

Թոյլ արձագանք: Լռել են երգն ու երաժշտութիւնը փրկարար տանը, բայց ոչ ոք դեռ դուրս չի նետւել:

Անհանգիստ՝ Լեռների Պահակը նետւում է ձիու վրայ եւ շեփորում զարհուրելի ոյժով.

- «Հէ՞յ, հայրենիքը վտանգի մէջ է, արթնացէ՞ք, փրկէ՞ք»...

Այժմ ոտքի վրայ են բոլո՛ր, բոլո՛ր: Ամէն ոք աճապարում է դուրս եւ ի զէն:

Այժմ ոտքի վրայ է ողջ ցեղը եւ լսւում է նրա երգերից ամենագոռն ու էլեկտրացուցիչը:

* * *

Դու՛, հա՛յ երիտասարդութիւն, պիտ ուզէի, որ դու լինէիր «Լեռների Պահակ»ը մեր կեանքում:

Եւ պահապան հրեշտակը մեր Ազատութեան ու Միութեան:

Պիտ ուզէի, որ դու յաճախ ու յաճախ հայ աշխարհի ամբողջ տարածութեամբ արձակէիր անհանգիստ աղաղակդ.

- Հէ՜յ, վտա՜նգ կայ, թրքական վտանգը, սեւ ամպի պէս կախուած Հայաստանի գլխին, վտա՜նգ, զոր միայն եօթնիցս կոյրերը չեն տեսնում...

ՑԵՂԻ ՈԳՈՒ ՇԱՐԺԸ*

* *Տպագրվել է Սոֆիայում, 1932թ.:*

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

Ի՞նչ արժէ հանճարը, երբ նրան կը պակասէ մեծ սիրտը, երբ իր ողիմպիական մեծութեան մէջ նա անկարեկիր է, անխռով, պաղ: Անարժէք չէ՞ դա, երբ իր խօսքն իշխանութիւն չունի հոգիների վրայ եւ չի նպաստեր իր ժողովրդի հոգեւոր ինքնակառուցումին, երբ իր ցեղի ճակատագրի գերզգացողութիւնը չունի, եւ չի սնուցաներ իր ցեղի յաւիտենականութեան ձգտումը:

Միեւնոյն չէ՞, կայ թէ չկայ նմանը, երբ իր շրթունքներին ցեղի խօսքը չէ, եւ չգիտէ վերադաստիարակել, արիացնել ու վարել զանգուածները. երբ անզօր է ինձ, ձեզ եւ հազարներին զինուորագրել տալ մի մեծ ու արդար դատի եւ կարիքի դէպքում, իր ժողովրդի ծոցէն շանթանման հերոսներ քամել:

Արդարեւ, ի՞նչ արժէ հայ հանճարը, եթէ նա հոգետոհմութիւն չունի իր ցեղի անցեալ առաջնորդների հետ, երբ չունի եօթնիցս երջանկալի գիտակցութիւնը, թէ ինքը եղբայրն ու ցեղակիցն է Մեծն Տիգրանի եւ Աւարայրի անմահ Սպարապետի:

Ի՞նչ շահ նմանէն, թէկուզ նա մեծ արուեստագէտ լինի եւ արդար հպարտանքով կարողանայ ասել իր մասին. *Արուեստը՝ դա ես եմ:*

Արդեօք օրինաբե՞ր է դա, չգիտեմ. քաջ գիտեմ, սակայն, որ նմանը պիտի չդառնար Ահարոնեան՝ հոգեւոր առաջնորդը, տրիբունը եւ մարգարէն իր ժողովրդի:

Ամէն անգամ, ե՛րբ մտածումս կը դառնայ հայ մեծագոյն գրագէտի շուրջը, կը մղուեմ մտապատկերել մեծահանճար Միքէլ Անջէլօն, որը կուրանալուց իսկ յետոյ, կը շարունակէր ստեղծագործ քաղցրութեամբ շօշափել իր մարմարիոնէ կոճղը:

Ահարոնեանն էլ իր մարմարիոնն ունեցաւ - մեր ցեղի ճակատագիրը: Մե՛ծ արուեստ եւ վիրաւոր Հայրենիք: Այդ վերջինի վէրքերն սպիացնելու զօրութիւն պիտի ունենար առաջինը: Նա սպասաւորեց երկուսին էլ, առաջինի միջոցաւ՝ երկրորդին: Մէկը, որպէս միջոց-գրականութի՛ւնը, միւսը, որպէս գերագոյն նպատակ - ա՛զգը: Նա սիրեց երկուսն էլ եւ եղաւ աննախընթացօրէն մեծ իր սիրոյ մէջ: Մեծ արուեստագէտ եւ մեծ վշտակիր: Հայութեան այդ սիրաշատ հանճարը գիտցաւ իրեն տրուած աստուածային շնորհքը ծառայեցնել մեր ցեղի անհատականութեան թարմացումին, եւ ապա նրա վերածնունդի եւ ազատագրութեան սրբազան գործին: Եւ հէնց սրանում է Ահարոնեանի մեծութիւնը որպէս Հայ եւ Գրչի Մարդ:

* * *

Ամէն արուեստագէտ ստեղծագործութեան իր ճամբան ունի, որի վրայ նա - յաճախ իր առաջին իսկ քայլափոխերին - հանդիպում է աներեւոյթ մէկին, որին եւ դարձնում է իր անբաժան ուղեկիցը: Ներշնչող Ոգին է դա: Այդ ճամբի վրայ մէկը հանդիպում է իր սեփական Եսին եւ դառնում երգիչը իր փոքրիկ կարօտների: Միւսը հանդիպում է յաղթական մեղքին եւ ծնունդ տալիս սիրէնայի իր երգերին: Երրորդը - դասալի՛ք գրող, որը վիպական աշխարհ է փնտռում՝ մարդկային կեանքի անիծեալ հարցերից այնտեղ փախչելու համար: Անցողականից դէպի Յաւիտենականը տանող ճամբի վրայ՝ Ահարոնեանը հանդիպեց իր Ցեղի Ոգուն, եւ նրա հետ իջաւ *Արցունքի Հովիտը*, ուր նա ներքին հաղորդակցութեամբ իր ճակատագիրը կապեց Հայութեան ճակատագրին եւ սիրեց զայն մի նոր ու մեծ սիրո՛վ, յաւերժ անսպառելի եւ կենարար սիրով:

Ու այնուհետեւ Հայ Մտածումի եւ Զգացումի բոլոր ճամբաների վրայ նրան առաջնորդեց Ցեղի Ոգին:

Այսպէս, նա յետ մղեց անձնակեդրոն իմաստասիրութիւնը, որը փոքրիկ պատասխաններ ունի մեծ հարցերի համար, նա խորշեց Հեգէլէն, որը անդորրապէս կը փիլիսոփայէր Իենայի մէջ, թնդանօթների բոմբիւնների տակ, երբ իր շուրջը գերման հայրենիքը կը կործանուէր: Նա դարձաւ հայութեան Ֆիխտէն, որպէսզի հրեղէն խօսքով իր ժողովրդի սիրտը վառէ ու սրբէ: Ցեղը կռուի էր բռնուած մահուան հետ, եւ Ահարոնեանը մի նոր հոգեւոր ակորդ մտցրեց մեր կեանքի մէջ - սէր դէպ տիտանականը՝ պայքարի եւ զոհաբերութեան մէջ: Ժողովուրդը կը պատրաստուէր *նոր ճակատագիր* կռել իրեն համար, եւ Ահարոնեանը չուշացաւ հայ հոգեբանութեան պատուաստել հիացումը պայքարի եւ քաղցրութիւնը յաղթանակի: Նա մարգարէացաւ գալիքը եւ երիցս զանգահարեց հայութեան վարած վերջին ճակատամարտերի մասին: Նա երգեց մեր ցեղին յատուկ Վահէվահեան քաջութիւնը եւ հայ ռազմիկները մշակեցին Արուեստից Արուեստը՝ ժպտադէմ մեռնելու հոգեբանական արուեստը: Նա բորբոքեց ինքնազօրութեան ծարաւը երկու սերունդների հոգում, եւ գիտցաւ ներշնչել, թէ Հայաստան Երկիրը միայն ցանկալի որսավայր չէ իր գայլ հարեւանների համար, ո՛չ էլ յարմար վայր միայն անփառունակ գերեզմաններ փորելու, այլ, որ դա յարմար է նաեւ անկախութեան ու փառքի տաճարներ բարձրացնելու համար:

Արիադաւան եւ արի ժողովուրդ. փոքրաթիւ ազգ - մե՛ծ հոգի: Այսպիսին նա ուզեց տեսնել հայութիւնը, այնպիսի՛ն, որ կարողանար սեփական ձեռքով վարել իր ճակատագրի՝ նաւը, որն այլապէս պիտի չկարողանար անվտանգ անցնել պատմութեան Սքիլա Քարիբդիսէն: Եւ այդ իսկ

պատճառով, իր ցեղի կամքն աճեցնելու համար, նա քարոզեց ազգայնօրէն բացարձակապէս անհրաժեշտը: Նա գրել գիտցաւ սրտերի եւ խղճմտանքների մէջ, եւ գերազանցօրէն հոգենորոգ եղաւ նրա ցեղաշունչ խօսքը:

Նրա համար, գրականութիւնը, նախքան զամենայն, եղաւ մարգարէացումների միջոց, անյայտութեան մթնշաղի միջից իր ցեղի ապագան նշմարելու մի գերագոյն ճիգ: Գրականութեան մասին ունեցած այդ վսեմ ըմբռնումն էր, որ իր կեանքը վերածեց անվերջ հսկումների, որոնց ընթացքին Հայ Ճակատագրի հոգը տանող արուեստագէտը պիտի փորձէր երկիւղածօրէն բարձրացնել ապագան ներկայի աչքէն ծածկող վարագոյրը, եւ այսպիսով որոշ գաղտնիքներ կորզել ժամանակի ծոցէն: Բա՛ռնր գրականութիւն. որի մէջ ճշմարտօրէն մեծ են միայն նրանք, որոնց յաջողւում է *ներքին կապի եւ հաղորդակցութեան մէջ դնել անհատը ցեղի հետ, եւ այդ վերջինները՝ Յաւիտենականութեան հետ*: Ճշմարի՛տ գրականութիւն, որի մէջ մեծ են միայն նրանք, որոնք իրենց տաղանդի զօրութեամբ հարկադրում են մտածումի քրտինքը թափել այնպիսի խնդիրների վրայ, որոնց առջեւ ծիծաղելի են ե՛ւ ինքնաբաւ գեղարուեստը, ե՛ւ գեղարուեստական հաճոյքը: Ահարոնեանի եւ նմանների համար՝ ազգերի հոգեւոր կեանքի պատասխանատուն գրականութիւնն է, նաե՛ւ մղիչ ոյժը ցեղի կեանքի: Դա զօրաւոր ազդակն է մարդկային ցեղի թէ բարոյական շինարարութեան եւ թէ եղծութեան: Ահա թէ ինչու որքան սուրբ է գրագէտի կոչումը, այնքան էլ մեծ է նրա պատասխանատուութիւնը ազգի եւ մարդկութեան առջեւ:

Ազգային գրականութիւն - դա մեր հոգեւոր ծովն է, ուր գալիս թափւում են ցեղի ոգու վարար գետերը: Միաժամանակ, մեր նաւն է դա, որ մեզ դուրս է բերում լուսաւոր ազգայնականութեան ջրերէն՝ դէպի համամարդկայնութեան ովկեանը, դէպի «տիեզերական թախծ»ի ջրերը, եթէ կ'ուզէք…

* * *

Մովսէսը երկընտրանքի առջեւ…

Ո՞ւր գնալ: Դէպի ժողովուրդը եւ նրա հետ դէպի Անապա՞տ, թէ՞ մնալ Փարաւոնի անդորրաւէտ ապարանքում:

Մարգարէն,- ասում է Բիբլիան,- միացաւ ժողովրդին եւ դիմեց դէպի Մեծ Տառապանքը:

Այնուհետեւ 40 տարի ժողովրդի հետ եւ անապատում:

Ահա՛ այդտեղ մարդս ապրում է մէկէ աւելի կեանք եւ մեռնում մէկէ աւելի մահով:

Ահարոնեանը մնաց միշտ էլ ժողովուրդի ու նրա ճակատագրի հետ, եւ

նրա մէջ արթնցուց ցեղը, քանզի գիտէր հայոց աշխարհի իմաստունը, թէ այնտեղ, *այն ճակատամարտերում, ուր ցեղը չի բերում իր մասնակցութիւնը, ժողովուրդների համար անխուսափելի են պարտութիւնն ու կորուստը:*

* * *

Ինքն իր խօսքն է Ահարոնեանը:

Եւ որովհետեւ «զօրութեամբ բանի» պիտի ծառայէր իր ցեղին՝ նա դարձաւ դարբինը Հայ զօրաւոր խօսքի, եւ այսօր ազատ է կրկնելու Ֆիզուլիի խօսքը իր մասին. «Ես վեհապետն եմ խօսքի թագաւորութեան»:

Չկայ, չգիտեմ, պիտի լինի՞ հայ գրող, որ այնքան հարազատ լինէր մեր ժողովրդին, որքան Ահարոնեանը, որի խօսքի համար աննախընթացօրէն կարճ եղան դէպի հայ սիրտը տանող բոլոր ճամբաները: Եւ հասկանալի է դա: Չէ՞ որ նրա խօսքը ծնում է ցեղի ցաւէն եւ սնւում տառապանքի կաթով:

Հայ ոսկեբերանն է նա:

Նա խօսքեր ունի, որոնք եւ պուրպուրի բազմերանգութիւն ունին:

Խօսքե՛ր, որպէս վառուող կերոններ. խօսքե՛ր, որոնցից արիւն կը կաթի, խօսքեր, որոնք կը շնչեն, հոգի կու տան: Երբ կը խօսի Մասիսի եւ Արազի, հայ հողի եւ նրա վրայ քրտնող շինականի մասին, նրա հայրենաշունչ երկի մէջ ընթերցողը հայրենի խնկաւէտ սար ու դաշտերի բոյրը կ՚առնէ եւ Հայաստանի սրտի տրոփիւնը կը զգայ:

Երբ Հայրենիքի մասին է իր խօսքը՝ չի խօսիր, այլ կը խօսեցնէ, եւ կը մղուէք ընդունելու, թէ կայ մի գերագոյն հեղինակութիւն - ցե՛ղը - որ նրա շրթունքներով կը խօսէ: Կը խօսէ ցեղի մասին եւ կը թուայ, թէ նրա ամէն մի հայեացքը հարցնում է ձեզ. ի՞նչ, չզգացի՞ք ցեղի շունչը, որ ահա անցաւ:

Մե՛ծ տրիբուն, որի հոգին քաղել է այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ ու հերոսական Հայոց պատմութեան մէջ. եւ այդ իսկ պատճառով, որքան ուժեղ է իր ցեղասիրութիւնը, այնքան կատաղի է իր բարոյական զայրոյթը, որ սակայն, իր սիրաշատ սրտէն կը բղխէ:

Նա խօսքի կայծակներ ունի եւ գիտէ շանթել տկարն ու տգեղը, անփառն ու աննուէրը, հակառակայորդորն ու թունաւորիչը մեր ցեղի կեանքում:

Հանգոյն դասական մարգարէների՝ նա նզովել գիտէ, բայց իրեն յատուկ մեծ սիրով գիտէ եւ դափնեպսակել:

Գիտէ կանչել, - այն էլ ինչպէ՛ս:

Մեր Երկրագնդի վրայ, նրա նման, քիչերն են կանչել:

Խօսքի կանչողական ոյժը, միացած կանչողի հերոսական պաթոսին, Ահարոնեանին պիտի դարձնէր մեր Մացցինին, որն այսպէս կը կանչէր.

«Ելէ՛ք, ոտքի՛, ոտքի՛, ինչպէս փոթորիկը ձեր կլիմայի, զարհուրելի եւ արագահաս»… «Կանչէ՛ք մահը, եւ դա պիտի փախչի ձեզնից»:

Այսպէս կանչեց նա տարիներով, եւ անասելիօրէն տիրական եղաւ մեծ Կանչողի հոգեւոր իշխանութիւնը հայ սրտի ու մտածումի վրայ:

Այո՛, փառքով մեռնողն իր փառքէն, ամէն նահատակ իր սրբութենէն, հերոսն իր սրբազան խոյանքէն - այդ ամէնը մի բան կը պարտին Ահարոնեանի խօսքի արբեցուցիչ ազդեցութեան:

Նա գրել գիտէ խղճմտանքների մէջ եւ իր էջերը Լամընէի խօսքի իմաստն ունին. «Եթէ չարչարուէք, ձեզ հետ կը չարչարուեմ եւ ես. եթէ ճակատամարտում էք, ձեր կողքին կը կռուեմ եւ ես. անտեսանելի մի շունչ ձեզնից ինձ եւ ինձմէ ձեզ կ'անցնի»:

* * *

Ահեղ է նրա խօսքը - որոտմունք ու փայլատակում, երբ դա հայութեան կէսի ֆիզիքական եւ մտաւոր սպանիչներին է ուղղուած:

Նոյնն է դա, երբ նկարագրելով հայ աւեր գիւղն ու աւանը, կը սպառնայ կարծէք. չէ՛, օտարը չի կարող այդ անհանգիստ հողերի վրայ իր տունը շինել: Մարգարէաշունչ է, երբ ճակատագրին կ'ուղղէ իր հարցը. ի՞նչ, արարչագործութեան տարագի՞ր է Հայը. անհանգիստ հարց, որի պատասխանը օրուայ եւ վաղուայ մեր սերունդներէն կը սպասուի:

Մեծ լաւատես է նա՝ հակառակ որ իր խօսքը Հայաստանի աստուածազարդ բնութեան թախծութիւնն ունի: Նրա համար հայութիւնը դեռ ընդունակ է Հայկազեան արքայացեղի անօրինակ քաջութեան, Բագրատունիների աշխարհաշէն ոգուն եւ Մամիկոնեանների սրտառուչ արիասիրութեան - առաքինութիւններ, որոնց համադրութիւնը միայն կարելի պիտի դարձնէ մեր ժողովրդի ինքնիշխան գոյութիւնը: Նրա համար, իր ոյժերի մեծութեան դեռ անծանօթ Հերակլէսն է Հայութիւնը: Նա համոզուած է, թէ հայ մարդու «կաւ»էն կարելի է հոգեւոր գլուխ գործոցներ կերտել:

Մեծ հաւատաւոր է:

Քրիստոնէական նահատակներէն Վերոնսկին է նա, որ սպանուելիս կ'աղաղակէր միայն. «Հաւատո՛ւմ եմ». որը դաշունահար եւ այլեւս անկարող խօսելու, մատն իր արեան մէջ թաթախած կը գրէր գետնի վրայ. «Ես հաւատում եմ»:

Այս յաղթական հաւատով, ահա՛ նա, տասնամեակներ շարունակ, ուխտի, պայքարի ու կռուի տարաւ հայ ընտրանին:

Եւ իր օրով եւ օրհնութեամբ Հայ Աննիբաղը՝ ցեղի ընտրանին բերեց իր յաւիտենագիր ուխտը - *Նոր ճակատագիր կռել Հայ Հայրենիքի համար:*

Եւ այդ սրբազան Ուխտին ի խնդիր՝ դեռ լսւում է նրա ձայնը - *հպատակութի՛ւն ցեղին, քանզի դա է միակ ճշմարտութիւնը*:

Հնազանդութի՛ւն ցեղին, առանց որի փտութիւն ու անցաւորութիւն ենք ես, դու, բոլորս: Դեռ՝ որպէս բարձր զանգակատներէն իջնող ղօղանջ, լսւում է մեծ տրիբունի կանչը. Թո՛ղ, հա՛յ ժողովուրդ, թո՛ղ քո Սրբազան Զայրոյթի Գրքի մէջ գրուած մնայ թուրք անունը:

Զայրոյթը, հաւատա՛, միշտ էլ գտնում է իր զէնքը: Ի՞նչ եմ ասում. դա գտնում է աւելի հատու եւ մեծ թուով զէնքեր, քան պէտք են Արդարութեան գործը տեսնելու համար:

Եւ հաւատում է Հայը:

Ահա՛ այսպէս սպասաւորեց իր ցեղին Մեծ արուեստի անմահը, եւ այսօր ազատ է կրկնելու Միցկէվիչի խօսքերն իր մասին. «Ես եւ Հայրենիքս նոյնն ենք»:

Համբո՛յր, ջերմ համբոյր Հայ Հայրենիքին եւ իր մեծ վշտակրին, որի Արարատեան արեւով օծուն ճակատը այնքա՛ն սիրով հանճարի ձեռք շօշափեց:

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ
Հ. Յ. Դ. ՔԱՌԱՄՆԱՄԵԱԿԻ ԱՌԹԻՒ

Դարեր շարունակ փառքի ճանապարհից դուրս մղուած մի ժողովրդի վերածնութեան ճիգերի խտացումն է Դաշնակցութիւնը:

Նա ծնունդ առաւ պատմական այնպիսի մի վայրկեանում, երբ անցեալի մեծ ոգորումները դարձել էին հայ կեանքի հետ այլեւս օրգանական կապ չունեցող քարացած յիշատակներ, երբ խաւարելու աստիճան աղօտուել էին հայկական էութեան գունագեղ երանգները: Սեղմ ասած՝ երբ դեռ կը շարունակուէր մեր ցեղի հոգեւոր նահանջը, եւ այլեւս ակներեւ էր նրա գլխովին ոչնչացումը:

Դաշնակցութիւնը հսկայ մի փորձ էր՝ կանգնեցնելու հայութեան անկման անիւը. մի փորձ՝ ի մի ձուլելու հայ էութեան միմեանց լրացնող բեւեռները՝ Մամիկոնեան ռազմունակութիւնը եւ Բագրատունեաց կուլ-տուրական ոգին: Նա մի վճռական ճիգ էր՝ համադրելու մեր ժողովրդի կամքն ու ստեղծագործ հանճարը. մի ճիգ կրօնական համայնքը, որին, բռնութեան քմահաճոյքով, վերածուած էր հայութիւնը, վերստին դարձնելու պետութիւն եւ պատմութիւն կերտող մի ազգ:

Այն օրէն, երբ Մերձաւոր Արեւելքի կրկէսի վրայ երեւաց մոնղոլ թուրքը, մեր պատմութեան մէջ անպակաս դարձան պարբերական

կոտորածը, բռնի մահմեդականացումն ու արտագաղթը: Եւ որովհետեւ տիրապետող ազգը սեփական մշակոյթ չունէր, եւ նուաճուած ազգերին ռայա էր համարում, նա տիրեց ոչ միայն նուաճուածի վեհապետական իրաւունքներին, այլ եւ ժողովրդի կեանքին, պատուին եւ ինչքին: Ասիայէն մեր հայրենիքը խուժած բարբարոսը կը ձգտէր ո՛չ միայն դիմափոխել եւ դիմազրկել քաղաքակրթական արժէքներ ստեղծելու կարող ամէն ժողովուրդ, նա կը միտէր ո՛չ միայն ազգերի հոգին աղարտել եւ արմատախլել ամէն մշակոյթ, նրա մահացու հարուածն ուղղուած էր ո՛չ միայն իր նուաճած ցեղերի գոյութեան այս կամ այն ձեւի դէմ, այլ եւ նրանց ֆիզիքական գոյութեան արմատին իսկ: Նման միջավայրում եւ նման վտանգի հանդէպ, մեր վերածնունդը անխուսափելիօրէն պիտի ստանար բռնի յեղափոխութեան բնոյթ:

Եւ սկսուեց հայոց ազատամարտը:

Այս անհաւասար գուպարի մէջ հայութիւնը ցուցահանեց գծեր, որոնց մէջ արտացոլում են մեր ժամանակակից պատմութեան փառքն ու ողբերգանքը: Պատմութեան հանդիսավայրն իջան հերոսների ամբողջական համաստեղութիւններ, որոնք ըստ բանի եւ գործի, հոգենորոգ շեշտ մտցրին մեր գունատ կեանքում: Հսկայական էր յեղաշրջումը: Եթէ մինչ այդ հայը կրաւորականութեան մի տիպար էր, հիմա նա կեանքի էր կոչում ներգործօն հերոսականութեան դէմքեր:

Դաշնակցական հայդուկն ու իդէալիստ մտաւորականը ո՛չ միայն պատմական երեւոյթներ էին Հայաստանում, այլեւ՝ հոգեբանական գաղափարատիպեր մի ամբողջ ժամանակաշրջանի համար: Սրանց անձնուրաց նուիրումը հազուադէպ է ժողովուրդների կեանքում: Բարոյական հսկաներ էին սրանք, որոնց գործը բաւական է փառազարդելու նոյնիսկ ամենամեծ ազգերի պատմութիւնը: Ա՛հ, քանիները սրանցից մեր աշխարհի նազովրեցիներ հանդիսացան: Եւ ինչպէս Նազովրեցու մեծութիւնը նրա մէջ չէ, որ պատմութեան մէջ մի քանի փաստեր թողեց, այլ՝ որ զգայապաշտ մարդկութեան նոր իդէալներ տուաւ եւ մի այլ աշխարհի կարօտով հոգիները վառեց, այնպէս էլ մեր նորագոյն պատմութեան այս հերոսներն ու առաքեալները արժէք դարձան ո՛չ թէ իրենց յաջող կամ անյաջող կռիւներով, այլ՝ նրանով, որ առաքինութիւնների մի նոր տախտակ դրին իրենց ժողովրդի առջեւ: Նրանց գործի մեծութիւնը ո՛չ թէ փաստերի արձանագրութեամբ պիտի արժէքաւորուի, այլ՝ այն զօրութենական բարոյականով, որ կը բխի իրենց գործի էութիւնից:

Դաշնակցութիւնը մեր կեանքում ո՛չ թէ հասարակագիտական մի սոսկական երեւոյթ է, այլ՝ ամէնից առաջ եւ ամէնից աւելի՝ մի բարոյական յեղափոխութիւն: Արժէքների գնահատման նոր չափանիշ է Դաշնակցութիւնը, որով՝ եւ նոր արժէքներ ստեղծագործող: Առանց նուիրումի՝ չկա՛յ

բարձր ստեղծագործութիւն, իսկ նուիրումի գաղափարը հայութեան համար հոգեբանութիւն դարձաւ Դաշնակցութեան մարտիրոսագրութեան եւ հերոսականի շնորհիւ միայն: Այդ է պատճառը, որ *Դաշնակցութիւնը, իբր ներքին հոգեկան կարողութիւն*, չի խորտակւում անգամ արտաքին պարտութիւնների դէպքում. այդ է պատճառը նաեւ, որ անկախ պատմական դէպքերի դասաւորումից, նա մնում է իր ստեղծագործ ապագային հաւատացող իդէալիստ հայութեան հոգեւոր կորիզը: Հայութեան հոգեբարոյական այս յեղաշրջման մէջ է ահա՛ Դաշնակցութեան փառքը:

* * *

Դաշնակցութիւնը, սակայն, պիտի ունենար նաեւ իր ողբերգանքը: Չէ՞ որ ամէն հերոսական, ըստ էութեան, ծնունդ է մի ողբերգականի, ինչպէս վերջինս յաճախ արդիւնք է հերոսական մի տագնապի: Մերձաւորին ծառայելու, նրա կեանքը յեղաշրջելու առաքելութիւն ունեցող հերոսականը չունի աւելի ծանր ողբերգութիւն, քան այն, որ բանաձեւել է աւետարանիչը. «Յիւրսն եկն եւ իւրքն զնա ոչ ընկալան»… Ա՛հ, սա պատմական մի դէպքի եղերականը չէ միայն, այլ եւ ճակատագիրը բոլոր նուիրական վարդապետութիւնների, բոլոր անձնուէր առաքեալների: Ոչի՛նչ, ոչի՛նչ է այնքան խոր, որքան տառապանքը զոհաբերողի, որը իր գործի պաշտամունքը չի տեսնում, որը զոհաբերում է իր նմանների համար եւ մնում չհասկացուած:

Երկար դարեր մեր պատմութիւնը չէր արձանագրել մի շրջան, ուր այնքան հերոսներ իրենց կեանքը երկիւղածօրէն պատարագէին իրենց ժողովրդի փրկութեան գործին. բայց չի եղել եւ մի շրջան, ուր հայութեան որոշ խաւերը այնքա՛ն ապերախտ գտնուէին սեփական ժողովրդի ազատագրական փոթորկումների հանդէպ: Այդ տարրերը, ճիշտ է, չսպանեցին Դաշնակցութիւնը, բայց յաճախ խաչեցին նրա գաղափարն ու գործը: Հին Իսրայէլի մէջ մի չարութիւն կար, որ վերջ ի վերջոյ մեսիասպանութեան յանգեց: Հայութեան մէջ չարն ու բարին առեղծուածային մի քաոս էր, լի կարելիութիւններով որ, սակայն, բեւեռացումով խանգարում էր հայ զանգուածների միանպատակ կամեցումը եւ զայն, իբր ամբողջութիւն օրօրելով կրաւորականութեան եւ ակտիվիզմի միջեւ, մղում էր չգիտակցուած ինքնասպանութեան: Ընկերաբանօրէն, այստեղ շօշափւում է մեր վերածնութեան խնդիրը, որ, աւա՜ղ, թերի մնաց, եւ որի հետեւանքով մեր Գողգոթան եղաւ անասելիօրէն մեծ, իսկ մեր նուաճումը՝ համեստ: *Հայ յեղափոխութեան երեկուայ տագնապը պայմանաւորեց ո՛չ թէ թշնամու անպարտելիութեամբ, ինչպես այսօր էլ բարբաջում է հակադաշնակցական ստրկամտութիւնը, այլ՝ հայութեան հոգեբանական հատուածականութեամբ:* Ի՞նչ ճակատագիր կարող էր ունենալ մի ժողովուրդ, որի

զաւակների մի մասը՝ սրտի իւղը բոլորանուէր ազատութեան կանթեղը լեցրած կը ճենճերէր, իսկ միւսը, ո՛չ թէ միայն անընդունակ զոհաբերելու, այլ եւ յաճախ, որպէս թէ ազգը խարոյկից փրկելու միամտութեամբ, ասպարէզ էր իջնում հրշէջի դերում՝ հայ յեղափոխութեան կրակը մարելու: Այդ եղերական կացութեան պատճառով, հայութիւնը ներքուստ տարանջատուեց երեք մասերի - գաղափարի ակտիվիստներ՝ իմա՛ յեղափոխականները, կրաւորական ստրկականութեան ջատագովներ՝ հակայեղափոխականները, եւ կարելիութիւններով յղի, բայց դեռ այդ երկու բեւեռների միջեւ երերուող հսկայ բազմութիւնը: Ահա՛ կարեւորագոյնը պատճառներից, որ հայ յեղափոխութիւնը շատ դէպքերում մնաց անվճռական եւ պատմութեան ընձեռած նպաստաւոր վայրկեանները չկարողացաւ օգտագործել:

Այստեղ է ահա՛ մեր քաղաքական դժբախտութեանց ենթակայական կողմը:

* * *

Այսօր, 40 տարի յետոյ, կանգնած ենք պատմութեան առաջ: Շատ դէպքեր եկան ու անցան հայոց աշխարհով, դէպքեր, որոնք, սակայն, հայութիւնը իբր ամբողջութիւն, դեռեւս չկանգնեցրին իր փրկութեան ճանապարհին:

Դեռ այսօր էլ հայութիւնը մնում է պառակտուած, այնինչ, չկորչելու համար, հրամայողաբար, նա պիտի դառնայ մի եւ անբաժանելի հոգեւոր օրգանիզմ:

Կան եւ պայքարի մէջ երկու կողմեր:

Մէկը՝ հոգեփոխուած՝ իր հեռաւոր անցեալի եւ երէկուայ հերոսականի պաշտամունքն ունի: Միւսը՝ հայ ստրկականութեան աւանդագահը, որ սեփական պատմութեան մէջ միայն ստրկութիւն եւ պարտութիւն է տեսնում:

Մէկը ձգտում է ինքնահզօրացման եւ նուաճումների՝ յանուն ապագայի: Միւսը երես է դարձրած անցեալից, չի հաւատում ապագային, ցեղի հին փառքը նրան թւում է հեգնանք, իսկ յոյսը՝ արկածախնդրութիւն:

Մէկը՝ վրէժի ծարաւ ունի, սակայն, միայն իբր նախադրեալ իր ազգային գոյութեան եւ մշակոյթի: Միւսը՝ թէեւ թօթովում է մշակոյթի մասին, բայց հայրենի հողի համար մի կաթիլ արիւն չունի:

Մէկը ճիգեր է թափում կենտրոնացնելու ցեղի ուժերը մեր հաւաքական գոյութեան սպառնացող թշնամու դէմ, միւսը՝ թշնամի մեր ազատագրական պայքարին, զոհաբերութիւնից խուսափելու մտահոգութեամբ, ներքին ճակատ է ստեղծել, որի վրայ տարիներ է ինչ ընդունայն ուժասպառում է հայութիւնը:

Հերձասիրութեան հին դեւը գործի վրայ է եւ այսօր: Դա տարբեր անուան եւ ձեւերի տակ - նոյնիսկ Հայաստանից դուրս - շարունակում է օտարի հայասպան դերը, մեծապէս դժուարացնելով մեր ինքնապաշտպանութեան գործը:

Տեսնե՛լ ու զգալ, թէ ինչպէս մտակոյր հայը զէնքեր է դարբնում իր հարազատ եղբօր դէմ՝ ընդհանուր թշնամու գործը հեշտացնելու համար - ա՛հ այդ զարհուրելի ողբերգութիւնը դեռ այսօր էլ բաժինն է հայ յեղափոխականի:

Այդ պատճառով, դեռ այսօր էլ, հայութեան քաղաքական ճակատագրէն աւելի՛ դառն է նրա ներքին ճակատագիրը:

Ահա՛, դեռ եւս հայութեան որոշ տարրերի այս չյաղթահարուած ստրկամտութեան մէջ է Դաշնակցութեան ողբերգութիւնը:

Բայց ի՞նչ, զիջե՞լ հակադաշնակցական անարիութեան: Ո՛չ, ո՛չ, դա պիտի նշանակէր ազգասպանութիւն կատարել: Չէ՞ որ մեր կուսակցութեան հիմնադիրներն էլ, երբ առաջին անգամ ձեռք կը զարկէին մեր ազատագրական գործին, խորապէս կը գիտակցէին, թէ դարերի ստրկականութիւնը մեծապէս տկարացրել է հայ զանգուածների ազգային գիտակցութիւնը: Սակայն, նրանք հաւատացին մեր վերածնունդին, որ պիտի հոգեփոխէր մեր ժողովուրդը իր ամբողջութեան մէջ: Եւ եթէ այսօր տխուր պատմութիւնը մեր ժողովրդի հոգում մի երկուութիւն է ստեղծել, բնա՛ւ չի նշանակում, թէ մենք պիտի լքենք մեզ վիճակուած առաքելութիւնը՝ մեր հոգեբանութիւնը բովանդակ հայութեան հարազատել տալու: Դա չի նշանակում նաեւ, թէ մենք կարող ենք մոռանալ, որ մերազնեայ ներքին ամէն մի հակառակորդ անծանօթ մի եղբայր է, որին հոգեփոխելու պարտականութիւն ունինք:

Հասարակական իդէալները հետապնդող ամէն անհատ կամ կազմակերպութիւն վերջ ի վերջոյ յանգում է ինքնաժխտման: Դաշնակցութիւնը ցայսօր ձգտել է ազգ դառնալ, այսինքն՝ հայութիւնը կաղապարել ըստ իր էութեան: Ազգի մէջ ձուլուելով, ազգն իր մէջ ձուլելու մի փորձ է Դաշնակցութիւնը:

Յանգել այս տենչալի նպատակին՝ նշանակում է վերանալ իբր կազմակերպութիւն եւ մարմնաւորուել իբր ազգութիւն:

Ահա՛ թէ ինչո՛ւ կ'ուզէինք, որ իր քառասնամեակից յետոյ Դաշնակցութիւնը, իբր իր ցեղի առաջապահը, աւելի մեծ թափով ու նուիրումով շարունակէր Հայոց Ազատամարտը, ընդունելով, որ միայն ազատ եւ անկախ հայրենիքում հնարաւոր է մեր ամբողջական ժողովրդի կատարեալ հոգեփոխութիւնը:

ԻՄ ԴԱՒԱՆԱՆՔԸ

Կը խօսիմ մեր նորագիր ընկերներուն եւ կը զգամ, որ անոնք կը խորհրդածեն.

- Գաղափարօրէն կը հաղորդուիմ այսօր: Հաղորդութի՛ւն, սակայն, ի՞նչ է ատոր խորհուրդը:

Հոգեփոխուիլ եւ հոգեխառնուիլ Դաշնակցութեան ու անոր միջոցաւ՝ մեր ցեղին հետ:

Այո՛, ցեղահաղորդութիւն է այդ: Երբ դա կայ, կը նշանակէ, թէ մեր հոգին դարձած է ընդունակ ցեղապրումի:

- Նախ կը խոստովանիմ ճշմարտութիւնը, վասնզի որքան մեծ է ճշմարտութեան անհաղորդներու թիւը ժողովրդի մը մէջ, այնքան յաճախակի եւ սուր են պառակտումի դէպքերն անոր ծոցին մէջ:

Կ'ընդունիմ, թէ մեր նախորդները եթէ ստրուկ չդառնային իրենց եղբայրամերժ եսականութեան, ապա մենք դարերով օտարի ստրուկը պիտի չըլլայինք: Կ'ընդունիմ, որ *հայութեան ծերացած մեղքերը աւելի նպաստած են Հայաստանի կործանումին, քան պարբերաբար մեր երկիրը ներխուժող օտարներու սուրը:* Սեղմ ասած՝ հայութիւնը այսօր էլ իր անհամերաշխ անցեալի մեղքերն է որ կը քաւէ:

- Կը գտնուիմ Դաշնակցութեան սեմէն ներս եւ ահա ինքզինքս կը զգամ Ցեղիս հետ սրբազան դաշինքի մէջ, եւ կ'ընդունիմ թէ՝ *ամէն մէկ ԵՍ յանցաւոր ապստամբ մը, ամէն մէկ Եսականութիւն՝ բարոյական մահափորձ մըն է այն Մեծ Ամբողջին դէմ, որ ազգ կը կոչենք:*

Կը գիտակցեմ, թէ բաժանուելով ցեղէն, անհատը կը մեռնի հոգեպէս եւ ապա կը հաշտուի իր ցեղի մահուան հետ:

- Դաշնակցական եմ եւ ահա՛ կ'ընդունիմ, թէ անհատէն ու ընտանիքէն, կուսակցութիւնէն ու դասակարգէն բա՛րձր կայ եւ պիտի մնայ ցեղը, միակ ճշմարտութիւնը, որու ձայնին չհնազանդուող ազգը կը պատժուի առնուազն քաղաքական մահուամբ: Այդ սրբազան ձայնը զոր միայն հոգեւոր խուլերը չեն լսեր, կը պատգամէ մեզ՝ *թող ազգը կենտրոնացնէ իր բովանդակ ոյժերը եւ տրամադրէ զանոնք իր ինքնապաշտպանութեան գործին:*

Իսկ առ այդ՝ *եւ ոչ մէկ օր առանց նոր զէնք մը ճարտարելու թրքութեան դէմ*:

- Դաշնակցական եմ եւ ահա հայրենի երկիրս ու Հայութիւնը իմ շունչէս մօտ են ինձ:

Եւ արդէն կը զգամ, թէ սովորական զգացումներէ զատ ունիմ նաեւ

Հայաստանի զգացումը, որ ինձ հետ ծնուած չէր եւ զոր, սակայն, Դաշնակցութիւնը տուաւ ինձ:

Հոգեխառնուե՛ցի Դաշնակցութեան հետ եւ ահա՝ ինձ կը զգամ հպարտ ժառանգորդը այն Մեծ Ժառանգութեան, որ ՄԱՅԻՍ 28 կ'անուանենք: Եւ ալ չեմ նախանձիր ինձմէ նիւթապէս աւելի հարուստին ու բարեկեցիկին, բայց խորապէս կը ցաւիմ այն բոլորի համար որոնք ինձ հետ, իմ կողքին, Դաշնակցութեան դրօշին տակ չեն այսօր:

- Դաշնակցակա՛ն եմ: Այդ ըսել է, թէ այլեւս եսաթափ եղած՝ *կ'առաջնորդուիմ ներցեղային բարոյականով*, որ պիտի սրբէ իմ էութիւնը ստրկականութեան կեղտէն եւ եսականութեան հին թթխմորէն. այդ ըսել է, թէ *կ'ընդունիմ գաղափարական համամայրութեան օրէնքը, ըստ որի՝ իմ հետագայ կեանքը պիտի ըլլայ՝ ազգախոհ - նուիրում եւ անձանձիր ծառայութիւն իմ ցեղիս՝ կուսակցութեանս միջոցաւ:*

- Կ'ընդունիմ, թէ Դաշնակցութիւնը յայտնութիւնն է հայութեան հաւաքական հոգիին, այն ինքնագիտակից գործիքը, որուն միջոցաւ ցեղիս հոգին առաջ կը վարէ իր պատմական առաքելութիւնը:

- Անհատի աշխարհայեացքը պիտի համապատասխանի իր ազգի եւ պետութեան նպատակներուն. անոր երջանկութիւնը մէկ հատիկ արդարացում ունի՝ զայն ծառայեցնել իր ցեղի երջանկութեան:

Խորապէս կը զգամ, թէ իմ երջանկութիւնը ճիշտ հոն է, որ ես կ'աշխատակցիմ Դաշնակցութեան, եւ որպէսզի իմ գործակցութիւնը արգասաւոր ըլլայ, պարտք կը զգամ ինքնակատարելագործութեամբ գերազանցել Հայութեան արտաքին թշնամիներին, իբրեւ մարտական, բարոյական եւ իմացական ոյժ:

- Դաշնակցական եմ եւ ահա՛ կ'աշխատիմ օր, ժամ, վայրկեան առաջ խօսքիս ջերմութեամբ հալեցնել սառոյցէ այն լեռը, որ իրարմէ կը բաժանէ հայ կուսակցութիւնները:

Կ'ընդունիմ, թէ քաղաքական եւ դաւանական ամէն մէկ խտրութիւն վերջ պիտի գտնէ այնտեղ, ուրկէ կը սկսի հասարակաց միաբանութեան անհրաժեշտութեան գաղափարը: Կ'ընդունիմ նաեւ, թէ *մերազնեայ ներքին ամէն մի հակառակորդ անձանօթ ընկեր եւ եղբայր մ'է, զոր հոգեփոխելու պարտականութիւնն ունիմ:* Նմանները պէտք է միայն հոգեբանօրէն զինաթափել եւ ոչ թէ զգետնել, ոչնչացնել:

- Հայրենիքի շէնքը պէտք չէ բարձրացնել օտարատեացութեան ժայռին վրայ, այո՛. բայց եւ այնպէս *հայութիւնը մինչեւ կատարածն աշխարհի պէտք չէ ներէ թրքութեան: Եթէ այդ արնապարտ ցեղէն, որ կողոպտիչն ու սպանիչը հանդիսացաւ անզէն հայութեան կէսին, եթէ օր մը անկէ բուռ մը անսուրբ մոխիր մնայ, այդ մերժելի մոխրին իսկ դատի պիտի կանչել, անոր հետ նոյնիսկ դատաստանի պիտի նստիլ:*

- Կ'ընդունիմ ազգային զոհաբերութեան օրէնքը, որու համաձայն զոհասեղանին վրայ կրակը բնաւ պիտի չմարի:

- Վերջապէս, կը դաւանիմ Միացեալ եւ Անկախ Հայաստանը:

Եօթնիցս կը սիրեմ Հայ ժողովուրդը, որն ինձ համար կը մնայ իր ոյժերի մեծութեան դեռ անծանօթ Հերակլէսը:

Կը հաւատամ մեր ապագային: Կը զգամ ու մտովին կ'ողջունեմ Հայաստան Երկիրը, որ կար, որ երջանիկ էր ու մեծ եւ որ այդպիսին պիտի լինի վաղը…

ՄԵՐ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ՄԱՅԻՍԸ

1921-ի գարունն էր, եւ դեռ Եռագոյնը կը ծածանուէր մեր Հայրենիքի լեռնային երկրամասի վրայ:

Մայիս 28ի լուսաբացին լեռներէն երգ ու երաժշտութեամբ դէպի Սիւնեաց աշխարհի մայրաքաղաքն էին իջնում բուն Զանգեզուրի, Տաթեւի եւ Դարաբասի շրջանների ժողովրդական վաշտերը եւ բազմահազար մի զանգուած:

Մարտնչող հայութիւնը, Արարատի փէշերի կարօտը հոգու մէջ, այդ օրը իր զայրոյթը պիտի յայտնէր մարդկութեան խղճին:

Կէսօրուայ մօտ, բոլշեւիկեան կացինից ընկած Շիրինի, Խորէնու, Սաքոյի, Աշոտի եւ այլոց եղբայրական գերեզմանի շուրջը ստեղծուել էր սուիններ, սրերի եւ դրօշակների մի ամբողջ անտառ: Նուիրական հողաթմբի վրայ, արեւի տակ վեհօրէն ու հպարտ փայլում էին Սիւնիքի սուրն ու խաչը՝ առաջինը որպէս յաղթութեան, երկրորդը՝ տառապանքի խորհրդանշան:

Ջերմ խօսք կար:

Կար դառնութեան եւ ուրախութեան արցունք:

Այդ օրը ես հասկացայ, որ մի պետութեան բարոյական բովանդակ մեծութիւնը կամ ոչնչութիւնը կարելի է կարդալ նրա քաղաքացիներից մէկի դէմքի վրայ:

Այդ օրը սիւնեցու աչքերի մէջ կարելի էր տեսնել մեր ցեղի բովանդակ զօրոյթն ու թափը:

Այդ օրը յաղթական էր սիւնեցին, քանզի ցեղի ոգին կը շարժէր հայ վաշտերը, քանզի Սիւնեաց աշխարհում սպայէն եւ զինուորէն - հեղինակութիւնէն եւ հնազանդութիւնէն զատ կար մի Երրորդը՝ *Ցե՛ղը, մարտնչող Հայրենիքներում ամենուրեք եւ ամէն վայրկեան, ազգային բացարձակ պարտականութեան անուան տակ, ցցում է ռազմիկի առջեւ եւ ասում՝ «հնազանդուի՛ր ինձ, եւ պիտի յաղթե՛ս»:*

Ես այդ օրը տեսայ Սիւնիքը՝ իր ոյժի, փառքի իր մեծութեան մէջ: Նա հպարտ էր, որովհետեւ պարտութեան էր մատնել Ադրբէջանը, ջարդել տաճիկ գնդերը, զինաթափել բոլշեւիկեան 11րդ զօրաբանակը: Նա հպարտ էր, որովհետեւ հերոսական շարժուձեւով յետ էր մղել դէպի հայ մտաւորականութիւնը երկարող խորհրդային մահաբեր տապարը: Նա հպարտ էր, որովհետեւ իր մէջքը փրկութեան կամուրջ էր դարձրել նահանջող բիւրոց համար՝ դէպի Պարսկաստան:

Սակայն, սիւնեցուն ծանօթ աչքն այդ օրը նրա դէմքի վրայ իր պատմական գործերի գիտակցութեան հետ կը կարդար նաեւ իր դրութեան ողբերգութեան գիտակցութիւնը:

Այդ օրը բոլորը, ղեկավար թէ զինուոր, տղամարդ թէ կին, ընդհանուր խանդավառութեան մէջ լուռ եւ անխօս մտածում էին. «Ի՞նչ լաւ պիտի լինէր, եթէ մեր ռազմամթերանոցներն դատարկ չլինէին: Մենք ազատութեան համար թշնամու հարիւրապատիկ մեծ ոյժերի հետ չափուողներս հաց եւ փամփուշտ չունենք»:

Այո՛, շատ բաների հետ կռուի համար Սիւնիքը չունէր նաեւ ամենաանհրաժեշտը՝ հաց եւ ռազմամթերք: Նա գիտակցում էր, որ սիրամարգի պէս իր շքեղ թեւերի տակ պիտի չկարողանայ թաքցնել իր «սեւ ոտները», իր պահեստների դատարկութիւնը: Նա հպարտ էր, որովհետեւ յաղթել էր, բայց դառնացած էր, քանզի հնարաւորութիւն չունէր օգտուելու իր յաղթութիւններից:

Իրերի այս ողբերգական վիճակում, մեր անկախութիւնը պիտի ապրէր երկու ամիս եւս, որից յետոյ խորհրդային կարմիր լաթը, առանց յաղթանակի, չարափառօրէն պիտի ծածանուէր ե՛ւ Սիւնեաց աշխարհի վրայ:

* * *

Քաղաքական փոթորիկներից քշուած՝ մեր ազատութեան Մայիսը այսօր կը տօնենք օտար ափերի վրայ:

Տարագիր ենք, եւ դառնադառն մեր կեանքը - աքսորանքներէն ամենածանրը ու անփառունակը - մի հատիկ արդարացում ունի՝ զայն ծառայեցնել պարզելու համար մեր ժողովրդին վիճակուած աղէտների ներքին ու արտաքին պատճառները:

Այսօր հարկ է եւ պատշաճ փորձել, գոնէ տարին մի անգամ, ըմբռնել եւ հարազատել հետեւեալ ճշմարտութիւնները.

- Պատմութիւնը որդիների մէջ հալածում եւ պատժում է հայրերի մեղքերը հի՛ն:

Դարերի ստրկութեամբ, անապատում տառապանքներով եւ անհաշիւ զոհերով քաւեց հայութիւնը եւ դեռ քաւում է մեղքերն իր առաջնորդների:

Եւ դեռ պիտի քաւի, քանզի եսաթափ չի եղած եՀ օրուայ հայը, որին վաղը պիտի վիճակուի հայութեան ճակատագիրը վարելու դժուարին դերը:

- Հայ ազգը, որը դարերի իւր քաղաքական տնանկութիւնը աւելի իր առաջնորդների փոխյարաբերութեանց այլանդակութեան կը պարտի, քան իր երկրի աշխարհագրական դիրքին եւ արտաքին թշնամիների նուաճողական ախորժակներին, կորցնելով ներքին ստեղծագործ միութեան եւ միաբանութեան անհրաժեշտութեան գաղափարը՝ կորցրեց իր անկախութիւնը, ապա եւ իր երկիրը:

Աւա՜ղ, հին թթխմորից զերծ չէ հայ հոգին եՀ այսօր: Բաժանասիրութեան դեՀն է դեռ առաջնորդում մեր ազգային առաջնորդներին:

- Մեր ներքին իրերակերութեան բերումով՝ միշտ պատրաստի որս մեր գայլ հարեւանների համար՝ դեռ միամտօրէն դժգոհում ենք աշխարհի դէմ, որը քանիցս գործով հասկացրեց մեզ, *թէ ներքին պատճառներով իր ցեղի բովանդակ ոյժերէն օգտուելու անկարող ժողովուրդը բարոյապէս ազատ չէ արտաքին օգնութիւն ակնկալելու*:

Այսօր իսկ, երբ Հայաստանի վրայ վերստին ընկած է ստուերը մեծ եւ ահաւոր գալիքի, երբ մի մութ ամպ է կախուած մեր ժողովրդի գոյութեան եւ իր ապագայի միջեւ, մեր պատմութեան այդ սպառնական շրջանում իսկ չենք ուզում հասկանալ, որ աշխարհում մի հատիկ ոյժ գոյութիւն ունի միայն, որը յետ այսու պիտի լծել մեր հաւաքական ինքնապաշտպանութեան կառքին՝ որպէս ազգ հայօրէն ապրել ու շինարարել կարողանալու համար: *Ներցեղային բարոյականն է* այդ հրաշագործ ոյժը - ցեղակրօնութի՛ւնը:

Այս եսամերժ բարոյականը - որով օծուն մի նոր սերունդ միայն կարող է Մայիս 28ի պահակը հանդիսանալ - հրամայողաբար իր պահանջն է դնում մեր գաղափարախօսական եւ վարիչ մտաւորականութեան՝ *օր առաջ երես դարձնել հին էվդեմոնիստական բարոյականից, որը սնուցանելով մեր տկարութիւնները, դարերով մեր միջոցաւ մեր ցեղի թշնամիների յաջողութեան ծառայեց:*

Դա պահանջում է ապրել, մարտնչել ու առաջնորդուել ցեղօրէ՛ն:

Դա պահանջում է մեր մտաւորականութիւնից մեծագոյն զոհողութիւն՝ *յանուն եւ ի զոհ մեր Անկախութեան Մայիսի՝ մորթել իր ԵՍը:*

Բերուե՞ց այդ զոհը՝ մեզ պիտի յաջողի տալ աշխարհին, մեր անկախութեան իրաւունքը նաեւ սեփական ոյժերով պաշտպանել կարողանալու ապացոյցը:

Այլապէս - չէ՛, չէ՛, չեմ խօսելու այն մասին, թէ ինչ կարող է տեղի ունենալ Հայաստանի եւ Հայութեան հետ - այլապէ՞ս... ընթերցո՛ղ, լրացո՛ւր խօսքս...

ԵՌԱԳՈՅՆԸ ԿԱՐՄԻՐ ԼԱԹԻ ԴԷՄ

Սիւնիքը կը շարունակէր իր հիասքանչ եւ ծանր գոյամարտը եւ այդ ո՛չ թէ մեր ցեղի մի հատուածի գոյութիւնը փրկելու կամ Հայաստանի անարժան մասը մտնելու համար - կրկնակ նպատակ, որ իրագործուած էր արդէն - այլ յանուն հայ մտաւորականութեան, որը բոլշեւիկեան գազանից մազապուրծ եւ հալածական՝ ապաստան էր գտել մեր լեռնաշխարհում:

Կարմիր բանակը, գտնելով Հայաստանն առանց մտաւոր հայութեան, եկել ու բանակել էր Սիւնիքի պատերի տակ:

Որսը փախցրած շան նման, ցաւեցած ու կատաղած, նա կանգ էր առել Սիւնիքի սահմանների վրայ՝ դունչը դէպ մեր դիրքերը դարձրած: Միայն նապաստակ որսալու սովոր թշնամին, անցեալի արնոտ փորձերից խրատուած, գիտէր, որ Արաքսի սիւնիքեան ափում հայ մտաւորականութիւնը որսալու համար պէտք էր նախ սպանել առիւծը, որ կ'ապրէ սիւնեցու մէջ: Նա գիտէր, նա զգում էր այդ, եւ անոյժ ցասմամբ ու անվերջ, նա հաջեցնում էր իր շները՝ իր բանակը Սիւնիքի վրայ: Այսքա՛նը միայն: Սովորական չէր փախցրած որսը: Ձախողած էր մտաւոր հայութեան որսը թրքօ-բոլշեւիկեան հրամանատարութեան համար, մեր ժողովրդի ընտիր տարրերի զանգուածային որսը, որի յաջողութեան դէպքում պիտի գլխատուէր հայութիւնը:

* * *

Վաղուց էր կայացուած հայ մտաւորականութեան մահուան դատավճիռը: Պիտի մեռնի՛ մտաւո՛ր հայութիւնը՝ վճռել էին ընկերներ Էնվէրն ու Ձինովիեւը, երբ կ'ողջագուրուէին թաթար մայրաքաղաքում: Արեւելեան համայնավարների անդրանիկ համագումարից մի քանի օր անց, խորհրդային թերթերից *«Կարմիր Առաջապահ»*ը կը հրապարակէր հրէշների կողմից արուած հայ մտաւորականութեան դատավճիռը՝ «Դաշնակցութիւնը պիտի ոչնչացուի գլխովին»:

- Պիտի ապրի՛ հայ մտաւորականութիւնը, որ ապրի եւ հայ ժողովուրդը,- իր հերթին վճռել էր Սիւնիքը, եւ իր արծիւների հզօր թեւերի պաշտպանութեան տակ առել Արարատեան բազմահազար տարագրութիւնը:

- Մեզ յանձնէ՛ք հայ մտաւորականութիւնը, վայր դրէ՛ք ձեր զէնքերը եւ այսպէսով փրկէ՛ք ձեր գիւղերը, որոնք սրի եւ հրի պիտի մատնուին, եթէ չյարգուեց մեր վերջնագիրը:

- Ե՛Կ ԵՒ Ա՛Ռ,- կը պատասխանէր լեռնահայ գիւղացին, եւ կը շարունակէր սեւ ամպի պէս լեռներից կախուած մնալ ռուս, թուրք, թաթար զօրամասերի գլխին:

Թշնամին կը սպառնար Երասխի ափերի վրայ բեմադրել Շահ Աբբասի օրերը: Նա կաշուից դուրս կու գար հայրենի ջրերի մէջ խեղդելու *հայ ժողովրդի ուղեղն ու սիրտը*, բայց կը դժուարանար ասել իր բանակին. «Կա՛լ նորան»: Ապա, բոց ու կրակ արձակող վերջնագրերին կը յաջորդէին պատուիրակութիւնները, բանբերները, թռուցիկները՝ միշտ էլ յոխորտ ու սաստալի:

Թշնամին կը սպառնար, գրպանին մէջ սեղմելով բռունցքը:

Թուրքն ու թաթարը կը հաջէին իմ վաշտերի վրայ - այսքա՛նը միայն:

- Երկնքից չէ՛ շանթը,- թշնամու բոլոր յայտարարութիւններին կը պատասխանէր Սիւնիքը, եւ կը շարունակէր վարել հայ մտաւորականութեան փրկութեան գերագոյն գործը:

* * *

Այսպէս, Սիւնիքի սահմանների վրայ դէմ յանդիման ցցուած կը մնային մահուան բազուկը՝ զինուած խորհրդային տապարով, եւ պողպատէ թեւը արծիւ Սիւնիքի:

Դիւցազնական երկիրը շեշտ կը նայէր թշնամու աչքերի մէջ, նրան սանձուած պահելով իր պատերի տակ, որպէսզի կարմիր մահուան ճիրաններից մազապուրծ հազարները անխռով եւ անկորուստ անցնէին դէպի ապահով հորիզոններ:

Եւ անցաւ, ու փրկուեց արարատեան մտաւորականութիւնը, ուսանողութիւնը, սպայութիւնը:

Եւ այդ ա՛յն ժամանակ, երբ Սով-արքան կ'իշխէր Լեռնահայաստանում, երբ ժողովրդի խոշոր մասի սնունդը կը կազմէր իր դաշտերի բանջարեղէնը միայն, երբ դիրքապահ վաշտերիս կը պակսէր չոր հացն անգամ, երբ մեր պահեստներից մէկում կը ստացուէր հրանօթ փոխադրելու ուղարկուած գիւղացու դիակը՝ ողբերգական զոհը աստուածային պարտաճանաչութեան:

Եւ այդ՝ այդպէս աշխարհից կտրուած մի երկրամասում, ուր կռուողներին կը պակասէր ռազմամթերքը, կենդանի կապը արտաքին աշխարհի հետ, յոյսը՝ դրսի օգնութեան - այն ամէնը, որի չգոյութեան դէպքում արդիական բանակները ժամեր դիմադրելու փոխարէն թշնամու անարգանքին են յանձնում իրենց դրօշակները: Այս դժնդակ կացութեան մէջ, երբ տեղի են տալիս կառավարութիւններն ու բանակները, *սիւնեցին չլքեց իր վահանը եւ դրա շնորհիւ այսօր կ'ապրի արարատեան մտաւորականութիւնը:*

Ոչի՛նչ ունէր Սիւնիքը, գրեթէ ոչի՛նչ, կռիւ վարելու համար, բայց կար ստեղծուած վիճակի լրջութեան, ինչպէս եւ իրեն ընկած դերի բովանդակ գիտակցութիւնը, կար *ներցեղային բարոյականը*՝ զէնքերի զէ՛նքը հրաշագործ:

Իմ վաշտերը չլքեցին իրենց վահանը, որովհետեւ մարդկային տկարութեան փոխարէն նրանց կը վարէր ցեղի հրաշագործ ոգին: Նրանք խորապէս կը գիտակցէին, թէ *Հայաստանն առանց իր աշխարհագրական ողնաշարին, ինչպիսին է Սիւնեաց աշխարհը, իսկ հայ ժողովուրդն առանց իր մտաւորականութեան՝՝ չեն կարող գոյութիւն ունենալ*: Իմ զինուորը յստակօրէն կը գիտակցէր, թէ հաշտուել Սիւնիք ապաստանած տարագրութեան կորուստի հետ՝ կը նշանակէր հաշտուել հայ ժողովրդի չգոյութեան հետ: Դրա համար էլ, նա, որպէս համակ պարտաճանաչութիւն, մնաց պատնէշի վրայ, երբ կը վճռուէր հայ մտաւորականութեան լինել-չլինելու խնդիրը:

Այդ գիտակցութիւնից ահա՛ կը բղխէր նրա հրաշագործ պարտաճանաչութիւնը, որի առջեւ անզօր գտնուեցին թուրք, թաթար եւ կարմիր հորդաները:

ՀԱՅ ԶԷՆՔԻ ՓԱՌՔՆ ՈՒ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Բարոյապէս սնանկ է անհատը, երբ նրան պակասում է ազգային հպարտանքի զգացումը - ծնունդ՝ ազգային ինքնաճանաչութեան, որ իր սնունդը առնում է մեր պաշտամունքից դէպի այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ եւ հերոսական Հայրենի Պատմութեան մէջ: Առանց այդ բարձր առաքինութեան, բարոյապէս պակասաւոր է անհատը, որպէս մարդ եւ որպէս անդամ հաւաքականութեան: Այդ նուիրական զգացումը ինձ համար շարունակում է մնալ լուսաւոր հայրենասիրութեան, ցեղային բարոյականի եւ երջանկութեան անսպառ աղբիւր: Դա՛ էր լեռնաշխարհում իմ ժողովրդական գնդերին թեւ ու թափ տուողը: Դա՛ է եւ այսօր՝ իմ վտարանդի կեանքի դառնութեանց միակ մեղմիչը:

Իմ օրն իր որոշ ժամն ունի, երբ մտածումս սիրաշատ մօր պէս կը դիեցնէ ազգային հպարտութեան իմ զգացումը:

Իր սրբազան պահն ունի իմ ամէն մի օրը, երբ մտովին անհուն կարօտով կը սկսեմ իմ պրպտումները Հայոց Պատմութիւնը կերտող դարերի մէջ, քաղցրութեամբ կ'ոգեկոչեմ հայ զինուորին ու զօրավարին, որոնք հոգեկան գեղեցկութեան, անդիմագրաւելի արիութեան ու մեծագործ վեհութեան համբուրելի հետքերն են թողել Հայոց աշխարհում:

Եւ կ'ոգեխառնուիմ նրանց հետ, կը վերապրեմ նրանց գոռ յաղթանակները եւ կարօտով կը բաժանուիմ նրանցից, մի օր անց՝ նրանց ազնուացուցիչ ընկերութիւնը վերստին վայելելու ցանկութեամբ: Այսպէս կը սնուցանեմ ազգային հպարտանքի իմ զգացումը: Չտկարանալու համար՝ կը կատարեմ իմ ամէնօրեայ խորհրդաւոր զօրահաւաքը մեր պատմութիւնը զարդարող հոգիների, եւ կը խօսեցնեմ ու կը լսեմ նրանց:

Աստուա՛ծ իմ, որքան մեծ է արիների համաստեղութիւնը մեր պատմութեան երկնակամարի վրայ: Եւ որքա՛ն շլացուցիչ է նրանց փայլը: Պսակաւոր են, եօթնվէրք են բոլորը, փառքի սպիներ ունին բոլորը: Պարթեւ են, խայտակն, քաջագանգուր: Բիբերի մէջ շանթ ունին, ցասում, դառնութիւն:

Եւ ասում են նրանք.

- Չմնաց, աշխարհում գրեթէ չմնաց ցեղ, որ մեր բազկի ոյժը չզգար:

Պոռոտ Բաբելացին, Հռոմէացիները կաշառող, աղուէսաբարոյ Սասանները, Բիւզանդացիք նենգ, Արաբն ու Սկիւթացին ընչաքաղց, Ալանները, Քուշանները, Կովկասեան լեռնականները աւարառու - այդ բոլորի եւ շատ ուրիշների հետ, անհամար անգամ հարուածներ ու վէրքեր փոխանակեցինք: Եւ յաճախ յաղթեց մեր բազուկը:

Սակայն, քիչ անգամ մեր արիութիւնից լիուլի օգտուել կարողացաւ մեր ցեղը, քանզի կար ընտանի թշնամին, որի վատութեանց կը պարտի Հայոց աշխարհը իր դարերի քաղաքական խեղճութիւնը: Զինուորի եւ ռազմավարի մեր բազուկից աւելի օտարն օգտուեց, քան հարազատ երկիրը: Եւ դրա համար էլ մեր քաջութեան հռչակը տարածուեց շատ հեռուները՝ մինչեւ Ասորեստան, Հռոմ, Հրէաստան եւ լեռները Կովկասի: Տե՛ս, որքան շատ են մեր վէրքերը՝ ստացուած օտար հայրենիքների համար: Անպարտելի էր օտար բանակը, երբ նրա կողքին օտար զէնքի յաջողութեան համար կը կռուէր եւ Հայը, մանաւանդ, երբ դա կ'առաջնորդուէր հայ զօրավարի կողմից: Մասնաւորապէս Պարսիկն ու Բիւզանդացին չարաչար շահագործեցին հայ արիութիւնը: Այդ ազգերի անկայուն գահերի համար հայ արիութիւնը յաճախ հանդիսացաւ որպէս ուժեղ սիւն:

Մեզ զբաղեցնելով իրենց արտաքին թշնամիների դէմ, նրանք մեր արիութիւնը ծառայեցրին որպէս անխորտակելի պատուար իրարու դէմ: Պարսիկն իր փառքի կէսից աւելին մեզ, մեր արիութեանը կը պարտի: Խոշոր բաժին ունենք եւ յունական փառքի մէջ…

Այսպէս, որքան հպարտ, այնքան տխուր է շեշտը զէնքի իմ եղբայրների, զորս կ'ոգեկոչեմ եւ կը լսեմ ամէն օր:

* * *

Դատապարտելիօրէն տկար է ժողովուրդը առանց ցեղագիտակցումի:

Առանց ցեղակրօնութեան՝ այլ բան չէ դա, եթէ ոչ-կենդանի զգեստը ցեղի: Սակայն ժողովրդի մէջ արթնացա՞ւ ցեղը՝ մարդկային հոգին սրբւում է բոլոր տեսակի արատներից ու տկարութիւններից. դա դառնում է համակ սէր ու նուիրում դէպի մերձաւորը՝ միշտ պատրաստ մեռնելու այդ վերջինի համար: Այդ դէպքում, անհատը իր մերձաւորի մէջ տեսնում է իր անձը՝ այլ պատկերի եւ անուան տակ:

Արթնացա՞ւ ցեղը՝ ժողովուրդը կարելիութիւն է ստանում կուրծք տալու ամենամեծ վտանգներին եւ յաղթահարում ամենածանր փորձութիւնները, որովհետեւ այդ վիճակում նա իրենից ներկայացնում է մի հաւաքական հոգի՝ ինքն իր մէջ ազատագրուած, ամբողջացած ու յաղթական:

Երբ ցեղօրէն կ'ապրի ժողովուրդը՝ թշնամուց ստացած ամէն մի վէրքի ու անարգանքի մրմուռը խորապէս կը զգայ նրա իւրաքանչիւր անդամը:

Այսպէ՛ս է ստեղծւում այն հաւաքական Սիրտը, որից ծնունդ են առնում սրտով զօրաւոր Վարդանները, Գայլ Վահանները, Մուշեղները:

Իսկ յայտնուեցի՞ն նմանները՝ այլեւս ժողովուրդը դառնում է ցեղի բարկութեան գործիքը, այլեւս ժողովուրդ-բանակի մէջ իրար են հանդիպում եւ համբուրւում Ղեւոնդ Երէցներն ու Մամիկոնեանները - հայ լուսակիրը, սուրբն ու հերոսը - որոնց ղեկավարութեամբ՝ վտանգի բռնուած ժողովուրդը իր ամէն մի հակահարուածի մէջ դնում է իր ցեղի մխացող կատաղութեան ամբողջ թափը:

Եւ յաղթանակում է:

Ասածիս Հայոց Պատմութի՛ւնը վկայ:

ԱՆԵՐԵՒՈՅԹ ԴԱՏԱՒՈՐԸ

Սիւնիքը կը չափուէր թուրք, թաթար եւ կարմիր հորդաների հետ: Կտրուած էինք աշխարհից, պաշարուած: Ռազմամթերք չկար, պակասում էր հացը:

Այդ գերազանցօրէն ծանր օրերից մէկն էր: Շրջագայում էի ճակատէ ճակատ, դիրքէ դիրք՝ զօրամասերս հոգեպէս գօտեպնդելու համար:

Արեւիքի հարաւ-արեւմտեան ռազմաճակատներից մէկում, Ալագեազի բարձունքների վրայ, մօտեցաւ ինձ հարիւրապետներից մէկը.

- Պարո՛ն սպարապետ, անկարելին կարելի դարձնելով մենք թշնամու հետ չափուեցինք մինչեւ օրս. չէ՞ք կարծում, թէ այլեւս անկարելի է դիմադրել:

Զուզեցի իսկոյն եւ եթ պատասխանել նահանջի մասին մտածող վաշտապետիս, որը կարծես դադարել էր գիտակցել, թէ տեղի տալ այդ կէտի վրայ՝ կը նշանակէր թոյլ տալ թշնամուն Արեւիքի հայութեան գերեզմանի վրայով միանալ թաթար Ադրբէջանին: Հրամայեցի կանչել բոլոր ղեկավարներին: Եկան:

Շատերն, առանց արտայայտուելու, մատնում էին իրենց անհանգստութիւնը մեր հետագայ յաջող դիմադրութեան կարելիութեան մասին: *Նախ հոգեպէս են պարտուում եւ ղեկավար տարրերը:* Եւ թշնամու յաջողութիւնը սկսւում է հէնց այն վայրկեանից, երբ իր դէմ կռուող բանակի հրամանատարութեան մէջ սկսւում է տկարանալ յաղթանակելու հաւատը: Զօրքը նման դէպքերում բնազդաբար զգում է, թէ ինքն այլեւս բարոյապէս անտէր է, անգլուխ:

Հոգուս աչքերով տեսնում էի պարտութիւնը՝ կախուած մեր գլխին: Մենք պարտուած էինք արդէն. մնում էր, որ թշնամին արիութիւն ունենար հազար քայլ առաջանալու, որպէսզի մենք լքէինք մեր դիրքերը:

Երբեմնակի լսւում էր գնդակների չար երգը եւ խռովում գիշերուայ լռութիւնը:

Նահանջելու տրամադիր վաշտապետս սպասում էր պատասխանի: Ես խորհրդածում էի: *Հերիք չէ ասել՝ հրամայում եմ կռուել, մեռնել:* Նման վայրկեաններում, անզօր են հրամանն ու սպառնալիքը: Փորձով գիտէի այդ, եւ շարունակում էի դեռ մտմտալ: Խոհերս սկսել էին բիւրեղանալ. արդէն գիտէի ասելիքս եւ անելիքս, բայց եւ այնպէս, շարունակում էի լուռ մնալ, երբ կորովաթափ վաշտապետս խզեց լռութիւնը.

- Ի՞նչ էք մտածում, պարո՛ն սպարապետ:

- Այն, հերոս վաշտապետս, որ դու, ինչպէս տեսնում եմ, եւ մի քանի ուրիշները մոռացել էք հայոց պատմութիւնը, որը մեր կռիւներով չէ՛ սկսուել եւ մեզնով չէ՛ վերջանալու: Այս լեռների վրայ կռիւներ են տեղի ունեցել մեզնից առաջ, տեղի պիտի ունենան եւ մեզնից յետոյ: Ասացէ՛ք, ի՞նչ անուն կը տայիք Դաւիթ Բէգին, եթէ մարդկային այս կամ այն տկարութիւնից մղուած նա Սիւնեաց աշխարհը յանձնած լինէր թուրք ու թաթար հորդաներին:

Մեզնից առաջ այս լեռների վրայ կռուող հայը խորապէս գիտակցել է, թէ *Սիւնիքը յանձնել թշնամուն՝ կը նշանակէ հայ երկրի բանալիները եւ հայ ժողովրդի բախտն ընդմիշտ յանձնել իր իսլամ հարեւաններին:* Նոյն փրկարար գիտակցութեամբ, այս բարձունքների վրայ պէտք է կռուէ, մեռնէ ու յաղթէ՛ւ վաղուայ հայութիւնը: Ի՞նչ, միայն ձե՞զ է պակասում այդ

գիտակցութիւնը: Մոռացե՞լ էք, թէ կայ հայ ցեղի յաւիտենագիր հրամանը՝ յաղթել կամ մեռնել:

- Ո՛չ, - եղաւ վաշտապետներիս պատասխանը:

- Ես բնաւ չեմ մտածում նահանջի մասին, որովհետեւ սովորութիւն ունիմ նման օրհասական վայրկեաններում դիմելու իմ խղճին՝ հարցնելու իմ ներքին դատաւորին՝ ի՞նչպէս են վարուել նման եւ աւելի ծանր վիճակում Վարդաններն ու Դաւիթ Բէգերը.

- Մեռնել, բայց յաղթել:

- Ինչպէ՞ս կ'ուզէիք, որ վարուէին նման դէպքերում այն բոլոր ղեկավարները, որոնց ապագայում պիտի վիճակուի վարել մեր ցեղի ինքնապաշտպանութեան սրբազան գործը.

- Մեռնել, բայց չզիջել հայոց լեռնաշխարհը:

- Իմ ներքին դատաւորի թելադրութեամբ՝ միշտ էլ այսպէս եմ պատասխանել, այսպէս եմ պատասխանում ինձ եւ այժմ…

- Ես,- արդարանալ փորձեց վաշտապետս,- ես ուզեցի ասել, թէ այլեւս ռազմամթերք չունենք:

- Բայց ո՞վ ասեց, թէ միայն առատ ռազմամթերքով են յաղթում: Շատ անգամ յաղթում է այն կողմը, որը նուազ է կրակում: Վախկոտն է յաճախակի աղմկում, մատնելով իր անարիութիւնը: Հրացանից, գնդացիրից, թնդանօթից չէ՛ որ սարսափում է թշնամին, այլ՝ քար լռութիւնից: Չկա՛յ աւելի ահաբեկիչ բան, քան լուռ առաջխաղացումը, մասնաւորապէս գիշեր ժամանակ, երբ քարը, թուփը, այն ամէնը, որ կարող է զբաղեցնել մարդուս աչքն ու երեւակայութիւնը, դառնում է գրոհող հակառակորդ: Լուռ յառաջացող տասնեակը մի ամբողջ գունդ է, վաշտը՝ մի ամբողջ բանակ պաշտպանուողի համար: Գիշեր ժամանակ յարձակուողի զինակիցներն են՝ խաւարը, լռութիւնը, ժայռերը: *Իսկ երբ նախայարձակուողը մենք ենք՝ այդ լեռների տէրը, մեզ հետ են նաեւ այն բոլորի վրէժխնդիր ստուերները, որոնք մեզնից առաջ հեգնել են մահը եւ ընկել այդ սրբազան բարձունքների վրայ:* Իսկ երբ մենք ենք նախայարձակուողը՝ մեզ հետ է նաեւ մեր լեռների հզօր ոգին: Ուրե՛մն, ռազմամթերքի կարիքը չզգալու համար՝ մնանք հաւատարիմ մեր օրհնուած ռազմավարութեան տարերային ձեւերին: Գիշերամա՛րտը թող լինի մեր բաժինը: Ուրե՛մն, *յարձակուե՛նք, ինչպէս յարձակւում է մահը՝ լուռ եւ անակնկալ*:

- Յարձակուե՛նք,- միաբերան կրկնեցին վաշտապետներս, եւ յուսավառ՝ վերադարձան դէպի իրենց վաշտերը, դէպի կրակի գիծը:

Լուսաբացին, Ալագեազի բարձունքներում թշնամին ծեծուած ու գերուած էր գրեթէ առանց ռազմամթերքի:

Իմ զինուորը այդ օրը օրհնում էր ճակատագիրը, որ չէր յապաղել թշնամու ձեռքով մեզ առատ ռազմամթերք հասցնելու:

Այդ կռւում սիւնեցին մի անգամ եւս զգաց, թէ յաղթում է ա՛յն կողմը, որը վստահ է ո՛չ թէ իր սպառազէն բռունցքի, այլ՝ իր ներազէն գերազանցութեան:

Որ ցեղի ոգու ձեռքով ղեկավարուող ժողովուրդը կարիք չունի երկար սրի:

Իր լեռների վրայ սիւնեցին այդ օրը հաստատեց, թէ երկաթէ զէնքերի դէմ հե՛շտ է վահան գտնել, բայց ոչ եւ ոգու զէնքերի, որպիսին են ցեղի զէնքերը:

ՄԵՐ ԴՈՒՌՆ ԵՆ ԲԱԽՈՒՄ

Փախչում է մեր նորահաս սերունդը գաղութահայ կեանքի հոգեւոր անապատէն, եւ ծարաւի՝ նա ովասիս է փնտռում Դաշնակցութեան ծոցի մէջ:

Սրբազան զայրոյթով նա փախչում է հայ կեանքի բոլոր տեսակի դպիրներէն ու փարիսեցիներէն - այն բոլորէն, որոնք իրենց յաւէտ մեղկ բնաւորութեան բերումով օտար ափերի վրայ շարունակում են տկարութիւն ցուցադրել եւ արհամարհանք շահել, որոնք պատռած սրբազան Եռագոյնը, հոգով հեռացած են Հայութեան մեծ ընտանիքէն, որոնց սրտի եւ տան մէջ տեղ չունին հայրենիքն ու հայրենասիրութիւնը, որոնք երջանիկ տգիտութեամբ, իբրեւ թէ կ'ուզեն տարագիր հայը հա՛յ պահել, բայց վատօրէն կ'ուրանան ցեղի Գողգոթան եւ նրա դատը արդարագոյն. նա փախչում է այն բոլորէն, որոնց անունը ու սեւ արարքները Հայոց Պատմութեան կողմից վաղը պիտի մատնանշուին որպէս ամօթը մեր օրերի:

- Ամենուրեք մեր դուռն է բախում երիտասարդութիւնը, որովհետեւ Դաշնակցութեան մէջ երիտասարդացուցիչ մի բան կայ - Ցեղի հզօր շունչը, որովհետեւ, իր հոգեբանութեամբ, ամէն մի երիտասարդ մի անանուն դաշնակցական է՝ բողբոջի մէջ. որովհետեւ Դաշնակցական ասել է՝ խանդավառ *իդէալիզմի մարդ*. իսկ այդպիսին մշտաջահել է հոգուով: Այո՛, ամէն դաշնակցական իբրեւ իդէալի մարդ, երիտասարդ է ինչպէս ամէն երիտասարդ՝ դաշնակցական:

- Մե՛զ է փնտռում երիտասարդութիւնը, որովհետեւ դաշնակցականութիւն ասել է՝ լրումը հայ կեանքի. որովհետեւ մեր շարքերում կեանքն աւելի՛ կեանք է, որովհետեւ մենք ապրել եւ ապրեցնել գիտենք բարձր կուսակցականութեան բովանդակ խորհրդաւորութիւնն ու բերկրանքը:

Մեր շարքերէն դուրս մեռեալ թիւ է կուսակցականը: Մեզ մօտ, ընդհակառակը, կուսակցականութիւնը ընդգրկում է անհատի ո՛ղջ կեանքը,

բաւարարելով նրա սիրտն ու իմացականութիւնը: Եւ հենց այդ է պատճառը, որ մեր շարքերում անհատն զգալով յեղափոխական գործի սրբութիւնը, դողում է իր կոչման վեհութեան առջեւ:

Մեզնից դուրս, կուսակցականը դաստիարակւում է ասիական թայֆայականութեան նեղ պատերի մէջ. նա չի մտածում իր սեփական գլխով. նրա համար չէ խղճմտանքի անկախութիւնը. պարզ երամականութիւն է նրա կեանքը: Դաշնակցութիւնը, ընդհակառակը, պահանջում է կիրթ վերաբերմունք եւ բարոյական ստեղծագործ հաւատք: *Մեզ մօտ կառուցւում է ներքին մարդը՝ նո՛ր էութեամբ:*

Մեզ մօտ, ղեկավարել ասել է՝ ուսուցանել եւ ապա վարել խղճմտանքները: Սքոլաստիկներ չե՛նք, նաեւ նեղմիտ հատուածամոլ չենք: Մեր ընկերը միայն նա չէ, որ մտածում է մեզ պէս, այլեւ նա, որ գործում է յօգուտ մեր ժողովրդի, նա՛, որ մտածում է, զգում եւ գործում հայաբար:

- Ցեղային բարոյականով օծուն մեր շարքերում հայ բեռնակիրն ու մտաւորականը եղբայրներ են համացեղ:

Ցեղակիցների՛դ մէջ,- ասում ենք մենք,- տե՛ս քեզ եւ արծագանգի նրանց ցաւերին. դա ասել է՝ վերապրի՛ր ցեղիդ ողբերգութիւնը. աւելին՝ թող քո հաղորդութիւնը դառնայ ցեղիդ ճակատագիրը, նաեւ քո մկրտութի՛ւնը: Դա ասել է՝ քո սիրտը պէտք է *պատասխանի ժողովրդիդ ամէն մի սրտազարկին.*

- Երես դարձած Բահաղէն՝ դէպ մեզ է գալիս մեր ոգելից երիտասարդութիւնը, քանզի ցեղի խօսքն է մեր շրթունքներին, որ կը զրնգայ թուրի պէս. քանզի մեր գործը զոհողութեան շունչ ունի, մեր համոզմունքը՝ հրամայական մի զօրութիւն, մեր անունը՝ մի սաստող հեղինակութիւն:

Երիտասարդին յատուկ է երջանկութեան ձգտումը, եւ ահա՛ *Դաշնակցութեան միջոցաւ նա հաղորդակցութեան է գալիս ցեղի հոգու հետ՝* ընդարձակելով իր հոգեկան հորիզոնը, իր մտածողութեան եւ զգացողութեան շրջանը: Իսկ դա ասել է ճշմարիտ երջանկութիւն:

Երիտասարդ հասակին յատուկ է լաւագոյնի ձգտումը. եւ ահա՛ նա նետւում է Դաշնակցութեան գիրկը, որովհետեւ այդ վերջինը *լաւագոյնն է*, իմաստը մեր նորագոյն պատմութեան:

Երիտասարդին յատուկ է ինքնազօրութեան ծարաւը. իսկ ինքնազօրանալ կարելի է միայն մեր շարքերում: Որովհետեւ Դաշնակցութիւն, ասել է՝ անձնաւորեալ լուսակրութիւն, նահատակութիւն եւ հերոսականութիւն:

Այդ տարիքին յատուկ է սէրը պայքարի, եւ գիտէ նա, որ ազգերն ապրում են, քանի դեռ նրանց մէջ ապրում է երկու բան՝ պայքարի իմաստուն բնազդը եւ զոհաբերելու ներքին յօժարութիւնը, առաքինութիւններ, որոնց գերակշռօրէն տէր է Դաշնակցութիւնը:

- Մեր դուռն են բախում այն ամէնը, որոնք հայ հայրենիք են փնտռում «Մեր հայրենիքը» շրթունքներին, որոնց գոյութիւնը մի հատիկ խորհուրդ ունի՝ *հայրենի՛ք, միակն ու անփոխարինելին, որի համար անհատն ու դասակարգը միջոցներ են միայն:*

Մեր դուռն է բախում երիտասարդ Հայութիւնը, որովհետեւ նրա համար երկու անհանգստացուցիչ հարցեր կան, որոնց պատասխանը միայն մեր շարքերէն կարելի է լսել:

«Ի՞նչ, անպատի՞ժ պիտի մնայ թուրքը»:

«Արդեօք ի զո՞ւր պիտի անցնի մեր Գողգոթան»:

Չէ՛, չէ՛, մենք դեռ չենք մոռացել Թալէաթի շնական խօսքը՝ *«Աքսորա-վայրն է՝ ոչնչութիւն»:* Եւ այդ օրէն սկսած, աւելի քան արդար է մեր թշնամանքը թրքութեան դէմ. այդ օրէն դա մեր մէջ դառել է այն, ինչ որ էր Ժորդանօ Բրունոյի ատելութիւնը հրէութեան հանդէպ: *Թո՛ւրքը, թո՛ւրքն էր «արժանի ոչնչացուելու իր աշխարհ գալէն առաջ»*:

- Մե՛զ է փնտռում երիտասարդութիւնը, քանզի նա գիտէ, թէ փոխ-վրէժը բնախօսա-հոգեբանական մի սուր պահանջ է վերապրելու ձգտող ժողովուրդների մօտ. նա գիտէ, որ առանց *յետադարձութիւն* կոչուող աստուածային *ակտ*ին, ազգերի հասցրած սերունդները լինում են հոգեպէս տխեղծ, ցաւագար - ներքին մեծագոյն վտանգը ցեղերի գոյու-թեան համար:

Մեր շարքերն են թափւում հայկական իրրիդենտիզմի կուսակիցները, որովհետեւ մենք սպասում ենք վրէժի դատաստանին, եւ հաւատում որ *մեր տառապանքէն հայկական նոր փոթորիկը պիտի պայթի, եւ որ այդ վերջինէն պիտի ծնին հսկաները հայ կամքի, վրէժխնդիրները՝ տիտա՛ն, զօրաւորները՝ մահացան գիտութիւններով սպառազէն:*

Մենք սպասում ենք. պիտի յայտնուի՛ Հայ *Գերմարդը* եւ մոխրացնի հայասպան սուրն ու սուինը թրքութեան ձեռքի մէջ, ապրեցնելով նրան սարսափը հայ վրիժակէն: *Սարսափը դիւական* - դա՛ պէտք է դառնայ հանապազօրեայ պատիժը թալէաթածին ցեղի. դա՛, թուրքին դա՛ պէտք է դարձնի իր սեփական դահիճը ու զոհը միաժամանակ:

- Մե՛զ եւ Եռագոյնն է փնտռում երիտասարդութիւնը, որովհետեւ նա ուզում է, որ յանձին Դաշնակցութեան, Հայ արիութիւնը *ջահել առիւծով* խորհրդանշուի, երբ թրքականն այսօր այլաբանօրէն գայլով կը ներկա-յացուի: Երկիւղածօրէն նա Դաշնակցութեան հայրենաստեղծ ձեռքը ու Եռագոյնն է համբուրում, քանզի վաղուց է, ինչ մենք մեր նշանաբանն ենք դարձրել ծովակալ Մահուի խօսքը. *«Օգուտ չունի թշնամին կրունկէն զարնել, զայն սրտէ՛ն հարուածելու է»:*

- Այսպէ՛ս, ամենուրեք մեր դուռն են բախում, քանզի հերկելով ջահել հոգիները՝ մենք սերմանում ենք ապագայի համար, եւ բազմայոյս ենք, թէ

վաղը մեր նորահաս սերունդը պիտի կարողանայ կրկնել հին թրակիացիների խօսքը իրենց ցեղի գոյութեան թշնամիներին.

- Ազատ ապրելու եւ պատուով մեռնելու համար՝ մենք երիտասարդութիւն, սիրտ եւ երկաթ ունինք:

ՑԵՂԻ ՈԳՈՒ ՇԱՐԺԸ

Մեր ազատագրական շարժման ուժականութիւնը հետեւանք է առաւելապէս խորօրէն ապրուած վիրաւորանքի՝ ծնունդ առած մեր ժողովրդի նուաստ եւ ողբալի վիճակէն:

«Մենք տուն մեզ համար չե՛նք շիներ.

Մենք հաց մեզ համար չե՛նք ցաներ-քաղեր.

Մենք մեզի համար չե՛նք ապրեր»:

Այսպէս կ'ողբերգէր մշեցի հայը, իր երգի մէջ դնելով իր վիճակի թշուառութեան ու նուաստութեան բովանդակ գիտակցութիւնը:

Իսկ վասպուրականցին կը բողոքէր.

«Էնկատար ենք խոնարհեր, որ զըմէն մարդ մեզ բեռ կը դնէ. էս մա՞րդ է թէ անասուն, իսկի հարցփորձ արող չկայ»...

Եւ որպէս տխուր արձագանգ հայ աշխարհէն բարձրացող այդ հեծեծանքին, մեր վերածնունդի շրջանի գրողներէն Սրուանձտեան կ'ողբագրէր.

«Ի՜նչ կեանք է այս. երանի՜ մրջիւնին եւ արօս թռչունին. նա՝ իր կուտը կուշտ կ'ուտէ, սա՝ իր սիրական ամուսինը իր հետ կը պահէ: Երանի՜ սարեկին, որ իր ձագերը կը ծնի, եւ փետրիկներով զանոնք կը ծուարէ, իր բնութիւնը եւ լեզուն անոնց կ'ուսուցանէ եւ ազատ կը թռուցանէ»...

Այսպէս, իր անօրինական ցաւերէն եւ ամօթանքէն լեզու ելած հայաստանցին իր հարցումը կ'ուղղէր ճակատագրին. *ինչո՞ւ այսպէս, եւ մինչեւ ե՞րբ:* Դա նշան էր, որ Հայն սկսել է գիտակցէլ, թէ ինքը կը հալածուի իր անցեալ մեծութեան համար, որ մեր ժողովրդի հոգում տեղի է ունեցել մի մեծ շարժ, որ հայութեան մէջ արթնացել է Ցե՛ղը՝ հին, ազնուական ու արի, եւ որ այդ վերջինի արգասաւորիչ շնչի տակ տեղի է ունեցել մեր ժողովրդի հերոսական ինքնայղացումը: Դա նշան էր, որ կայ երկունքը, եւ որ շուտով հայ ժողովուրդը իր անպատում ցաւէն եւ ամօթալի վիճակի սպանիչ գիտակցութենէն կեանքի պիտի կոչի իր ցեղաշունչ հսկաները՝ իր ազատագրական պայքարը վարել կարողանալու համար: Դա նշան էր, թէ *ցեղն օգնութեան կը փութայ տառապանքի եւ նուաստութեան մէջ գալարուող ժողովուրդին՝* օծելով եւ աշխարհ ուղարկելով մարգարէաշունչ

Քրիստափորներ, Ռոստոմներ եւ Զաւարեաններ - դարաշրջանային գործերի համար…

* * *

Վերածնութեան կը կարօտէր մեր ժողովուրդը. ասել է՝ նա իր ամբողջութեան մէջ դեռ կառուցման լաւ նիւթ չէր՝ անկախութեան շէնքի համար:

Ո՞վ, ուրեմն, պիտի հոգեփոխէր ժողովուրդը, զայն իր ճակատագրին գիտակից եւ անկախութեան արժանի դարձնելու համար, ո՞վ պիտի առաջնորդէր զանգուածները եւ վարէր անհաւասար պայքարը: - Հէնց ի՛նքը՝ ժողովրդի սրբազան ծոցէն ծնունդ առած յեղափոխական յառաջապահը: Ի՞նչպէս:

- *Կանգնած այստեղ,*- կը բարձրանար կովկասեան ժայռին զարնուած Պրոմեթէի ձայնը,- *ես ստեղծում եմ մարդը ըստ իմ պատկերի եւ նմանութեան:*

Տարիներ է, աւելի քան չորս տասնամեակներ, ինչ *Դաշնակցութիւնը հանգոյն Պրոմեթէի կը շարունակէ կերտել Նոր Հայը՝ ըստ իր պատկերի եւ նմանութեան*: Տարիներ է, ինչ Դաշնակցութիւնը, որպէս Յայտնութեան Աստուածը, իր ձեռքի մէջ առած հայ ժողովրդի հոգին, նոր կաղապարի մէջ թափել կը փորձէ դա: Այսպէ՛ս է: Անազատ ամէն մի ազգ իր վերածնունդը ապրելու համար աշխարհ կը բերէ *Նոր մարդը* եւ իր հերթին կը վերամարմնանայ նրա մէջ. *նա կը ծնի ցեղաշունչ մարդը եւ նրա անձի եւ կեանքի մէջ կը փնտռէ իր հոգեւոր սրբագրութիւնը:* Եւ այդ հոգեւոր վերամարմնացումից յետո՛յ է, որ ժողովուրդը կ'օժտուի պայքարի իմաստուն բնազդով եւ քաղցրօրէն զոհաբերելու տրամադրութեամբ:

Այդ հոգեփոխութիւնից յետոյ անհատն զգում է հոգեկան մի անճառելի բաւականութիւն - եւ այդ ա՛յն վայրկեանից, երբ նրա մէջ զարթնում է *նոր գիտակցութիւնը, թէ իր անձը պատկանում է ո՛չ իրեն, ո՛չ էլ իր կուսակցութեան, այլ՝ այդ վերջինի միջոցաւ՝ իր ցեղին*: Ամէն մի ճշմարիտ դաշնակցական ունի այդ քաղցրութիւնը, զոր զգալու համար հայ մարդը ո՛չ թէ միայն պիտի մօտենայ, այլեւ՝ պիտի հոգեխառնուի մեզ: Նրա մէջ տեղի պիտի տայ իր առանձնութեան գիտակցութիւնը. նրա գիտակցութիւնը պիտի խառնուի մերինին, փլցնելով պատը, որ մինչեւ այդ կը բաժանէր եղբայրը եղբօրից: Հոգեխառնուելով մեզ՝ նա կը սովորի ուրախանալ իր համացեղ մերձաւորի ուրախութիւններով եւ ցաւել նրա ցաւերով: Հրաժարուելով իր մեկուսի կեանքից՝ նրա մէջ աստիճանաբար կը խորանայ ջերմ կարեկցանքը դէպի հայ մարդն ու հայ ժողովուրդը: Հոգեխառնուե՞ց մեզ՝ նա այլեւս ինքն իրեն չի զգայ մենակ եւ օտար համամայր զանգուածների մէջ: Նաե՛ւ ոչինչ չի տենչար եսականօրէն,

միայն իրեն համար, ինչպէս կը վարուէր մինչեւ իր հոգեփոխութիւնը՝ մինչեւ իր դաշնակցականանալը: Դարձա՞ւ այդպիսին, ասել է՛ նա այլեւս կորցրել է իր անձի առանձնականութիւնը եւ ընդունել, թէ կայ համամայրութեան օրէնքը, որի դէմ չմեղանչելու համար պէտք է ապրել մեծ եւ անմեռ ամբողջի - ցեղի կեանքով…

* * *

Հայ ժողովրդի որոշ խաւերի մէջ ցեղի ոգու շարժն էր սկսուել: *Հայութիւնը ոտքի կը կանգնէր ո՛չ օտարի սադրանքներով, ո՛չ, այլ՝ ցեղի դրդումով:* Ցեղը, յանձին Դաշնակցութեան, ժողովրդի ձեռքը կը դնէր մի պողպատեայ մուրճ՝ իր ճակատագիրը կռել-կոփելու համար:

Կեանքի կոչելով Դաշնակցութիւնը, *ցեղը հոգեւոր թեւեր կը հագցնէր ժողովրդի էութեան*, որով նա իր ազատագրական թափն ու թռիչքը պիտի առնէր:

Ցեղի ոգու շարժէն կը ծնէր Դաշնակցութիւնը՝ մեր ժողովրդի գոյամարտը վարելու համար: Հայ ճակատէն ստրկութեան արատը սրբող ճակատամարտնե՛ր էին պէտք, ասել է՝ պիտի կրկնուէր Աւարայրը, եւ ահա՛, յանձին Դաշնակցութեան, հայ ժողովրդի մէջ կը վերերեւար Վարդանանց Ոգին - երաշխիքը մեր ցեղի մշտնջենաւորման: Եւ կ'արձագանգէր Հայոց աշխարհում ցեղաշունչ հսկաների ձայնը. *«Ե՛ս եմ ճամբան»* - քո նո՛ր բարոյականը:

Այլեւս սկսուել էր *հայ հոգու գարունը*:

Ժողովրդին տրուած էր ցեղի Տապանակ Ուխտին: Կար այլեւս Դաշնակցութիւնը, որ պիտի արժէքաւորէր հայ տառապանքը՝ նրա հաւաքականացման ճամբով. նա պիտի սրբագործէր գերեզմանը՝ հայ մարդու մահուան գիտակցականացմամբ: Կար այլեւս Մեծ Նպատակը, եւ որովհետեւ ժողովուրդները իրենց նպատակի հետ փոխում են իրենց էութիւնը՝ Հայը պիտի դառնար այն, ինչ որ է այսօր - տէ՛ր ինքնանուաճ Հայրենիքի…

* * *

Մարդկային ցեղերի պատմութիւնը արձանագրած չէ մի հատիկ իրողութիւն, որ իր անարգութեամբ զուգահեռուիլ կարողանար հայութեան դէմ ուղղուած թրքօ-բոլշեւիկ զինակցութեան փաստի հետ: Առաջին անգամ լինելով, իրար ձեռք կ'երկարէին իրենց գաղափարաբանութեամբ հակոտնեայ երկու ուժեր՝ իսլամը եւ բոլշեւիզմը:

Եւ այդ զինակցութիւնը պիտի ճակատ յարդարէր մարդկային ցեղերէն ամենաանիրաւուածի՝ հայ ժողովրդի դէմ:

Համաշխարհային յեղափոխութեան կրողը իր անսպառ ոյժը եւ քաղաքական ազդեցութիւնը նեցուկ պիտի տար թուրք դահիճին՝ հայ զոհը վերջնականօրէն զգետնելու համար:

Եւ այդ բոլորէն յետոյ, Հոկտեմբերեան յեղափոխութեան հերոսները մեծագոյն շնականութիւնը պիտի ունենային, պատմութիւնը խարդախելու գնով, թէ Կարմիր բանակը Հայաստան մտաւ թրքական արշաւանքի առաջն առնելու համար: Ո՛չ, ո՛չ,- կը բողոքէ պատմութիւնը,- թուրք բանակը Հայաստան քաշեց Երրորդ Միջազգայնականը, եւ ոչ ընդհակառակը: Աւելին կայ, թուրքն ու բոլշեւիկը Հայաստան մտան միաժամանակ, զինակցօրէն եւ աշխարհակալելու նպատակով:

Իր զզուելիութեան մէջ այնքա՛ն կատարեալ այդ սեւ զինակցութեան երեսէն այսօր իրար զարնուող երկու աշխարհների – հինի եւ նորի – միջեւ իր գլուխը դնելու տեղ չունի հայ ժողովրդի կէսը:

Եւ հէնց այստեղից ծնունդ առաւ մեր անօրինակ ողբերգութիւնը…

* * *

Սակայն, միայն արտաքին թշնամին չէ, որ սեւ թելերով հիւսել կը փորձէ մեր ցեղի ճակատագիրը: Կայ եւ ներքինը, որ այսօր էլ ոչինչ կը խնայէ զաւեշտի վերածելու մեր ողբերգութիւնը: Ամէն անգամ, երբ կը խորհրդածեմ այդ հայանուն չարագործի մասին, կը մղուիմ պատկերացնելու Տրապիզոնը, ուր կոտորածի առաջին օրը, հայ արիւնով գինովցած թուրք խուժանը ձեռք կ'անցնէ մի հայ մարդ, եւ կտրելով նրա մի ձեռքը՝ նրանով կը զարնէ անզէն զոհի երեսին: Յետոյ կտրելով միւս ձեռքը, կը հրամայէ խաչ հանել, մինչդեռ ուրիշները հեգնօրէն կը յորդորեն ուժով աղաղակել, որպէսզի Հայոց Աստուածն իր պաղատանքները լսէ:

Ճիշտ այսպէս, թրքօրէն կը վարուի մեզ հետ եւ ներքին թշնամին: *Հակադաշնակցականը - դա կտրուած ձեռքն է հայութեան, որով թշնամին կ'ապտակէ մեզ:* Այսօր դուրս ենք եւ հեռու թրքական եաթաղանի հասողութենէն, բայց եւ այնպէս օտար հորիզոնների տակ ծուարած հայութեան մի մասը կը շարունակէ ապրել թուրքէն մեզ փոխանցուած արատների լծի տակ: Երիցս երջանիկ թուրքը կը շարունակէ մեր ժողովրդի մի մասին հոգով ստրուկ պահել եւ Թուրքիայէն դուրս: Հայ ժողովրդի կտրուած ձեռքով – իմա՛ հակադաշնակցական ձեռքով – թուրքը կը շարունակէ ապտակել ցեղաշունչ հայութիւնը: Ա՛հ, այդ մտակոյր արարածը, որին մեր օրերը հակադաշնակցական անունով է խարանած, նա չի հասկանում, թէ *Դաշնակցութիւնը յայտնութիւնն է Անիներ ու Արտաշատներ ստեղծած, եւ այնքա՛ն հերոսներ, լուսակիրներ ու սուրբեր ծնած մեր ցեղի, որն օրուայ հայութեան միջոցաւ արեւի տակ հրեղէն կարօտով եւ կամքով իր հին փառքերը կը փնտռէ: Ցեղի կողմից*

ձգուած կամո՛ւրջն է Դաշնակցութիւնը, որով հայութիւնը կը փորձէ անցնել դէպի իր մեծ ու երջանիկ ապագան:

Դաշնակցութիւնը - դա քաղցր ու նուիրական դաշնակցութի՛ւնն է ցեղի եւ ժողովուրդի միջեւ:

Դա ցեղի դրո՛շմն է՝ դրուած ժամանակակից հայութեան էութեան վրայ:

Դա հաղորդակցութեան կա՛պն է, զոր ցեղը վերահաստատեց իր եւ մեր հոգիների միջեւ:

Ցեղի ուղղութի՛ւնն է Դաշնակցութիւնը, որի միջոցաւ ցեղն իր պատասխանատուութեան ենթարկելով ժողովուրդը, այդ վերջինը իր գիտակցութեան, ուժի եւ արժէքի լրումին կը մղէ:

Ահա ա՛յդ չի հասկանում հակադաշնակցականը, եւ պիտի չհասկանայ, թէ հրաժարուելով մեր ազգային դատէն, մենք կամովին գահընկէց յայտարարած կը լինենք հայ ժողովուրդը, աւելին՝ մենք հաստատած կը լինենք, թէ հայ ազգը թագի եւ ազատութեան արժանի չի եղել եւ անցեալի մէջ:

- Հին բուլղարները,- ասում է պատմութիւնը,- կը սպանէին իրենց իմաստուններին, պատճառաբանելով, թէ նրանք աստուածների՛ն են պէտք: Ճիշտ այս ձեւով, բուլղարաբար է վարւում հակադաշնակցականը հայ ժողովրդի այն տարրերի հանդէպ, որոնք իմաստութիւնն ու արիութիւնը կը մարմնացնեն, սակայն, առանց պատճառաբանելու, թէ *Դաշնակցութեան մահը թրքութեան պէտք է:*

Հերիք չէ, որ այդ անարին երէկ մնաց պարզ դիտողի դերում, երբ մենք անհաւասար պայքարի մէջ էինք թուրքի եւ մահուան հետ, այսօր էլ դեռ անասելիօրէն սրբապղծիչ է նրա վերաբերմունքը: Այսօր էլ նա հաղորդ չէ ցեղի հոգուն: Այսօր էլ նրան գրգռում է մեր արդար թրքատեցութիւնը, ճիշտ այնպէս, ինչպէս կարմիր լաթը՝ եզան…

* * *

Բուլղար յեղափոխութեան առաքեալներէն Տրանդաֆիլովը յայտնուելով Բատակում, յորդորում է ժողովրդին՝ զէնք վերցնել Սուլթանի դէմ: Առ այդ՝ նա սեղանի վրայ է նետում իր դաշոյնը ու ատրճանակը, եւ սկսում երդման արարողութիւնը: - Ո՛չ, ո՛չ,- ընդդիմախօսում է ներկաներէն Կաւալակը,- բուլղարը մենակ չի կարող գլուխ ելլել Սուլթանի հետ: Եւ հրաժարւում է երդուել: Բայց քիչ յետոյ, երբ առաքեալն սկսում է երդուեցնել ցանկացողներին, մէկի անզգուշութիւնից վայր է գլորւում դաշոյնը եւ թաղւում առաքեալի ոտքի մէջ:

Տեսնելով արիւնը, Կաւալակը բացագանչում է. «Այժմ պարզ է, որ արիւն պիտի թափուի», եւ բերելով իր երդումը՝ նա միանում է

առաքեալին: Ահա՛ ցեղային փրկարար բարոյականը: Հակառակ իր համոզումին, թէ իր ժողովուրդը մեն-մենակ պիտի չկարողանայ չափուել հզօր Սուլթանի հետ, բուլղարը համբուրում է դաշոյնը եւ ուխտադիր լինում՝ զէնք բարձրացնել բռնութեան դէմ, քանզի «արիւն պիտի թափի»: Դա ասել է՝ թքելի՛ է անձնական համոզումը, որքան էլ, որ դա անկեղծ լինի, երբ անհաւասար կռուի բռնուած ժողովուրդը մեր օգնութեան կը կարօտի: Երէկ բատակցի բուլղարի բարոյականը չունեցաւ հակադաշնակցական հայը, եւ այսօր իր յանցաւոր չէզոքութիւնը արդարացնել կը փորձէ իր խղճալի համոզումով…

* * *

Այդ հին դասալիքը կենդանի սրբեր չի ճանաչում եւ այժմ: Այսօր էլ նա կրկնում է հռոմէական պատմութիւնից ծանօթ Տարկուինոսի կնոջ քստմնելի արարքը:

Այդ կինը յարգանք չմատոյց մինչեւ անգամ իր հօր դիակին:

Մի օր, երբ կառքով կ'անցնէր աշխարհակալ Հռոմի փողոցներից մէկով, նրա խորհրդարանի դրան փռուած տեսաւ իր հօր դիակը: Կառքը վարող ստրուկը փորձեց կանգնեցնել ձիերը, բայց իր թիկունքում թնդաց թշուառական աղջկայ ձայնը. «Քշէ՛ կ'ըսեմ, քշէ՛»: Եւ ձիերը սլացան առաջ, կոխկրտելով դիակը, եւ արեան կաթիլները թռցնելով աղջկայ զգեստի վրայ: Այդ սրբապիղծ արարքը տեսնելով, բարոյական կոպտութեանց սովոր հռոմէացիներն իսկ զայրացան եւ այդ փողոցը անուանեցին «Vicus sceleratus» - գէ՛շ, վատահամբա՛ւ փողոց:

Այսօր հայ գաղթաշխարհի մի ծայրէն միւսը հակադաշնակցական լրբենի սաստն է լսւում՝ «քշէ՛ կ'ըսեմ, քշէ՛»: Քշէ՛, ոչի՛նչ, եթէ կառքիդ անիւները իրենց տակն առնեն Լոզանում թուրք սրէն զարնուած հայկական դատն իսկ:

Քշէ՛, եթէ նոյնիսկ թրքօ-բոլշեւիկ զինակցութենէն զարնուած Մայիս Քսանութն է ճամփիդ վրայ: Քշէ՛ կ'ըսեմ…

Եւ սլանում է հակադաշնակցական կառքը՝ սմբակակոխ անելով ե՛ւ Գաղափար, ե՛ւ Եռագոյն, ե՛ւ մեծ մեռելներ - ազգային ամէն սրբութիւն: Այսպէս, անպատիժ կերպով, ներքին թշնամին, ի նուաստութիւն մեր ժողովրդի, իր կառքն է քշում, եւ պիտի քշէ, քանի դեռ Հայաստան երկրի վրայ օտար լուծը կը ծանրանայ: Vicus sceleratus! – վատահամբա՛ւ փողոց - այս խօսքով կ'արտայայտեմ զայրոյթս ամէն անգամ, երբ մեր հանրային կեանքը կը դիտեմ:

Քշէ՛, վատոգի՛, քշէ՛, բայց մի մոռանար, որ մի օր, երբ օտարը հեռացաւ Հայաստանէն, կառքդ զարնուելով ցեղապաշտ հայութեան կատաղութեան ժայռին, փշուր-փշուր պիտի լինի: Քշէ՛…

- Նազովրեցին կը լսէր իր ցեղակիցների ձայնը. նրանք կ'աղմկէին, պահանջելով՝ ազատել Բարաբբային աւազակ, եւ խաչ հանել Յիսուսին:

Ի՜նչ զարհուրելի ողբերգութիւն:

Ա՜հ, դու հաւասար չափով հերոս ու նահատա՜կ կուսակցութիւն, ո՞ւր եւ օրուայ ո՞ր ժամին չես լսում տիրադաւ աղաղակը հակադաշնակցական ամբոխի: Այո՛, ամբո՛խ, անարգո՛ւ, վատթարացուցի՛չը հայ կեանքի, որի արարքների մասին մեր պատմութեան ամենատխուր էջի վրայ գալոց սերունդները միայն երեք բառ պիտի կարդան՝ *«Յուդան եւ իր համբոյրը»:*

Ամբո՛խ, որ կը սպառնայ զաւեշտի վերածել մեր անօրինակ ողբերգութիւնը:

Եւ այդ ա՛յն ժամանակ, երբ *մարդկութեան համար այլեւս չկայ նահատակութիւն, կայ պատժուող տկարութիւն միայն.* երբ այլեւս *տկարէն խլուած է նահատակ անունը՝ որպէս վերջին մխիթարութիւն:* Եւ այդ մե՛ր օրերում, երբ դեռ խաչի վրայ է հայութիւնը, իսկ Գողգոթայի ստորոտում շնացեղ թրքութեան քրքիջն է լսւում: Երբ թուրքի հետ են անարժան ուղեկիցները՝ *գայլն ու ագռաւը.* երբ Քեմալը՝ բախտահաս պատահական յաղթութեամբ գինով, իր արնոտ ձեռքը ագռաւի թեւերին իջեցրած՝ Արաքսի ափէն իր պղտոր հայեացքով Արարատեան դաշտն է չափում, զայն մի օր սեւ հողերի վերածելու երազով…

* * *

Հայ կեանքը, սակայն, ունի եւ մի այլ կողմ, ուր տեղի է ունենում *ցեղի ոգու նոր շարժը,* ուր հոգիների մէջ սկսել է հոսել թրքատեցութիւնը որպէս հրեղէն հեղեղ, նոյնքա՛ն զօրաւոր, որքան ցեղապաշտութիւնը մեր: Մեր կեանքի այդ բաժինում *հայ տառապանքն ու ամօթանքը միացած, նախապատրաստում են ծնունդը նոր Հայու:* Մեր տիտանական ցաւէն ծնունդ է առնում մի նոր կրօն – հպարտութեան կրօնը: *Իր սեփական տառապանքի մէջ մկրտուած Հա՛յն է աշխարհ գալիս: Նա իջնում է ցեղի ոգու բարձունքներէն՝ ցեղի խօսքը շրթունքներին*: Նա սէր է աւետարանում, սէ՛ր, դէպի ինքնակառուցում, ինքնայաղթահարումի ճամբով: Եւ մահ է քարոզում, *մա՛հ հայ տկարութիւնը սնուցանող բոլոր չաստուածներին՝ հին ու նոր*: Նա գալիս է վերականգնելու մեծութիւնը հայ անունի, որ այնքան հայհոյուած է այսօր:

Չէ՛, այլեւս չի կարելի այսպէս ապրել, քանզի աննախընթացօրէն սպանիչ է մեր նուաստութիւնը - ահա՛, այս ցնցող գիտակցութենէն ծնունդ առա՛ծ *աշխարհ է գալիս ցեղային բարոյականով միւռոնուած Հա՛յը.* նա՛, որ ներոյժ կերպով ապրած է մեր ժողովրդին վիճակուած ողբերգութիւնն ու ամօթանքը: *Նո՛ր Հայը,* որի դրօշակէն վաղը պիտի կախուի մեր ցեղի յաղթանակը: Այդ օրուայ համար է ապրում եւ գործում դաշնակցականը:

Դեռ իր լինելիութեան մէջ է Դաշնակցութիւնը:

Նա դեռ չի՛ ասել իր վերջին խօսքը:

Ահա՛ թէ ինչու եմ ասում՝ օրհնի՛ր ճակատագիրդ, որ Հայ ես ծնած, բայց որպէսզի օտար ափերի վրայ Հայ մնաս, եղի՛ր Դաշնակցական:

ՆՈՐ ՀԱՅԸ
ՎԱՂՈՒԱՅ ԱՌԱՋՆՈՐԴԸ

Տուէ՛ք ինձ ներցեղային բարոյականով
առաջնորդուող մի հատիկ սերունդ,
եւ ես ապահովեմ հայ ժողովրդի
տեղն արեւի տակ:

Առաջնորդը, որն իր ինչ եւ ինչպիսին լինելը մատնում է մասնաւորապէս մեծ վտանգների ժամանակ, ամէն ինչ է ժողովուրդների կեանքում՝ այբն ու ֆէն:

Նրա աջն է գծում ճակատագիրն ազգերի:

Նրա՛ն կը պարտեն ցեղերն իրենց հրթիռային վերելքը, ինչպէս եւ անկումը շռնդալի: Նա՛ է փառաց ի փառս եւ պարտութիւնէ պարտութիւն առաջնորդում մարդկային այս կամ այն հաւաքականութիւնը:

Նա՛ է անկեալ վիճակից բարձրացնում իր Հայրենիքը, ինչպէս եւ վերջինի բանալիները վատօրէն օտար դռնապաններին յանձնում:

Այո՛, ամէն ինչ է նա՝ ճակատագրողը, կենդանի ճակատագիրն իր ժողովրդի: Նրա հետ է սկսւում ժողովրդի փառքի կամ տկարութեան շրջանը: Եւ եթէ յաճախ ժողովուրդների մեծութիւնը վերջ է գտնում կատարեալ առաջնորդի մահուամբ, աւա՛ղ, նրանց դժբախտութիւնը չէ վերջանում ձախաւեր առաջնորդի հետ: Դժբախտ է սխալ եւ անզօրապէս առաջնորդուող ժողովուրդը, որպիսին է մերը: Վա՜յ այն ժողովրդին, որի առաջնորդը կատարեալ չէ՝ ապագան բազում խաչեր ունի պահած նրա համար: Խե՛ղճ է ժողովուրդը, երբ նրա առաջնորդն աւելի փառասէր է, քան հանճարեղ, երբ նրա առաջնորդին պակասում է մշակոյթը՝ սրտի եւ մտքի, երբ բռնուած նախանձի չար դեւով՝ նա տառապում է բարոյական դեղնութեամբ, երբ նա դաւանում է անձնական երջանկութիւն խոստացող այս կամ այն գահավիժող վարդապետութիւնը, երբ տկարութիւն ունի մեծ թուալու փանաքի գործերի մէջ, եւ փոքրիկ հանդիսանալու մեծ գործերում: Երիցս խղճալի է ժողովուրդը, եթէ նրա ռազմիկները խոր համոզ-

մամբ չեն կրկնում, թէ «ամենաանառիկ համարուած բերդերն իսկ կառուցուած են գրաւուելու համար»:

Անէծք է առաջնորդի տգիտութիւնը, եսականութիւնը, նախանձը: Չի՛ եղել աւելի զարհուրելի թոյն, քան վատ օրինակը առաջնորդի, որ միշտ էլ վարակիչ է: Ազդում է նրա ամէն մի խօսքը, շարժուձեւը, ակնարկը: Երբ վատ է, վատթարագոյն են դառնում այն բոլորը, որոնք դժբախտութիւն են ունեցել նրա առաջնորդութեան յանձնուելու:

Եսակա՞ն է՝ անասնանում են նրա հետ առնչուողները:

Ո՞յլ է մտաւորապէս՝ հոգեւոր հնավաճառներ են դառնում նրան շրջապատողները:

Անհայրենապա՞շտ է՝ հակահայրենիք հրէշներ են վխտում նրա շուրջը:

Իսկ երբ անարի է՝ զզուելիօրէն երկչոտ են դառնում նրա իշխանութիւնը վայելողները:

Այսքան, ահա՛, ճակատագրական է առաջնորդի դերը ժողովուրդների կեանքում:

* * *

Կայ, սակայն, եւ կատարեալ առաջնորդը, այլապէս անհասկանալի պիտի մնար ազգերի պատմութեան մէջ այն ամէնը, ինչ որ վսեմ է, գեղեցիկ, հերոսական: Այո՛, եղել է եւ կայ դա, այլապէս անբացատրելի պիտի մնար որոշ ժողովուրդների նախանձելի վիճակը:

Նախ, ահա՛ նրա հոգեւոր դիմաստուերը մի քանի խոշոր գծերով – նա՛խ կրողը եւ ուսուցիչն է նա ցեղային բարոյականի: Գործել՝ նրա համար նշանակում է փարատել իր շրջապատի մտաւոր խաւարը, թմրութիւնը, տկարութիւնները. դա նշանակում է՝ ոչինչ չթողել իր շուրջը անթուրծ եւ խոտան, ծոյլ եւ մեռեալ վիճակի մէջ:

Ուժեղ իմացականութիւն, մեծ սիրտ եւ բոլորանուէր ծառայութիւն - ահա՛ նա: Նրա մէջ եթէ դեռ չի մեռել, ապա հոգեվարում է Ես-ը: Պարզատես է, վշտակիր, հերոս: Յայտնուելով այս կամ այն միջավայրում՝ նա հոգեբանօրէն փոխում է այդ վերջինը: Նրա ներկայութիւնը ազնուացնում է հոգիները, թեւաւորում, գօտեպնդում:

Նրա շնորհիւ անկարելի համարուածը դառնում է դժուարին, դժուարինը՝ կարելի: Շքեղ երազները դառնում են նպատակ եւ երջանիկ իրականութիւն: Նրան յաջողւում է փոխել իր ժողովրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը, պատմութիւնը: Սահման չէ դրուած նրա սիրելու եւ զոհաբերելու կարողութեան: Նա ծիծաղել գիտէ մարդկային մեռեալ օրէնքների վրայ: Սիրում է ամբոխը, բայց գիտէ յետ մղել նրա օրէնսդրութիւնը: Իմաստուն է, եւ գիտէ, որ «կան պատմական մոմենտներ, երբ ժողովրդին

ծառայելու լաւագոյն ձեւը հանդիսանում է նրա հայեացքներին վճռապէս հակադրելու մէջ»:

Կատարելութեան ճամբին գտնուելով հանդերձ, նա իր անկատարելութեան գիտակցութիւնն ունի, եւ այդ իսկ պատճառով կը տառապէ խորապէս:

Լիկուրգոսն է դա, որի օրէնքների համաձայն անհատը կը դաստիարակուէր հասարակական նուիրումի եւ հաւաքական երջանկութեան համար: Դա Սնելմանն է, որի բարձր գաղափարների շնչով սրբուած եւ ուժաւորուած երբեմնի աղքատ եւ արբեցող ժողովուրդը Սուօմիի ճահճուտները պիտի վերածէր ճերմակ շուշանների հայրենիքի - Ֆինլանդիայի՛:

Դա Գանդին է, աշխարհիկ սուրբը վերածնուող Հնդկաստանի, որը գրանիտէ համոզում ունի, թէ առաջնորդի գերագոյն կամքը կարող է բարոյապէս կերպարանափոխել անգամ կաստայական փակուածութեամբ հիւանդ ժողովուրդը:

Դա նա՛ է, որ պիտի ծնի հայութիւնը, եթէ չի ուզում մեռնել. նա հրամայողաբար պիտի յայտնուի մեր կեանքում, կատարելով փրկարարդերը Լիկուրգոսի, Սնելմանի, Գանդիի եւ նմանների:

* * *

Առաքեալի սիրտ, իմաստասէրի գլուխ, ադամա՛նդ ճակատ - ահա՛ կատարեալ առաջնորդը: Նա չկայ, եւ ամբոխացած ու պարտուողական է մեր ժողովուրդը: Նա չկայ այսօ՛ր, ու վաղը թշնամին Արարատեան դաշտում կարող է անարգել կերպով կատարել անշուք թաղումը հայութեան մնացորդի: Չկայ կատարեալ առաջնորդը՝ եւ արտաքին վտանգը դառնում է աւելի ահաւոր, եւ դրա համար էլ թշնամու հարուածը պիտի լինի աննախընթացօրէն մահառիթ: Չկայ նա, այլապէս անհասկանալի պիտի մնար այսօրուայ մեր անկերպարան ու անմխիթար վիճակը: Չկայ նա, եւ դրա համար էլ գաղութահայութիւնը՝ գետեր կազմած՝ կ'երթայ թափուելու օտար ծովեր: Չկայ, յուրախութիւն մեր ցեղի գոյութեան թշնամիների, չկայ դեռ ցեղակրօն առաջնորդը: Չկայ նա, կա՛յ, սակայն, սուր կարիքը նրա գոյութեան: Չկայ, բայց պիտի գայ նա, քանզի կայ նրա գոյութեան աղաղակող պահանջը: Նա չկայ, բայց պիտի գայ, քանզի հայը չի ուզում մեռնել. պիտի գայ, պիտի յայտնուի ՆՈՐ ՀԱՅԸ, որպէս ազգային ղեկավար՝ զինուորականի, պետական մարդու եւ մշակութային գործիչի դերերում. նա կը գայ, կը յայտնուի նոր էութեամբ՝ զերծ հին թթխմորէն:

Անձնական երջանկութեան վարդապետութիւնը - ահա՛ թշնամին մեր ցեղի հաւաքական երջանկութեան:

Ցեղօրէ՛ն, ցեղի յաւիտենականի, եւ նրա երջանկութեան համար - այդ նշանաբանով նա ձեռնոց կը նետէ մեր ցեղը մաշող հին բարոյազուրկ հասկացողութիւններին:

Էվդեմոնիզմը - բարիկենդանապաշտութի՛ւն - ահա՛ անհատական երջանկութեան հրէշային դաւանանքը՝ հոգեւոր մայրը բոլոր տեսակի հակազգային եւ քանդիչ ուժերի:

Կանգնեցրէ՛ք զինուորին - ո՞վ է դա, որ լքած վահանը, վատօրէն փախչում է կռուադաշտէն. զօրավարին՝ որ նահանջի հրամանն է արձակել. հասարակական գործիչին՝ որ միայն հաց կը հոտի. կենսապաշտին՝ որի համար երջանկութիւնը լրումն է անհատական ցանկութիւնների եւ ո՛չ թէ կատարումը ներցեղային պարտականութիւնների:

Կանգնեցրէ՛ք այն բոլորին, որոնք ապրել գիտեն առանց մտածումի ազնուութեան, որոնք իրենց անզօրութիւնը ատելու քաջութիւն իսկ չունին, որոնք քաղցր խաբկանքի մէջ կը պահեն իրենց ժողովուրդը, եւ հակադարձ ալիքի հարուածէն սարսափած՝ ոչինչ չեն ձեռնարկեր իրենց ցեղի ապագայի համար. նրա՛նց՝ որոնք գիտեն, թէ իրենց ժողովրդի մէջ խորապէս անարգուած է մարդն ու հայը, բայց եւ այնպէս գիշերները քնանալ գիտեն: Կանգնեցրէ՛ք այդ բոլորին, բացէ՛ք սրանց գանկն ու կուրծքը, եւ դուք սարսափով պիտի տեսնէք աւերածութիւնը էվդեմոնիզմ կոչուած մոլար վարդապետութեան թոյնի: Բարոյապէս անբանացնելով անհատը՝ այդ թունաւոր ուսմունքը նրան թեքում է դէպի կեղծ աշխարհաքաղաքացիութիւն եւ ապա՝ դէպի ազգային դիմազրկութիւն: Դա եսապաշտ թշուառականներ է ստեղծում եւ ոչ առաքինի եւ անձնադիր քաղաքացիներ, ո՛չ հրաշունչ մարտիկներ:

Ա՜հ, այդ անարգ հասկացողութիւնը երջանկութեան մասին - դա՛ եղաւ մեր երբեմնի արիասիրտ եւ հզօր ցեղը, սրտաթափողը: Խոզաբարոյ երջանկութիւն - հոգեւոր խաթարիչը մեր սերունդների: Սրան կը պարտի հայութիւնը անցեալի իր պարտութիւնները եւ օրուայ իր պարտուողական ոգին:

Կա՛մ այդ անկումի վարդապետութիւնը, կա՛մ հայութիւնը: Պիտի մեռնի՛ մէկն ու մէկը սրանցից: Շարունակե՞ց ապրել դա մեր հաւաքական հոգու մէջ՝ պիտի կորչի հայութիւնը: Մեռա՞ւ դա՝ պիտի վերապրի մեր ցեղը:

* * *

Վաղուայ առաջնորդն իր հոգեւոր սնունդը կ'առնէ նա՛խ իր ցեղի, ապա Արեւելքի հոգու աղբիւրներէն:

Արեւմուտքում էլ են սիրում Հայրենիքը, բայց այնպէս, ինչպէս շունը իր թաղն է սիրում:

Ցեղաշունչ Հայու, ինչպէս եւ Ճապոնացու համար, ընդհակառակը, Հայրենիքը միայն սեփական երկրամաս չէ, ուր «ոսկի են արդիւնաբերում եւ հունձք հաւաքում», այլ՝ սրբազան երկիր, «ուր գտնւում է աճիւնը նախահայրերի»:

Շատ է մեծ հակահայրենիքների թիւը Արեւմուտքում, նո՛յնը եւ նոր աշխարհում:

Ճապոնացին, ընդհակառակը, ուր էլ որ լինի, ինչով էլ որ զբաղուի, միշտ էլ ենթարկւում է իր Հայրենիքի օրէնքներին:

Այնտեղ, Արեւմուտքում, ուժեղ է մեքենան, այստեղ՝ մարդը:

Եւրոպացին սարսափում է մահէն եւ յաճախ դառնում հեղինակը անարգ գործերի:

Ճապոնացին ապրում է, «երբ որ դա պէտք է, մեռնում, երբ որ դա արդար է»: Ազգերի մէջ միայն Ճապոնացին է ասել՝ «եթէ խորապէս գիտակցենք, որ սէրը դէպի հայրենի երկիրն ու ժողովուրդը աւելի մօտ է կանգնած մեծ ու գեղեցիկ արեւին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները, այն ժամանակ մահը մեզ համար թռչունի փետուրից էլ թեթեւ կը թուայ»:

Արեւմուտքում ակնբախ իրողութիւն է հասարակական դարվինակա-նութիւնը՝ քօղարկուած իրերակերութիւնը: Այստեղ գոյութեան կռիւը ի սպառ չի անասնացրել մարդը:

Ճապոնիան ունի իր Բուշիդօն, մենք՝ մեր Վահագնը:

Նա արիապաշտ է, մենք՝ էինք: Նա ցեղապաշտ է, մենք պիտի դառնանք՝ չկորչելու համար:

Ահա՛ թէ ինչու հայ առաջնորդը մի ձեռքն Արեւմուտքում՝ այնտեղի ճարտարարուեստի նորոյթները իւրացնելու, իր միւս ձեռքում պիտի ունենայ ցեղի բարոյական օրինագիրքը:

Այսպիսին պիտի լինի վաղուայ առաջնորդը, որպէսզի նրա օրով արմատօրէն հոգեփոխուի հայ մտաւորականութիւնը, որպէսզի հայ գործիչը մերկանայ իր Ես-էն՝ անանձնականանալու աստիճան, որ-պէսզի հասարակական ծայրայեղութիւնը ընդգրկի գործչի բովանդակ կեանքը:

Ո՛չ մարդկային նախիրը բազմացնող կոտորակային անհատը, որ սեփական այո՛ եւ ո՛չ չունի, հոգի չունի, այլ՝ հայն ու մարդը՝ ամբողջա-կան, ինքնուրոյն ու զօրեղ:

Ո՛չ կրաւորաբար խորհրդածողն ու սոփեստը, այլ՝ մեծագործութեանց ծարաւի մշակը մշտաջան:

Ո՛չ աշխարհի իրերի եւ անցքերի վրայ նիւթապաշտ փիլիսոփայու-թեան աչքով նայող բիւրիցս զզուելի էպիկուրեանը, որն իր բաւականու-թեանց զոհ է բերել կեանքի ողջ սրբութիւնը, ո՛չ, ո՛չ նմանը, այլ կեանքի լի՛

բաժակը արհամարհել գիտցող իդէալիստը՝ վսեմախոհ: Ո՛չ հոգով գռեհիկը, որ եսականօրէն ըմբոստանում է սրբացուցիչ տառապանքի դէմ - ոսկեղէնիկ շղթան, որ մեր հայեացքը կապուած կը պահէ՝ երկնքին, այլ՝ հոգու պայազատութեամբ շեշտուածը, որ մտովի կը համբուրէ այն խորհրդաւոր ձեռքը, որն իր հաճոյքների յորդող բաժակը կը փշրէ:

Ո՛չ ելեւմտական խելքի տէր քաղաքական գործիչը, որ զգուշողաբար պարագաները կը կշռէ ու կը վերակշռէ, ամէն բան թողնելով անորոշ ժամանակին, այլ՝ արի՛ն յառաջահայեաց, որ խիզախել գիտէ:

Ո՛չ հոգեւոր թզուկը, որ յաջողում է բարձրանալ հսկաների վրայ՝ մի քիչ հեռուն տեսնելու համար, այլ՝ նա՛, որ գիտէ նախատեսել անցքերը եւ ցանկալի ուղղութիւն տալ նրանց, նա՛, որ փարոսօրէն լուսաւորել գիտէ իր ժամանակաշրջանը՝ նոր ուղիներ բանալով իր ժողովրդի մտքի բանուկ ճամբաներէն դուրս:

Ո՛չ այս կամ այն դասակարգի ջատագովը - հիմնախո՛րը Հայրենիքի, ոչ էլ ներկայով կլանուած կարճայուշ ժողովրդասէրը, այլ՝ ցեղամերձը, որն իր բոլոր խորհուրդները ցեղէ՛ն կ'առնէ:

Ո՛չ անկապաշտը՝ նուաստախոհ, վայնասողը՝ հոգեհաշմ, խուժանավարը՝ շոգմոգ, հերձուածողը՝ որմնացան, ո՛չ էլ նեղահաւատ ու բաժանասէր կուսակցական ցանցարկուն, որը վատօրէն աստ եւ անդ կագ ու կռիւ կը սերմանէ՝ իր հացն ու հանգիստն ապահովելու համար: Ո՛չ նմանները, ոչ էլ խորթաբարոյ վարդապետութեամբ զանգուածները թունաւորող լենինադաւան հայրենասպանը, այլ՝ հայը ցեղազդեցիկ ու խորարթուն, նա՛, որ ունայն է հռչակել այն ամէնը - արուեստ, գրականութիւն, իմաստասիրութիւն - որոնք աճեցնելով մեր աշխարհածանօթութիւնը, մեզ չեն դարձներ աւելի՛ հայ, եւ աւելի՛ զօրեղ:

Ո՛չ պարտուողականը - համակ վախ եւ եսականութիւն, որը իր ժողովրդի փրկութիւնը փոքրոգի մոռացումի մէջ կը փնտռէ, այլ՝ նա՛, որ չի տենչար աւելի գերագոյն ճակատագիր, քան ստեղծագործօրէն հասունանալ յաղթական մահուան համար, նա՛, որի ուղեղի մէջ ամէն արեւծագի հետ զրնգում է մի սրբազան մտածում՝ պիտի՛ պատժուի՛ թուրքը: Նա՛, որը ծանօթ մեր ցեղի հոգիի լեզուին, կարող լինէր օրուայ հայ էութեան վերադարձնել մեր հրաշունչ ցեղայնութիւնը, որ ժողովրդին հակադրէր ցեղը, որ կարողանար ժողովրդի տկարութեան դէմ հանել հոգեւոր զօրոյթը մեր ցեղի, որ մեծ էր, եւ է՛ հանապազ:

Այսպիսի՛ն պիտի լինի առաջնորդը տառապող եւ իր վերջնական ազատագրութեան սպասող հայութեան:

Նմանը պիտի լինի դա, որ գալիս է՝ ցեղահաղորդ, ինքնաճանաչ եւ ինքնազօր:

Եւ նրա օրով կը բորբոքուի պայքարը ՀԻՆԻ, որ չէ ուզում մեռնել եւ

ՆՈՐԻ միջեւ, որ ուզում է աշխարհի գալ: Սրբազան պայքարը Ես-ի եւ Մենք-ի միջեւ:

Եւ այդ պայքարէն կը ծնի ՆՈՐ ՀԱՅԸ: Հոգիներում էլ չի՛ մնայ հին թթխմորի հետքն իսկ:

Կը չքանայ ապաշնորհ հասարակական վարձկանը՝ իր տեղը տալով վաստականուէր, յորդեռանդ եւ ցեղապահ մշակին:

Հայ մականը, սուրը եւ գրիչը կը գտնուին կարող եւ սրբամաքուր ձեռքերի մէջ:

Կը զարթնի Ցեղը հայու մէջ եւ կը սկսուի Հայ հոգու արդիւնաբերութեան եւ վերելքի փառաշատ շրջանը:

Եւ, որպէս արդար հետեւանք, առաջին անգամ լինելով՝ մարդկութիւնը խորապէս կ'ամաչի մեր հանդէպ ունեցած իր անիրաւութիւններէն:

Ա՜հ, Ցեղայայտնութեան երանելի օր, պիտի ուշանա՞ս, արդեո՛ք, հեռո՞ւ ես:

ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ-
ՑԵՂԸ ԵՒ ԻՐ ՏԱԿԱՆՔԸ*

* *Տպագրվել է Սոֆիայում, 1935թ.:*

ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Ընթերցո՛ղ, օրերը՝ որ կ'ապրենք, գրեթէ աննախընթաց են հայոց պատմութեան բոլոր ժամանակների մէջ:

Մե՛զ վիճակուեց՝

- Վկայ լինել մի մեծ վատութեան՝ մեր ժողովրդի մի մասի ամբարիշտ ուրացումին, եւ

- Ցմրուր դատարկել բաժակը ազգային մի մե՛ծ ամօթանքի:

Այն օրէն, երբ լենինեան դաժան կատակերգութիւնը չեկայաչարչար մեր հայրենիքում մի բուռ դերակատարներ գտաւ, այն օրէն հայոց սփիւռքի թատերաբեմի վրայ վերստին երեւաց հայ ուրացողի զազրատիպ դէմքը:

Այն օրէն՝ օտար ափերի վրայ ազգային իդէալով ապրող հայութեան պարտադրուեց մի անօրինակ պայքար - պայքար՝ երրեակ ոյժերի դէմ, պայքար՝ օտար այլասերիչ միջավայրի, արտաքին թշնամիների եւ, միաժամանակ, հայ ուրացողի դէմ՝ ներազգային ճակատի վրայ:

Պայքա՛ր կայ հայոց գաղթաշխարհում՝ օտար անապատներում փռուած մեր մենաւոր ովասիսներում: Եւ, աւա՜ղ, այդ պայքարում, յուրախութիւն մեր ցեղի թշնամիների, մենք օտար հարուածներից աւելի՛ մեր թիկունքում զեռացող հայ տականքի հարուածներիցն ենք նեղւում: Այո՛, տակա՛նք, որ իր կուրութեան մէջ՝ շարունակում է անասնօրէն լծուած մնալ թրքօ-բոլշեւիզմի ռազմակառքին:

Պայքա՛ր կայ, որի մէջ կողմերից մէկը - ազգայնական հայութիւնը - աշխարհն ու երեւոյթները դիտում է իր ցեղի յաւիտենականի բարձունքէն, միւսը՝ իր առօրէական վաղանցիկ հաշիւների անկիւնէն: Մէկն իր որոշ ճամբան եւ ազգային դատն ունի, միւսը՝ անուղի է, աննպատակ: Մէկը կռւում է իր նուիրական դրօշի, միւսը՝ վարձկան է օտար զէնքի տակ: Մէկը իր ցեղային լիարժէքութեան գիտակցութիւնն ունի, եւ իր ցեղին պարտադրուած անարդար ճակատագրի դառնութենէն է առնում պայքարի եւ զոհաբերութեան իր խանդը. միւսը նուաստ՝ իր ընկածութեան գիտակցութիւնն ունի, եւ այդ վերջինից է ստանում վատութեան իր ոյժը:

Ո՞վ, ներցեղային բարոյականով առաջնորդուող ո՞ր հայը ցաւախառն խռովքով չի զգում շունչը այս նոր, այս քաղաքական Աւարայրի:

Այսօր առաւելապէս Ամերիկան է այդ պայքարի թատրը:

Այդ պայքարի առաջին գծի վրայ՝ հայաթշնամի ոյժերի հետ արիաբար չափուող շարքերին եմ ձօնում էջերը. - մասնաւորապէս նորերին, այն հազարներին, որոնք վերջին երկու տարուան ընթացքում Դաշնակցականի, Ցեղակրօնի եւ Կարմիր Խաչուհու անուան տակ եկան միացան Եռագոյնի բանակին:

Սօֆիա, 1935, Ապրիլ

I

ՄԻՋԱՎԱՅՐԸ

«Պէտք չէ իրականութիւնը անիծել,
այլ՝ հասկանալ»:

ԿԱՅԶԵՐԼԻՆԳ

Լափող, կլանող է ամերիկեան միջավայրը:

Հսկայ այդ խառնարանում հայութիւնը աշխարհագրօրէն այնքան է ցրուած եւ թուով այնքան կոտորակային է, որ նա իր միջավայրում կենտրոնանալու, որով քաղաքականապէս զգալի ոյժ ներկայացնելու կարելիութիւն չունի:

Աւելի ողբալի է, սակայն, հոգեբանական ցրուածութիւնը: Թուենք մի քանիսն այն գործօններից, որոնք առանձնապէս նպաստում են դրան՝

ա) Ամերիկեան միսիոներական քարոզչութիւնը եւ դրա հետեւանքով ազդու դարձած յարանուանական պաղութիւնը՝ երբեմն պսակուած նեղհաւատ անհանդուրժողութեամբ.

բ) Հայաստանի նկատմամբ հեռաւոր թիկունք լինելու պարագան, որ ընկերայնօրէն բարեկեցիկ եւ հայօրէն ուծանալու հակամէտ տարրերի մէջ արտահայաստանեան տրամադրութիւններ է ստեղծել.

գ) Կրօնակրթական հաստատութեանց նուազութիւն, որի հետեւանքով անհատները ազգային կուլտուրական արժէքների եւ հիմնարկութեանց շուրջը հաւաքուելու նուազ պատճառներ ունին, որով՝ մեծ մասամբ զուրկ են մնում ընդհանրական շահերի գիտակցութիւնից.

դ) Յատկապէս հայ միջնակարգ դպրոցների չգոյութիւնը, որ նոր սերունդը մղում է անգլիախօսութեան եւ ամերիկեան մշակութային արժէքներով ապրելու.

ե) Հակազգայնական քարոզչութիւնը, որ յատկապէս վերջերս ոչինչ չի խնայում հոգեբանօրէն աւելի՛ եւս կոտորակելու հայութիւնը:

Աշխարհագրական եւ հոգեբանական այս ցրուածութեան միանում են նաեւ նիւթական աննպաստ պայմանները, որպիսիք են՝

- Տնտեսական տկարութիւն հայ միջակորեար դասի, որի հետեւանքով ազգի մեծագոյն մասը մնում է ճնշուած օրուայ հացի պայքարի մղձաւանջի տակ եւ համակւում՝ աւելի գործ փնտռելու, քան թէ գործ ստեղծելու տրամադրութեամբ, որով՝ էապէս զրկւում է նախաձեռնական ոգուց, ինչպէս նաեւ անանձնական բարձր նպատակներով տեւաբար ապրելու հնարաւորութիւնից.

- Հայկական առեւտրի ոչ-համագործակցական՝ անհատական նկարագիրը, որ զարգացնում է հոգեւոր մենասիրութիւն եւ եսական շահապաշտութիւն.

- Հայկական դրամագլխի մեծակշիռ չլինելը եւ նրա ոչ-արդիւնաբերական հակումը, որ դժուարացնելով գործարանային դրութեան ստեղծումը՝ անկարելի է դարձնում հայ մտաւորականի, արհեստագէտի, դրամատիրոջ եւ բանուորի ճիգերի համախմբումը - մի բան, որ կարող էր այնքա՜ն նպաստել ազգային կեանքի օրգանական կազմակերպման:

Այսպէս, ամերիկահայութիւնը ցրուած է մարդա-աշխարհագրօրէն, ցրուած՝ հոգեբանօրէն, ցրուած՝ տնտեսականօրէն:

Նա օրգանիզմը չէ՛, այլ մասնատուած օրգաններ. նա ամբողջականութիւն չէ, այլ տարանջատութիւն:

Այս ծանր պայմաններում սակայն, կա՛յ հայութիւնը հոգեբանօրէն կենտրոնացնելու, նրան իբր հասարակութիւն կերպաւորելու մի գործօն - ՀԱՅ ՅԵՂ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ: Կա՛յ նաեւ, ինչպէս տեսանք, ազգօրէն կենտրոնախոյս տարրերի ինքնակազմալուծման ձգտումը - ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑՈՒԹԻՒՆԸ:

Ամերիկահայութիւնը, ուրեմն, բաժանւում է երկու մասի - հայ հասարակութիւն դառնալու իդէալով առաջնորդուող ազգայնական հոսանք, եւ ցեղօրէն դիմազուրկ, ապազգայնացած ու տարրալուծուելու հակամէտ ցրուածութիւն: Եւ ուրիշ բան չէ ամերիկահայութեան այսօրուայ պայքարը, եթէ ոչ՝ այս երկու մտայնութեանց սուր բախումը:

Հակոտնեայ այս տրամադրութիւնները պատմահոգեբանօրէն պայմանաւորւում են նշանակալից այն փաստով, որ *հայութեան մի մասը՝ Ամերիկայում արմատ ձգելու, այնտեղ գաղութ կազմելու նպատակով չի հեռացել երկրից, այլ եղել է պանդխտութիւն*: Զոհ տաճկական հալածանքի՝ ամերիկահայ *պանդուխտը* անմիջական նպատակ ունէր դրամ շահել եւ երկրում մնացած տան օգնութեան հասնել, իբր աւելի հեռաւոր նպատակ՝ սրտում փայփայելով երկիր վերադառնալու յոյսը: Խռովքոտ այդ տարրի հոգում հայրենի հողի զգացումը դեռ այսօր էլ կենդանի է, որքան էլ «Դէպի Երկի՛ր» կանչը այժմ չի լսւում:

Դրա հանդէպ, միւս մասը՝ հայրենիքը թողել է ընդմիշտ, գնացել է դրամ շահելու եւ նոր կեանք վայելելու նպատակով, որով հոգեբանօրէն դարձել է անհայրենիք - *ապահայրենական տարր:* Այժմ էլ նա շարունակում է ո՛չ միայն հայրենակարօտ պանդուխտի հոգեխռովքից զուրկ մնալ, այլեւ ի սպառ մոռացութեան տալով հայոց աշխարհը, ճգնում է մոռանալ նաեւ իր գաղութային հանգամանքը, ծպտուել իբր տեղացի, որքան էլ *«ներգաղթ»* նշանախօսքի համար ընդունակ է ահագին խանդավառութիւն կեղծել:

Հոգեբանութիւնների այս բեւեռացումով պայմանաւորուած ամերիկահայութեան սուր պայքարը՝ իր խորքով մի մասերեւոյթն է այն ահարկու գուպարի, որ ամբողջ մի անցեալում կնքեց հայութեան ազգայնական եւ հակազգային տարրերի փոխյարաբերութիւնը, որքան էլ ամերիկացի մակերեսային դիտողին այդ թւում է արեւելեան կրքերի ըմբշամարտութեան սովորական մի տեսարան:

Ասե՛նք, որ ամերիկացու բարոյականը դիմորոշւում է նրանով, որ նա ամէն պայքար համարում է կենսաբանօրէն անհրաժեշտ եւ նրա իմաստը գտնում է նրանում, որ կողմերից մէկն ու մէկը անպայմանօրէն յաղթանակի: Ըստ նրա հայեցողութեան՝ մարդս կռւում է յաղթելու համար եւ նրա բնազդական համակրանքը մի՛շտ էլ յաղթանակի հետ է: Նա չի սիրում ողբերգութիւնը, սպորտսմէնի հոգեբանութիւն ունի եւ դիտող է միայն: Կրկիսապաշտական այս ըմբռնումին հակադրւում է ցեղօրէն հայ մարդու տառապապաշտ հոգեբանութիւնը, որի շնորհիւ հայը ամէն երեւոյթի մէջ բարոյական տարրն է փնտռում, ատում է անիրաւ ոյժը, խոցւում է, երբ անարդարութիւնն է յաղթանակում եւ արցունքի հետ՝ իր սրտի արիւնն է քամում, երբ արդարութիւնն է պարտւում:

Դրա հանդէպ, ցեղուրաց հայը՝ իբր հայկական հոգու բացասական կողմի արտայայտիչ՝ իր երջանկութիւնը պայմանաւորում է իր հոգեւոր մեկուսիութեամբ: Նա ո՛չ ամերիկացու կենսաբանօրէն ուժապաշտ բարոյականն ունի, ո՛չ էլ տառապապաշտ հայու արդարասիրութիւնը: Չարութեան շտեմարան է նրա հոգին, նա սիրում է մեր կեանքում արդարութիւնը խաչուած տեսնել եւ ցնծում է, երբ ստորնութիւնն է յաղթանակում: Անստեղծագործ է. զուրկ ներքին կրակից. անընդունակ՝ ինքնաբորբոքումի: Կարծէք Արարչութիւնը նրան պարգեւատրած է միայն գործիք դառնալու կարողութեամբ: Իբր ներքին չարութիւն՝ նա սիրում է հրահրուիլ արտաքին թշնամուց: Այս է պատճառը, որ նա միշտ էլ զինակցում է մեր ցեղի դահիճներին:

Պայքա՛ր կայ հայկական Ամերիկայում, եւ մեր ցեղի այս ներքին չարութիւնը - ցեղի այս չարարուեստ տականքը - վերստին գործիք է արտաքին թշնամու՝ այս անգամ թրքոբոլշեւիզմի ձեռքին:

Հակադաշնակցական հայը հպարտ է, որ օտար, այլ միջավայրում բոլշեւիկեան աստղի շնորհիւ ցեղօրէն ազատ իր կերպարանքը որոշ փայլ է ստացել: Ազգայնական հայութիւնը, սակայն, ապրում է հայ ճակատագրի ծանր ողբերգութիւնը եւ ազգային ամօթանքի դառնութեամբ չափւում է օտարից գօտեպնդուած իր ցեղի տականքի հետ:

Մե՛ծ, յավիտենօրէն մեծ արժէքներ են դրուած այս բորբոքուող պայքարի մէջ - մեր ազգային ոգին, որ բոլշեւիզմը մարել է ճգնում, եւ մեր դատը, որ քեմալական թուրքը սպանել է ուզում:

Եւ պայքարը տարւում է այդ մեծ արժէքները խորհրդանշող Եռագոյնի շուրջը:

Պայքա՛ր, որի մէջ պարզուեց, որ մեր ժողովրդի մէջ դեռ կան օտարահակ տարրեր, որոնք մեզ հետ չէին երէկ, երբ ազգայնական հայութիւնը աստուածային խոյանքով ոչինչէն Հայաստան ստեղծեց. մեզ հետ չեն այսօր, մեզ հետ չեն լինի ե՛ւ վաղը: Եւ որ վաղը, երբ արտաքին վտանգը Հայաստանի դռները զարկեց, այդ անդրօշակ տարրերը մեծապէս պիտի վտանգեն մեր քաղաքա-հոգեբանական թիկունքը:

Մե՛զ, ապա ուրեմն, մեզ կը մնայ կրկնապատկել մեր արթնութիւնը ամենավճռական դիրքաւորմամբ:

Ինչո՞վ կը վերջանայ այդ պայքարը, որն այլեւս վերածուած է կատարեալ դրօշամարտի: Ո՞վ կը զարնուի այս պայքարի մէջ եւ ո՞վ կը յաղթանակի: Անտեղի՛ հարց, հակադաշնակցական դիրտից զատ ո՞վ չգիտէ, որ երբ կռիւը դրօշակի շուրջն է, յաջողութեան աստուածուհին միշտ էլ պսակադրում է դրօշակակիրի ճակատը:

Դրօշամարտում մի՛շտ էլ դրօշակակիրն է յաղթում:

II

ՀԱԿԱԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Հակադաշնակցական հոգեւոր ցրուածութեան եւ քանդուածութեան տեսակէտից ախտանշական է ռամկավարների «Ապագայ» թերթի հետեւեալ ելոյթը.- *«Եռագոյնը թշնամական ցոյց մըն է այն երկիրներու հանդէպ, ուր մենք կը բնակինք: Մենք այլ դրօշ չունինք, քան դրօշը այն պետութիւններուն, ուր տեղաւորուած ենք իբր եկւոր կամ հպատակ»:*

Ընթերցո՛ղ, այդ տողերի իմաստը պէտք է բացատրել ո՛չ թէ ռամկավարի յորանջող տգիտութեամբ, նրա քաղաքական համբակութեամբ, այլ իր հոգեբանութեամբ:

Այս երկու խօսքի մէջ խտացուած է հակադաշնակցական ողջ էութիւնը՝

Աննպատակութիւն.

Քաղաքականապէս աննպատակ էակը, իրո՛ք որ քաղաքական խորհրդանիշի պէտք չունի:

Նուաստութեան հոգեբանութիւն.

Հակադաշնակցականի պատկերումով՝ հայը հաւասարարժէք չէ դրօշատէր ժողովուրդներին, որով՝ նա չի կարող քաղաքական ուրոյն

դատ եւ իդէալ ունենալ: Պատմութիւնը ճշդել է նրա դերն ու արժէքը եւ նրան պարտադրել երկրասող աշխարհաքաղաքացիութիւն - տիեզարական հպատակութի՛ւն: Նա օտարահպատակ է, եւ այլ բան չի կարող լինել: Եւ այսպէս ամենուրեք եւ յաւիտեան:

Ցեղային անլիարժէքութիւն.

Դրօշատէր լինել՝ նշանակում է ցեղային բարձր ընդունակութիւններ եւ մշակութային արժէքներ յաղթականօրէն արձանացնելու կամք ունենալ: Հակադաշնակցականի ըմբռնումով, սակայն, հայը չի կարող յաղթական կամք ունենալ, իսկ եթէ ընդունակութիւններ եւ արժէքներ ունի՝ ապա դրանք պիտի զարգացնի եւ պահի աշխարհի կամքին հլու մնալու իմաստութեամբ: Նրա համոզումով՝ հայը ցեղ չէ, այլ «ցեխ» (յիշել «ցեղակրօն» բառի պղծումն հակադաշնակցական ամբոխի կողմից, ըստ իր պատկերի - «ցեխակրօն»), այսինքն՝ մարդկային տականք: Տականքն, ի հարկէ, միշտ էլ կը մնայ ոտքի կոխան:

Կեղծ բարեկրթութիւն.

Հակադաշնակցականի ըմբռնումով՝ համեստութիւն է ուրիշի երկրում ամէն տեսակի խաբէութեամբ դրամ շահելը, բայց բարեյուսութեան դէմ է Եռագոյն բարձրացնելը, այսինքն՝ սեփական հայրենիքի վերանուաճման մասին մտածելը, որպէսզի հիւրընկալ ժողովուրդները ազատուեն մեր ոչ այնքան ցանկալի ներկայութիւնից:

Կեղծ կուլտուրականութիւն.

Հակադաշնակցականը հաւատացած է, որ Եռագոյնից հրաժարուելիս ազգերը պիտի ընդունեն թէ՝ կ՚որդեգրենք իրենց մշակոյթը: Նա իրեն վերագրում է տիրող ազգերի մշակոյթին նպաստող միջնորդի դեր, եւ հպարտանում դրանով: Նա չգիտէ, սակայն, որ կուլտուրան, եթէ ազգային չէ, կուլտուրա չէ, ինչպէս ազգը, եթէ կուլտուրական չէ, ազգ չէ:

Պարտուողականութիւն.

Սարսափից խուճապի մատնուածը լքում է իր հպարտանքը յիշեցնող ամէն բան. կորովաթափը ընդունակ է ո՛չ միայն իր դրօշը լքել, այլ եւ սարսափում է նրա ծածանքից, որովհետեւ դրօշակով մարդս ասում է իր թշնամուն - *«Ես այստեղ եմ»*: Ցեղօրէն սպառուածը, սակայն, անընդունակ է այդ անել, հէնց այդ է պատճառը, որ հակադաշնակցականը վատօրէն փախչում է Եռագոյնից:

Վախի քարոզչութիւն.

Դրօշապաշտ հայութեան բոլոր ոգորումները հակադաշնակցականին թւում են արկածախնդրութիւն: Թուրքի հետ չափուելու միտքը նա համարում է յիմարութիւն, այսինքն՝ ի յառաջագունէ ընդունում է, որ հայն

անխուսափելիօրէն պիտի պարտուի: Անարի է նա. իսկ նմանի ամբողջ իմաստութիւնը խտանում է մի՛ բառի մէջ - Վա՛խ: Իր հասկացած հայութեան ինքնապաշտպանութեան միակ միջոցը նա համարում է վախի քարոզչութիւնը, առանց գիտակցելու, թէ դրանով հայութիւնը նախապատրաստում է նորանոր պարտութիւնների համար:

Քաղաքական անբարոյականութիւն.

Ամէն վախկոտ կենսաբանօրէն անբարոյական է: Նմանի համար քաղաքական անբարոյականութիւնը բնական օրէնք է: Հակադաշնակցականը գիտէ թէ՝ Եռագոյնը նաեւ նահատակ Հայաստանի ուրուականն է, որից թուրքը չի կարող չանհանգստանալ: Վերջինին, սակայն, այս մղձաւանջից ազատելու համար՝ ռամկավարը ոչ միայն Եռագոյնի քաղաքական խորհուրդն է ծաղրում, այլ եւ ճգնում է մոռացութեան տալ Հայաստանի նահատակութեան յիշողութիւնը՝ փորձելով յաչս մարդկութեան արդարացնել թուրքը:

Խռովարարութիւն.

Որպէսզի կարելի լինի թուրքը արդարացնել եւ նրա ոճիրները մոռացութեան տալ, հակադաշնակցականը փորձում է սրել ամբողջ քաղաքական աշխարհի եւ ազգայնական հայութեան յարաբերութիւնները: Ըստ նրա, «Եռագոյնը թշնամական ցոյց մըն է» ոչ թէ Հայաստանը յոշոտող թուրքի, այլ եւ բոլոր «այն երկիրների հանդէպ, ուր մենք կը բնակինք», այսինքն, օրինակ՝ Ամերիկայի, Բրազիլիայի, Արժենտինայի, Զուիցերիայի, Ռումինիոյ եւն.: Այս ձեւով, նա երազում է ամբողջ աշխարհում հակահայ հալածանքներ տեսնել. այդ դէպքում ի հարկէ աշխարհի «ամենաարդար կարգերը» խորհրդային իշխանութեանը կը լինեն, իսկ աշխարհի ամենաասպետական ազգը՝ թուրքը: Ի՞նչ նպատակ է հետապնդում այս ներքին խռովարարը՝ ինքն էլ չգիտէ, բայց յստակ է մէ՛կ բան - նրա բոլոր ելոյթները ծառայում են հայը ներքուստ զինաթափելու թուրքատեաց հոգեբանութիւնից եւ աշխարհի ատելութիւնները մեր դէմ հրահրելով, մարդկութեան ներշնչել այն համոզումը, թէ եռագոյնապաշտ հայութիւնը համաշխարհային խռովարար է, որով՝ արդար էր, որ նա ջարդուեց եւ էլ աւելի արդար կը լինի, եթէ նա ի սպառ ջնջուի:

Հատուածականութիւն.

Ժխտելով Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարականը խորհրդանշող Եռագոյնը, հակադաշնակցականը մատնում է ցեղօրէն կենտրոնախոյս իր հոգեբանութիւնը: Վտարուած հայ ցեղայնութիւնից՝ նա սարսափում է Եռագոյնի միացուցիչ իդէալից - անկախ եւ ամբողջական հայութեան հեռանկարից: Պատմականօրէն այս տիպը մի՛շտ էլ եղել է պառակտիչ, հատուածական, ու այդպիսին է ե՛ւ այսօր:

Դաւաճանութիւն.

Անհայրենիք դարձած մի ժողովրդի համար չկա՛յ աւելի բարձր եւ նուիրական նպատակ, քան իր հայրենիքի՝ իր յաւիտենական սեփականութեան վերստացումը: Ուրանալով Եռագոյնի խորհուրդը, հակադաշնակցականը բնականօրէն հոգեկցում է ա՛յն տարրերին, որոնք դէմ են Հայաստանի վերականգնումի իդէալին, այսինքն՝ բաժանում է թշնամու տեսակէտը մեր ցեղի ճակատագրի նկատմամբ: Իսկ ընդհանուր տեսակէտ ունենալ արտաքին թշնամու հետ՝ նշանակում է ներքին հակասութեան մէջ գտնուել իր ցեղի հետ: Այս հակասութիւնն է ահա ակնաղբիւրը բարոյական այն սոսկալի անկումի, որ կոչւում է դաւաճանութիւն: Այո՛, ինչպէս տեսնում էք, *չի կարելի հակադաշնակցական լինել առանց դաւաճան լինելու*:

Հակադաշնակցականութեան էութիւնը ընդհանուր կերպով բնորոշելուց յետոյ, հարկ է աւելի մանրամասնօրէն հոգեգծել այդ ահաւոր տականքի փոփոխականները, յատկապէս ռամկավարը եւ բոլշեւիկը: Հնչակեանները զանց ենք առնում, որովհետեւ նրանք կէս այս են, կէս այն, եւ ընդհանրապէս *«կէսկէս»* են իրենց քանակով եւ որակով:

III

ՌԱՄԿԱՎԱՐԸ

«Միթէ այս ամբոխը
իմ եղբայրն է, Տէ՛ր»:

Մարդկային ազգերին յատուկ է աշխարհն ու երեւոյթները հասկանալու ճիգը:

Նրանց յատուկ է, մասնաւորապէս, իրենց ձախողանքների եւ տառապանքների պատճառները հասկանալու ճիգը:

Մե՛ծ, անասելիօրէն մեծ եղաւ մերօրեայ քաղաքական հայութեան վիճակուած տառապանքը եւ ամօթանքը, մասնաւորապէս՝ այդ վերջինը:

Մեր դժբախտութեան պատճառներին գիտակ՝ մենք աւելի այդ պատճառների բնոյթէն ենք տառապում, քան մեզ պարտադրուած անօրինակ անարդարութենէն: Տառապողին, սակայն, յատուկ է նաեւ մի ա՛յլ ճիգ - գիտնալ, թէ միեւնոյն պատճառներով մէկ ուրիշը մարդկային ցեղերէն կամ մի այլ սերունդ իր ցեղէն երբ եւ իցէ տառապե՞լ է իր չափ: Հա՛յը - իր

գոյութիւնը փոթորկող երեւոյթները պատճառագիտօրէն վերլուծող ազգայնական հայը պատասխանում է՝ Ո՛չ:

Ճիշդ է, չկան անտականք ազգեր, բայց հայ տականքը կը մնայ անմրցելի:

Գիտե՛նք, ներքին թշնամու հետ գործ ունեցել են մեր բոլոր սերունդները, բայց մեր օրերինը կը մնայ *unicum*, որի երեսէն, որի ազգադաւ արարքների պատճառած ամօթանքի մէջ մենք խաչւում ենք ամէն օր, ժամ, վայրկեան:

Ինչո՞ւ մեզ չի հասկանում ռամկավարը - հայ կեանքի այդ յաւիտենական Չիչիկովը:

Եկաւ Յեղափոխութի՛ւնը - նա հայ յեղափոխականների լեզուն չհասկացաւ:

Եկաւ Ազատութի՛ւնը - նա ազատ հայրենիքի լեզուն չհասկացաւ:

Եկաւ Լոզա՛նը - նա հայ նորագոյն ցաւի եւ ամօթանքի լեզուն չհասկացաւ:

Չհասկացաւ, որովհետեւ նա զուրկ է սրբութեան, ողբերգականի եւ հերոսականութեան զգացումէն:

Ինչո՞ւ է նա ժխտում մեր ազատագրական շարժման արժէքը:

Ինչո՞ւ է անիծում մեր ցեղի ամենասուրբ վկաներին - դաշնակցական նուիրումի հսկաներին, նրա՛նց, որոնք «գերեզմանի մէջ ննջելով՝ սուրն իրենց գլխի տակ դրին», չէ՞ որ «քաջաց բարձն է սուրը»:

Ինչո՞ւ այսպէս. - որովհետեւ այդ տիպը ցեղերի ճակատագրի հերոսականն ու ողբերգականը ըմբռնելու չափ սրտի խորութիւն, հոգու մեծութիւն չունի:

Ռամկավարը գաղափարի հակառակորդ չէ, այլ թշնամի: Պայքարում բարոյական չի ընդունում: Վատութի՛ւնն է իր միակ զէնքը: Իր էութեան դէմ է բացճակատութիւնը: Աշխատում է բերդը ներսից գրաւել, այսինքն՝ հաւատարիմ է այն մեթոդի տառին եւ ոգուն, որ պատմական մեր ամբողջ անցեալում եղել է հայ դաւաճանութեան միակ զէնքը: Իր քաղաքականութեան գլխաւոր միջոցներն են - սեւացում դաշնակցական ղեկավարների եւ շարքերը շոյող քսութիւն: Հակազգային ճակատում՝ ռամկավարն աւելի՛ գործ է տեսնում, քան բոլշեւիկը, ինչպէս եւ բոլշեւիզմի համար նա աւելի՛ է աշխատում, քան իրենք՝ բոլշեւիկները: Նա բարոյա-քաղաքական անընտրող է, նա ձեռք մեկնեց բոլշեւիկին, դարձաւ եւ յամառում է մնալ կարմիր կոչնակի ժամկոչը մեր աշխարհում: Իր պրոպագանդի ձեւերը գերազանցօրէն բոլշեւիկեան են - սեւացրո՛ւ եւ անցի՛ր: Նա էլ իր արշաւախմբի առջեւից տանում է որոշ սրբութիւններ - էջմիածինը, եկեղեցականը, խաչը, եւ վերջերս՝ նաեւ իբր նորատիպ զէնք - փողոց հանած իր «հարուածային կին»ը:

Ռամկավարի եւ բոլշեւիկի հոգեկցութեան գաղտնիքը նրանում է, որ երկուսն էլ ցուցահանում են հոգեբանութեանց նոյնութիւն. նիւթապաշտ՝ երկուսն էլ դասակարգային շահի կազմակերպութիւններ են: Երկուսն էլ անելիք չունեն հայ կեանքում. մէկն իր էութեամբ հակազգային է, միւսը՝ Հայաստանի խորհրդայնացմամբ՝ փակուած է համարում հայ դատը: Ռամկավարը՝ հակադաշնակցական իր մոլուցքի մէջ՝ նուազ ատելի դարձրեց բոլշեւիկը եւ կուրօրէն դեռ աշխատում է իրեն աւելի զզուելի դարձնել, քան է՝ բոլշեւիկը: Նա, մասնաւորապէս վերջին տարիները սկսել է հեգնօրէն չակերտել հայկական բոլոր արժէքներու սրբութիւնները: Նա զուրկ է մեծագործութիւններով հիանալու ընդունակութիւնից. նրա էութեան պատշաճում է ռուսական առածը. «սպասաւորի համար չկա՛յ հերոս»: Ռամկավարը - հայոց պատմութեան հասարակ սպասաւորն է, որ հոգեւոր մանրուքով է ապրում: Բոլշեւիկի չարածը նա արուած է համարում, իսկ մեր կատարածն՝ ուրանում: Ծառայական հոգեբանութիւն ունի եւ զզուելիօրէն հացկատակ է: Երբ բոլշեւիկներն ասում են, թէ՝ «ամենայն հայոց կառավարութիւն չեն», որ զզւում են «ազգ եւ ազգայնութիւն» գաղափարներից, ռամկավարը թութակում է, թէ խորհրդային իշխանութիւնը ազգային իշխանութիւն է, որ նա մտահոգուած է ազգի ճակատագրով եւ զբաղուած է ազգահաւաքութեամբ: Սա արդէն սովորական զինակցութիւն չէ, այլ օրուայ տիրողին ամէն գնով հաճոյանալու անազնիւ ճիգ: Օտարը հայութեան ազգային դատը ճանաչում է եւ պատկերում Դաշնակցութեան - իմա՛ մեր ազատագրական սերնդի - միջոցով, որն իր հերոսականով Հայաստան ստեղծեց. ռամկավարը, սակայն, ոչինչ է խնայում համոզելու օտարին թէ՝ հայոց ազատագրական ճիգն ու զոհողութիւնները եղած են անարժէք: Այդ տարրը ոչ միայն չի հանդուրժում հայկական տիրապետութիւնը, այլեւ զայրանում է նրա փաստից: Հոգեախտաբանական տեսակէտից ուշագրաւ է այն իրողութիւնը, որ մեր հանրապետութեան օրերին, մի հակադաշնակցական պատուիրակութիւն՝ հաւաքուած Վաշինգտոն, դիմում է Սպիտակ Տուն հետեւեալ պահանջներով՝ - Հանրապետական Հայաստան եւ Եռագոյն չեն ճանաչում. պատասխանատու չեն Հայաստանին տրուած փոխատուութեան համար. կ'ուզեն, որ դադարի ամէն աջակցութիւն Հայաստանին (իսկ այդ աջակցութիւնը սովահար որբերին տրուած ալիւրն էր):

Տեսնում էք, որ նա սովորական դասալիք չէ. նա ե՛ւ դասալքում է, ե՛ւ թշնամանում: Ազգայնականութիւնը ճիգ է պահանջում, նա մասնակից չէ ազգային ճիգին եւ ուզում է, որ դա արդիւնք չտայ, իսկ երբ արդիւնաւորւում է մեր ճիգը, նա լցւում է ցեղի ահեղ դատաստանի երկիւղով եւ ծեծում օտարի դուռը: Սարսափը ազգային ճիգից, *կենսաբանական բարոյականի պակասը մղում են նրան դիտաւորեալ կերպով կողմ դառնալու*

հնարամտութեան - Դաշնակցութիւնը Հայաստա՛ն ստեղծեց, բայց ե՛ս էլ կամ, նա ժխտո՞ւմ է իմ գոյութիւնը, ես էլ նրա ստեղծած Հայաստանը չեմ ճանաչում...

Մեր պատմութեան մէջ յաւիտենօրէն բնաեղծուած սրիկան է դա, որ հոգեբանօրէն ոչ միայն օտարահակ է, այլեւ մնում է օտարահպատակ անգա՛մ Հայաստանում: Հէնց այս պատճառով էլ նրա ցայտուն տիպերը դառնում են դաւաճան, աւելի անզօրները՝ եթէ գործի վրայ են, երեւան են բերում դիրքի մակաբուծութիւն եւ պաշտօնապղծութիւն: Նա չի նուիրւում, չի ստեղծագործում, այլ մնում է միայն օգտուող: Որպէս ընկերային տարր, հեշտ ապրելու հակամէտ, որով՝ հոգով միշտ էլ փերեզակ, նա կեանքում նախընտրում է շահաբեր աշխատանքը միայն, զարգացնում խաբէութեան արուեստը, կեղեքում է ու անուղղակի կերպով հասնում իր հակացեղային նպատակին - յաչս աշխարհի ատելի դարձնել հայութիւնը: *Յովհաննէս Քսակասէրը* - ահա՛ իր միակ իդէալը: Ծայրայեղ նիւթապաշտութիւնը՝ իր էութեան ամենացայտուն գիծը - նրան միշտ էլ համակուած է պահում նիւթական խորին մտահոգութեամբ, եւ մղում *անձնական շահու աստուածացման*:

Ահա՛, հոգեբանական այս գծերի ընդհանրութիւնն է, որ զինակից է դարձրել ընկերային դիրքով հակոտնեայ երկու տարրերը՝ բոլշեւիկը եւ ռամկավարը - մեր ազգային դատի դէմ:

Մեր ցեղավար ըմբռնումով՝ մենք զոհաբերում ենք անցաւորը յաւիտենականին: Ռամկավարի հոգեբանութիւնը թոյլ չի տալիս ենթակային մի բան զոհաբերել վաղուայ համար: Հէնց այդ է պատճառը, որ նա *քաղաքականութիւն չունի եւ չի կարող ունենալ*, որովհետեւ քաղաքականութիւն չի նշանակում ներկայի չարաշահութիւն, այլ առաւելապէ՛ս ապագայի մտահոգութիւն: Նա քաղաքական *homunculus* է: Մէկ իրաւունք ունի դա, այն, ինչ Տիէրը մի ժամանակ ասում էր լեհական ընչաքաղց քաղքենիութեան՝ - «Հարստացէ՛ք»: Ռամկավարի ընչաքաղցութիւնը, սակայն, նրան դարձրել է նաեւ *քաղաքական շահատակող*: Արեւմուտքում նա հաց է մուրում, իսկ բոլշեւիկների հետ բարեկամութիւն կեղծում, որպէսզի քաղաքական կշիռ ստանայ: Այսպէսով, երկուսն էլ հաշուեյարդարի են նստած մեր անցեալի հետ - մէկը ցեղահայհոյութեամբ է զբաղուած՝ բոլշեւիկը, միւսը՝ հոգեւոր հնավաճառի իր հոգեբանութեամբ, լղրճում է մեր ազգային արժէքները՝ ռամկավարը: Նա կեղծում է նաեւ մի այլ բան, որ իր հասկացողութեան սահմանից վեր է: Երբ մենք ճիգ ենք անում վառ պահել այն հաւատը, թէ ամէն ճակատագիր ու Լոզան սրբագրելի է, նա, ընդհակառակը, ճգնում է քաղաքական յոռետեսութեան մղելու մեր զանգուածները: Գիտէք, թէ իր խանութում որքա՛ն լաւատես է ռամկավարը. նա գիտէ, որ անազնիւ ճիգն անգամ կարող է իր ճակատագիրը բարելաւել, բայց

հասարակական գործում որեւէ ճիգի չի հաւատում: Նա ապրում է այնպէս, ինչպէս մտածում է: Անցեղաճանաչ տգէտի իր ըմբռնումով՝ մեր ցեղը ստորարժէք է - մի սպանիչ ըմբռնում, որ նրան պէտք է դարձնէր *անկապաշտ:* Նա իր անկումի գիտակցութիւնն ունի, գիտէ, որ հանրածանօթ է իր ընկածութիւնը. համակուած է ներուելու անյուսութեամբ, որով՝ նաեւ սարսափի հոգեբանութեամբ: Նա բռնուած է հալածուողական մանիայով: Նա կարծում է, որ իրեն հետապնդում են. վախենում է ինչպէս տակաւին չձերբակալուած յանցաւորը: Հէնց այստեղից է նրա կենդանական կոյր ատելութիւնը ազգայնական հայութեան հանդէպ, ինչպէս եւ իր հայհոյելու, սեւացնելու, մատնելու, դաւելու եւ դաւաճանելու մոլուցքը: Նա իբր հոգեպէս քանդուած էակ՝ նաեւ *պատրապաշտ* է. նա այնպէս է խօսում, իրերն ու երեւոյթները այնպէս է ներկայացնում, որ իբր թէ յաղթական է, մինչդեռ իրականութեան մէջ, ոչ մի յաջողութիւն չունի, եւ հասկանալի է դա: Օտարին լծակցողը եւ ցեղի հոգեւոր իշխանութիւնից վտարուածը չի կարող կենարար կերպով ազդել:

Բոլշեւիկները, որոնք նոյն հոգեմտավիճակն ունեն, կարծում են, որ յանձին ռամկավարների մի լուրջ զինակից են գտել, եւ այդ համարում են իրենց քաղաքականութեան մէկ նուաճումը հայ կեանքում: Այն բոլոր տարրերը, սակայն, որոնք այսօր բոլշեւիզմի հետ են, երէկ էլ մեզ հետ չէին - հնուց ի վեր եւ մինչեւ հիմա: Հոգեբանօրէն մեկուսի եւ հացից է՛ն կողմը չտեսնող այդ տարրը վաղուց է դուրս եկել ցեղային հարազատութեան գծից: Բոլշեւիզմի շնորհիւ, սակայն, այս տարրը գոյութեան իրաւունք, արդարացում եւ երեւութական կշիռ ստացաւ: Նոր ոչինչ կայ դրանում: Ներքին դաւաճանը օտարից միշտ էլ արդարացում եւ կշիռ է ստացել, մանաւանդ, երբ պատմական որոշ լուրջ վայրկեաններում անհրաժեշտ է եղել գործածուելու իր ցեղի դէմ: *Ռամկավարը վախճանաբանութիւն չունի*, այդ իսկ պատճառով՝ նա անկարող է գնահատել մեր ցեղի գոյամարտի նշանակութիւնը, որովհետեւ սրա խոստացած բարիքները հեռաւոր են եւ այսօրուայ համար ո՛չ շոշափելի: Այդ նոյն պատճառով, նա նախատեսելու կարողութիւն չունի: Այդպիսին նրան դարձրել է նիւթապաշտութիւնը:

Անազատունակ է. ստրուկ, կարող է թերեւս ազատութեան ըմբռնումը ունենալ, բայց ապրումը՝ ո՛չ:

Անկուլտուրունակ է. սովորական միջակութիւններ է տալիս. նրանից չեն ծնի «իմացական առիւծներ», նրա հոգին զուրկ է արժէքներից, որով՝ արժէպաշտութիւնից:

Անզոհաբերող է. իր կամքը ընկերային-հասարակական ուղղութիւն չունի, ասել է հաւաքականութեան զգացումից զուրկ է: Այդ է պատճառը, որ նա հոգեպէս մեկուսի է եւ հակացեղային: Նա ատակ է միայն չարախոր-

հուրդ միաբանութեան, նա միանում է միայն քայքայելու եւ քանդելու համար, թանձրացեալ օրինակ՝ «Միացեալ Ճակատը»:

Ըստ Բերգսոնի ներհայեցողական իմացականութեան՝ «Ատելութիւնը բաժանում է, որի հետեւանքով, ճանաչումը դառնում է անկարելի կամ սխալ»: Ճանաչել նշանակում է միութեան մէջ լինել նրա հետ, որին ուզում ես ճանաչել, որով՝ ով ատում է՝ չգիտէ, չի ճանաչում: Հակադաշնակցականը կարող է յաւիտենապէս սողալ մեր պատմութեան մթին անկիւններում, բայց երբե՛ք ճանաչել հայ ցեղի հոգեւոր դիմագծութիւնը, երբեք հարազատել մեր խօսքի հոգեբանութիւնը, որովհետեւ տկարի եւ ստրուկի ատելութիւնն է նրա էութեան միակ զօրաւոր գիծը: Եթե նա իր ցեղը ճանաչելու, սիրելու, նրա համար զոհաբերելու կարողութիւնը ունենար, նա հակադաշնակցական չէր լինի: Ի զուր է մեր պրոպագանդը՝ մեր խօսքը նրան դարձի բերելու, նա մեզ ո՛չ կը հասկանայ, ո՛չ կը ճանաչի, ո՛չ էլ կը միանայ: Նրանք, որ հաւատում են նման հոգեբանական հրաշքի՝ կա՛մ կեղծում են, կա՛մ էլ միամիտներ են:

Հակադաշնակցականի հոգում ոչինչ կայ ցեղային, աստուածային: «Արծիւ, առիւծ» գաղափարներն անգամ նա խուսափում է գործածել իր մշակած գրականութեան մէջ: Նա հոգեւոր աղուէս է, որ աղէտից առաջ քուն է քաշում, չարագուշակ բո՛ւ, որ աղէտից յետոյ մարգարէի փետուրներ է հագնում եւ վայում: Նենգագործ է նա. քաղաքական երկչոտութիւնը եւ մտածումի անմաքրութիւնը մղում են նրան խարդախելու իր հակառակորդի բոլոր ասածները: Օրինակ, երբ մենք ասում ենք՝ հայութիւնը պէտք չէ զինաթափուի, նա ոռնում է, թէ՝ Դաշնակցութիւնն ուզում է նոր կոտորածների պատճառ դառնալ, չնայած որ գիտէ, թէ աշխարհի փոթորկումը մեզնից անկախ է եւ, որ նոր պատերազմը կարող է մեզ անակնկալի բերել: Նա խարդախում է մեր յօդուածները, նախադասութիւնները, բառերն անգամ: Այդ կողմից նա լուսեղբայրն է բոլշեւիկի, չէ որ բոլշեւիկը, ըստ Պրիաբրաժենսկու՝ «Երկաթէ աւելով սրբում է այն ամէնը՝ ինչ համաձայն չէ իր տեսակէտին»: Բոլշեւիկն ասում է՝ *չեմ հասկանում, որով ժխտում եմ.* ռամկավարը տրամաբանում է՝ *տրամադիր չեմ հասկանալու, որով պէ՛տք է ժխտեմ:* Այդ տարրը, որ մինչեւ բոլշեւիզմը Հայաստանի մէջ եւ նրանից դուրս ստրկագրաստային հնազանդութիւն էր ցուցադրում, բոլշեւիզմի երեւումով՝ վայրագ, այլ անզօր ընդվզում ունի հայութեան այն մասի դէմ, որ նոր ճիգեր եւ զոհողութիւն է պահանջում յանուն ցեղի ապագայի: Նա զբաղեցրեց եւ շարունակում է զբաղեցնել քաղաքական հայութիւնը ներքին ճակատի վրայ, վրիպեցնելով նրա ուշադրութիւնը իր փրկութեան միակ զէնքից - ինքնապաշտպանութիւնից: Իր չէզոքութեամբ նա փաստօրէն զինակցեց թուրքին: Այսօր էլ նա անտարբեր է մեր ճակատագրին կապուած

հարցերի նկատմամբ, եւ չի հասկանում, որ անտարբեր մնալ՝ ասել է թշնամանալ: Անձնական եւ անմիջական բարիքներ ձեռք ձգելու համար, նա քանի՛, քանի՛ անգամ կենսական վնասներ հասցրեց հայ դատին եւ ապագային: Նա լրտեսների մի լեգէոն հասցրեց հայութեան դահիճներին: Քաղաքականապէս տգէտ, բայց օժտուած փերեզակի ճարպիկութեամբ՝ նա այսօր լծուել է նոյն անարգ գործին, միաժամանակ շահագործելով մեր ժողովրդի որոշ խաւերի տկարութիւնն ու միամտութիւնը: Իր բոլոր գծերով՝ ռամկավարը ժառանգորդն է հայոց պատմութեան այն զազիր մրուրի, որի հոգեբանութիւնը բնութագրում է ինքը՝ Մամիկոնեան մեծ սպարապետ Վահանը - «Ուրացութեան շնորհիւ պաշտօնի հասնողները (պարսից Պերոզ թագաւորի քաղաքականութեան շնորհիւ) սովորաբար կեղծաւորներ են եւ անպիտաններ, որոնց հետ նոյնիսկ հաց ուտելուց կը գարշեն հայոց ռամիկ շինականները»:

Հակազգայնական այդ չարագործը դեռ այսօր էլ սիրում է երեւալ ազգային ղեկավարի դերում, չնայած որ ցեղը նրան վաղուց է վտարել իր հոգեւոր սեղանակցութիւնից: Գիտենք, որ անցեալի եւ ապագայի, սկզբի եւ վախճանի մասին անասուններն անգամ տարտամ ըմբռնում ունեն. ռամկավարն ու բոլշեւիկը զուրկ են դրանից. երկուսն էլ հասկացողութիւն չունեն մարդու եւ մարդկային ցեղի մէջ գոյութիւն ունեցող *ազգայնօրէն աստուածայինի* մասին: Վայրի եզը անապատում կանգ է առնում, հոտոտում է իր ցեղակցի ոսկորները եւ գոռում, ողբում, հակադաշնակցական տականքը զուրկ է անասունի այս սրբազան բնազդից իսկ: Բուլղարական մի առակ ասում է. «Նա, որ իր ամբողջ կեանքում արայավաճառութեամբ է զբաղուել, նրան մի՛ տաք գնահատելու բեհեզը»: Ռամկավարը մեր կեանքում եղաւ, է՛ եւ կը մնայ հասարակ արայավաճառ. նա չհասկացաւ, չի հասկանում եւ պիտի չհասկանայ մեր ցեղային բեհեզի գեղեցկութիւնը, մեր դառն ճակատագրի քաղցրութիւնը, մեր մեծագործ ցեղի խոյանքների իմաստն ու արժէքը:

Ահա դիմագիծը հակացեղային այն տականքի, որ կոչւում է հակադաշնակցութիւն:

Հակադաշնակցականի էութեան ամենաշնական գիծը, սակայն, նրա իւրահատուկ *թրքասիրութիւնն է*:

«Թուրքն եկաւ եւ ամէն ինչ աւեր ու սուգ դարձաւ»՝ ողբերգում էր յոյն մեծ բանաստեղծը: Հակադաշնակցականը Հայաստանի կործանումի փաստից յետոյ էլ անընդունակ է ցնցուել այս խօսքի բովանդակած ողբերգութիւնից: Յոյն զանգուածը ապրեց իր բանաստեղծի շնչով եւ ողբը վերածուեց պայթուցիկ ոյժի, որ մոխիրների տակից հանեց նոր Հելլադան:

«Թո՛ւրք, դու Ալլահի անիծեալ պատկեր, քո սեւ օրն է՛լ կուգայ» -

այսպէս ողբերգեց հունգար ժողովուրդը, մինչեւ մի օր կ'ողջունէր իր անկախութեան օրը:

Հակադաշնակցական հայը մեր մոխրացած հայրենիքի համար ո՛չ միայն ողբ չունի, այլեւ շնականօրէն ծաղրում է հայրենապաշտ հայի ողբն ու տառապանքը, ամէն օր նրա ականջին կրկնելով՝ «Բարեկա՛մ, թուրքը լա՛ւ դրացի էր, մեղաւորը քո յեղափոխութիւնն է»:

«Երբ, ասում է Մինաս Չերազ, արդի կեղծ կամ անկեղծ թրքասիրութեան շրջանը անցնի, մեր ցեղը ծնունդ պիտի տայ ճշմարտապէս անաչառ եւ իրապէս իրազեկ պատմիչներու, որոնք արժանապէս գնահատեն իր փրկութեան համար կատարուած գործերը, առանց գործիչներուն փոքրոգի միտումներ վերագրելու» (Ազգային խնդիրներ, էջ 41):

Հակադաշնակցականի համար այս շրջանը երբեք, երբե՛ք պիտի չանցնի: Եթէ նա ցնցուել է հայկական աղէտից, այդ նրա համար չէ, որ Հայաստանն է խորտակուել, այլ նրա համար՝ որ ինքը անձնապէս վնասուել է: Ըստ իր հայեցողութեան, այս վնասը հետեւանք է հայ յեղափոխութեան եւ կարող է դարմանուել թուրքը սիրաշահելով միայն: Այստեղից է ահա՛ նրա օրգանական ատելութիւնը հայ յեղափոխութեան հանդէպ: Ո՛վ պիտի հատուցանի նրան, ո՛վ պիտի վճարի, յեղափոխական հայութի՛ւնը, որ միջոցներ չունի - երբե՛ք: Բայց թուրքը մի օր կարող է մոռանալ անցեալի վատ յիշողութիւնները եւ վերադարձնել նրա ստացուածքը: Այստեղ է նաեւ աստառը այն խորհրդաւոր ճիգի, որ թափում է հակադաշնակցականը յաչս մարդկութեան արդարացնելու թուրքը: Ի՞նչ շահ անցեալի արիւնալի յիշողութիւնները հրահրելուց, մինչ մոռացումը կարող է օգտաւէտ ներում ընծեռել նրան: Ա՛հ, այդ հոգեւոր վարձկանը, որ իր դիրքը աշխարհի չարի եւ բարու հանդէպ միշտ էլ որոշում է այս հարցով՝ «Ո՛վ ինձ կը վճարի»:

Հակադաշնակցականը - դա այն պատմական տիպն է, որին Վոլա լերան վրայ իր հոգեվարքում անիծեց բուլղարական ազատութեան Բոտեւը: Բուլղար հայդուկային առաջին վճռական ընդվզումն է Թուրքիոյ դէմ: Յեղափոխական խումբը կռուի է բռնուել, կռիւը անհաւասար է, հայդուկների 90 տոկոսը այլեւս պաղ դիակների է վերածուած, վիրաւորուած է ե՛ւ հրամանատար Բոտեւը: Այդ վիճակում, սակայն, նա դեռ շարունակում է օրհասական կռիւը, արձակւում են վերջին գնդակները եւ յեղափոխական մարտիկների վերջին հռնդիւնները: Ահա՛, ահաւորօրէն այդ վեհ վայրկեանին՝ հոգեվարող Բոտեւին մօտենում է բուլգար մի սայլապան եւ հարցնում՝ «Հապա ո՞վ կը վճարի ինձ, ես հաց փոխադրեցի զինուորներիդ համար»: Պատմութիւնն ասում է՝ Բոտեւը մեռնելուց առաջ անիծեց իր ժողովրդի անազատունակ, անզոհաբերող, նիւթականացած տարրերը: Նզո՜վք եւ իր վերջին գնդակի հետ փչեց իր շունչը:

Ա՛հ, Բոտեւի նզովուած սայլապանն եղաւ ե՛ւ հակադաշնակցականը մեր կեանքում: Մեր պատմութեան ամենագերագոյն վայրկեանին, երբ ցեղը օրհասականօրէն իր գոյամարտը կը վարէր, յաճախ լսուեց նրա անիծեալ ձայնը՝ «ո՞վ ինձ կը վճարի»: Եւ հոգեբանական այն մթնոլորտում, որ պիտի ստեղծուէր յեղափոխական ողբերգութիւնից յետոյ, ինչպէս բուլգար, այնպէս էլ հայ երկնքի տակ, այս երկու աղաղակները մնում են արձանացած իբր յաւիտենական պայքարի կանչեր - *յեղափոխական առաքեալի եւ վարձկան սայլապանի:* Մէկը իր արիւնն է շռայլում, միւսը՝ հոգեվարող իր սայլի վարձքն է պահանջում: Է՞ զազրելի տականք, ի՞նչ ենք պարտական քեզ - սայլիդ վա՞րձքը, բայց չէ՞ որ դու ոչ թէ արիւնդ, այլ սայլդ իսկ չտրամադրեցիր արիւնող հայրենիքիդ: Ո՞ւր էիր երէկ, դու անիծեա՛լ յաւիտեանս, երէ՛կ, երբ դաւադրուած հայութիւնը մի աստուածային խոյանքով Արարատեան երկիրը վերստին ցեղի տունը դարձրեց: Ղարաքիլիսայի եւ Սարդարաբատի հերոսամարտերէն մարմնիդ վրայ կա՛յ մի հետք - մի վէրք, պատուոյ մի սպի: Երէկի մեր փառքերի արեւէն ճակտիդ վրայ կա՛յ մի հատիկ ճառագայթ: Իսկ այսօր - ա՛հ, դու պղծադաւան թշուառական, դու մեր վէրքերն ես հայհոյում: Եւ մտածել, որ մեր հանդէպ սնուցած ատելութիւնդ պիտի յանգէր ախտաւոր թրքասիրութեան - իրօք որ սպանի՛չ է այս մտածումը:

Հայկական թրքասիրութիւն - եւ այդ ա՛յն ժամանակ, երբ թուրքը՝ յանձին իր երիտասարդ մտաւորականութեան՝ հայութեան եւ Հայաստանի մասին այսպէս է մտածում.

- «Դաշնա՛կ էֆէնդիներ, չէք կրնար պատմութիւնը խեղաթիւրելով հայրենիք ստեղծել, եթէ այն համոզումն ունիք, թէ անպատճառ օտարների շնորհիւ պիտի կարողանաք պահել ձեր գոյութիւնը, շէնքեր շինեցէք Երեւանի մէջ, որ թուրքական հին նահանգ մըն է եւ տարակոյս չունինք, թէ մօտերս պիտի ստանայ իր նախկին անունը: Եթէ հարկ է հայրենիք մը ստեղծել ձեր երեւակայած վայրին մէջ, անկէ առաջ փաստեցէք, թէ՝ ձեզի կը պատկանի ձեր կենտրոնն եղող Երեւանը» («Պիրլիք» - թուրք ուսանողութեան օրգան):

Անդրօշակ հա՛յ, չե՛ս սարսափում, տրամադիր չե՛ս քո «սիրած» Երեւանի համար գէթ մէկ վայրկեանով մոռանալ «սայլիդ վարձքը»: Ա՛հ, զարհուրելի է, զարհուրելի - սթափումի փոխարէն ռամկավարը աւելի՛ է խորացնում իր հոգու թրքացումը: Գիտէինք, որ վաղուց իջնել եւ աղաղակել՝ «վա՛ր առէք հայկական եռագոյնը», հոգեբանօրէն ասել է՝ պարզեցէ՛ք թուրքի դրօշը: Այս սինլքորը հաշտուել է այլեւս այն մտքին, որ դա մի օր կարող է բարձրանալ նաե՛ւ Երեւանի վրայ. եւ ահա, կարծէք, առ ի կանխապատրաստութիւն այդ գալիքի, նա գաղութահայ դպրոցներում փորձում է մտցնել *«Բարի լոյս»* (աւելի ճիշտ պիտի լինէր ասել թրքալոյս) դասագիր-

քը, յորում հայ մանուկը պիտի սովորի հետեւեալ ձօնը՝ թուրք դրօշակին, թուրք հայրենիքին եւ Աթաթուրք Քեմալին.

- *«Աստղիկ մը ճակտին՝ մահիկն անուշակ,*
Երկնքէն իջած է մեր դրօշակ.
Անոր տեսքն անգամ կը բաւէ,
Որ թուրք զինուորներն առիւծներ դառնան:
Մեծ կազին ճամբան գծած է արդէն,
Յառաջ պիտի երթանք մենք ամէն ատեն»:

Իսկ *«Պիրլիք»*ն ասում է, որ Ղազիի ճամբան տանում է դէպի Երեւան:

*«Բարի լոյս»*ն ասում է. «Հա՛յ մանուկ, հայրենիք ունիս - Թուրքիան, դրօշակ ունիս - մահիկն անուշակ, մեծ հայրիկ ունիս - Քեմալն Աթաթուրք...»

Իսկ հայ նահապե՞տը, նա վաղո՜ւց, վաղո՜ւց է մեռել ռամկավարի հոգում: Այժմ նա փորձ է անում իր նախահայրերի գերեզմաններն իսկ դուրս նետել իր սրտից:

Այսպէ՛ս, եթէ Խ. Հայաստանում սովորեցնում են հոկտեմբերիկներին ասել՝ «Լենի՛նն է հայրս», Հայաստանից դուրս, հակադաշնակցականը իր երեխային ասում է՝ «Քեմա՛լն է հայրդ»: Հոգով թրքացած այդ վատը, որ երբեմն «հայորդի» բառով շաղակրատել գիտէ, փաստօրէն որոշել է իր մանուկը լամուկի վերածել: Տեսնել ու զգալ, որ ուրացութեան այդ զազիր գործին յատկապէս լծուել է Բարեգործական կոչուածը, որը հայ բարեպաշտ մեռելների կողոպուտով եւ կտակներով է ապրում: Իրօք որ երկրագնդի վրայ տակաւին չապրուած զարհուրանք է:

Հակադաշնակցականի այդ հոգեւոր թրքացումը մեզ հիշեցնում է քաղաքական գործիչ Կիրովի «Գայլը՝ առաջնորդ» պատմուածքը: - «Խոյը ճգնում է համոզել ոչխարներին, որ իրենց առաջնորդ ընտրեն գայլը: Երբ ոչխարները զայրոյթով ետ են մղում այդ առաջարկը՝ խոյը խուժանավարում է - «Լսեցէ՛ք, ես ձեզ ասացի, որ գայլը ընտրէք առաջնորդ, զարհուրելի ի՞նչ կայ սրանում: Խնդիրը դիտեցէք պատմականօրէն: Պատմութիւնն ի՞նչ է ասում գայլի մասին. նա ասում է, թէ՝ դա մի արյունարբու գազան է, որ ապրում է աւարով: Լա՛ւ հասկացէ՛ք, աւարո՛վ է ապրում: Բայց ի՞նչ է աւարը, դա՝ իւրացումն է ուրիշի սեփականութեան: Գայլը ապրում է ուրիշի սեփականութեան իւրացումով: Սակայն, ինչպէ՞ս է դրուած մեր խնդիրը: Մենք ուզում ենք նրան դարձնել մեզ առաջնորդ: Է՛, ասացէք, խնդրեմ, սրանից յետոյ տեղի՞ն է որեւէ վախ»:

- Բրա՛վօ, ճի՛շդ է, միաձայն մայեցին բոլոր ոչխարները՝ խորապէս յուզուած, եւ ընդունեցին խոյի բանաձեւը երկարատեւ ու դղրդագին ծափերով»:

Խուժանավարող խո՛յը - ահա՛ ռամկավար մտաւորականը:

Կենսաբանօրէն անբարոյականը պատմութեան մէջ շատ յաճախ ղեկավարւում է այս խոյի հոգեբանութեամբ եւ բարոյապէս տկար հոտն էլ ոչխարի պէս հետեւում է նրան:

Չարը, զօրաւոր չարը պաշտւում է: Քաղաքականօրէն յիմարը միշտ էլ վայրենավայել պաշտամունք ունի չար ուժերեւոյթների հանդէպ: Պաշտում է, որովհետեւ գտնում է, որ զինաթափել չի կարող: Հոգեպէս կոյր է նա եւ կարճայուշ: Նմանն ընդունակ է ատել իր ցեղի Աստուածը, ներել իր դահիճին եւ սիրել նրան: Այսպէս է *ահա հակադաշնակցական տականքի թրքասիրութիւնից ծնունդ առնում ազգայնական հայութեան ամօթանքի ողբերգութիւնը: Այդ ամօթանքը խորապէս ապրելու մէջ է, սակայն, նաեւ մեր ոյժը:*

IV

ՀԱՅ ԲՈԼՇԵՒԻԿԸ

Մեզ համար չկա՛յ սոսկական
բոլշեւիզմ - կայ թրքօբոլշեւիզմ:

Մեր դէմ գործող բոլշեւիկը մենակ չէ: Ուր խօսում է եւ գործում նա, այնտեղ նրա կողքին, ստուերի մէջ խօսում եւ գործում է թուրքը - ահա՛ թէ ի՛նչն է աւելի վտանգաւոր եւ գարշելի դարձնում բոլշեւիզմը մեզ համար:

Առանձին չի լսւում բոլշեւիկեան հայամերժ խօսքը. այո՛, թո՛ւրքը, թո՛ւրքը, թո՛ւրքն է ամէն տեղ: Ուր երեւում է բոլշեւիկը, ուր խօսում է նա, այնտեղ անհերեւութաբար ներկայ է թուրքը, այնտեղ շահում է թուրքը եւ շնօրէն ծափ տալիս: *Մեզ համար չկա՛յ բոլշեւիզմ - կայ թրքօբոլշեւիզմ, չկա՛յ բոլշեւիկ - կայ թրքօբոլշեւիկը*:

Այդ կարմիր չարիքն այսօր յարձակողական է մասնաւորապէս Ամերիկայում, ուր դա փոխադրել է մեր դէմ սկսած պայքարի ծանրութեան կենտրոնը:

- *Անտարբերութիւն դէպի ճշմարտութիւնը* - ահա՛ ամենակարկառունը նրա հոգեբանութեան գծերից: Բոլշեւիկը ոչ միայն ճշմարտազանց է, այլ եւ ճշմարտութեան թշնամի, եթէ դա իր հաշուին չի գալիս: Նա վարպետօրէն տիրապետում է խոստանալու, սուտի, կեղծիքի արուեստին: Նրա չափ մեր աշխարհում ո՛չ ոք է կարողացել օգտագործել *անասնականը մարդու մէջ:* Նա գիտէ զօրահաւաքել մարդկային բոլոր տեսակի կրքերն ու ատելութիւնները իր հակառակորդի դէմ: Նա չէ՛ տեսաբանում, չէ՛ լուսաբանում,

նա միայն յարձակւում է եւ սեւացնում: Նա ոչ միայն չի լուսաբանում, այլ եւ լուսաբանելու բաղձանք չունի:

Բոլշեւիզմը - կոպիտ ոյժի տիրապետութիւնը սարսափի միջոցաւ - մեր ժամանակի ամենամեծ չարիքն է, որի դէմ պայքարելն աւելի դժուար է, քան մարդկային ցեղի որեւէ թշնամու: Դա մի նոր հեթանոսութիւն է, մի խելագար վերադարձ դէպի վայրենացում եւ ընկերային գայլութիւն: *Դա աշխարհ եկաւ եւ իր իշխանութիւնը տեւականացնելու նպատակով արդարացրեց յանցանքն ու յանցագործը*, եւ հակաբարոյական այս ակտով լենինեան փարախը քաշեց մարդկայնօրէն եւ ազգայնօրէն տկար բոլոր տարրերը եւ նրանց վերածեց քանդիչ ոյժի: Մի հատիկ չափանիշ ունի նա - շա՛հը, նիւթական շահը: Տաքտիքի մի հիմնական սկզբո՛ւնք - հակառակորդը մեղադրել այն վատութիւնների մէջ, որոնք ինքն է կատարում: Թրքատիպ ջարդարար է, զանգուածօրէն մարդիկ է ոչնչացնում եւ իր հակառակորդներին փակցնում «ոճրագործ» ածականը: Ձինակցում է թուրքին, եւ Դաշնակցութիւնը հռչակում ֆաշական: Հոգի է տալիս Իտալիոյ եւ Գերմանիոյ հետ բարեկամանալու համար, եւ մեզ անուանում է Մուսոլինիի եւ Հիթլէրի դաշնակից: Սուտն ու կեղծիքը ոչ թէ պայքարի սոսկական զէնքեր են նրա համար, այլ նրա երկրորդ բնաւորութիւնը: Աննման քարոզիչ է եւ լրտես, հաւասարապէ՛ս: Իր նպատակների համար նա օգտագործում է իր կինը, երեխան անգամ: *Լրտես է ոչ թէ արհեստով, այլ հոգով:* Իր անասնական եսապաշտութիւնը նրան դարձրել է անխտրողական: Այդ է պատճառը, որ նա լրտեսում է իր մօրը, հօրը, քրոջը: Սատանայօրէն վճռական է, որովհետեւ փոխվրէժի սարսափն ունի, որովհետեւ քաջ գիտէ որ բոլշեւիզմի պարտութեան դէպքում կը վտանգուի ոչ թէ իր ընկերային դիրքը միայն, այլեւ իր ֆիզիքական գոյութիւնը: Ճանաչում եմ շնորհօքն Լենինի հայազգի բոլշեւիկներ, որոնք իրար հանդիպելիս հռոմեական աւգուրների նման դժուարանում են չծիծաղել միմեանց վրայ: Բոլոր հայ բոլշեւիկները իրենց ստահակ լինելու գիտակցութիւնն ունեն: Մեր կարմիր կարապետների համար չկայ քաղաքական բոլշեւիզմ. *նրանց դաւանածը հոգեւոր կարգի բոլշեւիզմ է*: Հայաստանից դուրս սփիւռքի մէջ գործող մեծամասնականների հարիւրին առ հարիւրը այդ տիպի արտանկարներն են: Բայց եւ այնպէս ձեւացնում են, թէ նպատակագիտակ բոլշեւիկ են:

«Թող չլինի՛ Ֆրանսան, միայն թէ՝ հանրապետութիւն ունենանք»՝ ասում էին ֆրանսական ժողովրդի քաղաքական որոշ տարրերը, Նապոլէոն Գ.ի մահից յետոյ: Իրենց գործով նոյնն են ասում ե՛ւ ամերիկահայ բոլշեւիկները - *«Հայաստանը կարող է ե՛ւ չլինել, միայն թէ բոլշեւիզմ ունենանք»*: Դրանք էապէս ո՛չ խորհրդային Հայաստանն են սիրում, ո՛չ էլ

Հայաստանի ժողովուրդը, այլ խորհրդային իրաւակարգը, միա՛յն իրաւակարգը:

Բոլշեւիկի համար կեանքը դասակարգային կռիւ է, պատերա՛զմ, իսկ պատերազմում ամէն ինչ թոյլատրելի է: Այդ պայքարում նա ճանաչում է մի հատիկ օրէնք - օրէ՛նքը կոպիտ ոյժի, եթէ ինքը զօրաւոր է, օրէ՛նքը ստորնութեան, ուր եւ երբ ինքը տկար է: Նա դէմ է տարրական մարդկայնութեան, սադիստ է եւ իր անգթութիւններով ձգտում է ահաբեկել իր հակառակորդը: Ահաբեկիչ է, ըստ նրա՝ ահաբեկչութիւնը բնական մի երեւոյթ է, քաղաքական մի պահանջ՝ պայքարում: Ահա՛ թէ ինչո՞վ է բացատրւում նրա հոգեկցութիւնը թուրքին: Այդպիսին լինելով հանդերձ, բոլշեւիկը ճիզուիտօրէն դատապարտում է անհատական ահաբեկչութիւնը եւ նոյնիսկ բարոյախօս է դառնում, երբ դա գործադրւում է ի՛ր դէմ: Նա օգտւում է կեղծ բարոյական զայրոյթից իբրեւ քաղաքական կամ մարտական տաքտիքայի միջոց: Օրինակ, մսագործի սառնասրտութեամբ նա տասնեակ հազարաւոր կղերականների կեանքը հնձեց, իսկ մի ինչ-որ Դուրեանի համար ահագին աղմուկ հանեց:

Յաճախ լուրջ զաւեշտներ է խաղում, ա՛յն իմաստով՝ որ իբր թէ կարեւորութիւն է տալիս հանրային կարծիքին եւ այդ անում է ոչ թէ նորածինի պէս անմեղ երեւալու մտօք, այլ իր ճիւաղութիւնը չմատնելու համար: Նրա համար պայքարում չկա՛յ մեղաւոր եւ անմեղ, կայ զօրաւորը եւ տկարը, չկա՛յ բարոյական եւ անբարոյական, կայ յաղթական եւ պարտեալը: Նա բարոյական բաւարարութիւն չի փնտռում ո՛չ պայքարում, ոչ էլ բարեկամութեան մէջ, այլ իրական շահեր, միայն շահեր: Մասնաւորապէս մեր գաղութներում, ուր բոլշեւիզմը այնքան էլ ցանկալի ապրանք չէ տիրապետող ժողովուրդների համար, հայ բոլշեւիկը ծնունդ է տուել հոգեբանական մի նոր արուեստի: Ծանօթ միջատների պէս նա գիտէ ընդունել գոյնը ամէն միջավայրի: Նա սովորական ծպտեալ չէ, այլ նմանակեղծ (սիմուլեանտ): *Նա չի բաւարարւում արտաքին գոյնով, այլ եւ ձգտում է նմանուել ուրիշին, անգամ իր թշնամուն, եթէ այդ հարկն է պահանջում:* Նա յաճախ մեզ ներկայացնում է օտար իշխանութիւններին՝ իբր բոլշեւիկ, իսկ իրեն ազգայնական հայ: Իր շրջապատը մոլորեցնելու նպատակով, նա գործի է դնում իր խաբուսիկ ոյժերը, ճիշտ այնպէս, ինչպէս նեղն ընկած կատուն, որ իր փքումով եւ փշաքաղումով ճիգ է անում իրեն աւելի մեծ եւ զօրաւոր ներկայացնելու, քան թէ է: Նա բռնուած է ե՛ւ բանաւոր սադիզմով, խօսքի Ռօբեսպիեռ է, ռմբային լեզու ունի, նրան յաճախ յաջողւում է քողարկել իր տկարութիւնները իր խօսքի զոռութեամբ:

- «Հայաստանը՝ Անտանտի փոքրիկ շնիկը պիտի խեղդուի, փոշիացուի մէջտեղից»՝ գրում էր Բաքուի հայատառ «Կոմունիստ» թերթը, 1920-ին, ա՛յն օրերին, երբ բոլշեւիկները ճիգ էին անում Հայաստանի

վրայով միանալու քեմալական Թուրքիոյ: Այսպէ՛ս են խօսում հայ բոլշեւիկները: Խօսքի զոռութիւնը յատուկ է բոլոր բոլշեւիկներին, ամենամեծէն մինչեւ ամէնէն աննշանը:

Իրենց ոչնչութիւնը քօղարկելու համար նրանք անվերջ խօսում են «Մեծն Ռուսաստանից»: Դռնփակ եւ յոշոտուած Հայաստանի դրութիւնից, հայ ժողովրդի կոտորակային ցրուածութիւնից, երկրի ազգաբնակչութեան աննշան թուից ցնցուելու փոխարէն՝ նրանք սուտ խենթեր են ձեւանում եւ իրենց «աշխարհի մէկ վեցերորդականի տէրը», 160 միլիոննոց հսկայի յաղթական եւ երջանիկ անդամն են համարում, ճի՛շդ այնպէս, ինչպէս մի ժամանակ սակաւաթիւ մօնտէնեգրօցիները ասում էին իրենց մասին՝ - «Մենք եւ ռուսները 160 միլիոն ենք»:

Ի՜նչ զաւեշտախառն ողբերգութիւն - շղթայակապ եւ ծուատուած Հայաստանի վիճակը հայ կարմիրներին թւում է յաղթական երգ: Սրանք չե՞ն նմանում այն խենթին, որ մի օր Նիւ Եորքի մէջ փորձում էր ոչնչացնել Ազատութեան արձանը, աղաղակելով՝ «Կեցցէ՛ ազատութիւնը»: Միեւնոյն ճիգն է տեսնւում հայ բոլշեւիկների այն պնդումի մէջ թէ՝ թուրքը իրենց զինակիցն է: Նրանք գիտեն, որ թուրքը ռուսի զինակիցն է եւ ոչ թէ Հայաստանի: Նրանք ծանօթ են Կարսի հայասպան դաշնագրի կէտերին - *Հայաստանը մասնատուած եւ նկուն պահելու Մոսկուայի յանձնառութեան:* Նրանք գիտեն, որ ամէն թուրքի մէջ Երեւանի նկատմամբ կայ այն զգացումը, ինչ որ կայ Վանի, Մուշի, Կարնոյ եւ Կարսի մասին: Գիտեն, ճանաչում են թուրքը, բայց, ներքին ճակատում իրենց ոչնչութիւնը քօղարկելու համար, հպարտանում են թուրքի հետ ունեցած իրենց երեւակայական բարեկամութեամբ: Նոյն նպատակով նրանք իրենց զինակից են համարում ցեղերի եւ ազգերի բոլոր տեսակի հակազգայնական տարրերին եւ, ազգայնական հայութեան դէմ պայքարելիս՝ ասպարէզ են քաշում սեւամորթին եւ ճերմակամորթին անխտրաբար՝ ցոյց տալու համար, որ մենակ չեն: Մինչ ազգայնական հայութիւնը իրեն թոյլ չի տալիս անգա՛մ մտածել, թէ կարելի է օգտուել օտարացեղ ազգայնական տարրերից կամ իշխանութիւններից: Ես ճանաչեցի ամերիկահայ բոլշեւիզմն ու բոլշեւիկը: Նրանց բոլոր ժողովները աղքատ են ծիծաղ շարժելու աստիճան՝ թէ՛ թուապէս եւ թէ գաղափարական տարողութեամբ: Սակայն, իրենց խեղճութիւնը քօղարկելու համար, նրանք իրենց ժողովները բաց են անում «ընկ. Ստալինի պատուոյ նախագահութեամբ»: Թուապէս մի բան երեւալու համար, նրանք իրենց ժողովներին բերում են օտարազգի ներկայացուցիչներ, կազմում են թխովի հեռագիրներ եւ կիսագոյն կամ բոլորովին անգոյն կազմակերպութիւնների անունից՝ ծափողջոյններ ուղարկում Մոսկուա, Թիֆլիս, Երեւան:

Ձեր հարցումին թէ՝ ինչո՞ւ չեն գնում իրենց երազած դրախտը,

պատասխանում են՝ «Մենք մնում ենք այստեղ համաշխարհային յեղափոխութեան համար պրոպագանդ մղելու»: Հակառակ իրենց այս մանեակային մեծամտութեան, զզուելիօրէն երկչոտ են: Հարիւրից մէկը չէք գտնի, որ դատարանում խոստովանի իր բոլշեւիկ լինելը: Նո՛յնը՝ նաեւ ազգայնական հայի ներկայութեան: Սրանց համար չէ Կոշուտի պատուիրանը - «Մի՛ գրիր եւ մի՛ խօսիր չհասկացածդ բաների մասին»: Ամէն բանի մասին անգիտաբար խօսելու մէջ իրենց տգիտութիւնը սքօղելու նպատակով, *նրանք աւելի ժխտում են, քան պաշտպանում:* Այդպէս են վարւում, որովհետեւ ժխտելիս հարկադրուած չեն գիտութեան կամ տրամաբանութեան դիմելու: *Իրենց ժխտականութիւնը հետեւանք է նախ իրենց բարոյական քանդուածութեան*, ապա իրենց մտքի աղքատութեան: Չկա՛յ Աստուած, բարոյականութիւն չկա՛յ, ազգութիւն չկա՛յ. չկա՛յ - ինչո՞ւ չժխտել այդ ամէնը, երբ այնքան հեշտ է դա: Հայհոյել բոլոր տեսակի ազգային արժէքներն ու սրբութիւնները - *թքե՛լ ու անցնել* - հակազգայնական հայն այսպէ՛ս է հասկացել բոլշեւիզմը: Նա հոգեւոր վանդալ է - կոխում է եւ անցնում բոլոր սրբութիւնների վրայից եւ շնաբար բացագանչում. «Ինձնից յետոյ՝ ջրհեղե՛ղ»: Ա՛յս է հայ մարդու դաւանած բոլշեւիզմը:

Պօղոս առաքեալի խօսքը՝ գողցուած է եւ յաճախ գործածուած Լենինից թէ՝ նա որ չի աշխատում, պէտք չէ՛ որ ուտէ, հայ բոլշեւիկի համար չէ ասուած: Մասնաւորապէս Ամերիկայում նրանք չեն աշխատում, բայց ուտում են, եւ այն էլ ինչպէ՜ս: Հայութեան ամենաանաշխատ, ամենածոյլ տարրը Ամերիկայում հայ բոլշեւիկն է, որ ապրում է նահանգի նպաստով կամ մութ միջոցներով: Ի զուր է Մաձձինին պնդում թէ՝ մարդս միայն ստամոքս չէ, այլ եւ գլուխ, սիրտ, հոգի: Հայ բոլշեւիկը մարդկային ամբողջ կեանքը վաղուց է վերածել ստամոքսի: Ամերիկայում յաճախ չգիտէի Խօրէնացու հետ ողբա՞լ թէ՝ Մօնտէսքիոյի հետ զզուել, երբ ինձ պատմում էին, թէ Հայաստանից վերադարձած ոմն Մարտիրոսեան՝ բեմերից հացի մի կտոր է ցոյց տալիս միամիտներին հաւատացնելու թէ՝ խորհրդային Հայաստանն էլ հաց ունի, թէ «կարմիր հացը» նուազ չափով աւազ ունի եւ աւելի համով է, քան էր «Դաշնակցութեան սեւ հացը»: «Շատերն ասում են թէ՝ Հայաստանում հաց չկայ. հացի այս կտորը այնտեղից եմ բերել»: Այս հրէշը չէր հասկանում, որ առանց ուզելու՝ խորհրդային Հայաստանի թշուառութիւնն է մատնում: Այո՛, Հայաստանի ողբերգութիւնը հէնց նրանում է, որ զանազան Մարտիրոսեաններին յանձնարարւում է ապացուցանել թէ՝ մեր դժբախտ հայրենիքումն էլ մարդիկ հաց են ուտում:

Վերջին տարիները՝ ամերիկահայ բոլշեւիկները մի բանի մէջ մասնագիտացան - *խօսքի եւ գործի ճպարարութեան*: Իբրեւ թէ մարդ են

ուղարկում Հայաստան, իբրեւ թէ մարդ են բերում այնտեղից, հանրօրէն անծանօթ, անանուն մէկը տեղափոխւում է Քալիֆորնիա, մէկ ուրիշը գալիս Ֆրանսայից - ահա՛ նմանները հռչակւում են Հայաստանից նոր վերադարձածներ եւ ժողովուրդը ժողովի են կանչում՝ լսելու խորհրդային հայրենիքի բարեկամին: Մանր հասարակական աճպարարութիւնների այս մեթոդը անհրաժեշտ է դարձել այն պատճառով, որ բոլշեւիկները փորձով համոզուել են այլեւս թէ՝ իրենց խօսքը զանգուածների վրայ ազդեցութիւն չունի: Նրանք զարգացրել են նաեւ *զգացումների չարաշահութեան արուեստը*, սիրում են անվերջ ճառել ներգաղթից, չնայած որ գիտեն թէ ազգահաւաքումը անհնար է, թէկուզ ռուսեւթուրք դաշինքի համաձայն (այն է՝ չզօրացնել Արարատեան Հայաստանը): Թուրքն էլ լսում է այդ մասին, բայց չի ջղայնանում, որովհետեւ գիտէ, *որ ներգաղթի ամբողջ աղմուկը ըստ էութեան քաղաքական շանտաժ է*: Ընդհակառակը, Քեմալը պատճառներ ունի երախտապարտ մնալու հայ բոլշեւիկներին, որոնք Հայաստանի խեղանկարային շինարարութեամբ - Նոր Տիգրանակերտ, Նոր Սեբաստիա, Նոր Խարբերդ, Նոր Արաբկիր, Նոր Մալաթիա - ձգտում են հայութեան մոռացնել տալ իր յաւիտենական հայրենիքը, նրան հաշտեցնելով արեւմտեան Հայաստանը ընդմիշտ թուրքին թողնելու մտքին: *Քաղաքական այս կաւատութիւնից* նիւթապէս օգտուում է ինքը՝ հայ բոլշեւիկը, կողոպտելով հայ միամիտ տարրերը, որոնք զոհ են դառնում իրենց խղճալի հայրենասիրութեան, առանց գիտակցելու, որ *Խարբերդից հրաժարուելը եւ Նոր Խարբերդով խանդավառուելը ոչ թէ հայրենասիրութիւն չէ, այլ եւ հայրենադաւութիւն, ոչ թէ գիտակցուած հայրենասիրութիւն չէ, այլ կոյր հայրենաքանդութիւն*: Իր գաղափարախօսական տկարութեամբ պայմանաւորուած զգացումների այդօրինակ շահագործումով, իրոք որ, հայ բոլշեւիկը տգէտ տարրերի վրայ թողնում է հայ ազգի ապագայով մտահոգուողի տպաւորութիւն, չնայած որ *«Բանուոր»* թերթը առիթ չի փախցնում կրկնելու՝ - «Մենք ազգ չենք խաղցներ, ազգը վաղուց ենք դուրս նետած խորհրդային Հայաստանէն»:

Կը բաւէ՝ ամփոփե՛նք մեր խօսքը:

Խորհրդային իշխանութեան կողմից ազգայնական հայութեան դէմ տարուող պայքարի առաջադրութիւններն են՝

ա) Ազգայնական ղեկավարութեան սեւացում - հայութեան՝ դէպի Դաշնակցութիւնը ունեցած հաւատքը տկարացնելու նպատակով.

բ) Գաղութահայութեան ամբոխացում՝ իր քաղաքական որսորդութիւնը հեշտացնելու համար:

Այսքանը՝ գաղութահայ ներքին կեանքում:

Իսկ համաբոլշեւիկեան չափանիշով, խորհրդային իշխանութիւնը - իբր բարձր քաղաքականութեան առաջադրութիւններ - ճգնում է՝ գաղու-

թահայութեան ամբոխացումով *նաեւ հոգեպէս նուաճել երկրի հայութիւնը:*

Երկրորդ՝ օգտուելով մեր ցրուածութեան հանգամանքից, որին այնքա՛ն կարեւորութիւն է տալիս Մոսկուան, նա ուզում է սփիւռքի հայութիւնը վերածել միջազգային բոլշեւիկեան գործակալութեան, լծելով նրան իր լրտեսութեան եւ պրոպագանդի կառքին:

Առ այդ՝ նա առայժմ, իբր գործունէութեան մեթոդ, որդեգրել է *հայկական ներքին տկարութիւնը ցցել մեր ցեղի դէմ:* Այժմ նա նկրտում է պարբերական հրձիգութեամբ լարուած պահել հայկական ներքին բաբելոնը, պառակտումը հասցնել անկամրջելի անդունդի խորութեան, եւ այսպիսով, *ազգայնական հայութիւնը զրկել իր ոյժերը արտաքին ճակատի վրայ կենտրոնացնելու կարելիութիւնից:*

V

ՑԵՂՈՒՐԱՑ ՀԱՅՈՒՀԻՆ

- «Մի ռազմաշունչ ցեղի մէջ - ասում է Ֆաբր դ'Օլիվէն - երկու հակառակորդներ բռնուած են վէճի: Կատաղած, նրանք սկսել են հարուածներ փոխանակել: Բայց ահա՛ մի հերարձակ կին նետւում է նրանց միջեւ եւ բաժանում նրանց: Դա մէկի կինն է, միւսի՝ քոյրը: Նրա աչքերը բոցեր են արձակում, ձայնը հնչում հրամայողաբար: Դա աղաղակում է, հեւալով եւ ընդհատ խօսքերով հասկացնում, թէ անտառում տեսել է *ցեղի նահապետին*, թէ իրեն յայտնուել է երբեմնի յաղթական ռազմիկը:

«Դա չի ուզում - ասում է կինը - որ երկու ռազմիկ եղբայրներ կռուեն իրար հետ, դա պահանջում է, որ եղբայրները միանան ընդհանուր թշնամու դէմ: Մեծ նահապետի ուրուականն ինձ ասաց այդ ամէնը - աղաղակում է զայրացած կինը: Ինքն ինձ ասաց, ես տեսայ նրան»: Եւ դա հաւատում է իր ասածին, համոզուած՝ դա համոզում է կռուի բռնուածներին: Յուզուած եւ կարծէք մի անդիմադրելի ոյժից սանձահարուած՝ հաշտուած հակառակորդները ձեռք են մեկնում իրար»:

Ահա թէ ի՞նչ կը սպասէինք հայ կնոջից:

Այս ազնուական դերը կը սպասուէր ամէն հայ կնոջից, բայց, աւա՜ղ, անցքերն եկան հաստատելու, թէ կան կանայք, որոնք հակադաշնակցական իրենց ամուսինների չափ քանդուած են հոգով:

Հակազգայնական հայութեան հոգեախտեւոր կեանքի ամենատխուր եւ միաժամանակ նողկալի կողմը՝ դա ապազգայնացած հայ կնոջ երեւալն է պայքարի կրկէսում: Նա փողոց իջաւ, փողոցայնացնելու

եւ այժմ տիղմի մէջ է: Ճշմարիտ հայը չի կարող չգալարուել ամօթից եւ ցաւից այդ կանացի հրէշի արարքները տեսնելիս: Նա երեւաց փողոցում այլացեղ տականքների հետ՝ իր ազգային սրբութիւնները հայհոյելիս, նա երեւաց դատարանում՝ իբր վարձկան վկայ՝ ինը հայ մարդկանց կեանքի թելը կտրել տալու նպատակով, նա մասնակցեց ցոյցերի՝ իր այլասերած էութեան բովանդակ զզուելիութեամբ՝ առարկայ օտարների ծաղրին, նա ասպարէզ իջաւ կատարելապէս կապկացած, երբ իր կեղծ սուգը ցուցադրելու նպատակով սեւեր էր հագել եւ մէջքը չուան անցկացրել, երբ տունէ տուն ընկած ստորագրութիւններ էր հաւաքում, բողոքի ժողովներ հրաւիրում, ուրացողի պատկերը ծախում, ազգայնական տղամարդկանց հայհոյութիւններ ուղղում, երբ իր երեխային «դրօշակն ու դաշնակը» հայհոյել էր սովորեցնում:

Ես տեսայ նրան իր ընկածութեան մէջ եւ յիշեցի հռոմէական զօրավար Անտոնիոսի կինը՝ Ֆո՛ւլվիան, որ իր վրէժխնդրական մոլուցքի մէջ՝ ասեղով գլխատուած Կիկերոնի լեզուն էր ծակոտում: Յիշեցի շեքսպիրեան տիպերից լէյդի Մակբետը, որ մսագործի պաղութեամբ՝ դաշոյնը խրել էր տալիս իր զոհի մարմնի մէջ: Յիշեցի Լիր արքայի դուստրը՝ գիշատիչ, անհոգի, եսասէր, Վալտեր Սկոտի հերոսուհին՝ լէյդի Աշտոնը՝ ամբողջապէս տգիտանք եւ չարութիւն: Վերջապէս՝ Տոլստոյի հերոսուհին՝ Գոլովինա՛ն - լրբենի, դատարկապորտ, հաճոյապաշտ: Իր զազրելիութեամբ, սակայն, այս բոլոր տիպերին գերազանցում է ամերիկահայ ցեղուրաց կինը:

Ծանօթ դատավարութեան օրերին՝ դատարանում եւ դատարանի դրան՝ ամէն օր, առաւօտեան, կարելի էր տեսնել մի խումբ վհուկատիպ կանանց, որոնք յիշեցնում էին Բրօքէն լեռը, որի վրայ, ըստ գերմանական աւանդութեան, Մայիս մէկի գիշերը հաւաքւում էին բոլոր վհուկները եւ պար բռնում Մէֆիստոֆէլի շուրջը: Նրանք հաւաքւում էին այս կամ այն մարդու բախտի թելը կտրելու: Նիւ Եորքի փողոցներն ընկած այդ կանայք յիշեցնում էին Գորգոնաներին - յունական դիցաբանութեան մէջ դժոխքի սարսափները մարմնացնող քոյրերին - որոնք մազերի փոխարէն իրենց գլխին իրար պլլուած օձեր էին կրում: Եւ դա ճիշդ է, իդէալապէ՛ս ճիշդ: Եղաւ ժամանակ, երբ փողոցներում ազգայնական հայ մարդը առանց հայհոյուելու սրանց մօտից չէր կարող անցնել: Կորցրած կնոջական ամօթխածութիւնը՝ սրանք դարձել էին պղծախօս եւ պղծագործ: Օգտուելով ամերիկեան օրենքից, որ կնոջ գերակշիռ դիրք է տալիս, կնամարդ ռամկավարի վախկոտութիւնը մարտի ասպարէզը յանձնեց իր կնոջ, եւ վերջինը փլուզուեց հոգեպէս եւ փռուեց ամերիկահայ իրականութեան մէջ իբր շղթայազերծուած ապականութիւն: Նա սարսափով ետ քաշուեց միայն այն ժամանակ, երբ ազգայնական տղամարդը

ստիպուած որոշեց այս ընկածների լրբութիւնը պատժել շիկացած երկաթի խարանով:

Այդ օրերին էր, երբ Ամերիկայի ազգայնական հայութիւնը յղացաւ *վատութեան մի միւզէի* գաղափարը, ուր պիտի հաւաքէր անկման այդ շրջանի յիշատակները - հոգով այլազգիացած տղամարդկանց ու կանանց անուններ, պատկերներ, աղտեղաբան թռուցիկներ, անստորագիր նամակներ, պատռուած եւ անարգուած եռագոյններ, իբր այլասերուած հոգու վաւերագրեր՝ հեռախօսային հայհոյանքների եւ անէծքների յուշեր, սուտ վկայութեանց, դաւադրութեան, լրտեսութեան դէպքերի եւ անթիւ սեւ արարքների նկարագրութիւններ եւն. եւն...

Թող կարդա՛ն սրանք զարհուրանքով գալոց սերունդները, որպէսզի աւելի խորօրէն ապրեն հայ ցեղի գողգոթան, որպէսզի անազատ վիճակի վիժած սոսկումները վերյիշելով, նրանք իրենց գոյութեան խորհուրդը խտացնեն աստուածային այն բառի մէջ, որ կոչւում է *ազատութիւն:*

VI

ԴՈՒՐԵԱՆԸ ԴՈՒՐԵԱՆԻ ԴԷՄ

"J'accuse":
ԶՕԼԱ

Երբ մէկը թշնամանում է մէկին՝ դա հասկանալի է: Բայց երբ ժողովրդի մի մասը չի բաւականանում օրէնքի նախատեսած խստութիւններով, այլ հաւաքում է մի քանի տասնեակ հազար ստորագրութիւններ, ծախու է հանում մեռածի մօրուքի թելերը, օգտւում է թրքատիպ գորգավաճառի գրպանից, թրքախօս տականքների լումաներից, օտարացեղ խաժամուժից, մութ աղբիւրներից՝ թրքական թէ բոլշեւիկեան, գաղութից գաղութ ցուցադրում է սպանեալի լէշի պատկերը՝ դրամ եւ բողոքի հեռագրեր մուրալով, երբ զարկում է բոլո՛ր դռները՝ օտար թերթերի, եկեղեցիների, համայնքների եւն., երբ մեռած Ղեւոնդի արժէքը յաչս օտարների բարձրացնելու նպատակով շահագործում է անգա՛մ լուսապսակ եղիշէ Դուրեան Պատրիարքի անունը - սրա գործերն ամերիկեան մամուլում նրան վերագրելով, երբ հոգեւոր ճիւաղութեան բոլոր կերպերը, մարդկային ցած հոգու բոլոր հնարամտութիւնները փորձում է մոխրացած տեսնելու երկու ընտիր հայորդիներ - ա՛հ, այս բոլորն, իրոք որ, անմարդկային է, անըմբռնելի:

Այս կեղծ մոլեռանդութիւնը, իբր ախտաբանական երեւոյթ, յիշեցնում է իսլամ խուժանավարներին, որոնք մեռած մի հաւատացեալի դիակը ծակոտում էին դաշոյնի հարուածներով եւ ցուցադրում իբր քրիստոնեաներից սպանուած մահմեդական, ողբում, լալիս, ոռնում, աղաղակում՝ մինչեւ որ յաջողէին սադիստական հոգեվիճակ, ոճրային պսիխոզ ստեղծել իսլամ տգէտ ամբոխի մէջ - կոտորած եւ թալան առաջացնելու նպատակով: Բոլո՛ր դէպքերում, երբ առաջնորդը անազնիւ խուժանավար է եւ ամբոխը խաւարամիտ՝ մասնակի մի պատահար դառնում է առիթ հանրային կրքերի բորբոքումի, հոգեւոր ընդհանուր համաճարակի:

Մոլեռանդութիւն արուեստաւորելու առիթը ամերիկահայ տականքի համար հանդիսացաւ խորհրդաւոր սպանութիւնը մի կղերականի, որ տխուր հետքեր էր թողել Բուլգարիայում, Զմիւռնիայում, Մանչեստրում, որ Ամերիկայում գործիք դարձած հակահայ մութ տարրերի ձեռքը, ամէն ինչ արեց *եկեղեցու միջոցաւ կիսել, բաժանել հայ եկեղեցին*, որի մէջ սպառուած էր Յիսուսի շունչը եւ ամէն ինչ տեղի տուած հայութիւնը կոտորակելու, ներքուստ փլուզման ենթարկելու բոլշեւիկեան քաղաքականութեան: Այդ վեղարաւոր գործակալի ներքին մարդը ցոյց տալու համար՝ նախ խօսեցնել տանք իրեն, նախ լսենք ի՛ր ինքնամերկացման վկայութիւնը:

«Տաթեւ» կրօնական տարեցոյցի մէջ գրած «Հայ եկեղեցւոյ փոթորկայոյզ գիշերը» իր յօդուածում, Դուրեանը ասում է.- *«Հայ եկեղեցին ստուգիւ կ'անցընէ մրրկայոյզ շրջան մը Հայ Խորհրդային Հանրապետութեան սահմանադրութեան այն օրէնքին գործադրութեան հետեւանօք, որով եկեղեցական եւ կրօնական բոլոր հաստատութիւններն ու շէնքերն պետականացուեցան: Այս պարագան Հայ եկեղեցւոյ համար ճգնաժամ մըն է ինչ ինչ տեսակէտներով»* (Ե-րդ տարի,1929թ., Հալէպ-Սուրիա): Նա ընդունում է, որ «ճգնաժամ» կայ, բայց, իբր բոլշեւիզան, փոխանակ հայ եկեղեցու տագնապը ուղիղ կերպով ներկայացնելու՝ ճգնում է մոլորանք ստեղծել:

Որպէս թէ եղածը բռնագրաւում եւ կողոպուտ չէ, այլ պետականացում: Որպէս թէ չգիտէ, թէ եկեղեցու պետականացում նշանակում է՝ առանձնաշնորհումներ տալ, ինչպէս Տրդատի օրով, երբ հայ եկեղեցին պետականացաւ, եւ ոչ թէ իրաւազրկուեց: Իբր թէ «Հայ Խորհրդային Հանրապետութեան սահմանադրութեան» տրամադրութեամբ եղած է այն, երբ աշխարհը գիտէ, որ գոյութիւն չունի «Հայ խորհրդային սահմանադրութիւն», որ եղածը համախորհրդային օրէնքն է, որով կառավարւում է ե՛ւ Երեւանը, որը, իբր մասնիկը Խ. Միութեան եւ ո՛չ թէ իբր ինքնավար հանրապետութիւն, չի կարող իր մասնաւոր սահմանադրութիւնն ունենալ: Նա այս կեղծիքն անում է կանխելու ժողովրդական զայրոյթը՝ մտածելով, որ

գաղութահայերը առանձնապէս խռովուելու հիմք չեն ունենայ, որովհետեւ հայ եկեղեցին գրաււում է ո՛չ թէ բոլշեւիկների թելադրութեամբ, այլ «Հայ խորհրդային սահմանադրութեան» օրէնքով: Բայց լսենք խ. իշխանութեան հակակրօնական այդ քայլն արդարացնող հետեւեալ յիմարութիւնը.- *«Պետութիւնը իր ձեռքը եկեղեցիի շէնքերուն վրայ դնելով չէ թէ բուն Եկեղեցիին ոգին իր ճանկերուն մէջ խեղդած կ'ըլլայ, ինչպէս կը կարծեն ոմանք, այլ այդ գործադրութեամբ մեծապէս նպաստած կ'ըլլայ ճշմարտապէս կենդանի եւ ժողովրդական Եկեղեցւոյ մը վերաշինութեան: Եկեղեցւոյ շէնքերը պետականացուելով բուն եկեղեցին գրաւուած չի նկատուիր: Եկեղեցի ըսուածը շէնքը չէ, Եկեղեցին ժողովուրդին ոգին է. եւ այս ոգին այնքան կը զօրանայ, որքան նիւթական կապանքներէ կ'ազատի»:*

Նա այստեղ ցոյց է տալիս թէ՛ իր բոպիկութիւնը, թէ՛ բոլշեւիզանութիւնը: Դուրեանը տգէտ է ձեւանում եւ իբր թէ չի հասկանում, որ եկեղեցիների շէնքերը գրաւելը պետականացում չէ, այլ բռնագրաւում, կողոպո՛ւտ: Նա իբր թէ չգիտէ, որ խ. իշխանութիւնը եկեղեցին չի պետականացնում, այլ սպանում. իբր թէ չգիտէ, որ նա անաստուած է, անկրո՛ն: Ամէնից եղկելին, սակայն, այն է, որ վեղարաւոր այս չարագործը իդէալիզմ կեղծելով՝ ընկնում է *ռուհճիական բանդագուշանքների մէջ:* Նա եկեղեցու փրկութիւնը տեսնում է նրա նիւթական կործանումի մէջ եւ խուժանավարում *«ոգին այնքան կը զօրանայ, որքան նիւթական կապանքներէն կ'ազատի ու նիւթական կապանքներէն ազատուելու փրկարար միջոց մըն է եկեղեցւոյ պետականացումը»:* Սա՛ է «ճշմարտապէս կենդանի եւ ժողովրդական» եկեղեցին, երբ Դուրեանի տարփողած «պետականացումը» ասել է բոլշեւիկեան կողոպուտ: Նշանակում է, որ հայ եկեղեցին մինչեւ այսօր ո՛չ «ճշմարտապէս կենդանի» եղած է, ոչ էլ «ժողովրդական», այսինքն՝ օրինակ, Մեծն Ներսէսը, որ հայ եկեղեցու նիւթական բարօրութիւնը նախանձելի դրութեան հասցրեց, կամ Խրիմեանը, որ հայ եկեղեցու նիւթական հարստութիւնը փրկելու համար ռուս գիշատիչ կառավարութեան դէմ մաքառեց՝ նիւթական կապանքներից կաշկանդուած անզօր ոգիներ էին կամ քրիստոնէապէս անկենդան եւ մարդկօրէն հակաժողովրդական եկեղեցականներ: Ըստ այսմ՝ ռուհճիների խօսքը, թէ *թուրքերի կոտորածով հայոց հոգիներն ազատուեցին մարմնական եւ նիւթական կապանքներից՝* Դուրեանի սրտին խօսող մի ճշմարտութիւն է: Այդ դէպքում, ինչո՞ւ երախտապարտ չմնալ թուրքին, որ՝ օրինակ, թուրքաց Հայաստանի վանքերն ու եկեղեցիները հիմնահատակ կործանելով, հայ եկեղեցին ազատեց «նիւթական կապանքներէ», եւ հայութիւնը ջարդելով՝ դարձրեց «ճշմարտապէս կենդանի ժողովուրդ»: Չկայ աշխարհում աւելի զազրելի արարք, քան մարդկային ճակատագրի գրքի եղծումն ու

պղծումը: *Դուրեանը Աւետարանի եղծանիչն է եւ հայ պատմութեան պղծիչը:* Դուրեանը երախտապարտ է տաճիկներին: Դուրեանը բոլշեւիկների եկեղեցաքանդ քաղաքականութեան պաշտպանն է: Դուրեանը նրանց գործիքն է: Դուրեանը հայ եկեղեցու եւ նրա նահատակների թշնամին է:

Անհոգի դաւաճանի յատկանշական գծերից մէկն էլ ինքնահակասումն է: Լսե՛նք հիմա, թէ ի՞նչ է ասում մինչեւ այժմ «Եկեղեցեաց պետականացումը» փրկարար միջոց համարող այս տգէտը, ընդամէնը երեք պարբերութիւնից յետոյ.- *Նախ պետք է գիտնանք, որ Յիսուս առաջինը եղաւ Եկեղեցին պետութենէն զատորոշողն, երբ ըսաւ, «տուք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ»*: Այսպէ՛ս, Յիսուսը «զատորոշեց» Եկեղեցին պետութիւնից եւ ըստ Դուրեանի՝ լա՛ւ արեց: Բոլշեւիկները պետականացուցին եկեղեցին եւ ըստ Դուրեանի՝ փրկեցին նրան: Յիսուսը կայսրի բաժինը տալիս է կայսեր, Աստծու բաժինը՝ Աստծուն: Դուրեանն այդ արդար է համարում. բոլշեւիկները կայսրի բաժինը ուտելուց յետոյ, խլում են նաեւ Աստծու բաժինը: Դուրեանն ա՛յդ էլ արդար է համարում: Տեսէ՛ք, թէ խղճմտանքի անմաքրութիւնն ինչպէ՞ս է պատժում, ծիծաղելի դարձնում տկար էակին: Դուրեանը թէ՛ Յիսուսի զատորոշումն է ընդունում, թէ՛ բոլշեւիկների պետականացումը, թէ՛ նրա «ո՛չը», թէ սրա «այո՛ն», թէ Աւետարանը, թէ՛ բոլշեւիկեան դեկրէտը: Դուրեանը թէ՛ քրիստոնեայ է, թէ՛ բոլշեւիկ, թէ՛ աստուածապաշտ է, թէ անաստուած: *Դուրեանը գռեհիկ տեսակի ստահակ է* - ահա՛ ճշմարտութիւնը:

Այս վեղարաւոր շառլատանը շարունակում է.- *«Եկեղեցին երբ կը հեռանայ իր կոչումէն, հոգեւորական կալուածէն, եւ երբ կը մտնէ քաղաքական կալուածին մէջ, ան իր վսեմ սկզբունքէն շեղած կը նկատուի եւ կը դատապարտուի վտանգուելու: Եկեղեցին պէտք է միշտ լուրջ եւ չէզոք մնայ եւ չի վստահի քաղաքային (ուզում է ասել «քաղաքական») համակրութեանց»...*

Երէկ այսպէ՛ս էր մտածում - եթէ երբեւիցէ յուդայացածը կարող է սեփական մտածում, համոզումի անկախութիւն ունենալ - իսկ մի քանի տարի յետոյ, ամերիկահայ եկեղեցին դարձնում է «քաղաքական կալուած»: Երէկ պէտք էր այդպէս մտածել, որովհետեւ անհրաժեշտ էր «տեսականօրէն» արդարացնել իր ըմբռնած պետականացման քաղաքականութիւնը՝ այսինքն՝ հայ եկեղեցու նիւթական կործանումը եւ բարոյական անկումը: Յետոյ, երբ խորհրդային սահմաններում հայ եկեղեցին պետականացաւ, այսինքն փրկուեց իր նիւթական հարստութեան կապանքներից եւ դարձաւ հոգով թեթեւացած մուրացկան, երբ կիսամեռ եղած հայ հոգեւորականութիւնն իր կաշին փրկելու համար՝ նետուեց բոլշեւիկեան քաղաքական ուռկանի մէջ եւ տնկուեց ազգային Եռագոյնի,

որով՝ մեր ցեղի բոլոր սրբութիւնների խորհրդանշանի դէմ, Դուրեանը պէ՛տք է որ հայ եկեղեցին փոխադրէր Չիկագոյի աշխարհահանդէսի կալուածը:

Ամէն անսկզբունք մարդ իր գործունէութեան ընթացքում ղեկավարւում է միմիայն տակտի թելադրանքով: Իսկ տակտը Դուրեանի պէս աննկարագիր մարդուն երբեմն դարձնում է «լուրջ եւ չէզոք», երբեմն էլ անլուրջ եւ խառնակիչ:

Բայց Դուրեանի չէզոքութեան խորհուրդ բանին գտնւում է նրա հետագայ խօսքերի մէջ.- *«Սխալ է ազգային շահերը նոյնացնել Եկեղեցւոյ շահերուն հետ, կամ փոխադարձաբար Եկեղեցին գործիք դարձնել ազգային շահերուն, ինչպէս սա վերջին յիսուն տարուան մէջ այնքան շեշտուեցաւ այս ուղղութիւնը: Եղան շրջաններ՝ որում ականատես իսկ եղայ եւ ցաւօք նոյնիսկ բողոք բարձրացուցի, երբ աշխարհի առջեւ ցոյց մը ըրած ըլլալու նպատակաւ եկեղեցիներն փակուեցան եւ պաշտամունքներն դադրեցուեցան ազգային դատին համար: Ասիկա մեծագոյն սխալն էր, որ եղաւ, եւ ի՞նչ մեծ վիրաւորանք մը մեր Փրկչին անուան եւ Աւետարանին: Եկեղեցին չի կրնար փակուիլ ազգային դատի պաշտպանութեան համար»*:

Սակայն, այս ազգուրաց լրբութիւնից մի քիչ յետոյ, նոյն Դուրեանը գրում է.- *«Յիսուս ալ հայրենասէր մը եղաւ. անոր արտասուքը Երուսաղէմի վրայ հայրենասիրական ցոյց մըն է»*: Այսպէ՛ս, երբ Յիսուսն է արտասւում իր հայրենիքի համար՝ ոչի՛նչ կայ անբնական, երբ հայ եկեղեցին է ողբում իր հօտի, իր հայրենիքի անչափելի վիշտը, որից Յիսուսի սիրտը կարող էր պայթել, այդ՝ «վիրաւորանք մըն է Փրկչին անուան եւ Աւետարանին»: Դուրեանը հիանում է Յիսուսի հայրենասիրական ցոյցի վրայ, Դուրեանը «ցաւօք» բողոք է բարձրացնում, երբ հայ եկեղեցին է նման ցոյց անում: *Դուրեանը կեղծում է հայոց քաղաքական եւ եկեղեցական պատմութիւնը*, ասելով թէ՝ «ազգային եւ եկեղեցական շահերի նոյնացումը շեշտուեց սա վերջին յիսուն տարուան մէջ», այսինքն՝ մօտաւորապէս հայ յեղափոխութեան սկզբնաւորութիւնից ի վեր: Դուրեանը թշնամի է Ներսէս Վարժապետեանի եւ Խրիմեանի, Իզմիրլեանի եւ Գեւորգ Ե. Վշտակրի քաղաքականութեան: Դուրեանը դէմ է Ներսէս Աշտարակեցուն, Ներսէս Շնորհալուն, Ղեւոնդ Երէցին, Յովսէփ Կաթողիկոսին, Սահակ Պարթեւին, Մեծն Ներսէսին եւ բոլորի՛ն, բոլորի՛ն, որոնք մեր պատմութեան մէջ սրբացան հայ հայրենիքի դատի համար մաքառելով, տքնելով: Դուրեանը լռելեայն սրանց բոլորին համարում է «Փրկչի անուան» վիրաւորանք հասցնող, Աւետարանի ոգուց շեղուող: Դուրեանը չի հասկանում *հայ-քրիստոնեայ* դարձուածքի խորհուրդը: Նա չի ուզում գիտնալ, որ *սկզբից ի վեր հայութիւնն ու իր քրիստոնէութիւնը*

ծուլուած են ի մի բնութիւն: Նա չգիտէ, որ այս երկուսի ճակատագիրը նոյնացած է: Երբ Տարոնի ժողովուրդն է բնաջնջւում, կործանւում է նաեւ Ս. Կարապետի վանքը:

Իբր բոլշեւիկներին վաճառուած մարդ՝ Դուրեանը նրանց հակահայրենական եւ հակազգային քաղաքականութիւնը արդարացնելու նպատակով, շահագործում է անգամ Քրիստոսի հեղինակութիւնը՝ *«Եկեղեցւոյ գլուխը Յիսուս Քրիստոս եւ ոչ հայրենիքը»*: Այս հայրենուրացը՝ հասկանալով, որ հայ հայրենիքի եւ բոլշեւիզմի շահերն իրենց էութեամբ խոտորնակ են, որ նրանց միջեւ հաշտութեան եզր չի կարող լինել՝ ճգնում է նախ յանուն Քրիստոսի գերակայութեան՝ *եկեղեցին բաժանել հայրենիքից*, որպէսզի այնուհետեւ կարողանայ նրան լծել բոլշեւիկեան կառքին՝ *հայ ազգայնականութեան դէմ ցցելով Յիսուս-Լենին զինակցութիւնը*:

Իբր ցեղօրէն ընկած տիպ՝ նա ուզում է Քրիստոսն անգամ դարձնել բոլշեւիկեան գործակալ եւ լծել կոմունիստների հայաստանասպան քաղաքականութեան:

Դուրեանը հայ եկեղեցական չէ՛: Դուրեանը մասօն էլ չէ՛: Ամէն մասօն հայրենիքը չի զոհաբերում: Դուրեանը հայ-քրիստոնեայ չէ՛, այլ ծպտուած բոլշեւիկ: *Բոլշեւիկն է բոլոր բարձր գաղափարները օգտագործում ստորին նպատակների համար*:

Եւ Դուրեանն արդէն կանգնած է բոլշեւիզմի եւ քրիստոնէութեան հաշտութեան եւ միաբանութեան փաստի առջեւ: Լսէ՛ք, թէ ի՞նչ է ասում նա.- *«Պէտք է գիտնանք, որ Եկեղեցին սկզբամբ հակառակ չէ եւ չի կրնար ըլլալ Խորհրդային Հանրապետութեան բոլոր վարչաձեւերուն: Խոստովանինք, որ Հայկական պետութեան քաղաքային մարդոց մէջ լուրջ եւ անձնուէր հեղինակութիւններ կան, որոնք կը խորհին ինչպէս երկրին, նոյնքան եւ՛ եկեղեցիին համար»*:

Աշխարհը մինչեւ այսօր այս բանից տեղեկութիւն չունի, մինչդեռ Դուրեանը 1928 Յունիս 10.ին - իր յօդուածի թուականը - Մանչեստրում լուծել, վերջացրել է եկեղեցու եւ բոլշեւիզմի միացման խնդիրը: Եկեղեցին դէմ չէ խորհրդային «բոլոր վարչաձեւերուն», իսկ բոլշեւիկ հեղինակաւոր անձերն էլ մտածում եւ աշխատում են «եկեղեցիի համար»: Հիմք կա՛յ այլեւս հայրենիքին կառչելու, երբ ապահայրենական բոլշեւիզմը եկեղեցին դրել է շատ աւելի նախանձելի, երջանիկ վիճակում, երբ օր ու գիշեր նրա մասին է մտածում: Կեղծելու մէջ սատանայի չափ յամառ է այս թշուառականը: Համաշխարհօրէն յայտնի է, որ բոլշեւիզմը ըստ էութեան քրիստոնէութեան հակասումն է, որ առաջինի նիւթապաշտութիւնը եւ վերջինի գաղափարապաշտութիւնը տրամագծօրէն հակառակ, զիրար ժխտող ըմբռնումներ են: Աշխարհը գիտէ, որ բոլշեւիկները կրօնը հռչակած են թոյն, եկեղեցին՝ հոգեւորականութեան շահատակութեան

վայր, եկեղեցականութիւնը՝ ժողովրդի թշնամի, բոլորը գիտեն, որ եկեղեցիները վերածւում են կինօների, ակումբների, անգա՛մ բաղնիքների, որ խ. իշխանութիւնը մասնաւորապէս շնական ծաղրանք ունի Յիսուսի եւ իր խաչելութեան մասին, որ դա այդ բոլորը համարում է յիմարական հէքիաթներ, որ բոլշեւիկները ստեղծած են «անաստուածական» շարժում, որ քրիստոնեայ հոգեւորականութեան մեծ մասը ենթարկուած է զանգուածային ջարդի. որ հէնց Հայաստանում բազմաթիւ քահանաներ իրենց կաշին փրկած են աստուածուրաց մեղայագրով: Դուրեանի համար այս բոլորը նշանակում են «խղճի եւ կրօնի ազատութիւն»: Ըստ սասունցիական առակաբանութեան, Դուրեանը ա՛յն յիմարն է, որ կարասի մէջ գլուխը խօթած եզն ազատելու համար՝ կտրում է նրա վիզը եւ աղաղակում, «ե՛զը փրկուեց»: Մորթուած է քրիստոնէութիւնը, եւ այդ փաստը Դուրեանն արձանագրում է իբր «խղճի եւ կրօնի ազատութիւն»: Դուրեանը քրիստոնեայ չէ: Աւելին՝ նա բարեկամն է, զինակիցը քրիստոնէութեան դահիճների:

Դուրեանը շարունակում է- *«Պետութիւն մը, որ պայքար կը բանայ կրօնքի դէմ, պետութիւն ըլլալէ կը դադրի եւ կը դառնայ կրօնական աղանդ մը»*: Ճի՛շտ է ասում Դուրեանը եւ այս մէկ նախադասութիւնը թողնում է այն տպաւորութիւնը, որ նա միամիտ մի մոլորուած է, որ նրա սայթաքումները արդիւնք են ա՛յն բանի, որ նա բոլշեւիզմի էութեան մասին հասկացողութիւն չունի, իսկապէս Դուրեանը չգիտէ՞, որ բոլշեւիզմը սոսկական պետականութիւն չէ, ոչ էլ սովորական քաղաքական կառոյց, այլ ամէնից առաջ՝ մի ընկերային վարդապետութիւն: Նա չգիտէ՞, որ կոմունիզմի դաւանաբանութեան հիմքը, այսպէս կոչուած, պատմական նիւթապաշտութիւնն է, որն իր էութեամբ մի ընդվզում է քրիստոնէական գաղափարապաշտութեան դէմ: Նա չգիտէ՞, որ ճիշտ այն օրէնքով, որով այս գաղափարապաշտութիւնը ծնունդ է տուել քրիստոնէական դաւանանքին, հէնց նոյն օրէնքով էլ նիւթապաշտութիւնից ծագել է կոմունիստական դաւանանքը: Որով՝ եթէ քրիստոնէութիւնը կրօն է կամ աղանդ, այդպիսին է նաեւ մարքսականութիւնը: Եւ հէնց այդ պատճառով էլ, բոլշեւիկեան աղանդը թշնամի է քրիստոնէութեան - դա անաստուածութիւն է, սա՝ աստուածապաշտութիւն: Իսկապէ՛ս, այս հասարակ բաները Դուրեանը չգիտէ՞: Չգիտէ՛, այլապէս ինչո՞ւ է ասում թէ՝ *«Հանրավարականներու մօտ կը հանդիպինք հոսանքներու, որոնք բացայայտօրէն հակառակ են աւետարանական սկզբունքներուն»*: Ինչպէս երեւում է, նա բաւական բաներ գիտէ, եւ եթէ չգիտնալ է ձեւացնում, ապա այդ նրա համար, որ յոյս ունի նուաստութեան ճարպիկ մի խաղով «Երուսաղէմը գրաւել»:

Դուրեանը հաւատում է, որ հեռու չէ այն օրը, երբ եկեղեցուն

հակառակ բոլշեւիկ հոսանքները «մեծարանք պիտի ընծայեն» նրան: Եթէ այդպէս է՝ ապա էլ ինչո՞ւ կառչած մնալ ազգայնական հայութեան, ինչո՞ւ այժմեանից իսկ չմիանալ բոլշեւիկներին: Դուրեանը թշնամի չէ բոլշեւիկներին, որովհետեւ նրանք մի օր քրիստոնեայ պիտի դառնան: Դուրեանը թշնամի է ազգայնական հայութեան, որովհետեւ ներկայի քրիստոնեաներ են: Դուրեանը հասկացել է աշխարհի անցաւորութեան իմաստը եւ դարձել է կրօնական ապագայապաշտ: Դուրեանն այն սնանկ փերեզակն է, որ իր կորած ապառիկների հաշուին խաչագողութիւն է անում: Դուրեանը բոլշեւիկեան գործակալ է դառնում, որպէսզի մի օր՝ անաստուածներին քրիստոնեայ դարձնի: Դուրեանը ա՛յն հովիւն է, որ իր ոչխարները ազատելու նպատակով զինակցում է գայլին:

Եւ սա այն մարդն է, որ քարոզում է.- *«Մեր եկեղեցւոյ պետերը հեռու պէտք է մնան քաղաքական կամ ազգային ոեւէ գործէ, անոնք ներշնչուած պէտք է ըլլան Յիսուսէ Քրիստոսէ: Ասով միայն պէտք է վստահութիւն ներշնչեն իրենց շուրջը եւ այն պետութեան՝ որուն հետ կապուած են իբր քաղաքացի»*:

Այս խօսքերը գրող Դուրեանը այն մարդն է, որ Չիկագոյի ցուցահանդէսում դէմ կանգնեց հայ դրօշին: Դուրեանը չգիտէ՞, որ դրօշակին դէմ լինել նշանակում է քաղաքականութիւն խաղալ: Նա չգիտէ՞, որ օրինակ մէկը, որ համակիր է բոլշեւիկներին՝ քաղաքականութեան է խառնւում, ինչպէս նաեւ մէկը, որ թշնամի է բոլշեւիկներին՝ դարձեալ քաղաքականութեան է խառնւում: Երբ մէկն ասում է, որ դրօշակը քաղաքական մի ցոյց է եւ դէմ է նրան՝ իր դէմ լինելովը ինքն էլ որոշ քաղաքականութեան է հետեւում, ինչպէս մէկ ուրիշը, որ կողմնակից է նրան՝ իր կողմնակցութեամբ դարձեալ քաղաքական որոշ ճակատի վրայ է կանգնում: Մէկը, որ կողմնակից է Ռուզվէլտին՝ քաղաքական որոշ դիրք է բռնում, մէկը որ դէմ է նրան՝ դարձեալ քաղաքական դիրք է բռնում: Երբ մէկն ասում է՝ թո՛ղ ծածանի մեր դրօշակը՝ քաղաքական նպատակ է հետապնդում - նա ուզում է, որ «կործանուի Տաճկաստան», երբ մէկ ուրիշն ասում է՝ թո՛ղ նա վա՛ր իջնէ՝ նա էլ քաղաքական նպատակ է հետապնդում - ուզում է որ Հայաստանը կործանուած մնայ: «Քաղաքական կամ ազգային որեւէ գործէ հեռու» մնալ՝ նշանակում է չէզոք դիրք բռնել: Չէզոքը նա է, ով թէ՛ մէկ տեսակէտի եւ թէ միւսի հանդէպ անտարբեր է: Նմանի համար բոլորովին միեւնոյն է թէ՝ դրօշակը բարձրանո՞ւմ է, թէ չի բարձրանում, թէ Ռուզվէ՞լտն է նախագահ թէ մի ուրիշը, թէ Ռուսաստանը բոլշեւիկներին կը մնա՞յ թէ չի մնայ: Բայց ի՞նչ է անում Դուրեանը, նա ասում է.- *«Պարոննե՛ր, ես չէզոք եմ եւ պահանջում եմ, որ այս դրօշակը վար առնուի»: Նա ասում է.- «Ես քաղաքականութեան չեմ խառնւում, անգլիահպատակ եմ եւ ամերիկահայոց Առաջնորդը, բայց վստահութիւն*

եմ ներշնչում բոլշեւիկներին: Երբ անգլիական դեսպանն է գալիս՝ ես խանդավառուելու հիմք չունեմ, երբ Լիտվինովն է գալիս՝ ես պարտաւոր եմ նրան ողջունել, սեղանակցել»: Դուրեանը ոչ միայն ցեղօրէն է անհաւատարիմ, այլեւ քաղաքացիօրէն: Նա ա՛յն դժբախտներից է, որոնք գործում են իրենց ասածին հակառակ, եւ ասում են իրենց գործածին հակառակ: Նրանցի՛ց, որոնք իրենք իսկ դառնում են իրենց գլխին պատուհաս - *Դուրեանը՝ Դուրեանի դէմ, Դուրեանը՝ Դուրեանին դատաւոր, Դուրեանը՝ Դուրեանին մերկացնող:*

* * *

Բոլշեւիկեան քաղաքականութիւնը՝ կաթողիկոսական գահը որպէս խայծ ծառայեցնելու՝ շեղում է հայ բարձրաստիճան հոգեւորականութեան որոշ տարրերը ազգային գծից: Շատերը դառնում են մութ գործիք, որոնցից ոմանց դիմակազերծ արեց Չեկայի հիասթափուած գործակալ Աղաբեկովը: Սրանց միջոցով խ. իշխանութիւնն իր պրոպագանդն է տանում արտասահմանում: Յատկապէս Գէորգ Ե. Վշտակիր Կաթողիկոսի տկարութեան օրերին եւ մանաւանդ նրա մահից յետոյ, երբ հոգեւոր իշխանութիւնը կենտրոնացաւ «Գերագոյն Հոգեւոր Խորհուրդի» ձեռքը՝ բոլշեւիկներն յարմարագոյն առիթը գտան խորացնել իրենց գործակալների գայթակղութիւնը՝ նրանց հմայելով կաթողիկասական գահի հեռանկարով: Այդ հովերով տարուեցին ո՛չ միայն Մեսրոպ Մագիստրոսը, այլեւ անբարոյական Ղըլըտճեանը, Դուրեանը եւ ուրիշները: Խ. իշխանութիւնը էջմիածնին նորանոր զիջումներ պարտադրելու նպատակով, ձգձգեց կաթողիկոսական ընտրութիւնը, մինչեւ որ սակարկութիւնը որոշ արդիւնքի կը յանգէր: Երկար խաղերից յետոյ, էջմիածինը ստիպուեց տեղի տալ, եւ 1929թ.ին արտասահման հասաւ նրա առաջին կարմիր ծիծեռնակը - Գերագոյն Հոգեւոր Խորհրդի սպառնագիրը, որից պարզւում էր, որ էջմիածնին պարտադրուած է լծուել պայքարի՝ ընդդէմ ազգայնական հայութեան: Դրանից անմիջապէս յետոյ բեմադրուեց կաթողիկոսական ընտրութիւնը: Բուն գործակալները չընտրուեցին, եւ կարիք էլ չկար, որ ընտրուէին, նրանք այնպէս էին ընկել Չեկայի ցանցերում, որ այլեւս իբր հասարակ գործակալներ կարող էին օգտագործուել՝ առանց մեծ վարձատրութեան: Ոմանք արդէն վտարուած արտասահմանից, ինչպէս Մագիստրոսը Պարսկաստանից, կամ ուղղակի փախած, ինչպէս Ղըլըտճեանը: Իսկ Դուրեանի պէս անձերն էլ, որոնք իրենց կապը իսպառ խզել էին ազգայնական հայութեան հետ, այլեւս ո՛չ միայն չէին կարող դարձ ունենալ, այլեւ իրենց դիրքը մի կերպ պահելու նպատակով, ստիպուած էին ամբողջովին անձնատուր լինել իրենց տիրոջ - Չեկայի հրահանգներին:

Հասկանալի պատճառներով՝ խ. իշխանութիւնը մեծ ուշադրութիւն պիտի դարձնէր ամերիկահայ գաղութի վրայ, որ համեմատաբար մեծազանգուած է, նիւթական առատ միջոցներ ունի, որից կարող էր օգտուել: Ապա որ՝ հայ դատն այնտեղ տակաւին իր բարեկամներն ունի, ու վերջապէս՝ նա Դաշնակցութեան կարեւորագոյն ամրոցներից մէկն է: Սրելով ներքին պայքարն Ամերիկայում, խ. իշխանութիւնը հաւատացած էր, թէ կարելի պիտի լինի վարկաբեկել հայ դատը ո՛չ միայն յաչս ամերիկեան հասարակական կարծիքի, այլեւ Հայաստանի ջերմ բարեկամների: Կար նաեւ ա՛յն համոզումը, որ եթէ յաջողուի Դաշնակցութիւնն այնտեղ քարին զարկել՝ Չեկան ընդհանրապէս տկարացրած կը լինի Դաշնակցութիւնը: Այս պատճառներով, նա իր կարմիր թաթը երկարեց Ամերիկա եւ գործակալ եպիսկոպոսն իր արբանեակներով լծեց գործի:

Բոլշեւիկները նախ ջնջել տուին «Նահատակաց Տօնը» - եւ առաջին գործադրողը գաղութում եղաւ Դուրեանը, առանց հասկանալու, որ եկեղեցին նահատակներով է եկեղեցի, որ նահատակ չունեցող եկեղեցին ամէն ինչ է, բայց ո՛չ եկեղեցի, որ հայ եկեղեցին ազգային եկեղեցի է, որ ազգային բացառիկ մի աղէտի զոհերը, որպիսիք են վերջին կոտորածների զոհերը, որոնք ընկան ո՛չ միայն իրենց զուտ ազգային, այլեւ կրօնական հաւատին հաւատարիմ մնալու գաղափարականութեան հետեւանքով - եկեղեցական նահատակներ են: «Հայ-քրիստոնեաներ» էին նրանք, որոնք մեռան ո՛չ միայն իրենց «հայութեան», այլեւ «քրիստոնէութեան» համար: Այս փաստն ուրացող *Դուրեանի եկեղեցին ո՛չ հայ եկեղեցի է, ո՛չ էլ քրիստոնէական:* Դուրեանը ո՛չ միայն ազգային դաւաճան է, այլեւ կրօնական, նա ո՛չ միայն բոլշեւիկների կամակատարն է, այլեւ թուրքի, թո՛ւրքը չի կարող հանդուրժել, որ նրանց յիշատակն ապրի՝ ապրեցնելով ժողովրդի մէջ վրէժի զգացումը՝ թրքութեան հանդէպ: Թրքասիրական պրոպագանդի ամենախելացի ձեւն է՝ հայութեան ասել - «Մոռացի՛ր նահատակներդ»: *Դուրեանը թրքասիրական ախտից բռնուած հայ բարձր հոգեւորականների ամենակարկառուն ներկայացուցիչն է:*

Դուրեանը ճշտօրէն նկատում է՝ *եկեղեցին՝ դա «ժողովուրդն» է*, բայց չի հասկանում, թէ երբ ժողովուրդը ցաւի յիշողութիւն ունի եւ եկեղեցին անտարբեր է մնում՝ նա այլեւս ժողովրդական եկեղեցի չէ, երբ ժողովուրդը դրօշակ ունի եւ եկեղեցին ճգնում է նրան անդրօշ դարձնել՝ նա այլեւս ժողովրդի թշնամին է: Դուրեանը չհասկացաւ, որ երբ ժողովուրդը անդրօշակ է, այսինքն աննպատակ, եկեղեցին էլ անդրօշակ է, որով՝ աննպատակ ու անսուրբ: Որքան զզուելի է անդրօշ ժողովուրդը, նոյնքան ե՛ւ աւելի զզուելի է ե՛ւ անդրօշ եկեղեցին: Ժողովուրդը՝ որ զուրկ է բարձր իդէալից՝ դատարկ է մարդկայնութիւնից, եկեղեցին՝ որ զուրկ է մարդկայնութեան բարձր իդէալից՝ դատարկ է աստուածային շնչից: Դուրեանը

չհասկացաւ այս բոլորը եւ *իբր կրօնական էակ նուիրուեց սատանայի ծառայութեան, իբր մարդ՝ հասարակական չարագործութեան, իբր հայ մարդ՝ հայ ցեղի դահիճներին:*

Թուրքն ու բոլշեւիկը դէմ են մեր նահատակների յիշատակին՝ նրանց սգատօնին - դէմ է նաե՛ւ Դուրեանը:

Նրանք դէմ են մեր դրօշակին - դէմ է նաե՛ւ Դուրեանը:

Նրանք դէմ են մեր ցեղի ժամանակակից պատմութեան հերոսականին - Մայիս 28.ին - դէմ է նաե՛ւ Դուրեանը:

Եւ այդ էր պատճառը, որ Չիկագոյի աշխարհահանդէսի իր գայթակղութեան առթիւ՝ նա արժանացաւ թուրք մամուլի ծափողջոյններին:

Իր ըմբռնումը եկեղեցու եւ եկեղեցականի կոչումի մասին՝ այս դժբախտին պիտի մղէր Զմիւռնիայում թողնել ժողովուրդը եւ փախչել: Ո՞րն էր աւելի սիրում - չգիտենք, բայց թողեց թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը: Նա կաշուապաշտ էր, ո՛չ աստուածապաշտ, նա եսասէր էր, ո՛չ ժողովրդասէր: Եկեղեցին «ժողովո՞ւրդն» է - եթէ այո՛, ինչպէ՞ս եղաւ, որ նա լքեց նրան: Յոյն մետրապոլիտ Խրիսոստոմոսը հասկացաւ, թէ եկեղեցին եւ ժողովուրդը նո՛յնն են, մնաց իր հօտի հետ եւ ստացաւ նահատակի լուսապսակը: Նրա համար եկեղեցականի կոչումը վտանգուած հօտի տառապանքի խաչն է. *Դուրեանը տառապել չգիտէ, խաչը նրա համար պաշտօնապղծութեան միջոց է, խաչը նրա ձեռքում մոլորանքի գործիք է:* Հայր Գապոնի զէնքն էլ խաչն էր, որով այդ գործակալ հոգեւորականը մոլորեցրեց տասնեակ հազարաւոր բանուորներ եւ առաջնորդեց դէպի սպանդանոց: Գապոնը խաչով իր զոհերը քաշեց դէպի «յեղափոխութիւն», նոյն զէնքով Դուրեանն ուզեց սրբաթափ անել ամերիկահայութիւնը եւ նրան առաջնորդել դէպի բոլշեւիզմ:

Եւ այդ մարդը, որ թուրքի եւ բոլշեւիկի չափ ատեց մեր դրօշակը, որ իր ձեռքի խաչը ցցեց մեր սրբազնագոյն զգացումների դէմ, որ յաչս ազգայնական հայութեան այլեւս կնքած էր իր բարոյական մահկանացուն, մի օր Նիւ Եորքում պիտի սպանուէր նաեւ ֆիզիքապէս:

Այս խորհրդաւոր սպանութիւնը, որ վերագրուեց ինը անմեղ հայ մարդոց, որ թուրք-բոլշեւիկեան գործակալների հրահրումով ոտքի հանեց հակազգայնական հայ տականքը՝ իր սուտ վկաներով եւ այլ անպատմելի մեքենայութիւններով, բոլշեւիկների էութեան ծանօթ եւ տարրական ողջամտութիւն ունեցող մարդուն կարող է մղել միմիայն հետեւեալ խորհրդածութեան: Նախ՝ *բարոյապէս մեռած այս մարդու ֆիզիքական մահուան մէջ իր տէրերը - բոլշեւիկն ու թուրքը - աւելի շահ ունէին, քան ազգայնական հայութիւնը:* Աշխարհը գիտէ, որ բոլշեւիկները ոչնչացնում են իրենց բոլոր գործակալները, որոնցից օգտուել են սպառիչ կերպով կամ որոնց ընկածութիւնն այլեւս ակնյայտնի դառնալու շնորհիւ՝ իրենց

դատն ու պրոպագանդը այլեւս շահելու փոխարէն կորցնում է միայն: Բոլշեւիկները նմանում են ա՛յն վայրենիներին, որոնք որսի մեկնելուց առաջ ճարպ են քսում իրենց կուռքերի շրթներին, իսկ անյաջողութեան դէպքում՝ անսիրտ կերպով գանակոծում նրանց: Բոլշեւիկեան «ճարպից» յետոյ՝ իր ընկածութեան մէջ դիմակազերծուած Դուրեանը՝ պէտք է որ արժանանար նրանց «գանակոծման»:

Ո՞վ սպանեց՝ հարցի պատասխանը կարելի է ստանալ նաեւ էջմիածնի Գերագոյն Հոգեւոր Խորհուրդից, որին անդամ է նաեւ Չեկայի գործակալ Ղըլըտճեանը:

Էջմիածինը կեղծ չէզոքի յանցապարտ դիրքը բռնեց, երբ ամերիկահայութիւնը յանձնուած էր կրքերի ջրապտոյտի, երբ կրքերը ոռնում էին եւ պատճառ տալիս, որ Վաշինգտոնում նստած թուրք եւ բոլշեւիկ դեսպանները շնօրէն հռհռան:

Էջմիածինը, որ սովորութիւն ունէր յաճախ ամենադատարկ բանի համար իր պատուիրակը գաղութ հանելու, այս անգամ մնաց Պիղատոսի դերում, մինչեւ որ բոլշեւիկեան դաւադրութիւնը բեմադրուէր Նիւ Եորքում: Նա ո՛չ միայն չյարգեց մեծամասնութեան կամքը, քուեն, այլ ականջը խցեց ազգայնական հայութեան բազմիցս արած դիմումների դէմ: Ընդհանրապէս նա արիութիւն չունեցաւ կրաւորական չէզոքութիւն իսկ պահպանելու, այլ անբարեացակամ եղաւ բոլոր այն թեմական առաջնորդների հանդէպ, որոնք տրամադրութիւն ցոյց չտուին 30 արծաթով վաճառուելու, որպիսին է օրինակ՝ հայ եկեղեցու հսկաներէն՝ Ատրպատականի Մելիք-Թանգեանը: Էջմիածինը չկարողացաւ անգամ Բուլղարիոյ Յովակիմեան Արքեպիսկոպոսը պաշտպանել հակազգայնական տարրերի դաւերից, որոնք տարօրինակօրէն սրբակրօն այս նահապետը մղեցին յուսահատ մահուան: Միւս կողմից՝ նոյն էջմիածինը խորհրդային արտաքին ներկայացուցչութեանց միջամտութիւնն ու հովանաւորութիւնը ապահովեց հայօրէն եւ կրօնապէս ընկած բոլոր այն առաջնորդների համար, որոնք, ինչպէս Յունաստանի դեւը - Մազլումեան - դժոխքի վերածեցին մեր գաղութները: Անգամ Դուրեանի կործանումից յետոյ՝ Ամերիկայի առաջնորդական փոխանորդ նշանակեց Գալֆայեան կոչուած եկեղեցական սիբարիտը, որի տեսքից ամենաբարեպաշտ քրիստոնեան իսկ կարող է մղուել իր Քրիստոսն ատելու: Դրա հանդէպ նա սկսեց եւ շարունակում է հալածել հայ եկեղեցու հաւատարիմ սպասաւորներին: Նա կարգալոյծ յայտարարեց Մարդուկէսեան վարդապետին եւ ուրիշներին, որոնց վայելած ժողովրդականութեան ու յարգանքին հազուագիւտ բարձրաստիճան հոգեւորականներ արժանացած են:

Մենք կ'ուզէինք էջմիածինը տեսնել նահատակ, քան կողմ, իսկ ամենասարսափելին՝ գործիք եւ այն էլ որի՞ դէմ - ազգայնական հայութեան:

Դարերը պիտի չմոռանան այս փաստը: *Կաթողիկոս կայ - բայց կաթողիկոսութիւն չկայ: Հայաստանում որոշ եկեղեցիներ կան - բայց եկեղեցին չկայ: Կան պատեր եւ գմբէթ - բայց տաճար չկայ: Կան նուիրապետական աստիճաններ եւ տիտղոսներ - բայց հոգեւորականը չկայ:* Կարճ՝ կայ սրբաթափ եղած եկեղեցին իր կաշուապաշտ եկեղեցիականութեամբ: Ո՛ւր էր եթէ հակառակը տեղի ունեցած լինէր, ինչպէս եղաւ Ռուսաստանում, Վրաստանում, ուր եթէ եկեղեցուն եւ եկեղեցականութեան նահատակութեան դառն ճակատագիրը վիճակուեց, բայց յաչս ժողովրդի նրանք հոգեպէս մնացին կանգուն:

Արդեո՛ք, հայոց վերջին Կաթողիկո՞սը պիտի մոռանար, թէ եկեղեցին նահատակութեամբ է ապրում: Նա՞ պիտի մոռանար բոլշեւիկների բռնամահ արած Գիւտ եպիսկոպոսի արդար արիւնը: Նա՞ պիտի հարկադրուէր կեղծ երեմիականներ կարդալ Դուրեանի պէս հասարակ մի ուրացողի դիակի վրայ: Եւ եթէ չի կեղծում, եթէ Երեւանի համար օրհնութիւն չէ ամերիկահայութեան համար ստեղծուած պառակտեալ վիճակը, ինչո՞ւ չի հրամայում, որ օր, ժամ, վայրկեան առաջ հոգին յանձնուի սուտ սուրբի դիակը: Չի՞ ըմբռնում, որ մինչեւ այդ դիակը չթաղուի՝ ամերիկահայ կեանքը կրծող չարիքը չի թաղուի:

Չգիտենք՝ ովքե՞ր են ուրացողի տեքնիք սպանիչները, բայց մի բան է յայտնի - նրա *հոգեւոր սպանիչը ինքը՝ խ. իշխանութիւնն է:*

Չգիտենք՝ ովքե՞ր շահ ունէին նրա սպանութիւնից, բայց մէկ բան է պարզ, որ հակադաշնակցական տականքը բաւական շահեց նրա անսուրբ դիակի շնորհիւ:

Հոգեբանօրէն հասկանալի է նաեւ նոյն տականքի ճիգը՝ ուրացողը «սրբացնելու»: Դուրեանը, որ Եռագոյնին անարգանք հասցնելու օրից կնքել էր ուրացողի իր մահկանացուն, ազգայնական հայութեան համար դադարել էր ապրել՝ մինչդեռ իր սպանութիւնը ծափահարուեց թուրքից, բոլշեւիկից եւ հայ տականքից: Վերջինս ուրացողի այդ արարքը եւ Եռագոյնը դնելով նժարի վրայ, գտաւ, որ առաջի՛նն է ծանր կշռում: Միշտ էլ այսպէս է վարուել աստուածասպան ամբոխը: *Ամէն անարգանք սրբութեան դէմ՝ սրբութեան սպանութիւն է:* Անասնացած ամբոխը միշտ էլ սրբութեան սպանիչ է, բաւական է, որ նա անասնատիպ մի առաջնորդ ունենայ: Մինչեւ բարոյապէս սպանուածի մահը՝ այդ ամբոխը ժխորեց, աղմկեց: Սակայն ինչո՞ւ է շարունակում իր ոռնոցը նաե՛ւ նրա դիակի շուրջը: Արդեո՛ք, նրա՞ համար, որ ցաւում է, գնահատում - ո՛չ, ի հարկէ: Յանձին Դուրեանի նա տեսնում է ուրացողի, մեղսակցի իր դէմքը եւ ինքնապաշտպանուելու կոյր բնազդից մղուած, կառչել է նրա դիակին: Դա մի ճիգ է՝ իր անկումի գիտակցութիւնը խեղդելու: Արդարացնել իր զոհը - նշանակում է արդարացում գտնել իր անկման համար: Յանցակցութիւնը

Դուրեանի հետ այս ամբոխի երեւակայութեան մէջ բորբոքում է նաեւ նրա ճակատագրի սարսափը: Նրա մահուան մէջ տեսնում է նաեւ իր իսկ պատիժը, եւ ահա ճգնում է աղմուկի մէջ մոռացնել տալ այդ: Կայ նաեւ մի այլ պատճառ: Հակադաշնակցական տականքը չունեցաւ, չունի եւ պիտի չունենայ սուրբը եւ հերոսը: Եւ ահա իր հոգեւոր չտեսութեան շնորհիւ՝ այս պատահական ուրացողը նրան թւում է երկնքից ընկած բարիք՝ մի «սուրբ», որի դիակը վերածուեց կանխիկ դրամի: *Փերեզակը սրբացնում է ամէն բան, որ կարելի է վերածել դրամի:* Իսկ Դուրեանի դիակը կշտացրեց եւ շարունակում է լիացնել շատերին:

Բայց ի զո՛ւր ճիգ: «Մեռելներ կան, որոնց մէ՛կ էլ պէտք է մեռցնել» - ասում է Սիամանթօն: Հէնց այդ կարգի մեռելներից է Դուրեանը: Հայոց պատմութիւնն աւելի անողոք եւ արդար է, քան ապրող ժողովուրդը: Նա կը գա՛յ, կը գա՛յ վաղը, կը բանայ միացեալ խաչագողների ձեռքով թաղուած ուրացողի գերեզմանը եւ նրա դիակի հետ կը վարուի այնպէս, ինչպէս դարերի հեռաւորութեան վրայ վարուել է բոլոր ուրացողների հետ:

Դրօշասպան Դուրեանը պիտի չկարողանայ խուսափել մեր պատմութեան թուքից:

VII

ԱՆԴՐՕՇԱԿ ԶԻՆՈՒՈՐԸ

Չէ՛, դաշնակցական չեղած, չի կարելի ճշմարիտ զինուոր լինել:

Հռչակաւոր նկարիչ՝ Լէօնարդօ դա Վինչիին կ'աշխատէր իր *«Խորհրդաւոր Ընթրիքը»* պատկերի վրայ, սակայն, աշխատանքը դանդաղ կ'ընթանար:

Երբ նրան խնդրեցին արագացնել նկարի աւարտումը՝ պատասխանեց - «Պատկերս աւարտելու համար պակասում է մի հատիկ գլուխ, այն է՝ Յուդա Իսկարովտացու գլուխը, հէնց որ գտայ այդ գլուխը, պատկերս կ'աւարտեմ մի օրէն»:

Եւ, իսկապէս, մի քանի օր անցած, Լէօնարդօն գտնում է փնտռած մարդը եւ նրա վրայ գծում *Յուդայի գլուխը* - մի դէ՛մք, որի վրայ կարելի է կարդալ *երեսուն արծաթի* ահաւոր պատմութիւնը, մի հրէշային դէ՛մք, որի վրայ *ուրացումն ու մատնութիւնը* իրենց յաւիտենական կնիքն են զարկած:

Զգում եմ, ընթերցո՛ղ, խորհրդածութիւններս՝ հակադաշնակցութեան

մասին երկարեցին, սակայն, զգում եմ եւ ա՛յն, որ պատկերս պակասաւոր պիտի լինէր, եթէ նրան չաւելացնէի «Յուդայի գլուխը»:

- Ամերիկայում ես տեսայ ե՛ւ *անդրօշակ զինուորը՝* նախկին լեգէոնականը: Հայ Լեգէոնական Միութիւնը նոյնպէ՛ս հոգեւոր ճեղքուածք էր տուել՝ պառակտուել: Լենինի շունչը՝ անապատէն եկած խորշակի նման՝ զարկել էր ե՛ւ Հայ Ազգի մարդուն: Վերջին տարիները կարմիր սատանան քար էր խառնել ե՛ւ այդ Միութեան մէջ: Ճեղքուածքը առաջացել էր լեգէոնականների մի մասի ուրացումով - Եռագոյնից հրաժարուելու վատութեա՛մբ:

Անդրօշա՛կ զինուոր - անիծապարտ բոլշեւիզմը մեզ պիտի պարգեւէր ե՛ւ այդ անմարդկային ամօթանքը:

Ունէինք անաստուած եկեղեցականը - Դուրեա՛ն, ունէինք Սուրբ Գիրքը, բոլշեւիզմը եւ թրքութիւնը հաշտեցնելու աշխատող խմբագիրը - Քիւրքճեա՛նը, Լենինին եւ *weesky*-ին մեծ պատիւ ընծայող *«Բանուոր»*ը, իր զաւակները լափելու տրամադիր կինը, եւն.: Ի լրումն չարեաց - ունեցանք ե՛ւ անդրօշակ զինուորը:

Գիտենք, որ ժողովուրդների ոգին աբսօլիւտ չէ, որ դա ենթակայ է վերելքի եւ անկումի, որ դա կախուած է մի շարք գործօններից՝ հոգեւոր, ընկերային, քաղաքական, եւն.: Գիտենք այդ, բայց եւ այնպէս չէ՛ կարելի հաշտուել այն մտքի հետ թէ՝ զինուորն էլ կարող է այսպէս ընկնել: Իր ծիրանին ծախու հանած արքա՛ն - իր սուրը սակարկող զօրավա՛րը - իր դրօշակը պատռող զինուո՛ր՝ հաւասարապէ՛ս զզուելի են, բոլո՛ր էլ:

Անդրօշա՛կ - անցե՛ղ, անպատի՛ւ, անհայրենի՛ք: Անդրօշա՛կ - անսի՛րտ, անսո՛ւրբ, անհոգի՛: Անդրօշա՛կ - անարի՛, աներկի՛նք, անդէ՛մ:

Միջազգային այդ անդիմութիւնը - անդրօշակ հայութիւնը - սիրում է կապկել օտարին եւ յաճախ գերազանցել նրան: Նա անդրալեռնակա՛ն է, ծայրայեղապաշտ, ի հարկէ, բացասական իմաստով: Երբ օտարը, զգաստացած, մի օր թիկունք է դարձնում իր երէկուայ կուռքերին՝ օտարին աշակերտող հայը շարունակում է կառչած մնալ իր փոխառիկ յիմարութեանց: Նա քարանում է: Դարձի, զղջումի ճամբով հոգեւոր հերոս դառնալու փոխարէն՝ նա յամառում է մնալ *ցեղային դասալիք:* Հայ մարդու այս հոգեւոր քարացումը հետեւանք է՝ նախ իր քաղաքական տգիտութեան եւ պարտուողական ոգուն: Նա կոյր է՝ չի տեսնում, թէ ի՞նչ է կատարւում իր շուրջը: Այսօր ոչ ոք է գլուխ կոտրում ընկերային հին վարդապետութեանց վերաբերող վերջակէտի կամ ստորակէտի վրայ: Այսօր ընկերվարական Մագդոնալդը այնպէս է ծառայում բրիտանական կայսրութեան, ինչպէս զինուորն՝ իր դրօշակին: Բրիա՛նը - ո՞ր բռնապարտապաշտ ֆրանսացին սրանից աւելի ջերմօրէն սիրեց Ժան դ'Արկի եւ Նապոլէօնի ծածանած դրօշը:

Իտալիայում - ուր նորահաս սերունդը սնում է կլասիկ Հռոմի պաշտած էգ գայլի կաթով - հայրենապաշտութիւնը կազմում է պետական դաւանանքի հիմքը: Գերմանիայում, հայրենապաշտութիւնը հասել է զայրուցքի: Այնտէղ ցե՛ղն է Աստուած: Ճամբա՛յ ցեղիս, ճամբա՛յ տէր, կամ կուրծքովս կը բանամ - գոռում է գերման զինուորը: «Զա՛րկ թշնամիներին եւ պաշտպանիր Ունգարիան»՝ ասում է ունգար վերաքննչականը: Հայրենի՛քն է օրուայ աստուածութիւնը՝ Լեհաստանում, Չեխիայում, Բալկանեան երկրներում, Ասիայում - ամենուրե՛ք: Նո՛յնը կարմիր ցարերի երկրում, ուր ընկերային յեղափոխութիւնը սկսուեց միջազգայնականութեան անունով, իսկ այսօր հայրենասիրութեան մշակումը պարտադրւում է պետական դեկրէտներով, ուր Ստալին, Տուխաչեւսկի, Վորոշիլով քնարական գինովութեամբ ճառեր են ասում ռուս հողի եւ հայրենիքի մասին: Այսպէ՛ս է ամենուրեք - *աշխա՛րհն ազգայնանում է*:

Մարդկութիւնը - եւ ամէնից առաջ եւրոպական ազգերը թիկունք են դարձրել այն անիրականանալի քիմերաներին - մաքսիմալիզմ, սոցիալիզմ, կոմունիզմ - որոնք իրենց համարձակ, բայց կեղծ մարգարէութիւններով աւելի քան կէս դար մոլորանքի մէջ պահեցին երջանկութեան ծարաւի աշխարհը: Արեւմուտքն այսօր հնչեցնում է իր ահազանգը - ուտոպիստները մեզ հասցրին անդունդի եզրը, յե՛տ, յե՛տ, դէպի իրական կեանքը, յե՛տ, սո՛ւտ է, խաբուսի՛կ է, էլ մի՛ անսաք սոցիալիզմին - լինի դա մարքսեան թէ լենինեան: Պէ՛տք է ծառայել մարդկութեան, այո՛, սակայն, դա պիտի տեղի ունենայ մեր ցեղի միջոցաւ՝ մեր ցեղին ծառայելով:

Ա՛յս է օրուայ իրականութիւնը՝ համաշխարհօրէն: Բայց, հակադաշնակցական տականքի համար ոչինչ է փոխուել եւ փոխւում - ինչպէս իր հոգում: Եւ հասկանալի է դա, չէ որ մարդս իրենից դուրս տեսնում է միայն այն, ինչ որ կայ իր հոգու մէջ: Անդրօշակ տականքը մնում է անտարբեր, երբ աշխարհում դարագլխային անցքեր են տեղի ունենում: Ռուս բոլշեւիկը իր հողն ու հայրենիքն է երգում, իսկ բոլշեւիզմի այբուբէնին հազիւ ծանօթ հայն Ամերիկայում իր ազգային դրօշակն է պատռում:

Գիտե՛նք, գիտե՛նք, որ հայկական բոլշեւիզմը՝ հացի խնդիր է, ծուլութեան իրաւունք՝ կեանքի պայքարի համար վատ զինուած թշուառականների համար: Գիտենք այդ, բայց եւ այնպէս մահու չափ դժուար է հաշտուել անդրօշակ հայ զինուորի գոյութեան հետ: Հայը, հասկանալի պատճառներով, պիտի մնայ իր վահանի, իր դրօշակի տակ, անգա՛մ այն դէպքում, եթէ հոգեբանական հրաշքով թուրքն իսկ բոլշեւիկանայ:

Մասարիկն ասում է՝ «Ասացի՞ր՝ ես չեխ եմ - պէտք է գիտնաս, թէ ի՞նչ պէտք է անես, պէտք է ծրագիր ունենաս: Ի՞նչ անելդ գիտնալու համար պէտք է յստակ ըմբռնում ունենաս ազգիդ առաքելութեան մասին: Իսկ այդ առաքելութեան մասին ուսուցանում է պատմութիւնը»:

Ասացի՞ր՝ հայ եմ - պէտք է ուխտ ունենաս. եւ Կատոնի պէս ամէն օր պիտի կրկնես՝ Cartago delenda est! Եւ Կարթագինէ ասելով՝ պիտի հասկանաս Թուրքիան: Եւ պիտի պատրաստուես մի օր - աշխարհը միշտ էլ բարեկամ չի մնայ թուրքին - մի օր պատուհասելու թրքութիւնը: Ինչպէ՞ս՝ հարցիդ կը պատասխանեն երկու իմաստուն խորհրդականներդ - Սիրտդ ու Ժամանակը: Առ այդ՝ հայ մարդը յետ այսու մի հատիկ արժէք պիտի ունենայ - թէ որքա՞ն նա վտանգաւոր է Թուրքիոյ համար: Այո՛, այսպէ՛ս, չկեղծենք. «ջայլամի քաղաքականութիւնը» չի՛ փրկի մեզ: Եթէ թուրքն իրեն ազատ զգաց Արաքսն անցնելու, նա կը կատարի ե՛ւ արեւելահայութեան թաղումը: Ահա՛ թէ ինչո՛ւ հայ անհատի գերազանցութիւնը թուրք մարդու վրայ՝ դառնում է պատմական անհրաժեշտութիւն: Ահա՛ նաեւ թէ ինչո՞ւ հայ զինուորի անունը կրելու արժանի է նա՛, *ով հայ արիւնի վրէժխնդիր է, ով դաւանում է թէ՝ թրքութիւնը պէ՛տք է եւ կարելի է պատժել Թուրքիոյ սահմաններէն ներս:*

Անդրօշակը՝ զինուոր չէ՛: Ամերիկաբնակ հայ սակաւաթիւ դրօշուրաց լեգէոնականները իրենց ընթացքով հաստատեցին ա՛յն, որ *զէնք կրել՝ չի նշանակում ճշմարիտ զինուոր լինել*: Զէ՛նքը չէ մարդս զինուոր դարձնողը: Կայ մի ա՛յլ բան - ոգի՛ն, մարտական խմո՛րը, արիութի՛ւնը, հայրենի հողի զգացո՛ւմը, սրբութեա՛ն զգացումը, իր կեանքէն աւելի՛ իր դրօշակը սիրելու եւ նրա համար ամէն վայրկեան մեռնելու յոժարա՛նքը:

Եռագոյնը պատռող նախկին լեգէոնականները մատնեցին երեք բան՝

- Որ իրենք ճշմարիտ զինուոր չեն եղել.

- Որ իրենք արժանի չեն դրօշակ կրելու.

- Որ իրենք, ընդհանրապէս, անդրօշա՛կ են, անարի՛, անզօ՛ր - որեւէ դրօշակ պաշտպանելու իրենց կեանքի գնով:

Հակադրօշակեան այս վատութիւնը, հարուածելով ճշմարիտ լեգէոնականների հպարտութեանը, աւելի՛ եւս դղրդեց նրանց ազգայնական մոլեռանդութիւնը եւ մղեց դէպի մեզ: Արձագանքելով Դաշնակցութեան կանչին՝ նրանք Եռագոյնը իրենց աչքի մէջ, եկան՝ վիշապն զգետնող հերոսի վճռականութեամբ կանգնելու Դաշնակցութեան կողքին, ազգայնական պատնէշի վրայ:

Եկան եւ հաստատեցին՝

- Որ չէ՛ կարելի ճշմարիտ զինուոր լինել՝ դաշնակցական չեղած.
- Որ միայն մե՛ծ սրտերը գիտեն, թէ ի՞նչ ասել է դաշնակցական լինել.
- Որ միայն արիները գիտեն, թէ ի՞նչ է դաշնակցականութիւնը:

VIII

ԱԽՏԱԲԱՆԱԿԱՆԸ

«Անհատների պէս - ասում է Ֆույէն - ազգերն էլ մի հոգի, մի «ես» ունեն, եւ այդ հոգին ու «եսը» կազմւում են ցեղի հաւաքականութիւնից: Այնտեղ, ուր այդ հաւաքականութիւնը ընկնում է իր պատմական արժէքների բարձրութիւնից, ազգը գտնւում է անկումի շրջանում եւ նրա հոգին խանգարւում բարոյական հիւանդութեամբ»:

Ահա՛ մի դատավճիռ օրուայ հակադաշնակցութեան մասին:

Հակադաշնակցութիւնը - իբր ուրոյն հոգեվիճակ - կարող էր ախտաբանօրէն շեշտուել, եւ շեշտուեց բոլշեւիկների կողմից մեր գաղութներում ստեղծուած հոգեբանական մթնոլորտի շնորհիւ:

Մեր դարը զանգուածների եւ ամբոխների դար է: Ամբոխից կարելի է օգտուել երկու ձեւով - դրական եւ բացասական: Բոլշեւիզմը այդ վերջինից օգտուեց եւ շարունակում է օգտուել բացասական ուղղութեամբ: Դա ձգտում է տեւականացնել *ընկերային պսիխոզին* նպաստող հոգեբանական մթնոլորտը, գիտնալով, որ հոգեբանօրէն բնականոն մարդ էակից կարող է միայն մի՛ վերաբերմունքի արժանանալ - *մերժումի:* Հայութեան այն մասը, որ իր ճակատագրով եւ հասարակական դրութեամբ - կոտորածների խելացնորող յիշողութիւն, տեղահանութիւն, տնտեսական անկայուն վիճակ, նոր միջավայրին յարմարուելու յաճախ ապարդիւն ճիգ - դարձել է ջղայնապէս անկայուն եւ հոգեպէս խախտուած տարր՝ մեծապէս օգտագործուեց բոլշեւիզմից ո՛չ դրական ուղղութեամբ: *Ուր չկայ պսիխոզի վիճակ՝ բոլշեւիզմը ճգնում է ստեղծել, ուր կայ՝ նա շտապում է ձեռք առնել պսիխոզի ենթակայ տարրերի ղեկավարութիւնը:* Այս տեսակէտից յատկանշական է, որ մինչեւ Նիւ Եորքի դէպքը՝ ծանօթ տականքների ղեկավարութիւնը գտնւում էր ռամկավարների ձեռքում, սակայն, երբ դէպքից յետոյ գերագրգիռ վիճակ ստեղծուեց եւ ախտաւոր տականքը փողոց իջաւ, ղեկավարութիւնը անմիջապէս անցաւ բոլշեւիկներին, եւ այդ օրից սկսած՝ խ. իշխանութիւնը խելագար ճիգ է թափում տեւականացնելու *պսիխոզային մթնոլորտը*, որ կարողանայ ընկերահոգեախտային տրամադրութիւնների վարակչութեամբ ցնցումի մէջ պահել ցեղայնօրէն եւ ջղայնապէս անկայուն տարրերը: Այո՛, դժբախտաբար, ընկերային հոգեխանգարումը իրողութիւն է ամերիկահայութեան այն մասի համար, որ ազգային պարտականութեան բեռը նետել է իր ուսերից եւ սարսափով փախչում է ցեղօրէն մտահոգուելու ճիգից:

Այդ հոգեխանգարման ախտանշանները անհատի մէջ արտայայտու-

թիւն են ստանում, երբ որոշ հաւաքականութեան մէջ ախտաբանական այդ երեւոյթը աստիճանաբար զարգանալով յանգում է ընկերային պսիխոզի, որում, ըստ մի շարք հոգեախտաբանների - Լըբօն, Սիգէլ, Տարդ, Կինկէլ - ենթական մատնում է հետեւեալ գծերը.

1. - *Գիտակցութեան տկարացում*, որի դէպքում բանականութիւնը չէ՛ վարում ախտաբանական ենթակային, այլ դիպուածական գրգռուածութիւնը:

2. - *Զգացումների եւ գաղափարների միակողմանի ուղղութիւն:* Այս դէպքում՝ ենթական կորցնում է շրջահայեցողութեան ընդունակութիւնը, պատասխանատուութեան զգացումը եւ, իբր խտացուած կիրք, կուրօրէն մղւում իր մտասեւեռման առարկային՝ թէկուզ մարդկութեան անդարմանելի չարիք հասցնելու եւ աշխարհի ամբողջ բարոյակարգը ոտնահարելու գնով:

3. - *Բարձր զգացումների անկում*, որի շնորհիւ նա դառնում է ընկերայնօրէն անպիտան, բարոյապէս անընտրող, զրկւում է սրբութեան զգացումից, ինչպէս նաեւ գեղագիտական ճաշակից, կորցնում է հոգեւոր վայելքի ընդունակութիւնը եւ դառնում է - եթէ այսպէս կարելի է ասել - *հոգեւոր գիշակեր:*

4. - *Գերագրգռութիւն:* Կորցնելով բարձր գաղափարներով ապրելու ընդունակութիւնը, ենթական դառնում է անտարբեր հանդէպ բարձրի, հեռաւորի, եւ յափշտակւում ներկայով միայն: Իբր այդպիսին՝ նա կորցնում է բարոյական չափի գիտակցութիւնը եւ ղեկավարւում է այն բանով, ինչ նրան մասնաւոր գրգիռ է տալիս՝ տուեալ վայրկեանում: Յաւիտենականութեան մասին զգացում չունի, իսկ պատմութիւնից խրտնում է: Նրա հոգեւոր տեսողութեան շրջագիծը այսօրուանից դէնը չի տեսնում, որով անընդունակ է ապրելու իր ցեղի անցեալով, համակուելու նրա ապագայով:

5. - *Յուզականութիւն:* Սիրում է վայրկենական ապրումների տեղատարափը. յոյզից յոյզ է անցնում եւ յաջորդաբար մոռանում դէպքերը. տեւական ապրումի ընդունակութիւն չունի, ո՛չ էլ հասկացողութիւն ողբերգականի մասին. լալիս է եւ ծիծաղում՝ առանց լուրջ պատճառի, արագաշարժ է, բայց միշտ էլ ձախաւեր, գործում է եռանդով, բայց առանց կարեւոր նպատակի, աղմկարար է՝ շփոթի եւ քայքայումի ազդակ:

6. - *Կրքերի յորդահոսութիւն:* Անժուժ է, զուրկ է բարոյական ոյժից, որով եւ տոկալու, համբերելու առաքինութիւնից: Ներմղական է, ձգտում է արագօրէն իրականացնել իր մէջ բոյն դրած ամէն կիրք, ցանկութիւն:

7. - *Դատելու անկարողութիւն:* Չի հասկանում պատմական դէպքերի իմաստը, հակում չունի տրամաբանելու, ո՛չ էլ ճշմարտութեան ընկոյզի վրայ ատամ կոտրելու, անկարող է իրականը անիրականից զատորոշելու,

դիւրահաւատ է եւ յատկապէս հաւատում է այն բանին, որ իր հաշուին գալիս է: Այդ բոլոր պատճառներով՝ *բնական յարմարութիւն ունի գործիք դառնալու:*

8. - *Անյարկի վայրագութիւն եւ շնականութիւն:*

9. - *Թեթեւամտութիւն*, որ բացատրւում է ենթակայի հոգեկան տկարութեամբ: Չունենալով ինքնավար բարոյական եւ ինքնակամութիւն, ենթական դառնում է եռանդի մուրացկան: Թեթեւամտութիւնն էլ նրա մէջ ծայրայեղութեան է հասցնում հրահրուելու բաղձանքը, որպիսի պատճառով նա դառնում է՝ *ամէն չարիքի գործիք*:

Ահա՛, մօտաւորապէս, այն հոգեախտանշանները, որոնք վերլուծելու կարող դիտողը կը նկատի ամերիկահայութեան անդրօշակ տականքների մէջ:

Հակադաշնակցականը իբր ախտաբանական տիպ՝ եսական է եւ հաճոյապաշտիկ. հոգեպէս խո՛ւլ է, անկարեկի՛ց է, չի զգացւում մերձաւորի տառապանքից, անհամբեր է, անհանդուրժող, վայրագօրէն անարդար, ատող, չար, նրա մէջ գլուխ է բարձրացրել նախրայինը. նա իրեն թելադրուած գաղափարները, կարծիքները, հաւատալիքները կա՛մ ընդունում է ամբողջութեամբ, անքննադատաբար, կա՛մ ամբողջութեամբ մերժում:

Ախտաբանական այդ հոգեվիճակի շնորհիւ, նա հեշտութեամբ յանձնւում է զանազան պատրանքների, երբ այդ պահանջում է իր ղեկավարը: Օրինակ, նա հաւատում է, որ կարելի է Դաշնակցութիւնը գլխատել, Ամերիկայէն դուրս հանել, ծովը թափել, այդ նպատակով ստորագրութիւններ է հաւաքում, հանրագրութիւններ կազմում, չնայած որ տասնեակ տարիներով Ամերիկայում ապրող այդ եղկելին գիտէ որ, նման անհեթեթութիւնը դէմ է երկրի օրենքին. գիտէ, բայց հաւատում է: Նրա հոգեւոր աշխարհն հարուստ է ցնորական բազմազան գաղափարներով, բանդագուշանքներով, նա հաւատում է ամէն բանի, ինչ որ յարմար է իր հոգեբանութեան. ինչպէս շեշտեցինք մի տեղ, նա զուրկ է չափի եւ իրաւախոհութեան զգացումից, որովհետեւ ներքին հրամայականով, այսինքն իր խղճմտանքի ձայնով շարժուելու եւ գործելու փոխարէն, նա ղեկավարւում է արտաքին դրդումներով: Այս տարրը զգալիօրէն ներգործօնացաւ եւ փողոց իջաւ Նիւ Եորքի դէպքից յետոյ: Արդեօք, դժբախտ մի հոգեւորականի մա՞հը յատկապէս հոգեցնցումի ենթարկեց նրան, թէ այն ամէնը, որ այդ առիթով դրսեւորուեց՝ անթեղուած կար նրա մէջ: Արդեօք պայմաննե՛ր կը պակասէին նրան՝ իր հոգու ողջ չարութիւնը արտավիժելու համար: Գիտէինք, որ նա մեզ հետ չէր ազատագրական կռիւներում. գիտէինք, որ նա այժմ էլ մեզ հետ չէ՝ մեր ազգային մաքառումի, մեր ողբերգութեան, մեր վերափրկչական ոգորումների, մեր ինքնապաշտպանողական ճիգերի մէջ: Արդեո՞ք, Նիւ Եորքի դէպքից

յետո՞յ միայն փլաւ այդ տարրերի հոգին, թէ նա փլած էր վաղուց: Արդեօք, հիմա՞ միայն նա միացաւ մեր ցեղի թշնամիներին, հիմա՞, երէկ էլ նրա հետ չէ՞ր. ապա ի՞նչ էին հայ մատնիչները - ցեղի երեսից ընկած հրէշների այն լեգէոնը, որ մութի մէջ գործեց հայոց յեղափոխութեան դէմ, մինչեւ որ իսլամ մոլեռանդութեան քարի վրայ կը սրուէր այն ահաւոր դանակը, որով թուրքը ո՛չ միայն հայ յեղափոխականները պիտի մորթոտէր, այլեւ մի օր ամբողջ արեւմտահայութիւնը պիտի քաշէր պատմութեան մէջ իր զարհուրանքով եզակի սպանդանոցը:

Չէ՛, չէ՛, նրա էութիւնը վաղուց էր դատարկուել բարոյական այն յենակներից, առանց որոնց անհատի եւ ամբոխի մէջ գլուխ է բարձրացնում անասնականը:

Դակադաշնակցութիւնը - հասկանա՛նք, հասկանա՛նք այդ - որպէս ցեղալքումի արտայայտութիւն, նշանակում է՝ հրաժարում ցեղի արժէքներից եւ սրբութիւններից, նրա վախճանաբանութիւնից - ա՛յն ամէնից, որ ազգերի յաւիտենականութիւնն է ապահովում:

IX

ԴԱՇՆԱԿՑԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դաշնակցութեան շուրջն է դառնում հայոց ճակատագիրը:

Մեր ըմբռնումը՝ ապագայի մասին, որով պայմանաւորւում է մեր տքնութիւնը ապագայի համար - ահա՛ թէ ի՞նչն է կառուցանում մեր ճակատագիրը:

Այդ ըմբռնումն է մեզ - որպէս անհատ եւ հաւաքականութիւն - քշել տալիս պատմութեան առջեւից կամ նրա յետեւէն: Դա՛ է մեզ դարձնում ստեղծագործ կամ անպտուղ, մարտիկ կամ դասալիք, մուրացկան կամ արքայ, ի մի բան՝ յաղթական կամ պարտեալ:

Ապագայի պրոբլե՛մը - հայ հայրենիքի, հայ ճակատագրի պրոբլե՛մն է մեզ համար. աւելի պարզ՝ դա հայ եւ թուրք յարաբերութեանց պրոբլեմն է. - երկու ժողովուրդների, որոնք այլեւս չեն թագցնում, որ իրենցից *մէկի հետագայ գոյութիւնը պայմանաւորուելու է միւսի մահով:* Այդ իսկ պատճառով՝ մեծապէս խռովուած է ազգայնական հայը, ամէն բանից առաջ, է՛լ աւելի՝ դաշնակցական հայը: Դաշնակցականը - դա հա՛յն է, որ ընթանում է պատմութեան առջեւից, որպէս զինուոր՝ իր ցեղի ձայնին

հնազանդ: Իր ցեղի գոյութեան եւ ապագայի հետ կապուած խնդիրներով ապրող հա՛յն է դա: Ապագայի դրան արթուն հսկող, խռովքոտ հա՛յը - հարազատ զաւակն իր քաղաքական նախահայրերի - նախադաշնակցութեա՛ն: Հայրենաբաղձ հա՛յն է դա՝ սեփական երկրի ճակատագիրը ազատօրէն տնօրինելու տենչանքով: Հայ մա՛րդը, որ իր ցեղի ճակատագիրը դարձրել է ի՛ր սեփական ճակատագիրը, որ կապուած է մնում իր ժողովրդին՝ նրա դժբախտութեան եւ պայքարի օրերին, անձնուիրաբար ծառայում, զոհաբերում եւ մեռնում նրա համար, երբ հարկն է պահանջում:

Հա՛յը, որ խորապէս ապրում է ողբերգութիւնը երկրի հայութեան՝ հերոսաբար կառչած Արարատի փէշերին, եւ՝ տարագիր հայութեան, որ Նազովրեցու պէս դեռ շարունակում է նախանձել բոյն ունեցող երկնքի թռչուններին: Հա՛յը, որ հայրենիք ասելով, միշտ էլ պատկերում է Եօթնիցս սրբազան մի երկիր, որը սիրաշատ մօր նման կանչում է իր զաւակներին - «Եկէ՛ք, եկէ՛ք, ես ձեր մայրն եմ, իմ մշտաբուխ ստինքները կաթ ունեն բոլորի՛դ համար»:

* * *

Դաշնակցութեան ոյժն ու հմայքը Ամերիկայում ամէն բանից առաջ այն բարձր ըմբռնումի մէջ է, որ իր մասին արդարօրէն կազմած է ազգայնական հայութիւնը: - *Չէ՛ կարելի հակադաշնակցական դառնալ, առանց ուրացող դառնալու*: Այսպէ՛ս է մտածում ամերիկահայը եւ, որպէս քաղաքական աղօթք, ամէն օր կրկնում՝ «Աստուած երկու բան չտայ հայութեան - Արաքսին՝ կամուրջ, Դաշնակցութեան՝ պարտութի՛ւն»: Այո՛, թող ժամանակները այդ երկու բանը չտան մեզ, որովհետեւ Հայաստանը Պարսկաստանին միացնող մի կամուրջի գոյութեան դէպքում՝ այլեւս դժուար թէ մարդ մնայ մեր չեկայավար հայրենիքում, իսկ առանց Դաշնակցութեան՝ այլեւս ազգ չենք լինի, այլ՝ մարդկային փոշի:

Ազգայնական ամերիկահայը գիտակցում է, որ Դաշնակցութեան պարտութիւնը պիտի դառնայ հայ ոգու եւ դատի վերջնական պարտութիւնը - նա խորապէս գիտակցում է այդ, եւ այդ իսկ պատճառով կանգնած է Դաշնակցութեան կողքին:

Ի՞նչ է, սակայն, Դաշնակցութիւնը:

- Հայ ցեղի մշտնջենաւորման նախամտահոգութիւնը, նրա յաւիտենական տքնութիւնը, նրա ինքնահզօրացման, ինքնաազատագրման եւ լիարժէքաւորուելու ճի՛գն է դաշնակցութիւնը:

Ցեղերի ստեղծագործ ոգին անցումներ ունի՝ դէպի գոյութեան բարձր ձեւերը: Դաշնակցութիւնը հէնց այդ անցումն է մեր նորագոյն պատմութեան մէջ:

Դա ցեղի յաւիտենական անբաւականութիւնն է սեփական ճակատագրից, որ յատուկ է կենսաբանական բարոյականի տէր բոլո՛ր ժողովուրդներին:

Դա ցեղի ազնուութեան - նրա տքնաջանութեան, մարտունակութեան եւ ազատունակութեան բարձրագոյն աստիճանն է՝ ժողովրդի մէջ: Դա մեր ցեղի յիշողութիւնն է, որով ժողովուրդը չի՛ մոռանում անցեալի իր մեծութիւնը, չի՛ հաշտւում իրեն պարտադրուած անփառունակ վիճակի հետ: Ամերիկահայ ցեղակրօնի համար՝ հէնց այդ անհաշտուողականութիւնն է դաշնակցականութիւնը:

Մարդկութեան հանդէպ ազգն իր պարտականութիւնը չի կատարի, եթէ իր ձեռքից հանէ սեփական ճակատագրի ղեկը՝ եթէ դա յանձնէ օտարին: Իր ցեղի պատմութեան ընթացքը վարելու արիութի՛ւնն է դաշնակցականութիւնը:

Ո՞վ չգիտէ, որ դեռ սուրն է գծում ազգերի յաւիտենականութեան ճամբան: Իր ճամբի վրայ ցցուող վտանգներին եւ անիրաւութեանց կուրծք տալու քաջութիւնն է դաշնակցականութիւնը: Դա տուրքն է մտքի, սրտի եւ արեան, որ պահանջում է ցեղերի ինքնապաշտպանութիւնը: Դա այն հոգեբանական վահանն է, որով մեր ցեղը պաշտպանուեց դարերով:

Մեր *ցեղի ինքնայաւիտենականացման ծարաւն է* դաշնակցականութիւնը: Դա հայ մարդու անհանգիստ, մշտախռով մտածումն է Հայաստանի մասին:

Դա ցաւն է, որ ապրող հայ մարդն է զգում ի տես վիրաւոր Հայաստանի: *Եւ վիշտը մեռնողի*, թէ իրեն քիչ բան յաջողուեց կատարել հայրենիքի համար: Դա ճիչն է սրտաճաք Անդրանիկի, թէ «Գործս կիսատ մնաց»:

Եւ առաւելագոյն զոհաբերութիւնը, որ ցեղահոգ հայը ժպտադէմ կատարում է Հայաստանի համար:

Դա՝ պատմութեան հայացիր եւ Հայաստանակործան ընթացքը յաղթահարելու մեր ճիգն է: Մեր մղո՛ւմն է ցեղի ինքնակենտրոնացման եւ ինքնափրկութեան:

Դա՝ ցեղի ինքնանուաճումի ճի՛գն է, նրա արթնութիւնը, որ չի դադարում ամենակենտրոնախոյս տարրերին ուղղելու իր զգաստացուցիչ կանչը՝ *«Եկէ՛ք առ իս»*:

Դա գաղութահայութեան հոգեւոր ուղեհարթումն է՝ դէպի Հայաստան: Մեր ցեղի հայրենաստեղծումի խա՛նդը. օրուայ հայութեան ազատագրելու աննուաճ կա՛մքն է դաշնակցականութիւնը:

Այսպէ՛ս է հասկացւում դաշնակցականութիւնը Ամերիկայում:

Այս ըմբռնումը՝ դաշնակցականութեան մասին, հայ մարդուն մղել է դաւանելու թէ՝ *ամէն մեղանչում Դաշնակցութեան դէմ՝ մեղանչում է ցեղի դէմ:*

* * *

Ամերիկահայ դաշնակցականը սիրում է աշխատել իր անձի վրայ եւ իր վրայ կատարած աշխատանքով էլ նա չափում է դաշնակցականի իր պիտանիութիւնը: Նրա համար իր անձի վրայ աշխատելը - դաշնակցական աշխարհայեցողութեան եւ առաքինութեանց մշակումը - դարձել է հրամայական պահանջ, մասնաւորապէս այժմ, երբ հայ կեանքի *ներքին չարիքը*՝ հակադաշնակցականութիւնը - դարձել է ակտիւ եւ անցել յարձակողականի:

Ամերիկայում ես չտեսայ ինքնաշխատութիւնը թերագնահատող ընկեր: Ամէնքը գիտակցում են, որ պատմութեան վայրկեանի՝ մեր առջեւ դրած ծանր խնդիրները պահանջում են կուսակցական աւելի՛ մեծ կուլտուրականութիւն: Ինքնաշխատութիւնը չէ՛ թելադրւում, ինչպէս տեղի է ունենում բոլշեւիկների մոտ: Դաշնակցականը զբաղւում է ինքնաշխատութեամբ, ոչ թէ օտար գաղափարախօսութեանց ազդեցութեան տակ ընկնելու երկիւղից, այլ իր տեսաբանական հորիզոնը ընդլայնելու ներքին ցանկութիւնից, ջանալու ներքին ուրախութեան զգացումից:

Այնտեղ, ամէն ընկեր ինքնիրեն զգում է որպէս արժէքաւոր միաւոր այն մեծ ուխտի մէջ, որ կոչւում է Դաշնակցութիւն: Բարձրօրէն ընկերական է նա: Ջերմ ընկերականութիւն, հաւատաւորութիւն եւ խանդավառութիւն - ահա՛ նրա կուսակցական բարոյականի երրեակ սիւները: Նրա զոհաբերութեան չափը մնում է անծանօթ մեր շատ գաղութների համար:

Դաշնակցականը, Ամերիկայում, իր գործն ու զոհաբերութիւնը չափում է ոչ թէ իր կարողութիւններով, այլ իր պարտականութեան չափով, որ միշտ էլ աւելի՛ մեծ է եւ աւելի՛ն է պահանջում:

Այսպիսով, դաշնակցականութիւնը Ամերիկայում դարձել է մի տեսակ միւրիդիզմ - աննահանջ պայքարի եւ աննուազ զոհաբերութեան խա՛նդ:

Քաղաքական խորհողութեան ընդունակ՝ նա անսխալ կերպով սահմանել է թրքօբոլշեւիզմի կողմից մեզ պարտադրուած պայքարը, նրա արժէքը եւ իմաստը: Նրա համար իրերի վիճակը լիովի՛ն պարզ է: Նա սիրում է եւ գիտէ խորհել, եւ ոչ թէ դատել պատրաստի բանաձեւերով: Պայքարի մէջ դրած է առողջ միտք, տաք սիրտ եւ Վարդանանց մարտական բարոյականը՝ *«խիզախ քաջութեան վատութիւն չխառնել»*: Մշտարթուն է, գիտէ, որ պայքարը «տօն օրեր» չունի: Ներկայացնելով ազգն ու ազգայնականութիւնը՝ նա միշտ էլ տիրապետող դիրքերի վրայ է, այսինքն՝ վայր չի իջնում իր կոչումի եւ պատմական արժէքների բարձունքից: Նա խստօրէն կարգապահ է: Նա նմանում է աւելի ֆրանսական զինուորին, քան՝ գերմանականին: Առաջինը՝ իր հրամանատարը

կորցնելուն պէս՝ անցնում է նրա տեղը: Նման դէպքերում - իր պետերի վիրաւորուելու, սպանուելու դէպքում - գերման զինուորն իրեն զգում է անտէր, անգլուխ, ամբոխանում եւ դադարում կազմակերպուած ոյժ լինելուց: Ֆրանսականը, ինչպէս ասացի, փոխարինում է իր ամենաբարձր պետերին: Վերդենի շուրջը բորբոքուող ճակատամարտերում եղան դէպքեր, երբ շարքային պարզ զինուորը փոխարինեց իր գնդապետին եւ զօրամասի վերաբերմունքը մնաց նո՛յնը դէպի նոր հրամանատարը: Ա՛յս է ճշմարիտ կարգապահութիւնը: Դաշնակցականի կարգապահութիւնը մեքենական չէ, արտաքին չէ, դա՝ արտայայտութիւնն է մի բանաւոր անհրաժեշտութեան. դա արտայայտութիւնն է գիտակցօրէն ու կամաւորապէս ընդունուած պարտականութեան: Կարգապահութիւն ասելով՝ մեր ամերիկաբնակ ընկերը հասկանում է շարքերի բացարձակ վստահութիւնը դէպի իրենց ղեկավարները: Ռէմարկեան զինուոր չէ նա, եւ պատահական անյաջողութիւնները միշտ վերից վար չի փնտռում: Նա չի ասում՝ «սպանե՛րն առաջ», որովհետեւ գիտէ, որ իր մարմինները առաջնորդում են, եւ ոչ թէ ղեկավարում՝ հեռուից: Նա նպատակագիտակ է եւ դրական է իր նպատակադրութիւնը: Տանելով իրեն պարտադրուած անօրինակ պայքարը՝ նա, ինչպէս ամէն դաշնակցական, հետապնդում է ո՛չ թէ ապախորհրդայնացումը, այլ իրականացումը Միացեալ եւ Անկախ Հայաստանի գաղափարի: Նա համակուած է ուժեղ հայրենաբաղձութեամբ: Նրա համար հակադաշնակցականութիւնը՝ այն ներքին պատմական չարիքն է, որ տարբեր ժամանակաշրջաններում, տարբեր անուան եւ ձեւի տակ, մեծապէս դժուարացրել է մեր ցեղի չուն՝ իր յաւիտենականի ճամբի վրայ: Ահա՛ թէ ինչո՛ւ նա ներքին չարիքին մօտենում է ոչ թէ մակերեսայնօրէն, այլ ապրելով մեր ողբերգութեան խորութիւնը, գիտակցում է, որ հայ կեանքի հազար գլխանի չարիքը կը վերանայ մեր ճակատագրի բոլոր հանգոյցների քակումով - Միացեալ եւ Անկախ Հայրենիքի ստեղծումով միայն:

Ամերիկահայ դաշնակցականը գաղափարական կեանք ունի, ինչպէս եւ զգացումների մե՛ծ հարստութիւն, բայց չի սիրում լաց լինել անցեալի վրայ եւ ամէն բանում անցեալն օրինակել: Նրա մէջ նկատւում է հոգեկան մեծ լարուածութիւն: Դրա հետ՝ նա անասելիօրէն ընկերահաղորդ է: Ծանօթ դատավարութեան օրերին մեր շարքերը - պատի՛ւ իրենց - հսկումի ամիսներ բոլորեցին:

Նա չի հաւատում թուղթէ բանաձեւերի «փրկչական» զօրութեան, ինչպէս՝ նպաստաւոր պայմանների «կախարդական» ոյժին՝ - նա աշխատում է, աշխատում եւ աշխատո՛ւմ:

Իրեն պարտադրուած պայքարում նա ցուցահանեց հոգեբանական խորին հասունութիւն: Նա մի հատիկ չափանիշ ունի - դաշնակցական բարոյականը: «Դու պէտք չէ՛ անես այն, ինչ կարող է վնասել Դաշնակ-

ցութեան» - նրա համար ասել է՝ «դու պէտք չէ՛ անես այն, ինչ կարող է վնասել ազգիդ»:

Նրա կեանքի ամենախռովիչ հարցն է - Հայաստանից դուրս ես ապրո՞ւմ եմ այնպէս, ինչպէս որ պէ՛տք է ապրել յաւիտենական հայ մարդուն: Եւ նա գիտէ, որ այս հարցի լուծումը պէտք չէ փնտռել շրջապատի աննպաստ պայմանների, այլ՝ իր ցեղային գիտակցութեան մէջ: Նա գիտէ նաեւ, որ այդ հարցի լուծումից է կախուած իր վարած գոյամարտի ելքը՝ յաջող թէ անյաջող:

Նա անասելիօրէն հպարտ է իր երեք «Հայրենիք»ներով - երեք ազգային օրհնութիւններ ամերիկահայութեան համար - որոնցով յաջողել է օտար հեռաւոր ափերի վրայ իր աննիւթեղէն հայրենիքն ստեղծել:

Հոգեբանական յարմարումն անծանօթ է նրան - ցեղակրօնութի՛ւնը վկայ: Յարանուանականութիւն եւ հատուածականութիւն չգիտէ, նա *համահայ է:* Հայնէի հայրենապաշտ զօրականն է, որ հայրենիքից դուրս՝ տոչորուում է իր հողի կարօտով եւ դժուարանում է մեռնել: Մինչ հակադաշնակցականը վատաբար երգում է կոմունիստական գրականութիւնից առնուած հետեւեալ տողերը. «Միեւնո՛յն է - հանգիստ կը պառկեմ եւ օտարութեան մէջ, հողն այստեղ թէ այնտեղ - միեւնո՛յն է»: Հայրենի կարօտը ոչ միայն ամերիկահայ դաշնակցականին պահում է պանդխտի հոգեվիճակում, այլեւ մղում է նրան տառապել նաե՛ւ մեռած հարազատի *գերեզմանի պանդխտութիւնից*:

Դաշնակցական Բաբկէն Տէր Մանուէլեանի ցեղակրօն զաւակնե՛րն էին, որ իրենց հօր գերեզմանից ինձ «ափ մը հող» տալով, ասացին - «Եթէ հնարաւոր չէ Հայաստանի հողին՝ գէթ խառնէք Քրիստափորի գերեզմանի հողին»:

Հէնց ա՛յդ է դաշնակցականութիւնը:

X

ՑԵՂԱԿՐՕՆ ՈՒԽՏԵՐ

- «Ես հազար անգամ յանձն պիտի առնէի բռնութեան վտանգը, քան՝ ցեղիս այլասերումը»:

ԳԱՆԴԻ

«Հայ կեանքը, սակայն, ունի ե՛ւ մի ուրիշ կողմ, ուր տեղի է ունենում *ցեղի ոգու նոր շարժը*, ուր հոգիների մէջ սկսել է հոսել թրքատեցութիւնը որպէս հրեղէն հեղեղ, նոյնքա՛ն զօրաւոր, որքան ցեղապաշտութիւնը մեր: Մեր կեանքի այդ բաժնում *հայ տառապանքն ու ամօթանքը միացած, նախապատրաստում են ծնունդը նոր հայու*: *Մեր տիտանական ցաւից ծնունդ է առնում մի նոր կրօն - հպարտութեան կրօնը: Իր սեփական տառապանքի մէջ մկրտուած հա՛յն է աշխարհ գալիս: Նա իջնում է ցեղի ոգու բարձունքներից՝ ցեղի խօսքը շրթունքներին*: Նա սէր է աւետարանում, սէ՛ր դէպի ինքնակառուցում՝ ինքնայաղթահարումի ճամբով: Եւ մահ է քարոզում, *մա՛հ հայ տկարութիւնը սնուցանող բոլոր չաստուածներին՝ հին ու նոր:* Նա գալիս է վերականգնելու մեծութիւնը հայ անունի, որ այնքան հայհոյուած է այսօր:

Չէ՛ այլեւս չի կարելի այսպէս ապրել, քանզի աննախընթացօրէն սպանիչ է մեր նուաստութիւնը - այս ցնցող գիտակցութիւնից ծնունդ առած *աշխարհ է գալիս ցեղային բարոյականով միւռոնուած հայը:* Նա՛, որ ներոյժ կերպով ապրած է մեր ժողովրդին վիճակուած ողբերգութիւնն ու ամօթանքը - նո՛ր հայը, որի դրօշակից վաղը պիտի կախուի մեր ցեղի յաղթանակը: Այդ օրուայ համար է ապրում եւ գործում դաշնակցականը:

Դեռ իր լինելիութեան մէջ է Դաշնակցութիւնը - նա դեռ չի ասել իր վերջին խօսքը:

Ահա՛ թէ ինչո՞ւ եմ ասում՝ օրհնի՛ր ճակատագիրը, որ հայ ես ծնած, բայց որպէսզի օտար ափերի վրայ հայ մնաս, եղի՛ր դաշնակցական» («Ցեղի ոգու շարժը»):

Այսպէս էի գրում ընդամէնը երեք տարի առաջ: Նախատեսում էի ծնունդը նոր հայու: Սպասում էի ցեղայայտնութեան: Եւ յայտնուեց *ցեղակրօնը:*

Ընթերցո՛ղ, ճանաչո՞ւմ ես ամերիկահայ ցեղակրօններին, որոնք անճառելի քաղցրութեամբ ասում են իրենց մասին՝ *«մենք լեգէոն ենք»*.

որոնց ցեղականչ «Լսի՛ր»ը զրնգում է, որպէս բարձր զանգակատնից իջնող ղօղանջ եւ Մեծ Ուխտի առջեւ ծռում հազարաւոր ծունկեր, խոնարհեցնում հազարաւոր ճակատներ, սարսռեցնում հազարաւոր սրտեր: Ճանաչո՞ւմ ես ամերիկահայ ցեղապսակ սերունդը, որն աշխատում է դառնալ արդարութեան գործիք՝ այն խուժ ազգի դէմ, որ փորձեց գոյութեան գրքից մեր ցեղի անունը սրբել:

«Հայերը հպարտ զգալու որչա՜փ իրաւունք ունին, եթէ անգամ մը գիտնան, թէ իրենք փառապանծ անցեալ մըն են ունեցած: Բայց չեն գիտեր, դժբախտաբար»:

Անգլիական արդի մեծագոյն մարդաբաններից պրոֆ. Հետտընի այս խօսքին, որպէս պատասխան, ամերիկահայ նորահաս սերունդը յայտարարում է՝ *«Ես ճանաչում եմ իմ ցեղը, ես հաւատում եմ իմ ցեղին, ես պաշտում եմ իմ ցեղը, ես ցեղակրօն եմ»*:

Նա յայտարարում է, որ այլեւս ըմբռնել է էմըրսնի խօսքի իմաստը, թէ՝ *"Every man is un bundle of his ansestors"*. նա սկսել է հասկանալ, որ *ամէն անհատ իր նախահայրերի կծիկն է*, նա ըմբռնել է ժառանգականութեան օրէնքի այն ոյժը, որով նախահայրերի զօրութենականութիւնը փոխանցւում է անհատին, որպէս կենսաբանական կարողականութիւններ. նա ըմբռնել է, որ *մարդկային բոլոր կենսակարողութիւնները միայն ցեղի արեւի տակ են ծլում, ծաղկում եւ բացւում:*

Նա հասկացել է թէ՝ ցեղը եւ ժամանակը յաւիտենակից են. թէ՝ անանց է ցեղի ազդեցութիւնը. թէ՝ ցեղն է ժողովրդի ուժերի աղբիւրը. թէ՝ մարդկօրէն եւ ազգայնօրէն զօրաւոր է նա՛, ով ազատ է ասելու - *ցեղի՛ս զաւակն եմ եւ ահա՛, օտարութեան մէջ իսկ, ի՛ր կաթը կը ծծեմ:* Նա հասկացել է թէ՝ անհատը կտրուելով իր ցեղից, իր գոյութեան նախաղբիւրից - ապրելով մեկուսի, առնուազն դժւարացնում է իր հոգեւոր աճումը: Եւ ընդհակառակն՝ մնալով մշտահաղորդ ցեղի գերագոյն ոյժերին - նա՝ անհատը ապրում ու ապրեցնում է ցեղի յաւիտենական արժէքները եւ հէնց դրանով էլ նպաստում է իր *հոգեկան ինքնահսկայացումին:*

Նա սկսել է հասկանալ, թէ անհատների եւ ժողովուրդների վերելքն ու անկումը պայմանաւորւում են իրենց հարազատ ցեղի մասին կազմած ըմբռնումով: Որքա՛ն բարձր է անհատների եւ ժողովուրդների հասկացողութիւնը իրենց *գերագոյն ծնողի* - ցեղի մասին - նոյնքան հոգեպէս կայտառ, զօրաւոր, ստեղծագործ են նրանք: Ժողովուրդների բարոյականը, որոնց հոգեւոր կեցուածքը, պայմանաւորւում են նոյնպէ՛ս իրենց ցեղի մասին կազմած պատկերումով: Եւ հէնց այս պատկերումը, ցեղաճանաչումի այդ հոգեւոր հայելիացումն է կռում ու կոփում ժողովուրդների նկարագիրը, որով ե՛ւ ճակատագիրը:

«Ես ցեղակրօ՛ն եմ», - այսպէս են խօսում Նոր Աշխարհի հայ մանուկը,

պատանին, երիտասարդը - մեր ցեղի բարեկամներին՝ ուրախութիւն եւ թշնամիներին՝ ցաւ պատճառելով:

Այսօր, երբ հայ ճակատագրի վերեւ կախուած է եռագլխանի վտանգը - թուրքը, բոլշեւիզմը եւ հակազատագրական տարրերի պարտուողականութիւնը - ամերիկահայ նորահաս սերունդը ճիգեր է թափում հանդիսանալու կենտրոնը՝ ցեղային ոյժի, քաջառողջութեան եւ գեղեցկութեան:

Այսօր, երբ բոլշեւիկները՝ հայութեան տականքն իրենց տապարին կոթ դարձրած, փորձում են մեր ցեղի հոգեւոր անտառը կտրել՝ ամերիկահայ ցեղակրօնութիւնը ճիգ է թափում իր ուխտերի միջոցով կեանքի կոչել *կրօնա-քաղաքական թէ յարանուանական կաշկանդումներից զերծ ամբողջական հայը, նո՛ր հայը, որ զօրէ դիմանալ մերօրեայ աշխարհի քայքայիչ պայմաններին:* Նա ցեղաճանաչ է, նա գիտակցում է, որ իր ցեղը ամենադաժան պայմաններում իսկ եղել է եւ մնում է ինքնատիպ ստեղծագործող, *որ ինքը զաւակն է այն մեծ նախահայրերի, որոնք հոգեվարելիս լալիս էին, որ չեն մեռնում ձիու վրայ՝ գոռ ճակատամարտում:* Նա գիտակցում է, որ ինքը ցեղային բողբոջն է սրտի, մտքի եւ կամքի ա՛յն հսկաների, որոնք մի հատիկ փառք ճանաչեցին.- «Պատուոյ վէրքերով զարդարել իրենց մարմինները եւ կռիւներում իրենց ճակտի քրտինքը սրբել նիզակներով»:

Քիչ է խօսում ցեղակրօնը, որովհետեւ գործնապաշտ է, ջանապաշտ, որովհետեւ «ջանքն է, որ իրապէս մեր մէջ ստեղծում է նոր էակը, մարդկային անասունի մէջ պատրաստում մարդու յայտնութիւնը եւ մարդու մէջ՝ դիւցազնի արշալոյսը»:

Նա խօսում է՝ ուսանելու եւ ուսուցանելու համար, իսկ ուսանում եւ ուսուցանում է գործելու համար: Նա այնպէս է խօսում, որ իր ձայնի մէջ իր ունկնդիրները իր ցեղի ձայնը լսեն: Նա խօսում է այնպէս՝ որ իր լսարանը զգայ, թէ *կայ գերագոյն հեղինակութիւնը - ցե՛ղը*, որ խօսում է ցեղակրօնի շրթունքներով: Ցեղային ինքնայարգանք, ինքնավստահութիւն եւ նկարագիր - ահա՛ թէ ի՞նչ է մշակում ցեղակրօնը իր մէջ:

Ասուած է՝ «Ամերիկան կ'աշխատի, աշխատութիւնը կը պատուէ եւ գիտէ զայն կազմակերպել»: Նոյնը կարելի է ասել ե՛ւ ցեղակրօնի մասին: Նա իր գործն անթերի կերպով կատարելու կամք ունի: Նա ատում է անաշխատութիւնը եւ արհամարհում անջանութիւնը: *Լեցուն քսակի* սնոտի հպարտութեան փոխարէն՝ նրա մեծագոյն հպարտանքն է՝ *դժուարութիւններ յաղթահարել*:

Ամերիկեան միջավայրում, նրան գրաւողը երկնամերձ շէնքերն ու տիտանական կամուրջները չեն, այլ ամերիկացու ընկերա-մարդկային ճիգը, որի ծնունդն է իր նիւթական վիթխարի քաղաքակրթութիւնը:

Ցեղակրօնը սկզբունքի բարձրութեան է հասցրել իր ժամանակը օգտակարապէս գործածելու ձեւը: Նա ունի իր սրբավայրը - իր ո՛ւխտը - որում նա կռւում ու կոփում է *յարանուանական, դասակարգային եւ ընկերային եսականութիւններից զերծ նո՛ր հայը:*

Ցեղակրօնը չի սիրում նրանց, որոնք ցեղը սիրում են իրենց զգացումի ոյժով, բայց մտքի տկարութեամբ, ինչպէս եւ նրա՛նց, որոնք սիրում են մտքի ոյժով, բայց կամքի տկարութեամբ: Ցեղակրօնը նրա՛նց հետ է, որոնք ցեղը սիրում են իրենց անհատականութեան բովանդակ ոյժով - մտքի, զգացումի եւ կամքի բովանդակ թափով:

Ցեղակրօնի համար *հայ կոչուելու արժանի չէ նա, ո՛վ մեր երկրագնդի վրայ հայ անունից աւելի մի ա՛յլ բան է սիրում:* Ցեղակրօնը՝ իր կեանքից աւելի իր ցեղն է սիրում:

Օտար միջավայրի գունատ արտացոլումը չէ ցեղակրօնը, այլ հայ ցեղայնութեան ճառագայթումն՝ օտար հորիզոնների տակ: Նա համակուած է պարտականութեան խոր գիտակցութեամբ՝ նրա՛նց հանդէպ, որոնք էի՛ն եւ չկան եւ նրանց՝ որոնք չկան, բայց պիտի գան: Ա՛յդ իսկ պատճառով՝ նա ապրում է աւելի բարձր կեանքով, նա իր կեանքին միացնում է *անցեալի խորհուրդը եւ ապագայի հրայրքը:*

Նրա կեանքում աւելի գեղեցկութիւն, ուրախութիւն եւ քաղցրութիւն կայ: Եթէ ամէն ոք, ինչպէս ասում է Շիլլերը՝ իր մէջ կրում է մի իդէալական մարդ - ապա՝ ամերիկահայ ցեղակրօն սերունդը իր մէջ կրում է վաղուայ անխառն *ցեղամարդը:*

Իմ արիւնի մէջ, ասում է ցեղակրօնը, կան ու կը մնան հետքեր Անիէ՛ն, Մամիկոնեաններէ՛ն, Մայիս 28ի սերունդէն - իմ ցեղի մեծութիւնէն:

Այդ իսկ պատճառով՝ բոլոր հայրենիքներէն եւ քաղաքական սահմաններէն ներս՝ նա մնում է հպատա՛կն իր ցեղի:

Նա ձգտում է՝

ա) Ցեղակրօնութեան միջոցաւ զարգացնել իր մէջ այն բարոյա-կենսաբանական յատկութիւնները, որոնք կերտած են մեր ցեղի դիմագծութիւնը:

բ) Հայկական առհաւութեան դրական ոյժերը վերածել կենդանի ոյժի:

գ) Կեանքի կոչել հոգեւորապէս եւ կենսաբանօրէն զօրաւոր հայը, որպիսին պահանջում է իրերի նոր վիճակը գաղթաշխարհում՝ առաջ եկած մեր տեղահանութեան, կոտորածների եւ տարտղնումի բերումով:

դ) Աճեցնել օտար այլասերիչ ազդեցութեանց հակազդող հայ ոգու դիմադրողական ոյժը:

Ասենք անցողապէս, որ ցեղակրօնը չի սիրում լսել միջավայրի այլասերիչ ազդեցութեան մասին: Այո՛, դա ազդում է, բայց դա անզօր կը լինի սպանել ինձ, քեզ, նրան, եթէ մենք ապրում ենք ցեղօրէն:

Ցեղերի պատմութիւնը մեզ սովորեցնում է, թէ առանձին մարդը, ինչպէս եւ ժողովուրդը այնքան հզօր է եւ արդիւնաբեր, որքան իր էութիւնը բաց է իր ցեղի հոգեւոր մակընթացութեան առջեւ:

Ցեղակրօնը չի սիրում ցեղօրէն անկերպարանը, նւաստը եւ վախկոտը - մասնաւորապէս այդ վերջինը: Այդ իսկ պատճառով՝ ցեղակրօն ուխտերի մէջ խստիւ արգիլուած է «մի՛ վախնար» խօսքը: Վախենալ մէկի համար՝ ցեղակրօնի հասկացողութեամբ՝ ասել է թշնամանել նրան:

Վախը ենթակային դարձնում է անակտիւ, ինքնապաշտպանուելու անկարող. դա սպանում է նրա պայքարելու կամքը եւ խղճմտանքի անկախութիւնը, կարճ՝ ամէ՛ն վսեմ զգացում: Նա յաճախ անհատների միջոցաւ հոգեպէս հարուածում է, կազմալուծում ազգը: Ըստ ցեղաբանների - *վախի թագաւորութիւնը տարածւում է մինչեւ ցեղերը:* Դա արտայայտւում է կա՛մ տարերայնօրէն, կամ պարբերաբար: Վերջին ախտանշական ձեւը - նախերգանքն է ցեղի հոգեվարքի: Դա նշան է, որ ազգն այլեւս ազգ չէ, այլ մարդկային նախիր:

Իսկ *նախրանում են ազգերը, երբ մնում են անցեղահաղորդ:* Երբ ցեղահաղորդ չէ ազգը՝ նրա մէջ ցեղի ոյժերը - Տիգրան, Վարդան, Վահան կամ Մեսրոպ, Նարեկացի, Շնորհալի - մնում են քնած:

Ցեղակրօնութիւնը գալիս է հրահրելու այդ ոյժերի զարթօնքը եւ նրանց արտայայտութիւն տալու:

Ցեղային կարողութիւնների եւ առաքինութիւնների զգացումն ու արտայայտութիւնը պահանջում են որոշ հոգեբանական մթնոլորտ: Ցեղակրօնութիւնը ձգտում է հէնց այդ մթնոլորտը ստեղծել:

Նա ճգնում է աշխարհ բերել *ցեղամարդը - ամբողջակա՛ն հայ մարդը* - որի մէջ եւ միջոցով պիտի արտայայտւեն ցեղի բովանդակ դրական ոյժերն ու յատկութիւնները:

Անցեղահաղորդը քարշ է տալիս իր մանր եւ պարզ գոյութիւնը: Նա չի ճանաչում աւելի բարձր եւ ընդարձակա-հորիզոն կեանք: Նմանը տկար է եւ դժբախտ, քանզի դեռ չի զգացել իր միութիւնը ցեղի հետ: Նաեւ երկչոտ է անցեղապաշտը, որովհետեւ չգիտէ օգտուել իր էութեան մէջ մթերուած կենսաբանական եւ հոգեւոր ոյժի ակնաղբիւրից, նրա շտեմարանից - իր ցեղի ոյժից:

* * *

Երկար այն ճամբան, որ մեր ցեղն է կտրել, անցել, իրաւունք է տալիս ցեղակրօնին հաւատալու, որ դա հիւթասպառ եղած չէ, որ, ընդհակառակը, նրա հողը անախտ է, մաքուր, իսկ հունտը՝ ազնիւ, զօրաւոր: Ցեղակրօնը լաւատես է խորապէս եւ հաւատում է իր գործին: Նա սովորելու կամք - աւելի՛ն գիտնալու եւ կարենալու ծարաւ ունի: Նրա

պրոպագանդը առաւելապէս անձնական օրինակի պրոպագանդ է: *Նոր ուխտակից գտնել* - ահա՛ մի գործ, որի մէջ ցեղակրօնը յոգնել չգիտէ: Նա համոզուած է իր դաւանանքի փրկարար ճշմարտութեան: Նա տառապում է՝ տեսնելով *ցեղի ստինքից կտրուած հայ մանուկը, պատանին, երիտասարդը:* Ոգեկոչական է ցեղակրօնի խօսքը՝ խռովիչ, հոգեփոխող եւ՝ նոր ապրումի ու հոգեւոր լիութեան սնուցիչ: Չէ՞ որ ցեղն է նրա հոգեւոր կեանքի աղբիւրը: Ցեղաշունչ է իր խօսքը. դա խորհել է ստիպում: Նա չի սիրում պայքարի մտնել հին սերունդի - իր նախորդների թողած զէնքերով միայն, նա գիտակցում է թէ՝ անարդիական զէնք, ասել է անզինութիւն, անզէն բազուկ: *Նա աշխատում է գիտութեան զինարանէն առնել իր կռուի զէնքերը:*

Այսպէս վարուելով հանդերձ, նա չի մոռանում, որ «մարդս ի՛նքն է իր առաջին զէնքը»:

Յաղթել՝ ասել է գերազանցել: *Գերազանցելու ճիգ է ցեղակրօնութիւնը:* Պէ՛տք է գերազանցել իր ցեղի արտաքին թշնամիներին, իսկ այդ բանում յաջողելու համար՝ պէտք է գերազանցել իր նախորդ սերունդին: Այդպիսով միայն ճշմարտօրէն յարգած կը լինենք մեր նախորդներին: Բաւական չէ հիացիկ վերաբերմունք, անգա՛մ պաշտամունք ունենալ դէպի անցեալ սերունդը - պէ՛տք է գերազանցել նրան: Հէնց սա է կեանքի առաջադիմութեան օրէնքը, եւ յարգանքի այն պսակը, որ իւրաքանչիւր յետնորդ պարտաւոր է դնել նախնեաց յիշատակների կոթողին:

Ցեղակրօնի համար *չկայ աւելի մեծ վատութիւն, քան հոգեւոր խզումը սերունդների միջեւ*: Նորահաս սերունդը կտրուե՞ց անցնող կամ անցած գնացած սերունդներէն - նա էապէս կտրուում է մինչ այդ գոյութիւն ունեցող ցեղի արժէքներէն ու սրբութիւններէն, կրօնէն ու բարոյականէն: *Հին սերունդէն կտրուողը դառնում է հոգեպէս անհող եւ անուղի:* Էականը հոգեհաղորդակցութիւնն է սերունդների միջեւ, որի շնորհիւ վերջինները փոխանցում են *ցեղի յաւիտենական բոցը*, ինչպէս մոմը բոց է առնում մոմէն: Անդարմանելի չարիք է հոգեխզումը ժողովուրդների կեանքում՝ հին եւ նոր սերունդի միջեւ, որովհետեւ *մի՛ է, միեւնո՛յն է, օրգանապէս իրար կապուած աւանդութեանց, բարոյականի եւ արժէքների խախտման հոգեբանական հիմքը:*

* * *

Գերազանցօրէն հայկական է ցեղակրօնութեան գաղափարը: Այդ շարժումը կաղապարուած է մեր ցեղի էութեան վրայ: Դեռ խօսք չկար ֆաշիզմի եւ հիթլէրականութեան մասին, երբ ցեղակրօնութեան գաղափարը 1919ին ոտքի էր հանել մեր *Դաւիթ Բէգեան ուխտերը* Սիւնեաց աշխարհում, այն ուխտերը, որոնց զարկերի տակ փրկուեց բազմահազար

հայ մտաւորականութիւնը բոլշեւիկեան տապարէն, ինչպէս եւ Ադրբէյջանին թողնուած հայոց լեռնաշխարհը ճանաչուեց որպէս Հայաստանի անբաժան մասը: Փոխառիկ գաղափարները - սոցիալիզմ, կոմունիզմ - չե՛ն փրկի մեզ, նրանք օտարներէն փոխ առնուած տեսաբանական զգեստներ են, որոնք այնքան են խօսում մեր հոգուն, մեր արիւնին, որքան սովորական զգեստը՝ մեր մարմնին:

Ցեղակրօնութիւն ասելով՝ Լեռնահայաստանում ժամանակին հասկանում էին *ցեղային առիւծութիւն:* Ամերիկայի մեր ուխտերի խորհրդանշանն էլ առիւծն է, որ վեդական կրօնի մէջ կը խորհրդանշէր երեք բան՝ *կռիւ թշնամու դէմ, պաշտամունքի հասնող սէր եւ գերագոյն հրաժարում անձնական «ես»ից:*

Իսկ բագրատունեան զինուորի համար, Անիի շրջանին, առիւծը կը խորհրդանշէր՝ հայ մարդու հաւատը դէպի իր ցեղի ոյժը:

* * *

Ցեղակրօնութիւնը - յաջողապէս ուղղուած այս շարժումը դարձել է մի դպրոց ամերիկահայ նորահաս սերունդի համար: Դա՝ ամերիկահայութեան ցեղահոգ «եղիցի՛ն» է:

Ցեղի հետքերով - ահա՛ թէ ի՞նչ ասել է ցեղակրօնութիւն: *Ցե՛ղը, ցեղային արի՛ւնը, ցեղի կա՛մքը՝ աստուածացուած* - ահա՛ դա՛ մի այլ բացատրութեամբ: Դա ասել է՝ *խանդավառ ծառայութիւն եւ հնազանդութիւն ցեղին. դա պաշտամունքն է ցեղի - իր ոյժի, հանճարի եւ բազուկի: Դա մեր հաւատն է՝ դէպի մեր ցեղի կարողութիւնները:*

Պաշտել ցեղը, ասել է՝ բոլորանուէր յանձնուել ցեղի կամքին եւ աշխատել, որ այդ կամքը դառնայ ինքնազօր եւ յաղթական: Ցեղակրօնը - ներկայացուցիչը իր ցեղի ոգու - դաւանում է թէ՝ Հայաստանը է՛ր, է՛ եւ պիտի մնա՛յ մինչեւ վախճանը ժամանակների:

Ցեղակրօնը, որի պաշտամունքի տարրերն են - ցեղային հանճար, ոյժ եւ արիութիւն - իր մէջ մշակում է *զօրութեան մարդը:* Նրա մօտ կենդանի է ոյժի զգացումը:

Նա զգում է, որ մօտենում է օրը՝ վերջին վճռական ճակատամարտի, որի համար չի ուզում անպատրաստ գտնուել:

Ցեղակրօնը, դա հայն է՝ նոր կենսազգացողութեամբ, հա՛յը, որ իր մէջ սկսել է զգալ հայ երկրի ընդերքում քնած երկաթը: Հա՛յը, որի էութեան մէջ ցեղի առիւծ-կամքն է արթնացել - ճակատելու, նորաստեղծելու եւ յաւերժանալու կամքը:

Հոգով արծիւ հայն է դա, որ նոր է իջել ցեղի պատմութեան բարձունքներից եւ ահա՛ թեւահարում է վերստին դէպի վե՛ր, դէպի հայոց

պատմութեան կատարները: Դա գորշ առօրեայից, կեանքի թմբիրից, հոգեւոր մեռելութիւնից արթնցած հա՛յն է, որ շնչում է խոր, որի աչքերը վառւում են նոր յոյսի խանդից, որն իր կրծքի տակ զգացել է իր ցեղային ոյժերի ալեկոծուող ծովը, որը՝ նոր կենսազգացութեամբ՝ ապրում է մի նոր կեանք - ոյժի, արիութեան եւ հպարտանքի: Դա վահագնապա՛շտ հայն է - ուժապա՛շտը, զոհապա՛շտը: Ցեղահոգ Հա՛յն է դա, որ յայտարարեց - «Լոզա՞նը - ո՛չ, երբե՛ք»: Նա՛, որ զայրոյթով մերժում է աշխարհի անիրաւութեան դատակնիքը իր ցեղի ճակատագրի մասին: Ցեղապրումի ընդունակ հայն է դա, որ մի օր իր աչքը օտար հորիզոններից դարձրեց դէպի մեր երկիրը - մտասուզուեց մեր պատմութեան ալեծուփ ովկիանում, եւ մեր ցեղի կեանքի մագաղաթին նայելով, իր էութեան խորէն աղաղակեց,-

«Ես կարդացի ցեղիս թողած աստուածային հետքերը երկրագնդի վրայ, տեսայ, համբուրեցի, պաշտեցի - ես դարձայ ցեղակրօն»:

XI

ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՄՔԸ

(Մի հատուած իմ «Ցեղային Արթնութիւն» յօդուածաշարքից)

Մի ժողովուրդ, որ ինքզինքը դեռ չի նուաճել - *իսկ ինքնանուաճումը հնարաւոր է ինքնաճանաչումի ճամբով միայն* - ընդունակ չէ՛, արժանի չէ՛ մեծագործութիւնների:

Ժողովուրդների - ասենք եւ մի ա՛յլ ճշմարտութիւն - հոգեւոր արդիւնաւորութիւնը մե՛ծ է այնքան, որքան բիւրեղացած, պայծառացած է նրանց ցեղային գիտակցութիւնը, որքան բացայայտուած է նրանց նախաէութիւնը, հոգի՛ն:

Հազար խորհուրդ ունի հայ հոգին, որ իր խանդավառ մարգարէին է սպասում, որը պիտի յայտնուի մի օր եւ այն բացայայտ է մեզ:

Հայութիւնը ցեղաճանաչութեամբ միայն կարելիութիւն պիտի ստանայ իր էութեան չգիտակցուած ոյժերը լծելու իր ցեղին վիճակուած անհաւասար գոյամարտի գործին: Այո՛, դեռ ցեղաճանաչ չենք, դեռ կանչում ենք մեզ, ձայն ենք տալիս, փնտռում, բայց դեռ չենք գտել մեզ, դեռ չենք ճանաչել մեզ, որպէս ցեղ:

Փնտռում ենք *Յաւիտենական Հայը*, փնտռում ենք նրան իր հեթանոս դարերում, իր քրիստոնէութեան մէջ, իր պատմութեան լոյսի տակ, իր գրականութեան մէջ, իր իմաստասիրութեան եւ վարած ճակատամար-

տերի, իր ինքնիշխանութեան եւ ստրկութեան, իր կոտորածների, արտագաղթերի եւ հայրենաշինութեան մէջ - փնտռում ենք նրան իր բնաշխարհում եւ օտար հորիզոնների տակ, փնտռում ենք, բայց դեռ չենք գտել: Գիտենք, սակայն, որ միայն ինքնաճանաչութեամբ կարելի է տիրապետել այն տարերքին, որ յաւիտենական է հայ էութեան մէջ - մեր ցեղայնութեա՛ն:

Ցեղօրէն անինքնաճանաչ՝ դեռ կոյր հայ հոգու խորքերում, եւ այդ իսկ պատճառով՝ անզօր մերօրեայ ճակատագրական խնդիրների առջեւ, որպէս ժողովուրդ, մենք շարունակում ենք մնալ *նուաստ ու նահատակ,* երբ աշխարհը պահանջում է լինել *ինքնայարգ եւ յարգանք պարտադրելու աստիճան զօրաւոր:*

Անասելիօրէն զօրութենական՝ բայց դեռ իր ինքնայաղթահարումը գլուխ չհանած՝ հայ էութիւնը իր անսպառելի շինարարական եռանդը մսխում է ընդունայն: Մեր ժողովուրդը դեռ շարունակում է արիւնի տուրք տալ իր ցեղային անինքնաճանաչութեան: Ա՜հ, դեռ շարունակւում է հայոց ողբերգութիւնը, - մի անօրինակ ողբերգութիւն, որ մեր ազգային ոյժի եւ հպարտութեան փոխարէն՝ մեր տկարութիւնն ու նուաստութիւնն է սնուցանում: Արդ՝ մեկնելով այն կենսաբանական ճշմարտութիւնից, թէ՝ երբ ժողովուրդների մէջ տկարանում է ցեղի շունչը - սկսւում է նուազիլ սերունդների կենսունակութիւնը, հոգեպէս մանրանում են անհատները, շեշտւում է նրանց վատասերումը եւ վրայ է հասնում անժամանակ զառամութիւն, - մեկնելով այդ ճշմարտութիւնից՝ քե՛զ, նորահաս սերունդ, ցեղիդ ձայնն եմ բերում: Ես քեզ ցեղակրօնութիւն եմ քարոզում: Ցեղակրօնութի՛ւն, որով անհայրենիք հայութիւնը հոգեւոր զրահ կը հագնի՝ օտար միջավայրերի այլասերիչ ազդեցութիւններին յաջողապէս դէմ դնելու համար:

Այդ դաւանանքը, քո միակ դաւանանքը, որեւէ հանգիտութիւն չունի այլ վարդապետութիւնների հետ. իսկ եթէ կրօն է դա, ապա դա կրո՛նն է ցեղային հպարտութեան, ոյժի եւ արիութեան, դա կրօնն է հայ նորահաս սերունդի:

* * *

Ցեղակրօնութի՛ւն -

Լոզանում եւ Լոզանից յետոյ, անասելիօրէն վիրաւորուած, զարնուած անարգանքի փոշիների մէջ, իր խորքի մէջ ապտակուած, ցնցուած հայ հոգու ծնունդն է դա:

Չէ՛, այլեւս այսպէս ապրել չէ՛ կարելի, ապրել առանց սեփական իրաւունքի, արժէքի եւ արժանիքի գիտակցութեան, առանց ներքին

հպարտութեան - առանց սեփական կեանքի - չէ՛, այսպէս չէ՛ ուզում ապրել նորահաս սերունդը:

Անցեղաճանաչ՝ անզօր ու նուաստ է հի՛նը. մեզ պէտք է *նո՛ր հայը*, որին սպասում ենք ցեղակրօնութիւնից: Մեզ պէտք է *ցեղակրօն հայը*, *որ զօրէր դիմանալ մերօրեայ քաղաքական աշխարհին:*

Ցեղակրօնութի՛ւն -

Ցեղիս ճանաչումն է դա, ճանաչումը մի գերիվերոյ ոյժի, էութեան.

Երկրորդ՝ *այդ ոյժ-էութիւնից ծնած լինելուս գիտակցութիւնն է դա.*

Ապա՝ *այդ ոյժ-էութեան ցմահ հաւատարիմ մնալուս ուխտն է դա:*

* * *

Ա.

Ես ցեղակրօն եմ -

Եւ ահա՝ կ'երդնում Վահագնի աջի վրայ՝ երբեք չմեղանչել ուխտիս դէմ - ապրել, գործել ու մեռնել որպէս ցեղամարդ:

Բ.

Ինձ համար անհատականութեան եւ ազատութեան ամենաբարձր արարքը - դա հնազանդուելն է ցեղիս:

Գ.

Ես ցեղաճանաչ եմ, եւ ահա՝ գիտեմ, թէ մե՛ծ է իմ ցեղը, թէ իմ ցեղն աւելի՛ն է տուել մարդկութեան, քան ստացել է նրանից. գիտեմ, որ հայոց նորագոյն յեղափոխութիւնը վերջին գործը չէ իմ ցեղի էութեան. գիտեմ, թէ ի՞նչ բաների ատակ է իմ ցեղը:

Դ.

Ես ցեղահաւատ եմ, եւ ահա՛ պաշտում եմ ե՛ւ մի այլ աստուածութիւն - ցեղիս արի՛ւնը, որի անարատութեան մէջ է իմ ցեղի ապագան:

Ե.

Ես ցեղահաղորդ եմ, եւ ահա՛ զգում եմ, որ իմ անձը աւելի՛ իմ գերագոյն ծնողին - իմ ցեղին է պատկանում, քան իմ անմիջական ծնողներին:

Զ.

Իմ ժողովրդի քաղաքական ճակատագրով զբաղուելու պարտականութիւն ունիմ ես, եւ ահա՛ պայքարում եմ մի մե՛ծ ճակատագրի համար, որին արժանի է իմ ցեղը:

Է.

Ցեղակրօն ե՛մ, ասել է՝ ուր էլ որ լինեմ, ընկերային ինչ դիրք էլ որ ունենամ, ես խանդավառօրէն կը մնամ հպատակն ու մարտիկն իմ ցեղի:

Ը.

Հայաստանից դուրս, սփիւռքի մէջ, ի՛նչ վիճակում էլ որ լինեմ՝ մեծահարուստ, բարեկեցիկ թէ օրավարձով աշխատող բանուոր՝ անդարձ պանդխտութիւն չեմ համարի տարագրի կեանքս: Չէ՛, վերադարձ կայ:

Թ.

Կը դաւանեմ, որ իմ սերունդը աւելի՛ մեծ պարտականութիւն ունի, քան ունէր անցնող ազատագրական սերունդը: Պարտականութեան մէջ՝ ցեղակրօնի իմ բաժինը - առիւծի բաժինն է, ամենամե՛ծը:

Ժ.

Ցեղակրօնը, որի նշանաբանն է - աւելի՛, է՛լ աւելի զօրութիւն - պաշտամունք ունի իր ցեղի մարտական ոյժի, իմա՛ Հայ Յեղ. Դաշնակցութեան հանդէպ:

ԺԱ.

Զոհապաշտ եմ ես, եւ ահա՛ երկիւղածօրէն կ'ոգեկոչեմ նրանց, որոնց պաշտամունքը յաւիտենական է, որոնք առիւծացան իրենց արիութեան մէջ, աստուածացան իրենց հոյակապ նուիրումի մէջ - որոնք իրենց արիւնը շռայլեցին մեր ցեղի գոյութիւնը եւ պատիւը յաւիտենականացնելու համար:

ԺԲ.

Ցեղակրօնն էլ է ձգտում երջանկութեան - տեսնել թէ ինչպէ՞ս աճում է իր ժողովրդի զօրութիւնը եւ արդարօրէն ընդարձակւում է Հայաստանը:

ԺԳ.

Ցեղով է ապրում, ստեղծագործում եւ յաւերժանում ժողովուրդը: Մարդկային մշակոյթի գործում զօրութենական ոյժ է ցեղայնութիւնը: Արդ, թէ ինչու ցեղային անհատականութեան եղծումը՝ ցեղակրօնը համարում է ոճիր՝ ուղղուած մարդկութեան եւ, ի մասնաւորի, իր ժողովրդի դէմ:

ԺԴ.

Ցեղակրօնը խորշում է այն բոլոր վարդապետութիւններից եւ հոսանքներից, որոնք միտում են մեր նորահաս սերունդը հեռու պահել ցեղի կազդուրիչ ստինքէն - կաթէն:

Նա խորշում է հայ իրականութեան մէջ զեռացող այն բոլոր ոյժերէն, որոնք թէպէտեւ հասարակական դիրքով հակոտնեայ, բայց ընդհանուր հոգեբանութեամբ միացած ճակատ է յարդարած մեր լուսաւոր ազգայնականութեան դէմ:

Աւելի՛ պարզ: Ազգայնականութեան երկու ձեւերից՝ - ազգայնական անհատապաշտութիւն եւ եսապաշտութիւն - ցեղակրօնը ողջունում է առաջինը, որն այլ բան չէ, եթէ ոչ ազգ-անհատի արդար եւ արգասաւոր ձգտումը՝ հաւատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը, եւ պաշտպանել իր հաւաքական անձի ազատութիւնը:

Ցեղակրօնի այդ ձգտումը լիուլի համապատասխանում է համամարդկային բարոյականի եւ յառաջդիմութեան բարձր սկզբունքներին:

ԺԵ.

Մե՛ծ է ցեղակրօնի իմ թշնամանքը, ինչպէս մե՛ծ է իմ պաշտամունքը:

Ցեղիս թշնամիներ են - թուրքը, բոլշեւիկը եւ սրանց հայադաւ գործակալները, ամէն անուան ու ծպտումի տակ - որոնց վճռաբար կը հակադրեմ իմ զօրութենական ցեղապաշտութիւնը:

- Ինձ համար գոյութիւն ունի հարցերի հարցը՝ հապա բախտահաս թո՞ւրքը:

- Ես խորշում եմ բոլշեւիզմից, որովհետեւ հակամարդկային է: Երիցս ատում եմ դա, որովհետեւ հակահայ է՝ թուրքի չափ, որովհետեւ թուրքի հետ զինակցած մտաւ Հայաստան, որովհետեւ նրանից ցայսօր օգտուեց ցեղիս գերեզմանափորը - թո՛ւրքը, միա՛յն թուրքը:

Ցեղադրուժ բոլշեւիկը իր շնական հրաժարիմքն ունի.

Ես՝ իմ վճռական այո՛ն՝ ցեղիս.

Նա իր թուղթէ անզօր եղիցի՛ն ունի.

Ես՝ իմ հանապազօրեայ ազատագրական աշխատանքը ցեղիս համար:

Զզուելիօրէն բացասական է բոլշեւիկը, եւ դիմազուրկ՝ հոգեպէս:

Ցեղակրօնը մարդկութեան ներկայանում է ցեղադրոշմ ճակատով:

ԺԶ.

Պարտուողականութիւն, կրաւորական տառապանք, սարսափի հոգեբանութիւն, լալկանութիւն, մտքի անիշխանականութիւն, կրօնական անդէնականութիւն, դասակարգային եւ յարանուանական եսականութիւն - այդ ամէնից խորշելով խորշում է ցեղակրօնը:

ԺԷ.

Ցեղակրօն եմ, ասել է՝ պարտիմ, կամիմ, կարող եմ գերազանցել, եւ պէ՛տք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին - նա՛խ թուրքին:

ԺԸ.

Ուժապաշտ՝ տկարութիւն ու նահանջ չի ճանաչում ցեղակրօնը: Նրա մօտ կենդանի է ծարաւը՝ ոյժի, քաղցրութիւնը՝ զոհաբերութեան, եւ ճիգը՝ ցեղի ոյժերի կենտրոնացման:

Արտաշիսեան իր նախնիքների մեծութեան հետամուտ՝ նա պատկառում է իր ցեղէն, եւ աշխատում ամէնուրեք արժանաւորապէս ներկայացնել դա:

ԺԹ.

Նրա համար նուիրական է հայոց նորագոյն քաղաքական գոյառութեան օրը - Մայիս 28-ը - եւ այն խորհրդանշող սրբազան Եռագոյնը, որ է՝ սրբութի՛ւն, քաղաքական դա՛տ եւ վախճանաբանութի՛ւն, միաժամանա՛կ:

Ի.

Հայ մարդու հետ ցեղակրօնը խօսում է հայերէն, որովհետեւ գիտակցում է, թէ լեզուի մահը արագացնում է ժողովուրդների հոգեւոր մահը:

ԻԱ.

Ինքնամսխումի մէջ ազատ չէ՛ ցեղակրօնը:

Քաջառողջ լինելու իրաւունք եւ պարտականութիւն ունի նա, որի ձեռքին է գալոց սերունդների ճակատագիրը:

ԻԲ.

Նրա համար նախասիրելի են այն գիտութիւնները, արուեստներն ու արհեստները, որոնք կարելի է ծառայեցնել իր ցեղի հզօրութեան եւ յաղթանակին: Ցեղակրօնը՝ մարտիկ է կամ պատրաստւում է դառնալ այդպիսին:

ԻԳ.

Անձնական կամքի մշակութեամբ՝ ցեղակրօնը սատարում է հայ ոգու հսկայացումին:

Ցեղի կամքի աստուածացումը - ահա՛ թէ ինչի է ձգտում նա:

Այդ անմեռ կամքին ահա՛, որ չմեռաւ դաժան դարերի հարուածների տակ, եւ չթողեց որ հայութեան մէջ Մամիկոնեանների ռազմաշունչ ոգին մեռնի, ցեղակրօնն ասում է վճռաբար՝ այո՛ եւ ամէ՛ն:

XII

ՀԱՅ ԿԱՐՄԻՐ ԽԱՉ ԱՐԾՈՒԻԿՆԵՐ

Դուք ուզում էք ծառայել ձեր հայրերի՞
հայրենիքին. բարի՛. այդ դէպքում
ծառայէք ձեր զաւակների հայրենիքին:

ՎԻԼԷ

Մանկական դաստիարակութիւնը, իբր ազգային խնդիր, այն բովանդակութիւնն է, որով ազգայնական ամերիկահայութիւնը շօշափում է իր ապագայի սիրտը: *Ազգային դաստիարակութեան նպատակն է՝ կաղապարել, ձեւաւորել մանուկի ցեղային գիտակցութիւնը - այսինքն՝ մարդ էակի կենսաբանական բովանդակութիւնը կերպադրել, տիպարօրէն, ցեղայնօրէն:*

Մի ժողովրդի ապագան կախուած է ցեղային ա՛յն թթխմորից, որ դաստիարակութեան միջոցով դրւում է մարդ-էակի էութեան մէջ՝ սրա ամենաճկուն հասակում: Ցեղակրօնութեան միջոցաւ՝ ամերիկահայութիւնը ձգտում է իր մանուկի մէջ զարգացնել հէնց ցեղային թթխմորը - ժառանգականութեան տուեալները:

Մանուկին յատուկ է ամէն ինչ ընդունել անքննադատաբար, մասնաւորապէս արտադպրոցական նիւթերը: Բաւական չէ, որ դաստիարակութիւնը ըստ ձեւի եւ մանկավարժօրէն նպատակայարմար լինի, պէտք է նախանձախնդիր լինել յատկապէս բովանդակութեան մասին, իսկ դաստիարակութեան բովանդակութիւնը - դա հոգեցեղային կարելիութիւններն են: Մեթոդն այն չափով արժէք ունի, ինչ չափով որ դա նպաստում է բովանդակութեան յայտնաբերման: *Ամէն նիւթ մանկան գիտակցութեան համար ձեւաւորիչ ոյժ ունի:* Ա՛յդ իսկ պատճառով, ամէն բանից առաջ անհրաժեշտ է նիւթերի ընտրութիւնը, իսկ ընտրողն ամէն բանից առաջ նկատի պիտի ունենայ մանուկի ցեղա-հոգեբանական յատկութիւնները: Նիւթը պիտի նպաստէ մանուկի զգացական խորութեան: Պէտք է խուսափել բոլոր տեսակի անբովանդակ նիւթերից, որոնք եթէ չեն քանդում, գէթ թուլացնում են մանուկի հոգեւոր կարողութիւնները:

Մեր հետապնդած դաստիարակութիւնը նախ պիտի մշակէ հայ մանուկի ցեղաշունչ սիրտը, ինչ որ հասուն տարիքում դժուար է ստեղծել, եթէ չասենք անկարելի: Իսկ ցեղաշունչ սիրտ ստեղծելու գործում դաստիարակչական բոլոր ազդակներից - ընտանիք, հասարակութիւն, աւանդութիւններ, դպրոց - *մա՛յրն է ամենավճռական դեր խաղացողը:*

Այլ ժողովուրդների կեանքում ընտանիքը միայն լրացնում է դպրոցի գործը: Բայց ամերիկահայութիւնը ազգային դպրոցներ չունի, որով՝ ընտանիքը, որ առաւելապէս ասել է մայր՝ պիտի փոխարինէ ե՛ւ դպրոցը: Եւ այդ *ընտանիք-դպրոցի նպատակը պիտի լինի ուժեղացնել հայ մանուկի հոգե-ցեղային դիմադրականութիւնը:* Իսկ այդ անելու համար՝ դա հրամայողաբար պիտի դառնայ հոգեկան եւ ցեղային առողջութեան աղբիւր:

Մայրը տալիս է նիւթը - ցեղանի՛ւթը, դաստիարակիչը՝ հոգի՛ն: Այս երկուսն են կռում, կոփում ցեղի ճակատագիրը՝ մանուկի միջոցաւ: Այս երկուսի միջոցաւ տարւում է նաե՛ւ ցեղի գոյամարտի նախապատրաստութիւնը:

Հայրը, որպէս ընտանիքէն դուրս գործող, նուազ դաստիարակչական ազդեցութիւն ունի իր զաւակների վրայ, քան մայրը:

Այդ իսկ պատճառով, Արծուիկների կազմակերպութիւնը ամերիկահայ ազգայնական կնոջ - Կարմիր Խաչի ցեղահոգ գործն է:

Ամերիկահայ ազգայնական կինը կատարում է երկու գործ՝

ա) Նա ճիգ է անում ընտանիքը վերածել դպրոցի:

բ) Նա ճգնում է թափ տալ ցեղակրօն շարժման, նոր կեանքի եւ հոգեւոր վերանորոգութեան այս գործին:

Կարմիր խաչուհին սկսել է գիտակցել, որ ինքը վերանորոգչական կարեւորագոյն ազդակն է, ինչպէս եւ գլխաւոր կռողը ցեղային առաքինութիւնների: Լծուած նորահաս սերնդի դաստիարակութեան գործին՝ նա իր հոգու հետ՝ իր զաւակին տալիս է մեր ցեղային առաքինութիւնների տախտակը:

Չկա՛յ ազգային ապագայի կառուցում՝ առանց մօր, առանց հոգեփոխուած՝ նաեւ բանապէս ցեղայնացած կնոջ:

Մայրն աւելի՛ է մօտ իր երեխային, նա աւելի՛ն է տալիս նրան. ա՛յդ իսկ պատճառով, երեխան աւելի իր մօր պատկերն է:

Այդ գիտակցութեամբ ահա՛ Հայ Կարմիր Խաչը, որ 1934ի ընթացքում կրկնապատկեց իր թիւը, նոր սերունդի դաստիարակութեան զուգահեռ՝ աշխատում է ստեղծել *հոգեփոխուած մայրը:* Նա գիտակցում է, որ վերանորոգումը պէտք է սկսել հասարակական առաջին բջիջից՝ ընտանիքից, իսկ ընտանիքում նա՛խ իրենից՝ հայ կնոջից: Այս նպատակով էլ նա տքնում է հոգեցեղօրէն վերարարչագործել ամերիկահայ կինը:

Կարմիր Խաչի ստեղծած շարժման մէջ ցեղօրէն կայտառանում է նաեւ հայ կինը: Այդ շարժումը պատրաստում է ցեղային ոգու դաստիարակչուհին: Ամերիկայի կարմիր խաչուհու համար է նաե՛ւ գերման կնոջ ուղղուած նոր տասնաբանեայի առաջին պատուիրանը - «Դու պէտք չէ մոռանաս, որ մօր եւ կնոջ քո պարտականութիւններից զատ՝ պէտք է մասնակցես ազգիդ կեանքում տեղի ունեցող ճակատագրական անցքերին»:

Եւ կարմիր խաչուհին աշխատում է իր բախտորոշ բաժինը բերել իր զաւակներին տուած ցեղայարմար դաստիարակութեան գործին: Նա աշխատում է դառնալ ցեղամայր, որպէսզի իր զաւակները դառնան ցեղաճանաչ, ցեղահաւատ, ցեղակրօն:

Նա հասկացել է, որ գերագոյն է մօր առաքելութիւնը - որ նա կոչուած է իր *երեխայի դաստիարակութեան միջոցաւ կառուցելու իր ցեղի ապագան:* Այո՛, երեխան ներկայացնում է ապագան. նա մի խոստումնալի կարելիութիւն է, մի ժպտացող յոյս՝ լաւագոյն ապագայի: Եւ երեխայի հէնց այդ հանգամանքն է իրեն դարձնում *սրբազան* ժողովուրդների համար: Կեանքի բոլոր մեծագործութիւնները, յաղթանակները՝ ցեղերի ոգու արծուային թեւաբախումներ են: Ամերիկահայուհին հասկացել է այդ եւ ճգնում է *արծուամայր* դառնալ եւ իր արծուիկին սովորեցնել լայնաթռիչ խոյանքը՝ յանուն իր ցեղի Մեծ Վաղուան:

Հայ Կարմիր Խաչի ամէն մասնաճիւղ պարտադրօրէն ստեղծում է արծուիկների բոյն, իր թեւի տակ, վարում է նրանց կեանքը, դաստիարակում նրանց: Աւելացնենք, որ արծուիկների կազմակերպութիւնը

մէկ մէկ տնկարաններ են ցեղակրօն ուխտերի համար: Տասներեք տարին անց՝ արծուիկները միանում են ցեղակրօն ուխտերին: Այդ շարժումը մեծ խանդավառութիւն է ստեղծել թէ՛ մանուկների թէ՛ շրջապատի մէջ: Արծուիկը սովորում է ճանաչել եւ սիրել ցեղը, ապրել նրա արժէքներով: Իրենց պաշտամունքը Եռագոյնի հանդէպ արտայայտելու համար յաճախ նրանք իրենց անուանում են *«Եռագոյնի մանուկ»:*

- *Americas future lies an its youths.*

Նայելով հայ արծուիկի աչքերին, որոնք իրենց ցեղի հոգու խորքն են արտացոլում, մենք հպարտօրէն կարող ենք ասել, որ աւազի վրայ դրուած չէ ամերիկահայութեան շէնքը, որ նա ապագայ ունի, որովհետեւ արծուաբոյններ - արծուիկների սերունդ ունի:

Աշխատէ՛, աշխատէ՛, աշխատէ՛ կարմիր խաչուհի, որ վաղը Հայաստանը արծիւների բոյն դառնայ:

XIII

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԻՒՆ

«Պիտի ապրեմ, քանի դեռ
Մասիսը չի կործանիր»:

ՈՐԲԵՐԵԱՆ

Նորահաս սերունդի առջեւ բանալով իր դուռը, Դաշնակցութիւնը նրա առջեւ էապէս բացեց Հայոց ապագայի դուռը: Այդ սերունդի մէջ բացառիկ տեղ է գրաւում ուսանողութիւնը - մեր վաղուայ մտաւորականութիւնը: Մեր կանչին, առաջինը լինելով, արձագանգեց Բոստոնի ուսանողութիւնը, որ այժմ գործում է «Ահարոնեան Ակումբ» անուան տակ:

Բոստոնին հետեւեց Նիւ Եորքի ուսանողութիւնը: Այժմ ջանքեր են թափւում միութիւններ ստեղծելու այն բոլոր համալսարանական քաղաքներում, ուր հայ ուսանողութիւն կայ:

Ամերիկահայ ուսանողութեան մի մասը - բարեբախտաբար աննշան մասը - տեղաւորուած է հայ կեանքի ապազգային բեւեռի վրայ: Ցեղօրէն կոյր՝ այդ տարրը հայկական երկնակամարի վրայ լուսատուներ չի տեսնում:

Նիւթապաշտութեամբ թունաւորուած՝ նա ուսանում է հացի, միա՛յն հացի համար: Նա բանիւ եւ գործով հաստատել է Ֆիխտէի խօսքը, թէ՝

«Այս կամ այն փիլիսոփայութեան ընտրութիւնը կախուած է մարդու անձնական յատկութիւններից»: Իր հոգեբանութեան համաձայն՝ նա ընտրել է *նախանձի եւ հացի փիլիսոփայութիւնը - բոլշեւիզմը:* Այդ ուսանողութեան հոգեւոր կեանքը կարելի է բնորոշել մի հատիկ բառով - *ինքնաունայնացում:* Մի՛ սէր ունի - ժամանցը, հաճոյալի ժամանցը: Նրա համար «հաւասար են՝ երկինքն ու չուանը»: Գերագոյնը կեանքում՝ իր ա՛նձն է: Իր ծագումից զատ ոչի՛նչ ունի հայկական: Անարժէք է, կորա՛ծ ցեղի համար, որով՝ պարարտ հող է *«լենինեան սերմունք»*ի համար:

- Ուսանողութեան միւս մասը - ցեղօրէն առողջ տարրը - թրծւում է Դաշնակցութեան շունչով: Սրանց համար *Հայոց ցեղայնութիւնը մարած հրաբուխ չէ՛, ոչ էլ կիսաշէջ, այլ անընդհատ գործող հրաբուխ:*

Ցեղի ներքին աճումը - հակառակ անպատում արհաւիրքների - իրողութիւն է: Չդադարեցրին նրա աճումը՝ ո՛չ կոտորածները, ո՛չ տեղահանութիւնը, ո՛չ էլ տարագրութիւնը: Դա նշան է, որ մեր ցեղն իր ընդերքում կրում է, կարողական վիճակում, պահեստի հոգեւոր եւ կենսաբանական հսկայական ոյժեր: Հասկանալի է, որ նման ցեղի զաւակները չէին կարող չգիտակցել, թէ՝ *աններելի տգիտութիւն եւ վատութիւն է - սեփական արժէքների ուրացումով օտարութեան մէջ կեղծ իրաւահաւասարութիւն փնտռելը:*

Ազգայնական ուսանողութիւնը գիտէ, որ համամարդկային քաղաքակրթութեան ճամբան միագիծ չէ, որ ամէն ազգ զարգացման իր ուրոյն եղանակն ունի, եւ որ ոչ մի արդարացում ունի ազգային առանձնայատկութիւնների զոհաբերումը այս կամ այն օտար մշակոյթին, որքան էլ այդ վերջինը մեծ լինի:

Օտարը միշտ էլ բնազդական, այլ արդար արհամարհանք ունի այլասերուածի հանդէպ, անկախ նրա ընկերային դիրքից: Ճշմարիտ իրաւահաւասարութիւնը այլացեղ ազգերի եւ անհատների միջեւ հնարաւոր է միայն եւ միմիա՛յն սեփական արժէքների միջոցաւ:

Ա՛յս ըմբռնումն է գծել «Ահարոնեան Ակումբ»ին պատկանող ուսանողութեան ճամբան:

Եւ ո՛չ մի զիջում ի հաշիւ մեր ցեղային անհատականութեան եւ արժանապատուութեան - ահա՛ նրա նշանաբանը:

Ցեղաճանաչ՝ այդ ուսանողութիւնը իր ցեղային անեղծ էութեամբ աշխարհն ընդունում է անմիջական կերպով - թա՛րմ կենսազգացողութեամբ:

Նա զգում է մեր ապրած *ժամանակի մեծութիւնը*, եւ աշխատում է՝ *անհշան սերունդ* չկոչուելու համար: Աշխատում է, քանզի գիտէ, որ պատմութիւնը վաղը վերստին ազգերը դատաստանի պիտի կանչէ եւ պիտի ոտնակոխէ, տրորէ այն ամէնը, որ տկա՛ր է, անզօ՛ր, անպատրա՛ստ:

Նա զգում է գալիքը, որն աննախընթացօրէն փոթորկաբեր պիտի լինի: Մօտենում են նոր աշխարհաւերուբեան օրերը:

Եւ նա խորապէս գիտակցում է, որ ոճիրի համազօր տգիտութիւն կը լինէր կարծել, թէ՝ հայութիւնը *լենինեան շանթարգելի* շնորհիւ կարող է զերծ մնալ աշխարհի գլխին պայթող փոթորկից:

* * *

Տիեզերիմաստութեան պէտք չկայ հասկանալու համար, թէ՝ *մեր օրերը - նոր վերածնունդի, նոր ոգեկառուցումի օրեր են:* Վերանորոգումի ճիգ են կատարում բոլո՛րը, անխտիր, բոլոր ազգերը - զօրաւոր թէ՝ տկար, յաղթական թէ՝ պարտեալ:

Աշխատա՛նքն է եռում ազգերի ծոցի մէջ - ոգո՛ւ աշխատանքը, որով աշխատող ազգերը կռում, կոփում են իրենց մօտաւոր ապագայի դէմքը, որ ասել է՝ իրենց հոգեւոր դէմքը: Դասակարգային եսականութեամբ բռնուած՝ դեռ երէկ նրանք ինքնաթշնամական հարուածներով իրենց դարաւոր քաղաքակրթութիւնը կը վտանգէին, իսկ այսօր՝ ցեղի ճակատագրի ընդհանրութեան զգացումով զինուած, գործի է լծուած, որպէս մի՛ մարդ: Գրկած իրենց պատմութեան անիւը՝ նրանք ճգնում են զայն դարձնել դէպի իր բնական ճամբան:

Աշխատո՛ւմ են ազգերը, առաջին հերթին ֆաուստեան խռովքով, աշխատում են նրանց մտաւորականութիւննե՛րը - տքնում, քրտնում այն *մեծ օրերի* համար, որ գալիս են:

«Ոյժն է կրօնք, վա՜յ տկարին» - ահա՛ օրուայ նշանաբանը: Ճշմարիտ մտաւորականութիւնը - իր անունին արժանի - ցեղի ոգու գրականութեամբ, ցեղի խօսքի բոցով հրդեհում է ապրումները, մասնաւորապէս, նորահաս սերունդի եւ նրան նուիրումի, զոհաբերութեան ու գործի մղում:

Երբե՛ք, երբե՛ք, մարդ էակի հայեացքն այնքա՜ն վճռականութեամբ դարձած չէր եղել դէպի *կեանքի ամենամե՛ծ ոյժը, ամենամե՛ծ արժէքը, ամենամե՛ծ աստուածութիւնը - աշխատա՛նքը:* Հայրենիքները դարձած են մէկ մէկ հսկայ դարբնանոցներ, ուր դարբին-ազգերը ճակատագրի սալին իրենց ծանր կռանն են իջեցնում: Ոտքի վրա՛յ է ազգը - մե՛ծ, քրտնաթո՛ր, յաղթակա՛ն: Այլեւս իրար հասկացել են ու միացել՝ ժողովուրդն ու ընտրանին, պարտականութիւնն ու գիտակցութիւնը: Նման վիճակում են իրականանում համերաշխութիւնն ու հաւասարութիւնը՝ ընկերային խաւերի միջեւ: Նրանց աշխատանքի առաջացրած ներքին ջերմութիւնից սկսել է հալուել դասակարգերի միջեւ ցցուած սառոյցէ լեռը: Այդ աշխատանքի մէջ, վերջապէս, պիտի յաջողուի սպանել մարդկային երջանկութեան թշնամին - Մեդուզա՛ն: Այլեւս աշխատանքը դառնում է օրհնութիւն: Աշխատողը նրա մէջ դնում է իր այրական ուրախութիւնը, իր

խանդավառութիւնը, իր մտածումը՝ իր հոգին: Աշխատանքը թափանցւում է աշխատողի էութեամբ, որով՝ աշխատող ազգը դառնում է ինքնաճանաչ:

Չէ՞ որ անխօս ինքնախոստովանութի՛ւն, ինքնաարձանացում, ինքնաարտայայտութիւն է աշխատանքը:

Այսպէ՛ս, ոգու այդ նոր աշխատանքի մէջ ընկերայնօրէն սրբւում են, երիտասարդանում, վերածնւում - *ազգայնանո՛ւմ են ազգերը:*

* * *

Աշխարհն ազգայնանում է:

Օրինակնե՞ր: Ահա՛ Ֆրանսան, ուր ֆրանսիստների - «բանուորի, գիւղացու եւ զինուորի» շարժումը տարածւում է ինչպէս հրդեհ՝ անտառում: Այդ միութեան անդամները, որպէս խորհրդանշան, կրում են հին ֆրանկների զինուորական տապարը - ա՛յն ծանր եւ հատու զէնքը, որ մի ժամանակ կ'երգէին գաղիական դիւցազներգակները - «Մեր հայրերը կը կռուէին երկսայրի տապարներով. նրանք ընկան ճակատամարտերում եւ արծիւները նրանց մահը ողբացին»: Ժոռէսի հայրենիքի իսկական խորհրդանշանն այսօր, վերստին, հին, ծանր եւ երկսայրի տապարն է, որով ֆրանկները ժամանակին գոռ Հռոմի դռները խորտակեցին: Տապա՛ր - դա հոգեբանօրէն նշանակում է - զա՛րկ, ֆրանսացի, որ Ֆրանսան ապրի:

Երէ՛կ էր, երբ երկու ընկերվարական ղեկավարներ - Փարիզի երեսփոխան Մոնտանիոն եւ Բորդոյինը՝ Մարկէ՛ն - յայտարարեցին իրենց ընտրող բանուորութեան՝ «Մենք ապրում ենք մէկը պատմութեան ամենամեծ անկիւնադարձերից: Չենք կարող ժխտել փաստը, թէ նոր զօրաւոր իշխանութեան գաղափարները կենդանացուցիչ կերպով տարածւում են ողջ աշխարհում: Չէ՞ք խորհում, որ դա իր հասարակական արդարացումն ունի: Երբ մարդ վտանգի մէջ է՝ նախ եւ առաջ նա մտածում է իր մերձաւորների մասին: Թոյլ տւէք մեզ մտածելու մերոնց մասին, ձե՛ր մասին, եւ զոհաբերելով սքոլաստիկան, դարբնե՛նք նոր կեանք: Լինե՛նք կնքահայրը նո՛ր հասարակութեան՝ դրուած ազգային հիմունքների վրայ»:

Մարկէն, որ վերջերս ծառացաւ Երկրորդ Միջազգայնականի դէմ, ասում է մի այլ տեղ՝ «Հասել է ժամը, երբ պէտք է վերջ տալ կեղծիքներին, քարացած ու խուլ դոկտրիններին: Չէ՞ք զգում խռովքը վաղուան օրուայ: Գնացէ՛ք, դիտէ՛ք երիտասարդութեան մէջ, որ չի ուզում այլեւս խմել դառն բաժակից, եւ դուք էլ կը տեսնէք սարսուռը նոր օրուայ, կը տեսնէք աչքերի փայլը նրա՛նց, որոնք կոչուած են դառնալու դարբինը մի նոր եւ պայծառ ապագայի: Աճապարե՛նք - *երբ մի ազգ կործանւում է՝ նրա ինքնապաշտպանութեան համար ձեռք են առնւում գերագոյն միջոցներ:* Հասկացէ՛ք, մեզ փրկելու համար պէտք է նո՛ր երգ երգել»:

Այսպէ՛ս է աշխարհի ամենաառաջաւոր մասում - Եւրոպայում: Եւ ո՞ւր, ո՞ւր «նոր երգ» չի երգւում, ո՞ւր հայրենիքի փրկութեան համար ձեռք չեն առնւում «գերագոյն միջոցներ», ո՞ւր, մեր երկրագնդի վրայ, հակադաշնակցական հոգիներից դուրս, ո՞ւր չի գործում կեանքի բնաշրջումը: Ժողովուրդները ազգայնանում են, որովհետեւ նոր ցեղաբախումների վտանգ կայ: Ազգայնանում են՝ ինքնապաշտպանուելու, փրկուելու համար: Ցեղաշարժ կայ ամենուրե՛ք: Ցե՛ղը - ընտանիքէն, տոհմէն, ժողովրդէն, պետութենէն վեր - *ցե՛ղը, որպէս ուժածնութեան եւ ուժադարմանումի միջոց:* Ինչպէս երէկ, այսօր էլ ցեղի ինքնապաշտպանուելու կարողութիւնը պայմանաւորւում է ազգային անհատի ինքնապաշտպանուելու կարողութեամբ:

Վա՛յ այն ազգին, որ իր մէջ ոյժ եւ միջոց չի գտնում ինքնապաշտպանուելու համար - թշնամու դէ՛մ, բոլշեւիզմի դէ՛մ, օտար վատասերիչ ազդեցութեան դէ՛մ: Իր գոյութեան համար պայքարում է ծղօտը, ցողո՛ւնն անգամ: Բնութեան հիմնական օրէնքն է՝ ինքնապաշտպանութիւնը:

Կ'ուզէի, որ այդ ամէնը գիտակցէիր, եւ լա՛ւ գիտակցէիր, ամերիկահայ ուսանողութիւն: Կ'ուզէի, որ այդ բոլորի հետ գիտակցէիր եւ ա՛յն, որ հին աշխարհի վերակառուցման մեր օրերում հայութեան պէ՛տք են Ոգու հզօր առաջնորդներ, հոգեւոր Սամսոններ, մտքի, սրտի եւ կամքի հսկաներ: Պէ՛տք են առաջնորդներ, որոնց անձնաւորութիւնը լոյս, ջերմութիւն եւ հաւատք ճառագայթէր, որոնք տէ՛ր լինէին իմացական կեցուածքի, կարողանային գրել, կախարդել, գործել, կազմակերպել, որոնց խօսքը թափանցուած լինէր երկաթէ տրամաբանութեամբ եւ զրնգար որպէս դամասկեան սուր: Առաջնորդնե՛ր, որ պաշտուէին: Առանց նմանների - ոգո՛ւ առաջնորդների - ազգերը դատապարտուած են քարշ գալու պատմութեան յետեւից:

Երբ չկան հսկաներ՝ ազգը դիտում է աշխարհն ու երեւոյթները հալածուող կենդանու պղտոր աչքերով, եւ իր օրերն սպանում հին, մաշուած բառեր ու բանաձեւեր որոճալով: Երիցս դժբախտ է անմարգարէ ազգը՝ նա տեսիլներ չի՛ ունենայ: Սակայն, զզուելի՛ է մարգարէն, որ Աստուած չունի, կամ չաստուած ունի - նմանը կե՛ղծ է եւ անզօ՛ր: Զօրաւո՛ր է կենդանի Աստծու - կենդանի ցեղի անունով մարգարէացողը միայն: Նա՛, ով ուզում է վարել, առաջնորդել, պէ՛տք է լինի *ցեղի ոգու ներկայացուցիչը*: Մեր օրերում ղեկավարել կարող է նմա՛նը միայն: Կ'ուզէի, որ ամերիկահայ ուսանողութիւնը իր շարքերից մեզ զօրաւոր, կամային ղեկավարներ տար:

Ամերիկահայ ուսանողութիւնը - վաղուայ մտաւորականութիւնը - իր անունն արդարացնելու համար՝ հայ կեանքում պիտի կատարէ այն, ինչ դեր կատարում են ուղեղն ու սիրտը մարդկային էակի համար: Նա

հրամայողաբար պիտի դառնայ *գիտութեան եւ ցեղային պարտականութեան մարդ*: Եւ որպէս այդպիսին, առաջին հերթին նա պիտի հայացնէ օտար համալսարաններում ձեռք բերած իր գիտական պաշարը, ապա գիտական մտքի քիմիարանից պիտի անցկացնի հայութեան օրուայ «ճշմարտութիւնները»: Պիտի հիմնաւորէ ու աշխատէ համազգայնացնել Դաշնակցութիւնը, որպէս ազգային կենդանի դաւանանք: Վերջապէս՝ նա պատճառագիտօրէն պիտի բացատրէ հայ կեանքի չարիքներն ու թերիները, պիտի սրբագրէ ու վարէ զայն:

Ահա՛ այն մեծ դերը, որ վերապահուած է ամերիկահայ վաղուայ մտաւորականութեան - ուսանողութեա՛ն: Նա այսօր *դաւանում է՝*

- Որ իր սերունդին վիճակուած է ապրել իր ցեղի պատմութեան ամենագերագոյն ժամանակաշրջանը:

-Եւ որ իր սերունդը ճակատագրապէս կապուած պիտի մնայ իր ցեղին:

XIV

ՄԻ ԲԱՂԴԱՏԱԿԱՆ

Մեր օրերը շատ տեսակէտներով յիշեցնում են Հայոց պատմութեան V-րդ դարը:

Առաջին կէտը, որ մատնանշում է նմանութիւնը մեր ժամանակի եւ Աւարայրի օրերի, դա *հայութիւնը բաղկացնող տարրերի հոգեւոր բեւեռացումն է - ազգայնական եւ հակազգայնական*: Հայ կեանքի այս շերտաւորումը Աւարայրի շրջանի պատմագիրը բնութագրում է հետեւեալ երկու յատկանշական սահմանումով: Նա ազգայնական հայութիւնն անուանում է՝ *ուխտապահ*, հակազգայնականը՝ *ուրացող*: Սասանեան Հարստութիւնը, Հայաստանի ապագայ համաիրանացման ու ձուլումի ճամբան հարթելու պետական առաջադրութեամբ, ճգնում էր հայութիւնը բաժանել երկու անհաշտ հատուածների, ինչպէս վարւում է ե՛ւ խորհրդային իշխանութիւնն այսօր:

Այդ առթիւ մեծապէս խռովուած էին հայութեան ազգայնօրէն արթուն տարրերը, ինչպէս ե՛ւ այսօր:

Հայաշխարհի գլխին գալիք փորձանքների նախազգացումը հրդեհել էր ազգը, ինչպէս ե՛ւ այսօր:

Վարդանը յանուն համօրէն հայութեան էր բարձրացրել դրօշակը, ինչպէս ե՛ւ Դաշնակցութի՛ւնն այսօր: Ազգային շարժման մասնակցում էին

ժողովրդական բոլոր խաւերը՝ հոգեւորական, իշխան, ազատ, սեպուհ, ռամիկ, ինչպէս եւ այսօր: Արտաքին թշնամին գործ ունէր հայ ժողովրդի ծառացած խղճմտանքի հետ, ինչպէս Խ. իշխանութիւնն՝ այսօր: V դարու ցեղապաշտ հայութիւնը - դա «Արտաշատի ժողովն» է, ուր հայը խրոխտում է. «Այս հաւատից ո՛չ ոք կարող է մեզ խախտել... Անկարելի է, որ մեր Աստուածը փոխենք մարդու հետ»:

Դա՝ այսօրուայ մարդկային հասկացողութիւնների լեզուով, նշանակում է, թէ՝ աշխարհը ոչինչ ունի, որի հետ ազգայնական հայութիւնը փոխել ուզէր իր աստուածային Եռագոյնը:

Ահաւոր է այդ շրջանի, մանաւանդ, ցեղաշունչ կղերի ազդեցութիւնը: Նա՛ է քաջալերիչը ժողովրդի, եւ խորհրդատուն՝ բանակի: Ղեւոնդ երէցն է Հայաստանի հոգեւոր տէրը. նրա ձայնն է դղրդել, շարժել, ոտքի հանել Հայաշխարհը. նրա սրբազան զայրոյթն է այդ ժամանակաշրջանի *աստուածապետական դաժան օրէնքի* խարիսխը՝ *«Հայրը թող չխնայի ուրացող որդուն, որդին՝ հօրը, ծառան՝ տիրոջ»...* Օրուայ անաստուած եւ յուդայացած եկեղեցականը չկար երէկ՝ Վարդանանցին. սակայն, ղեւոնդատիպ եկեղեցականներ, թէկուզ նուազ թիւով, բայց կան ե՛ւ այսօր: Ցեղի եւ նրա հաւատի փրկութեան համար հայ եկեղեցին ոտի տակ է առնում յիսուսական ներողամտութեան բովանդակ բարոյականը եւ դառնում է *քրիստոնէութեան զինուած բազուկը:* Ահաւո՛ր մի ոյժ, որի հանդէպ յանկարծակիի եկած թշնամին ասում է. *«Եթէ իրենք՝ աստուածներն էլ մեզ օգնութեան գան, անհնար է մոգութեան օրէնքները հաստատել հայոց մէջ. մարդիկ, որոնք ո՛չ կապանքներից են զարհուրում, ոչ տանջանքներից վախենում, որոնք մահը կեանքից նախամեծար են համարում - ո՞վ կարող է նրանց դէմ կանգնել»:*

Հայոց պատմութեան դատավճիռն այդ շրջանում որոշ է եւ զարհուրելի՝ «Սատանան - Վասակի մասին ասում է Եղիշէն - ձեռք առած էր իբրեւ վահան, հագած էր դա իբրեւ զրահ՝ դառնալով նրա կամքին իբրեւ կատարեալ զինուոր»:

Օրուայ հայ քաղաքական վասակութեան մասին, նուազ դաժան չպէտք է լինի ե՛ւ վաղուայ մեր պատմութեան դատաստանը:

Ղազար Փարպեցու սրբազան զզուանքը բառ է կերտում ուրացողը դիմագծելու - «աղուեսակնի՛ք»: Այսպէս, այն ժամանակ էլ ուրացող հայը եղել է երկչոտ ու խարդախ:

Հայ պատմագրի ատելութիւնը ցեղուրաց հայու հանդէպ, ստեղծել է նաեւ մէկ ուրիշ որակում՝ «ցուրտ մարդիկ»:

«Ցուրտ» է նաե՛ւ օրուայ ուրացողը - հակադաշնակցակա՛նը, հայութեան ներքին եռանդը պաղեցնողը - նա ե՛ւ դասալիք է, ե՛ւ դասալքութեան մղող:

Սո՛ւգ է ուրացող նախարարների տան մէջ. տնեցիները նրանց ընդունում են լացով. «ոչ ոք չէր ուզում նրանց սեղանակից լինել՝ ո՛չ կին, ո՛չ որդի, ո՛չ ազատ, ո՛չ ծառայ, ո՛չ սպասաւոր»:

Վարդանը Աւարայրի ճակատամարտէն առաջ, իր բանակին ուղղած ճառի մէջ ասում է. «Մեր ծառաներն իսկ կը խրտնէին ու մեզմէ հեռու կը փախչէին»:

Հայ կանայք - ինչպէս կարմիր խաչուհիներն այսօր - ոչ միայն գարշում էին մոգերի երեսը նայել, այլ իրենց տղաներն ու աղջիկները նրանց մօտից չէին անցկացնում»:

Հայ սպարապետն է խօսում՝ «Կռիւն այլեւս նիւթի վրայ չէ, այլ պատիւ, հայրենիք, կրօնք պաշտպանելով մեռնել, եւ քաջութեամբ անմոռաց անուն թողնել»:

Խանդավառ է - ինչպէս ցեղակրօններն այսօր - ե՛ւ նորահաս սերունդը. «Պատանիները վազելով դէպի մկրտութեան աւազանն՝ աղաղակում էին. *«Այս գիշեր ջրով, վաղն առտու՝ արիւնով»*: Եւ սպարապետը որ սեփական ոյժի գիտակցութիւնն ունի, յիշեցնում է հայ բանակին՝ «Մենք աւելի շատ յաղթական ելած ենք քան թէ պարտուած»: Ճակատամարտից առաջ նա չի մոռանում՝ իր հոգու ամբողջ բիւրեղութեամբ ասել իր մարտիկներին՝ «Միայն թէ մեր խիզախ քաջութեան վատութիւն չխառնենք»: Եւ սկսւում է կռիւը: Վարդանի արդար վրէժխնդրութեան հարուածից Վասակն ազատւում է թագնուելով պարսից «փղերի թիկանց ետեւը», ինչպէս միշտ արել եւ անում է ցեղուրաց հայը: Նա վատօրէն դաւաճանում է իր ցեղին եւ նրա հարուածներից ազատուելու համար ապաւինում է օտարին՝ թշնամու թիկունքին - երէկ պարսիկին, այսօր բոլշեւիկներին:

Յատկանշական է, որ արտաքին թշնամին աւելի առարկայական է դէպի հայը՝ քան ուրացող հայը:

Պարսիկ մոգերն հայոց մասին ասում էին. «Անպարտելի՛ են», իսկ ուրացող Գդիհոնը յոխորտում էր. «Ես Վահանի եւ բոլոր հայոց հետ ոչ թէ նետով կը կռուեմ, այլ նետիս կոթովը բոլորին կը ցրուեմ»: *Խօսքի գոռութիւնը* յատուկ է բոլոր ժամանակների ուրացողներին: Նոյնպէս չե՞ն յոխորտում նաեւ մեր օրերի Գդիհոնները - Բոլշեւիկները:

Եօթը հարիւր մոգեր «Վռամական Հուրը» Հայաստան բերելով, Նաւասարդից Նաւասարդ, այսինքն մէկ տարուայ ընթացքում, պիտի թաղէին հայ հոգին: Բայց այդ օրից անցել են աւելի քան հազար Նաւասարդներ եւ մեր ազգութիւնը կայ ու կը մնայ: Այսօր Վռամական Հրոյ փոխարէն բոլշեւիկ մոգերը Լենինեան հոգեւոր մոխիրն են բերել Հայաստան: Ուրացողը, օտարի կրակով ու մոխիրով սնուող հայը, միշտ էլ կոխել, անցել է մեր ցեղային արժէքների վրայից, եւ սողացել թշնամու

ոտքի տակ: Հայ դասական ուրացողներից Մերուժանը մասնաւոր ատելութիւն ունէր հայկական արժէքների եւ սովորութեանց հանդէպ: Նա ճգնում է ծպտուել իբր պարսիկ՝ սովորութեամբ եւ ճաշակով: Հոգեբանական այդ տիպը ապրում է ե՛ւ այսօր: Նա արհամարհանք ունի սեփական արժէքների եւ սրբութիւնների հանդէպ - անկապաշտ ռամկավա՛րն ու բոլշեւի՛կը: Սրանց որդիներն այսօր թուրք դրօշի գովքն են երգում: Մերուժանաշունչ չէ՞ր այն սինլքորը, որ Ամերիկայում մեր ընկերների դատապարտութեան լուրն առնելով, Եռագոյնը փռում է իր տան մուտքին եւ հրաւիրում իր քաղաքական դաւանակիցները գինարբուքի: Մարդկօրէն անասնացածները կոխելով Եռագոյնի վրայ՝ ներս են մտնում եւ բազմում ռամկավարի անսուրբ սեղանի շուրջը: Կայ ամենազզուելին: Հայ ուրացողը միշտ էլ եղել է *քաղաքական կաւատ:* Երբ օտարը տրամադիր է եղել հաշտուել պայքարող հայութեան հետ՝ ուրացողը նրան յիշեցրել է իր կորուստները, որ հայերն են պատճառել: Մերուժանը յաճախ այս լարի վրայ էր խաղում. նա սուգ էր կեղծում պարսից տուած զոհերի համար եւ հրահրում Շապուհի կրքերը:

«Հարցրէ՛ք Անդրանիկից, Նժդեհից, ինչո՞ւ այնքան թուրք գիւղեր աւերակ դարձրին», ասում է Մանուէլեանը՝ իր *«Մղձաւանջ»* պատմուածքի մէջ: Զզուելի՛ կաւատութիւն: Հայկական ջարդերը, աւելի քան երկու հազարամեակների մշակոյթի կործանումը, միլիոնների լլկաբար կառափնատումը՝ 1915-ի զարհուրանքը սովորական մի ակտ է, իսկ մի քանի հարիւր թուրք գիւղերի աւերումը, ա՛հ, հայօրէն թշուառականացածի համար՝ անմարսելի, անսովոր մի երեւոյթ է: Տառապում է նա, որ թուրքը թեթեւօրէն պատուհասուած է: Աւելին՝ նա մղձաւանջ է ապրում: Զզուելի չէ՞:

Տիզբոնում, 452-ին ապստամբութեան ղեկավարների դատն է տեղի ունենում: Ուխտապահները շղթայակապ են, Վասակը շքախումբով, եւ հայոց թագն ստանալու տենչով վառուած, յոխորտ: Բայց, ահա՛ մերկացւում է նա իր շքազգեստներից եւ կնաբար նստած մատակ ձիու վրայ՝ նետւում է բանտ: Հայ պատմագիրն ասում է՝ նա մեռաւ որդնալից, չարատանջ մահով, գլուխը ծեծելով: Մեռաւ ժառանգելով դարերի անէծքը: Օտարից թագ ակնկալեց եւ թուք ստացաւ:

Վասակը օտարի «փղերի թիկանց ետեւը» - հակադաշնակցականը բոլշեւիկի պաշտպանութեան տակ:

Այս նզովեալ փաստը պիտի չմոռանայ մեր պատմութիւնը:

Վասակը թքուած Շապուհից - V դարու այս անողոք դատավճիռից պիտի չխուսափի ե՛ւ մեր օրերի ներքին վատութիւնը - հակադաշնակցականութի՛ւնը:

Անհնա՛ր է, որ վաղը մեր պատմութիւնը այս փաստն էլ չարձանագրի:

Վասակը սեւացած հայոց պատմութեան մէջ - ֆիզիքապէս սպանուած օտարէն, բարոյապէս՝ իր ցեղէն:

Իսկ Վարդանը - յաւիտենօրէն սո՛ւրբ, եւ զօրաւոր:

Այսպէ՛ս է: Յաճախ խաչւում է Աստուածութի՛ւնն անգամ: Յաճախ գերագոյնը, գերարժէքը ենթարկւում է ամենաստորինի իշխանութեան, սակայն, կա՛յ, գործում է *ողբերգականութեան դիալեկտիկան, որի ոյժով պայքարում ընկած հերոսի կորուստը վերածւում է բարոյական յաղթանակի:*

Այսպէ՛ս է: Արի եւ արիադաւան ժողովուրդը գնահատումի իր դիալեկտիկան ունի: Նա գիտէ արհամարհել *կեղծ մեծութիւնն ու արժէքները*՝ թէկուզ նրանք տուեալ պատմական ժամանակաշրջանում յաղթական լինեն: Ինչպէս եւ գիտէ գնահատել ու պաշտել *յաւիտենապէս արժէքաւո՛ր, մե՛ծը, սուրբը*՝ թէկուզ մարդկային տականքների կողմից նրանք հայհոյուած լինեն: Դարերով ու դարերով ա՛յս է եղել հայ ժողովուրդի գնահատումի եղանակը:

Դա տարբեր չէ՛ կարող լինել ե՛ւ այսօր:

Չէ՛, անհնա՛ր է, անհնար, որ մեր ցեղի գահը թափուր մնայ, երբ Վարդանների պաշտամունքը կայ:

Չէ՞ որ ամէն սրբութիւն, ամէն զօրութիւն ձգտում է յաւերժանալու:

Ինչպէս ամէն յաւիտենականութիւն ուզում է պսակաւորուել:

Իսկ ամէն պսակաւորում լինում է արիւնի ճիգով - *դաշնակցակա-նութեա՛մբ:*

XV

ԽԱՉԻ ՍՏՈՐԸ

Ամերիկա՛, ո՞ւր է արդարութիւնդ:

Ինը հայորդիներ խստագոյնս պատժուած մի հասարակ ուրացողի համար:

Ի՞նչ, քո երդուեալները չդողացի՞ն իրենց խղճմտանքի առջեւ, երբ ելեկտրամահուան դատապարտեցին նրա՛նց, որոնք դեռ երէկ քո դրօշի համար էլ կուրծք տուին շնացեղ թուրքին:

Չէ՛, չէ՛, Արարչութեան օրէն ի վեր տեղի ունեցած չէր նման վատութիւն:

Գիտցի՛ր, սակայն, որ քո դատարանէն զատ, ուր մեր մե՛ծ ցեղի այլասերած տականքը իր ատելավառ կրքերի ողջ ապականութիւնը թափեց, կա՛յ եւ Հայոց պատմութեան դատաստանը:

Քո մեծութեան մէջ որքա՛ն միամիտ ես դո՛ւ, Ամերիկա՛: Իսկապէս, չգիտե՞ս, որ դատապարտածդ հայերը՝ զոհերն են թրքօ-բոլշեւիկեան դաւի: Չհասկացա՞ր, թէ ինչ-ինչ պատճառներով չկարողացար արդարութիւն անել դաւադրուած հայութեան:

Քո դատարանում, որ ասել է՝ քո հոգում, պաշտպանութիւն գտաւ հայ *փերեզակի հերմեսացուպը* - նիւթական շահի խորհրդանշանը՝ մեր *աստուածային Եռագոյնի* դէմ: Եւ կարող է լինել, որ վաղը, յուրախութիւն բոլշեւիզմի գործակալների՝ երկու հայ կորիւններ մոխիր դառնան քո հնարած ելեկտրական աթոռի վրայ:

Ի՞նչ, չե՞ս լսում թուրք եւ սովետ դեսպանատներէն բարձրացող մեֆիստոֆէլեան հռհռոցը՝ քո արդարութեան հասցէին:

Գիտենք՝ յաճախ այսպէ՛ս է գործում օտար արդարութիւնը: Ոչի՛նչ - քաղաքական գիշերը ո՛չ յաւիտեանս տեւէ: Աշխարհը դառնում է, ժամանակը գործում: Դեռ երէկ էր, ինչ նա մի շարք գահեր գետին զարկեց: Կոյրե՛րը, միա՛յն կոյրերը չեն տեսնում, թէ ինչպէս պատմութեան որդը կրծում է խորհրդային իշխանութեան հիմերը: Ոչի՛նչ, մենք կը սպասենք սեփական արդարութեան, որ պիտի գործէ վաղը՝ մեր Հայրենիքում՝ ապախորհրդայնացա՛ծ Հայաստանում:

* * *

Մերժուեց վերաքննութիւնը եւ... մեր երկու ընկերների թիկունքում սպառնալիօրէն ցցուեց խաչը:

Եւ խաչի նսեմ ստուերը փռուեց ազգայնական հայութեան հոգեաշխարհի վրայ:

Ա՛հ, գիտե՛մ, ցեղադաւան ամերիկահայութիւն - գիտե՛մ, չէ՛ որ դեռ երէկ քեզ մօտ էի, քեզ հետ էի, երբ կարմիր շէյթանը դաւադրեց քեզ - գիտե՛մ, այժմ սիրտդ ուռած է զայրոյթից եւ բարկութիւնդ կը մխայ:

Գուցե եւ վաղը սուգ հագնի ճակատդ, բայց, թող չկորանա՛յ դա - տղամարդ պայքարողին վայել չէ՛ տկարութիւնը: Վե՛ր գլուխդ, չէ՞ որ դու այն ազգն ես, որ գիտէ յաւիտենականութեան բարձունքէն դիտել աշխարհն ու անցքերը: Գլուխդ վե՛ր, ուր մշտարթուն մի աչք կայ, որ հսկում է թշնամիներիդ վրայ: Վե՛ր, որտեղից մի սաստող ձեռքի ստուերն է կախուել թշնամիներիդ գլխին:

Տեսնո՞ւմ ես միա՛յն հացով ապրող երկրասող տականքը: Լա՛ւ, դիտիր, - նրանք այնպէս են շարժւում, կարծես, ներքնապէս մի ծանր բեռ կրէին:

Ա՛հ, ներքին չարութեան համար քաղցած այդ չարարուեստ տականքը - նա վաղուց է ոռնում դատարանների դրան եւ երկու որդիներիդ արիւնն

է պահանջում: Նա յոգնեց սպասելէն: Իր չարութեան քաղցը յագեցնելու համար՝ օր, ժամ, վայրկեան առաջ նա ուզում է մեր արդարների աճիւնը տեսնել:

Եւ, ո՞վ գիտէ, գուցէ վաղը աշխարհի ամենահարուստ նահանգի պետն էլ չուզեց զգալ վեհափառութիւնը մեր ողբերգութեան՝ այն ժամանակ կը մոխրանան, կը մեռնեն Եռագոյնի նո՛ր վկաները - Մատթէոսն ու Նշանը:

Եւ գիտէ՞ք ինչպէս - ինչպէ՛ս հայ լեգէոնականն է մեռնում՝ ստոյիկեան խրոխտութեամբ եւ ժպտադէ՛մ:

Ես տեսայ, ես ճանաչեցի նրանց: Ամերիկան թողնելէս առաջ, գնացի հրաժեշտի՝ մեր բանտարկեալներին, եւ երկարօրէն, ծունկ ծնկի, խօսեցի մահուան դատապարտուած երկուսի հետ: Աստուա՛ծ իմ, ի՞նչ տղամարդիկ են: Սրանց ոտքի հետքերը պիտի համբուրէին գողուղի ռամկավարն ու պղծադաւան բոլշեւիկը, եթէ զուրկ չլինէին մեր ցեղի ճակատագրի զգացումէն: Ժամեր տեւող մեր տեսակցութեան ընթացքին նրանց կողմից ո՛չ մի խօսք եղաւ այն մասին, թէ ի՞նչ աշխատանքներ են տարւում դուրսը՝ իրենց ճակատագրի դաժանութիւնը մեղմացնելու համար: Այո՛, այդ մասին եւ ո՛չ մի ակնարկ:

Երկուսն էլ, սակայն, խորապէս ազդուած էին Վարանդեանի մահէն:

- «Ինչպէ՞ս է Ահարոնեանը, յոյս կա՞յ, որ նորէն գրիչը ձեռքն առնէ»՝ հարցրեց Մատթէոսը:

- «Արդեօ՛ք, յոյս կա՞յ, որ մօտիկ ապագայում Իտալիան կամ մի այլ ոյժ զարկի Թուրքին»՝ հարցրին երբ ոտքի վրայ էինք եւ կ'ողջագուրուէինք բաժանուելու համար:

- «Այո՛, տղա՛յք, աշխարհը դառնում է. անկիւնադարձի առջեւ է մարդկութիւնը. մեզ կը մնայ աշխատել եւ պատրա՛ստ լինել»: Այս խօսքերով բաժանուեցի մեր երկու ցեղահոգ ընկերներէն, որոնց աչքերի մէջ ցաւով կարդացի այրող կարօտը զէնքի, ծածա՛ն Եռագոյնի, կռուի թուրքի դէմ:

Մատթէո՛ս, Նշա՛ն - ահա՛, ամերիկահայութի՛ւն, երկուսը սրտով մեծ ու զօրաւոր զաւակներէդ, որոնք վաղը, ներքին թշնամուդ ցանկութեամբ, պիտի մեռնեն, եթէ ամերիկեան մի նահանգապետ նրանց մահն ուզեց:

Ի՞նչ արած, գիտես, որ ժամանակը ազգերի վրայ կոխելով է անցնում: Նրա ոտքի կապարեայ ծանրութեան անծանօթ չես դու: Այս անգամ էլ նա ոտքը սրտիդ վրայ, ազգային վէրքիդ կոխեց: Վա՛յ քեզ, եթէ ոյժ եւ արիութիւն չունեցար խրոխտալու, որ քո սիրտն աւելի՛ ուժեղ է քան ժամանակի գարշապարը: Այո՛, այսպէ՛ս է վայել այն ազգին, որ աշխարհի անարդարութեան հետ պայքարի մտած՝ դժբախտութիւն ունի նեղուելու ե՛ւ իր տականքէն:

Բարոյական ա՛յս կեցուածքն է վայել քուրմին, որ քաղցրաբար իր զոհն է մատուցանում: Զոհարարի քո վիճակում հաւասարապէս անհրաժեշտ են՝ տրտունջն ու տկարութիւնը:

Ո՛չ Յովբի մռայլ շեշտը, ո՛չ էլ Բայրոնեան յուսահատութիւն - ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը:

Գիտցի՛ր, սակայն, որ այն օրը, երբ գոծադրուեց մահապատիժը՝ *մի խորհրդաւոր ձայն* զարհուրանքով պիտի գոռայ թշնամիներիդ ականջի մէջ - *memento*-յիշի՛ր:

Այն օրէն ծանօթ տականքները վատաբար պիտի դողան իրենց հետապնդող ձեռքի ստուերէն:

Երկու ուրուականներ, ամէն գիշեր, նրանց դռները պիտի զարկեն:

Նրանք ամէն օր պիտի մեռնեն, պիտի մեռնեն՝ դեռ չմեռած:

Այն օրը, երբ քեզ, ամերիկահա՛յ երկու զաւակներիդ մահը գուժեցին՝ դու կը բարձրացնես ճակատդ, գուրգուրանքով կը նայես Եռագոյնիդ, զայն մտովի կը խոնարհեցնես արիներիդ համբուրելի աճիւնի առջեւ, ապա կը բարձրացնես - ամենաերկիւղածօրէն կը համբուրես, մէկ է՛լ, եօ՛թն անգամ, եւ կը յանձնես օրուայ իր պահակին՝ ցեղակրօ՛ն զաւակներիդ:

Այսպէ՛ս է վայել այն ազգին, որ յանուն իր յաւիտենականի գիտէ իր զաւակներէն ամենաընտիրնե՛րը զոհաբերել:

Այսպէ՛ս է կատարւում ամէ՛ն մարտիրոսութիւն:

Այսպէ՛ս է ստեղծւում ամէ՛ն հերոսական:

Այսպէ՛ս են յաղթանակում ազգերը:

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ*

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՈՂԲԵՐԳՈՒԹԻՒՆԸ
ԹՐՔՕԲՈԼՇԵՒԻԿ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԼՈՅՍԻ ՏԱԿ

Թող ներուի ինձ, եթէ պատմական ճշմարտութիւնը պաշտպանելու համար, ակամայ մեղանչեցի համեստութեան դէմ:

* *Տպագրվել է Սոֆիայում, 1937թ.:*

Ita est*

«Բոլշեւիզմը յղացան հրեաները, իրագործեցին թաթարները, իրենց կաշիի վրայ կրեցին սլաւները»:

ԶՈՄԲԱՐՏ

Համաշխարհային պատերազմի վախճանը կը սպառնար դառնալ Թուրքիոյ արդար վախճանը:

Զարհուրելի էր դա պարտեալների, մասնաւորապէս, Թուրքիոյ համար:

1918, հոկտեմբերին, Մուդրոսում փորուեց սուլթանական Թուրքիոյ անփառունակ գերեզմանը:

Այդ օրուանից Օսմանեան պետութիւնը վերածուեց մի դռնբաց երկրի՝ յաղթականների համար:

«Թշնամիները,–այդ առթիւ գրում է քեմալական պատմագիրը,– թուրք պետութեան հասցրին մահացու հարուած: Նրանք ուզեցին նոյն հարուածը հասցնել նաեւ թուրք ժողովուրդին»:

Մուդրոսի հաշտութեան պայմանագրի ոյժով, յաղթականները ազատ էին իրենց զրահապատ թաթը դնել թրքական երկրի ամէն մի կէտի վրայ:

Վերջինների – համաձայնական պետութիւնների – հաճութեամբ 1919, մայիսին, յոյները գրաւեցին Իզմիրը: Նոյն տարին, Անգլիան եւ Ֆրանսան համաձայնութեան եկան բաժանելու թուրք երկիրը, որով առաջինը ստացաւ առիւծի բաժինը՝ Միջագետքը, Պաղեստինը, Անդրյորդանանը եւ Մուսուլի քարիւղային աղբիւրները:

Ամիսներ անց՝ Անգլիոյ կրունկը ծանրօրէն կը կոխէր նաե՛ւ Պոլսի եւ Չանաք Կալէի երեսը՝ իր դրօշի տակ առնելով Անատոլեան երկաթուղագծի ամբողջ երկարութիւնը:

Ի լրումն թուրք ժողովրդի այդ արդար դժբախտութեան՝ Լոնդոնը Սուլթանի հետ կը կնքէր մի գաղտնի համաձայնութիւն, որով Թուրքիան, ընդունելով Անգլիոյ մանդատը, կը պարտաւորուէր խալիֆայութեան հոգեւոր եւ բարոյական բովանդակ ուժերը լծել բրիտանական շահերի կառքին:

Վերջապէս, Թուրքիոյ պիտի պարտադրուէր Սեւրի դաշնագիրը:

Դա այլեւս Օսմանեան պետութեան թաղման ղօղանջն էր:

---

* *Այդպէս է:*

Ֆրանսան գրաւած էր Սուրիան եւ հարեւան Կիլիկիան:

Իտալիան՝ Ադալիան:

Յոյները, յաւելուածաբար՝ արեւելեան Թրակիան, մինչեւ Չաթալջա:

Թուրքիա ասելով այլեւս պէտք էր հասկանալ Անատոլիայի անմշակ հիւսիսային կէսը՝ Սեւ ծովի ափով:

Այլեւս աշխարհագրօրէն ծուատուած ու քաղաքականապէս սատակ էր Թուրքիան:

Այսպէ՛ս, պատմութիւնը այսպէս կը պատժէր իր անօրինակ չարագործութիւններով մեր երկրագնդի երեսը պղծող այն շնացեղ ազգին, որը մի ժամանակ իր գայլութեան, իսկ վերջին երկու դարերին, եւրոպական պետութեանց անհամաձայնութիւնների շնորհիւ յաջողած էր ամբողջ ժողովուրդներ եւ մշակոյթներ բնաջնջել:

Կատարուած էր պատմութեան արդարագոյն դատաստանը - Թուրքիան այլեւս ե՛ւ կար, ե՛ւ չկար:

Այդ օրհասական վիճակի մէջ, սակայն, նրան օգնութեան պիտի հասնէր «թրքացեղ Լենինը»:

Սովետները, դեռ 1918ին, Բրեստ-Լիտովսկի դաշնագրով հրաժարուել էին այն բոլոր իրաւունքներից, որ ձեռք էր բերած ցարական Ռուսիան Նեղուցների եւ Փոքր Ասիայի նկատմամբ:

Այդ առթիւ «Թիւրք հանրապետութեան պատմութեան»* ծանօթ հեղինակը՝ արտայայտելով իր ժողովրդի երախտագիտութեան խորին զգացումը՝ «Թիւրքիոյ սեւ օրերի միակ բարեկամ»ին, մի շեշտուած հպարտանքով պնդում է, թէ *«Լենինը սերած է ռուսացած թուրք ծնողներից»*: Լենինը թրքացե՛ղ - ահա լուծումը մինչեւ օրս անլուծելի համարուած առեղծուածի:

Մարդկութիւնը չգիտէր այդ եւ կը դժուարանար բացատրել թրքոբոլշեւիկ հոգեկցութեան գաղտնիքը:

Մասնաւորապէս հայը կը դժուարանար առեղծանել հանելուկը – թէ ինչո՞ւ թուրքի չափ հայատեաց եւ հայասպան եղաւ ե՛ւ բոլշեւիզմը. ինչո՞ւ երկուսն էլ իրենց հարուածը նա՛խ մեր ժողովրդի ուղեղին՝ նրա մտաւորականութեան իջեցրին. ինչո՞ւ բոլշեւիզմէն միայն եւ թուրքը շահեց. ինչո՞ւ: Այդ «ինչու»ների պատասխանը այլեւս տուած է թուրք պատմագիրը:

Լենինը թրքացե՛ղ - այժմ լուծուած է հանելուկը:

Այսպէս է գործում ատաւիզմը:

---

* *«Թուրք հանրապետութեան պատմութիւն»ը, էջ 7, redigé par la Société pour l'Etude de l'Histoire Turque. Istanbul, 1936.*

Թուրքը՝ ռուսին մի խառնածին պարգեւեց, ռուսը թուրքին՝ մի քաղաքական բարերար, մի ազատարար:

Ճշմարտութեան դէմ բնաւ չէ մեղանչում թուրք պատմագրողը, երբ Լենինին համարում է թրքացեղ – նրա խօսքին դարերով ռուս մարմնի եւ հոգու վրայ ծանրացած թաթարական լո՛ւծը վկայ:

Բոլշեւի՛զմը փրկեց Թուրքիան եւ ո՛չ թէ բախտահաս Քեմալը:

Միթէ՞ հասկանալի չէ, որ եթէ Թուրքիան իրեն ապահով չզգար Ռուսաստանի կողմից, եթէ կնքուած չլինէր թրքօ-սովետ զինակցութիւնը՝ Իզմիրի գրաւման օրը, իր սակաւաթիւ զինակիցներով Պոլսէն Սամսոն փախչող «գորշ գայլ»ի ճիգերը պիտի մնային անպտուղ:

Այդ զինակցութիւնից ընդամէնը մի տարի յետոյ, քեմալականները, շնորհիւ բոլշեւիկների զինական, ֆինանսական եւ մասնագիտական առատ օգնութեան, Սաքարիայում պարտութեան մատնեցին յոյներին, որով երէկի կիսասատակ Թուրքիան վերստացաւ իր գերիշխանութիւնը ամբողջ Փոքր Ասիայի վրայ, մէջը լինելով նաեւ մեր երկրամասերը՝ Կարսն ու Արդահանը:

Այսպէ՛ս ոտքի ելաւ թուրք անկեալը:

Այսպէ՛ս, թուրք պատմաբանի իսկ վկայութեամբ, *հայոց ողբերգութիւնը պայմանաւորուեց Մոսկուայի կողմից Քեմալին ընծեռուած կարմիր թեւարկութեամբ.*

Ita est:

ԹՐՔՕ-ԲՈԼՇԵՒԻԶՄԸ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԷՄ

Խորհրդային իշխանութեան, նրա թերթերի, բազմապիսի փողհարների եւ ջատագովների կողմից, թերեւս, ազգայնական ոչ մի գործիչ այնքան կրքոտ յարձակումների եւ զրախօսութեանց չէ ենթարկուել, որքան տողերս գրողը:

Մէկ ու կէս տասնեակ տարի է անցել այն ողբերգական օրից, ինչ մենք թողեցինք Հայաստան երկիրը, բայց եւ այնպէս, կարմիր իշխանութիւնը չէ՛ մոռացել, չէ՛ մոռանում, եւ դժուար թէ մի օր ի սպառ մոռանայ ինձ:

Եւ հասկանալի է դա, աւելի քան հասկանալի: *Առաջին գնդակը՝ Կարմիր բանակի դէմ, արձակեց իմ զինուորը. եւ բովանդակ Ռուսաստանում եւ Անդրկովկասում վերջինը լինելով, նա թողեց կռուադաշտը:*

Իմ ժողովրդական վաշտերն էին, որ ջարդեցին, զինաթափեցին եւ գերեցին XI Կարմիր բանակի գրեթէ բոլոր զօրամասերը, եւ, հակառակ հանրապետական Հայաստանի կառավարութեան եւ Մոսկուայի ներկայացուցիչ Լեգրանի միջեւ կնքուած պայմանագրին – որով Զանգեզուրը

թողնուած էր Ադրբէջանին – իմ ժողովրդական բանակը, զէնքի ոյժով, խորհրդային իշխանութեան պարտադրեց իր կամքը – *Սիւնիքի կցումը Հայաստանին:*

Հայաստանի առաջին խորհրդայնացումից յետոյ, գրաւելով եւ ամբողջացնելով հայկական լեռնաշխարհը՝ ես ստեղծեցի ինքնավար Սիւնիքը, որը պիտի հանդիսանար որպէս հոգեբանական հրահրիչը Հայաստանի փետրուարեան համաժողովրդական ընդվզումի: Իսկ Երեւանի երկրորդ անկումից յետոյ՝ դա ծառայեց որպէս փրկութեան կամուրջ թրքոբոլշեւիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտաւորականութեան համար:

Հայոց պատմութեան ամենապատասխանատու մէկ վայրկեանին, երբ թուրքն ու բոլշեւիզմը կը դաւէին մեր ցեղի գոյութեան դէմ, դա - հերոսական Սիւնիքը - որպէս հեքեաթային տիտան, իր մի բազուկը պահեց իր լեռների վրայ՝ թշնամու դէմ, իսկ միւսը նախախնամաբար երկարեց Արաքսի վրայ, որ Արարատեան դաշտէն պոկուած բազմահազար մտաւոր եւ մարտական ընտրանին անվնաս ու անաղէտ անցնի Պարսկաստան:

Այսպէս, այն կորովի դիմադրութիւնը, որին Կարմիր բանակը չէր հանդիպած Ռուսաստանում, տեսաւ մեր լեռնաշխարհում, ուր նա տասնեակ հազարներով սպանուածներ, գերիներ ու մեծաքանակ ռազմական աւար թողեց:

Մի ամբողջ տարի, մեր ժամանակներին գրեթէ անծանօթ դիւցազնութեամբ, Սիւնիքը հեգնեց Մոսկուայի անդրկովկասեան ոյժերը, նրան պատճառելով ծանրածանր կորուստներ, ջղայնութիւն եւ ամօթանք:

Ահա՛ թէ ի՞նչն է պատճառը, որ մինչեւ օրս էլ խորհրդային վարչածեւի եւ հացի ամէն կարգի եւ երանգի բարեկամները ու գովիչները բանաւոր ու գրաւոր խօսքի թոյն են փսխում իմ հասցէին:

Մենք - ես եւ խորհրդային իշխանութիւնը - հին, կէս մոռացուած թշնամիներ չենք:

Ես էի եւ շարունակում եմ մնալ լենինեան գաղափարաբանութեան անհաշտ թշնամին:

Մենք միայն զէնքի թշնամիներ չէինք, չե՛նք: Նմանները շատ շուտ են մոռանում թշնամանքը, եւ երբեմն էլ գիտակցում:

Մենք թշնամիներ ենք նաե՛ւ քաղաքական դաւանանքով, աշխարհայեցողութեամբ:

Եթէ այսօր դադար են առել զէնքերը, զարնւում են, չափւում են գաղափարները:

Եւ, որովհետեւ բոլշեւիկները պայքարում մարդկայնութիւն եւ բարոյական չեն ճանաչում - նրանց համար չկան իդէական հակառա-

կորդներ, այլ՝ դասակարգային թշնամիներ միայն - նրանց թուղթէ գրոհները դեռ շարունակւում են եւ պիտի շարունակուեն:

Մեր փոխադարձ թշնամանքը ունի իր երրորդ սնուցիչը – թո՛ւրքը, որի հետ զինակցած Կարմիր բանակը երեւաց մեր դէմ, ռազմաճակատներում, Հայաստանում:

Մեր ողբերգութիւնը պայմանաւորուեց Լենինի «թրքացեղութեամբ» - իմա՛ Բոլշեւիզմի թրքաշնչութեամբ, որ ասել է՝ նրա հայատեացութեամբ:

«Խորհրդ. Ռուսաստանը,- ժամանակին կը շեփորէր «Զանգեզուրի Կոմունիստ» հայատառ թերթը,- *պէտք է պաշտպանի եւ պաշտպանելու է Տաճկաստանի ազատագրական շարժումը: Դրա համար էլ Խորհրդ. Ռուսաստանը պէտք է ունենայ մշտական եւ անմիջական կապ Տաճկաստանի հետ, որի ճանապարհը Զանգեզուրն է, Նախիջեւանի վրայով»**:

Խորհրդ. իշխանութիւնը, ի մասնաւորի հայ մեծամասնականը գիտէ, զգում է, որ թրքо-բոլշեւիկեան զինակցութեամբ հայութեան եւ հայ հայրենիքին հասցուած չարիքը հեշտութեամբ չի՛ ներուի, չի՛ մոռացուի:

Մոսկուան եւ իր հայանուն գործակալները գիտեն, որ կենսաբանական բարոյականի տէր հայութիւնը չէ կարող ներել նրանց, որոնք օգնութեան ձեռք երկարեցին թուրքին՝ իր պատմութեան ամենադժուարին մէկ վայրկեանին, եւ *հայոց նորագոյն ողբերգութեան գնով իրականութիւն դարձրին թրքо-բոլշեւիզմի հայադաւ եղբայրակցութիւնը:*

Բաքւում, Երրորդ Ինտերնացիոնալի նախաձեռնութեամբ, 1920, Սեպ. 1-8 գումարուած Արեւելեան ժողովուրդների համագումարը եկաւ հաստատելու երեք բան՝

Ա - Որ Մոսկուայի մէջ կնքուած թրքо-սովետ գաղտնի զինակցութիւնը ստորագրուած էր վերոյիշեալ համագումարից առաջ.

Բ - Որ Մոսկուան վճռած էր Հայաստանը նուաճել Թուրքիոյ զինակցութեամբ, եւ

Գ - Որ Մոսկուա՛ն թուրքերին քաշեց, բերեց Հայաստան:

Մի քանի մէջբերումներ, առնուած այդ համագումարի սղագրուած արձանագրութիւններից, կը հաստատեն խօսքերիս բացարձակ ճշմարտութիւնը.

Զինովեւ. «Դուք գիտէք, ընկերնե՛ր, որ սովետական կառավարութիւնը օգնում է Քեմալին»:

Էնվէր փաշա. «Ընկերնե՛ր, ես սեղմում եմ այն բոլորի ձեռքը, որոնք մեզ հետ կ'աշխատեն մինչեւ սկսուած կռուի վախճանը…

---

* *«Զանգեզուրի կոմունիստ», N 2, 1920, 20 Նոյեմբեր:*

Մենք ընդունում ենք, թէ Ադրբէջանը պատկանում է ադրբէջանցիներին»*:

Իբրահիմ Թալի. Անգորայի ներկայացուցիչը, որը համագումարը Հայաստանի դէմ գրգռելու եւ նախապաշարելու հաշուով ասում է. «Համաշխարհային իմպերիալիզմը իր ձեռքն երկարեց Թուրքիոյ կենսական շնչերակին եւ միանգամայն ուժասպառեց նրան:

Արեւմտեան կապիտալիստները վճռեցին թուրք գիւղացիութեան դէմ դարձնել իրենց օժանդակողներին - արեւմուտքէն՝ վենիզելիստներին, իսկ արեւելքէն՝ հայ դաշնակներին:

Անատոլիան վճռած է պաշտպանել իր ճակատագիրն ու անկախութիւնը մինչեւ իր վերջին զաւակի մահը, որով *Սովետ Ռուսիոյ կողմից իրեն երկարած բարեկամական ձեռքը նա ընդունում է կատարեալ անկեղծութեամբ»*:

Զինովեւ. համագումարի վերջին նիստում. «Այստեղ յաճախ է լսւում Հայաստանի մասին: Գոյութիւն չունի մի եւ անկախ Հայաստան:

Մի կողմից կայ բանուորագիւղացիական Հայաստանը, որին մենք եղբայրական ձեռ ենք երկարում, միւս կողմից՝ անիծեալ, դահճական, դաշնակցական, բուրժուական Հայաստանը» (փոթորկային ծափահարութիւններ):

Եուսուֆ Քեմալ – թրքօ-բոլշեւիկ զինակցութեան ստորագրողը - այդ միեւնոյն օրերին, Բաքուէն կը հեռագրէր իր կառավարութեան, թէ այլեւս վճռուած է Հայաստանը նուաճել պատերազմով, որի դէպքում նախայարձակ պիտի լինի Թուրքիան, Կարմիր բանակին թողնելով՝ Հայաստանը նեղել հիւսիսէն:

Այդ մասին Մոսկուայէն տրուած հրահանգի մանրամասնութիւնները Քեմալը կը հաղորդէ Քեազիմ Գարապէքիր փաշային:

Թրքօ-սովետ զինակցութիւնը արագ կերպով իր բաղդին թողնուած Հայաստանի դէմ դարձնելու նպատակով, այդ օրերին Մոսկուայէն Բաքու եւ Բաքուէն Ղարաբաղ ու Նախիջեւան կ'երթեւեկէին մի շարք դաւադիր զինուորա-քաղաքական թուրք գործակալներ – նախկին ջարդարարներ:

Վերջինները կապ կը պահէին Ադրբէջանում կենտրոնացած Կարմիր բանակի, Ադրբէջանի յեղկոմի նախագահ Նարիմանովի եւ Հայաստանի ճակատի վրայ գործող թրքական ոյժերի զօրահրամանատարութեան հետ:

Մոսկուան այդ ջարդարարների ձեռքով պիտի գրէր մեր հայրենիքի նոր ճակատագիրը՝ եղերական:

---

* *Էնվէրի խօսքը վերաբերում է Զանգեզուրին, որի մեծ մասն այդ ժամանակ գրաւուած էր Կարմիր բանակի կողմից:*

Լսենք սրանցից մի քանիսին.

Դոքտ. Նազըմ. «Մոսկուայի կառավարութեան դիմելով՝ օգնութիւն եւ զէնք ուզեցինք»:

Քիւչիւք Թալէաթ. «Ես յանձնարարեցի Քեազիմ Գարապէքիր փաշային, որ բոլշեւիկների հետ շփման մէջ մտնէ: Այդպէս էլ եղաւ»:

Նայիմ Զեւաթ բէյ. «1920 Յուլիսին, Գարապէքիր փաշային դիմելով, նրա հաւանութիւնը ստացայ:

Երբ Ղարաբաղ հասայ՝ նամակ մը ստացայ: Այդ նամակը ուղղուած էր Զաւիտ բէյին, որ այդ ատեն Պայազիտ կը գտնուէր: Նամակը կը յանձնարարէր շփման մէջ մտնել նահանջող բոլշեւիկեան ոյժերու հետ: Կացութիւնը Պայազիտ հաղորդեցի:

Ասոր վրայ Գարապէքիր փաշայէն հեռագիր մը ստացայ, որով կը հրամայէր՝ *«Նայիմ Եէվատ բէյ ինչ կ'ուզէ թող ընէ բոլշեւիկեան նահանջող բանակը* Նախիջեւան թող բերէ»*:

Գարապէքիրի հրամանի վրայ՝ Նուրի փաշան, թուրք եւ թաթարներից բաղկացած իր ոյժերը կը քաշէ Նախիջեւան եւ այսպէսով կը կապուի թրքական Բայազիդի հետ:

Կարմիր բանակը վերստին կը շարժուի Զանգեզուրի դէմ, եւ այսպիսով Հայաստանը կը դրուի երկու կրակների միջեւ:

Օրեր յետոյ՝ միեւնոյն Նայիմ բէյը կը հեռագրէ Գարապէքիր փաշային. *«Զէնք եւ ռազմամթերք առնելով, յառաջացէ՛ք»*:

Զեւատ բէյ. «Յետոյ շփման մէջ մտայ բոլշեւիկեան հրամանատարութեան հետ:

Գարապէքիր փաշան՝ Խալիլ փաշային, Նարիման Նարիմանովին եւ բոլշեւիկեան բանակի հրամանատարութեան ուղղեալ երեք նամակներ գրած էր:

Այդ նամակներով բոլշեւիկներուն հետ գործակցութեան անհրաժեշտութիւնը կը ջատագովէր, եւ Խալիլ փաշայի կողմէ կատարուած ծառայութիւնների համար անոր շնորհակալութիւն կը յայտնէր:

Ասկէ զատ, թնդանօթի, զէնքի եւ ռազմամթերքի փոխադրութեան ատեն, օգտագործելու նպատակաւ, Ադրբէջանի մէջէն ճամբայ բանալու անհրաժեշտութիւնը պարզող երեք նամակներ ստացայ:

Ապահովեցի, որ Օգոստոսին, թրքական եւ բոլշեւիկեան բանակները իրարու միանան:

Յետոյ իմ ստացած հրահանգներու համաձայն, Խալիլ փաշայի հետ աշխատեցայ, որ *երկաթուղիով ալ ապահովուի երկու բանակներու միացումը եւ Հայաստանը չկարենայ ասոր ընդդիմանալ:*

---

* *Զանգեզուրէն:*

Այս նպատակով Մոսկուա գացինք: Էնվէր փաշան արդէն հոն կը գտնուէր»*:

Ահա՛ եւ XI Կարմիր բանակի զինուորայեղափոխական խորհրդի անդամ՝ Հեկկերի վկայութիւնը Լենին-Քեմալ զինակցութեան մասին.

«... Զանգեզուրում յիրաւի տեղի է ունեցել մի ամօթալի դէպք, որի համար մենք մեզ չենք գովում: Խօսքս տաճկական գնդի մասին է, որ մենք ուղարկել ենք Զանգեզուրով Քեմալի մօտ:

Այդ ժամանակ ուրիշ ճանապարհ չկար: Գնդին կարգադրուած է եղել անցնել Նախիջեւան:

Ո՞վ կարող էր ենթադրել, որ տեղի կ'ունենան դժբախտ դէպքեր կամ թիւրիմացութիւններ, որ թէ ազգաբնակչութիւնը եւ այդ գունդը միմեանց դէմ զէնք կը բարձրացնեն այն էլ Կարմիր բանակի անուան տակ: 1921, 15 փետր.»:

Թրքօ-սովետ հակահայ դաւի մասին, վերջապէս, վկայելու կանչենք նաե՛ւ հայ քաղաքական հոսանքներից մէկին.

«Քողը - Զանգեզուրի եւ Ղարաբաղի ժողովրդին ուղղուած իր կոչի մէջ ասում է հայ սոցեալ-դեմոկրատ բանուորական կուսակցութեան կենտրոնական կոմիտէն,- պատռուել է եւ մերկանդամ իրողութիւնը հրապարակ է նետուել:

Կեղծիքը բացուել է եւ ցինիկ խաբեբայութիւնը թագցնել անկարելի է:

Մայիսեան խառնակութիւնների օրերին հայ բոլշեւիկները չէին հաւատում եւ պրովոկացիա էին համարում այն ուլտիմատում հեռագիրը, որ նոյն խորհրդային դարձած Ադրբէջանն ուղղել էր Հայաստանի կառավարութեան՝ Ղարաբաղն ու Զանգեզուրը մաքրելու համար հայկական ուժերից. *այժմ ոչ միայն Ադրբէջանն է թրքական եւ ռուսական մեծ ոյժեր կենտրոնացրել Ղարաբաղի եւ Զանգեզուրի ուղղութեամբ,* այլեւ հայ բոլշեւիկ կոչուած տականքները իրանց եռանդուն ծառայութիւնն են մատուցանում օտար ոյժերին:

Առաջ հայ բոլշեւիկները չէին ընդունում եւ աշխատում էին հերքել այդ փաստը, որ ռուսական բոլշեւիզմը գիտակցել եւ դաշնակցել է տաճիկ-թաթարական պանիսլամիզմի հետ - արեւելքում միացած գործելու համար:

Այժմ ոչ միայն չեն հերքում կամ ուրանում այդ փաստը, այլ եւ Բաքւում բուն դրած հայ տականքները, իրանց «Կոմունիստ»ի մէջ, օրն ի բուն ագիտացիա են մղում եւ ոյժեր կազմակերպում Հայաստանի դէմ, որպէս պետական անկախ միաւորի, եւ ջերմ փափաք յայտնում

---

* *Այս յայտարարութիւնները տրուած են Էնկիւրիի անկախութեան դատարանի առջեւ դատուող հակաքեմալականների կողմից, 1926ին:*

Հայաստանի վրայով ճանապարհ հարթել դէպի Անատոլիա եւ կամուրջ ձգել Ադրբէջանի եւ Տաճկաստանի միջեւ:

Հայ դեմոկրատիայի բոլոր թշնամիները խմբուեցին մէկտեղ հայ պետականութեան մահացու հարուած տալու համար:

Ռուսական բոլշեւիզմի եւ թուրք-թաթարական պանիսլամիզմի մերձարեւելեան նպատակները զուգադիպում եւ համերաշխում են իրար:

Այդ դիւային ծրագիրների իրականացման զոհ է բերում հայ երկիրը:

Այդ իմաստով, հայկական դատին ու ազատագրութեան հաւասար թշնամիներն են ե՛ւ բոլշեւիզմը, ե՛ւ պանիսլամիզմը:

Բոլշեւիզմը, եւրոպական դեմոկրատիայից կատարելապէս նախատուած ու արհամարհուած, յուսախաբ՝ փարել է արիւնռուշտ պանիսլամիզմին եւ նրանից է օգնութիւն աղերսում:

Ապստամբ պանիսլամիզմը՝ մահուան դատապարտուած միջազգային յաղթանակով հզօրների կողմից, գալարուելով իր հոգեվարքի ժամերին, յոյսը դրել է ռուսական բոլշեւիզմի վրայ:

Երկուսն էլ պատմութեան չար անէծքի դատավճռին են ենթարկուած:

Ահա՛ սեւ դաւը, ահա՛ դիւային զինակցութիւնը, որի գործակալների կողմից Անդրկովկասում թափուած հակահայ աշխատանքների շնորհիւ, Բաքւում կենտրոնացած XI Կարմիր բանակը, մի օր, պիտի շարժուէր Զանգեզուրի դէմ, թրքական ոյժերի հետ՝ հարաւէն ու հիւսիսէն ռազմագիտական աքցանի մէջ առնելու Հայաստանը:

Ահա՛ հայադաւ զինակցութիւնը՝ թրքօ-բոլշեւիկ վկայութեանց լոյսի տակ:

Այլ վաւերագրերի եւ վկայութիւնների կարիք կա՞յ: Չեմ կարծում:

Մեր դաւադրուած հայրենիքի համար ստեղծուած այդ ծանրածանր պայմանների մէջ թոյլատրելի՞ է հարցնել, թէ Սիւնիքը պիտի ծառանա՞ր Կարմիր բանակի դէմ, թէ՛ ոչ:

- Այո՛, դա վճռաբար պիտի կտրէր քեմալական ոյժերին օգնութեան փութացող Կարմիր զօրքերի ճամբան, եթէ հաշուի առնելով ոյժերի փոխյարաբերութիւնը, անգա՛մ համոզուէր, թէ գերազանցապէս անհաւասար այդ կռւում իր լեռնոտ բոյնը ամբողջապէս կը վերածուի Լեոնիդասեան մի կիրճի, եւ որպէս նուիրական կտակ ու յիշատակ, նա դարերին իր աճիւնը կը թողնի:

Նա պիտի կռուէր եւ կռուեց դիւցազնաբա՛ր, որովհետեւ չէր կարող տկարանալ, երբ իր հայրենիքն էր դաւադրուած:

Նա կռուեց, որովհետեւ թուրքը, Երրորդ Միջազգայնականի սադրանքներով, մահուամբ կը սպառնար Հայաստանին եւ անոր անկախութեան:

Եւ, ի՞նչ խօսք, որ նման պայմաններում մի սիւնեցի, մի նոր Մելիք Ֆրանգիւլ կարող էր տկարանալ, վաճառուել, դաւաճանել: Սիւնիքը՝ երբե՛ք:

Նա միշտ էլ եղած է հաւատարիմ իր ցեղին - հայոց պատմութի՛ւնը վկայ:

Մի վսեմ փառասիրութեամբ՝ նա պատնէշի վրայ մնաց եւ ա՛յն օրերին, երբ իր ճակատագրի ղեկավարութիւնը յանձնած էր ինձ:

Փա՛ռք իրեն:

III

«Ճամբ որք չունին զօրութիւն, ունին խայթոց»:

Ուրացողներ կան, որոնց ժամանակին դատած է Եղիշէն՝ նրանց ճակտին խարանելով՝ «Յաճախ վարդապետներ ու վարդապետութիւններ փոխող»:

Արդար լինելու համար, պէտք է ասել, որ նմանները չար չեն, բայց նաեւ արդարակորով չեն:

Սրանք պատկանում են այն հոգեբանական տիպին, որն իր տկարութեան բերումով դառնում է անպայքարունակ եւ հեշտութեամբ յարմարւում քաղաքական վայրկեանին ու միջավայրին:

Նմանը միշտ էլ օրուայ ամէն կարգի յաղթականի եւ իշխանաւորի հետ է:

Նա չէ՛ ծախւում, չէ՛ գնւում:

Այդ իսկ պատճառով մեծ չէ իր սակարանական արժէքը:

Սա պատկանում է անարծաթ ու ակամայ ուրացողների ստորոգութեան:

Սրա ուրացումը սահմանափակւում է նրանով միայն, որ դառնում է գաղափարի զէնընկեց, դասալիք, որով որոշ բարոյալքում է առաջացնում իր նախկին գաղափարակիցների շարքերում:

Սակաւ չէ նման քաղաքական ուրացողների թիւը մեր կեանքում:

Ուրացողներ էլ կան, որոնց անկումը տեղի է ունենում «երեսուն արծաթով», որոնք, սակայն, ստանալով իրենց ուրացումի գինը՝ քաշւում են մթութեան մէջ եւ լռութեան կնիքը դնում իրենց շրթներին:

Իբրեւ կրաւորական տիպի ուրացողներ՝ սրանք չեն փորձում արդարացնել իրենց անկումը:

Գոյութիւն ունի երրորդ կարգի ուրացողը, որն իր չարագործութիւններից յետոյ դառնում է աւելի յանդուգն իր ընկածութեան մէջ:

Սա չէ բաւականանում իրեն արուած «արծաթ»ով, եւ աշխատում է ամէն կերպ շահեցնել այն:

Առ այդ, նա շարունակում է մնալ հրապարակում - յաճախ պայքարի առաջին գծի վրայ - եւ աղմկում իր ուրացումը արդարացնելու համար:

Սրա անկումը պէտք է բացատրել ոչ թէ իր մտաւոր, այլ՝ բարոյական կարճատեսութեամբ:

Սա՝ զինակցելով իր ուրացումը գնող արտաքին թշնամուն, պայքարում է նրա դատի, նրա յաղթանակի համար:

Այդ վերջինը ակտիւ տիպի ուրացող է, որով՝ աւելի՛ զզուելի եւ աւելի՛ վտանգաւոր:

Ուրացողների այդ կարգից է Գ. Տէր Մինասեան կոչուածը, որն իր ուրացումից յետոյ սկսած է ընդունայն փորձեր կատարել՝ իր որդեգրած կարմիր դաւանանքի քղամիդով իր հոգեւոր նեխութիւնը ծածկելու համար:

Այդ ուրացողի ելոյթը եկաւ ինձ վերջնականօրէն համոզելու, թէ *բոլշեւիզմին յարող ամէն դժբախտ էակ դառնում է ճշմարտութեան ու բարոյականի թշնամի*, հացկատա՛կ ու բանսարկո՛ւ, - հոգով կործանուած:

Խօսքս այն հատ ու կենտ իդէալիստների մասին չէ, որոնց համար համայնավարութիւնը մի «հոյակապ զառանցանք» է, այլ նրանց՝ որոնց համար բոլշեւիզմը ամէն բանից առաջ մարդ արարածի մէջ նիրհող անասնականը բաւարարելու խնդիր է - նախ հացի խնդիր:

Բոլշեւիզմի հայ գործակալներից ամենէն ծերը - այդ իսկ պատճառով ամէնից զզուելին - Տէր Մինասեանը այդ գիտէր, երբ դեռ գտնւում էր «նամարդ թշնամուց ոտնակոխ ու պղծուած»* Սիւնիքում, ուր դեռ իմ ձայնն էր արձագանգում հայրենի լեռների եւ ժողովրդի *հերոսական* հոգու մէջ:

Նա գիտէր եւ այն, որ *արդարացնել խորհրդային իշխանութիւնը կը նշանակէ արդարացնել այն բոլոր մարդատիպ հրէշներին, որոնք եկել, դաւաճանել եւ ուրացումի ճամբով անցել են ապրելու հայոց պատմութեան խաւարի մէջ:*

Նա գիտէր - եւ մեզ հետ արդար կատաղութեան կայծակունք էր թափում Լենինի եւ նրա հայացեղ ճետերի գլխին - նա գիտէր, որ *ճանաչել խորհրդային իշխանութիւնը կը նշանակէ կանխաւ արդարացնել օտար իշխանութեանց այն բոլոր տեսակի հայանուն գործակալներին, որոնք վաղը եւ յաւէտ կարող են յայտնուել մեր ցեղի կեանքում:*

---

* *Ուրացողի բառերն են:*

Մի դաժան հարկադրանքով, մեր ժողովուրդը ճանաչեց եւ հանդուրժում է կարմիր իշխանութիւնը, բայց չարդարացրեց եւ պիտի չարդարացնի զայն:

Իսկ տէրմինասեանները, զուրկ իրենց ծնող ցեղի առաքինութիւններից, ոչ թէ միայն ճանաչեցին՝ ժամանակին իրենց կողմից իսկ բիւրիցս անիծուած իշխանութիւնը, այլ եւ արդարացրին նրան:

Աւելի՛ն. նրանք, օտար իշխանութեան աչքին քաղցրանալու շնական հաշուով, միաժամանակ հայհոյեցին ու դատապարտեցին մեր երէկը, մեր հայրենին, մեր նուիրականը:

Ուրացումի անբարոյութեան ոյժով՝ այդ հրէշները մղուեցին շփոթելու քաղաքականութիւնը՝ վարդապետութեան, ճանաչումն՝ արդարացումի հետ:

Ցեղային արժանապատուութեան ու բարոյական սկզբունքների պակասը նմաններին դարձրեց ոչ թէ միայն օտարին յոտնկայս ծառայելու տրամադիր, այլ՝ եւ իր հարազատ ժողովրդի պատմութիւնը կեղծող՝ ճշմարտութեան թշնամի:

Հացը, անսուրբ հացը սրանց մոռացնել է տուել - ե՛ւ գիտեն, ե՛ւ չգիտեն սրանք, որ *չկա՛յ աւելի մեծ պղծութիւն, քան հարազատ ժողովրդի պատմութեան չարամիտ աղաւաղումը:*

Կեղծել պատմութիւնը, ասել է՝ եղծանել պատմաստեղծ ժողովրդի կենսաբանական բարոյականը, հարուածել նրա արթուն բնազդը, վտանգել նրա հոգեւոր առողջութիւնը, խեղել հոգին, ծռել նրա զարգացման ճամբան, անիրաւել նրա մեծ մեռելներին, որոնք ընկան, որ հայրենիքը սրբանայ ու ապրի, շփոթի մատնել պատմութեան ենթակայի ներկան եւ խաբել գալոց սերունդներին: Միով բանիւ, դա ասել է՝ *բաց աչքով թշնամանել հարազատ հայրենիքին*, դա ասել է՝ *ծառայել իր ցեղի արտաքին թշնամիներին:*

Այդ կարգի ուրացողներից է խորհրդ. իշխանութեան գործակալ Գ. Տէր Մինասեանը, որի հակազգայնական հաջոցին, որպէս պատասխան, գրւում են այս տողերը:

* * *

Ընթերցո՛ղ, ես տեսայ հոգւով ազատը ստրկութեան մէջ, եւ սիրեցի մարդը:

Ես տեսայ ստրուկն ազատութեան մէջ եւ գարշեցի մարդէն:

Ստրո՛ւկը – ով հաւասար չափով չի ատել ե՛ւ սրան, նա էապէս չի պայքարել բռնութեան դէմ:

Պատմական մոմենտներ կան, օրինակ՝ մեր ժամանակաշրջանը, երբ բռնաւորէն աւելի ստրո՛ւկն է զզուելի:

Եօթնիցս զզուելի է հոգեւոր ստրուկը – նա՛ որն ազատութեան մէջ իսկ ապրում է, խորհում, գործում ստրկօրէն. նա՝ որի կրծքին թէեւ չէ ճնշում բռնաւորի թաթը, բայց եւ այնպէս, նա միշտ էլ իրեն զգում է ծունկի եկած «զօրաւորի» առջեւ. նա՛ որը ծանրապէս կոխող գարշապար է փնտռում՝ լիզելու, սուտ աստուածութիւններ՝ փառաբանելու, կեղծ մեծութիւններ՝ պսակադրելու:

Ինքնաստրկացած մարդկային մի անասուն, որն այդ բոլորը կատարում է մի շնավայել քծինքով՝ ողորմութիւն ստանալու համար: Եթէ հերոսներ ունեցել են բոլո՛ր դարերը, ապա անհոգի գործիքներից զուրկ չեն եղել բոլոր տեսակի իշխանութիւնները, հացկատակներից՝ բոլո՛ր արքունիքները:

«Ամբոխին ու թագաւորին քծնողները գործադրում են բոլոր միջոցները. խուժանավարը գիտեստան կուրտիզան է, իսկ կուրտիզանը՝ պալատական խուժանավար,- ասել է Գիւչարդինին:

Քաղաքական նման մի կուրտիզանի մի քանի ցցուն գծերով յաւերժացրած է ռուս հռչակաւոր քննադատ Դոբրոլիւբովը: Աւստրիական բանաստեղծ Եակովն է այդ պերճաղիճը, որ Գարիբալդիին կոչած էր «դժոխքի ծնունդ», «մարդագայլերի ընկեր», եւլն., իսկ օրեր յետոյ, նրան ձօնեց խանդավառ երգեր, երբ Գարիբալդիի թշնամին՝ թագաւորը փախած էր Նէապոլից:

- «Ո՛վ զօրաւոր պաշտպանդ ազգերի ազատութեան, որին ժողովուրդները պաշտում են արդարօրէն»:

Սակայն, մի քանի օր անցած, երբ Ֆրանսիսկը յաջողում է վերադառնալ Նէապոլ՝ Եակովը խղճի ամենայն անդորրութեամբ վերստին հնչեցնում է իր քնարի հակագարիբալդեան լարը.

- «Նորէ՛ն, թագաւորի հետ նորէ՛ն խաղաղութիւնը ու կարգ, կանոնը տիրեցին»:

Մի ուրիշը, ժամանակին, այսպէ՛ս է գրել Սիւնիքի եւ իր ղեկավարի մասին.

- «Վերջապէս հասանք Տաթեւի պատմական վանքը, ուր եկաւ նոյնպէս սպարապետ Նժդեհը:

Նժդեհի անունը, իրօք, պաշտանքի առարկայ է դարձած սիւնեցոց համար:

Մի հեքեաթային հերոս է նա, որ իր կրակ ձիու վրայ հեծած ամէն տեղ է:

Անոր խօսքը պատգամ է, անոր ներկայութիւնը՝ յոյս ու ոգեւորութիւն:

Նա ինքն ալ հաւատացած է կարծես, որ ինքն անխոցելի է:

«Մահէն չի՛ վախեցողը ամենէն շատ կ'ապրի»,- կ'ըսէր նա:

Սիւնեաց ժողովուրդը «Խուստուփի արծիւ» կ'անուանէ զայն, ի

յիշատակ այն օրերու, երբ Նժդեհը իր փոքրաթիւ խմբակով քաշուէր էր Խուստուփ լեռը, ուր Պրոմեթէոսի նման պահեց ազատութեան կայծը, մինչեւ որ մի օր ալ իջաւ այդ բարձունքէն եւ հրդեհեց ողջ Սիւնիքը ազատութեան եւ անկախութեան բոցով:

Ժողովուրդի այդ պաշտամունքը իր հերոսի մէջ կերտեր է մի տեսակ բեկական կամք, որին հպատակիլ շատ կը սիրէ սիւնեցին:

Առանց Նժդեհի կամքին տերեւ չի շարժիր Սիւնեաց մէջ, եւ ժողովուրդը գոհ է, որ այդպէս է:

Սիւնեաց ինքնավարութիւնը Նժդեհի ծնունդն է»*:

Տարիներ յետոյ, այս տողերի հեղինակը, հայ գաղթաշխարհում, իր հացն ապահովելու համար, պիտի միանար նրանց, որոնք շահաւէտ արհեստ են դարձրել իմ անձի դէմ հաջելը:

Ահա՛ եւ Գ. Տէր Մինասեանը, որը տարիներ առաջ այսպէս կ'ողջունէր կարմիր լծից ազատագրուած Ղափան-Գենուազը եւ իր առաջնորդին.

«Ողջո՛յն ազատագրուած Ղափան-Գենուազին**:

Ողջո՛յն քեզ Ղափան, Դաւիթ բէկ, Թորոս իշխանների օրրան: Ողջո՛յն քո սէգ ու հպարտ լեռներին, որոնց ամէն մի քարը ներկուած է հարա-զատներիդ արիւնով:

Ողջո՛յն Խուստուփի լեռներն ապաւինած, որդեկորոյս ծնողներին՝ արնոտ աչքերը Բարգուշատին, Աջանան, Ուղուրչային սեւեռած Ղափանի սրտաբեկ քաջերին:

Ողջո՛յն յօշոտուած, հիւծուած երկրագործ ու խաշնարած ժողովրդին, որ երկու տարուց ի վեր, հայրենիքի փրկութեանն ի սպաս դրաւ իւր սիրասուն զաւակն ու քրտնաթոր աշխատանքի վաստակը:

Ողջո՛յն, բիւր ողջոյն քեզ, Ղափան-Գենուազ-Գողթանի եօթն անգամ սիրուած հրամանատար հերոս Նժդեհ, բեղմնաւոր էին քո ցանած սերմերը եւ ատոք եղան նրանց տուած պտուղները:

Դու ե՛ս եւ կը մնաս Ղափան-Գենուազի պատմութեան մէջ «երկրորդ Դաւիթ բէկ» «Աժդահայ փաշա» եւ «ամէն կռւում յաղթող փաթիշահ», տիտղոսներ, որ տուան՝ քեզ պաշտելու չափ սիրող զինուորութիւնն ու ժողովուրդը»...:

Այս մարդն էլ տարիներ յետոյ յուդայաբար իր տէրը պիտի ուրանար:

Այս են եղել բոլոր ժամանակների Եակովները, Թռչնիկներն ու Գեդէոնները:

---

* *«Հայաստան», թիւ 185, Ֆիլիպէ. Հայաստանի «Նահանջ Բիւրոց»ը ինքնավար Սիւնիքի ընդմէջէն. Թռչնիկ, 1921, 10 Յունիս, Թաւրիզ:*

** *«Ազգ», թիւ 43, 1920, Նոյ. 15, Թաւրիզ:*

Անցեղ են նրանք, եւ յատուկ բոլոր ժամանակներին ու միջավայրերին:

Երէկ Գարիբալդիի հետ, նրան փառաբանող ու դափնեպսակող, երբ նա յաղթական էր: Այսօր Գարիբալդիի դէմ, ստգտանող ու թշնամանող, երբ նա լքած է Նէապոլը:

Այսպէս են եղել հոգեւոր ստրուկներն ու պորտաբոյծները բոլո՛ր դարերում եւ բոլոր ցեղերի մէջ:

Եւ մարդկային զզուանքը Դիոգինէսի, Թեսաւրոսի եւ այլոց շրթունքներով մի շարք անարգական անուններ է տուած նրանց՝ «մկունս պալատականս», «շունս արքունիս», «որսողս պարգեւաց», «աղուէսս սովեալս» եւն.:

Հասկանալի է, որ դարեր տեւող օտար լուծերի ազդեցութեանց պատճառով, այդ անարգ մարդատիպերի թիւը մեր ժողովրդի մէջ աւելի՛ մեծ, որակն աւելի՛ բարձր պիտի լինէր:

* * *

«Աղուէսս սովեալս» - ահա՛ ներքին մարդն այն դժբախտ ուրացողի, որ Հայաստանի խորհրդայնացման ամօթափառ 15-ամեակի առթիւ, «Յուշեր անցեալից» խորագրութեամբ, հակադաշնակցական «Ապագայ»ի մէջ լոյս է ընծայել մի երկար յօդուածաշարք, «հայ մարդ» կեղծանունով:

Գեդէոն Տէր Մինասեան կոչուած դաւանափոխն է դա, որը ուրացութեամբ իր անձի մէջ *մարդն ու հայը* բարոյապէս սպանելուց յետոյ, հոգեբանական ծպտումի օրէնքով իրեն «հայ մարդ» անունն է տուել: Նա իր յուշապատումը սկսում է հետեւեալ առաջադրութեամբ. «Կ'ուզէի մեր ընթերցող հասարակութեան ներկայացնել Զանգեզուրի կռիւների թռուցիկ, բայց ճշգրիտ պատմութիւնը յընթացս 1918-19-20-եւ-21 թուերի. այլեւ մասնաւորապէս Նժդեհի անձնաւորութիւնը ու նրա կատարած դերը 1921ին»:

Ընթերցո՛ղ, մէկ էլ կարդանք ուրացողի վերջին խօսքերը. «...նրա կատարած դերը 1921 թուին»:

Ինչպէս տեսնում էք, յօդուածագիրն իր տէգ ու նիզակները ուղղած է ոչ թէ 1919-20ին գործող Նժդեհի դէմ, երբ դեռ հակաբոլշեւիկեան կռիւներ չկային Զանգեզուրում, այլ նրա 1921ի գործունէութեան դէմ, երբ Սիւնիքը կը չափուէր Կարմիր բանակի հետ:

Այդ մարդը, որ Զանգեզուրում ծանօթ էր «աղուէս Գեդէոն» անունով, եւ որի խորամանկութիւնը 1918ին, մի արդար մտրակով պատժած էր Անդրանիկը՝ ինչպէս ամէն հասարակ հաւատուրաց, 1925ին բռնեց քաղաքական ուրացումի ճամբան: Նա հրապարակային մի յայտարարու-

թեամբ բոլշեւիկեան «Գաղափար» թերթի մէջ իրեն հռչակեց բոլշեւիկների բարեկամ, թշնամի՝ Դաշնակցութեան:

Եւ անմիջապէս, որպէս «երեսուն արծաթ», Երեւանից նրան տրուեց խորհրդային իշխանութեան համար քարիւղ գնելու այնքա՛ն շահաշատ պաշտօնը, որն ամենայն վարպետութեամբ ցայսօր վարում է Աստարայում:

Այդ օրէն ահա Գեդէոնը դողի մէջ է իր ոսկեբեր պաշտօնի համար:

Եւ պատճառ ունի դողալու, որովհետեւ քաջ գիտէ, թէ իժի չափ յիշաչար բոլշեւիկները դեռ չեն մոռացել, որ ինքը ուղիղ երկու տարի «Նժդեհի ձիու ասպանդակներն է բռնել», ինչպէս «Յուսաբեր»ի մէջ ասել է Սիւնեցին:

Այդ օրէն նա դեգերում է հաւատացնել իր նոր տէրերին, թէ ինքը դէմ է եղել Զանգեզուրի հակաբոլշեւիկեան կռիւներին, որ ասել է՝ ե՛ւ Նժդեհին:

Սրանո՛ւմ պէտք է փնտռել՝ Հայաստանի խորհրդայնացման 15-ամեակի առթիւ, Տէր Մինասեանի թոյլ տուած քաղաքական շնութեան իմաստը:

Տեսէ՛ք, թէ ի՞նչ է կատարուում:

Երեւանում բոլշեւիկները տօնում են Հայաստանի անկման տարեդարձը:

Ա՛յդ օրը թրքօ-բոլշեւիզմը գերեզմանեց Հայաստանի անկախութիւնը՝ Թուրքիային կցելով մեր հողերի մեծագոյն մասը:

Թրքօ-բոլշեւիկ միացեալ յաղթանակի օրն է, եւ Երեւանում տօնական աղմուկ կայ:

Պէ՛տք է հաւատարմութեան նոր տուրք տալ Կարմիր իշխանութեան:

Պէ՛տք է հայհոյել, սեւացնել այդ իշխանութեան թշնամիներին - եւ ահա՛ Գեդէոն վարժապետն էլ շտապում է իր ձայնը միացնել կարմիր օրուայ առթիւ յարուցուած մեծ աղմուկին:

Իժի թոյնը շրթներին՝ նա գրում է, գրում է, որովհետեւ իրեն ապսպրուած է գրել, որովհետեւ չի կարող չգրել, որովհետեւ տօն օրերին իր խօսքը աւելի լաւ կը լսուի, աւելի հեշտ կը հասկացուի, եւ ամենէն գլխաւորը՝ լա՛ւ կը վարձատրուի:

Գրում է բոլշեւիկեան ծեր ծաղրածուն, գրում է ոչ թէ պատմութեան, այլ՝ իր կարմիր տէրերից ստացած հացի համար:

Սակայն, չարաչար սխալւում է Տէր Մինասեանը, կարծելով, թէ պատմութիւնը զբաղւում է ամէն կարգի աղուէսներով ու աղուէսութիւններով:

Ճիշտ է, դա յաւերժացնում է նաե՝ւ «առիւծ խեղդող աղուէսներ»ին (որոնց մեծ փառասիրութիւնը, յանուն Հայաստանի թագի, յաճախ իրենց

մղած է զինակցել անգամ արտաքին թշնամիներին) բայց ոչ եւ հաւագող աղուէսներին, որպիսին եղաւ Սիւնեաց նորագոյն հերոսականի դէմ, 15 տարի յետոյ, այն էլ արտասահմանից հաջող «հայ մարդուկը»:

Աշխարհը գիտէ, *որ երբ մարդկային անկումը տեղի է ունենում հացի համար, ենթական մղւում է ամէն տեսակի հրէշութեան:*

Հոգեբանական ճշմարտութիւն է դա:

Ճշմարիտ է եւ այն, որ *ծերացած չարութիւնը աւելի հացախնդիր եւ շնական է լինում:*

Երկրի, Գեդէո՛ն, երկրի եւ երկնքի միջեւ կարելի է բաժանել մարդկային սիրտը, բայց ոչ եւ՝ հայրենիքի ու բոլշեւիզմի:

Դժբա՛խտ մարդ, դու այդ վերջինը փորձեցիր, փորձեցիր ճշմարտութեան ընկոյզի վրայ փտած ատամներդ փշրել:

Չգիտէի՞ր, յիմա՛ր, որ քո ստութեան ետեւէն ճշմարտութիւնը կը հասնէր կրնկակոխ՝ փաստաթուղթերի ոյժով զինուած:

Հրէ՛շ, քեզ համար միեւնո՞յն է, թէ որի՞ն կը կցուէր Սիւնեաց աշխարհը, Հայաստանի՞ն, թէ թաթար Ադրբէջանին:

Գոհ չե՞ս, որ իմ վարած կռիւների շնորհիւ միայն Սիւնիքն այսօր կազմում է մայր երկրի անբաժան մասը:

Չե՞ս ընդունում, որ հայ բոլշեւիկն իսկ կարող է գարշել ապսպրանքով իմ դէմ թխածդ տողերէն:

Չէ՞ որ Լեռնահայաստանում ապրող ամէն մարդ գիտէ, թէ որքան ժամանակ որ ես Կարմիր բանակի դէմ արիւնալի կռիւներ եմ վարել, այնքան ժամանակ դու ծառայաբար իմ ձիո՛ւ սանձերն ես բռնել, ինձ համար յաղթական կամարներ բարձրացրել, իմ յաղթանակները երգել:

Եւ այսօր, երբ իմ արիւնով պաշտպանած դատի համար անգամ Խանջեաններ են նահատակւում, երբ ազգայնական հայը, մասնաւորապէս եղերաբախտ Խանջեանի մահէն յետոյ, պիտի կարողանար պատկերել Սիւնիքի կատարած գործի մեծութիւնը - դու քեզ ազատ ես համարել բանսարկելու իմ մասին:

- «Նա կապել էր կարմիր գօտի եւ ձգտում էր նոյն ժողովրդի արեան գնով թագ դնել գլխին»:

Թա՞գ - դժուար թէ թագի կարիք զգար նա, որի խօսքը, քո՝ իսկ վկայութեամբ, օրէնք էր ժողովրդի համար. նա, որն իր գլուխն ամենայն վստահութեամբ կարող էր դնել ամէն մի սիւնեցու ծունկին:

Թագ ու ձեւական իշխանութիւն փնտռում են այն ոչնչութիւնները միայն, որոնք անթագ իշխել, թագաւորել չգիտեն:

Նա, որ Սիւնիք էր մտել առանց բանակի, առանց նիւթական միջոցների, անգամ առանց հացի եւ ռազմամթերքի, եւ զօրահաւաքի ենթարկելով ցեղի ոգին՝ յաջողած էր թրքութիւնից մաքրել Գեղաւածորի, Բարգուշատի

եւ Հաքեառուի մօտ երկու հարիւր գիւղերը, դժուար թէ թագի կարիք զգար:

Իմ թագը՝ կրօնապէս ինձ կապուած զինուորն էր, որ իմ ձայնին մէջ իր ցեղի ձայնը լսեց եւ այնքան շուտ իւրացրեց կռւում մահուան հետ կատակելու աստուածային արուեստը:

Իմ թագը՝ դա Սիւնեաց ժողովրդի դէպի իր ղեկավարը ունեցած հաւատն էր:

«Իմ թագը գլխիս չէ, այլ՝ սրտիս մէջ»,- պիտի ասէր Գեօթէն: Հայաստանում, ուրացո՛ղ, թէկուզ այսօր, դաւանածդ լենինականութեան օրով, կը յանդգնէի՞ր խօսելու իմ անձի դէմ:

Եւ, բարոյապէս ազա՞տ ես խօսելու:

Որքա՞ն արդար կը լինէր, ապերա՛խտ, եթէ ձեր գիւղի ճամբաների վրայ փռուած անասնաղբի մէջ զեռացող միջատը մէկէն գլուխը վեր բարձրացնէր եւ հայհոյութիւններ ուղղէր արեւին:

Մոռացա՞ր, ուրացո՛ղ, որ դու էլ փրկուած ես իմ սրի շնորհիւ, մոռացա՞ր, որ «Նահանջ Բիւրոց»ի օրերին, հազարների հետ, դու էլ անարժէք կաշիդ փրկելու համար, կոխեցիր մէջքիս վրայ - որպէս փրկութեան կամուրջի - եւ անցար Պարսկաստան:

Երբ փրկուածն ապերախտում է իր փրկչին, մատնում է, որ ինքն արժանի չէր փրկութեան, արժանի չէ ապրելու:

Գեդէո՛ն, ես արգահատում եմ արարքիդ վրայ:

Եւ միաժամանակ՝ մտածում. իսկ եթէ՝ անձիս դէմ հաջելով մարդիկ իրենց ծերութիւնն են ապահովում: Միթէ՞ իւրատեսակ բարեգործութիւն չէ կարելիութիւն տալ մարդկանց, որ հաց ունենան, թէկուզ իրենց երէկուան տէրը մատնելով, ուրանալով:

* * *

Ըստ իր առաջադրութեան՝ յօդուածագիրը պիտի խօսէր Զանգեզուրի եւ Նժդեհի մասին, սակայն, գիտակցելով, որ դրանով չի բաւարարուի դժուարահաճ Երեւանը, նա անուանարկութեան իր քարերը վատաբար դարձնում է նաեւ հանրապետական Հայաստանի, նրա անկախութեան, կառավարութեան, ապա «Փրկութեան կոմիտէ»ի, Վրացեանի «փախցրած վալիւտա»ի, Ռուբէն Տէր Մինասեանի «Ճատրակ»ի եւ այդ կարգի հազար ու մէկ բաների դէմ:

Նա այսպէս է բանսարկում.

- «Հայկական հանրապետութիւնը, որ ծնունդ առաւ թուրք դիւանագիտութեան հարկադրանքի տակ եւ ընդամէնը երկուքուկէս տարուայ կեանք է ունեցել (1918 Մայիս 28ից մինչեւ 1920 Նոյեմբեր 28ը) շարունակ կռիւների մէջ է եղել արտաքին ճակատներում, Տաճկաստանի, Վրաս-

տանի, Ադրբէջանի հետ, իսկ ներսում՝ Զօդում, Զանգիբասարում, Բէիւք-Վէդիում, Շարուր-Նախիջեւանում եւ Զանգեզուրում:

Այս բոլոր կռիւների մէջ նա պարտուել է եւ ապա գաղթի ճամբան է բռնել՝ տանելով իր հետ մի քանի հազար գիւղացիներ եւ զինուորներ»:

Տեսա՞ք, թէ ինչպէս է գրւում-կեղծւում մեր երէկուայ պատմութիւնը:

Մելիք Ֆրանգիւլի կաթնեղբայրն է յուշագրողը:

Այլ կերպ չէր էլ կարող լինել:

Ամէն ուրացող - ազգայնօրէն անբարոյացած ամէն էակ - իր ցեղը հռչակում է կենսաբանօրէն անբարոյական:

Ամէն դաւաճանող իր ժողովուրդը համարում է անարժան:

Նա այդ անում է իր անկումը արդարացնելու բնազդական հաշուով:

Նա այն հրէշն է, որ բռնուած անառաքինութեան մէջ, ասում է դատաւորներին. «Մեղքն իմս չէ, մայրս էլ առաքինի չէր»:

Ճշմարտութեան զգացումից զուրկ՝ ծեր ուրացողը օտարի չափ իսկ արդար չէ դէպի իր ժողովրդի անունն ու պատմութիւնը:

Նա էլ, հայոց պատմութեան կողմից անիծուած մեր դասական ուրացողների նման, նա՛ էլ միայն «պարտութիւն ու գաղթ» է տեսնում մեր ցեղի կեանքում, եւ լրբօրէն հեգնում «միայն երկուքուկէս տարուայ կեանք» ունեցող մեր անկախութիւնը:

Ուրացողին յատուկ չարութեամբ՝ նա ճգնում է արժէքազրկել այն ամէնը, որ վերջին տարիները դաւադրուած հայութիւնը ապրեց որպէս ազատագրական պայքար, որպէս հերոսութիւն եւ ողբերգութիւն:

Նա գիտէ, որ փառայեղ յաղթանակներ ունեցել ենք եւ մենք. նա, հէնց ինքը, յաճախ մեր զէնքի յաջողութեամբ գինով, իմ զինուորների ոտներն է համբուրել, եւ ներբողներից ամենաշքեղները հիւսել մեզ համար:

Նա գիտէ, նա չի մոռացել այդ բոլորը: Քիչ յետոյ կը կարդաք իր տողերն այդ մասին եւ կը տեսնէք մեզ համար հիւսած իր դափնիները, մեզ տուած իր փառակիր անունները:

Նա գիտէ, որ անմարդկային պայմանների մէջ, յուսահատ հերոսամարտերով անկախ հայրենիք ստեղծող ժողովուրդը արժանի է յաւիտենական փառաբանանքի ու խունկի, բայց եւ այնպէս ուրացողաբար նա թշուառաբանում է, թէ հայը իր անկախութիւնը կը պարտի թուրք դիւանագիտութեան:

Նա վկայ եղաւ Լեռնահայաստանի՝ թրքօ-բոլշեւիկ հորդաների դէմ վճռաբար ծառանալու այնքա՛ն հերոսական շարժուձեւին:

Հաւատափոխը գիտէ այդ բոլորը, գիտէ ճշմարտութիւնը, բայց խոստովանելու քաջութիւն չունի, որովհետեւ այսօր հաց տուողը խորհրդային իշխանութիւնն է, ո՛չ թէ ճշմարտութիւնը կամ տարագիր Նժդեհը:

* * *

Վերջապէս, տեսնենք, թէ ինչ է բարբաջում ուրացողը Նժդեհի մասին:

- Ադրբէջանեան հորդաների,- ասում է նա,- եւ Ղափանի թիկունքում գտնուող Գեղաւոր-Նախիջեւանի թրքութեան յաճախակի յարձակումները ու ոտնձգութիւններ էին պատճառ, որ Ղափանի ժողովուրդը եւ նրա ղեկավար մարմինները ճառեցին եւ երգեցին Նժդեհի գովքը եւ սինեմայի արագութեամբ բարձրացրին նրան գնդապետի, սպարապետի եւ գեներալի աստիճաններին» *:

Մեսրոպեան տառերին ծանօթ ամէն մարդ Տէր Մինասեանի այդ տողերից վճռապէս կ'եզրակացնէ, որ՝

ա) գոյութիւն ունէր Սիւնիքին սպառնացող մի մեծ վտանգ:

բ) Նժդեհը յաջողած էր զինաթափել այդ վտանգը:

գ) Եւ այդ իսկ պատճառով, «ժողովուրդն ու նրա ղեկավար մարմինները» իր գովքը կ'երգէին:

Գիտէ ողջ լեռնահայութիւնը, որ Սիւնիք մուտք գործածս առաջին օրերից մինչեւ մեր այդ երկրամասի խորհրդայնացումը, Տէր Մինասեանը, որպէս ժողովրդի եւ նրա ղեկավար մարմնի մի անդամը, եղած է իմ խնկարկուն:

Պատասխանիս պիտի կցեմ պատմութիւնը կեղծելու աշխատող այդ թշուառականի մի շարք գրութիւններից մէկը-երկուսը, որ ընթերցողը տեսնէ, թէ վերջինս ինչո՞ւ եւ ինչպէ՞ս կը խնկարկէր նրան, որին խորհրդային իշխանութեան կողմից այսօր խծբծելու է կոչուած:

Աղուէսանուն «հայ մարդուկ»ը, ուղիղ 15 տարի յետոյ, ինքնամատչօրէն, լոյս ընծայելով ժամանակին իրեն գրածս երկտողը**, ինձ անուանում է «խռովարար»:

Խռովարա՞ր. այո՛, երկու տարուայ ընթացքում չորս անգամ տուած եմ բարձր «խռովարարութեան» ապացոյցը:

- Երբ Խատիսեանի կառավարութեան կողմից հրամայուած էր գաղթեցնել պաշարուած Գողթանի հայութիւնը, ես «խռովարարաբար» անգիտացայ այդ հրամանը, եւ Գողթանի հայութեան փոխարէն սրբեցի,

---

* *Տէր Մինասեանի տգիտութեան ներելի է սպարապետութիւնը աստիճան համարել: Դա պաշտօն է. այդ չգիտէ ուրացողը, բայց գիտէ, որ գնդապետի աստիճանը ինձ տրուած է Հանրապետական Հայաստանի խորհրդարանի, իսկ զօրավարի աստիճանը՝ Լեռնահայաստանի խորհրդարանի կողմից:*

** *«Առաջ քաշելով քեզ, կարծեցի, թէ քեզնից մի բան դուրս կը գայ, բայց սխալուեցի. Նժդեհ»:*

տեղահանեցի թրքութիւնը, որով ոչ թէ միայն փրկուեց այդ շրջանի հայութիւնը, այլեւ գողթանցուն կարելիութիւն տրուեց կառչած մնալ Հայաստանի ամենաառաջնակարգ ռազմագիտական կէտերէն մէկին:

- Ջօրավար Ղազարովը, տեղեկանալով, որ ես պատրաստւում եմ Ղափանի իմ ոյժերով շարժուել դէպի Գողթան՝ այդ վերջինը թրքական սրէն ու սովէն փրկելու համար՝ արգիլեց իմ արշաւանքը:

Նա իր արգելքը կ'արդարացնէր ռազմամթերքի պակասի եւ ձմեռ ժամանակ Կապուտճիկ լեռէն անցնելու անկարելիութեան կրկնակ պատճառներով:

Ես անգիտացայ եւ ա՛յդ հրամանը:

- Լեգրանի եւ Հայաստանի կառավարութեան միջեւ կնքուած պայմանագրի հիման վրայ՝ Հայաստանի զինուորական նախարարը, Դրոյի միջոցաւ, կը հրամանագրէր՝ թողնել Սիւնիքը եւ վերադառնալ Երեւան:

Վերին իշխանութեան ա՛յդ հրամանն էլ արժանացաւ իմ «անհնազանդութեան»:

- Վերջապէ՛ս, երբ վիրաւոր էի, եւ Երեւանեան զօրամասի հրամանատարութիւնը ինձ կ'առաջարկէր թողնել Սիւնիքը եւ վերադառնալ Հայաստան, ես «խռովարար»աբար Հայաստանի մայրաքաղաքի փոխարէն ընտրեցի լեռները, քաշուեցի Խուստուփ, որպէսզի հետագայում ստեղծուէր ինքնավար Լեռնահայաստանը, որպէսզի Ադրբէջանին թողնուած մեր Լեռնաշխարհը ոյժով կցուէր Հայաստանին, եւ որպէսզի հոգեբանօրէն կարելի դառնար փետրուարեան հակաբոլշեւիկեան պոռթկումը ու հայ մտաւորականութիւնը փրկուէր գլխովին ոչնչացումից:

Այսպէ՛ս, Սիւնիքում, մէկից աւելի անգամներ ես «խռովարար» հանդիսացայ, որպէսզի ճշմարտապէս կարողանամ ծառայել մեր հայրենիքին:

Թէ իմ «խռովարարութիւն»ից ի՞նչ շահեց Հայաստանը՝ գաղտնիք չէ ե՛ւ ուրացողի համար:

Տէր Մինասեանը չգիտէ, որ *իմացականութեամբ ու սրտով փոքրիկ էակներին է միայն յատուկ՝ կուրօրէն կատարել վերէն տրուած ամէն հրաման:*

Սրբագրելի է մարդկային ամէն հրաման, թէկուզ դա տրուած լինի մի երկրի կառավարութեան կողմից:

Կարող է սխալուել, տկարանալ ամենաբարձր իշխանութիւնն անգամ:

Մարդկային իմացականութեան դէմ խորապէս մեղանչում է նա, ով իրեն տրուած հրամանը չէ գործադրում ստեղծագործաբար:

Վտանգի ժամանակ, մասնաւորապէս, երբ մի երկրի եւ ժողովրդի լինել-չլինելու խնդիր կայ, դաւաճանութիւն է՝ զինուորական կանոնագրի այս կամ այն յօդուածի տակ վատօրէն թաքնուելը կամ անձնական պատասխանատուութիւնից փախչելը:

Նման պատմական պայմաններում՝ ղեկավարի չափանիշը, նրա հարցումը պէտք է լինի՝ ի՞նչ կը թելադրէ երկրիս ու ցեղիս յաւիտենական շահը, եւ ոչ թէ միայն՝ օրուայ իշխանութիւնը:

Կան վայրկեաններ, կան քաղաքական անցքերի այնպիսի ծախող դասաւորումներ, երբ իշխանութիւնները իրենց անզօր են զգում, աւելին՝ դառնում են տատանուող, զիջող, պարտուողական:

Իշխանութիւններ կան, որոնք իրենց ենթակայ պետերից սպասում են մարդկօրէն կարելին միայն:

Կան այնպիսիները, որոնք, անծանօթ մարդկային հոգեւոր մեքենան շարժող ոյժերին, ձեր անձի մէջ կարող են տեսնել սոսկական պետը, ինչպէս եւ ձեր ղեկավարութեան յանձնուած զօրքերի ոյժը նրա թուով, նրա տեխնիկայով միայն:

Վերջապէս, կարող են ափսոսալ ձեզ, խնայել, ձեզ պահել վաղուայ համար: Այդ բոլոր դէպքերում ձեզ կը մնայ, որ դուք, եթէ ճշմարիտ ղեկավար էք, որ դուք չափսոսաք ձեր անձը, որ դուք ներշնչէք ձեր զօրքին, ձեր ժողովրդին, թէ *միայն թուական հաշիւներով կռիւ մղելը կամ կռուից խուսափելը՝ պղծութիւն է մարդկային պատմութեան եւ զայն շարժող հրաշագործ ոգու դէմ:*

Պե՞տ էք, ապա ուրեմն, ձեզ կը մնայ,- վստահ ձեր ցեղաշնչութեան,- լուծել «նիւթ - ոգի» անտիթէզը, եւ նետուել դէպի վտանգը, մնալ պատնէշի վրայ, որ ասել է՝ դառնալ «խռովարար»: Հասարակ հացկատակներին տրուած չէ հասկանալ, որ իր երկրին, իր հոգին, իր ժողովրդի իրաւունքին կառչողին - վտանգը դիմագրաւողին, միայն մտքով անբարոյացածները կարող են խռովարար կոչել:

Նրանց տրուած չէ հասկանալ այդ կարգի խռովարարութեան վեհութիւնն ու փրկարարութիւնը: Գեղէոններին տրուած չէ նաեւ՝ տարբերել առաջնորդը պաշտօնեայից, ասպետը՝ հասարակ ձիաւորից:

Ճշմարիտ առաջնորդներ չեն նշանակւում - նրանք փնտռւում են, յայտնւում, պարտադրւում: Նշանակւում են պաշտօնեանե՛րը միայն, որոնք մի բան գիտեն՝ մեքենաբար կատարել վերից տրուած ամէն հրաման:

Եթէ Սիւնեաց աշխարհում, ես ինձ պետ, պաշտօնեայ համարէի, ես կատարած պիտի լինէի բարձր իշխանութեան ծանօթ հրամանները, որ ասել է՝ ես պիտի հաշտուէի Սիւնիքը Ադրբէջանին կցուած լինելու փաստի հետ:

Եւ այդ դէպքում, ի՛նչ խօսք, որ ուրացողները ինձ «խռովարար» անունը չէին տայ:

«Նա, Նժդեհը, չէ ուզել ոչ ոքի հաշուի առնել. նա Լեռնահայաստանի երկրորդ համագումարում յայտարարել է.

«Օրէնքն իմ կամքն է եւ իմ զինուորի նիզակը»:

Այսպէս է նկարագրում անցքերը ու վարքագրում ինձ բոլշեւիկեան ծեր գործակալը:

Անաչառութեան դէմ չմեղանչելու համար՝ Գ. Տէր Մինասեանի մասին վկայ կանչենք հէնց իրեն՝ Գ. Տէր Մինասեանին:

Թողնենք, որ այդ մարդը ինքնավկայութեամբ մերկացնէ ու դատէ իր անձը:

Այժմ դիմենք մի քանի վաւերաթղթերի՝ նախ տեսնելու համար, թէ նա, իսկապէս, դէ՞մ է եղել իմ վարած հակաբոլշեւիկեան կռիւներին, թէ՞ ոչ:

IV

1920, Յուլիսի սկիզբները, Կարմիր բանակը գրաւեց Գորիսը, եւ նրա մի զօրամասը, Յուլիս 8ին, անսպասելիօրէն մտնելով Ղափանի նախադուռը կազմող Խոտանան գիւղը՝ կ'առաջանար դէպի Ղափանի հանքերը:

Իմ հեծելախումբը Ջալին-Գեօլի մօտ կտրեց կարմիրների ճամբան, եւ գործի դնելով մի տասնեակ պայթուցիկ տակառներ՝ հարկադրեց թշնամուն նահանջել դէպի Խոտանան:

Այդ դէպքից մի օր անց ստացուեց Կարմիր զօրքերի կոմիսարի գրութիւնը, որով կը հրամայէր «ճամբայ տալ Վերին Խոտանանում գտնուող զօրամասին անցնելու Մեղրիի վրայով՝ Օրդուբատ-Ջուլֆա»*:

Գրութիւնը յանձնուեց Ղափանի Ազգային խորհուրդին, որը Յուլիս 12ին, Առաջաձոր գիւղին մէջ, գումարեց մի արտակարգ ժողով՝ նախագահութեամբ ծանօթ Գեդէոն Տէր Մինասեանի, քարտուղարութեամբ Վ. Փարսադանեանի: Ժողովը միաձայնութեամբ որոշեց.

ա) «թոյլ չտալ կարմիրներին մտնելու Ղափան.

բ) Վերին Խոտանանը եւ նրան հետեւող միւս գիւղերը, եթէ եղան, կը համարուեն հայրենիքի դաւաճան եւ թշնամի»**:

Ստանալով շրջանի հաւաքական եւ անվերապահ կամքն արտայայտող այդ որոշումները, Յուլիս 12ին երեկոյեան Կարմիր զօրքերի պետին ուղարկեցի մի վերջնագիր - հեռանա՛լ Ղափանի սահմաններից:

Նշանակածս ժամանակը դեռ չլրացած, բոլշեւիկները խուճապահար կը փախչէին դէպի Գորիս, իրենց հետ տանելով իմ բանագնացին՝ երկրաչափ Սմբատ Մելիք-Ստեփանեանին:

---

* *Լեռնահայաստանի զինուորական շտաբի արխիւ:*

** *Ժողովի արձանագրութիւններից:*

Տեսնո՞ւմ էք, որ *առաջին գնդակը, առաջին պայթուցիկ տակառը, առաջին վերջնագիրը Կարմիր բանակին ուղղելու հերոսական որոշումը ստորագրուած է եղել նաեւ Գ. Տէր Մինասեանի կողմից:*

Առաջածորի պատմական ժողովի նախագահը, 15 տարի առաջ, «Հայրենիքի դաւաճան ու թշնամի» է հռչակած այն հայ գիւղը, ուր, հակառակ բնակչութեան կամքին, հելուզակաբար, իր ոտն էր դրել՝ քեմալականներին օգնութեան փութացող Կարմիր զօրամասը:

Իսկ այսօր, 15 տարի յետոյ, նա ելած է ուրացողաբար լիզելու իր ստորագրութիւնը՝ իր հասցէին ընդունելով իր իսկ կայացրած դատավճիռը - «Հայրենիքի դաւաճան ու թշնամի»:

* * *

Մութին մէջ, քեմալական գործակալները, կը շարունակէին իրենց հայադաւ աշխատանքները:

Պէտք էր օր առաջ Կարմիր զօրքը հասցնել Նախիջեւան:

Այդպէս կ'ուզէր Քեազիմ Գարապէքիր փաշան:

Յուլիս 29ին, Կարմիրները մեծ ոյժերով վերսկսեցին իրենց յարձակողականը Ղափանի դէմ, այս անգամ՝ արեւելքից:

Կռիւներն անհաւասար էին, կատաղի, բորբոքուն, որոնք տեւեցին 72 օր:

Հացի եւ ռազմամթերքի չգոյութեան պատճառով՝ ժողովուրդը հարկադրուեց վար դնել զէնքը եւ վերցնել մանգաղը՝ իր հունձքը հաւաքելու համար:

Սակաւաթիւ հետեւորդներով՝ ես քաշուեցի Խուստուփ լեռը:

Այս տեղ էլ մեզ հետ է Տէր Մինասեանը:

Կարմիրները, գրաւելով Ղափանը, հոգեբանական մի հեռատես հաշուով, կ'աճապարէին գրաւել Մեղրիի շրջանը - Արեւիքը եւ մեզ «սրբել, թափել Արաքս»ը, ինչպէս այդ օրերին կ'արտայայտուէր բոլշեւիկեան ռուսատառ թերթերէն «Կարմիր աւանգարդը»:

Խուստուփի վրայ թողնելով իմ մի բուռ մարտիկները, ես մեկնեցի Արեւիք՝ խորհրդակցութեան հրաւիրելու այդ շրջանի Փրկութեան կոմիտէին:

Ինձ հետ է Գողթանի վշտակիրը՝ Աշոտ Մելիք-Մուսեանը, որի նախագահութեամբ, Սեպտեմբեր 6ին, Կալեր գիւղում գումարուեց Արեւիքի ներկայացուցչական ժողովը:

Այս տեղ էլ ժողովին ներկայ է Տէր Մինասեանը:

Նա, ապագայ դաւանափոխը, ամբողջովին բաժանում է արեւիքցիների կարծիքը. աւելին, նա պահանջում է՝ «հարց տալ Բաղաբերդի

ժողովրդին, թէ ինքը ի՛նչ է ուզում. ուզո՞ւմ է մնալ հաւատարիմ իր ազատագրման, իր ինքնապաշտպանութեան գործին, թէ՞ ուզում է նետուիլ թշնամու գիրկը»*:

Արդար էր Տէր Մինասեանի զայրոյթը այն հայ գիւղախմբի դէմ, որը Ղափանի կռիւների ժամանակ, առանց ուզելու, մերկացրել էր մեր ձախ թեւը եւ այսպէսով հեշտացրել թշնամու առաջխաղացումը:

«Ազգադաւութիւն» համարելով Բաղաբերդի արարքը, նա՝ Տէր Մինասեանը, դատ ու դատաստան կը պահանջէր վերջինի համար:

Եւ ժողովը որոշեց՝ «Արեւիքը, իր ոյժերը դնելով ռազմական դրութեան մէջ, բռնում է բոլոր դիրքերը»:

Այսպէ՛ս, Արեւիքն էլ վճռեց ծառանալ Կարմիր բանակի ճամբի վրայ:

Ու այդ առթիւ մեզ հետ, բոլորիս հետ ուրա՛խ է նաեւ Տէր Մինասեանը, որն այդ օրերին որոշ առաքելութեամբ իմ կողմից ուղարկուեց Թաւրիզ:

Կարմիր բանակը չուշացաւ իր ներկայութիւնը զգացնել տալու մեզ:

Նա, գրեթէ միաժամանակ, սկսեց իր գրոհները թէ՛ Օրդուբատի եւ թէ՛ Բարթաղի կողմից: Նա ոտքի հանեց Զանգելանի ողջ թաթարութիւնը եւ Օրդուբատի թրքական ոյժերը, որոնց անվիճելի սեփականութիւնը կը համարէր Զանգեզուրը:

Կռի՛ւ էր, կռիւ, որի նմանը քիչ անգամ են տեսնում պատերազմող կողմերը:

Թշնամին կաշուից դուրս էր գալիս Արեւիքի, որ ասել է՝ մեր դիակների վրայով միանալու քեմալականներին:

Արեւիքի հերոսական որդիները գերազանցեցին ամէն ակնկալութիւն, թշնամուն զարմանք, հարեւան Պարսկաստանին հիացում պատճառելով:

Վերջապէս, ջարդուեց թշնամին, եւ անփառունակ կերպով իր ոյժերի բարոյալքուած մասը փախցրեց Ղափան:

Հայ զէնքի այդ փայլուն յաջողութեամբ ես կարելիութիւն ստացայ՝ ծրագրել ու գործադրել Ղափանի վերագրաւումը:

Այժմ մերն է ե՛ւ Ղափանը:

Էլեկտարականացած է լեռնահայութիւնը, սարսափած՝ Կարմիր բանակը:

Ահա՛ ռազմական այդ վայրկեանը բնորոշող մի հատուած 28-րդ Կարմիր հրացանաձիգ դիւիզիայի պետ Նեստերովսկու հրամանագրէն.**

---

* *Ժողովի արձանագրութիւններից: Լեռնահայաստանի զինուորական շտաբի արխիւ:*

** *Լեռնահայաստանի զինուորական շտաբի արխիւ:*

- Համարեայ ամբողջ Զանգեզուրում բռնկուել է ապստամբութիւնը:

Ապստամբած հայերը գրաւել են Անգեղակոթը, Ղարաքիլիսան, ամբողջ Ղափանի շրջանը եւ Օխչի եւ Մեղրի չայի աւազանները:

Նիւվադի գիւղի շրջանում գործող 252-րդ հրացանաձիգ եւ կովկասեան երկրորդ գնդերի հետ ունեցած կապը խզուած է:

Ղափանի աննշան զօրամասը շրջապատուած է, նրա վիճակը անյայտ է:

25-րդ հրացանաձիգ գունդը կռւում է թշնամու հետ Տանձաւերից դէպի հարաւ գտնուող Ինջաբելի բարձունքներում:

20-րդ դիւիզիայի կովկասեան բրիգադային հրամայուած է Արաքսի ափով առաջանալ եւ Հոկտեմբեր 16ին լինել Նիւվադիի շրջանը, ուր իրեն ենթարկելով 252-րդ հրացանաձիգ եւ կովկասեան երկրորդ գնդերը, վճռականութեամբ եւ դաժանութեամբ ջարդել Նժդեհի բանդաները*:

Այդ գործողութիւնից յետոյ, հարուածելով Ղափանի շրջանը, վերջ տալ ապստամբութեան:

Մեր դիւիզիային հրամայուած է՝ պատրաստել հարուածող բռունցք, ուժեղ թափով ջնջել ապստամբութիւնը, կենդանի բաց չթողնելով ոչ մի բանդիտի, կանգ չառնելով ամբողջ գիւղեր աւարի ենթարկելու առաջ, յիշելով այն, որ *աններողամտութիւնն ու դաժանութիւնը նամանաւանդ Կովկասի մէջ կը հասցնեն լաւ հետեւանքի:*

Գրաւուած գիւղերի մէջ սովէն ապահովել զօրամասերը ի հաշիւ ապստամբների»:

* * *

Կարդացիք կարմիր զօրավարի հրաման-մարտագիրը, լսեցիք նրա խօսքի անշանթ ամպրոպները:

Մարդկային խօսքն իր հոգեբանութիւնն ունի:

Այդ հրամանը մատնում է իր հեղինակին - հրամանատարին:

Անզօր «լենկթեմուրականութիւն» շնչող այդ մարտագիրը մատնում է այն խուճապային ու սարսափահար հոգեվիճակը, որ այդ օրերին ստեղծուած էր գլուխը կորցրած կարմիր զօրահրամանատարութեան մէջ:

Մեր զէնքի յաջողութեան լուրը կ'արձագանքէր անգամ Թուրքիայէն:

Ահա՛ թէ ի՞նչ է ասում բժ. Արտաշէս Բաբալեանը «Մի տարի գերութեան մէջ» իր յօդուածաշարքում.

- Նորէն կենդանութիւն առաւ Եակուտիէն:

Մեզնով սկսան հետաքրքրուիլ:

---

* *Լեռնահայաստանի զինուորական շտաբի արխիւ:*

Յաճախ գալիս էր գնդապետ Էմին բէյը եւ կարդում մեզ Զանգեզուրի դէպքերի մասին տեղեկագիրներ:

Նա ոգեւորուած՝ պատմում էր մեզ հայերի քաջութեան մասին:

Պաշտօնական զեկոյցները այլեւս չէին ասում «դաշնակները քաջութեամբ յետ մղելով թշնամու յարձակումները, ջարդեցին բոլշեւիկեան գնդերը եւ մեծ քանակութեամբ ռազմամթերք ու գերիներ վերցրին»*:

Այդ օրերին է՛լ մեզ հետ է Տէր Մինասեանը - անշուշտ, ի հեռուստ:

Մեր նոր յաղթանակներով գինովցած՝ նա գրում է. *«Սիրելի՛ Գարեգին, եպիսկոպոսը եւ ամբողջ գաղութը խորապէս գնահատում են քո եւ Ղափանի ժողովրդի հերոսական կռիւները՝ Ղափանի ազատագրման գործում:* Թաւրիզ, 23 Սեպտ. 1920»:

Հասնում է նրա երկրորդ գրութիւնը. «Սիրելի՛ Գարեգին, այսօր ցնծում է ամբողջ Թաւրիզը՝ Մեղրու եւ Ղափանի յաջողութեան լուրերով:

Ղափանի վերագրաւումը եւ ձեռք բերուած զինամթերքի եւ աւարի լուրը ուղղակի յուզեցին մեզ, բոլորիս:

Ամենուրեք, ամէնքի բերանում հոլովւում է Նժդեհի անունը:

Մեր սիրտը պայթում է, որ այդ պատմական րոպէներին քո կողքին չենք:

Է՛հ, Գարէ՛ ջան, յաջողութի՛ւն քո սկսած գործին եւ բարի ելք: Համբոյրներով՝ միշտ յարգող եւ սիրող Գ. Տէր Մինասեան: Թաւրիզ, 16 Հոկտ. 1920: Յ. Գ. Ներսէս սրբազանը, օգտուելով առիթից, օրհնում է քեզ, քո քաջարի զօրքին, եւ համբուրում քո ճակատը»:

Ահա՛ Տէր Մինասեանը, երբ դեռ ծախուած չէր թրքօ-բոլշեւիզմին, երբ դեռ հայ էր եւ մարդ:

Ըստ իր վկայութեան՝ իմ գործը ազատագրական էր, իմ վարած կռիւները՝ հերոսական:

Նրան յուզմունք ու ցնծութիւն է պատճառել իմ ամէն մի յաղթանակը: Նրա «սիրտն է պայթում», որ «այդ պատմական վայրկեաններին» իմ կողքին չէ:

Եւ, այդ բոլորից յետոյ, հաշտուել այն մտքի հետ, թէ իմ վարած ամենաօրհասական կռիւների օրերին, իր ծննդավայրէն – վտանգի, կրակի, մահուան գծէն դուրս գտնուող իմ խնկարկուն, մի օր, շնութիւն կ'ունենար հաջելու «ամենուրեք, ամէնքի բերանում հոլովուող» անունի դէմ…

Չէ՛, չէ՛, նման անկումների հետ մարդկօրէն չէ՛ կարելի հաշտուել:

---

* *«Հայրենիք» ամսագիր, Բ. տարի, 1924, թիւ 7:*

* * *

Ամրանալով Ղափանում, գալիք արիւնայեղութիւններից խուսափելու ցանկութեամբ, կարմիր զօրահրամանատարութեան յղեցի հետեւեալ վերջնագիրը. «Ձեր զօրքերի ներկայութիւնը Սիւնիքի սահմաններում այլեւս անհանդուրժելի է: Հրամայում եմ, եթէ չէք ուզում XI բանակի մնացորդներն էլ կոտորածի եւ գերութեան մատնել, անմիջապէս դատարկել Զանգեզուրը. հակառակ դէպքում, ստիպուած կը լինեմ կռուով տիրել ձեր ձեռքում գտնուող երկրամասին»:

Իմ այդ վերջնագրին խորհրդային զօրահրամանատարութիւնը պատասխանեց սրով, ուղարկելով իմ դէմ Բաքուէն հասած նոր ոյժեր – թրքական գունդը՝ Զաւալ փաշայի հրամանատարութեամբ եւ հռչակաւոր Կուրոչկինի հեծեալ բրիգադան:

Տաթեւի եւ Գորիսի միջեւ, եռաբլուր դաշտի վրայ, տեղի ունեցաւ մեր վերջին վճռական ճակատամարտը, որի ընթացքում Կարմիր բանակը մի անգամ էլ զգաց Սիւնիքի զարկերի թափը:

Իմ վաշտերը, թրքական դիակներ կոխելով, մտան Գորիս:

Վիրաւորուած ու գերի է նաե՛ւ Զաւալ փաշան:

Ազատագրուած՝ ցնծում է ողջ Զանգեզուրը:

* * *

«1920թ. Դեկտ. 25ին Զանգեզուրի հայ ժողովրդի ցանկութեամբ, Տաթեւի պատմական վանքում կայացաւ համազանգեզուրեան համագումարը, ուր ներկայ էին Զանգեզուրի բոլոր շրջանների 69 գիւղօրայքից ընտրուած եւ ուղարկուած 100 պատգամաւորները, Զանգեզուր-Գողթանի սպարապետ Նժդեհը, Զանգեզուրի բոլոր շրջանային խորհուրդների 15 ներկայացուցիչները, ընդամէնը 118 հոգի: Կէսօրուայ ժամը 2ին ժողովը բացում է բուն Զանգեզուրի գիւղացիական ժամանակաւոր խորհրդի նախագահ Տ. Մելիք-Հուսէինեանը՝ եւ առաջարկում ընտրել համագումարի դիւանը:

Ձայների մեծամասնութեամբ ընտրւում են. նախագահ՝ Եգոր Յարութիւնեան եւ Տիգրան Մելիք-Հուսէինեան, քարտուղարներ՝ Սամուէլ Մաշուրեան եւ Նիկոլայ Դօրոնց:

Նախագահը, նիստը բաց յայտարարելուց յետոյ, համառօտ կերպով բացատրում է համագումարի պատմական նշանակութիւնը եւ առաջարկում է անցնել օրակարգի հետեւեալ հարցերի քննութեան.

1) Զեկուցում Հայաստանի քաղաքական կացութեան մասին եւ համագումարի բռնելիք դիրքը:

2) Ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւը:
3) Իշխանութեան կազմակերպումը:
4) Սպարապետի հրաւիրումը:
5) Ինքնավար Սիւնիքի խորհրդարանի դիւանի ընտրութիւն:
6) Իշխանութեան կենտրոնատեղի:
7) Փոխ յարաբերութիւններ՝
ա) Հայաստանի Հանրապետութեան,
բ) Ադրբէջանի Հանրապետութեան,
գ) Պարսկաստանի կառավարութեան,
դ) հարեւան թուրքերի հետ, եւ այլն:

* * *

«Մի շարք ներկայացուցիչների երկար եւ բազմակողմանի արտայայտութիւններից յետոյ, համագումարը երկար ծափահարութիւններով եւ «հուրրա»ներով, միաձայն ընդունում է հետեւեալ բանաձեւը.

«Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիութիւնը, շնորհիւ մի շարք տականքների եւ ազգուրացների, որոնց հրաւիրանօք, առանց ազգաբնակութեան կամքը եւ ցանկութիւնը հարցնելու, Զանգեզուր մտան սովետական զօրամասերը, 5 ամսուայ ընթացքում դատարկեց դառնութեան բաժակը մինչեւ նրա վերջին կաթիլը: Սովետական հրամանատարութիւնը հէնց առաջին քայլից գաւառիս գիւղացիութեան նկատմամբ սկսեց իր աւերիչ, քայքայիչ քաղաքականութիւնը, որի առաջ նսեմանում են պատմական Լենկթեմուրեան եւ Արեւելքի բարբարոսների արշաւանքներն ու գործելակերպը:

Հայ աղքատ գիւղացիութեան տնտեսապէս քայքայուած շրջանում նա որոնում էր բուրժուական տարրեր եւ կապիտալիստների դէմ մղուելիք քաղաքականութիւնը գործադրում աղքատ, անօգնական գիւղացիների եւ այրի կանանց դէմ:

Նա խլեց մեր վերջին պատառ հացը, տարաւ մեր աղքատ գիւղացու միակ եզը, կովը, ձին ու աւանակը, գրաւեց մեր անասունների կերը, եւ թողեց մեզ մերկ եւ զուրկ ամէն ինչից:

Սովետական հրամանատարութիւնը, մոռացած իր ժողովրդասիրական մի շարք փքուն լօզունգները, աւերեց, հողին հաւասարացրեց մեր գիւղերը, եւ իր գրաւածների հանդէպ մեզ չտուաւ մի թել անգամ:

Նա անկարող եղաւ ամբողջ Զանգեզուրին տալ մի գրուանքայ նաւթ անգամ, չնայելով մեզ նաւթ, մանուֆակտուրա եւ այլ մթերքներ տալու խոստումներին: Այս բոլորից յետոյ մենք համոզուեցինք, որ սովածների այդ բանակը եկել էր միմիայն յափշտակելու մեր կեանքը եւ գոյքը, թալանելու մեզ եւ ի սպառ ոչնչացնելու:

Սովետական կառավարութիւնը իրեն յատուկ արեան բաղնիքներ սարքեց մեր գիտակից երիտասարդների նկատմամբ եւ տասնեակներով կոտորեց նրանց, չխնայելով մեր գրական վաստակաւոր գործիչներ Խորէնուն, Շիրինեանին եւ տարիներ շարունակ բանտերում տառապած Սաքօներին յոշոտելուց: Առանց քննութեան եւ որոշ մեղադրանքների մեր ռանչպար գիւղական երիտասարդներից տասնեակներ գլխատուեցան եւ փոսերը թափուեցան, եւ վերջում իր հայակործան յաղթանակը կամենալով առաջ տանել, մեր գաւառը մտցրեց 1000-ով տաճկական ասկեարներ, որոնք իրենց հայու Աստուած էին անուանում:

Սովետական կառավարութիւնը, մոռանալով տաճկական դարաւոր հայաջինջ քաղաքականութիւնը հայ ժողովրդի նկատմամբ, դէպի հայ գիւղերը ուղղեց տաճկական ասկեարներին, որոնք Քարահունջ, Խոտ, Շինուհայր, Հալիձոր, Եայջի, Զէյվա եւ ուրիշ գիւղերում իրենց բարբարոս եւ գազանային ինստինքները գործադրեցին հայ կնոջ եւ կոյս աղջիկների վրայ, նրանց պատիւը ոտի տակ տալով:

Կոխոտեցին, ցեխի հաւասարեցրին մեր պապեկան ամէն տեսակի սրբութիւն, եկեղեցի, ընտանեկան պատկառանք եւ պատիւ:

Սովետական կառավարութիւնը իր ալան-թալանը, իր ճնշումները, իր բռնութիւնները եւ տարածուած սիֆիլիսը կատարեալ կերպով առաջ տանելու համար եւ վախենալով ժողովրդական բռնկումներից, հարիւրաւոր անմեղ մարտիկներ բանտ ձգեց ու խեղդեց, սպառնալով ազգաբնակութեան իր տեռորներով որեւէ ցոյցի եւ ապստամբութեան դէպքում կոտորելու նրանց:

Զանգեզուրի աշխատաւոր գիւղացիութիւնը չկարողանալով տանել նման բարբարոսութիւնները, որոշեց դուրս վռնդել սովետական Ռուսաստանի զօրքերին եւ նրա դիմակի տակ թաքնուած ադրբէջանեան վարձկաններին, որոնք աւերեցին իր երկիրը, եւ ազատեց իր օջախն ու պատիւը: Տարւոյս Հոկտեմբեր 10ից սկսած ապստամբական դրօշ պարզելով՝ իր սիստեմատիկ բռնկումներով մինչեւ տարւոյս Նոյեմբեր 21ի գիշերը դուրս քշեց իր սահմաններից անկոչ այդ զօրամասերը, որոնք իրանց հինգամսեայ ներկայութեամբ նրան կորստեան դուռը հասցրին:

Սովետական Ռուսաստանն ու Ադրբէջանը չբաւականանալով այս ամէնից, ցանկացան գլխատել ու ի սպառ ոչնչացնել հայ ժողովուրդը եւ ներս հրաւիրեցին տաճկական հորդաներին Քեմալի գլխաւորութեամբ Հայաստան, եւ Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու այսպէս կոչուած «խորհրդային» իրաւակարգը, մի ռեժիմ եւ ծրագիր, որոնց չէ կարող այլեւս հանդուրժել թէ՛ մեր երկիրը եւ թէ՛ բովանդակ հայ ժողովուրդը:

Ի նկատի առնելով վերոյիշեալները, եւ այն, որ Զանգեզուրը երեք

տարուց ի վեր ապրել է իր ներքին ուրոյն կեանքով եւ շարունակելու է մնալ նոյնը, համազանգեզուրեան համագումարը իր սոյն օրուայ նիստում որոշեց.

1) Զանգեզուրը յայտարարել ժամանակաւորապէս ինքնավար, մտցնելով հանրապետական իրաւակարգ, լինելով անկախ մինչեւ քաղաքական հնարաւորութիւն կ'ունենայ միանալու իր մայր երկրին՝ Հայաստանին:

- Ինքնավար Սիւնիքի սահմաններն են Զանգեզուրի նախկին սահմանները:

2) Համագումարը լսում է շրջանային խորհուրդների համառօտ զեկուցումները եւ դիտողութիւնները իրենց գործունէութեան մասին եւ առնում է ի գիտութիւն:

3) Մտքերի փոխանակութիւններից յետոյ համագումարը միաձայն ընդունում եւ հաստատում է ինքնավար Սիւնիքի կառավարութեան ձեւի հետեւեալ գլխ. կէտերը.

- Սոյն համագումարը ճանաչել ինքնավար Սիւնիքի բարձր օրէնսդրական մարմին-պարլամենտ, որին վերապահել Սիւնիքի բաղդի լիակատար տնօրէնութիւնը:

ա) Համագումարը միաձայն որոշում է հրաւիրել իր ազատարար, իր հերոս Նժդեհին որպէս Սիւնեաց սպարապետ եւ բուռն ծափահարութիւններով իր կատարեալ վստահութեան քուէն տալով, նրան իր բաղդն է յանձնում:

բ) Զինուորական բոլոր տեսակի գործերը տարւում են սպարապետի ղեկավարութեամբ, որը այդ մասին իրազեկ է դարձնում պրեզիդիումին:

գ) Ինքնապաշտպանութեան հարցի վերաբերեալ բոլոր միջոցների ձեռնարկումը եւ գործադրութիւնը թողնել սպարապետի կարգադրութեանը»…

* * *

Այդ պատմական համագումարը, որին նախագահեց Գ. Տէր Մինասեանը, անվերապահ կերպով կը հաստատէ որ՝

ա) Սովետական զօրքերը մտել են Զանգեզուր առանց ազգաբնակութեան կամքն ու ցանկութիւնը հարցնելու:

բ) - Սովետական հրամանատարութեան քաղաքականութիւնը եղել է «աւերիչ, բարբարոս, լենկթեմուրեան:

գ) Սովետական իշխանութիւնը ստեղծած է արեան բաղնիքներ:

դ) Բոլշեւիկները 1000ով տաճկական ասկեարներ են մտցրել Զանգեզուր, եւ որ

ե) Տաճկական հորդաներին Հայաստան հրաւիրեցին Ռուսաստանն

ու Ադրբէյջանը, եւ Ալեքսանդրապոլի պատերի տակ ստիպեցին Հայաստանին ընդունելու խորհրդային իրաւակարգը:

Ահա սովետների դէմ ուղղուած այն ծանրածանր, այլ արդար մեղադրականը, որ հաստատուած է Տէր Մինասեանի նախագահական ստորագրութեամբ:

Նկատեցիք, անշուշտ, որ համագումարի բոլոր որոշումները առնուած են բացարձակ քուէով, միաձայնութեամբ:

Տեսաք, այստեղ էլ մեզ հետ է ուրացութեան թեկնածուն, ergo, նա դեռ թշնամի է խորհ. իշխանութեան: Այս էր, ընթերցո՛ղ, հացի համար այսօր պատմութիւնը խեղաթիւրելու հարկադրուած թշուառականը 15 տարի առաջ, երբ դեռ չէ՛ր խորհում, չէ՛ր զգում, չէ՛ր գործում կարմիր փայտիկի շարժումով, երբ դեռ ընդունակ էր հերոսական որոշումներ ստորագրելու եւ հերոսներ դափնեպսակելու:

Ահա, որպէս հոգեբանական արձագանգ, Տէր Մինասեանի խմբագրականը* այդ համագումարների մասին.

«Ապրիլ 27-ը հայ իրականութեան պատմական օրերից մէկն է. այդ օրն էր, որ մարդկութեան քաղաքակրթութեան ոխերիմ թշնամիների, ռուս բոլշեւիկների անարգ լծից ազատուած Լեռնահայաստանի գիւղացիութիւնը եկաւ անվարան եւ առաւել քան երբեք վճռական՝ մի անգամ եւս յայտնելու աշխարհին իր ազատ եւ անկախ ապրելու կամքը:

Տաթեւի հնամենի կամարների տակ՝ ուր թերեւս ապրում է մեր անյաղթ նախահայրերի, Դաւիթբէգերի եւ նմանների ըմբոստ ոգին, Սիւնիքի եւ Վայոց Ձորի քաջամարտիկ որդիները, գիտակից որպէի լրջութեան, ընտրեցին իրանց համար նոր կառավարութիւն, խոստանալով տալ նրան ամէն աջակցութիւն, վերջնական յաղթանակը ձեռք բերելու համար:

Երկրի ղեկը յանձնուել է եւս այն անձնաւորութեան, որը այլեւս ոչ մէկ դափնիի չի կարօտում, ապացուցելու համար, որ ինքը արժանի եւ զտարիւն յաջորդն է այն քաջերի սերունդի՝ որ դարերի ընթացքում ապրեց ու պայքարեց այս աննուաճ լեռներում եւ երկու սրբութիւն միայն ճանաչեց, նախ անհուն սէր եւ պաշտամունք դէպի ժողովուրդը եւ յետոյ նոյն ինքն այդ ժողովրդի ազատութիւնը՝ որի համար ոչինչ չխնայեց»…:

Տէր Մինասեանի գրչին են պատկանում նաեւ հետեւեալ տողերը.

«Մեր քերթողահայր Խորենացու նկարագրութեան համաձայն, դիւցազն Վահագնի առասպելական ծնունդը յայտնի պիտի լինի ամէն մի հայ գրագէտի, թէ ինչպէս երկնքի եւ երկրի ու ծիրանի ծովի բռնուած երկունքից ու բոցավառ եղէգնից ծնուեց մանուկ Վահագնը:

---

* *«Ազատ Սիւնիք»:*

Ինքնավար Սիւնիքի ազատ եւ անկախ կառավարութիւնը եւս պակաս հրաշքով եւ առասպելական երեւոյթներով չծնուեց ու գոյութիւն ստացաւ:

Զանգեզուրի գիւղացիութիւնը իր տառապանքների, իր տուած զոհերի եւ իր վերջին արեան բաղնիքների եւ Բարդողիմէոսեան գիշերներով ծնեց ինքնավար Սիւնիքը, ու գերազանցօրէն անհաւասար ոյժերի դէմ կռուելով եւ մաքառելով, դաւաճան եւ մատնիչ հարազատի դէմ ծառանալով ու յաղթելով, նա, Զանգեզուրը եւս անցաւ առասպելական ու գիւղացիների յատուկ պատմութեան շարքը»…

* * *

Ազատ ու ինքնավա՛ր է Սիւնիքը:

Յաղթական՝ նա իր վաշտերն է հասցրել Լեռնային Ղարաբաղ: Լոյս է տեսնում Սիւնեաց կառավարութեան անդրանիկ կոչը, խմբագրուած Տէր Մինասեանի կողմից.

«Հա՛յ ժողովուրդ,

Ամսոյս 21ին, Գորիսի Սուրբ Լուսաւորիչ եկեղեցում, հանդիսաւոր մաղթանքից յետոյ, ժողովրդի հոծ բազմութեան եւ զինուորական վաշտերի ներկայութեան, օծուեցաւ Սիւնիքի կառավարութեան կողմից սպարապետին տրուելիք գօտին եւ դրօշակը, որից յետոյ նախագահը օծած գօտին կապեց սպարապետի մէջքը եւ դրօշակը յանձնեց նրան:

Հա՛յ ժողովուրդ, այդ օրը եւ այդ փառաւոր տօնը եզակի տեղ պիտի ունենայ Սիւնիքի համար:

Կառավարութիւնս ժողովրդի անունով յանձնելով սպարապետին ազատ Սիւնիքի եռագոյն դրօշակը, դրա հետ նրան յանձնեց եւ մեր քաղաքական բաղդը, Ձեր պատուի, նամուսի պաշտպանութիւնը, համոզուած լինելով, որ ձեր սպարապետը, ինչպէս մինչեւ այսօր, այնուհետեւ եւս, իր հերոսական քաջութեամբ, կը շարունակէ փառաւոր յաղթութիւններով ապացուցել աշխարհին, որ հայ ժողովուրդը տոգորուած ազատ եւ անկախ հայրենիք ունենալու տենչով, պատրաստ է զոհաբերել այն ամէնը, ինչ որ հարկաւոր կը լինի հասնելու ցանկացած նպատակին:

Սպարապետն ընդունելով Սիւնիքի պաշտպանութեան դրօշակը, ուխտեց եւ երդուեց՝ միշտ բարձր պահել կառավարութեան եւ ժողովրդի կողմից իրեն յանձնուած դրօշակը:

Սիւնիքի՛ ժողովուրդ, բոլորուեցէ՛ք Ձեր սիրելի սպարապետի շուրջը, թեւ ու թիկունք հանդիսացէք նրան, որ կարողանայ կատարել այն ծանր պարտականութիւնը, որը դրուած է նրա վրայ Ձեր եւ հայրենիքի կողմից:

Կեցցէ՛ Սիւնիքի ազատարար Նժդեհը, կեցցէ՛ Սիւնիքի ազատասէր հայ ժողովուրդը:

1921. Փետր. 23ին, Գորիս»:

Այդ կոչից ընթերցողը կ'եզրակացնէ, որ

ա.- Սպարապետը հերոսական քաջութեամբ է վարել Սիւնիքի կռիւները.

բ.- Նա ազատարար է.

գ.- Առ այդ՝ կառավարութիւնը որոշած է իր եւ ժողովրդի անունից սպարապետին յանձնել Սիւնիքի եռագոյն դրօշակը.

դ.- Սպարապետին տրուելիք դրօշակն ու գօտին օծուած են ժողովրդի հոծ բազմութեան եւ զինուորական վաշտերի ներկայութեան.

ե.- Եւ որ նախագահը՝ Գ. Տէր Մինասեանն է գօտին կապել սպարապետի մէջքը եւ դրօշակը յանձնել նրան:

Ա՛յս է պատմական իրողութիւնը:

Սակայն, տարիներ յետոյ, Տէր Մինասեանը բոլշեւիկին յատուկ շնականութեամբ պէտք է ուրանար նրան տրուած դրօշակը ու հայհոյէր իր ազատարարին:

Աւելի՜ն՝ նա պէտք է խեղաթիւրէր մեր երէկուայ պատմութիւնը:

V

Անցքերն արագօրէն կը յաջորդէին իրար:

Քեմալական զօրքերը կը նեղէին Հայաստանը: Մոսկուայի հրաւէրով, թուրք բանակը հրով եւ սրով կը մտնէր Հայաստան, եւ նրա առջեւից դաւաճանաբար, որպէս փողհար եւ մունետիկ, կ'ընթանար մեր ցեղի տականքը:

Մեր ժողովրդի դիմադրական կորովը հարուածելու ցանկութեամբ՝ կոմունիստական կուսակցութեան Ալեքսանդրապոլի գաւառական կոմիտէն՝ հայ զինուորների մէջ կը ցրէր հետեւեալ կոչը. «Զինուորնե՛ր, գիւղացինե՛ր եւ գաղթականնե՛ր, դաշնակցական խայտառակ կառավարութեան խմբապետներից կազմուած զօրքը նահանջում է Քեմալի զօրքերի ահաւոր յարձակումից... Բաւական չէ, որ նրանք հայ աշխատաւոր ժողովրդի գլխին չարիք դարձան, այժմ էլ խաբում են ձեզ՝ ասելով, թէ գալիս են թուրքերը հայ աշխատաւորութեանը թալանելու եւ կոտորելու:

Մենք կոչ ենք անում ձեզ՝ չհաւատալ դաշնակների հազարաւոր սուտերին, որովհետեւ եկողները ոչ թէ թալանչի աւազակներ են, այլ՝ գիւղացիների, զինուորների եւ բանուորների ընկերներ՝ թուրք աշխատաւորներ:

Նրանք գալիս են ոչ թէ ձեզ կոտորելու, այլ՝ թալանչի դաշնակների ձեռքից ձեզ ազատելու:

Դուք լաւ հաւատացէք, որ Կարսում, Ալեքսանդրապոլում եւ գրաւուած միւս տեղերում նրանք ո՛չ թալանել են եւ ո՛չ էլ կոտորել, այլ՝ հաստատել են բանուորա-գիւղացիական կարգ ու կանոն…: Նորից կոչ ենք անում ձեզ՝ տեղերից չշարժուել, մնալ հանգիստ, չգաղթել…: Կոչ ենք անում բոլորիդ այժմ հաւաքուելու բոլշեւիկների դրօշակի տակ, որոնք միայն կարող են ձեզ փրկել»…*:

Այսպէ՛ս, Մոսկուան այսպէս կը բոլշեւիկացնէր հայ գիւղացիութիւնը՝ իր առջեւից քեմալական սուրն ու սարսափը քշելով:

Նա ո՛չ թէ հեշտացրեց թրքական առաջխաղացումը, այլ եւ հրէշային պրովոկացիաներով մոլորանքի ու տատանումի մատնեց յանկարծակիի եկած հայութիւնը:

Նա տմարդօրէն կը խաբէր, յայտարարելով, թէ թուրքերը Կարսում խորհրդային կարգ ու կանոն են հաստատել:

Եւ խաբուելով՝ չկռուեց, չգաղթեց հայութիւնը - մնաց ու քեմալական սուինների հարուածների տակ իր քաղաքական միամտութիւնը քաւեց:

Թուրքերն անցան Արփաչայն ու Ախուրեանը եւ մտան Ալեքսանդրապոլ:

Եւ հարաւէն ու հիւսիսէն արշաւող թրքօ-բոլշեւիկ բանակների հարուածների տակ, 1920, Դեկտ. 2ին, Հայաստանի կառավարութիւնը մեր երկրի իշխանութեան ղեկը յանձնեց բոլշեւիկներին:

«Յեղափոխական» Մոսկուան այսպէ՛ս վարուեց մանուկ Հայաստանի հետ:

Նա՝ իսլամ Արեւելքը դաշնակիցների դէմ զօրաշարժելու փոխարէն, թուրքն ու թաթարը շարժեց «դաշնակ Հայաստան»ի դէմ, բաժանեց, կիսեց դա, առիւծի բաժինը թողնելով թուրքերին:

Հասկանալի է, որ Հայաստանի անկումով Սիւնիքի դրութիւնը աւելի եւս պիտի ծանրանար:

Այժմ դա կտրուած էր ամբողջ աշխարհից: Դա մենակ էր այժմ, ողբերգօրէն մենակ, մենակ քաղաքականապէս, անզինակից՝ կռուադաշտում:

Մայր երկրի անկման նախօրեակին՝ մարտնչող Սիւնիքի համար հաց ու ռազմամթերք ճարելու առաքելութեամբ Երեւան ուղարկուած մեր դժբախտ Աշոտը կը վերադառնար ձեռնունայն, մեզ բերելով Հայաստանի պարտութեան ու խորհրդայնացման գոյժը:

Աշոտի հետ, գրեթէ միաժամանակ, 1920, Դեկտ. 16ին, ուղիղ հեռագրաթելով կը հասնէր խորհրդային Հայաստանի զինուորական կոմիսար Աւիս Նուրիջանեանի եւ Դրոյի կոչը՝ ուղղուած Սիւնիքի գիւղացիութեան եւ հրամանատարութեան:

---

* *Լեռնահայաստանի զինուորական շտաբի արխիւ:*

Ահա՛ նրա մի հատուածը. «Թող յայտնի լինի բովանդակ Զանգեզուրին, որ Հայաստանը յայտարարուած է սովետական յեղափոխական հանրապետութիւն: Հին կառավարութիւնը նետել էր երկիրը արեան ու արցունքի անդունդը: ...Ձեր ժողովրդի միակ փրկութիւնը կախուած է Կարմիր բանակի եւ Սովետական Ռուսաստանի օգնութիւնից: Սովետական Ադրբէյջանը զիջել է Սովետական Հայաստանին Զանգեզուրը, Ղարաբաղն ու Նախիջեւանը: ...Քաղաքական հակառակորդներից ոչ ոք չէ հետապնդւում, բացի հին կառավարութեան անդամներից, որոնք Յեղկոմի ձեռքով ձերբակալուած ու յանձնուած են ժողովրդական դատի: Մենք կոչ ենք անում Զանգեզուրին Խորհրդային Հայաստանի իշխանութեան դրօշի տակ կանգնել, մերձանալ Ռուսաստանին եւ Ադրբէյջանին»...

Աւիս-Դրոյի այդ կոչով սկսուեց բանակցութիւնների երկրորդ շրջանը:

Այժմ Խորհրդային Հայաստանի կառավարութիւնը կ'աշխատէր հեշտացնել Կարմիր բանակի գործը:

Այլեւս մեզ հետ գործ ունէին «Հայ» մարդիկ:

Այլեւս մեզ հետ կը խօսէին հայերէն, Երեւանից եւ ոչ թէ թաթար Բաքուից:

Բայց եւ այնպէս կը դժուարանայինք հաւատալ բոլշեւիկների խօսքին:

Չէր կարելի հաւատալ, չէինք հաւատում, որովհետեւ հազարումէկ առիթներ էինք ունեցել համոզուելու, որ բոլշեւիկը թրքօրէն նենգ է:

Մտնելով Բաքու՝ Կարմիր բանակը հայկական Ղարաբաղն ու Նախիջեւանը յայտարարած էր «ադրբէյջանեան գաւառներ»:

Այդ դէպքից հինգ ամիս յետոյ, երբ պէտք էր խաբեպատիր խոստումներով կաշառել մեզ՝ կարմիրները լեռնահայութեան մէջ ցրած թռուցիկներով միեւնոյն մեր հողամասերը թուղթի վրայ յայտարարեցին Հայաստանի անբաժան մասը:

Սակայն, ամրանալով Հայաստանում, նրանք թքեցին իրենց յայտարարութեան վրայ - Ղարաբաղը կցելով Ադրբէյջանին, իսկ Նախիջեւանը դարձնելով «Նախկրայ» - առանձին «գրպանային հանրապետութիւն», ենթակայ Ադրբէյջանի քաղաքական թեւարկութեան:

Աւելի՛ն կայ:

Հայաստանի նախկին կառավարութեան եւ Մոսկուայի ներկայացուցիչ Լեգրանի միջեւ 1920, Օգոստ. 10ին կնքուած պայմանագրի ոյժով, խորհրդային իշխանութիւնը Սիւնիքն էլ հռչակած էր ադրբէյջանեան հողամաս:

Ահա՛ թէ այդ առթիւ ի՛նչ է ասում կարմիր 28-րդ հրաձիգ դիւիզիայի քաղաքական բաժինը. «Ռուս Կարմիր բանակը, որ ջարդեց բարոն Վրանգելի տասնեակ հազարաւոր ճերմակ գվարդիայի բանդաները,

կարող կը լինի պաշտպանել նաեւ Սովետական Ադրբէյջանը*:

Իսկ կարմիր ռազմաճակատամասի պետ Սիմէոնովը, ընդունելով Ադրբէյջանի իրաւունքն ու գերիշխանութիւնը Սիւնիքի վրայ, իր 1920, 26 Նոյ. պաշտօնագրով կը յայտնէր ինձ. «Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. Կարմիր բանակի զին. հրամանատարութիւնը եւ Ադրբէյջանի սովետական իշխանութիւնը երաշխաւորում են կատարեալ ապահովութիւն հայ ժողովրդի խաղաղ աշխատանքի եւ ապստամբներին անարգել վերադարձ իրենց բնակավայրերը»:

Ինչ խօսք, որ Սիւնիքը բնա՛ւ տրամադիր չէր օտար երկրամասեր նուաճելու:

Նա իր անդրանիկ համագումարում յայտարարած էր, թէ «ինքնավար Սիւնիքի սահմաններն են նախկին Զանգեզուրի սահմանները»:

Այդ այդպէս լինելով հանդերձ, Կարմիր բանակը, որ փաստօրէն դրուած էր Ադրբէյջանի կառավարութեան տրամադրութեան տակ, կը շարունակէր Զանգեզուրը համարել Ադրբէյջան, եւ նրա նկատմամբ հետապնդել նուաճողական քաղաքականութիւն:

«Հաշտութեան» դիմումները Կարմիր բանակի կողմից կը շարունակուէին:

1920, Նոյ. 26ին, Սիմէոնովը կառաջարկէր՝ 1- «դադարեցնել ռազմական գործողութիւնները, եւ դիմել բանակցութիւնների, 2- բանակցութիւններ վարելու համար ուղարկել ներկայացուցիչներ Զաբուղ գիւղը, ուր ձեր համաձայնութիւնը ստանալուց յետոյ կու գան Ռ.Ս.Ֆ.Ս.Հ. Կարմիր բանակի ներկայացուցիչները»:

1921, Յունուար 22ին, N բրիգադայի հրամանատար Սիմէոնովը կը գրէր ինքնավար Սիւնիքի կառավարութեան. «Հետեւելով իմ գաղափարներին, ես առաջարկում եմ ձեզ, դադարեցնել ամէն տեսակի ռազմագործողութիւններ, կապ հաստատել մեզ հետ եւ փոխադարձաբար գտնել ընդհանուր լեզու»**:

1921, Յունուարի մէջ, Սիւնիք կը ժամանէր Կարմիր բանակի կողմից ուղարկուած Գր. Վարդանեանի պատուիրակութիւնը, բերելով իր հետ հետեւեալ առաջարկութիւնները՝ 1 - դադարեցնել ապստամբական կռիւները Ղարաբաղում, 2 - Սիւնիքը յայտարարել խորհրդային, 3 - ընդունել 11րդ Կարմիր բանակի հրամանատարութիւնը (եթէ ցանկանայի)»:

Այդ պատգամաւորութիւնը իր հետ բերած էր մի գրութիւն Դրոյից, որի մէջ, ի միջի այլոց, գրուած է. «Վերջին րոպէին, պետութեան գլուխը անցած դաշնակ կուսակցութեան պատասխանատու ընկերները, Նոյեմբեր

---

* *Լեռնահայաստանի զինուորական շտաբի արխիւ:*

** *Նոյն տեղում:*

26ի ժողովում, խոշոր մեծամասնութեամբ որոշեցին ընդունիլ Ռուսաստանի օրիենտացիան: Հայաստանը յայտարարուեց խորհրդային, հիմնուած այն համոզմունքի վրայ, որ միայն յեղափոխական Ռուսաստանը կը զգայ անկեղծ կերպով պաշտպանելու հայ աշխատաւորութեան շահերը: Ներկայումս Մոսկուայում հաւաքւում է կոնֆերենցիա, որտեղ պէտք է լուծուի Հայաստանի սահմանների խնդիրը, Ռուսաստանի, Տաճկաստանի եւ Հայաստանի մասնակցութեամբ»…

Այս գրութեամբ եւս - այս անգամ Դրոյի միջոցաւ - կ'առաջարկուէր «Սիւնիքն անմիջապէս յայտարարել խորհրդային»:

1921, Յունուար 22ին, Շուշի քաղաքի եւ նրա շրջակայքի կայազօրի պետ եւ զինուորական կոմիսար Պոտեշինի ստորագրութեամբ, կարմիր բանբերների ձեռքով ստացուած է հետեւեալ գրութիւնը. «Անհրաժեշտ է վերջ դնել բոլոր ապստամբութիւններուն եւ վերահաստատել կապ մեզ հետ: Եթէ ցանկանում էք ունենալ բարեկամական յարաբերութիւններ եւ կապուել մեզ հետ՝ յայտնեցէք գրաբերիս միջոցաւ:

Շուշի-Գորիս հեռագրային կապը կարող եմ վերականգնել տալ»:

Վերջապէս, 1921, Փետր. 15ին «XI Կարմիր բանակի Զինուորայեղափոխական խորհրդի եւ սովետական գերագոյն իշխանութեան կողմից լիազօրուած» Հեկկերը կը պատասխանէր «քաղաքացի Նժդեհին եւ քաղաքացի Տէր Մինասեանին». «…Դուք կը մեղադրէք մեզ Կարսն ու Ալեքսանդրապոլը գրաւելու խնդրի մէջ որպէս թուրքերի արշաւանքին օժանդակող»:

Խորհրդային իշխանութեան ուղղած իմ այդ ծանր մեղադրանքը ջրելու նպատակով, Հեկկերը դիմած է ծիծաղելի բացատրութիւնների, եւ կրկնած կարմիրների հին յանկերգը՝ «Զանգեզուրը Հայաստանի հետ միացնելու պայմանները ճշտութեամբ գծելու համար կը խնդրեմ ձեզմէ որեւէ մէկը ուղարկել Շուշի, ուր ես կը սպասեմ Ձեր գալստեան»:

Ինչպէս տեսաք, Հեկկերը խօսում է ո՛չ թէ միայն Կարմիր բանակի, այլեւ՝ սովետ. գերագոյն իշխանութեան անունից:

Իր այդ երկարապատում գրութեան մէջ նա, յանուն Կարմիր բանակի զօրահրամանատարութեան եւ Մոսկուայի, խոստովանում է, որ «Զանգեզուրում, յիրաւի, տեղի է ունեցել մի ամօթալի դէպք, որի համար մենք մեզ չենք գովում: Խօսքս տաճկական գնդի մասին է, որ մենք ուղարկած ենք Զանգեզուրով Քեմալի մօտ:

Որ մենք վճռականօրէն հաշուեյարդարի ենթարկեցինք այդ դէպքը՝ սրան ապացոյց կարող է ծառայել. զօրաբաժնի պետի հեռացումն իր պաշտօնից: Ուրիշ որեւէ գործի մէջ, թերեւս. մեզ վրայ լուրջ մեղադրանք բարդել կարելի չէ՛»:

Կանգ առնենք. կը բաւեն վկայութիւնները:

Կողք-կողքի դնելով բոլշեւիկ զօրականներից եւ քաղաքական գործիչներից ստացուած պաշտօնագիրը, կարելի է հանգել մի հատիկ անսխալ եզրակացութեան. այն է, որ բոլշեւիկ ղեկավարների աստիճանի հետ, որպէս օրէնք, բարձրանում է եւ իրենց մաքիաւելիականութեան աստիճանը:

Սովետական գերագոյն իշխանութեան անունից խօսող Զինուորայե-ղափոխական խորհրդի անդամը «գերագոյն» լրբութեամբ թրքական գնդի ներկայութիւնը Զանգեզուրում կը ճգնէր արդարացնել «ուրիշ ճամբայ չկար»ով:

Ծիծաղ է շարժում Հեկկերի այն պնդումը, թէ թրքական գունդի հետ կապուած «ինցիդենտ»ը հաշուեյարդարի ենթարկած է Բաքուն: Իրողութիւնը այն է, որ այդ զօրամասի երեք քառորդը, ինչպէս եւ իր հրամանատար Զաւալ փաշային, պատմական Ուչթափալարում, դաժան ու արիւնալի հաշուեյարդարի ենթարկեց Սիւնիքի յաղթական սուրը:

Իր այդ գրութեան մէջ, Մոսկուայի ներկայացուցիչը ասած է եւ հետեւեալը. «Ձեր ուշադրութիւնն եմ դարձնում այն անհանդուրժելի վերաբերմունքի վրայ, որ սիւնեցիները ցոյց են տուել մեր բանագնացներին:

Կարմիր զինուորներին հարց ու փորձ են արել սպառնալիքի ազդեցութեան տակ. մէկից էլ վերցրել են նրա ոտի փաթաթանները»:

Կարդա՛նք, կարդա՛նք մէկ էլ, եօթն անգամ, այդ հատուածը՝ ճանաչելու համար սովետ իշխանութիւնը, որին մի հատիկ զինուորի «ոտի փաթաթաններ»ը աւելի պիտի զբաղեցնէին, քան թաթարների եւ քեմալականների կողմից գրաւուած հայկական հողամասերը, քան Հայաստան երկիրը:

Ընթերցո՛ղ, այժմ կը դժուարանա՞ս ասել, թէ ո՞րն է աւելի շնակա՛ն, Եւրոպայի այն ծանօթ դիւանագէ՞տը, որ չուզեց իր մի զինուորի ոսկորները փոխել Հայաստանի հետ, թէ՞ թրքացեղ Լենինը, որին իր մի զինուորի փաթաթանները աւելի զբաղեցրին, քան մարդկութեան կողմից այնքան անիրաւուած մեր ցեղի գոյութեան պրոբլեմը:

Այսպէս, շարժանկարի արագութեամբ իրար կը յաջորդէին պատուիրակութիւնները, բանագնացներն ու պաշտօնագրերը:

Սակայն, այդ չէր խանգարում, որ բանակցութեանց ընթացքին իսկ, մութի մէջ շարունակէր գործել բոլշեւիկեան մաքիաւելիականութիւնը:

Անցողակի ասեմ եւ այն, որ Կարմիր բանակի քաղաքական բաժինը կատարում էր նաե՛ւ քեմալական պրոպագանդիստի դեր:

Զանգեզուրի եւ Ղարաբաղի գիւղացիութեան ուղղած իր մի կոչի մէջ* նա ասում է. «Միեւնոյն ժամանակ Քեմալն աշխատում է իր բանակը

---

* *«Կանգնի՛ր, աշխատաւո՛ր»:*

միացնել Ռուսաստանի եւ Ադրբէյջանի Կարմիր բանակներին, որպէսզի ընդհանուր ուժերով ջախջախենք անգլիական, ֆրանսական եւ միւս՝ Արեւելքը ճնշող կապիտալիստներին»…

Նոյն կոչի մէջ կը կարդաք ե՛ւ այս տողերը. «Ինչո՞ւ դաշնակներն ատում են Քեմալին եւ Կարմիր բանակին: - Որովհետեւ մեր բանակն ու Քեմալը բոլոր ազգերի աշխատաւորութեան համար ազատութիւն են բերում, ազատութիւն՝ բուրժուազիայի լծից: Վա՛յ նրան՝ ով սուր կը բարձրացնի աշխատաւորական հանրապետութեան դէմ»:

Այդ կարմիր «Վա՛յ»ը ուղղուած էր զարկող Սիւնիքի հասցէին: «Աշխատաւորական հանրապետութիւն» ասելով, Կարմիր բանակը հասկանում էր Ադրբէյջանը, իսկ Ադրբէյջան ասելով՝ նաե՛ւ Զանգեզուրը:

Եւ այս բոլորից յետոյ, ռուս եւ քեմալական ուժերը - երեւի իրենց ճամբան կորցնելով - պիտի մտնէին Հայաստան եւ, եւրոպական կապիտալիզմի փոխարէն, պիտի ջախջախէին Հայաստանի մանուկ անկախութիւնը:

Կարմիր բանակի հրամանատարութիւնը կատարում էր նաեւ պրովոկատորի դեր:

Այն օրերին երբ դա «բարեկամական» ձեռք էր մեկնել մեզ, երբ պաշտօնապէս եւ այնքան յաճախակի դիմումներ էր կատարում Սիւնեաց կառավարութեան, հայ գիւղացիութեան ուղղած իր մի թռուցիկի մէջ կը սպառնար՝ «մաքրել Զանգեզուրն ու Ղարաբաղը, եթէ ապստամբները չհրաժարուեն աւերումներից եւ թրքական կոտորածից»*:

Այսպէս, բոլշեւիկեան արտառոց տրամաբանութիւնը, «ազգայնական աւերումներ ու թրքական կոտորած» էր անուանում մեր սրբազան ինքնապաշտպանութիւնը, որ առաջ էր տարուում հայրենի երկնքի տակ:

Նման պրովոկացիաներով թաթար Բաքուն պարբերաբար կը գրգռէր Կարմիր բանակը լեռնահայութեան դէմ:

Կարմիր զօրահրամանատարութիւնը երեւան եկաւ նաե՛ւ քաղաքական շանտաժիստի դերում:

«Ներկայ րոպէին, - կը գրէր ինձ 28րդ կարմիր զօրաբաժնի պետը,- ռուսական սովետ. կառավարութիւնը միջնորդի դեր է կատարում՝ բանակցութիւններ վարելով Հայաստանի եւ տաճիկ յեղափոխական զօրքերի միջեւ:

Մի՛ խանգարէք այդ հաշտութեան գործը»**:

Նոյն օրերին, միեւնոյն իմաստով, ինձ կը գրէին Դրոյի ստորագրութեամբ՝ «քանի դեռ Զանգեզուրը չէ ճանաչել խորհրդային իշխանութիւնը՝ դեռ կասկածով պիտի վերաբերուին Հայաստանին»…

---

* *«Ամէն մի ապստամբի ուշադրութեան»:*

** *1920, 26 Նոյեմբեր:*

Այդ միեւնոյն գրութեան մէջ կը կարդանք նաե՛ւ հետեւեալը. «Զանգեզուրի բռնած դիրքը «կոզեր» է տալիս տաճիկների ձեռքը՝ չհեռացնելու իրենց զօրքերը մեր երկրից»:

Իսկ իմ դէմ գործող ծանօթ զօրաբաժնի զինուորական կոմիսարը, իր համար 21 պաշտօնագրի մէջ, վրան բաց կերպով կը սպառնար ինձ. «Առաջարկում եմ 48 ժամուայ ընթացքում վերադարձնել Գորիսում մնացած հիւանդ, վիրաւոր եւ Հոկտ. 15ից կռիւներում, գերի ընկած զինուորներին, Գորիսում մնացած բոլոր գոյքն ու ռազմամթերքը: Նաե՛ւ յիշեալ ժամանակամիջոցում հեռացնել Զանգեզուրից կանոնաւոր զօրամասերը*:

Հակառակ պարագայում, ռուս սովետական կառավարութիւնը կը հրաժարուի Հայաստանի եւ Տաճկաստանի յեղափոխական զօրքերի միջեւ կնքուող հաշտութեան միջնորդութիւնից: Սպասում եմ պատասխանի»:

Այսպէս, առանց դիւանագիտական փափկամտութեան իսկ, XI կարմիր զօրահրամանատարութիւնը - որի նիւթական եւ հոգեւոր ողջ մեխանիզմը գտնւում էր թաթար Նարիմանովի ձեռքում – կը սպառնար ինձ՝ հասկացնելով, որ եթէ վար չդնեմ զէնքս՝ թուրք բանակը կը քաշեն, կը բերեն Երեւան:

Ճանաչում էի, ճանաչում էի խորհրդային մաքիաւելիական իշխանութիւնը, եւ նրա բոլոր սպառնական թէ կեղծ բարեկամական դիմումներին պատասխանում. «Սիւնիքը խորհրդային իշխանութեան առջեւ կը բանայ իր դռները, երբ՝ 1) Զանգեզուրը կը յայտարարուի Հայաստանի անբաժան մասը, 2) թրքական զօրքերը կը հեռացուեն Ալեքսանդրապոլից, 3) հայ մտաւորականութիւնը ազատ կ'արձակուի բանտերից, եւ 4) աքսորուած հայ սպայութիւնը կը վերադարձուի Հայաստան»:

Այս էր իմ եւ Սիւնեաց ժողովրդի անփոփոխ պատասխանը - այդ օրերի մեր ազգային կատեխեզիսը:

Տարբեր տեսակէտ չունէր նաեւ Գ. Տէր Մինասեանը, որն այսօր, 15 տարի յետոյ, խորհրդային կոչուած դիւային իշխանութեան դատն է փաստաբանում, առանց անդրադառնալու, թէ չարագործին պաշտպանողը բարոյապէս իր վրայ է առնում նրա կատարած բոլոր չարագործութիւնները:

Ահա՛, ընթերցո՛ղ, տարրական մարդկայնութիւնից, ինչպէս եւ քաղաքական բարոյականից զուրկ, թուրքի բարեկամ մեր թշնամին - բոլշեւիկների իսկ որակումով՝ «Նե՛ռը», որի հետ չափուեց Սիւնիքը:

---

* *Զանգեզուրում կանոնաւոր զօրամասեր չկային:*

VI

«Եւ առջեւներս դժոխք»

ԵՂԻՇԷ

Այժմ տեսնենք, թէ ի՞նչ էր կատարւում դժբախտ Հայաստանում:

- Ա՛յն, ինչ որ իրերի երկաթէ տրամաբանութեամբ պիտի կատարէին երկու գործօններ՝ հայ համայնավարի քաղաքական տգիտութիւնը եւ նրա դասակարգային կոյր թշնամանքը:

Վա՛յ այն երկրին, ուր ընկերային յեղափոխութիւնը ղեկավարւում է տգէտ եւ մոլի բանամարտիկների կողմից:

Դեռ խոր ճշմարտութիւն է շնչում Պոլիվիի դասական խօսքը կարթագենացիների մասին. «Քաղաքական ազատութիւնը ու հոգեւոր կուրութիւնը բացարձակօրէն անյարիր բաներ են»:

Քաղաքականապէս կոյր եւ անբարոյ՝ հայ բոլշեւիկները մեր թշուառ հայրենիքում ամենայն ճշտութեամբ կրկնեցին Ռուսիան՝ իր ընկերային բոլոր տեսակի սարսափներով ու այլանդակութիւններով:

«Յեղափոխութիւնը իր թշնամիների հետ չէ վիճում, ոչնչացնում է նրանց»,- այսպէս էին տրամաբանում բոլշեւիզմի հայ գործակալները:

Իբրեւ օտարի կենդանի արձագանգը, օտարի հաւատով զինուած՝ բոլշեւիզմի հայ լակոտները կը փորձէին միօրէն, եւ ընդմիշտ, տափանել հայ ժողովրդի հոգեկան աշխարհը, առանց գիտակցելու, թէ քաղաքականութեան մէջ տեսակի խնդիրները ստանում են առժամեայ լուծում, թէ բոլշեւիզմն էլ որպէս սոցիալական երեւոյթ, յաւիտենական չէ, թէ նոր մարդն ու հասարակարգը չեն ստեղծւում միօրէն, թէ չէ կարելի հրամանագրերով ժողովրդին կեանքի նոր ձեւեր պարտադրել, սեղմ ասած՝ թէ բոլշեւիզմի հրամցրած լուծումն էլ վերջնական չէ, եւ չի կարող լինել:

Հայ բոլշեւիկները Հայաստանում չուշացան հաստատելու Լենինի խօսքը* թէ՝ «ձախ համայնավարները մտածել չգիտեն»:

Մեր «ձախ»երը, որոնք Հայաստանի խորհրդայնացումից շատ առաջ փայտէ ձի էին նստել յանուն համաշխարհային յեղափոխութեան՝ իրենց տիրապետութեան օրով մեր երկիրը վերածեցին մի կատարեալ ձիարշաւարանի:

---

* *«Մեր օրերի ամենագլխաւոր խնդիրը», Լենին:*

«Նրանք,- երեւանեան համայնավարների մասին ասում է Կասեանը,- կը ձգտէին կուրօրէն զարդարել սոցիալական ստոր միջավայրը անհամեմատ բարձր միջավայրի փետուրներով», այսինքն՝ ամենայն տգիտութեամբ կը շփոթէին Հայաստանը - իմա՛ «ստոր միջավայրը» Ռուսաստանի - «անհամեմատօրէն բարձր միջավայր»ի հետ:

«Շատ էին մեր սխալներն ու խանդի վատնումը,- խոստովանում է բոլշեւիկ մտաւորականը,- մանաւանդ որ մեր դոքտրինեորները չէին կարողանում հաշուի առնել իրականութիւնը»:

Ըստ այդ վերջինի՝ Երեւանի բոլշեւիկները բռնուած էին «գերյեղափոխական քոր ու եռով», եւ կազմում էին ղեկավարութեան մեծամասնութիւնը:

Հայ բոլշեւիկներն աշխատում էին Հայաստանում արհեստական կերպով «յեղափոխական տենդ» ստեղծել:

Նրանք չէին ուզում հաշուի առնել մեր երկրի իրական պայմանները, մեր «ազգային ուրոյնը» - ասենք Լենինի ոճով:

Աթարբէգեանի հոգեկից Աւիսին է պատկանում հետեւեալ բանաձեւը. «Հայաստանում չկա՛յ ազգային հարց, Հայաստանում կայ միայն սոցիալական հարց»:

Այդ զոյգ քաղաքական հոգեհիւանդները իրենց արարքներով մեծապէս նպաստեցին սպանութեանց ու հալածանքների պսիխոզի ստեղծման:

Այլեւս եղածը բոլշեւիզմ չէր, այլ՝ խելագար բլանկիզմ, աւելին՝ քաղաքական եւ ընկերային խուլիգանութիւն:

Լենինականութեան հայ առաքեալները կ'աշխատէին Հայաստանում կեանքի կոչել «Նոր» հայը՝ անաստուած, անընտանիք, անհայրենիք:

Պարզ են այդ երեւոյթի պատճառները:

Ապստամբուած ամէն մի ստրուկ հեշտութեամբ դառնում է ծայրայեղապաշտ ու բարբարոս:

Հայ բոլշեւիկների հոգեւոր ստրկութեամբ պիտի բացատրել ոչ թէ միայն նրանց բլանկիզմը, այլեւ՝ արտառոց սադիզմն ու ամօթալի թրքասիրութիւնը:

Գրո՛հ՝ երկնքի դէմ, բարոյականի դէմ, ազգայնական ոգու դէմ:

«Երբ յեղափոխութեան մեծ ներշնչողը՝ մեր ընկեր Լենինը արտասահմանից Ռուսաստան վերադարձաւ, իր առաջին խօսքն եղաւ՝ կեցցէ՛ քաղաքացիական կռիւը:

Այդ կռիւը կը կրթէ մեր հոգին, մեր միտքը:

Զոհերն անխուսափելի են – ցաւել դրանց համար չարժի, քանի որ գլխաւորը յեղափոխութեան յաղթանակն է:

Քաղաքացիական կռիւը - դա այն է, ինչ որ ասում են, թէ Նեռն եկել է աշխարհ:

Քաղաքացիական կռիւը մի Նեռ է՝ չար, կործանիչ ոգի»*,- այսպէս կը բարբաջէր կարմիր հայը:

Այսպէս, հայ բոլշեւիկը, թաթարը եւ թուրքը կը շարունակէին գրգռել կարմիր Նեռը՝ Հայաստանի եւ հայութեան դէմ:

Եւ այդ օրերին, որպէս հոգեբանական արձագանգ, XI Կարմիր բանակի պաշտօնական օրգանը կը հրատարակէր Հ.Յ.Դ.-ի մահավճիռը, տրուած Բաքու, Զինուորայեղափոխական խորհրդի կողմից.** «Կարմիր բանակը գլխովին ոչնչացմամբ կը հատուցանէ դաշնակ կոնտր-յեղափոխութեան»:

Մի կուսակցութիւն, ինչպիսին է կոմունիստականը, որի հայ անդամների համար Հայաստանը հայրենիք չէր, այլ՝ յեղափոխական խելայեղութիւնների մի կրկէս, որի համար «ժողովուրդը ոչինչ է, իսկ դասակարգն՝ ամէն ինչ», որի համար «պատմական անհրաժեշտութիւն է դասակարգային կռուի խորացումը», որը քաղաքացիական կռիւը համարում է իր «հոգու եւ մտքի կրթիչ»ը, եւ քաղաքացիական կռիւ ասելով հասկանում էր «Նեռը՝ չար եւ կործանիչ», նման մի կուսակցութիւն, որը ճանաչում է միայն եւ միմիայն ջունգլիների օրէնքն ու վայրագութիւնը, չէր կարող բաւականանալ մեր հայրենիքի անարիւն խորհրդայնացմամբ:

Դա պիտի հրահրէր, դաւադրաբար պիտի ստեղծէր քաղաքացիական կռիւը՝ իր չարքերը դասակարգայնօրէն կրթելու եւ իր «Նեռ»ային չարութիւնը յագեցնելու համար:

Գեդէոնները ժամանակին համաձայնւում էին ինձ հետ, երբ խոր ցաւով դիտել էի տալիս, թէ Հայաստանի դժբախտութիւնը նրանում է, որ բոլշեւիկները Հայաստան մտան առանց մի հատիկ գնդակ արձակելու:

Այո՛, հազար անգամ այո՛, եթէ Արարատեան դաշտը առաջին անգամ տեղի տար կռուով, նա յետագային աւելի նուազ արիւն կու տար բոլշեւիզմի գազանին:

Դժբախտաբար, թուրք զօրքերի ներկայութիւնը Հայաստանում հարկադրեց օրուայ նախասովետական կառավարութեան՝ երկրի ղեկը առանց կռուի յանձնելու բոլշեւիկներին, որով զրկեց վերջիններին իրենց «յեղափոխական լիցն ու լարուածութիւնը» դատարկելու կարելիութիւնից:

Հայաստանը «նուաճող» բոլշեւիկների համար դեռ կար ու կը մնար *արեան պահանջը*, որ նրանց պիտի մղէր քաղաքացիական կռուի:

Պէտք էր ժողովրդին զգացնել տալ, որ «Նեռն է աշխարհ եկել»:

---

* *«Զանգեզուրի կոմունիստ», 1926, Նոյ. 7, թիւ 1:*

** *«Կարմիր աւանգարդ», 1920, Հոկտ. 20:*

Եւ այդ զգաց Հայաստանը: Եւ եթէ բոլշեւիկեան արնոտ տապարը գործի չդրուեց մեր երկրի խորհրդայնացման հէնց առաջին օրը՝ դա ունէր իր լուրջ պատճառը:

Կար Սիւնիքը, որի «քթէն դեռ ծուխ կը բարձրանար» - կար բոլշեւիզմ կոչուած գաղտնի յաղթական զսպիչը:

Ահա այդ մասին Հայաստանի Յեղկոմի նախագահ Ս. Կասեանի 1921, Յուն. 29 թուակիր հեռագիր-հրամանը, տրուած Դարալագեազի զինկոմին եւ գաւյեղկոմին. *«Քանի դեռ չէ գրաւուած Զանգեզուրը, Դարալագեազում, որը կազմում է չգրաւուած երկրամասի թիկունքը, վարել ամենամեղմ քաղաքականութիւն:*

Խստիւ արգելւում է աջից, ձախից ձերբակալումներն ու բռնագրաւումները: Դէպի քաղաքացիները ցոյց տալ կորրեկտ վերաբերմունք:

Ձերբակալել միայն նրանց, որոնք բացայայտ կերպով պրոպագանդ են վարում իշխանութեան դէմ:

Այն պաշտօնատար անձինք, որոնք կը խուսափեն կատարել սոյն հրամանը, կ'ենթարկուեն յեղափոխական ամենախիստ պատասխանատուութեան»*:

Կասեանի ներքին մարդը ճանաչելու համար կը բաւէ իր այդ մի հատիկ սադայելական հրամանը:

Ինչ որ իշխանաւորն է, այն էլ՝ իր հրամանը:

Կարմիր իշխանաւորը իր պաշտօնատարներին յանձնարարում է «ամենամեղմ» քաղաքականութիւն, բայց դա կատարում է ոչ par principe - ոչ սկզբունքօրէն:

Նա արգիլում է «ձերբակալութիւններ ու բռնագրաւումներ», բայց ոչ ընդհանրապէս, եւ ոչ ընդ միշտ:

Նա արգիլում է բարբարոսութիւնը ոչ թէ նրա համար, որ դա մարդկօրէն անթոյլատրելի է համարում, այլ՝ որովհետեւ տուեալ մոմենտում օգտակար ու նպատակայարմար չէ գտնում դա:

Նա արգիլում է բարբարոսութիւնը որոշ վայրկեանի որոշ միջավայրի համար:

Նա «ամենախիստ պատասխանատուութեամբ» է սպառնում նրանց, որոնք կը խուսափեն կատարել Երեւանի կամքը, բայց սպառնալիքը վերաբերում է այսօրուան միայն - քանի կայ մարտնչող Սիւնիքը, բայց ոչ եւ վաղուան - երբ Սիւնիքը խաբէութեամբ զինաթափ լինի:

Դա ասել է - սպանի՛ր, ուր եւ երբ կարող ես սպանութիւն կատարել անպատիժ կերպով:

Բռնագրաւի՛ր, երբ եւ ուր բազուկդ բռնող ու զինաթափող չկայ:

---

* *Լեռնահայաստանի զինուորական գլխաւոր շտաբ:*

Կարող ես անպարկեշտ լինել, հալածել, անիրաւել, հարուածել, երբ եւ ուր վախ ու պատասխանատուութիւն չկայ, օրինակ՝ Երեւանում:

Բայց ոչ եւ Սիւնիքում, ուր անպարկեշտին, բռնագրաւողին ու սպանողին պատուհասող բազուկ կայ:

Ահա՛ Կասեանի հոգեբանութեան լեզուն:

Երբ այս է ձախութեան հիւանդութիւնից զերծ նախարարապետի բարոյականը, կը մնայ երեւակայել ձախութեամբ տառապող լակոտների քաղաքական հրէշութիւնը, որին զոհ գնացին մեր լուսապսակ Համազասպները, Խորէնիները, Սաքօները:

Լենինի՝ իր հայ ճտերին չափաւորութիւն յանձնարարող ծանօթ երկու նամակները ուշացած էին:

Այժմ տեսնենք, թէ կարմիր Երեւանում ի՞նչ էին որոճում ինքնավար Սիւնիքի մասին:

Լսենք Ս. Վրացեանին.

«Երեւանի բոլշեւիկներին չափազանց զբաղեցնում էր Զանգեզուրը: Օր չէր անցնում, որ Զանգեզուրի մասին չգրուէր «Կոմունիստ»ում եւ չխօսուէր միտինգների մէջ: Խօսւում էր նոյնպէս, թէ XI բանակը Բաքուից զինուորական գործողութիւններ է պատրաստում Զանգեզուրի դէմ, իսկ մինչ այդ փորձում էին խաղաղ ճանապարհով ընկճելու զանգեզուրցիներին:

«Ինձ յայտնի էր, որ Դրօն էլ Բաքուից քայլեր էր արել զանգեզուրցիներին ընդունել տալու բոլշեւիկեան կարգերը: Բոլշեւիկներից ոմանք էլ ուզում էին օգտուել նաեւ ոչ-բոլշեւիկ մտաւորականների աջակցութիւնից: Եւ այս միտքը, ինչպէս ասում էին, պաշտպանում էին Կասեանը եւ արտ. գործ. կոմիսար Մռաւեանը: Զանգեզուր ուղարկելու համար տրւում էին Դ. Անանունի, Վ. Մինախորեանի եւ իմ անունները:

Ինձ անպաշտօն կերպով ուղղուած հարցումին՝ ես տուի սկզբունքային համաձայնութիւն: Սակայն, իբրեւ նախապայման Զանգեզուր գնալու, ես անհրաժեշտ էի համարում, որ Հայաստանի Յեղկոմը երաշխաւորի տալ զանգեզուրցիներին տեղական ինքնավարութիւն, եւ վերջ դնի հալածանքներին Հայաստանում: Ինձ հաղորդեցին, որ Կասեանը ընդունելի է համարում այս պայմանները, բայց հանդիպում է խիստ դիմադրութեան Աթարբէգեանի եւ մանաւանդ Աւիսի կողմից, որը պահանջել է Զանգեզուրը զէնքով գրաւել»:

Զանգեզուրի խնդիրը մասնաւորապէս կատաղեցրած էր Աթարբէգեանին:

«Փետր. 4ին ես արդէն Աթարբէգեանի մօտ էի,- ասում է Վրացեանը: Ինքը իբրեւ համառուսական խորհուրդների լիազօր ներկայացուցիչ պարտականութիւն ունի կռուելու ամէն կարգի «հակայեղափոխութեան»

դէմ: Խորհրդ. իշխանութեան համար հերթական խնդիր է «Զանգեզուրեան հակայեղափոխութեան» վերացումը: Իհարկէ, Կարմիր բանակը այնքան ոյժ ունի, որ արեան մէջ կարող է խեղդել Զանգեզուրը, բայց իր ցանկութիւնն է հարցը խաղաղ միջոցներով լուծել: Մինչեւ գարուն, երբ XI բանակը շարժման մէջ է դրուելու, պէտք է սպառել բոլոր խաղաղ միջոցները: Իրենց շրջանում խօսք է եղել նաեւ իմ ոյժերից օգտուելու մասին, բայց նախքան պաշտօնական առաջարկութիւն անելը ինքը կը կամենար անձամբ խօսել հետս եւ շօշափել իմ տեսակէտները:

«Ես պատասխանեցի, թէ ոչ թէ ինքս եմ առաջարկել իմ ծառայութիւնը, այլ ընդառաջ եմ գնացել ինձ արուած առաջարկութեան: Ստեղծուած հանգամանքներում Հայաստանը պէտք է յենուի խորհուրդների վրայ… Քանի Ադրբէջանն ու Հայաստանը խորհրդային են, Զանգեզուրը չի կարող մնալ թշնամական վիճակում… Հարկաւոր է խաղաղ եղանակով լուծել Զանգեզուրի հարցը: Այդ նպատակով պէտք է Զանգեզուր ուղարկել պաշտօնական մի պատուիրակութիւն, որին կարող եմ մասնակցել ե՛ւ ես: Պատուիրակութեան մէջ անպայման պէտք է մտնի ե՛ւ բոլշեւիկ ներկայացուցիչ: Եւ որպէսզի պատուիրակութիւնը յաջողութիւն ունենայ, անհրաժեշտ է ստեղծել հոգեբանական նախապայմաններ, այսինքն՝ վերջ տալ Հայաստանում կատարուող բռնութիւններին ու բանտարկութիւններին…: Մասնաւորապէս,- աւելացնում է Վրացեանը,- *բոլշեւիկները պէտք է յանձն առնեն մինչեւ մեր վերադարձը Զանգեզուրից ոչ մի սպանութիւն չկատարել…*

Աթարբէգեանը իմ առաջին առարկութիւնները ընդունեց հիմնաւոր, եւ համաձայնուեց, որ պաշտօնական պատուիրակութիւն ուղարկուի, բայց տատանւում էր մէջը բոլշեւիկ դնել, վախնալով, որ զանգեզուրցիները կը սպանեն նրան:

«Դուք,- Վրացեանի խօսքը կտրում է Աթարբէգեանը,- կ'ասէք Զանգեզուրում, որ ինչ համաձայնութիւն որ կնքուի Հայաստանի Յեղկոմի եւ զանգեզուրցիների միջեւ, ես եմ երաշխաւորում. ես՝ համառուսական խորհուրդների լիազօր ներկայացուցիչս»*:

Վրացեանի մէջբերած փոխասացութիւնից պարզւում է նաե՛ւ այն, որ Աթարբէգեանը, առանց քաշուելու համառուսական խորհուրդների «լիազօր»ի իր հանգամանքէն, առաջարկել է Վրացեանին՝ «այնպէս անել, որ իբրեւ թէ բոլշեւիկներից գաղտնի փախել է Զանգեզուր»:

Տեսնո՞ւմ էք, որ Հոկտեմբերեան յեղափոխութեան հայանուն մարդակերն էլ զերծ չէ մաքիաւելիականութիւնից:

Այսպէս, Չեկան կը գործէր:

---

* *«Հայրենիք», 1923, թիւ 4:*

Երեւանում այլեւս արիւն կը հոսէր:

Լուրեր էին հասնում, թէ այսօր-վաղը պիտի գնդակահարուեն Շանթը, Աղբալեանը, Հայր Աբրահամը եւ ուրիշները:

Այս էր իրերի դրութիւնը Հայաստանում:

Սիւնիքը, թէեւ ինքը անհաւասար կռուի մէջ, չէր կարող անտարբեր մնալ: Պէտք էր աճապարել, պէտք էր կանխել հայ մտաւորականութեան «գլխովին ոչնչացումը» հետապնդող Աթարբէգեան կոչուած հրէշին:

Սիւնիքը խորապէս կը գիտակցէր այն պատմական անելիքի մեծութիւնը, որ քաղաքական մոմենտը դրած էր իր առջեւ:

Պէտք էր աճապարել, պէտք էր յետ մղել դէպի հայ մտաւորականութիւնը երկարող մահաբեր բազուկը:

Այդ նպատակով ահա՛ - Երեւանի համար դէպի Սիւնիք փրկութեան մի դուռ բանալու նպատակով - իմ զօրքերը գրաւեցին Վայոց ձորը, իջան Նոր Բայազէտ, իրենց վրայ քաշեցին, զբաղեցրին բոլշեւիկեան ոյժերի մի մասը, եւ այսպիսով կարելիութիւն ընձեռեցին Երեւանի ապստամբ ոյժերին՝ բռնելու նահանջի ճամբան եւ քաշուելու Սիւնիք:

* * *

Հայաստանի երկրորդ անկումով, Սիւնիքի դրութիւնը է՛լ աւելի կը ծանրանար: Կը ծանրանար, սակայն, նաե՛ւ պատմութեան կողմից մեր ուսերին դրուած գերագոյն պարտականութիւնը:

Թշնամին, խեղդելով Հայաստանի համաժողովրդային ըմբոստացումը, կը փութար անօրինակ աղէտով պսակել երեւանեան «Նահանջ բիւրոց»ը:

Ի՜նչ խօսք, որ յաջողութեան դէպքում, բոլշեւիկները արժէքազրկած պիտի լինէին Սիւնիքի երկամեայ հերոսականը: է՛լ աւելին. յաջողութեան դէպքում, նրանք պիտի թաղէին Սիւնիքի՝ Հայաստանին միանալու յոյսը:

Վայրկեանը գերագոյն էր եւ պատասխանատու:

Իսկ նման վայրկեաններում, ամէն կարգի փոքրոգութիւն՝ դաւաճանութիւն է հարազատ ժողովրդի հանդէպ:

Երբ մի երկրի աշխարհագրական թոքերի - ինչպիսին է Սիւնեաց աշխարհը Հայաստանի համար - եւ նրա մտաւորականութեան լինել-չլինելու խնդիրն է լուծւում, այլեւս չէ կարող խօսք լինել նորանոր զոհերի մասին: Մի ժողովուրդ, որ իր ընտրանին մահացու հարուածից փրկելու համար չգիտէ զոհեր տալ, կենսաբանօրէն անբարոյական է, որ ասել է՝ ապրելու անարժան:

Սիւնիքին - փա՛ռք իրեն - երբեք չպակասեց այդ բարձր բարոյականը:

Նա, թէեւ վիրաւոր, բայց յաղթական, մնաց իր պատնէշի վրայ նաե՞ւ մայր երկրի երկրորդ անկումից յետոյ:

Դա պահանջում էր ո՛չ թէ միայն իր փառաւոր յաղթանակների շարքը, այլ՝ ե՛ւ Հայաստանի ապագան:

Եւ հէնց այդ նպատակով, այդ ծանր օրերին, երբ Սիւնեաց աշխարհով, հեղեղի պէս, դէպի Արաքսը բազմահազար արարատեան գաղթականութիւնն էր հոսում, նա քաղաքական իմաստութիւն եւ արիութիւն ունեցաւ հրաւիրելու իր երկրորդ համագումարը:

VII

«1921թ. Ապրիլ 26ին*, հրաւիրանօք ինքնավար Սիւնիքի խորհրդարանի դիւանի, Տաթեւի վանքում կայացաւ Լեռնահայաստանի հայ ազգաբնակութեան արտակարգ համագումարը, ուր ներկայ էին 64 գիւղերից 95 պատգամաւորներ եւ սպարապետ Նժդեհը:

Կառավարութեան նախագահ Գ. Տէր Մինասեանը բանալով համագումարը, առաջարկում է ընտրել նախագահութիւն: Առաջարկուած թեկնածուներից միաձայն նախագահ է ընտրւում պ. Ս. Մելիք-Եօլչեանը, ձայների ճնշող մեծամասնութեամբ՝ փոխ-նախագահ բժ. Մինասեան, քարտուղարներ՝ Տ. Սազանդարեան եւ Վ. Վարդապետեան:

Նախագահը նիստը բաց յայտարարելով, բացատրում է ներկայ համագումարի աւելի քան պատմական եւ եզակի նշանակութիւնը եւ Լեռնահայաստանի կատարելիք մեծ դերը:

Ապա խօսք է առնում Սպարապետ Նժդեհը:

Սպարապետի մանրամասն զեկուցումից յետոյ ժողովրդականները աւելորդ են համարում լսել գործադիր մարմինների եւ կառավարութեան վարիչների առանձին-առանձին զեկուցումները ու անցնում են օրակարգի խնդիրներին:

«Պարենաւորման համար սպարապետը յայտնում է, որ մինչեւ նոր հունձը հնարաւոր է Հայաստանի հանր. կառավարութեան նիւթական օգնութեամբ հաց ձեռք բերել, եւ միաժամանակ, ըստ հնարաւորութեան, աշխատել կազմակերպել պետական տրանսպորտը եւ ժողովրդին ազատել փոխադրական ծանր պարտականութիւնից:

Այս յայտարարութիւնը ընդունւում է միաձայն կերպով:

Կառավարութիւն կազմելու ձեւի առթիւ խօսք է յարուցւում եւ մի շարք ճառերից յետոյ հանգում են հետեւեալ եզրակացութեան.

Քանի որ Սիւնիք-Լեռնահայաստանի ամբողջ բախտը եւ հայ

---

* *Համագումարի արձանագրութիւններից:*

ազգաբնակութեան ֆիզիքական գոյութիւնը հաւատացած եւ վստահած են Սպարապետին, որն իր ամբողջ գործունէութեամբ միշտ էլ հանդէս է եկել որպէս մի անձնազոհ, տոկուն եւ նախանձախնդիր ղեկավար, ապագայ ընտրուելիք կառավարութեան կազմը եւս վերապահել նրան:

Ձայների մեծամասնութեամբ որոշւում է՝ 1. Ինքնավար Սիւնիքը այսուհետեւ անուանել Լեռնահայաստան: 2. Կառավարութեան անդամները՝ նախարարներ: 3. Համագումարը յայտարարել որպէս Լեռնահայաստանի խորհրդարան: 4. Կառավարութիւն կազմելու համար վարչապետ ընտրել պ. Սպարապետին:

Հարց է ծագում Սպարապետ Նժդեհին տալ զօրավարի աստիճան: Խորհրդարան-համագումարը մտքերի եւ կարծիքների փոխանակութիւնից յետոյ միաձայն որոշում է պ. սպարապետին տալ զօրավարի աստիճան եւ պարգեւատրել նրան «Խուստուփեան արծիւ» երկաթէ շքանշանով:

Մի ժամով տրւում է ընդմիջում, որից յետոյ կարդացւում է ողջոյնի հեռագիրը՝ ուղղուած Լեռնահայաստանի Դաւիթբէգեան զօրքին եւ ղեկավարներին, հետեւեալ բովանդակութեամբ.

Համազանգեզուրեան Տաթեւի 2-րդ Խորհրդարանը սրտանց ողջունում է իր կուռ, անյաղթելի եւ տոկուն բանակի ռազմիկներին եւ լիայոյս է, որ այդ անյաղթ բանակը, որ մինչեւ օրս իր փառապանծ յաղթանակներով աշխարհն է զարմացրել, այսուհետեւ էլ պատրաստ կը լինի նոր հրաշքներ, նոր զարմանքներ ցուցադրելու քաղաքակիրթ աշխարհին, իր կատարեալ ու վերջնական հարուածը տալով հայ աշխատաւորութեան թշնամիներին:

Կազմուած է կառավարութիւն:

Մեր ինքնավար Սիւնիքն այսուհետեւ կոչուելու է Լեռնահայաստան, որը իր քաջարի զօրքով, իր անպարտ առիւծասիրտ մարտիկներով սպառնանք պէտք է լինի մեր բոլոր թշնամիների համար:

Մեր ազատարար Սպարապետ Նժդեհին տրուած է զօրավարի տիտղոս եւ «Խուստուփեան արծիւ» շքանշան:

Այս սուրբ տաճարում նա ուխտեց եւ իր սրբազան խօսքն ասաց՝ Ձեզ հետ միասին, սեւ օրուայ համար հայութեան բաժին համարուած Սիւնիքը դարձնել հայութեան վերածնութեան օրրան»:

* * *

Տաթեւում իմ կողմից նշանակուած կառավարութիւնը դեռ նոր էր վերադարձել Գորիս, երբ Գնդեվազի ռազմաճակատի պետը հեռախօսեց, թէ «Երեւանից սահմանագլուխ են հասած մեր երկու յայտնի մտաւորա-

կաններ Դաւիթ Անանունը եւ Ա-Դօն*. կ'ուզեն տեսակցել Լեռնահայաստանի կառավարութեան հետ»:

Կարգադրեցի ընդունել:

Վերջինները յայտնեցին, թէ Հայաստանից Հերիեր գիւղն է եկած Ա. Կարինեանը՝ Հայաստանի խորհրդային իշխանութեան, իսկ Վ. Մելնիկովը՝ ռուս Կարմիր բանակի կողմից:

Նրանք եկած էին բանակցելու իմ կառավարութեան հետ:

Երեւանից մեզ «խաղաղութեան համբոյր» էին բերել:

Այդ օրերին խորհրդային մամուլի օրգանները կը գրէին, թէ Կարինեանի պատուիրակութիւնը հրահանգ ունի՝ Լեռնահայաստանի կառավարութեան հաղորդելու Լենինի երկու ծանօթ գրութիւնները, որոնցից մէկով քաղաքական ներում կը շնորհուէր խորհրդային իշխանութեան հակառակորդներին, իսկ միւսով կը հրաւիրուէր Զանգեզուրը միանալ Խ. Հայաստանին:

Մայիս 6ին, իմ կառավարութիւնը քննութեան առաւ Երեւանից եկած առաջարկը եւ իր կողմից բանակցելու նշանակեց իր պատգամաւորութիւնը՝ ծանօթ Գ. Տէր Մինասեանի նախագահութեամբ:

Երկու պատգամաւորութիւնները իրար հանդիպեցին Ղալաջուղ գիւղում:

«Առաջին նիստը** կայացաւ Մայիս 12ին, առաւօտեան ժամը 10ին:

Փոխադարձաբար լիազօրութիւնները ստուգելուց յետոյ, փոխադարձ համաձայնութեամբ որոշւում է նիստերի նախագահութիւնը տանել փոխն ի փոխ, իսկ բանակցութիւնները վարւում են հայերէն լեզուով:

Առաջին նիստին նախագահ ընտրւում է Լեռնահայաստանի կառավարութեան պատուիրակութեան անդամ Գեդէոն Տէր Մինասեանը:

Նախագահ. Պաշտօնական նիստը յայտարարում եմ բացուած: «Հայաստանի սովետական կառավարութեան ընկեր դելեգատնե՛ր, ողջունում եմ Հայաստանի սովետական կառավարութեան ներկայացուցիչների գալուստը Լեռնահայաստան: Յոյս ունեմ, որ այս երկու դելեգացիաների խորհրդակցութիւնը հնար կը տայ հաստատելու մի այնպիսի փոխ-յարաբերութիւն, որ հնարաւոր կը լինի ստեղծել վերջնական խաղաղութիւն: Լեռնահայաստանը եւ մասնաւորապէս

---

* *Դաշնակցական յայտնի գործիչ Յովհաննէս Տէր-Մարտիրոսեանի ծածկանունը:* Ծան.՝ խմբ.:

** *Արձանագրութիւն՝ Լեռնահայաստանի եւ Խորհրդային Հայաստանի կառավարութեանց լիազօր ներկայացուցիչների բանակցութեանց, Ղալաջուղ. 1921թ. Մայիս:*

Զանգեզուրը իր աշխարհագրական դիրքով կամուրջն է հանդիսանում բոլոր անցումների, որոնք գալիս են անցնելու դէպի Մերձաւոր Արեւելք: Զանգեզուրը իր հարեւան երկրամասերի նկատմամբ ունի նաեւ ռազմագիտական խոշոր նշանակութիւն:

Ռուսական յեղափոխութեանց ընթացքում մի քանի անգամ եւ մի քանի կողմից փորձեր են եղել տիրելու այդ լեռնաշխարհին: Առաջին անգամ անգլիական իմպերիալիզմի ներկայացուցիչները Անդրկովկասում քանիցս ցանկացան եւ դիմեցին ակտիւ քայլերի յանձնելու Զանգեզուրը եւ Լեռնային Ղարաբաղը Ադրբէյջանին, բայց Զանգեզուրի զինուած գիւղացիութիւնը ընդդիմացաւ ամենավճռական կերպով:

Դրանից յետոյ, Ադրբէյջանի նացիոնալիստները քշեցին իրենց բանակները դէպի Զանգեզուր ու Ղարաբաղ եւ ամէն անգամ ջարդուած նահանջեցին: 1919 թուին Ադրբէյջանի կողմից եղաւ վերջին փորձը, երբ 12 հազարանոց բանակով արշաւեցին Զանգեզուր, բայց մեր զինուած աշխատաւորութիւնը, հէնց Գորիսի պատերի տակ, ջարդեց նոցա: Երբ մի փառաւոր օր Ադրբէյջանը կարմրեց եւ դարձաւ սովետական, այդ անուան տակ, եւ շահագործելով բոլշեւիկեան լոզունգները, ռուսական կարմիր զօրամասեր ուղարկեցին Զանգեզուր, որոնց յաջողուեց տիրել եւ ժամանակաւորապէս տէր դառնալ Զանգեզուրի մի մասին, բայց կռիւը շարունակւում էր Ղափանի լեռներում, որը հետզհետէ ծաւալուեց նորից: Ժողովուրդը տէր դարձաւ իր երկրի մեծ մասին եւ ապա 1920թ. նոյեմբերեան ժողովրդական ընդհանուր ապստամբութեան հետեւանքով եկուոր զօրամասերը դուրս քշուեցին վերջնականապէս Զանգեզուրի սահմաններից: Ընկեր պատգամաւորնե՛ր, մեծամասնական զօրամասերի հինգամսեայ ներկայութիւնը Զանգեզուրում ո՛չ միայն ֆիզիքապէս բռնացաւ Զանգեզուրի հայ աշխատաւորութեան կամքի վրայ, այլեւ, բառիս իսկական իմաստով, տնտեսապէս եւ կուլտուրապէս քայքայեց ծայր աստիճան մեր գիւղացիութիւնը:

Եկուոր մեծամասնականների խոշոր խոստումները մնացին լոկ խօսքեր»…

Ահա՛ մի փոքրիկ քաղուածք այդ նիստերի երկուստեք հաստատուած արձանագրութիւններից, որի մէջ արձանացած կը տեսնէք *Տէր Մինասեանի հակաբոլշեւիկ կեցուածքը նաե՛ւ այդ օրերին:*

Նրա՝ Կարմիր բանակին վերագրած վայրագութիւնները դարերի ձեռքն իսկ պիտի չկարողանայ քերել, սրբել մեր պատմութեան էջերից:

Դատախազի իր դերը արդարօրէն կատարելուց յետոյ, նա իմ կառավարութեան անունից հաշտութեան նախապայմաններ է առաջարկել խորհրդային պատգամաւորութեան, որոնց բնոյթի մասին ընթերցողը կարող է գաղափար կազմել՝ աչքէ անցընելով Խ. Հայաստանի ժողովրդա-

կան կոմիսարների խորհրդի յայտարարութիւնը՝ ուղղուած Սիւնեաց իշխանութեան:

Եռօրեայ բանակցութիւններից յետոյ, Կարինեանի պատգամաւորութիւնը վերադարձաւ Երեւան՝ իր կառավարութեան տանելով մեր կոնկրետ պահանջները:

Կարմիր պատուիրակութեան կողմից մեզ խոստացուած «շուտափոյթ պատասխան»ի փոխարէն, Մայիսի վերջերին Սիւնիք վերադարձաւ ինժեներ Սմբատ Մելիք-Ստեփանեանը, որին տարի առաջ, Խոտանանից նահանջելիս, առեւանգել էր կարմիր զօրամասը:

Վերջինին տրուած էր հետեւեալ մանդատը. «Թուղթս ներկայացնող ինժ. Սմբատ Մելիք-Ստեփանեանը Խ. Հայաստանի Յեղկոմի համաձայնութեամբ մեկնում է Զանգեզուր՝ լեռներում եւ գիւղերում թաքնուած գիւղացիներին եւ քաղաքացիներին համոզելու, որ վերադառնան իրենց տեղերը եւ զբաղուեն խաղաղ աշխատանքով:

Առաջարկւում է բոլոր զինուորական եւ քաղաքացիական իշխանութեանց՝ արգելք չյարուցել քաղաքացի Ս. Մելիք-Ստեփանեանի ճամբին եւ ցոյց տալ նրան ամէն տեսակ աջակցութիւն իր վրայ առած առաքելութիւնը ի կատար ածելու համար:

Նախագահ Խ. Հայաստանի զինուորա-յեղափոխական կոմիտէի՝ Ալ. Միասնիկեան (Ալ. Մարտունի), Արտաքին գործոց ժողկոմ՝ Մռաւեան:

1921, 14 Մայիս, Երեւան»:

* * *

Թող ընթերցողս զսպէ իր զզուանքը եւ կողք-կողքի դնէ Կարինեանի պատուիրակութեան եւ Մելիք-Ստեփանեանի տրուած մանդատները՝ կարմիր իշխանութեան խարդախութեան չափը ճշտելու համար:

Առաջին պատուիրակութիւնը բազմանդամ է: Նա եկած է ոչ-բոլշեւիկ միջնորդների հետ - Դաւիթ Անանուն եւ Ա-Դօ - որպէսզի իրեն աւելի հաւատ ընծայուի:

Երկրորդը՝ միանձնեայ է, որին, մեզ հասկանալի պատճառներով, խորհրդ. իշխանութիւնը ազատած է Բաքուի բանտէն, բերած է Երեւան եւ այնտեղից որոշ առաքելութեամբ ուղարկած է Սիւնիք:

Առաջին պատուիրակութիւնը գործ ունէր մի անկախ, խրոխտ ու յաղթական երկրի կառավարութեան հետ, որի բարեկամութիւնը կը փնտռէր: Երկրորդը եկած է «համոզելու լեռներում թաքնուածներին, որ վերադառնան իրենց տեղերը»:

Կարմիր պատուիրակութիւնները ծնունդ կ'առնէին միեւնոյն նախաղբիւրէն՝ Երեւանէն, Միասնիկեանի կառավարութենէն: Իսկ Երեւանը մեզ կը ներկայանար երկերեսանի Եանուսի դէմքով:

Որի՞ն հաւատար Լեռնահայաստանը:

Մայիս 12ին իմ եւ Երեւանի պատուիրակութիւնները, ծունկ-ծնկի, բանակցած էին՝ սակարկելով Լենինի կամքը եւ Լեռնահայաստանի շահերը:

Մայիս 15ին, Կարինեանի պատուիրակութիւնը, մեր պահանջները շալկած՝ վերադարձաւ Երեւան: Իսկ Մայիս 14ին, Երեւանը, որ դեռ չգիտէր եւ չէր կարող գիտենալ, թէ ինչո՞վ են վերջացած Սիսիանի բանակցութիւնները - որովհետեւ դեռ չէր լսել իր պատգամաւորներին – կը ստորագրէր Մելիք-Ստեփանեանի մանդատը, եւ նրան որոշ «առաքելութեամբ» կ'ուղարկէր Լեռնահայաստան:

Վերջինը, որպէս բնիկ սիւնեցի, ծանօթանալով երկրի եւ ժողովրդի դրութեան հետ, «Հ.Ս.Ս.Հ.ի ժողովրդական կոմիսարների խորհրդին* կը տեղեկագրէր.

«Այստեղ ես տեսնում եմ ժողովուրդ, կառավարութիւն եւ զօրահրամանատարութիւն՝ միաբան:

Ամէն ինչ նորմալ է այստեղ:

Այստեղ չկան խաներ, բէգեր, կապիտալիստներ, բուրժուաներ, կուլակներ: Չկայ այն ամէնը, որ տկարացնում է ժողովրդի ռազմական թափն ու ոյժը: Ժողովրդի տրամադրութիւնը կատարելապէս յեղափոխական է... Լեռն. ինժեներ՝ Ս. Մելիք-Ստեփանեան, 1921, 3 Յունիս»:

* * *

Այսպէս սկսուած՝ կը շարունակուէին բանակցութիւնները: Եւ ոմանք կը սպասէին, թէ այս անգամ բոլշեւիկները կը յարգեն իրենց ստորագրութիւնը:

Սակայն, շատ շուտ պարզուեց, որ մեր գործը միայն Երեւանի կառավարութեան հետ չէ, այլ՝ նաեւ Կարմիր բանակի, որը կը ղեկավարուէր թաթար Ադրբէջանի կամքով:

Յարգելով մեր պահանջները՝ խորհրդային իշխանութիւնը ստորագրած կը լինէր Կարմիր բանակի պարտութիւնը. ահա՛ թէ ինչու Երեւանը կ'ուշացնէր իր պատասխանը:

Գիտէինք, որ *Կարմիր բանակի զօրահրամանատարութիւնը մարտական ելք է փնտռում՝ իր զէնքի պատիւը փրկելու համար:*

Մեզ համար գաղտնիք չէր եւ այն, որ Աւիս-Աթարբէգեան՝ «ձախութեամբ հիւանդ» խմբակի ազդեցութիւնը Երեւանում դեռ զգալի է, որ ձախերի դասակարգային կատաղախտը բուժելու սահմանուած լենինեան զոյգ նամակները չէին հասել իրենց նպատակին:

---

* *Պատճէնը՝ Լեռնահայաստանի կառավարութեան:*

Մեզ ծանօթ էր նոյնպէս Միասնիկեանի կառավարութեան եւ ռուս XI Կարմիր բանակի զօրահրամանատարութեան միջեւ գոյութիւն ունեցող ներքին անհամակամութիւնը:

Պէտք է հաստատագրել, որ այդ պարագան յաճախ մեծապէս դժուարացրել էր թէ՛ մեր եւ թէ՛ Երեւանի գործը:

Երեւանին յղած մեր պահանջների պատասխանին կը սպասէինք, երբ ստացուեց Յեղկոմի մէկ կոչը՝ ուղղուած Լեռնահայաստան ապաստանած արարատեան գաղթականութեան:

Այդ կոչից պարզուեց, որ Հայաստանի կոմիսարների խորհուրդը մասնաւոր դեկրետով «դաւաճան եւ թշնամի» է հռչակել Հայաստանից Զանգեզուր փախածներին, եւ կը սպառնար «Նժդեհի դրօշի տակ մնալու դէպքում» բանտարկել նրանց ընտանիքներին եւ բռնագրաւել նրանց ստացուածքը:

Այլեւս պարզ էր, որ *Հայաստանի Յեղկոմը իր յաճախակի բանակցութիւններով կը ձգտէր ժամանակ շահել, եւ մի օր մեզ մղել անձնատուութեան՝ առանց զիջումների:*

Ա՛յդ կը պահանջէին կարմիր զէնքի պատիւը եւ թաթար Ադրբէջանի շահը:

Հազարաւոր տարագիրների՝ Թաւրիզից Երեւան դառնալուց յետոյ, այլեւս խ. իշխանութեան համար չէր կարող գաղտնիք մնալ, որ Լեռնահայաստանը տառապում է սովից եւ ռազմամթերքի պակասից:

Ծանօթ մեր այդ ծանր դրութեան՝ Երեւանը շէյթանաբար կը ձգձգէր մեզ տրուելիք պատասխանը:

Նա կ'ուզէր, ժամանակ շահելով, ազատուել Կարմիր բանակի համար անպատուաբեր՝ մեր պահանջները յարգելու հարկադրանքից:

Իսկ մենք դեռ չէինք դադարել գիտակցելու, թէ մեծապէս մեղանչած կը լինենք մեր ժողովուրդի ապագայի դէմ, եթէ չօգտուէինք Լեռնահայաստանի ձեռք բերած ռազմական հմայքից:

Լեռնահայութիւնը իր երկրի եւ ապագայի պաշտպանութեան խորին մտահոգութեամբ անձնական վտանգը անգիտացաւ ե՛ւ այս անգամ:

Պէ՛տք էր, ամէն գնով պէտք էր յարգել տալ մեր պահանջները:

Դրա համար էլ, վերջին անգամ լինելով, Լեռնահայաստանը շարժման մէջ դրեց իր Դաւիթբէգեան վաշտերը:

Պէ՛տք էր զգաստացնել խ. իշխանութիւնը, պէ՛տք էր նրան զգացնել տալ, որ գոռ կռիւներում թրծուած լեռնահայութիւնը իր համար ստեղծուած ամենածանր դրութեան մէջ իսկ գիտէ զարկել ու յաղթել:

Եւ մէկ էլ, ու վերջին անգամ, զարկեց Սիւնիքը: Յունիս 15-16ին, Գնդեվազի մեր զօրամասերը խորտակեցին բոլշեւիկեան ոյժերը:

Այդ նոյն օրերին, թշնամին, որ մեծ ոյժեր էր կենտրոնացրել

Օրդուբատ ու Բարթաղ՝ Արաքսի հայկական ափը գրաւելու եւ այսպիսով մեզ Պարսկաստանից կտրելու ցանկութեամբ, անցաւ յարձակման՝ Արեւիքի դէմ:

Իմ ոյժերը ջարդեցին թշնամուն ե՛ւ այդ ճակատների վրայ:

Կարմիրները ռազմագործողութիւններ սկսեցին ե՛ւ Զաբուղի ուղղութեամբ՝ բուն Զանգեզուրի դէմ:

Յունիս 18ին, թշնամու՝ Որոտանի ափին կենտրոնացած ոյժերը ցրելու նպատակով, մի թեթեւ զօրամասով մտայ Բարգուշատ, ուր յանկարծակիի եկած թրքութիւնը աղ ու հացով դիմաւորեց մեզ եւ հպատակութիւն յայտնեց:

Այսպէս, իմ ոյժերը յաղթեցին բոլոր ճակատների վրայ, վերցնելով հազարի չափ գերիներ, մի քանի լեռնային թնդանօթներ, ռազմամթերք եւ այլ կարգի աւար:

Ցնծո՛ւմ է լեռնահայութիւնը:

Գորիսը՝ տօնում է հայ զէնքի նոր յաղթանակը:

Կառավարութիւնը շնորհաւորում է մեզ. «Սպարապետ Նժդեհին - Հայաստանի կառավարութիւնը լսելով Ձեր կազմակերպած, Ձեր հոգով սնուած եւ ձեր գաղափարներով ոգեւորուած քաջարի արեւմտեան բանակի Վայոց Ձորում տարած մեծ յաղթութեան մասին՝ պարտք է համարում յայտնել Ձեզ շնորհակալութիւն, եւայլն»*:

Մեր այդ նոր յաջողութեան առթիւ Խ. Հայաստանը ահազանգ է հնչեցնում: Նրա թերթերն ու թռուցիկները անզօր կատաղութեան փրփուր ու ցեխ են ժայթքում:

Նա «կարմիր զօրքերի օղակ»ով, «երկաթէ բռունցք»ով սպառնում է վերստին Երեւանում գործի դնել կարմիր տապարը:

Ահա՛ թէ ինչպէս է արտայայտւում մեր նոր յաղթանակի մասին «Խորհրդային Հայաստանը».**

«Ստոր եւ զազրելի նենգութեամբ դաշնակցական մաուզերիստները յարձակուել են մեր սահմանապահ գիւղերի եւ պահակների վրայ, եւ ներս են խուժել Դարալագեազ:

Հայաստանի կառավարութիւնը, ժողովրդական կոմիսարների խորհուրդը ամէն բան արել է իր կողմից՝ խաղաղ կերպով դադարեցնելու քաղաքացիական կռիւը: Նրա ուղարկած դելեգացիային Զանգեզուրի դաշնակցականները առաջին անգամ կերակրել են ընդհանուր խօսքերով»:

---

* *Ի դիմաց վարչապետի՝ Ս. Մելիք-Եօլչեան:*

** *1921, Յունիս 19, N 106:*

Խղճալի՛ արդարացում:

Մենք Կարինեանին ճամբու էինք դրել ամենակոնկրետ պահանջներով, որոնք սակայն, լենինեան ալխիմիայի ոյժով, Երեւանում դարձել էին «ընդհանուր խօսքեր»:

Իր դաւամտութեան մէջ բռնած ու արդարօրէն ծեծուած թշնամին հայհոյելով, դէպքերը խեղաթիւրելով եւ սպառնալով հանդերձ՝ սկսած էր զգաստութեան նշաններ ցոյց տալ: Որպէս հետեւանք մեր յաղթական ռազմագործողութեանց, նա կ'աճապարէր Գորիս եւ Թաւրիզ հասցնել իր ուշացած պատասխանը:

Իր պաշտօնական օրգանի* առաջին էջի վրայ կը կարդայինք՝ «Կեցցէ Խ. Հայաստանը եւ նրա անբաժան մաս աշխատաւոր Զանգեզուրը»:

Զոյգ դեկլարացիաներով - մէկը թուագրուած 12 Յունիս, միւսը՝ 13 Յունիս - խորհրդային իշխանութիւնը Լեռնային Ղարաբաղն ու Զանգեզուրը կը յայտարարէր կցուած Հայաստանին:

Մեր սկսած ռազմագործողութիւններից չորս օր անցած, Երեւանի Յեղկոմը Ատրպատականի թեմական առաջնորդ Արքեպիսկոպոս Ն. Մելիք-Թանգեանին կ'ուղարկէ ծանօթ երկու յայտարարութիւնները, որոնց հիման վրայ վերջինը կը յղէ «ժողովրդական կոմիսարների նախագահ քաղաքացի Միասնիկեանին, պատճէնը՝ սպարապետ Նժդեհին» հետեւեալ հեռագիրը. *«Ստանալով կոմիսարներիդ խորհուրդի 1921, Յունիս 13, հրատարակած դեկլարացիան Զանգեզուրի մասին, Վրացեանի համաձայնութեամբ սուրհանդակ ուղարկեցինք Նժդեհի մօտ, պատերազմական գործողութիւնները դադարեցնելու եւ հաշտութեան բանակցութիւններ սկսելու առաջարկութեամբ: Սրա հետ միասին այդ հարցի առթիւ Գրիգոր Վարդանեանին յանձնեցի իմ գրաւոր առաջարկութիւնը Ձեզ: Ներսէս, Թաւրիզ, 1 Յուլիս 1921»*:

* * *

Ահա՛ պատմական երկու կարմիր փաստաթուղթերը, որոնք պարունակում են խորհրդային իշխանութեան կողմից մեզ արուած զիջումները.

1. «Ադրբէջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան Յեղկոմի դեկլարացիայի եւ Հայաստանի ու Ադրբէջանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութիւնների կառավարութիւնների մէջ եղած համաձայնութեան հիման վրայ, յայտարարւում է, որ Լեռնային Ղարաբաղն այժմեանից կազմում է Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան անբաժան մասը:

---

* *«Խորհրդային Հայաստան», թիւ 106:*

Հ.Ս.Խ.Հ. ժողկոմների խորհրդի նախագահ՝ Ա. Միասնիկեան (Ալ. Մարտունի), քարտուղար՝ Մ. Ղարաբէկեան:

1921թ. Յունիս 12, Երեւան»:

2. «Հ.Ս.Խ.Հ. ժողովրդական կոմիսարների խորհրդի յայտարարութիւնը Զանգեզուրի իշխանութեան.

Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան կառավարութիւնը սոյն գրութեամբ նորից դիմում է Ձեզ եւ առաջարկում Զանգեզուրում ապաստանած բոլոր ըմբոստ տարրերին՝ վերջ տալ ապստամբութեանը խաղաղ կերպով եւ հպատակուել երկրի միակ օրինական իշխանութեանը՝ Խորհրդային Հայաստանի կառավարութեանը: Խորհրդային Հայաստանը հայ բանուորների եւ գիւղացիների, համայն հայ աշխատաւորութեան իշխանութիւնն է: Եւ որպէս այդպիսին, նա գործադրել է եւ կը գործադրէ բոլոր ջանքերը մշակելու այն կենսածեւը, որն աւելի հարազատ եւ մօտ է ժողովրդի պահանջներին եւ տեղական պայմաններին:

Նկատի առնելով Զանգեզուրի գիւղացիութեան առանձին կարիքները. Խ. Հայաստանի կառավարութիւնը կարեւոր է համարում յայտարարել, որ նա իր կողմից հնարաւորութիւն է տալիս Զանգեզուրի աշխատաւորութեանը մշակել ուրոյն համայնական կենցաղ: Զանգեզուրի բոլոր բնակչութիւնը պէտք է ունենայ իր տեղական մարմինները, իր առանձին կենսածեւը:

Սակայն այդպէս լինելով հանդերձ, Զանգեզուրը պիտի կազմէ Խ. Հայաստանի անքակտելի մասնիկը: Նա պիտի կապուած լինի ամենասերտ կերպով բանուորա-գիւղացիական իր հայրենիքի հետ: Այդ կապը պիտի ամրացնեն իրե՛նք՝ Զանգեզուրի գիւղացիները, որոնց հնարաւորութիւն կը տրուի ձեռնարկել ինքնապաշտպանութեան եւ լեռնավայրի ամրացման համար բոլոր անհրաժեշտ միջոցները:

Հ.Ս.Խ.Հ. կառավարութիւնը այժմեանից յայտարարում է, որ Զանգեզուրում ամենալայն չափով կը կիրառուի ընդհանուր զինավարժութեան սկզբունքը, որի համաձայն՝ երկրի ամէն մի քաղաքացի պիտի դառնայ իր տեղավայրի գոյութիւնը պաշտպանող ռազմական ոյժ:

Բայց պաշտպանելով այդ սկզբունքը, Հայաստանի խորհրդային կառավարութիւնը չի կարող թոյլատրել իր տերիտորիայի սահմաններում օտար կազմակերպութիւնը: Զանգեզուրում գործող այժմեան զօրամասերը պիտի ենթարկուեն մեր ընդհանուր հրամանատարութեանը: Եւ նրանք ձուլուելով մեր զօրքի հետ պիտի կազմեն Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետութեան կարմիր զօրաբանակի անբաժան մասը:

Միաժամանակ, Զանգեզուրում կը գործադրուի ամենայն վճռակա-

նութեամբ ընդհանուր քաղաքական ներման այն դեկրէտը, որ հրատարակուել է Հայաստանում:

Խորհրդային կառավարութեան դէմ կռուող բոլոր գործիչները ո՛չ միայն ազատ կը լինեն որեւէ հալածանքից, այլ եւ կարող են անարգել մնալ Զանգեզուրում: Ոչ ոք դրանցից չի աքսորուի երկրի սահմաններից այն չափով, որչափ նրա աշխատանքը չի ուղղուի Հայաստանի խորհրդային իշխանութեան դէմ:

Ելնելով այդ հիմնակէտից, խ. կառավարութիւնը համապատասխան ձեւով է լուծում նաեւ քաղաքական կուսակցութիւնների եւ մամուլի ազատութեան խնդիրը: Բոլոր քաղաքական այն հոսանքները, որոնք կը կտրեն վերջնականապէս իրենց կապը միջազգային իմպերիալիզմի հետ, բոլոր այն կազմակերպութիւնները, որոնք կը պաշտպանեն խորհրդային գիծը, իրաւունք կ'ունենան միանգամայն ազատօրէն գործել Հայաստանում: Այդ հոսանքները կ'ունենան թէ՛ իրենց առանձին կազմակերպութիւնները եւ թէ՛ ազատ մամուլը: Ինչ վերաբերում է Զանգեզուրի աւերուած վայրերին եւ լքուած գիւղերի բնակիչներին, Հայաստանի խ. կառավարութիւնը գտնում է, որ Զանգեզուրից հեռացած նախկին բնակչութեան վերադարձը չպիտի կատարուի հակառակ տեղացի աշխատաւորութեան ցանկութեան:

Զանգեզուրում ապրող հայ գիւղացիութիւնը կարող է ապահով լինել, որ նրանցից չի խլուի ոչ մի հողավայր:

Ի լրումն շեշտուած կէտերի՝ Հայաստանի խորհրդային իշխանութիւնը յայտնում է, որ ներկայումս համայն Կովկասում հաստատուած է ամուր եւ անպարտելի խորհրդային իշխանութիւն: Հայաստանը միացած է եղբայրական կապերով հարեւան պետութիւնների՝ Խորհրդային Վրաստանի եւ Խորհրդային Ադրբէջանի հետ: Լեռնային Ղարաբաղը վերջին համաձայնութեամբ Հայաստանի խորհրդային կառավարութեան կողմից յայտարարուած է Հայաստանի անբաժան մասը:

Չկայ այլեւս, բացի Զանգեզուրից, որեւէ վայր, որ հակառակ լինէր բանուորա-գիւղացիական իշխանութեանը: Նոյնիսկ Շարուր-Նախիջեւանը՝ այն շրջանը, որն իր աւտօնօմ գոյութեան պատճառաւ ստեղծել է աւելորդ եւ անտեղի տարակուսանքներ, կիրառել է լիովին խորհրդային սկզբունքը: Դա խորհրդային մի վայր է եւ որպէս այդպիսին նա հարազատ եղբայրն է Խորհրդային Հայաստանի, եւ ոչ մի վտանգ Խորհրդային Նախիջեւանի կողմից չի կարող սպառնալ հայ գիւղացիութեանը: Այդ գիտակցում է եւ վերջինը, որն այժմ երկար շարաններով վերադառնում է իր վայրերը եւ տեղական իշխանութեան աջակցութեամբ վերահաստատւում է իր հին բնակավայրերում:

Այդպիսի պայմաններում, երբ ամենուրեք հաստատուել է հզօրաւոր

խորհ. իշխանութիւնը, երբ Խորհրդային Հայաստանը խմբել է իր շուրջը հայաբնակ խոշոր վայրերը եւ դառել է իրական հայրենիք համայն հայ ժողովրդի համար, երբ իմպերիալիստներից եւ հին բռնապետներից ազատագրուած հայ աշխատաւորութիւնը ունի իր սոցիալիստական պետութիւնը, ուր տիրում է հայ լեզուն, Զանգեզուրի ապստամբութիւնը եւ նրա մեկուսացումը խանգարում է մեր հայրենիքի խաղաղ շինարարութեան գործին եւ նրա բոլոր հատուածների վերջնական միացման:

Ուստի, Հ.Ս.Խ.Հանրապետութեան ժողովրդական կոմիսարների խորհուրդը այլեւս չի կարող հաշտուել հին դրութեան հետ եւ առաջարկում է Ձեզ անյապաղ տալ պարզ պատասխան այս պաշտօնական դիմումին:

Հ.Ս.Խ.Հ. ժողկոմխորհրդի նախագահ՝ Միասնիկեան (Ալ. Մարտունի)

Ժողովրդական կոմիսարների խորհրդի անդամներ Պ. Մակինցեան, Ա. Բէկզատեան, Ս. Սրապիոնեան (Լուկաշին), Ա. Կարինեան:

Քարտուղար՝ Միք. Ղարաբէկեան:

13 Յունիս 1921թ., Երեւան»:

* * *

Ընթերցողը կարդաց զոյգ փաստաթղթերը:

Այժմ կ'ուզէի, որ նա որպէս մարդ, մասնաւորապէս որպէս հայ մարդ, բաղդատութեան դնէր այդ կարմիր պաշտօնագրերը հայոց աշխարհի մերօրեայ սեւ իրականութեան հետ:

Ճշմարիտ հայը կարո՞ղ է տարակուսել, որ վաղուայ հայ պատմագիրը, իր ձեռքին ունենալով այդ փաստաթուղթերից մէկն ու մէկը, եղիշէի սրբազան զայրոյթով դատ ու դատաստանի պիտի նստի խորհրդային կոչուած իշխանութեան հետ, եւ տայ հետեւեալ դատավճիռը. *«Նրանց անունը կարմիր էր, գործերը՝ սեւ. թող յաւէտ անիծուած լինեն նրանք»*:

Լեռնային Ղարաբաղին վերաբերող կարմիր գրութիւնը վաղուց է մոխրացել, հէնց իր գրուած ու կնքուած օրը:

Մեր այդ երկրամասը, որպէս քաղաքական կաշառի եւ պրոպագանդի միջոց, վայրկեանի ռազմավիճակի թելադրանքով, փոխն ի փոխն, խոստացուած եւ տրուած է եղել թէ՛ մեզ եւ թէ՛ թաթարներին:

Այդ իսկ պատճառով, մեր օրով նա ունէր, մի տեսակ, երկտէր վիճակ:

Այսօր, սակայն, նա մնում է զատուած Հայաստանի մայր տերիտորիայից:

Մի անմարդկային, մի դաժան անարդարութեամբ՝ խելագար Մոսկուան կտրեց իր մօտից Հայաստանի քաջաքաջ որդու կարօտավառ հայեացքը, եւ դա շղթայեց Ադրբէջանին:

«Դու ինքնավար ես»,- ասացին ղարաբաղցուն, բայց նրան զլացան Հայաստանին միանալու ազատութիւնը:

Թաթարասիրական հաշիւներով՝ մեր այդ ամենաարժէքաւոր երկրամասը դրուեց այնպիսի դրութեան մէջ, որ Հայաստանը կարիքի դէպքում չկարողանայ ռազմագիտօրէն օգտուել նրանից, եւ որ Ադրբէջանը՝ գրաւելով Ղարաբաղը, միշտ էլ վտանգած լինի ո՛չ թէ միայն Սիւնիքը, այլեւ՝ ողջ Հայաստանը:

Այո՛, Ղարաբաղի օրուայ դրութիւնը աւելի նպաստաւոր է թաթար Բաքուի, քան Երեւանի համար:

Այդպէս ուզեց Մոսկուան եւ այդպէս էլ եղաւ:

Ինչ վերաբերում է երկրորդ դեկլարացիային, պէտք է ասել, որ դա ժամանակին քաղաքականապէս լիուլի կը բաւարարէր մեզ:

Մենք, մի ամբողջ տարի, Կարմիր բանակին ուղղած մեր ամէն մի հարուածի հետ կրկնած էինք՝ *Սիւնիքը պիտի կցուի՛ Հայաստանին*:

Խորհրդային իշխանութիւնը այժմ դեկրէտով կը պատասխանէր՝ «Սիւնիքը կցւում է Հայաստանին»:

Մենք պահանջել էինք՝ «Լեռնահայաստանը չէ զինաթափւում, այլ՝ ստանում է զէնքի ու ռազմամթերքի նոր պաշար Հայաստանի կառավարութիւնից»: Այժմ մեզ կը խոստանային՝ «հնարաւորութիւն կը տրուի ձեռնարկել ինքնապաշտպանութեան եւ լեռնավայրի ամրացման համար բոլոր անհրաժեշտ միջոցները»:

Մեր պահանջին՝ Լեռնահայաստանում Կարմիր բանակ չի կազմակերպւում, այլ ընդունւում է ընդ. զինման միլիցիոն սիստեմը», նրանք կը պատասխանէին՝ «Զանգեզուրում ամենալայն չափով կը կիրառուի ընդհանուր զինավարժութեան սկզբունքը, որի համաձայն՝ երկրի ամէն մի քաղաքացի պիտի դառնայ իր տեղավայրի գոյութիւնը պաշտպանող ոյժ»:

Մենք՝ Լեռնահայաստանի գիւղացիութեան սակաւահողութեան պատճառով կը մերժէինք թաթար փախստականների վերադարձը, եւ խորհրդ. իշխանութիւնը կ'արձագանքէր. «Ինչ վերաբերւում է Զանգեզուրի աւերուած վայրերին եւ լքուած հողերի բնակիչներին, Հ. Խ. կառավարութիւնը գտնում է, որ Զանգեզուրից հեռացած նախկին բնակչութեան վերադարձը չպիտի կատարուի»:

Մենք կ'ուզէինք՝ «մամուլի, խօսքի եւ ժողովների ազատութիւն»:

Եւ ժողովրդական կոմիսարների վեց ստորագրութեամբ օժտուած դեկրէտով մեզ կը տրուէր «իրաւունք՝ միանգամայն ազատօրէն գործել Հայաստանում. ունենալ առանձին կազմակերպութիւններ եւ թէ ազատ մամուլ»:

Խ.Հ. կառավարութիւնը, նկատի առնելով Զանգեզուրի գիւղացիու-

թեան առանձին կարիքները՝ «հնարաւորութիւն է տալիս Զանգեզուրի աշխատաւորութեան մշակել ուրոյն համայնական կենցաղ:

Զանգեզուրի բոլոր բնակչութիւնը պէտք է ունենայ իր տեղական մարմինները, իր առանձին կենսաձեւը՝ որ աւելի հարազատ եւ մօտ է ժողովրդի պահանջներին եւ տեղական պայմաններին»:

Իր երկրորդ դեկրէտի մէջ, խորհ. իշխանութիւնը շօշափած է նաեւ Շարուր-Նախիջեւանի խնդիրը. «Դա խորհրդային վայր է, եւ որպէս այդպիսին,- կը փութար հանգստացնել մեզ կարմիր իշխանութիւնը,- նա հարազատ եղբայրն է Խ. Հայաստանի»:

Հայաստանի դռների մօտ նստած քեմալական աւանպոստը հանդիսացող Նախիջեւանը իր հայրենիքի եղբայրը համարել կարող է ապազգային, ներկայապաշտ, անցեղահոգ կառավարութիւնը միայն: Վայրկեանի քաղաքականութիւն վարող կառավարութիւնը իրեն պարտական չէ զգում միտք եւ բազուկ յոգնեցնել իր ղեկավարութեան յանձնուած երկրի եւ ժողովրդի պաշտպանութեան պրոբլեմի վրայ:

Ղարաբաղը թողնելով կղզիացած՝ առանց օրգանական կապի Հայաստանի հետ՝ Մոսկուան մեծապէս կը տկարացնէ Հայաստանի ինքնապաշտպանուելու կարելիութիւնները:

Իսկ մեր երկրի տերիտորիալ մարմինէն կտրելով Նախիջեւան-Շարուրը եւ յանձնելով Ադրբէջանին՝ նա գիտակցօրէն Հայաստանը դրած էր ռազմագիտօրէն զինաթափ վիճակի մէջ, թրքօ-թաթար կրակների միջեւ:

Հայ բոլշեւիկներն էլ մեզ պէս գիտէին, որ Հայաստանի համար աւելի մեծ եւ մահացու վտանգ գոյութիւն չունի, քան Նախիջեւանը:

Միասնիկեանի կառավարութիւնը իր անզօրութիւնը ու դաւաճանութիւնը արդարացնելու մտօք կը ճգնէր միամտացնել մեզ. «Եւ ոչ մի վտանգ Խորհրդային Նախիջեւանի կողմից չի կարող սպառնալ հայ գիւղացիութեան»:

Երկրորդ դեկլարացիան պարունակում է մի այլ խոստում:

Մեր վերջին զարկէն զգաստացած, Հ. ժող. կոմիսարների խորհուրդը առատութեան եղջիւր կը դատարկէր մեր ապստամբ գլխին: Մեզ տրուած քաղաքական բաւարարութիւնը կատարեալ դարձնելու միտումով, նա դիւանագիտական նրբութեամբ շօշափած է անգամ հայկական խնդիրը, մեզ խոստանալով հետեւեալ քաղաքական կանխոյթը՝ «մեր հայրենիքի բոլոր հատուածների վերջնական միացումը»…

Տեսնո՞ւմ էք, նա մեզ տալիս էր աւելին, քան ուզել էինք, քան կը սպասէինք:

Այլեւս բաւարարուած էր լեռնահայութեան ու իր առաջնորդի մեծ, այլ արդար փառասիրութիւնը:

Ի զուր չէր գործել հայ զէնքը:

Արդիւնաւորուած էին մեր երկամեայ ռազմական ճիգերը:

Այժմ մի նոր դեկրէտով չեղեալ կը յայտարարուէր՝ տարի առաջ, Մոսկուայի ներկայացուցիչ Լեգրանի եւ Հայաստանի միջեւ կնքուած չարաբաստիկ պայմանագիրը, որի զօրութեամբ Սիւնեաց աշխարհը թողնուած էր Ադրբէջանին: Քաղաքական այդ ակտից յետոյ, իր մայր երկրին միացած մեր յաղթական երկրամասը, մի ծանր հարկադրանքի տակ, խորհրդային իշխանութեան առջեւ պիտի բանար իր դռները:

Է՛լ անելիք չունէի ես:

Ինձ կը մնար ժողովրդին յայտնել, թէ կը վերադառնամ՝ եթէ Ադրբէջանը փորձեց իր թաթը երկարել դէպի Սիւնիք, եւ բաժանուել հայրենի լեռներից…

VIII

Տարիներ են անցել:

Խորհրդային իշխանութիւնը վատօրէն դրժած է - Սիւնիքի կցումէն զատ - իր բոլոր հանդիսաւոր յանձնառութիւնները:

Նա թքած է այն կնիքի վրայ, որով 1921, Յունիս 12ին, վաւերացրեց իր զոյգ յայտարարութիւնները՝ Ղարաբաղի եւ Սիւնիքի մասին:

Հաւատարիմ իր դիւային բնութեան՝ նա շատ շուտ հաստատեց, որ գիտէ ստել, խաբել անգամ դեկրետներով:

Նա դեռ այսօր էլ «Նեռ է՝ չար ու կործանիչ»:

Այդ իսկ պատճառով, դեռ այսօր էլ մեր չեկայաչարչար հայրենիքում, ինչպէս մէկուկէս տասնամեակ առաջ, «ձախութեամբ հիւանդ» տարրերի վայրագութիւնն է իշխում:

Ի՛նչ եմ ասում:

Մեր ժողովրդի վիճակն այսօր աւելի՛ ծանր է, աւելի՛ անմխիթար:

Այսօր մեր ժողովրդին արգիլուած է Աշուղ Ջիւանիի «Ձախորդ օրերը» իսկ երգել:

Այսօր,- պիտի ասէր Աբովեանը,- «Հող ունինք խլուած, կեանք ունինք մեռած»:

Երէկ այնտեղ, երկրում ազատ էր գոնէ համայնավար հայը:

Իսկ այսօր, մեծ վրացու, աւելի ճիշտը՝ վրացի եռապետութեան քմահաճոյքով, Հայաստանում իրենց գլխի տէրը չեն անգա՛մ համայնավարները:

Այժմ այնտեղ փչում են «դաւանական» այլ հովեր:

Նոր ժամանակները նոր, հեթանոս պահանջներ դրին Երեւանին:

Բաւական չէ՛,- հիւսիսից սաստեցին նրան,- *բաւական չէ՛ համայնավար լինել, պէտք է լինել նա՛խ Ստալինապաշտ:*

Եւ այժմ քաղաքականապէս զարնուած մեր հայրենիքում ասիական ժանտախտի վարակչութեամբ տիրում է Ստալինախտը:

Այժմ այնտեղ մարդիկ հարկադրուած՝ մրցում են ստալինապաշտութեան մէջ:

Վա՛յ նրան, ով թերացաւ օրեկան եօթն անգամ, մուսուլմանի մոլեռանդութեամբ նամազի նստել Ստալինի պատկերի առջեւ:

Վա՛յ նրանց, որոնք չգիտեն ուղտի պէս ծունկ ծռել նաե՛ւ կարմիր ցարի կովկասեան փոխարքայի՝ Բերիայի առջեւ:

Վա՛յ Հայաստանին, եթէ յանդգնեց երազել իր Ղարաբաղի, Ախալքալաքի եւ Նախիջեւանի մասին, կամ տրտունջ բարձրացնել Ստալինի կողմից եօթնիցս բարերարուած Վրաստանի համար միայն հում նիւթեր արտադրող արիկեան գաղութի դեր կատարելու դատապարտուած իր դառն բախտի դէմ:

Վա՛յ այդ բոլոր դէպքերում, եւ մա՛հ այն բոլորին, որոնք կը փորձեն իրենց Կարմիր տիրոջ յիշեցնել կէս մոռացուած հայոց երկրի եւ ժողովրդի մասին:

Մեր ժողովրդին տրուած չէ իր ապագայի մասին մտածելու, մտահոգուելու եւ խռովելու իրաւունք:

Փաստօրէն, նրան արգիլուած է ինքնապաշտպանութեան իրաւունքը:

Դժոխազգի բոլշեւիկի, վրացու եւ թաթարի համար հանդուրժելի է միայն անզօր, անտէր եւ անապագայ Հայաստանը:

Ահա՛ թէ ինչու, ժամանակին, թրքացեղ Լենինի հաճութեամբ մեր երկրի ռազմագիտական բոլոր բանալիները յանձնուեցին օտար դռնապանների:

Վերջերս երկրի հայութեան - փա՛ռք իրեն - լուռ խռովքը, Խանջեանի միջոցաւ, փորձեց խորհրդային նոր սահմանադրութեան հեղինակից պահանջել այդ բանալիները, եւ չեկիստի գնդակներն եղան իրեն պատասխան:

Եւ լա՛ւ է, որ այդպէս եղաւ:

Յաճախ, ժողովուրդներին խորապէս ցնցելու, նրանց մահաքունը փարատելու, նրանց մտածողութիւնը յեղափոխելու համար՝ սիրտ պայթեցնող դրամանե՛ր են պէտք:

Խանջեանի արիւնոտ ողբերգութի՛ւնն էր պէտք, որպէսզի կարմիր հայն իսկ համոզուէր, թէ Մոսկուայի համար հայութիւնը այնքան արհամարհելի է, որ իր ճակատագիրը ամենաթեթեւ չափով իսկ չէ շօշափում ստալինեան նոր սահմանադրութիւնը:

Ընդվզեց Խանջեանի մարդկային - ինչո՞ւ չասել՝ նաե՛ւ հայկական - արժանապատուութիւնը:

Եւ լա՛ւ է - փա՛ռք ճակատագրին - որ այդ այդպէս եղաւ:

Չհաւատա՞նք, որ Հայաստանի առաջին համայնավարի մահառիթ զայրոյթը մոխրացրեց հայ մեծամասնականութիւնը քաղաքական ու գաղափարաբանական կուրութեան մէջ պահող լենինեան աչքակալները:

Խանջեանը իր արիւնով քաւեց իր հակազգային մեղքը, իր բոլշեւիկութիւնը:

Եւ երկրի հայութիւնը, որ այնքան կ'ատէր Կոմկուսի միահեծան քարտուղարին, վերջինի թաղման, հակառակ իշխանութեան կողմից ցոյց տրուած շնական վերաբերմունքին եւ անխօս արգելքին, մասնակցեց բազմահազար զանգուածով:

Այդ օրը իշխանութիւն եւ ժողովուրդ իրար աչքի մէջ նայեցին եւ զգացին, որ օտա՛ր, մահացուօրէ՛ն օտար են իրար:

Նա՛, որ մինչեւ զղջումը Մոսկուային էր, իր մահէն յետոյ դարձաւ Հայաստանին, դարձաւ իր ժողովրդի մարդը եւ համարուեց կարմիր իշխանութեան թշնամի:

Նա, որ տարիներ շարունակ մահու եւ կենաց գուպար էր վարել մեր դէմ - նրա՛նց դէմ, որոնք ժամանակին իրենց արիւնով Սիւնիքի, Ղարաբաղի եւ Նախիջեւանի դատն էին պաշտպանել, տարիներ յետոյ, ի պաշտպանութիւն մեր այդ միեւնոյն երկրամասերի, պիտի ծառանար Մոսկուայի դէմ եւ մեռնէր մեր սրբազան դատի համար:

Այսպէս, Կրեմլի հայաստանեան ամենազօր մարզպանը արնոտ զղջումի ճամբով վերադարձաւ իր երկրին, իր ցեղին:

Մնացին իր երէկուայ ծառաները - կարմիր իշխանութեան անհոգի գործակալները, գործիքները - Տէր Մինասեանները:

Չհաւատա՞նք, որ այդ վերջինները - թէկուզ Խանջեանի երկարամեայ տիրասէր ու ծառայական ընթացքը կրկնելով՝ մի օր, վաղ թէ ուշ, պիտի բռնեն զղջումի ճամբան:

Այո՛, պիտի վերադառնան բոլորը, եթէ ցեղօրէն եւ մարդկօրէն մեռած չեն:

Պիտի վերադառնան բոլո՛ր ուրացողներն ու մոլորուածները, եթէ ցեղի հոգիէն ու մարմինէն են:

Պիտի վերադառնան դէպի իրենց արդար ու *մեծահոգի ցեղը, որի համար նահատակի, հերոսի եւ սուրբի չափ սիրելի է նաե՛ւ զղջացեալ ուրացողը:*

Պիտի վերադառնան բոլո՛րը. հայոց պատմութիւնը սպասում է նրանց:

Պիտի՛ վերադառնան. Խանջեանի արի՛ւնը վկայ:

* * *

Այս վաւերագրութիւնը լոյս է տեսնում ոչ թէ pro domo sua, ոչ թէ պաշտպանուելու, այլ՝ պաշտպանելու համար լեռնահայութեան մեծափառ մի գործը՝ նրա նորագոյն գոյամարտի արժէքը:

Արդար հպարտանքով եմ խօսում այդ գոյամարտի մասին ո՛չ թէ նրա համար, որ ես եմ վարել դա, այլ՝ որովհետեւ Հա՛յը, Հա՛յն է յաղթանակած այդ գոռ գոյամարտում:

Գ. Տէր Մինասեանն էլ փրկութիւնը թրքօ-բոլշեւիզմի տապարից կը պարտէ ինձ:

Տեսնուած չէ որ փրկիչը պաշտպանուի փրկուածի դէմ, որքան էլ այդ վերջինի ապերախտութիւնը մարդկօրէն ընդվզեցուցիչ լինի:

Որպէս իմ ժողովրդի անուան եւ նրա զէնքի պատուին նախանձախնդիր զօրական՝ պարտականութիւն համարեցի պատռել դիմակն այն թշուառականների, որոնք իրենց հոգեւոր կուրութեան բերումով, հայոց պատմութեան մէջ միայն «պարտութիւններ ու գաղթեր» են տեսնում:

Ամէն տգէտ դաւաճան չէ, բայց ամէն դաւաճանող միաժամանակ ե՛ւ տգէտ է, սրտո՛վ տգէտ:

Այդպիսին է Գ. Տէր Մինասեանը, որին տրուած չէ հասկանալ, որ հարազատ ժողովրդի վարած ազատագրական կռիւների արժէքը կասկածի տակ դնել, դրանք արկածախնդրութիւն համարել, նշանակում է՝ հարուածել իր ժողովրդի ազգային ինքնազգացողութիւնը. նշանակում է՝ իր ժողովրդին մղել սեփական ոյժերի ստորագնահատման, ինքնանուաստացման եւ աղիտալի պարտուողականութեան. իսկ դա նշանակում է՝ վտանգել իր ժողովրդի գոյութիւնը, ապագան:

Բոլոր ժամանակների գեղէոնները՝ իրենց ուրացումն ու դասալքութիւնը արդարացնելու նպատակով, իրենց ժողովրդի վարած անգա՛մ հերոսական կռիւները յայտարարած են «արկածախնդրութիւն», առանց հասկանալու, որ հէնց կողմերի անհաւասարութիւնից է ծնունդ առնում պատերազմը:

Վատերը չեն հասկանում, որ եթէ անհաւասար ոյժերի միջեւ տեղի ունեցած ամէն կռիւ համարուէր արկածախնդրութիւն՝ թուապէս տկարի հաշուին, որ եթէ թուապէս տկարին զլացուէր յանդգնելու, հակահարուածելու իրաւունքը, այն ժամանակ կը մեռնէր արիութիւնը, է՛լ Աւարայրներ ու Վարդաններ չէինք ունենայ, է՛լ հերոսներ ու հերոսականներ չէին ստեղծուի, զոհն ու զոհաբերութիւնը կը կորցնէին իրենց անունն ու վեհութիւնը, Հայրենիքն՝ իր պաշտպանը, արդարութիւնը՝ իր ախոյեանը, իրաւունքն՝ իր տէրը. այն ժամանակ աշխարհը կը կորցնէր այն ամէնը, որ հերոսական է ու վսեմ մարդկային ցեղերի պատմութեան մէջ,

այն սրբազանը, որով սնուում է եւ դաստիարակւում մարդկային հոգին:

Պատմութեան նպատակը՝ ստրուկների - ժողովուրդ թէ անհատ - գոյութեան տեւականացնելը չէ, այլ՝ նրանց ազատագրումը արիւնալի ընդվզումների ճամբով:

Զօրաւորի հետ չափուելու գեղեցկութիւնէն երբեք զուրկ եղած չէ մարդկութիւնը:

Մասնաւորապէս մեր դարում, մեր օրերում չկա՛յ աւելի մեծ առաքինութիւն, քան յանդգնելու, զօրաւորին հակահարուածելու, բռնացողին զարկելու, ինքնապաշտպանուելու վճռականութիւնը:

Սրբազան է ինքնապաշտպանողական ամէն գոյամարտ: Այդպիսի՛ն էր իմ վարածը Սիւնեաց աշխարհում: Երկու տարի տեւող կռիւների առաջին շրջանում պէ՛տք էր թրքօ-թաթար վտանգից փրկել Սիւնիքի հայութիւնը:

Երկրորդ շրջանում - ինքնավար Սիւնիքի օրով - պէ՛տք էր մահացու անդամահատութիւնից փրկել Հայաստանը՝ Մոսկուայի կողմից Ադրբէյջանին տրուած Սիւնեաց երկիրը:

Երրորդ շրջանում - Լեռնահայաստանի օրով - պէ՛տք էր հոգեբանօրէն հրահրել եւ ռազմագիտօրէն կարելի դարձնել Հայաստանի Փետրուարեան ապստամբութիւնը, ապա փրկութեան կամուրջ հանդիսանալ բոլշեւիզմի գազանից մազապուրծ եղած հայ մտաւորականութեան համար:

Սիւնիքի գոյամարտը, որի աննախընթաց յաջողութեան գաղտնիքը պէտք է փնտռել մեր Դաւիթբէգեան վաշտերի քաջութեան ու մեր գործադրած՝ թշնամու համար անծանօթ ռազմավարութեան մէջ, տեղի է ունեցած արդիական կռիւներ վարելու հնարաւորութիւնը ժխտող ծանր պայմաններում:

Սա տարուել է շրջագծաձեւ ճակատի վրայ, առանց խոր թիկունքի, աշխարհից կտրուած, դռնփակ:

Զուրկ հացից ու տեխնիկ միջոցներից՝ Սիւնիքը, առանց արտաքին օգնութեան, իր եռագլխանի թշնամուն ծեծած է նրանից խլած զինամթերքով: Եւ եթէ մեռնողների իրաւունքն է՝ գիտնալ, թէ ինչո՞ւ է մեռնում - իմ ամէն մի զինուորը գիտակցել է այդ, եւ «գիտացեալ» մահը դիմաւորել աստուածային արհամարհանքով:

Իմ գործադրած՝ Սիւնեաց երկրի տեղագրութեան ու ժողովրդի հոգեբանութեան յարմար՝ ռազմավարական ձեւերի շնորհիւ, մեր ունեցած զոհերի թիւը եղած է չնչին:

Ընդհակառակը՝ հսկայական է եղած թշնամու կորուստը:

Թշնամին՝ իր թուական, տեքնիկ եւ քաղաքական գերազանցութիւնից զատ, ունէր նաեւ մի այլ պլիւս՝ շնական արհամարհանք դէպի մարդկային բոլոր տեսակի սրբութիւնները:

Նա զգալով իր զէնքի անզօրութիւնը, իր պաշտօնական օրգանի մէջ, կրկնակ խորագրութեան տակ՝ «Զօրաւոր զէնքը - Մեր կռուի ձեւերը», կը խոստովանէր. *Կարմիր բանակի դիմաց խորամանկ ու յամառ թշնամին՝ Նժդեհ, Դրօ եւ այլ հին գայլերը լաւ գիտեն պատերազմական գործը:* Սրա համար էլ բելօգվարդիական այդ աւազակների դէմ անհրաժեշտ է ունենալ ամուր ոյժ: Մենք չպէտք է մոռանանք, որ ապստամբների յաջողութիւնը կախուած է ժողովրդի տրամադրութիւններից: Այդ իսկ պատճառով, Կարմիր բանակի նպատակը պէտք է լինի թշնամու կենդանի ոյժերի ոչնչացումից զատ, *ապստամբութեան ղեկավարների դէմ հանել ազգաբնակութիւնը*»*:

Ա՛յս էր թշնամին, որի «զօրաւոր զէնք»ը իր բանակը չէր, այլ՝ վատութիւնը, դաւը, աղուէսութիւնը. ա՛յս էր բոլշեւիկը, որի «կռուի ձեւեր»ը հայհոյութիւն էին մարդկային արիութեան եւ բարոյականի դէմ:

Անցողակի ասենք, որ այդ օրերին՝ Անդրանիկը ո՛չ թէ Զանգեզուրում, այլ Հայաստանում չէր: Գիտենք նաեւ, որ նա դէմ չէր Կարմիր բանակին: Այդ այդպէս լինելով հանդերձ, Կարմիր բանակի զօրահրամանատարութիւնը նրան եւս կ'անուանէր «հայ ժողովրդի դահիճ».

*«Բազմաչարչար հայ ժողովրդի դահիճները՝ Դրօ, Նժդեհ, Անդրանիկ եւ այլ ծառաները գիշատիչ իմպերիալիստների»***:

Մենք երբեք չանգիտացանք ռազմական էտիկայի պահանջները:

Իմ զինուորը մնաց մարդ բոլոր կռիւներում, եւ բոլոր դէպքերում:

Իմ ժողովրդական բանակը միշտ էլ յաղթեց նաե՛ւ բարոյապէս՝ իր թշնամիներին դէպի հայ զէնքը յարգանք ու հիացում պարտադրելով:

Թաթարները, որոնք իմ զինուորի գարշապարի ծանրութիւնը զգացին իրենց մօտաւորապէս երկու հարիւր գիւղերի սեմին, «անկեղծօրէն կը խոստովանէին իրենց պարտութիւնն ու փախուստը»***:

Թուրքերը խօսեցին «հայերի քաջութեան մասին»****:

Հարեւան պարսիկները մեր կռիւներն անուանեցին «մեծ քաջագործութիւններ»:

Կարմիր բանակի համար մենք եղանք՝ «հին գայլեր, որոնք լաւ գիտեն զինուորական արուեստը»*****:

---

* *«Կարմիր աւանգարդ», 1920, N 52:*

** *Նոյն տեղում:*

*** *«Ազատ Սիւնիք»:*

**** *«Հայրենիք», 1924, թիւ 7:*

***** *«Կարմիր աւանգարդ», 1920, 30 Հոկտ., Բագու:*

Կասեանի կառավարութիւնը մեր զէնքի յաջողութիւնները վերագրեց Անգլիոյ ամենազօր մատին. ''Es gelang uns aber dennoch, den Feind zu verdrangen, der in den Beggelande fluchtete, wo ihm die Hilfe der englischen Imperialisten zuteil wurde'': Kassian*:

«Բայց եւ այնպէս յաջողեցանք թշնամին փախցնել դէպի լեռնաշխարհ, ուր իրեն օգնութեան եկան անգլիական իմպերիալիստները»:

«*Մոսկուայի թերթերը*,- կը գրէր Ս. Վրացեանը,- *գտնում են, որ Լեռնահայաստանի հերոսական եւ զարմանք պատճառող…*»:

Այսպիսի՛ն էին իմ վարած կռիւները Լեռնահայաստանում, ուր - հաստատագրենք եւ այդ - պետական կանոնաւոր բանակ չէր իմ ղեկավարածը, այլ՝ մի շինական ժողովուրդ, որը զէնքից զատ հարկադրուած էր գործածել նաե՛ւ իր արօրն ու մանգաղը: Պէտք էր ժողովրդի ծոցից դուրս քաշել նոր պետեր, որովհետեւ ցարական զինուորականները վաղուց էին թողել, հեռացել: Պէտք էր մարզել, թրծել, հասցնել ժողովրդական նոր ղեկավարներ, որոնք կարողանային լեռնահայ զանգուածների մէջ ոտքի հանել, արթնցնել մեր ցեղի նիրհած ռազմախանդ ոյժերն ու առաքինութիւնները:

Թշնամու անվերջօրէն կրկնուող յարձակումների դէմ հրամայողաբար պէտք էր ստեղծել անցեալի ցեղային արժէքներով, փառքերով ու սրբութիւններով թաթախուն մի մթնոլորտ, որի մէջ սիւնեցին մահն անգիտացող խոյանքների մղուէր:

Եւ արուեց այդ բոլորը:

Արուեց, որ Սիւնիքը Հայոց պատմութեան եւ Հայաստանի համար կատարէ ա՛յն, ինչ որ կատարեց:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

«Կարմիր բանակը իր լաւագոյն ընկերների սպանութեան համար դաշնակ հակայեղափոխութեան կը հատուցանէ գլխովին ոչնչացմամբ»:

---

* *''Protokol der III kommunistischen Internationale'' գրքի մէջ, լոյս ընծայուած 1921, Յունիս 22ին, Մոսկուայում գումարուած Երրորդ Միջազգայնականի կոնգրեսի կողմից:*

* * *

- Ընթերցողը տեսնում է, որ Կարմիր բանակը, որը որպէս կենդանի զէնք Մոսկուայի կողմից դրուած էր թաթար Նարիմանովի եւ Անգորայի կառավարութեան ներկայացուցիչ Իբրահիմ Թալիի տրամադրութեան տակ, իր պաշտօնական օրգանի* միջոցաւ, դեռ Հայաստան չմտած, կը սպառնար ոչնչացնել ամբողջ Դաշնակցութիւնը, որ ասել է՝ ազգայնական ու պայքարունակ հայութիւնը:

Ծանօթ լինելով բոլշեւիկների յետագայ գործունէութեան, ո՞վ կարող է կասկածել, որ Բագուի եւ Միլլիի փայտիկով շարժուող Կարմիր բանակը տառացիօրէն պիտի չգործադրէր Դաշնակցութեան մասին արձակած իր մահավճիռը, եթէ դիւցազնական Սիւնիքը չսանձէր նրան, եւ ռազմագիտա-հոգեբանական կարելիութիւն չընծայէր Երեւանին՝ իր «Փետրուար 18»ը կազմակերպելու, ու վտանգուածները Սիւնիք ապաստանելու:

Այո՛, ե՛ւ երկրի մտաւորականութիւն, ե՛ւ մարտական ոյժեր, ե՛ւ Հ.Յ.Դաշնակցութիւն - այդ բոլորը իրենց գոյութիւնը կը պարտին Սիւնիքին, միա՛յն Սիւնիքին:

Երկու խօսք ե՛ւս:

Եթէ ժողովրդի արիւնը թափել թոյլատրելի է միայն եւ միմիայն այն դէպքում, երբ հարկադրաբար պէտք է պաշտպանել նրա երկիրն ու ֆիզիքականը - 1919, 1920, 1921-ին մեծապէս վտանգուած էր Սիւնիքը:

Եւ նա, Սիւնիքը, իմ ղեկավարութեամբ, զինաթափեց իրեն սպառնացող վտանգը - յաղթանակեց:

Եթէ ժողովրդի առաջնորդը իրեն մատնում է առաւելապէս իր հայրենիքի նեղ ու ճակատագրական օրերին՝ լեռնահայութեան ճակատագիրը ես վարեցի մեր պատմութեան ամենապատասխանատու մէկ վայրկեանին:

«Աշխարհի ամենազարմանալի բաներից,- ասում է Լակորդերը,- մէկն էլ այն է, որ երբեք ո՛չ մի պետութիւն, ինչպէս եւ ո՛չ մի յաջողութիւն չէ կարողացել իրեն ենթարկել պատմութիւնը եւ նրա միջոցաւ գալոց սերունդները խաբել»:

Սիւնիքի գոյամարտը պատմութեան կը պատկանի:

---

* *«Կարմիր աւանգարդ», 1920, 30 Հոկտեմբեր:*

ԲԱՆՏԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ*

(ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ)

* *Տպագրվել է Երեւանում, 1993թ.:*

Հայաստա՛ն եւ ճշմարտութիւն - ահա՛ իմ աստուածութիւնները:

Հայրենասէր չես, եթէ կեանքդ տրուած չէ ի սպաս սրանց, որոնցից մէկին ծառայել կարելի է միւսի միջոցով միայն:

Խորհրդանիշ՝ ինձ համար չէ նշանակում մտածել միայն: Դա, միաժամանակ, եւ ինքնախորացում է, երկո՛ւնք, որ հնարաւոր է դարձնում ներատեսութիւնը:

Սիրո՛ւմ եմ գաղափարը, որ աշխարհ է գալիս ներքին գողգոթայի ճամբով կամ էլ փայլատակում է ուղեղիդ մէջ - մտքիդ իբրեւ շանթող յայտնութիւն:

I

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

- «Հեռո՛ւ ստուքիւնից եւ լի նրանով,
ինչ ընդդէմ է ստուքեան»:

ԽՈՐԵՆԱՑԻ

Պատմուքիւ՛ն - դա անաւարտ վէպ չէ, այլ՝ չաւարտուած ճակատամարտ:

Եւ իր էջերը՝ ռազմադաշտե՛ր, որոնք արիւնով են ներկում եկողանցնող սերունդները:

* * *

Ազգերի կեանքն՝ ըստ էուքեան՝ գօտեմարտ է մահուան հետ:

Նրանք - ազգե՛րը միայն այն չափով են կենսունակ ու ստեղծագործ, ինչ չափով վերապրած եւ իմաստաւորած են իրենց անցեալը, իրենց պատմուքիւնը:

* * *

Պատմագրել՝ նշանակում է կռուի մտնել ժամանակի հետ՝ թոյլ չտալու համար, որ նա մարդկային ազգի անցեալն սպանի: Ժողովրդի անմահուքեան կոթողն է պատմուքիւնը:

Վա՛յ այն ժողովրդին, որի անցեալն իր համար լոկ մի գերեզման է անխօս: Չկա՛յ աւելի մեծ ծառայուքիւն՝ իր ժողովրդին, քան պատմագրումը նրա անցեալ կեանքի: Նոր Խորենացիներ, Եղիշէներ թող ճակատագիրը չզլանայ մեզ:

* * *

Ճշմարիտ պատմագրուքեան դէմ մեղանչում ենք, երկու դէպքում. նա՛խ՝ երբ անգիտանալով անցքերը վերլուծող, կապակցող, համադրող եւ տեսականօրէն ընդհանրացնող մտքի դերը՝ նրան հաղորդում ենք վիպական գունաւորում, որով այն՝ պատմուքիւնը վերածում ենք մի երկարաշունչ պատմավէպի: Կամ էլ՝ երբ անգիտանալով սրտի դերը,

պատմութիւնը դարձնում ենք պեղումների եւ հանածոների մի մեռեալ նկարագրութիւն, այսինքն՝ ցամաքեցնում ենք ժողովրդի ոգեշնչման աղբիւրը, որպիսին պէտք է որ լինի պատմութիւնը: Նաե՛ւ իմաստասիրելու կարող - ահա՝ թէ որպիսին պիտի լինի պատմագրողը: Իր անունն արդարացնելու համար՝ պատմագրութիւնը պիտի լինի, միաժամանակ, նաե՛ւ պատմութեան փիլիսոփայութիւն: Անցքերին թափանցել իմաստասիրական վերլուծող մտքով, եւ նրանց մասին խօսել սրտի լեզուով: Այսպիսի՛ն էր Միշլէն: Մարդկային կեանքի պէս՝ պատմութիւնն էլ ո՛չ լոկ սրտի, ո՛չ էլ միայն մտքի գործ է, - դա սինթէզն է երկուսի:

Անցքերն ու անձերին հասկանալու համար բաւական չէ միայն տեսութիւնը, պէտք է նաե՛ւ համազգալ նրանց:

Ընդունենք եւ այն, որ պատմութեան նշանակութիւնը ոչ միայն ճանաչողական է, այլեւ՝ դաստիարակչական, վերանորոգչական:

* * *

Պակասաւոր է այն հայը, ով հայրենի պատմութեան իմաստասիրութիւնը, նրա հետագայ զարգացման ուղիները հասկանալու համար չի վերապրել իր ժողովրդի ողջ անցեալը:

Շատ բան խնայուած կը լինէր հայութեան - տառապա՛նք, արիւննե՛ր, կորա՛նք - եթէ հայ մտաւորականութիւնը դեռ անցեալ դարի երկրորդ կէսից երեւան եկած լինէր ընդհանրապէս պատմութեան, եւ ի մասնաւորի՝ հայոց պատմութեան իմաստասիրութեան լրիւ սպառազինութեամբ:

* * *

Պէտք է վերապրել եւ վերիմաստաւորել հայրենի պատմութեան ողջ հոլովոյթը:

Պէտք է Հայկի հետ ծառանալ Նեբրովթի դէմ, Տիգրանի հետ՝ ընդարձակել Հայաստանը, Արտաշէսի հետ՝ բարեկարգել այն, Բագրատունիների հետ Անին հրաշակերտել եւ ապա՝ նրա կործանումը ողբալ... Ի մի բան՝ պէտք է վերապրել մեր պատմութեան բոլոր բախտորոշ անցքերը - նրա վերելքներն ու անկումները, նրա փառքերն ու տառապանքը, նրա աննկուն ընդվզումներն ու կուլտուրական հարուստ շինարարութիւնը:

Այսպէս՝ մինչ մեր օրերը:

Այսպէ՛ս են ճշմարտօրէն Հայաստանում Հայ սիրտն ու գիտակցութիւնը:

Այսպէ՛ս է ստեղծւում համահա՛յը, ամբողջական հայը:

* * *

Գուժկա՛նը - ամենաողբերգականը Հայոց պատմութեան դերակատարներից, որի դերը Հռոմում, արտաքին վտանգների ժամանակ, կատարում էր ծիրանագոյն դրօշը՝ պարզելով Կապիտոլիումի վրայ:

«Ահա՛, հասաւ գուժկանը... Ի նշան սգոյ պատռեց օձիքը եւ հող ցանեց գլխին»*:

Ո՞վ է այդ եղերականը, եւ ի՞նչ է խորհրդանշում նրա երեւումը յեղակարծ:

Գուժկա՛ն - դա խռովուած անձնաւորումն է իր ժողովրդի հաւաքական գիտակցութեան, նրա արթուն բնազդի, նրա ապրելու կամքի:

Հասէհա՛ս է վտանգը - շուտով կը պայթի ամպրոպը, եւ ահա՛ Հայաստանով մէկ տարածւում է կարմիր գոյժը՝ մրրկելով ու մտրակելով բոլոր կամքերը:

«Ելէ՛ք, ելէ՛ք, եւ օրհասակռուի պատրաստուէք... Նուա՞լ, ո՛չ, ո՛չ, ես արդէն ողբացի ամէն հայու փոխարէն, եւ՝ պատռելով օձիքս՝ զգացի ցաւը ո՛ղջ ազգի... Ելէ՛ք, վատութիւն է վայել, երբ հարուածող բազուկներ ունենք. մա՛հ, մա՛հ՝ մեզ մահուամբ սպառնացողին: Ելէ՛ք, յանուն կեանքի, նրա բարեշրջման, նրա կատարելութեան, ելէ՛ք... Մահէն աւելի կեանքն է զօրաւոր, ելէ՛ք»...

Այսպէ՛ս է ապրել, վերապրել, յաւերժացել հայը:

Այսպէս, ամէն անգամ, երբ յայտնուել է գուժկանը՝ իր հիմք-պատուանդանից սասանուել է հայութիւնը, ցնցուել, իր մէջ յաղթահարել իր ներքին տկարութիւնները, եւ՝ իր վաղեմի մեծութեան վայել մի ամեհի ծառացումով, ելել մահուան ճամբաներն է կտրել՝ մահէն է՛լ զօրաւոր...

---

* *Հայոց պատմութիւն:*

II

ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Ժողովուրդը կը նմանի իր երկրին, որն իր ներքին ուժերի աշխատանքով բարձունքներ է կարկառում:
Մասիս թէ Մեսրոպ - հաւասարապէս սրբազան կատարներ, որոնց տրուած է գոյութեան բարձունքներում պահել հայ միտքն ու հայեացքը:

Կան դանդաղ զառամող ու մեռնող ժողովուրդներ - նրա՛նք, որոնց անցեալ գոյութեան դպրոցը՝ իրենց երկրի աշխարհագրական դիրքի եւ արտաքին այլ ազդակների շնորհիւ եղել է նուազ դժուարին: Պատմութեան կողմից բարերարուածներն են դրանք՝ տէր միջակ մորալի, որոնք կորցրած իրենց անհատականութիւնը, շարունակում են ապրել իրենց անցեալի վարկով միայն:

Ամէն ժողովուրդ իր ուսերի վրայ է կրում իր պատմական բախտի բեռը:

Նուազ ոգելից եւ խոստումնալի է այն ժողովուրդը, որը գնալով չի երիտասարդանում հոգեպէս, որին պակասում է իր պատմական առաքելութեան գիտակցութիւնը:

Նմանին, զլանալով իր յարգանքը, աշխարհը ասում է՝ ապրելու եւ ստեղծագործելու համար նա՛խ ճանաչիր եւ ճանաչել տուր քե՛զ:

* * *

Փոխադարձ է ազդեցութիւնը երկրի եւ այն մշակող ժողովրդի միջեւ: Հնագոյն ժամանակներում, ինչպէս եւ քաղաքակրթութեան լուսաբացին, առաւել չափով զօրաւոր է եղել բնութեան ազդեցութիւնը մարդու վրայ:

Անհամար թելերով է կապուած իր գետերին, իր Վոլգային ռուսական հոգին:

Ցովի, ծովեզրերի ծնունդ է յոյնը:

Անապատն է կաղապարել արաբի էութիւնը: Իսկ հայ էութիւնը մշակելու գործում ազդեցութեան առիւծի բաժինը ընկել է Հայոց լեռներին:

Մասի՛սն է դայեակը հայ հոգու:

* * *

Ծո՛վ է ժողովուրդը: Ինչպէս հողմերից առաջացած ալիքները չեն դրսեւորում ծովի ողջ դինամիկան, նրա զօրութիւնը, այնպէս էլ ժողովուրդների առօրէական մանրագործութիւնները չեն սպառում այն ամէնը, որ տեղի է ունենում նրանց հոգու խորքում:

Կան խորքային ալեկոծութիւններ, որոնք ընդգրկում են բովանդակ ծովը:

Կան նաե՛ւ հոգեշարժեր - պատերազմ, յեղափոխութիւն, վերածնունդ, որոնց ընթացքում ժողովուրդը իւր էութիւնն ու ուժերը բացայայտում է առաւելագոյն չափով:

Այո՛, ծով է ժողովուրդը: Դա հոգու միասնութիւն է: Ով չգիտէ, ով չի զգում այդ՝ թող հեռու մնայ նրանից:

* * *

Ժողովուրդն է մեր ժամանակների աստուածութիւնը: Թէեւ նրա մասին եւ նրա անունից խօսում են իր բոլոր զաւակները, քիչերը, սակայն շատ քիչերն են էաբանօրէն ճանաչում նրան:

Ժողովրդին, ինչպէս եւ բնութեանը ճանաչել կարելի է իր ամբողջութեան եւ խորքի մէջ:

Այսպէ՛ս միայն, եւ ոչ՝ այլ կերպ:

Երկու են դէպի նրա խորք-էութիւնը տանող ճամբաները - իր պատմութիւնը եւ իր աչքերը՝ գերագոյն պահերում:

Առաջինը վկայում է թէ ի՞նչ էր նա անցեալում եւ ի՞նչ կարող էր մնացած լինել նրանից: Երկրորդը խօսում է այն մասին, թէ ի՞նչ է նա այժմ եւ ի՞նչ կարող է դառնալ վաղը:

Ժողովրդի ա՛չքը, որի արտայայտչականութիւնը տրուած չէ մարդկային խօսքին:

Կան գերագոյն պահեր - ժողովրդի գոյութեան ու ճակատագրին սպառնացող արտաքին վտանգի ժամեր, երբ դա լայնանում է, խորանում արծուի աչքի պէս, երբ այդ վերջինը իր բնին, իր ձագերին երկարող թշնամու ձեռքը, ժանիքը, մագիլն է տեսնում:

Նման դէպքերում ժողովուրդն ամբողջապէս աչք է դառնում, որին նայելու արիութիւն չի պակասում սակաւաթիւներին միայն:

Նրա հայեացքից փախչում, թաքնւում են այն բոլորը, որոնք մինչեւ այդ կ'աղմկէին, կը խուժանավարէին հրապարակում - կրկեսայիննե՛րը, ինքնակոչները, սովորականները:

Եւ, իրենց դիրքերի վրայ՝ վտանգի պահուն՝ մնում են զօրաւորները միայն:

«Իմ զաւակը չէ նա, ով ինձ համար մեռնելու հրաման չի աղերսում ինձանից»,- անխօս ասում է հրաբխի պէս արթնացած ժողովուրդը: Եւ գործում՝ իր ապրած դարերի իմաստութեամբ՝ սահմանելով եւ պարտադրելով գերպարտականութեան գործեր:

Նման վայրկեաններին նա զօրաւորների մէջ փնտրում է զօրաւորագոյնին եւ նրա ափի մէջ դնում իր ճակատագիրը:

Այսպէս է աշխարհ գալիս ճշմարիտ առաջնորդը:

Խորքի կանչին արձագանգում է խորքը - ժողովուրդ եւ առաջնորդ գտնում են իրար՝ միանում, ամբողջանում էութենական մի միասնութեան մէջ:

Այսպէս է ստեղծւում հաւաքական սիրտը: Նման պահերին է սրբազանում ապրումը, խօսքը, գործը:

Նման մթնոլորտում են յղացւում հերոսները եւ ծնունդ առնում գործերը հերոսական:

* * *

Ես տեսել եմ մեր ժողովրդին նման հոգեվիճակում. տեսել նրան՝ իր բիբերի մէջ, տեսել խռովքոտ տողանցն իր սերունդների, տեսել ռազմի իր սուրբերին եւ գայլերին՝ Վարդաններին եւ Վահաններին…

Եւ ժողովրդի հզօր շունչով օծուած՝ երկու անգամ անհաւասար ճակատամարտերի եմ առաջնորդել նրա զաւակներին: Ղարաքիլիսէի օրհասական օրերին, երբ թուրք հորդաների հետ մա՛հը կ'անցնէր Ախուրեանը, ու երկու տարի անց՝ Սիւնիքում, ուր պանթուրանականները կը նկրտէին լեռնահայութիւնը վերածել դիակների կամուրջի՝ թուրք եւ թաթար հայրենիքների միջեւ:

Եւ երկու դէպքում էլ հայ մարդը կատարել է ռազմի մեծագործութիւններ, քանզի մեզ հրամայել ու վարել է աչքը ժողովրդի:

* * *

Ժողովուրդն աւելին է, քան իր պետութիւնը, իր իշխանութիւնը, անգամ իր կուլտուրան:

Իր ոգու յայտնութիւնը դժուարացնող բազմազան արգելքների պատճառով նրան յաջողում է իրականացնել իր կարողական ուժերի մի չնչին մասը միայն: Պետութեան - ճշմարիտ պետութեան, բանականութեան եւ մարդկայնութեան վրայ կառուցուած պետութեան դերը հէնց այդ արգելքները աստիճանաբար վերացնելու մէջ է կայանում:

Ժողովուրդ - դա Անտէյն է առասպելական: Պարտուում է նա, հէնց որ կտրուեց հողից: Իսկ այդ վերջինը՝ հայրենի հողը խորհրդանշում է կուլտուր-ազգային այն բոլոր արժէքներն ու սրբութիւնները, որ ստեղծել է ինքը ժողովուրդը:

* * *

Անհատը պարտական է իր ընթացքն արդարացնել իր ժողովրդի առջեւ, իսկ ժողովուրդը՝ իր պատմութեան:

* * *

Ժողովրդից է ամէն յաղթանակ, անկարող ղեկավարից՝ ամէն պարտութիւն:

* * *

«Ես գրում եմ մի ձեռքով, պայքարում՝ երկուսով»:

Այսպէ՛ս, Վիկտոր Հիւգոյի պէս վարուիր, երբ ժողովրդիդ գերագոյն բարիքներն ես պաշտպանում:

Ժողովրդի համար՝ զոյգ ձեռքով - այսպէս բոլոր դէպքերում:

* * *

Կեանքում, խղճմտանքէս զատ ես ճանաչեցի երկու այլ դատաւորների եւս՝ Աստուա՛ծ եւ ժողովո՛ւրդ: Առաջինի դէմ մեղանչեցի, երկրորդի դէմ՝ երբե՛ք:

III

ՀԱՅՐԵՆԻՔ

Նա ծնուեց մարդու առաջին մտածումի հետ՝ թէ սուրբ է հայրենի հողը:

Նա ստեղծուեց այն օրը, երբ մարդն առաջին անգամ լինելով գիտակցօրէն ու ժպտադէմ մեռաւ հայրենի հողի համար: Հայրենիք չէ սոսկ երկիրը, դա հայրենիք է դառնում այն հոգեւոր արժէքներով, որոնցով նրան օժտում է ժողովուրդը:

Երկիրը - դա հայրենիքի աշխարհագրական զրահն է: Հայրենիքը - այդ երկիրը մշակող ժողովրդի ոգին է, նրա մշակոյթը:

* * *

Ժողովրդի հոգեւոր ստեղծագործութիւնը՝ ահա՛ հայրենիքը՝ իր սկիզբն առած նրա բանարուեստի, ձեռագիր գրքերի, սուրբի, լուսակիրի, հերոսի, նրա առաջին աւանդութիւնների հետ:

Հայաստան երկիրը հայրենիք դարձրին Մեսրոպի այբուբէնը, Մամիկոնեանների ուխտը, Բագրատունիների շինարարական մեծագործութիւնը:

* * *

Իբրեւ հասկացողութիւն՝ հայրենիքն ընդգրկում է ո՛չ միայն անցեալն ու ներկան, այլեւ՝ գալիքը: Դա ժողովրդի պատմական առաքելութիւնն է ըստ իր վախճանական նպատակի՝ զարգացող մի յաւերժութիւն է Հայրենիքը: Դա եկող ու անցնող սերունդների անմահութիւնն է, որն իբրեւ գաղափար եւ գործ ժողովուրդը դրոշմում է նիւթի վրայ, խօսքի մէջ, եւ այն ապրեցնում իբրեւ անմեռ յուշ, իբրեւ պատմութիւն:

* * *

Հայրենիք չէ կայսրութիւնը: Հայրենիքը խորացող էութիւն է: Դա արտաքին նուաճում չէ, այլ՝ ինքնանուաճում, ինքնամշակում:

Հրէութեան համար՝ հայրենիքը խորհրդանշող «լացի պատ»ը աւելի մեծ հոգեւոր տարողութիւն ունի, քան Չինաստանը՝ չինացիների համար:

Աշխարհակալութի՛ւն - ահա՛ հայրենիքների թշնամին՝ հարազատ թէ օտար: Վերջ ի վերջոյ կործանւում է աշխարհակալող ամէն երկիր - Բաբելոն, Հռոմ, Բիւզանդիա, որովհետեւ նա սպանում է ե՛ւ իր սեփական հայրենիքը:

Խելագար անձնասպանութիւն է աշխարհակալութիւնը, հոգեսպանութի՛ւն:

* * *

Մարդկային գործերի մէջ հայրենիքի պաշտպանութիւնն է ամենասրբազանը:

Հայրենիքի չափ նուիրական է եւ պատերազմը հայրենական: Հաւաքական աւազակութիւն եւ սպանութիւն է այլ կարգի ամէն պատերազմ:

Եւ ճշմարիտ հերոսները նրա՛նք են միայն, որոնք մեծագործում են եւ առաքինանում իրենց վտանգուած հայրենիքը պաշտպանելու ժամանակ:

Հերոսի անունը պիտի զլանալ աշխարհակալական պատերազմի մասնակցող ամէն զօրականի: Սպանութեան եւ կողոպուտի ելած բանակը կարող է քաջ աւազակներ ու մարդասպաններ տալ, բայց ոչ եւ հերոսներ:

* * *

Հայրենիքը չի տրւում այնպէս, ինչպէս ժառանգւում է հայրենական հարստութիւն: Դա ձեռք է բերւում ամէն մի սերունդի եւ նրա առանձին անդամի կողմից. ձեռք է բերւում հայրենաճանաչումով, հայրենապաշտութեամբ, նրան արժանի դառնալու ձգտումով: Կարելի է հայրենիքում լինել, բայց հայրենիքից չլինել, կարելի է հայրենիքում ապրել, բայց եւ այնպէս հոգեհաղորդ չլինել նրան:

Կարելի է, վերջապէս, իրաւապէս հայրենատէր լինել, իսկ հոգեպէս՝ անհայրենիք:

Արժանի չես հայրենիքիդ, եթէ այն չես դաւանում իբրեւ գերագոյն նպատակ, իսկ անձդ՝ իբրեւ միջոց:

* * *

Սոցիալապէս որքան արդար՝ այնքան զօրաւոր է հայրենիքը: Գերերջանիկ է մարդը, որ կարող է ասել. «Իմ հայրենիքում արեւը ծագում է բոլորի եւ ամէն մէկի համար. այնտեղ երկիրը մշակելու եւ հոգեպէս մշակուելու ազատութիւն ունեմ ես»:

* * *

Հայրենիք ստեղծել՝ նշանակում է բեկոր առ բեկոր յայտնաբերել, իմաստաւորել, պատմականացնել իր երկիրը: Նշանակում է այնպէս հարազատել իր երկիրը, որ նրանում ոչինչ չմնայ անյայտ, անխօս, մեռեալ: Նշանակում է վայր առ վայր նուաճել երկիրը, շունչ եւ իմաստ տալով նրանց:

Ի մի բան՝ հայրենիք ստեղծել՝ նշանակում է հարազատել իր երկիրը եւ հարազատանալ նրան: Այսպիսով ահա՛, նոյնանում են ժողովրդի ոգին ու հայրենիքը: Սրանց դարաւոր փոխներգործութեան արգասիք է հայրենիքը:

* * *

Որքան վսեմ է մի ժողովրդի հասկացողութիւնը հայրենիքի մասին, այնքան զօրաւոր է նրա երկիրը, նրա հայրենասիրութիւնը:

* * *

Իմ հայրենիքը - դա մարդկայնօրէն այն լաւագոյնն է, որ կայ Հայաստանում:

* * *

Կեսարը կ'ուզէր լինել առաջինը գիւղում, եւ ոչ երկրորդը՝ քաղաքում:

Հեթանոսական փառասիրութի՛ւն: Ես կը ցանկանայի լինել վերջինը Հայաստանում, միայն թէ ազատ եւ անկարօտ լինէին նրա բոլոր զաւակները:

Նման հայրենիքում բաւարարուած կը լինէին բոլոր փառասիրութիւնները եւ ապահովուած՝ բոլորի երջանկութիւնները:

* * *

Ների՛ր, Տէ՛ր, ների՛ր ինձ, եթէ մի օր հայրենիքիս օգտակար լինելու համար մեղանչեմ քո դէմ: Արդար է հայրենիքին ծառայել ամէն ինչով, բացի ստորութիւնից:

* * *

Մեռի՛ր այնպէս, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ - ահա՛ իմ դաւանած հայրենասիրութիւնը:

Հերոսական գործերէն աւելի ոգեշնչող է մա՛հը հերոսական:

IV

ՄԵՐ ՆԱԽԱՀԱՅՐԵՐԸ

Ժամանակին Աստուած էր նախահայրը - Աստուածը իր ցեղի, տոհմի, եւ իր պաշտամունքը՝ կրօ՛ն:

Թէեւ մի օր մարդը դադարեց Աստուած կոչել իր նախահօրը, վերջինը, սակայն, շարունակեց պահել իր սրբազան հանգամանքը:

Զատեցէք նախահայրերի աճիւնը հայրենի հողից եւ դուք կ'ունենաք երկիր մշակելի, բնակելի, բայց ոչ հայրենիք:

Հայրենիքը ստեղծւում է հողը, նիւթը յաղթահարելով, երկիրն արժէքաւորելով, իմաստաւորելով, նրան խորհուրդ եւ սրբազնութիւն հաղորդելով միայն: Իսկ սրբազանն աշխարհում նոյնպէս նախահայրերից է:

Նրանցից է գերագոյն քաջութիւնը՝ հերոսութիւնը, որի դափնիները չեն թառամում երբե՛ք:

Զօրավիգ ունենալով նրանց ոգին՝ յոգնութիւն չգիտեն ռազմիկը՝ կռւում, կուլտուրայի մշակը՝ խաղաղութեան մէջ:

Նրանք են ստեղծիչը մեր պատմութեան, նրանցից՝ մեր գիրն ու գիրքը, նրանք են մտաւոր լոյսը մեր կեանքի, նրանցն է գերագոյն իշխանութիւնը՝ յաւե՛րժ, առանց որին ե՛ւ թագ, ե՛ւ հանրապետութեան նախագահ, ե՛ւ դիկտատոր - աշխարհիկ ամէն մի իշխանութիւն մնում է անվաւեր եւ անզօր:

Ճշմարտութեան պէս ծերութեան անհաղորդ՝ նրանք խորհրդանշում են ո՛չ միայն իրենց ժողովրդի անցեալը, այլեւ՝ ապագան, վերայայտնուելով աշխարհ եկող ամէն հայ էակի մէջ: Անմահ՝ նրանք հանդիսանում են աղբիւրը մեր ազգային ոգու անմահութեան:

Նրա՛նք են սկզբնաւորողը հայկականութեան: Արդ, թէ ինչո՛ւ պաշտամունքի պակասը դէպի նախահայրերը ասել է՝ սիրոյ եւ յարգանքի պակաս դէպի հայկականութիւնը:

* * *

Գերազանցի՛ր նախորդներիդ: Կռուի՛ր այնպէս, որ քո ընթացքով հեշտացնես քեզնից յետոյ միեւնոյն նպատակի համար կռուողների գործը - ահա՛ մարտերի եւ մարտիկի բարոյական իմպերատիվը:

Այս բարոյականով մեր պատմութեան մէջ առաւելապէս Մամիկոնեան զօրավարներն են առաջնորդուել: Աւարայրը հոգեբանօրէն նախապատրաստուած էր Մուշեղի, Վասակի, Մանուէլի եւ այլոց հերոսականով: Վարդանն ու Վարդանանքը իրենց հերթին, նախապատրաստեցին, հեշտացրին Վահան Մամիկոնեանի պայքարը, որը պիտի հարկադրէր Տիզբոնին՝ հրաժարուել Հայաստանը իրանականացնելու մտքից:

Իբրեւ օրէնք՝ գերազանցի՛ր նախորդներիդ՝ խիզախութեամբ, նուիրումով, հայրենահոգութեամբ:

Գերազանցի՛ր - դա ոգու հրամայականն է, նրա յարաճուն զարգացման, կատարելագործման հրամայականը:

Ո՛վ չի գերազանցում իր նախորդներին՝ նա անարգում է նրանց անունը՝ մեղանչելով ոգու զարգացման օրէնքի դէմ:

* * *

Ամէն անգամ, երբ Մասիսներին եմ նայում, ներքին հայեացքիս առջեւ բարձրանում են վեհափառ ճակատները մեր նախահայրերի: Եւ, կրկնում եմ հանգոյն գոթական ռազմիկի. «Ես կ'ուզէի նրանց հետ լինել» - իմ փառապսակ նախահայրերի հետ:

* * *

Եթէ թերիներ ունեմ - այդ կը պարտեմ ինձ, իսկ այն, որ լաւ ու լաւագոյն է իմ մէջ՝ նախահայրերի՛ս:

Արդ, թէ ինչու ճակատամարտերում շահածս ամէն մի դափնին, երկիւղածօրէն, նրանց յայտնի թէ անյայտ շիրիմներին դրի ես:

V

ՀԱՅԸ*

Նկարագրի անկախութիւն - ահա՛ էականը: Երբ պակասում է դա՝ ասել է պակասում է այն անփոխարինելին, առանց որի ժողովուրդները ուրոյն մշակոյթ չեն ստեղծում:

Ժողովուրդների ճակատագրի աստղը պէտք է փնտրել ոչ թէ երկնքի վրայ, այլ նրանց կրծքի տակ - նրանց նկարագրի մէջ:

Իսկ նկարագիրն այն է, ինչ որ ստեղծում են տուեալ երկրի աշխարհագրական դիրքն ու պատմութիւնը: Ժողովրդի ոգին է նկարագիրը, որ ենթական արտայայտում է իր հոգեւոր ստեղծագործութեան միջոցով:

Ամէն նկարագիր իր հիմնական գիծն ունի, որը նրբերանգաւորում ու շեշտում է ենթակայի յատկութիւնները եւ իշխում նրանց վրայ:

Ո՞րն է հայկական նկարագրի հիմնական գիծը:

- Լրջութի՛ւնը, հայու մտաւոր եւ բարոյական լրջութիւնը, որն ամէն բանից առաջ ծանրախոհութիւն է ենթադրում:

Խօսքիս ճշմարտութիւնը վճռապէս հաստատում են՝

- Հայ ժողովրդի գործերի հազարամեայ վկան՝ իր պատմութիւնը եւ իր էպոսը, որի հերոսների բարքն ու գործերը խոր յարգանք են պարտադրում.

- Իր հեթանոս աստուածները, որոնց նա օժտել է իր բարձր հոգեգծերով.

---

* *Մի հատուած իմ «Հայկական նկարագրի հիմնական գծերը» ձեռագրից:*

- Վերջապէս, իր ինքնատիպ ճարտարապետութի՛ւնը, որի կոթողները, չէն թէ կիսաւեր, կը նմանուեն հսկաների, որոնք հայոց երկնքի տակ նստած՝ ձեռն ի ծնօտ՝ կարծես աշխարհի բաներն են խոկում:

Այո՛, լուրջ է հայը՝ մտաբարոյապէս:

Եւ, հէնց այդ բախտորոշ հոգեգծով էլ պայմանաւորուեց իր քաղաքական ճակատագիրը:

* * *

Հայը ոգու ժողովուրդ է, իսկ ոգուն ներյատուկ է տառապանքը:

Բոցից, երկունքից, ցաւից ծնաւ իր Վահագնը - ահա՛ հայու կենսազգացողութիւնը, նրա աշխարհիւրացումը:

Նրա համար չէ լոկ կեցութեան ուրախութիւնը: Հայու համար՝ աշխարհի հետ հաշտ եւ ուրախ լինելու համար բաւական չէ կուշտ լինելը:

Ժողովուրդներ կան, որոնք կեանքն ու աշխարհը ընդունում են այնպէս, ինչպէս որ նրանք տրուած են բնօրէն, ինչպէս որ նրանք կան առարկայօրէն:

Իր էութեան բերումով՝ հայն իր գոյութեանը հաղորդում է որոշ սրբազանութիւն եւ նպատակ՝ ձգտելով իմաստաւորել եւ կատարելագործել այն:

Հայն իդէալի ժողովուրդ է, իսկ իդէալը ենթադրում է ոգու խռովք, նպատակասլացութիւն, լաւագոյնի կարօտ:

Աշխարհը տրուած է ո՛չ միայն վայելելու, այլեւ՝ կատարելագործելու, բարեշտկելու այն - ահա՛ հայու աշխարհըմբռնումը, նրա էտիկական բարձր հասկացողութիւնը, որի հետեւանքով այնքան վաղ մարդկայնացաւ նա՝ կանխելով գրեթէ իր բոլոր հարեւաններին: Հայը հաւասարապէս տառապում է ինչպէս իր գոյութեան ծանրածանր պայքարի առթած ցաւից, այնպէս էլ՝ աշխարհի եւ մարդկային ազգի անկատարելութեան գիտակցութիւնից:

Նրա համար աշխարհը դեռ այն չէ, ինչպիսին կարող է լինել, եւ պէ՛տք է որ լինի:

Միերը՝ հայկական էպոսի հերոսը - իմա՛ ինքը հայ ժողովուրդը - մերժում է գոյութիւն ունեցող աշխարհակարգը՝ լաւագոյնի պահանջ զգալով եւ առաջադրելով:

* * *

Հայուն ծանօթ չէ չարութեան ուրախութիւնը: Չարախնդալ, չէ՛, նա կ'ուզէ իր գոյութեան թշնամիներին իսկ միայն պարտուած տեսնել, բայց ոչ ե՛ւ դժբախտ:

Արծաթ չկայ հայ մարդու ծիծաղի մէջ: Ծիծաղը հայու մէջ աւելի մտածումն է առաջացնում, քան սիրտը: «Ա՞յս է աշխարհը, մարդը» - ահա՛ նրա ծիծաղի հոգեբանական լեզուն, իմաստը:

Հայ հոգում տեղ չունի արտաքին նախանձը: Վաղուց է, ինչ հայը նախանձողին - իր արքային - Արտաւազդին շղթայի զարկած պահում է վիհերում: Նախանձում է չարը, նաեւ՝ հոգեպէս տկարը: Հայը խորշում է թէ՛ մէկից, թէ՛ միւսից:

Ժողովուրդներ կան, որոնք իրենց բացասօրէն մարդկայինը - իրենց նկարագրի ամենադատապարտելի թերիները, կենսաբանական անհրաժեշտութեամբ, ծառայեցնում են իրենց գոյութեան պաշտպանութեան: Հայը վաղուց է դատապարտել աշխարհաքանդ չարութիւնն իբրեւ պայքարի զէնք: Ի զուր են շները լիզում Արտաւազդի շղթաները - արթո՛ւն է հայ դարբինը:

Հայ էութեան այդ չարամերժ գիծը - որ պատիւ է բերում ենթակային - մեծապէս դժուարացրել է իր դարաւոր գոյամարտը: Չարի ու բարու իր հասկացողութեամբ, դեռ այսօր էլ հայը մղւում է ամենայն անշահասիրութեամբ - անքաղաքագիտօրէն - դիրք ճշտելու մէկի թէ միւսի հանդէպ, առանց հաշուի առնելու գոյութիւն ունեցող առարկայական պարագաները:

Իր այդ հոգեգծի պատճառով՝ նրա մտածողութիւնն ու արտաքին վարքագիծը ընդունել են ապաքաղաքական, որով եւ՝ անաշխարհայարմար բնոյթ:

* * *

Աչքը կո՛ւշտ ժողովուրդ - ահա՛ մի ուրիշը - ամենահայկակա՛նը հայու գովելի յատկութիւններից:

Խօսեցրէ՛ք իր էպոսը, իր ֆոլկլորը եւ պիտի համոզուէք, որ հայու համար հացը՝ կեցութեան բարիքների շարքում առաջինը չէ՛:

«Ձեռքը բարձրացրեց Դաւիթը՝ մանուկ, ուզեց ոսկին վերցնել. հրեշտակը, հեռացնելով ձեռքը, դրեց կրակի վրայ, մատը կրակին սեղմեց եւ այրեց մատը. մատը բերանը դրեց եւ լեզուն այրեց. լեզուն այրուեց՝ սակաւ համրացաւ նա: Եւ սկսան նրան կանչել կակազ Դաւիթ»*:

Այսպէ՛ս, պատժելով իր ապագայ հերոսի միամիտ արարքը՝ հայը հաստատել է իր անընչասիրութիւնը, իր հոգեկան պայազատութիւնը:

Հայոց արքան՝ Հայաստան հրաւիրելով Նազովրեցուն, ասում է - թէեւ շատ մեծ չէ իր երկիրը, բայց կը բաւի երկուսին:

---

* *«Սասունցի Դաւիթ»:*

Մի ուրիշ թագակիր՝ Տրդատը, աշխարհակալելու սահմանուած իր սուրը նետում է Սեպուհ լեռների մէջ:

«Հագուած ու կո՞ւշտ ես՝ գոհ եղիր, հո՛ղ է մնացածը»,- ասում է միջնադարի հայ երգիչը՝ Նաղաշ:

«Հարուստ է նա, ով լուսաբացից համեստ աշխատանքի է լծուել իր անդաստանի մէջ»,- ասում է անանուն իմաստասէրը՝ ի՛նքը ժողովուրդը:

«Եթէ հիւրեր եկան՝ հաց տուր, կերա՞ն հացը՝ մինչեւ դուռը տար»,- ասում է Ձէնով Օհանը:

«Աստծուց ենք ե՛ս էլ, հացս էլ, ով կարիք ունի, թող վայելի»:

Գիտենք՝ անցորդին է պատկանում թոնրից հանուած հայ շինականի առաջին հացը: Ահա՛ հայը, եւ ահա՛ եւ հացը հայու համար, հացը՝ առնուած բառիս ամենահայկական իմաստով:

* * *

Հռոմէացին մի առաքելութիւն գիտէր՝ իր կեանքը տրամադրել իր պետութեան, աստուածացնել այն եւ լինել հպարտ նրանով:

Դասական յոյնի համար եւ գերագոյնն աշխարհում իր քաղաքպետութիւնն էր, որի փառքի եւ հզօրութեան համար աշխատելով կ'առաքինանար անհատը:

Հայաստանի քաղաքական անկախութեան կորուստի փաստով՝ հայու համար դարերով ու դարերով պետութեան դերը պիտի կատարէր ազգութիւնը:

Ազգային գոյութեան խնդիրը - ահա՛ թէ ինչն է կազմում հայոց պատմութեան առանցքը:

Այդ իսկ պատճառով հայ մարդու համար բարձրագոյն արժէքը, սրբութիւնը, հեղինակութիւնը պիտի դառնար հայկականութիւնը՝ իբրեւ գիտակցուած էութենական միասնութիւն:

Գիտենք, ժամանակին իսլամը փոքրասիական աշխարհամասի վրայով անցաւ իբրեւ մի տարերային հեղեղ՝ իր ճամբին իրեն խառնելով բոլոր օտար գետերը եւ թաւալեց դէպի ծով: Մահմեդականացան գրեթէ բոլոր ժողովուրդները: Միայն Արածանին եւ Արաքսը պահեցին իրենց ջրերի սրբութիւնը: Հայաստանը, սակայն, կղզիացուեց, պաշարուեց իսլամութեան ծովով: Այսպէս լինելով հանդերձ, հայութիւնը մնաց իբրեւ գրանիտէ ժայռ՝ իրեն խեղդել փորձող ծովում:

Եւ, այնուհետեւ, քանի-քանի եղեռններ, վայրագութեան նախճիրներ պայթեցին Հայաստանի գլխին:

Մի բազմաղէտ երկիր, որն ըստ արաբ պատմագրի, դարերով ծեծեցին, տրորեցին «օտար սմբակներն ու կայծակները»: Այս պայմաններում գերապրեց հայ ազգութիւնը:

Աններելի սխալ է կրօնական կրքով բացատրել հայու հաւատարմութիւնը քրիստոնէութեան հանդէպ: Հայ հոգուն անծանօթ է ֆանատիզմը. վկա՛յ թոնդրակեցիների շարժումը, միջնադարի մեր կենսահաստատ պոեզիան, եւ մերօրեայ ժամանակայարմար հայ եկեղեցականութիւնը: Տիրապետող գիտակցութիւնը հայու մէջ վաղուց է ինչ ազգայինն է, եւ ո՛չ կրօնականը, ինչպէս որոշ ժողովուրդների մօտ: Նա շատ վաղ հայացրեց քրիստոնէութիւնը: Հայկականութի՛ւնն է հայու ճշմարիտ կրօնը:

Արդ, թէ ինչու եմ ասում՝

- Չկան «հայեր», կայ Հայը:

Խորհրդածում եմ հայկականութեան մասին եւ միտքս հանգչում է նրա ամենաազնուական անօթների վրայ:

Ահա՛ մեր նախահայրերը լուսադաւան - Մեծն Ներսէս, Սահակ, Մեսրոպ. ապա՝ հերոսական փաղանգը Մամիկոնեան զօրավարների - Մուշեղ, Վարդան, Վահան - կենդանի վահանը Հայաստանի պաշտպանութեան, Աշոտ՝ մարտերի բոցերում երկաթացած. իսկ նոր եւ նորագոյն ժամանակներում՝ Աբովեան, Խրիմեան, Ալիշան, Պատկանեան, Զաւարեան… Վերջապէս, յեղափոխականն ու ռազմիկը միշտ մահապատրաստ, որոնց համար Հայաստանը աստուածութիւն էր, Հայկականութիւնը՝ կրօն:

Եթէ գեղեցիկն այն է, որ հարազատօրէն համապատասխանում է իր սեռի-տեսակի գաղափարին, ապա՝ հայօրէն հարազատ է նա, ով՝ հանդիսանալով ներկայացուցիչն ու կրողը հայկականութեան՝ վերջինը արտայայտում է առաւելագոյն չափով:

Գերազանցն իր տեսակի մէջ - ահա՛ ճշմարիտ հայն իբրեւ ոգի եւ կերպար:

* * *

Հայն իր Վահագնը ունէր - աստուա՛ծը քաջութեան: Քաջ եւ քաջապաշտ է նա:

Հոգեկան այդ պաթոսին՝ քաջութեան կը պարտի հայը իր բազմավտանգ գոյութիւնը: Քաջ են, ընդհանրապէս, ոգու ժողովուրդները: Սրանցից է հայը՝ գերազանցօրէն: Հեթանոս հայու քաջութիւնը չտկարացաւ նաեւ քրիստոնէական Հայաստանում: Սխրագործելու իր տենչանքին զուգահեռ՝ դա ընդունեց արտայայտութեան մի նոր ձեւ եւս - նահատակութիւնը կամաւոր, որն իր խորքի մէջ ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ գիտակցական մահուամբ քաջաբար անմահանալու ձգտումը: Ըստ էութեան՝ մահամերժ ոգու խիզախանքն է - քաջութիւն թէ նահատակութիւն:

Հայն իր ամենասիրելի ու սրբացրած հերոսին անուանել է քաջ, եւ այսպիսով տուել իր գերագոյն գնահատականը ոչ միայն քաջին, այլեւ՝ քաջութեան, ընդհանրապէս:

* * *

Օտար լծերի տակ երկարօրէն ապրած ժողովուրդներին յատուկ է մի հոգեգիծ, որը հոգեգիտութիւնը անուանում է «ստրկական երկիւղ»:

Այդ ամօթալից արատից, այդ չարիքից զերծ է հայ էութիւնը, որովհետեւ օտար իշխանութեանց լուծը կրելով հանդերձ, նա չէ դադարել իրեն զգալ աւելի բարձր իր երկրին բռնօրէն տիրողից:

Տրդատներից մինչեւ Մամիկոնեանները, եւ Դաւիթ Բէկից մինչեւ մի բուռ յեղափոխականներով «Բանկ Օտոման»ը գրաւող Բաբկէն Սիւնին՝ քաջութիւնը հայու համար եղել է այն, ինչ որ է համը պտուղի համար՝ բնօրէն: Այնպիսի մեծագործութիւն պիտի կատարեմ, որ նրա մասին խօսեն երկնքում անգամ՝ ասում է Վարդանը Սասանեան արքունիքում: Նաեւ ասպետական է հայավայել քաջութիւնը: Հայ էպոսի հերոսը առաջին հարուածը զիջում է Մսրամելիքին, առանց մտածելու, թէ դա կարող է մահացու լինել իրեն համար: Այժմ հարուածելու հերթը Դաւիթինն է, սակայն, միջամտում է հակառակորդի քոյրը, եւ հայ հերոսը խնայում է իր առաջին երկու հարուածները Մսրամելիքին:

- Հէ՛յ, հէ՛յ, - ձայն է տալիս Դաւիթը, նախազգուշացնում թշնամուն, թէ գալիս է: Հին գող է Մսրամելիքը. հայ հսկան՝ բարեմիտ, միամիտ կոչուելու աստիճան:

Այսպիսին է հայու քաջը՝ արդարօրէն հպարտ, բայց ոչ՝ բարձրագլուխ, գոռոզ:

Ձա՛րկ միայն նրան, որն ի վիճակի է պատասխանելու զարկիդ - ահա՛ հայու մորալը:

* * *

Ժողովուրդները եւս մտածում ու գործում են ըստ իրենց աշխարհայեցողութեան, որն այլ բան չէ, բայց եթէ նրանց տեսական, նրանց մտածողութեան նկարագիրը:

Հայոց ընդհանուր նկարագրի հիմնական որոշիչներից մէկն էլ շինարարական տենչանքն է՝ անշէջ, անսպառ:

Ինչո՞վ է պայմանաւորւում այդ պաթոսը, ի՞նչն է սնուցանում այդ խանդը, եւ որո՞նք են նրա հոգեբանական նախադրեալները:

- Նախ՝ աշխարհի, մարդու եւ կեանքի մասին իր կառուցած էթիկական հասկացողութիւնը:

Պատմութեան նպատակաբանական սկզբունքին հաւատարիմ՝ հայն իրեն զգում է աւելի իբրեւ պարտականութեան, քան միայն անձնական երջանկութեան ձգտող էակ: Արդ, թէ ինչու հայու մորալը էւդեմոնիստական չէ - երջանկապաշտական չէ:

Նա ունի գիտակցութիւնը իր առաքելութեան, որի աստիճանական իրականացման մէջ է տեսնում երջանկութեան իր իրաւունքը: Նա վոլունտարիստական տիպ է: Եթէ սիրէր փիլիսոփայութիւնը՝ նա պիտի նախընտրէր Ֆիխտէին - նրա կամապաշտական իմաստասիրութիւնը: Ծանրածանր պայքար, վտանգներ, եւ իբրեւ սրանց բնական հետեւանքը՝ մշտակայ տառապանք - ահա՛ բովանդակութիւնը հայոց պատմութեան, ահա՛ երրեակ դաստիարակիչները հայ կամքի: Աշխատա՛նքն է օրէնքների օրէնքը հայու համար: Կուրօրէն ու կրաւորաբար չենթարկուել իր դժխեմ ճակատագրին, այլ՝ պայքարել նրա դէմ, պայքարել շինարարելով: Այսպէս են վարւում հայաբարոյ ժողովուրդները միայն:

Հայու համար շինարարութի՛ւնն է գերագոյնը պայքարներից, եւ յաւերժացողը յաղթանակներից: Շինարարել նշանակում է՝ ճգնել յաղթահարելու իր տառապանքը: Երբ խզուած է արտաքին, քաղաքական ազատութիւնը՝ որոշ տիպի ժողովուրդներ այն փոխարինում են ներքին ազատությամբ, - մի բան, որ ենթակային տալիս է շինարարութիւնը: Այս դէպքում դեր է կատարում նաեւ հոգեւոր կոմպենսացիայի օրէնքը. իրաւազրկուած՝ գործելու մի բնագաւառում, ենթական երեւան է գալիս մի այլում: Անկարող սեփական հայրենիքում իր կարողութեանց ու կորովի համար ասպարէզ գտնել՝ հայ տաղանդը եւ քաջութիւնը տեղ գտան ու երկար ժամանակ մնացին բազմած Բիւզանդիոնի գահի վրայ:

* * *

Չար ու աւերիչ են լինում ստեղծագործելու անզօրութիւնից տառապող ժողովուրդները միայն:

Հայաստանի հարեւաններից եւ նրա հեռակայ ոսոխներից, դժբախտաբար, քիչերն էին զերծ այդ չարանիւթ տկարութիւնից:

Ահա՛ թէ ինչու արիւնը, աւերն ու աւարը անպակաս եղան Հայաստանից: Այս պայմաններում իսկ, իր էութեան հաւատարիմ՝ հայը պիտի մղուէր շինարարել եւ վերաշինել անդադրում: Նա, որ մի ժամանակ ասել էր՝ «Անին շէ՛ն, աշխարհ աւեր», պիտի չկարողանար հաշտուել իր երկրի կիսաւեր վիճակի հետ: Իր պատմութեան կարելիութեանց սահմաններում՝ հայն այսպէս է հատուցել իր գոյութեան թշնամիներին. «Քանդեցին, ահա՛ աւելի լաւը կը կառուցեմ»: Կառուցանել աւելի լաւը քան էր կործանուածը - ա՛յս եղաւ հայու նշանաբանը պատմականօրէն: Եւ, հետամուտ աւելի անթերին կառուցելու, հայը պիտի ճարտարանար, պիտի կատարելագործէր իր շինարարական տաղանդը: Վկա՛յ Բագրատունիների բազմաշէն մայրաքաղաքը, Կիլիկիոյ Սիսը, Տարսոնը, որոնք յարաբերօրէն այնքան կարճ ժամանակամիջոցում կուլտուրապէս օրեկան-տարեկան դարձան:

Դա այլեւս սովորական շինարարութիւն չէր, այլ՝ մշակութային հրաշագործութիւն:

* * *

Հոգեւորապէս չափահաս եւ ազգօրէն ինքնատիպ - ահա՛ թէ իբրեւ ինչպիսին է մեզ ներկայանում հայը իր պատմութեան դեռ արշալոյսին:

Չկա՛յ դիմազուրկ արուեստ. եթէ կայ՝ մեռեալ է դա: Հայն ունի ուրոյն դէմք, շեշտուած անհատականութիւն, իր շինարարութիւնը՝ իւրայատուկ ոճ:

Շինարարելիս, ստեղծագործելիս՝ նա սիրում է ex ipso fonte bibere*:

Լուսաբա՛ղձ ժողովուրդ, որն ապրել, պայքարել, շինարարել է գիրքը ձեռքին: Նա գործել ու ստեղծագործել է՝ միտքը երկնքում, ձեռքը երկրի վրայ՝ պիտի ասէր Ալիշանը:

Մեր երկրագնդի վրայ երկու ուժեր չեն յոգնում – ժամանակն ու հայը՝ մէկը կործանելով, միւսը՝ վերաշինելով:

* * *

Պատմութեան նպատակն է ժողովուրդներին եւ մարդկային անհատներին վարել դէպի ներքին բարոյական ազատութիւն, առանց որի սակաւարժէք է արտաքին ազատութիւնը:

Երբ մի ժողովուրդ՝ հոգեկան կուլտուրայի զօրութեամբ տիրած է բարոյական ազատութեան, օտարի լուծը, բռնութիւնը կարող է միայն խոչընդոտել նրա պատմական չուն, բայց ոչ ե՛ւ ուժաթափել, խեղդել նրա ոգին: Այդ ներքին ազատութիւնը ձեռք է բերւում շինարարութեամբ եւ ստեղծագործութեամբ միայն:

Որքա՛ն պոէզիա, որքա՛ն խորհուրդ կայ հայ շինականի կեանքում: Նա սրբազնութեան շունչ է հաղորդում իր աշխատանքին՝ երկիրը մշակելիս անգամ:

Երկրագործել դեռ այսօր էլ հայու համար նշանակում է՝ ազնուացնել բնութիւնը, եւ ուրախ պտղառատութիւն տարածել:

Միհր-միթրայական այդ վեհ հասկացողութիւնը աշխատանքի մասին գալիս է հեթանոս դարերի խորքից:

Իսկ ճարտարապետել - հայկական, ինչպէս եւ հեգելեան իմաստով - նշանակում է՝ սրբել, սրբագործել երկրի որոշ կէտերը, որպէսզի այնտեղ Աստուած ու աստուածայինը բնակեն:

---

* *Խմել սեփական ակնաղբիւրից:*

Այսպէս, այս նպատակով է տաճարներ կառուցել հայը - տաճարնե՛ր, որոնց գմբէթները ո՛չ միայն ձգտում են դէպի երկինք, ինչպէս գոթականը եւ անտիկը - այլեւ՝ անխօս խօսում նրա մասին:

Սահմանակցել իդէալականին, սրբազանին եւ յաւերժին, նրանց շունչը խառնել իր առօրէական կեանքին, նրանցով սնուցանել իր ստեղծագործական աւիւնը - ահա՛ հայ հոգին:

Յաւերժանալ շինարարելով, ստեղծագործելով - ահա՛ հայկականը, չափազա՛նց հայկականը:

Միայն նման ժողովուրդը, որը սիրում է աշխարհն ու իրերը դիտել sub specie aeternitatis - յաւերժութեան բարձունքից՝ կարող էր պատմութեան ամէնադժուարին պայմաններում ոչ միայն վարել իր անհաւասար գոյամարտը, այլեւ հարուստ ստեղծագործութեան փառահեղ էջ բանալ համաշխարհային մշակոյթի պատմութեան մէջ:

Շինարարութեան բնածին հերո՛ս է հայը:

VI

ԻՄԱՍՏԱՍԻՐԱԿԱՆ ԽՈՀԵՐ*

Ի՞նչ կարող է, եւ ի՞նչ չի կարող մարդը: Այդ հարցին պատասխանելուց առաջ պէտք է ճշտել՝ ո՞ր մարդուն է վերաբերում դա:

Չկայ վերացական մարդը. մարդն ընդհանրապէս կայ կոնկրետ, կայ որոշ մարդը:

Խորապէս տարբերւում է ո՛չ միայն այսինչ մարդն այնինչից, այլեւ՝ նոյն անձն իրենից՝ ըստ իր տարբեր հոգեվիճակների: Ահա՛ մարդը, որը յաջողել է յաղթահարել իր ներքին արգելքները՝ հոգեկան ծուլութիւնը, կոյր կենսասիրութիւնը, մահուան երկիւղը եւ այլն:

Ահա՛ մի ուրիշը, որի հոգու վրայ դեռ ճնշում է ներքին արգելքների լուծը: Տարբերութեան մի ամբողջ ծով է բաժանում այդ երկուսին:

Երբ մեր ոգին գերի է ներքին կոյր ուժերի-արգելքների՝ յաճախ մարդկօրէն կարելին մեզ թւում է անկարելի:

Փորձեցէ՛ք, սակայն, յաղթահարել ձեր ներքին արգելքները՝ արտաքին արգելքներն ու դժուարութիւնները պիտի թուան նուազ դժուարայաղթ:

---

* *Առնուած իմ նոյնանուն ձեռագրից:*

Ոգի՛ն է գծում մարդու կարողութեան սահմանները - նրա բարոյական կարողութեան:

* * *

Ճշմարտութիւնը հասկանալուց մինչեւ այն ընդունելը, եւ այդ վերջինից մինչեւ այն գործադրելը առնուազը եօթն օրուայ ճանապարհ է:

* * *

Սոկրատին սպանող հասարակութիւնը այլեւս սոկրատներ չծնաւ. նա ամլացաւ հոգեպէս: Արդա՛ր պատիժ:

* * *

Ճշմարտօրէն ազատ է նա՝ միայն, ով չի զգում բռնութեան առկայութիւնը:

Ազատ կարող է լինել հզօրազօր ոգու տէրը միայն:

Յոգով տկարների համար մարսելի սնունդ չէ ազատութիւնը:

* * *

Զգալ, որ հոգի ունես - ահա՛ թէ երբ են բացում, խօսում, ժպտում ճշմարիտը, բարին, գեղեցիկը:

Անհոգի,- ասում է պարզ ժողովուրդը եւ դրանով անսխալօրէն բնութագրում այնպիսիներին, որոնք կարող են իրենց չարագործութիւններն ու դաժանութիւնները ներոնականութեան հասցնել:

Յոգու համար՝ երկնքի կապտութեան հետ մրցող շուշանը բոյս չէ՛ միայն. արեւի հետ ամէն օր առաջինը համբուրուող լեռը՝ հողեղէն կարկառ, բարձունք չէ՛ միայն: Յոգին - որին մատչելի է ամէն խորք, բարձունք, հորիզոն - հոգին է բանալին տիեզերքի, թարգմանը բնութեան:

Զգա՛լ, որ հոգի ունես - ա՛յս է մարդկայնացնում մեզ, միայն ա՛յս:

* * *

Պատմական գործիչը պատկանում է ո՛չ միայն իր դարաշրջանին, անցեալին, այլ՝ իբրեւ էութիւն՝ նաեւ ապագային:

Իբրեւ զարգացող ոգի նա երեւան է գալիս բոլոր եկող-անցնող սերունդների մէջ, որով՝ նա միշտ էլ ժամանակակից է:

Պատմական անձը քարեղէն արձան, քարացած էութիւն չէ, այլ՝ յաւերժաշունչ ոգի:

Այլ կերպ մօտենալ պատմական անձերին՝ կը նշանակէ մեղանչել

նրանց ոգու դէմ: Հինգերորդ դարի կրօնաշունչ Մամիկոնեանները մեր օրերում պիտի առաքինանային իբրեւ քաղաքական հերոսներ:

* * *

Ուզո՞ւմ ես գործել ճշմարիտը, ապա ուրե՛մն կանգնեցո՛ւր ճամբիդ հանդիպած ամէն մեկին եւ ասա՛.

«Բարեկա՛մ, լաւ է Դիոգինէսի տակառով բաւականանալ, քան Արիստիպոսի նման քարշ գալ թագաւորների ետեւից ու հացկատակել նրանց սեղանների շուրջը»:

Դու գործած կը լինես գեղեցիկը, եթէ յաջողես մտքիդ ուժով յաճախ դէպի վեր, դէպի կեցութեան կատարները բարձրացնել խոնարհ ճակատները մարդկանց:

Իսկ եթէ գործել ուզես բարին՝ մի՛ զլանար ամրացնել թեւը հանդիպածդ ամէն վիրաւոր արծուի:

Այսպէ՛ս վարուիր թէկուզ մտովի, եւ դու ծառայած կը լինես թէ՛ մարդկային ազգին, թէ՛ մարդկայնութեան:

* * *

Երկու բան չեմ ներում մարդուն՝ իր ստորութիւնները, որոնցով սնուում է իր բարոյական տկարութիւնը, ապա՝ իր տկարութիւնը, որից ծնունդ են առնում իր ստորութիւնները:

* * *

Գա՞հ թէ՞ ոգու մեծութիւն. դրուած այս երկընտրանքի առջեւ՝ ես պիտի ընտրէի վերջինը: Ի՞նչ արժեն գահերը, երբ նրանց վրայ բազմում են յաճախ մարդկային ցեղի ամենաեղկելի ներկայացուցիչները:

* * *

Ասում են՝ կշտացած առիւծը կորցնում է իր կատաղութիւնը:

Իսկ մարդն անկշտում է. որքան խժռում, որքան հարստանում՝ այնքան կատաղում է նա:

Չէ՛, մարդուն բարի չես դարձնի՝ նրա կերն աւելացնելով:

* * *

Կորցնելով սրբութեան զգացումը՝ մարդն անխուսափելիօրէն դառնում է շնական եւ մարդատեաց:

* * *

Մարդկային անհատը չէ դադարում միջոց լինելուց նաեւ այն դէպքում, երբ երեւան է գալիս իբրեւ հանճար:

«Աստուածներ»ը Աստուած չեն:

* * *

Փախի՛ր նրանից, որին զզուանք չի պատճառում եւ ոչ մի ապականութիւն՝ շօշափելի թէ բարոյական:

Նմանը անընտրող է լինում կեանքում, նաեւ՝ ապականարար:

* * *

Իր խորքի մէջ մոլար է ամէն վարդապետութիւն, կրօնական թէ ընկերային, որը մտաւոր կուրութիւն է պահանջում իր դաւանողներից: Այո՛, կեղծ է, հակամարդկային նմանը, որով եւ՝ մերժելի:

* * *

Կայ բռնութեան ամենազարհուրելին, անասնացուցիչը ու անարգիչը մարդկային ազգի՝ մտաւոր բռնութիւնը, որը բանաւոր էակներին մտածողութեան մի որոշ ձեւ եւ ուղղութիւն պարտադրելով՝ խեղում է նրանց ոչ միայն մտապէս, այլեւ՝ հոգեպէս:

* * *

Ստորութիւն, երկչոտութիւն, դաժանութիւն - ահա՛ երրեակ կրքեր՝ կոյր հրէշներ, որոնք ծնում են իրարից: Երբ մէկը երկչոտ է, նա չի ուշանայ հռչակուելու ստորութեան իր գործերով: Իսկ ստորը անխուսափելիօրէն պիտի դաժանանայ: Ներոնը՝ երկչոտութեան, ստորութեան ու դաժանութեան այդ հրէշը քաջութիւն չունեցաւ՝ իր ամենաանարգ վիճակի մէջ իսկ՝ անձնասպան լինել:

Դաշոյնը՝ ստրուկների ձեռքով՝ վերջ դրեց նրա կեանքին:

* * *

Անէ՛ծք, եօթնիցս անէ՛ծք այն ճոխ սեղանին, որի շուրջը տեղ չունեն այն պատրաստողները միայն:

Ի՞նչ, միթէ նման սեղան չէ օրուայ ընկերային կեանքը:

* * *

Մարդն օգտուել գիտէ ե՛ւ թոյներից՝ հիւանդութեանց դէմ: Վաղուց է ինչ նա մահուան դէմ հանել է հէնց մահուան զէնքը - թոյնը՝ այն չափաւորելով, բարեխառնելով:

Տարբեր են հոգեւոր աշխարհում գործող թոյն-չարիքները, որոնք մնում են բարոյապէս սպանիչ բոլոր դէպքերում:

Չէ՛, չի՛ կարելի չափաւորել, բարեխառնել չարիքը: Ըստ էութեան՝ չափ չունի չարիքը - իր բոլոր ձեւերի տակ մե՛ծ է դա:

Միեւնոյն ճամբով է ընթանում կեանքը թէ՛ աշխարհակալի, թէ՛ այլոց ողորմութեամբ ապրող մուրացիկի - գերեզմանատա՛ն ճամբով: Ի զուր աշխարհ եկած չես լինի, եթէ այդ ճամբին մի հատիկ ծաղիկ աւելացնես կամ նրանից մի տատասկ հեռացնես:

Հաւատա՛ - մարդն ու աշխարհը աւելի են շահում շատերի համեստ, բայց մարդկօրէն բարի գործերից, քան սակաւաթիւ անհատների մեծագործութիւններից: Չի՛ լինում ե՛ւ բարութեան փոքրը. դա էլ միշտ մեծ է ըստ էութեան, մե՛ծ իր ամէն մի արտայայտութեան մէջ: Բուդդան, մի կարապի կեանքը փրկելով՝ դրեց սկիզբը սրտի կրօնի, սիրոյ իմաստասիրութեան:

* * *

Ընկեր ու բարեկամ փնտրի՛ր տառապանքի, ճշմարտութեան եւ կատարելութեան ճամբաների վրայ: Ընկերացի՛ր ամէն տառապողի, ճշմարտութեան հետամտողի հետ, եւ միայն նմանների առջեւ բա՛ց էութեանդ դռները:

Այս ճամբաներից դուրս, սակայն, եղիր ե՛ւ փականք, ե՛ւ բանալի շրջապատիդ համար:

* * *

Ճշմարտօրէն ազատ է նա միայն, ով ազատ է մահուան երկիւղից:

* * *

Չեմ սիրում միայն ձեւական օրէնքի կողմից սահմանուած պարտականութիւնները: Ի՞նչ կը կորցնէր աշխարհն իր հոգեւոր գանձերից, եթէ նման պարտականութիւնները մնային անկատար: Ձեւական օրէնքի հողի վրայ, լաւագոյն դէպքում, աճում են բացասական առաքինութիւններ միայն, որոնք հերոսական մի հատիկ տող չեն աւելացրել

աշխարհի պատմութեան: Ձեւական ո՞ր օրէնքն է պահանջում, որ մարդկային անհատը մեռնի իդէալի, սրբութեան, հայրենիքի համար: Մի՛ գողանար - ահա՛ ձեւական օրէնքը, որը մարդը հեգնում է իր գոյութեան առաջին իսկ օրուանից: Գերագոյն արժէքների համար՝ ներքին մղումով, կամովին մեռնում է ո՛չ թէ ձեւական օրէնքի հպատակը, այլ մարդը՝ ներքնապէս ազատագրուած մարդը:

* * *

Թէեւ ամէն ժողովուրդ իր հայրենիքն ունի, մարդկութիւնը, սակայն, դեռ մնում է անհայրենիք:

Մարդկութի՛ւնն է մարդկութեան հայրենիքը, որ դեռ գոյութիւն չունի:

* * *

Բարիքը, որը բախուելով աւելի մեծ եւ անանձնական բարիքի հետ, մեզ զրկում է նրանից՝ դառնում է չարիք:

* * *

Արդար լինելու համար՝ մարդկանց մէջ - թէկուզ թշնամիդ լինեն - փնտրի՛ր նախ նրանց լուսաւոր կողմերը:

Սկսեցի՞ր բացասականներից՝ պիտի չնկատես դրականները, վասնզի պիտի չուզենաս նկատել:

* * *

Ուժերիցդ վեր չէ որեւէ պարտականութիւն - որքան էլ ծանր լինի դա - եթէ գտնում ես, որ պարտական ես կատարելու այն:

* * *

Նուազ զբաղուիր այլոց թերութիւններով, այլապէս պիտի դադարես սեփական թերիներիդ նկատել:

* * *

Միայն ստոր կրքերից զերծ մարդն է ընդունակ պայծառօրէն խորհելու: Չարերը թանձրամիտ են լինում:

* * *

Ազգային հաւաքական երջանկութիւնը հնարաւոր է միայն յաղթահարուած - եւ ոչ՝ սանձուած միայն - ԵՍի հայրենիքում:

* * *

Գինովութիւններից ամենազգլխիչը իշխանութեամբ գինովնալն է:

Նմանը հեշտութեամբ է կոխում-անցնում իր իշխանութեան սահմանները, եւ յաճախ ի չարը գործ դնում այն: Եւ մի օր էլ, անխուսափելիօրէն, դառնում է - լատինասութեամբ՝ malorum claras patrator - վատութեանց դիկտատոր:

* * *

Արդա՛ր է, որ միշտ էլ գիտութեան տանք վերջին խօսքը: Այսպէս վարուելով, սակայն, չմոռանանք, որ միայն տգիտութեան սահմանակցող միամտութիւնն է այս կամ այն գիտնականի շրթներից գիտութեան վերջին խօսքն սպասում:

Ամենագէտ չէ՛ւ գիտութիւնը - նա էլ վերջին խօսք չունի:

* * *

Չա՛փ ճանաչիր, առաւել եւս՝ փառասիրութեան մէջ:

Ճիշտ է, աշխարհը ծափ է տալիս փառքով պսակուածներին, բայց անփառունակ աչքը - իմա՛ նախանձողի աչքը - դժուարաւ է տանում փառքի փայլը: Աշխատի՛ր, որ փառքդ ստուերիդ պէս ընթանայ ետեւէդ, բայց երբե՛ք՝ առջեւէդ:

* * *

Սրբութեան բարձունքներից մինչեւ գոյութեան գռեհը - ահա՛ ուղիների այն աշխարհը, ուր դեգերում է մարդկային ոգին: Եւ, բեւեռանում յաճախ - վսեմանում կամ գռեհկանում: Հէնց այդ բեւեռացմամբ պիտի բացատրել սուրբի եւ սինլքորի գոյութիւնն աշխարհում:

* * *

Ինձ տրուած չէ առանց բարոյական զարհուրանքի դիտել մարդուն իր նուաստութեան մէջ: Այդ վիճակում տեսնել պիտի չուզէի թշնամուս անգամ: Լաւ է դժբախտ, քան նուաստամիտ լինել: Նուաստանալով՝ ենթական խաթարում է իր մարդկային կերպարը, սպանում իր ներքին մարդուն: Չնուաստանալու համար՝ սպարտացի մանուկը քարի վրայ իր գանգը փշրեց:

Մի՛, մի՛ նուաստանար, անգա՛մ Աստծուդ առջեւ:

* * *

Անբարոյական է այն ամէնը, որ նուազեցնում է մեր հոգեկան արիութիւնը:

* * *

Ո՛չ խորութիւն, ո՛չ բարձունք՝ հոգեւոր տափարակ - ահա՛ նա, որ ե՛ւ ուսուցիչ է, ե՛ւ հասարակական գործիչ միաժամանակ:

Միտքս խռովուած էր այդ օրը, երբ հանդիպեցի նրան, եւ փորձեցի խօսել յաւիտենական առեղծուածների մասին:

Կը սպասէի իր խօսքին, երբ ձեռքը տանելով դէպի գլխարկը՝ դիակնօրէն յարեց. «Վերջերս անկանոն է քունս»... Եւ, բաժանուեցինք:

Խե՜ղճ ժողովուրդ, վա՛յ քեզ, վա՛յ մանուկներիդ, եւ երի՛ցս վա՛յ ապագայիդ:

* * *

Կռիւներում հերոսանալուց աւելի դժուար է կեանքում հերոսավայել կեցուածք ունենալը:

Հերո՞ս ես՝ ապա ուրեմն՝ աշխատիր բոլոր պարագաներում արժանի լինել անուանդ:

* * *

Հերոս չէ նա, ով գիտակցում է, որ ինքը հերոս է: Ոգու հսկայ լինելով հանդերձ, ծերութիւն չճանաչող մանուկ է հերոսը, որը սխրագործելիս իսկ կարծում է, թէ կատարում է մի շատ սովորական գործ, եւ ոչ աւելին:

* * *

Մեծ մարդը՝ մեծ նաւի կը նմանի: Վա՛յ նրանց, որոնք հանդիսանում են իբրեւ թիրախ՝ նրա հարուածներին:

Նա զօրաւոր է, երբ չափւում է զօրաւորների հետ:

Սակայն, վա՛յ իրեն, երբ փորձում է պաշտպանուել՝ այն էլ աննշան հակառակորդների դէմ:

* * *

Երբ խօսքդ սրբազանօրէն կամ ողբերգօրէն բարձր առարկաների մասին է, աշխատի՛ր, որ նրա վրայ արեան հետքեր լինեն - ե՛ւ սրտիդ, ե՛ւ մտքիդ արեան:

* * *

Նոր ամէն մի ցաւ ինձ կրկնել է տալիս.

«Չէ՛ որ դու ինձ չես ընկճի: Դու, որ թեւատում ես տկարներին, պիտի աւելի եւս ջրդեղես իմ ոգին: Արդ, թէ ինչու եմ ողջունում քեզ: Միայն քո շնորհիւ հզօրը դառնում է հզօրազօր: Այժմ այդպիսի՛ն է իմ ոգին»:

* * *

Դերեր կան, որոնք միջակութիւն չեն վերցնում:

Կա՞յսր ես՝ եղի՛ր Մարկ Աւրելիոս.

Իմաստասէ՞ր ես՝ եղի՛ր Պղատոն.

Զօրավա՞ր ես՝ Աւարայրի Վարդա՛ն եղիր:

Մեծ պաշտօններն առանց հոգեկան մեծութեան նման են կաւէ անդրիի՝ դրուած ոսկէ պատուանդանի վրայ:

* * *

Ազգային ոգի - ահա՛ գերագոյն հերոսը, միա՛կը, մեր պատմութեան անիւը դարձնող, մեր հաւաքական ճակատագիրը վարող հերոսը:

Էապէս միայն դա է գործում պատմութեան մէջ եւ պատմութեան համար: Անհատ հերոսներն ոչ այլ ինչ են, եթէ ոչ միայն անձնաւորողներն այդ ոգու:

Մեռնում են հերոսները՝ Մանուէլները, Մուշեղները, Վարդանները. մնում է, սակայն, նրանց ոգին, որն իր մարմնաւորումը գտնելով այլ հայերի մէջ՝ շարունակում է ապրել ու ներգործել:

Եւ հէնց սրանում է հերոսների անմահութիւնը: Չէ՛, չի՛ մեռնում հերոսը. նա միայն իր անօթն ու անունն է փոխում:

* * *

Իր ժողովրդի հոգեկան հզօրութեան արտայայտիչն է հերոսը, բայց ոչ ե՛ւ չափը: Ժողովրդի հոգեւոր պոտենցիալը, նրա կարողական ուժերը չի արտայայտել եւ ո՛չ մի հերոս:

Ժողովուրդն աւելի՛ն է, քան իր ամենամեծ եւ փառաշատ հերոսը:

* * *

Հերոսի կեանքը միշտ էլ մեծութեան ու փառքի դժուարին վերելք չէ միայն, այլեւ՝ Գողգոթա:

Քիչերին, շա՛տ քիչերին է տրուած վայելելու իրենց փառքը - այն սակաւաթիւներին, որոնք յաջողում են իրենց վերելքի ժամանակ շրջանցել Գողգոթան:

* * *

Աշխատի՛ր, որ խօսքդ լինի համակ լոյս եւ ճշմարտութիւն - կայծա՛կ, որը զարկելուց առաջ լուսաւորում է առարկաները:

* * *

Բաներ կան, որոնց էութիւնը տկար խօսքը արտայայտում է այն չափով միայն, ինչ չափով կաթիլն արտացոլում է անսահմանութիւնն ու վեհութիւնը աստղալից երկնքի:

Մենք ազդում ենք ոչ այնքան նրանով, որ յաջողում ենք արտայայտել, որքան՝ մեր խօսքի ցաւով, որ չենք կարողանում արտայայտել մեր զգացածը:

Կարողանալ ընթերցողին, լսարանին զգացնել տալ ա՛յն, որ մեզ չի յաջողում արտայայտել - ահա՛ հէնց այդ անարտայայտելի զգացողութեամբ են ազդում ճշմարիտ գրողն ու հռետորը:

Սրանում է նրանց բարձր կարողութիւնը, գերագոյն արուեստը:

Նրանք տիրում են խօսքի հոգուն, նրա բովանդակ էներգիային, նրա առաւելագոյն արտայայտչականութեան - անարտայայտելին արտայայտելու իրենց ճիգի, ցաւի, հզօր խօսքի իրենց կարօտի զգացողութեամբ:

Ամենաարտայայտի՛չը խօսքի…

Ա՛հ, սրա ցաւը ես զգացել եմ ողջ կեանքում:

Արդեօ՞ք, դա միայն խօսքի աստուածների՞ն է տրուած: Երեւի՛:

* * *

Երբեմն ժամն աշխատում է ե՛ւ վատերի համար, իսկ ժամանակը՝ միշտ էլ եւ բացառաբար՝ արժանաւորի՛:

Ժամը երբեմն ժպտում է, բարձրացնում նաեւ անարժանին, ժամանակը, սակայն, մի օր նմանին իր կեղծ բարձունքից զարկում է գետին, փառազրկում:

Ժամի ծնունդ է ամէն բախտահաս:

Դո՛ւ, բարեկա՛մ, մեծ բան մի համարիր այն, որ քեզ տալիս է ժամը, վայրկեանը: Դու գործիր ժամանակների՛ համար:

* * *

Ուզո՞ւմ ես յաղթահարել ցաւդ՝ արձանացուր այն, ապա՝ կանգ առ նրա առջեւ ու ասա. «Այո՛, բարեկա՛մ, անծանօթ չենք իրար. քեզնից առաջ ես ճանաչում էի ուրիշներին, քեզնից աւելի մեծերին»:

* * *

Մեր սեփական ցաւերը մեղմելու, մոռանալու մի հատիկ միջոց կայ - մտածել այլոց ցաւերի մասին:

* * *

Ձինաթափուած ամէն մի կիրք մի նոր զինակից է, յաղթահարուած ամէն մի ցաւ՝ հոգեւոր հզօրանքի նո՛ր աղբիւր: Գիտե՛ս, ցաւից վայում էին աստուածները Ողիմպոսի, երբ նրանց կողքերին Արամազդի շանթերն էին թաղուում: Քեզ, բարեկա՛մ, քեզ վայել չէ ցաւի նման արտայայտութիւնը, վասնզի դու մարդ ես, մարտի՛կ:

Ուրեմն, սովորի՛ր ժպտալ անգամ տառապանքների եւ զրկանքների մէջ: Նման պահերի՛ն է աճում, հզօրանում, վեհանում մեր ոգին: Կանգնի՛ր բարձր ճակատագրից եւ դու կը մնաս անմատչելի տկարութեան համար: Յո՛ւշ առ՝ մարդս կարող է, նրան տրուած է լինել աւելի զօրաւոր, քան է՛ աշխարհը:

Ահա՛ գերագոյն երանութիւնը, որին ձգտում է հոգիս:

Քալէ՛ իմ ճամբով, բարեկա՛մ:

* * *

Ո՞րն է պատմութեան ամենաուսանելի դասը:

- Չկորցնել չափի զգացումը, երբ դիպուածը մեր ախոյեանին մեր ձեռքն է յանձնել: Վաղը պատմութիւնը կարող է մեր ախոյեանին կարգել դատաւոր՝ մեզ դատելու համար: Եղի՛ր արդար, արդա՛ր եղիր, քանզի դա է լաւագոյն քաղաքականութիւնը: Գիտցի՛ր, մեր արդարութիւնից մենք ենք առաջին շահողը: Մեր երկրագնդի վրայ դեռ ոչ ոք է զղջացել արդար լինելու համար:

Ճշմարտօրէն զօրաւո՛րն է արդար:

Եւ, միայն արդա՛րն է ճշմարտօրէն զօրաւոր:

* * *

Երջանկութի՛ւն: Ո՞վ է երջանիկ:

- Հիւանդի համար՝ առողջը, աղքատի համար՝ հարուստը, այն վերջինի համար՝ է՛լ աւելի հարուստը:

Երջանիկ է ե՛ւ կալանաւորը, որի խուցի կոյր պատուհանով արեւը, երբեմնակի, իր մէկ-երկու աղօտ ճառագայթն է ներս ուղարկում:

Չէ՛, չկան, նոյնիսկ աշխարհիկ առումով երջանիկներ չկան:

Կան մարդիկ, որոնց դժբախտները երջանիկ են համարում:

Կան, սակայն, գերերջանիկնե՛ր - նրանք, որոնց յաջողում է իրենց կեանքի գործը հերոսական մահով պսակել:

* * *

Ես իմ կեանքով հաստատեցի Հերոդոտոսի խօսքը. «Վտանգաւոր է չափից աւելին ցանկանալ»:

Ես ուզեցի, որ մեր ցեղի գոյութեան թշնամին հէնց իմ օրով նստի իր հայրենիքի փլատակների վրայ, եւ վայէ՝ նախանձելով եօթնիցս անիրաւուած իմ ժողովրդի ճակատագրին:

* * *

Տեսնո՞ւմ էք թիթեռնիկի հետեւից վազող երեխային: Նրան գուցէ եւ յաջողի բռնել իրեն հրապուրող թռչող ծաղիկը, բայց, աւա՛ղ, կարճատեւ է լինելու իր ուրախութիւնը - նա պիտի սպանի նրան, կամ էլ փախցնի առանց ուզելու:

Արդեօ՛ք նոյնն էլ տեղի չի՞ ունենում երջանկութիւն կոչուած թիթեռնիկին հետամտող չափահասների հետ:

Որքան եթերային է թիթեռնիկ-երջանկութիւնը, այնքան կոշտ է մարդկային էութիւնը: Միայն հոգու մշակոյթի դարի՛ն է տրուած լինելու, միաժամանակ, նաեւ երջանկութեան դար, որը կանխած պիտի համարել սակաւաթիւ նրբահոգիներին միայն, որոնց շարքում առաջին տեղը խորհրդագէտ (սիմվոլիստ - *խմբ.)* Մեթերլինգին է պատկանում, անվիճելիօրէ՛ն:

* * *

Արդարեւ, առանց գիտութեան հնարաւոր չէ վերակառուցել բնութիւնը. ճիշտ է, սակայն, ե՛ւ այն, որ գիտութեամբ չես հոգեփոխի, չես վերանորոգի մարդուն:

Գիտութիւնը մարդկայնացուցիչ յատկութիւն չունի - նրանից օգտւում են ե՛ւ բարի, ե՛ւ չար նպատակների համար: Ահա՛ թէ ինչով պիտի բացատրել մարդկային անհատի բարոյական անմշակութիւնը գիտութեան մեր դարում: Մարդկայնանալու համար պէտք է հետեւել նախ Սոկրատին, ապա յետոյ՝ Դարուինին:

* * *

Մարդու բարոյական կողմը, ամէն բանից առաջ, արդիւնք է իր հետապնդած մեծ ու փոքր նպատակների:

Ամէն մի նպատակ, ըստ իր որակի, ենթակայի մէջ առաջացնում է որոշ հոգեվիճակ, իսկ այդ վերջինը կաղապարում է նրա նկարագիրը, նրա էութեան հոգեւոր կողմը, նրա ներքին մարտը: Նպատա՛կը, նպատակասլացութի՛ւնն է կեանքի շարժիչ ոյժը: Նոր նպատակադրութիւն, ասել է՝ ներքին ուժերի նո՛ր շարժ, մտածողութեան նո՛ր ուղղութիւն, պայքարի նո՛ր հրայրք:

Ուժածին է ամէն նպատակ, եւ իբրեւ սկզբունք, նաեւ՝ արգասաւոր է, սակայն, ոչ հաւասար չափով:

Անձնական նպատակներն զբաղեցում են մեր ուժերի նուազագոյնը միայն:

Մարդը հոգեպէս աճում է առաւելապէս այն դէպքերում, երբ շարժման մէջ է դնում իր ուժերի առաւելագոյնը եւ լաւագոյնը: Դժբախտութիւն է աննպատակութիւնը - հոգեկան աղէտ, քարացում, մա՛հ, որի ժամանակ ենթական տառապում է հոգեկան կարկամութեամբ, ճղճիմութեամբ, հոգեսպան մանրագործութեամբ:

Կործանարար են այլամերժօրէն եսական, ստոր նպատակները, որոնք անպատիժ կերպով հետապնդել չի կարելի:

Նման նպատակները լինում են հոգեսպան, մանաւանդ պատանեկութեան համար:

Պատանի՛, ասա՛ քո նպատակը, որ ասեմ քո երիտասարդութիւնը:

* * *

Երիտասարդութի՛ւն, աշխարհի անգերազանցելի գեղեցկութիւնն ես դու, երբ բարձրանպատակ ես:

Արդարեւ, չկայ գեղեցկութիւն, որ զօրէր ստուերարկել հերոսական կեցուածքդ, երբ կանգնած ես պսակահաս կէտի վրայ, մրցութեան դափնին ձեռքիդ:

* * *

Հայուն յատուկ է սրբութեան զօրաւոր զգացումը՝ աղբիւրը հոգեւոր անսպառ ուժի, նուիրումի, պաշտամունքի: Նրա համար բարձր ստորոգութեան առարկաները - հայրենի հող, նախահայրեր, մայրութիւն - վերացարկուելով մարդկայինից՝ դառնում են սրբազան: Վերաբերմունք դէպի այդ կարգի առարկաները - ահա՛ մի այլ փորձաքար, որի վրայ ճշտել կարելի է ժողովուրդների նկարագրի մետաղը:

«Ամենագեղեցիկն աշխարհում իմ մօր աչքերն են»,- ասել է հոգեվարող Նիցշէն:

«Ամենաբարին աշխարհում իմ մօր դէմքն է»,- ասում եմ ես:

Մա՛յր, հա՛յ մայր, դու ե՛ւ mater dolorosa - թախծութեան մայր, ե՛ւ միերածին Խանդուք, երի՛ցս օրհնութի՛ւն քեզ:

«Մօր սիրտը միշտ էլ այնտեղ է, ուր իր ծնունդներն են. թէեւ մեռնում է մայրը, իր սիրտը, սակայն, շարունակում է բաբախել իր ծնունդների համար. մօր սիրտը մեռնում է իր վերջին ծնունդի մահուան օրը»…

Այսպէս կը խօսէր մայրս իր խանդաղատանքի ժամերին:

* * *

Կալանաւոր էի ցարի օրով, եւ մայրս ամէն Կիրակի ինձ այցի կու գար հեռաւոր գիւղից. կու գար ոտքով:

Իր նիոբէական վշտից ազդուած՝ կը զայրանայի, որ ինձ համար կը նահատակէ իր անձը: «Ի՞նչ,- կը պատասխանէր,- կա՞ռք նստեմ, կա՞ռք վայելեմ, երբ շղթաների եւ զրկանքների մէջ ես դու»…

«Դէպի քաղաք ճամբայ ընկնելուց առաջ,- կը պատմէին քոյրերս,- մայրիկը հսկումի է կանգնում Տիրամօր առջեւ, արիւն լալիս, կուրծքը եկեղեցու քարերին քսում մինչեւ որ արիւնեն ստինքները. խե՛ղճ կին՝ կ'ուզէ որ քարերն էլ զգան իր ցաւը»: Ահա՛ մայրը, որի նման են բոլոր հայ մայրերը:

* * *

Այն օրէն, երբ մարդու մէջ, առաջին անգամ լինելով, շանթեց մտածումը, թէ աշխարհը կարող է լինել - եւ պէ՛տք է որ լինի աւելի բարեկարգ, աւելի արդար քան որ է՛, եւ որ այդ անկատարելութեան պատճառը ինքը մարդկային ազգն է - այդ օրուանից մարդը ճանաչեց տառապանքը:

* * *

Մարդկութիւնը տառապանքին կը պարտի իր հոգեւոր ողջ մշակոյթը:
Ով տառապանքից է փախչում՝ կատարելութիւնից է փախչում:
Ով չէ տառապել՝ չի՛ աճել, չի՛ հզօրացել ոգով:

* * *

Ճշմարիտ ամէն մի արուեստագէտի մէջ առկայ է տառապողը, խորապէս տառապողը:
Եւ հէնց տառապանքն է ստեղծագործում:

* * *

Կայ ե՛ւ բարոյական հերոսութիւն՝ ժպտա՛լ, ժպտալ գիտենալ անգամ ամենաանմարդկային տառապանքների մէջ՝ այն կրելով իբրեւ բարձրագոյն պատուանշան, իբրեւ առիւծի մորթի, որ հնում հերոսներին էր տրւում:

* * *

Քեզ մի՛ կարծիր այն, ինչ որ չես: Մի՛ չափազանցիր կարողութիւններդ, մի՛ խաբիր քեզ. կեանքը մի օր պիտի փորձի դնի՛ ուժերդ: Աշխատիր լինել ա՛յն, ինչ որ կ'ուզէիր կարծել քեզ:

* * *

Ներքին թշնամիներիդ - յոռի կրքերիդ յաղթել կարող ես այսօր, հէնց այսօ՛ր. թողեցի՞ր վաղուան՝ կասկածելի է դառնում յաղթանակդ:

* * *

Քաղաքական սուրբեր են նրանք, որոնք իրենց ուսերին՝ ի խնդիր իրենց ժողովրդի լաւագոյն ապագայի՝ առնում են ծանր բեռ, քան մարդկօրէն կրել կարելի է:
Նմաններին երի՛ցս փա՛ռք:

* * *

Անպարտելի է մնում նա, ով մահն է ընտրում իրեն առաջնորդ:
Այսպէս վարուել, ասել է՝ մահը դարձնել ներքին զօրութիւն, ներուժ կեանք եւ յաղթանակի պրինցիպ:
Այսպէ՛ս է վարւում նահատակը, հերոսը:

* * *

Յաճախ կաշառում են պատմաբանները, պատմութիւնը - երբե՛ք:

* * *

Արեւն արտացոլւում է ե՛ւ ծովի, ե՛ւ նրա աննշան մի կաթիլի մէջ: Իսկ ճշմարտութիւնը – հոգեւոր աշխարհի արեւը՝ մարդու ե՛ւ մեծ, ե՛ւ չնչին գործերում:

* * *

Մեր գործերում կայ այնքան բարութիւն միայն, որքան ճշմարտութիւն կայ մեր խօսքի մէջ: Եւ, բարութիւնը ոչ այլ ինչ է, բայց եթէ՝ մարմնացեալ ճշմարտութիւն. իսկ ճշմարտութիւնը – վերացականացած բարութիւն:

* * *

Բաներ կան տիեզերքում, որոնց մասին մարդը գիտէ այնքան միայն, որքան միօրեայ կեանքով ապրող միջատը՝ Պղատոնի նախայաւիտենական գաղափարների մասին:

Եթէ բռնութեան ծոցում մնայ նոյնիսկ մի հատիկ գաղտնիք՝ ճշմարտութիւնը մարդու համար - աբսոլիւտ ճշմարտութիւնը պիտի շարունակէ մնալ իբրեւ մի աներեւոյթ աստուածութիւն: Տիեզերաշէնքի եւ բնութեան այդ վերջին գաղտնիքին տիրելով միայն մարդս կը դառնայ ճշմարտաճանաչ: Մինչեւ այդ մարդու ճակատագիրը պիտի կազմեն գիտական հիփոթէզը եւ հաւատը:

* * *

Երիցս նահատակ է նա, ով մենակ է կրում ճշմարտութեան բեռը:

* * *

Խորապէս մեղանչում է մարդը՝ մահուան գաղափարը յաւիտենական կորուստի հետ կապելով:

* * *

Կորուստ չկայ տիեզերքում – կայ անդադարում մի շարժ, որի ընթացքում կերպարանափոխուելով հոսում է ամէն ինչ: Nauta Dei – պիտի ասէր դիալեկտիկ փիլիսոփան: Մեռաւ՝ չէ նշանակում ոչնչացաւ,

կորաւ, այլ կերպարանափոխուեց, թողնելով իր նիւթեղէն անօթը երկրին, ոգին՝ մարդկութեան: Չլինէր ոգու անմահութիւնը՝ չէր լինի նրա կատարելութեան ձգտումը, նրա առաջընթացը, որի ճամբու վրայ ամէն մի խորհող էակի կեանքը միառաջաքայլ է: Եթէ էապէս գոյութիւն ունենար մահը՝ յաւիտենական կորուստի իմաստով, չէ՛ր ապրի մարդկութեան անցեալը, որին կրթնելու կարիք է զգում եկող ու անցնող ամէն մի սերունդ:

Լինէր մահը՝ անցեալը կը լինէր մեռեալ, իբրեւ մի խաւարչտին գիշեր, իբրեւ մի անդունդ դատարկ եւ անխօս:

Անմեռ ու անկորուստ է մարդկային ամէն մի գործ, ամէն շարժուձեւ:

Իբրեւ անօթ՝ վաղո՛ւց է խորտակուել Բեթհովէնը, չկայ նա, կան, սակայն, մնում են նրա ակկորդներն աստուածային:

Դարեր է, ինչ կեանքից մեկնել է Միքելանջելոն, սակայն, ապրում է իր «Մովսէս»ը:

Եկաւ, ասուպի պէս փայլատակեց ու անցաւ Բոնապարտը՝ սերունդների զարմանքը շարժելով, մնաց, սակայն, սահման չճանաչող փառասիրութիւնը, մնաց մեծութեան ծարաւն անյագ, նոր Բոնապարտների կարելիութիւնը, մնաց:

Այսպէ՛ս է գործում ոգու դիալեկտիկան: Մահ չկա՛յ, կորուստ չկա՛յ տիեզերքում, կայ աստիճանական ոգիացումը նիւթի, ոգու անվերջ զարգացում, կատարելագործում կայ:

* * *

Բարեկա՛մ, երբ յաւիտենական բաժանումդ դարձաւ անխուսափելի՝ աշխարհից քաշուիր այնպէս, ինչպէս արեւն է քաշւում: Չկա՛յ մահ, կայ անցում մի այլ ոլորտ: Անմե՛ռ է մեզ սկզբնաւորող, մեզ շնչաւորող զօրութիւնը, բա՛նը, ոգի՛ն:

Մի՞թէ մեռնում է լոյսի ճառագայթը՝ արեւին, իր սկզբնաղբիւրին վերադառնալով:

* * *

Մահը տրուած է մարդուն՝ այն յաղթահարելու համար:

* * *

Միայն կամաւոր նահատակն է բացարձակ ազատութիւն վայելում:

Նրա՛ն է տրուած՝ զգալ իրեն բարձր մարդկային օրէնքներից, եւ դո՛ւրս մարդկայինի սահմաններից: Նրան անծանօթ է երկիւղը մահուան: Նրան չէ կարելի վախեցնել. նրանից վախենում են, թէեւ անզէն ու անչար է նա:

* * *

Ամէն մարդ իր տեսանելի կամ անտեսանելի դաստիարակիչն ունի, որի դերն ու ազդեցութիւնն իր նկատմամբ շարունակւում են մինչեւ գերեզման:

Մէկի փոխարէն՝ ես երկուսն ունեցայ՝ Մամիկոնեաններն ու Մասիսը: Առաջիններն ինձ հայրենիքի համա՛ր մեռնելու տենչ ներշնչեցին: Երկրորդը՝ սէ՛ր դէպի հոգեւոր բարձունքները:

* * *

Երաժշտական ամէն աղմուկ՝ երաժշտութիւն չէ՛, քարակոփութիւնը՝ քանդակագործութիւն չէ՛, ամէն չափածոյ գրուածք՝ պոէզիա չէ՛:

Ստեղծագործութի՛ւն - ահա՛ գեղարուեստը:

Իսկ ստեղծագործում է մարդը՝ մղուած իր ներքին ուժերի լիութիւնից, առաւել եւս՝ իր ներշնչումի ուրախութիւնից:

Այլ խօսքով՝ նա ստեղծագործում է՝ իր ներաշխարհը արտայայտելու անհրաժեշտութիւնից մտրակուած:

* * *

Տեսանող է ամէն ճշմարիտ արուեստագէտ: Նրա ներքին տեսադաշտում, նրա հոգու հորիզոնում՝ որոշ վայրկեաններում՝ յայտնւում են իդէալական պատկերներ: Ահա՛ հէնց այդ հմայիչ պատկերները, տեսիլքները յաւերժացնելու փորձի արդիւնք են արուեստները:

* * *

Խորհրդածում էի մարդկութեան ապագայի մասին, եւ միտքս կանգ առաւ ատոմի վրայ:

- Սա՛, սա՛ է ապագայի խորհրդանշանը եւ անօթը:

Սրա սրտում է թաքնուած ժողովուրդների վաղուան ճակատագիրը: Սրանով է պայմանաւորուելու - իբրեւ կարելիութիւն - վաղուայ կեանքի չարն ու բարին…

Ատո՛մ, դու անսիրտ աստուածութի՛ւն, ո՞վ, ո՞վ է գործի դնելու քո տարերային ոյժը - չարութեան ձեռք՝ պատերա՞զմը, թէ խաղաղութիւնը:

Ո՛հ, ես արդէն լսում եմ նախամահուան հռնդիւնները, եւ, միաժամանակ, ցնծութեան աղաղակները հազար հազարների…

Ես տեսնում եմ երկրի երեսը պղծող արիւնն ու աւերը, եւ շուշաննե՛ր,

շուշաննե՛ր, աւելի փարթամ մշակոյթի շուշաններ… Եւ, ասում եմ վաղուայ խռովքով՝

- Օրհնութի՛ւն քեզ, սակայն, եւ անէ՛ծք քե՛զ, ատո՛մ, եթէ պատերազմին ու չարին պիտի ծառայես:

* * *

Չէ՛, բարեկամ, մայր չէ բնութիւնը:

Դա,- պիտի ասէր իմաստասիրական դպրոցներից մէկը,- «պատճառ ու հետեւանք» կոչուող մի կոյր խաղ է, որի ընթացքում արարածներից մէկի գոյութիւնը պայմանաւորւում է միւսի մահուամբ: Անդադար կառուցելու եւ կործանելու խելագարութի՛ւն, հեշտա՛նք, վամպիրիզմ՝ ասում եմ ես:

Իր զաւակները լափող առասպելական Կռոնոսը - ահա՛ բնութիւնը:

Դա՝ ե՛ւ կերպարար է, ե՛ւ խաթարիչ, ե՛ւ կենարար, ե՛ւ սպանիչ, ե՛ւ մաքրութիւն, ե՛ւ ապականարար:

Տե՛ս, ամենանուրբ ծաղիկներով է նա զարդարել աղբակոյտերն անգամ, սակայն, կ'անցնեն օրեր, գուցէ եւ՝ ժամեր, եւ նա կապուտաչուի շուշանները կը վերածի աղբի:

Ահա՛ մի դէմք՝ համակ կենդանի մարմարիոն, արի՛ւն եւ արեւ, որը վաղը նա կարող է պղծել ամենագարշ ախտի նշաններով - խոցերով: Միայն վայրկեաններ առաջ, անապատում, վագրի քաղցը յագեցնելու համար՝ նրա ժանիքներին յանձնեց տկար եղնիկին: Նոյն բնականութեամբ՝ այդ գազանին, իբրեւ կեր ու լէշ, նա պիտի յանձնի աւելի զօրաւորին:

Նրա համար հաւասարարժէք եւ հաւասարիրաւ են շունը, մանրէն, հանճարը: Պէտք էր ճիճուներ աճեցնել - չգիտես՝ ինչո՞ւ - եւ նա կտրեց կեանքի թելը Մեծն Մակեդոնացու:

Կուրութի՛ւն, դաժանութիւն, անհեթեթութիւն - ահա՛ իր յատկութիւնները: Հազարամեակներ առաջ՝ մէկը մարդկութեան ամենազգայուն զաւակներից՝ Բուդդան, կարդալով բնութեան օրէնսգիրքը, ընդվզեց նրա դէմ:

Չէ՛, բարեկա՛մ, մայրական չէ բնութեան գիրկը: Դու բնութիւնից դուրս փնտրիր այն, որ նա զլանում է մարդուն:

Յաւերժութեա՛ն, ինձ նման, յաճախ, յաւերժութեան կրծքին հանգչեցուր յոգնած գլուխդ…

* * *

Եւ խօսեցի ես ունայնութեան մասին.

- «Մարդն աշխարհ է ստեղծում եւ աշխարհից հեռանում անբաժին»:

- «Մարդու արժէքն ու արժանապատուութիւնը ստեղծագործելու մէջ է եւ ոչ՝ ունենալու: Եւ, քանի որ ոչ ոք ոչինչ չի տանում աշխարհից՝ լաւ է, որ մարդս մի բան թողնի աշխարհում, թէկուզ՝ առիւծի պէս՝ արեան հետքեր մարդկային անապատում»՝ Մասիսն ինձ ասաց:

VII

ՀԱՅՈՒ ԼԱՒԱԳՈՅՆԸ

Ժողովուրդների կուլտուրական արժէքը պէտք է ճշտել համամարդկային այն գծերով, որ յատուկ են նրանց հոգեւոր ստեղծագործութեան:

Եւ հէնց այդ համամարդկայինը, մարդկօրէն այդ օրինակելին է կազմում ամէն ազգի լաւագոյնը:

Եւ, ազգերի մտաւորականութեանն է ընկնում աշխատել, որ համաշխարհայնացած «ամէն» բառի նման համամարդկայնանայ այդ լաւագոյնը:

Նման գծեր ես տեսնում եմ հեթանոս հայութեան բանարուեստի մէջ - նրա զրոյցների, առասպելների, երգերի մէջ:

Եթէ Անիի վսեմաշուք աւերակները մեզ խօսում են հայու ճարտարապետական հանճարի եւ գեղագիտական բարձր ճաշակի մասին, ապա մեր հեթանոս վիպասանութեան բեկորները վկայում են նախաքրիստոնէական հայու անգերազանցելի մարդկայնութեան եւ բարձրօրէն ասպետական ոգու մասին: Վահագնա-Անահտական Հայաստանում ես տեսնում եմ այնպիսի հոգեգծեր, առաքինութիւններ, որոնք պիտի բաղձալ մեր՝ որքան գոռոզ, այնքան հոգեպէս աղքատ ու տմարդի դարաշրջանին:

Աշխարհի ո՞ր մեծ, ո՞ր աշխարհակալ ազգը պիտի չուզենար իր ֆոլկլորի մէջ ունենալ հետեւեալ իմաստալից պատառիկը.

«Քե՛զ ասեմ, այր քաջ Արտաշէս,
Որ յաղթեցեր քաջ ազգին Ալանաց,
Ե՛կ հաւանեաց բանից աչագեղոյ դստերս Ալանաց՝
Տալ զպատանիդ.
Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիւցազանց՝
Զայլոց դիւցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
Կամ ծառայեցուցանելով ի ստրկաց կարգի պահել
եւ թշնամութիւն յաւիտենական
Ի մէջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել»…

Լսո՞ւմ ես, ընթերցո՛ղ, օրէնք չէ՛, ասում է հեթանոս հայը, դիւցազների համար թոյլատրելի չէ՝ առաջին՝ օտար դիւցազների գոյութիւնը վերացնել, երկրորդ՝ ստրկացնել, ծառայեցնել նրանց, երրորդ՝ երկու քաջ ազգերի միջեւ յաւիտենական թշնամութիւն ստեղծել: Գաղափարախօսական անհանդուրժողութեան համասփիւռ հալածանքների մեր ամօթալի օրերում որքա՛ն մարդկօրէն հպարտ է հնչում հին հայու խօսքը:

Այո՛, «ոչ է օրէն»…

Հայը դէմ է քաջ զարմերի ոչնչացման, ստրկացման, եւ՝ լինելով քաջ՝ նա յարգանքով է վերաբերւում իր քաջ թշնամուն անգամ:

Ահա՛ հոգեւոր կերպարը հեթանոս հայու, որի մարդկայնացուցիչ գաղափարներով պիտի թթխմորել Արեւելքի հոգեւոր հացը:

* * *

Ցա՛ւ է, երբ օտար ազգերը չեն ճանաչում մեզ. ցա՛ւ է բիւրիցս, եւ վատութի՛ւն, երբ օրուայ հայութիւնն ինքը չէ ճանաչում իրեն:

Դեռ 19-րդ դարի առաջին կէսին, Անիի այցելուներից մէկը՝ գաղղիացի ճարտարապետ Տեքսիէն դժուարացել է նմանութիւն գտնել երբեմնի մեծաշէն քաղաքը շինարարողի եւ իր օրերի հայութեան միջեւ: Նա ասել է, ի միջի այլոց. «…Հազիւ կարելի է այս յիշատակարանների մէջ - որոնք յունական ճաշակ եւ փափկութիւն են արտայայտում - ճանաչել այն ազգի մտքի ծնունդը, որ մեր օրերում կորցրել է արուեստի ամէն մի զգացմունք, եւ նոյնիսկ բոլորովին չէ յիշում, թէ ինչպիսի մարդիկ էին իր նախահայրերը»:

Անինքնաճանաչ է եւ օրուայ հայութիւնը: Լինելով այդպիսին՝ նա խորապէս մեղանչում է թէ՛ իր ապագայի եւ թէ՛ մարդկութեան դէմ: Ամէն ազգ պարտաւոր է մարդկութեան տրամադրելու իր լաւագոյնը՝ իբրեւ հոգեւոր թթխմոր:

Հայկական լաւագոյնի - բարձր մարդկութիւն արտայայտող գողթան երգերի բովանդակած վեհ գաղափարների - վերարծարծումն, նրանց պրոպագանդը հայ մտաւորականութեան կողմից ո՛չ միայն հայկական, հայրենասիրական, այլեւ՝ համամարդկային պարտականութիւն է:

«Ոչ է օրէն», այո՛:

Բայց Արեւելքը չիւրացրեց հեթանոս հայութեան բարձր մարդկութիւնը - նա մնաց տմարդ, նա ղեկավարուեց եւ դեռ շարունակում է ղեկավարուել ջունգլիների օրէնքով:

Եւ, հէնց այդ էր պատճառը, որ Առաջին համաշխարհային պատերազմին, յամօ՛թ Արեւելքի եւ Արեւմուտքի, ամայացաւ հայոց աշխարհի մեծագոյն մասը:

Աճառեանը իր «Հայոց լեզուի պատմութեան» մէջ, խօսելով մեր անգիր բանահիւսութեան պատառիկների մասին, անխոցելի գիտակցութեամբ ճշտել է նրանց ողջ բառամթերքը, բառերը վերածել իրենց արմատական ձեւերին, եւ վերջապէս, նշել նրանց հայկական եւ ոչ-հայկական ծագումը: Այսպէս մանրակրկիտ կերպով մեր գողթան երգերի բեկորների լեզուն ուսումնասիրող մեր անգերազանցելի լեզուաբանը կարեւոր չի համարել՝ երկու խօսք էլ ասելու նրանց գաղափարային իմաստի, նրանց կուլտուրական տարողութեան մասին: Այդ թերին, պէտք է ասել, յատուկ է գրեթէ բոլոր հայ բանասէրներին: Ինչո՞վ բացատրել դա. հայոց իմաստասիրական մտքի տկարութեա՞մբ, թէ՞ մերօրեայ հայ մտաւորականի պարտուողական հոգեբանութեամբ: Վերջինով տառապողները, ընդհանրապէս, խոնարհամիտ են լինում եւ բնազդօրէն փախչում այն ամէնից, ինչ որ նրանց յիշեցնում է լիարժէք կեանքով, քաջաբար ու փառքով ապրող իրենց նախահայրերին:

Նախահայրերը պարտաւորեցնո՛ւմ են մեզ. լսե՛նք նրանց՝ մեզ ազգօրէն ճանաչելու համար:

Գիտակցե՛նք մտաւորականի ազգային եւ համամարդկային մեր կոչումը եւ կատարենք այն:

«Ո՛չ է օրէն»... Այո՛:

VIII

ՌԱԶՄԱԿԱՆ ԽՈՀԵՐ*

Աշակերտի՛ր ճշմարտօրէն մեծերին -
ռազմի հանճարներին, սակայն,
մի՛ մոռանար, որ վտանգն է զօրականի
լաւագոյն ուսուցիչն ու դաստիարակը:

Պատմութեան բոլոր դարաշրջաններում - դիւցազնական Հելլադայից մինչեւ Հռոմը, եւ Հաննիբալից մինչեւ Նապոլէոնը - մարդը յամառօրէն խորհրդածել է այն մասին, թէ ինչո՞վ եւ ինչպէ՞ս է շահւում յաղթանակը: Եւ, ձգտելով պատասխանել այդ հարցին, նա ծնունդ է տուել մի շարք տեսութիւնների, որոնցից ամէն մէկը բովանդակում է ճշմարտութեան հատիկներ միայն, բայց ոչ՝ ամբողջ ճշմարտութիւնը:

---

* *Իմ նոյնանուն ձեռագրից:*

Մի հատիկ եւս աւելացրած կը լինենք ճշմարտութեան ֆոնդին, եթէ ասենք, որ էականը պատերազմում, կռւում, ամենաէականը մահն է՝ անեռեւոյթ, սակայն, իրական երրորդ գործօնը, ոյժը - երրորդ դերակատարը:

Մարտերում, հաւասար այլ պայմաններում, սովորապէս, յաղթանակում է այն կողմը, որը այդ «երրորդ»ից աւելի է օգտւում, քան իր հակառակորդը: Իսկ օգտուել մահից, նշանակում է՝ նրանից օգտուելու կարելիութիւնից զրկել իր ախոյեանին: Նման վիճակի մատնելով վերջինին՝ մենք էապէս զինաթափում ենք նրան, որով եւ՝ ապահովում մեր յաղթանակը:

* * *

Յաղթանակել կռւում, նշանակում է՝ մահուան սպառնալիքով իր կամքը պարտադրել հակառակորդին:

Մահ սպառնալ - ահա՛ կռուի ողջ էութիւնը, եւ դաժանութիւնը, միաժամանակ:

Հետախուզական պարզ աշխատանքից սկսած մինչեւ բարդ եւ բախտորոշ ճակատամարտը՝ կռւող կողմերը իրապէս մրցում են ահավարութեան մէջ:

Կռուի նման մեթոդի առաւելութիւնը նրանումն է, որ ահավարողն իբրեւ աւելի ակտիւ կողմ՝ մնում է զերծ մահուան երկիւղից, կամ նրա ազդեցութիւնն իր համար հասցնում է նուազագոյնի:

Մարդկային արարածը ընդունակ է հոգեֆիզիկական որոշ աստիճանի լարուածութեան միայն, լարուածութիւն, որի սահմանն անկարելի է անցնել առանց պատժի, առանց սուր կորովաթափութեան, որը նախորդում է անձնատուութեան, պարտութեան:

Չափուող կողմերը՝ ահավարութեամբ հէնց իրենց ախոյեանի այդ կորովաթափութիւնն են հետապնդում:

* * *

Նոր զէնքեր ճարտարող արդիական գիւտարարը թէ վայրենին - որը կռուի մտնելուց առաջ ահուսարսափի ազդող դրսերեւոյթ է տալիս իր դէմքին, ասես՝ մահակերպարանաւորւում է - սրանք երկուսն էլ ղեկավարւում են միեւնոյն հոգեբանական հաշուով - ահավարութեամբ կաթուածել հակառակորդի հոգեֆիզիկական ուժերը, եւ այսպիսով, նրան մղել անձնատուութեան: Մահակերպարանաւորման գործում կատարեալ կլասիկներ, կատարեալ արտիստներ են եղել՝ Հաննիբալը, Բոնապարտի փոթորկաշունչ այրուձին, եւ Սուվորովը՝ սուինի ջատագով:

Գիտէ՞ք, իրար հանդիպելիս՝ ահավարութեան են դիմում նաեւ գազանները, բնազդի ոյժով:

* * *

Խոտան պիտի հռչակել այն բոլոր տեսութիւնները, որոնք յաղթանակը միշտ էլ նուիրում են այն կողմին, որը մի հատիկ զինուոր, մի թնդանօթ, ամրաշինական մի կառուցուածք աւելի ունի: Ո՛չ, ո՛չ, հարիւր զինուորի ոյժը միշտ էլ հաւասար չէ հարիւրի ոյժին: Այդ ոյժն ունի իր յաւելումն ու նուազումն ունի, նայած թէ ո՞վ եւ հոգեբանական ինչպիսի՞ մթնոլորտում ու ինչպէ՞ս է ղեկավարում այդ հարիւրակը: Կռւում գործ ունենք կենդանի, յարափոփոխ, դինամիկ եւ ոչ-մեքենական մեռեալ ուժերի հետ, որոնք չեն մնում քարացած միեւնոյն կէտի վրայ: Թիւն ու տեխնիկան վճռական դեր են կատարում միայն այն դէպքում, երբ նրանցից օգտւում ենք իբրեւ ահավարութեան միջոցներից: Յաղթանակը օրինաչափօրէն թեքւում է այն կողմը, որը յաջողում է աւելի երկար ժամանակ մահուան սարսափի տակ պահել իր հակառակորդին՝ ճգնելով խորատակել նրա դիմադրական ոգին: Այո՛, ըստ էութեան՝ ռազմավարութիւնն այլ բան չէ, եթէ ոչ՝ ահավարութիւն: Եւ, որովհետեւ մահն է ահացուցիչը՝ մենք բնաւ մեղանչած չենք լինի լեզուի ոգու դէմ, եթէ այսպէս բանաձեւենք ռազմավարութիւնը - հոգեբանօրէն առնուած՝ դա մահավարութիւն է:

* * *

Սուվորով չէ ամէն զօրավար, որը սուինը գերադասում է հրազէնից: Սուվորով լինելու համար պէտք է լինել Սուվորով, այսինքն՝ պատերազմական հանճար, հերոս, եւ զինուոր միաժամանակ:

Հանճար ու զինուոր էին՝ Կեսարը, Հաննիբալը, Նապոլէոնը:

Կատարելատիպ հերոսներ էին Մամիկոնեան Մուշեղ, Վասակ, Վարդան զօրավարները: Սակայն, կարելի է ռազմական տաղանդ, հանճար լինել, բայց եւ այնպէս հերոս չլինել:

Հերոսը բարոյական հանճար է, սրտի հանճար, եւ միշտ քաջաքաջ ու մահապատրաստ:

Հանճարի համար պատերազմն ամէն բանից առաջ մտքի գործ է: Իր բանակի յաղթանակն ապահովելու համար՝ նա համադրում է ռազմի գործում դեր կատարող բոլոր գործօնները, միաժամանակ վարպետօրէն օգտուելով իր հակառակորդի գործած սխալներից:

Ընդհակառակը, հերոսի յաղթանակը պսակողը՝ իր հոգեկան ոյժն է, որով սնուում են իր արիութիւնն ու մահապատրաստութիւնը:

Հանճարը դա բանակի ուղեղն է, հերոսը՝ սիրտը:

Օրհնութիւն է հանճարը, բայց, աւա՛ղ, նա հեշտ ու յաճախ չէ ծնւում:

Յաղթանակ կարելի է շահել նաեւ առանց հանճարի, առանց հերոսների՝ երբե՛ք:

* * *

Ոգու մարդը - ահա՛ սխրագործելու, մեծագործելու կարող ղեկավարը: Այսպիսի՞ն էր նա, ով աշխարհակալ Հռոմի դէմ ստրուկների ատելութիւնը շղթայազերծեց - Սպարտա՛կը՝ ներշնչելով մարդկութեան այն վսեմ ճշմարտութիւնը, թէ աշխարհը պիտի վայելի մարդն, ընդհանրապէս, եւ ոչ թէ իր նմաններին ճնշելու եւ շահագործելու իշխանութեամբ զօրաւորը միայն:

Այսպիսին էր նա, ով ողջ բանակով դարանակալեց կանանց մօտ՝ թոյլ տալով հռոմէական լեգէոններին երեւալու իր թիկունքում - Կարթագէնի ամեհի զաւակը, որի հարուածները հարկադրեցին Կեսարների գոռոզ ազգին խոստովանելու, թէ Հռոմից եւ հռոմէացու հոգուց դուրս էլ մեծութիւն կայ:

Վերջապէս, նա, ով Տղմուտի ափերում դարերին եւ սերունդներին իմացեալ մահով անմահանալու ճամբան մատնանշեց՝ հրաշունչ Մամիկոնեա՛նը, որն իր արիւնով հաստատեց, թէ չէ կարելի մարել այն, որն էութեամբ անմարելի է - հայկակա՛ն ոգին:

* * *

Զօրավար չե՛ս, եթէ նախ զինուոր չես: Այդ ճշմարտութիւնը, առաւել եւս, պատշաճում է հայ մարդու հոգեբանութեան: Հայը սիրում է կռուի ժամանակ իր ղեկավարներին տեսնել կրակի առաջին գծի վրայ, դէմ առ դէմ մահուան հետ: Նա սիրում է հաւասարութիւնը մահուան մէջ: Եւ արդա՛ր է նրա պահանջը: Հրէշային անհեթեթութիւն է անարի, շահախնդիր, մորթապաշտ զօրականը: Յաճախ խաբում են ուսադիրները - այդ լաւ գիտէ հայը: Նրանք միշտ էլ չեն համապատասխանում ենթակայի ներքին հնարաւորութիւններին, նրա հոգեկան ուժերին: Աստիճանը միշտ էլ ոգու կամ տաղանդի չափ չէ:

Բազէն էլ թռչուն է, բայց ամէն թռչուն բազէ չէ:

Այո՛, ամէն սպայ ղեկավար չէ:

* * *

Ո՛ւժ, աւելի ուժ - ահա՛ անհրաժեշտն ու էականը կռուադաշտում:

Տալու, ծախսելու համար՝ պէտք է ունենալ: Ամենակուլ է կռիւը: Այնտեղ ուժերի առատութիւն է պէտք: Ուժերի լիութիւնն է մարդուն մղում առատաձեռն զոհաբերութեան: Վայրկեանէ վայրկեան նոր ուժերի

առկայութիւն զգալ՝ նոր, մինչ այդ անծանօթ ուժերի: Եւ, հէնց այդ նոր ուժերի յորդումն է արիութիւնը:

Արիացուցիչ է հոգեկան ոյժը - ոյժը, որ ծնունդ է առնում այս բարձր գաղափարներից, որոնք հոգեբանութեան լեզուով կոչւում է force idée:

Զոհաբերելով սահմանաւոր մեր կեանքը՝ մենք նուաճում ենք յաւերժութիւնը,- ասում էին խաչակիրները: Դա ուժածին գաղափար է: Այդպիսին են նաեւ պատուի, փառքի, մեծութեան գաղափարները:

Սրանցից աւելի զօրաւոր է հայրենիքի գաղափարը:

Փառքով, փառասիրութեամբ էին ոգեշնչուած Նապոլէոնի մարաջախտները: Նրանց կուռքերն էին՝ կայսրը եւ Պատուոյ լեգէոնի շքանշանը: Թէեւ զօրաւոր, բայց ժամանակի ընթացքում թափը կորցնող խթան է փառասիրութիւնը: Փառքով յագենալ կայ: Անյագ է յաւերժութեան ծարաւը միայն: Արդ, թէ ինչու աշխարհը զարմացնող, բայց ոչ հիացնող Միւրատները, Դաւուները, Նէյերը՝ պատերազմների փոթորիկներում պարտասած՝ ծերացած արծիւների պէս, խաղաղ կեանքի կարօտով մի օր կախեցին իրենց թեւերը:

Եւ հէնց այդ օրն էլ թեքուեց մեծ Կորսիկացու աստղը, որովհետեւ նրա զօրքերի վարիչներն այլեւս շանթող զօրավարներ չէին:

* * *

Պատերազմում հարուածում է, սպանում, վէրքեր հասցնում ցաւեր ու աւերներ պատճառում ե՛ւ ինքնապաշտպանուող կողմը, բայց նա չի յանցագործում:

Որքան անհրաժեշտ է սուրը յարձակուողի՝ այնքան նուիրական է նա ինքնապաշտպանուողի ձեռքում:

Հակահարուածել, սպանել ակամայից՝ առանց սպանիչ դառնալու - ահա՛ թէ որպիսի գիտակցութիւն է ծովացնում մեր հոգեկան ուժերը:

* * *

Երբ առկայ է կարող առաջնորդը՝ հայը կռւում հեգնում է մահը, զոհաբերում քաղցրօրէն: Եւ ընդհակառակը, նմանի պակասի դէպքում, նա կորցնում է իր թափը, կորովաթափւում: Արդ, ինչու առաջնորդութեան խնդիրը, հայու համար, գերազանցօրէն բարոյա-հայրենասիրական է: Անհայրենասիրութիւն եւ անբարոյականութիւն է, երբ անարժանը, տկարը, անանձնուէրը թեկնածում է առաջնորդութեան: Զօրավար լինելու համար նախապայման է՝ զօրաւոր լինել: Իսկ այդպիսին լինելու համար պիտի կարողանաս արհամարհել ե՛ւ հարստութիւն, ե՛ւ վայելք, ե՛ւ մահ:

Չէ՛, բաւական չէ աստիճանով զօրավար լինել, պէտք է եւ զօրաւոր լինել - ահա՛ հայու պահանջը իր առաջնորդներից:

* * *

Առաջի՞ն կռիւն ես վարում, զօրակա՛ն. այո՞, ապա ուրեմն, գինովցի՛ր հայրենապաշտութեամբ, փառքով, խելայեղութեամբ, դիւցազնացի՛ր, մարդեղէն աստուա՛ծ կտրիր, ի մի բան՝ բիւրապատկի՛ր հոգեկան ուժերդ - կռիւը շահելու համար:

Վա՛յ քեզ - անփառունակութիւնն է պսակելու ապագադ, եթէ պարտուեցիր: Ռազմական փառքի կատարները՝ Ալեքսանդր, Հաննիբալ, Կեսար - այդ հրեղէն անունները գուցէ եւ միայն անծանօթ աշխարհին, եթէ պարտուած լինէին իրենց վիճակուած առաջին ճակատամարտում:

Այո՛, շատ անգամ հէնց առաջին կռուի ելքն է առաւելապէս ճշտում մեր ճակատագիրը հետագայ:

* * *

Ես մերժում եմ այն բարոյազուրկ հասկացողութիւնը, թէ հայրենիքի շահը սրբագործում է ամէն միջոց:

Ստորութիւնը չի դադարում ստորութիւն լինելուց ե՛ւ այն դէպքում, երբ այն կատարում է անգամ հայրենիքի համար:

Արտօնեալ մարդասպան, բռնացող, աւարառու - ա՛յդ է ստորութեան ընդունակ զօրականը: Բարոյական տկարութեան ծնունդ է ամէն կարգի ստորութիւն: Նա, ով մահապատրաստ է հայրենիքի համար՝ ստորութեան չի դիմում: Ստորութեան դիմում է անհայրենասէր կաշուապաշտը: Ստորութեամբ չեն պաշտպանում հայրենիքը:

Նրան՝ հայրենիքին, վայել է բարձրօրէն մարդկայինը, ասպետականը, կորովին:

Մարդը հոգեպէս բեւեռանում է առաւելապէս խոր բերկրանքի եւ սարսափի ժամանակ:

Սուր բեւեռացումի են ենթարկւում զինուորը՝ գրոհի, ճամբորդը՝ նաւաբեկութեան ժամանակ:

Հոգեկան այդ երեւոյթը, նուազ սրութեամբ, տեղի է ունենում եւ բանտերում:

Մարդկանց ամենաբարիներին եւ ամենաչարերին ես հանդիպել եմ կռուադաշտերում, մէկ էլ՝ բանտերում:

Հոգեկան բերկրանք, սարսափ, տաժանք - սրանք մարդկային էութեան նկատմամբ կատարում են հոգեբանական ռէակտիւի դեր: Դրական թէ բացասական բեւեռացմամբ ենթական դրսեւորում է իր էութիւնը՝ շեշտելով իր նկարագրի հիմնական գծերը: Ժողովուրդներն իրենց էութիւնը առաւելագոյն չափով մատնում են պատերազմի ժամանակ, որը

եւ բերկրանք, եւ սարսափներ ապրելու այնքան առիթներ է ընձեռում: Պայթե՞ց առաջին հրանօթը՝ բանակի ընկերայնօրէն առաքինի տարրերը - այլասէրը, մարտունակը, հայրենասէրը հոգեկան բեւեռացմամբ դառնում են համակ սէր, ընկերասիրութիւն, խիզախութիւն: Եւ հէնց սրանք են կազմում բանակի իրական ոյժը, նրա բարոյական ողնաշարը, նրա «մատեան գունդը»: Սրա՛նք են վտանգի դնում իրենց կեանքը, սխրագործում, հերոսանում, եւ յաճախ իրենց արիւնով ներկում դէպի յաղթանակը տանող ճամբան:

Իսկ ընկերայնօրէն պաղ տարրերը - եսապաշտը, անարին, անհայրենասէրը, բեւեռացման նոյն օրէնքով, դառնում են բանակի տկար ու խոցելի կողմը, երեւան գալով իբրեւ դասալիք, ահընկէց, կռիւ կեղծող, գլուխ պահող:

Վա՛յ այն բանակին, որին հոգեբան եւ կարող ղեկավարներ են պակասում: Նման դէպքում տկար տարրերը յաճախ յաջողում են ապամագնիսացնել, բարոյալքել անգամ մարտունակ տարրերը: Զանգուածների հոգեբանութեան օրէնքներին ծանօթ ղեկավարը անձնական կենդանի օրինակի վարակչութեամբ նպաստում է իր զինուորների դրական հոգեբեւեռացմանը, որով եւ՝ անկարելի դարձնում բացասականը: Եւ, հէնց սրանում էլ, ըստ էութեան, կայանում է ղեկավարութեան գործի կէսը - նրա կարեւորագոյն մի մասը:

* * *

Նախընտրիր իբրեւ թշնամի ունենալ նեմէեան առիւծը, քան աղուէսը: Զօրաւորի հետ չափուելն աւելի հեշտ, նաեւ՝ աւելի պատուաբեր է, քան նենգողի:

* * *

Իմ զինակիցը կռւում - դա ե՛ս եմ, ե՛ս ամէնից առաջ:

* * *

Հայը կռւում է աննահանջ եւ սխրագործում աւելի իբրեւ կամաւոր, քան պարտադիր ծառայութեան զինուոր:

Նրա սրտովը չէ՝ գործել հրամանով, իսկ մեռնել հրամանով՝ բնա՛ւ:

Պարտադիր ծառայութեան մէջ իսկ նա իրեն զգում է կամաւոր:

Հոգեբանական այդ իրողութիւնը հետեւանք է այն բանի, որ երկար, շատ երկար ժամանակ՝ իր պատմական ճակատագրի բերումով հայն իր հայրենիքի պաշտպանութեան գործին մասնակցել է ոչ թէ իբրեւ իր

նախարարի ստրուկը, ճորտը, այլ՝ իբրեւ հայ մարդ, որ պարտական է կռուելու Հայաստանի համար*:

Հայու այդ հոգեգիծը՝ դրական եւ օրինաբեր, պիտի պահպանուի գուրգուրանքով, քանզի կամաւորութեան գաղափարն աւելի վեհ է, քան պարտադիր ծառայութիւնը:

Կամաւորութիւնը ուխտուածութիւն է - ահա՛ թէ ինչումն է իր խորհուրդը, իր ոյժը: Եւ ոչ մի իշխանութիւն կարող է մեռնելու բռնադատել նրան, ով ուխտուած չէ, մահապատրաստ չէ հայրենիքի համար: Կարելի է առաջ վարել անգամ մորթապաշտներին. նմաններին իսկ կարելի է զոհաբերել, բայց նրանց կրաւորական, ակամայ մահերով յաղթանակ չի շահուում:

Կամաւորագրուողն է քաջագործում, մեռնում կամովին - յաղթանակում:

* * *

Արդեո՛ք, զինուորը - ամէն զինուոր ընդունե՞լ է կռիւը - ահա՛ հարցը, որին պիտի պատասխանի ղեկավարը:

Ընդունել կռիւը. առանց հոգեբանական այդ ակտի՝ զինուորը մնում է սովորական հրացանաւոր, մեռեալ թիւ:

Կարելի է լինել բանակի շարքերում, ծածան դրօշի տակ, բայց եւ այնպէս իրեն չզգալ իբրեւ ռազմապատրաստ մարտիկ: Ռազմիկն արթնանում է հրացանաւորի մէջ դեռ կռուից առաջ: Այդ զարթօնքը տեղի է ունենում այն վայրկեանին, երբ զինուորն ընդունում է կռիւը, այսինքն, երբ նա հաշտուում է յանուն մի սրբազան արժէքի իր կեանքը վտանգի դնելու մտքի հետ: Հաւասար այլ պայմաններում յաղթանակում է այն կողմը, որի շարքերում նուազ է կռիւը հոգեբանօրէն չընդունողների թիւը: Ընդունել կռիւը - նախ ա՛յդ:

Հոգեկան այդ ակտից են ծնունդ առնում ե՛ւ զինուորը, ե՛ւ բանակը, ե՛ւ յաղթանակը:

* * *

Մեր ղեկավարութիւնը միայն այն չափով է ակտիւ եւ իմաստուն, ինչ չափով մեզ յաջողւում է խանգարել մեր հակառակորդի ղեկավարութեան գործը:

---

* *Վարդան Զօրավարը՝ վերջապահ զօրամասի հրամանատար նշանակելով իր եղբայր Համազասպեանին, պատուիրում է նրան բռնութիւն չգործադրել նրանց վերաբերմամբ, որոնք չեն ուզում պատերազմել - Լէօ:*

Եւ, յաղթանակն սկսում է ժպտալ մեզ հէնց այն վայրկեանից, երբ անկարելի ենք դարձնում թշնամու ուժերի ղեկավարութիւնը: Նման դէպքերում խզւում է ո՛չ միայն արտաքին կապը նրա ուժերի միջեւ, այլեւ՝ մարտիկների արիութիւնը եւ արթնութիւնը սնուցանող այն աներեւոյթ, ասենք՝ էլեկտրական հոսանքը, որ միացնում է էութիւնները եւ ստեղծում այն, որ ես անուանում եմ հաւաքական սիրտ:

Հոգեբանական նման մթնոլորտում ապամագնիսացւում է զինուորը, նա իրեն զգում է անզէն, անգլուխ կորած: Մի գրոհ, մի հարուած եւս - եւ թշնամուն կը մնայ ողբալ իր պարտութիւնը:

* * *

Ո՞վ է ղեկավարում ինձ. խորհելով այդ մասին՝ զինուորը շատ անգամ հոգեբանօրէն յաղթանակում է կամ պարտւում դեռ կռուի չբռնուած:

Ո՞վ է վարելու ճակատամարտը. ժամանակակից մի Մամիկոնեա՞ն, թէ՞ մի սովորական սպայ, որի, ինչպէս գիտենք, աստիճանը միշտ էլ ներքին ոյժ, արժանաւորութիւն չի ենթադրում: Ահա՛ հարցը, որն այնքան յաճախ խռովում է զինուորի միտքը:

Իր անունը չի արդարացնում այն զօրականը, որը կարծում է, թէ բաւական է միայն հրամանը, որպէսզի իր զինուորը կռուի: Միայն հրամանով չեն նետւում դէպի մահ, չեն մեռնում, մասնաւորապէս մեր ժամանակներում: Զինուորը կռւում է, խիզախում, վտանգի դնում իր կեանքը, երբ իր զօրամասը գտնւում է հոգեպէս շիկացած վիճակում, երբ իր թիկունքում, իր կողքին ամէն ինչ խթանում է նրա արիութիւնը, երբ վարարած կրքերի մի հրահեղեղ նրան քշում է առաջ: Նման հոգեբանական մթնոլորտում է մարդու մէջ արթնանում ռազմիկը: Իսկ այդ մթնոլորտն ստեղծում է կարող ղեկավարը:

Կռւում՝ ղեկավարն էապէս իր ներքին մարդը, իր ներքին աշխարհը վարելով է ղեկավարում իր զօրամասը:

(Այո՛, ղեկավարութիւնը միշտ էլ ենթադրում է ինքնաղեկավարութիւն, միաժամանակ): Ճակատագրական նշանակութիւն է ստանում նրա ամէն մի խօսքը, շարժուձեւը, երեւումը:

Զինուորը տրամադիր է իր ղեկավարի մէջ տեսնելու աւելի՛ն, քան սովորական ուսադրաւորը:

Բոնապարտի զինուորները լուսապսակ էին տեսնում իրենց կայսեր գլխի շուրջը, երբ սկսում էր խօսել նա:

* * *

Իբրեւ մարդկային կամարտայայտութիւն, գործունէութիւն՝ կռիւն էլ

իր դիալեկտիկան ունի, որի օրէնքները մեզ հիմք են տալիս կանխատեսելու ռազմագործողութեանց ընթացքն ու վախճանը:

Ինչպէս պատմական անցեալ դէպքերի անսխալ վերլուծութիւնը մեզ օգնում է հասկանալու ժամանակակից իրադրութիւնները եւ նրանց զարգացման հեռանկարները, այնպէս էլ տուեալ մարտի յաջորդական փուլերի ճշգրիտ անալիզը մեզ առնուազը կռահել է տալիս նրա զարգացման ձեւերը: Այլ խօսքով, դիալեկտիկական մեթոդի կիրարկումը՝ ռազմագործողութիւնները գնահատելիս՝ մեզ հնարաւորութիւն է տալիս կանխատեսելու կռուի զանազան ընթացքը, - կանխատեսութիւն, առանց որի չէ կարելի կռիւը ղեկավարել: Ղեկավարել, ասել է՝ անհրաժեշտ վայրկեանին վճռաբար հասցնել մեր հերթական հարուածը: Ծովը մակընթացութեան եւ տեղատուութեան ժամանակ - ահա՛ կռիւը: Անասելիօրէն յարափոփոխ է նրա պատկերը: Իր ժամանակին պէտք է հասկանալ, թէ յօգուտ ո՞ր կողմի է տեղի ունեցել փոփոխութիւնը եւ ըստ այնմ ճշտել մեր վճռական միջոցառումը: Եթէ կռուի եւ յաղթանակի տենչը ինքնին յաղթանակի կէսն է - իբրեւ յաջողութեան նախադրեալ - ապա՝ նրա միւս կէսն էլ պայմանաւորւում է խմորուող ռազմանցքերի կանխատեսութեամբ:

* * *

Գոյութիւն ունեն երկու տեսակ զինուորներ՝ մէկը, որ կռւում է, միւսը՝ որին կռւեցնում են:

* * *

Թող կռուի չմեկնեն թուապաշտները - նրա՛նք, որոնք ընդունում են, թէ ոյժը, զօրութիւնը թուի մէջ է միայն: Ոգի՛ն է կռուի մղում զինուորին: Ով որ համրում է՝ չի՛ խիզախում:

* * *

Կռուադաշտում նմանիր առիւծին, որը քնում է բաց աչքերով:

* * *

Ասում են, որ առիւծը, իրեն հետապնդողներից ճողոպրելու համար, պոչով աւելում է իր հետքերը:

Ա՛յդ բանում, զօրակա՛ն, միայն այդ բանում դու մի՛ նմանիր առիւծին:

* * *

Կռւում ճանաչիր մի հատիկ սահման - անկարելի՛ն:

* * *

Ի՞նչ կ'ուզէիր արծուից:
- Նրա թեւերը,- ասաց արուեստագէտը:
- Նրա բնազդը,- յարեց ռազմիկը:
Առաջինին պէտք էր թռիչք, երեւակայութիւն ստեղծագործ:
Երկրորդին՝ արտաքին եւ ներքին սրատեսութիւն:
Մէկը հետամուտ է գեղեցիկին, միւսը՝ յաղթանակին:

* * *

Մէկն ինձ խնդրեց՝ բանաձեւել իմ ռազմական փորձը:
Ահա՛ դա՝ ասացի.
- Առաջինը՝ թոյլ չտալ հակառակորդին մտածելու իսկ, թէ ինքը աւելի զօրաւոր է մեզնից, եւ այդ՝ հէնց կռուի սկզբից:
- Երկրորդ՝ հէնց կռուի սկզբից զգացնել տալ հակառակորդին, որ մենք զօրաւոր ենք նրանից:

* * *

- Ի՞նչ են ասում սարերն իրենց խրոխտ լռութեան մէջ,- հարցրի իմաստունի անուն հանած մի ծեր լեռնականի:
Հայեացքը դէպի հայրենի կատարները դարձնելով, նա լռեց մի պահ՝ կարծես նրանցից պատասխան սպասէր, ապա՝ իմաստաբանեց.
- Լեռներն ասում են՝ պահի՛ր մեզ, լեռնակա՛ն, որ մենք էլ քեզ պահենք:

* * *

Ով կռւում ժամանակ է կորցնում՝ յաղթանակն է կորցնում:

* * *

Ունեցիր միշտ աւելին, քան պէտք է քեզ - արիութիւն, բարութիւն, նուիրում:
Անհրաժեշտ չափով արի չես, եթէ արիութիւնդ չափաւորելու կարիք չես զգում:
Գիտե՞ս, ջրախառն է խմւում իսկական գինին:

* * *

Արդար լինենք, զօրավա՛ր, դու՝ եթէ հանճարեղ իսկ լինես, դու միայն նախապատրաստում ես յաղթանակը. այն շահում է զինուորը:

* * *

Աւելի հեշտ է մշակել, քան պաշտպանել հայրենի երկիրը:

Լաւ մշակ, լաւագո՛յն մարտիկ - այդպիսի՛ն եղիր դու:

Միայն նմանի հայրենիքն է սանձուած պահում արտաքին ընչաքաղցութիւնը:

* * *

Զօրակա՛ն, կռուիր այնպէ՛ս, որ կարողանաս ասել զէնքի ընկերներիդ՝ ի՛նձ պէս կռուեցէ՛ք:

* * *

Բանակը, նայած ո՞վ է առաջնորդում իրեն, միաժամանակ ե՛ւ կայծքար է, ե՛ւ ամպրոպային ամպ: Առաջինից կարելի է կայծեր հանել, երկրորդից՝ շանթեր քամել:

Բանակն այն է, ինչ որ առաջնորդին յաջողւում է դարձնել նրան: Ոչի՛նչ է բանակը - ամէն ինչ են անհատ զինուորն ու առաջնորդը: Չափւում են բանակները, սակայն յաղթում կամ պարտւում է զինուորը, եւ առաջին հերթին՝ առաջնորդը:

* * *

Պատերազմիր այնպէ՛ս, որ չամաչես տարածդ յաղթանակից:

Արդար է յաղթանակդ, երբ այն արդար է համարում պարտուած թշնամիդ իսկ:

* * *

Պարտուե՛լ հայրենի հողի վրայ - գերագոյն վատութիւն:

* * *

Չէ՛, տղամարդավայել գուպար չէ դա, երբ չափւող կողմերից նուազ տկարը օգտւում է իր հակառակորդի տկարութիւններից եւ նրան իր կամքը թելադրում: Յաղթանակի մասին խօսք չի կարող լինել այստեղ:

Ճշմարիտ յաղթական ու յաղթանակ փնտրիր միայն այնտեղ, ուր հերոսաշունչ ոգին չափւում է ո՛չ թէ մարդկային տկարութիւնների, այլ՝ մահուան հետ:

Նա՛ է յաղթականը, ով առանց ներքին կեղծիքի կրկնել կարող է Ֆիրդուսու խօսքը՝ հոգեւորի իմաստով առնուած. «Առիւծի ուղեղն է լափում իմ սուրը սայրի եւ համարձակի մութ արիւնը խմում»:

Այո՛, ուր առիւծ չես զգետնում, այնտեղ չկան ճշմարիտ յաղթականներ ու հերոսներ:

* * *

Մահը չունի մեծ թշնամի, քան մարդը, մարտիկը՝ անմահութեան թեկնածող:

* * *

Մեր անձի վրայ տարած յաղթանակը - ահա՛ հիմքը մեր այլ կարգի յաղթանակների:

* * *

Բաժանի՛ր յաղթանակդ, զօրավա՛ր, եւ միշտ էլ առիւծի բաժինը թո՛ղ զինուորներիդ, աւելի ճիշտը՝ այն խորհրդաւոր ոյժին, որ վարեց քեզ եւ զօրքերիդ ճակատամարտում:

Ա՛հ, որքան արդար էին գաղղիական էպոսի հերոսները, երբ իրենց յաղթանակի փառքից բաժին էին հանում նաեւ իրենց գործածած սրին՝ իրենց անուան հետ հռչակելով նաեւ սրի անունը:

* * *

Միջոցների անխտրականութեամբ շահած ամէն յաջողութիւն պղծում է, ապականում մարդկային բարոյական աշխարհը:

Մարդկայնութեան առաջին թշնամին է անխտրողը:

* * *

Ստորութիւնն էլ է պարտւում, բայց երբեք չի զինաթափւում:

* * *

Մի՛, մի՛ սպանիր թշնամուդ անգամ, եթէ կարելիութիւն կայ սպանելու նրա մարտունակութիւնը - կռիւը շարունակելու նրա ցանկութիւնը:

Այլ կերպ վարուողը մարդասպան է հասարակ, եւ ոչ՝ մարտիկ:

* * *

Փառքի կատարները բարձրանալու համար կայ մի հատիկ սանդուխք, որի առաջին աստիճանը կոչւում է քաջութիւն, իսկ վերջինը՝ դարձեա՛լ քաջութիւն - մահամերժ քաջութիւն:

* * *

Փա՞ռք ես փնտրում՝ վտա՛նգ փնտրիր: Հերոսական ոչինչ կայ այնտեղ, ուր շնագայլն ու աղուէսն են կռւում:

Վա՛գրը վագրի դէմ - ահա՛ կռիւը հերոսավայել:

* * *

- Ես ողջունում եմ քեզ եւ ճակատում քո դէմ, քանզի թագաւոր ես դու:

Դարեր ու դարեր առաջ Քսերքսէսին ուղղուած յոյն ռազմիկի այդ խօսքը պատշաճ է ասել իր հայրենի հողի համար մահուան կուրծք տուող ամէն ռազմիկի, քանզի առանց թագակիր լինելու՝ իր մեծ նուիրումի մէջ թագաւո՛ր է նա:

Հարուածելուց առաջ ողջունել իր հակառակորդին - հնում այսպէս էին վարւում ասպետոգի կռուողները:

Իսկ այսօ՞ր...

* * *

Մի՛ զլանար կարեկցանքդ տկարներին, սէրդ անգամ. զայրոյթիդ, սակայն, արժանացո՛ւր, Հերակլէսի պէս, զօրաւորներին միայն: Խնայի՛ր տկարներին, եթէ թշնամիդ իսկ լինի: Յարգի՛ր քաջութեան օրէնքը - մնա՛ մարդ, մարդ մնա՝ բոլոր դէպքերում: Եւ, զա՛րկ միայն նրանց, որոնք կարող են պատասխանել զարկիդ:

* * *

Անձնուիրութեան մէջ մնալով միշտ առաջինը, վերջինը մի՛ համարիր զոհաբերութիւններիցդ ամենամեծն անգամ:

Թո՛ղ, մահուա՛ն թող զոհաբերութեանցդ վերջ դնելու հոգը:

* * *

- Սպինե՛րս, հայրենիքիս համար ստացած վէրքերս համրէք:

Այսպէս խօսելու ազատ մարդը ընդունակ չէ ստորութեան ու նուաստացումի:

* * *

Նա, ով կռւում երբեք չի եղել՝ յաճախ մնում է անինքնաճանաչ եւ անճանաչ իր շրջապատի համար:

Վտանգի մթնոլորտում է, առաւելապէս, մարդս դրսեւորում իր ներքին ուժերը, հակումները, նկարագրի գծերը:

Առանց մարտնչումների՝ որքա՛ն հերոսներ ու որքան դասալիքներ անյայտ պիտի մնային զանգուածների մէջ:

Մարտնչի՛ր, որ ճանաչե՛ս քեզ, եւ որ ճանաչե՛ն քեզ:

* * *

Վերջին հաշուով՝ կողմերի զոհապատրաստութեան չափն է որոշում այս կամ այն ճակատամարտի, ապա՝ ողջ պատերազմի ելքը:

Յաղթում եմ, նշանակում է՝ հակառակորդիս գերազանցում եմ զոհաբերութեան մէջ: Ահա՛ ռազմական դոկտրինայի այբն ու փիլիսոփայութիւնը:

* * *

Մարդուն աշխարհում երբեմն վիճակւում է ապրել աւելին, քան այն, որ անուանում ենք ողբերգութիւն:

Օրինակ՝ երբ վիրաւորը աղաչում է իր սպանիչին - ինչպէս Իլիականի Հեկտորը՝ Աքիլլէսին - չանարգել իր դիակը:

Այո՛, դա աւելին է, քան սովորական ողբերգութիւնը: Նման դէպքերում զարհուրելին մահը չէ, այլ այն տանջող գիտակցութիւնը, որ քեզ մահ պատճառողը մահիցդ իսկ յետոյ քո հանդէպ մարդ լինելու քաջութիւն չունի:

Մեռնելով՝ մարդը դադարում է որոշ երկրի, ազգութեան, գաղափարաբանութեան հետ կապուած լինելուց:

Նա վերացարկւում է, համամարդանում, ոգիանում: Մեռնելով՝ նա մերկանում է աշխարհային ամէն տեսակի պատկանելութիւնից, կապից, եւ դառնում բացարձակ մարդ, որի դիակի առջեւ պիտի լռէ ամէն կարգի տմարդութիւն:

Հոգեւոր շնագայլութի՛ւն է հակառակորդի դիակի անարգումը:

* * *

Դիրքեր կան - անառիկ կոչուող - որոնցից կախուած է ոչ միայն օրուայ, այլեւ հետագայ կռիւների ելքը. դիրքեր, որոնց նշանակութիւնը ոչ

միայն ռազմավարական է, այլեւ՝ ռազմագիտական: Նման դիրքերի շուրջը եւ նրանց համար, յանձին մարտիկների, էապէս չափում են մահը եւ մահը. ուզում եմ ասել, թէ այդտեղ մարտիկների մահապատրաստութեան աստիճանն է կանխորոշում կռուի ելքը:

Եւ, մահուան գնով էլ յաղթահարւում է դիրքերի «անառիկութիւնը»:

* * *

Հրէական մի զօրավար, նահանջելով հռոմէական լեգէոնների առջեւ, խոր դժգոհութեան առիթ է տալիս իր բանակին:

Զինուորների հարցումին՝ «Ինչո՞ւ չէ դիմադրում», նա պատասխանում է, թէ իրեն ազատ չի համարում՝ աննշան վայրի համար թափելու այն արիւնը, որ պահել է Սողոմոնի տաճարի պաշտպանութեան համար:

Եւ, կրնկակոխ շարունակւում է նահանջը: Զօրավարը, սակայն, կանգ չառաւ նաեւ Սիոնի պատերի տակ,- ասում է պատմութիւնը: Եւ, Տիտոսի լեգէոնները կործանեցին Երուսաղէմը:

Ո՛չ, ո՛չ, զօրավա՛ր, դու սոփեստում էիր՝ սրբութիւն կեղծելով: Դու մեռնել չէիր ուզում. դու երկչոտ էիր, որով եւ անազնիւ:

Կարեւորագոյն վայրերի պաշտպանութիւնը ապահովում են նուազ կարեւորների յամառ պաշտպանութեամբ միայն: Այսպէ՛ս, եւ ոչ այլ կերպ: Ըստ իր կարեւորութեան՝ «տաճար» է ամէն դիրք, եւ իբրեւ այդպիսին պիտի պաշտպանել դա: Չկան ո՛չ աննշան դիրքեր, ո՛չ էլ աննշան գործեր կռուադաշտում: Այնտեղ կարեւոր է նշանակալից ամէն ինչ: Եւ, եթէ կայ աննշան մի բան, դա էլ հէնց մարդկային արիւնն է, անգամ զօրավարի արիւնը:

* * *

Գրողներ կան, որոնք ըստ էութեան հոգեւոր անասնականութիւն են քարոզում, անշուշտ՝ կիրթ, գեղեցիկ անասնականութիւն:

Ահա՛ ձեզ մի մեծ գրող՝ Անատոլ Ֆրանսը, որի կարծիքը մարդու եւ մարտիկի մասին աւելի բարձր չէ, քան վայրենու հասկացողութիւնն Աստծու մասին:

«Մարդկանց,- ասում է նա,- ղեկավարում է իրենց ամենազօրաւոր զգացումը: Զինուորի ինչպէս եւ զանգուածի ամենազօրաւոր զգացումը երկիւղն է: Նրանք յարձակւում են թշնամու վրայ իբրեւ նուազագոյն վտանգի»…

Ահաւո՛ր զրպարտութիւն:

Ա՞յս է մարդը, մարտիկը, որը փախչելով առաւելագոյն վտանգից՝ մահից, ակամայ քայլում է դէպի «նուազագոյն վտանգը»:

Արդեօ՞ք երկիւղն էր վարում Մարաթոնի անմահներին, կամ Բաստիլիայի դէմ գրեթէ անզէն, բռունցքներով գրոհող յեղափոխական ամբոխներին: Ո՛չ, ո՛չ:

Մեծատաղանդ գրողին ծանօթ չէ սխրագործելու ուրախութիւնը, տենչը, գեղեցկութիւնը. ահա՛ իր մեծ դժբախտութիւնը:

Արիների, քաջերի, հերոսների գոյութեան փաստը - ահա՛ կենդանի բողոք՝ պատասխանը հոգեւոր անասնականութեան ամէն կարգի քարոզիչներին:

* * *

Ես հաւատում եմ հայ հոգու մեծութեան:

Եւ վիպական չէ իմ հաւատը: Դա արդիւնք է հարուստ կենսափորձի:

Հայ մարդուն տեսնել ու ճանաչել եմ մարտերում, տեսել ու վայելել գեղեցկութիւնը նրա արիական խոյանքների:

Հայը միշտ էլ հերոսագործում է, երբ նրա առաջնորդներին յաջողւում է, կռուի ընթացքում, հաւաքական սիրտ ստեղծել;

Նման սրտի գործ էր Աւարայրի, իսկ մեր ժամանակներում՝ Ղարաքիլիսայի ճակատամարտը:

Երբ - ասենք մեր Պատմահօր ոճով - երբ «փոքր ածուն»՝ Հայաստանը իր մէջ ոյժ է զգում ծառանալու Սասանեան հզօր պետութեան դէմ, այլեւս իրենց իմաստից դատարկւում են սովորական ստորոգութիւնները, հասկացողութիւնները:

Ի՞նչ էր Աւարայրը: Բախտախնդրութի՞ւն: Մի՛, մի՛, հայհոյէք ոգու դէմ: Եւ, ի զուր բառեր մի՛ փնտրէք, քանզի պիտի չյաջողէք որակել այն: Հայ ոգու գործը - երկիւղած կրկնենք այս պարզ բառերը եւ բաւականանանք:

Ոգու մեծագործութիւններ կան, որոնց իմաստն ու արժէքը ճշտելու համար բառեր դեռ չկան:

Ոգու, հայ ոգու այդ մեծագործութիւններից էր Աւարայրը:

* * *

Ի զէ՛ն:

Որքա՛ն թափ ու թեւ կայ այդ սեղմ խօսքի մէջ: Քիչ լեզուների է տրուած հայոց այդ մի զոյգ բառերի արտայայտչական թափը:

Լսելով կամ մտովի կրկնելով այդ ռազմականչը՝ պատկերում ես յանկարծակի արթնացած վագրին, որ ձգւում է յարձակուելու համար. արծուին՝ որ թափահարում է թռիչք առնելուց առաջ. եւ, նպատակասլաց հեծեալի՛ն, որի երիվարի սմբակները կայծակներ են արձակում:

Ի զէն - վագներեան մի ամբողջ սիմֆոնիա է դա, հերոսական խելայեղիչ մի մարշ, որ ոտքի է հանում բանակները, շարժում, փոթորկում եւ վարում դէպի ստոյգ յաղթանակ:

Դա մի յարուցիչ կանչ է, որի սրբազան իմաստին հնազանդուելով՝ քանի՛- քանի՛ անգամ հայոց բանակները, կատաղութեամբ հարբած, շարժուել են դէպի Հայաստանի սահմանները եւ մահուան դէմ լեռնացել:

Հեռավոր մարտերի եւ յաղթանակների մի գոռ արձագա՛նգ, որը դարերը ճեղքելով գալիս է վերստին ռազմի փողը հնչեցնելու.

- Ելէ՛ք, ելէ՛ք, կռուի ելէ՛ք նորէն...

Դա մեր դասական ռազմավարների ոգու մոլեգնած փոթորիկն է, որի թափից տարուած, հայ ռազմիկները կ'երթային փնտրելու մահը՝ նրան իրենց դրօշի առաջ ծնկի բերելու:

Մի ահեղ ճիչ է դա - ճիչը հայ հողի, որից արթնանում է հայոց արդար ատելութիւնը եւ մահաբեր թշնամու դէմ զինւում:

Մի ամպրո՛պ, մի շա՛նթ՝ հայոց սրտի երկնքից արձակուած:

Մահասաստ մի հրամա՛ն, որը հայ մարտիկին մոռացնել է տալիս կեանքն ու աշխարհը ողջ, եւ նրան համակում Հայաստանով ու յաղթանակի ծարաւով:

- Ի զէն... ես կ'ուզէի այդ ռազմականչը շրթունքներիս մեռնել...

IX

ԱՆՀԱՏ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆ

Առանձին անհատի ընկերային դիրքաւորումը, նրա վերաբերմունքը դէպի իր պետութիւնը - ահա՛ թէ ինչով է պայմանաւորւում այդ վերջինի ճակատագիրը - պետութեան ճակատագիրը:

Հնարաւոր են հետեւեալ դիրքաւորումները.

- Նախ՝ անհատը սիրում է իր պետութիւնը, եւ այդ դէպքում անձնուիրաբար գործում, զոհաբերում, տառապում նրա համար, որով եւ նպաստում նրա հզօրացման եւ պաշտպանման:

- Նա խորթանում է իր պետութիւնից՝ դառնում անտարբեր դէպի նրա ճակատագիրը, որով՝ վերջինը դառնում է տկար եւ դիւրակործան:

- Վերջապէս, նա, անհատը թշնամանում է իր պետութեան եւ աշխատում ի կորուստ նրա:

Պատմութեամբ հաստատուած են հետեւեալ ճշմարտութիւնները..

- Մարդը չէ կռւում այն բանի համար, որը իրենը չէ համարում՝ իրաւական թէ բարոյական տեսակէտով:

- Արիաբար մարտնչում է նա, ով տրամադիր է անձնուիրաբար գործելու այն հաւաքականութեան համար, որին պատկանում է:

- Անարի է զոհաբերելու անտրամադիր ամէն անհատ, անկախ իր ընկերային դիրքից, իր խառնուածքից եւ հասակից:

Որով,- եզրակացնում են որոշ ուղղութեան պատկանող ընկերաբաններ,- անհատին պիտի դնել այնպիսի վիճակում, որ նա հաւատարմանայ իր պետութեան եւ չզատէ իր ճակատագիրը նրա ճակատագրից:

* * *

Արդեօ՞ք արդարանալի է՝ արտաքին վտանգի դէպքում ի կորուստ իր պետութեան աշխատող անհատի ընթացքը:

- Ո՛չ, հազարի՛ցս ո՛չ:

Քանզի պարտուած պետութիւն, ասել է՝ դժբախտ ժողովուրդ:

* * *

Ըստ նորանշան մի տեսութեան - որի համար անհատն ինքնանպատակ է - հայրենասիրութիւնը պայմանաւորւում է կենսական շահերի հաշուառմամբ: Այնտեղ, ուր հաշուի չեն առնում այդ շահերը՝ չքանում է հայրենասիրութիւնը, իր տեղը զիջելով անհատի անտարբերութեան կամ նրա ներքին թշնամանքին: Ըստ այդ նիւթապաշտիկ ընկերաբանների՝ հայրենասիրութիւնը, ինչպէս ամէն առաքինութիւն, պայմանական է: Տո՛ւր, որ տամ: Ահա՛ նմանների հայրենասիրութիւնը: Հացիս չափ, ստացուածքիս չափ ե՛ւ հայրենասիրութիւն: Ո՛չ աւելի, եւ ո՛չ պակաս: Կարիք կա՞յ ասելու, որ դա հայրենասիրութիւն չէ, այլ՝ պղծումն նրա հասկացողութեան:

Սիրոյ եւ նուիրումի մասին խօսք չէ կարող լինել այնտեղ, ուր տիրապետող է եսական շահը: Սէր դէպի հայրենի երկիրն ու ժողովուրդը ենթադրում է բացարձակ նուիրուածութիւնը հայրենիքին: Բարձր էտիքականութիւն է հայրենասիրութիւնը: Գոյութիւն ունի սոցիալական մի հատիկ զգացում, որ եսական շահասիրութիւն չի վերցնում: Եւ, դա հայրենասիրութիւնն է: Այդ նուիրական զգացումն է մայրը պատմութեան ողջ հերոսականի: Դրա շնորհիւ են ապրել, գերապրել թուապէս տկար ժողովուրդները: Անձնական շահասիրութեան հետ կցորդուող հայրենասիրութիւն - ինչպիսի անարգանք՝ ուղղուած ամենանուէր հայրենասէրների դէմ: Ինչի՞ վերագրել այդ գռեհիկ ըմբռնումը - մտքի տկարութեա՞ն, թէ սրտի աղքատութեան:

* * *

Մէկը* - որին 18-րդ դարը թիւրիմացաբար անուանել է իմաստասէր - դժգոհելով իր կառավարութիւնից՝ գրել է իր երկրի դէմ. «Նուաստացած ֆրանսական ազգը այժմ արժանացած է ողջ Եւրոպայի արհամարհանքին: Ոչ մի յեղափոխութիւն ի վիճակի չէ նրան դարձնելու ազատ: Նա կը մեռնի սեփական անզօրութիւնից: Օտա՛ր նուաճումը - ահա՛ թէ ինչը կը փրկի նրան: Եւ, դա կախուած է դիպուածից ու պարագաներից»:

Զզուելի հայրենասիրութիւն: Ենթական ցանկանում է, որ իր երկիրը դառնայ օտար ոտից կոխան, եւ գիտէ՞ք ինչու. որովհետեւ գնահատուած չէ իր կառավարութեան կողմից: Վատութի՛ւն անանուն, անորակելի, վատութիւն in gradu heroico…

Վա՛յ այն հայրենիքին, որի պաշտպանների հայրենասիրութիւնը իր հիմքում նիւթապաշտիկ է, հաշուետես:

X

ՀԱՄԵՍՏ, ԲԱՅՑ ՈՉ ՆՈՒԱՍՏ

- Խօսքի անկում - տխո՛ւր երեւոյթ, հետեւանք ժողովրդի այն վատառողջ հոգեվիճակի, որ կոչւում է պարտուողականութիւն:

Արդեօք չե՞ս զգում, թէ ինչպէս շնչահեղձ է լինում հայ խօսքը Հայաստանից դուրս: Ամէն բանից առաջ պակասում է խանդն ստեղծագործ - բեղմնաւորիչը մտքի, սրտի: Տարագրի պէս խղճալի է եւ հայ խօսքն այսօր:

- Համեստ լինենք, բարեկա՛մ, պատշաճ է, որ օրուայ հայ խօսքը, Հայաստանում թէ մեզ մօտ՝ սփիւռքում, համապատասխանի ներկայ Հայրենիքի սահմաններին:

Մի ափ, որի հիւսիսն ու հարաւը, գիտես, շօշափել կարելի է անգամ անզէն աչքով:

- Համեստ, այո՛, սակայն, եթէ դա նշանակում է լինել նուաստ, նուաստամիտ, ես վճռաբար մերժում եմ նման համեստութիւնը: Հայաստանն առնուած օրուայ իր հորիզոնով, ո՛չ, ո՛չ, Հայաստանը բազմիցս աւելին է,

---

* *Դիդրո:*

քան իր աշխարհագրական սահմանները: Արդեօք չգիտե՞ս, որ հայրենիքներ կան, որոնց քաղաքական ու հոգեւոր սահմանները չեն համընկնում. ասենք՝ յունական, հրէական հայրենիքները: Ինչ վերաբերում է հայոց հայրենիքին, նրա հոգեւոր եւ աշխարհագրական տարողութիւնները իրար համեմատում են ճիշտ այնպէս, ինչպէս Արարատն ու Արարատեան դաշտում ընկած մի համեստ բլուր: Օրուայ մեր հայրենիքը - եթէ ներելի է այսպէս ասել՝ խտացուած էութիւն է:

- Չեմ հասկանում քեզ:

- Ուրեմն, լսի՛ր, որ հասկանաս:

Պատմական վայրեր կան, որոնք անցնելով օտարի ձեռքը՝ չեն օտարանում, չեն դադարում մնալ մերը, եթէ նրանց վրայով դարեր ու դարեր անցած լինեն. օրինակ՝ Արարատը, Անին, Տարօն աշխարհը - ծնողը հայոց մտքի եւ սրտի հանճարների, եւ…

- Այս տեսակէտով առնուած, ինչ խօսք, մեծ է հայոց հայրենիքը:

- Նա, բարեկա՛մ, մեծ էլ կը մնայ յաւերժ, աշխարհագրական ինչ սահմաններ էլ որ ունենայ: Տրդատ ու Տիգրան Մեծ, Սահակ եւ Մեսրոպ, հրաշունչ Մամիկոնեաններ ու շինարար Բագրատունիներ, Բիւզանդական գահը զարդարող Չմշկիկներ. ապա՝ նրանց բանակների մէջ, ըստ Գելցերի՝ «տաղանդ ու ընդունակութիւն մտցնող» հայազգի զօրավարներ. ապա՝ Նարեկացի ու Քուչակ, անիական հիասքանչ ճարտարապետութիւն, որի - ըստ արեւմտեան գիտութեան՝ «խիստ ազդեցութեան տակ են ծնուել եւ զարգացել եւրոպական զոյգ ոճերը՝ ռոմանականն ու գոթականը». ապա՝ 9-րդ դարի հայ մտքի շլացուցիչ փայլատակումը՝ Պաւղիկեան ուսմունքը, եւ, ի վերջոյ, հայկական բազմահազար ձեռագրերը, որոնցով պիտի սոնքային (հպարտանային - *խմբ.)* աշխարհի մեծագոյն պետութեանց մայրաքաղաքները - այս բոլորը երկնող ժողովրդի հայրենիքը չի կարող յաչս մարդկութեան մեծ չհամարուել, բաւական է, որ հայը լինի գիտակ եւ արժանի իր անցեալ կուլտուրական մեծութեան, այսինքն լինի ինքնաճանաչ եւ ինքնայարգ:

- Այս տեսանկիւնից դիտելով, ես էլ տեսնում եմ մեծութիւնը մեր հայրենիքի եւ բաժանում արժէքաւորումդ ամբողջապէս:

- Ուրա՛խ եմ: Եզրակացնենք: Մեր հայրենիքի եւ ժողովրդի մեծութիւնը պէտք է չափել ո՛չ թէ Հայաստանի օրուայ անձուկ սահմաններով, այլ՝ հայ մտքի եւ արուեստի ազդեցութեան հորիզոններով: Պատմականօրէն առնուած՝ մե՛րն է այն ամէնը, որ հայը տուել է աշխարհին: Մեր ստեղծածը պատմութեան ո՛ր դարում էլ եւ Երկրագնդի ո՛ր կէտի վրայ էլ լինի՝ կը մնայ սեփականութիւնը հայ ոգու: Մենք մեր արդար բաժինը ունենք որոշ ժողովուրդների փառքի մէջ, օրինակ՝ իրանական, բիւզանդական, արաբական եւ այլն: Հայ մտքի եւ բազկի գործերը Հայաստանից դուրս՝ կը

մնան իբրեւ հոգեւոր գաղութներ: Այո՛, մարդկային սփիւռքից զատ՝ մենք ունենք նաեւ մեր ստեղծած արժէքների սփիւռքը:

Միայն նման գիտակցութեամբ եւ ինքնազգացողութեամբ կարելի է չէզոքացնել ապահայացուցիչ-ապազգայնացուցիչ ազդեցութիւնը մեզ սպառնացող օտար միջավայրերի:

- Արդա՛ր ես, բարեկա՛մ: Այժմ ես հասկանում եմ քեզ. այո՛, Հայաստանից դուրս հայօրէն չկորելու համար, հայը պիտի զրահուի պահանջածդ գիտակցութեամբ: Եւ, ինչո՞ւ վհատել, դառնո՛ւմ է աշխարհը...

XI

ԸՆՏՐԱՆԻՆ

Ժողովուրդն աւելին է, քան թւում է: Նրանում աւելի ուժեր կան, քան նա զգում է եւ արտայայտում: Ժողովուրդը - դա իր ուժերին անծանօթ դիւցազն է, որ յաճախ գործում, սխրագործում է, գրեթէ, ենթագիտակցօրէն:

Դա հողն է՝ դեռ պեղումների չենթարկուած, որի մէջ աւելի արժէքներ կան թաքնուած, քան այն, որ լոյս աշխարհ է բերուած:

Յայտնաբերել այդ թաքուն, դեռ չգիտակցուած արժէք-ոյժերը, նշանակում է ոյժի նորանոր աղբիւրներ բանալ նրա էութեան մէջ:

Եւ, հէնց սրանում է կայանում ընտրանիի՝ ճշմարիտ մտաւորականութեան դերը: Իրենց յատուկ բնագաւառներում, այդ բացառիկ եւ պատասխանատու դերը կատարում են պատմաբանը, լեզուագէտը, բանասէրը, հնագէտը՝ նպաստելով իրենց ժողովրդի ինքնաճանաչման:

Յետադարձ հեռանկարով վերականգնել իր ժողովրդի պատմութեան այս կամ այն դարաշրջանի հոգեւոր կեանքը. հնագիտական պեղածոների դրսեւորմամբ ճշտել նրա մշակոյթի հանգրուանները. համեմատական լեզուագիտութեամբ որոշել նրա լեզուի - որ ասել է՝ նաեւ նրա գիտակցութեան, նրա ոգու - հասակը, ապա՝ նրա տեղը մարդկութեան մեծ ընտանիքում. արդիական փիլիսոփայութեան լոյսի տակ դնել նրա աւանդութիւնները, նրա էպոսը, առասպելները. սեղմ ասած՝ ժողովրդին ճանաչել տալ իր ողջ անցեալը, նշանակում է՝ նրա համար լիարժէք կեանքով ապրելու եւ ստեղծագործելու նախադրեալներ ստեղծել:

XII

ՈԳԵԿՈՉՈՒՄՆԵՐ*

Յոռետեսութի՞ւն - ո՛չ, ո՛չ, անտեղի է դա մարդկութեան ապագայի նկատմամբ, քանի որ մարդը ինքնամշակմամբ կարող է Սոկրատ դառնալ: Ոգու սոկրատեան մշակոյթ - ահա՛ թէ ինչի կարիք ունի մերօրեայ աշխարհը:

Ա

Օժտէ՛ք մարդուն քաջութեամբ եւ նրան կը դարձնէք աւելին, քան է՛ սովորական մահկանացուն:

Տուէ՛ք նրան իմաստութիւն եւ նա կը դառնայ բարոյապէս աւելի նախանձելի:

Իսկ եթէ նրան օժտէք նաեւ հոգու վեհութեամբ՝ ձեր առջեւ կ'արձանանայ Սոկրատը, այսինքն՝ կատարեա՛լը:

Այսպիսին էր նա, որի երեւումը իր դարաշրջանի ոգին յեղաշրջեց:

Առաջինը լինելով, նա յանդգնեց Իզիդայի քողը բարձրացնել՝ ճշմարտութեան գաղտնիքին տիրելու համար:

Բնազանցութեան անհաս բարձունքներից նա իմաստասիրութիւնը իջեցրեց երկիր, որպէսզի նրա լոյսի տակ մարդը (նշմարի) աշխարհն ու իրերը: Մարդկութեան առաջին մեծ բարոյագէտը, ճշտելով բարու եւ բարոյականի հասկացողութիւնները, մարդու մէջ արթնացրեց խիղճը - ներքին աստուածութիւնը, որի առջեւ բանաւոր էակը պարտ է իր ամէն մի արարքն օրինականացնել:

Կար նախասոկրատեան անհատը, որին կը վարէին արտաքին իշխանութիւնը, ձեւական օրէնքը, սովորութիւնը:

Սոկրատով սկսուեց գոյութիւնը ինքնավար անհատի, անձի:

Պետական վարիչ չէր, Սողոն, Լիկուրգոս, Պերիկլէս չէր. նա օրէնսդրեց մարդկային բարոյական աշխարհի համար՝ հանդիսանալով ուսուցիչն ու դաստիարակը նրանց, որոնք կը նկրտէին ժողովրդի եւ պետութեան ճակատագիրը վարել:

---

* *Դիմաստուերներ իմ նոյնանուն ձեռագրից:*

* * *

Մտքի եւ ոգու Հերակլէ՛ս - այսպիսին եղաւ նա իբրեւ իմաստասէր:

Մի անգամ, ասում են, ամբողջ օր նա մնաց խորասուզուած մտքի ծովում, եւ միայն ծագող արեւը նրան իրականութեան վերադարձրեց:

Ոգու կեանքով ապրելու, ներքնապէս ազատագրուելու չափ ինքնակենտրոնանալու ինչպիսի՜ կարողութիւն:

Մտքի եւ կամքի հսկա՛յ, որի խօսքը, կեանքն ու ճակատագիրը պայմանաւորելով իրար, նրանից ստեղծեցին կատարելատիպը, որի նմանը դեռ եղած չէր մարդն աշխարհում:

Նա էլ ընդունեց պայքարը, սակայն սոկրատեան ձեւի - պայքար առանց կրքի, ատելութեան ու թշնամանքի:

Ճշմարտութիւնն եղաւ իր միակ զէնքը. անխռովութիւնը - դիրքը՝ անգրոհելի, անառիկ: Եղաւ աներկիւղ, երբ պէտք էր Աթէնքի բռնաւորներին շանթել: Եւ, նոյնքան անյողդողդ, երբ հարկ էր խուժանավարների կեղծիքին սովոր ամբոխներին ճշմարտութիւններէն դառնագոյնն ասել:

«Ի՞նչ է աստուած՝ ես չգիտեմ. ես գիտեմ միայն ինչն աստուած չէ»,- ահա՛ խօսքը, որին վիճակուած էր նոր դարաշրջան, պատմութեան մէջ նոր էջ բանալ, խօ՛սքն իմաստունի եւ իմաստասէրի, որի առջեւ իբրեւ ուրուականներ Ողիմպոսի աստուածները չքացան:

Այսպէս ապրեց կատարելագոյնը մարդկանցից. գիտցաւ արհամարհել կեանքը, երբ պէտք էր մեռնել ի խնդիր բանականութեան սրբազան իրաւունքների:

* * *

Սոկրա՛տ, աշխարհիկ սո՛ւրբ, գովք... քեզ: Գո՞վք - ո՛չ, ո՛չ, մի օր դու մերժեցիր կենդանի գովքը՝ դափնին, որ կը տրուէր քեզ Պոդիտէի ճակատամարտում ցուցաբերածդ քաջագործութեան համար՝ պահանջելով, որ նրանով քո կողմից փրկուած վիրաւոր Ալկուեադէսին պսակեն:

Կարիք չզգացիր, ոգու հսկա՛յ, որ ուրիշները մեծութիւնդ վկայեն:

* * *

Սոկրա՛տ, վերստին ոգեկոչեցի քեզ, եւ ահա՛ դարերի մշուշի միջից ժպտում ես ինձ իբրեւ իմացութեան ու բարութեան արեւ՝ լոյսի հեղեղ ու ջերմութիւն սփռելով աչքը կոյր խցիկում:

Այսօր էլ լքած կեցարանս՝ եկել եմ այցի քեզ, գերագոյն կալանաւոր:

Զրպարտուած սիկոֆանտներից ու մահուան դատապարտուած,

ահա՛ կանգնած մեծ անյայտի սեմին, մահուան բաժակը ձեռքիդ՝ հոգու անմահութեան մասին ես իմաստասիրում անխռով…

Գերմարդկայի՛ն կեցուածք - ասէք աստուածավայե՛լ, որի վեհութեամբ կախարդուած, անպատում ցաւերս - որոնց բեռան տակ առասպելական Աթլասն իսկ կը կքէր - աւելի թեթեւ եմ զգում: Եւ, շղթաներս՝ չքացա՛ծ…

Սոկրա՛տ, գերագոյնը մարդկութեան որդիներէն, գո՛վք քեզ, թէեւ դու բարձր ես ամէն գովքէ ու դափնիէ, անհունօրէ՛ն բարձր…

Բ

Հաննիբա՛լ - ոգու հսկա՛յ, որի ռազմական հանճարը, փառքն ու անձնական դժբախտութիւնը հաւասարապէս մեծ եղան, որը սակայն, իր մեծ հայրենասիրութեան արժանի հայրենիք չունեցաւ - քե՛զ, հռոմասա՛ստ հերոս, իմ սքանչացումը քե՛զ…

Գ

Ընկաւ Կեսարը՝ դաշունահար:

Եւ, աչքերը առյաւէտ փակելէ առաջ՝ փառքի վերջին շարժումով նա ծածկեց իր մերկութիւնը, որպէսզի դիակնացած վիճակում իսկ իրեն չպակասի վեհութիւնը:

Մե՛ծ, վեհափառօրէն մեծ ռազմադաշտերում՝ նա մեծ եղաւ եւ մահուան մէջ:

Կեսար լինելու համար բաւական չէ մականը, վեհութի՛ւն է պէտք: Ճշմարտօրէն մեծերի շունչն է վեհութիւնը: Ave, Caesar! Ողջո՛յն, Կեսա՛ր…

Դ

Սցիպիո՛ն - խիզախ զինուոր եւ յաղթակա՛ն, ես հասկանում եմ քեզ:

Հաւասարապէս մեծ եղան նուիրումդ Հռոմին եւ հայրենիքիդ անունով կատարուած ապերախտութիւնն անձիդ դէմ: Քանի կայ պատմութիւնը, զօրավա՛ր, պիտի ապրեն դառնութեան խօսքերդ, որոնցով հայրենի հողը՝ ոսկորներդ գրկելու արժանի ես գտնում:

Խորաչափում, զգում եմ մեծ ապերախտուածիդ դառնութիւնն արդար, եւ այնուամենայնիւ, վարանում եմ անիրաւ հռչակել հայրենիքդ:

Հայրենիքը - սիրաշա՛տ մայր՝ չունի՛ աւելի սիրելի զաւակ, քան զինուորը, որի բոլորանուէր պաշտումով եւ ջահել արիւնով է պայմանաւորում իր գոյութիւնն ու մեծութիւնը:

Հայրենիքը միշտ էլ արդար, միշտ էլ երախտագէտ է նրա հանդէպ, որի փայփայիչ անունը՝ զինուո՛ր՝ բարձր է ամէն տիտղոսից, պաշտօնից, շքանշանից:

Զինուորն աւելին է, քան քաղաքացին, որը իր պարտականութիւններից աւելի իրաւունք է փնտրում:

Զինուորը՝ հայրենիք՝ մօր առաջին զաւակը, իբրեւ մարդ եւ մարտիկ, ճանաչում է միայն մի հատիկ իրաւունք՝ մարտնչել ու մեռնել հայրենիքի համար: Գիտե՞ս, ո՛վ այդպիսին չէ՝ զինուոր չէ:

Ապերախտութիւնը, զօրավա՛ր, որ բաժին ընկաւ քեզ՝ ստուերն է փառքիդ, արդիւնք մեծութեան ու փառասիրութեան այն պայքարի, որ հին է մարդկային հասարակութեան պէս:

Մեր անկատարեալ աշխարհում իր դէմ մախանք (չար նախանձ - *խմբ.)* է առաջացնում ճշմարիտ ամէն մեծութիւն, արժէք, փառք:

Եւ, բնական դարձած այդ մախանքը մեծութեան դէմ միշտ էլ պսակուել է պարտութեամբ, որովհետեւ պատմութիւնը տէր է կանգնել Սցիպիոնների ոսկորներին եւ հերոսական գործերին:

Զօրավա՛ր, Հռոմի անուան արժանի յաղթակա՛ն, իմ մեծարա՛նքը քեզ…

Ե

Վարդա՛ն - ահաւասիկ մի անուն՝ աւելի՛ հմայքոտ, աւելի՛ զօրաւոր, քան մականը Հայաստանի գահը վայելած բոլո՛ր թագակիրների:

Մի անուն, որի մէջ հինգերորդ դարի հայ գեղջուկ մարտիկը իր հողի եւ յաւերժութեան ձայնն էր լսել:

Մի նախանձելի անուն, որը կրելու, Մամիկոնեան կոչուելու համար՝ աշխարհակալ Բիւզանդիոնի հայազգի կայսրերը իրենց ծագումն էին կեղծում:

Մի անուն - մի ամբողջ դաւանա՛նք, մի ո՛ւխտ, մի բարոյական իմաստասիրութի՛ւն:

Դաւանա՛նք - հայու համար Հայաստա՛ննն է գերագոյն արժէքն այս աշխարհում:

Ո՛ւխտ - մեռնել, բայց չնահանջել, երբ Հայաստանին են պաշտպանում:

Բարոյական իմաստասիրութիւն - Մամիկոնեանը չէ նահանջում եւ վատութեան առջեւ՝ խաղաղ պայմաններում:

Այսպիսի՛ն էին Մամիկոնեանները՝ հայրենահո՛գ, հերո՛ս, ասպե՛տ:

* * *

Դժուար չէ զօրավար լինել, բայց ոչ եւ՝ զօրաւոր: Ամէն մականակիր կեսար չէ, ինչպէս ամէն զօրավար զօրաւոր չէ;

Աւարայրի մեր պսակաւորը թէ՛ մէկն էր, թէ՛ միւսը:

Թէեւ մարտը զօրավարն է վարում, յաղթանակում է, սակայն, զօրաւո՛րը. նա՛, որ մերժում է տկարութիւնը, երկիւղը, պարտութիւնը:

Մամիկոնեանները զօրաւոր էին այն սրտառուչ բանականութեամբ, ինչպէս մի ուրիշը հայ է անբռնադատօրէն, քանզի չի կարող հայ չլինել:

Մարդը, նրանց հասկացողութեամբ, չէր կարող չլինել հերոս, քանզի բարձր արժէքներ կան, որոնց համար կռուելու, յաղթանակելու պահանջ կայ, քանզի աշխարհը կայ:

Իբրեւ տոհմիկ հերոսներ՝ նրանք մահն ըն(դունում են) իբրեւ վերջին փորձութիւն՝ մարդու համար:

Մահուամբ է փորձում մեզ յաւիտենականը, եւ վա՛յ նրան, ով պարտուեց մահից. նա արժանի չէ Հայրենիքին, յաւերժութեան:

Մամիկոնեանները զինուոր էին թէ՛ մէկի, թէ՛ միւսի՝ արժանի երկուսին էլ:

Մեր նուիրումի դիմաց՝ հայրենիքը անմահանալու առիթ է պարգեւում մեզ, որով՝ հայրենիքի համար մեռնելը գերագոյն պատիւ է, եւ ոչ՝ ձեւական պարտականութիւն:

Ահա՛ դասական հայ զօրականի հասկացողութիւնը հայրենիքի եւ հայրենասիրութեան մասին:

Հայոց պատմութեան մէջ Մամիկոնեանների՛ն է պատկանում առաջին ուխտի պատիւը: Ո՛ւխտն է Վարդանների դիւցազնութեան աղբիւրը: Ուխտ ունէր Կարթագէնի ամեհի զաւակը եւ նա դարձաւ Հռոմը սարսափեցնող Հաննիբա՛լ: Ուխտուածնե՛րն են յաղթում մահուն եւ նրան ծառայեցնում կեանքին:

Իբրեւ ժառանգութիւն՝ Մամիկոնեաններն իրենց ուխտը կտակեցին գալոց սերունդներին: Եւ, իր զաւակների ուխտածութեամբ ապրեց Հայաստանը:

* * *

Դարե՛ր, դարեր են անցել, եւ իմ էութեան մէջ դեռ որոտում, դղրդում է Վարդանի Աւարայրեան խօսքը՝ ուղղուած հայոց բանակին. «Վախը թերահաւատութեան նշան է… Մահն ընդունենք ուրախ սրտով»:

Դարեր են անցել, զարգացել, ճոխացել է հոգեգիտութիւնը: Այսուհանդերձ, այսօր իսկ շատ սակաւ է թիւն այն զօրականների, որոնց համար

գաղտնիք չէ Ե դարի հայ զօրավարի յայտնաբերած հոգեբանական մեծ ճշմարտութիւնը:

Թերահաւատութի՛ւն - ահա՛ իրական թշնամին, որին չյաղթահարած՝ յաղթանակ տօնած չէ եւ ոչ մի զօրավար:

Յաղթանակում կամ պարտւում է նախ ոգի՛ն, ապա յետոյ՝ նիւթեղէն զէնքը:

Մահուան դէմ յաղթանակելով է նուաճւում կեանքը, ապրեցւում հայրենիքը:

Այսպիսի՛ն էին իրենց կեանքն ու մահը հայրենիքին ծառայեցնող Մամիկոնեանները - իմացեալ մահուան կեսարները. նրա՛նք, որոնց համար ռազմարուեստը մահարուեստ էր, այսինքն՝ մահուան դէմ յաղթական կանգնելու, մահի՛ց էլ զօրաւոր հանդիսանալու արուեստ. նրա՛նք, որոնց ճակատներից աւելի արժանաւորը մեր աշխարհում դեռ չէ շօշափել դափնին…

* * *

Վարդա՛ն, զօրավա՛ր եւ զօրաւորդ հայոց, անցած, գոյ եւ գալոց մեր սերունդների անունից համբո՛յր Աւարայրի՛դ, համբո՛յր անունիդ…

Ձ

Ահա՛ եւ նրա՛նք՝ ուխտի իմ գերագո՛յն եղբայրները - նահատակնե՛ր ու հերոսնե՛ր, որոնք, մի օր, անկարող աշխարհին իրենց անպատում ողբերգութիւնը ոռնալու՝ երանեցին այսպէս.

«Նրա՛նց, որոնք գոռ մարտերի բոցերում իրենց ոգին են պողպատում, եւ զարնւում իբրեւ պարտականութեան ջահել աստուածներ, երանի՛:

Արծուի՛ն, բարձունքներում՝ բիբերն աստղերին, հոգեվարող արծուին է՛լ երանի՛:

Եւ, առիւծին արքայական, որ մեռնելուց առաջ՝ անապատների յաւերժութեան իր վերջին մռնչիւնն է խառնում, երի՛ցս երանի՛»:

ՅԱՒԵԼՈՒԱԾ

ԻՄ ՏԱՊԱՆԱԳԻՐԸ

Անցո՛րդ, կանգ ա՛ռ, կա՛նգ, անցորդ այս անյայտ հողաթմբի առջեւ, որում ինձ տրուած չէ հանգչել:

Եւ, ասա՛ դեռ աշխարհ ու արեւ կա՞յ…

Չիցէ՞ քուն են մտել սրտերը հայոց, երբ մեռելները քուն չունեն, քանզի գերեզմա՛ն չունեն:

Ո՛հ, ձայնը, խռովիչ ձա՛յնը մեռելների լսո՞ւմ ես, անցո՛րդ, հայոց արեան վայրերից բարձրացող կանչը… Կա՛նչը կարմիր եղեռնի բիւրաբիւր մեր զոհերի… Կա՛նչն անլռելի, որ մերթ՝ իբրեւ խօլ փոթորիկ մռնչում է մարդկային ազգի խլութեան դէմ, եւ մերթ իբրեւ անզօր հողմ՝ նրա մեռեալ խղճի դռանը սւսւում…

Գերեզմա՛ն են ուզում մեռելները, անցո՛րդ: Ա՛հ, երանի՛ հայրենի հողում, հողի քնով քնած երջանիկներին. երի՛ցս երանի՛…

Հանգի՛ստ են ուզում մեռելներն անթաղ, անգերեզմա՛ն…

Եւ, պիտի հանգչեն… Այնժամ պիտի հանգչեմ ե՛ւ ես, երբ հայոց աշխարհի երեք հսկաները՝ Մասի՛ս, Նեմրո՛ւթ եւ Սիփա՛ն իրար ձայն տան, կանչեն ցնծագին. «Հէ՛յ, հէ՛յ, էլի՛ հայո՛ւն ենք, էլի՛ հայ, էլի՛ Հայաստա՛ն»…

* * *

Անցո՛րդ, ասա՛, հեռո՞ւ է այդ օրը:

Բաբէ՛, դու լալի՞ս ես, դու զինաթա՞փ ես, երբ ես դեռ ոգորում, դեռ շարունակո՛ւմ եմ կռիւը:

Ի մա՛րտ, անցո՛րդ, ի մա՛րտ, որպէսզի տարաբնակ հայը՝ հայրենադարձ, եւ մեր մեռելները՝ գերեզման ունենան:

Ի մա՛րտ…

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՆԹԵՈՆԸ*

* ***«Ժայռ»,*** *Ալեքսանդրապոլ, 1917թ.,* թիվ 1, 2, 4, 5, 6, 7, 8, 9, 19: Նույն թվականին տպագրվել է նաև առանձին գրքույկով:

ԽՈԿՈՒՄ ԷՐ ԱՐԱՐԻՉԸ

Փառապսակ Խեչոյին *

Իզուր սպասեց երկնքի դարպասների մոտ պահակող հրեշտակը՝ չերեւաց տիեզերքի Արարիչը: Այդ օրը, ինչպես ամեն առավոտ, Նա չմոտեցավ երկնքի դռներին՝ նորազարթ երկրի աղոթքը լսելու:

Եվ առաջին անգամ օրը բացվեց առանց արշալույսի, որովհետեւ այդ օրը Աստված չժպտաց մեր երկրին:

Այդ ժամին իր գահի մոտ միայնակ խոկում էր Արարիչը… եւ տխուր էր Նա, տխուր, ինչպես լռությունը Արաբիայի ավազուտ անապատների:

- Նոր աշխարհների ծնունդն է երկնում մեր Տերը,- երկյուղածությամբ շշնջում էին Արարիչին շրջապատող քերովբեները… եւ մռայլ էին նրանք, ինչպես երկնքից արտաքսված իրենց երբեմնի ապստամբ ընկերը:

- Եվ ինձ թվում էր,- խորհրդավոր լռության մեջ լսվեց Արարիչի ձայնը,- ինձ թվում էր, որ դեպ Հավիտենականությունը դիմող վայրկյանների ու հազարամյակների անվերջ քարավանները միշտ բեռնավորված են եղել արարածներիս նրբահյուս օրհներգներով…

Որ ե՛ւ մարդ, ե՛ւ սողուն, ե՛ւ թռչուն, ե՛ւ թռչուն, որ ամեն մի արարած ամեն ժամ գոհություն շնչել ու իմ անունն է օրհնել… Սակայն, Նա անթաղ մեռելներից, թշվառի արցունքից, անմեղի արյունից՝ ստեղծածս երկրի անեծքից ու անկատարելությունից խոսեց…

Լռեց Արարիչը:

Ու նորից խորացան Նրա ճակտի ակոսները ու տխրությունը թանձր ստվերի պես ծածկեց Նրա դեմքը:

- Չէ՛,- բարկությամբ բացականչեց Արարիչը,- չէ՛, իմ ստեղծածը չի կարող կատարյալ չլինել. ինձ մոտ բերեք, ուզում եմ մեկ էլ լսել Նրան…

Քիչ անց, քերովբեների հետ տիրոջ առաջ ծառացավ *մարդը*, որը նոր էր թողել մեր հանցավոր աշխարհը:

- Ո՛վ մարդ.,- նորեն հնչեց Արարիչի ձայնը,- խոսելով աշխարհի անկատարելությունից՝ չմեղանչեցի՞ր դու…

Պատասխանի տեղ երկնքի նոր հյուրը միայն *ժպտաց դառնորեն* ու հեռացավ:

---

* *Գրքույկի «Խոկում էր արարիչը» հատվածը հետագայում տպագրվել է «Հայաստան» թերթում (Պլովդիվ, 1925թ., թիվ 7),* ***Մեր անմեռ Աշոտին*** *խորագրով (հավանաբար նկատի ունենալով Աշոտ Մելիք-Մուսյանին):*

* * *

Խոկում էր Արարիչը:

Եւ տխուր էր Նա, ավելի տխուր, քան հազարամյակներ առաջ, երբ միայնակ ու անկայան շրջում էր ջրերի ու քաոսի վրա …

Փառապսակ Քեռուն

Знаете ли как величественно восходит солнце?
-так умирает герой.

Ամեն ինչ, ամեն ինչ նրա մեջ մատնում էր Հերոսին:

Տաք կարեկցություն դեպի իրավազուրկն ու թույլը, ֆանատիկ սեր դեպի իր ցեղն ու նրա գուրգուրած ազատությունը, բիբլիական անշահասիրություն ու համեստություն, վտանգի ու մահվան բացարձակ անգիտացում, ռազմական անսահման էնտուզիազմ. ահա Հերոսը, ահա Քեռին:

Երբ հնչեցին պատերազմական փողերն ու ցնծաց Մարսը՝ հազարավոր սրերի հետ մերկացավ եւ նրա սուրը…

Չգիտեմ ով ինչո՞ւ՝ նա իր ցեղին արեւ ու անմահություն նվիրելու համար բարձրացրեց սուրը…

Ու այնուհետեւ, քանի-քանի անգամ, Հռոմի հպարտ որդուց ավելի, հպարտորեն կարողացավ ասել՝

«Եկա, տեսա, հաղթեցի»…

Քանի-քանի անգամ, քանի ռազմադաշտերից նա մեզ հղեց հպարտ Կեսարի երեք բառը…

Քանի անգամ նա՝ հայ ցեղի վերածնության գաղափարի այդ աստվածաշունչ Հսկան, հեգնեց վտանգը, անգիտացավ, ժխտեց մահը, հանդգնեց, հաղթեց, մինչեւ որ պատերազմների քմահաճ աստվածը դավաճանեց նրան:

* * *

Չկա Քեռին…

Լռեց կովկասյան զորաճակատի անպարտելի ու անզուգական Ռազմիկը…

Բայց դեռ երկար, շատ երկար սեգ Արտոսն ու Նեմրութը, որոնք վկա եղան հայ դյուցազնի սխրագործություններին, կպատմեն անցվորին.

- Ուրագանի պես մեր փեշերով Քեռին անցավ ու սրբեց տարավ թշնամուն…

Չկար ալեւոր Առյուծը…

Բայց դեռ երկար, շատ երկար նրա մռնչյունը պիտ արձագանքի Հայաստանի ու Իրանի ռազմադաշտերում…

ՔԵՌՈՒ ԱՆՈՒՆՆ ԷԼ ԷՐ ՀԱՂԹՈՒՄ

Թշնամու գերադաս ու թարմ ուժերը համառորեն գրոհում էին, խորտակում ու խորտակվում, ետ քաշվում՝ կարգի բերելու իրենց ցիր ու ցան շարքերը եւ նորեն ու նորեն հարձակվում:

Հաղթության քմահաճ Աստվածը լքել էր մեզ, թշնամու կողմն անցել:

Մեր շարքերում տատանում կար եւ մտադրություն՝ թողնելու մեր գրավված դիրքերը, երբ սրարշավ մեր զորաշղթաներին մոտեցավ զորահրամանատարի թիկնապահը ու հաղորդեց Քեռու օգնության հասնելու լուրը:

- Հառա՜ջ, զինվորներ, մեզ հետ է Քեռին,- գոռացին վաշտապետները…

- Հառա՜ջ,- արձագանքեց զորաշղթան եւ, որպես երկաթե պատնեշ, շարժվեց առաջ:

Քիչ անց, դեռ Քեռին չհասած, թշնամու խրամատները գերեզմանների վերածվեցին: Պարտված էր թշնամին: Քեռու անունն էր հաղթողը…

ՔԵՌՈՒ ՎՐԱՆԸ

- Դեռ կանգուն է Քեռու վրանը,- ասում էին կոզակները եւ առանձին վստահությամբ ավելացնում,- նշանակում է դրությունը այնքան էլ անհույս չէ…

Թշնամու խաղերը հին ու փորձված Ռազմիկին խաբել չէին կարող:

Նա գիտեր, որ թշնամու հաճախակի անվճռական հարձակումները ոչ այլ ինչ են, եթե ոչ ռազմադավեր: Ուստի, շատ անգամ, երբ հարեւան զորամասերը եւ վերջիններիս հրամանատարները իրարանցման մեջ էին լինում, Քեռին խաղաղ ծխում էր՝ իր վրանի դռանը նստած:

ՍՐՏԱՌՈՒՉ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

Սակավախոս էր Քեռին, ու այդ առթիվ նրա զինվորները կատակով ասում էին. «Քեռին խոսում է ուրբաթ ուրբաթ, վատերին ծեծում շաբաթ օրերը, հաղթում ամեն օր»:

Լռասեր էր Քեռին, սակայն ավելի սակավախոս ու թախծոտ դառավ բոլորից պաշտված Խեչոյի մահից հետո:

- Նայում եմ Գրգուռին, - ասաց մի անգամ Քեռին Աղթամարում,- նայում եմ եւ մտածում, թե ինչպե՞ս է՛ն բարձր սարի փեշերին ընկավ Խեչոն, եւ թե առանց ինձ ինչպե՞ս է դադարել գերեզմանում... Մենք չափազանց ուժեղ էինք սիրում միմյանց, որ կարողանայինք անջատ ապրել ու մեռնել:

* * *

Օրեր անցան: Ու մի օր, Ռեւանդուզի ճակատամարտում, Խեչոյի մեծ ստվերը ալեւոր առյուծին առաջնորդեց դե՛պ հաղթություն՝ դե՛պ հայկական փառատաճարը, որի մեջ ապրում էր ինքը...

ԻՄ ՄԱՐԳԱՐԵՆ

Փառապսակ Զավարյանին

(Ecce homo!-Ահա՛ մարդը)

Զոհաբերի՛ր...

Զոհաբերի՛ր անվերջ, առանց մնացորդի:

Սովորի՛ր եւ սիրի՛ր զոհաբերել ու տանջվել՝ բավականության լուսափայլ ժպիտը երեսիդ... եւ դու կմոտենաս Աստծուն, դու կդառնաս մարդ-Աստված...

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր հրեղեն խոսքը...

Մոռացի՛ր քեզ...

Հանուն թշվառների՝ մոռացի՛ր քեզ, երբ հազար հազարներին սեւ ցավն է ընկերանում, բռնակալ կարիքը նեղում...

Ուրախ քրքջալու ժամին մի՛ մոռանա, որ դառնորեն լացողներ կան...

Սիրի՛ր թշվառին, ծառայի՛ր սրան. թող քո ցավը՝ թշվառի ցավը, քո Աստվածը թշվառի Աստվածը լինի...

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր ազատ խոսքը:

Եղի՛ր հպարտ...

Գոյությունդ քարշ տալու համար մի՛ սողա, մի՛ ստորանա եւ մի՛ ստի՛ր...

Ստել՝ նշանակում է հայհոյել ճշմարիտը, ուրանալ՝ նշանակում է դադարել մարդ լինելուց...

Եղի՛ր ազատ…

Գիտակից ստրուկի եւ հանցագործի մեջ չկա տարբերություն: Խոնարհի՛ր ճակատդ միայն իդեալիդ առաջ, միայն իդեալիդ ազատ գերին եղիր…

Եղի՛ր բացարձակ…

Եւ ո՛չ մի զիջում: Հանցանք է զիջելը: Զիջել՝ նշանակում է թույլ լինել, ամոթալի պարտություն կրել…

Այսպես է պատգամում իմ մարգարեն իր աստվածաշունչ խոսքը, եւ հոգիս՝ նրա հրեղեն պատգամներին գերի, վեհորեն իր թեւերն է պարզում…

ՏԱՊԱՆԱԳԻՐ

Շուշաններ, շուշաններ
Բերեք լիաբուռն…

Փառապսակ Հրանտին

Անցո՛րդ, նա սիրված էր՝ էն հպարտ արծիվ ռազմիկը…

Հեռու մարդաբնակ վայրերից, բնության խորհրդավոր փսփսոցին ունկնդիր՝ նա սիրում էր ժամերով մի թփիկ երազել. երազել մենակ…

Նա սիրում էր մորմոքը լալկան առվակի, եւ հառաչը հեծկլտող ու վայող քամիների…

Նա, անցորդ, այս գեղատխուր հողաթմբի տակ հող դարձող պատանին, սիրում էր եւ լեռները՝ ազատության էն արծվանիստ գահերը, որոնց ամպոտ կատարներին հաճախ իր հպարտ ճակատին Արևի առաջին համբույրն էր ընդունում…

Ա՜հ, նա սիրում էր ե՛ւ արշալույսը պուրպուր, ե՛ւ վերջալույսը տխուր, ե՛ւ երգն անխոս ոսկեշող աստղերի…

Դու լալի՞ս ես, անցո՛րդ…

Փառապսակ Աշուղին

- Յո՞ երթաս:
- Հռոմ՝ նորեն խաչվելու:

…«Այնտեղ, Մասսի էն ստորոտում կա մի երկիր, ուր դարեր է, ինչ օրենքի ու Արդարության տեղ գործում են երկաթն ու յաթաղանը, ուր դարեր է, ինչ հայ ցեղի յոթն անգամ խաչված մասի օրը սեւով է սկսվում, գողգոթայով վերջանում»…

Այսպես սկսեց Նա իր պատմությունը Տաճկահայաստանի մասին, Արաքսի ափին ընկած գյուղերից մեկում…

Ու այն օրեն «Մասսի էն ստորոտը» վառեց իմ երեւակայությունը, իրեն քաշեց սիրտը, իր հողին, իր անունին կապեց իմ էությունը…

Ու այն օրեն՝ շատերի պես ես էլ ուխտեցի էն չարաբախտ ժողովրդի օր ու արեւին մեռնել…

* * *

«Աշխա՜րհը. ո՜հ, այդ՜ անսիրտ մայրը, որի լի ստինքները միայն կարող հզորները կծծեն…

Աշխարհը, ուր մերկն ու սովածը, ուր ճակատագրի խորթ ու զրկված որդիները տեղ չունեն, փայ չունեն»…

Այսպես վերջացրեց իր խոսքը աշխարհի անարդարության՝ անարդար կարգերի ու օրենքների մասին…

Ու այնուհետեւ մարդկությունը կերակրող, աշխարհը հարստացնող իրավազուրկ բանվորն ու գյուղացին դարձան իմ աստվածությունը, իսկ Աշուղի քարոզած սոցիալիզմը՝ իմ ավետարանը…

* * *

Առաքյալ, բառիս ամենավսեմ իմաստով՝ հեղափոխական առաքյալ էր Աշուղը:

Չկա, Գողթանի երկնքի տակ, Արաքսի ափերում չկա մի գյուղ, ուր լսված չլիներ Աշուղի ձայնը:

Ու միշտ էլ՝ բիբլիական առաքյալների պես պարզ, ու միշտ էլ՝ ոտքով շրջելիս:

Ու այդ այն սեւ շրջանում, երբ անեզր Ռուսաստանի միակ զարդերը կազմում էին ժողովուրդների երեւակայությունն ահաբեկող դժոխատիպ

բանտերն ու զնդանները, կախաղաններն ու կառափնարանները, երբ ցարի խավարի թագավորության մեջ ազատ ու բարձր խոսքի տեղ ավելի ազատորեն բարձրանում ու իջնում էր ոստիկանական մտրակը:

Այն մղձավանջային շրջանում, երբ շատերն էին փախչում Հռոմից ու հանդուգն քչերին ուղղում իրենց «Յո՞ երթաս»-ը՝ Աշուղը, վերջին անգամ, հեղափոխության կարմիր ավետարանը գրկած, մտավ Հռոմ ու... խաչվեց...

Փա՜ռք....

ԳԵՐԵԶՄԱՆԱՏԱՆԸ

Մի պտղունց խունկ՝
շրջիկ Զավենի հիշատակին

Գիշեր է...

Լուսնի ոսկեշող ցոլքերի տակ, գլուխս վշտացած հրեշտակի պես գերեզմանաքարերից մեկին դրած, լռության խորհրդավոր փսփսոցն եմ լսում.

- Տեսնո՞ւմ ես,- փսփսում է լռությունը միստիկ,- տեսնո՞ւմ ես այն գեղատխուր հողաթումբը...Ա՜հ, նրա տակ, էն հողի տակ հող դարձողը երազում էր Զարի ու ավարի գահերն ավերել, աշխարհը երջանկացնել էր ուզում... Երազում էր ու երջանիկ էր Նա, երբ լսվեց ֆալաքի չար քրքիջը՝ շարժվեց մանգաղը մահաբեր ու սպանեց *երազն ու երազողին*...

* * *

Այսպես, լեզու առած, փսփսում է լռությունը միստիկ, ու հոգիս խեղդող թախծի գիշերն ավելի սե՜ւ, ավելի ճնշող է դառնում...

Եւ ուզում եմ ճչալ ու փախչել ես...

Փախչել աշխարհից, ֆալաքի ձեռքից...

Փախչել հեռո՜ւ, շատ հեռու...

Փախչել՝ դուրս գալ աշխարհից...

ԱՐԾԻՎ ԼԱԹՈՆ

Ճակատագրի պես կույր ու անողոք էր Նրա հարվածը, որը չէր հապաղում իջնել այնտեղ, ուր գործել էին սկսում քուրդ բեգերի կիրքն ու ախորժակը:

«Քեզ, արքաների մեջ՝ միայն քեզ, գահերի մեջ՝ միայն քո գահը, լեռների էն սեգ ու անհաս բաշերը սիրեցի ես»…

Այս խոսքերը շշնջացին Արծիվ Լաթոյի բոցավառ շրթունքները, երբ մի օր, դեռ պատանի, հայրենի դաշտերից Նրա հայացքը տիտան Արնոսի կատարին սավառնող սեւ արծիվը գերեց…

Ու հուզված ու մտախոհ՝ Նա վերադարձավ տուն, պատից խլեց հոր հրացանը, համբուրեց, համբուրեց մեկ էլ, համբուրեց յոթն անգամ, գրկեց ու… լուսաբացին ջահել Ռշտունցին էլ չկա՞ր գյուղում…

* * *

Օրեր անցան:

Արնոսի կատարեն Լաթոն իր արծվային թեւերը տարածեց Ռշտունիքի վրա, ու այն օրեն մեղմացավ ավարն ու ավերը, նվազեց արյունն ու արցունքն այդ երկրում…

* * *

Պատերազմ էր:

Ռուսական զորքերը հասել էին Վան, կամավորները՝ Մոկս:

Իր որդիների արյունով յոթն անգամ սրբացած հայու երկիրը ընդմիշտ ազատված էր համարվում, երբ պատերազմների աստվածը, չէ՛, ցարի դիվանագիտությունը դավաճանեց մեզ…

Սկսվեց ռուս զորքերի Հայաստանն ավերող ու ամայացնող անփառունակ նահանջը…

Լաթոն՝ Արնոսի հպարտ արծիվը, չուզեց, չկարողացավ բաժանվել իր սիրած լեռներեն ու մնաց…

Մնաց մենակ, մենակ՝ ամայացած երկրի մեջ ու մենավորի անսահման հուսահատությամբ կանչեց.

- Ո՞ւր ես, ցեղդ իմ, ո՞ւր…

Եվ երբ *ողբացած երկրի* դար ու դաշտերը, որպես տխուր արձագանք,

կրկնեցին. *«Ո՞ւր ես»,* հուսահատ ու վրիժավառ *հայորդին,* որպես լեռան կատարեն պոկված հսկա ժայռ, նետվեց դեպ առաջացող թշնամին ու… ընկավ:

Փա՜ռք…

ՀԱՅ ԽԱՉԱԿԻՐԸ

Մահն էլ է սիրում գեղեցիկը

Փառապսակ Միհրանին

Ինձ ասացին՝ էլ չկա Միհրանը, եւ ես տխուր ժպտացի միայն, ինչպես մի օր ժպտաց Մահը, երբ հայ խաչակիրը խթանեց իր ջահել նժույգին եւ շշնջաց.

- Տար ինձ, դեպ Միջագետքի ավազուտ անապատները թռցուր ինձ, ուր կիզիչ արեւի տակ իմ ցեղի տխուր մասն է մարտիրոսանում…

* * *

Ինձ գուժեցին՝ էլ չկա Միհրանը, եւ ասացի ես.

- Թող այդպես լինի, թող միհրանաբար, դյուցազնորեն ընկնեն նորերն ու նորերը, եթե ազատագրյալ մեր Հայրենիքում դեռ կա մի բուռ հող, որը ներկված չէ արյունով…

Ինձ ասացին՝ էլ չկա Միհրանը, եւ ասացի ես.

- Չեն լինի բոլոր խիզախները ու հանդուգնները, որոնք գիտեն հեգնել մահը, անգիտանալ վտանգը, որոնք լավագույնն են լավերի մեջ, որոնց սիրում է եւ Մահը…

ԽՈՒՍՏՈՒՊԵԱՆ ԿԱՆՉԵՐ *

Ճապոնացու արեւոտ սիրով սիրի՛ր հայրենիքդ եւ ամէն օր, որպէս աղօթք, կրկնի՛ր ճապոնական կայսրի խօսքերը.

- Եթէ խորապէս գիտակցենք, որ սէրը դէպի հայրենի երկիրն ու ժողովուրդը աւելի՛ բարձր է կանգնած Մեծ ու գեղեցիկ Արեւին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները՝ այն ժամանակ մահը ամէն մէկիս համար թռչնի փետուրից էլ թեթեւ կը թուայ:

* *Գրքույկով տպագրվել է Գորիսում, 1921թ.:*

ՀՐԱՄԱՆՆԵՐ

1919, 23 հոկտ., Լիճք

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական ուժերին

Բուլղարական զօրքի մէջ կայ մի գեղեցիկ սովորութիւն, այն է՝ զինուորների անուանացուցակների ստուգման ժամանակ, նախ յիշատակել իրենց երկրի ազատագրութեան ճանապարհին ընկած հերոսների անունները: Երբ ստուգողը տալիս է այդ նուիրական անունները՝ «Ընկան», պատասխանում է զօրաշարքի աջ թեւի առաջին զինուորը:

-«Փառք»,- կրկնում է աջ թեւի երկրորդ զինուորը:

-«Յաւե՛րժ փառք»,- աւելացնում է ամբողջ զօրաշարքը:

Ազգային նահատակների անունների ամէնօրեայ յիշատակումը զինուորների մէջ ստեղծում է բարոյա-հայրենասիրական բարձր տրամադրութիւն՝ ընկած նահատակների հաւատարմութեամբ ու անձնուիրութեամբ ծառայելու ու քաջօրէն մեռնելու իրենց հայրենիքի համար:

Հրամայում եմ Ղափան-Գենուազ-Գողթանի զօրամասերի պետերին՝ որդեգրել այդ գեղեցիկ սովորութիւնը եւ ամէնօրեայ ստուգումների ժամանակ յարգել մեր ցեղի ընտիր որդիների խնկելի անունները՝ Քեռի, Խէչօ...

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական
ուժերի հրամանատար՝ ՆԺԴԵՀ

1919, 30 նոյեմբեր, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենուազ-Տաթեւի զօրամասերին

Զինուորնե՛ր, թշնամու ցանկութեամբ սկսւում է մեր արշաւանքը, մեր խաչակրաց արշաւանքը Գեղուայ Ձորի դէմ:

Վաղը, երբ Ձեր խենթ գրոհներից եւ զարկերից թշնամին շշմած կը թողնի իր գիւղերը, Ձեզ կ'ողջունեն մեր հինաւուրց, այսօր թշնամու կողմից պղծուած բերդերի եւ վանքերի աւերակները:

Վաղը, երբ այդ ձորում կը լսուի Ձեր ոտների ձայնը, Ձեր զէնքերի շաչիւնը, հայ գերիները, Քէյֆաշէնիբէգերի շնաբարոյ կրքերի առարկան դարձած հայ կանայք ծնկաչոք կ'աղօթեն Ձեր զէնքի յաջողութեան համար:

Վաղը, երբ քաջերդ Աջիբաջ հասաք, յիշէք Խալիլբէգեան սեւ օրերը, երբ այս գիւղի մօտ թշնամին բարբարոսաբար մորթոտեց երկու հազարի չափ, օսմանեան սրից ճողոպրած, հայ կին ու երեխաներ: Ասում են, այժմ այնտեղ մի ամբողջ ձոր լիքն է կմախքներով, գանգերով, ուր յաճախ հիւր են գալիս Գեղուայ Ձորի շներն ու գիշատիչները:

Յիշէ՛ք այդ եւ եղէք անխնա՛յ՝ Ձեզ դիմադրողների նկատմամբ, ասպետ եւ մարդ եղէք կանանց, երեխաների եւ ծերերի նկատմամբ:

Ուրեմն, յառա՛ջ, մեզ հետ Աստուած ե՛ւ Դաւիթ-բէգի վրիժակ հոգին:

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական
ուժերի հրամանատար՝ ՆԺԴԵՀ

1920, 17 յունուար, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական ուժերին

Զինուորնե՛ր, անհաշտ թշնամին նորից մեզ իր ձեռնոցն է նետել: Վերցնե՛նք առանց տատանումի: Օրեր առաջ իմ արեւմտեան ուժերի խենթ հարուածներից ընկաւ անառիկ Գեղուայ Ձորը: Օրեր անց՝ Ձեր նոյն Գեղուածորեան թափի եւ կրակի առաջ պիտ ընկնի Որոտանի աջ ափը:

Այնտեղ, Գեղուայ բարձունքներում եւ ձորերում մեզ զօրավիգեց Դաւիթ-բէգի վրիժավառ ստուերը, այստեղ, Որոտանի ճակատում, մեզ կ՛առաջնորդէ Թորոս-իշխանի հայրենանուէր հոգին: Եօթ բարձունք ունի այս ճակատը, հպարտ բարձունքներ, որոնց տիրելու մէջ, որոնց վրայ է մեր փրկութիւնը: Ով տիրեց այդ լեռներին՝ նա է տէրը Զանգեզուրի: Ուրեմն յառա՛ջ, իմ եօթն անգամ սիրած եւ քաջ ղափանցիներ, յառա՛ջ դէպ այդ բարձունքները՝ դէպ Քեափագ, Ային-դաղ, դէպ Հարթիզ:

Մեզ հետ Աստուած եւ մեր պատերազմական բաղդը, յառա՜ջ,

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական
ուժերի հրամանատար՝ ՆԺԴԵՀ

1920, 12 փետր. ժամը 7-ին, Ղափանի հանքեր

ՀՐԱՄԱՆ

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական ուժերին

Զինակիցնե՛ր, հասել է օրը, անօրինակ հերոսութեամբ աւելի քան երկու տարի ամենադժնդակ պայմաններում Զանգեզուրի նախադուռը պաշտպանող այն մի բուռն ժողովրդի փրկութեան օրը, այն քաջանուն ժողովրդի, որն ամիսներ առաջ խորապէս գիտակցելով իր շրջանի ռազմագիտական խոշոր նշանակութիւնը, բացճակատ յայտնեց մեզ իր որոշումը՝

«Գողթանը կը մեռնի՛, բայց չի՛ գաղթի»:

Հասել է ժամը, երբ երկու մեծ ու ընտիր Հայորդիների՝ Աստուածաշունչ Քրիստափորի եւ Ռոստոմի արիւնաներկ ու սրբապղծուած ծննդավայրերը՝ երբեմնի չքնաղ Ագուլիսները, պիտ վերագրաւուեն, պիտ վերականգնուեն իրենց շէնութեամբ ու բարոյական մեծութեամբ:

Լսէ՛ք, հնչել է ժամը, զինակիցնե՛ր, երբ վախկոտ էդիֆների տմարդ սրից զարնուած հազարաւոր անթաղ մեռելները ձեզնից արդար ու արիւնոտ հատուցումն են պահանջում:

Լսէ՛ք եւ հարիւրաւոր գերուած ու լլկուած հայ կանանց, որոնք ձեր գոռ արշաւի եւ ուռաների սպասումով, ձեզ հերոսութեան են կանչում:

Լսէ՛ք եւ ինձ, ձեր ղեկավարին, որը ձեզնից ծուխ, թշնամու գիւղերի հրդեհն ու քաղցր ծուխն է պահանջում, այն փրկարար ծուխը, որն այնքան բարձր ու առատ բարձրացրիք ե՛ւ պատմական Որոտանի ափերում, ե՛ւ Գեղուայ Ձորերում:

Լսէ՛ք, իմ քաջ ու հայրենանուէր զինակիցնե՛ր, լսէ՛ք, լցուէ՛ք բոցով ու վրէժով, առէ՛ք զէնքներդ ու յառա՜ջ:

Յառա՜ջ, մեզ հետ Աստուած եւ մեծ Հայորդիների՝ Քրիստափորի եւ Ռոստոմի անհանգիստ հոգիները: Յառա՜ջ:

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական
ուժերի հրամանատար՝ ՆԺԴԵՀ

1920, 13 յունիս, Ղափանի հանքեր

Հ Ր Ա Մ Ա Ն

Ղափան-Գենուազի ռազմական ուժերին

Ղափանցիներ ենք մենք, եւ դա նշանակում է՝ որ էն մեր խենթ հարուածներից ընկան Օխչու ու Գեղուայ անառիկ ձորերը, որ էն մեր գոռ ուռան մաքրեց Որոտանի եւ Հաքարուի ափերը. որ էն մենք ենք, մենք, որ եօթն անգամ ուժեղ, մահից էլ ուժեղ գիտենք ատել մեր դարաւոր թշնամուն եւ եօթն անգամ չէ, կեանքից աւելի ուժեղ սիրել մեր հայրենի հողը...

Ղափանցիներ ենք մենք, եւ դա նշանակում է՝ որ էն մենք էինք, որ մահաշունչ ձմեռուայ կէսին, երբ քաղցած ու թափառ գայլն անգամ սարսափով էր մօտենում Ղափուջուղին՝ Ղափանի այդ փոքր Մասսին, մենք մեր հոգու կրակով հալեցրինք ձիւները, մեղմացրինք բնութեան արհաւիրքը եւ Գողթան իջանք՝ յանուն Քրիստափորի սրտից զարնուած նիւթական ծննդավայրի՝ թշնամու գիւղերի սեւ ու թանձր ծուխը բարձրացնելու...

Ղափանցիներ ենք, եւ դա նշանակում է՝ որ մեր հպարտ ու փառքի մէջ կորած դրօշակի վրայ հարիւրից շատ աւելի աւերուած թշնամու գիւղերի անուններ կան, որ մեր կռիւները՝ կանոնաւոր թէ անկանոն ուժերի դէմ, մի ձեւ, միայն մի ձեւ են ունեցել՝

«Ուռա՜, յառա՜ջ, հրդե՛հ»:

Զօրավիգ ունենալով Աստծուն ու մեր ընտիր ռազմիկների՝ Դաւիթ-բէգի ու Թորոս-իշխանի հայրենանուէր ու վրիժակ հոգիները՝ ղափանցիներ ենք մենք՝ միշտ յաղթող ու անպարտ:

Ղափան-Գենուազ-Գողթանի ռազմական
ուժերի հրամանատար՝ ՆԺԴԵՀ

ԿՈՉԵՐ ՂԱՓԱՆՑԻՆԵՐԻՆ

I

ՂԱՓԱՆՑԻՆԵ՛Ր

Քո մի մասի վախկոտութեան ու դաւաճանութեան շնորհիւ թշնամին մտաւ Ղափան եւ քո ռազմական ուժերի ամենաքաջանուն ու խիզախ մասը, կրակելով իր վերջին փամփուշտը, քաշուեց լեռները: Եօթն օր է, շա՜տ կարճ ժամանակ, ինչ քեզ արժանի թշնամին իշխում է քո երկրում եւ լուրերը թեւ առած գալիս, հասնում են ինձ, որ դու շատ տեղ արդէն աղ ու հացդ ես պղծում՝ ինքդ գնում ու եկողի փեշը բռնած, գիւղդ ես քաշում:

Զգո՛յշ, Ղափա՛ն, մեռցնելով իմ հաւատը դէպ քո հաւատարմութիւնը, դու քեզ ես մեռցնում:

«Իջի՛ր, իջի՛ր լեռներից»,- դաւադրաբար կանչում է թշնամին:

«Իջի՛ր»,- յիմարաբար կրկնում ես դու:

Եւ քո ապստամբ մարտիկներից շատերը թողնում են լեռները: Զգո՛յշ, էլի զգոյշ, թողնել լեռները՝ նշանակում է անարգ մահ գտնել ձոր ու ծմակներում:

Հեռո՛ւ, հեռո՛ւ, որոնք հեշտութեամբ քո գերեզմանը կարող են դառնալ:

Լսիր եւ մի՛ մոռանար՝ մնալ լեռներում, սարերի վրայ, ղափանցինե՛ր, նշանակում է լինել ապստամբ. չիջնել լեռներից՝ նշանակում է չճանաչել անկոչ եկողների իշխանութիւնը ու սանձահարուած պահել նրանց:

Ա՛հ, ո՞ւր էք, ո՞ւր, իմ երեկուայ ուխտուած զինուորնե՛ր, Գեղուաձորեան հպարտ փառակիցնե՛ր: Ո՞ւր էք: Ձորերո՞ւմ: Վա՜յ Ձեզ, իմ սիրտն արնոտւում է Ձեզ համար, տեսնելով, թէ ինչպէս թշնամին ձեր անփառունակ գերեզմանն է փորում:

Դո՛ւրս, դո՛ւրս արէք ձորերից: Դո՛ւրս ծմակներից, միանալու Դաւիթբէգեան հզօր ուխտին:

Դո՛ւրս դէպ ինձ, դէպ լեռները:

Ի՞նչ, չլինի թէ որոշել էք մեր Ձեզ հետ միասին ձեռք բերած ամբողջ փառքը թողնելու մենակ մեզ՝ լեռները քաշուած ապստամբներիս:

Այո՞, է՛հ թող այդպէս լինի:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ
1920, 12 սեպտ., Խուստուպեան լեռներ

II
ՂԱՓԱՆՑԻՆԵ՛Ր

Ես՝ Դաւիթբէգեան ուխտին հաւատարիմ, շարունակում եմ մնալ քո լեռներում, ամպերի տակ, մենակ, վիրաւոր, ու աւելի հպարտ, քան էի:

Ա՛յժմ ես լիզում եմ քո եւ թշնամու ինձ հասցրած վէրքերը եւ սպասում քեզնից խնդրածս վարպետին, որ գայ, շուտ գայ՝ կոպիտ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումները, քո խայտառակութիւնը, քո բարոյական անկումը:

Դու արեցիր այն, ինչ ուզում էր թշնամին: Նա գոհ է քեզնից, անչափ գոհ, բայց գիտե՞ս, Ղափա՛ն, թէ որքան ուժեղ է նա ատում եւ արհամարհում քեզ: Դու քո վիրաւոր, սրտից զարնուած հրամանատարին ես դաւաճանել, մենակ թողել:

Գիտակցո՞ւմ ես, չափում կատարածդ տմարդութեան անչափելի մեծութիւնը:

Ա՛ռ, յետ առ ինձնից քո տուած անունները՝ «Երկրորդ Դաւիթ-բէգ», «Աժդահայ-Փաշա», «Ամէն կռւում Փադիշահ»: Այդ անուններով դու կաշառեցիր, խաբեցիր ինձ, որ այսօր ինձ մենակ թողնես: Ինչո՞ւ են ուշանում քո լրտեսները, քո ահաբեկիչները:

Ադրբէյջանը յոգնեց իմ գլխին սպասելուց, փոքրիկ գումար չէ երեք միլիոնը: Ստացի՛ր եւ գործի անց:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ
1920, 15 սեպտ., Խուստուպեան լեռներ

III
ՂԱՓԱՆԻ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ

Ժողովո՛ւրդ, քեզ հետ խօսողը քո հրամանատարն է, քո վիրաւոր սրտից զարնուած հրամանատարը, որի սուրը վաղուց է, ինչ յանուն քո ինքնապաշտպանութեան, չի հանգստացել պատեանում:

Լսի՛ր, մի աւելորդ, գուցէ եւ վերջին անգամ նա դիմում է քեզ, խօսում քեզ հետ: Նա ասում է.

- Քո սեւ ու նեղ օրին, երբ հայակեր Գեղուայ եւ Օխչու ձորերը, երբ Բարգուշատն ու Հաքարուն սպառնում էին քո կին ու երեխաների արիւնով քո երկիրը ներկելու - դու կանչեցիր ինձ եւ ես հասայ քո հաւարին: Ասա՛,

ժողովո՛ւրդ, այն օրէն քո երկրում մնա՞ց մի բարձունք, մի սար, մի քար, որի վրայ դրած չլինէի իմ յոգնած գլուխը: Ասա՛, դու ինձ տեսե՞լ ես մի օր, մի ժամ անհոգ, հանգիստ: Դու ինձ տեսե՞լ ես փափուկ տեղաշորում, հարուստ սեղանների շուրջը: Դու լռում ես. քարերը, քարերը կ'աղաղակեն, կ'ասեն՝ ոչ: Ասա՛, մնա՞ց մի բան, որ խնայէի, չզոհաբերէի քո ազատութեան, քո փրկութեան, քո փառքի գործին: Քո դաշտերում, քո հողի վրայ իմ արիւնն է թափել: Դեռ չեն փակուել թշնամու ինձ հասցրած վէրքերը, իսկ քոնը, ժողովո՛ւրդ, քո հասցրածը միշտ թարմ պիտ մնայ ու հազար վէրքերի ցաւով պիտ մորմոքայ:

Ժողովո՛ւրդ, այսօր, երբ ադրբէյջանեան չէկերով կաշառուած «բոլշեւիկ» կոչուած սրիկաները, քո գերեզմանափորերը, կեղծ ու պատիր խոստումներով քո դուռն են բաղխում եւ քո ձեռքով պղծած աղ ու հացիդ սպասում՝ դու դաւաճանաբար լքում ես, մենակ թողնում քո վիրաւոր հրամանատարին: Այդ հերիք չէ, քո լրտեսներն ու ահաբեկիչները իմ գլուխն են փնտրում՝ երեք միլիոնով Ադրբէյջանին ծախելու: Ապերա՛խտ ժողովուրդ: Քանի՜-քանի՜ անգամ քո կինն ու երեխան կռիւներից վերադառնալիս փաթաթուել են ձիանս վզով, համբուրել ձեռներս, «փաշա ջա՛ն» կանչել: Քանի՜-քանի՜ անգամ փրկել եմ քեզ վերահաս վտանգից, կոտորածից: Ի՞նչ, մոռացա՞ր պրինց Ղաջարին, որի զօրքերին պատերիդ տակից եմ քշել: Վա՜յ քեզ, ժողովուրդ, ի՞նչ պատասխան պիտ տաս Աստծուդ, խղճիդ, պատմութեանը:

Ժողովո՛ւրդ, կ'անցնեն օրեր, թշնամին քեզ զինաթափելուց ու ղեկավարներիցդ զրկելուց յետոյ, երբ այլեւս չի լսուի «Աժդահա փաշա» անունը, կը սկսուի հազար ձեւով ու ճանապարհով բնաջնջել քեզ: Այն ատեն դու կը վերյիշես քո հրամանատարին, որի սուրը եօթն անգամ մեծացրել էր քո երկիրը եւ քեզ համար բացարձակ ապահովութիւն ստեղծել, այն ժամանակ հայեացքդ կը դարձնես Խուստուպին, նրա կատարին նստած սեւ ամպերին, կը նայես, կը կանչես, բայց հրամանատարիդ փոխարէն սարերիդ ու ձորերիդ թոյլ արձագանգը կը պատասխանի քեզ: Գուցէ մի օր էլ, թշնամուց հալածական, սարերն ընկնես ու թափառումներիդ ժամանակ յանկարծ մի թփի տակ, մի ժայռի վրայ իմ սառած դիակը գտնես, ծունկի գաս ու արիւն լացես:

Ժողովո՛ւրդ, ինձ լքելուց, ինձ դաւաճանելուց առաջ զլացար իմ խնդիրը կատարել: Դու չուղարկեցիր վարպետներիդ՝ բութ գործիքներով հանելու իմ աչքերը, կուրացնելու ինձ, որ չտեսնեմ քո գլխին գալիք զուլումը, քո բարոյական անկումը: Ներում եմ, թէեւ պատմութիւնը չի՛ ների քեզ, եւ խնդրում՝ երբ ինձ սպանուած գտնես, դիակս թաղիր Խուստուպի ամենաբարձր կատարին, որտեղից երեւայ ինձ ե՛ւ Ղափանը, ե՛ւ Գենուազը, ե՛ւ Գեղուաձորը, ե՛ւ Գողթանը:

Իսկ մինչ այդ, հայեացքդ մի՛ կտրիր Խուստուպից: Որքան յաճախ, որքան շատ նայես այս սէգ ու սեւ ամպերով ծածկուած սարին, այնքան շուտ կը գայ, կը հասնի փրկութիւնդ:

Աստուած եւ իմ սէրը քեզ հետ, ապերա՛խտ ժողովուրդ:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ
1920, 17 սեպտ., Խուստուպեան լեռներ

IV
Ղ Ա Փ Ա Ն !

Դու ինձ լքեցիր, մենակ թողեցիր: Սակայն իմ պատերազմական բախտը, իմ Աստուածը մնաց ինձ հետ, եւ ես ամբողջ ամիս է, ինչ անընախընթաց յաջողութեամբ ջարդում եմ թշնամուն՝ հերոսական Գենուազի ռազմաճակատներում:

Չգիտեմ, Ղափա՛ն, դու հաշտուե՞լ ես քո դրութեան հետ թէ՞ ոչ, բայց հայ ժողովուրդը ցաւում է, անտեսելիօրէն ցաւում եւ ափսոսում, որ դու միամտօրէն վիզդ թշնամու ծանր լծի տակ պարզեցիր եւ ծով փառքդ, փառքի մէջ կորած անունդ աշխարհի չորս քամիներին տուիր: Այն օրէն, քո անկման այն սեւ օրէն, Ղափա՛ն, քուն ու դադար կորցրած, սար ու քար ընկած, մի քանի հարիւր ինձ հաւատարիմ մնացած գենուազցիներով կուրծք եմ տալիս թշնամու գերադաս ուժերին ու քո կորցրած փառքի փոխարէն նորն ստեղծում քո երկրի, քո անունի համար:

Ղափա՛ն, զղջո՞ւմ ես արարքիդ համար: Ի՞նչ եղաւ Ադրբէյջանին ծախուած հայ սրիկաների քեզ խոստացած արքայութիւնը:

Խե՜ղճ ժողովուրդ, ասում են՝ արդէն զինաթափել, գլխատել, տնտեսապէս քայքայել են քեզ:

Ա՜հ, դեռ ի՞նչ ես տեսել: Սեւ օրերդ դեռ չեն հասել, բայց գալիս են եւ շուտով կը հասնեն, թաթար զօրքերի հետ:

Ոտքի՛, խաբուած ժողովո՛ւրդ, ոտքի՛ ել, փրկութիւնդ մօտ է:

Ոտքի՛, զէնքը ձեռքիդ, կազմ ու պատրաստ ինձ սպասիր Խուստուպից:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ
1920, 5 հոկտ., Խուստուպեան լեռներ

ԵՕԹԸ ՊԱՏՈՒԻՐԱՆՆԵՐ ԻՄ ԶԻՆԱԿԻՑՆԵՐԻՆ

Քաջերին, միայն քաջերին է լսում եւ զօրավիգում պատերազմների քմահաճ Աստուածը:

Վախկոտներն ի զուր են կանչում նրան: Խուլ է նա նրանց համար:

* * *

Նա է միշտ յաղթում, որը արդէն յաղթել է իրեն, այսինքն՝ որն իր մէջ մեռցնելու չափ թուլացրել է մահուան երկիւղը:

* * *

Նրանք, որոնք ծառայում են բարձր հայրենասիրութիւնից, կամ փառասիրութիւնից դրդուած, միայն նրանք են աւելացնում իրենց զէնքի ու ցեղի փառքը:

Հէնց այնպէս ծառայել, ծառայել, որովհետեւ պահանջում են, կամ ստիպուած ես մի զոյգ ուսադիրներ կրել մի կտոր հացի համար - նշանակում է դատապարտուած լինել կատարելու սովորական մահկանացուի յատուկ ամենաանշան ու անփառունակ գործեր:

Վա՜յ քեզ, բանակ, եթէ նմաններով հարուստ են շարքերդ:

Ունեցի՛ր բոլոր մարտական առաքինութիւնները, բայց մի՛ մոռանար, որ առաջինը, առանց որին պատերազմների քմահաճ Աստուածը քեզ քիչ անգամ կը ժպտայ՝ դա խիզախութիւնն է:

* * *

Քեզ վրայ նայիր որպէս դատապարտուածի, որը յանուն իր երկրի ու ժողովրդի պաշտպանութեան՝ պիտ միշտ պատրաստ լինի ընդունելու մահը:

* * *

Եղի՛ր խիզախ, խստաբարոյ ու չարքաշ: Յատկութիւնների այդ բարձր երրորդութիւնը քեզ կը մօտեցնէ կատարեալին:

* * *

Երկար ու լուրջ տքնութեամբ մեռցնելու աստիճան թուլացրո՛ւ քո մէջ մահուան վախը եւ դու չես մնայ առանց փառքի, պատմութիւնից դուրս:

* * *

Ճապոնացու արեւոտ սիրով սիրի՛ր հայրենիքդ եւ ամէն օր, որպէս աղօթք, կրկնի՛ր ճապոնական կայսրի խօսքերը.

- Եթէ խորապէս գիտակցենք, որ սէրը դէպի հայրենի երկիրն ու ժողովուրդը աւելի՛ բարձր է կանգնած մեծ ու գեղեցիկ Արեւին, քան մեր հայրենիքի ամենաբարձր լեռները՝ այն ժամանակ մահը ամէն մէկիս համար թռչնի փետուրից էլ թեթեւ կը թուայ:

Հրամանատար՝ ՆԺԴԵՀ

ՀՈԴՎԱԾՆԵՐ,

ՆԱՄԱԿՆԵՐ,

ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ,

ՃԱՌԵՐ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

1. Հայոց Յեղափոխական շարժման միացել եմ 17 տարեկան հասակից՝ իբրեւ գիմնազիստ: Յետագայում լքել եմ Համալսարանը եւ գործել ցարիզմի ու սուլթանականութեան դէմ: 1906-ին անցել եմ Բուլղարիա եւ Մակեդոնական ազատագրական շարժման ղեկավարներ Բորիս Սարաֆովի եւ Լիապով Գուրինի միջնորդութեամբ ընդունուել Սօֆիայի սպայից դպրոց Դմիտրի Նիկոլովի անունով: Աւարտելով դպրոցը (I կարգ) վերադարձել եմ Կովկաս՝ Մուրադի հայդուկային խմբի հետ Հայաստան անցնելու համար: Այնուհետեւ գործել եմ Պարսկաստանում: 1909-ին վերադարձել եմ Կովկաս եւ ձերբակալուել: Բանտերում՝ Ջուլֆայից մինչեւ Պետերբուրգ՝ մնացել եմ աւելի քան 3 տարի, 163 դաշնակցականների ծանօթ դատավարութիւնից յետոյ՝ Սիբիր չընկնելու համար, անցել եմ Բուլղարիա:

2. 1912-ին հայ կամաւորներից կազմակերպել եմ մի վաշտ եւ Անդրանիկի հետ մասնակցել Բալկանեան պատերազմին - հանուն Մակեդոնիոյ եւ Թրակիոյ ազատագրութեան: Պատերազմի վերջին շրջանում, իբրեւ յեղափոխականներ՝ հրաժարուել ենք մասնակցել բալկանեան ժողովուրդների ներքին կռիւներին եւ զօրացրել Հայկական վաշտը: Ես վիրաւորուել եմ այդ պատերազմում: Հայոց դրօշակը եւ շատ հայ կրօքեր զարդարուել են քաջութեան խաչերով:

3. Անցեալ համաշխարհային պատերազմի նախօրեակին՝ ներման արժանանալով ցարական կառավարութեան կողմից՝ վերադարձել եմ Կովկաս՝ Թուրքիայի դէմ մղուելիք պատերազմին մասնակցելու պայմանով: Կռիւների առաջին շրջանում վարել եմ Հայկական կամաւորական II գումարտակի փոխհրամանատարութիւնը, վերջին շրջանում՝ ղեկավարել հայ-եզիդական մի առանձին զօրամաս:

4. 1917-ին, սակաւաթիւ ուժերով օգնութեան եմ փութացել պաշարուած Կողբին եւ փրկել այդ շրջանի հայութեանը: Այդ միեւնոյն օրերին անցել եմ Աբբաս Գիոլ, կապուել եզիդների հետ, հետս առնելով վերջինների առաջնորդ Իւո բէգին, վերադարձել եմ Տփխիս եւ նրան կապի մէջ դրել Հայոց Ազգ. Խորհրդի հետ:

5. Հայաստանի անկախութեան նախօրեակին վարել եմ Ալաջայի կռիւները, որոնցով կարելիութիւն ընձեռել էրզերում-Սարիղամիշ-Ղարսէն նահանջող հայկական զօրամասերին՝ անկորուստ անցնելու Ալեքսանդրապոլ, եւ Արփաչայը կտրել անցել եմ միայն այն ժամանակ, երբ վերջին նահանջող հայ զինուորի հետ իմ մարդկանց յաջողուեց փոխադրել Անիէն

պրոֆ. Մառի պեղումների արդիւնքը հանդիսացող արժէքաւոր հնութիւնները:

6. 1918 մայիսի վերջերին վարել եմ Ղարաքիլիսէի ճակատամարտը: Վիրաւորուել եմ: Ներկայացել ամենաբարձր քաջութեան շքանշանի:

Պիտի խոստովանել, որ առանց Ղարաքիլիսէի ճակատամարտի ոչ թէ օրւայ Խ. Հայաստան, այլ եւ այդ երկրամասի վրայ այսօր ապրող հայութիւն չէինք ունենայ: Ղարաքիլիսէի եռօրեայ հերոսականը փրկեց գլխովին ոչնչացումից Արարատեան հայութիւնը եւ հիմը դրեց Հայկական Պետութեան:

7. Հայաստանի անկախութեան օրով, 1919-ի աշնան փրկել եմ Դաւալուի եւ Վեդիի միջեւ պաշարւած Հայկ. II գունդը:

8. 1919-ի երկրորդ կէսէն անցել եմ Սիւնիք՝ Էդիֆ բեյի զօրքերի կողմից պաշարւած, սովի ու սուրի մատնւած Գողթանին օգնութիւն հասցնելու համար: Փրկւեցին թէ՛ այդ շրջանը, թէ՛ այդտեղի հայութիւնը:

9. Այնուհետեւ լծւել եմ վտանգւած Ղափանի եւ Արեւիքի հայութեան ֆիզիքական գոյութեան պաշտպանութեան գործին՝ յետ մղելով Մուսավաթական Ադրբէյջանի եւ Նուրի, Խալիլ թուրք փաշաների պարբերական յարձակումները:

10. 1920-ի կէսերին՝ Դրօի զորամասի կողմից Ղարաբաղն ու Զանգեզուրը լքելուց յետոյ՝ ստանձնել եմ բովանդակ Սիւնիքի ինքնապաշտպանութեան գործը: Մեր այդ՝ աշխարհից բացարձակապէս կտրւած լեռնաշխարհում առանց բաւարար հացի եւ ռազմամթերքի, առանց սպայական կադրի եւ արտաքին որեւէ օգնութեան, քաղաքականապէս մենակ, շրջագծաձեւ ճակատի վրայ, աւելի քան մի տարի տեւող անհաւասար ու յաղթական կռիւներով՝ Սիւնիքը - որը Հայաստանի կառավարութեան եւ Մոսկւայի ներկայացուցիչ Լեգրանի միջեւ կնքւած պայմանագրով յանձնւած էր Ադրբէյջանին - պարտադրում է իր կամքը Խորհրդ. իշխանութեանը, Միասնիկեանի օրով իր 1921, յունիս, դեկլարացիայով Սիւնիքը համարւում է կցւած իր մայր երկրին - Հայաստանին: Սիւնիքի հերոսականի շնորհիւ փրկւած են նաեւ Հայաստանի մտաւորականութիւնը, Հ.Յ. Դաշնակցութիւնը, հայ յեղափոխական եւ մարտական տարրերը:

11. Իմ կեանքն ու գործունէութիւնը կը հաստատեն հետեւեալ իրողութիւնները՝

- Ես միշտ երեւան եմ եկել վտանգների ժամանակ: Խաղաղութեան օրով պաշտօններ չեմ փնտրել, քանզի չեմ սիրել: Վարել եմ միշտ էլ ժողովրդական ուժեր, մի տեսակ պաղութիւն զգալով դէպի այսպէս կոչւած «կանոնաւոր» զօրամասերը: Ղեկավար տարրերը քամել եմ ժողովրդից եւ վերջինները կաղապարել, եթէ այսպէս կարելի է ասել, ըստ իր պատկերի: Կռիւներում եղել եմ մարդ, աւելի քան մարդ, անգամ թուրք ու թա-

թարների դէմ - վկա՛յ զօրամասերիս ուղղուած իմ հրամանագրերն ու կանչերը: Սովետական իշխանութեան կողմից ինձ վերագրուածները հասարակ յերիւրանքներ են՝ սահմանուած ամէն գնով հակառակորդը վարկաբեկելու ձգտող պրոպագանդի համար: Ես երբեք չեմ օգտուել արտաքին ուժերից, անգամ հարազատ Պետութեան միջոցներից: Առաջնորդուել եմ Մամիկոնեանների ուխտով. եղել եմ խոր հաւատքի եւ էտիկայի մարդ, այդ իսկ պատճառով յաճախ դառնութեան բաժակներ դատարկել: Հաւատքի եւ պաշտամունքի տաճարում միշտ էլ առաջին տեղերը յատկացուած են եղել Աստուծոյ եւ Հայրենիքիս: Հայաստանն է եղել երկրաւոր սրբազնագոյնն ինձ համար: Շնչել, ապրել եմ նրանով՝ միշտ պատրաստ տառապելու, զոհաբերելու եւ մեռնելու նրա համար: Դա է եղել իմ սրբազան ցաւը, կարօտը, ուրախութիւնը, իմ գոյութեան իմաստը, իմ անմահութիւնը, իմ գերագոյն իրաւունքն ու պարտականութիւնը, միաժամանակ երկրի ժողովուրդը ջերմօրէն կապւել ու կուրօրէն հետեւել է ինձ: Ինձ թշնամացել են սրբութեան զգացումից զուրկ կիսամտաւորականն ու թուղթէ... կանոններով ղեկավարւող միջակ զինուորականը: Ոճիկ չեմ ստացել ողջ կեանքում*: Հրաժարւել եմ անգամ օտար պետութեան սահմանած թոշակից: Ունեցել եմ հարուստ լինելու եւ ճոխ ապրելու ամէն կարելիութիւն, սակայն ապրել եմ իբրեւ ժողովրդի մարդ, համեստօրէն, աղքատ կոչւելու աստիճան: Նիւթապաշտութիւնը յեղափոխականի, զօրականի, հայրենասէրի համար համարել եմ մէկը մեր աշխարհի ամենամեծ պղծութիւններէն:

Հայաստանից հեռանալիս հետս եմ առել Արաքսի Հայկական ափում զինուորներիս կողմից զարնուած վագրի մորթին - իմ միակ վարձատրութիւնը, Ջաւալ փաշայի դաշոյնը - իմ միակ պատերազմական աւարը, պարտութիւն չտեսած Սիւնեաց Դրօշակը - թո՛ղ դա դրուի կրծքիս վրայ, գերեզմանիս մէջ, եւ մի հին Հայկազեան բառարան - իմ միակ մխիթարիչը տարագրանքի մէջ:

12. Հայը Հայաստանից դուրս ենթակայ է վատասերումի: Այդ չարիքի դէմ պայքարել հնարաւոր է միայն ցեղային արժէքների, առաքինութիւնների եւ սրբութիւնների խոր ճանաչումով ու վերապրումով - մի բան, որ հիմնաւորեցի եւ անւանեցի Ցեղակրօնութիւն: Դրա նպատակն էր՝ անհայրենիք հայութեանը հոգեւոր ու քաղաքական անտուն-անտիրութիւնից փրկելով, դարձնել հայրենատէր: Դա Հայրենատիրական շարժում է,

---

* *Այդ սկզբունքի դէմ մեղանչել եմ մի անգամ՝ Ամերիկայում, ուր ընդունեցի, որ ինձ իբրեւ գործիչի շաբաթական տուի: Մեղանչեցի եւ արդարօրէն պատժւեցի: Այդ օրէն մարդկային տմարդութիւնը ստուերիս պէս հետեւեց ինձ՝ ամենուրեք:*

որի մէջ վերանորոգելով միայն պիտի միանան հայութեան բոլոր հատուածները: Իմ այդ ազգահոգ քարոզչութեան համար հայութեան հատուածականացած, ապահայրենացած ու պարտուողական տարրերը դաւադրեցին ինձ:

Ներո՜ւմ եմ բոլորին, ներում կրկնակ պատճառներով - առաջին՝ իմ ազգային դաւանանքը թոյլ չի տալիս թշնամանք տածել դէպի որեւէ Հայ մարդ. երկրորդ՝ խորապէս հասկանում եմ այդ դժբախտներին, որոնք դեռ չեն յաղթահարած ստրուկն իրենց մէջ, որով եւ՝ մնացել են տկար եւ չար:

Այսօր, իբրեւ հայրենակարօտ տարագիր մի հատիկ ցանկութիւն ունեմ - Մեռնե՜լ Հայրենի լեռների վրա:

13. Բուլղարիայում տեղի ունեցաւ ռազմա-քաղաքական անցքերի հասունցրած պետական հարւածը: Սպասւում է Կարմիր բանակը: Գիտեմ, թէ ինչ է սպասւում ինձ, բայց եւ այնպէս որոշել եմ մնալ, հակառակ որ կարելիութիւն ունեմ par avion* ինձ նետելու Wien**: Չեմ հեռանում, որ հալածանքի չենթարկւեն մեր կազմակերպութիւնները: Մնալու աւելի լուրջ պատճառներ ունեմ՝ ծանօթ երկու ընկերներիս:

Եկաւ սովետական բանակը, եւ տեղի ունեցաւ այն, ինչ որ սպասում էի: Օգտւելով ստեղծւած թոհուբոհից՝ իրենց ցեղի կաթով չմեծցած մի քանի վատասերած հայեր արդէն գործի են անցել: Նրանք - առաւելապէս կօշկակարներ, իբրեւ ոստիկանական լրտեսներ՝ հետները զինւած բուլղար միլիցիոներներ առած, ընկած են տնէտուն, ինձ են փնտռում:

Յաւիտենօրէն զզւելի ստրուկնե՜ր, որոնք տկար իրենց չարութիւնը բաւարարելու - իրենց հայազգի «թշնամիները» ոչնչացնել տալու սեւ նպատակով - միշտ էլ օգտւել են օտար ուժերից:

Նուազ զզւելի չեն, սակայն, նաեւ միայն անուանապէս ազգայնական տարրերը: Իբրեւ շուկայի բարոյականի տէր էակներ՝ անասնանալու աստիճանի սննկանացած են սրանք: Ծանօթ, բարեկամ, ազգական - ոչ ոք իր դուռը կը բանայ առջեւդ, եթէ անգամ Նազովրեցու խաչն ուսիդ եւ փշէ պսակը արնածոր ճակտիդ իր պաշտպանութիւնը փնտրես: Մոռացան, մոռացան բոլորը, որ իմ թափած աշխատանքի շնորհիւ միայն ամբողջ չորս տարի զերծ մնալով հրեաների ճակատագրից՝ հարստացան ու հարստացան: Նրանք, որոնք դեռ երէկ հայեացքդ ու բարեւդ կ'որսային, այսօր փախչում են անունիցդ, ստուերիցդ անգամ:

Կարմիրները սպասում են ինձ. եօթնիցս ստոր է նա, ով գերադասում է կեանքը մահէն բոլոր պարագաների մէջ: Թո՛ղ կատարւի անխուսա-

---

* *par avion - օդանաւով*

** *Wien - Վիեննա*

փելիին: Այսօր կեանքին ես կապւած եմ այն չափով միայն, ինչ չափով որ ինձ դեռ պարտական եմ զգում ծառայելու Հայաստանին:

Ո՞ւր ես, ո՞ւր ես դու, Հայաստանի տիրասիրտ ու պաշտելի ժողովուրդ, որի ոգին գիտցաւ միշտ էլ վսեմանալ վտանգների ժամանակ:

Գաղո՛ւթ, դու մի անգամ եւս ինձ ապրեցրիր ամօթանքի ողբերգութիւնը - ամո՜թ քեզ:

ՆԺԴԵՀ
1944, սեպտեմբեր, Սոֆիա

ՀՀ Ազգային Անվտանգության
նախարարության արխիվ,
գործ թիվ 11278, հտ. 4

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵ՛ՐԸ

Փա՛ռք այն ոգիներին, որոնք լսեցին ժամանակի, պատմութեան եւ իրենց ազգի ձայնը ու գործի ասպարէզ իջան...

Բանտարկեալնե՛րը...

Ովքե՞ր են այդ բանտուած ոգիները:

Եթէ այդ հարցը առաջարկենք Ճերմակ Ցարին կամ Կարմիր Սուլթանին, նրանք «աւազակ» եւ «մարդասպան» անուններով կը մկրտեն նրանց: Այո՛, նրանք, բանտարկեալները, Ազատութեան աւազակներն են, որոնք ուզեցին Ազատութիւն եւ Արդարութիւն գողանալ իրենց հրատանջ Ազգի համար:

Նրանք յանդգնեցան փշրել Հայու ձեռքն ու ոտքը կաշկանդող բռնութեան շղթաները:

Նրանք, Հայու ազատութեան ասպետները, ցոյց տուեցին բռնակալներին, թէ Հայը այլեւս արցունքի գետեր չէ թափում, այլ՝ բողոքում է, որի ձայնից դողում են տիրանները իրանց շիրիմների խորքերում, ցոյց տուեցին, թէ Հայը այլեւս չէ բախում, այլ՝ փշրում է Ազատութեան դարպասները:

Այդ բանտուած ոգիները անվախօրէն Ռուսիայի Ցարին «Պրոկրուստ» անունով կնքեցին, երբ նա հրամայեց իւր կոզակներին՝ տապարներով ջախջախել էջմիածնի դռները, նրանք էին, այդ Հայու անկախութեան Կարապետները, որոնք փորձեցին ջախջախել այն բռնակալների գլուխները, որոնց մէջ յղացաւ հայկական ընդհանուր կոտորածի միտքը:

Վերջապէս, այդ բանտարկեալները այն ըմբոստ ոգիներն էին, որոնք բարձրացնելով իրենց ձայնը, այսպէ՛ս խօսեցին.

-Բռնակալնե՛ր, ամէն մի ազգ, ինչպէս եւ Հայը, նման է մի նորածին մանուկի, որը օրերի ընթացքում ազատւում է ծնողական կապանքներից: Ի՞նչ կը նշանակէ բռնութեան մագիլների մէջ խեղդել մի ազգ եօթն հարիւր տարի, ի՞նչ կը նշանակէ մանուկին օրօրոցի մէջ պահել մինչեւ գերեզմանի սեւ տախտակը...

Ահա՛ այն բանտարկեալները, որոնց մէջ խօսեց Ազատութեան, Արդարութեան ու Վրէժի ձայնը: Եւ նրանք վճռեցին պարզել Յեղափոխութեան Կարմիր դրօշը ու նամուսով դրօշի տակ մեռնել, քան թէ բենամուս ապրել, սողալով բռնակալների առաջ եւ լիզելով բռնութեան անարգ

շղթաները: Եւ նրանք ասպարէզ իջան, ցցած իրենց դրօշը, գործեցին եւ ընկան Ցարի ու Սուլթանի դրած թակարդների մէջ:

Ու այսպէս, իրենց կարմիր գործունէութեան համար, բանտուեցան այդ խռովարար ոգիները Ռուսիայի եւ Տաճկաստանի զնդանների մէջ...

Ապրում են բանտարկեալները նեղ ու խոնաւ բանտերի մէջ ու Ազատութեան ու Վրէժի ոգին աճում է նրանց սրտի մէջ, եւ եթէ շուտով հասնին Ազատութեան ալիքները եւ փշրեն նրանց բանտերի դռները, այն ժամանակ պիտի թունաւորուի բռնակալների կեանքը:

Բայց աւա՜ղ, այդ կարմիր բանտարկեալների տասնեակից միայն մէկն է ազատւում, իսկ միւսնե՞րը... Ո՛հ, մութ գիշերին հարցրէ՛ք, որովհետեւ նա է տեսնում, երբ գահին հաւատարիմ կոզակի սուինը հնձում է բանտի պատերի մէջ տասնեակ բանտուածների կեանքերը: Պետերբուրգի մօտով վազող գետակին հարցրէ՛ք, որովհետեւ նա է տանում ու խեղդում դիակները կիսախողխո՛ղ...

Ի՞նչ են կտակում հայ բանտարկեալները, երբ Ցարիզմից եւ Սուլթանիզմից ծնած մահը մօտենում է նրանց:

Թող ապրէ՛ անկեղծ հայրենասէրի անունը, կեցցէ Յեղափոխութիւնը... կեցցէ՜ Միութիւնը...

Այդ մարտիրոսները կարողանում են միայն այդքան կարճ խօսել, որովհետեւ ֆալագը շուտ կաշկանդում է նրանց լեզուները:

Յաւերժական փա՜ռք այդպէս կտակողներին:

Յարգա՛նք այդ Միութեան...

Որովհետեւ միայն Միութեան պարզած ձեռքը կարող է բանալ մեզ համար հայու Ազատութեան դարպասները, միայն Միութեան ձեռքի տապարը կարող է փշրել այն զնդանների դռները, որոնց մէջ բանտուած են մեր եղբայրները:

Ուրեմն, Անդրանիկի եւ Մուրադի ձեռքերը թող պարզուեն միանալու համար:

Դէ՛, թող բարձրանան այդ ձեռքերը, պատրաստ եմ համբուրելու:

Եւ եթէ Միութեան Աստուածը զոհ է պահանջում, ահա՛, հայրենակիցնե՛ր, ծաղիկ կեանքս զոհի սեղան բարձրացուցէ՛ք:

«Ռազմիկ», Պլովդիվ (Ֆիլիպէ),
1907թ., թիւ 132

ՄԵՐ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԻՉԸ

Նժդեհի ճառը՝ արտասանված 1924 թվականին, Սոֆիայի գերեզմանատան մեջ, Քրիստափոր Միքայելյանի հուշարձանի բացման առթիվ

Մեծ մարդը.- Դա սպասուելիք օգնութիւնն է, մխիթարութիւնը: Մեսիան, որ ժամանակների մայրը երբեմն-երբեմն աշխարհ կ'ուղարկէ այս կամ այն ժողովրդի եւ մարդկութեան համար:

Մեծ մարդը.- Պարզատես, վշտակիր, հերոս երեւալով հոգեկանօրէն կը փոխի իր միջավայրը: Նրանով կ'արժէքաւորուի, կ'հմաստանայ, կը վեհանայ կեանքը: Նրա խօսքը կ'ազդէ որպէս հրաշէկ կայծ՝ բռնկեցնելով իրեն հետ առնչող սրտերն ու զգացումները: Նրա ներկայութիւնը կ'ազնուացնէ, կը թեւաւորէ, կը գօտեպնդէ հոգիները: Նրա շնորհիւ անկարելին կը դառնայ միայն դժուարին, դժուարինը՝ կարելի: Երազները կը դառնան նպատակ, նպատակները՝ իրականութիւն: Կը փոխէ ժողովուրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը, պատմութիւնը:

Մեծ մարդը.- Դա Աստուած է, միայն այն տարբերութեամբ, որ դա իրեն Աստուած կը զգայ միայն իր կեանքի որոշ վայրկեաններում եւ որպէս այդպիսին կը կերտէ իր յաւերժական, իր աստուածարժան գործերը:

Այդպիսին էր Քրիստափորը՝ Հայկական Պրոմեթէյը, մեր Յեղափոխութեան արարիչը, մեծ առաքեալը, մեծ վրիժակը:

Քրիստափորի հոգու եւ գործի մեծութիւնը պատկերացնել կարենալու համար, դառնանք, մի վայրկեան, վերադառնանք մեր Յեղափոխութեան նախօրեակը՝ տեսնենք, թէ ի՞նչ էինք երէկ:

Աշխարհի ամենէն անիծապարտ բռնապետութեան արնոտ ձեռքով կը խաչուէր հայ ժողովուրդը:

Գողգոթայէն՝ Արեւմտահայաստանէն կը բարձրանար աղաղակը հաւաքավառ խաչեցեալի.- օգնութիւն, փրկութիւն ինձ:

Իսկ մարդկութիւնը՝ յանցաւոր ու անտարբեր, կը պատասխանէր.

- Ծարա՞ւ ես, արբ արցունքդ...

- Կոտորո՞ւմ ես, ջրի չա՞փ էլ արժէք չունի արիւնդ՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես...

- Կողոպտո՞ւմ ես, տէր չե՞ս վաստակիդ՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես...

- Շղթաների մէ՞ջ կը ծնեն, կ'ապրեն, կը մեռնեն զաւակներդ՝ դու ես մեղաւոր, որովհետեւ թոյլ ես...

- Կա՞խ է գլուխդ, խոնա՞րհ է ճակատդ, բռնութեան լծի տակ երկտակուա՞ծ է մէջքդ, պատուիդ տէրը չե՞ս, ցեղիդ սրբազան լեզուէն

օգտուելու իրաւունքն իսկ չունե՞ս, վաղո՞ւց է ինչ եկեղեցիներիդ զանգերի քաղցր ղօղանջը չես լսում, առանց իտէալի եւ վեհութեան կը սողա՞ս միայն - ստրո՞ւկ ես՝ դու ես մեղաւոր, դու. ի՞նչը մղեց քեզ միամտօրէն հաւատալու ցնորապաշտ Նազովրեցու վսեմ, բայց վտանգաւոր խօսքին: Ո՞վ ասաց, որ թոյլը մեղաւոր չէ, որ թոյլ է, եւ որ ուժեղը երախտիք չունի, որ ուժեղ է: Դու խաբուած ես, ժողովուրդ, որ զոհն ես քրիստոնէական բարոյախօսութեան, որ շարունակում է մնալ որպէս ներկ եւ շպար, որպէս քօղ եւ դիմակ ուժեղների հոգու համար: Թուլութիւնը,- ասում է աշխարհը,- ծնուած է սնուցանելու ուժը: Ուժն է ծնում իրաւունքը: Ուժեղին է աշխարհը, հայրենիքը, ազատութիւնը եւ ամէն ինչ:

- Ուզո՞ւմ ես վերջ տալ գերմարդկային տառապանքիդ, որի Շէյքսփիրը դեռ չէ յայտնուել: Ուզո՞ւմ ես վերջ տալ գողգոթայիդ, որի վրայ որպէս յոյսի ժողովուրդ, կը մեռնես ամէն օր եւ չես մեռնի: Ուզո՞ւմ ես փրկուիլ.- եղիր ուժեղ, քանզի թոյլերը բարեկամ չունեն աշխարհում: Իսկ ուժիդ ապացոյցը տալու համար, ցոյց տուր երկու բան.- առաջինը, որ գիտես մեռնել գիտակցօրէն, կռւում գործօն եւ իմաստալի մահով, երկրորդը՝ որ գիտես մեռցնել: Ապացուցեցի՞ր այդ, ունեցա՞ր այդ երկու առաքինութիւնները, մասնաւորապէս առաջինը՝ փրկուած ես:

Այս էր աշխարհը հայկական գողգոթայի հանդէպ: Այսպէս կը պատասխանէր մարդկութիւնը մահուան դատապարտուած այս ժողովուրդին, որը չէր ուզէր մեռնիլ, բայց չէր կարող եւ ապրել:

90-ական թուականներին ուժգնօրէն զգացուեց Քրիստափորի շունչը: Նրա դրօշի տակ հաւաքուած հասարակական բանակը- կուսակցութիւնը արդէն խռովել է մահուան լռութիւնը: Հոգեպէս կը լարուի ժողովուրդը: Նրա որդիները որպէս ապստամբ կը նետուին լեռները, արիաբար կը չափուին բանակների հետ՝ կ'անգիտանան վտանգը, կ'արհամարհեն մահը, ժպիտը երեսներին կը բարձրանան կախաղանները, բաց ու բարձր ճակատով կ'երեւան աքսորի ճանապարհներին, կը պայթին մի շարք ապստամբութիւններ՝ մէկը միւսէն հերոսական ու հիասքանչ, տեղի կ'ունենայ արշաւանքների մի ամբողջ շարք՝ մէկը միւսէն յանդուգն ու փառաւոր, օրէց օր կը խորանայ պայքարը, լեռների վրայ կը բազմանան յեղափոխական խմբերը, անհաւասար կռիւներում կը դարբնուի լեգենդար ֆեդային, ազատամարտը կը ծնի հերոսներ, կը հարստացնի մեր ցեղի հերոսական մարտիրոսութիւնը, նրա փառատաճարը: Ի լրումն այդ բոլորի մի օր բռնակալի որջում՝ Ստամբոլում կը պայթի, կը գոռայ դժոխային մեքենան - Սուլթանասպանութեան փորձը - ծնունդ Քրիստափորի տիտանական մտքի եւ զգացումի, մի յանդուգն մահափորձ, որի մասին եւրոպական «Ֆրանքֆուրտեր Ցայտունգ»ը կ'արձանագրէր. «Հայկական ուժանակը դղրդեցրեց ոչ միայն Պոլիսը, այլեւ ամբողջ աշխարհը»:

Հետեւա՞նքը:

Կրաւորական նահատակութեան փոխարէն - նշան մեր երէկուան թուլութեան - պատճառը օտարների դէպի մեզ տածած սպանիչ արգահատանքի - մեր ժողովրդի վերջին տարիների հերոսականը՝ արժէքը անկախ հայրենիք ունենալու իրաւունքի:

Քրիստափորը վառելով մեր ժողովրդի հոգու մէջ ինքնայարգանքի զգացումը, կը դարձնէ նրան արժանի մարդկութեան յարգանքին:

Մարդկութեան պատմութիւնը այլ բան չէ, քան պատմութիւնը ազգերի արժանապատուութեան համար մղուած պայքարի: Շնորհուած արժէքների եւ արժանապատուութեան փոխարէն, ինքնանուաճ ազգային արժանապատուութիւն ու ինքնաստեղծ արժէքներ: Այն, ինչ որ այսօր ունինք, այն, ինչ որ մեզ տուել է քաղաքական կշիռ, այն, ինչ որ շատ բան է աւելացրել մեր ազատութեան արժանի համարուելու իրաւունքին, չէ մոռացուած, չէ շնորհուած՝ դա ձեռք է բերուած երկարատեւ եւ հերոսական պայքարով:

Քրիստափորի շնորհիւ քաղաքական մուրացիկը կը դառնայ մարտիկ:

Գաղթականութիւնները կամ կը կորչին, կամ կը յարմարուին օտար միջավայրին: Հայը բնաւեր՝ չի կորցնի իր ազգային դիմագիծը, նա չի ապազգայնանայ, որովհետեւ մեծ հայու շնորհիւ իր հոգու մէջ եւ իր շուրջը կը կրի հոգեւոր հայրենիքը, որովհետեւ օտար միջավայրերում հոգեպէս կ'ապրի իր հայրենիքում:

Մեր վերջին վեց տարուան պատմութիւնը- տխուր նկարագրութիւնը մեզ հետ կատարուածի, Քրիստափորի օրօք եւ նրանից յետոյ կը դառնայ պատմութիւնը այն բանի, ինչ որ մենք կը կատարենք մեր թշնամիների հետ: Քրիստափորը կը փրկէ հայ պատմութեան արժանապատուութիւնը:

Սեղմ ասած՝ շնորհիւ Քրիստափորի օտար լծերի տակ ստրկօրէն հոգեվարող հոգեւոր հօտի փոխարէն այսօր կայ անկախ եւ ստեղծագործ քաղաքական ժողովուրդը եւ յաւիտենական արժէքներից՝ Մայիս 28ը: Այսօր քսաներորդ դարաշեմքում կանգնած՝ հայութիւնը նախայեղափոխական շրջանի ստրուկների եւ առեւտրական միջնորդների արհամարհուած հօտը չէ, որին աշխարհը կը զլանար անկախութեան իրաւունքը, այլ մարդկութեան գնահատանքին արժանացած քաղաքական մի ժողովուրդ՝ վիրաւոր, բայց ազատ հայրենիքն ունենալու իրաւունքը ձեռքին: Մի ժողովուրդ, որ Քրիստափորի թողած անմեռ արժէքների գիտակցութեամբ եւ պաշտամունքով կը շարունակէ գոռալ մարդկութեան երեսին. «Ոչ ոքի ի վնաս, իմ եւ մարդկութեան երջանկութեան համար անկախ ապրիլ կ'ուզեմ»:

Փառք հայ ժողովուրդի հոգեբանութիւնը, ճակատագիրը եւ պատմութիւնը վերաստեղծող մեծ Քրիստափորին:

Թող ապրին նրա թողած արժէքները:

«Հայաստան», Պլովդիվ, 1924թ., թիւ 29

ԱՆԱՐԻՈՒԹԻՒՆԸ - ՄԱՅՐ ՉԱՐԵԱՑ

Խորհրդածութիւններ Վարդանանց տօնի առթիւ

Ներքին թշնամին:

Հին է սրա պատմութիւնը: Նա երէկ չէ ծնուել եւ վաղը չպիտի մեռնի: Խօսել սրա մասին կը նշանակէ պատմել մեր ցեղի պատմութեան ամենատխուր էջերը:

Դա զինակիցն է ու եղբայրը արտաքին թշնամու, որի մասին հայոց պատմութիւնն ասում է զայրոյթով՝ «Շապուհի զօրքերը կ'առաջնորդէին հայանուն դաւաճանները՝ ծանօթ Հայաստանի դիրքերին ու դրութեան»:

Ազգադաւն է նա, որի սեւ գործերի մասին խօսելիս վաղուայ պատմիչը զզուանքով պիտի գրէ՝ «Տաճիկ զօրքերին դէպի Հայաստան կ'առաջնորդէին հայանուն կարմիրները»:

Երէկ նա չէր ճանաչում ազգային անկախ պետութիւն, այսօր ներքին թշնամին կաշուից դուրս է գալիս արդարացնելու եւ ամրացնելու օտար իշխանութիւնը Հայաստանում:

Օտարի լուծը ժամանակին նա արդարացրել է Պարսկահայաստանում, Տաճկահայաստանում, Ռուսահայաստանում, եւ վաղը եթէ իրերու բերումով թաթարները մտան մեր երկիրը, եւ վաղը եթէ մեր երկրում ապրող մի բուռ եզիդներն իսկ արիութիւն ունեցան հայութեան պարտադրելու իրենց գերիշխանութիւնը - ներքին թշնամին՝ անարի հայը, ծափ կը զարնէ եւ սրանց:

Միայն ազգային իշխանութիւն չէ ճանաչում դա:

Վաղը նա չպիտի ճանաչի եւ երրորդ Հայաստանը, եթէ այնտեղ յեղափոխականների փոխարէն իշխեն հայ-կաթոլիկները՝ ամենից չէզոքները:

Այս է, այսպիսին է մեր ներքին թշնամին, որը այնքան սեւ դարեր եւ օրեր է ապրեցրել հայութեան, որը քանիցս ու քանիցս ներսէն է պայթեցրել մեր բերդերը եւ հեշտացրել օտարների մուտքն ու իշխանութիւնը Հայաստանում:

* * *

Վատերը կարճայուշ են լինում:

Մենք գիտենք, սակայն, թէ ինչպէս պատժուեց Ե. դարի հայու վատութիւնը: Քաղաքական հեռատեսութեան դիմակի տակ գործող Վասակի դաւաճանութիւնը չմնաց անպատիժ, իսկ Աւարայրի խնկելի «արկածախնդիրը» հայ ժողովրդի կողմից հռչակուեց սուրբ:

Նոյն ձեւով պատժուեցին եւ Դավիթ բէկի հակառակորդները ԺԸ. դարում:

Աւելի խստագոյնս պիտի պատժուին հայոց պատմութեան կողմից մեր օրերի ներքին թշնամիները:

Պատմութի՜ւնը... Ա՜հ, դատաւորների այդ մեծ եւ անմահ դատաւորը, որին չէ յաջողել լռութեան դատապարտել եւ ոչ մի ոյժի, չպիտի կարողանայ կաշառել եւ կարմիրների արծաթը: Պատմութեան դատաստա՜նը - ահա սեւ օրերը վատերի:

Այդ օրը նա պիտի թքէ վատ մեռելների գերեզմանին եւ կենդանի վատերի ճակտին անփառունակ:

* * *

Սակայն, իրենից ի՞նչ է ներկայացնում ներքին թշնամին՝ հոգեբանօրէն: Ո՞վ եւ ի՞նչ է դա որպէս հոգեբանական նկարագիր: - Անարին է դա:

Դա կենդանի համադրութիւնն է հին փառասէր հայու եւ դարերի ընթացքում օտար լծերի տակ տկարացած, անարիացած հայու:

Անարին է դա, որի մէջ դեռ ապրում է Տիգրան Մեծի շրջանի հայ մարդու փառասիրութեան մի մասը:

Անարին է դա, որի մէջ անթեղուած մնում է դեռ Արշակունիների շրջանի հայ մարդու փառասիրութեան մի մասը. - Արշակունիները, որոնց օրօք հայկական զինանշանը կը խորհրդանշէր Արծիւը՝ թեւաբաց՝ աշխարհակալ:

Անարին է դա, Տիգրան Մեծի եւ Արշակունիների աշխարհակալ հայութեան փառասիրութեամբ օժտուած, բայց դարերի ստրկութեան մէջ իր արիութիւնը կորցրած հայն է ներքին թշնամին:

Կա՛յ, սրա մէջ կայ փառասիրութիւն, բայց պակասում է արիութիւնը: Իսկ նման արարածը ե՛ւ դժբախտ է, ե՛ւ վտանգաւոր: Սրան պէտք է բաւարարել իր փառասիրութիւնը, բայց աւա՜ղ, արիութեան պակասի շնորհիւ սա անընդունակ է զոհաբերութիւն պահանջող մեծ, բարի եւ առաքինի գործերի: Նա կ'ուզէր երկնքի աստղերը վեր բերել, արծւի թեւերից փետուր խլել. նա կ'ուզէր իր անւան շռինդով առնւազն հայոց աշխարհը լեցնել... Նա փառասէր է եւ... այսքանը:

Փառասէր, բայց եւ ոչ արի: Իսկ նմանը ե՛ւ դժբախտ է, ե՛ւ դժբախտացնող. իսկ նմանը չար ոյժ է, չարագործ, հրէշ:

* * *

Անարի փառասէրն իր հետքերն է թողել եւ համաշխարհային պատմութեան մէջ: Նախանձի որդը հանգիստ չէր տայ Հերոստրատին:

Նա կ'ուզէր անմահանալ, յաւերժանալ, բայց կը պակասէր արիութիւնը: Եւ ահա՛ մի գիշեր նա ուզեց անմահանալ: Եւ մթութեան մէջ կատարեց իր մութ գործը. նա հրդեհեց, կրակի մատնեց հին աշխարհի ամենամեծ տաճարը եւ իր անունը կապեց պատմութեան, անմահացաւ... որպէս չարագործ:

* * *

Մեր ներքին թշնամին.

Հայ Հերոստրատն է դա, որն իր սեւ գործերով մեր դարերի պատմութիւնն է սեւացրել: Եւ որքան շա՜տ են նրանք, - փոքրիկ Հերոստրատները: Հիւանդոտ փառասիրութեամբ, բայց զուրկ արիութիւնից: Նրանք, բոլոր տեսակի Հերոստրատները գործի վրայ են այսօր: Նրանք գործում են եւ անմահանում... Հերոստրատաբար, չարագործաբար:

Նրանք այսօր հայ ցեղի սրբութիւնների ամօթալի աճուրդն են կազմակերպել: Սրբութեանց առեւտուր: Ծախու են հանուած Մայիս քսան եւ ութը, Եռագոյնը, Հայկական անցագիրը: Դաւել են եւ դաւում են վատերը հայ ցեղի գոյութեան եւ այդ գոյութիւնն արդարացնող սրբութիւնների դէմ:

Արիութեան պակասը, անարիութիւնը - ահա՛ վատ հայերի եւ նրանց վատութիւնների մայր պատճառը:

Քանի դեռ հայ մարդու փառասիրութեան չէ միանում վտանգն ու մահը անգիտացող արիութիւնը, քանի դեռ կայ անարի հայը - կը լինի ներքին թշնամին. իսկ քանի դեռ կայ այդ հրէշը - քաղաքական աւելի բարւոք վիճակը երազ պիտի մնայ մեզ համար:

Անարիութիւն - ահա՛ վատ հայու գոյութեան պատճառը:

Վատ հայը - ահա՛ հայ ժողովրդի դարերի եւ այսօրւայ դժբախտութեան գլխաւոր պատճառը:

* * *

Եթէ անարիութիւնը՝ մայրը բոլոր չարագործների եւ չարեաց՝ եթէ անարիութիւնն է երբեմնի հոգով արծիւ մեր ժողովուրդը դարձրել Գառն Աստուծոյ - դարերի անմեղ որսը Արեւելքի գայլ ցեղերի համար, արիութիւնն է, որ պիտի փրկէ հայութիւնը:

Արիութիւն - յետ այսու սա՛ պիտի լինի հայ մարդու կոչումը:

Վահագնի հետ պիտի խօսի հայ մարդը հիմա - Աստուածը հին հայոց, Աստուածը Արիութեան եւ Յաղթանակի:

Փտած, եղծանւած են հին մագաղաթները:

Նոր աւետարանի խօսքը պիտի լսի հայութիւնը:

Ցեղօրէն անկախ ապրելու եւ ստեղծագործելու՝ եւ ոչ ժամանակաւոր կեանք մուրալու համար հայ ժողովրդի հաւաքական հոգու մէջ հրամայողաբար յարութիւն պիտի առնի պաշտամունքը մեր հին եւ հզօր Աստծու: Վահագնի համար տաճարներ պիտի բարձրանան Արարատեան դաշտում, Սիւնիքում, Արցախում, մեր գաղութներում, ամէն տեղ, ուր կ'ապրի հայը՝ ամէն մի հոգու մէջ, քանզի արիութիւնն է եղել յաւիտենական պարտականութիւնը այն ազգերի, որոնք չեն ուզում մեռնել:

- Արիացի՛ր, արիացո՛ւր՝ սա պիտի լինի մեր օրուայ նշանաբանը: Վահագն-Աստուած, արիապաշտութիւնը - նոր կրօն, հայ մարդն - արի՛, եթէ չենք ուզում մեր տեղն արեւի տակ մի օր զիջիլ մեզնից արիներին:

«Արաքս» օրաթերթ,
Սոֆիա 1926թ., 11 փետրվար

ՕՐԵՐԻ ՕՐԸ

Նախնի իմաստասէրներից Թաղեսը սովորութիւն ունէր ամէն տարի «շնորհ» մատուցանել Աստուծոյ, քանզի նախ՝ ծնած է բանաւոր եւ ոչ անբան, երկրորդ՝ որ ծնած է յոյն եւ ոչ բարբարոս: Մենք Թաղեսաբար նոյնը կատարենք ամէն օր, նախ որ մեր երջանիկ սերունդի օրով տեղի ունեցաւ Մայիս 28-ի պատմական ակտը - հայ ժողովրդի քաղաքական յարութիւնը, եւ ապա՝ որ մենք կը պատկանինք Հայութեան այն արի եւ անձնուրաց մասին, որի գերմարդկային ճիգերի շնորհիւ միայն դարերի ստրկութեան ճահճից այնքա՛ն դիւցազնօրէն բարձրացաւ մեր Ազգը եւ արժանաբար տեղ գրաւեց օրուայ պետութիւնների կողքին:

Բարոյական կորովի եւ ողբերգութեան աղբիւրներով այնքան հարուստ եւրոպական ժողովուրդներէն մէկը ամէն տարի ծունկի կու գայ իր անկախութեան եւ փառքի ճանապարհին ընկածների հողաթմբի առաջ եւ կը խորհրդածէ: Ամէն տարի նա կը հաւաքէ հայրենի եւ օտար դաշտերում ընկած իր որդիների նշխարները եւ իրեն յատուկ վեհութեամբ կը թաղէ իր հաւաքական սրտի եւ գիտակցութեան մէջ:

Մի ուրիշն այդ ժողովուրդներից իր ճերմակ մարմարիոնն ունի, որով կը ճգնի գեղեցկացնել մահը իր որդիների համար:

Երրորդն ունի իր ամէնամեայ երկվայրկեանի դադարը, երբ բեւեռէ բեւեռ տարածուած իր պետութեան եւ գաղութների մէջ կանգ կ'առնէ կեանքը, երբ ազգեր եւ ազգինք մտքով կը ծնրադրեն ու կը խոկան մի նուիրական հողաթմբի առջեւ:

Որքան վեհ, այնքան իմաստուն արարք:

Ժողովուրդները կը ծնրադրեն, որովհետեւ խորապէս կը գիտակցին, որ եթէ չընդունին, թէ կայ մի բան բա՛րձր իրենցից, բարձր իրենց առօրեայ շահերից եւ ապրումներից - իրենց մէջ ոյժ չեն գտնի բարձրանալու մինչեւ գերագոյն ըմբռնումն ու զգայունութիւնը - կարողութիւններ, որոնք կը հարիւրապատկեն ժողովուրդների բարոյական կորովը:

Կը ծնրադրեն ժողովուրդները՝ շեշտելով իրենց կուլտուրականութեան հետ եւ իրենց պաշտամունքը դէպ իրենց մեծութեան ու երջանկութեան համար ընկածները:

Իսկ կը խորհրդածեն, կը խոկան նորանոր ճշմարտութիւնների մասին, որոնցմով զինուած՝ նրանք կը դառնան ու կը մնան մեծ եւ անպարտ:

Ոյժ է ճշմարտութիւնը: Չկայ ոյժ առանց ճշմարտութեան: Չկայ փրկութիւն առանց ոյժի: Ճշմարտութիւններ… որոնցմով այնքան ուժեղ են եւրոպական ժողովուրդները: Գերագոյն ոյժեր, որոնցմով այնքան աղքատ է մեր կեանքը: Այդ ոյժ ճշմարտութիւնները եւ կան, եւ չկան մեզանում: Չկան՝ ասենք - եւ ճիշտ է, որ չկան - այլապէս՝ այն պիտի չլինէինք ազգովին, ինչ որ ենք այսօր:

Չկա՛ն, եւ դրա համար էլ ուղեկորոյսները, դարձընթաց եղածներն ու բարոյալքուածներն այնքան շատ են մեր իրականութեան մէջ:

«Ճշմարտութիւնները պիտի սովորել,- ասել է Արեւելքի իմաստուններից մէկը,- եթէ նրանք գրուած են անգամ պատերի վրայ»:

Սովորե՛նք եւ գործադրենք որոշ փրկարար ճշմարտութիւններ: Վերապրեցնենք մեր ցեղի հոգու մէջ այդ գերագոյն ոյժերը՝ որպէս ազգ չկորչելու համար:

Մեր նկատմամբ մեղաւոր է եւ մարդկութիւնը, բայց անմեղ չենք եւ մենք: Մերն է մեղքի մեծ բաժինը, քանզի մեր ձեռքին է բանալին այն բոլոր դրութիւնների, որոնց մէջ կ'ուզէինք եւ կարող ենք լինել, քանզի մենք ենք մեր քաղաքական բախտի ճարտարապետը:

Օտա՞րն է մեղաւոր, որ մեզանում դեռ այնքան մեծ է թիւն այն հայ անհատների, ընտանիքների եւ խմբակցութեանց, որոնց համար Մայիս 28-ը դեռ շարունակում է մնալ որպէս մի *«բացակայող Աստուածութիւն»:*

Ո՞վ է ստիպում մեզ՝ չլինել հայրենապաշտ: Ո՞վ կարող է խլել մեզնից անկախ հայրենիքի սրբազան գաղափարը: Ո՞վ կարող է ինքնանուաստացումի զոհ դարձնել մեզ, երբ գիտենք, թէ գիտակցական ստրուկի եւ յանցագործի մէջ չկայ տարբերութիւն, երբ կը զգանք, թէ երկարատեւ ու ծանր հոգեվարք է անհայրենիք գոյութիւնը:

Ո՞վ կարող է պահանջել, որ հայը՝ որ կը զբաղուի վաճառականութեամբ, հայը՝ որ կ'ուսանի, հայը՝ որպէս բանուոր, հայը՝ որ կը մշակէ հողը, հայը՝ որ կ'ուսուցանէ, հայը՝ որ զէնք կը կրէ - ո՞վ կարող է ստիպել, որ այդ բոլորը չլինեն աւելին, քան այն, ինչ որ են:

Ո՞վ եւ ի՞նչ կարող է այդ բոլորին զրկել եւ հպարտ, եւ արի, եւ հայրենանուէր լինելու ազատութիւնից:

Մեր հոգուց դուրս կա՞յ մի չար ոյժ, որը կարողանար մեզ թուլութեան դատապարտել, երբ խորապէս գիտակցել ենք, թէ թուլութիւնը անբարոյականութիւն է եւ մահ:

Ո՞վ եւ ի՞նչը, վերջապէս, կարող է արգիլել բոլորին եւ ամէն մէկին՝ իրենց կեանքի գերագոյն հարցը դարձնելու […], որ բոլորն ու ամէն մէկը յաճախ եւ յաճախ հարց տան իրենց, թէ «Ի՞նչ ձեւով կարող եմ է՛լ աւելի օգտակար լինել Հայրենիքիս»:

Կա՞յ, մեզնից դուրս գոյութիւն ունի՞ այդ սեւ ոյժը՝ թշնամի միայն մեր ցեղին եւ նրա բախտին:

- Չկա՛յ մեզնից դուրս, կա՛յ մեր հոգու մէջ:

* * *

Արդեօ՛ք օտա՞րն է մեղաւոր, որ դեռ ամէն հայի մօր կաթը Հայաստանի անկախութեան գաղափարի սրբազան կաթը չէ, որ բարձր հայրենասիրութեան կրակն ու լոյսը չեն թափանցել մեր ժողովրդի բոլոր խաւերի մէջ: Օտա՞րն է մեղաւոր, երբ թրքական եաթաղանից հալածական հայութեան մի մասը ազատ երկիրներում իսկ կը շարունակէ գործածել Հայաստանը գերեզմանատան վերածող շնական ժողովրդի լեզուն՝ զարմացնելով եւ զայրացնելով ոչ-իսլամ մարդկութիւնը մեր վրայ: Օտա՞րն է մեղաւոր, որ դեռ կան հայեր - ահա՛, եւ որքան շատ են սրանք - որոնց կողմից անվերջ գողգոթաների եւ փառքերի տէր հնագոյն ժողովրդի անդամ լինելը դեռ չէ գիտակցւում որպէս գերագոյն երջանկութիւն: Եւ ո՛չ մի օրէնք, անգա՛մ կանոն՝ պարտադիր բոլորի, բոլորի՛ համար. կան կարծիքներ միայն՝ իրարամերժ, խակ, խուժական: Օտա՞րն է մեղաւոր մեր կեանքում տիրող մտա-բարոյական անիշխանութեան համար: Էսնաֆական եւ եսապաշտ տրամադրութիւններ եւ գորշ ամենօրէութիւն. Օտա՞րն է մեղաւոր այդ բոլորի համար: Ո՛չ, ո՛չ, օտարի իշխանութիւնից վեր է խլելու մեզնից այն՝ ինչ որ ունինք, եւ տալու այն՝ ինչի որ կարօտ ենք: Թողնենք օտարներին մեղադրելու թոյլերին յատուկ ցաւը, որպէսզի կարողանանք տեսնել մեր թերութիւնները, որ ամաչենք մեզնից եւ սկսինք զբաղուել ինքնաուղղումով:

Օտարները նիւթել են մեր գոյութեան եւ բախտի դէմ եւ պիտի շարունակեն չարիք նիւթել, որովհետեւ թոյլ ենք: Մարդկութեան վերաբերմունքը դէպի մեզ կը փոխուի, *երբ հոգեփոխուեց մեր ժողովուրդը, երբ մի անգամ ընդ միշտ հասկացանք, թէ ազգերի դժբախտութեան գլխաւոր պատճառը իրենց շրջապատող ժողովուրդների մէջ չէ, այլ՝ իրենց թոյլի հոգեբանութեան, երբ հոգեւոր ստրկութեան ճահճէն բարձրանալու ճիգեր կը փորձեն մեր ժողովրդի այն տկար ու անհայրենապաշտ տարրերը, որոնց կողմից դեռ անտես առնուած քաղաքական մի սրբութիւն կայ - Մայիս քսան եւ ութը:*

* * *

Ժողովուրդների ճակատագիրը, վերջ ի վերջոյ, բնորոշում է նրանց մէջ ապրող գաղափարներով, որոնք կը միացնեն մեծամասնութիւնն այդ ժողովուրդների:

Կը բարձրանան ու կ'ընկնեն, կը յաղթեն ու կը պարտուեն, կ'ապրեն ու կը մեռնեն նրանք՝ իրենց մէջ գերիշխող գաղափարների համեմատ:

Կը բարձրանան, կը յաղթեն ու կ'ապրեն ժողովուրդները, երբ նրանց մէջ տիրաբար կ'իշխէ բացարձակ անկախութեան ոգին, բայց ազգասիրութիւնը, երբ անհատը, խմբակցութիւնը, դասակարգը Հայրենիքի եւ ընդհանրութեան շահը կը գերադասի անձնականից, երբ մեծամասնութիւնն իրեն աւելի պարտականութեանց տէր կը զգայ, քան իրաւունքների, եւ երբ այդ մեծամասնութեան մէջ կը զգացուի անձնավստահութիւնն եւ անշէջ հաւատը դէպի իր ապագան:

Ընդհակառակը՝ կ'ընկնեն, կը պարտուեն, կը մեռնեն ժողովուրդները, երբ կը թունաւորուեն անասնացող նիւթապաշտութեամբ, երբ նրանց մեծամասնութիւնը իր Աստուածը կը դարձնէ անձնական կաշին, երբ կը ժխտէ այլասիրական ամէն տեսակի պարտականութիւն եւ վախով ու անվստահութեամբ կը նայէ իր ապագային:

Կը բարձրանան, կը փարթամանան, կը հզօրանան ժողովուրդները, երբ նրանց մէջ ապրող անկախութեան ու մեծութեան իդէալը կը լուսաւորէ ու կը ջերմացնէ իրենց անցնելիք պատմական ճամբան:

Հոգեվարել կը սկսին նրանք, երբ նրանց մէջ տժգունել կը սկսէ այդ իդէալը, որի մահը կը դառնայ առնուազն ժողովուրդների հոգեւոր մահը:

Չկա՞յ ազգային իդէալ - չկա՛յ ձգտում, չկա՛յ ստեղծագործութիւն, չկա՛յ յաղթանակ, ապագայ չկա՛յ:

Թուլութիւն, անփառունակութիւն եւ մահ ասել է անիդէալ գոյութիւնը:

Իդէալ... աստուածային ոյժ, որ կը յաղթահարէ մարդկային ազգի երջանկութեան բոլոր թշնամիները - վախը, կասկածը, որ կ'ենթարկէ, կը հպատակեցնէ, կը ստրկացնէ բոլոր տեսակի պայմանները, դրութիւնները, ոյժերը եւ կը լծէ սրանց իր յաղթական կառքին:

Իդէա՜լ... աստուածային անսխալ ու ամենակարող առաջնորդ, որն իրեն փարող ժողովուրդները կ'առաջնորդէ, կը մղէ յառաջ եւ յառաջ, դէպի այն խորհրդաւոր ու երջանիկ հեռուն, ուր ձգտողները կը տօնեն իրականացումն իրենց երազների, ուր ժողովուրդները կը նոյնանան իրենց իդէալի հետ:

Այսպէս, ժողովուրդները նախ կ'ընկնեն հոգեբանօրէն, ինչպէս եւ քաղաքականապէս բարձրանալու համար՝ նախ կը բարձրանան հոգեբանօրէն:

Ահա՛ թէ ինչո՛ւ Մայիս քսանեւութը պիտի մնայ տիրականօրէն միակ քաղաքական աստուածութիւնը, որին փարած հայութիւնը պիտ կարողանայ ապրիլ եւ ստեղծագործել ազգօրէն:

«Արաքս», Սոֆիա, 1926 թ., թիւ 99

ՏԱՐԱԾՈՒՈՂ ԱՆԻՆ

«Եկայ, տեսայ, ողբացի»

Նորէն խաչե՞ր ու խաչե՞ր մեր հէք Հայրենիքում: Խաչեր գերեզմանացած ու աւերակ գիւղ ու քաղաքի վրայ: Նորէն երկրի հայութիւնը՝ բախտից նետահար, ոճիրի ու սուգի մէջ: Ստորերկրեայ կոյր ոյժերից զարնուած ժողովուրդ - որ հազար մեռել, աւելի վիրաւոր եւ շա՛տ ավելի աղէտեալներ ունի - նորէն հազարաւոր որբեր կը յանձնէ օտարների խնամքին:

Տարերքների կոյր բռնութիւնից հալածական եւ վերահաս ձմրան դաժանութիւնից սարսափահար՝ հարիւր հազար հայեր իրենց հայեացքն ակամայից կը դարձնեն դէպի հայ գաղութները:

Օգնութեան կը կանչեն, օգնութիւն կը սպասեն, օգնութիւն՝ շուտափոյթ, սրտաբուղխ եւ լիաբուռն:

Ուշացա՞նք մենք - օգնութեան կը փութայ մահը:

Նուա՞զ եղաւ մերը - առատաձեռն պիտի լինի մահուան օգնութիւնը:

Ո՞վ է սակայն այն Աստծու արարածը, որ ե՛ւ հայ կը կոչուի, ե՛ւ կը մնայ անտարբեր, անկարեկիր՝ տարերքի պատերազմում սրտից զարնուած Հայաստանի նկատմամբ:

Ո՞վ է այն հայ եւ մարդ կոչուելու անարժանը, որ կարող է եւ օգնութեան ձեռք չերկարել իր ճակատագրի հետ կռուի բռնուած մեր ժողովրդին:

Ո՞վ է այն ստրուկ չհայը, որը հեթանոսաբար կ'ողբերգէ. կը սգայ միայն առանց իրովսանն մեղմելու մեր Հայրենիքի նորագոյն սուգը:

Ո՞վ է… բայց ինչո՞ւ կը հարցնեմ, մի՞թէ դեռ կան, մի՞թէ դեռ կարող են լինել նմանները:

Ի՛նչ, սո՞ւտ է ուրեմն հին խօսքն այն մասին, թէ տառապանքը կ'ազնուացնէ ցեղերի եւ անհատների հոգին:

Կե՞ղծ է ուրեմն այն հին կարծիքը, թէ տառապանքը վսեմ եւ իմաստուն խորհուրդներով կը լցնէ հոգիները: Ո՛չ, ո՛չ, սուտ չէ, կեղծ չէ տառապանքի ազնուացուցիչ յատկութիւնը մարդու եւ մարդկային ազգի համար: Կա՛մ մարդ ենք՝ ընդունակ տառապելու եւ ազնուանալու, կամ անասուն: Ո՞վ կ'ուզէր վերջինը լինել: Ո՞վ ընդունակ չէ գոնէ հոգեպէս չարչարակցելու իր հարազատ ժողովրդին, որի վսեմական Գողգոթայի վրայ այսօր կը չարախնդան իր գայլ հարեւաններէն թուրքն ու թաթարը:

Չէ՛, չկայ եւ պիտի չլինի հայազգի մէկը, որ խղճի խայթ չզգար իր

տաքուկ սենեակը մտնելիս կամ առատ սեղանին մօտենալիս, քանի դեռ հազարներն ու հազարները մերկ ու հացի կարօտ կը շարունակեն նստած մնալ Նոր Անիի ցրտաշունչ փլատակների տակ:

Չէ՛, չկայ եւ էլ պիտի չլինի անսիրտը, անմարդասէրը, անհայրենասէրը մեզանում, երբ ճակատագիրը, գուցէ եւ վերջին անգամ, փորձում է մեզ - հայն արժանի՞ է եւ ի վիճակի՞ անկախ հայրենիք ունենալու, թէ՞ ոչ:

Արդե՛օք պիտի կարողանա՞նք ապացուցել աշխարհին, թէ ինքնօգնութեան, ստեղծագործութեան եւ ինքնայարգանքի զօրեղ զգացումներով զինուած ազգ ենք՝ արժանի եւ կարող անկախութեան:- Այո՛, եթէ տարածուող Անին սանձահարելու, եթէ մեր երկրի աւերածութիւնը դարմանելու, եթէ աւերակներին նոր շունչ փչելու՝ կեանք տալու համար - եթէ ազգովին հասկացանք, թէ օտար միջոցներից բարոյապէս ազատ ենք օգտուելու միայն այն դէպքում, երբ արդէն սպառել ենք մեր սեփական բովանդակ կարողութիւնները, եւ ապա եթէ ազգովին լծուեցինք օգնութեան գործին: Չվարուեցի՞նք այս ձեւով - ապացուցած պիտի լինենք, որ արժանի չենք ո՛չ թէ պետական կեանքի, այլ եւ մեր գոյութիւնը քարշ տալու որպէս ժողովուրդ:

* * *

Սպեղանի կը սպասէր երկիրը մեր - նոր վէրքեր ստացաւ: Ներգաղթ կ'երազէինք - երկրաշարժի բերումով արտագաղթի վտանգը կայ այսօր:

Գաղթ, պանդխտութիւն. ա՜հ, կը սոսկամ այդ բառերէն, երբ կը թերթեմ մեր գաղթականութեանց տխուր պատմութիւնը: Ո՞ւր են ժամանակին Մոլդավիա, Վալախիա, Լեհաստան եւ այլուր գաղթած բազմահազար հայերը:

Նրանք - գիտենք այդ - նրանք հեծութեամբ էին բաժնուած հայրենի հորիզոններից, տանելով իրենց հետ ե՛ւ եկեղեցական սպասներ, ե՛ւ գրչագիր մատեաններ, ե՛ւ յիշատակներ: Թողնելով հայրենի հողը՝ նրանք ուխտած էին չօտարանալ, չկորչել որպէս հայ, բայց «կարելի՞ է գետի մը դէպի ծով թափուիլը տեսնել եւ տարակուսիլ անոր խառնուելուն եւ կորսուելուն վրայ»:

Գետերը՝ որքան էլ որ մեծ լինեն, թափուելով ծովերը՝ կը կորչեն:

Նոյնն է հայ գաղթականութիւնը այն ժողովուրդների նկատմամբ, որոնց հետ կը խառնուի այսօր:

Ահա՛ թէ ինչո՛ւ պիտի արգիլել մի հատիկ իսկ հայու գաղթը երկրէն. իսկ այդ անելու համար չբաւականանանք միայն կրկնելով օտար այցելուի սրտացաւ երեք բառերը՝ գրուած Անիի տաճարներից մէկի կիսակործան պատի վրայ - «Եկայ, տեսայ, ողբացի»: Իսկ բնական աղէտի մեր զոհերի ձեռքը պանդխտի ցուպը չտալու համար տանք այն ամէնը,

որով կարողանար վերաշինել իր աւեր երկիրը, որ վերապրել կարողանար:

Չողբանք միայն, այլ՝ անհրաժեշտ զոհաբերութեամբ վե՛րջ տանք ողբերին մեր Հայրենիքի մէջ:

Չե՞ս կասկածում դու - տարաշխարհիկ հայութիւն, չե՞ս կասկածում, որ քո որոշ տարրերը դեռ չեն հասկացել, թէ գաղութներում որպէս հայ ապրելու, չձուլուելու համար պէտք է նախ երկրի հայութիւնն ապրեցնել:

Վստա՞հ ես, արդեօք, թէ դժբախտութիւն պիտի չունենաս վաղը քո շարքերում տեսնելու հայեր՝ չկատարուած պարտականութեան կնիքը ճակատներին: Չե՞ս կասկածում - երանի՜ քեզ, քանզի միայն այսպիսով դու իրաւունք պիտի ունենաս պահանջելու, որ աղէտեալ եղբայրներդ շարունակեն կառչած մնալ հայրենի հողին:

Այո՛, դու պիտի չլքես երկիրդ, ժամանակաւորապէս դժբախտացած եղբայր, քանզի Հայաստանից դուրս ամենուրեք անիմաստ մահը, անյայտ գերեզմանն է սպասում հայ գաղթականին:

Ես ճանաչում եմ քեզ. դու չես գաղթի, երկաթէ՛ ժողովուրդ, որին աստուածային տեսչութեամբ - վկայ քո պատմութիւնը - տրուած է առասպելական փիւնիկի՝ իր աճիւնից վերածնուելու կարողութիւնը. դո՛ւ, անմահ ժողովուրդ, որի վրայով Արեւելքի բարբարոս հորդաներն են եկել ու անցել, բայց եւ այնպէս դու կաս ու կը մնաս, դո՛ւ, քրտինքի հերոս ժողովուրդ, որի ստեղծագործ ձեռքը անդամալուծել դժուարացան անգամ Լենկթէմուրները՝ մեծ ու փոքր - դու պիտի վերաշինես ու շէնցնես քո երկիրը:

Ես ճանաչում եմ քեզ՝ չար բախտի հետ պայքարի մտած անընկճելի ժողովուրդ, խորապէս հաւատում քո մեծ ու երջանիկ ապագային եւ... կարօտով ու երկիւղածօրէն համբուրում աշխատանքի մէջ կոշտացած ու սրբացած քո ձեռքը, քո հայրենաշէն ձեռքը:

«Արաքս», 1926 թ., թիւ 233

ԿԵԱՆՔԻ ՕՐԷՆՔԸ

Ա

Մեր դարուն, մասնաւորապէս մեր օրերուն, ոչինչ այնքան չէ տկարացնում ազգերի պայքարունակութեան ոգին, որքան այն աղէտալի յոյսը, թէ իրենց ճակատագիրը բարւոքողը սեփական ճիգերը չեն, այլ՝ ինչ-որ արտաքին ոյժեր:

Ճիշտ է, որ մարդկային ցեղը շատ ուշ սկսեց իմաստասիրել, թէ պայքարն է կեանքի օրէնքը, պայքարը որպէս միջոց անհատի եւ ցեղերի ինքնակատարելագործութեան: Նա ուշ ըմբռնեց, թէ ապրել, ասել է՝ յառաջադիմել պայքարի ճամբով, բայց իրապէս նրա կեանքը եղել է անվերջ նպատակադրութիւն եւ ձգտում, իր մօտաւոր կամ հեռակայ նպատակներին հասնելու համար:

Նա - անհատ թէ հաւաքական մարդը - իր գոյութեան ընթացքում չի ապրել մի վիճակ, որի մէջ իրեն դժգոհ չզգար եւ չձգտէր դէպի աւելի լաւը […]:

Բաւ<ական չէ միայն նպատակադրել. պէտք է նաեւ> իմաստութեամբ ընտրել կարողանալ դէպի նպատակը տանող ճամբան: Վասնզի որքան բնական ու ճիշտ է այս կամ այն նպատակի ընտրութիւնը, այնքան դժուար է այդ նպատակի իրականացման համար անհրաժեշտ միջոցների անսխալ ընտրութիւնը: Առաջին դէպքում, անհատը թէ հաւաքականութիւնը թելադրւում է իր կարիքներից՝ ունենալու աւելին, քան ունի, լինելու աւելին, քան է:

Երկրորդ դէպքում՝ նպատակադրողը պէտք է առաջնորդուի իմաստութեամբ - քաղաքական թէ կենցաղական - եթէ չի ուզում իր բովանդակ կեանքը սպառել անվերջ թափառումների ու պրպտումների, փորձերի եւ փորձանքների մէջ:

Ժողովուրդներ ու անհատներ կան, որոնք Մետերլինգի Կոյրերի պէս, մոլորուած տգիտութեան անտառում, կը շարունակեն խարխափել մթութեան եւ անստուգութեան մէջ, բազում ճամբաների վրայ:

Մոլորանք ու խարխափում - ահա՛ թէ ե՞րբ է ծնունդ առնում տառապանքը եւ հսկայական սեւ թռչունի պէս իր ցուրտ թեւերը տարածում իրենց նպատակի ճամբին մոլորուած, ճամբից դուրս ընկածների հոգու վրայ: Չեմ ուզում ասել, թէ տառապանքը հետեւանք է ամէն տեսակ

պայքարի, որ ենթադրում է նպատակը: Երբե՛ք: Յաջող պայքարի դէպքում՝ մարդկային հոգեկան ոյժերը աճում են յաղթահարուելիք դժուարութեանց համեմատութեամբ: Անսխալ պայքարի ընթացքում մարտնչողի հոգին լցւում է յաղթական ուրախութեամբ՝ զօրեղացնելով աշխարհի հետ կռուի բռնուածի թեւն ու թափը:

Տառապանքը - յուսոյ եւ ներքին ուրախութեան չգոյութիւնը - հետեւանքն է ընդունայն, անիմաստ պայքարի, պայքար, որի վախճանը չի տեսնւում, որի յաջող ելքին այլեւս չի հաւատում պայքարողը, զուր պայքար, որի ընթացքում գլուխ է բարձրացնում յուսահատութիւնը եւ հարուածում մարտնչողի ոգին: Այո՛, անյուսութիւնը ծնում, իսկ տկարութիւնը դիեցնում է, սնուցանում տառապանքը: Ասել է՝ տառապանքը հետեւանք է ո՛չ թէ նպատակադրութեան, նպատակի, որքան էլ մեծ եւ հեռաւոր լինի դա, այլ՝ նպատակի համար ընտրուած սխալ ճանապարհի:

Ի՞նչն է, սակայն, աղէտալի սխալանքի մատնում անհատին եւ ժողովուրդներին իրենց նպատակներն իրականացնելու միջոցների ընտրութեան գործում:

Ըստ իս՝ մարդկային անիմաստութիւնն է:

Ժողովուրդները տառապել են եւ կը տառապեն իրենց առաջնորդ տարրերի անիմաստութիւնից: Իսկ իմաստուն չեն, ասել է՝ անզօր են եւ դժբախտ այն բոլոր ժողովուրդները, որոնց գաղափարախօսական եւ վարիչ առաջնորդութիւնը չգիտէ, թէ ի՞նչ է եւ ինչո՞ւմ է կայանում կեանքի օրէնքը:

Դա, այդ օրէնքը, արտայայտւում է այն անսկիզբ եւ անվախճան պայքարի մէջ, որին վկայ են աշխարհն ու մարդը: Պայքար, որ արդիական բացատրութեամբ կոչում ենք գոյութեան կռիւ:

Ապրելով՝ մարդկութիւնը անուղղակի կերպով նպաստում է իր թուական աճման, ինչպէս եւ ցեղամիջեան մրցումին՝ գոյութեան կռիւը դարձնելով աւելի ներոյժ եւ բորբոքուն: Այդ կռիւը ենթադրում է երկու անփոփոխ իրողութիւններ.

ա) Որ երկիրը սահմանափակ է, իսկ մարդկային ցեղը աճում է եւ աճում - մի պարագայ, որը ստիպում է մարդկութեան՝ իր քանակը յարմարեցնել իր գոյութեան իրական միջոցներին:

բ) Որ բոլոր պարագաներում էլ, մտաւորապէս թէ ֆիզիքապէս զօրաւորները, աւելի ընդունակ յարմարուելու միջավայրին, զբաղում են աւելի բարւոք դիրք, կացութիւն, չէզոքացնում տկարներին եւ թողնում աւելի կենսունակ սերունդներ:

Իսկ դա, այլ խօսքերով, ասել է՝ անողոք եւ անվերջանալի կռիւ ուժեղի եւ թոյլի միջեւ, որը միշտ էլ պսակւում է ուժեղի յաղթանակով եւ թոյլի ոչնչացմամբ: Եւ այդ՝ որպէս բարեշրջութեան օրէնք, եւ այդ՝ յանուն

անհատի եւ ցեղերի զարգացման եւ կատարելագործութեան: Այդ է Դարուինի տեսութեան կմախքը:

Գոյութեան կռուի մասին կան եւ այլ տեսութիւններ, օրինակ՝ կրապոտկինեանը, ըստ որի՝ գոյութեան կռիւը մի փաստական համագործակցութիւն է: Ապրում են այն տարրերը միայն, որոնք զինակցում են միասնական աշխատանքի եւ պայքարի համար, իսկ առանձին մնացածները, թող որ ուժեղ, կորչում են: Ամէն ցեղ ճգնում է յարմարուելու իր շրջապատին՝ գոյութեան կռւում չկորչելու համար, իսկ դա ենթադրում է երկու բան - զինակցութիւն եւ բախում:

Ինչպէս տեսնում էք, սա էլ Դարուինի պէս շեշտում է գոյութեան, իմա ցեղամիջեան կռուի փաստը, որ պիտի շարունակուի, քանի դեռ մարդը մարդու, ինչպէս եւ ազգը ազգի համար միջոց է եւ ոչ թէ նպատակ: Կայ եւ պիտի մնայ ցեղամիջեան պայքարը: Ի՞նչ է, սակայն, նրա նպատակը:

- Ժամանակի ընթացքում անկարելի դարձնել կռիւը մարդկային ցեղերի միջեւ, ինչպէս անհատամիջեան կռիւը: Այո՛, պայքար եւ պատերազմ - եւ այդ՝ յանուն ցեղերի կատարելագործութեան, խաղաղութեան ու եղբայրութեան:

Առանց այդ պայքարին՝ չկայ եւ չի կարող ստեղծուիլ ցեղերի եւ անհատների կատարելութիւն, վտանգի պայքարում կորչելու վախն է ստիպում անհատին եւ ցեղերին՝ զարգացնելու իրենց կարողութիւնները, կատարելագործուելու:

Ուր չկայ պայքար՝ վտանգ չկայ, իսկ ուր վտանգ չկայ ու գոյութեան կռիւը ոչնչով չի զբաղեցնում մարդկանց, այնտեղ կայ տկարութիւն եւ անկատարելութիւն: «Ուր կան գայլեր, այնտեղ ոչխարներն աւելի նուազ տխմար են»: Բնութիւնը դիտմամբ է դրել պայքարի բնազդը անհատի եւ ցեղերի մէջ, որպէսզի կատարելագործութեան մղէ նրանց: Մրցումը երբեմն վախի, երբեմն ամօթի, երբեմն մեր դիմացինին գերազանցելու ցանկութեան ձեւերի տակ՝ խթանում է յետ չմնալ, կանգ չառնել, այլ՝ առաջադիմել անվերջ, իսկ դա նպաստում է մեր զարգացման եւ կատարելագործումին:

Մարդս կարող է եւ տկար լինել, բայց նա չի սիրում տկարութիւնը եւ հարուածում է նրան, երբ սա երեւան է գալիս մարդու պատկերով:

Եղի՛ր այնպիսին, որ արհամարհելու փոխարէն քեզ յարգել կարողանամ - այսպէս, այս իմաստով պիտի թարգմանել յարձակուողի հոգեբանութիւնը:

Ահա՛ մի շատ սովորական օրինակ:

Երբ որ երկու հոգի առաջին անգամ լինելով հանդիպում են կեանքում, նրանք մեծ ուշադրութեամբ սկսում են դիտել ու զննել իրար: Ի՞նչ է նպատակը այդ փոխադարձ զննութեան: Ըստ դարուինիստների՝ դա

արւում է իրար տկարութիւնները պարզելու եւ նրանցից օգտուելու նպատակով: Դիտուած է, որ երբ մէկի մօտ տկարութիւն նկատուեց, դիտողը գիտակցօրէն թէ բնազդաբար օգտւում է նրանից, առնուազն բարոյապէս վնասելով տկարին (առնուազն ծաղրելով տկարութիւնը): Սրան զուգահեռաբար, մարդկային կեանքում նկատում ենք մի այլ երեւոյթ: Ամէն անգամ, երբ որ մէկը մի ուրիշի մէջ գտնում է այն, որ կատարելանման է, անմիջապէս դառնում է յարգալից դէպի դիմացինը, եւ ոչ թէ ստրկականութիւնից մղուած, այլ՝ հիացումից: Ընդհակառակը, տրամագծօրէն տարբեր վերաբերմունք ենք ցոյց տալիս թոյլին: Սրա նկատմամբ, ամէն բանից առաջ, մարդս զգում է արհամարհանքախառն յուսախաբութիւն: Կ'ուզէիր դիմացինիդ մէջ իդէալ յատկութիւններ գտնել, որ մղուէիր նմանուելու նրան, որ հոգեպէս կաղապարուէիր նրանով, եւ, յանկարծ… տկարութիւն: Ահա՛ արհամարհանքի եւ յաճախ բնազդական թշնամանքի պատճառը:

Բ

Առաջին հայեացքից անիմաստ է թւում նման վերաբերմունքը: Ինչո՞ւ է քննադատական մարդ արարածի վերաբերմունքը դէպի իր շրջապատը: Ինչո՞ւ հիանալ կամ թէ պարսաւել անպայման: Որովհետեւ մարդը - որպէսզի իրեն զգայ ու տեսնի մի իդէալ միջավայրում - փնտրում է կատարեալը, նա հիանում է գեղեցիկին, վսեմին, զօրեղութեան վրայ, ցանկանալով նրանց յաւերժացնել *կեանքում:* Իսկ պարսաւում է տկարը, տգեղն ու անկատարեալը, ձգտելով նրանց վերացնել, արտաքսել կեանքից:

Մարդս աւելի հակամէտ է գրաւուելու, քան թէ քննադատական վերաբերմունք ցոյց տալու: Եւ հէնց դրանումն է հոգեւոր մշակոյթի ինչպէս եւ պաշտամունքի գաղտնիքը:

Այժմ մեր հայեացքը դարձնենք ազգերի կեանքին: Այդտեղ էլ նոյն օրէնքն է գործում: Անհատների պէս, ազգերն էլ հիանում են հզօրներից եւ արժանաւորներից, եւ մղւում արհամարհելու, շահագործելու եւ հարուածելու տկարներին: Ուր կայ տկարութիւն՝ այնտեղ յարձակում եւ հարուած կայ: Գիտենք, թէ ինչպէ՛ս փոքր եւ անզօր ազգերը աճապարում են իւրացնելու լեզուն, գրականութիւնը, սովորութիւնները այն ազգի, որի ձեռքում տուեալ ժամանակամիջոցում գտնւում է առաջնութեան դափնին: Գիտենք նաեւ, թէ ինչպէ՛ս է արհամարհւում լեզուն, անունը, երկիրը տկար եւ անպայքարունակ ժողովրդի: Ուժեղ ժողովուրդը յաճախ ակամայից արհամարհում է թոյլին: Բայց երբ այդ վերջինն ուժեղացաւ, անգամ

միայն բարոյապէս, միայն արժանաւորութեամբ - եւ ոչ անպայման թուապէս - երկու ժողովուրդների միջեւ ստեղծւում է փոխադարձ յարգանք: Նմանները այլեւս չեն պատերազմում ամէն առթիւ. նրանք կարողանում են հասկացողութեան գալ եւ առանց զինեալ բախումների:

Եւ հէնց այդ է պատճառը, որ ժողովուրդները, *քաղաքականապէս* ազատագրուելուց առաջ, մարդկութեան արհամարհանքից ազատագրուելու ճիգեր են կատարում: Ահա՛ այսպէս, ցեղամիջեան պայքարի ճամբով, աստիճանական հոգեւոր հաւասարեցմամբ, ազգերը մի օր - շատ հեռաւոր ապագայում - պիտի իրականացնեն տիեզերական եղբայրութեան իդէալը:

Արդեօք այսօր հնարաւո՞ր է աշխարհը լցնող «ազգ եւ ազինք»ների համաշխարհային եղբայրութիւնը: Մարդկութիւնը որպէս «մի հօտ, մի հովիւ», որպէս «Ազգերի Դաշնակցութիւն»: Հնարաւո՞ր է դա այսօր, վաղը, մօտիկ ապագայում: Ո՛չ, ի հարկէ:

Թող այդ «ոչ»ը չսարսափեցնէ, այլ՝ զգաստացնէ, խրատէ մեզ: Կայ դարերի փորձը, կայ անցեալը, կայ մարդկային ցեղի պատմութիւնը, որոնք վճռական «ոչ»ով են պատասխանում այդ հարցին: Այդ հարցի պատասխանը փնտռէք եւ կը գտնէք նաեւ Հռոմի պատմութեան մէջ: Համաշխարհային թագաւորութիւնը չի կարող հաստատուել *հաւասարապէս չյարգուած* ժողովուրդների վրայ: Հռոմի ճակատագիրը կը բաժանի բոլշեւիկների երազած տիեզերական հասարակապետութիւնը, եթէ նրա մէջ մտնեն նաեւ այնպիսի ժողովուրդներ, որոնք իրենց բարոյա-մտաւոր անչափահասութեան պատճառով պիտի չդիտուին որպէս հաւասարապէս յարգուած եւ հաւասարազօր (հոգեւոր իմաստով) անդամը ամբողջութեան: Կան դեռ ժողովուրդներ, որոնք կարող են կոյր աղիքի դերը կատարել մարդկային ցեղի հոգեւոր օրգանիզմում: Այդ է պատճառը, որ համամարդկային եղբայրութեան երազը շարունակում է մնալ այդպիսին, եւ դա պիտի չիրականանայ, քանի դեռ կան եւ կը մնան հաւասարապէս չյարգուած ժողովուրդներ:

* * *

Ահա՛ թէ ինչո՞ւմն է մարդկային ցեղի տարբեր խմբերի բաժանման գաղտնիքը:

Խմբաւորումներ, որոնք գտնւում են մշտատեւ մրցման պրոցեսի մէջ եւ այսպիսով մղում տալիս եւ մղում ստանում՝ դէպի կատարելութիւն եւ հոգեւոր հաւասարեցում, դէպի գալիք համաշխարհային եղբայրացում:

Այդ մրցումը երբեմն հասնում է իր ամենաբարձր կէտին՝ պատերազմի ձեւի տակ, եւ ունի մի հատիկ նպատակ - կենսունակ ազգերը բարձրաց-

նել, հզօրացնել, հաւասարացնել նմանների հետ, իսկ անպայքարունակներին, իսկ կորչելու դատապարտուածներին օր առաջ դուրս շպրտել աշխարհից:

Որպէս ամփոփում՝ կրկնենք մէկ էլ, թէ ցեղամիջեան պայքարը մեծ եւ անողոք օրէնքն է կեանքի, անփոփոխ օրէնքը անհատի եւ ցեղերի զարգացման եւ կատարելագործման - պայքար, որի նպատակն է՝ թոյլ չտալ մարդկային անհատին եւ հաւաքականութիւններին կանգ առնելու, քարանալու մի որոշ կէտի վրայ, այլ՝ նրանց մտրակել ու մղել առաջ, մինչեւ որ պայքարող կողմերը կը հասնեն մարդկային իդէալի մի վիճակի, երբ այլեւս պայքարն սպանած կը լինի պայքարը, երբ կը դադրի պատերազմը՝ տեղի տալով կատարելագործուած ազգերի եղբայրութեան եւ համատարած խաղաղութեան առջեւ:

Իսկ մինչեւ այդ երանելի օրը՝ պատերազմը պարբերաբար կը փոխի իր պատմական տարազները միայն, բայց ոչ եւ էութիւնը:

Եւ ազգերը կը շարունակեն զինուել ու վերազինուել նորանոր արնոտ բախումների համար:

Մինչեւ այդ հեռաւոր օրը՝ մարդկութիւնը կը ծաղրէ եւ կ'ընդոտնէ իր ընտրանիի խաղաղասիրական ցնորքները:

Մինչեւ այդ՝ *վա՜յ պարտուածին…*

«Արաքս», 1930թ., թիւ 1, 2

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ

Ա

Ես էլ թագաւորազն եմ*

ՇԱՒԱՍՊ

...Պարզել անցեալի իրենց պարտութեանց պատճառները, նորէն մոռացութեան տալ պատմութեան խրատականը եւ ապա, նոր աղէտներից զարնուած՝ վերստին սերտել պատմութեան դասերը - ահա՛ անհեռատես ազգերի ճակատագիրը:

Որքան մոռացկոտ, այնքան տկար ու դժբախտ է դա: Մոռացա՞ւ իր պատմութիւնը, ասել է՝ անխրատ է ժողովուրդը եւ պատժի արժանի:

Միշտ էլ ուժեղին պիտի պատկանի երկիրը. Յովբի այդ խօսքերով է ազգերին խրատում պատմութիւնը:

Ուժեղը, ճշմարտօրէն ուժեղը, որ արժանաւորն է, արի՛ն: Ճշմարիտ ոյժը, որ ոգու ոյժն է: Հզօր ոգին, որ քանակօրէն տկար Հելլադայի առջեւ ծունկի բերեց անծայրածիր Պարսկաստանը: Դա իտալական փոքրիկ երկրամասի ձեռքը դրեց աշխարհի բախտը: Դա Տիգրան Մեծի Հայաստանը վերածեց հզօրագոյն թագաւորութեան: Քաղաքապետութիւնը, որ Սպարտա կը կոչուէր, մնաց անխոցելի, քանի դեռ - հաւատարիմ Լիկուրգոսի սահմանադրութեան - կը գերադասէր պատերազմներում կորցնել իր կեա՛նքը եւ ոչ թէ վահանը, Հռոմը, որ պատգամներ կ'արձակէր աշխարհին, ընկաւ, որովհետեւ նրա զօրավարները, որոնք մի ժամանակ կաւէ անօթներ կը գործածէին, այլեւս կը դժուարանային իրենց կաշառել փորձող ազգերի ներկայացուցիչներին ասելու. «Կը գերադասենք իշխել արծաթեայ եւ ոսկէ անօթներ գործածողների վրայ, քան թէ ոսկի եւ արծաթ ունենալ»: Ընկաւ եւ Հայաստանը, որովհետեւ անմիաբանութեան ոգին մեր ժողովրդից խլել էր իր անօրինակ արիութիւնից ազատօրէն օգտուելու կարելիութիւնը:

Երբե՛ք, ո՛չ ազգային թագաւորութեան դարերում, ո՛չ էլ այն ժամանակ, երբ Հայաստանը *դաստակերտ կայսերաց եւ երկրորդ թագաւորութիւն պարսից* կը կոչուէր, երբե՛ք տիրութեան ոգին չտկարացաւ Հայութեան մէջ:

Ճիշտ է սակայն եւ այն, որ այդ ձիգ դարերի ընթացքում չեղաւ մի

---

* *Հայոց Պատմութիւն:*

դէպք, որ հայութիւնը ընտանի պատճառներով կարողանար լիուլի օգտուել այդ ոգուց:

Հենց սրանում է մեր ժողովրդի ողբերգականութիւնը:

Բ

Արիութի՛ւն:

Միակ ճշմարիտ կրօնը, առանց որի ոչինչ արժեն կրօնները:

Կեղծ է ամէն մի գրականութիւն, բարոյական, քաղաքական վարդապետութիւն, որ ոյժ եւ արիութիւն չէ ներշնչում իր դաւանողին:

Դատապարտելի է ամէն մի դպրոց, եկեղեցի, կուսակցութիւն, որը արիադաւան եւ արի չէ դարձնում մարդը որպէս անհատ եւ հաւաքականութիւն:

Արիութի՛ւն - միակ ճշմարիտ բարոյականը:

Կորցնելով իրենց արիութիւնը - իմա իրենց դրական բոլոր առաքինութիւնները - ժողովուրդները կորցնում են իրենց գոյութեան բարոյական իրաւունքը: Անարին կորցնում է պատմութիւնից իրեն տրուած մասնաւոր առաքելութիւնը՝ իրագործելու մարդկային ցեղին օգտակար լինելու կարելիութիւնը: Այդպիսին դառնում է ընդունակ միայն անստեղծագործ եւ անփառունակ կեանքի, կարօտ արտաքին օգնութեան: Նմանը ժամանակի ընթացքում դառնում է միջազգային պարազիտ, մինչդեռ ժողովուրդների կոչումն է լինել միջազգային արժէք եւ ազդակ:

Այդ տխուր եւ անարգական վիճակից ազգերին հեռու է պահում արիապաշտութիւնը:

Արիութի՛ւն, ժողովուրդներին բարոյապէս նեխելու վտանգից փրկող հոգեւոր աղն է դա:

Երբ կայ դա՝ չկայ վատը, ստորը, կամ առնուազը աննշան է դառնում սրանց ազդեցութիւնը անհատի թէ ժողովուրդների կեանքում:

Բարոյական արեւ է դա, որ կ'առողջագործէ իր շրջապատը: Երբ կայ դա՝ կայ ե՛ւ մեծագործութիւն, ե՛ւ վեհութիւն, ե՛ւ անձնուիրութիւն: Պակասո՞ւմ է դա՝ այլեւս ոչինչ արժեն բարձր գաղափարները, ծրագիրները, տեսութիւնները, քանզի պակասում է նրանց իրականացնող ոյժը: Անարիութի՛ւն, ասել է՝ հոգեւոր սնանկութիւն:

Անարին ոչինչ է աւելացնում աշխարհի անկորնչելի հարստութեան: Դա յաճախ բարոյական մուրացիկ է, այլոց ճիգերից օգտուող: Անարին չէ ծառայում մարդկային քաղաքակրթութեան:

Յանձին Ալեքսանդր Մեծի՝ արիութիւնն էր, որ յունական մշակոյթը Ասիա մտցրեց: Դա էր - նախավկաների յաղթական արիութիւնը - որ Նազովրեցու վարդապետութիւնը պարտադրեց բարբարոսներին: Դա էր,

որ նոր հորիզոնների տէր դարձրեց մարդկութիւնը, սանձելով ծովերի ամեհութիւնը, մեղմելով դաժանութիւնն անապատների եւ նուաճելով օդը:

Արին է յանդգնողը, անձնազոհը, մարդասէրը:

Արիութիւնն է շարժում պատմութեան ընթացքը:

Մեծ սիրտ, ազնիւ նկարագիր, վսեմ մտածում - արիութեան հարազատներն են այդ բոլորը, ճառագայթները միեւնոյն արեւի:

Արիութի՛ւն: Կորցնելով այդ բարձր յատկութիւնը՝ ժողովուրդները կորցնում են իրենց կարողութիւնները անկաշկանդ կերպով զարգացնելու եւ կատարելագործելու կարելիութիւնը: Անարիանալով՝ նրանք ընկնում են օտար լծերի տակ, կորցնում իրենց անկախութիւնը - միակ հոգեւոր մթնոլորտը, որի մէջ միայն հնարաւոր է ցեղերի առանձնայատուկ հանճարի փթթումը:

Գ

«Դուք ինքնին գիտէք զքաջութիւն աշխարհի Հայոց»*:

Այդ դիւցազնական առաքինութիւնը երբեք չտկարացաւ մեր ժողովրդի հոգու մէջ, մինչեւ մեր քաղաքական անկախութեան վախճանը, որից յետոյ հայ ձեռքը պիտի զրկուէր դարերով զէնք կրելու իրաւունքից:

Հայութիւնը չգիտէ իր պատմութիւնը, ասել է՝ չգիտէ օգտուել իր պատմութիւնից - ահա՛ իր դժբախտութեան ակն ու աղբիւրը: Նա ծանօթ չէ իր արիական անցեալին, իր հաւաքական դիւցազնականին եւ դրա համար էլ - յուրախութիւն իր գոյութեան թշնամիներին - նա հաւատում է ամէն ինչի, միայն ոչ իր սեփական բազկի ոյժին, դրա համար էլ իր ամբողջութեան մէջ նա պարտուողական է: Նրա համար Աւարայրի Մամիկոնեանը աւելի նահատակ է, սուրբ, քան ռազմիկ եւ հերոս:

Պատմագիտօրէն տգէտ՝ նա իր նախնիքներին համարում է իրեն բնութենակից, որոնց, սակայն, հոգւով այնքան կը նմանի, որքան աղաւնին՝ արծուին: «Մեզ պէս անռազմասէր է եղել եւ հին հայը, այլապէս ինչո՞ւ պիտի կործանուէր մեր թագաւորութիւնը»,- այսպէս է տրամաբանում օրուայ հայութիւնը - մասնաւորապէս նրա հակայեղափոխական մասը - եւ իրեն ոչինչ չհամարելով, ոչինչ է ուզում աշխարհից, բացի օտար դռներում իր անստեղծագործ գոյութիւնը քարշ տալու իրաւունքից:

Նա չգիտէ, որ հայկական բոլոր արքայացեղերը կործանուել են ո՛չ թէ արիութեան պակասի պատճառով, այլ՝ մեր ցեղի ղեկավար տարրերի առանձին երկպառակութիւնների եւ այլ պատճառների երեսից: Ինքնակործան են եղել գրեթէ մեր բոլոր թագաւորութիւնները:

---

* *Եղիշէ:*

Նա ոչինչ, կամ շատ քիչ բան գիտէ իր ցեղի հնաւանդ ռազմունակութեան ու ռազմական մեծագործութիւնների մասին, եւ դրա համար էլ անհաւատ է դէպի իր բազուկը, անյոյս՝ դէպի իր ապագան: Նա չգիտէ, որ հայ արիութիւնը հայոց աշխարհի համար դարերով կատարել է հոգեւոր շանթարգելի դեր՝ չեզոքացնելով ու զինաթափելով բազում արտաքին վտանգներ: Եթէ Հայաստան արշաւող թշնամի հորդաները ծով ալիքներ էին, ապա հայկական արիութիւնը ծովափեայ ժայռ էր, որին կը զարնուէին ու կը ցնդէին արտաքին թշնամութեան յորձանքները: Օրուայ հայութիւնը, այո՛, չի՛ ճանաչում իր դասական արիների համաստեղութիւնը. նա պաշտամունք չունի դէպի անմահ արիները. նա չի՛ դաստիարակւում նրանց մեծագործութիւններով - ահա՝ մեր դժբախտութիւնը:

Եւ մեղաւորը ժողովուրդը չէ, այլ՝ այն տարրը, որի ջանքերով ցեղային ինքնաճանաչութեան է բերւում ժողովուրդը - մեր մտաւորականութիւնն է մեղաւոր:

Մէկից աւելի անգամ դժբախտութիւն եմ ունեցել լսելու ազգային պատմութիւն դասաւանդող հայ ուսուցչին եւ խորապէս ցաւել եմ մեր աշակերտող սերունդի համար: Մի կենդանի մեռել, մեռեալ շեշտերով խօսում է մեռելների մասին: Պատմութիւնը նրա համար անհոգի կմախք է եւ ո՛չ թէ բաբախուն սիրտ: Նա հետեւակ գիտելիքներ ունի մեր պատմութեան այս կամ այն շրջանի մասին. գիտէ ցամաք անցքեր, թուեր, անուններ, այսքանը միայն: Նա սիրտ չունի եւ սիրտ չէ՛ դնում իր դասերի մէջ: Միեւնոյն տրամադրութեամբ նա խօսում է ե՛ւ Տիգրան Մեծի, ե՛ւ Վեստ Սարգիսի մասին:

Հպարտանքից չեն դողում, չեն լայնանում նրա ռունգերը, երբ պատմում է, թէ ինչպէ՛ս պարսից արքան, հայ սպարապետի անօրինակ քաջագործութիւններից հիացած, ամէն անգամ երբ գինու բաժակը շրթունքներին կը մօտեցնէր՝ կը դժուարանար չբացագանչել՝ «Ճերմակածին գինի խմէ»:

Ամօթի զգացումը չէ՛ այրում նրան, երբ իր խօսքը հայ խռովասէր նախարարի չարագործութիւնների մասին է:

Սեղմ ասած՝ ստեղծագործ վերապրում չէ՛ նրա աւանդած պատմութիւնը, այլ՝ անհոգի հնախօսութիւն, քանզի իրեն կը պակսի ազգային հպարտանքի նուիրական զգացումը:

Գերազանցօրէն հայրենապաշտ - ահա՛ թէ ինչպիսի՛ն պիտի լինի պատմութեան դասատուն: Այդպիսին չէ՞ - ասել է՝ նրա տեղը դպրոցը չէ: Ասել է՝ բարոյապէս ազատ չէ իր ձեռքն առնելու մեր ցեղի կեանքի սրբազան գիրքը:

«Արաքս», 1930թ., թիւ 25, 26, 27

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԱՅՔԼ ԱՐԼԷՆԻՆ

«Զատեցի՞ր իրականութիւնը ճշմարտութիւնից՝ իրականութիւնը դառնում է կոյր, իսկ ճշմարտութիւնը՝ խելագար»:

Ա

Բաներ կան, միստր, որոնք յաւիտեան պաշտելի են - Աստուած, Հայրենիք, Մայր - որոնց մասին մարդ արարածը, եթէ հոգեպէս խաթարուած չէ, չի՛ կարող առանց կրօնական յարգանքի խօսել: Այդ տարրական պաշտամունքի դէմ, խօսելով Հայաստանի մասին, դուք մեղանչել էք կոպտօրէն:

Ամերիկեան մի լուրջ ամսագրի էջերէն դուք արհամարհանքի ծանր քարեր էք նետել մեր ցեղի հասցէին: Ձեզ՝ «պատուով մեռնելու անընդունակ ցեղի մը զաւակ»ը համարելով, դուք բացագանչել էք աներկիւղածօրէն. «Դարերով անարգ նահատակութեանց եւ գծուծ փախուստների ժողովուրդ... ո՛վ Հայաստան, ո՛վ տգեղ դարպասող», եւ այլն:

Այսպէ՛ս, հայածին Մայքլ, այսպէս էք խօսել հայութեան մասին:

Ձասե՞մ՝ "Well roared lion" - լա՛ւ ես մռնչել, առի՛ւծ:

Ա՛հ, պիտի ուզէի, որ ձեզ ծնող ժողովրդի նուաստ վիճակը թելադրած լինէր ձեր հիստէրիկ բացագանչութիւնները: Դժբախտաբար, դա ո՛չ հայրենասիրական de profundis է, ո՛չ էլ պոռքկում՝ ի տես հայութեան անկեալ վիճակի: Աւելի քան պարզ է ձեր ծանօթ տողերի ներքին իմաստը: Գրչի պչրանք, եւ ո՛չ աւելին: Ձեր գրիչն այդ դէպքում շարժման մէջ է դրել ձեր վիրաւորուած եսը եւ ո՛չ թէ ձեր ցեղի ճակատագիրը: Կը խոստովանիմ, եթէ ձեր չանգռած տողերը - ի դէպ՝ սիրային մի յիմարական վէպի մէջ ի՞նչ գործ ունին Հայաստանի ու հայութեան վերաբերող տողերը - եթէ նրանք լոյս աշխարհ ընկնէին մեր ժողովրդի քաղաքական թէ ռազմական այս կամ այն պարտութեան առթիւ, ինձ հետ հազարները պիտի ծափահարէին ձեզ: Այսօր, սակայն, նրանք զզուանք են շարժում, որովհետեւ հայութեան անմխիթար վիճակը չէ, որ ծնունդ է տուել ձեր վատահամբաւիչ տողերին, այլ քանզի - ձեր իսկ խօսքով - «Երիտասարդ մը* դարպասելու եկած է, բայց իր բարեկամուհին որիշի հետ գացած է»:

Ի՜նչ գռեհիկ շարժառիթ՝ իր ցեղի դէմ յարձակուելու համար:

---

*Ինքը՝ հեղինակը:

Այսպէս, Հայութիւնը՝ «ատամները թափած ծերունի՞»: Այո՞:

Եւ ինքնանուաստացումի այդ գարշելի պրոպագանդը մի այնպիսի ժամանակ, երբ աշխարհը կը շարունակէ զուարճանալ մեզ անիրաւելով եւ հալածելով: Եւ ինքնաթքումի այդ փորձը Լլոյդ Ջորջի եւ Ուիլսընի հայրենիքներո՞ւմ, ուր հասարակական կարծիքը կարող է ոչ աննշան դեր խաղալ մեր դատի այս կամ այն ելքի համար:

Գիտէք, չէ՞, որ Ռիշըլիէօն սովորութիւն ունէր իրեն ներկայացած զեկուցագրերի վրայ միայն երեք բառով յայտնել իր վճիռը, vidi, legi, probavi*: Տեսայ ձեր տողերը, միստր, կարդացի, գարշեցի: Ներեցէ՛ք, խնդրեմ, եթէ ձեր գրչէն գարշէ ամէն ճշմարիտ հայ: Ի՜նչ, չգիտէ՞ք, որ հայրենիքի մասին պիտի չխօսել, եթէ համոզուած չէք, որ ձեր խօսելուց յետոյ դա աւելի գեղեցիկ, ցանկալի, աւելի պաշտելի պիտի դառնայ: Չգիտէ՞ք, stulte, stude!:

Ժողովուրդների կեանքն իրենց մէջ կը բաժանեն Յաջողութիւնն ու Ձախորդութիւնը, իբրեւ երկու ձեռքերը մի ինչ-որ խորհրդաւոր ոյժի, օրէնքի, աստուածութեան: Արդեօք վիպագիր Արլէնը չգիտէ՞, որ ստրկութեան շղթաներ ու ցնցոտիներ կրելուց առաջ մեր ցեղն էլ է կրել իր անկախութեան ու հզօրութեան ծիրանին, իր փառաց զգեստը: Իր մեծութեան օրերին, երբ Տիգրան աշխարհակալի բանակները կ'արշաւէին դէպի Արաբիա, Բաբելոն եւ աւելի հեռուները, եւ մէկից աւելի հարկատու ազգեր սարսափով կ'արտասանէին հայ անունը, հայն էլ վերէն վար կը նայէր աշխարհին: Եւ, ի հարկէ, հայագիտօրէն տգէտ Մայքլը չը գիտէ, որ Բիսմարկէն ու բազմազգի Բիսմարկներէն շատ դարեր առաջ հայ պետական մարդն է ասել. «Մարդկային գոյութեան բարձունքներում ուժեղն է արդարը»**:

Այո՛, կար ժամանակ, երբ Հայաստանն աւելին էր, քան ծովէ ծով մի երկիր, երբ յաջողութեան վարդագոյն մատները պսակ կը հիւսէին հայ յաղթական ճակտին: Բայց, աւա՜ղ, արեւի տակ ի՞նչ կայ կայուն: Հրթիռային վերելք տեսած ազգը պիտի ունենար իր շռնդալի անկումը: Նա աստիճանաբար պիտի կորսնցնէր իր հզօրութիւնը, մինչեւ որ մի օր էլ իրեն կը զգար պայմանընկալի եւ ապա լծակիր ստրուկի վիճակում, մինչեւ որ մեր հարեւանները իրար մէջ մեր ցեղի «զգեստները կը բաժանէին»:

Պատճառնե՞րը: Թող չանհանգստանայ օտարալեզու Արլէնը, այդ մասին տարբեր կարծիք չունիմ եւ ես: Այո՛, Հայաստանը անձնասպանութեամբ վերջ տուեց իր քաղաքական գոյութեան: Նա պարտուեց իր

---

* *Տեսայ, կարդացի, հաստատեցի: Հեղինակը:*

** *Տրդատ Մեծին է պատկանում այդ ասութիւնը:*

ներքին անհամերաշխութեան դեւէն, եւ ապա արտաքին թշնամիներէն: Նա ինքնակործան եղաւ: Այդ մասին զայրոյթի խօսքեր ունիմ եւ ես: Բայց ինչո՞ւ ընդունայն քրքրել պատմութիւնը: Կ'ընդունիմ, թէ հայութիւնը իր ահաւոր դժբախտութեան մէջ բարոյապէս ազատ չէ ասելու իր մասին՝ մեղքն իմս չէ, որ քաղաքականապէս կը կաղամ դարերով:

Այսքանը մեր անցեալի մասին:

Բ

Գիտէ՞ք, որ ժողովուրդների յաւիտենականութիւնը պայմանաւորուում է նրանց ստեղծագործութեան յաւիտենականութեամբ: Դեռ կան, կ'ապրին Հայն ու Հայաստանը, ասել է՝ հայութիւնը արեւելեան ամենավայրագ բարբարոսութեան լծերի տակ իսկ - անշուշտ, իրական կարելիութեան սահմաններում - եղել է ստեղծագործ:

Ճիշտ է, որ հայութիւնը, իր գերիշխան վիճակը կորցնելէ յետոյ, ընթացել է ամենաթոյլ դիմադրութեան գծով: Աւելին՝ եղել են պատմական մոմենտներ, երբ դա, ինչպէս հրէութիւնը, հարկադրուած է եղել գիտակցօրէն զոհելու իր արժանապատուութիւնը յանուն իր գոյութեան եւ անմեռ արժէքների պահպանման: Սակայն, ճշմարիտ է եւ այն, որ Հայաստան Երկրի վրայով չի անցել մի հատիկ դար, որի ընթացքում գերիշխան կեանքի յոյսերով ընդվզած չլինէր հայութիւնը: Նրա մտաւորական ընտրանին վերջին անգամ - կէս դար առաջ - իր ժողովրդի վերադաստիարակիչը լինելէ առաջ, նրա անցեալ մեղքերի քաւիչը հանդիսացաւ: Երբ նա ձեռքը կը զարկէր մեր ազատագրական գործին, խորապէս կը գիտակցէր, թէ դարերի ստրկութիւնը մեծապէս տկարացրել է հայ զանգուածների ազգային ինքնագիտակցութիւնը: Սակայն, նա կը հաւատար մեր ազգային վերածնունդին, որը պիտի հոգեփոխէր մեր ժողովուրդը իր ամբողջութեան մէջ:

Եւ տարիներով հնչեց նրա մարգարէաշունչ խօսքը: Ե՛ս եմ ճշմարտութիւնը, իմա՝ ճշմարիտ աշխարհայեացքը, ներցեղային բարոյականը, անկախութեան կրօնը: Այսպէս տարիներով ու տարիներով, Հայոց աշխարհի երկարութեամբ եւ խորութեամբ տարածուեց Յեղափոխութեան զարթուցիչ կանչը: Բայց, աւա՜ղ, տխուր իրականութիւնը չուշացաւ զգացնել տալու, թէ օտար լծերի ազդեցութիւնը մեր կարծածէն աւելի մեծ աւերածութիւններ է առաջացրել հայ հոգու մէջ: Յուրախութիւն մեր ցեղի գոյութեան թշնամիների, որոմնացան քարոզներ լսուեցին Հայ յեղափոխութեան հէնց առաջին տարիներում: Դա արտայայտութիւնն էր մեր ժողովրդի որոշ տարրերի ստրկական հոգեբանութեան: Այդ քանդիչ տարրերը չուզեցին հասկանալ - չեն ուզում եւ հասկանալ այսօր - թէ

թշնամանել հարազատ եղբօր դէմ հէնց այն պատճառով, որ նա իր կուսակցութեան փարախէն չէ՝ կը նշանակէ տկարացնել արտաքին թշնամու դէմ ուղղուած մեր հարուածի թափը: Հերձասիրութեան հին դեւն էր դա, որ տարբեր անուան ու ձեւերի տակ կը շարունակէր օտարի հայասպան դերը, մեծապէս դժուարացնելով մեր վերածնունդի գործը: Կար ընտանի թշնամին, որի երեսէն հայ յեղափոխական տարրը պիտի հարկադրուէր ուժաթափ լինել նաեւ ներքին ամօթալի պայքարներում:

Տեսնե՛լ ու զգա՛լ, թէ ինչպէս մտակոյր Հայը զէնքեր է դարբնում իր հարազատ եղբօր դէմ՝ ընդհանուր թշնամու գործը հեշտացնելու համար - ա՜հ, այդ զարհուրելի ողբերգութիւնը դեռ այսօր էլ բաժինն է հայ հայրենասէրի: Դեռ այսօր էլ հայութեան քաղաքական ճակատագրէն աւելի դառն է նրա ներքին ճակատագիրը: Գիտենք - ֆիզիքական ցաւ պատճառելու աստիճան պարզ է - որ օրուայ Հայաստանը արտաքին թշնամու համար «դուռ մընն է՝ փականքը կոտրած»: Գիտենք, որ հայ մտաւորականութեան մի մասը - դաւանողն ու գերին անձնակենտրոն մօրալի - կը շարունակէ սեւ թելերով հիւսել հայութեան ճակատագիրը: Կասկածէ դուրս է եւ այն, որ հայութեան տարագիր կէսի համար - եթէ օր առաջ չհոգեփոխուեց - սակաւաթիւ տարիներ են պէտք, որպէսզի նրա կեանքում մահուան տրագիզմը տեղի տայ հոգեւոր ինքնասպանութեան առջեւ, որպէսզի հայ homo-ն դառնայ homunculus եւ մեռնի ապազգայնացմամբ: Գիտենք եւ այն, որ տարաբնակ կէսի կապոյտ կոտորածը խնդրական պիտի դարձնի գոյութիւնը հայութեան երկրորդ կէսի, որ կառչած կը մնայ Արարատի փէշերին:

Այս է, միստր Արլէն, այսպէս մահօրէն աղէտալի եւ տխուր է հայութեան ճակատագիրը: Եւ հասկանալի է դա: Պատմութիւնը միշտ էլ որդիների մէջ պատժում է Հայրերի մեղքերը, հի՛ն:

Գ

Սակայն, ի՞նչ անել: Ինչպէ՞ս կ'ուզէիք սրբագրել հայ հոգեբանութիւնը, եւ նրա միջոցաւ՝ մեր հաւաքական ճակատագիրը, որպէսզի նա պատմութեան գարշապարին կառչած չմնայ:

Ձեր ծանօթ տողերո՞վ, որոնց ամէն մի տառը թեթեւամիտ արհամարհանք է շնչում: Միամտութի՛ւն: Հայհոյելով չէք բժշկի հիւանդը: Մոռացե՞լ էք անգլօսաքսոն գրողի իմաստուն խօսքերը. «Չլինի թէ սատանան հարուածելու ժամանակ վիրաւորէք նաեւ աստուածութիւնը, որ կ'ապրէ մարդուս մէջ»:

Չէ՞ք ընդունում, որ ձեր գրչի պչրանքով խորապէս վիրաւորել էք սրբազան հայկականութիւնը հայութեան մէջ:

Ձեր խօսքը Հայաստանի մասին, միստր, այնքան յոխորտ է, որ կարծէք Ձեր ցեղի համար Հերակլէսի տասներկու մեծագործութիւնները կատարած լինէիք: Խօսել էք իշխանութիւն ունեցողի պէս, եւ ծիծաղելի դառել, որովհետեւ դեռ ո՛չ զոհաբերած, ո՛չ էլ տառապած էք այն ժողովրդի համար, որին բարոյապէս սնանկ կ'անուանէք: Ձեզ համար ներելի չէ, եթէ չգիտէք, որ իրենց ցեղի ստուերային կողմերի վրայ յարձակուելու իրաւունք եւ պարտականութիւն ունին միայն նրանք, որոնք տեսնում, հասկանում եւ սիրում են իրենց ժողովուրդը իր բովանդակ մեծութեան եւ տկարութիւնների, իր բովանդակ ողբերգութեան մէջ:

Ձեր գրչէն ամաչելու համար բարի եղէք վերյիշելու Իսրայէլի վշտակիր առաջնորդներին:

«Նրա - մարգարէի - սիրտը կծկւում է ցաւից, նրա շրթունքները լի են մերկացումներով. նրա աջը բարձրացել է ցոյց տալու պատուհասը, որ գալիս է. նա տառապում է իր ժողովրդի համար, եւ որովհետեւ սիրում է նրան, յարձակւում է նրա վրայ»:

Ահա՛ Եսային, որը Եհովայի բարկութեամբ կը սպառնայ իր ժողովրդին.

- «Անոր - Իսրայէլի - պալատներուն մէջ փուշեր ու անոր պարիսպներուն վրայ եղինճ ու եկքան պիտի բուսնին: Եւ շագալներուն բնակարան պիտի ըլլայ: Հոն նեռ օձը իր բոյնը պիտի շինէ... Եւ ուրուները հոն պիտի ժողվուին...»

Ինչո՞ւ:- Որովհետեւ,- աւելացնում է բանաստեղծ-մարգարէն,-որովհետեւ, «քո արծաթդ կղկղանք դարձաւ», որովհետեւ «գինիիդ մէջ ջուր է խառնուած»:

Այսպէս է վայում անգերազանցելի բանաստեղծը ու նոր վայերով սպառնում, որովհետեւ Իսրայէլն սկսել է ունայնութիւններին «խունկ ծխել»:

Բայց ահա՛, հարուածելէն յետոյ, մարգարէի վշտալի սիրտը կանչում է սիրով.

- «Արթնցի՛ր, արթնցի՛ր, քո զօրութիւնը հագիր, ո՛վ Սիոն. քո փառաւոր հանդերձները հագիր... Թէեւ աղիւսներն ինկան, մենք տաշուած քարերով պիտի շինենք...»:

Այո՛, այսպիսի՛ն է հայրենապաշտ առաջնորդը: Նա միայն մերկացնող չէ, այլ եւ՝ յուսատու: Նա չի՛ նզովեր միայն, այլ եւ՝ կը գօտեպնդէ:

Ահա՛ եւ Երեմիան՝ հրէութեան ողբերգուն.

- «Քո բոլոր թշնամիները իրենց բերանը քեզ վրայ բացին»,- ցաւից ու ամօթից գալարւում է մարգարէն: Նա կու լայ ու կը սպառնայ, որովհետեւ իր ժողովրդի գլխից «փառաց թագն է ընկել»:

«Մեր հայրերը մեղք գործեցին եւ չկան, ու անոնց անօրէնութիւններուն պատիժը մենք կը կրենք:

Վիշապներն անգամ ծիծերնին կը հանեն ու իրենց լակոտներին կաթ կու տան.

Իմ ժողովուրդիս աղջիկը անապատի ջայլամներուն պէս անգութ եղաւ.

Կաթնկերին լեզուն ծարաւութենէն իր քիմքին փակաւ.

Տղաները հաց ուզեցին, բայց անոնց ջարդող չկար.

Կարմիր հագուստներով մեծցողները աղբանոցներ գրկեցին.

Ու սուրէ մեռածները անօթութենէն մեռածներէն երջանիկ էին»:

Այսպէս դառնադառն է մարգարէի խօսքը, որպէս ազգային ամօթանքի ու վշտի արտայայտութիւն:

Բայց, քանզի նրա կոչումը միայն ողբալը չէ, ահա՛, Եհովայէն ներշնչուած՝ նա ճգնում է վերստին Պաղեստինեան յոյսերով զինել հրէութիւնը.

- «Պիտի սպառեմ այն բոլոր ազգերը, որոնց մէջ քեզ ցրուեցի, բայց քեզ պիտի չսպառեմ»:

Այսպէս հայրենակրօն էին Իսրայէլի հոգեւոր առաջնորդները: Նոյնն էր նրա եւ մօտաւոր անցեալի մտաւորական ընտրանին, քաղաքական խորհողը, քերթողը, գիտնականը եւ այլն:

«Ես կ'ապրեմ ծայրայեղ արեւմուտքում, բայց Արեւելքում է իմ սիրտը»,- կ'երգէր Իսրայէլի Ահարոնեանը - Եուդա Ալեւին:

Հապա Բեալի՞կը: Ա՜հ, սրանց նման պիտի սիրել Հայրենիքը՝ ապագայի Սիոնը կառուցել կարողանալու համար:

Հապա Պասմանի՞կը - Ձեզ նման օտարալեզու, որին իր ազգային ուղղափառութիւնը պիտի թելադրէր հետեւեալ հպարտ պարբերութիւնը. «Աշխարհը մեզ կը հալածէ մեր անցեալ մեծութեան համար»:

Ահա՛ եւ Իսրայէլի օրուայ առաջնորդութիւնը՝ Վայցման, Սոկոլով, Արտուր Հանքկէ, Վարբուրգ, Եակոբսոն եւ այլն:

Սիոնիստական միջազգ. կազմակերպութեան հոգեւոր բարձունքները, որոնց թիկունքում միշտ էլ կանգնած են աշխարհածանօթ միլիարդատէր Շտրաուսները, Վարբուրգները, Ռոտշիլդները եւ այլն: 1919-ին, Judische Rundschau-ի էջերէն սիոնիստների պետն այսպէս կը խօսէր համաձայնական պետութիւններին. «Դուք ուզում էք թէ ոչ՝ մենք կը լինենք Պաղեստինում: Դուք կարող էք փութացնել կամ յետաձգել մեր մուտքը, ձեզ համար, սակայն, լաւ պիտի լինի, եթէ դուք օգնէք մեզ, *այլապէս մեր աշխարհաշէն ոյժը կը դառնայ քանդիչ,* որը կը ստիպէ ցնցուելու ողջ աշխարհը»:

Այս բարձր մտաւորականի սպառնալիքով էր - արուած հրեայ դրամատէրերի անունից - որ ձեռք բերուեց Բալֆուրեան ծանօթ յայտարարութիւնը:

Այդ դէպքէն մի տարի անց, Լոնդոնում գումարուած մի հրէական համագումարում, ձեզ նման, միստր, օտար լեզուով գրող Մաքս Նորդաուն, հայրենասիրական գինովութեան մէջ կը բացականչէր՝ Le jour de gloire est arrivé! Սիո՞նը, Սիոնը կը վերականգնէր: Գիտէ՞ք, որ դեռ երէկ մեծ ազգերը կը փորձէին աշխարհահռչակ Այնշտայնի հանճարը սեփականել: Գերմանական հրեայ է,- կը պնդէր գերման մամուլը: Ո՛չ՝ ֆրանսական է: Չէ՛, չէ՛, իսպանական է: Մեծանուն գիտնականին կը մնար վերջ տալ անտեղի վէճին, եւ նա թալմուդականին յատուկ հպարտանքով յայտարարեց՝ ես հրեայ եմ:

Օրեր առաջ, թերթերը գիտութեան այդ տիտանի մասին գրեցին. «Այնշտայնը սինագոգում»:

Դ

Կար ժամանակ, «երբ Հրէաստանի ամբողջ հարստութիւնը մի խուրձ խոտ էր եւ մի կողով»,- կը ծաղրէր Եուվենալը: Իսկ Մարցեալը կը չարախնդար. «Հրեան ողորմութիւն է խնդրում, լուցկի ծախում»:

Դարեր անցան: Բեւեռէ բեւեռ ցրուած մեծ թափառականը ապրեց օտար հասարակութեանց խոռոչներում, դարերով կուրծք տուեց ոչ-հրեայ մարդկութեան թշնամանքին, բայց եւ այնպէս՝ իրեն գահընկեց չյայտարարեց: Նա մնաց հոգով թագաւոր ազգ: Նա - դոգմաների եւ Մեսեանական Յոյսի ժողովուրդը - օտար ժողովուրդների ծոցում ապրեց որպէս «հիւր եւ թշնամի», եւ անխօս կրկնեց մարդկութեան. «Չէ՛, Աստծու, Աշխարհի եւ Մարդու մասին ունեցած իմ ըմբռնումէն մի յովտ անգամ չեմ զիջեր քեզ»:

Այսպէս ապրեց Հրէութիւնը, մինչեւ որ մի օր էլ իր իշխանութիւնը կը տարածէր աշխարհի մեծ մասի վրայ:

Նա յաղթեց, որովհետեւ նրա մօտ գերագոյն հակակշիռը պատկանում է ազգին, որը ներկայացւում եւ արտայայտւում է իր ընտրանիի միջոցաւ: Նա յաղթեց, որովհետեւ նրա մէջ պարտականութիւն է անհատական երջանկութեան ձգտիլը, սակայն, յօգուտ Իսրայէլի բարօրութեան. գովելի է փառասիրութիւնը, բայց Իսրայէլի փառքի համար. արդար է հարստանալու տենչը, հարստութիւնը, բայց դա ո՛չ թէ որպէս նպատակ, այլ որպէս միջոց՝ զայն Իսրայէլի դատին ու ազդեցութեան ծառայեցնելու համար: Եւ հէնց այդ է պատճառը, որ հրէութիւնը այսօր տէր է մի անպարտելի ոյժի - *ոսկու եւ խելքի եղբայրութեան* - իր ծոցի մէջ: Այսպիսով, միայն նա յաջողեց իր մեծագոյն դժբախտութիւնը, իր արմատական տարտղնումը - կարծէք ալքիմիաբար վերածել մեծ օրհնութեան իր համար: Այսօր նա տէր է մի այնպիսի հզօրութեան - ոսկի, հեղինակութիւն, ոյժ - որը նրա

համար երազ պիտի մնար անգամ Տիտոսէն կործանուած անկախ Հրէաստանի մէջ:

Գաղտնիքը գիտէ՞ք: Իր աննուազ պաշտամունքը դէպի Սիոնը, որով եւ որի համար ապրեց Աբրահամի ցեղը: Իր բոցեղէն հայրենաբաղձութիւնը, որը ո՛չ թէ միայն հայրենազուրկ Հրեան Հրեայ պահեց, այլ եւ զայն դարձուց մարդկութեան ամենահարուստ, ամենաիմաստուն եւ ամենայեղափոխական մասը:

Այժմ իր բախտի կառքը կը քաշեն ե՛ւ բոլշեւիզմը, ե՛ւ ֆրանմասոնութիւնը, ե՛ւ միջազգային բորսաները, դրամատները, մամուլի մեծագոյն մասը եւն.: Բայց քինաթաքոյց ազգը չբաւականացաւ իր յաղթանակով: Հոգեպէս միշտ քաղցած մարդկութեան նետած իր մէկ-երկու նորանշան գաղափարներով, ազգերի ծոցի մէջ նա վառեց դասակարգային արնոտ պայքարի կրակը, եւ այսօր - տէր աշխարհի ոսկու երեք քառորդին - նորանոր պատերազմների եւ ընկերային յեղափոխութեանց ուրուականով կը սպառնայ աշխարհին: Այսպէս, դարերով տանջուածը պիտի դառնար ազգերի տանջիչը: Ու միշտ հաւատարիմ իրեն՝ նա հանճարեղ է ե՛ւ տանջելու մէջ:

Նա դարեր ու դարեր տեւող իր անզօրութեան եւ նուաստացումի վրէժն է լուծում:

Եւ իրաւունք ունի:

Արդեօք, այժմ պարզ չէ՞ պատասխանը ձեր հարցին, թէ ինչպէ՞ս «հրեաները տէր ու տիրական եղած են աշխարհի»:

Իսկ հայութի՞ւնը, որը կ'ուզէիք, որ մեռած լինէր «Նինուէի, Կարկամիշի եւ Բաբելոնի հետ», աւա՜ղ, դա շարունակում է մնալ «Արարչագործութեան տարագիրը»: Այլ կերպ չէր էլ կարող լինել: Ու գիտէ՞ք թէ ինչո՛ւ: Այդ «ինչու»-ին որպէս պատասխան՝ երկու խօսք եւս: Մեր պատմութեան ընթացքում - գիտցէ՛ք ե՛ւ այդ - մեծահարուստ հայը չեղբայրացաւ հայ մտաւորականին, ո՛չ էլ ազգերի բախտի հետ խաղացող ոյժերի բարեկամութիւնը փնտռեց: Միայն զմիւռնիացի հայոց հարստութեամբ կարելի պիտի լինէր մի մեծ Հայաստան գնել: Այդ ծով հարստութեան մի չնչին մասն իսկ - որը քեմալականները քամուն տուին - պիտի բաւէր հրէաբար կաշառելու մարդկութեան երեք քառորդի խղճմտանքը, զայն հայասէր դարձնելու աստիճան: Բայց - անէ՛ծք մեկուսի երջանկութեան դաւանանքին - հայ ցեղի ապրած եւ ապրուելիք բոլոր տեսակի դժբախտութեանց անիծուած ակնաղբիւրին անէ՜ծք…

Ոսկեքսակ հայը չկանգնեց ոսկեգրիչ մտաւորականի թիկունքում, եւ այդ վերջինի լեզուն՝ կարճ, խօսքն անլսելի եղաւ միջազգային արէոպագների մէջ: Եւ եղաւ այն, ինչ որ եղաւ: Խորհրդածէ՛ք, պարո՛ն արուեստագէտ, եթէ սիրտ ունիք, խորհրդածէ՛ք այդ մասին, եւ դուք -

համոզուած եմ - ձեր ցեղը մեղադրելու փոխարէն, պիտի դատափետէ՛ք Հայաստանը կործանող այն յանցապարտ մտայնութիւնը, որ կ'անձնաւորեն հայ օտարասէրը եւ հայ մեծահարուստը - թշուառականներ, որոնց որքան աւելի ժպտայ բախտը, այնքան հոգեպէս կը հեռանան իրենց ցեղի կեանքէն:

Պարզ չէ՞, թէ ինչո՛ւ միայն հայութիւնը կը մնայ որպէս պարտուած մասը մարդկութեան:

Ե

Արդարեւ, ազգերի պատմութիւնը աւելի անշուք կը լինէր, եթէ առաջնորդները անցեալի վրայէն պարբերաբար չվերցնէին գերեզմանաքարը՝ նրանց ախտերն ու սխալանքները ի լոյս հանելու նպատակով:

Մեր ցեղն էլ - երբեմն իր տկարութիւններին գերի - գործել է ի կորուստ իրեն, եւ այսպիսով պատճառ տուել, որ իր գոյութեան նաւի ղեկավարները արդար զայրոյթով խարազանեն իր հոգեբանութեան ստուերային կողմերը:

Ո՜հ, այդ մարգարէաշնորհ ղեկավարները, որոնց ցեղային բարոյականով օծուն սիրտը գիտցաւ կծկուել մեր ժողովրդի ամէն մի ցաւէն, եւ ցնծալ ի տես համահայկական ամէն մի յաջողութեան: Նրանք, մեր ցեղի հոգու այդ սրբազան անօթները, յաճախ իրաւունքից աւելի պարտականութիւն են զգացած գոռալու հայութեան երեսին. «Քո էութեան մէջ մի բան կայ, որը պիտի սպանես, եթէ ազգօրէն ապրել կ'ուզես»:

Ահա՛ սուրբ Սահակը, սրբազան զայրոյթով գինովցած. «Քահանայանալ ի վերայ տիրանենգ, եւ տիրասպան եւ մատնիչ ժողովրդոյ ոչ կարեմ»*:

Ահա՛ հայոց պատմութեան հայրը՝ Խորենացին. «Յաճախ վարդապետներ ու վարդապետութիւններ փոխող. ուսուցիչներ, ընտրուած ոսկով եւ ոչ սուրբ հոգով. աշակերտներ՝ ծոյլ ուսանելու, եւ արագ այլոց ուսուցանելու, զօրավարներ՝ անարդար, ինքնասէր, կողոպտիչ - արժանաւոր ընկերն աւազակների. իշխաններ՝ ապստամբ, ագահ, անբարոյ. դատաւորներ՝ տմարդ, կաշառուող, անօրէն՝ բոլորը զուրկ սիրուց եւ ամօթից»...

Ահա՛ եւ Հայոց Հայրիկը, համակ սէր ու վիշտ. «Միթէ՞, հայոց ժողովուրդ, դու գռեհաց կաւ ես աշխարհիս երեսին»:

Հապա Ահարոնեա՞նը՝ իշխանն ու փառքը մեր նորագոյն գրականութեան, որի սիրտը արեւածաղիկի պէս միշտ էլ արեւը - Արարատեան արեւը փնտռեց:

---

* *Ղ. Փարպեցի:*

Հայութեան վշտակիրը, որի հոգեւոր կեանքի հորիզոնը միշտ էլ բռնած է գերագոյն դէմքը մեր ծուատուած Հայրենիքի:

Հայութեան տրիբունը՝ ոսկեբերան, որի հոգին հայոց պատմութենէն ծծեց այն ամէնը, ինչ որ գեղեցիկ է, վսեմ ու հերոսական, եւ դրա համար էլ որքան ուժեղ է իր ցեղասիրութիւնը, այնքան կատաղի է իր բարոյական զայրոյթը, որը սակայն, իր սիրող սրտէն կը բղխէ:

Նա խօսքի հոգեւոր կայծակներ ունի, եւ գիտէ շանթել այն ամէնը մեր ցեղի կեանքում, որ տկար է ու տգեղ, աննուէր ու անփառ. հակառակայորդոր ու թունաւորիչ. այն ամէնին, որ երկրամոլ են, որոնք անէծք ու նուաստութիւն կը շահեն մեր պատմութեան համար:

Հանգոյն բիբլիական մարգարէների՝ նա նզովել գիտէ, բայց իրեն յատուկ մեծ սիրով գիտէ եւ դափնեպսակել:

Նրա վշտալի հանճարը անմահացուց հայ վրիժակը, որը գիտցաւ աներկիւղ շփման գալ մահուան հետ:

Նա երգեց հայորդին, որը դաւանել գիտցաւ ազատութիւնը, նրա համար գիտակցօրէն իր արիւնը թափելու աստիճան:

Օրհնեց ու քաղցրացուց մահը հերոսների:

Մարգարէացաւ գալիքը եւ եռակի զանգահարեց հայութեան վարած վերջին գուպարների մասին:

Հրեղէն խօսքով երկու սերունդների հոգում նա բորբոքեց ինքնազօրութեան ծարաւը, եւ սէ՛ր դէպի տիտանիզմը պայքարի եւ զոհաբերութեան մէջ:

Եւ գիտցաւ ներշնչել, թէ Հայաստան Երկիրը ո՛չ թէ միայն ցանկալի որսավայր է իր գայլ հարեւանների համար, ո՛չ էլ յարմար վայր՝ միայն անփառունակ գերեզմաններ ծորելու, այլ՝ որ դա յարմար է նաեւ Անկախութեան եւ փառքի տաճարներ բարձրացնելու համար:

Այսպէս ապրեց ու ստեղծագործեց հայ պսակաւոր քերթողը, իր ճակատագիրը ներքին հաղորդակցութեամբ կապելով իր ցեղի ճակատագրին:

Ահա՛ թէ ինչո՛ւ ամէն անգամ, երբ հայ մարդը կը թերթէ Ահարոնեանի հայրենաշունչ երկերը՝ կը մղուի մտովին համբուրելու նրա ներցեղային բարոյականով օծուն գրիչը:

Ահա՛ թէ ինչո՛ւ այսօր Միցկեւիչի պէս նա էլ ազատ է ասելու իր մասին. «Ես եւ Հայրենիքս նոյնն ենք»:

* * *

Այսպէ՛ս, միստր Մայքլ, միայն այս ճամբո՛վ է ձեռք բերւում իրենց ցեղի հոգեբանութեան յոռի կողմերի նկատմամբ դատախազ ու դատաւոր հանդիսանալու իրաւունքը:

Հայութիւնը քննադատելուց առաջ՝ *պէտք է արիութիւն ունենալ ապրելու նրա պատժուած խղճմտանքը.* պէտք է քաջութիւն՝ իջնելու նրա խղճմտանքի խորքերը, կրկին ու կրկին անգամ ապրելու նրա ե՛ւ փառքը, ե՛ւ ամօթանքը - նրա բովանդակ ողբերգութիւնը:

Զայն դատապարտելուց առաջ՝ պէտք է խաչուել նրա ապրած Գողգոթայի վրայ: Իսկ այսպէս վարուելու համար՝ ընդունակ պիտի լինել անսահման սիրոյ եւ զոհաբերութեան:

Այլապէս՝ քննադատել պիտի չնշանակէ տառապել:

Իսկ երբ քննադատողը չի տառապիր, նա վուլգար չարախնդացող է եւ ո՛չ՝ քննադատ: Արհամարհանքի աչքը միշտ էլ հակամէտ է աւելի թերիներ, քան առաքինութիւններ տեսնել: Այո՛, անսխալ տեսնելու եւ արդարախոհ լինելու համար՝ պէտք է մեծ սէր ունենալ: Ձեզ, դժբախտաբար, պակասում է դա, ասել է՝ պակասում է թէ՛ քննադատելու բարոյական իրաւունքը եւ թէ՛ հոգեբանօրէն առարկայական լինելու կարելիութիւնը:

Ձ

Դուք գիտէ՞ք հայ գրողի ճակատագիրը՝ ապրել ու ստեղծագործել կիսաքաղց եւ մեռնել զրկանքների մէջ: Դուք գիտէ՞ք այդ - ամերիկօրէն խելօք մարդ - եւ այսօր դասալիքօրէն հեռու կ'ապրէք մեր ցեղի կեանքէն:

Ի՞նչ, արդա՞ր է, որ նման մէկը, որի համար չէ ներցեղային բարոյականը, ըստ որի՝ ցեղակից հանճարն ու բեռնակիրը հարազատ եղբայրներ են - ասացէ՛ք, արդա՞ր է, որ նմանը իր «նշանաւորութեան» պսակին մի բան աւելացնելու ունայնասիրութեամբ, օտար մամուլի մէջ իր ազգը *կենդանի մեռեալ* հռչակէ:

Դասալիքը դատաւորի դերո՞ւմ:

Կ'ընդունիմ, արգահատելի է անհայրենիք ժողովուրդը, բայց միթէ եօթնիցս զզուելի չէ՞ հայրենիքի զգացումէն ու պաշտամունքէն զուրկ անհատը:

Դո՛ւք, որ «իմաստութիւն» ունեցաք ձեր գրիչը չթաթախելու հայ Արիւնի եւ Արցունքի ծովի մէջ, դուք, որ սիրտ չունեցաք գոնէ մի անգամ կրկնելու՝ «Եղբա՛ր, հա՛յ ապրինք», ազատ էք ձեր տաղանդը զրնգուն դրամի եւ հանգստաւ էութեան վերածելու, ազատ էք ձեր քմախորժ վէպերով ընթերցող հին ու նոր աշխարհի կրքերը խաղտել, սեղմ ասած՝ թոյլ տուէ՛ք, խնդրե՛մ, վերադարձնելու ձեզ հայութեան մասին գործածած ձեր բառը - դուք կարող էք «կուրտիզան»աբար սպասաւորել օտար գրականութեան, բայց ոչ եւ վատահամբաւել ձեր ցեղը յաչս օտար ազգերի:

Չգիտէ՞ք, որ այսօր - երբ օտարատեցութիւնը սկսել է ատամներ ցոյց տալ տարագիր հային - ձեր տողերը կարող են արդարացնել ու սնուցանել օտար ժողովուրդների արհամարհանքը դէպի հայ անունն ու դատը:

Չգիտէ՞ք, որ ձեր ծանօթ տողերը կարող են ինքնանուաստացումի մղել օտար ափերի վրայ ծուարուած հայութիւնը, որ առանց այն էլ, հասկանալի պատճառներով ծանր տուրք է տալիս ազգային վատասերումին:

Վերջապէս, ինչո՞ւ էք ուզում խախտել հայութեան հաւատքը դէպի իր ապագան:

Տմարդութիւն չէ՞ փողոցի լեզուով խօսիլ մարդկային արդարութեան եւ մահուան հետ անհաւասար պայքարի մտած մի բուռ ժողովուրդի մասին:

Ինչո՞ւ էք ուզում փութացնել նրա յոյսերի մահը, որ իր ստոյգ մահը պիտի դառնայ:

Ծագումով հայ էք, եւ կ'ակնկալուէր, որ - գիտցէ՛ք, կան եւ օտարազգի ասպետ գրիչներ, որոնք տարիներով մեր դատին կը ծառայեն - արուեստագէտի ձեր խօսքով դուք եւս սրտապնդէիք մահու եւ կենաց կռուի բռնուած տարագիր հայութիւնը:

Եւ, յանկարծ, սպասուած եղբայրական խօսքի փոխարէն՝ արհամարհանքի ծանր քարեր:

Մե՛ղք ձեզ:

Գրող լինել - այն էլ հայազգի - եւ մեր ցեղի անօրինակ արհաւիրքները շահադիտող մարդկութեան երեսին թքելու փոխարէն, յարձակուել նրա զոհերի վրայ: Ամօ՛թ ձեզ:

Ի՞նչ, դրանո՞ւմ է գրչի մարդու կոչումը: Տաղանդը տրւում է նրանով կուրտիզանութի՞ւն անելու, զայն հարստութեան ու հանգստի վերածելո՞ւ համար:

* * *

Դուք տեսաք, միստր, թէ ինչպէ՛ս են խօսում ժողովրդին, ժողովրդի մասին եւ ժողովրդի անունէն:

Տեսաք վշտակրութեամբ ու նուիրումով մեծ հրեայ եւ հայ առաջնորդներ, որոնց համար չէ ողիմպիական մեծութիւնը, որի մէջ այնքան անկարեկիր ու պաղ էք դուք: Առաջնորդնե՛ր, որոնց համար միայն նա՛ է ճշմարտօրէն մեծը, որը մեծ զաւակն է նա՛խ իր ժողովրդի, եւ ապա՝ մարդկութեան:

Իսկ դո՞ւք. ինչի՞ կը ծառայեցնէք ձեզ տրուած տաղանդը: Փոքրոգի՛, ինչպէ՞ս թիկունք ցոյց տուիք ձեր ցեղի գողգոթային: Ինչո՞ւ չուզեցիք,

հրեայ օտարալեզու գրողների պէս, լինել նա՛խ ձեր ցեղի տաղանդաւոր զաւակը: Դժուա՞ր է: Ծա՞նր է հայ խօսքի խաչը: Կ'ընդունիմ: Բայց չէ՞ որ հէնց այդ ծանր խաչը սիրով կրելու մէջ է ճշմարիտ մեծութիւնը:

Սակայն, ինչո՞ւ կ'երակրեմ, երբ հայութիւնը դառել է «տաղտուկ ամէնուն եւ բեռ մը» ձեզ համար: Չէ՞ որ դուք սկսել էք ամաչել ձեր ծագումէն: Այո՞: Ուրեմն, գրչի կոկետութիւն չէ՞ ձեր չանգռածը Հայաստանի մասին:

Այդ դէպքում թոյլ տուէք, մէկ էլ գարշելու արուեստագէտի ձեր ցեղամերժ տաղանդէն, որը - մե՛ղք - առաքինութիւն չունեցաւ խոնարհուելու Հայութեան Տառապանքի, Յոյսի եւ Հերոսական մեծութեան առջեւ:

Մենք հաւատում ենք՝ Գողգոթայէն յետոյ Յարութի՛ւն կայ:

Եւ արդա՛ր է մեր հաւատքը:

Մենք զգում ենք մեծ ապագան հայ Հայրենիքի, եւ երկիւղածօրէն ծնրադրում նրա աստուածային տեսիլքի առջեւ:

Մենք նախաճաշակում ենք նրա գալիք երջանկութիւնը: Եւ եօթնիցս հպարտ ենք, որ հայ ենք:

Համբո՛յր ձեր անարգած Հայաստանին:

«Նոր Արաքս», Սոֆիա,
1930թ., թիւ 11, 12, 15-18

ԻՆՉՈՐ ՍՏԵՂԾՎԵՑ ՑԵՂԱԿՐՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ

Տարիների ընթացքում ես ուսումնասիրում էի գաղութահայության տրամադրություններն ու նրանց քաղաքական հոսանքները, գիտականորեն զննում նրանց հոգեբանությունը հայ ժողովրդի աննախադեպ աղետի՝ կոտորածների շարքի լույսի ներքո:

Ինձ հատկապես մտահոգում էին մեր երիտասարդ սերնդի տրամադրությունները, սերունդ, որը ծնվել էր Հայրենիքի սահմաններից դուրս կամ մանուկ հասակից, իրերի բերումով, հայտնվել էր արտասահմանում: Գիտական հոգեբանությունը վաղուց է ապացուցել, որ աղետներ տեսած եւ մեծ արհավիրքների, ցնցումների ենթարկված ժողովուրդները, հատկապես փոքր ժողովուրդները, սկսում են տառապել հոգեկան ետընթացով, որն արտահայտվում է պարտվողականության տարբեր դրսեւորումների ձեւով: Աղետի ենթարկվածը, հոգեպես խիստ ուժասպառվելով, ամեն ինչ կորած է համարում. լքում է իր պատմական առաքելությունը, կրավորաբար եւ հնազանդորեն համակերպվում իր վզին փաթաթված քաղաքական ճակատագրին: Նախ եւ առաջ նրան պատում է թերարժեքության տանջալից զգացումը, որի պատճառով դառնում է քաղաքական հոռետես, մշակույթի տեսակետից՝ անստեղծագործ: Հոգեպես նա դառնում է անիշխան, ժխտելով ամեն մի արժեք, հեղինակություն, իշխանություն, դառնում է զզվելի անձնապաշտ, փոքրոգի ու խորթ հասարակությանը եւ սկսում հետապնդել սոսկ մեկ առօրեական նպատակ - իր սեփական հացն ու հանգիստը: Որպես «ուրացող» (պարտվողական), նա լքում է իր դիրքերը ողջ ճակատով: Իր գոյության պայքարը նա արտաքին ճակատից տեղափոխում է իր ներաշխարհը, որի հետեւանքով ավելի է «կոտրվում», ուժասպառվում:

Այսպիսով նա մոռացության է մատնում իրեն սպառնացող արտաքին վտանգը՝ թշնամուն:

Միով բանիվ, նա անընդունակ է դառնում նոր պայքարի, ճիգի, զոհողության, դուրս ընկնում պատմության հունից եւ սկսում է քարշ տալ իր անստեղծ ու անիմաստ գոյությունը՝ հարուցելով իր հանդեպ ազգերի զզվանքն ու խղճահարությունը:

Հայկական պարտվողականությունը արտահայտվեց նաեւ հիվանդագին կրոնականությամբ: Ընդհանուր քայքայման պայմաններում հայկական գաղթօջախներում առաջացան բազմաբնույթ անհեթեթ աղանդներ. «ռուհչիներ», որոնք իրենց հոգու փրկության համար քարոզում էին հրաժարվել ազգային-հասարակական կյանքից, «անդենականներ»,

որոնք, հայերի երկրային հայրենիքը համարելով անիրական, հորդորում էին նվիրվել անդենական, երկնային հայրենիքին, «վերամկրտչականներ»՝ նույնքան ապազգային, հակահասարակական եւ հիվանդագին: Իսկ Ստամբուլում թուրքական իշխանությունների խորհրդով կազմավորված «հայկական կոմիտեն» հայերին քարոզում էր՝ իրենց համարել «լուսավորչական թուրքեր»:

Այս պատկերը լրացնում էին հայկական կուսակցությունները, որոնք ներքին տարաձայնություններով հայության մեջ առաջ էին բերում պառակտումներ եւ ազգային ոգու սառեցում:

Այսպիսով գաղութահայերը, տրվելով կույր պարտվողականությանը, սկսել էին ջուր լցնել հայ ժողովրդի գոյության թշնամիների ջրաղացին, խելահեղ պոռթկումով ձգտելով սեփական պարտությունն ու դժբախտությունը դարձնել վերջնական:

Մի խոսքով, սփյուռքի մեր գաղթօջախներում ստեղծվել էր մի մթնոլորտ, որում մեկ միլիոնի հասնող գաղութահայերը, ի ուրախություն թուրքերի, փորձում էին ինքնասպան լինել: Այդպիսին է հայ իրականության մերօրյա պատկերը գաղթօջախներում:

Այնտեղ ինձ վիճակվեց ապրել խոր ողբերգություն՝ ազգային ամոթի ողբերգություն: Սակայն, տասնամյակների ուսումնասիրություններն ու մտորումներն ինձ հանգեցրին մի այլ ճշմարտության եւս. պարտվողականությամբ տառապող ժողովուրդներն անբուժելի չեն, կյանքը հարափոփոխ վերածնունդ է, հնարավոր է եւ մեր գաղթօջախների հայության առողջացումը: Իսկ դա կարող է տեղի ունենալ միայն վերանորոգմամբ, որն էլ հնարավոր է միայն սեփական պատմության իրական արժեքները վերապրելու ճանապարհով:

Մեկնվելով այս վերլուծությունից՝ ես, հայրենասեր-գաղափարապաշտի խորին մտահոգությամբ, ձեռնարկեցի մեր երիտասարդ սերնդի կազմակերպման գործը՝ նրան համարելով ամենակարող վերակերտիչ գործոնը:

Քանի որ գաղութահայության ամենամեծ զանգվածն ապրում է ԱՄՆ-ում, որտեղ եւ մեր սերնդին ամենամեծ վտանգն է սպառնում (ի դեմս ամերիկյան միջավայրի ամենակուլ, ձուլող հատկության), ես Ցեղակրոն շարժումը սկզբնավորեցի Ամերիկայում: Ցեղակրոն շարժումը ոչ մի ընդհանուր բան չունի եւ չէր էլ կարող ունենալ օտար վարդապետությունների հետ, քանզի այն, նախ եւ առաջ, բարեփոխիչ շարժում վերածնունդ է, որը հնարավոր է միայն սեփական, այլ ոչ փոխառնված արժեքներով: Միայն թուրքամետ, պարտվողական ու պատմագիտության ասպարեզում տգետ հայը կարող է պարսավել Ցեղակրոն շարժումը:

Ցեղակրոն շարժումը ոչ թե կուսակցություն է, այլ Ուխտ: Նրա կազմակերպություններն այդպես էլ կոչվում են՝ Ուխտեր: Ով այս կամ այն չափ ծանոթ է Հայոց պատմությանը, անմիջապես կհասկանա, որ Ցեղակրոն շարժումը, որպես ուխտ, նման է Մամիկոնեից ասպետների Ուխտին: Մամիկոնյանների պես՝ ցեղակրոնը դավանում է ազգին անշահախնդիր նվիրվածություն եւ հանուն Հայրենիքի մահը քաջաբար ընդունելու վճռականություն:

Իմ շարժման անհրաժեշտությունը թելադրված էր մի շարք այլ կարեւորագույն դրդապատճառներով եւս:

Քեմալական իշխանության հաստատման առաջին իսկ օրերից, թուրքերը՝ բարբարոս, բայց արթուն քաղաքական բնազդով օժտված մի ազգ, փորձեցին մեզ ոչնչացնել նաեւ բարոյապես: Թուրքիայում կատարված հայերի ցեղասպանությունն արդարացնելու կամ, ծայրահեղ դեպքում, հասկանալի դարձնելու նպատակով, թուրքերը մի շարք եվրոպական ծախու գրչակների ու հասարակական գործիչների աջակցությամբ, հակահայկական քարոզչության արշավ սկսեցին:

Հայկական սպանդին հետեւեց բարոյական եղեռնը՝ հայերի վարկաբեկումը: Ամերիկյան ու եվրոպական ամբիոններից ոչ թուրքերը հաճախակի հայտարարում էին. «Իրենց անարգ բնավորության պատճառով հայերը դարձան թուրքերի նողկանքի, այլ ոչ թշնամության զոհերը»: Այսպիսով մեղադրվում եւ վարկաբեկվում էին միլիոնավոր զոհերը, իսկ արդարացվում՝ մարդասպանները: Հակահայկական քարոզչությունը պնդում էր, որ մեղավոր են սպանվածները եւ ոչ մարդասպանները՝ հայերին վերագրելով գոյություն չունեցող արատներ.

ա) քոչվորականություն, իբր հայերն իրենց հողը չեն սիրում,

բ) տնտեսական բնագավառում՝ անամոթ գիշատչի վերաբերմունք իրենց «զոհերի» նկատմամբ,

գ) բարոյականության բնածին պակաս, որի հետեւանքով եւ հակահասարակական կեցվածք եւ այլն:

Ահա թե ինչպես էին թուրքերը հայերին ներկայացնում ամերիկյան եւ եվրոպական ժողովուրդներին:

Այդ հակահայկական քարոզչությունը, իրենց ռազմական, առեւտրական ու մամուլի կցորդների հետ միասին, վարում էին թուրքական դեսպանություններն ու հյուպատոսությունները: Դրանում ակտիվ դեր էր խաղում եւ արտասահմանի թուրք ուսանողությունը: Հակահայկական քարոզչությամբ հատկապես աչքի էին ընկնում գրող Խալիդե հանըմը, Վեհիբ փաշան եւ ԱՄՆ-ում թուրքական դեսպան Մուխտար բեյը:

Բնականաբար, թուրքական ծավալուն քարոզչությունը որոշ երկրներում պետք է խթաներ հակահայկականությունը*:

Նման իրավիճակում, երբ հայկական կուսակցություններն ու կրոնական հատվածները, փոխանակ հակազդելու թուրքական քարոզչությանը, ելել էին իրար դեմ, մեր վերաստեղծված Ցեղակրոն Ուխտերը ձեռնամուխ եղան հակաթուրքական քարոզչությանը՝ ի պաշտպանություն իրենց անարգվող Ցեղի: Նրանք հավաքեցին հայերի ու թուրքերի մասին տարբեր փիլիսոփաների, պատմաբանների, մարդաբանների, գրողների, աշխարհագրագետների արտահայտած կարծիքներ եւ ներկայացրեցին ամերիկյան ու կանադական ժողովուրդների դատին:

Կար Ցեղակրոն շարժման անհրաժեշտությունն ընդգծող մի կարեւորագույն հանգամանք եւս. դա մեր հին սերնդի քաղաքական տեղատվությունն էր Թուրքիայի նկատմամբ: Մեր հին կուսակցությունները սկսել էին լքել Հայկական հարցն ու համակերպվել այն մտքի հետ, որ պետք է հրաժարվել Թուրքիայում մնացած հայկական տարածքներից ու մերձենալ թուրքերի հետ: Այդ ուրացումը երիտասարդ սերնդի աչքում մեզ կդարձներ արհամարհելի ժողովուրդ:

Ցեղակրոն շարժումը կոչված էր հայությանը տեր դարձնելու Թուրքիայից ունեցած տարածքային պահանջներին: «Լոզանը-երբե՛ք» կարգախոսը զարդարում էր Ցեղակրոն Ուխտերի առաջին ծրագիր-կանոնագրքի տիտղոսաթերթը: Մեզ համար Հայկական հարցի պատմությունը չէր սպառվում թուրքերի համար բարենպաստ Լոզանի պայմանագրով: Ցեղակրոն Ուխտերը, ի հակակշիռ հին սերնդի, շարունակում են մնալ Թուրքիայի պարտատերերը:

Որտեղ էլ լինի ցեղակրոնը, ինչպիսի ընկերային դիրք էլ գրավի, նա կշարունակի մնալ հպատակն ու մարտիկը Հայաստանի: Ցեղակրոն շարժման առաջացրած խանդավառությունն ու ձեռք բերած հաջողությունը աննախընթաց երեւույթներ էին մեր գաղութներում: Մեկ ու կես տարվա ընթացքում այն իր դրոշի շուրջը համախմբեց մոտ 6000 երիտասարդների ու պատանիների, որոնք երդվել էին Հայաստանից դուրս եւս հայ մնալ:

Շարժումն ուներ Ուխտեր Հյուսիսային Ամերիկայում, Կալիֆորնիայում, Կանադայում, իսկ տեղերի երիտասարդության նախաձեռնու-

---

* *Հայամետությամբ հայտնի Կրաֆտ Բենարը հայկական հարցին նվիրված իր գրքերից մեկում ցավով նշում է, որ Եվրոպայում հայերին համարում են «թալանչի ժողովուրդ»: Իսկ ջերմ հայասեր Նանսենն իր «Խաբված ժողովուրդ» գրքում 1914 թվականին ցավով հիշեցնում էր, որ հայը, չնայած իր բարձր հոգեւոր առաքինություններին, մարտունակ չէ:*

թյամբ Ուխտեր ստեղծվեցին նաեւ Խարբինում, Սիրիայում, Իրանում, Թրակիայում, Երուսաղեմում, Բուլղարիայում: Մեր համարյա բոլոր գաղութներից ինձ էին դիմում իրենց երկրներն այցելելու առաջարկով՝ համախմբելու տեղի երիտասարդությանը եւ հաղորդակից անելու նրան Ցեղակրոն շարժմանը:

Հենց այդ պատճառով էլ Դաշնակցությունը, որն իր տեղը կորցնելու վախից դրդված՝ հայ կյանքում երեւան եկած ցանկացած նոր ուժի նկատմամբ թշնամական վերաբերմունք էր դրսեւորում, հանդես եկավ Ցեղակրոնության դեմ:

Երես թեքելով լաց լինելու քաղաքականությունից ու գթասրտություն քարոզելուց, ինչպես նաեւ պարտվողական գծից, որ կիրառում էին հին կուսակցությունները, նոր սերունդը տարերայնորեն նետվեց հարազատի գիրկը:

Ցեղակրոնությունը՝ դա կենդանի բողոք է, ցույց՝ մեր ժողովրդի քաղաքական կամքը նենգափոխած հին կուսակցությունների դեմ:

Ցեղակրոնի համար հայության միակ բնական զինակիցը ռուս մեծ ժողովուրդն է: Նրա համար չկան հայաստաններ , այլ կա Հայաստան: Եթե այժմ Հայաստանը խորհրդային է, դա նշանակում է, որ, պատմական զարգացման օրենքների համաձայն, նա կարող էր լինել միայն այդպիսին:

Նույնքան տրամաբանական ու հստակ է ցեղակրոնի վերաբերմունքն Անգլիայի՝ Թուրքիայի պաշտպանի նկատմամբ: Անհնար է լինել Թուրքիայի թշնամին, իսկ նրա պաշտպանի՝ բարեկամը: Ցեղակրոնները բարյացակամ են իրենց թշնամու թշնամիների նկատմամբ եւ թշնամություն են տածում իրենց թշնամու բարեկամների հանդեպ:

Մենք շատ լավ գիտակցում ենք, որ Անգլիան, որի հովանու ներքո ապրում են հարյուր միլիոնավոր մահմեդականներ, նախապատվությունը չի տա մի բուռ հայերին: Որպես իմպերիալիստական ժողովուրդ, անգլիացիները դաժան են, բարոյազուրկ (ինչպես հռոմեացիներն էին): Եթե նրանց շահերը պահանջեն, ապա կզոհաբերեն ոչ միայն հայ ժողովրդին, այլեւ տասնյակ այդպիսի ժողովուրդների:

Մենք ոչինչ չունենք՝ ո՛չ մեծ տարածք, ո՛չ մեծ քանակություն, ո՛չ տնտեսական մեծ հնարավորություններ, հանուն որոնց Անգլիան ցանկանա ճանաչել մեզ իբրեւ՝ թեկուզ անդրկովկասյան ժողովուրդների ընտանիքի իրավահավասար անդամ:

Արդեն երկար տարիներ, Անգլիայի օրհնությամբ, գործում է պանթուրքիզմը, որի ճանապարհի լայնքով տեղավորված է Հայաստանը, որը հեշտությամբ կարող է վերածվել Անկարայի ու Բաքվի միջեւ դիակների կամրջի: Ահա ինչով պետք է բացատրել Ցեղակրոն Ուխտերի թշնամանքը նաեւ Անգլիայի հանդեպ:

Այս մասին գիտեն ե՛ւ թուրքերը, ե՛ւ անգլիացիները, այդ պատճառով էլ վերջին տարիներին թուրքական մամուլի օրգանները մեղադրանքներ էին հնչեցնում միայն իմ հասցեին, իմ գործունեության դեմ, այլ ոչ թե Դաշնակցության:

Այն ժամանակ, երբ Դաշնակցության պատասխանատու գործիչներ Համո Օհանջանյանը, Ջամալյանը, Կարո Սասունին օգտվում էին Թուրքիայի բարեկամ երկրներ ազատ մուտք գործելու ու բնակվելու իրավունքից, 1937թ. հունական կառավարությունն ինձ մերժեց Եգիպտոս ուղեւորվելու տարանցիկ վիզա տրամադրել՝ պատճառաբանելով, որ ես «Թուրքիայի անհաշտ եւ վտանգավոր թշնամին եմ»: Համանմանորեն, ինչպես Եգիպտոս մեկնելու դեպքում, ինձ նաեւ մերժեցին Պաղեստինի մուտքի վիզա հատկացնել: Իսկ Եգիպտոսի վիզան ինձ հաջողվեց ստանալ մի շարք աշխատանքներից հետո ու խոշոր կաշառքի միջոցով, ընդ որում, ինձանից ստորագրություն վերցրեցին, որ «ես Եգիպտոսում ոչ մի հրապարակային դասախոսությամբ հանդես չեմ գա ու ոչ մի ժողով չեմ հրավիրի»:

(թարգմ. ռուսերենից)

Տեր-Հարությունյան Գարեգին
1946-1948թթ.
Հայկական ՍՍՀ ՊԱՆ ներքին բանտ

ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ ԻԲՐ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԶՕՐՈՅԹ

Եթէ ցայսօր մեր ժողովուրդը հարուածներ է միայն ստանում եւ ողբերգօրէն՝ անկարող է հակահարուածել - դրա պատճառն այն է, որ նա չի ապրում ցեղօրէն:

Անասելիօրէն ճակատագրական եւ անկշռելի է ցեղային ազդակի նշանակութիւնը մի ժողովրդի վերածնունդի, ազգամբողջացման եւ պետականացման գործում:

Գիտե՞նք, հասարակագիտական այդ պարզ ճշմարտութիւնը, սակայն, անկարելիութեան աստիճան դժւար է, բառերով «ի՞նչ է ցեղը» հարցի սիրտը շօշափել:

Մարդաբանութեան ցարդ տւած սահմանումներից եւ ո՛չ մէկն է ընդունելի՝ ինձ համար:

«Ցեղ» հասկացողութիւնը սահմանելու համար, բաւական չեն հին եզրերը:

Նրանցով չի կարելի սպառել ցեղի ողջ տարողութիւնը:

Ցեղը՝ դիմագծօրէն ազգայինն է, ա՛յն տիպարականը, որով ժողովուրդները տարբերւում են իրարից:

Այո՛, ցեղային գործօնն աւելի՛ բարդ իրողութիւն է, քան ենթադրւում է:

Դժւար է դա սահմանել գիտական լեզւով:

Այստեղ՝ միա՛յն յարաբերական գիտականութեան մասին խօսք կարող է լինել:

Ըստ մեզ - ասենք առանց տեսական խորացումների - ցեղն աւելի հոգի է, քան կաւ:

* * *

Մեր դարում, մասնաւորապէս, մեր օրերում, ոչինչ այնքան չի՛ տկարացնում ժողովուրդների պայքարունակութեան ոգին, որքան ա՛յն աղէտալի մոլորանքը, թէ իրենց ճակատագիրը բարւոքողը սեփական ճիգերը չեն, այլ ինչ-որ՝ արտաքին ուժեր:

Աւելի՛ պարզ:

Մի ժողովուրդ, որն իրեն պէտք եղած ուժն իրենից դուրս է փնտրում-կուրօրէն իր պարտութիւնն ու անկումն է նախապատրաստում:

Հասկանա՛նք, որ ցեղի ուժակշիռն աւելի մեծ է, նրա ներքին տարողութիւնը բիւրաբիւր անգամ աւելի՛ հարուստ, քան՝ ժողովրդին:

Ա՛յն ժողովուրդը, որ գիտէ այդ - գիտէ ճշմարտութիւնը. փրկւած է նա:

Հայաստանում ես աւելի բաներ եմ տեսնում, քան հայ ժողովուրդն ու իր օրւայ արժէքները:

Հայաստան չի նշանակում երկրամաս եւ ժողովուրդ միայն, ո՛չ, ո՛չ. այնտեղ կայ մի «երրորդը», մի այլ ուժ - ցե՛ղը - առանց որի, փառքի ու մեծութեան աստղերի տակ չի ապրում ու զարգանում ժողովուրդը:

Հայ ցեղը - դա հայ հողն է՝ համակ բոց ու զօրոյթ, որ ասում է անխօսես սնւում եմ նրանցով, որոնց՝ սնուցանում եմ:

Ե. դարում, կրակի բախտը փորձող պարսկականութեան խոփը քարին զարկողը հայոց թարմաշունչ ցեղայնութիւնն էր, որը այսօր կռւի պիտի կանչել Հայասպան թրքութեան եւ ցեղամերժ լենինականութեան դէմ:

Ցեղն է, որ մեր մէջ կ'ապրեցնէ եւ կը զօրացնէ Հայաստանը, անգամ, Հայաստանից դուրս:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

* * *

Ցեղը չի ծերանում, թիկնադարձութիւն չգիտէ եւ չի պարտւում:

Նա ժամանակների վկան է, յաւիտենական հայը, Աստուծոյ գործակիցը:

Ցեղն արարիչ է, ժողովուրդը՝ արարած:

Ժողովրդի ուժածին մեքենան է ցեղը եւ նրա ուժակիրը, որն իր մէջ կրում է մի ինչ-որ տիեզերական եւ յարուցիչ ուժ:

Դա՝ այն հոգեւոր շաղախն է, առանց որի, ժամանակը հեշտութեամբ է հիւլէացնում ժողովուրդներին:

Ժողովուրդը կարող է եւ շինարար լինել, ցեղի ազդեցութիւնը, սակայն, մի՛շտ էլ ստեղծագործ է:

Այդ իսկ պատճառով, աւելի մշակութունակ է ցեղը:

Երբ չկայ ցեղը՝ ժողովուրդների հոգեւոր անդաստանը աւելի խծուծ է արտադրում, քան ցորեն:

Նւաստախոհ եւ նւաստախօս է ժողովուրդը, ցեղը մի՛շտ էլ թագաւոր է եւ գահընկեցութիւն չգիտէ:

Հակառակայորդոր է ժողովուրդը - եւ աննւէր ու անփառ, երբ նրա մէջ տկարացած է ցեղի ձայնը:

Յարանւանական է ժողովուրդը - կաթուղիկէ, բողոքական եւ այլն - ցեղը մի՛շտ էլ մի՛ է եւ ամբողջական:

Ժողովուրդ ասել է դասակարգ եւ դասակարգային եսականութիւն, ցեղն ընկերային արդարութիւն է եւ հնարաւոր հաւասարութիւն:

Ժողովուրդը կարող է եւ գիտենալ, ցեղը մի՛շտ էլ կարող է՝ նաեւ:

Առաջինը կ'առաջանայ գայթ ի գայթ, ցեղը՝ եռադարձ ալիքի սաստկութեամբ:

Մէկը կայականութիւն է, միւսը՝ ուժականութիւն - ցե՛ղը:

Ժողովուրդը՝ դա «Կարսն» է - ցեղը՝ Ղարաքիլիսը: Մինչեւ այս ռազմադաշտը մեր ժողովրդի ճակտին ես աստղեր չտեսայ:

Ժողովուրդը հաշւետես ուղեղ է, ցեղը՝ աւելի սիրտ, որ անհաշիւ կերպով զոհաբերել գիտէ:

Միայն ցեղին է տրուած «հարիւրեզեան» զոհաբերութիւնը - ամենամեծը:

Ապրել օրը օրին, թելն ու ասեղը ձեռին՝ իր դրութիւնը կարկատելու գործի վրայ - ահա՛ ժողովրդի գորշ առօրեան: Ցեղը, կարկատանումի «քաղաքականութիւն» չգիտէ:

Մի՛շտ էլ ամբոխանալու հակամէտ է ժողովուրդը, ցեղն է, որ միաբան ու լարուած կը պահէ ժողովրդի կամքը:

Ցեղը կարող է ժամանակաւորապէս ե՛ւ պարտուել, բայց պարտուողականութիւն չգիտէ:

Նրա մէջ ամէն ինչ նոր է, իսկ նորը հին է՝ իմաստութեամբ շաղախուած:

Նա գիտէ նախատեսել, նախազգալ վտանգը եւ արհամարհել՝ միաժամանակ:

Ժողովուրդը, յաճախ, տարակոյսի եւ վարանումի կը մատնուի, ցեղը բնազդօրէն գիտէ իր կտրելիք ճամբան:

Մինչ ժողովուրդն արդարութիւն կը խնդրէ - ցեղը կը գործադրէ դա:

Ժողովուրդ՝ դա ասել է կշիռ առա՛նց սրի - իրաւունքի անզօրութի՛ւն: Ցեղը՝ դա սուրն է, յաճախ սուրը, առանց կշռի:

Ժողովուրդը կը խոստանայ, բայց քիչ բան կը տայ, երբ ցեղունակ չէ:

Ցեղին, միայն ցեղին է տրուած ժողովրդի ստրկութեան ծանր շղթաները արծիւի թեւերի վերածելու արուեստը: Նա՝ ստրկութեան մէջ իսկ, չի կորցնում իր պատմական ճամբան: Անցեղաշունչ ժողովրդին տրուած չէ այդ բնազդական կարողութիւնը:

Ժողովուրդը՝ դա հայ հոգու մարտիրոս կողմն է, ցեղը՝ հերոսական:

Ժողովուրդը մեռեալներ կը տայ, ցեղը՝ դիւցազուններ:

Մէկը սիրում է քարշ գալ ծանօթ ճամբաներում, միւսը - ցեղը՝ դժւարակոխ ուղիներ է փնտրում:

Հելլէնական Թերմոպիլը եւ հայկական Վարդանակերտը, Մարաթոնը եւ Աւարայրը, բուլղարական Շիպկան եւ մեր Սիւնիքը - ցեղի շունչն է օծել այդ բոլոր ռազմավայրերը:

Ժողովուրդը՝ դա ա՛յն վախկոտն է, որին ուզեցին գործի ուղարկել եւ նա առարկեց - «դուրսն առիւծ կայ»: Ցեղն իրենից դուրս առիւծ չի ճանաչում:

Ցե՛ղի արեւը կարող է եւ թեքւել, բայց մայր չի մտնում:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

* * *

Անասելիօրէն կարեւոր է ցեղի տեսակարար կշիռը:

Ժողովրդի մշտախռով տարերքն է ցեղը:

Ժողովուրդները միայն ցեղի միջոցաւ գլուխ կը հանեն իրենց հոգեւոր ինքնակառուցումը:

Ցեղը կաղապարիչ ոյժ է:

Ժողովուրդը, մի՛շտ էլ, ցեղի թեւերով - անցեալի եւ ապագայի ուժով է առնում իր թռիչքը:

Երբ ժողովրդի մէջ ցեղը չի շնչում, նա ծալում է արծւի իր թեւերը: Երբ ժողովրդի մէջ արթուն չէ ցեղը - նա տառապում է հոգեւոր ամլութեամբ եւ քաղաքական համլէտականութեամբ:

Ո՛չ թէ միայն ներկան, այլեւ ապագան իր սնունդն ստանում է անցեալից - ցեղից:

Ժողովուրդը ներկան է, ցեղը՝ երէկը, այսօրը եւ վաղը:

Առաջինը յաճախ կլանւում է ներկայով, երկրորդը հանում է մեզ ներկայից եւ ցոյց տալիս անցեալն ու ապագան՝ իդէալ լոյսի տակ:

Արթուն է ցեղը - ասել է՝ ժողովուրդն իր լսողութիւնը տւել է անցեալին, աչքը՝ ապագային: Դա ասել է՝ նրա անցեալը մշտակայ է, իսկ ապագան՝ նախօրոք ապրւած:

Սակայն տկարացա՞ւ ցեղը - ազգն այլեւս «մի որդակեր շէնք է, որ ո՛չ մի նեցուկ ունի եւ առաջին իսկ փոթորիկին պիտի կործանւի»:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

* * *

Ցեղն աւելի՛ նրանք են ներկայացնում, որոնք այլեւս մեկնած են մեր աշխարհից եւ նրանք, որոնք պիտի գան:

Երբ ժողովուրդը ցեղօրէն կ'ապրի - նրա կեանքում փրկարար դեր կը կատարեն առաւելապէս նրա մեծ մեռելները, որոնց իշխանութիւնը ե՛ւ արդար է, ե՛ւ իմաստուն, ե՛ւ զօրաւոր:

Իսկ ցեղօրէն ապրել - ասել է պատմական յիշողութեամբ վերապրել անցեալ սերունդների կեանքը՝ նրանց ճակատագրին կապելով մերը:

Ցեղ ասել է իմաստութիւն, խստաբարոյութիւն եւ զօրոյթ:

Դա՝ Հայ Ատլասն է, որ իր ուսերի վրա հայկականութեան երկինքն է կրում:

Ցեղը զօրութենական հայկականութեան ովկեանն է, որից սնունդ են առնում Հայ էութեան ծովը, լճակն ու վտակը:

Ցեղայնութիւնը - դա արեան միութիւն է, միութիւնը ճակատագրի, դա կրօնն է, լեզուն - դա ուժն է այդ բոլորի, առանց որի կայ եսակենտրոն անհատների ամբոխ, բայց ոչ՝ ազգ: Այն, ինչ որ ունինք, որպէս մշակոյթ եւ ազդեցութիւն, ոչինչ է, բաղդատմամբ ա՛յն բանի, որ ունի եւ պիտի տայ մեզ ցեղի անսպառ ոգին:

Չկայ ցեղը - կայ ժողովրդի ստորարժէքութեան գիտակցութիւնը, կայ այդ գիտակցութեան դառնութիւնը:

Ցեղից են գալիս հայ զէնքի, բազուկի եւ գրչի բոլոր մեծութիւնները:

Երբ ցեղօրէն կ'ապրենք՝ մենք կ'օգտուենք մեր ցեղին յատուկ հերոսականութիւնից եւ գերագոյն պատւասիրութիւնից, նրա կրօնական բոցավառութիւնից եւ մշակութային խանդից - նրա ո՛ղջ զօրութենականութիւնից:

Մինչ ժողովուրդը միջակութիւններ կը ծնի, ցեղի ինքնայայտնութիւնը տեղի կ'ունենայ հերոսների, սուրբերի ու լուսակիրների միջոցաւ:

Երբ ցեղօրէն ենք ապրում - ասել է ներքին, հզօրացուցիչ հաղորդակցութեան մէջ ենք անցեալի մեծ առաջնորդների հետ:

Անցեղաշունչ ժողովուրդը կորովի եւ իմաստուն առաջնորդներ չի ունենայ:

Ցոյց տուէ՛ք ժողովրդին իր ցեղի արեւ - դէմքը, որ նա ինքնատեսութեամբ բարձրացնէ իր խոնարհ ճակատը: Հէ՛նց սրանում է մտաւորականութեան, գրականութեան, եթէ կուզէք, նա՜եւ, յեղափոխական շարժումների դերը:

Անարժէք է գրականութիւնը, եթէ դա ցեղի ոգու ինքնայայտնութիւնը չէ, եթէ նրա մէջ ցեղի ոգին չի ճառագայթում:

Երբ ժողովուրդը մեծ թեւաբախումներ ունի, ասել է՝ ցեղաշունչ նրա գրականութիւնը - դա նշան է, որ նրա մէջ ցեղն է գործում:

«Զարթի՛ք փա՜ռք իմ» Շնորհալիաբար պիտի երգէ հայ գրողը, եթէ ուզում է արագացնել փրկարար ցեղացնցումը՝ հայ էութեան մէջ:

Ո՛չ թէ եւրոպականացում, այլ ցեղայնացո՛ւմ. միա՛յն ցեղը կարող է ազգային արժէքները համամարդկայնացնել:

Եվրոպականը պիտի ծառայեցնել որպէս միջոց միայն՝ մեր սեփականը դրսեւորելու եւ փարթամացնելու համար:

Ժողովուրդն ընդունում է օտար մշակոյթն ապազգայնանալով, ցեղը՝ ազգայնացնում է իր ընդունածը:

Անօգուտ է նմանողութիւնը: Աւելի՛ն՝ դա աղարտում է մեր ցեղայնու-

թիւնը: Ամէն նմանողութիւն ժողովուրդները կը գնեն իրենց անհատականութեան կորուստի գնով:

Երբ արթուն է ցեղը՝ ժողովուրդը տեսնում է իր հոգու անբաւ հարստութիւնները եւ իր գրականութեան միջոցով զանոնք փռում՝ աշխարհի առջեւ:

Ցեղօրէն չապրող ժողովրդի համար՝ համր է, անգամ, իր հայրենի աշխարհը: Նմա՜նը կարող է խորթանալ, անգամ, իր հարազատ միջավայրում: Ցեղօրէն ապրողն, ընդհակառակը, կարող է ե՛ւ մեծ սփիւռքի մատնուել, ինչպէս Իսրայէլը, բայց մի՛շտ էլ զերծ մնալ ներքին հոգեբանական կորստաբեր ցրումից:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

* * *

Ցեղակրօնութի՜ւն - ահա՛ համադարմանը, առանց որի հայութիւնը կը մնայ մարդկութեան քաղաքականապէս ամենատնանկ մասը:

Ցեղակրօնութի՜ւն, դա անցեալապաշտութիւն չէ, ո՛չ էլ հոգեւոր պորտաբուծութիւն, ինչպէս եւ՝ ո՛չ ծոյլ յուսադրութիւն, ոչ էլ՝ մեղկ ապագայապաշտութիւն:

Անցեալի պաշտամունքի եւ ապագայի մեծ յոյսի ստեղծագործ կենակցութիւնն է դա, որ ժողովրդի հոգուն ամենաշքեղ յղացումներ է տալիս:

Ցեղակրօնն է նա, ո՛վ ապրում է ցեղօրէն՝ ցեղի կեանքով եւ ցեղի համար:

Ցեղակրօնութեամբ պիտի փարատել մեր ժողովրդի ներքին տկարութիւնները:

Ցեղապաշտութեան կրակով պիտի մոխրացնել հնոտինն ու սնոտինը՝ մեր մտաւորականութեան կեանքում:

Ցեղայնութի՜ւն - դա՛ է այն շաղախը, որ սերունդներին այնպէս է իրար կապում, ինչպէս կիրը՝ հոյակապ շէնքի քարերը:

Երբ ցեղակրօն է ժողովուրդը - նրա սակաւաթուութիւնը դառնում է երկրորդական:

Ժողովրդի համար իր խաւերի միջեւ եղած ցեղային յօդակապութեան սերտութի՛ւնն է էականը:

Ցեղն է ներգործօնացնում ժողովուրդը, նա է տալիս ներգործօն մարդը - նախակարապետը ցեղային գերմարդու:

Ահա՛ թէ ինչո՛ւ եմ ասում - ցեղակրօնութեան ճամբով՝ դէպի քաղաքական փրկարար միակրօնութիւն:

Մեր մտաւորականութեան է մնում աշխատել, որ ցեղակրօնութիւնը դառնայ արդի հայ հոգու երրեակ ձեւերը՝ նրա մտածումը, զգացումը եւ կամքը, մասնաւորապէ՛ս կամքը:

Ցեղի գերազօր կամքը - ահա՛ ժողովրդի փրկութեան լծակը:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

* * *

Մինչ հայը իր ցեղի մէջ մարդկայնութիւն, թուրքն իր հոգում՝ գայլութիւն է մշակում:

Այդ իսկ պատճառով թուրքի մօտ ատելութիւնն աւելի՛ հարուստ զինարան ունի, հայու մօտ՝ սէրը:

Թուրքը՝ դա իժն է, որ դեռ իր մօր արգանդում զինուած է թոյնով:

Նրան՝ մի յանցանք ներել, ասել է՝ երկու նորերը արտօնել:

Մեր ժողովրդի համար թուրքն անպարտելի է, ցեղի համար՝ արհամարհելի:

Թուրքը դեռ ծանօթ չէ մեր ցեղի բազուկի ուժին, մինչեւ հիմա նա գործ ունեցաւ մեր ժողովրդի, բայց, գրեթէ, երբե՛ք՝ ցեղի հետ:

Նրա զէնքի յաջողութիւնը սեփական ուժի լիութիւնից չէր, այլ՝ մեր դիմադրութեան պակասից:

Ժողովուրդը կարող է ե՛ւ մոռանալ թրքութեան հասցրած չարիքները, ցեղը՝ չի ների:

Ցեղօրէ՜ն, ցեղօրէ՜ն ապրենք, որպէսզի սրտով մեծ եւ զօրաւոր Վարդաններն ու Վահանները անպակաս լինեն Հայոց աշխարհում:

Ցեղն է ժողովրդի հոգեւոր զինարանը. նախ այնտեղից առնենք մեր սպառազինութիւնը՝ թրքութեան դէմ:

Երբ ցեղն է գործում՝ Գարահիսարցի մի հիւսն դառնում է Անդրանիկ, եւ Սեբաստացի մի շինական՝ Մուրատ:

Երբ ցեղօրէն կ'ապրենք՝ ամէն մի հայ զոհի փոխարէն աշխարհ կը գան երկու նոր վրիժակներ: Ցեղն է, որ ժողովրդի կրծքի տակ վրէժխնդրութեան հիդրան կ'ապրեցնէ:

Ցեղն է, որ ժողովրդի սուրը սրել կը տայ իր նահատակների գերեզմանաքարի վրայ՝ զայն աւելի՛ եւս հատու, զարհուրելի եւ յաղթական դարձնելու համար:

Ցեղը՝ դա ժողովրդի սրտին նստած շանթակիր ամպն է:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

* * *

Որքան տիրական է ցեղի ազդեցութիւնը ժողովրդի կեանքում, այնքան հեշտ է ինքնապաշտպանւում վերջինս:

Ժողովուրդը անճգնութիւն է, ցեղը՝ մտրակող կամք:

Ժողովուրդը դպիրներ է ծնում, ցեղը՝ մարգարէներ:

Ժողովուրդը նահանջելու տրամադիր զինուորն է, ցեղը՝ միշտ էլ Վահագն:

Ցեղն արիութիւն է, նաեւ՝ արիապաշտութիւն. հասկանալի է, թէ ինչո՞ւ հեթանոս հայութեան իմաստութիւնը Վահագնին նուիրած էր բոլոր ամիսների 27-րդ օրը:

Խաղաղութեան ժամանակ, գուցէ եւ կարելի է ապրել առանց ցեղի, վտանգի ժամանակ՝ երբե՛ք:

Ցեղը՝ դա ճակատամարտերում ճերմկած հազարավէրք զօրավարն է, որ միշտ էլ կ'երիտասարդանայ վտանգների ժամանակ:

Ժողովրդի ուղեցոյցն է ցեղը. նա իր մեծ մեռելների գերեզմաններով է նշանադրում ժողովրդի փրկութեան ճամբան:

Ցեղը՝ դա աստուածանման Հայկն է, որն իր եռացող զայրոյթը եռաթեւեան աղեղի մէջ դրած՝ թշնամուն կ'ուղղէ:

Դա ա՛յն խորախորհուրդ ուժն է, որ Նպատ լերան վրայ լարուած պահեց Մեծ Պարթեւի երկնաբարձ բազուկները, մինչեւ որ հայերը յաղթեցին:

Դա հայ սպարապետի հպարտանքն է, որ սաստեց թշնամուն՝ «Եթէ հարուածը իմն է՝ չի փրկւի»:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

* * *

Այս կամ այն ցեղը մօտաւոր ճշդութեամբ դիմագծելու համար՝ նրան պիտի դիտել իր հոգու հայելիի՝ իր կրօնի մէջ, որովհետեւ ցեղի մօտաւոր ինքնայայտնութիւնը հնարաւոր է միայն իր աստուածների միջոցով:

Իր մտա-բարոյական զարգացման չափով, ցեղն իր կրօնի մէջ դնում է իր հոգեբանական գծերը, իր աշխարհզգացութիւնը, իր բնազանցական էութիւնը:

Հայը լինելիական է, - հաստատում է հայոց հեթանոս կրօնը: Լինելիակա՛ն է հայը - ահա՛ ակն ու աղբիւրը մեր մեծ Յոյսի եւ Զօրոյթի: Այս է, որ յուրախութիւն թուրքի, դեռ չի գիտակցում հայ մտաւորականութիւնը՝ իր մեծամասնութեան մէջ:

- Պիտի մեռնի՛ անհատը, որ ապրի դասակարգը,- պատգամում է մեծամասնականութիւնը:

- Մեռի՛ր, դասակարգ, որ ապրի ազգը,- ասում է ֆաշականութիւնը:

- Թո՛ղ մեռնեն երկուսն էլ՝ անհատ թէ դասակարգ, որ ապրի ցեղը,- ասում է Հիթլէրականութիւնը:

Տեսնո՞ւմ էք, որ Հեգէլի, Ֆիխտէի, Նիցշէի յաւիտենականի փիլիսոփայութեամբ թրծուած Գերմանիան է, որ ճգնում է ոտքի հանել ցեղը:

Իսկ հա՞յը - աւա՜ղ, հայ մտաւորականութիւնը ցեղահաղորդ չէ ե՛ւ այսօր: Նա ծանօթ չէ իր ցեղի հոգու կարելիութիւններին եւ այդ իսկ պատ-

ճառով, շարունակում է կառչած մնալ իր վտիտ ժողովրդասիրութեան՝ առանց օգտուել կարողանալու իր ցեղի զօրոյթից: Նա շարունակում է մնալ քաղաքականապէս սնանկացած մի ժողովրդի անզօր մտաւորականութիւնը, երբ պատմական վայրկեանը նրանից պահանջում է լինել ցեղի ընտրանին:

Ցեղերի գօտեմարտ կայ այսօր - ոչի՛նչ են ժողովուրդները - անանխընթաց գօտեմա՛րտ, որին չմասնակցել սեփական արիւնով - նշան է պատմական փոքրոգութեան: Դա նշան է, որ հայ մտաւորականութիւնը դեռեւս տէր չէ եղերաբար ապրուած մի նոր իմաստասիրութեան, որ նա օտար է իմաստասիրական հերոսութեան, ինչպէս եւ անծանօթ՝ հայ ճակատագրի ճշմարիտ իմաստասիրութեան:

Այսօրը՝ նո՛ր օր է - հասկանա՛նք այդ, եւ այն, որ հայ մտաւորականութիւնը երբե՛ք չի ունեցել աւելի մեծ եւ պատասխանատու դեր:

Վայրկեանը, որ աւելի՛ քան ճակատագրական է, պահանջում է նախ՝ հերոսական բարոյականութեան եւ մտածումի, ապա՝ մեծագործութեան եւ ինքնաողջակիզումի ընդունակ մի մտաւորականութիւն:

- Գերազանցի՛ր եւ պիտի յաղթե՛ս,- ասում է աշխարհն ազգերին: Եվ հայը միայն ցեղակրօնութեամբ կարող է գերազանց հանդիսանալ, որովհետեւ գիտենք՝ հրաշունչ ցեղայնութիւնն է նրա էութեան հիմնական կշռոյթը:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

* * *

Ժողովուրդը գործում է, ցե՛ղն է, սակայն, իրականացնողը: Բաւական չէ գործելը, իրականացնե՛լ է պէտք, հասկանա՛նք այդ: Հասկանա՛նք նաեւ, որ բոլոր տեսակի յաղթանակներ տարւում են նախ՝ ցեղի ոգու քիմիարանում:

Ժողովուրդը կարող է եւ յարմարուել իր նւաստ վիճակին, ցեղի համար, սակայն, անդարձ չեն աշխարհի վճիռները:

Նրա համար անսրբագրելի չէ Լոզանը, հաւատացէ՛ք:

Երբե՛ք, ա՜հ, երբե՛ք հայ անւան շուրջն ա՛յնքան ամօթանք չէր կուտակւել, որքան վերջին տասնամեակի ընթացքում:

Եվ հէնց սրանումն է մեր դրութեան փշեպսակը, ինչպէս եւ մեր փրկութեան գրաւականը՝ միաժամանակ:

Չէ՞ որ գերման ցեղի քաղաքական միութեան գիտակցութիւնը ծնունդ առաւ եւ զարգացաւ տառապանքի եւ նւաստութեան դպրոցում:

Ցե՛ղն է ժողովրդի հոգեւոր ոսկեփոխը:

Այսօրը՝ նո՛ր օր է - ով գիտէ այդ՝ գիտէ փրկարար ճշմարտութիւնը:

Այսօր, երբ մեր Հայրենիքում կարմիր գերեզմանափորները հայոց ցեղն ու աստուածն են թաղում, եւ նրանց բրիչների ձայնն արձագանգում է խորհրդային գծից դուրս. մեր այս վշտաշունչ օրերին, երբ թուրքը՝ Լոզանից ձեռք բերած անպատժութեան արտօնագիրը ծոցը՝ բաց ճակատ շրջում է արեւի տակ եւ իր եաթաղանից մազապուրծ հայութեան ոչնչացումը որոճում - այս, մեզ համար անփառունակ օրերին, երբ չարագուշակ բուերն են հսկում մեր հաւաքական ճակատագրին - թո՛ղ ցեղակրօնութեան խօսքը հնչէ որպէս կազդուրիչ կանչ:

Չէ՛, չէ՛, Մասիսը - հայոց ցեղայնութեան հրաբուխը - դեռ չէ շիջած. նո՛ր, մենք նո՛ր ցեղաշարժերի կը սպասենք՝ մեր արեան մէջ զգալով ներկայութիւնը անցեալի եւ վաղւայ յաղթական հայութեան: Մենք ասում ենք - մի՛շտ էլ արդար է, որ մեր կեանքում օրէնսդրէ եւ առաջնորդէ ցեղը եւ ո՛չ թէ ժողովուրդը:

- Արթնացա՞ւ ցեղը՝ մենք վերստին կը բռնենք յաւիտենականութեան ձեռքը եւ կռւի կը կանչենք անարդար ժամանակը:

Եվ կը յաղթանակենք, քանզի ցեղի աստուածները - Հայկն ու Վահագն - պիտի բարձրացնեն շանթընկեց մեր բազուկը եւ վարեն նրա հարուածները:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

«Խռովք», Սոֆիա, 1932թ., թիւ 1

ՑԵՂԱՅԻՆ ԱՐԹՆՈՒԹԻՒՆ*

ԻՄ ԽՕՍՔԸ ԱՄԵՐԻԿԱՀԱՅ ՆՈՐԱՀԱՍ ՍԵՐՈՒՆԴԻՆ

ԽՕՍՔ ԱՌԱՋԻՆ

Ի՞ՆՉ Է ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԻՒՆԸ

Քաղաքական վայրկեանը, որ կ'ապրի հայութիւնը, պատմական է եւ գերագոյն:

Այդ գիտակցութիւնը խռովքի է մատնել մեզ:

Այլեւս սուր կերպով զգացւում է, որ բախտորոշ անկիւնադարձը մօտ է, եւ որ նրանից է կախուած մեր ժողովրդի լինել-չլինելը: Խորապէս գիտակցւում է այլեւս, որ օրուայ մտայնութեամբ, անպատիժ կերպով, չենք կարող շարունակել մեր անհայրենիք գոյութիւնը:

- Ի՞նչ, ի՞նչ է պատրաստում մօտիկ ապագան մեզ համար - ահա՛ չարչարող հարցը, որ վճռապէս դրւում է հայ մարդու առջեւ:

Այդ հարցին պէտք է պատասխանել մի այլ հարցով - թէ զօրութենական ի՞նչ կարողութիւններ կան թաքնուած մեր ցեղի էութեան մէջ:

Իսկ այդ հարցին կարող է պատասխանել ցեղաճանաչը միայն:

Արդարեւ՛, առանց ցեղային ինքնաճանաչումի՝ անկարելի է զերծ մնալ սեփական ուժերը ստորագնահատելու, ինչպէս եւ գերագնահատելու աղէտալի սխալանքէն:

Աւելի՛ն կայ:

Մի ժողովուրդի էութեան ստուերային կողմերը ոչ թէ միայն կասեցնում, այլ եւ յաճախ անկարելի են դարձնում նրա դրական յատկութիւնների զարգացումը, առանց որին, ի հեճուկս Հայաստանի եւ

---

* *«Ցեղային արթնություն» հոդվածաշարի մի շարք հատվածներ, թեեւ ոչ լրիվ նույնությամբ, առկա են Նժդեհի այլ գրություններում եւս: Մասնավորապես, Խոսք վեցերորդը, յոթերորդը, ութերորդը եւ իններորդը Նժդեհի «Ցեղակրոնությունն իբրեւ հաղթանակի զորույթ» («Խռովք», Սոֆիա, 1932թ., թիվ 1) բանախոսություն-հոդվածն են ներկայացնում, իսկ Խոսք տասներորդը («Ցեղակրոնության հավատամքը») հետագայում տեղ է գտել «Ամերիկահայությունը - Ցեղը եւ իր տականքը» գրքում (Սոֆիա, 1935թ.): Երկու դեպքում էլ, սակայն, դրանք նույնական չեն:*

հայութեան թշնամիների, մեր քաղաքական ճակատագիրը պիտի շարունակէ պահել իր անօրինակ դաժանութիւնը:

Այո՛, ժողովուրդների անզօրութեան եւ դժբախտութեան ամենաներգործօն պատճառը՝ իր սեփական էութեան մասին ունեցած տգիտանքն են, անինքնաճանաչութիւնը - իմա՝ անցեղաճանաչութիւնը:

Մերօրեայ հայութիւնը ծանօթ չէ այն հոգեբանական օրէնքներին, որ ժողովուրդների զարթնումը կը կառավարեն, այդ իսկ պատճառով նա չի աճում հոգեւորապէս:

Դեռ իր խորքին անծանօթ է հայութիւնը, եւ դրա համար էլ պարտուողական է:

Նա դեռ չի սրբել իր աչքերը՝ իր հոգու միջոցով աշխարհը, իրերը եւ իր սեփական ուժերը անսխալ կերպով տեսնելու համար: Նա դեռ չգիտէ չափն իր հոգեւոր զօրութենականութեան, նա չի՛ զգում իր զօրութենական կարողութիւնները եւ չգիտէ, թէ ի՞նչ պայմանների տակ կարող է զարգացնել ու կիրարկել այդ ուժերը:

Նա դեռ չի զգում իր ուժը եւ չգիտէ, թէ ի՞նչ կարող է դառնալ որպէս ցեղ:

Եւ հէնց այդ է պատճառը, որ նա դեռ գտած չէ իր ներքին կռուանը եւ հաստատ սեւեռակէտ չունի: Նա յոռետես է, անասելիօրէն պարտուողական: Իսկ ժողովուրդները գերազանցօրէն լաւատես են, զօրաւոր, վճռական, երբ սուր կերպով կը զգան երկու բան՝ իրենց ներքին ուժը և իրենց ճակատագիրը բարեփոխելու համար աշխարհի հետ փոխանակած հարուածների քաղցրութիւնը: Դեռ այդպիսին չէ հայը, որովհետեւ ցեղաճանաչ չէ:

Ինքնաճանաչ չէ մերօրեայ հայը:

Նրա համար հայոց պատմութիւնը անզօրութեան եւ պարտութեան, կոտորածների եւ տեղահանութեանց տխուր նկարագրութիւնն է, եւ ո՛չ աւելին:

Իսկ այդօրինակ ըմբռնումը սեփական պատմութեան մասին այլ բան չէ, եթէ ոչ մի բացասական եւ աղէտածին ինքնաներշնչում:

Արդ, թէ ինչո՞ւ պէտք է խորացնել մեր պատմական յիշողութիւնը՝ վերապրելով մեր ցեղի կտրած-անցած պատմական ողջ ճամբան: Առ այդ մեր անցեալին պէտք է մօտենալ մեր պատմութեան խորիմաստ ուսումնասիրութեամբ: Պատմագիտական լոյսի տակ պէտք է դնել մեր ցեղի գոյութեան եւ կեանքի ծանրակշիռ խնդիրները, որոնց անսխալ լուծումից է կախուած մեր լինել-չլինելը: Հետեւաբար, դառնանք ցեղաճանաչ, քանզի միայն նմանն է դառնում ակտիւ ուժ, քանզի ժողովուրդները միայն ինքնաճանաչութեամբ են դառնում որոշ աշխարհայեցողութեան տէր, իսկ նմանը դառնում է աւելի ստեղծագործ:

Ցեղաճանաչութիւնից զուրկ ժողովուրդը իր նորաբոյս սերունդին կուտայ սխալ դաստիարակութիւն, կ'ունենայ սխալ քաղաքականութիւն եւ սխալ ռազմավարութիւն:

Հայոց ցեղայնութեան անծանօթ մանկավարժը, զօրականը եւ քաղաքական գործիչը կարող են գործել կուրօրէն միայն, առանց գիտական հիմունքի: Իսկ գիտենք, որ ազգերի ճակատագիրը առաւելապէս կախուած է իրենց դաստիարակութիւնից, արտաքին քաղաքականութիւնից եւ ռազմավարութիւնից, որոնցից առաջինը կրթում է նրանց ներքին ուժը՝ կատարելագործում ցեղը, իսկ երկրորդը եւ երրորդը այդ ուժէն իմաստնօրէն օգտուելու կարելիութիւն են ընձեռում նրանց:

Սեղմ ասած՝ բացարձակապէս անկարելի է անսխալ դաստիարակութիւն, քաղաքականութիւն, ռազմավարութիւն մշակել՝ առանց սեփական ցեղի ոգու հիմնական ճանաչումի:

Արդ, թէ ի՞նչու եմ ցեղակրօնութիւն քարոզում:

Ցեղակրօնութիւն, ասել է՝ ցեղաճանաչութիւն, ջերմաջերմ պաշտամունք դէպի ցեղի փառայեղ անցեալը, ապա ստեղծագործ հաւատ դէպի ցեղի մեծ ապագան:

Ցեղակրօնութիւնը հայ կեանքի բարձրացող նոր ալիքն է մեր ազգային հոգեւոր կազմուածքի, բնատրամաբանական հակազդումը՝ իրեն մահուամբ սպառնացող օտար միջավայրերի դէմ:

Ահա՛ թէ ինչո՛ւ կանգնած վաղուայ սեմին՝ մեր անմեռ ցեղի մեծ ապագայի հաւատքով ես իմ խռովիչ կանչն եմ ուղղում օտար աշխարհներում ցրուած մեր նորահաս սերունդին՝

- Եղի՛ր արթուն, արթո՛ւն ցեղօրէն:

Եղի՛ր ցեղակրօն:

ԽՕՍՔ ԵՐԿՐՈՐԴ

ՀԱՅԸ ԵՒ ԹՈՒՐՔԸ

Թուրքը, համաշխարհային պատերազմի օրերին, իր տկարութեան սարսափէն (լա՛ւ ըմբռնիր այդ, ասացի՝ իր տկարութեան սարսափէն) խթանուած, յղացաւ ծրագիրներէն ամենադիւայինը՝ բնաջնջել մի հինաւուրց ցեղ, որ դարերով իր շուրջը միայն լոյս և քրտինք էր սփռել:

Յղացաւ և գործադրեց:

Եւ մի օր, թրքահայութեան ողջակիզումի առաջին օրը, բարձրացող արեւը Հայաստան երկրի փոխարէն տեսաւ մի կատարեալ գեհեն: Տեսաւ

խաչի նսեմ ստուերը ընկած մեր չորսհազարամեայ հայրենիքի վրայ: Տեսաւ, թէ ինչպէս մի խաւարասէր ազգ՝ վախկոտ, բայց յարձակողական, փոքրոգի, բայց աւերիչ - կը հրոսէր մի անզէն եւ անպաշտպան ժողովրդի դէմ՝ զայն իր պատմական հայրենիքէն արմատախլելու խելագարութեամբ: Տեսաւ, թէ ինչպէս կը մոխրանային հազարամեայ օրհնութեամբ լեցուն գիւղերը մեր, կը պղծուէին վանքերը, եկեղեցիները, գրադարանները՝ հազար: Տեսաւ խուժդուժ գործը տապարի, եաթաղանի, կապարի - ամէն տեսակի եւ չափի գործիքների, որոնցով սպաննել եւ աւերել կարելի է: Այլեւս Հայաստանով անցնող գետերը արիւն էին կտրել, իսկ կիրճերը՝ դիակներով լեցուն: Տեսաւ, թէ ինչպէս իրենց ծնողների եւ ամուսինների ներկայութեան կը խլուէին եւ կը բռնաբարուէին կանայք: Գործի վրայ էր թրքական սանձարձակ շնութիւնը, որ անասուններին իսկ կը գերազանցէ: Հայ տղամարդիկ՝ անկարող դիմանալու՝ անձնասպան կը լինէին, եւ սարսափից խելագար մեր աղջիկները խմբովին Եփրատի ալիքները կը գրկէին: Տեսաւ, թէ ինչպէս հայրը հաւաքեց իր ընտանիքը եւ այրեց ողջ. թէ ինչպէս սովահար հայ մանուկները իրենց մորթուած մայրերի դիակներին կպած՝ ծիծ կը ծծէին: Շատ տեղերում էլ հայ մանուկների ջարդը խաղի վերածուեց. նրանց ոտքերէն բռնած՝ իրար զարնելով կը սպաննէին:

Արեւը տեսաւ տուն, տանիք ու ճամբաներ արիւնով ներկուած: Տեսաւ բարձունքների վրայ, գետափներին եւ ձորերի մէջ՝ մահուան հետ կռուի մտած արնաթաթախ հայորդիներ: Տեսաւ, թէ ինչպէս «շներն ու շնագայլերը մեր սիրելիներու սրտերը կը կրծէին»: Տեսաւ իրենց գողգոթայի ճամփին, անասունների պէս, վաճառքի հանուած հայ կիներ ու մանուկներ, եւ լուսաւորեց խաչի ճամբան ծերերի, կաղերի եւ կոյրերի...

Հայոց արեւը տեսաւ այդ ամէնը եւ խաւարեց այդ օրը:

Եւ մի օր էլ Եղեռնի վերջին օրը, երբ այլեւս ամէն ինչ տխրօրէն կատարեալ էր, բնութիւնը նստաւ սգալու Հայոց Աշխարհի մոխրակոյտերի վրայ...

Եւ թուրքը անօրինակ շնականութեամբ ասաց Եւրոպացուն՝ «ջարդէն վերջը աղօթք մը ըրի եւ արդարացայ»*: Իսկ դիւանագիտական խարդաւանքների վարպետ Մոսկուան յանձին Ռադեկի չուշացաւ արդարացնելու Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութիւնը.** «Իթթիհատը իր երկրին անկախութիւնը պահելու համար ըրաւ ինչ որ կրնար: Ան վճռեց ոչնչացնել ամբողջ հայ ժողովուրդը: Եւ կասկածէ դուրս է, որ Պոլսոյ մէջ նստած իթթիհատական ղեկավարները այս հարցին մէջ շարժեցան պետական

---

* *Մի թուրք հարիւրապետի խօսքերը՝ գերմանացի Ֆօն Գորդոնին:*

** *Տես բոլշեւիկեան «Նոր Աշխարհ»ի թիւ 3-ը, 1922, հոկտեմբեր, Թիֆլիս:*

անհրաժեշտութեան գաղափարով: Թուրքիոյ համար խնդիրը շատ սուր էր դրուած - ապրիլ կամ մեռնել: Անոնք նախընտրեցին ապրիլ»:

Այսպէ՛ս, այսպէս խօսեց կարմիր հրէշը՝ սեղմելով Թուրքիոյ հայաջինջ ձեռքը: Քրիստոնեայ աշխարհն էլ լրբութիւն ունեցաւ, որպէս կարեկցանքի արտայայտութիւն, մեզ նետելու մի երկբառ նախադասութիւն՝ «մարտիրո՜ս ժողովուրդ»:

Իսկ հա՞յը... Դեռ կը սպասուի, թէ նրա որդիները մէկ-մէկ նեմեսիսներ պիտի դառնան՝ իրենց այնքա՜ն արդար ու աշխարհաշէն ցեղը քարին զարնող դահիճը պատուհասելու համար:

Հայը տեսաւ ու զգաց հայաքանդ Եղեռնի ահաւորութիւնը միայն: Մարդկութեան հետ, սակայն, մենք էլ դեռ չենք չափել վեհութիւնը այն աստուածային շարժուձեւի, մեծութիւնը մարդ-ազգի պատմութեան մէջ նախընթաց չունեցող այն գերմարդկային արարքի, որով մեր ժողովուրդն իր կէսը ողջակիզեց՝ ցեղի արիւնը, հոգի՛ն փրկելու համար:

Մի շարք օտար ժողովուրդներին յատուկ տկարութեամբ, իմա՛ ցեղուրացութեամբ, հայն էլ կարող էր փրկել իր ֆիզիքականը, բայց եօթնիցս փառք իրեն, նա չունեցաւ այդ տկարութիւնը գիտակցօրէն, թէկուզ շատ տեղերում կրաւորական հերոսացումով, նա զոհեց կէսը իր մարմինէն՝ ցեղի էութեան դէմ չմեղանչելու համար: Նա դարձաւ իր սեփական Զոհը եւ Զոհարարը՝ միաժամանակ:

Եւ փրկուեց ցեղը:

Ահա՛, նորահա՛ս սերունդ, ահա՛ ցեղը մեր, որի անունով կանչում եմ եւ ասում քեզ.

- Եղի՛ր ցեղակրօն, ցեղակրօ՛ն եղիր, քանզի կտրուելով ցեղէն՝ անհատը մեռնում է հոգեպէս, ինչպէս եւ հաշտւում իր ցեղի մահուան հետ, քանզի ցեղակրօնութեամբ, միա՛յն ցեղակրօնութեամբ վահանաւորուած հայութիւնը կարող պիտի լինի՝

Յաջողաբար պատուար կանգնել օտար միջավայրերի այլասերիչ ազդեցութեանց դէմ.

Հաշուեյարդարի ենթարկելով ներքին աղիտաբեր ճակատը,- որմէ մեծապէս կ՚օգտուին թուրքն ու բոլշեւիկը,- փրկարար քաղաքական միադաւանութեան մղել սփիւռքի հայութիւնը.

Հայ հոգին պահել անառիկ ազգասպան լենինականութեան յարձակումների դէմ:

Եւ զինաթափել գոյ եւ գալիք թրքական վտանգը, որ մահուամբ կը սպառնայ մեզ:

Այո՛, ցեղակրօնութիւնը, մեր դաւանանքը, որ շօշափում է աղերսի հիմնական գաղափարը եւ որով անհատներն ու սերունդները կապւում են իրենց գերագոյն ծնողին՝ ցեղի՛ն, ցեղակրօնութի՛ւնն է մեր ապաւէնը:

ԽՕՍՔ ԵՐՐՈՐԴ

ԱՂԷՏԻ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ

Թուրքը փորձեց բնաջնջել հայութիւնը եւ յաջողեցաւ մասամբ:

Ի՞նչ, ա՞յս է եղածը:

Միայն արեւմտահայութեան երեք քառորդը կորցրինք. սրա եւ հարիւրաւոր սերունդների երկրաւոր ստացուածքն ամբողջապէս:

Միայն ա՞յս է մեր կորուստը:

Հազարամեակներ ճամփու դրած Հայոց Աշխարհը մնաց անհայ եւ աւեր:

Միայն սրանո՞ւմ է մեզ վիճակուած աղէտի ահաւորութիւնը:

Ո՛չ, դժբախտաբար, ո՛չ:

Աղէտն աւելի ահաւոր է, քան մարդկօրէն կարելի է ըմբռնել:

Մեր կորուստը միայն մարդկային չէր, նիւթական չէր միայն: Թրքական հարուածը ուղղուած էր ոչ թէ միայն Հայ մարմինին, այլ եւ հայ հոգեկանին:

Եւ դա պիտի ունենար իր վճռական ազդեցութիւնը հայ հոգեբանութեան վրայ:

Եւ ունեցաւ:

Այլեւս գիտութեամբ հաստատուած իրողութիւն է աղէտների ազդեցութիւնը մարդկային հոգեբանութեան վրայ:

Հաստատուած է եւ այն, որ անհատները տարբեր կերպով են դիմագրաւում դժբախտութիւնը: Ոմանք զոհ են գնում այն տխուր հոգեվիճակին, որ կոչւում է անկումի հոգեբանութիւն:

Այդ դէպքում բարոյալքուածները կորած են համարում ամէն ինչ եւ թեթեւ սրտով հրաժարւում անձնական թէ ազգային ամէն տեսակի իտէալից եւ սրբութիւնից: Նմանների մէջ գլուխ են բարձրացնում ամենաստորին բնազդներն ու կիրքերը՝ չարախոհութիւն, նախանձ, պարտուողականութիւն, եւ ենթակային մղում համապատասխան արարքների: Օրինակ, թշուառամիտները, որոնք հայոց քաղաքական դատը խորհրդանշող Եռագոյնը կը հայհոյեն:

Ոմանք էլ իրենց ապրած «նաւաբեկութեան» հակազդում են դրականապէս - այն բարձր հոգեվիճակով, որ հոգեգիտութեան մէջ յայտնի է վսեմացում անունով: Այդպիսիների մէջ աւելի եւս շեշտւում են բարոյական, սոցիալական, հայրենասիրական եւ այլ ազնիւ կիրքերը: Սրանք՝ շնորհիւ իրենց դրական հակազդումին, դառնում են հոգեպէս աւելի կայտառ, բարեսէր եւ անընկճելի: Մասնաւորապէս մեծ աղէտների

առաջացրած հոգեւոր շփոթների ամօթալի օրերում սրանք կատարում են բարոյական շանթարգելի դեր՝ փրկելով եւ պահպանելով ազգային իտէալներն ու արժէքները: Օրինակ, ցեղավար Դաշնակցականները:

Ապրիլեան Եղեռնը, որի հողմը վերապրողներին բեւեռէ բեւեռ ցրեց, բնականօրէն, բեւեռացումի պիտի մղէր եւ հայ հոգին:

Վերապրողներէն մէկը ընկաւ Ամերիկա եւ այնտեղից իր ծանօթին այսպէս գրեց:

«Ահաւասիկ քեզի ցաւալի լուր մը եւս. մենք ամերիկեան զինուոր պիտի երթանք. Ամերիկան ալ պատերազմի մէջ մտաւ. ուր որ երթանք, ազատում չկայ մեզի»...

Զարհուրելի է, չէ՞ - հաւասար չափով եւ զզուելի - մտածել, թէ այդ օրերին իսկ թրքական գեհենէն անցած հայ մարդը մնացել է զինատեաց:

Հոգեբանական այդ տիպը պիտի դառնար մեր օրերի պարտուողականը - մեր ներքին կրաւորական թշնամին:

Մի ուրիշը, նոյնպէս վերապրող, ընդհակառակը, այսպէ՛ս պատգամեց իր եղբօրը.

«Այլեւս ձեզ կը մնայ վրէժի աւետարանը համբուրել եւ գործադրել»:

Սա առաջինի հակոտնեան է. պայքարունակ եւ զոհաբերելու յօժար հայը, որի կեանքը այսօր էլ մի հատիկ իմաստ ունի - ծառայել իր ցեղին:

«Բոլորն իրենց զաւակները նետեցին. եւ շալկի տարայ մինչեւ Արաբիստան եւ յետ բերի»,- ահա՛ սրբասուրբ հայ մայրը, որի ցեղամերժ զաւակը մի օր գաղութներում - անկումի վարդապետութեամբ մոլորուած - իր զզուելի թուրքերէնով պիտի գոռար մեր երեսին. «Լենինն է հայրս»:

Մի խումբ որբեր էլ ընկան Արաբիայի անապատները, որոնցից ամենամեծը տաս տարեկան: Ուղտարածներ էին դարձել եւ միայն մէկը գիտէր իր հայ լինելը:

Մի օր, երբ ուղտերը կ'որոճային կիզիչ արեւի տակ փռուած, որբերէն տարէցը - ա՜հ, փառք մեր ցեղի ազնուական արիւնին - աւազի վրայ իր ձեռնափայտի ծայրով գրեց հայոց Այբը լուսածին եւ սրբազան սարսուռով յայտնեց իր ընկերներին, թէ իրենք հայեր են, հա՛յ - ծախուած օտարին:

Դժբախտ փոքրիկների աչքերը թացացան եւ անապատի աւազը անյագօրէն նրանց արցունքը ծծեց:

Ու այնուհետեւ հայ այբուբենը լուսաւորեց եւ ջերմացուց մեր որբերի կեանքը եւ մի օր էլ՝ նրանց ելից ճամբան:

ԽՕՍՔ ՉՈՐՐՈՐԴ

ՀԱՅԻ ԵՒ ԹՈՒՐՔԻ ՀԱԿԱԴՐՈՒԹԻՒՆԸ

Կայ մի ողբերգական թիւրիմացութիւն, որը պէտք է փարատել, օր, ժամ, վայրկեան, առաջ պէտք է փարատել՝ ողջակիզուած հայութեան եւ ճշմարտութեան յարգանքի տուրք տուած լինելու համար:

Սխալ եւ անարդար է կարծել, թէ յանկարծակիի եկած արեւմտահայութիւնը Եղեռնի օրերին դրսեւորեց իր հոգու միայն մարտիրոս կողմը:

Ո՛չ, ո՛չ: Եթէ ուշի ուշով վերլուծէք անօրինակ Եղեռնը ամբողջացնող դէպքերը, խորապէս պիտի համոզուէք, որ հայը իր հոգեկան արիութեամբ մեծապէս կը գերազանցէր թուրքին:

Այդ օրհասաբեր օրերին Թրքահայաստանէն կարելի էր լսել «լացը շղթայուած հերոսութեան», իսկ որոշ վայրերում՝ մռնչիւնը դաւադրուած առիւծների:

Հասկանանք հետեւեալը:

Մարտիրոսանալու կամքը եղել է եւ կը մնայ հոգու գերագոյն հերոսականութիւնը: Կրաւորական հերոս,- ահա՛ թէ ով է մարտիրոսը, որ արհամարհել գիտէ մահը: Եւ ո՞վ է հերոսը, եթէ՝ ոչ նա, որ ներգործօրէն մարտիրոսանալու կամք ունի:

Էականն կեանքն արհամարհել եւ մահուան երեսին ժպտալ գիտենալն է: Իսկ այդ բանին ընդունակ է թէ՛ մէկը եւ թէ՛ միւսը:

Ամէն հայ ընդունակ է մարտիրոսանալու, իսկ ամէն մարտիրոս կարող է հերոս լինել,- մի բան, որին ընդունակ չէ թուրքը:

Վայրագութիւնը - այս մէկն էլ հասկանա՛նք - իր խոր արմատներն ունի մարդկային էութեան մէջ: Ըստ Շոպէնհաուերի՝ մարդս ցաւ է պատճառում ուրիշներին, իր սեփական ցաւը մեղմացնելու համար: Այդ դէպքում՝ վայրագութիւնը մի տեսակ դարման է իր սեփական ցաւի դէմ:

Թրքական գազանութիւնն էլ պէտք է բացատրել անհատ թէ հաւաքական թուրքի հոգեկան տկարութեամբ: Նաեւ՝ այդ տկարութեան նուաստացուցիչ գիտակցութեամբ:

Թշնամու յաղթական բանակների առջեւ Թուրքիան արդէն սկսել էր հաւաքել իր աշխարհագրական փէշերը: Ահա թէ ինչու նա՝ իր սարսափէն խթանուած եւ իր ցաւը մեղմելու բնազդով՝ իր տկարութեան վրէժը պիտի լուծէր անզէն հայէն, որին վտանգաւոր կը համարէր իր գոյութեան համար: Եւ նա իր կառավարութեան օրհնութեամբ կազմակերպեց Ապրիլեան Եղեռնը, որի ժամանակ կիրարկած իր միջոցները ամէն բանից առաջ մատնում են երկչոտութիւնը թուրք ցեղի:

Թուրքն ի վաղուց անտի ճանաչուած է որպէս ահաբեկիչ ազգ-ահաբեկիչ իր վախկոտութեան պատճառով:

Սպաննի՛ր մէկը - ասել է Լենինը - եւ ահաբեկած կը լինես հազար հոգի:

Սպաննի՛ր հազարը - բոլշեւիզմի քուրմէն շատ առաջ ասել է թուրքը - եւ ահաբեկած կը լինես մի ամբողջ ժողովուրդ:

Եւ դարեր շարունակ՝ թուրք պետութեան կառավարելու միակ մեթոտն ու զէնքը եղած է ահաբեկումը: Ներսը՝ իւրայիններին ջէննէթեան խոստումներով, իսկ դուրսը՝ այլացեղերին ահաբեկումով կառավարել,- ահա՛ թուրք պետական իմաստութիւնը:

Պատմութիւնը կը վկայէ, որ թուրք առաջնորդութիւնը սպանութեամբ, աւարով եւ աւերածութեամբ է սնուցել իսլամ խուժանի մոլեռանդութիւնը:

Կոտորա՛ծ - ամէն պատերազմից առաջ - իսլամ զանգուածները գազանացնելու նպատակով: Կոտորած - ամէն պարտութիւնից յետոյ՝ զանգուածները պարտուողական ոգուց զերծ պահելու համար:

Բարբարոս է թուրքը, իսկ բարբարոս ասել է տգիտութիւն, անբարոյութիւն եւ վախկոտութիւն:

Երկչոտ եւ բարբարոս, այն տարբերութեամբ, որ նա չի փախչում, այլ յարձակւում է իր վախէն: Ցաւ պատճառելու ուժեղ հակում ունի նա - սադիստ է, իր հոգեբանական այդ տիպը միշտ էլ երկչոտ է:

Նաեւ՝ իր ոճիրին վերադարձող է թուրքը, վախկոտ ստրուկ է նա եւ մի հատիկ բան գիտէ՝ կատարելապէս ստրկանալ եւ ստրկացնել:

Աւելի՛ եղեռնամոլ, ասել է՝ եւ վախկոտ է հաւաքական թուրքը: Վախն ու կրօնական կեղծիքն են օրօրել նրա պետական մանկութիւնը: Վախն է եղել նրա դաստիարակութեան հիմքն ու խարիսխը: Եւ այդ է պատճառը, որ նա միայն բռնակալներ է տալիս:

Թուրքը մահացուօրէն տգէտ է, իսկ նմանը չի կարող արի լինել: Նա ամենածոյլն է ցեղերէն, ասել է՝ եւ անարին: Նա ճակատագրապաշտ է, իսկ նմանի անցեալը խեղդում է ներկան, եւ ժխտում ապագան,- ահա թէ ինչու նա զուրկ է վերածնունդի եւ կատարելութեան գաղափարից: Նա չունի նաեւ ընկերային արդարութեան գաղափար:

«Ինչ որ Աստուածն է, այն էլ իր երկրպագողներն են»,- ասել է Արեւելքի ալեւոր իմաստութիւնը: Ալլահին վերագրուած յատկութիւններով պէտք է ճանաչել թուրքը: Աշխարհի ամենասեռակենտրոն ժողովուրդն է նա, որի շնաբարոյութիւնը սեռն իսկ փոխադրուած է երկինք: Իսկ նմանը անասելիօրէն անարի է: Արդ, թէ ինչու եմ ասում՝ թուրքը կարող է առիւծաշուն, առիւծակապիկ ծնել, բայց երբեք՝ առիւծ: Հայը յաւիտենականութեան զգացումն ունի, թուրքը՝ իր անխուսափելի նահանջի եւ պարտութեան ներշնչումը,- մի բան, որ նրա հոգում առաջացրել է մարգարէի

առասպելական կտակը, որն ըստ Ղուրանի, պիտի բացուի Օսմանի ցեղի շիջանելէն յետոյ: Հայն ամենավսեմ հասկացողութիւնն ունի մայրութեան մասին: Թուրքը աշխարհի միակ ժողովուրդն է, որ մայր չունեցաւ, չունի եւ պիտի չունենայ:

Եօթնիցս նուիրական է հայրենիքի հասկացողութիւնը հայ մարդու համար. թուրքը հայրենիք չունի եւ պիտի չունենայ, քանզի մայր եւ ընտանիք չունեցաւ: Պետութիւն դեռ ասել չէ հայրենիք: Օրուայ Քեմալիստանը երկիր է միայն եւ ոչ թէ հայրենիք: Իսկ նման երկրամասերը օրհնուած չեն, անառիկ չեն, ապագայ չունեն:

Անհատների պէս կան եւ ազգեր, որոնք երբեմն կը յաջողին, բայց ոչ իրենց սեփական առաքինութիւնների ուժով, այլ իրենց թշնամիների տկարութեանց շնորհիւ: Նմաններից է շնացեղ թուրքը, նա՛խ թուրքը:

Թուրքիան վերականգնեց եւ կ'ապրի երկրորդ Ռուսիոյ շնորհիւ, եւ կը պահուի երրորդ, գալիք Ռուսիոյ համար:

Ահա՛ թէ ինչու կը հաւատամ, թէ բախտահաս Քեմալիստանի ապագայէն աւելի յուսալի է անապատի աւազուտների վրայ իր ձեռնափայտի ծայրով լուսակաթ Այբը գրող հայ որբի ապագան:

ԽՕՍՔ ՀԻՆԳԵՐՈՐԴ

ՄԵԾ ԵՂԵՌՆԻ ԽՈՐՀՈՒՐԴԸ

Ցեղակրօնութի՛ւն - ա՛յդ կը թելադրէ մեզ Ապրիլեան Եղեռնի խորհուրդը խորին:

Ցեղակրօն լինել՝ ասել է ապրիլ ցեղի համար, որի անունով մեռան հազարներն ու բիւրերը. ասել է՝ պատրաստ լինել ամէն վայրկեան մեռնելու այն դատի համար, յանուն որի մեր ցեղն իր կէսը ողջակիզեց. ասել է՝ մեր սրտի վրայ կրել այն բոլոր վէրքերը, որ թուրք բազուկը հայութեան մարմնին եւ հոգուն հասցուց:

Ցեղակրօնութի՛ւնը - այո՛, միայն այս ճամբով մեր անօրինակ տառապանքը կը սկսի ծառայել մեր հաւաքական գոյութեան իմաստին:

Ցեղակրօն լինել՝ ասել է ունենալ տառապանքն ընդունելու հերոսական կամք եւ զայն յաղթահարելու կարողութիւն: Ասել է՝ այլեւս փրկարար է մեր տառապանքը, եւ դա մեր ժողովուրդը կը պատրաստէ մի մեծ նուիրումի, եւ մի երջանիկ ապագայի համար:

Մարդկօրէն - հասկանա՛նք այդ - մարդկօրէն կամ փախչում ենք տառապանքէն, կամ ընդունում այն:

Յետ այսու հայը՝ ցեղավար հայը վճռականապէս պիտի ընդունի այդ, բայց ոչ շոպէնհաուէրեան իմաստով:

Քաղաքական թէ հոգեբանական յոռետեսի համար միակ ցանկալի ելքը՝ տմարդի փախուստն է կեանքէն, պայքարէն, ցաւէն:

«Մի՛ պրպտէք անցեալը, սեւ վարագոյրը թող ծածկէ դա: Թո՛ղ այդ օրերէն, ժամերէն, վայրկեաններէն մինչեւ տարիներ խաւար լինի եւ թուականի մէջ չգումարուի»,- այսպէս գրեց մի աղէտահար տղամարդ իր բարեկամին:

Սուր կորովաթափութիւն ապրած այդ մարդը պիտի դառնար մեր օրերի պարտուողականը եւ իր հոգու սեւով ներկէր աշխարհն ու երկիրը:

Մի ուրիշն էլ այսպէս ճանկռեց թուղթի վրայ.

«Տեսանք երեխաներ, որոնց սրտերը շները կը կրծէին... Այսուհետեւ ինչպէ՞ս կարելի է հանգիստ հոգով ապրել այս աշխարհի վրայ: Այլեւս մեզ ապրել չի՛ վայելեր, մայրիկ»:

Այո՛, նորահաս սերունդ, այսուհետեւ չի՛ կարելի հանգիստ հոգիով ապրել, եւ պէտք չէ ապրել անդորրապէս, եթէ նոյնիսկ այդ կարելի լինէր: Բայց եւ այնպէս պէ՛տք է ապրել, ապրե՛լ անհանգիստ հոգիով, ապրե՛լ թրքական եղեռնի ամբողջ յիշողութեամբ, ապրե՛լ ցեղօրէն, ապրե՛լ ամօթ համարելով մեկուսի եւ եսական երջանկութիւնը, որ Հայաստանից դուրս այլ բան չէ, եթէ ոչ մի կրկներեւոյթ կեանքի անապատում:

Չէ՛, չնմանինք յոռետեսին, ոչ էլ էպիկուրեան վերաբերմունք ունենանք դէպի կեանքը: Մոռացում չփնտռենք թեթեւամիտ հաճոյքների մէջ, այլ ընդունինք տառապանքը որպէս միջոց մեր հաւաքական վերածնունդի եւ քաղաքական փրկութեան:

Ընդունինք այդ որպէս «հրեղէն սուր, որ կը պահպանէ կեանքը մահէն եւ անկումէն»: Ընդունինք տառապանքը էդմոն Ֆլէդի ցեղաշունչ խօսքի իմաստով.- «Ես հրեայ եմ, որովհետեւ ամենուրեք, ուր լալիս է մի ցաւ՝ հրեան է լալիս»:

Այսպէս, Մեծ Եղեռնի խորհուրդը պէտք է յեղաշրջէ հայութեան ներքին կեանքը: Այդ պէտք է որոշէ հայ անհատի եւ հաւաքականութեան բարոյականը, փիլիսոփայութիւնը, աշխարհազգացողութիւնը: Այդ պէտք է գունաւորէ մեր հոգեկան աշխարհը՝ սնուցանելով մեր ներքին մարդն ու հայը, յաւիտենական հայը: Այդ՝ ցեղակրօնութեան պիտի տանի մեզ:

- «Ի՞նչն է հայօրէն ճշմարիտը»,- հարցին՝ ցեղակրօնը պէտք է պատասխանէ. Հայաստանը կար եւ պիտի վերականգնի Թուրքիոյ անդամահատութեամբ:

- Ի՞նչն է հայօրէն բարին.

- Անընտրողաբար հարուածել թուրքն ու Թուրքիան:

- Ի՞նչն է հայօրէն գեղեցիկը.

- Ապրիլ լեգէոնականութեան ոգով, եւ հասունանալ ցեղի մղելիք ճակատամարտերի համար:

Թրքատեացութի՞ւնը: Այո՛, կատաղի է մեր ատելութիւնը, քանզի կը տառապինք որպէս հայ եւ որպէս մարդ: Մեր մեծ տառապանքէն պիտի ծնէր մեր մեծ ատելութիւնը, որն այլ բան չէ, եթէ ոչ հոգեբանական պատասխանը հայ տառապանքի:

Ցեղակրօն չե՞ս, եւ չե՞ս ատում թուրքը - որ փորձեց գոյութեան գրքէն ցեղիդ անունը սրբել՝ ասել է չես զգում այն վէրքերն ու վիրաւորանքը, որ թուրքը հասցրեց մեր ցեղին:

Արդ, թէ ինչո՛ւ կեղծ եւ զզուելի կը հռչակեմ հակադրօշակեան «քաղաքականութիւն»ը, որի մէջ ցեղուրաց հայը դեռ չգիտէ հասարակ ձիաւորը տարբերել ասպետէն: Ցեղակրօնութիւն կը քարոզեմ, այո՛, քանզի պակասաւոր կը համարեմ անցեղաճանաչ, անցեղահաւատ, անցեղապաշտ հայը: Այսուհետեւ համանշանակ պէտք է համարել անցեղաճանաչ եւ անհայրենասէր հասկացողութիւնները:

Ցեղակրօնութեամբ, ցեղակրօնութեամբ միայն հայ հոգին պայքարի, դժբախտութեան ու կռուի մէջ աւելի յանդուգն ու կատաղի կը դառնայ, ինչպէս առիւծը, երբ իր արնահոս վէրքերն է տեսնում:

Ցե՛ղը, ցեղակրօնութի՛ւնն է մեր դաւանանքը:

ԽՕՍՔ ՎԵՑԵՐՈՐԴ

ՑԵՂԸ ԵՒ ԺՈՂՈՎՈՒՐԴԸ

Այսօրը՝ նոր օր է: Ով գիտէ այդ՝
գիտէ ճշմարտութիւնը:

Անասելիօրէն ճակատագրական է ցեղային ազդակի նշանակութիւնը մի ժողովուրդի վերածնունդի, ազգային ամբողջացման եւ պետականացման գործում:

Գիտենք հասարակագիտական այդ պարզ ճշմարտութիւնը, սակայն, անկարելիութեան չափ դժուար է - «ի՞նչ է ցեղը»- հարցի սիրտը շօշափել:

Մարդաբանութեան ցարդ տուած սահմանումներից եւ ո՛չ մէկն է ընդունելի ինձ համար: Ցեղ հասկացողութիւնը սահմանելու համար բաւական չեն հին եզրերը: Նրանցով չի կարելի սպառել ցեղի ողջ տարողութիւնը:

Այո՛, ցեղային գործօնը աւելի բարդ իրողութիւն է, քան ենթադրւում է:

Դժուար է դա սահմանել գիտական լեզուով: Այստեղ միայն յարաբերական գիտականութեան մասին խօսք կարող է լինել:

Ըստ մեզ, ասենք առանց տեսական խորացումների, ցեղն աւելի հոգի է, քան՝ կաւ:

* * *

Մեր դարում, մասնաւորապէս մեր օրերում, ոչինչ այնքան չի տկարացնում ժողովուրդների պայքարունակութեան ոգին, որքան այն աղէտալի մոլորանքը, թէ իրենց ճակատագիրը բարւոքողը սեփական ճիգերը չեն, այլ ինչ-որ արտաքին ուժեր:

Աւելի՛ պարզ:

Մի ժողովուրդ, որ իրեն պէտք եղած ուժերը իրենից դուրս է փնտռում, կուրօրէն իր պարտութիւնն ու անկումն է նախապատրաստում:

Հասկանա՛նք, որ ցեղի ուժակշիռը աւելի մեծ է, նրա կարողականութիւնը բիւրաբիւր անգամ աւելի հարուստ, քան՝ ժողովրդինը:

Այն ժողովուրդը, որ գիտէ այդ, գիտէ ճշմարտութիւնը, փրկուած է նա:

Հայ ցեղը՝ հայ արիւնն է, համակ բոց ու զօրոյթ, որ ասում է անխօս.- «Ես սնւում եմ նրանցով, որոնց սնուցանում եմ»:

Ցեղը չի ծերանում, թիկնադարձութիւն չգիտէ, եւ չի պարտւում, երբե՛ք:

Դա յաւիտենական հայն է, ժամանակների վկան, Աստուծոյ գործակիցը:

Ցեղն արարիչ է, ժողովուրդը՝ արարած: Ժողովուրդի ուժածին մեքենան է ցեղը, եւ նրա ուժակիրը, որի մէջ կրում է մի ինչ-որ տիեզերական եւ յարուցիչ ուժ:

Դա այն հոգեւոր շաղախն է, առանց որի ժամանակը հեշտութեամբ է հիւլէացնում ժողովուրդներին:

Ժողովուրդը կարող է եւ շինարար լինել, ցեղի ազդեցութիւնը, սակայն, միշտ էլ ստեղծագործ է: Եւ այդ իսկ պատճառով աւելի մշակութունակ է ցեղը:

Երբ չկայ ցեղը՝ ժողովուրդների հոգեւոր անդաստանը աւելի խծուծ է արտադրում, քան ցորեն: Յաճախ նուաստախոհ եւ նուաստախօս է ժողովուրդը, ցեղը միշտ էլ թագաւոր է, եւ գահընկեցութիւն չգիտէ:

Հակառակայորդոր է ժողովուրդը՝ աննուէր ու անփառ, երբ նրա մէջ տկարացած է ցեղի ձայնը: Յարանուանական է ժողովուրդը - կաթողիկէ, բողոքական, լուսաւորչական եւ այլն - ցեղը միշտ էլ մի՛ է եւ ամբողջական:

Ժողովուրդ, ասել է՝ դասակարգեր եւ դասակարգային եսականութիւն, ցեղը՝ ընկերային արդարութիւն, եւ հնարաւոր հաւասարութիւն:

Ժողովուրդը կարող է գիտենալ, ցեղը մի՛շտ էլ կարող է նաեւ:

Մէկը կայականութիւն է, միւսը՝ ուժականութիւն:

Ժողովուրդը հաշուետես ուղեղ է, ցեղը՝ սիրտ, որ անհաշիւ կերպով զոհաբերել գիտէ:

Միայն ցեղին է տրուած «հարիւրեզեան զոհաբերութիւն»ը - ամենամեծը:

Ապրել օրը օրին, թելն ու ասեղը ձեռին՝ իր դրութիւնը կարկատելու գործի վրայ,- ահա՛ ժողովուրդի գորշ առօրեան:

Ցեղը կարկատումի քաղաքականութիւն չգիտէ: Միշտ էլ ամբոխանալու հակամէտ է ժողովուրդը, ցե՛ղն է, որ միաբան ու լարուած կը պահէ ժողովուրդի կամքը:

Ցեղը կարող է ժամանակաւորապէս ե՛ւ պարտուել, բայց պարտուողականութիւն չգիտէ:

Նրա մէջ ամէն ինչ նոր է, իսկ նորը հին է՝ իմաստութեամբ շաղախուած:

Նա գիտէ նախատեսել, նախազգալ վտանգը, եւ արհամարհել՝ միաժամանակ:

Ժողովուրդը յաճախ տարակոյսի եւ վարանումի կը մատնուի, ցեղը բնազդօրէն գիտէ իր կտրելիք ճամբան:

Մինչ ժողովուրդը արդարութիւն կը խնդրէ, ցեղը՝ կը գործադրէ այդ:

Ժողովուրդը, յաճախ ասել է՝ կշիռ առանց սրի - իրաւունքի անզօրութի՛ւն:

Ցեղը՝ սուր է, յաճախ սուրը առանց կշռի: Ժողովուրդն էլ կը խոստանայ, բայց քիչ բան կուտայ, երբ ցեղաշունչ չէ:

Ցեղին, մի՛այն ցեղին է տրուած ժողովրդի ստրկութեան ծանր շղթաները արծուի թեւերի վերածելու հոգեբանական արուեստը: Ստրկութեան մէջ իսկ՝ նա չի կորցնում իր պատմական ճամբան: Անցեղունակ ժողովրդին տրուած չէ այդ բնազդական կարողութիւնը:

Ժողովուրդը հայ հոգու մարտիրոս կողմն է, ցեղը՝ հերոսական:

Ժողովուրդն աւելի մեռելներ է տալիս, ցեղը՝ դիւցազներ:

Մէկը սիրում է քարշ գալ ծանօթ ճամբաներում, միւսը՝ դժուարակոխ ուղիներ է փնտռում: Հելլէնական Թերմոպիլը եւ հայկական Վարդանակերտը, Մարաթոնը եւ Աւարայրը, բուլղարական Շիպկան եւ մեր Սիւնիքը - Ցեղի շունչն է օծել այդ բոլոր ռազմավայրերը:

Ժողովուրդն այն վախկոտն է, որին ուզեցին գործի ուղարկել, եւ առարկեց նա. «Դուրսն առիւծ կայ»:

Ցեղն իրենից դուրս առիւծ չի ճանաչում:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

ԽՕՍՔ ԵՕԹՆԵՐՈՐԴ

ՑԵՂԸ ՈՐՊԷՍ ՈԳԻ

Անասելիօրէն կարեւոր է ցեղի տեսակարար կշիռը:

Ժողովրդի մշտախռով տարերքն է ցեղը:

Ժողովուրդը ցեղի միջոցով է գլուխ հանում իր հոգեւոր ինքնակառուցումը:

Ցեղը կաղապարիչ ուժ է:

Ժողովուրդը միշտ էլ ցեղի թեւերով, անցեալի եւ ապագայի ուժով է առնում իր թռիչքը:

Երբ ժողովուրդի մէջ արթուն չէ ցեղը, վերջինը ծալում է արծուի իր թեւերը,- նմանը տառապում է հոգեւոր ամլութեամբ, ինչպէս եւ՝ քաղաքական համլետականութեամբ:

Ոչ թէ միայն ներկան, այլեւ ապագան իր սնունդն ստանում է անցեալից:

Ժողովուրդը ներկան է, ցեղը՝ երէկը, այսօրը եւ վաղը: Առաջինը յաճախ կլանւում է ներկայով, երկրորդը՝ հանում է մեզ անցեալից եւ ցոյց է տալիս անցեալն ու ապագան՝ իտէալ լոյսի տակ:

Երբ արթուն է ցեղը, ասել է - ժողովուրդն իր լսողութիւնը տուել է անցեալին, աչքն՝ ապագային: Ասել է՝ նրա անցեալը մշտակայ է, իսկ ապագան նախօրօք ապրուած:

* * *

Ցեղը՝ ապրող սերունդ չէ:

Ոչ էլ համագումարն է աշխարհ եկած ու անցած բոլոր սերունդների:

Դա գումարելի չէ, եւ գումար չէ:

Դա պատմութեան պրոցեսի յաւերժ կենդանի ենթական է, որի կեանքում ոչ ոք եւ ոչինչ չի մեռնում:

Նրա մէջ գոյ են եւ ապրում են բոլոր անցած գնացած հայ սերունդները, որոնց հետ էին Մեծն Տիգրան, Արտաշէս Աշխարհակալ, սպարապետ Մամիկոնեան եւ այլն:

Ցեղը, որ էաբանական կորիզ ունի, եւ մշտատեւ պայքարի մէջ է ժամանակի հետ, բնազդօրէն ձգտում է անեղծութեան եւ մահայաղթահարումի:

Ահա՛ թէ ինչո՛ւ նա կրօնական խորք ունի - մի ճշմարտութիւն, որ հայ ցեղուրաց լենինադաւանը պիտի չհասկանայ:

Նա պիտի չհասկանայ, որ ցեղն աւելի նրանք են ներկայացնում, որոնք այլեւս մեկնած են մեր աշխարհից, եւ նրանք, որոնք աշխարհ պիտի գան:

Երբ ցեղօրէն է ապրած ժողովուրդը՝ նրա կեանքում փրկարար դեր են կատարում, առաւելապէս, նրա մեծ մեռելները, որոնց իշխանութիւնը ե՛ւ արդար է, ե՛ւ իմաստուն, ե՛ւ զօրաւոր:

Իսկ ցեղօրէն ապրել, ասել է՝ պատմական յիշողութեամբ վերապրել անցեալ սերունդների կեանքը, նրանց ճակատագրին կապելով մերը:

Ցեղ, ասել է՝ իմաստութիւն, խստաբարոյութիւն ու ուժ:

Դա հայ Ատլասն է, որ իր ուսերի վրայ հայկականութեան երկինքն է կրում:

Ցեղը հայկական ուժի ովկիանն է, որից սնունդ են առնում ժողովրդի էութեան ծովն ու վտակը:

Ցեղայնութիւնը՝ արեան միութիւնն է, միութիւնը ճակատագրի կրօնն է, լեզուն է, այդ բոլորի ուժն է, առանց որին կարող է գոյութիւն ունենալ եսակենտրոն անհատների մի ամբոխ, բայց ոչ՝ ազգ:

Այս՝ ինչ որ ունենք, որպէս ուժ, մշակոյթ եւ ազդեցութիւն, ոչինչ է բաղդատմամբ այն բանի, որ ունի եւ պիտի տայ մեզ ցեղի անսպառ ոգին:

Երբ չկայ ցեղի գիտակցութիւնը, կայ ժողովրդի ստորարժէքութեան եւ տկարութեան գիտակցութիւնը,- այդ գիտակցութեան դառնութիւնը:

Ցեղը լաւատեսութեամբ կը զինէ ժողովուրդը, եւ ազգային ձախորդութիւնները անդարմանելի չեն թուիր մեզ:

Ցեղաճանաչ չենք, եւ ահա՛ օտարութեան մէջ, անհարազատ միջավայրերում գրեթէ կրաւորական դիրք ունինք,- մի պարագայ, որ մեր ոչնչութեան եւ յոռետեսութեան զգացումն է սնուցանում: Իսկ յոռետեսութիւն, ասել է՝ պարտուողականութիւն եւ փախուստ պայքարէն: Իսկ յոռետես, ասել է՝ մէկը, որի մէջ մեռնելու աստիճան տկարացել է հաւատը դէպի սեփական ուժերն ու ապագան: Մէկը, որի մէջ նուազ առ նուազ զարգանում է ինքնաժխտումը եւ դառնում անկումի հոգեբանութիւն:

Իսկ այդ ծիւրող հոգեբանութեան հողի վրայ քաղաքական շնականութիւնը - որ մեր իրականութեան մէջ կոչւում է հակադաշնակցականութիւն- իր մահահոտ ծաղիկներն է բացում:

Նման մի ժողովուրդ այլեւս հրաժարւում է իր ցեղայայտ եւ ստեղծագործ կամքէն, իր արժեքներէն եւ արժանապատուութենէն: Նմանը փնտռում է օտար ուժեր,- մի հոգեբանութիւն, որը սեփական ուժերի լարում չի պահանջում:

Անկամ ու հոգեբանութեան ախտաւոր հողի վրայ իր գունատ ծաղիկներն է բացում եւ կրօնական խորհրդապաշտութիւնը:

Ցեղահաղորդ չէ մերօրեայ հայութիւնը, եւ ահա՛ սիւրիահայ իրակա-

նութեան մէջ եւ այլուր սունկի առատութեամբ ծնունդ են առնում կրօնական արտառոց աղանդներ, որոնք մեր աշխարհը տխուր պանդխտութիւն համարելով, հանդերձեալն են երազում՝ իրենց անդենական հայրենիքը:

* * *

Մեր արդար հպարտութեան առիւծն է ցեղը: Ցեղից են գալիս հայ զէնքի, բազուկի եւ գրչի բոլոր մեծութիւնները:

Ցեղօրէն, ցեղօրէն ապրենք, որ օգտուիլ կարողանանք մեր ցեղին յատուկ հերոսականութիւնից եւ գերագոյն պատուասիրութիւնից, նրա կրօնական բոցավառութիւնից եւ մշակութային խանդից՝ նրա ողջ զօրութենականութիւնից:

Գիտցէ՛ք, մինչ ժողովուրդները միջակութիւններ կը ծնին, ցեղի ինքնայայտութիւնը տեղի կ'ունենայ հերոսների, սուրբերի եւ լուսակիրների միջոցաւ:

Երբ ցեղօրէն ենք ապրում, ասել է՝ ներքին հզօրացուցիչ հաղորդականութեան մէջ ենք անցեալի մեր մեծ առաջնորդների հետ:

Ոչ ցեղահաղորդ ժողովուրդը կորովի եւ իմաստուն առաջնորդներ չի ունենայ;

Ցոյց տանք ժողովրդին իր ցեղի՝ իր գերագոյն ծնողի արեւ դէմքը, որ նա ինքնատեսութեամբ բարձրացնէ իր խոնարհ ճակատը:

Չէ՞ որ հէնց սրանում է ճշմարիտ մտաւորականութեան, գրականութեան եւ ազատագրական շարժումների դերը:

Անարժէք է գրականութիւնը - «ազգի յառաջապահը» չէ նա - եթէ ցեղի ոգու ինքնայայտութիւնը չէ, եթէ նրա մէջ ցեղի ոգին չի ճառագայթում:

Եթէ մեծ թեւաբախումներ ունի ժողովուրդը, ասել է՝ ցեղաշունչ է նրա գրականութիւնը, դա նշան է, որ նրա մէջ ցեղն է գործում:

«Զարթնի՛ր, փառք իմ»՝ շնորհալիաբար պիտի երգէ հայ գրողը, եթէ ուզում է արագացնել փրկարար ցեղացնցումը՝ հայ էութեան մէջ:

Ոչ թէ եւրոպականացում, այլ ցեղայնացում, քանզի միայն ցեղը կարող է ազգային արժէքները համամարդկայնացնել:

Օտարը պէտք է ծառայեցնել որպէս միջոց միայն՝ մեր սեփականը դրսեւորելու եւ փարթամացնելու համար:

Ոչ ցեղաշունչ ժողովուրդը ընդունում է օտար մշակոյթը՝ ապազգայնանալով: Ցեղը ազգայնացնում է ընդունածը:

Անօգուտ է նմանողութիւնը: Աւելի՛ն՝ դա աղարտում է մեր ցեղայնութիւնը: Ամէն նմանողութիւն ժողովուրդները գնում են իրենց անհատականութեան կորուստի գնով:

Երբ արթուն է ցեղը՝ ժողովուրդը տեսնում է իր հոգու անբաւ հարստութիւնները եւ փռում է անոնք աշխարհի առջեւ:

Ցեղօրէն չապրող ժողովրդի համար համր է անգամ իր հայրենի աշխարհը:

Նմանը կարող է խորթանալ անգամ իր հայրենի միջավայրում:

Ցեղօրէն ապրողն, ընդհակառակը, կարող է եւ մեծ սփիւռքի մատնուել, ինչպէս Իսրայէլը, բայց միշտ էլ զերծ կը մնայ ներքին հոգեբանական կորստաբեր ցրումից:

ԽՕՍՔ ՈՒԹԵՐՈՐԴ

ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ Է ՄԵՐ ԱՊԱՒԷՆԸ

Ցեղակրօնութի՛ւն - ահա՛ համադարմանը, առանց որին հայութիւնը կը մնայ մարդկութեան ամենատնանկ մասը, քաղաքականապէ՛ս տնանկ:

Անցեալի պաշտամունք չէ ցեղակրօնութիւնը, ոչ էլ հոգեւոր պորտաբուծութիւն է. ծոյլ յուսադրութիւն չէ դա, ոչ էլ՝ մեղկ ապագայապաշտութիւն: Մեր փառաշատ անցեալի եւ ապագայի մեծ յոյսի ստեղծագործ կենակցութիւնն է դա, որից ժողովրդի հոգին իր ամենաշքեղ յղացումները կ'առնէ:

Ցեղակրօն է նա, ով ապրում է ցեղօրէն՝ ցեղի կեանքով, ցեղի վախճանաբանութեամբ եւ ցեղի համար:

Ցեղակրօնութեամբ պէտք է փարատել մեր ժողովրդի ներքին տկարութիւնները:

Ցեղապաշտութեան կրակով պէտք է մոխրացնել հնոտին ու սնոտին մեր մտաւորականութեան կեանքում:

Ցեղայնութիւնը այն շաղախն է, որ իրար է կապում սերունդները, ինչպէս կիրը՝ հոյակապ շէնքի քարերը:

Երբ ցեղակրօն է ժողովուրդը, նրա սակաւաթուութիւնը դառնում է երկրորդական:

Ժողովուրդի համար իր խաւերի միջեւ եղած ցեղային յօդակապութիւնն է էականը:

Ցե՛ղն է ներգործօնացնում ժողովուրդը. նա՛ է տալիս ներգործօն մարդը՝ նախակարապետը ցեղային գերմարդու:

Ահա թէ ինչու եմ ասում - ցեղակրօնութեան ճամբով դէպի քաղաքական փրկարար միակրօնութիւն:

Մեր ցեղընկալ մտաւորականութեան է մնում աշխատել, որ ցեղակրօնութիւնը դառնայ արդի հայ հոգու երրեակ ձեւը՝ նրա մտածումը, զգացումը եւ կամքը, մասնաւորապէ՛ս կամքը:

Ցեղի գերազօր կամքը, որի կարիքը կը զգանք մեր կամքերը մտրակելու,- ահա՛ ժողովրդի փրկութեան լծակը:

* * *

Մինչ հայն իր ցեղի մէջ մարդկայնութիւն, թուրքը դարերով իր հոգում գայլութիւն մշակեց:

Այդ իսկ պատճառով թուրքի մօտ ատելութիւնն աւելի՛ հարուստ զինարան ունի, հայու մօտ՝ սէրը:

Թուրքը իժն է, որ դեռ իր մօր արգանդում զինուած է թոյնով:

Մի յանցանք ներել թուրքին, ասել է՝ երկու նորերն արտօնել նրան:

Թուրքը «զօրաւոր» է մեր ժողովրդի համար. դա արհամարհելի է մեր ցեղի համար:

Թուրքը դեռ ծանօթ չէ մեր ցեղի բազկի ուժին: Նա գործ է ունեցել մեր ժողովրդի, բայց ո՛չ ցեղի հետ: Նրա զէնքի յաջողութիւնը սեփական ուժի լիութիւնից չէր, այլ՝ մեր ժողովրդի դիմադրութեան պակասից:

Մեր ժողովուրդը իր տկարութեան մէջ, կարող է եւ մոռանալ թրքութեան մեզ հասցրած չարիքները: Ցեղը չի՛ ների:

Ցեղօրէ՛ն, ցեղօրէ՛ն ապրինք, որպէսզի սրտով մեծ եւ զօրաւոր Վարդաններն ու Վահաններն անպակաս լինեն հայոց աշխարհում:

Ցե՛ղն է ժողովրդի հոգեւոր զինարանը:

Այնտեղից, նա՛խ այնտեղից առնենք մեր սպառազինութիւնը՝ թրքութեան դէմ:

Գիտակցէ՛ք, որ երբ ցեղն է գործում, գարահիսարցի մի հիւսն դառնում է Անդրանիկ, եւ սեբաստացի մի շինական՝ Մուրատ:

Երբ ցեղօրէն ապրինք, ամէն մի հայ զոհի փոխարէն աշխարհ կուգան երկու նոր վրիժակներ:

Ժողովրդի կրծքի տակ վրէժխնդրութեան հիդրան ցեղն է ապրեցնում:

Իր հերոսների եւ նահատակների գերեզմանաքարերի վրայ՝ ցեղն է սրել տալիս ժողովրդի սուրը, զայն աւելի հատու, զարհուրելի եւ յաղթական դարձնելու համար:

Ժողովրդի սրտին նստած շանթակիր ամպն է ցեղը:

* * *

Որքան տիրական է ցեղի ազդեցութիւնը ժողովրդի կեանքում, այնքան հեշտ է ինքնապաշտպանւում վերջինս:

Ժողովուրդը անճգնութիւն է, ցեղը՝ մտրակող կամք:

Ժողովուրդը դպիրներ է ծնում, ցեղը՝ մարգարէներ: Միշտ էլ նահանջելու տրամադիր զինուորն է ժողովուրդը. ցեղը՝ միշտ էլ Վահագն է:

Ցեղը արիութիւն է, նա՛եւ արիապաշտութիւն, ահա՛ թէ ինչո՛ւ հեթանոս, այլ ցեղակրօն հայութեան իմաստութիւնը Վահագնին նուիրած էր իր բոլոր ամիսների 27-րդ օրը:

Խաղաղութեան ժամանակ գուցէ եւ կարելի է ապրել առանց ցեղակրօնութեան, վտանգի ժամանակ՝ երբե՛ք:

Ճակատամարտերում ճերմկած հազարավէրք զօրավարն է ցե՛ղը, որը միշտ էլ կը երիտասարդանայ վտանգների ժամանակ:

Ժողովուրդի ուղեցոյցն է ցեղը, որն իր մեծ մեռելների գերեզմաններով է նշանադրում ժողովուրդի փրկութեան ճամբան:

Ցեղը աստուածանման Հայկն է, որ իր եռացող զայրոյթը եռաթեւեան աղեղի մէջ դրած՝ թշնամուն ուղղեց:

Դա հայ սպարապետի հպարտութիւնն է, որ սաստեց թշնամուն՝ «Եթէ հարուածն իմն է՝ չի փրկուի»:

Դա այն խորախորհուրդ ուժն է, որ Նպատ լերան վրայ լարուած պահեց Մեծ Պարթեւի երկնաբարձ բազուկները, մինչեւ որ հայերը յաղթեցին:

Ցեղակրօնութի՛ւնն է մեր ապաւէնը:

ԽՕՍՔ ԻՆՆԵՐՈՐԴ

ՑԵՂՆ Է ՄԵՐ ԱՊԱՒԷՆԸ

Այս կամ այն ցեղը մօտաւոր ճշդութեամբ դիմագծելու համար, զայն պէտք է դիտել իր հոգու հայելիի՝ կրօնի մէջ, որովհետեւ ցեղի շեշտուած ինքնարձանացումը հնարաւոր է միայն իր աստուածների միջոցով:

Իր մտա-բարոյական զարգացման չափով, ցեղը իր կրօնի մէջ է դնում իր հոգեբանական գծերը, իր բնազանցական էութիւնը:

Հայը լինելիական է՝ հաստատում է հայոց հեթանոս կրօնը:

Լինելիակա՛ն է հայը,- ահա ակնաղբիւրը մեր մեծ յոյսի եւ զօրոյթի:

Ա՛յս է, որ չէ գիտակցում հայ մտաւորականութիւնը՝ իր մեծամասնութեան մէջ:

- Պէտք է մեռնի ազգը, որ ապրի դասակարգը,- պատգամում է բոլշեւիզմը:

- Մեռի՛ր, դասակարգ, որ ապրի ազգը,- ասում է ֆաշիզմը:

- Թող տեղի տան երկուսն էլ, անհատ թէ դասակարգ, որ ապրի ցեղը,- ասում է հիտլերականութիւնը:

Տեսնո՞ւմ էք, Հեգելի, Ֆիխտէի եւ Նիցշէի յաւիտենականի փիլիսո-

փայութեամբ թրծուած Գերմանիան է, որ ճգնում է ոտքի հանել ցեղը: Իսկ հայ մտաւորականութիւնը - աւաղ, ցեղահաղորդ չէ եւ այսօր: Նա ծանօթ չէ իր ցեղի հոգու կարելիութիւններին, եւ այդիսկ պատճառով շարունակում է կառչած մնալ իր վտիտ ժողովրդասիրութեան՝ առանց օգտուել կարողանալու իր ցեղի դինամիկայէն:

Քաղաքականապէս անիրաւուած է շարունակում մնալ մի ժողովրդի մտաւորականութիւնը, երբ պատմական վայրկեանը նրանից պահանջում է լինել ցեղի ընտրանին:

Ցեղերի գօտեմարտ կայ այսօր - անզօր են ժողովուրդները - աննախընթաց գօտեմարտ, որին չմասնակցելը սեփական արիւնով՝ նշան է պատմական փոքրոգութեան:

Դա նշան է, որ հայ մտաւորականութիւնը դեռեւս տէր չէ եղերաբար ապրուած մի նոր իմաստութեան, որ նա օտար է իմաստասիրական հերոսութեան, ինչպէս եւ՝ անծանօթ՝ հայ ճակատագրի ճշմարիտ իմաստասիրութեան:

Այսօր նո՛ր օր է - հասկանանք այդ,- եւ այն, որ հայ մտաւորականութիւնը երբեք չի ունեցել աւելի մեծ եւ պատասխանատու դեր:

Վայրկեանը, որ աւելի քան ճակատագրական է, պահանջում է նախ հերոսական բարոյականութեան ու մտածումի, ապա մեծագործութեան եւ ինքնաողջակիզումի ընդունակ մի մտաւորականութիւն:

- Գերազանցեցի՛ր եւ պիտի յաղթես,- ասում է աշխարհը ազգերին:

Իսկ հայը միայն ցեղակրօնութեամբ կարող է գերազանց հանդիսանալ, որովհետեւ - գիտէ՛ք - հրաշունչ ցեղայնութիւնն է նրա էութեան հիմնական կշռոյթը:

Ցե՛ղն է մեր ապաւէնը:

Հասկանա՛նք,- ժողովուրդը գործում է միայն, ցե՛ղն է, սակայն, իրականացնողը:

Բաւական չէ գործել, իրականացնել է պէտք:

Հասկանա՛նք նաեւ, որ բոլոր տեսակի յաղթանակները տարւում են նախ ցեղի ոգու քիմիարանում:

Ժողովուրդը կարող է յարմարուել իր նուաստ վիճակին, ցեղի համար, սակայն, անդարձ չեն աշխարհի վճիռները: Նրա համար անսրբագրելի չէ Լոզանը, հաւատացէ՛ք:

Լոզանը - ահ, երբե՛ք, երբե՛ք հայ անունի շուրջը այնքան ամօթանք չէր կուտակուել, որքան՝ վերջին տասնամեակի ընթացքում: Եւ - նորահա՛ս սերունդ - հէնց սրանում է մեր դրութեան փշէ պսակը, ինչպէս եւ մեր փրկութեան գրաւականը՝ միաժամանակ:

Չէ՞ որ գերման ցեղի քաղաքական միութեան գիտակցութիւնը ծնունդ առաւ եւ զարգացաւ տառապանքի եւ նուաստութեան դպրոցում:

Ցեղն է ժողովուրդի հոգեւոր ոսկեփոխը:

Այսօրը՝ նո՛ր օր է - ով գիտէ այդ, գիտէ փրկարար ճշմարտութիւնը:

Այսօր, երբ մեր հայրենիքում - ցեղի յաւիտենական հայրենիքում - կարմիր գերեզմանափորերը մեր ցեղն են թաղում, եւ նրանց բրիչների ձայնը արձագանգում է Խորհրդային գծից դուրս. մեր այս վշտաշունչ օրերին, երբ գայլաբարոյ թուրքը, Լոզանից ձեռք բերած անպատժութեան արտօնագիրը ծոցը՝ բաց ճակատ շրջում է արեւի տակ, եւ իր եաթաղանից մազապուրծ հայութեան ոչնչացումը որոճում,- այս մեզ համար անփառունակ օրերին, երբ չարագուշակ բուերն են հսկում մեր հաւաքական ճակատագրին,- թո՛ղ ցեղակրօնութեան խօսքը հնչէ որպէս կազդուրիչ կանչ:

Չէ՛, չէ՛ Մասիսը - հայոց ցեղայնութեան հրաբուխը - դեռ չէ շիջած:

Նո՛ր, մենք նոր ցեղաշարժերի կը սպասենք մեր արեան մէջ զգալով ներկայութիւնը անցեալի եւ վաղուայ յաղթական հայութեան:

Եւ ասում ենք մենք՝ միշտ էլ արդար է, որ մեր կեանքում օրէնսդրէ եւ առաջնորդէ ցեղը, եւ ոչ թէ ժողովուրդը:

Արթնացա՞ւ ցեղը - մենք վերստին կը բռնենք յաւիտենականութեան ձեռքը եւ կռուի կը կանչենք անարդար ժամանակը:

Եւ կը յաղթանակենք, քանզի ցեղի հեթանոս աստուածները՝ Հայկն ու Վահագն՝ պիտի բարձրացնեն շանթընկեց մեր բազուկը եւ վարեն նրա հարուածները:

Ցե՛ղը,- գիտակցիր այդ, նորահա՛ս սերունդ,- ցե՛ղն է մեր ապաւէ՛նը:

ԽՕՍՔ ՏԱՍՆԵՐՈՐԴ

ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԵԱՆ ՀԱՒԱՏԱՄՔԸ

Ա.

Ամփոփեմ ասածներս՝

- Մի ժողովուրդ, որ ինքն իրեն դեռ չէ նուաճել (իսկ ինքնանուաճումը հնարաւոր է միայն ինքնաճանաչումի ճամբով), ընդունակ չէ, արժանի չէ մեծ գործերի:

Մի այլ ճշմարտութիւն - ժողովուրդների հոգեւոր արդիւնաբերութիւնը այնքան մեծ է, որքան բիւրեղացած է նրանց ցեղային գիտակցութիւնը, որքան բացայայտուած է նրանց ցեղային էութիւնը, հոգին: Հազար խորհուրդ ունի հայ հոգին, որ դեռ իր խանդավառ մարգարէին կը սպասէ, որ պիտի յայտնուի մի օր եւ զայն բացայայտէ մեզ:

Հայութիւնը ցեղաճանաչութեամբ միայն կարելիութիւն պիտի ստանայ իր էութեան չգիտակցուած եւ չիմաստնաւորուած ուժերը լծելու մեր ցեղի վարած անհաւասար գոյամարտի գործին:

Այո՛, դեռ ցեղաճանաչ չենք, դեռ կանչում, ձայն ենք տալիս մենք մեզ, փնտռում ենք, բայց դեռ չենք գտել մեզ, դեռ չենք ճանաչել մեզ, որպէս ցեղ:

Փնտռում ենք յաւիտենական հայը, փնտռում ենք իր հեթանոս դարերում, իր քրիստոնէութեան մէջ, իր պատմութեան լոյսի տակ, իր գրականութեան մէջ, իր իմաստասիրութեան եւ վարած ճակատամարտերի, իր ստրկութեան եւ ինքնիշխանութեան, իր կոտորածների, արտագաղթերի եւ հայրենաշինութեան մէջ: Փնտռում ենք նրան իր բնաշխարհում եւ օտար հորիզոնների տակ, բայց դեռ չենք գտել:

Չենք գտել, սակայն գիտենք, որ միայն ինքնաճանաչութեամբ կարելի է տիրապետել այն տարերքին, որ յաւիտենական է հայ էութեան մէջ - մեր ցեղայնութիւնը:

* * *

Ցեղօրէն անինքնաճանաչ՝ դեռ կոյր հայ հոգու խորքերում, եւ այդ իսկ պատճառով անզօր մերօրեայ խնդիրների առջեւ՝ մենք, որպէս ժողովուրդ, շարունակում ենք մնալ նուաստ եւ նահատակ, երբ աշխարհը պահանջում է լինել ինքնայարգ, եւ յարգանք պարտադրելու աստիճան զօրաւոր:

Անասելիօրէն զօրութենական, բայց դեռ իր ինքնայաղթահարումը գլուխ չհանած, հայ էութիւնը իր անսպառելի շինարարական եռանդը կը մսխէ ընդունայն: Եւ այդ իսկ պատճառով մեր ժողովուրդը կը շարունակէ արնոտ տուրք տալ իր ցեղային անինքնաճանաչութեան:

Ա՜հ, դեռ շարունակւում է հայոց ողբերգութիւնը, մի անօրինակ ողբերգութիւն, որ մեր ազգային ուժի եւ հպարտութեան փոխարէն մեր տկարութիւնն ու նուաստութիւնն է սնուցանում:

Ուստի, մեկնելով այն կենսաբանական ճշմարտութենէն, թէ երբ ժողովրդի մէջ տկարանում է ցեղի շունչը՝ սկսուած է նուազիլ սերունդների կենսունակութիւնը, հոգեպէս փանաքիանում են անհատները, շեշտւում է նրանց վատասերումը, եւ վրայ է հասնում անժամանակ զառամութիւնը:

Մեկնելով այդ ճշմարտութենէն՝ քե՛զ, նորահաս սերունդ, ցեղիդ ձայնն եմ բերում քեզ: Ես քեզ ցեղակրօնութիւն եմ քարոզում: Ցեղակրօնութի՛ւն, որով անհայրենիք հայութիւնը հոգեւոր զրահ կը հագնի՝ օտար միջավայրերի այլասերիչ ազդեցութիւններին յաջողաբար դէմ դնելու համար:

Այդ դաւանանքը, մեր միակ դաւանանքը որեւէ հանգիտութիւն չունի այլ ուսմունքների հետ, իսկ եթէ կրօն է դա՝ ապա դա կրօն է ցեղային հպարտութեան, ուժի եւ արիութեան, դա քո՛ կրօնն է, նորահաս սերունդ:

Բ.

Ցեղակրօնութի՛ւն:

Լոզանում եւ Լոզանէն յետոյ՝ մահացուօրէն վիրաւորուած, զարնուած անարգանքի փոշիների մէջ, իր խորքի մէջ ցնցուած հայ հոգո՛ւ ծնունդն է դա:

- Չէ՛, այսպէս, այլեւս այսպէս չի կարելի ապրիլ, ապրիլ առանց սեփական իրաւունքի, արժէքի եւ արժանիքի գիտակցութեան, առանց ներքին հպարտութեան, առանց սեփական կեանքի, չէ՛, այսպէս չուզեր ապրիլ նորահաս սերունդը:

Անցեղաճանաչ՝ անզօր ու նուաստ է հինը, իսկ մեզ պէտք է նոր հայը, որին կը սպասենք ցեղակրօնութենէն: Մեզ պէտք է ցեղակրօն հայը, որ զօրէր դիմանալ մերօրեայ քաղաքական աշխարհին:

Ցեղակրօնութի՛ւն:

Նախ ցեղիս ճանաչումն է դա, ճանաչումը մի գերիվերոյ ուժի-էութեան.

Երկրորդ՝ այդ ուժ-էութենէն ծնած լինելուս գիակցութիւնն է դա:

Ապա՝ այդ ուժ-էութեան ցմահ հաւատարիմ մնալուս ուխտն է դա:

Գ.

Ես ցեղակրօն եմ, եւ ահա կ'երդնում Վահագնի աջի վրայ, երբեք չմեղանչել ուխտիս դէմ, որ է՝ ապրիլ, գործել եւ մեռնիլ որպէս ցեղակրօն:

Դ.

Ինձ համար՝ անհատականութեան եւ ազատութեան ամենաբարձր արարքը՝ հնազանդիլն է ցեղիս:

Ե.

Ես ցեղակրօն եմ: Այդ ասել է՝
Ես կը ճանչնամ իմ ցեղը,
Ես կը հաւատամ իմ ցեղին,
Ես կը պաշտեմ իմ ցեղը:

Ես ցեղաճանաչ եմ, եւ ահա գիտեմ, թէ մեծ է իմ ցեղը. թէ իմ ցեղն աւելի՛ն է տուել մարդկութեան, քան ստացել է նրանից. թէ հայոց նորագոյն յեղափոխութիւնը վերջին խօսքը եւ գործը չէ իմ ցեղի էութեան: Ես գիտեմ, թէ ինչ բանի ատակ է իմ ցեղը:

Ես ցեղահաւատ եմ, եւ ահա ես կը պաշտեմ եւ մի այլ աստուածութիւն՝ ցեղիս արիւնը, որի անարատութեան մէջ է մեր ժողովրդի ողջ ապագան:

Ես ցեղահաղորդ եմ, եւ ահա՛ կը զգամ, որ իմ անձը կը պատկանի աւելի իմ գերագոյն ծնողին՝ իմ ցեղին, քան իմ ծնողներին:

Զ.

Իր ժողովրդի քաղաքական ճակատագրով զբաղուելու գերագոյն պարտականութիւն ունի ցեղակրօնը, եւ ահա՛ ես կը պայքարիմ մի մեծ ճակատագրի համար, որին այնքա՜ն արժանի է իմ ցեղը:

Է.

Ցեղակրօն եմ, ասել է՝ ուր էլ որ լինեմ, ընկերային ինչ դիրք էլ որ ունենամ, ես խանդավառօրէն կը մնամ հպատակն ու մարտիկը ցեղիս:

Ը.

Հայաստանից դուրս, սփիւռքի մէջ, ինչ վիճակում էլ որ լինեմ՝ մեծահարուստ թէ օրավարձով աշխատող բանուոր, անդարձ պանդխտութիւն չեմ համարեր տարագրի կեանքս:

Չէ՛, չէ՛, վերադարձ կայ:

Թ.

Հայրենիքէս դուրս ես ինձ վրայ կը նայիմ որպէս ցեղօրէն զօրահաւաքի ենթարկուածի վրայ:

Ժ.

Կը դաւանիմ, որ իմ սերունդը աւելի մեծ պարտականութիւն ունի, քան ունէր անցնող ազատագրական սերունդը:

Պարտականութեան մէջ ցեղակրօնի իմ բաժինը՝ առիւծի բաժինն է՝ ամենամեծը:

ԺԱ.

Ցեղակրօնը, որի նշանաբանն է - աւելի՛, էլ աւելի՜ զօրութիւն - պաշտամունք ունի իր ցեղի մարտական ուժի, իմա՛ Հ. Յ. Դաշնակցութեան հանդէպ:

ԺԲ.

Զոհապաշտ եմ ես, եւ ահա՛ երկիւղածօրէն կ՚ոգեկոչեմ նրանց, որոնց պաշտամունքը յաւիտենական է, որոնք առիւծացան իրենց նուիրումի մէջ, աստուածացան իրենց հոյակապ գաղափարականութեան մէջ - որոնք դիւցազնօրէն իրենց արիւնը շռայլեցին՝ մեր ցեղի գոյութիւնն ու պատիւը յաւիտենականացնելու համար:

ԺԳ.

Ցեղակրօնն էլ կը ձգտի երջանկութեան՝ տեսնել, թէ ինչպէս կ՚աճի իր ցեղի զօրութիւնը եւ արդարօրէն Հայաստանը կ՚ընդարձակուի - ահա՛ նրա երջանկութիւնը:

ԺԴ.

Ցեղով կ՚ապրի, կը ստեղծագործէ, կը յաւերժանայ ժողովուրդը:

Մարդկային մշակոյթի գործում զօրութենական ուժ է ցեղայնութիւնը:

Արդ, թէ ինչո՛ւ ցեղային անհատականութեան եղծումը ցեղակրօնը կը համարէ ոճիր՝ ուղղուած մարդկութեան, եւ, ի մասնաւորի, իր ժողովրդի դէմ:

ԺԵ.

Ցեղակրօնը կը խորշի այն բոլոր հոսանքներէն եւ վարդապետութիւններէն, որոնք կը միտին մեր նորահաս սերունդը հեռու պահել ցեղի կազդուրիչ ստինքէն - կաթէն:

Նա կը խորշի հայ իրականութեան մէջ չեռացող այն բոլոր ուժերէն, որոնք թէպէտեւ ընկերային դիրքով հակոտնեայ, բայց ընդհանուր հոգեբանութեամբ միացած՝ ճակատ է յարդարած մեր լուսաւոր ազգայնականութեան եւ ազգային դատի դէմ:

Աւելի՛ պարզ: Ազգայնականութեան երկու ձեւերէն՝ ազգային անհատապաշտութիւն եւ եսապաշտութիւն՝ ցեղակրօնը կ՚ողջունէ առաջինը, որն այլ բան չէ, եթէ ոչ ազգ-անհատի արդար եւ արգասաւոր ձգտումը՝

հաւատարիմ մնալ իր ցեղի ոգուն, կատարելագործել իր պատմական տիպը, եւ պաշտպանել իր հաւաքական անձի ազատութիւնը:

Մեր այդ ձգտումը լիուլի համապատասխանում է միջազգային եւ ընկերային բարոյական եւ յառաջադիմութեան բարձր սկզբունքներին:

ԺԶ.

Մե՛ծ է ցեղակրօնի իմ թշնամանքը, ինչպէս մե՛ծ է իմ պաշտամունքը:

Ցեղիս թշնամիներն են՝ թուրքը, բոլշեւիկը եւ սրանց ցեղադաւ գործիքները, ամէն անուան եւ ծպտումի տակ, որոնց վճռաբար կը հակադրեմ իմ զօրութենական ցեղակրօնութիւնը:

Ինձ համար գոյութիւն ունի հարցերի հարցը՝ հապա բախտահաս թո՞ւրքը:

Այո՛, հայրենիքի շէնքը պէտք չէ բարձրացնել օտարատեացութեան ժայռի վրա, բայց եւ այնպէս հայութիւնը պէտք չէ ներէ թրքութեան: Աւելի՛ն: Եթէ այդ արնապարտ ցեղէն, որ կողոպտիչն ու սպաննիչը հանդիսացաւ անզէն հայութեան կէսին, մի օր մի բուռ անսուրբ մոխիր մնայ, այդ մերժելի մոխիրի հետ իսկ դատի-դատաստանի պիտի նստի հայը:

Կը խորշիմ բոլշեւիզմէն, որովհետեւ հակամարդկային է դա:

Երիցս կ՚ատեմ դա, որովհետեւ հակահայ է դա. որովհետեւ թուրքի հետ զինակցաբար դա մտաւ Հայաստան, որովհետեւ նրանից ցայսօր օգտուեց ցեղիս գերեզմանափորը՝ թուրքը, միա՛յն թուրքը:

Բոլշեւիկը իր շնական հրաժարիմքն ունի:

Ես՝ իմ վճռական այո՛ն ցեղիս:

Նա իր թուղթէ անզօր եղիցի՛ն ունի:

Ես՝ իմ հանապազօրեայ աշխատանքը ցեղիս ազատագրութեան համար:

Զզուելիօրէն բացասական է բոլշեւիկը, եւ դիմազուրկ՝ հոգեպէս:

Ցեղակրօնը մարդկութեան կը ներկայանայ ցեղադրոշմ ճակատով:

ԺԷ.

Պարտուողականութիւն, կրաւորական տառապանք, սարսափի հոգեբանութիւն, կեանքի ճապաղութիւն, լալկանութիւն, մտքի անիշխանականութիւն, կրօնական անդէնականութիւն, դասակարգային եւ յարանուանական եսականութիւն - այդ ամենէն խորշելով կը խորշի ցեղակրօնը:

ԺԸ.

Ցեղակրօն եմ, ասել է՝ պարտիմ, կամիմ եւ կարող եմ գերազանցել, եւ պէտք է գերազանցեմ ցեղիս թշնամիներին - նա՛խ թուրքին:

ԺԹ.

Ուժապաշտ է, եւ տկարութիւն ու նահանջ չի ճանչնար ցեղակրօնը: Նրա մօտ կենդանի է ծարաւը ինքնաճանաչման, քաղցրութիւնը զոհաբերութեան եւ ճիգը ցեղի ուժերի կենտրոնացման:

Արտաշիսեան իր նախնիքների մեծութեան հետամուտ՝ նա կը պատկառի իր ցեղէն եւ կ՚աշխատի ամենուրեք արժանաւորապէս ներկայացնել իր ցեղը:

Ի.

Ցեղակրօնի համար նուիրական է հայոց քաղաքական գոյառութեան օրը - Մայիս 28-ը եւ զայն խորհրդանշող սրբազնասուրբ Եռագոյնը, որն է՝ սրբութիւն, քաղաքական դատ, եւ վախճանաբանութիւն, միաժամանակ:

ԻԱ.

Ես ցեղակրօն եմ, եւ ահա վճռապէս կ՚ընդվզիմ քաղաքական աննպատակութեան դէմ, որի ազգասպան պրոպագանդին լծուած են հակադրօշակեան տարրերը - եւ կ՚աշխատիմ, որ սփիւռքի մէջ, ուր մենք կը տառապինք որպէս մարդ եւ որպէս հայ մարդ, որ հայութիւնը տեսիլաթափ չլինի:

ԻԲ.

Հայ մարդու հետ հայերէն կը խօսի ցեղակրօնը, որովհետեւ կը գիտակցի, թէ լեզուի մահը յաճախ ժողովուրդների հոգեւոր մահը կ՚արագացնէ:

ԻԳ.

Ինքնամսխումի մէջ ազատ չէ ցեղակրօնը: Քաջառողջ լինելու պարտականութիւն եւ իրաւունք ունի նա, որի ձեռքին է գալոց սերունդների ճակատագիրը:

ԻԴ.

Նրա համար նախասիրելի են ա՛յն գիտութիւնները, արուեստներն ու արհեստները, որոնք իր ցեղի հզօրութեան եւ յաղթանակին կը ծառայեն:

Կա՛մ մարտիկ է ցեղակրօնը, կա՛մ կը պատրաստուի վաղը դառնալու այդպիսին:

ԻԵ.

Անձնական կամքի մշակութեամբ ցեղակրօնը կը սատարէ հայ ոգու հսկայացումին:

Ցեղի կամքի աստուածացումը - ահա՛ թէ ինչի կը ձգտի նա:

Այդ անմեռ կամքին ահա՛, որ չմեռաւ խաւար դարերի հարուածների տակ, եւ չթողեց, որ ժողովրդի մէջ Մամիկոնեանների ռազմաշունչ ոգին մեռնի, ցեղակրօնը ասում է վճռաբար՝ այո՛ եւ ամէ՛ն:

* * *

Ես ցեղակրօն եմ, եւ ահա՛ կանգնած վաղուայ սեմին՝ լիաբուռն ցեղի խօսքն եմ նետում մեր նորահաս սերունդի հոգու մէջ - ես սերմանում եմ եւ առատ հունձքի սպասում:

Ես կանչում եմ՝

- Ո՞ւր էք, զօրաւորներ, դո՛ւրս, դու՛րս եկէք առաջին գծի վրայ, ուր ցեղի անունով եւ ցեղի համար պարզուած Եռագոյնը ձե՛զ է սպասում: Եկէ՛ք բանակելու նրա սրբազան ծալքերի տակ, ուր տկարութիւնը, նահանջն ու վատութիւնը տեղ չունին:

Եկէ՛ք, միացէ՛ք մեր Մեծ Ուխտին, որի կուռ շարքերի մէջ այնքա՜ն պարզ, տիրական ու քաղցր է լսւում ցեղի ձայնը:

Եկէ՛ք, օր, ժամ, վայրկեան առաջ եկէ՛ք միանալու ամերիկահայ նորահաս սերունդի ցեղապսակ մասին, որն ուխտած է՝ օտար աշխարհներով անցնել ամերիկեան մեծ գետերի պէս - միշտ պահելով իր ուղղութիւնն ու թափը. ուխտած է՝ ընթանալ ցեղի յաւերժացման գծով:

Ցե՛ղը, ցեղակրօնութի՛ւնն է մեր ապաւէնը:

«Հայրենիք» օրաթերթ, Բոստոն, 1933թ., թիւ 6517, 6520, 6524, 6528, 6534, 6542, 6545, 6554, 6568, 6583

ՑԵՂԱԿՐՕՆՆԵՐՈՒՆ

Դու գիտես դասական պատմութիւնը, որ խօսելով Լիկուրգոսի մասին, ասում է -

Բարեկարգելով Սպարտան (ուր քաղաքացիները, մոռացած իրենց անձը, կ'ապրէին միայն հայրենիքի համար, ուր նորահաս սերունդը կը մարզուէր յաղթանակելու արուեստի մէջ, ուր ամէն մարդ եւ բոլորը կ'երգէին՝ փառաբանելով հերոսներին ու պարսաւելով երկչոտներին)՝ Լիկուրգոսը ժողովի հրաւիրեց ժողովուրդը եւ ուզեց, որ նա երդուի, թէ իր բացակայութեան ժամանակ պիտի չխախտէ իր ստեղծած օրէնքները:

Ժողովուրդը կատարեց մեծ օրէնսդրի եւ հայրենասէրի ցանկութիւնը - երդուեց, որից յետոյ Լիկուրգոսը թողեց իր հայրենիքը, հեռացաւ:

Եւ որպէսզի սպարտացիներին չազատէ իրենց երդումից, նա վճռեց կամաւորապէս մեռնել՝ հեռու Սպարտայէն:

* * *

Ուխտակիցնե՛ր,

Ես ցեղի խօսքը, պաշտամունքը, օրէնքը քարոզեցի ձեզ: Ու երբ դուք երդուեցիք՝ մնալ հաւատարիմ ցեղակրօն անուան եւ դաւանանքին՝ ես հեռացայ:

Այժմ աշխարհագրօրէն շա՜տ հեռու եմ ձեզնից, բայց սպարտացի օրէնսդրի վերջին քայլին դիմելու պատճառ չունիմ, որովհետեւ խորապէս հաւատում եմ ձեր ուխտի սրբութեան եւ անխախտութեան: Չէ՞ որ դուք ուխտեցիք... հաւատարիմ մնալ ձեր ցեղին: Իսկ ցեղակրօնի համար հաւատարիմ մնալ՝ նշանակում է ամէն օր, ժա՛մ, վայրկեա՛ն հպարտանքով լսել այն սրբազան ձայնը, որ զրնգում է իր արիւնի մէջ եւ ասում՝

«Ես հա՛յ եմ եւ եօթնիցս հպարտ եմ, որ հա՛յ եմ: Ես ի՛մ ցեղի զաւակն եմ, եւ ահա՛ օտարութեան մէջ իսկ, Ցեղակրօնութեան շնորհիւ, ի՛ր կաթը կը ծծեմ»:

* * *

Ցեղակրօննե՛ր,

Ասել՝ «ես մարդ եմ», առանց ասելու՝ «ես հայ եմ», նշանակում է մեղանչել ե՛ւ հայութեան, ե՛ւ մարդկութեան դէմ:

Սո՛ւտ է, չկա՛յ եւ պիտի չլինի վերացական, ցեղօրէն անկերպարան մարդը:

Կա՛յ եւ կը մնայ ցեղադէմ մարդը – ֆրանսացին, անգլիացին, ռուսը, լեհը, արաբը, հայը – կա՛յ ցեղորոշ մարդը:

Չկա՛յ անկերպարան մարդկութիւն – կան մարդկային ցեղեր: Չկա՛յ մարդկութիւն – կայ նրա գաղափարը, անո՛ւնը միայն:

Եթէ գոյութիւն ունենար մարդկութիւնը՝ լոյսի եւ աշխատանքի մեր արդար ցեղի կէսն սպաննող թուրքը չէ՛ր մնայ անպատիժ:

Եթէ գոյութիւն ունենար մարդկայնութիւնը՝ տմարդ աշխարհը Լոզանում չէ՛ր սեղմի թուրք փաշաների հայ արիւնո՛վ ներկուած ձեռքերը, եւ եղբայրութիւն կեղծող Մոսկուան շնաբար չէ՛ր համբուրուի քեմալական Անգորայի հետ:

Մարդկութի՛ւն, մարդկայնութի՛ւն - դեռ սնամէջ բառեր են, հեգնանքը գայլ-ազգերի:

Եթէ այդպէս չլինէր՝ հայութեան անհայրենիք մասը Յիսուսի նման չէր շարունակի նախանձել բոյն ունեցող երկնքի թռչուններին:

Այդ այդպէս լինելով հանդերձ, պէ՛տք է ծառայել մարդկութեան, այո՛, պէտք է ծառայել, սակայն, մե՛ր ցեղի միջոցաւ, մե՛ր ցեղին ծառայելով - ապրելով ու ստեղծագործելով որպէս հա՛յ մարդ:

Մարդ դառնալու համար, պէտք է ցեղօրէն մարդ մնալ, որովհետեւ՝

Ամէն այլասերուած դիմակազրկւում, այլանդակւում է հոգեպէս, դառնում անստեղծագործ, քանդիչ ուժ, թշնամի՛ մարդկութեան:

Ամէ՛ն այլասերուած դժբախտանում է՝ կորցնելով կեանքն ու աշխարհը թարմ եւ անմիջական կերպով զգալու եւ ընդունելու իր կարողութիւնը:

Ամէ՛ն այլասերուած բնազդաբար եւ արդարօրէն արհամարհւում է, անկախ իր ընկերային դիրքից:

Այսպէս է պատժում ցեղի արիւնը:

* * *

Ուխտակիցնե՛ր,

Եւ ո՛չ մի զիջում մեր ցեղային անհատականութիւնից եւ արժանապատուութիւնից:

Դա դեռ չգոյ մարդկութեան եւ հայութեան շահն է պահանջում:

Բարձրէ՛ն, բարձրէ՛ն դիտէք – հեռուն՝ մեր ցեղի անցեալն ու ապագան տեսնելու համար, հայոց անցեալի խորհուրդը եւ ապագայի հրայրքը ապրելու համար:

Ապրէ՛ք ցեղօրէն, ցեղի՛ համար, ցեղակրօնաբա՛ր: Որպէսզի ձեր

միջոցաւ հայ սփիւռքի նորահաս սերունդը խորապէս գիտակցի թէ - անհերելի վատութիւն է՝ սեփական արժէքների ուրացումի գնով օտար ազգերի մէջ կեղծ իրաւահաւասարութիւն փնտռելը:

Հասկանա՛նք - ճշմարիտ իրաւահաւասարութիւնը հնարաւոր է միայն եւ միմիայն սեփական արժէքների միջոցաւ:

Իսկ արժէքներ ստեղծում է ա՛ն, ով ստեղծագործ է:

Իսկ ստեղծագործ է ա՛ն, ով չի մեղանչում իր ցեղային նախաէութեան՝ իր ցեղի արիւնի դէմ:

«Հայրենիք» օրաթերթ, Բոստոն,
1935թ., 14 հունիսի

ԽՕՍՔ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆԸ

«Հերկ»-ի յարգոյ խմբագրութեան*

Հարցնում էք՝

ա) ի՞նչ է իմ կարծիքը ներկայ հայ երիտասարդութեան մասին.

- Մերօրեայ հայ երիտասարդութիւնը, հակառակ իր անհայրենիք գոյութեան, օժտուած է իր յաւիտենական ծնողի - իր ցեղի անսպառ ուժականութեամբ:

Եթէ նա իբրեւ ուրոյն սերունդ, բառի գիտական իմաստով դեռ ձեւաւորուած ու կազմակերպուած չէ, դրա լրջագոյն պատճառը հին սերունդն է, որը դժբախտութիւն ունեցաւ շատ շուտ՝ հէնց իր արշալոյսին, կորցնելու ճշմարտօրէն իդէալիստ ու ցեղահոգ իր վարիչ ընտրանին:

Այդ սերունդին ցաւագինօրէն պակասեց մտաւորականի իր կոչման ու պատմական պատասխանատուութեան բարձր գիտակցութիւնը, պակասեց վերանորոգչական խանդը, եւ այդ իսկ պատճառով Հայոց վերածնունդը եղաւ պակասաւոր, իսկ յեղափոխութիւնը՝ կաղ ու թեւատ: Նա չունեցաւ խստօրէն շեշտուած տեսական խղճմտանք: Նա չսիրեց երես երեսի գալ գոյութեան ծանր պրոբլեմների հետ եւ մտածումի քրտինք թափել նրանց վրայ: Նրան պակասեց հերոսականի էտիկան: Նա եղաւ յանդուգն միայն այն ժամանակ, երբ պէտք էր ընդօրինակել մեր միջավայրի ու ժողովրդի հոգեբանութեան անյարիր կեղծ եւրոպականը, կասկածելի արդիականը, օտարը: Նա շփոթեց ազգային կուլտուրան դիմազուրկ կուլտուրականութեան հետ, առանց հասկնալու, որ առաջինն է միայն հատու զէնք, ցեղամիջեան պայքարների համար:

Յանցապարտօրէն դարձաւ կրաւորական երկրպագուն օտար իրականութիւններից ծնունդ առած «մոդէռն» գաղափարաբանութիւնների եւ այսպիսով պատճառ դարձաւ մեր ազգային ոգու խաթարման ու պառակտման: Այդ սերունդը, չնչին բացառութեամբ, ցայսօր էլ չունի կեանքի յստակ փիլիսոփայութիւն, փիլիսոփայական կուռ աշխարհայեցողութիւն, ու այդ իսկ պատճառով մեր հոգեւոր կեանքը շարունակում է մնալ քաոսային:

---

* *Սույն գրությունը Նժդեհի պատասխանն է «Հերկ» ամսագրի հարցումներին՝ ուղղված հայ կյանքի տարբեր հոսանքների ու դասերի պատկանող անձանց: Ի դեպ, ամսաթերթը խմբագրում էր Կարապետ Պալճյանը՝ ապագա կաթողիկոս Վազգեն Առաջինը:*

Օրուայ տարագիր հայ երիտասարդութիւնը հինի մոլորանքներից զերծ մնալու, ինչպէս եւ վերանորոգչական պաթոսի, ոյժի եւ կամքի վերածուելու համար՝ հրամայողաբար պիտի դիմէ մշակութային որոշ վերաքննութեան: Նա պիտի վերաքննէ այն գլխաւոր հասկացողութիւնները, որոնք կազմում են հիմքը օրուայ հայութեան կուլտուրքաղաքական կեանքի:

բ) Ի՞նչ պիտի ընէ ան.

- Ա՛յն, ինչ որ անում է երիտասարդ սերունդը ընդհանրապէս եւ համաշխարհօրէն: Հին է սերունդների պրոբլեմը, այնքան, որքան հին է մշակոյթի պատմութիւնը: Ժողովուրդները իրենց երիտասարդութեան միջոցաւ են իրականացնում իրենց յաւիտենականը, նաե՛ւ՝ վերջինի միջոցաւ պարբերաբար թարմացնում, յեղափոխականացնում, ուժաւորում իրենց ոգին: Այսօր ամենուրեք - Արեւելքում թէ Արեւմուտքում, Հին թէ Նոր Աշխարհում - ամէն տեղ ազգերի ծոցի մէջ երիտասարդական բունտ, ընդվզում կայ: Երիտասարդութիւնը միաժամանակ ե՛ւ յեղափոխական, ե՛ւ յեղափոխիչ ոյժ է: Աշխարհի վերակառուցման մեր խռովքոտ օրերուն նա հանդիսանում է ամենապայքարունակ տարրը - ծարաւի Նորի, մի նոր էտիկայի, նոր կենցաղի, ընկերային մի նոր, մի արդար կարգ ու սարքի, մի նոր ճակատագրի: Ամենուրեք նա խոստանում է դառնալ վտանգի ու հերոսականի սերունդ: Որոշիչը մերօրեայ երիտասարդութեան կեանքում կենսաբանականը չէ - տարիքը, հասակը չէ, այլ՝ ապրած պատմականօրէն բացառիկ նշանակութիւն ունեցող ժամանակաշրջանը: Նա սիրում է առողջը, կոնկրէտը, զօրաւորը: Խորշում է այն ամէնից, որ տկար է, թեւաթափ եւ շփոթ:

Ցեղային ոյժերի զարթօնքը, միութեան եւ կենտրոնացման պրոցեսում, առաջնակարգ ազդակների շարքում, երիտասարդութիւնը գրաւում է առաջին տեղը: Նրա օրուայ կրօնն է՝ վոժդիզմը, առաջնորդապաշտութիւնը: Նա դառնում է գրոհի սերունդ, եւ այդ իսկ պատճառով ուժապաշտ է, այդ միեւնոյն պատճառով նա զօրաւոր առաջնորդներ է փնտռում: Աննախընթաց խանդով ու վճռականութեամբ նա կառուցում է իր ազգային հաւատամքը: Նա դարբնում է, ճանաչումի քաղցրութեամբ նա կռում, կոփում է իր սեփական աշխարհայեցողութիւնը, իր դինամիկ աշխարհընմբռնումը - այնպիսի՛ն, որ համապատասխանէր իր ժամանակի ոգուն, իր ցեղի էութեան, իր հայրենիքի ներքին եւ արտաքին պայմաններին, ինչպէս եւ այդ վերջինի հետ կապւած բոլոր տեսակի պրոբլեմներին:

Դրանից տարբեր չէ կարող լինել եւ պիտի չլինի մեր երիտասարդութեան դերը: Իր անունն ու կոչումը արդարացնելու համար նա մի հատիկ հոգեւոր լծակ ունի - Ցե՛ղը, մի հատիկ ճամբայ - Ցեղի հետքերով:

գ) Այդ տեսակէտէն ի՞նչ դեր կրնայ ունենալ «Հերկ»ը:

- Մտքի անիշխանականութիւնից, մտաւոր դիսցիպլինի պակասից տառապող հին սերունդը իր օտարահակ տրամադրութիւններով խորապէս մեղանչեց իր ցեղի դեմ, եւ այդպիսով պատճառ դարձաւ իր ժողովրդի անօրինակ ողբերգութեան: Այսօր այլեւս ակնբախ իրողութիւն է մարդկութեան վերախմբաւորումը ցեղային հիմքերի վրայ: Ու երիտասարդութիւնը՝ ամենուրեք, եռուզեռ է, շարժում, ծառացած կամք, կենդանի գործ:

«Հերկ»ը իբրեւ երիտասարդ սերունդի օրգան՝ պիտի աշխատէ նախ հոգեբանօրէն նուաճել երիտասարդ Հայը, հայութիւնը իր ցեղի համար: Իսկ իր այդ մեծ առաքելութեան մէջ յաջողելու համար՝ նա պիտի նպաստէ սեփական ազգային գաղափարաբանութեան մշակման գործին:

Պէտք է նախ օտար խաթարիչ ազդեցութիւններէն ազատագրել ու կազմակերպել Հայ Մտածողութիւնը, այլապէս Հայութիւնը կը մնայ պառակտուած ու ցրուած հոգեբանօրէն, կը մնայ տկար՝ միշտ պատրաստի որս իր երկու թշնամիների - Հայաստանում՝ իր հարեւանների, Հայաստանից դուրս՝ օտարացման վտանգի համար:

Պատմութիւնը աճապարում է - չդանդաղի՛նք:

Դեկտ. 1937, Սոֆիա

«Հերկ», Բուխարեստ, 1938թ., թիւ 9

ՑԵՂԻ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԶԷՆՔԸ

«Ես հարցնում եմ այնպէս, ինչպէս ո՛չ ոք դեռ չէ հարցրել - ո՞ւր ենք գնում: Մեզ համար տեղ կա՞յ պատմութեան մէջ: Գիտէ՞ մէկը, որ բոլորովին մենակ ենք մնացել, որ ներկայ չունենք: Գիտէ՞ մէկը, որ եթէ դադարենք գոյութիւն ունենալէ՝ տիեզերաշէնքի մէջ մի հատիկ հիւլէ իսկ պիտի չշարժւի»:

Հայոց պատմութեան փիլիսոփայութեան ծանօթ ու հայրենազգաց ամէն մտաւորական հայ կը խոստովանի, որ Մամիկոնեանների Հայաստանը - թէկուզ յաճախ կիսուած, կիսանկախ, կիսակործան - աւելի՛ հայկական է, աւելի՛ հայրենիք, եւ աւելի՛ պաշտամունք պարտադրող, քան է՛ր նոյնը՝ Տիգրան Աշխարհակալի կամ Արտաշէսի օրով:

Ո՞ւր փնտռել սրա գաղտնիքը:

Հոգեբանական այդ իրողութեան պատճառներէն առաջինը նրանում է, որ Տարօնի ստեղծած արժէքներէն շատերը կրում են համահայկական կնիք, երկրորդը՝ նրանք վաւերական են, անմեռ, երրորդ պատճառը - դա Մամիկոնեանների հայու եւ Հայաստանի յաւիտենականով ապրելու, նրանց համար անշահասիրաբար գործելու ու արիաբար մեռնելու ուխտն է:

Այո՛, մեր ցեղի յաւիտենականը նուաճող գրեթէ բոլոր հոգեւոր զէնքերը - լուսեղէն այբուբէն, քաջաքաջ արիութիւն, անցաւորը յաւիտենականին զոհաբերելու տենչ, կենսաբանական բարոյական, հայրենակրօնութիւն - այդ բոլորը, գրեթէ բոլորը, մեզ տուել է Տարօնը:

Հայոց աշխարհի ո՞ր անկիւնում հայն այնպէ՜ս պաշտեց իր հողը, այնպէ՜ս առիւծացաւ ճակատամարտերում, իր երկրի համար այնպէ՜ս մեռնել գիտցաւ, ինչպէս Տարօն աշխարհում:

Պատմական անցեալի տեսակէտով մեր այդ երկրամասը, ո՛չ միայն իր հոգեւոր տարողութեամբ, այլեւ իր ռազմագիտական անչափելի նշանակութեամբ, իսկապէս որ ուրոյն աշխարհի արժէք ունի:

Ճի՛շդ է, սուրբ է հայրենի երկրի ամէն մի բուռ հողը, սակայն, ճիշդ է եւ այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմա-ռազմագիտական տեսակէտից ամենանուիրական ու ամենակարեւոր երկրամասը,- ա՛յն երկրամասը, ուր ցեղը ամենէն շա՛տ է արիւն թափել, կուլտուրական գանձեր դիզել, հերոսական ու պատմութիւն ստեղծել - ա՛յն երկրամասը, առանց որի հայրենիքը ո՛չ թէ զօրաւոր ու անկախ լինել, այլեւ իր գոյութիւնը պահել, ինքնապաշտպանւել չէ կարող:

Ճակատագրօրէն մեծ է Տարօնի նշանակութիւնը մեր ցեղի եւ հայրենիքի պաշտպանութեան համար:

Քանի դեռ մեր երկրի աշխարհագրական մարմնից կտրուած կը մնայ Տարօնը՝ վտանգուած կը մնայ մեր հայրենիքի ապագան:

Ամէն երկիր իր «Տարօն»-ը ունի:

Հարցրէ՛ք ազգերին - նրանք սրբազան սարսուռով կ'արտասանեն իրենց «Տարօն»-ի անունը:

Դեռ երէկ էր, ինչ քեմալական Թուրքիոյ ներքին գործոց նախարարը- Շիւքրի Գայա - Թրակիայում արտասանած իր ճառի մէջ, Ադրիանուպոլսի նշանակութիւնը Թուրքիոյ ինքնապաշտպանութեան տեսակէտից շեշտելու մտօք, կը յայտարարէր. «Ամէն թուրք ինքն իրեն պիտի զգայ ադրիանուպոլսեցի, նա՛խ ադրիանուպոլսեցի»: Ինչո՞ւ. որովհետեւ քանի դեռ թրքական է Ադրիանուպոլիսը, թուրքը մէկ ոտքով կը մնայ Եւրոպայում. որովհետեւ կորցնելով Ադրիանուպոլիս քաղաքը, կործանուելու աստիճան կը տկարանայ Թուրքիան:

«Նա՛խ Ադրիանուպոլսեցի» - երկու բառեր միայն, որոնք տալիս են հայրենիքի ինքնապաշտպանութեան անսխալ բանաձեւը:

Որքա՜ն խոր հոգեբանութիւն, որքա՜ն ռազմա-քաղաքական իմաստութիւն ու նախանձելի հայրենապաշտութիւն կայ թուրք պետական գործիչի այդ մի հատիկ պատգամ - բանաձեւի մէջ:

«Նա՛խ Ադրիանուպոլսեցի» - դա ասել է՝ թո՛ւրք մարդ, արթուն կա՛ց, քանզի վաղ թէ ուշ, Թրակիոյ դաշտերում իրար պիտի զարնուեն երկու ճակատագրեր՝ Թուրքիոյ եւ մի օտար պետութեան: Դա ասել է՝ պարտուե՞ց թուրքն այդ կէտի վրայ, նա կը պարտուի բոլոր ճակատների վրայ: Դա ասել է՝ ամէն թուրք իրեն պիտի համարի զինուոր՝ միշտ պատրաստ վահանի վերածելու իր կուրծքը Թուրքիոյ ամենակարեւոր ճակատի վրայ:

Եւ իբրեւ արձագանգ թուրք նախարարի յայտարարութեան, Պոլսում, թուրք ուսանողութիւնը այսպէս պատասխանեց ֆրանսական մի լրագրողի. «Մենք բոլորս էլ ցեղապաշտներ ենք, ծայրայեղ ցեղապաշտներ. ցեղապաշտութիւնը մեզ համար հոգեւոր սնունդ է, ինչպէս հացն ու ջուրը մարդկային օրգանիզմի համար»:

Նոյնը մի այլ առթիւ. «Ամենասրբազան պարտականութիւնը մեզ համար-դա Թուրքիոյ անունի, պատուոյ եւ անկախութեան համար մեռնելն է»:

Այսպէս է խորհում, գործում, նախապատրաստւում թուրքը. նա այսպէս է կազմակերպում իր ազգութիւնը՝ վտանգի նախօրեակին:

Իսկ մե՞նք, իսկ հա՞յը:

Ո՞վ կարող է ուրանալ, որ Տարօնը մեզ համար եօթնիցս աւելի՛ն է, քան Թրակիան Թուրքիոյ համար:

Արդար չէ՞, որ այսօր հայ մարդն աւելի մտահոգւի Տարօն աշխար-

հով, քա՛ն թուրքն իր Ադրիանուպոլսով: Սպասելի չէ՞, որ այսօր ո՛չ թէ միայն տարօնցին, այլեւ ամէն հայ, անկախ իր քաղաքական ու յարանուանական հանգամանքից, ջերմաջերմ պաշտամունք ունենայ Տարօնի ստեղծած ցեղակնիք արժէքների, առաքինութեանց ու սրբութիւնների հանդէպ:

Ժամանակը չէ՞, որ ամէն հայ մարդ զինուորագրուի «Մամիկոնեանների ուխտ»-ին, որից, աւա՜ղ, աւելի ներքին, քան արտաքին պատճառներով աստիճանաբար խորթացաւ հայութիւնը եւ այդ իսկ պատճառով ցեղօրէն տկարացաւ ու պատժւեց անմարդկօրէն: Այսօր, երբ մարդկութիւնը մեզ դրել է հայօրէն ապրելու եւ ստեղծագործելու անկարելիութեան առջեւ այս աշխարհածուփ ու վտանգալի ժամանակներում, քաղաքական իմաստութիւն չէ՞, որ ցեղերէն ամենավտանգուածը, հայը, վերստին ապաւինէ Տարօնականութեան - ցեղի յաւիտենական զէնքին:

* * *

Գերազանցօրէն յեղափոխական են մեր օրերը, ճակատագրական՝ մերօրեայ անցքերը:

Վաղուց է, ինչ մարդկութիւնը իրեն զգում է նստած հրաբուխի վրայ: Ականած է հին աշխարհը: Մարդը - անհատ թէ հաւաքականութիւն - այսօր աննախընթացօրէն անապահով, խռովւած է զգում իրեն:

Զարհուրելի են ցնցումները կեանքի բոլոր մարզերում: Ճգնաժամ են անցկացնում՝ պետութիւն, տնտեսութիւն, կրօն, փիլիսոփայութիւն:

Վերաքննութեան են դրուած կեանքի բոլոր պրոբլեմները: Ժողովուրդները յեղափոխական չտեսնուած ցասումով ջախջախում են կեղծ արժէքների, գաղափարների ու ճշմարտութիւնների տախտակները, եւ նրանց փոխարէն նորերը գրում:

Այլեւս բեկւել է պատմութեան զարգացման գիծը, եւ սկսւել է սուր անկիւնադարձը:

Սկսւել է նորը, նո՛ր աշխարհ, նո՛ր պատմութիւն, որի ստեղծիչը հանդիսանում է նոր, վերանորոգուած մարդը - վտանգի, հերոսականի, ճակատագրի մարդը:

Ամենուրեք - Արեւելքում թէ Արեւմուտքում, հին թէ նոր աշխարհում - գալիքի ահաւորութիւնից խթանւած՝ վերածնւում, հոգեպէս երիտասարդանում են հին ժողովուրդները. ակտիւանում՝ երիտասարդները: Երբե՛ք ժողովուրդները այդքան ուժապաշտ չէին եղել: Ամէն մէկն աշխատում է ոտքի հանել իր թաքուն ոյժերը, յաղթահարել իր ներքին տկարութիւնները, սանձել, շղթայի զարկել իր ցեղախոյս «Ես»-երը, նախանձները, չարութիւնները:

Բոլորը - յաղթական թէ պարտեալ, մեծ թէ փոքր - ելած են նուաճելու

ներքին անապատը, այնպէ՛ս, որ դա անհետի ո՛չ թէ միայն իրենց երկրի քարտէսէն, այլեւ իրենց հոգիէն: Տիրող տագնապը աւելի՛ եւս շեշտում է եռագլխանի վտանգը. բոլշեւիզմ, պատերազմ, ցեղային վատասերում - որի դէմ յաջողաբար պայքարելու համար՝ ժողովուրդները ապաւինել են իրենց ցեղային բնազդի ոյժին եւ անսխալականութեան - իրենց կենսաբանական բարոյականին:

Ամենուրեք - անհատ թէ դասակարգ - կամովին սահմանափակում են իրենց անձնական իրաւունքներն ու շահերը՝ յանուն ցեղի եւ հայրենիքի: Ու նման ինքնասահմանափակումը - զոհաբերութեան այդ գերագոյն ակտը - ո՛չ թէ նուաստացնում, դիմազրկում է մարդկային անձնաւորութիւնը, ընդհակառակը, դա մեծապէս ուժաւորում, հարստացնում է նրա հոգեւոր կեանքը:

Բոլոր ժողովուրդների համար - մասնաւորապէս նրանց, որոնք պատերազմէն ծանրօրէն վիրաւոր ու պարտուած դուրս եկան - բոլորի համար, այլեւս ցեղային դաւանանքի բնոյթ է ստացել իրենց ոյժերի կենտրոնացման, կազմակերպման ու ակտիւացման անհրաժեշտութեան գործը: Նրանք գերմարդկային ճիգեր են թափում մի կողմից ներցեղային բարոյականի ոյժով դարմանելու միջազգային դաժան պայմանագրութիւններից ստացած վէրքերը, միւս կողմից պատրաստւում են դիմագրաւելու վաղւայ վտանգը:

Քանի դեռ Ռաթենաուն գերման ժողովրդին կը ներշնչէր, թէ «գետնախնձորն» է իր ճակատագիրը, Գերմանիան, իբրեւ պարտեալ, յաղթականներին կը վճարէր օրական չորս միլիոն, եւ նաստ էր նա: Այն օրէն, սակայն, երբ գերման ճակատագրի ղեկավարութիւնը իր ձեռքն առաւ ռազմաճակատէն վերադարձած մի վիրաւոր տասնապետ, երբ ժողովուրդն իր ճակատագիրը համարեց Ցեղն ու Հայրենիքը, այն օրէն փոխուեցին միջազգային յարաբերութիւնները - պարտեալը առանց պատերազմի դարձաւ յաղթական:

Հունգարիան - Տրիանոնի ողբերգական զոհը - չուշացաւ իր դպրոցների մէջ մտցնել ռէվիզիոնիզմը, իբրեւ պարտադիր առարկայ - անարդար պայմանագրերի վերաքննութեան պահանջը: - «Տրիանո՞ն, ո՛չ, երբե՛ք» - այսօր ամէն մի հունգարացու համար դարձած է քաղաքական աղօթք:

Հապա զօրք պահելու իրաւունքից զրկւած Կրալի Մարկօի հայրենիքը - Բուլղարիան, որի հանդէպ յաղթականները եղան դաժանօրէն շնական - այս փոքրիկ երկիրը, իր կենսաբանական զօրաւոր բարոյականի ոյժով ծնունդ տւեց երեւութապէս մի աշխատաւորական բանակի, անզէն զօրքի, որն այսօր պիտի դառնար իր մարտական ոյժը:

Այսպէս գործեցին ցեղօրէն անպարտելի պարտեալները:

Ի՞նչ են անում յաղթականները:

Լսեցէ՛ք նրանցից մէկին, Ֆրանսայի մտաւորականութեան.

«Գրողներս, մեր երկրի գլխին կախուած սպառնալիքի առջեւ, ցաւելով, որ ֆրանսացիների միաբանութիւնը կատարուած իրողութիւն չէ դեռ, վճռեցինք դադարեցնել ամէն գժտութիւն, ժողովրդին եղբայրութեան օրինակ տալու համար»:

«Միանա՛նք՝ Ֆրանսան վերանորոգելու համար»,- ասում է նրանց երկրորդ մանիֆեստը: «Ստեղծե՛նք մի նոր Ֆրանսա, որ աւելի՛ զօրաւոր լինէր, քան բոլոր վտանգները»,- ասում է ժողովրդին ուղղուած նրանց երրորդ մանիֆեստը:

Ահա Ֆրանսայի բարձր մտքի՝ իդէական ու քաղաքական ամենատարբեր ուղղութեանց պատկանող մարդկանց հայրենասիրական շարժուձեւը:

Այս է ամէն տեղ ազգերի ու անցքերի հոգեբանութիւնը - դինամիկան:

Այսպէս հիմնաշարժ է եղել, հիմէն խախտուել, այսպէս քանդւում ու վերակառուցւում է մի ամբողջ աշխարհ - հի՛նը:

Հասկանալի է, որ տիրող ընդհանուր տագնապի պրոբլեմի կապակցութեամբ - մի տագնապ, որ այնքան զգալիօրէն շօշափում է մեր հաւաքական ճակատագիրը - վաղուց դրուած պիտի լինէր ե՛ւ Հայ ապագայի խնդիրը՝ - ի՞նչ է լինելու հայ մտաւորականութեան այսօրւայ եւ վաղւայ անելիքը իր ժողովրդի եւ Հայրենիքի ինքնապաշտպանութեան համար:

* * *

Ճակատամարտերից առաջ, կանխաւ պարտուած պիտի համարել այն ժողովուրդը, որ չէ կարող շեշտակի նայել աշխարհի աչքի մէջ եւ ասել. ես հասկանում եմ քեզ:

«Դիտի՛ր աշխարհը եւ նմանի՛ր նրան»,- ասում է դասական իմաստութիւնը:

Դիտում է հայը, դիտում իր առջեւ փռուած աշխարհը, բայց, կարծէք, չի տեսնում, չի հասկանում ա՛յն, ինչ որ կատարուած է իր շուրջը:

Տարիներ է, ինչ մեր մտաւորականութեան ցեղահաղորդ մասի հետ կրկնում ենք - մարդկութիւնը վերախմբաւորւում է՝ հիմք ունենալով ցեղը: Ժողովուրդները վերադառնում են իրանց էութեան նախաղբիւրին, քանզի նրանց համար այլեւս գիտականօրէն աներկբայելի է, որ «օրգանականը պատմութեան մէջ՝ ցեղն է»: Այդ փրկարար ճշմարտութիւնը, դժբախտաբար, միայն հայ մարդը չէ հասկացել: Ցեղի գաղափարն է իմաստաւորում մեր գոյութեան իրաւունքը, ինչպէս եւ՝ հայրենիքի համար մեռնելու մեր պարտականութիւնը: Այս բարոյականով են զօրաւոր օրւայ բոլոր ազգերը: Մենք տկար ենք հոգեվարելու աստիճան, որովհետեւ մեզ պակասում

է այդ բարձր բարոյականը: Մեր դրութեան ահաւորութիւնը նրանում է, որ հայութիւնը, իր ամբողջութեան մէջ, դեռ չի հասկանում աշխարհի ներկայ պայմանները: Նա չի հասկանում, որ թուրքի նման հարեւան եւ թշնամի ունեցող ժողովրդի համար, հնի շարունակութիւնը համազօր է ցեղային ինքնասպանութեան:

Ցեղօրէն անինքնաճանաչ է հայութիւնը: Ամո՜թ մեզ - օտարը, Ֆրանց Վերֆէլը պիտի գար ասելու - «ոգու ժողովուրդ է հայը»: Այո՛, ոգու ժողովուրդ ենք եւ այդ իսկ պատճառով այն բոլոր վարդապետութիւնները, որոնք դիմազուրկ ոգու ծնունդ են, օրինակ՝ սոցիալիզմ, բոլշեւիզմ, կոսմոպոլիտիզմ - մնում են անմարսելի եւ անհարազատ հայ հոգու համար:

Ոգեշունչ էր քրիստոնէութիւնը եւ հէնց այդ է պատճառը, որ նրա գիրկը նետուողներէն առաջինը՝ եղաւ հայը: Հասկանա՛նք - մեր ժողովրդի ամենազօրաւոր զէնքը միշտ էլ եղել է ոգին:

Ամէն ճշմարիտ հերոս նախ ոգու հերոս է: Առանց ոգու հզօրանքի հայ մարդը կարող է ե՛ւ յանդուգն լինել, դիպուածով ե՛ւ յաղթական հանդիսանալ, բայց ո՛չ՝ ե՛ւ հերոս: Ոգու հերոսներ էին Մամիկոնեան ռազմիկները, եւ հէնց սրանում է գաղտնիքը, որ նրանց ձայնի մէջ ցեղի ոյժի եւ կամքի վագրը կը մռնչէր, որ նրանք բիբլիական Դաւիթի նման, թշնամու դէմ յաճախ դուրս էին գալիս «երեք քարով» միայն եւ խորտակում նրան, իրենց առաջին հարուածով:

Ոգեշունչ է հայ ռազմիկը եւ այդ է պատճառը, որ նա Արեւելքի լաւագոյն պարտիզանն էր, է՛ եւ այսօր, որ նա շատ անգամ սակաւաձեռն ոյժերով հսկայաթիւ բանակների դէմ է ճակատել, որ կռիւներ է վարել ամենադժուարին պայմանների մէջ՝ կէս-կուշտ, կէս-քաղցած, առանց նւազագոյն տեխնիք միջոցների, առանց զինակիցների, մենա՛կ ու յաճախ՝ իսպառ կտրուած աշխարհից:

Դարեր առաջ մեր ռազմիկների ոգեշնչութիւնն է շարժել թշնամի Շապուհների նախանձը. «Երանի՜ նրան, որ հայոց գնդի տէրն է. այնպիսի տիրասէր եւ միաբան ու միամիտ զօրաց, որոնց գնդէն ու նշաններէն հուր եւ բոց կ'ելնէ»:

Ոգու մարդ էին Մամիկոնեան բոլոր զօրավարները, որոնց կամքի առջեւ խոնարհւում էր ամէն դժուարութիւն եւ վտանգ, որոնց համար վտանգ ասել էր մի հին, ընտանի ծանօթ: Ոգեշունչ էին նրանք եւ հէնց այդ է պատճառը, որ ժամանակին նրանք հանդիսացան իրենց ցեղի արթուն բնազդը, նրա աչքը, նրա ուղին, նրա մարգարէն, նրա օրէնսդիրը եւ մասնաւորապէս, իրենց ժողովրդի անզուգական ղեկավարն ու առաջնորդը: Ասենք մի այլ ճշմարտութիւն - միայն ոգու մարդը կարող է մեր ժողովրդի ղեկավարը լինել:

Իսկ ոգու մարդ ասել է՝ ցեղամարդ: Նմանին, միա՛յն նմանին կարելի է հայ ժողովուրդը եւ երկիրը վստահել:

Որքա՜ն կորուստներ ու ամօթանք խնայւած պիտի լինէին Հայաստանին, եթէ հայութիւնը հարազատէր ու սիրէր կիրարկել այս ճշմարտութիւնը:

* * *

Հայութիւնը դեռ հասկացողութիւն չունի այն չարիքի մասին, որ կոչւում է ստամտաւորականութիւն: Հայը սխալ է գործածում մտաւորական բառը, սխալ հասկանում՝ նրա իմաստը: Նրա համար մտաւորական է ամէն ուսեալ մարդ: Հէնց սրանում է նրա աղէտալի սխալը: Ուսում, կրթութիւն, գիտական պաշար - անհրաժեշտ են սրանք, բայց դեռ բաւական չեն մէկին ճշմարիտ մտաւորական դարձնելու: Մէկը կարող է իմացականօրէն շատ զօրեղ լինել, բայց եւ այնպէս իրաւունք չունենալ մտաւորական կոչւելու:

Ճշմարիտ մտաւորականը նա է, որ իր մտաւոր կարողութեան, ամէն բանից առաջ, միացնում է խորապէս բարոյական նկարագիր, բարձր գաղափարականութիւն, ստեղծագործելու - նոր իտէալներ, արժէքներ, կեանքի ձեւեր ստեղծելու ընդունակութիւն, սրբազանի զգացում, տեսական խղճմտանք, հոգեւոր արիութիւն, ժողովուրդն իր ամբողջութեան մէջ սիրելու, նրա համար տառապելու անսահման կարողութիւն:

Ի՜նչ խօսք, որ նման մտաւորականը, իրերի բերումով, կարող է տեղ գտնել այս կամ այն քաղաքական կազմակերպութեան մէջ, բայց նրա նուիրումն ու գործը չեն կրի դասակարգային, հատուածական բնոյթ: Նրա համար գոյութիւն ունի ամբողջութիւնը - ազգը, որին անշահասիրաբար կը ծառայէ: Ճշմարիտ մտաւորականութիւնը, որի գործը անընդհատելի է ազգի կեանքում - այն հոգեւոր ոյժն է, առանց որի ժողովուրդ անւան տակ ամբոխներ կ'ապրեն, առանց որի ազգութիւն չի ստեղծւի: Յանձին սերունդների՝ մտաւորականութիւնները օրգանապէս չեն կտրւում իրարից, չեն ժխտում, այլ հարստացնում են, կատարելագործում իրար: Այդ տեսակէտից ճշմարիտ մտաւորականութեան ստեղծագործութիւնը կրում է յաւիտենականի կնիք: Ճշմարիտ մտաւորականներից զուրկ չէ հայութիւնը, բայց զրկւած է նրանից օգտւելու կարելիութիւնից: Մեր ստամտաւորականութիւնը աւելի՛ շուտ յարմարւեց գաղթաշխարհի պայմաններին եւ պարտադրեց իրեն:

Այսպիսով՝ մեր ժողովուրդն ու իսկական մտաւորականութիւնը մնացին իրարից կտրւած: Կեղծ մտաւորականութիւնը, որի դէմ ազգերի ընտրանին մահու եւ կենաց պայքար է բացած, մեզ մօտ այլեւս ամբողջովին նւաճել է կեանքը եւ կ'իշխէ անընտրողաբար ու միահեծան կերպով:

Օրւայ հայ կեանքի հոգեւոր ահեղ չքաւորութեան, տափակութեան ու այլանդակութիւնների միակ պատճառը մեր ստամտաւորականութիւնն է:

Չարարւեստ բանսարկութիւն, հացակռիւ, դիրքի մակաբուծութիւն, պաշտօնապղծութիւն, խօսքի ազգասիրութիւն - այդ բոլորի մէջ՝ կարելի է նրա հոգու հետքերը տեսնել:

Անցեղաշունչ է, որով եւ հոգեպէս թեւատ ու առօրէական ունայնութիւններից ու մանրուքից բարձրանալու անզօր: Անստեղծագործ՝ նա վազում է առաւելապէս բացասական ու աննշան նպատակների ետեւից, մնալով՝ զզւելիօրէն մանրագործ, պառակտիչ ու չար: Այսօր աւելի հեշտ է եօթը շնագայլերի քաղցը յագեցնել, քան անցեղաշունչ հայ ստամտաւորականի չարութիւնը: Դարերի վկայութեամբ է հաստատւած մեր ցեղի կենսունակութիւնը, նրա կենսաբանական խոյանքը, սլացքը, բայց եւ այնպէս նա մնում է նւաստախոհ, օտարամոլ, պարտւողական: Իբրեւ ազգային պաշտօնեայ, նա Աստուածաշունչի անմահացրած մաքսաւորն է՝ ծոյլ, անհաւատարիմ, հացապաշտ: Իբրեւ գործիչ՝ դպիր է նա: Իբրեւ ուսուցիչ՝ հոգով էսնաֆ, անկարող ոյժի եւ հզօրանքի տեսիլներ պարզել աշակերտող սերունդի առջեւ:

Եթէ այսօր մեր զաւակները գունատւում են ցեղօրէն, հայօրէն - դրա պատճառը, օտար միջավայրէն աւելի, այդ տարրի անցեղաշնչութիւնն է:

Մեր մտաւորականութեան հոգեւոր դեղնախտով տառապող այդ մասը չուզեց օգտւել Ամերիկայի մեր ցեղահոգ մտաւորականների թարմ օրինակէն - ցեղակրօնութենէն: Նա վատաբանեց. «Ցեղակրօնութիւնը Հիթլէրութիւն կը հոտի»: Նա այսպէս չարամեկնեց, գիտնալով հանդերձ, որ ցեղակրօնութիւնը ծնունդ է առել մեր հայրենի Լեռնաշխարհի գլխին կախւած մեծ վտանգի օրերին, երբ մարդկութիւնը լսած չէր Հիթլէրականութեան մասին: Յանձին մեր Դաւիթբէգեան ցեղապահ ուխտերի՝ 1920-ին գործեց ու յաղթանակեց ցեղակրօնութիւնը: Նա գիտէ, որ Հայաստանի մտաւորականութիւն, Հ.Յ.Դաշնակցութիւն, Սիւնեաց երկիր - այդ բոլորը իրենց փրկութիւնը կը պարտին ցեղակրօնութեան: Հայ ստամտաւորականը գիտէ այդ, բայց եւ այնպէս նա չարաբանեց. «Ցեղակրօնութիւնը յարմար է ամերիկեան միջավայրին միայն»:

Եւ այդ մեր օրերում, երբ ամէն հայ մարդ քաջ գիտէ, որ նորահաս սերունդը հաւասարապէս վտանգւած է Փարիզում թէ Թաւրիզում, Սուրիոյ մէջ թէ Բալկաններում - մեր բոլո՛ր գաղութներում, եւ որ նա՝ նուաստութեան զգացումից ազատւելու համար, կարիք ունի մի ցեղային ide՛e force-ի, ցեղային կազդուրիչի - ցեղակրօնութեա՛ն:

Ստամտաւորականութիւնը յաջողած է լղրճել մեր ժողովրդի բոլոր բարձր ըմբռնումները: Նա շատ բան է սպանել եւ թաղել անթաղ մեր կեանքում: Ահա՛ մէկը նրա զոհերից - Հայ Եկեղեցին, որի պաշտօնէութիւնը այն-

քան էլ տգէտ չէ չհասկանալու համար, որ մեռեալ ծիսակատարութիւններով ու մեռելաթաղով զբաղուող եկեղեցին, վերջ ի վերջոյ, իր ժողովուրդն ու Աստուածը պիտի թաղի:

Հապա մեր դպրո՞ցը, որտեղից վաղուց են փախել «բազէ»-ները. անդէմ, անարիւն, անցեղ հայ դպրոցը, ուր ուսանել կարող են բոլոր ազգերի մանուկները: Այդ հաստատութիւնը հայ աշակերտող սերունդին կարող է ամէն բան տալ, բացի հայրենիքէն, հայրենիք պաշտպանելու արիութենէն եւ հայրենիքի համար մեռնելու քաղցրութենէն:

Անզիղջ է հայ ստամտաւորականը. ի զուր անցան Ալիշանի ու Ռաֆֆիի, Սհարոնեանի ու Վարուժանի եւ այլոց դիւցազնաշունչ ցեղականչերը, նրա համար անմատչելի մնացին հերոսականի բարձունքները: Նա չսիրեց վտանգը, փախաւ հերոսներ կրթող ազնւական վտանգից եւ իր երկչոտութեամբ՝ յաճախ վտանգեց իր ժողովրդի ապագան: Երէկ պարտուողական էր, այսօր, նաե՛ւ երկչոտութեան քարոզիչ: Նրա համար՝ հերոսը արկածախնդիր է, իդէալիստը՝ տխմար, վախկոտը՝ խոհեմ, սրիկան՝ գործի մարդ:

Քաղաքացիօրէն անարի է նա, զզուելի՛օրէն անարի. նրան, անգամ պաշտօնապէս չէ կարելի տեսնել արդարների ու լաւերի կողքին: Եւ այդ է պատճառը, որ այսօր հայ իրականութեան մէջ, ամէն քայլափոխում վատութիւնն է դարանակալ, որ աղուէսները առիւծներ են խեղդում, սինլքորները՝ Յիսուսներ են խաչում:

Խարդախամիտ է մեր ստամտաւորականը. առանց խռովքի, նա մէկմէկ ճառում, թուղթ է մրոտում ազգային դիսցիպլինի մասին, սակայն, առանց անդրադառնալու, որ այդ բարձր առաքինութիւնը կարելի է տեսնել միայն այնտեղ, որտեղ գերագոյն հեղինակութիւն ու կամք կայ - ցեղի՛ կամքը: Իբրեւ թէ հոգով ու մարմնով առողջ սերունդ է երազում, բայց չէ խոստովանում, որ ցե՛ղն է սերունդների յաւիտենական կազդուրիչն ու հզօրացուցիչը:

Նա թոթովում է նաե՛ւ ներքին համերաշխութեան մասին, բայց անգիտանում, որ առանց գերագոյն հաշտարարի - որպիսին է ցեղը, գերեզմանի հողը միայն կարող է հաշտութիւն պարտադրել օրւայ ոգեսպառ հայութեան:

Ուզում է նորահաս սերունդը հայ պահել, բայց մատը մատին չի զարկում՝ Հայաստանը հայուն պահելու համար, բայց եւ այնպէս, վատօրէն խուսափում է նորահաս սերունդի դաստիարակութեան խնդիրը լուծել՝ հայրենիքի ինքնապաշտպանութեան կապակցութեամբ, ինչպէս արւում է ամենուրեք: Նա գիտէ, բայց չէ խոստովանում, որ ամէն մի ժողովրդի ուժակշիռը - դա՝ իր երիտասարդութիւնն է, որ միաբանութիւն, Հայաստանից դուրս՝ հայը հայ պահելու կարելիութիւն, հայրենիքի ինքնա-

պաշտպանութեան համար անհրաժեշտ մարտական ոյժ - այդ բոլորը, եւ աւելի՛ն, մեզ կուտայ նորահաս սերունդը, եթէ, անշո՛ւշտ, հին սերունդը կարողացաւ Հայաստանի ինքնապաշտպանութեան գործը դարձնել հոգեկան պահանջ՝ նորի համար, եթէ երկու սերունդների վրայ էլ հսկեց ցեղը, եթէ երկուսն էլ ապաւինեցին ցեղին - Մասիսի նման յաւէտ «ներսէն հրաբուխի ահեղ խառնարանով եռուզեռ» մեր ցեղին:

* * *

Ո՞վ է ներկայացնում Հայ կամքը (գոյութիւն ունի՞ նման բան), ո՞վ է արտայայտում, ո՞վ է վարում դա:

Անտեղի հարցեր: Հայ ստամտաւորականութեան նեխած լիբերալիզմը վաղուց է յանգել անիշխանականութեան: Գաղութներում վաղուց է սկսուել ցեղի ոգու կազմալուծման գործընթացը:

Գաղութահայութիւնն այսօր ո՛չ հասարակութիւն է, ո՛չ էլ ժողովուրդ, այլ հոգեւոր իմաստով՝ մարդկային փոշի, իսկ քաղաքական իմաստով՝ ստուեր միայն:

Այնտեղ, ուր հոգեւոր եւ գաղափարական յարաբերութիւնները տեղի են տուել լոկ առօրէական նիւթա-եսական հաշիւների առջեւ, այնտեղ, բառիս հասարակագիտական իմաստով, հասարակութիւն կամ ժողովուրդ գոյութիւն ունենալ չէ կարող: Եղածը հայ զանգուած է, անտէր, անիդէալ, անուղի մի զանգուած, եւ ոչ աւելին: Օրւայ իր կացութեան մէջ՝ գաղութահայութիւնը ամենայն արդարութեամբ կարող է իւրացնել Նարեկացու խօսքը եւ կրկնել իր մասին. «Համբարներս լեցուած են ոչնչութեամբ եւ պահեստներս՝ հովերով. ստուերներու նմանութիւն ունիմ եւ կերպարանքս է՝ ծիծաղելի»:

Անհայրենիք հայութեան օրւայ «կերպարանքի ծիծաղելիութեան» միակ պատճառը իր կեղծ մտաւորականութիւնն է, որի համար աշխարհը չէ դառնում, չէ փոխւում: Անհարազատ արեւելցի, կեղծ եւրոպացի, աւելի ճիշդը՝ Արեւմուտքի յիմարութեանց ու սխալների ծաղրապատկերը - ահա՛ անցեղաշունչ հայ մտաւորականի շեշտուած տիպը: Տարիներով նա արեւմտականութիւն կեղծեց, բայց չարեւմտականացաւ, բայց եւրոպացու կենսաբանական բարոյականը չունեցաւ, ինչպէս եւ չհասկացաւ, որ եւրոպական ազգերին յատուկ հերոսական զգացումը արդիւնք է ոչ միայն վերջինների կենսաբանական պայմանների, այլ եւ՝ մի բարձր փիլիսոփայական աշխարհընմբռնումի: Նա չէ հասկանում, որ մարդ արարածը սիրով տառապում է, զոհաբերում, մեռնում յաւիտենական արժէքների եւ ո՛չ թէ թղթէ յիմարութիւնների, բանաձեւերի ու յօդւածների համար:

Իր հոգեբանութեամբ նա մնում է մի ոտքով Արեւելքում, միւսով՝ Արեւմուտքում. նա մնում է կէս-կէս, աւելի ճիշդը՝ ո՛չ այս, ո՛չ էլ այն:

Դեռ այսօր էլ - մեր երկրագնդի ամենավտանգալի օրերին - նա վատօրէն փախչում է բոլոր այն խնդիրներից, որոնք այնքան մօտիկէն շօշափում են մեր Ցեղի եւ Հայրենիքի ճակատագիրը, խնդիրներ, որոնց մէջ մեր ժամանակի սիրտն է զարկում:

Նրա համար ինքնաքննադատութիւնն ու զղջումը - զօրաւորների այդ զոյգ առաքինութիւնները - դեռ մնում են անծանօթ:

Նա - հայոց ստամտաւորականութիւնը դեռ այսօր էլ իր տկարութիւնները ատելու չափ հայրենասիրութիւն եւ արիութիւն չունի:

Հետեւա՞նքը. հետեւանքն եղաւ այն, որ հայ կեանքի գետն այսօր այնքան տիղմ է կուտակել իր տաշտի մէջ, որ այլեւս ուղղութիւնը փոխելու աստիճան դժւարացած է իր հոսանքը:

Հոգեւոր աղէտ - ահա՛ թէ ինչի է մատնուած սփիւռքի հայութիւնը իր ցեղախոյս ստամտաւորականութեան կողմից:

Նման դրութեան մէջ է մեռնում ժողովուրդների հոգին:

Ո՞ւր է ելքը:

Ո՞վ կը փրկէ հայ հոգին ստոյգ մահից:

Ո՞վ կ'օգոնէ մեր կեանքի երկնակամարը, որ այնքա՜ն ժամանակ օդափոխուած չէ:

- Ցե՛ղը, միա՛յն ցեղը:

Մեր ճշմարիտ մտաւորականութիւնը վաղուց է հնչեցրել վտանգի զանգը: Շատ ենք ուշացել: Օր առաջ պէտք է ճշդել մեր ցեղի նկարագրի այն գիծը, որ յաղթական հանդիսացաւ անցեալ դարերի եւ փոթորիկների դէմ, ու պարբերաբար կարելի դարձրեց մեր ազգային վերածնունդներն ու յեղափոխութիւնները. ժամ առաջ պէտք է ճշդել մեր ցեղի ոգու այն յաղթական գիծը, եւ յետ այսու նրա վրայ, միա՛յն նրա վրայ կառուցել մեր հայաշէն ու հայրենաշէն գործը, ու վերստին նրան, միա՛յն նրան կռթնել՝ գոյ եւ գալիք վտանգների դէմ յաջողաբար ճակատել կարողանալու համար:

* * *

Տարօնականութիւնն է մեր ցեղային նկարագրի յաղթական գիծը, մեր ցեղի գերագոյն առաքինութիւնը, հայ հոգու յաւիտենական խռովքը - նրա անմահութեան տենչը, նրա մեծագործութեան կարօտը, նրա հոգեւոր պայազատութիւնը:

Տարօնականութիւն - դա ասել է՝ Մամիկոնեանների ճամբով:

Տարօնականութեան - ցեղի յաւիտենական այդ զէնքին ենք դիմում, որովհետեւ այլեւս աշխարհը մեզ համոզեց, որ ներկայ պայմաններում վտանգի, հերոսականի ու մահւան մարդը միայն կարող է Հայաստանը ապրեցնել:

Տարօնականութիւն, ասել է՝ յաւիտենականի զգացում, որի սրբազան առարկան ցեղն է:

Դա ասել է՝ նաեւ իդէալական սեփականութեան զգացում, որի առարկան Հայրենիքն է:

Պարտականութեան, հզօրանքի եւ քաջութեան կրօն - ահա՛ թէ ինչ է նշանակում Տարօնականութիւն:

Տարօնականութիւն - դա ասել է՝ ճշմարիտ մտաւորականի եւ տարօնաշունչ ռազմիկի զինակցութիւն, յանուն Ցեղի եւ Հայրենիքի:

Դա ասել է՝ յետայսու երկու բան պիտի զբաղեցնէ հայ միտքը, սիրտը եւ բազուկը - Հայաստանը եւ իր ինքնապաշտպանութիւնը:

Ցեղային այդ դաւանանքը անհրաժեշտօրէն պարտադրում են մեզ Հայաստանի աշխարհագրական դիրքը, մեր ժողովրդի թւական տկարութիւնը, մեզ սպառնացող օրւայ եւ վաղւայ վտանգները:

Դա - Տարօնականութիւնը մեզ պարտադրում է նաեւ հոգելից Մամիկոնեանների պէս Հայրենիքին անշահասիրաբար ծառայելու ու նրա համար քաջաբար մեռնելու պատրաստ մի նո՛ր սերունդ հասցնելու հրամայականը:

Մեզ մի նոր սերունդ է պէտք - վտանգի՛ սերունդ, որ աշխարհը եւ իրերը տեսնել սիրէր իր ճակատագրին հրամայել գիտցող կամքի աչքերով:

Երէկ - հասկանա՛նք այդ - մեզ պատժողը թուրքը չէր, այլ՝ մեր տկարութիւնը թուրքի միջոցաւ:

Դա վաղն էլ կը պատժի մեզ, եթէ մինչեւ այդ վաղը Տարօնականութեամբ չյաղթահարենք մեր տկարութիւնը:

Հայրենիք պաշտպանել, վաղը կարող են նրանք միայն, որոնք մինչեւ այդ վաղը հոգեպէս կը զինւեն Տարօնականութեամբ, այսինքն՝ Մամիկոնեան մեր հրաշունչ ռազմիկներէն կը սովորեն **ապրել ու գործել միայն ա՛յն բանի համար, որի համար արժէ մեռնել, եւ մեռնել ա՛յն բանի համար, որի համար արժէր ապրել:**

Մի՛շտ պատրաստ՝ ժպտադէմ կատարելու այն, որ պահանջում է Հայրենիքը:

Ցեղի եւ Հայրենիքի համար Մամիկոնեանների պէս մեռնել ուզել ու մեռնել գիտենալ - ահա՛ թէ ինչն ենք մենք անւանում Տարօնականութիւն:

Այսօր «տարօնականութիւն» են քարոզում բոլոր ազգերը: Տարօնականութեամբ - ցեղի այդ առաջին զէնքով կամ մենք պիտի անցնենք հայու տկարութիւնը սնուցանող հին հասկացողութիւնների դիակների վրայով, կամ էլ Նորը, որ սկսած է իր խորտակիչ գրոհը հին աշխարհի դէմ, վաղը պիտի անցնի մեր ժողովրդի դիակի վրայով:

«Տարօնի Արծիւ», Սոֆիա,
1938թ., թիւ 1-2

ԻՆՉՈ՞Ւ ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Դիպուածով ձեռքս անցաւ «Նոր Օր» թերթի համար 4489-ը, ուր Տարօնականութեան առթիւ ասուած է. «...Այդ տողերը գրողը մինչեւ երէկ Տարօնականութիւն բառը արտասանած չէր, բայց եւ այնպէս Հայրենիքին համար քաջաբար կռուած էր»:

Ինձ վերաբերող այդ տողերի մէջ կայ ոչ միայն ճշմարտութեան ու յարգանքի պակաս - յարգա՛նք, որ թւում է թէ ամէն հայ մարդ պարտական է Հայաստանի համար քաջաբար կռուողներին - այլ եւ, կարծէք, յատկապէս այս օրերին, մոլորանք ստեղծելու միտում: Ի՞նչն է այդ թերթին հիմք եւ իրաւունք տուել ասելու «մինչեւ երէկ» - իմ անցեա՞լը, իմ այնքան ծանօթ աշխարհայեցողութի՞ւնը, թէ՞ վերջերս Տարօնականութեան մասին գրած մէկ-երկու յօդուածներս: Գիտակցական իմ ամբողջ կեանքում, ինչպէս եւ իմ վարած բոլոր ճակատամարտերում - Բալկաններում, Ղարաքիլիսում թէ Լեռնահայաստանում - ինձ վարել է այն ոգին, որը անւանում եմ Տարօնականութիւն: Ի՞նչ, նոր է բա՞ռը: Թէեւ - իմ փոխարէն պիտի ասէր Թորգոմ Պատրիարքը - «Թէեւ ընդհանրապէս բառը չունինք մեր շրթներուն վրայ կամ մեր գրչին տակ, բայց ունինք գաղափարը մեր խղճմտանքին խորը»: Այո՛, այն փաստը, որ «տարօնականութիւն» բառը նոր է գործածւում - դեռ ապացոյց չէ, որ նոր է ե՛ւ գաղափարը, ոգին մեր կեանքում: Հայրենիքի համար քաջաբար կռուելու եւ գիտակցօրէն մեռնելու տրամադիր ամէն հայ, Մամիկոնեաններէն մինչեւ մեր օրերը, եղած է տարօնական, թէկուզ այն պարզ պատճառով, որ Եղիշէի մատեանը համարւել է Հայոց ազատագրութեան աւետարան՝ մեր բոլոր սերունդների կողմից, որ տարօնաշունչ մեր պատմագիրն է բանաձեւել «մահ գիտակցեալ»-ը հայրենիքի համար, եւ սերունդները խանդավառել «Մամիկոնեան Ուխտ»-ի խորհրդով:

Թոյլատրելի՞ է շփոթել «բառն» ու բովանդակութիւնը: Տարօնականութիւնը բովանդակութիւն է եւ ոչ թէ բառ: Էաբանօրէն առնւած՝ դաշնակցականութիւնն ու Տարօնականութիւնը, ինչպէս եւ Տարօնականութիւնն ու Ցեղակրօնութիւնը տարբեր բաներ չեն ու չեն կարող լինել հայ ցեղի ճակատագիրը խորքով ու իմաստասիրօրէն ապրող ամէն հայու համար: Սրանցից որեւէ մէկը առանց իր հոգեւոր նախընթացի անկարելի պիտի դառնար: Ժամանակների հոլովոյթի հետ, այդ բոլորին ծնունդ է տուել մի ոգի, որի գծերէն մէկը - Հայրենիքի համար քաջաբար կռուելու ու մեռնելու ուխտածութիւնը մենք անւանում ենք Տարօնականութիւն: Իմ լոյս ընծայած գրքերէն, իմ գրած յօդուածներէն, իմ արտասանած խօսքերէն որի՞ մէջ

չէք տեսնի ցաւախառն մի ցասում այն մասին, թէ հայութիւնը պատմաճանաչ չէ. այո՛, իր պատմութեան իմաստասիրութիւնը դեռ չունի հայը: Եւ հէնց այդ է պատճառը, որ ոմանց նորանշան ու անհասկանալի է թւում Տարօնականութիւնը: Պատմութիւնը մի՛շտ էլ եղած է հերոսօրէն ողբերգականի պատմութիւն: Ուզում եմ ասել՝ ազգերն առաւելապէս խորանում, իմաստասիրում են իրենց դժբախտութեան մէջ ու վտանգի օրերին: Կարծո՞ւմ էք, որ երբեւիցէ մեր ժողովրդին վիճակւել է աւելի մեծ ու ահաւոր ողբերգութիւն, քան այն, որ նա ապրում է այսօր: Իզուր պիտի անցնէր մեր տարագրութեան զարհուրանքը, եթէ մեր ապրած տառապանքէն ու մեզ սպառնացող վտանգէն խարազանւած, մենք չխորանայինք մեր պատմութեան մէջ - մեր քաղաքական կազմակերպւած կամքը՝ դաշնակցականութիւնը աւելի եւս շեշտելու եւ ակտիւացնելու նպատակով:

- Սիոնը կար, բայց «սիոնականութիւն» բառը չկար: Նա հազարամեակների պատմութիւն ունի, սա՝ տասնամեակների: Կարո՞ղ էք պնդել, որ անհայրենիք հրէութեան դարաւոր կեանքը վարողը սիոնականութիւնը չէ եղել: Արդեօ՛ք, քաղաքական սիոնիզմը հրէութեան դարերի հոգեւոր սիոնականութեան արդիւնքը չէ՞: Ինչո՞ւ հրեան իր պաշտամունքը Սիոնի հանդէպ անւանեց սիոնիզմ, իսկ իրեն՝ սիոնիստ: Եւ, կարծո՞ւմ էք, որ այդ «բառը» զգալապէս չակտիւացրեց օրւայ հրեան: Սիոնականութիւնից առաջ կարելի՞ էր երեւակայել, որ մեր օրերում Պաղեստինը պաշտպանելու համար աշխարհ գայ հին հերոսական Մակաբէյներին յիշեցնող մի նոր սերունդ: Չխաղա՛նք բառերի հետ, - էականը բառը չէ՛, անունը չէ՛, տեսութիւնը չէ՛, այլ Հայրենիքի համար «քաջաբար կռւելը»:

Ո՛վ խուսափում է ոգուց եւ կառչում բառերին, ցոյց է տալիս, որ թշնամի է խորքին, իմաստին, բովանդակութեա՛ն:

Ո՞վ կարող է իրեն հայ մտաւորական անւանել եւ իր մտքի բարոյական մահավճիռը չտալ, եթէ դա չի հասկանում Տարօնականութիւնը, այսինքն՝ ոչինչ գիտէ Հայոց Պատմութեան եւ այդ վերջինի իմաստասիրութեան մասին: Դաշնակցականութիւնը կար, բայց, արդեօ՛ք, մինչեւ վերջին տարիները մէկը կարո՞ղ է մեզ ցոյց տալ մեր կուսակցական գրականութեան մէջ «դաշնակցականութիւն» բառը: Դա, սակայն, բնա՛ւ չի նշանակում, որ դաշնակցականութիւն չկար Դաշնակցութեան եւ դաշնակցականի մէջ: Էականը բառը չէ, բայց հասարակագիտօրէն ճիշդ է ե՛ւ այն, որ «բառ»-ի, անունի ստեղծումից յետոյ ներքին ապրումը դառնում է աւելի բովանդակալից, աւելի կոնկրետ եւ աւելի գիտակցական: Ի՞նչ էր անունը այն ոյժի, այն ոգու, այն դաւանանքի, որ մինչեւ Դաշնակցութեան աշխարհ գալը Արաբօներին հանել էր լեռները: Մեռնողները չգիտէին այդ անունը, բայց մի օր իրենց շարժումը պիտի մկրտւէր «Դաշնակցութիւն» անունով:

Խոստովանինք, որ ո՛չ բառն է նոր, ո՛չ էլ բովանդակութիւնը - դրանք առնուած են Հայոց Պատմութեան գանձարանէն: «Ուխտ Մամիկոնէից» - նո՞ր է դա. եթէ տարօնականութիւն բառի փոխարէն սրանով անուանուէր հոգեւոր այդ շարժումը, արդեօ՛ք, տարբե՞ր վերաբերմունք պիտի գտնէր նրանց կողմից, որոնք աղետալիօրէն սխալ հասկացողութիւն ունեն կուսակցականութեան մասին:

Այսօր, երբ ամէն հայ վտանգած է համարում մեր Ցեղի եւ Հայրենիքի ապագան, Տարօնականութիւնը - «քաջութեամբ մեռցուք ի վերայ աշխարհիս մեր»-ը - Մամիկոնեան ոգու այս վերակոչումը, մասնաւորապէս դաշնակցականներիս համար, պիտի համարուէր ողջունելի: Տարօնականութիւնը ես անուանել եմ «ցեղի առաջին հոգեւոր զէնքը», քանզի ծանօթ եմ այն դժնդակ պայմաններին, որոնց մէջ մեր ժողովուրդը վարեց իր անհաւասար գոյամարտը եւ հարկադրաբար պիտի վարէ ե՛ւ վաղը: Իսկ վտանգի ժամանակ - լա՛ւ հասկնանք այդ - «սուրը վարձու չեն առնում»: Այդ ասել է, որ մենք պայքարի մեր հոգեւոր զէնքերն ու մտքի մեր ղեկավար սկզբունքները պիտի առնենք ոչ թէ մեր ցեղի էութեան անհարազատ օտարոտի վարդապետութիւններէն, այլ մեր պատմութեան յաւիտենական շարժը վարող ոգուց: Այդ ոգին - անխօս զգացուի թէ խօսքի վերածուի - Տարօնականութիւնն է մեզ համար: Ի՞նչ էր իմ օրերի Սիւնիքի «Դաւիթբեգեան ուխտ»-երի ոգին, եթէ ոչ միեւնոյն Տարօնականութիւնը՝ տարբեր անուան տակ: Հոգեւոր աղէտ է հայու անտարբերութիւնը - դաւաճանութի՛ւն: Իսկ սէ՞րը - չկայ աւելի անարժէք բան, քան նրա սէրը, նրա սովորական հայրենասիրութիւնը: Հրաշագործ է, սակայն, հայ մարդու պաշտամունքը, նրա ուխտաւորութիւնը:

Մեր ժողովրդի բոլոր մեծութիւնները արդիւնք են իր որոշ զաւակների ուխտաւորութեան: Վաղը քաջաբար կռուելու պատրաստ զինուորներ կունենայ միայն նա, ով այսօր ուխտ ունի: Այս հասկացողութեամբ ժամանակին ես ծնունդ տուի «Դաւիթբեգեան ուխտ»-երին, որոնք լիուլի արդարացրին իրենց անունը վտանգի ու պարտականութեան ճակատի վրայ: Միեւնոյն հոգեբանական հաշիւներով «ուխտ» անուանեցի նաեւ Ամերիկայի մեր ցեղակրօն միաւորները: Տարբեր բան է խումբը, տարբեր՝ ուխտը: Հայրենիքի համար քաջաբար մեռնելու ուխտաւորութիւն է Տարօնականութիւնը: Չկայ աւելի անպիտան իմացական էակ, քան ուխտազուրկ հայ մարդը: Փորձառաբար գիտեմ ոչի՛նչ արժէ հայկական քանակը, թիւը, եթէ դա ոգեզուրկ է: Անուխտ հայ, ասել է անոգի, իսկ անոգի հայ, ասել է՝ աննուէր, անարի, անզօր: Ասացի՝ «ոչինչ արժէ», եւ այդ ոչ թէ այն իմաստով, որ մերօրեայ հայութեան տրուած չէ թւապէս չափուելու իր արտաքին թշնամիների հետ, այլ որովհետեւ ոգեզուրկ հայ հաւաքականութիւնը եղած է ու կը մնայ ամենավտանգաւոր ամբոխը: Նման մի ամբոխ մի օր քեմալական

չետաներին յանձնեց մեր Ղարսը՝ ասպետական անձնասպանութիւն պարտադրելով իր տղամարդ ղեկավարներէն գնդապետ Մազմանեանին: Տարօնականութիւնը՝ ուխտաւորութեան բարոյական է, առանց որի հայութիւնը, մասնաւորապէս, այսօր եւ վաղը, ճշմարիտ զինուոր ու ղեկավար չի ունենայ, ինքնապաշտպանունակ չի դառնայ:

* * *

«Նոր Օր»-ը գրում է. «Տարօնական ոգիի առաջնորդները կը պահանջեն, որ ամբողջական Հայաստանի ոգիին փոխարինէ անոր մէկ գաւառին անունը»:

Այստեղ այլեւս անկորեկտ բառագործածութիւն կայ, կայ մեղանչում մտածողութեան պարկեշտութեան դէմ: «Տարօնի Արծիւ»-ի ընդհանրապէս, եւ, ի մասնաւորի իմ յօդուածների ո՞ր տողից եզրակացրիք, որ մենք ուզում ենք Հայաստանի ոգին փոխարինել անոր «մէկ գաւառի անունով»: Ինչի՞ վերագրել այդ կոպիտ ու աղաղակող շփոթը - անգիտութեա՞ն, թէ՞ մոլորանք ստեղծելու միտումի: Մի խմբագրի համար դժուա՞ր է զանազանել «Տարօն» անունը Տարօնականութիւնից: Տարօնականութիւնը «գաւառի անո՞ւն» է, թէ հոգեւոր բովանդակութիւն: Իմ յօդուածի առաջին տողերը բաւական չէի՞ն ցանկութեան դէպքում հասկանալու, որ Տարօնականութիւնը ես համարել եմ մեր ցեղի ոգու (դուք ասէք - «Հայաստանի ոգու») զոյգ գծերը - յաւիտենական արժէքներ ստեղծելու խանդ, եւ այդ արժէքների համար քաջաբար մեռնելու ուխտաւորութիւն: Ինչո՞ւ ուխտաւորութիւն կը քարոզեմ - այդ մասին հարցրէք այն բոլորին - զինուոր թէ մտաւորական - որոնք գէթ մի հատիկ օր Հայաստանի սահմանների վրայ ճակատ ճակատի են եկած թշնամու հետ: Ազգերի տարերքը - նրանց առաքինութիւններն ու հոգեւոր թերիները կարելի է ճանաչել միայն մեծ վտանգների ժամանակ, երբ վերջինները նետում են իրենց դիմակը: Զինուոր մարդ եմ, եւ արնոտ փորձերով եմ ճանաչում մեր ժողովուրդը: Չկայ հայ մարդ, որ անսխալ կերպով չթւէ իր ժողովրդի տկարութիւնները, բայց սակաւաթիւ են նրանք, որոնք գիտեն, թէ ո՞ւր է թաքնուած հայու հզօրութեան հոգեւոր աղբիւրը: Ի՞նչն է եղել մեր ժողովրդի կենդանի խղճմտանքը հանդիսացող լաւագոյն մատենագիրների ներշնչումի աղբիւրը, նրանց սիրտն ու գրիչը վարող ոյժը: Ո՞ր հայ գրողը, ո՞ր ճշմարիտ հայրենասէրը, եւ մասնաւորապէս, ո՞ր ռազմիկը Հայաստանին սպառնացող վտանգի վայրկեաններին չէ ոգեկոչել Հայրենիքի համար մեռնել ուխտած Մամիկոնեանների օրինակը:

Ե՞րբ է հայ սուրը գործել առանց Վարդանի, եւ գրիչը շարժել առանց Մեսրոպի անունը տալու: Դեռ երէկ չէ՞ր, որ հայ գրողներէն ամենացեղա-

շունչը - Ահարոնեանը «Հայրենիք» ամսագրի մէջ Ղարաքիլիսը անուանեց «Նոր Աւարայր»: Եւ ի՞նչ է Աւարայրը ընդհանրապէս, իբրեւ պատմական դէպք, նշանաբան, խորհուրդ, եթէ ոչ տարօնական ոգու մէկ գործը: Շա՞տ է անցել այն օրից, երբ Հայաստանի կառավարութիւնը իր անդրանիկ զրահապատն ու շքանշանը անուանեց «Վարդան Զօրավար»: Վարդանի շքանշանով վարձատրել հայ զինուորը, կը նշանակէ վարձատրել տարօնական ոգին, դա կը նշանակէ այդ ոգին համաժողովրդականացնելու նպատակ հետապնդել: Եւ հէնց դա է ճշմարիտ դաստիարակութիւնը - Հայաստանի համար մեռնելու ուխտի համազգայնացումը: Մեր եկեղեցին ամենայն երկիւղածութեամբ ու պաշտամունքով, դարեր ու դարեր տօնում է Տարօնականութեան երկու մեծափառ գործերը - Գրերի Գիւտը եւ Աւարայրը: Արդեօք, այս բոլորը, համայն հայութեան կողմից, կատարուած է - ինչպէս թոյլ էք տուել ձեզ ասելու - «պարզապէս գրգռելո՞ւ մեր տարօնցի հայրենակիցների տեղական հայրենասիրութիւնը»:

Ի՞նչ է նշանակում, երբ Հայ Եկեղեցին սրբացնում է Մամիկոնեան ոգին, այդ ոգու կրողներին - արդեօ՛ք, դա միայն երախտագիտութեան տո՞ւրք է, թէ՞ նաե՛ւ խորագոյն մտահոգութիւն Հայրենիքի ապագայի հանդէպ: Սրբացնելով ու յաւերժացնելով Մամիկոնեանների ուխտը՝ եկեղեցին մեր ժողովուրդին տուած է ինքնապաշտպանութեան զէնքերից ամենահատուն ու յաղթականը - «մահ գիտեցեալ»-ը: Հէնց ա՛յդ է Տարօնականութինը: Հայ Եկեղեցու իմաստուն ակտը, որը 15 դար յետոյ պիտի որդեգրէր մեր կառավարութիւնը՝ տարօնական ուխտ չէ՞ր: Տօնել չի՞ նշանակում ասել՝ նմանեցէ՛ք տօնելիներին: «Նայի՛ր դասական մի յոյն տղամարդու, լինի դա հերոս, թէ՝ իմաստասէր, եւ ամօթով դիտիր քեզ». ասել է Հերդերը:

Ես ասում եմ. «Հայ մարդ, կարո՞ղ ես առանց խոր ամօթանքի քեզ բաղդատել մի Մամիկոնեանի հետ - նմա՞ն ես նրան»:

Չգիտե՞նք, որ եկեղեցի, դպրոց, ընտրանի - այդ բոլորը միշտ էլ մեր ժողովրդի փրկութիւնը տեսած են Վարդանատիպ քաջեր ու հայրենապաշտներ հասցնելու մէջ: Եւ դարերի ընթացքում ու «մինչեւ երէկ» ո՞ր անմիտ հայն է յանդգնել Տարօնական ոգու այդ համահայկական պաշտամունքը համարել «Հայաստանի մի գաւառի անուն» կամ «տեղական հայրենասիրութիւն»: Մտածումի այդ ի՞նչ անկում է: Այսօր, երբ աւելի քան երբեք վտանգուած են Հայրենիքն ու հայութիւնը - ինչո՞ւ անհասկանալի պիտի մնար Տարօնական ոգու քարոզչութիւնը, որ ասել է՝ արծարծումն ու շեշտումն այն բանի, ինչ որ դարերով կատարել է հայութիւնը: Չընդունե՞լ, որ այսօր էլ այս ոգով կարելի է ոչ միայն հայը՝ հայ պահել տարագրութեան մէջ, այլ եւ՝ հայը մարտիկ դարձնել եօթնիցս վտանգուած Հայաստանի համար: Չէ՞ք լսում յուսահատ ճիչերը, թէ դժուար է օտարութեան

մէջ հայը հայ պահել: Արդեօք, նա, որ այսօր դժւարանում է հայ մնալ, վաղը պիտի ուզենա՞յ հայրենիք պաշտպանել: Կ'ուզէի՞ք, որ եկող մեծ օրերը իրենց առջեւ գտնէին ցեղօրէն ու մարդկօրէն մի անարիւն, անգոյն, անզօր - մի պզտիկ սերունդ: «Նոր Օր»-ը պիտի չուզէ՞ր, որ իրենց կեանքի սրբութիւններին ու արժէքներին, իրենց ցեղին ու հայրենիքին, իրենց Աստուծուն, իրենց պարտականութեանց «այո՛», իսկ իրենց «Ես»-ին եւ հաճոյքներին, կենցաղային նիւթապաշտութեան եւ աշխարհի այլ կարգի գռեհկութիւններին վճռաբար «ոչ» ասողների մի սերունդ ունենայինք:

Մամիկոնեանները իրենց զոհաբերութիւնը կը կատարէին իրենց խօսքի, իրենց ուխտի կշռով: Եթէ «տարօնականութիւն» բառով չբնորոշենք՝ ամէն ինչ հայրենիքի զոհաբերելու ուխտաւորութիւնը, ոգին, բարոյականը, հապա ինչո՞վ: Անգիտանա՞նք պատմութիւնը: Այն հանգամանքը, որ հայոց բոլոր տօների շարքում - ազգային, յեղափոխական, եկեղեցական - տարօնական ոգու տօնը՝ Վարդանանցը, տօնւում է համահայկականօրէն, խորքով ու ապրումով, ապացոյց չէ՞, որ այդ ոգին եւ իր պաշտամունքը կայ մեր ժողովրդի մէջ՝ թէեւ տկարացած: Այն, ինչ որ համարում ենք ձուլումի ու այլասերումի վտանգ եւ յուսահատ կանչ արձակում, միթէ՞ հետեւանք չէ հէնց այդ ոգու տկարացումին: Տարօնական ոգու քարոզչութիւնը գալիս է նորոգելու եւ միաժամանակ, մեկնաբանելու այն խորհուրդը, թէ ինչո՞ւ հայութիւնը իր սրտի սնունդը, բազկի ոյժը եւ հաւատի ջերմութիւնը յաւիտենապէս պիտի ստանայ Մամիկոնեանների ոգիէն եւ ուխտէն: Եթէ հոգեկան այդ գիծը բնազդաբար ապրած ու զարգացրած չլինէին հայկական սերունդները, եթէ դա չհամարէին գոյամարտի անհրաժարելի զէնք - ինչո՞ւ Մամիկոնեանների անճիտումից յետոյ Բագրատունիները, Ռուբինեանները եւ Սիւնեաց աշխարհը յաւերժացրին ու համազգայնացրին Վարդանների պաշտամունքը: Այդ բոլորը ճշմարտութիւն համարելով՝ ես ասել եմ. «Ճի՛շդ է, սուրբ է հայրենի երկրի ամէն մի բուռ հողը, սակայն ճիշդ է եւ այն, որ հայրենիքներն ունեն իրենց պատմա-ռազմագիտական տեսակէտից ամենակարեւոր ու ամենանւիրական երկրամասը,- այն երկրամասը, ուր ցեղը ամենէն շա՛տ է արիւն թափել, մշակութային գանձեր դիզել, հերոսական ու պատմութիւն ստեղծել, այն երկրամասը, առանց որի հայրենիքը ոչ թէ զօրաւոր ու անկախ լինել, այլ եւ իր գոյութիւնը պահել, ինքնապաշտպանւել չէ կարող: Ճակատագրօրէն մեծ է Տարօնի նշանակութիւնը մեր Ցեղի եւ Հայրենիքի պաշտպանութեան համար»: Ահա՛ այսքանը Տարօնի մասին:

«Տարօնականութիւնն է մեր ցեղային նկարագրի յաղթական գիծը: Տարօնականութի՛ւն ասել է՝ Մամիկոնեանների ճամբով, դա ասել է՝ ցեղի եւ Հայրենիքի համար Մամիկոնեանների պէս մեռնել ուզել ու մեռնել գիտենալ»: Այս էլ տուած է Տարօնականութեան մասին:

Արդեօ՛ք, իմ այս տողերից կարելի՞ էր այն եզրակացութիւնը հանել, որին յանգել է «Նոր Օր»-ը: Ո՞վ եւ ե՞րբ է փորձել (ոչ ոք կը փորձէր այդ անմտութիւնը) «ամբողջական Հայաստանի ոգիին «հակադրել» անոր մէկ գաւառին անունը»: Ի՛նչ է դա - մտքի մոլորա՞նք, թէ՞ մոլորանք ստեղծելու տկարութիւն:

* * *

Մի ժողովուրդ ճանաչելու համար բաւական է լսել նրա մէջ հնչող խօսքը: Ոգու տրամաբանութիւնն է վարում լեզուն, խօսքը: Երբ մէկը լեզուական տարազները գործածում է առանց որոշ բովանդակութիւն դնելու նրանց մէջ, մատնում է, որ իրեն պակասում է անսխալ հասկացողութիւնը այն բանի մասին, որից նա խօսում է: Եւ միշտ էլ անբարոյացուցիչ է խօսքը, երբ դա ներքին հոգեւոր իրականութեան արտայայտիչն ու արտայայտութիւնը չէ:

Հաւասար չափով պէտք է զարհուրել ինչպէս բառերի անիմաստ, այնպէս էլ նրանց անպարկեշտ գործածութիւնից: Օրւայ հայ մտաւորականութեան որոշ մասի խօսքը իսպառ կորցրել է իր յստակութիւնն ու որոշականութիւնը, ինչպէս եւ իր խորհրդանշային ոյժը: Դա ախտանշան է մտաւոր քաոսի եւ տեսական խղճմտանքի պակասի: Սնամէջ խօսքը վտանգաւոր է անքննադատ ընթերցողի համար: Աւելի մեծ չարիք է դա նորահաս սերունդի համար: Պէտք է խոստովանել, որ մեր ժողովրդի անմիաբանութեան պատճառներէն մէկն էլ հէնց նման խօսքն է: Մեր կեանքում ամէն կեղծիք՝ մի գերեզման է ճշմարտութեան համար: Եւ բաւական չէ, որ կեղծողը յաջողում է ժամանակաւորապէս գերեզմանել ճշմարտութիւնը, այլ եւ ծպտումի հոգեբանութեան օրէնքով նա երեւան է գալիս հէնց իր թաղած ճշմարտութեան պատկերով: Այստեղ ոչ միայն ճշմարտութիւնը սպանելու փորձ կայ, այլ եւ հանրութեան առջեւ ինքնապաշտպանւելու, նամանաւա՛նդ՝ իբրեւ ծպտւած յաղթական փառաւորւելու ճիգ:

Մեր իրականութեան մէջ լեգէոն են ճշմարտութեան թշնամիները - երբեմն նոյնիսկ օրէնքը, կանոնը, կարգապահութիւնը, ձեւական իշխանութիւնը եւ այլն: Բայց ճշմարտութեան մեծագոյն թշնամին մնում են նրանք, որոնց ներքին կեանքում ճշմարտութիւնը անհրաժեշտութիւն չէ, որոնք յարմարւել գիտեն աշխարհի բարոյական բոլոր մթնոլորտներին: Ճշմարտութեան թշնամիներն են նախեւառաջ ոգու թշնամիները, որովհետեւ ճշմարտութիւնը գործում է եւ ազդում միայն ոգու միջոցաւ: Նրա առաջին կարգի թշնամիներից են նաե՛ւ «նիւթապաշտութեան կոյր խլուրդները», նրանք, որ «անցեղ» են, անառաքինի, երկչոտ, տկար:

Ճշմարտութիւնը միայն ստութեան հակաթեզիսը չէ, այլ եւ բարին,

սրա կերպարանը, գիտակցութիւնը եւ յօժարութիւնը: Իմ խօսքը բարոյական ճշմարտութեան մասին է: Այդ ճշմարտութեամբ է սնուում ժողովուրդների ոգին: Առանց դրան մարդը մնում է անստեղծագործ, պատեհապաշտ, խղճմտանքը՝ մեռեալ: Դա խորապէս ապրուած սեփական ճշմարտութիւնն է: Դա է միակ հոգեփոխիչ եւ ազատագրիչ ոյժը, նաե՛ւ՝ միակ դաշնակիչը, համերաշխիչը հանրային կեանքում: Դա է կերտում մարդու հոգեւոր նկարագիրը, որով միայն արդարացում է գտնում ամէն կարգի ճշմարիտ ղեկավարութիւն, իշխանութիւն:

Հայութեան մէջ, իր ժամանակին, այդ ճշմարտութիւնն ապրեցին Մամիկոնեան սերունդները - եւ հէնց սրանում էր հայրենիքի եւ ազգի համար «սրտի հրճուանքով» ու գիտակցաբար մեռնելու իրենց հերոսութեան գաղտնիքը: Այդ ճշմարտութիւնն է ահա՛, որ այսօր պակասում է մեր մտաւորականութեան մի մասին: Ճշմարտութիւն չէր լինի, եթէ ասէի. «Հայաստանի ապագան կարելի պիտի լինէր ապահով համարել, եթէ մեզ տրուած լինէին այն կարելիութիւնները, որ ունի եւրոպական այս կամ այն պետութիւնը - օրինակ՝ տեխնիկա, ճարտարարուեստ, նիւթական հարստութիւն, դրական գիտութիւններ, կարգապահութիւն, մաժինօեան գծեր եւ այլն»: Սակայն, մի բարոյական ճշմարտութիւն ասած կլինեմ, եթէ յայտարարեմ. «Հայրենիք ապրեցնելու եւ պաշտպանելու համար, ամէն բանից առաջ, պէտք են նրա համար մեռնել ուխտած մարդիկ, որպիսիք էին Մամիկոնեանները»:

Այդ ճշմարտութեան պակասի պատճառով մեր մտաւորականութեան մի մասը շարունակում է մնալ հոգեբանօրէն ցրուած, եւ առատ տուրք է տալիս մարդկային մանր տկարութիւններին: Այդ տկարութիւններից մէկը, եւ ամենազզուելին, խեղաթիւրելու հակումն է:

Բարոյական մի ճշմարտութեամբ ապրեց ու գործում է ամերիկահայութիւնը: Նա ժամանակին գիտակցեց, որ ով աշխատում է իր նորահաս սերունդի համար, նա աշխատում է իր ազգի ու սրա ապագայի համար: Այդ փրկարար գիտակցութեամբ նա աննախընթաց խանդավառութեամբ ողջունեց Ցեղակրօնութիւնը՝ մեր ուխտերին յանձնելով իր զաւակները: Եւ ահա՛ մեր շարժման հէնց առաջին տարին, խեղաթիւրելու տկարութեամբ տառապող մէկը խծբծեց. «Հայ ժողովրդի ներկայ կացութեան մէջ ցեղակրօն անունը գիտական չէ»: Ո՞վ կարող է ասել, թէ ի՛նչ իմաստ է դրուած այդ ցնդաբանութեան մէջ: Ի՞նչ է նշանակում «ներկայ կացութեան մէջ գիտական չէ» - մտքի յոպոպութիւն չէ՞ դա: Արդեօ՞ք, գիտութիւնը յարաբերական հասկացողութիւն է՝ կապուած այս կամ այն կացութեան հետ: Այդ անհեթեթութեան հեղինակը գիտէ, անշուշտ, որ «երկու անգամ երկուսը հաւասար է չորսի» ոչ միայն իր ապրած երկրում, այլեւ Չինաստանում, ամենուրե՛ք: Նա գիտէ այդ, բայց եւ այնպէս, մոլորանք ստեղծելու տկա-

րութիւնը - խեղաբարոյութիւնը նրան մղել է յիմարաբանութեան: Մի ուրիշը՝ ցեղի եւ Ցեղակրօնութեան դէմ քար նետեց՝ բանագողութեան դիմելու գնով - գողանալով մի եւրոպացու քառորդ դար առաջ գրած յօդուածը: Ահա՛ թէ մինչեւ ուր է տանում ճշմարտութեան զգացումի պակասը: Եւ զզուելին նրանում է, որ մոլորեցուցիչները ձեր ամբողջ գրուածքից մի բառ, մի նախադասութիւն առնելով, չարամտօրէն նրանից հանում են իրենց ուզած եզրակացութիւնը՝ ընթերցող հասարակութիւնը մոլորանքի մատնելու համար: Այսպէ՛ս է գործում անցեղահոգ հայ միտքը մեր կեանքում: Խեղաթիւրումի հոգեբանութիւնը արդիւնք է չարութեան եւ իմաստակութեան: Խեղաթիւրողի նպատակը՝ առարկայական ճշմարտութիւնը ժխտելէն աւելի, ճշմարտութեան քարոզչի գործը դժուարացնելն է: Որ խեղաթիւրումը, ընդհանրապէս, հետեւանք է հոգեւոր քանդուածութեան ու անստեղծագործութեան, այդ պարզ երեւում է նրանից, որ խեղաթիւրողը միայն կտցահարում է, սեւացնում, ժխտում, բայց սեփական ոչինչ է տալիս: Նա ընդունակ չէ ասելու՝ «այսպէ՛ս պէտք է լինի»: Նա իր հասկացածի եւ չհասկացածի մասին միայն թութակում է՝ «այդպէս պիտի չլինէր»: Նա կոյր չէ, տեսնում է, որ պետութիւն, եկեղեցի, մանկավարժութիւն, ցեղային առողջագիտութիւն, սպորտ - այդ բոլորն այսօր հետապնդում են մի նոր նպատակ - հասցնել նոր մարդը, որ միշտ էլ աշխարհ է գալիս պատմութեան անկիւնադարձերի ժամանակ: Իրենց ժամանակի համար նոր էին՝ վերածնութեան մարդը, լուսաւորութեան դարու մարդը, ֆրանսիական յեղափոխութեան մարդը: Իր նոր մարդն է փնտռում նաեւ յետպատերազմեան շրջանի պատմութիւնը: Նա գիտէ այդ, գիտէ ճշմարտութիւնը, սակայն զայն խոստովանելու եւ կիրարկելու արիութիւն չունի: «Հին մարդը, որ անցնում է, երկուացած էր՝ տեսութեանց մէջ իդէալիստ, իսկ իրական կեանքում նիւթապաշտ. դեմոկրատիզմից եւ այլասիրութիւնից խօսող, բայց եսապաշտ. կրօնը անհատական խղճի գործ համարող, բայց սրբութեան զգացումից զուրկ. հայրենասիրութիւն կեղծող ու վտանգի ժամանակ դասալքող. ազատութիւնից ու ազատականութիւնից ճառող, բայց իշխանութեան տիրանալիս՝ շնականօրէն բռնաւոր. ընկերավարութիւն դաւանող, բայց իր հացի համար ընկերոջ դիակը կոխոտող: Այսպէս հոգով պառակտուած ու ցեղօրէն անդէմ էր հինը: Նա մեռնում է այսօր եւ իր տեղը տալիս նորին - ցեղօրէն դիմորոշուած, երկուութիւնից, կեղծիքից, ստորութիւնից զերծ, բարոյապէս առողջ ու ամբողջական մարդուն»: Ասացի՝ այդ նոր մարդու համար է աշխատում մերօրեայ պատմութիւնը:

Կարելի՞ է առանց բարոյական զարհուրանքի պատկերել մեր ժողովրդի օրւայ հոգեվիճակը: «Նոր Օր»-ի խմբագրականը, ողբալով հայ իրականութիւնը, ասում է. «Այսօր հազար կտորի վերածուած ենք, ֆիզիքապէս եւ նիւթապէս սպառած ենք. ոտքին տակի հողը կորսնցուցած

ենք ու կը գտնուինք կորսուելու եւ օտարանալու վտանգին առջեւ»: Լա՛ւ է լուսանկարել. հէնց այդ է մեր վիճակը - գերեզմանից միայն մի քայլ ենք հեռու: «Այսօր զոհողութեան ոգին կը պակսի մեզի» - ճիշդ է նոյն թերթի նաե՛ւ այդ հաստատագրումը: Եւրոպացու առողջ ինդիւիդուալիզմը հայ մարդու մէջ վերածւել է զզւելի անձնապաշտութեան: Այդ այդպէս լինելով հանդերձ՝ վերոյիշեալ թերթը կտցահարում է նրանց, որոնք Տարօնականութիւն են քարոզում, այսինքն՝ Մամիկոնեաններին յատուկ զոհողութիւն Ազգի եւ Հայրենիքի համար: «Նոր Օր»-ի խմբագրի գրչին է պատկանում նաե՛ւ հետեւեալը՝ «Մասնաւորապէս հայ երիտասարդին համար ցեղապաշտութեան իդէալը պէտք է ըլլայ սրբազան դաւանանք մը, մոլեռանդ հաւատք մը»: Ի՞նչպէս հաշտեցնել «Նոր Օր»-ի ցեղապաշտութիւնը Տարօնականութեան հանդէպ սնուցած իր չկամութեան հետ: Չէ՞ որ Տարօնականութիւնը այլ բան չէ, եթէ ոչ մեր ցեղի ոգու դրականը, նրա դրական գծերը: Հապա ի՞նչը - եթէ ոչ Տարօնականութիւնը - կուտայ մեզ ժամանակի պահանջած ամբողջական հայ մարդը, որով եւ՝ հոգեբանօրէն ու նպատակագիտօրէն ամբողջացած հայութիւնը: Երեւի ասուի - Դաշնակցութի՛ւնը: Այո՛, Դաշնակցութի՛ւնը: Մենք այդպէս ենք մտածում եւ հէնց դրա համար էլ գտնում ենք, որ Դաշնակցութեան քաղաքական աշխատանքներին զուգահեռ առաջ պիտի տարուի նաե՛ւ մեր ժողովրդի ոգեվերանորոգումի գործը, այլապէս անհնար է ստեղծագործ ելք գտնել մեզ համար՝ ներկայ աննախընթացօրէն ծանր կացութիւնից: Դաշնակցութեան նպատակը կուսակցութիւն մնալ ու կազմակերպութիւն պահելը չէ, այլ ազգ դառնալը, իսկ ազգն ստեղծւում է ազգային ոգու ստեղծումով - մի բան, որ հնարաւոր է միայն եւ միմիայն Մամիկոնեան ոգու արծարծումով:

Մի ժողովուրդ, որն անօրինակ աղէտից յետոյ իսկ խորապէս չի ցնցւում եւ չէ մղւում վերաքննելու ամէն բանից առաջ իր բարոյականը՝ կենսաբանօրէն բարոյազուրկ ժողովուրդ է:

Աշխարհահռչակ Կրապոտկինը՝ Փարիզի կոմունարների ձախողանքից յետոյ, պիտի քաշւէր մենութեան մէջ մշակելու նոր բարոյականութիւն՝ գալիք յեղափոխական պայքարների համար:

Դանիացի ժողովուրդը իր անցեալ դարու 70-ական թւականներին կրած ազգային մեծ աղէտէն յետոյ, պիտի ծնունդ տար վերանորոգչական մի յորդ շարժումի, մկրտելով այն իր աստւածաշունչ որդիներէն Գրունդվիգի անունով - Գրունդվիգեանի՛զմ, որին յաջողեց նախ հաշտեցնել մտաւորականութիւնն ու պարզ ժողովուրդը, որով եւ՝ մարդկայնութեան բարձր սկզբունքն ու ազգային ոգին, մարդկային հոգեւորն ու ազգայինը, որոնց միջեւ դարերով բացւած կը մնար մի մեծ վիհ: Այդ շարժման շնորհիւ դանիական մտաւորականութիւնը խորացաւ իր հոգեւոր ու ազգային էութեան մէջ, դիմեց պատմութեան դաստիարակչական ազդեցութեան,

կռեց իր նոր աշխարհայեցողութիւնը, եւ վերանորոգելով՝ վերանորոգեց, ոգեփոխեց իր ժողովուրդը, որի բարգաւաճութեան այսօր նախանձում են աշխարհի մեծ ու փոքր ազգերը:

Գրունդվիգի ստեղծագործ գաղափարաբանութիւնը հող գտաւ եւրոպական բոլոր երկրներում: Գրունդվիգեանիզմը վերաստեղծեց հիւսիսային բոլոր ժողովուրդները: Սրա շնորհիւ երբեմնի խոպան Ֆինլանդիան դարձաւ «ճերմակ շուշանների երկիր»: Նրա քարոզչութեան գործին Գերմանիոյ մէջ այսօր լծուած են պրոֆ. Ռայնը եւ ուրիշներ:

«Ռուսիոյ թշնամիները,- ասում է մի ռուս գրող,- կոչուած են կարծէք, հոգեւորապէս արթնացնելու մեզ»:

Չասե՞մ - ամօ՛թ մեզ, եւ վա՛յ մեր ժողովրդին, որ թուրքն իսկ չյաջողեց ցեղօրէն արթնացնել հայ մտաւորականութիւնը՝ իր ամբողջութեան մէջ:

* * *

Եթէ Մամիկոնեաններից մեզ մնացած լինէր միայն Վարդան Զօրավարի ճառը՝ ուղղուած հայ բանակին, Աւարայրի ճակատամարտից առաջ, ես դարձեալ կը մնայի տարօնական ոգու երկրպագուն, պաշտողը: Մէկուկէս հազարամեակ առաջ հայ զինուորը տուած է հայրենապաշտութեան ու անձնուիրութեան գերագոյն չափը, որով ե՛ւ մի անգամ ընդմիշտ լուծած է յաղթանակելու գաղտնիքը - «սրտի հրճուանքով ընդունենք մահը»:

Ասպե՛տ էր Մամիկոնեանը, քանզի ճշմարիտ հերոս էր - «մեր խիզախ քաջութեան վատութիւն չխառնենք»:

Ցեղօրէն ինքնաճանաչ՝ հպարտ մտածումի մարդ էր նա - «աւելի շատ յաղթական եղած ենք, քան թէ պարտուած»:

Խորապէս իմաստուն էր նա - «երկիւղը թերահաւատութեան նշան է»: Եւ ազնւօրէն փառասէր - «ո՛վ արիաբար առաջ անցնէր, ազգէն քաջ անուն կը ժառանգէր», ասում է Հայոց Սպարապետը: Զինուոր եմ, եւ ծանօթ ազգերի վարած պատերազմների պատմութեան: Ոչ թէ հինգերորդ դարում, այլեւ մեր ժամանակներում շատ քիչ ազգերի մէջ զինուորութիւնը յաջողած է մշակել այն բարձր բարոյականը, որով ապրեցին ու գործեցին մեր Մամիկոնեանները - մի հերոսական, որին դժուար թէ դարերը կարողանան նոր բան աւելացնել:

Ի՞նչ. հերոսականութեան, հայրենապաշտութեան, ցեղային հպարտանքի, մարտական խանդի, ասպետականութեան - ի մի բան՝ Մամիկոնեանի բարոյականի կարիք չէ՞ զգում օրւայ հայութիւնը:

Այլեւս «արիաբար առաջ անցնող»-ներ պէտք չե՞ն:

Հապա վտանգւած Հայաստա՞նը: Զարմանալի՞ է, որ հայ զինուորը վտանգի այս օրերին Մամիկոնեանների ոգուց ու բարոյականից -

Տարօնականութիւնից է խօսում: Այդ ո՞ր օրւանից հերոսականութեան ու հերոսապաշտութեան քարոզչութիւնը մեր կուսակցութեան մէջ վտանգաւոր հերետիկոսութիւն համարւեց: «Նոր Օր»-ի խմբագիրը շա՜տ վատ է ներկայացնում Դաշնակցութիւնը, որի համար էականը եղել է եւ պիտի մնայ՝ ամէն բանից առաջ հայ հայրենիքի համար քաջաբար կռւողներ եւ մեռնողներ հասցնելը: Իսկ դա հնարաւոր է միայն եւ միայն այն ոգու միջոցաւ, որի քարոզչութեան լծւած ենք մենք:

Միեւնոյն թերթի կողմից Տարօնականութիւնը համարւում է «խարխափումներ»-ի արդիւնք: Խարխափո՞ւմ - դա յատուկ է քաղաքական սիրողներին եւ ոչ թէ զինւորին, որ գիտէ իր գործը՝ խաղաղութեան մէջ ուխտւածութիւն քարոզել, իսկ վտանգի ժամանակ «քաջաբար կռւել»: Դա յատուկ է նրանց միայն, որոնք շարունակում են աղմկել դեմոկրատիայի, լիբերալիզմի, անհատապաշտութեան եւ նման չհասկացւած եւ մասնաւորապէս, սխալ հասկացւած փոխառիկ յիմարութիւնների մասին - բաներ, որ չգիտենք, թէ այս օրերին ինչ առնչութիւն ունեն մեր տարագիր ժողովրդի ճակատագրի հետ:

Մի վայրկեան ճշդենք հայ ճակատագիրը շօշափող խնդիրների կարեւորութեան չափը: Ո՞րն է, աւելի ճիշդ՝ ո՞րը պիտի համարել խնդիրների խնդիրը օրւայ հայութեան համար.

- Հայութեան ու հայ հայրենիքի ինքնապաշտպանութիւնը:

Ի՞նչն է եղած դարերով այդ ինքնապաշտպանութեան մշտայաղթ զէնքը.

- Մամիկոնեանների ուխտւածութիւնը, բարոյականը, ոգին:

Իսկ ի՞նչն է եղած եւ պիտի լինի Դաշնակցութեան դերը:

- Իր ժողովրդի համար ապահովել այդ զէնքը, որ անւանում ենք Տարօնականութիւն:

«Մօտաւորապէս երեք քառորդ դար տեւեց մեր ժողովրդի ազատագրական պայքարը: Յաջողեցա՞նք մեր նպատակին մէջ», հարցնում է «Նոր Օր»-ը, առանց պատասխանելու իր դրած հարցին: Ահա՛ թէ ո՞ւր է խարխափումը: Այո՛, խարխափում կայ. խարխափում են նրանք, որոնք Թուրքիոյ քաղաքական բարեկամութիւնն են երազում, կանխաւ հայուն հոգեւոր զինաթափութիւն քարոզելով, հեռացնելով մեր ժողովրդի ուշադրութիւնը իր ինքնապաշտպանութեան խնդրէն, որոնք՝ չխրատւած երէկւայ մեր պատմութենէն, իրենց մանր անձնականութիւնը բաւարարելու նպատակով չեն քաշւում մոլորանք ստեղծել անգամ հայ հայրենիքի համար «քաջաբար կռւողներ»-ի շուրջը:

Զինւորը - այդ էլ լաւ հասկանանք, - չէ խարխափում երբե՛ք. նա կամ քաջաբար կռւում է, կամ էլ դասալքում: Զինւորի համար ճշմարիտ է միայն այն դաւանանքը, որը նրան բարոյական ոյժ եւ արիութիւն է

տալիս կռւելու եւ կարիքի դէպքում մեռնելու հայրենի երկրի համար:

Զինւոր մարդ եմ. իմ անցեալի ու վաղւայ անելիքի չափ պարզ, յստակ եւ որոշ է իմ այսօրւայ դաւանանքը - մի դաւանա՛նք, որի խարիսխը ձգւած կը մնայ մեր ցեղի ոգու մէջ. դաւանանք, որն իր մէջ կրում է իր հոգեւոր, պատմական եւ իմաստասիրական արդարացումը:

Ա՛յս է եղել, է ու կը մնայ Դաշնակցականի իմ դաւանանքը:

Սրանից տարբեր պիտի չլինի ընդհանրապէս Դաշնակցականի դաւանանքը:

«Պատմական Հայաստանի մէջ Տարօնը անկասկած իր տեղն ունի ուրիշ շրջաններու կարգին»,- ասում է «Նոր Օր»-ը, թոյլ տալով սխալներէն ու մեղանչումներէն ամենաաններելին:

«Ուրիշ շրջաններու կարգին» դասել Տարօնը, ասել է՝ ծանօթ չլինել Հայոց պատմութեան:

Իր միեւնոյն խմբագրականի մէջ աւելացնում է նա. «Տարակոյսէ վեր է, որ Պատմական Հայաստանի որոշ վայրերը իրենց փառքով եւ ոգիով մեզի կը պարտադրեն բացառիկ յարգանք եւ պաշտամունք»: Ճիշդն այդ է, եւ դա ժխտումն է իր առաջին ասածների: Այո՛, հէնց Հայաստանի այդ «որոշ վայրեր»-էն մէկի - Տարօնի՝ յաւիտենապէս «բացառիկ յարգանք ու պաշտամունք» պարտադրող «փառքն եւ ոգին» է մեր քարոզած Տարօնականութիւնը: Պարզ չէ՞, որ եթէ այդ բացառիկ յարգանք ու պաշտամունք պարտադրող ոգիէն զրկենք մեզ՝ մեր մէջ ոչինչ կը մնայ դաշնակցականութիւնից: Դատարկ անօթի վերածած չե՞նք լինի Հայաստանի ոգին, եթէ նրանից դուրս թողնենք այդ ոգին: Խմբագիրը չի ուզում, որ հայն իր գոյութիւնը կապի անցեալի յիշատակներին եւ թելադրում է, որ նա իր «գոյութիւնը հաշտեցնի ներկայի պայմաններուն»: Բայց եւ այնպէս, խօսում է «Հայաստանի ոգու» մասին, առանց անդրադառնալու, որ ոգին սնւում է անցեալի հիւթերով միայն, որ ոգի ասել է՝ առաւելապէս անցեալ, որ դա գրեթէ ամբողջապէս անցեալ սերունդների ապրումների, ոգորումների, ողբերգութեանց, յաղթանակների, դիզած բարոյական հարստութեան, ոյժի, պաշտամունքի եւ զոհողութեանց արդիւնքն է:

Ոգին է կռում ազգերի ճակատագիրը: Փոխւեց մէկը՝ փոխւում է եւ միւսը:

«Մի՛ մարէք ոգին»,- ասւած է երկու հազարամեակներ առաջ ոգու մի հսկայի կողմից, որի առջեւ պիտի ծունկ ծռէր անգամ աշխարհակալ Հռոմը: Ուր մարած է ոգին՝ այնտեղ մեռեալ է կեանքը: Ոգի հասկացողութիւնը - կուլտուրական հասկացողութիւն է:

Արժէքներ, սրբութիւններ, մարդկայնութիւն, գաղափարներ, իդէալներ, հոգեկան ոյժ, լեզու, արուեստներ, իմաստութիւն, իմաստասիրութիւն, առաջնորդութիւն, հերոսական, փառք - ոգին է այդ բոլորի ստեղծիչը:

Այլ բան չէ մարդկային բովանդակ պատմութիւնը, եթէ ոչ՝ ոգու զարգացման առաջընթաց եւ արդիւնք, միաժամանակ:

Էականը մի ժողովրդի համար իր վարած այս կամ այն քաղաքականութիւնը չէ, այլ այն ոգին, որով ղեկավարւում է նա, ժողովուրդը: Քաղաքականութիւնը գրեթէ միշտ էլ լինում է միայն այնքան արդիւնաւոր, որքան զօրեղ եւ ակտիւ է զայն վարողի ոգին:

Ոգին է մի ժողովրդի ոյժերի մեծագոյն բազմապատկիչը:

Կամք, ստեղծագործութիւն, արիութիւն մի՛ փնտռէք ոգեսպառ եղած ժողովրդի մէջ:

Չարիք է տկարոգի մարդու ղեկավարութիւնը, անէծք՝ նրա իշխանութիւնը:

Ոգին է վարում, ստեղծագործում, յաղթանակում, «մահւամբ մահը կոխում», մարտիրոսութեան մղում, առաքինացնում, անմահութիւնը նւաճում:

Ոգեզուրկ ժողովրդի հերոսները, լուսակիրներն ու սուրբերը մնում են իբրեւ մեռեալ իրականութիւն: Նրանց յիշատա՞կը - դա իրենց ոգին է, որ փոխանցւում է սերունդէ սերունդ, եւ հէնց այդ ապրող ու ստեղծագործող ոգու կեանքի մէջ է իրական անմահութիւնը:

Վարդանների անմահութիւնը - դա հայրենապաշտութեամբ, քաջութեամբ եւ ցեղային բարոյականով զօրաւոր հայ սերունդներն են:

Հայրենիքն է ոգու ամենասրբազան թանձրացեալ ստեղծագործութիւնը:

Դեռ չէ տեսնւած, որ ոգեսպառ մի ժողովուրդ տեւապէս հայրենիքի տէր մնայ: Սովորեցրէք հայ մարդուն Մամիկոնեանների անսահման նւիրումով ծառայել հայրենիքին եւ մեռնել նրա համար, եւ դուք կ'ապահովէք նրա հայրենիքի գոյութիւնն ու անկախութիւնը: Թշնամին - անգամ ամենէն նախնականը - գիտէ, թէ ինչո՛ւ նաեւ պէտք է հարւածել իր ախոյեանի ոգիին: Եւ ինչե՞ր, այսօր ինչե՞ր չեն անում թշնամի համարւած ժողովրդի ոգին տկարացնելու համար:

Հայ ոգու կրողներն էին Մամիկոնեանները: Հայաստանի բազմապիսի թշնամիներ փորձով գիտէին այդ, եւ հէնց այդ էր պատճառը, որ նրանց կողմից այնքա՛ն հետեւողականութեամբ եւ բարբարոսութեամբ հետապնդւեց հրաշունչ Վարդաններ, Մուշեղներ եւ Վահաններ ծնող ազգատոհմի անճիտումը:

Ոգին է վարել Պլուտարքոսի, քրիստոնէութեան, հայրենիքների, գիտութեան, յեղափոխութեանց բոլոր հերոսներին ու մարտիրոսներին:

Ոգեզուրկ ժողովրդին վարում են դիպուածները: Երբ մի ժողովուրդ վերելքի ու յաղթանակների փոխարէն անվերջ խօսում է վտանգի մասին - հասկացէք, որ նա ոգեթափ է եղած:

Նմանի վարած ամենաիրատես եւ չափաւոր քաղաքականութիւնն իսկ բանի պիտի չծառայի: Ոգու պակասի արդիւնք է մեր ժողովրդի օրւայ հոգեւոր անշարժութիւնը, նրա քաղաքական յոռետեսութիւնը, նրա կեանքի գռեհկութիւնը, անհամերաշխութիւնը:

«Թուրքիա եւ Յունաստան բարեկամութեան դաշինք մը ստորագրեցին, - այն Յունաստանը, որը «Մեղալի Իտէայի»-ն համար, միլիոնէ աւելի զոհ տուաւ». ասում է «Նոր Օր»-ը եւ այդ քաղաքականութիւնը համարում է «իրատես»: Քաղաքական ինչպիսի՛ պարզամտութիւն: Յոյնը հրաժարւեց Մեծ Յունաստանի գաղափարէն ոչ թէ նրա համար, որ իմաստուն ու շահաւէտ համարեց իր արդի քաղաքականութիւնը, այլ որովհետեւ, նրա ոգու ոյժերը ընդունակ էին պաշտպանելու միայն եւ միայն իր հայրենիքի օրւայ նեղ սահմանները, եւ ո՛չ աւելին:

Մամիկոնեանները - որոնց բարոյականը այնքա՜ն պահանջկոտ էր մարտնչող հայ անհատի հանդէպ, որոնց համար աշխարհը շուկա չէր, այլ քաջագործութիւնների ասպարէզ, որոնք գիտէին կեանքին արժէք չտալ - գիտցան համադրել քրիստոնէութիւնն ու ազգութիւնը: Սրանով պէտք է բացատրել սրբազանի այն խոր զգացումը, որ դարերով իրենց անգերազանցելի հերոսութեան մայրը հանդիսացաւ: «Առանց Վարդանի եւ Մամիկոնեանց՝ կարելի չէր երբեք, որ Հայաստան փրկուի»,- ասում է Հայոց պատմութիւնը՝ մի ճշմարտութիւն, որ ամենայն վճռականութեամբ կարելի է կրկնել եւ ա՛յսօր:

«Ղեկավարելու արժանի լինելու համար պէտք է միշտ էլ արժանի լինել, որ հետեւեն քեզ»: Եւ մարդը - անհատ թէ հաւաքականութիւն - նւիրումով ու տեւապէս հետեւում է միայն զօրաւոր ոգու տէր ղեկավարներին:

Այդպիսին էին Մամիկոնեանները - հետեւե՛նք նրանց, քանզի չկայ ցեղային աւելի մեծ առաքինութիւն, քան ընթանալ ցեղի հոգեւոր առաջնորդների ճամբով, եւ քաջաբար մեռնել «ի վերայ աշխարհիս մեր եւ ի վերայ ազգիս մեր» - ահա՛ թէ ի՛նչ ենք հասկանում Տարօնականութիւն ասելով:

«Տարօնի Արծիւ», Սոֆիա,
1938թ., թիւ 5-6

ՁՕՐԱՎԱՐ ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԸ ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Սխալ է, աւելին՝ ոճիր է կարծել, թէ բոլոր ճշմարտութիւնները մարդու պէս մահկանացու են, թէ նրանք էլ մեզ պէս ծնւում են, ապրում, սպառւում, մեռնում:

Ո՛չ, ո՛չ, ճշմարտութիւններ կան, որոնք անմեռ են, յաւիտենական, ինչպէս ինքը՝ ժամանակը:

Այդ կարգի ճշմարտութիւններից են նրանք, որոնք վերաբերում են հայրենիքին, մահուան, յաղթանակին, առաջնորդին, պարտականութեան եւ այլն:

Այդ ճշմարտութիւնները իրենց արիւնով կնքած ու դարերին եւ սերունդներին կտակ են թողած Մամիկոնեան ռազմիկները:

Եթէ բանանք դարերի գերեզմանը եւ խօսեցնենք հայոց պատմութեան մէջ յաւերժացած այդ անմահներին, նրանք պիտի ասեն.

«Մեր օրով ղեկավարի եւ զինուորի համար ոչինչ արժէր կեանքը, երբ Հայրենիքը վտանգի մէջ էր:

«Մեր օրով կանգուն մնաց Հայաստանը, որովհետեւ մենք գիտցանք երես-երեսի գալ, դէմ-յանդիման կանգնել գերագոյն պարտականութեան, ինչպէս հաւատաւորը՝ իր Աստուծոյ առջեւ:

«Մեր օրով հայը մնաց անպարտելի, որովհետեւ մենք գիտցանք զգալ սրբազանի ներկայութիւնը կեանքի եւ պատմութեան մէջ. գիտցանք մեր առօրեային խառնել յաւիտենականի հոգսերը:

«Մենք գիտցանք չափուել մեզնից գերազանց ոյժերի հետ, որովհետեւ սովոր էինք չտագնապել վտանգի մեծութենէն, որովհետեւ մեր օրով կեանքի կոչուեց «անմահից գունդը»:

«Մենք մնացինք յաղթական, որովհետեւ մեր օրով յաղթական մահն էր մարդկային արժէքի եւ արժանիքների միակ չափանիշը, որովհետեւ իրապէս կը գիտակցէինք զոհի եւ զոհաբերութեան անհրաժեշտութիւնը եւ անխուսափելիութիւնը՝ հայրենի հողի համար:

«Մենք եղանք զօրաւոր, որովհետեւ մենք մօտիկ էինք կանգնած մեր ցեղի ճակատագրին, շա՛տ մօտիկ, զայն շօշափելու աստիճան, եւ հէնց այդ էր պատճառը, որ մեր օրով հայը եղաւ ռազմունակ եւ տիրասէր:

«Մեր օրով էլ «աղուէսը» յաճախ կը յաջողէր խեղդել զսպուած վագրն ու առիւծը - Ձիրաւի դիւցազունը՝ Մուշեղ - պիտի սպանուէր «ի մտաց թեթեւ» Վարազդատէն - մեր ժամանակ էլ կար ներքին տկարութիւնը,

մահաթոյն նախանձը, չարութիւնը, բայց եւ այնպէս, հակառակ որ մեր մի բազուկը զբաղեցրինք թիկունքում - մենք երբե՛ք չտարակուսեցինք, թէ մեր թափած արիւնը փրկարար է հայրենի երկրի համար եւ թէ մենք պիտի յաղթանակենք:

«Մեր օրով հայ զէնքը պարտութիւն չտեսաւ, որովհետեւ ամէն Մամիկոնեան հայոց բախտը պատմութեան կողմից իր ձեռքը տրուած համարեց եւ այդ գիտակցութեամբ իրեն անսպառ ոյժ եւ արիութիւն ներշնչեց:

«Մեր օրով առաջնորդութեան գաղափարը կապուած էր վտանգի, հերոսականի եւ գիտակցական մահուան հետ. տարօնաշունչ հայը իր մահով կը յաղթանակէր մահը եւ իրեն կ'ենթարկէր յաւիտենական կեանքը՝ անմահութիւնը:

«Մեր օրով հրամայելու - երբ վարող եւ հրամայող չկայ՝ ժողովուրդն աստիճանաբար վարժւում է իր դանդաղ հոգեվարքին - մեր օրով հրամայելու եւ հրամայուելու անդիմադրելի մղում կար. կար դժուարութեանց եւ վտանգներին կուրծք տալու արիութիւն, կռիւներում քրտնելու քաղցրութիւն. մենք գիտցանք հրաժարուել մեր անձէն, երբ պէտք էր մեռնել:

«Մեր օրով, որպէս հայ եւ մարտիկ մենք երբե՛ք չտկարացանք, որովհետեւ մեր բազուկը կը վարէր Վահագնը, իսկ մեր խղճմտանքը՝ ուխտապահութեան մեր հեթանոս աստուած Միհրը»:

* * *

Որքան ցեղահոգ, այնքան սրտառուչ է Տ. Տ. Հ. Միութեան կեդր. վարչութեան առած որոշումը - դեկտեմբեր ամիսը յայտարարել տարօնական վերածնունդի ամիս:

Վերածնունդ - դա ասել է՝ ամօթի ու ցաւի խոր գիտակցութեամբ զգալ, որ այսօր այն չես, ինչ որ էիր եւ որ ուխտել ես աշխատել վաղը դառնալ ա՛յն, ինչ որ էիր:

Ժողովուրդների ապագան իրենց հերոսաբար ապրելու, պայքարելու եւ զոհաբերելու կամքի մէջ է:

Հենց ա՛յդ ասել է տարօնականութիւն - ապրե՛լ, պայքարե՛լ, զոհաբերե՛լ:

Տարօնականութիւն է Մամիկոնեան հսկաներէն Վարդանի ուխտը - այնպիսի գործ մը պիտի գործեմ, որ ամբողջ աշխարհի պատմուի մինչեւ յաւիտեան:

Դա դաւադրուած Մուշեղ զօրավարի անճառելի դառնութիւնն է - ո՛ւր էր, թէ ձիու վրայ հանդիպէր մահը:

Դա մեր ազգային երրորդ ապստամբութեան ղեկավարների բարձր ըմբռնումն է - մեր ձեռնարկը կնոջ եւ զաւակների համար չէ:

Դա հայ սպարապետի լացն է, որ չէ մեռնում գոռ ճակատամարտերում՝ Հայաստանի համար:

Դա Մանուէլ Մամիկոնեանի ցեղային արդար իրաւունքի գիտակցութիւնն է - ինչ որ ինձ ժառանգութեան կ'իյնայ, թագաւորը՝ օտարը, չի կրնար ուրիշի տալ:

Տարօնականութի՛ւն - դա Մեսրոպի անմահ գործն է, որ կարելի դարձաւ, որովհետեւ հայ սուրը պաշտպան կանգնեց նրան:

Դա հայ ռազմիկի գործն է, որ յաղթական եղաւ, որովհետեւ Հայ եկեղեցին օրհնեց նրան:

Տարօնականութի՛ւն, ասել է՝ ցեղային հզօր եւ անզիջող անհատականութիւն:

Դա ասել է՝ թոյլ մի՛ տար, որ ցեղիդ ստեղծագործութեան ու հայրենաշինութեան շղթան ընդհատուի:

Դա նոր ուխտ է տարօնաշունչ Մեսրոպների, Պարթեւների, Խորենացիների շունչով օծուն իմացական նոր առիւծներ հասցնելու:

Դա ձգտումն է՝ վազքը մեր ցեղի ոգու - մեր լուսեղէն նշանագրերի - դէպի արեւը, կեանքի աղբիւրը, լոյսը:

Դա մեր հաւատքն է, թէ մեր այնքան արգասաւոր ցեղը դեռ պիտի կրկնէ իր զօրաւոր զաւակները - Վարդանները, Մուշեղները, Վահանները, որ նա պիտի հասցնէ հերոսական սքանչելիքներ գործելու վտանգի մի նոր սերունդ:

Դա ցեղի անմահ ընտրանիի գործը շարունակելու ուխտն է:

Դա ասել է՝ հպատակութիւն ցեղին:

Դա ասել է՝ մտածումիդ, ապրումիդ եւ գործիդ մէջ ցեղը դի՛ր:

Դա ե՛ւ հերոսապաշտութիւն է, ե՛ւ նոր հերոսական ծարաւ:

Կե՛ղծ է, մեռեա՛լ է ա՛յն պաշտանքը, որը պատմական գործերի չի մղում սերունդները:

Կորա՛ծ է այն ժողովուրդը, որի հերոսները կը մնան որպէս մեռեալ իրականութիւն:

Տարօնականութիւնը - դա ցասմնալի մի անէծք է Հայաստանին ծառայելու պատրաստ հայու նուիրումն ու գործը դժուարացնող ներքին չարութեան դէմ:

Յաշտիշա՛տ, զոհափառ, զոհաշատ - ահա՛ այն անունը, որ կը խորհրդանշէ Տարօն աշխարհը եւ իմաստը կը կազմէ տարօնականութեան:

Վերջապէս, տարօնականութիւնը մի վճռական միջոց է օրուայ մեր ազգային կեանքը թունաւորող հոգեւոր մանրուքի եւ գաղափարների քաոսի դէմ:

Դա, մեր հասկացողութեամբ, միաժամանակ, մի բողոք է մեր հաւաքական տկարութիւնը սնուցանող, պարտուողական, թուլօրօր քարոզչութեան դէմ:

* * *

Հին, ցեղահոգ իմաստութիւնն ասել է - եթէ կ'ուզես մէկին բարութիւն անել, բարութիւն արա՛ նրա զաւակներին:

Կ'ուզէ՞ք նպաստել տարօնականութեան տարածման - Մամիկոնեանների ոգով դաստիարակեցէ՛ք նորահաս սերունդը:

«Ռազմիկ», Պլովդիվ,
1938թ., թիւ 46

ՄԵՌՆԵԼՈՒ ԿԱՄՔ

Մի զինուորի ճշմարտութիւններ

Զինուորն իր ժողովրդին երկու բան կը պարտի - նախ՝ ճշմարտութիւն, ապա՝ իր կեանքը:

Մեր երկրագնդի վրայ սահմանաւոր մի գետին կայ, մի կտոր հող, որից առնւած է մեր կենդանի կաւը, որին միայն հարազատ ու բնիկ են մեր մարմինն ու ոգին - առաւելապէս ոգին: Մեր Հայրենիքն է այդ հողը:

Դա՝ հայրենիքը, մի հոգեւոր իրականութիւն է, դա «մի բան է ոգուց եւ ոգու համար»:

Ոգին է իմաստ եւ սրբազնութիւն հաղորդում երկրին:

Զրկէք երկիրն իր սրբազնութիւնից, իր հոգեւոր նշանակութիւնից, եւ դա կը դադարէ հայրենիք լինելուց:

Հայրենի՜ք - «Այստեղ է իմ հաւատը, այստեղ է իմ ցեղը, այստեղ են հետքերն իմ հայրենի» (Կիկերոն):

«Պիտի պաշտպանեմ սրբարանները ու սրբութիւնները իմ հայրենիքի» (Պոլլակս): Այսպէս կը բանաձեւէր իր երդումը Հռոմի զօրացանկերի մէջ իր անունը արձանագրող երիտասարդը:

Քաղաքացի լինել, ըստ Դեմոսթենէսի, ասել էր «զոհաբերութեան մասնակցել»: Հայրենիքներն էապէս ստեղծւեցին ա՛յն օրը, երբ նրանց որդիները, առաջին անգամ լինելով, զգացին սրբազնութիւնը իրե՛նց հայրենի հողի:

Նաեւ ճշմարիտ հերոսականը տեղի ունեցաւ այն օրը, երբ մարդը սովորեց եւ սիրեց գիտակցօրէն գործել, տառապել ու մեռնել իր հայրենիքի համար:

Այո՛, հայրենիքների գոյութիւնը միշտ էլ պայմանաւորւել է նրանց համար ամէն վայրկեան մեռնելու պատրաստ ուխտւածների գոյութեամբ:

* * *

Մեր երկրագնդի վրայ, ուխտերից ամենասրբազանը մի՛շտ էլ կնքուած է եղել Աստուծոյ եւ Հայրենիքի համար: Deo et Patria! Նմաններից էր Մամիկոնէից Ուխտը:

Որպէսզի հայը իր կեանքը քաղցրօրէն պատարագէր իր Հայրենիքին, նա պիտի ձգտէր բարձրանալ սովորական մարդկայնութիւնից, իսկ

դրանում յաջողուելու համար, նա պիտի զգար կարիքը՝ մի գերագոյն արժէքի, որպիսին է ցեղի յաւիտենականը: Մամիկոնեաններին յաջողուեց նաւաճել հայու յաւիտենականը, որովհետեւ նրանց համար իրենց ուխտը Հայրենիքի համար մեռնելու լոկ ցանկութիւն չէր, երդում չէր, այլ կամք:

Մեռնելու կամք - դա ներքին ինքնաբուխ այն զգացումն է, աւելի՛ ճիշդը ներքին մղումը, որ ուխտաւոր ոյժ, արիութիւն եւ ուրախութիւն է տալիս մեռնելու իր հայրենիքի եւ ցեղի համար:

Կա՞յ այդ կամքը - ասել է՝ ենթական յաջողել է հաշտեցնել իր անձը իր ցեղի յաւիտենականի հետ. ասել է՝ նա այլեւս գտած է ինքն իրեն, այլեւս ինքնաճանաչ է, որով եւ՝ տէր իր ցեղի թաքուն ոյժերին: Ճշմարտութեան ու հերոսական բարոյականի մարդ՝ նա այլեւս ճշդած է իր վերաբերմունքը դէպի իր անձը, դէպի իր նմանները, դէպի ճշմարտութիւնը: Նմանների հայեացքը միշտ էլ ուղղուած է դէպի յաւիտենականը. այլեւս նմաններին չէ խռովում կեանքի մանրուքը: Իբրեւ ռազմիկ՝ անպարտելի են նմանները:

Նմաններին վարողը արտաքին իշխանութիւնը եւ օրէնքը չեն. սրանք չեն ուղարկւում, այլ գնում են մեռնելու ո՛չ թէ նրա համար, որ դա պահանջում է ազգը, այլ որովհետեւ իրենք են մեռնել ուզում: Սրանք ե՛ւ կամաւոր զոհ են, ե՛ւ զոհարար՝ իրենց անձի:

Նմանների հայրենիքում զինուորը կարող է մեռնել, բայց ո՛չ եւ պարտուել:

Այսպէս էին Մամիկոնեանները:

* * *

Հայրենիքն է շնորհում մարդուն՝ հպարտանքներից ամենաարդարը, ցաւերից ամենախորը, պաշտամունքներից ամենաանխառնը եւ մահերից ամենասուրբը:

Մեր հեթանոս դարերէն արձակւած հերոսական ու ցաւախառն մի ճիչ, մի կա՛նչ դեռ արձագանգում է իմ արեան մէջ. «Զօրակա՛նք հայոց, այլեւս հայրենիք չենք ունենայ, եթէ այս ալեաց մէջ չխեղդենք թշնամին» (Պարիլի): Դա ասել է՝ ո՛վ նահանջում է վտանգի առջեւ՝ ընդունում է մահւան իշխանութիւնը կեանքի վրայ. դա ասել է՝ ով փախչում է իր հայրենիքի շուրջը բորբոքւող կռւի ժամանակ, նա վատաբար լքում է այն ամէնը, որ սրբազան է մեր աշխարհում, նա հրաժարւում է իր իդէալ սեփականութիւնից, որպիսին է հայրենիքը, եւ մահանում բարոյապէս:

Հայ զօրավարը, ասում է Պարիլին՝ «չուզեց ապրել պարտուելէն յետոյ. նա ձիարձակ դիմեց թշնամու վրայ, եւ մեռաւ դիւցազնաբար՝ իր սրի վերջին հարուածով ճեղքելով թշնամի զօրապետի սաղաւարտն ու գանկը: Իր զինուորները կատաղած, ընկան թշնամու վրայ՝ պաշտպանելու

իրենց զօրավարի մարմինը: Յուսահատական էր կռիւը, եւ ամէնքն ալ մի առ մի մեռան»: Այսպէս էր սիրում նախաքրիստոնէական հայն իր Հայրենիքը եւ մեռնում նրա համար: Այդ օրերին, ասում է նոյն օտարազգի հեղինակը, Հայաստանի մէջ տարածւած խօսք կար, թէ ծերունի զօրականը չի կարող ստել կամ անխորհուրդ բան ասել:

Ինչպիսի՜ բարձր բարոյական: Ո՜րքան նման է հայ ռազմիկը իր «արի եւ իմաստուն» աստուածներին:

Հազարիցս ճիշդ է ասւած, թէ «զէնք վայել են քաջաց եւ ոչ խորամանկաց»:

Թէեւ արդիական զէնքերը մաթեմատիքական զէնքեր են, բայց եւ այնպէս բանակների ճակատագիրը որոշողը այսօր էլ, վաղն էլ եւ յաւիտենապէս կը մնայ մարդկային ոգին:

Էապէս ոչինչ է անում այն ժողովուրդը, որն իր նիւթական զէնքերի հետ միաժամանակ, չի կատարելագործում նաեւ իր զինւորը:

Դիպուածական կամ «գողացած» յաղթանակներից երբեք չեն շահել հայրենիքները:

Լաւ բան է անշո՛ւշտ, մի հատիկ զէնք աւելի ունենալ, բայց ոչինչ բան է հազարներով իսկ աւելի ունենալը, եթէ ռազմիկին վարողը մահւան գաղափարի հետ հաշտւած հերոսական ոգին չէ:

Հրամայելու եւ հրամայւելու անդիմադրելի մղում, խանդ, դժուարութեանց կուրծք տալու ծարաւ, կռւում քրտինք կտրած ձիու վրայ մեռնելու տենչ, մեր օրերի լեզվով՝ «լեգէոնի՛զմ», «միւրիդի՛զմ» պիտի ասէր կովկասեան լեռնցին, մեր լեզւով՝ Տարօնականութիւն - ահա՛ թէ ի՞նչն է հատու եւ յաղթաբեր դարձնում զէնքը՝ զինւորի ձեռքում:

Ի՞նչը հայերիս դարձրեց յաղթական Սարդարաբադում եւ Ղարաքիլիսում - չգոյ թի՞ւը, սպառազինութի՞ւնը, կռւի հանճարեղ յատակագի՞ծը - վճռապէս ո՛չ, ո՛չ մէկը եւ ո՛չ էլ միւսը, այլ՝ մեր ուխտը, մեր կամքը՝ մեռնե՛լ, բայց թուրքը չտեսնել էջմիածնում, Երեւանում:

Այո՛, պատերազմական տեխնիքայի շարժիչը վաղն էլ եւ յաւիտենապէս կը մնայ մարդը, մարդկային ոգին:

Այդ այդպէս լինելով հանդերձ, նիւթապաշտիկ դեմոկրատիայի յատուկ նախանձը՝ ոգու փոխարէն քարիւղը հռչակեց համաշխարհային պատերազմի ամենամեծ հերոսը:

* * *

Զինւորական երեք դոքտրիններից - նիւթապաշտական, իմացապաշտական եւ ոգեպաշտական - վերջի՛նը պէտք է լինի մերը:

Առաջինի համար ամէն ինչ է թիւը, երկրորդի համար՝ կռիւը շախմատային խաղ է, երրորդի համար՝ դա հոգեկան ակտ է:

Յաւիտենական է կոնֆլիկտը թւի եւ որակի, ամբոխի եւ ընտրանիի միջեւ: Նիւթապաշտականը ամբոխների դոքտրինն է: Միշտ էլ պարտուել են այն ազգերը, որոնք ունեցել են մի հատիկ յենարան - թիւը, քանակը: Կռւադաշտը միշտ էլ պատկանել է որակին: Նրան են ե՛ւ վաղւայ յաղթանակները:

Ֆրանսայի Ազգային ժողովը իր պարտւած զօրավարներին կ'ուղարկէր կառափնարան: Մեր օրերի յոյները մեռնելու կամքից զուրկ զօրականներին ծովը թափեցին: Եւ արդար էր դա, քանզի ճակատամարտը ո՛չ մեռեալ թւերի բաղխում է, ո՛չ էլ շախմատախաղ է, այլ ամէն բանից առաջ՝ հոգեկան ակտ: Ասել է՝ պարտութիւնը մարդկային ներելի սխալ չէ, այլ պատժելի յանցագործութիւն:

Թո՛ղ հեռու մնայ իր ժողովրդի ղեկավարութիւնից նա, ով մեռնել չգիտէ իր հայրենիքի համար:

Ամէն ղեկավար - տասնապետ, զօրավար, նախարար - որ հրաժարւում է մեռնել իր հայրենիքի համար, յանցագործ է:

Զինւորական բարոյականը չէ ասում՝ յաղթանակի՛ր բոլոր դէպքերում, դա ասում է՝ յաղթականօրէն մեռնել գիտցի՛ր բոլոր պայմաններում:

Զէնք, դիրք, քաղաքական վայրկեան - այդ բոլորը կը նպաստեն քո յաղթանակին՝ կը բաւէ, որ դու մեռնելու կամք ունենաս, այսինքն՝ անձէդ աւելի սիրես այն, որի համար կռւի ես դուրս եկել:

Ամէն ճշմարիտ իշխանութիւն - տասնապետութիւն, նախարարութիւն - ենթադրում է աւելի բարձր բարոյական իշխանաւորի, քան իշխւողի մօտ:

Հասկանա՞ք ե՛ւ այդ:

* * *

Մասաուա՞ - Աֆրիկայի ամենաանառիկ կէտը, որ տարիներ առաջ Իտալիոյ ռազմական հմայքի գերեզմանը հանդիսացաւ - վերջերս երկիւղածօրէն ծունկ ծռեց միեւնոյն երկրի վերածնւած զաւակների առջեւ: Ո՞ւր է գաղտնիքը:

Ղարաքիլիսում եւ Սարդարաբադում քաջութեան հրաշքներ կատարած հայը չկռւեց Ղարսում: Սակայն նոյն Ղարսի պարտեալը դիւցազնացաւ Սիւնիքում:

Ի՞նչ է նշանակում այդ: Դա նշանակում է, որ ոգին կայականութիւն չի ճանաչում, որ դա չի քարանում, չի մնում միեւնոյն կէտի վրայ: Դա երբեմն ծալւում է իր թեւերը, երբեմն էլ թռիչք է առնում դէպի նորանոր նւաճումներ:

Մէկից աւելի են ոգու անկման ու ակտիւացման պատճառները: Գլխաւորագոյնը, սակայն, կը մնայ առաջնորդի անձը:

«Առանց բանակի կարելի չէ պատերազմել, բայց բանակն էլ չի կարող պատերազմել առանց առաջնորդի»:

Առաջնորդը - ահա՛ մեծ «ամէն ինչ»-ը:

Նախ պատասխանենք այն հարցին, թէ ո՞վ արժանի չէ եւ ատակ չէ առաջնորդ լինելու: - Նա՛, որի էութիւնը ճանաչում է «մարդկայինը միա՛յն». ո՛վ չունի իր գերագոյն առարկան, չունի առարկայօրէն ու յաւիտենապէս արժէքաւորը ու սրբազանը կեանքում, որի առջեւ կանգնէր, ինչպէս հաւատացեալն իր Աստուծու. ո՛վ ստեղծագործ խղճմտանք չունի:

Ճշմարիտ առաջնորդ լինել չէ կարող եսապաշտը, ընչասէրը, հոգով փչացածը: Առաջնորդ լինելու համար բաւական չէ անգամ արտակարգ իմացականութիւնը: Քաջութիւնն էլ - որ բարձր յատկութիւն է զինուորի եւ քաղաքացու համար - բաւական չէ մէկին ճշմարիտ առաջնորդ դարձնելու: Քի՞չ եսասէրներ, ընչաքաղցներ կան, որ քաջ են: Բայց ե՞րբ է տեսնուել, որ նման քաջերը մեռնել ուզէին այս կամ այն սրբութեան համար: Կարելի է քաջ կռուող լինել, բայց կեանքը զոհելու յօժարութիւն չունենալ: Քաջեր շատ է տեսել աշխարհը, հերոսներ՝ սակաւ: Առաջնորդ կարող է լինել միա՛յն հերոսը: Իսկ հերոս լինել, ասել է՝ յաւիտենարժէք բաների առջեւ ոչինչ համարել իր կեանքը:

Հերոս է նա, որի համար կեանքն արդարացում ունի, երբ դա ապրո՞ւմ է ո՛չ թէ իբրեւ նպատակ, այլ իբրեւ մի սրբազան բանի ծառայեցնելու կամ զոհելու միջոց:

Հերոս է նա, որի հայեացքը ուղղուած է յաւիտենականին. նա՛, ով ժպտել գիտէ ճակատամարտի բոցերի մէջ. նա՛, որի հոգին վտանգի ժամանակ զգում է մի գերագոյն ուրախութիւն - ճակատամարտի եւ անձնուիրումի ուրախութիւն. նա՛, ով գրոհից առաջ սիրում է խօսել յաւիտենական բաների մասին:

Հերոս է բիբլիական Գեդէոնը, որ երեք հազարից ընտրեց երեք հարիւրը միայն, եւ յաղթանակեց: Հերոս է Կլեմանսոն: Գերմանները հասել են Վերդէնի պատերի տակ, եւ ֆրանսական կառավարութիւնը՝ խուճապի մատնուած՝ տրամադիր է լքել Փարիզը, հեռանալ վտանգի գծէն:

Ահա՛ յայտնուում է «Վագր»-ը եւ մռնչում. «Ինձ թւում է, որ մենք շատ հեռու ենք կրակի գծէն՝ պէտք է փոխադրուել Վերդէն»:

Հերոս է Քեռին, որ իր վտանգուած զինուորները փրկելու համար իր կուրծքը դարձրեց կենդանի թիրախ թշնամու կրակին:

Հերոս էր Դանտոնը, որն իր գլխատումէն երկու օր առաջ իր բարեկամներին, որոնք իրան խորհուրդ էին տալիս ստոյգ մահէն խուսափելու համար, փախուստի դիմել, պատասխանեց. «Մի՞թե մարդ կարող է հայրենիքը իր կօշիկների տակը կրել»:

Այսպէ՛ս են սիրում, գործում եւ մեռնում՝ հերոսատիպ առաջնորդները:

Ճակատագրի մարդ, վտանգների բարեկամ՝ նրանց համար իրենց անձն աւելի բան չէ, քան հայրենիքին ծառայելու միջոց:

Ժողովուրդները քաղաքական եւ հոգեւոր առնականութեան են հասնում նման առաջնորդների շնորհիւ միայն:

Ճշմարիտ առաջնորդ էր Պիլսուդսկին, է՛ Մուսոլինին, Հիթլէրը, ծովակալ Հորթին - օրւայ մարդկութեան հոգեւոր հսկաները, որոնց ոտքերի տակ մեռնում է իրենց ժողովուրդների հին ճակատագիրը: Սրանց համար ազգութիւնը՝ անցեալ, ներկայ եւ գալոց սերունդները ընդգրկող մի ամբողջութիւն է, էաբանական մի հաւաքականութիւն - մի ճակատագիր, մի ոգի, մի առաքելութիւն, մի ցեղ, մի արիւն: Սրանք գիտցան իրենց ժողովրդին պարտադրել մի մեծ եւ տիրական մտածում - իրենց հայրենիքի ինքնապաշտպանութիւնը՝ ժողովրդի վերածնունդի ճամբով:

Վաղուց է, ինչ սրանք իրենց ցեղահանճար մտքի մուրճով կռանում են իրենց ժողովրդի նկարագիրը, որով՝ ե՛ւ նրա նոր ճակատագիրը:

* * *

Մեծ են մեր ապրած օրերը, քանզի կեանքը հրապարակ է դրել մի քանի մեծ ճշմարտութիւններ:

Մեծագոյնը այդ ճշմարտութիւններից ասում է՝ որպէսզի ցեղդ ու հայրենիքդ ապրեն, նրանց համար մեռնելու կամք ունեցի՛ր: Մեր քարոզած Տարօնականութիւնը այլ բան չէ, եթէ ոչ մեռնելու կամք մեր վտանգւած Հայրենիքի եւ Ցեղի համար:

Իբրեւ հայ մարդ անպէտք է նա, ո՛վ չունի այդ կամքը: Իսկ ով դէմ է այդ կամքի մշակման հայութեան մէջ՝ նա ներքին թշնամին է մեր Ցեղի եւ Հայրենիքի:

Մարդկային ցեղի մեծագոյն ուսուցիչները մի՛շտ էլ հանդիսացել են նրանք, որոնք մարդկանց վեհօրէն մեռնել են սովորեցրել:

Այդ տեսակէտով, Մամիկոնեանները եղան եւ կը մնան հայութեան յաւիտենօրէն սրբազան ուսուցիչները:

«Տարօնի Արծիւ», Սոֆիա,
1939թ., թիւ 7

ՈՅԺԻ ՊՐՈԲԼԵՄԸ

Հատուած Գ. Նժդեհի վերանորոգչական ճառէն

Ազգերի առջեւ այսօր վճռապէս դրուած է ոյժի պրոբլեմը: Կորչում է մի ժողովուրդ, երբ նա խուսափում է այդ պրոբլեմից կամ էլ դժւարանում է լուծել դա:

Ոյժի պրոբլեմը դրւում է եւ լուծւում ժողովուրդների հոգեվերանորոգութեան պրոբլեմի կապակցութեամբ: Ուժեղ, հաւատաւոր եւ պայքարունակ դառնալու համար, անհատների նման, ժողովուրդները եւս պիտի վերանորոգւեն մշտապէս: Կորցնելով վերանորոգւելու ընդունակութիւնը՝ ժողովուրդները կորցնում են իրանց ապրելու, ստեղծագործելու, պայքարելու հաւատը:

Ազգովին դժբախտ է հայը, որովհետեւ իր մտաւորականութեան մի մասը դեռ չի հասկանում, որ օրւայ ցեղախառով ազգերի կեանքում էականը քաղաքական վարչաձեւը չէ, այլ անհատի եւ զանգւածների վերածնունդը, հոգեփոխութիւնը: Այլեւս հոգեվերանորոգւած են, կամ աւելի ճիշդը՝ հոգեվերանորոգչական ճիգեր են կատարում բոլոր ժողովուրդները եւ հէնց այդ է պատճառը, որ օրւայ իտալացու, գերմանացու, հունգարացու ուղեղում տեղի է ունեցել մի խոր յեղափոխութիւն: Այդ է պատճառը նաեւ ա՛յն բանի, որ օրւայ մարդը աւելի ակտիւ է, արդիւնագործ, խանդավառ:

Անցէ՛ք երկրէ երկիր եւ պիտի տեսնէք, որ ապրելու, պայքարելու, զոհաբերելու անխառն ուրախութիւն, ինչպէս իրանց գոյութեան արտաքին եւ ներքին չարիքները յաղթահարելու համակարգւած աշխատանք կայ միայն ցեղավար ժողովուրդների մէջ: Այն ամէնը, որ երէկ կը թւէր անորոշ, մթին ու անտրամաբանական, այժմ, վերանորոգւածի համար դարձել է որոշ, պարզ, հասկանալի: Այլեւս արարածը գտել է իր արարիչը - իր ներքին յենարանը - եւ այդ իսկ պատճառով նա այսօր աւելի՛ յուսալի է ու անդորր: Այս է ընդհանրապէս օրւայ ազգերի հոգեվիճակը: Բացառութիւն է մեր ժողովուրդը միայն կամ նրա խոշոր մի մասը, որ շարունակում է մնալ հիւանդ կոչւելու աստիճան անզօր եւ անյոյս: Նրա կեանքում միահեծան կերպով իշխում են չարութիւնը, նախանձը, գռեհկութիւնը, որովհետեւ վերանորոգչական ճիգի, խանդի, ուրախութեան պակասը նրան դարձրել է զոհ հոգեւոր վաղաժամ ծերութեան (չարութի՛ւն), երկչոտութեան (նենգութի՛ւն), սկեպտիկութեան (ժխտամոլութի՛ւն): Անբուժելիօրէն յոռետես է օրւայ հայը: Չարիք, դժբախտութիւն, Ղարսի կորուստ - սրանք յաւիտենական բաներ են նրա համար: Մի խուլ պատ է չվերանորոգւած

հայը, որին ուղղւում է հայ խօսքը: Նա ատակ չէ զիջելու, հակառակորդին հասկանալու, համերաշխելու, որովհետեւ շարունակում է մնալ հին, քարացած Ադամը: Նրան պակասում է նո՛ր գիտակցութիւնը, նո՛ր աշխարհըմբռնումը: Ճի՛շդ է, հայը յեղափոխութիւն տեսաւ իր երկրում, բայց իր տկարութիւնները յաղթահարելու վերանորոգչական ճիգեր չարեց: Նա չհասկացաւ, որ յեղափոխութիւն ասել է հինէն՝ նորը, նոր մարդ ստեղծել, նոր գիտակցութիւն, նոր կենսազգացողութիւն: Միայն ակտիւ վերանորոգչականը կարող է յեղափոխական լինել: Վերանորոգում է ամէն մի ճշմարիտ յեղափոխութիւն: Հայրենիքին եւ իր ազգին օգտակար ծառայութիւն կարող է մատուցել միայն եւ միայն վերածնւած անհատը: Ամէն բանից առաջ հոգեվերանորոգւած հայ անհատը - ահա՛ օրւայ հրամայականը:

Վերանորոգչական լուրջ փորձ էր դաւադրւած Ցեղակրօնութիւնը: Միայն սրտով վատերն ու տգէտները չգիտեն, որ մի ժողովրդի վերանորոգումը հնարաւոր է միայն ու միայն իր նորահաս սերունդի կամ էլ իր նախնիքների միջոցով:

Վերանորոգչական է Տարօնականութիւնը. դա նմանւելու մի սկզբունք է. դա ասել է՝ նմանւի՛ր Մամիկոնեան հային, որ զօրաւոր էր դէպի հայրենի երկիրն ու ցեղը տածած սրբազանութեան զգացումով եւ նրանց համար մեռնելու իր աննահանջ կամքով:

Վերանորոգում ասել է մեր ներքին մարդու կաղապարումը, ըստ մեր նախասիրած պատկերի: Տարօնականութի՛ւն - դա հայ մարդու կաղապարումն է՝ ըստ Մամիկոնեան հայու պատկերի:

Վերանորոգումի ընդունակ է իր նախահայրերի ոգու զօրութենականութեան ծանօթ եւ օրւայ իր տկարութիւններից ամաչող ժողովուրդը:

Որի՞ն, ինչի՞ն դիմենք մեր ամօթանքի եւ ցաւի մէջ այնքան ծանր ու պատասխանատու այս օրերին - թո՛ղ Հայաստանը ների մեզ մինչայժմեայ մեր տկարութիւններն ու տգիտութիւնը, թո՛ղ ներեն մեզ Մամիկոնեան նախահայրերը, որ այդ տկարութիւնները եւ տգիտութիւնը հայը դեռ շեղւած են պահում իրենց գծից:

Մեր ժողովուրդը, որ կորցրել է հայ եւ հայրենատէր մնալու իր հաւատը, որ աշխարհում այլեւս ելք, կեանքում հացից զատ այլ նպատակ չի տեսնում այսօր, փրկւել կարող է միայն ճշմարիտ վերանորոգումի ճամբով: Դա Մամիկոնեաններին նմանւելու ճամբան է, Տարօնականութիւնը:

«Տարօնի Արծիւ», Սոֆիա
1939թ., թիւ 11

ՄԵԾ ԵՒ ԲԱԽՏՈՐՈՇ ՕՐԵՐ.

ՄԱՅԻՍ 24-28

Իմ զօրամասին էր վիճակուած առաջինը վերադառնալ Ղարաքիլիս:

«Հայ կորպուսի հրամանատարը հրամայում է ձեզ՝ հէնց այսօր ձեր զորամասով վերադառնալ Ղարաքիլիս, շփման մէջ մտնել թշնամու ոյժերի հետ եւ սպասել օգնութեան»: Հեծեալ գնդի պետ՝ Կորգանով, 24 մայիս, Դիլիջան»:

Ստանալով այդ հրամանագիրը՝ զօրամասս կենտրոնացաւ հայոց եկեղեցու բակը: Վայրկեանների ընթացքում տարածուեց Ղարաքիլիս վերադառնալու լուրը, եւ եկեղեցու շուրջը խռնուեց ժողովուրդը: Եկած էին ճամբու դնելու մեզ: Սպայակոյտի համհարզը կարդաց Երեւանից ստացուած վերջին հեռախօսագրերը՝ Սարդարաբադում հայ զէնքի ունեցած յաջողութեան մասին: Քիչ անց՝ յայտնուեց Զօր. Նազարբեգեանը, խոր յուզումով հաղորդեց «ազգի պահանջը՝ երեք օր ժամանակ տալ Երեւանին, որ կարողանայ հաշտութիւն կնքել թուրք հրամանատարութեան հետ»*, ապա մի քանի խօսքով օրհնեց մեր զօրքը: Գնալով ժողովուրդի յուզումը կը խորանար: Եկեղեցում վաղուց էր սկսուել ժամերգութիւնը - զանգերի ղօղանջը, միացած երգեցողութեան, տխրօրէն կ'արձագանգէր հեռուները:

Պէտք էր երկու խօսք ասել մեկնելու պատրաստ զօրամասիս, եւ - առաւելապէս ժողովրդին: Դեռ խօսքս չէի վերջացրել, երբ հայեացքս հանդիպեց ծերունի զօրավարի հայեացքին - արցունք կար նրա աչքերի մէջ: Լալի՛ս էին, լալիս բոլորը: Ինձ էլ խեղդել սկսեց արցունքը... եւ հոգեբանական այդ մթնոլորտի մէջ, հազարի չափ զինուորներ ու կամաւորներ բռնեցին դէպի Ղարաքիլիս երկարող ճամբան:

Մայիս 24-ն էր...

* * *

Զօրամասս՝ իր առջեւ եւ թեւերի ուղղութեամբ պարագէտներ արձակած՝ կ'առաջանար անխռով: Արդէն անցել էինք Սիմեոնովկա գիւղը, երբ մեր ձախ թեւի ուղղութեամբ ընդհատ գոռացին մի քանի հրացաններ: Թշնամու լրտեսներն էին՝ դարանամուտ եղած անտառում: Քառորդ ժամի չափ կանգ առեց զօրասիւնը, մինչեւ որ յառաջապահները կը մաքրէին

---

* *Արամի գրութիւնը:*

ճամբան: Գիշերուայ ժամը 2-ի մօտերը հասանք աւեր եւ անմարդաբնակ Վարդանլու գիւղը, ուր թողնելով մեր ոյժերը, մի յիսնեակ ձիաւորներով յառաջացայ դէպի Ղարաքիլիս: Հայ ամարանոցի վրայ տիրող մեռելային լռութիւնը եւ լոյսերի չգոյութիւնը շատ շուտ մատնեցին, որ թշնամին դեռ ոտք չի կոխել այդ տեղը: Տուն չկար, որ սպիտակ դրօշակ պարզած չլինէր: Ճերմակ էր հագել մեր այնքան գեղեցիկ աւանը, որ շուտով պիտի կարմրէր մեր եւ թշնամու արիւնով: Մի տասնեակ ձիաւորներ որոշ յանձնարարութեամբ ուղղելով Ղշլաղ՝ ձիս քշեցի դէպի այն տունը, ուր գիշերել էի ընդամէնը 5 օր առաջ: Բաղխեցի դուռը եւ մնացի անպատասխան: Մօտեցայ պատուհանին՝ նորէն լռութիւն: Խեղճերը չէին պատասխանում, կարծելով, թէ գիշերանց թուրքն է յայտնուել: Սկսեցի անուններ տալ, բացուեց դուռը եւ դուրս նետուեց ինձ ծանօթ, Ալէքսանդրապոլէն գաղթած Յակոբ էհրամճեանի ընտանիքը: Բոլորի դէմքին թէ՛ ուրախութիւն կար, թէ՛ սարսափ: Աւետելով Սարդարաբադի մեր յաջողութեան լուրը, որոշ տեղեկութիւններ ուզեցի թուրք ոյժերի եւ շրջանի հայ ազգաբնակչութեան տրամադրութեան մասին: Պարզուեց, որ թուրք զօրքը գտնւում է Արջուտում եւ որ լուսաբացին տանուտէրի գլխաւորութեամբ մի պատգամաւորութիւն պիտի մեկնէր՝ աղուհաց մատուցանելու թուրք զօրահրամանատարութեան: Ուղարկեցի կանչել իշխանութեան ներկայացուցիչներին: Եկան: Երկու խօսքով փարատեցի նրանց տարակուսանքը եւ ապա պահանջեցի հրաժարուել Ղարաքիլիսը առանց կռուի թշնամուն յանձնելու յանցաւոր մտքէն: Խոստացան «հայոց զօրքին մատաղ անել ամէն ինչ՝ ե՛ւ հաց, ե՛ւ հարստութիւն, ե՛ւ կեանք»: Պահանջեցի սուրհանդակներ եւ նրանց միջոցով գրութիւններ ուղղեցի շրջակայ գիւղերին՝ յայտարարելով զէնք կրելու ընդունակ գիւղացիներին մի քանի օրուայ հացի պաշարով եւ ունեցած ռազմամթերքով մինչեւ կէսօր, ներկայանալ ինձ, Ղշլաղում: Առանձին գրութեամբ պահանջեցի ներկայանալ նաեւ քահանաներին եւ ուսուցիչներին: Այդ կարգադրութիւններից յետոյ, համարզիս՝ Մխիթար Տէր-Աբրահամեանին յետ ուղարկեցի Ղարաքիլիս՝ առաջնորդելու մեր զօրամասը, իսկ ես անցայ Ղշլաղ: Պէտք էր յարմար դիրքեր ընտրել եւ դեռ լոյսը չբացուած զետեղել իմ ոյժը՝ զօրամասիս թուական սակաւութիւնը չմատնելու համար: Ղշլաղում գիւղացիութիւնը գտայ ոտքի վրայ եւ անհանգիստ: Զօրամասս ցանցառակի բռնեց նախապէս ճշդած կրակի գիծը - կենտրոնը՝ զուգահեռ Ղշլաղին, նրանից մէկ ու կէս վերստ առաջ, ձախ թեւը՝ դէպ հարաւ ընկած անտառապատ բարձունքները, իսկ աջը՝ մօտ 2 վերստ, երկաթուղագիծից դէպ հիւսիս ձգուող բաց դաշտը: Բնական է, որ պահեստի ոյժի չգոյութիւնը, ինչպէս նաեւ ռազմամթերքի պակասը պիտի թելադրէին ինձ ցանցեր փռել թշնամու ռազմագործողութեանց ուղղութեան վրայ, դիմել ռազմադաւերի:

Բոնապարտի յստակատեսութիւն պէտք չէր գիտակցելու, թէ այդ օրուայ ամենաթեթեւ յաջողութիւնն անգամ գինովցնելու աստիճան պիտի խանդավառէր մեր զօրքն ու ժողովուրդը, քանզի էրզրումէն մինչեւ Գուգարք միայն տխուր պարտութիւնն էր եղել մեր բաժինը, իսկ չնչին անյաջողութիւնը բացարձակապէս անկարելի պիտի դարձնէր մեր յետագայ դիմադրութիւնը:

Գիտէի, որ թուրքը, հաւատարիմ իրեն, մեր Ղարաքիլիս վերադառնալու յանդգնութիւնը պատժելու համար քինաթափ պիտի լինէր խաղաղ ազգաբնակչութեան գլխին:

Ուրեմն, պէտք էր գործի լծել հայ մարդու ե՛ւ արիութիւնը, ե՛ւ հնարամտութիւնը, որպէսզի քմահաճ Մարսը այդ օրը առաջին անգամ մեզ ժպտար: Այդ մտահոգութեամբ՝ մեր կռուագծէն մօտաւորապէս 1000 քայլ առաջ, երեք կէտերի վրայ, դարաններ դրի - հետեւակներից՝ անտառակի մէջ, ռմբաձիգներից՝ երկաթուղագծային կամուրջի տակ, իսկ հեծեալներից՝ բաց դաշտի մէջ ընկած մի հնօրեայ վանքի աւերակներում: Դարանամուտ այդ խմբակները, առանց մատնելու իրենց ներկայութիւնը, թոյլ պիտի տային թշնամուն առաջանալու մինչեւ դարանների գիծը, ապա խաչաձեւ կրակի տակ առնելով՝ պիտի խորտակէին վերջինը: Նրանք պիտ սպասէին ազդանշանի, որ տրուելու էր հրթիռի միջոցաւ: Լոյսը նոր էր բացուել եւ արդէն վերադարձել էին Արջուտի ուղղութեամբ ուղարկուած հետախոյզները: Այլեւս վայրկեանէ վայրկեան կը սպասէի թշնամու երեւալուն: Շրջագայելով մեր յառաջադիրքերը՝ կը խրախուսէի զինուորներին՝ նրանց մինչեւ վերջը հոգեպէս գօտեպինդ պահելու համար:

Կենտրոնական դարանէն նշանացի հասկացրին թշնամու գէտերի երեւալու մասին: Մի քանի վայրկեան անց՝ մենք այլեւս աչքի եւ կրակի հաղորդակցութեան մէջ էինք թշնամու հետ: Նա կ'առաջանար յաղթ-յաղթ, տողաձեւ ու խորութեամբ բռնած երկաթուղագծի երկու կողմերը: Ժամը 9-ի մօտերը թշնամու կողմից սկսուեց նախակռիւը՝ թեթեւ հրաձգութեամբ՝ մեր դիրքերը եւ ոյժերը շօշափելու նպատակով: Թշնամին կը դանդաղէր: Հասկանալի էր դա. չէ՞ որ մենք առանց կռուի էինք լքել Ղարաքիլիսը եւ այսօր թուրք զօրահրամանատարութիւնը կը սպասէր հայ աղ ու հացին:

Բացի այդ՝ մեր վերին հրամանատարութիւնը թոյլ էր տուել սխալներից ամենաաղէտալին - հինգ օր առաջ նա արձակել էր մօտ 6.000 թուրք պատերազմական գերիներ, մի արարք, որ թշնամին իրաւամբ պիտի բացատրէր հայոց շուարուն վիճակով: Այսօր, սակայն, նա ստիպուած էր զոհեր եւ ժամանակ վատնելու՝ մեր ֆիզիքական եւ բարոյական ողնաշարը ջարդելու համար: Ժամը տասն անց էր, երբ սկսուեց ընդհարումը,

դարձեալ աննշան ոյժերի միջեւ: Մեր դարանները կը շարունակէին իրենց մահառիթ լռութիւնը: Ղշլաղ կը հասնէին կամաւորներ՝ հայ գիւղերէն եւ կ'ուղարկուէին խտացնելու մեր շղթաները: Թշնամու առաջապահ զօրամասը այլեւս կը մօտենար մեր դարանների գծին, մերոնք սկսել էին ջղայնութիւն ցոյց տալ: Արձակուեց սպասուած հրթիռը, որին կայծակի արագութեամբ յաջորդեց մեր դարանակալ խմբերի փոթորկային կրակը: Ծուղակուած թշնամու ոյժերի մի մասը խուճապով յետսախաղացութիւն փորձեց, իսկ միւսը՝ խառնախռիւ թափուեց երկաթուղագծի վրայ: Մեր դարանները կը շարունակէին իրենց ռումբերի, գնդացիրների եւ համազարկների տարափի տակ պահել յանկարծակիի եկած թշնամուն: Օգտուելով թուրքերի փափուկ վիճակէն՝ իմ ռազմամուտ ոյժերը քաշեցի առաջ:

Փամպակի ձորը սկսեց այլեւս դողալ ռումբերի որոտէն: Թշնամին կը դժուարանար ուշաբերուել եւ հնձւում էր՝ անխնայ:

Տրուեց գրոհի հրամանը եւ սկսուեց յարձակումը: Կռիւը որքան տարերային, այնքան կարճատեւ եղաւ: Թշնամին տագնապով փախչում էր դէպի Արջուտ: Նա ժամանակ չունեցաւ անգա՛մ իր վիրաւորները փրկելու: Մենք կը շարունակէինք մեր տակտիքական ճռաքաղը: Այդ ժամին՝ հայ մարտիկն արժանի էր իր ցեղի անունին: Ճակատամարտի առաջին օրն սկսուել էր հայ ոգու փայլուն գերազանցութեամբ: Այլեւս կար համոզումը, թէ պիտի յաջողենք Ղարաքիլիսում կրկնել Աւարայրը եւ տալ Երեւանին իր ուզած երեք օրը՝ Բաթումի մեր պատգամաւորութեան գործը հեշտացնելու համար:

Այդ օրը մայիս 25-ն էր…

«Ռազմիկ», 1939թ., թիւ 121

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Ով իր ցեղի եւ հայրենիքի պատմութիւնը չէ՛ դարձրել իր սրտի պատմութիւնը՝ նա այս օրերին պէտք չի գայ Հայաստանին:

- Երբ իմ շրթունքները մրմնջում են ցեղիս մասին, աջս ցոյց է տալիս Հայաստանը:

* * *

Հայաստա՛ն, ով վտանգի ժամանակ քեզ համար մեռնել չգիտցաւ եւ վաղը պիտի չուզենայ մեռնել՝ հայ չէ՛, քո զաւակը չէ՛:

* * *

Բաւական չէ՛ իր ազգի զաւակը լինել, պէտք է նաե՛ւ նրա հրաշունչ զինուորը լինել:

- Կենսաբանօրէն անբարոյական է այն ժողովուրդը, որի մէջ զինուորը ներքին թշնամիներ ունի:

- Տէ՛ր, առաջնորդի՛ր ինձ դէպի յաղթանակ՝ թէկուզ մահուան ճամբաներով - ահա՛ ցեղապսակ զինուորի աղօթքը ճակատամարտից առաջ:

* * *

Հերոսը - դա մահէն աւելի զօրաւոր մարդն է: Դա յաւիտենականի կրողն ու սպասաւորն է մեր անցաւոր կեանքում:

- Յաղթանակում է նա, ով իր մէջ բնութիւնը Ոգուն ենթարկելու աստիճան զօրաւոր է:

- Հաշտուելով մահուան գաղափարի հետ՝ մարդս դառնում է եղբայրն ու զինակիցը այն բոլորի, որոնք մարդկային ցեղի պատմութեան բոլոր դարերում եկել ու անցել են մեր աշխարհով՝ իբրեւ լոյսի, հաւատքի եւ սրի հերոսներ:

* * *

Եթէ հայկական նախանձի չափ զօրաւոր լինէր հայ մարդու թրքատեցութիւնը՝ տարբեր պիտի լինէր հայութեան եւ Հայաստանի ճակատագիրը:

- Երբ նախանձում է հայը՝ նա նախանձելիի մահն է ցանկանում:

- Ժողովո՛ւրդ, քո պատմութեան բոլոր դարերի անունով երդուեցնում եմ սերունդներիդ - չներե՞լ, չներե՞լ թուրքին, անգամ եթէ մի օր նրան տեսնես անկեալի վիճակում: Այո՛, ներում են թշնամուն, բայց ո՛չ եւ իր կէսի սպանիչին, ո՛չ եւ նրան, որը մի օր փորձեց գոյութեան գրքից քո անունը սրբել:

«Մի զինուորի ճշմարտութիւնները» աշխատութիւնից,
«Ռազմիկ», 1940թ., թիւ 156

ՁԱՒԱ՛ԿՍ

Աժան ձեռք չէ բերւում առիւծի մորթին:

Այդ այսպէս լինելով հանդերձ՝ երբ մեծացար դու, զաւա՛կս, ձգտի՛ր տիրանալ նրան, բայց միամտութիւն չունենաս կարծելու, թէ Երկրագնդի վրայ կարելի է փառքի տէր դառնալ, առանց նախանձահեղձ սինլքորների չարութիւնը գրգռելու:

Զօրավա՞ր ես եօթ վէրք - չզարմանաս, եթէ մի օր դասալիքը դատաւորդ հանդիսանայ: Մեր աշխարհի լրբութիւններից մէկն էլ այդ է, չզարմանաս եւ չկրկնես զայրոյթով. «Թող զինուորն իր ստացած վէրքերը եւ հովիւը՝ իր ոչխարները համրէ»:

Չար անասուն է մարդս, երբ նախանձում է: Մեր աշխարհում միշտ էլ վատասիրտը հայհոյել է աներկիւղ ասպետին, երկչոտը՝ մութ անկիւնից քար նետել հերոսին:

Նախանձը - մասնաւորապէս հայկականը - ընտրում է ճամբաներից ամենակարճը, եւ թոյլատրելի համարում թշնամանքի բոլոր զէնքերը:

Նա, որին դեռ երէկ էր, ինչ խլեցիր առիւծի բերնից, փրկեցիր ստոյգ մահից՝ վաղը կարող է իժի նման գարշապարդ փնտռել:

Նա, որն այսօր ձիուդ ասպանդակները բռնելը իր համար պատիւ է համարում՝ վաղը կարող է փողոցաշունչ ամբոխը գրգռել անձիդ դէմ:

Նա, որ երէկ խորապէս կը ցաւէր, թէ հայոց դաշտերում չի աճում այն ազնիւ դափնեվարդը, որ արժանի լինէր յաղթական ճակատդ զարդարել՝ վաղը կարող է ցեխ նետել քո կատարած պատմական գործին:

Մի՛, մի՛ զարմանար, եթէ իրենց կեանքը սրիդ պարտողները այսպէս վարուեն քեզ հետ, եւ մի՛ զայրանար, քանզի անձիդ դէմ ապերախտողը շուն չէ՛, այլ՝ մարդ:

* * *

Սէր, յարգանք, պաշտամունք պարտադրել՝ նշանակում է իշխանութիւն ունենալ մարդկանց հոգիների վրայ:

Պաշտամունք - ասել է՝ ճանաչում ենք մեր պաշտածի իշխանութիւնը, եւ բարոյական որոշ տուրք տալիս նրան:

Ուրիշների մէջ մենք, էապէս, սիրում ենք այն, ինչ որոշ չափով կայ ե՛ւ մեր մէջ:

Արին սիրում է արիութիւնը անգա՛մ իր հակառակորդների մէջ: Մենք սիրում ենք նրանց, որոնց նմանում ենք մասամբ, եւ առնուազը՝

անտարբեր ենք դէպի այն բոլորը, որոնք հոգեբանօրէն օտար են մեզ: Հայրենապաշտը քո անձի մէջ տեսնում է մի բան իր ոգուց, եւ ցնծում քո յաջողութիւնների առթիւ: Անհայրենասէրն, ընդհակառակը, քո անձի, քո գործերի մէջ տեսնում է այն, ինչ պակասում է իրեն - եւ հէնց այդ է պատճառը, որ նա չի՛ հանդուրժում քո հոգեւոր լուծը, քո իշխանութիւնը: Ահա՛ թէ ո՛ւր է շրջապատիդ որոշ տարրերի պաղ անտարբերութեան, երբեմն էլ՝ թշնամանքի գաղտնիքը:

* * *

Սինլքորներ կան, որոնց եթէ ապտակեցիր, իրենց ստացած հարուածը կ'ընդունին ուղղուած իրենց քաղաքական փարախի, եկեղեցու, ծրագրի դէմ: Թքեցի՞ր - թքուած կը հռչակեն իրենց տէրերը, եւ նրանց կռնատակից կը նետեն քեզ:

Ձրի պէս շարժուն, ջրի պէս ամէն ձեւ ու գոյն առնելու ընդունակ՝ սրանք մէկի ստուերն են, միւսի՝ արձագանգը, երրորդի՝ կապարճակիրը:

Մի աստուածութիւն ունին - օրուայ իշխանաւորը, որի մանկլաւիկը, պնակալէզը, շնիկը լինելու մէջ է իրենց երջանկութիւնը: Եւ միշտ էլ ունին - մի ձեռքում խունկ, միւսի մէջ՝ ցեխ: Վա՜յ քեզ, եթէ կայսերաբար առատաձեռն չեղար սրանց նկատմամբ: Վա՜յ, եթէ չգնահատեցիր սրանց սողունութիւնը: Եւ հազար վա՜յ, եթէ ժպտալու փոխարէն «անհեռատեսութիւն» ունեցար բերան արիւնելու չափ զօրաւոր կերպով քաշելու սրանց սանձը:

Նման չարարուեստ էակներից շաղախուած մի ցածոգի ամբոխ, դարեր առաջ, արդարն Արիստիդէսին-իր ծայրայեղ ազնուութեան համար - հայրենի հողէն ու ջրէն օգտուելու իրաւունքից զրկեց. դա սպանեց Սոկրատէսին, եւ, աւազակների հետ՝ խաչ հանեց Նազովրեցուն:

* * *

Հայաստանից դուրս, իմ ճամբին քար ու տատասկ ցանողներ շատ եղան: Գիտեմ, զաւա՛կս, տարբեր ճամբայ պիտի չունենաս նաեւ դու: Եւ եթէ քեզ յաջողուեց ոտքերիդ արիւնով յագեցնել տատասկները, եւ քարերը վերածել վերելքդ հեշտացնող մարմարիոնէ սանդուխների՝ վատերը պիտի կուրանան, որպէսզի չտեսնեն մեծութիւնը կատարածդ գործի:

* * *

Հեռու հայրենի լեռներից, ես սովորեցի թքել ինձ թշնամացող նախանձոտ տգիտութեան ու չարութեան վրայ - թքել ու անցնել: Քեզ, սակայն, պիտի չյանձնարարեմ այդ վարքագիծը: Դու աշխատի՛ր աւելի՛ զօրաւոր լինել, քան եղաւ հայրդ: Դու սովորի՛ր ծիծաղել մարդկային վատութիւնների վրայ ու անցնել անցասում:

Ո՜հ, ուր էր թէ գէթ քո սերունդը ազատ մնար անհայրենիք կեանքի անէծքից, եւ արդար փառքը - առիւծի մորթին - դու փնտրէիր հայրենի ազատ եւ անկախ աշխարհում՝ միշտ գիտակցելով, որ հազարիցս լաւ է պատմական մի գործ կատարել, թէկուզ հազար թշնամի շահելով, քան մարդկային չարութիւնից զերծ մնալու գնով՝ դուրս մնալ պատմութիւնից:

«Ռազմիկ», 1940թ., 25 դեկտ., թիւ 1

ՀԱՅՐԵՆԻՔ.
ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

Մեծանուն բարեկամիս՝
ուսուցչապետ Տոտոմեանցին

Երբ իմ շրթունքները մրմնջում են ցեղի մասին, աջս ցոյց է տալիս Հայաստանը:

* * *

Հայաստա՛ն, նա, ով վտանգի ժամանակ քեզ համար մեռնել չգիտցաւ, եւ վաղը պիտի չուզենայ մեռնել՝ քո զաւակը չէ՛, հայ չէ՛:

* * *

Երբե՛ք այնքան անհայրենիք չենք, քան երբ դադարել ենք մտածել, գործել, զոհաբերել մեր Հայրենիքի համար:

* * *

Կրօնների պէս հայրենիքներն էլ պահանջում են, որ իրենց սպասարկողի ձեռքերը լինեն տաք եւ մաքրամաքուր:

* * *

Մի ժողովուրդ, որի որդիները հաւասար չեն օրէնքի եւ մահուան առջեւ՝ յաղթական հայրենիք չի ունենայ:

* * *

Անհատ, հաւաքականութիւն - սրանք յաւիտենականին կապւում են իրենց հայրենիքի միջոցաւ:

* * *

Հոգեբանօրէն անհայրենիք է նա, ով պատրաստ չէ՛ ամէն վայրկեան մեռնելու իր հայրենիքի համար:

* * *

Իմ հոգին զոյգ յենարաններ ունի - Աստուած եւ Հայրենիք:

* * *

Հա՛յ մարդ, կասկածելի է հայրենասիրութիւնդ, եթե գոյութեանդ իմաստն ու դրօշակը հայրենիքդ չէ:

* * *

Հայրենիքս եւ ես - մենք լծորդուած ենք իրար՝ ինչպէս հոգի եւ մարմին, ինչպէս նպատակ եւ միջոց. նա գերագոյն նպատակ է, ես՝ միջոց:

* * *

Հայրենիքի համար ապրում եւ մեռնում է ոգո՛ւ մարդը, միա՛յն նմանը:

* * *

Սրտի եւ իմաստութեան տէր դասական ժողովուրդները մահապատժի փոխարէն տարագրութեամբ կը պատժէին դժբախտ ենթակային, նրան զրկելով հայրենի հողից եւ ջրից օգտուելու իրաւունքից: Այն ժամանակ էլ, ինչպէս այսօր, սրտի աստուածութիւն էր հայրենիքը:

* * *

Յաւիտենականի զգացումն է ծնունդ տուել հայրենիքին, սրբութեան զգացումը՝ հայրենասէրներին:

* * *

Հայրենիք մի՛ սպասէք օտարէն եւ ճակատագրէն, եթէ դա ձեր արիւնով պաշտպանելու չափ հայրենապաշտ չէք:

* * *

Մածձինիի հանդէպ խորագոյն յարգանք տածելով հանդերձ՝ չեմ ընդունում, որ հայրենիքէն աւելի ազատութիւնն է սիրելի:

* * *

Ժաննա դ'Արկի հայրենիքը պարտուեց ա՛յն օրը, երբ մերօրեայ ֆրանսացու դեմօ-լիբերալիստական մտածողութիւնը կենդանաբանական մի պարտէզի դռան վրայ գրեց. «Գիտութեան համար ո՛չ հայրենիք կայ, ո՛չ էլ կրօն»:

* * *

Ֆրանսա՛ - մե՛ծ ժողովուրդ, մե՛ծ հայրենիք, որի ճակատագիրը մեծութիւնները չէին վարում, այլ՝ դեմոկրատիկ միջակութիւնները - ահա՛ թէ ինչո՛ւ այնքան նուաստօրէն զինաթափուեց ու պարտուեց դա:

* * *

Նորը արդի պատերազմում - դա աշխարհազգացողութեամբ նո՛ր մարդն է, որի համար հայրենիքին ծառայելը պատիւ է եւ ո՛չ պարտականութիւն:

Այո՛, հայրենիքը մեզ պատիւ է անում իր համար մեռնելու առիթ ընձեռելով մեզ:

* * *

Մի օր, հին միստերիաների մէջ հանդիպեցի հետեւեալ արտայայտութեան - «մեծագործութեան բաժակ»:

Մեծագործութիւն ուխտողն առնում էր մի բաժակ, լցնում նռան հիւթով, բարձրացնում եւ ապա թափում իր չորս կողմը՝ խորհրդանշելով իր անսահման յօժարութիւնը - ծառայել բարիին, ուր էլ որ լինի:

Բարին, գերագոյն բարին, ինձ համար եղել է, է՛ ու կը մնայ Հայաստանը:

* * *

Հայաստա՛ն, քեզ սիրտը ծնաւ - դու ապրում ես սրտերի մէջ եւ ջերմաջերմ սրտերի շնորհիւ միայն: Գուցէ եղել են եւ անսիրտ խելօքներ, որ սիրել են քեզ, բայց նրանք չեն խաչւել, չեն մեռել քեզ համար: Հայրենիքի համար մեռնում է, հերոսանում մեծ սրտի տէրը միայն:

* * *

Հայրենիքից զատ, հայրենիքից դուրս ինձ համար խաբուսիկ են բոլոր դրախտները:

* * *

Ինչպէս աչքս՝ լոյսը, այնպես էլ սիրտս Հայաստանն է փնտրում:

- Ապրում եմ՝ մի օր հայրենի լեռների վրայ մեռնելու յոյսով: Պիտի ուզէի մեռնել, հենց որ մեռաւ այդ յոյսը:

* * *

Աբովեանի Աղասին՝ փառքի ու մեծութեան իր երբեմնի հայրենիքը խորհրդանշող Անիին հրաժեշտ կու տար լացելով. «Է՛լի որ մարմինս մէկ քարի տակ լինի քո ծոցում, ինձ դրախտը պէտք չի»:

- Այսպէ՛ս, ով որ Աղասու պէս չի բաժանուել իր հայրենի հողէն՝ արժանի չէ հայրենիք վերադառնալու:

* * *

Հայաստա՜ն - դու իմ սրտի յաւիտենական ճշմարտութիւնը:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 2

ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ

- «Յեսու կը յառաջանար՝ մտախոհ եւ գունատ, որովհետեւ Ամենակալին ընտրեալն էր արդէն» - նաեւ՝ ժողովրդի առաջնորդը, աւելացնենք մենք:

Ամենաբարձր իրաւունքը, որ կարող է ունենալ մի քաղաքացի - դա իր ծնող ժողովուրդը առաջնորդելն է:

Քիչերին է տրւում այդ իրաւունքը, եւ շատ քիչերն են արդարացնում դա:

Ո՛վ, սակայն իրաւունք ունի մի ժողովրդի ճակատագիրը՝ վարել:

- Նա՛, ճակատագրի ընտրեա՛լը, որ «կը յառաջանայ մտախոհ» - ճակատը լեցուն, վսեմ խոհերով ու իր կոչումի ամենասրբազնութեան գիտակցութիւնից «գունատ», ապա օժտուած իր առաջնորդած ժողովրդի համար ամէն վայրկեան մեռնելու կամքով:

* * *

Ամեն առաջնորդ ըստ իր պատկերի է դիմակերտում իր ժողովուրդը:

* * *

Որի՞ն հետեւել - ահա՛ հարցերէն ամենաճակատագրականը, որի՞ն - Նազովրեցո՞ւն, թէ՞ Բիւխներին, Էմերսոնի՞ն, թէ՞ Մարքսին, Մամիկոնեանների՞ն, թէ՞ հայ մտաւորականութեան քաղաքականապէս անկապաշտ մասին:

Առաջինները - ոգու հսկանե՛ր - քո մէջ կ'ապրեցնեն աստուածայինը, վերջինները՝ մարդկօրէն անասնականը. առաջինները քո մէջ կը մշակեն իդէալիստը, ասպետը, հերոսը, վերջինները՝ գորտի հոգով առօրեապաշտ պաղ մահկանացուն:

* * *

Ճշմարիտ մտաւորականութիւն, ասել է՝ ազգի հոգեւոր ընտրանին, առաջնորդութիւնը:

Ստամտաւորականութիւն է դա, եթէ այդպիսին չէ:

* * *

Ուր ճշմարիտ մտաւորականութիւնը առաջնորդի իր դերի մէջ չէ՝ այնտեղ կոյր է ժողովուրդը, նաեւ՝ պառակտուած:

* * *

Մեր կեանքում դեռ զօրաշարժի ենթարկուած չէ ճշմարտութիւնը ստամտաւորականութեան պատճառով, հայութիւնը դեռ չի հասկացել, որ հայկական հարցի սկիզբն ու վախճանը - դա հոգեվերանորոգուած հայ անհատն է:

* * *

Ժողովուրդները յաճախ տառապում են հոգե-զգացական կուրութեամբ - մա՛յրը ամէն կարգի ներքին տկարութեանց եւ բաղխումների:

Ճշմարիտ մտաւորականութեա՛ն է ընկնում՝ բուժել այդ կուրութիւնը իրենց ժողովրդի մէջ մշակելով բարոյական առաքինութիւններ - ճշմարտասիրութիւն, արդարամտութիւն, մեծահոգութիւն:

* * *

Քաղցրօրէն ստել ու կեղծել իր ժողովրդին՝ մանիլովշչինա՛ - ահա՛ հայրենաքանդ այն տկարութիւնը, որով բռնուած է հայ մտաւորականութեան իմաստասիրօրէն կոյր եւ անցեղաշունչ մասը:

* * *

Ժողովուրդները յաճախ ունակաբար ենթարկւում են նաեւ իրենց ծախաւեր առաջնորդներին, բայց չեն ներում նրանց:

* * *

Ուր զօրաւոր առաջնորդ չկայ՝ այնտեղ ոգու կեանք չկայ, իսկ ուր այդ վերջինը չկայ՝ այնտեղ խանդավառներ, մարտիկներ, գերզոհաբերողներ չեն ստեղծւում:

* * *

Ազգերը չեն ունեցել եւ պիտի չունենան աւելի մեծ թշնամի, քան նիւթապաշտ առաջնորդը:

* * *

Այն մտաւորականութիւնը, որը գրքի ծնունդ է եւ ոչ թէ իր ցեղի մեծութեան ու ժողովրդի տառապանքի - կեղծ եւ անպտուղ մտաւորականութիւն է:

* * *

Չկա՛յ աւելի մեծ չարագործ, քան առաջնորդը, որ իր ժողովուրդը պահում է անգիտակ իր դժբախտութեանց պատճառներին: Նմանը, իր անձի հանդէպ մոռացում ապահովելու նպատակով, մութ ճամբաներով յաջողում է տարբեր ուղղութիւն տալ ժողովրդի ցասումին, մղելով նրան՝ իր դժբախտութեան պատճառները փնտռելու իրենից դուրս: Ուրիշ ազգերի կեանքում յաճախ մի դժբախտութիւնը գալիս է խափանելու մի ուրիշը, ուրիշնե՛րը: Մեզ մօտ ընդհակառակը, ամէն դժբախտութիւն դառնում է պատճառ նորի, նորերի՛:

Կը վկայէ պատմութիւնը, որ իր դժբախտութեան պատճառները գիտակցող ժողովուրդը աւելի հեշտ է կրում իրեն վիճակուած դառնութեան բաժակը եւ հեշտութեամբ յաղթահարում չարիքը:

Աւելի՛ն, նմանի համար ամէն մի ձախորդութիւն, գալիքի մի նախազգուշացում է: Միայն նմանին է յաջողւում հարուածախոյս լինել:

* * *

Երբ ժողովուրդը՝ ծուռ խղճմտանքի տէր իր ղեկավարների պատճառով մնում է անգիտակ իր ապրած դժբախտութեանց պատճառներին, իր ամէն մի պարտութիւնից յետոյ նա դառնում է նաե՛ւ պարտուողական, որ ասել է՝ ատակ եւ արժանի նորանոր պարտութիւնների:

* * *

Առաջնո՞րդ ես, ուրեմն, եղի՛ր ազնիւ, ազնիւ եղի՛ր, էլի՛ ազնիւ՝ խղճմտանքիդ հանդէպ - դա ճակատագրական նշանակութիւն ունի ժողովրդիդ ճակատագրի համար:

* * *

Մի ժողովուրդ ցեղօրէն այնքան արթուն է, որքան դա զգայուն է դէպի իր մարգարէների, իր ընտրանիի կանչերը:

* * *

Կայ մտաւորականի ամենէն վտանգաւորը - նա՛, ո՛վ փարիսեցիների եւ դպիրների նման լաւ է ուսուցանում, բայց վատ ու վատն է գործում:

* * *

Զօրաւոր եւ օրինաբեր է այն առաջնորդը, որի կամքը օժտուած է իր ցեղի ամենադրական յատկութիւններով:

* * *

Հոգեւոր կեանքի անատակ մարդուն տրուած չէ՛ գերագոյն նպատակի համար աշխատելու, զոհաբերելու, մեռնելու քաղցրութիւնը: Նմանը չէ՛ կարող առաջնորդ լինել:

* * *

Ժողովուրդները չունեն աւելի մեծ թշնամի, քան կրօնապէս պաղ եկեղեցականը, անոգի ուսուցիչը, կաշուապաշտ զօրականը: Խորագոյն անկումի իրենց օրինակով սրանք են անբարոյացնում մարդը իբրեւ անհատ եւ հաւաքականութիւն:

* * *

Մտքի անշարժութիւն, քարացում - երբ ա՛յդ է մտաւորականութիւնը, նշանակում է, որ ժողովրդի քայլերն ուղղուած են դէպի գերեզմանատուն:

* * *

Միայն մեծ առաջնորդներին է յաջողւում իրենց կամքի ողջ ուժականութիւնը փոխանցել իրենց ժողովուրդներին, առաւելապէս նրանց երիտասարդ սերունդներին: Եւ հենց դրանով են վերանորոգւում զանգուածները, վերածուելով մի բարոյական ընդհանրութեան, միակամ եւ միուղի ազգի:

* * *

Նախ հասցնել մի մեծ սերունդ - մե՛ծ իր պաշտամունքով եւ ատելու կարողութեամբ - եւ նրա միջոցաւ իրագործել իր պատմական առաքելութիւնը. այսպէ՛ս է գործում ճշմարիտ առաջնորդը:

* * *

Միջազգային առաջնորդութեան մասին խօսում են անյուսօրէն տգէտները միայն: Պատմութեան դեռ անծանօթ է նմանը: Առաջնորդը - իբրեւ տուեալ ազգի կուլտուր-ընկերային գործառնութեանց կիրարկիչը - միշտ էլ երեւան է գալիս ազգային կնիքով:

* * *

Ազգային գաղափարը միշտ էլ նոր է եւ յաւիտենապէս արդիական: Քանի դեռ այդ չի հասկացել հայ մտաւորականութիւնը՝ դա առաջնորդելու բարոյական իրաւունք եւ կարելիութիւն չի ունենայ:

* * *

Փառասէ՞ր է առաջնորդը - փառասէր է ճշմարիտ ամէն առաջնորդը - այդ ոչի՛նչ, բաւական է որ նա իր ազնուական ու ստեղծագործ փառասիրութեան միացնում է իր շարժիչ միտքն ու մեծ սիրտը, բաւական է, որ խաչ կայ իր ուսին:

Նմանի համար չէ՛ կոմպրոմիսը, նա վախ չունի հալածանքից եւ բնաւ հաշուի չի առնում, թէ իր սկսած պայքարում ո՞վ է իր հետ, ո՞վ՝ իրեն դէմ: Նրա առաջին թշնամին է կազմակերպուած միջակութիւնը՝ յանձին զանգուածների տգիտութեան եւ տկարութեան քուէներով ընտրուած իշխանութիւնը:

* * *

Երբ մի ժողովրդի մէջ ճշմարիտ առաջնորդի երեւումը ցնծութեան, փառաբանութեան եւ պաշտամունքի փոխարէն արժանանում է օձաթոյն նախանձի, թշնամանքի ու մատնութեան՝ պէտք է ընդունել, որ այդ ժողովուրդը դեռ արժանի է իր հին ճակատագրին:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 3

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Հայ հասարակագիտակ մտքի աղքատութեամբ պիտի բացատրել հին սերունդի գաղջ վերաբերմունքը՝ դէպի նորը:

Նոյն բանով բացատրէք նաե՛ւ նոր սերունդի անփոյթ կեցուածքը՝ իր ցեղի եւ հայրենիքի ապագայի հանդէպ:

Հայ մարդը, իմաստասիրական ջանքի պակասի պատճառով, *«նոր սերունդ»* հասկացողութեան մէջ դնում է միայն կենսաբանական բովանդակութիւն: Նորը, ըստ այդ վերջինի, որդիներն են, հինը՝ հայրերը: Տարիքի պարզ խնդիր է թէ՛ նորը, թէ՛ հինը: Սերունդները միայն հասակով են տարբերւում իրարից: Ժամանակ կ'անցնի, եւ որդիները կ'այրանան ու կը բռնեն իրենց հայրերի տեղը: Այսքան ծիծաղելիօրէն պարզ եւ հեշտին է նոր սերունդի պրոբլեմը օրուայ հայ մտածողութեան համար:

* * *

Սերո՛ւնդ - դա կենսաբանական հասկացողութիւն չէ՛, «կանաչ հասկ» չէ՛ միայն, այլ եւ՝ հոգեբանական որոշ բովանդակութիւն: Դա էութիւն է՝ հինէն խորապէս տարբեր:

Նոր սերունդը միշտ էլ ենթադրում է Նորը՝ մի նոր աշխարհազգացողութիւն, նոր մթնոլորտ, մի նոր կամք, որ «պիտի գերազանցէ անցեալը, անգա՛մ՝ ինքն իրեն»:

Դա ցեղի յայտնութի՛ւնն է, ժողովրդի նո՛ր օրը, նրա նո՛ր խօսքը, նո՛ր երգը, նո՛ր առաջադրութիւնը, նրա նո՛ր ճակատագիրը, նրա պատմութեան էջը՝ նո՛ր բովանդակութեամբ:

Դա ժողովրդի կենդանի ուժականութիւնն է, նրա պայքարների աւանգարդային ոյժը, որով եւ՝ նրա կեանքի զարգացման կրողը:

* * *

Միեւնոյն ժողովրդի ծոցի մէջ միշտ էլ էապէս գոյութիւն ունեն երկու աշխարհներ, երկու հասարակութիւններ, որոնցից մէկը քայքայւում է - հի՛նը, եւ մի ուրիշը, որ ծաղկում է հինի աւերակների վրայ - նո՛րը:

Ճիշդ է ասել ֆրանսացի իմաստասէրը. «Այժմը այլեւս այժմ չէ»: Երբե՛ք կանգ չի առնում, դադար չի ճանաչում մարդկային ցեղի զարգացումը: Կենսական մի միութիւն է սերունդների կենակցութիւնը: Իրողութիւն է, սակայն, եւ այն, որ հինի եւ նորի միջեւ գոյութիւն ունի մի դիալեկտիքական հակասութիւն՝ ոգիների դիալեկտիկան»: Հին է սերնդամիջեան հակամարտութիւնը՝ մարդկութեան չափ, եւ ունի իր հոգեւոր-պատմական հիմքը: Դա, սակայն, չի նշանակում անդունդ՝ սերունդների միջեւ,

ինչպէս եւ թշնամանք, երբե՛ք: Ամէն սերունդ ծնունդն է իր ապրած պատմական ժամանակաշրջանի: Ամէն սերունդ ազդում է իր ժամանակի ոգուց, եւ, փոխադարձաբար, ազդում նրան:

Նորը՝ դա նորարար է կեանքի բոլոր մարզերում - դա հինի կրկնութիւնը չէ, այլ՝ յաւելիչն ու կատարելագործողը նրա թողած արժէքների, նրա ժառանգութեան:

Հայրերի ուղիով, նշանակում է՝ աւելի մեծ թափով ու նուիրումով շարունակել նրանց գործը, եւ այդ դէպքում ո՛չ թէ կրկնելով նրանց տկարութիւններն ու սխալները, այլ՝ սրբագրելո՛վ:

Նորը - դա մի նոր արժէքային առաւելութիւն է գոյութիւն ունեցող հինի վրայ:

Այսպէ՛ս է կարելի դառնում հասարակութեան առաջադիմութիւնը:

* * *

Ամէն «սերունդ» սերունդ չէ: Սերունդ կոչուելու համար բաւական չէ՛ հասակի «կանաչութիւնը»: Պատմութիւն ստեղծող անցքերն են հոգեպէս դիմագծում այս կամ այն սերունդը: Պատերազմ, յեղափոխութիւն, գաղափարային ընդհանուր ձգտումներ, ապրումներ, յոյսեր, տեսիլք - ահա՛ թէ ինչե՛րն ե՛ն մշակում սերունդին յատուկ հոգեբանութիւնը: Տարբեր պիտի լինէր մեր նոր սերունդը, եթէ նրա խաչի ճամբան չանցնէր Տէր Զօրով:

Ըստ Միւսիէի՝ Ֆրանսայում մի ժամանակ մարդիկ այլ զբաղում չունէին, քան կայսեր շնչած օդով լեցնել իրենց թոքերը, քանի որ ֆրանսացի երեխաները գիտէին, որ իրենց գիւղի ամէն մի ճամբան տանում է դէպի եւրոպական այս կամ այն մայրաքաղաքը: Իսկ երէ՞կ - Փարիզի անկումէն առաջ, եւ այսօր - Ֆրանսայի անօրինակ աղէտէն յետո՞յ...

* * *

Նորը - դա, հասարակութեան համար երիտասարդանալու, յիշաշրջուելու, վերանորոգուելու կենսա-հոգեւոր մի կարելիութիւն է: Ամէն ժողովուրդ իր նորահաս սերունդի միջոցով է յաղթահարում իր ներքին տկարութիւնները, ցաւերը, յոռետեսութիւնը: Եւ նա, որին յաջողում է իր սեփական տկարութիւններից, թերիներից, սխալներից զերծ պահել իր նորահասը, նրանից ստեղծում է մի մեծ եւ օրհնաբեր ոյժ: Պատմութիւնը չգիտէ մի յեղափոխութիւն, ազատագրական մի պայքար, մի մեծ գաղափար, որ պսակուած լինէր յաջողութեամբ՝ առանց նոր սերունդի մասնակցութեան: Միշտ էլ արդար է, միշտ էլ յաղթում է նոր սերունդը:

Նախ հոգեբանօրէն նուաճել նոր սերունդը՝ մի մեծ առաքելութեան համար - ահա՛ թէ ինչի՛ է ձգտում այսօր պատմաստեղծ ամէն մի ժողովուրդ:

Եւ այդ սերունդին պատկանող երիտասարդութիւնը միշտ էլ «համախմբուում է այնտեղ, ուր գտնուում է բանալին մեր ժամանակի ամենամեծ պրոբլեմների: Այլեւս դա՝ նոր սերունդը, համաշխարհօրէն, գիտակցել է, որ իր համար *խորագոյն մեղանչումը գոյութեան իմաստի եւ իրաւունքի դէմ - դա իր ժամանակի եւ ոյժերի ընդունայն վատնումն է:* Եւ հէնց այդ գիտակցութեան մէջ է նորի զօրութիւնը:

* * *

Նա իր զինակիցներն ունի - գիտութիւնը եւ ստեղծագործ իդէալիզմը: Առաջինը նրան տալիս է՝ ուղի, լոյս, զօրութիւն, երկրորդը՝ թեւեր, խանդավառութիւն, արիութիւն:

Մաքսիմալիստ է օրուայ նորահասը - «կա՛մ կեսար, կա՛մ ոչինչ»: Մեծ վճիռների ընդունակ՝ դա ձգտում է դառնալ ռիսկի - վտանգի եւ զոհաբերութեան սերունդ:

Սոցիալապէս դաստիարակուած՝ նրա նոր ըմբռնումը կեանքի մասին, տրամագծօրէն տարբերուում է հայրերի հեթանոս ըմբռնումից - ինձնից զատ իմ ոյժէն եւ հացէն ո՛չ ոք իրաւունք ունի օգտուելու. այս էր եւ է՛ հինը: Նորը միշտ էլ տրամադիր է կիսելու իր հացն ու կարելիութիւնները նրանց հետ, որոնք իր օգնութեան կարիք ունեն: Նորի այլասիրութիւնը արդիւնք է իր ներքին ոյժերի առատութեան, նրա՝ տալու, զոհաբերելու անդիմադրելի ցանկութեան:

Նա դաւանում է՝ Պալմերի հետ. «Որեւէ անձ կամ իր, արժէք ունենալու համար, իր բարութիւնը պիտի բաժանէ տիեզերքի հետ»:

Ազգի կազմակերպումը-ահա՛ օրուայ ընդհանուր ձգտումը, կանչը:

Ազգի եւ սրա միջոցաւ պետութեան լաւագոյն կազմակերպումը՝ ներքին, ընկերային համերաշխութեան ճամբով - մի բան, որ հնարաւոր է դառնում ազգային ոգու զարգացմամբ: Բախտորոշ է նոր սերունդի դերը ազգակառուցման այդ գործում՝ իբրեւ միակ վերանորոգիչ եւ համերաշխիչ ոյժ:

Հանրածանօթ պետական գործիչ էրիոն է ասել իր հայրենիքի ապրած ողբերգութիւնից առաջ. «Ֆրանսական ազգը քանակի ազգ է, դա պիտի դառնայ որակի ազգ»:

Որա՛կ, որակաւորո՛ւմ - ահա՛ թէ ի՛նչն է մարդկային զանգուածները վերածում միաշունչ ազգի, եւ նրա ապադասակարգային կազմակերպմամբ ստեղծում զօրաւոր պետութիւնը՝ արթուն պաշտպանը հայրենի հողի, մշակոյթի եւ անկախութեան:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 4

ՄԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ

Մեր ցեղի կենսաբանական ժապաւէնի վրայ տեղ գրաւած սերունդներից ամենաճակատագրականը պիտի համարել մերօրեայ նոր սերունդը:

Դա ճակատագրական նշանակութիւն է ստացել հետեւեալ զոյգ պատճառներով՝ - *երբե՛ք այնքան վտանգուած չի եղել հայ ցեղի այսօրը, եւ միաժամանակ, մարդկութեան կողմից սկսուած դարաշրջանային անկիւնադարձի շնորհիւ - երբե՛ք այնքան յուսալի չի եղել մեր ազգային վաղը:*

Ահա՛ թէ ինչո՛ւ մեզ պէտք է, իբրեւ պատմական մոմենտի պահանջ, ոգով ու նուիրումով մեծ մի սերունդ - մեզ սպառնացող վտանգի մեծութեան ու մեծ ապագայի գիտակցութեամբ զօրաւոր մի սերունդ, որ կարողանար նա՛խ խոր ցեղաշարժի ենթարկել հայութիւնը, ապա, նրա վերանորոգմամբ, գլուխ հանել ազգի լաւագոյն կազմակերպումն ու պաշտպանութիւնը:

Օրուայ պայմաններում, երբ յանուն մի նոր եւ արդար աշխարհի, տեղի է ունենում պատերազմներից ամենայեղափոխականը, երբ ժողովուրդներն արդէն սկսած են նոր կեանքի նախագարունը ապրել՝ մեզ պէտք է հզօրանքի մտածումով մեծ ու հոգեւոր արբեցումի ատակ մի սերունդ, որ սիրէր իր ցեղի եւ հայրենիքի համար՝ աներկիւղ երես-երեսի գալ ճշմարտութեան ու մահուան հետ:

* * *

Երիտասարդութիւնը - դա լեռներից իջնող ամեհի մի հեղեղ է, որ կարող է ե՛ւ օրհնաբեր, ե՛ւ աւերիչ լինել:

Ահա՛ թէ ինչո՛ւ նրա պրոբլեմը - որ միշտ էլ կապ ունի տուեալ ժողովրդի ապագայի կառուցման խնդրի հետ - պիտի զբաղեցնի պետական եւ հասարակական գործիչների ողջ մտածումը:

Չե՛մ ուզում հաւատալ, որ ամէն ժողովուրդ իրեն արժանի երիտասարդութիւն ունի:

Մեր հին սերունդը իր ժողովրդին պարտադրուած քաղաքական անբնական վիճակի պատճառով՝ նորահասի համար եղաւ աւելի գանգը ձեռքին շատախօսող Համլետ, քան՝ կորովի առաջնորդ:

Նա չհասկացաւ, որ ամէն նոր սերունդ, իր ժողովրդի գոյութեան պայքարից զատ, ունենում է նաեւ իր սեփական սերունդի «անկախութեան» պայքարը. աւելի՛ն. նա ոչինչ կատարեց նորահասից «իր ջերմութիւնն ու լոյսն իր մէջ կրող» մի սերունդ ստեղծելու: Եսասիրաբար

նա ուզեց ու աշխատեց, որ որդիները նմանին հայրերին - իրե՛ն:

Այսօր, ամօթալին ու ողբերգականը հայոց կեանքում նրանումն է, որ հին սերունդը իր զաւակները հասցնում է իրեն, միայն իրեն համար: Եւ, որովհետեւ նրա մի մասը - անցեղիմաց մասը - իր տկարութիւնից իսկ զզուելու քաջութիւն չունեցաւ. դրապէս ասած՝ որովհետեւ նա ցանկացաւ, որ իր որդիները լինեն իր կենդանի կրկնութիւնը՝ ռամկավարի զաւակը աւանդաբար դառնում է ռամկավար, ճիշտ այնպէս, ինչպէս լուսաւորչականինը՝ լուսաւորչական: Ամենաանշան շեղումը հօր գաղափարախօսական գծից՝ համարւում է ամօթանք, դժբախտութիւն հօր, մօր, ընտանիքի համար:

Այստեղ որդին հօրից տարբերւում է միայն իր տարիքով: Այլապէս՝ ամէն ինչ ընդհանուր է - նոյն հայհոյանքը եւ օրհնութիւնը կը լսէք թէ՛ մէկի եւ թէ՛ միւսի շրթունքներից. նոյն քաղաքական աննկարագրութիւնը՝ հաւասարապէս օտարամոլ եւ նուաստախոհ. չկա՛յ հոգեւոր աճում, մտածողութեան եւ խղճմտանքի անկախութիւն, չկա՛յ «կանաչ հասկ»ին յատուկ կենսազգացողութիւն, սեփական կոչումի գիտակցութիւն: Այս մթնոլորտէն ծնունդ է առել հոգեբանական բնօրինակ տիպը - Standard-այինը՝ պիտի ասէր ամերիկացին:

Մօտեցէք սրան, եւ անմիջապէս պիտի զգաք հին, մեռնող աշխարհի շունչը:

* * *

«Սրտիդ եւ մտքիդ մէջ փնտռիր թշնամիներդ, եւ այնտեղ կը գտնես նաե՛ւ փրկութիւնդ»:

Նրա համար չի ասուած իմաստունի՝ ճշմարտութիւն շնչող այդ խօսքը:

Նա դեռ չի հասկացել, որ հայ կեանքի բոլոր չարիքները իր քարացած մտածողութեան արդիւնք են:

Խորապէս պառակտուած՝ նա պառակտեց մեր երիտասարդութիւնը, առանց անդրադառնալու, որ պառակտիչ ու հատուածական ամէն մի խմբակցութիւն դառնում է չարիք ազգի համար: Նմանը սպառում է հանրային կորովը, միջոցները, եւ այսպիսով դառնում է պորտաբոյծ ու վտանգ ազգի հոգեւոր առողջութեան եւ մեծ արգելք՝ նրա կանոնաւոր զարգացման համար:

Հինը չհասկացաւ, որ չկա՛յ աւելի մեծ դաւաճանութիւն ազգի հանդէպ, քան նոր սերունդը հատուածական, յարանուանական եւ նման դրօշակների ծառայեցնելը: «Նորահասը քաշելով դէպի հին, ցեղօրէն անդէմ կազմակերպութիւնները, լեցնելով «նոր գինին հին տիկերի մէջ»՝ նա խաթարեց նորը:

Նա չհասկացաւ,

- որ ժողովուրդներն իրենց ապագան - լաւ թէ վատ - կառուցում են իրենց զաւակներին փոխանցած ոգու միջոցաւ.

- որ ծնողներից ժառանգած կրաւորական չարութիւնը, որդիների մօտ, տարիքի բերումով, դառնում է ակտիւ ոյժ.

- որ յաճախ՝ որդին իւրացնում է «հօր իսկական պատկերը եւ ո՛չ թէ նրա դիմակը, որ կրում է հանրային կեանքում»:

Նա մնաց խուլ գիտութեան ու ճշմարտութեան խօսքի առջեւ, ու չզգաց, որ «գերագոյն յանցագործութիւնը, անքաւելի յանցագործութիւնը - դա ցեղի դէմ կատարուած յանցագործութիւնն է» (Մոնտէն):

Ցեղակրօնութիւնը - այնքա՜ն «Տէր Զօր»ներ ներկող, բայց յաւէտ երիտասարդ հայ արիւնի կրօնը - արժանացաւ հայութեան անցեղահաղորդ մասի դաւախառն թշնամանքին:

Եւ այդ այն ամօթալի պատճառով, որ նրա գաղափարախօսն ու քարոզիչը ստա-դեմօկրատ ու կեղծ-ընկերվարական չէր: Ժամանակը չէ՞ խոստովանել, որ հայոց պատմութիւնը մեզ մի հատիկ բան է սովորեցնում - այն, որ հայն իր պատմութիւնից բնաւ չի սովորում:

Թուրքը փորձեց մեզ, իբրեւ ցեղ, սրբել գոյութեան գրքից, իսկ հայութեան որոշ տարրերը անգամ մեր եղեռնից յետոյ մնացին զզուելիօրէն ընկերվարական ու համայնավար - որ ասել է՝ օտարականներ իրենց հարազատ ժողովրդի մէջ:

Յաւերժ պիտի մնայ արդար ու խարազանող Հայ Մտքի առիւծի խօսքը. «Եթէ ընկերվարական դրախտը պէտք է հիմնուի հայութեան դիակի վրայ, թո՛ղ էշերն ապրեն այդ դրախտում» (Խաժակ):

Ցեղակրօնութիւնը - ցեղի յաւիտենականի գաղափարը տեղ չգտաւ որոշ տարրերի՝ ճերմակ եւ կարմիր մարքսական եւ նման այլ հոգեւոր աղբով լեցուած հոգիների մէջ, որով՝ մեր նոր սերունդի անցեղակրօն մասը կը շարունակէ գերի մնալ մարդկային եւ ազգային մտքի եւ սրտի ապականարար՝ խորթ եւ պառակտիչ վարդապետութիւնների:

* * *

Ինչո՞ւ եւ մինչեւ ե՞րբ այդպէս: Հինը, թէեւ աններելի, սակայն, հասկանալի մի «արդարացում» ունի - ստրկութի՛ւնն է օրօրել նրա օրօրոցը:

- Հայոց թերիները՝ ստրկութեան թերիներն են,- ասել է Բայրոնը:

Տեւական անապահովութեան ու վախի վարչածեւի տակ ապրող անգա՛մ ամենաստեղծագործ ժողովուրդները դառնում են նեղմիտ, ներքնապէս չար ու անհամերաշխ: Հապա տարագրութի՞ւնը, օտար

միջավա՞յրը, ուր օտար արժէքների ազդեցութիւնը կարելի է մասամբ զինաթափել սեփական ցեղի սրբութեանց եւ արժէքների ոյժով: Նման ծանր պայմաններում, ուր հայերը սովորեցին ապրել նաեւ առանց հայրենիքի, սովորեցին «երջանիկ» լինել եւ Հայաստանից դուրս - հին սերունդի անցեղակնիք մասը պիտի դառնար այն, ինչ որ է այսօր - ամօթալիօրէն անդէմ, պառակտուած ու անզօր, որ ասել է՝ մեռեալ հայ կեանքի տեսակէտից:

* * *

Ո՞ւր է ելքը:

Պատմութիւնը չգիտէ աւելի մեծ, աւելի վսեմ, աւելի սուրբ գործ, քան ապագայով վտանգուած մի ժողովրդի վերանորոգումը:

Եւ իբրեւ վերանորոգիչ ոյժ, միշտ էլ հանդիսացել է իր նոր կոչումի գիտակցութեամբ զօրաւոր նոր սերունդը: Այսպիսի՛ն կարող է դառնալ մեր նոր սերունդը, պայմանաւ, որ նա՝ գիտակցելով եւ զգալով այն բոլոր կապերը, որոնք նրան դարձնում են անբաժանելի իր ցեղէն, իր ցեղային տարերքէն, ճիգ անէր ազատուելու իր բազում թշնամիների ազդեցութիւնից:

Նորի մահացու թշնամիներն ու թունաւորիչները եղան ու կը մնան՝

ա) ապահայրենացած հայը, որի նշանաբանն է՝ ուր հաց ու հանգիստ, ուր լաւ՝ այնտեղ էլ հայրենիք.

բ) անցե՛ղը, որի համար Աստուածութիւն չէ՛ ցեղը.

գ) նրանք, որոնց օրուայ եկեղեցին, թատրոնը, ընթերցարանը՝ ռինգն է, կրօնը՝ սխալ հասկացուած սպորտը. զբօսամոլնե՛րը, որոնք թեթեւամտօրէն ծափում են, շնացնում, հայհոյում գետին զարկուա՛ծին եւ սրբապղծօրէն ովսաննա՛ կանչում այս կամ այն զզուելի ընբիշին: Եթէ սպորտն ու սպարտականը հոմանիշ չեն՝ դատարկ ժամանց է միակողմանի սպորտը.

դ) երիտասարդը, որին բուլղար լեզուն անուանեց «տարիկատ», նա, ով միայն հաց կը հոտի, ով սիրում է կեանքի գինին եւ թշնամի է ազգային եւ մարդկային ճիգի, խորքի, սրբութեան.

ե) ժողովուրդները չունե՛ն աւելի մեծ թշնամի, քան վատ գիրքը՝ դրուած իրենց նորահաս սերնդի ձեռքը, եւ թունաւոր գիրք, թերթ գրողը, որոնց համար յետպատերազմեան երկու տասնամեակները դեռ չեն փակած ազգերի կեանքի ու պատմութեան հին էջը.

զ) անդրօշակ եկեղեցին, անցեղանորոգ դպրոցը, սեղմ ասած՝ այն ամէնը, որ հայ կեանքում գործում է իբրեւ կազմալուծումի ազդակ:

* * *

Ապագայ չունի՛ այն ժողովուրդը, որի տառապանքը չի՛ ծառայում իր գոյութեան իմաստին եւ իմաստաւորումին:

Ջարդուեց, աղիտուեց հայութիւնը, եւ այդ՝ ո՛չ այն պատճառով, որ թշնամին զօրաւոր էր, այլ՝ որ մենք տկար էինք:

Օտար այլասերիչ միջավա՞յրը - դրա դէմ էլ կարելի է պաշտպանուել յաջողապէս, միայն թէ հին սերունդի հոգեւոր ցնցոտիների փոխարէն մեր նորահասին հագցնենք ցեղի ոգին ու զրահը:

Կեղծ եւ անզօր է ո՛չ միայն ամէն վարդապետութիւն, այլեւ՝ շարժում, ամրութիւն, որ ծնած չէ ոգուց:

Պարտուեց Մաժինօն, որովհետեւ դա տկարութեան ամրութիւն էր, որի մէջ, հին գալլերի անպարտելի ոգու փոխարէն, դրուած էր ռազմագիտական պաղ հաշիւ միայն:

Ահա՛ թէ ինչո՛ւ եմ ասում՝ դա՛րծ դէպի ցեղը, որ ենթադրում է ոգի եւ արիւն:

Ձեռքդ դի՛ր նախահայրերիդ հզօր աջի մէջ եւ դու պիտի զգաս, թէ ինչպէ՛ս ուժեղ է զարկում սիրտդ, զօրեղանում բազուկդ, պողպատանում կամքդ:

Ա՛յդ է ցեղանորոգման ճամբան:

Ցեղը - դա յաւիտենական քանդակագործն է, նոր սերունդը՝ կենդանի մարմարիոն նրա ձեռքում:

Ցեղը - դա ժողովրդի պոտենցիալ անմահութիւնն է, յաւիտենապէս հայկականը:

Դա ժողովրդի բնութեան անփոփոխ մասն է, սրա կենսաբանական անփոփոխ գոյութիւնը:

Դա միակ ապանեխիչն է ժողովրդի հոգեւոր կեանքի:

Օվիդիոսը մեր ցեղի ոյժը խորհրդանշած է վագրով: Իսկ «վագրը երբե՛ք մեռեալ չէ»: Հէնց այդ չմեռեալ վագրայի՛նն է մեր ցեղը, որի անունը, ըստ անգլիական պատմագիր Ֆինլէյնի, Բիւզանդիոնի մէջ հոմանիշ էր ազնուականութեան:

Ահա՛ թէ ինչո՛ւ եմ ասում՝ ցեղն ու ցեղակրօնութիւնը անհրաժեշտ են մեր նոր սերունդին ճիշտ այնպէս, ինչպէս կրակը՝ երկաթը ջրդեղելու համար:

Դա՛րծ դէպի ցեղակրօնութիւնը:

Կրօնը - դա ծնունդ է աստուածութեան ծարաւի մարդկային հոգու, ցեղակրօնութիւնը՝ հայրենիքի համար ամէն վայրկեան արիւնող հայկական սրտի:

Ցեղակրօնութիւնից պիտի ծնուի ցեղամարդը - օրուայ ազգերի կրթական իդէալը: Դա պիտի դառնայ նաե՛ւ մեր նոր սերունդի իդէալը:

Այրող ծարաւը համահայ սրտի տէր ամբողջական հայու - այդ, միայն այդ մեր նոր նորահասը կը վերածի ուժաստեղծ, որով եւ՝ վերանորոգչական մի փրկարար ազդակի:

Մե՛ծ են մեր ապրած օրերը, մեծ՝ իրենց վտանգներով ու ակնկալութիւններով:

Մե՛ծ է եւ պահանջը՝ իր մեծ պարտականութեանց ու վտանգներին ժպտալ գիտցող մի սերունդի:

Մենք նմանի ստեղծումը՝ ժամանակի ոգու եւ մեր ցեղային կարելիութեանց սահմաններում՝ համարում ենք ե՛ւ անհրաժեշտ, ե՛ւ հնարաւոր:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 5, 7

ԱՀԱ՛ ՄԱՐԴԸ
(ECCE HOMO)

Նրան, որը խմեց ե՛ւ հայ տառապանքի բաժակից

Ճշմարտութիւն լինելուց աւելի պարադոքս է Գէօթէի խօսքը այն մասին, թէ մենք չենք կարող ճանաչել մարդը, երբ նա գալիս է մեզ մօտ - նրան ճանաչելու համար պէտք է երթանք նրա մօտ:

Եավորովը - որ խմեց ե՛ւ հայ տառապանքի բաժակից - Հայաստանը չտեսած ճանաչեց եւ խորազգաց յափշտակութեամբ երգեց մեր «Միշտ էլ քաջ»ը:

Հայն իր բնաշխարհիկ օրօրանում չտեսած՝ նա ճանաչեց հայութիւնը, քանզի նա սովորական բանաստեղծի ձիրքերից ուրիշ մի բան ունէր իր մէջ - խոր յայտնատեսութիւն աշխարհի եւ մարդու հանդէպ:

Նա իր սրտի լարերը թրթռացուց տառապող ու պայքարող հայութեան համար:

Ծնունդ մի կայտառ եւ ռազմաշունչ ցեղի՝ նա եղաւ մէկն այն սակաւաթիւ բանաստեղծներից, որոնք ամենայն իրաւամբ գրաւում են առաջին տեղը ոգու հերոսների փաղանգում:

Ծնած «աշխարհ-ծովէն», ինչպէս իր մասին ասում է ինքը - նա եղաւ երգիչը ողբերգօրէն զարհուրելիի, սրբազանի եւ հերոսականի: Եւ յանուն ստրուկ եւ անիրաւուած Հայրենիքի, պայքարեց երգերով - պայքարեց մահուան, թուրքի եւ աշխարհի անսրտութեան դէմ: Նա եղաւ մէկը մարդու ամենազգայուն որդիներէն, որի կրծքի տակ արդարութեան առիւծը մռնչեց, մինչեւ որ կը լքէր մեր աշխարհը, որը այնքան անիծեց:

Ապրեց «գոյութեան ուրագանի» մէջ, եւ տառապեց, տառապեց գերմարդկօրէն: Եւ տառապանքի զայրուցքի մէջ յաճախ աղաղակեց. «Ես չեմ ապրում - այրւում եմ ես»: Որպէս պրոմեթէիստ՝ նա ըմբոստացաւ մարդկային անարդար ճակատագրի, քաղաքական բռնութեան եւ ընկերային անարդարութեան դէմ:

Նա տկարութիւն չունեցաւ մարդկային գոյութեան բարդ առեղծուածները լուծել իմաստասիրօրէն միայն: Աստուածօրէն զգայուն՝ նա հոգեւին զինակցեց մարդ-եղբօր, մարդ-ըմբոստին եւ մարդ-տառապողին: Եւ նրա կեանքն եղաւ համախաչելութիւն: Նա խաչուեց բոլոր խաչեցեալների հետ:

Նա խմեց եւ տառապանքի բաժակէն եւ աստուածային արբեցութեամբ աղաղակեց. *«Արբէ՛ք ի սմանէ»:* «Հայեր»ի եղերաշունչ քնարերգակը երգեց ե՛ւ հայ ցաւը: Նա երգեց եւ մեր «ճանապարհ Խաչին», իսկ երգելէ առաջ, ապրեց, ապրեց խորապէ՛ս: Նրա համար՝ տառապանքն եղաւ աստուածային հեշտանք; Չէ՞ որ, «բանաստեղծի նման Աստուած ալ՝ որպէսզի ստեղծէ, հարկ եղաւ նախ լալ»*:

Նա երգեց հայ պանդխտութիւնը, եւ այդ ո՛չ թէ որպէս մի բանաստեղծական քմայք, ո՛չ թէ որպէս մի մարդասիրական շարժուձեւ, ո՛չ թէ իր ճակատը զարդարող լուսապսակին փառքի մի նոր ճառագայթ աւելացնելու ցանկութեամբ: Ո՛չ, ո՛չ, նա յանուն տառապողի գիտցաւ արհամարհել դափնին ու ջահիլութեան գինին:

Նա երգեց մեր տարագրութիւնը, որովհետեւ մէկն էր մեր ժամանակների մարդու ամենազգայուն որդիներից եւ չէր կարող չերգել աշխարհի ցաւերէն ամենավսեմն ու հերոսականը: Ապրելով «սկիզբն ու վախճանը ողջ մարդկային խռովքին», նա չէր կարող չարձագանգել այն մեծ ողբերգութեան, որ մասնաւորապէս 19-րդ դարու վերջերին բաժին ինկաւ Հայաստանին եւ իր որդիներին: Նա երգեց աշխարհի եւ իր բախտի դէմ ոտքի ելած հայութիւնը: Նա զինակցեց մեզ, որովհետեւ զաւակն էր այն մեծ սրտի տէր ժողովուրդին, որ արիութիւն ունեցաւ իր քաղաքականութեան մէջ խաչը դնել: Նա մեր ցեղի պաշտպանութեան ի խնդիր իր սուրը պիտի տար, եթէ զօրական լինէր: Չէ՞ որ նրա կեանքում անբաժան մնացին «բանաստեղծի քնարը եւ զինուորի զրահը»: Նա մեզ իր աստուածաշունչ քնարը տրամադրեց, քանզի երգիչ էր: Նա Հայաստանը չտեսած, մեզ համար եղաւ ու կը մնայ այն, ինչ որ է Պայրոնը Հելլադայի համար:

Եւ այդ այն ժամանակ, երբ աշխարհին շանթահարելու կարող բազուկներն անշարժ, շրթունքները համր մնացին Հայաստանի համար մարդկայնօրէն մի բան ասելու կամ անելու պրոբլեմի առջեւ, երբ եւրոպական մարդկութիւնը տմարդութիւնը ունեցաւ քանիցս իր մատը խրելու Քրիստոս-Հայաստանի արնահոս վէրքերի մէջ եւ մնալու անկարեկիր: Աստուա՜ծ իմ, որքա՞ն փոքրիկ են մեծ պետութեանց մեծագոյն քաղաքագէտները Եավորովի առջեւ, որոնք յաճախ կը զլանան երկու գունատ խօսք ասել ի պաշտպանութիւն անհրաւուած հայրենիքների:

Եւ այդ այն ժամանակ, երբ առաջին քրիստոնեայ ժողովրդի հայրենիքէն կը բարձրանար յիսուսեան աղաղակը. *«Էլի, էլի, լամա սափաքթանի»:* Եւ այդ այն ժամանակ, երբ հազարամեայ մշակոյթի եւ խաչի տէր ժողովրդի կացութիւնը իրենից կը ներկայացնէր բեւեռներից կազմուած մի

---

* *Աստուծոյ լացը, Դանիէլ Վարուժան, «Հեթանոս երգեր»:*

անկողին, որի վրայ բռնադատուած էր պառկելու հայը: Եավորով երգեց իր «Հայեր»ը եւ իր երգը թեւ առեց, թռաւ անցաւ իր հայրենիքի սահմաններից դուրս, համայն հայութեան երախտագիտութիւնը նուաճելու համար:

Ահա՛ թէ ինչո՞ւ, 1912-ին, երբ պատերազմական շեփորը ոտքի հանեց Պալքանեան ազգերը, մարդկութեան - թուրք կոչուած - ամենէն անմարդկային մասի դէմ, Անդրանիկի եւ իմ կանչին որպէս հոգեբանական արձագանգ՝ հայ գաղթաշխարհի բոլոր ծայրերէն կամաւորներ հասան, ուխտելով Քրիստափորի գերեզմանի վրայ, եւ հայ եւ պուլկար դրօշակների տակ ճամբայ ընկան՝ հայ արիւնը խառնելու պուլկար որդիների արեան: Եւ ընկան նրանք, ընկան Եավորովի հայրենիքի համար, ընկան ժպտադէմ:

Ահա՛ թէ ինչո՞ւ, երբ վաղը Արեւելքում խորտակուին բռնութեան վերջին գահերը - սեւ թէ կարմիր - երբ ազատութեան հրեշտակն այցելէ Արարատի սգաւոր փէշերը՝ անկախ Հայաստանի մայրաքաղաքում Հայ գրչի, սրի եւ խաչի հերոսների կոթողների կողքին, կը բարձրանայ եւ Եավորովի արձանը: Եւ Արարատեան վեհափառ արեւը իր արշալոյսին եւ վերջալոյսին, համբուրելով կ'ոսկեզօծէ մարդկայնութեան միւռոնով օծուած նրա ճակատը:

«Դու պիտի գաս, սպասուա՛ծ օր»,- ասում է Եավորովի մի տողը:

Այո՛, պիտի գա՛յ, չուշանա՛յ այդ օրը, քանզի նա այնքան անխուսափելի է, որքան եւ արշալոյսը: Նա պիտի գայ. իսկ, մինչեւ այդ, ես, երկու ազգերի զինուորը, մտովի կը համբուրեմ երկու հայրենիքների վշտակիրի քնարը:

«Ազատ խօսք», Սոֆիա,

1935թ., թիւ 85

Գ. ՆԺԴԵՀԻ ՆԱՄԱԿԸ ՏՐԱԵԱՆՈՎԻՆ

Սիրելի՛ բարեկամ
Տեոդոր Տրաեանով,

Չեմ կարող ասել, թէ անծանօթ էի Ձեր ժողովրդի ցեղային կարողութիւններին, նրա պատմութիւնը ստեղծող ու շարժող ոգուն, նրա մշակութաստեղծ խանդին:

Սակայն, քաղցրօրէն պիտի խոստովանեմ, որ համակրանքի երկտողով ինձ ուղարկած Ձեր գիրքը եկաւ նոր շա՜տ բան ասելու ինձ՝ բուլղար *«Ոգու եւ Հող»ի* մասին:

Հանճար եւ մարգարէականութիւն - ահա՛ թէ ինչե՛րն են ծնունդ տուել Ձեր բալլադաներին: Ճշմարտօրէն մե՜ծ բանաստեղծ, որ դժբախտաբար, ամէն սերունդի օրով աշխարհ չի գալիս:

Փարիզի անկման նախօրեակին ֆրանսական գրական մի ամսօրեայ ցաւով կը հարցնէր՝ ո՞ւր է մեծ բանաստեղծը, որ յանուն Ֆրանսայի պաշտպանութեան կարողանար զօրահաւաքի ենթարկել բոլո՛ր սրտերը:

Բարեկա՛մ, Ձեր գիրքը թերթելուց յետոյ՝ ես այլեւս կը հաւատա՜մ, կը հաւատա՜մ, երիցս կը հաւատա՜մ, որ եթէ վաղը Ձեր հանճարը ծնող ժողովուրդը հարկադրուի մերկացնել իր *«Աստուածայնօրէն կատաղի սուրը»,* Բուլղարիայում ո՛չ ոք պիտի կրկնի ֆրանսացիների խռովքոտ հարցը, քանզի կա՛յ մեծ բանաստեղծը, դա՝ բուլղար նախախնամութեան աստուածաշունչ մունետիկը՝ ապրում է մեր մէջ - Ձեր բալլադաները վկա՛յ: Ոգու բանաստեղծ, տեմպորալիստ, յստակատես - այսպէ՛ս պիտի էագրէր Ձեզ ճշմարիտ գրաքննադատը, եթէ նա գոյութիւն ունենար այսօր: Արդարեւ, Ձեր ոգու համար անջրպետ չունեն դարաշրջանները: Տեմպորալիստական Ձեր միտքը սաւառնում է բոլոր դարերի, բոլոր սերունդների վրայ, եւ Sub speccie aeternitatis* եկած ու անցածների անունից պատգամում նորերին: Մարգարէական խօսքի ինչպիսի՜ թափ - իմաստի՝ խորութի՛ւն, ապրումների՝ լաւա: «Երբ ճապոնացին մի ծաղկող ճիւղ է նկարում - դա ամբողջ գարուն է»,- ասել է Ալտենբերգը՝ Վիեննայի մեծ բանաստեղծը, մեծ բոհեմը:

Դո՜ւք էլ, դո՛ւք էլ, երբ խօսում էք մի գետի, մի պուրակի, մի լերան մասին, ոգիանում է, լեզու առնում ո՛ղջ բնութիւնը:

---

* *Յաւիտենականի բարձունքից:*

* * *

Այո՛, ինչի որ դիպչում է Ձեր թովչական խօսքի շունչը՝ դա կենդանանում է, եւ սրբանում, միաժամանակ:

Երգում են ձեր երգած ծովերը, որովհետեւ գիտեն, որ *«հերոսի սիրտը հանգիստ է գտնում միայն երգի մէջ»:* Հողմերի մէջ՝ *«դարերն են լալիս»: Անտառը՝ «յաւիտենական ոյժեր է արտաշնչում»:*

Պիրի՛նը՝ տիտան՝ լսում է եւ լռում: Ատրո՛ւման - տնքում է գիշերային լռութիւնը պայթեցնող հառաչանքով՝ *«անարգուած պատուի եւ օջախի»* համար: Եւ հո՛ղը - *«մատակ առիւծ»* - իր կորիւններն է կանչում:

Այսպէս, Ձեր շնչով ոգիացած երկրում՝ ամէն ինչ սուրբ է, մարդկային եւ սիրելի: Ցարեր՝ *«ծնուած առիւծի եւ հրեշտակի հոգով»:* Արեւադէմ մարգարէն, որ *«մեղքից զերծ ցեղը»* երազեց, եւ այսօր, *«եղբօրից դաշունուած՝ քայլում է արնոտ հետքերով»:* Հերոսնե՛ր, որ *«երբեք չեն մեռնում, անգամ եթէ արեւը մեռնի»:* Մայրեր - *«թշուա՜ռ մայրերը եղբօր եւ թշնամու - որոնց մազերի վրայ լացող Տիրամօր արցունքն է թափւում»:* Քաջամարտիկներ՝ *«մարտում հրեշտակի հաւասար»,* որոնք իջնում են երկնքից եւ *«պահակ կանգնում իրենց վաղեմափառ դրօշակներին»:* Մեռելներ անթաղ, կռւում ընկած, *«որոնց ածիւնի առջեւ ինքն Աստուածն է խնկարկում»:* Մշակներ՝ Ֆաուստեան կարօտով, որոնց *«թափօրի մէջ նոր ժամանակների քայլերն են արձագանգում»:*

Եւ ժողովուրդը՝ արդար ու արի, գիտէ ինքն իր կեանքի օրէնքը դարբնել, եւ *«եղբայրական սեղանին թշնամուն հրաւիրել»:* Իր սուրը՝ *«հրեղէն եւ սառցեայ, որ սպանում է միա՛յն պաշտպանութեան մէջ»:* Խղճմտանքը՝ *«սպանի՛ր առանց սպանիչ-չարագործ դառնալու»:* Աղօթքը՝ *«Դու, Տէ՛ր, ների՛ր ռազմի մեր եղբայրներին, ների՛ր եւ թշնամուն»:* Հաւատը՝ խաչակիրի: Տեսիլքները՝ շքեղաշքեղ ու հոգեփոխիչ: Աշխատանքը՝ *«հրաշք, որ Աստուծուն է մօտեցնում երկրի ամէն մի որդուն»:* Իմաստութիւնը՝ *«մարդը անցողական է, ժողովուրդը յաւիտենական, ա՛յն բանում, որ ստեղծում է»:*

Այդ արեւադէմ ժողովուրդը ե՛ւ իր մեծ օրն ունի - ահա՛ *«զարկում են բոլո՛ր թմբուկները, շեփորում ե՛ւ բոլոր փողեր»ը,* քանզի *«Բոսֆորի վրայ ճակատագիրն է յառնում»* եւ... վերստին, հողը - մատակ առիւծ՝ իր կորիւններն է կանչում՝ *«ոտքի՛, մեռելնե՜ր»...*

* * *

Բարեկա՛մ, եթէ ես լինէի վարիչը բուլղար բանակի, եկեղեցու, դպրոցի՝ պիտի հրամայէի, որ ամէն զօրական ու զինուոր, եկեղեցական ու հաւատացեալ, ուսուցիչ ու աշակերտ, որ ամէն բուլղար իր ծոցում կրէր Ձեր բալլադաների գիրքը: Այո՛, այդպէս պիտի վարուեն Բուլղարիոյ օրուայ վարիչները, որովհետեւ միայն հանճարով ու մարգարէութեամբ օծուն նման գրքերին է յաջողւում ժողովրդից շանթանման առաջնորդներ ու մահապատրաստ վիտիազներ քամել: Ձեր բալլադաների հզօր շունչը կարող է հոգեվերանորոգել Ձեր ժողովուրդը, զայն վերածելով մի հոգեւոր մոնոլիտի, որպիսին դա պիտի դառնայ հրամայողաբար, որովհետեւ *«գալիս են զօրաւոր ժամանակներ»:*

Փա՜ռք Ձեզ եւ Ձեր հանճարը ծնող ժողովրդին: Համբո՛յր Ձեր գրչին:

Եղբայրօրէն՝ ՁՕՐ. ՆԺԴԵՀ
«Ռազմիկ», 1941թ., թիւ 6

Գ. ՆԺԴԵՀԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԸ
ԼԵՈՊՈՎԻ ԴԱԳԱՂԻ ԱՌԱՋ

Լեոպո՛վ,

Դագաղիդ առջեւ կանգնած է գաղափարի եւ զէնքի ընկերդ:

- Խորտակուա՞ծ եմ մահուանդ իրողութեամբ: Խորտակուած եմ ու սրտաբեկ, բայց հեռո՛ւ ինձանից յեղափոխականին անվայել տկարութիւնը՝ ողբա՞լ քեզ, որովհետեւ հերոսներին չեն ողբում, այլ՝ հպարտանում, սքանչանում նրանցով:

Ուղիղ 33 տարի առաջ մեզ միացրեց մեր ժողովուրդների ընդհանուր ճակատագիրը:

Մեզ հաւաքեցին միեւնոյն գաղափարի շուրջը Հայաստանն ու Մակեդոնիան, եւ քո ու նմաններիդ շնորհիւ ես աւելի ջերմօրէն սիրեցի քո հայրենիքը, նրա դատը:

Տարիներ անցան: Ես վկայ եղայ քո հոգու վեհութեան - ստորերկրեայ աշխատանքի մէջ, տարագրանքի մէջ, ինչպէս եւ կեանքի խաղաղ պայմաններում:

Իբրեւ յեղափոխական խոր իմացականութեան եւ զօրաւոր խառնուածքի մարդ՝ դու գիտցար ազատագրական շարժման ու գործին վերաբերող բոլոր խնդիրներին մօտենալ մտածումի հերոսականութեամբ:

Արիութիւն ունէիր մտածումդ եւ խօսքդ հասցնել իրենց տրամաբանական վախճանին:

Գիտէիր արդարօրէն գնահատել մարդկանց, նրանց գործերը, նրանց հանրային նշանակութիւնը:

Քաջութիւն ունէիր ճշմարտութիւնը ասել օրուայ «հզօրներ»ին:

Իբրեւ յեղափոխական բարձր բարոյականի մարդ՝ եղար ահեղ ու աներկիւղ, քայլեցիր վտանգների ու մահուան դէմ եւ հանգոյն բիբլիական մարգարէների՝ մնացիր անողոք այն բոլորի հանդէպ, որոնք այս աշխարհում, անձնական շահը սկզբունք դարձրած, «ծախու են հանած իրենց սուրը», թիկունք դարձրած իդէալին եւ Աստուծոյ, ու ամէն ինչ կեանքում կապել մեռեալ նիւթի, նիւթապաշտութեան:

Ես քեզ տեսայ աքսորանքի մէջ - այդտեղ էլ դու չգիտցար, թէ ի՞նչ է տկարութիւնը, անյուսութիւնը, նահանջ, ընկրկում չունեցար գերագոյն պարտականութեան ճակատի վրայ:

Վերջապէս, հիացայ կեցուածքովդ լեգալ քաղաքացիութեան պայմաններում, ուր ճշմարիտ ստոիցիզմով կրեցիր անմարդկային զրկանքներ, եւ, այդ վիճակում, մտածելով միայն, միա՛յն ուրիշների մասին,

յաճախ սրբազան զայրոյթի պոռթկումով ասացիր. «Չէ՛, այս երկրում նիւթական միջոցների չգոյութեան պատճառով ո՛չ ոք պիտի չմեռնի՛ քաղցից»:

Ո՛չ ոք, բայց այդ «ոչ ոք»-ը չվերաբերուեց քեզ, որովհետեւ ամէն ինչ տուած հայրենիքիդ, դո՛ւ, յեղափոխական ճգնաւոր, բարոյապէս ազատ չհամարեցիր քեզ՝ մտածել նաե՛ւ քո անձի մասին:

- Մի՛, մի՛ մարէք ոգին,- այսպէս, դեռ երէկ, իբրեւ յեղափոխական դաստիարակիչ այսպէս կը խօսէր երիտասարդ սերունդի ներկայացուցիչներին, նրանց քարոզելով ալէլուիականութիւն դէպի հայրենիքը:

Այսպէ՛ս, միշտ պատրաստ պարտականութեան ու վտանգի դիրքերի վրայ՝ իբրեւ մարդ եւ մարտիկ:

Այսպիսի՞ն էիր դու - փառապանծ ընկեր, որի կեցուածքի բաղդատմամբ ոչինչ են շատ թագակիրներ, եւ շատ ու շատ մեծահարուստներ անարժան կոխածդ հողը համբուրելու:

Դու է՞լ, դու էլ կարող էիր հարուստ լինել, բայց ապրեցիր աղքատ եւ մեռար մենաւոր, մեռար անշուք ու պաղ չորս պատերի մէջ, մեռար ինչպէս վայել է մեռնել հոգով մեծերին:

* * *

Լեապո՛վ - ecce homo - ահա՛ մարդը, որի բիւրեղ նկարագրով հիանալ կարող էր միայն նա, ով հոգեկան որոշ վեհութիւն ունի: Նա՝ «առիւծի եւ հրեշտակի հոգի կրող» Հայ եւ Մակեդոնական Յեղափոխութեան փաղանգի այդ զինուորը կարող էր բնութեան ուղղել գերման փիլիսոփայի խօսքերը. «Դու կարող ես ոչնչացնել իմ մարմինը, կարող ես ինձ սրբել երկրի երեսից, բայց իմ ոգու նկատմամբ դու ոչի՛նչ կարող ես անել»:

Ահա՛ Պրոմեթէեան այն գիտակցութիւնը՝ անսպառ աղբիւրը Լեապովի ներքին ոյժի, ուրախութեան եւ գաղափարային գինովութեան:

Նմանների՛ն, գերագոյն նուիրումի ընդունակների՛ն է միայն տրուած զգալ իրենց ոգու անմահութիւնը, եւ, հէնց սրբանում է նրանց բարոյական անկապտելի իշխանութիւնը այն ամէնի վրայ, որ ստոր է, անցողական ու եղծանելի մարդկային կեանքում:

Լեապովի կեանքն ու մահը - դա գերագոյն հաստատումն է *մարդկային գոյութեան տրագիզմի օրէնքի:*

Գիտէր գաղափարի մեր մեծ ընկերը, գիտէր, որ *հերոսականութեան տրամաբանութիւնը հերոսի տառապանքն ու մահը վերածում է նրա ոգու յաղթանակի:*

Նա, զոյգ ժողովուրդների վշտակիրը - որ այս աշխարհում մի հատիկ բարոյական մխիթարութիւն ճանաչեց՝ ի խնդիր ազատութեան տեղի

ունեցող մահերի գեղեցկութիւնը: Նա ապրեց, տառապեց երկու հայրենիքների համար, ապրեց մարդկային ոգու անպարտելիութեան այն հրաշագործ զգացումով, որ տրւում է միայն այն ընտրեալներին, որոնք վճռաբար բաժանում են ճակատագիրը տառապող Պրոմեթէի - Աստծու:

Իսկ Աստուած - դա տառապում է մարդկային ամէն մի կաթիլ արցունքի, անազատ ազգերի ամէն մի հառաչանքի մէջ:

Լեապո՛վ, վեհասքա՛նչ ընկեր, մեռար՝ չապրած իրականացումը յիսնամեայ երազիդ:

Դեռ խաչերն են ցցուած մեր հայրենիքների թիկունքում - սրանում է քո եւ մեր ողբերգութիւնը:

Սակայն, դո՛ւ, քա՛ղցր ընկեր, դո՛ւ, որ Յիսուսեան նուիրումն ու տառապանքը կրեցիր իբրեւ միակ առանձնաշնորհութիւն - դու աշխատեցիր, դեգերեցիր ու մեռար այն հաւատով, որ վաղ թէ ուշ յաղթանակում է Մեծ Նպատակը: Սրանում է քո հոգու վեհութիւնը, որ թողիր գալոց սերունդներին իբրեւ անարծաթ կտակ:

Խաղաղութի՞ւն աճիւններիդ:

* * *

Մեկնո՛ւմ ես - յաւիտենականի դրան քեզ սպասում է Վիտոշի շանթերի վարպետ Քրիստափորը մեր:

Ասա՛ նրան, որ իր ճամբով ընթացողները լեգէոն են: Ասա՛, որ այլեւս լսւում է դղրդիւնը մօտեցող արդար ու մեծ օրուայ քայլերի, որ շուտով ազատն Մասիսն ու Վիտոշը եղբայրօրէն կ'ողջունեն իրար: Այդ օրը, Լեապո՛վ, հայ յեղափոխականները իրենց հետ կը տանեն մի բուռ հող՝ քո գերեզմանէն, եւ կը ցրեն հայոց լեռներում, որ անմեռ հոգիդ ժպտի նաե՛ւ մեր երկնքի տակ:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 9

ՑԵՂԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ

Ո՛չ միայն եւրոպացիները, այլեւ՝ մենք, հայերս էլ մեր ցեղը ճանաչում ենք այն չափով, ինչ չափով, որ մենք եւ օտարները ճանաչում ենք՝ իր մեծութեան ու փառքի փլատակների վրայ փռուած մեր Անին, որ դեռ գրեթէ ամբողջապէս հողի տակն է:

- «Լաւ է,- ասել է մի ցեղաշունչ հայ,- եւ հարկ ու անհրաժեշտ, որ ամէն մէկ հայ իր կեանքի մէջ ջանայ գոնէ անգամ մը տեսնել յաւերժապանծ Անին:

Ազգային ընդհանուր աշխարհայեցողութիւնն աւելի ընդլայնող նոր հորիզոններ եւ անսահման ոլորտներ պիտի բացբացուին անոր մտքին եւ զգացումներուն առջեւ»:

Այո՛, դա անհրաժեշտ է մասնաւորապէս այսօր, ե՛ւ նրանց համար, որոնք տառապում են ցեղային նուաստութեան զգացումով, որոնց յոռետեսական կեղծ հայրենասիրութիւնը դեռ շարունակում է վայել, թէ դժուար է սփիւռքի մէջ հայը հայ պահել:

Անի՛ն - մեր անցեալը խորապէս պեղելով միայն կարելի է ճանաչել մեր ցեղը:

Մի ժողովուրդ, որի հպարտ սերունդները ժամանակին ասել են՝ «Անին շէ՞ն, աշխարհն աւեր», իրաւունք չունի՛ չհաւատալու իր ապագային:

Օրուայ մեր վիճա՞կը - այո՛, դա մեզ գրեթէ ամէն ժամ հառաչել ու կրկնել է տալիս՝ «Անի՞ն աւեր, աշխարհը շէ՞ն», բայց պէտք չէ մոռանալ, որ հայու մայրաքաղաքը՝ Աթէնքի, Հռոմի նման չփլաւ իր վատասերումի եւ զեղխութեան մէջ, այլ՝ աւերակ դարձաւ բարբարոսութեան հարուածների տակ:

Անի՞ն - մէկը մեր ցեղային հանճարի հսկայ գործերէն - փլատա՛կ է այսօր, անցեալ փառքերի ու մեծութեան փլատակ. շէ՛ն է, սակայն, մեր ցեղը:

Եթե կործանուած է ստեղծագործութիւնը, դեռ կենդանի է ստեղծիչը - ցեղիմաստասիրական այդ ճշմարտութի՛ւնը միայն կը փրկէ մեզ, մասնաւորապէս մեր նորահաս սերունդը:

* * *

Ցեղ, ցեղային ժառանգականութիւն եւ պատմութիւն, իբրեւ ընդհանուր ճակատագիր, արժէքներ, փառքեր ու դժբախտութիւններ -

ահա՛ այն ոյժերը, որոնք դիմակերտում են տուեալ ժողովուրդը եւ որոշում նրա ճակատագիրը:

«Ցեղ» ազդակը, սակայն, իբրեւ բովանդակութիւն, ենթակայ է փոփոխութեան:

Օրինակ, մի ժողովուրդ - ըստ պրոֆ. Վալթեր Գրօսի - դարերի ընթացքում, բնական ընտրողութեան ճամբով, անկախ իր ցեղային մաքրութիւնից - կարող է հարստանալ արժէքաւոր յատկութիւններով, կամ էլ՝ կորցնել նմանները: Եթէ նրա ամենաքաջ, անձնուէր եւ արժէքաւոր տարրերը մեռնում են առանց ժառանգներ թողնելու, դա, այդ ժողովուրդը աստիճանաբար աղքատանում է իր բնածին առաքինութիւնների տեսակէտից: Կամ եթէ ժողովրդի վճռաշունչ, կամային եւ հոգեւորապէս հարուստ տարրերը լքում են իրենց երկիրը, գաղթում - ազգն, այդ դէպքում, ենթարկւում է իր տկար տարրերի տիրապետութեան վտանգին:

Այսպէս, *մի ժողովրդի ցեղային վիճակի հետ փոխւում են նրա առաքինութիւնները:* Իր կոպիտ սխալների եւ մեղքերի ծանրութեան տակ մեռնող լիբերալիզմը չհասկացաւ այդ ճշմարտութիւնը: Ժխտելով ցեղի բախտորոշ նշանակութիւնը՝ դա ազգութիւնը համարեց *միայն* պատմական աւանդութիւնների գործ: Ճի՛շտ է, վերջինները ժողովուրդների կեանքում կատարում են հոգեւոր կրաշաղախի դեր, ճիշտ է, սակայն եւ ա՛յն, որ *առանց ցեղային պատկանելիութեան զօրաւոր զգացումի՝ ժողովուրդները պիտի շարունակէին մնալ իբրեւ մարդկային դիմազուրկ զանգուածներ: Մի ժողովուրդ միայն այնքա՛ն է ակտիւ, ստեղծագործ եւ կենսահոգեբանօրէն լաւատես, որքան կենդանի եւ արթուն է նրա ցեղային ծագման գիտակցութիւնը:*

Այս գիտակցութեամբ չի՛ ապրում օրուայ հայութիւնը - ահա՛ պատճառն իր աններելի պառակտումների եւ տկարութեան:

Ցեղակրօնութիւնը այլ նպատակ չունի, քան տարագիր հայութեան մէջ արթնցնել ցե՛ղը, ցեղայի՛նը, միաժամանակ՝ թարմացնելով իր պատմական յիշողութիւնը - զայն մի՛ եւ անբաժան ազգի վերածելու համար:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 8

ԵՐԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՑԵՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՉԷ

Ա

Չեմ կարծում, որ օրուայ՝ կրակ առած մեր Երկրագնդի վրայ մի այլ ժողովուրդ այնքա՛ն յաճախ խօսէր հայրենիքի եւ հայրենասիրութեան մասին, որքան հայը:

Յաճախէ՛ք մեր հանդէսները եւ անմիջապէս պիտի համոզուէք, որ ամէնից շատ հայ մարդն է «ուխտում» ծառայել հայրենիքին, մեռնել նրա համար:

Այդ երեւոյթի հոգեբանական գաղտնիքը նրանումն է, որ հայ «հայրենասէր»-ը քաջ գիտէ, թէ իր կուրծք ծեծելը, իր ուխտը բնաւ չի՛ պարտաւորեցնում իրեն ո՛չ միայն մեռնել, այլեւ անշահասիրաբար օգտակար լինել իր հայրենիքին:

* * *

Չեմ ճանաչում, նմանապէս, մի այլ ժողովուրդ, որի հայրենասիրութիւնը բովանդակութեամբ այնքա՜ն աղքատ լինէր, որպիսին է դա մեր ժողովրդի մի մասի մօտ:

Հայ մարդու հայրենասիրական բառամթերքը կը բաւէ մէկին միջակ հռետոր դարձնելու:

Բոց ու խանդ - որքան ուզէք, բայց ծոյլ, անպտուղ, անզոհաբերող է այդ հայրենասիրութիւնը:

Եւ հենց այդ է պատճառը, որ մեզանում «հայրենասէր» համարուածն էլ վտանգի ժամանակ իր հայրենիքը թողել է կրակների մէջ եւ փախել վատօրէն:

* * *

Վերացական է հայկական հայրենասիրութիւնը: Շատերը հայրենիքը փնտռում են ամպերում, միստիկ մշուշի մէջ, երբ դա այնքա՜ն մօտ է մեզ՝ մեր ուշադրութեան, նուիրումին, պաշտամունքին կարօտ: Շատերի համար՝ Հայաստանը դեռ մի գաղափար է, մի ամնեզիա, մի սիոն, մի զոհասեղան:

Մոռանալով այն, որ է՛, որ ապրում է, որով սիրելի է, սուրբ՝ նմանները Հայաստանի փոխարէն պատկերում են մի ինչ-որ կին՝ սեւերի մէջ, հերարձակ նստած ճամբաների եզրին կամ աւերակների վրայ: Մի շքեղ տեսիլք, մի երազ, մի քարտէս, բայց ո՛չ մեր ցեղը եւ Հայրենիքը:

Այսպէս, վերացականօրէն խորհելով ու խօսելով Հայաստանի մասին՝ հայը մառախլապատում է ո՛չ միայն «հայրենիք» հասկացողութիւնը, այլ եւ՝ իր ազգային պարտականութիւնն ու պատասխանատուութիւնը: - Հայաստանը կարօտ է կոնկրետ ու կենդանի հայրենասիրութեան:

* * *

Հայոց հայրենասիրութիւնը կրում է տօնական, հանդիսային, ազնուապետական բնոյթ:

Դա յարմար է հռետորութեան եւ տաք սեղանների շուրջը շաչող բաժակաճառերի, բայց ո՛չ եւ Հայաստանին ու հայութեան: - Հայաստանը պէտք ունի հանապազօրեայ եւ զոհայօժար հայրենասիրութեան:

Գռեհիկ, անհայրենասիրութեան աստիճան գռեհիկ է ոմանց հայրենասիրութիւնը: Վերջերս մէկը գրեց. «Հայրենիքն է անհատի համար, եւ ո՛չ թէ անհատը՝ հայրենիքի»: Դա նշանակում է՝ հայրենիքը համարել միջոց, անհատը՝ նպատակ: Դա ասել է՝ երբ վտանգ կայ, թո՛ղ կործանուի հայրենիքը, միայն թէ ապրի անասնահոգի անհատը: Նման հայրենասիրութեան եւ անհայրենասիրութեան միջեւ տարբերութիւնը բառային է միայն:

- Մեր հայրենիքի դժբախտութեան ներքին պատճառներէն գլխաւորը - դա հայ մարդու օրուայ ստահայրենասիրութիւնն է:

Ինչո՞ւ եւ մինչեւ ե՞րբ այդպէս:

Ինչո՞ւ հայկական կազմակերպութիւններից ու հաստատութիւններից շատերը դարձել են կեղծիքի դպրոց:

Ինչո՞ւ - որովհետեւ օրուայ հայը մնում է կտրուած իր էաբանական արմատից, իր խորքից - իր ցեղից: Դա դեռ չի՛ հասկացել, որ ինքը, իբրեւ մարդկային անհատ, ծնունդն է որոշ ժառանգականութեան ու միջավայրի - Ցեղի եւ Հայրենիքի. չի՛ գիտակցել, որ ամէն մարդ իր ցեղից է ժառանգում իր ֆիզիքական եւ հոգեկան առանձնայատկութիւնները եւ որ իր հերթին նա էլ իր տաք արիւնը - իր պոտենցիալ անմահութիւնն է կտակում՝ Յաւիտենականին, որպէսզի որոշ ոգի եւ դիմագծութիւն ստանան հայոց գալիք սերունդները: Սեղմ ասած՝ որ ինքը, իբրեւ մարմնահոգեկան կազմուածք՝ մի ցեղային ժառանգութիւն է: Այդ գիտակցութեան պակասի պատճառով՝ զզուելիօրէն կարճաշունչ է օրուայ հայու հայրենասիրութիւնը - անզօր՝ նրան մեծ շարժուձեւերի ու գործերի առաջնորդելու: Պակասաւո՞ր է դա - այդ հայրենասիրութիւնը նաեւ ցեղասիրութիւն չէ - դա իր մէջ չի՛ պարփակում մեր արեան գաղափարը:

Ցե՛ղն է այս կամ այն երկիրը դարձնում հայրենիք: Հողն առանց ցեղի, ասել է՝ մարմին առանց հոգու:

Ահա՛ թէ ինչո՛ւ հայոց հայրենիք ասել է՝ հայոց ցեղաստան:

Մի ժողովուրդ, որ իր մտածումից եւ հաստատութիւններից դուրս է թողնում ցեղը՝ հոգեզրկում է իրեն, հարստահարում է իր մետաֆիզիք

էութիւնը, տկարացնում իր մշակութաստեղծ եռանդը, իր հերոսական թափը - խորապէս մեղանչում է իր գոյութեան դէմ:

Սուտ ու սնանկ է նման հոգեթափի հայրենասիրութիւնը, մեռեալ՝ իր ազգային պարտականութեան ու պատասխանատուութեան զգացումը:

Բ

Այսօր, մասնաւորապէս, երեք բան զերծ պէտք է պահել ստահայրենասիրութեան պղծանքից - հայ խաչը, մանուկը, գիրը:

Ազգերը չունեն աւելի ճակատագրական պաշտօնեաներ, քան իրենց եկեղեցին, դպրոցը եւ մամուլը վարողները:

Կղեր, ուսուցիչ, խմբագիր - մեծագոյն օրհնութիւն, եւ չարիք միաժամանակ: Օրհնութի՛ւն են, երբ ցե՛ղն է վարում սրանց խղճմտանքը, անէ՞ծք, երբ ցեղից չեն առնում իրենց ներշնչումները:

Պղծադաւան է այն հոգեւորականը - որով եւ՝ ամենավտանգաւորը ազգի ներքին թշնամիներէն, եթէ իր վարած եկեղեցին նա չի դարձնում նաե՛ւ ցեղի տունը:

Սփիւռքի հայոց եկեղեցիներից շատերում, յուրախութիւն թուրքի եւ բոլշեւիկի, դեռ ցեղը տեղ չունի: Նման հաստատութիւնները կարող են ծառայել ամէն բանի, բայց ոչ Աստծուն եւ Հայրենիքին:

Պաշտօնապղծութիւն է կատարում ուսուցիչը, որի մարգարէն ցեղամերժ Մարքսն է, Լենինը:

Նմանը՝ ո՛չ թէ մտածումով, զգացումով ու գործով հայեր, այլ՝ հայօրէն սատակներ կը հասցնի վաղուայ համար:

Հապա անցեղաշունչ թե՞րթը, գի՞րքը, որոնց ամբողջ հայկականութիւնը կայանում է նրանում, որ հայատառ են:

Հայրենիքի եւ հայրենասիրութեան մասին աղմկում են նմաններն էլ, առանց անդրադառնալու, որ պղծութիւն է կատարում ամէն անհատ, կազմակերպութիւն, հաստատութիւն, որի մտածումի, զգացողութեան ու գործերի մէջ ցեղը տեղ չունի, բայց եւ այնպէս՝ խօսում է ազգի եւ հայրենիքի անունից: Հոգեւոր չարաշահութի՛ւն եւ անբարոյականութիւններից ամենազազրելի՛ն է դա: Սրա՛նք են խաթարում մեր ազգային ոգին, մտածողութիւնը, նկարագիրը:

* * *

Հայրենիք սիրել, ասել է՝ խորազգալ, խորհել ու գործել ա՛յն, որ անհրաժեշտ է ցեղի եւ հայրենիքի հզօրացման եւ յաւերժացման համար:

Ցե՛ղն է մեզ օժտում յաւիտենականի զգացումով: Անցեղակրօնը միշտ էլ ենթադրում է յաւիտենական զգացումից զուրկ արարած: Իսկ նմանը, ըստ իմաստասէր Ֆիխտէի, «սէր չունի ո՛չ իր անձի, ո՛չ էլ իր հայրենիքի հանդէպ»:

Սիրե՞լ - սիրում են ե՛ւ շուկան, ուր կարելի է շահել. սիրում են դրամը, հաճոյքը, յարմարութիւնը - անցողական սակաւարժէք հազար ու մէկ բաներ:

Իսկ Հայրենիքը - դա, իբրեւ գերագոյն արժէք - պատկանում է սրբազան այն առարկաների կարգին, որոնք պաշտւում են նաե՛ւ: Սիրում ենք շա՜տ բաներ, բայց արիւն չենք թափում նրանց համար: Հայրենիքը, սակայն, պահանջում է ո՛չ միայն մեր սիրտը, այլեւ՝ մեր արիւնը, երբ դա անհրաժեշտ է իր գոյութեան համար: Սէրն աւելի իրաւունք է ճանաչում, պաշտամունքը՝ պարտականութիւն: Մարդիկ աւելի հեշտ են համերաշխում, միաբանում պաշտամունքի, քան սիրոյ մէջ, որի առարկաները բազում են, մեծ մասամբ՝ հասարակ: Ընդհանուր պաշտամունքի դէպքում՝ ժողովրդի մտածումն ու գործը ընթանում են ներդաշնակ: Ինչ որ է ժողովրդի հասկացողութիւնը իր հոգեւոր էութեան, նոյնն է դա իր հայրենիքի մասին:

Նիւթապաշտի հայրենիքը՝ մի երկրամաս է լոկ եւ ուրիշ ոչինչ: Նմանը սիրում է իրեն կերակրող ու պատսպարող երկիրը, եւ այդ սահմանափակ, գրեթէ նախնական սէրը անուանում է հայրենասիրութիւն, որն ունի կենսաբանական, բայց ոչ ե՛ւ հոգեւոր հիմքեր:

Գաղութահայութեան օրուայ պառակտեալ վիճակը ապացոյց եւ արդիւնք է ընդհանուր պաշտամունքի պակասի: Անցեղակնիք խմբակցութիւններն ու հաստատութիւնները շարունակում են ստահայրենասիրութիւնը գործածել իբրեւ կեղծիք, շպար, որով՝ է՛լ աւելի ամբոխացնում են ու ցրում մեր ժողովուրդը, երբ դա այսօր այնքա՜ն կարիք ունի միանալու ցեղը խորհրդանշող մի հատիկ դրօշի տակ:

Հաւատա՛նք - Հայաստանից դուրս էլ հայը հա՛յ կը մնայ, եթէ մնաց կապուած իր ցեղի ճակատագրին: Իսկ դրա համար՝ օր, ժամ, վայրկեան առաջ հայոց բառարաններից սրբենք հայրենասէր եւ հայրենասիրութիւն սնամէջ բառերը:

Հայրենիքին, որ ասել է՝ ե՛ւ ցեղին - վայել է խոր պաշտամունք. նրան հայրենապաշտնե՛ր են պէտք, որպիսին դառնում են ցե՛ղը, միայն ցե՛ղը դաւանողները:

Այո՛, առանց ցեղասիրութեան չկա՛յ ճշմարիտ հայրենասիրութիւն:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 11, 12

ՊԱՏԵՐԱԶՄ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ

Ա

Մարդկային ցեղերի պատմութեան մէջ նախընթաց չունի օրուայ պատերազմը:

Հիներից դա տարբերւում է ո՛չ միայն իր չափակէտով եւ իր գործադրած տեխնիքական նորագոյն զէնքերով, այլեւ՝ իր բնոյթով, առաւելապէս իր բնոյթով:

Դա իրապէս համաշխարհային է, եւ այդ ո՛չ այն պատճառով, որ սպառնում է, օր ըստ օրէ, բռնկեցնել մեր Երկրագնդի նաեւ այն մասերը, որոնք դեռ դուրս են մնում հրդեհից, այլ՝ որ իր հետապնդած նպատակները կրում են համաշխարհային բնոյթ: Նախկինները, իրենց ռազմադաշտի թէ լուծելիք խնդիրների տեսակէտով, տեղական էին:

Օրուայ պատերազմը, ըստ իր իդէոլոգիայի, մի յեղափոխութիւն է, միաժամանակ:

Այսօր, ռազմաճակատներում չափւում են ո՛չ միայն երկու տեխնիկաներ, այլեւ՝ երկու գաղափարներ, երկու աշխարհայեցողութիւններ, երկու աշխարհներ: Անցեալ պատերազմը - որ համաշխարհային էր միայն իր ծաւալի, բայց ոչ ե՛ւ իր առաջադրութեանց տեսակէտով - զօրեց եսականօրէն լուծել մասնակի խնդիրներ ու վէճեր միայն, որով եւ պատճառ դարձաւ պատմութեան մէջ չտեսնուած մի ծանր տագնապի՝ կեանքի բոլոր մարզերում:

Նորն, ընդհակառակը, առաջադրած է՝ իր բոցերի մէջ մոխրացնել մի ողջ անցեալ, մի աշխարհ:

* * *

Ո՞վ սկսեց պատերազմը, որի՞ն է պատասխանատուութիւնը,- անտեղի հարցումներ:

Մեղաւորը նա՛ է, ով ձգտում էր տեւականացնել գոյութիւն ունեցող status quo-ն, որում միեւնոյն Երկրագնդի վրայ, կողք-կողքի ապրում են երկու տարբեր աշխարհներ - մէկը վայելքի, միւսը՝ աննախընթաց զրկանքների, մէկը՝ տէր իր ճակատագրին, ժպտում է գոյութեան, միւսը՝ գերի կամ կիսագերի, անիծում իր օրը. մէկի մականի տակ անսահման գաղթավայրեր՝ իբրեւ միջոց, ելք իր մարդկային դինամիզմի համար, միւսը՝ դատապարտուած խեղդուելու իր երկրի նեղ սահմաններում, որով եւ՝ ենթակայ յաճախակի դասակարգային ցնցումների:

Զրկանքների կիսաշխարհում տառապող ու ցեղօրէն վատասերուող

ազգերին իբրեւ ելից հնար թողնուած են՝ արտաքին թշնամիների համար այնքան ցանկալի՝ ներքին իրերակերութիւնն ու պատերազմը, որ արդիւնք է ազգերի դինամիզմի օրէնքների: Ցեղօրէն առողջ ամէն ժողովուրդ ելք է փնտրում իր ներսը ծովացած դինամիկ ոյժերի համար:

Երջանիկ են ընդարձակ գաղթավայրերի տէր ազգերը, օրինակ՝ անգլօ-սաքսոնները, որոնք իրենց գաղութների շնորհիւ, մնում են զերծ ներքին հրաբխային լարուածութիւնից եւ պոռթկումներից: Կեղծիքի ծնունդ են «խաղաղասէր» եւ «ռազմասէր» բառերը: Ամէն ժողովուրդ, որ գոհ է օրուայ գոյավիճակից՝ դէմ է պատերազմին, եւ, ծպտումի օրէնքով, իրեն անուանում է խաղաղասէր, իր թշնամիներին՝ խաղաղութեան խռովիչ:

Սնամէջ հասկացողութիւն է նաեւ դեմոկրատիան, որի մասին եւ որի անունից այնքան խօսում է պատերազմող կողմերից մէկը:

- *Պատերազմի՛ր, որ ճանաչես թերութիւններդ,*- ասում է լատինական մի առած: Դեմոկրատիա էր Ֆրանսան, որի քաղաքական մեծ որդիներից մէկը դեռ ողբում է. «Այժմ Ֆրանսան թաղուած է իր դեմոկրատական վարչաձեւի փլատակների տակ» (Մարկէ):

Ֆրանսայում, իր դժբախտութիւնից առաջ, սխալ հասկացուած դեմոկրատիայի պատճառով, ազատասիրութիւնը վերածուած էր անիշխանական ազատամոլութեան - էլեֆտերոմանիայի:

Ստրկութիւնից նուազ զզուելի եւ վտանգաւոր չէ՛ նման ազատութիւնը, որում ամէն քաղաքացի իր երկրի հանրա-ազգային կեանքին խառնում է իր ընչաքաղց եսականութիւնը, իր բարոյական թերիները, տկարութիւնը: Իբրեւ *միջակութեան ու նախանձի վարչաձեւ՝ դեմոկրատիան* դարձաւ այն, ինչ որ են իր պաշտօնեաները: Մասնաւորապէս յետպատերազմեան տարիներում չմնաց դեմոկրատիկ մի երկիր, որի կեանքում երեւան չգար մի Ստաւիցկի: Ձեղծարարութի՛ւն - ահա՛ դեմոկրատիային յատուկ արատը: Իբրեւ զանգուած՝ դա աւելի շուտ է ամբոխանում, աւելի հեշտօրէն ենթարկւում խուժանավարութեան, դեղին մամուլին եւ խուճապի: Դա կազմալուծեց գաղղիական ազգը՝ նախապատրաստելով նրա նորագոյն աղէտը:

Բարոյական դեմոկրատիան, մարդկային արարածի անկատարելութեան պատճառով, կը մնայ երազ, ինչպէս երազ մնաց ճշմարիտ քրիստոնէութիւնը: Իսկ թուաբանական դեմոկրատիայի ղեկավարները, թուղթի վրայ, տեսականօրէն, ենթարկուելով հանրութեան կամքին, գործնականում - պառակտելով եւ աղաւաղելով ազգի ոգին - նրան ծառայեցնում են իրենց անձնական եւ խմբակցական շահերին: Մարդկային բանականութեան ու բարոյականի կողմից ժխտուած այդ անիշխանացուցիչ ու ապականարար վարչաձեւի, ինչպէս եւ իր հոգեւոր ծնող լիբերալիզմի գերեզմանի փորձ էր եւրոպական պատերազմը, իսկ թաղումը՝ այսօր, երկու տասնամեակ յետոյ, կատարում է նոր պատերազմը:

Բ

Որոշ ժողովուրդներ տգիտախառն միամտութիւն կեղծելով՝ շարունակում են անգիտանալ հետեւեալ ընկերաբանական ճշմարտութիւնը.

- Իշխանութեան այս կամ այն ձեւը արդիւնք է ժողովրդի տուեալ վիճակի, նրա կարիքների: Դա նշանակում է, որ հասարակութեան տարբեր վիճակները պահանջում են տարբեր քաղաքական կառոյցներ, որ կեանքը չի կարող յաւիտենապէս հանդուրժել միեւնոյն քաղաքական վարչաձեւը: *Կեանքի պայմանների փոփոխմամբ - ինչպէս եւ՝ քաղաքական զարգացման աստիճանով - փոփոխութեան է ենթարկւում նաեւ պետական սիստեմը:*

Այդ ճշմարտութիւնը, ինչպէս եւ մերօրեայ ազգամիջեան անցքերի իմաստը ըմբռնելու համար, անհրաժեշտ է ծանօթ լինել ժողովուրդների հոգեբանական առանձնայատկութիւններին: Վերջինների ցեղային նկարագրերի ուսումնասիրութեամբ զբաղուող գիտութիւնները ժողովուրդներին բաժանում են երեք կատեգորիայի՝ *իմացական, կամային եւ ոչ-տիպիկ,* այսինքն՝ այնպիսիների, որոնց մօտ իմացականութիւնն ու կամքը հաւասարակշռում են իրար:

Գոյութիւն ունեն նաեւ *հոգեպէս դեռ անկերպարան* ժողովուրդներ: Որքան ցեղեր, այնքան տարբեր նկարագրեր, որոնց վրայ ժողովուրդները կաղապարում են իրենց հաստատութիւնները: Օրինակ՝ անգլիացին մնում է հաւատարիմ իր ազգային էութեան, երբ ասում է. «Անգլիոյ համար գոյութիւն չունեն յաւիտենական բարեկամն ու թշնամին. նրա համար յաւիտենական է իր շահը միայն»: Գերազանցօրէն օգտապաշտական է այդ ժողովրդի հոգին: Դա չի սիրում խաչ, կարեկցանք դնել իր քաղաքականության մէջ: Գիտութիւն, ճշմարտութիւն, սկզբունք - սրանք միայն ա՛յն չափով արժէք ունին, ինչ չափով որ ծառայում են իր կեանքի բարելաւման (Բեկոն, Միլ եւ այլն): Այլ նկարագրի տէր է ֆրանսացին: Իսկ գերմանացի՞ն - դա անգլիացուց տարբերւում է ճիշդ այնպէս, ինչպէս անգլիացի Մարլօուի Ֆաուստը տարբերւում է Գէոթէի Ֆաուստից: Երկուսի Ֆաուստներն էլ կախարդ են, որոնցից մէկը, սակայն, ձգտում է գիտութեան միջոցաւ իշխանութիւն ձեռք բերել բնութեան եւ մարդկանց վրայ՝ անձնական շահի համար, իսկ միւսը - գերմանականը - հանդիսանում է զուտ գիտութեան խանդավառ սպասարկուն՝ գիտութեան համար*:

---

* *Պրոֆ. Ա. Ռէյմերս:*

Այսպէս, ժողովուրդները ո՛չ միայն քաղաքական եւ տնտեսական մրցորդներ են, այլեւ՝ հոգեբանական հակոտնեաներ: Սրանով պիտի բացատրել պատերազմող թէ չէզոք մնացած ժողովուրդների ներքին կարգն ու սարքը: Տարբեր նկարագրերի արդիւնք է նաեւ նրանց օրուայ կեցուածքը: Ահա՛ թէ ինչո՛ւ պատերազմող կողմերէն մէկի ճիգը՝ իր վարչաձեւը - դեմոկրատական - ուրիշներին պարտադրելու փորձը պիտի համարել հաւասարապէս հակագիտական եւ հակամարդկային: Ո՞ր, ո՞ր դեմոկրատիան, քսան տարի առաջ, մատը մատին զարկեց փրկելու Յունաստանը, երբ սրա զօրքերը դեմոկրատիայի թշնամի քեմալականների կողմից ծովը կը թափէին: Հապա հայկական դեմոկրատիա՞ն - ո՞ր դեմոկրատիկ պետութիւնը գէթ քրիստոնէական կարեկցանքի մի շարժուձեւ կատարեց, երբ թուրքերը 1920-ին հրով եւ սրով մեր հայրենիքը մտան:

Դեմոկրատիա՞ է օրուայ Թուրքիան, որի փէշերը լիզելու աստիճան նուաստացաւ ֆրանսական դիւանագիտութիւնը եւ որի կողքին իբրեւ զինակից ծառայած է աշխարհակալ Անգլիան: Չէ՛, չէ՛, մարդկութեան մի մասի համար այլեւս դժոխքի վերածուած, հին աշխարհի պաշտպանութեան ի խնդիր իրենց սուրը մերկացրած ազգերը ամենուրեք զինակից են փնտռում եւ ո՛չ թէ դեմոկրատիա:

Պատերազմը պայթեց ո՛չ թէ վարչաձեւերի տարբերութեան - որ այնքան բնական է ու հասկանալի - այլ այն պարզ պատճառով, որ «դեմոկրատիա»ներից մէկը իր մեծութիւնը, բարօրութիւնն ու ապահովութիւնը մարդկութեան մի մասի թշուառութեան վրայ կառուցած, դեռ շարունակում է քաղաքա-տնտեսապէս չարաշահել նրա տկարութիւնը:

Այդ տեսակէտով՝ *օրուայ պատերազմը պատահական բան չէ եւրոպական մարդկութեան զարգացման պրոցեսում, այլ՝ հենց այդ պրոցեսի տրամաբանական արդիւնքը:*

Գերման օրուայ բանակի հոգեւոր առաջնորդները հանդիսանում են Հեգելն ու Ֆիխտէն - Ոգու եւ յաւիտենականի փիլիսոփայ-քարոզիչները:

Զօրահրամանատար եւ զինուոր - սրանց վրայ փողփողում են *դրօշակները մի նոր աշխարհի:*

Հերոսական ռազմախանդով լեցուն՝ սրանք զինուորներն են *մի նոր ճակատագրի, մի մեծ յեղափոխութեան, որ Նազովրեցուց յետոյ առաջին անգամ է տեղի ունենում մեր Երկրագնդի վրայ:*

Ա՛յս բանակին է դրուած մի ամբողջ Դարաշրջանի հետ կապուած խնդիրների լուծումը - մի դարաշրջան, որի մայրամուտին պիտի հետեւի արշալոյսը մի աւելի՛ մարդկային, աւելի՛ արդար աշխարհի:

Գ

Պատերազմող կողմերի հետապնդած նպատակներն են բնորոշում նրանց յաղթանակի վեհութիւնն ու արժէքը:

Չհարցնենք, թէ ո՞վ կը յաղթէ այս պատերազմում, այլ՝ թէ ո՞վ կը շահի ճշմարիտ յաղթանակի դափնին:

Անցեալ պատերազմում «յաղթանակ» կար, բայց ո՛չ ճշմարիտ յաղթանակներ: Քարիւղը - ահա՛ թէ ի՛նչը հռչակուեց իբրեւ մեծագոյն հերոս: Այդ յաղթանակն արդիւնք էր մեռեալ թուի, թուական գերազանցութեան, չափուողներից մէկի՝ հացի, միւսի՝ քաղցի եւ ո՛չ հետապնդուող նպատակների վեհութեան ու սրբութեան: Դա - այդ բարոյազուրկ յաղթանակը եկաւ փոխելու միայն աշխարհի քարտէսը, նրա գոյներն ու գծերը, եւ ո՛չ աւելին:

Ճշմարիտ յաղթանակ չէ՛ թշնամուն նիւթապէս զինաթափելը, նրան՝ որոշ ժամանակի համար, վերստին զէնքի դիմելու հնարաւորութիւնից զրկելը: Մեր օրերում, երբ այլեւս պատերազմները կրում են համաշխարհային բնոյթ, այս կամ այն պատերազմող կողմի յաղթանակը պիտի համարել ճշմարիտ, երբ դա արդար է, երբ ծառայում է երկարատեւ խաղաղութեան, երբ զինաթափելով պատերազմող անարդար կողմը՝ նպաստում է դրա մարդկայնացման, երբ նուազեցնում է մարդկային տառապանքի պատճառները, սատարելով միջազգային բռնութեան չարութեան, եսականութեան բարձումին, եւ այսպիսով ժողովուրդների համար անկաշկանդ զարգանալու եւ ստեղծագործելու կարելիութիւն ստեղծում:

Ի մի բան՝ *ճշմարիտ է յաղթանակը, երբ դա շահեցնում է ո՛չ միայն յաղթանակի հայրենիքը, այլեւ անհրաւուած բոլոր հայրենիքները:* Եթէ անցեալ պատերազմում յաղթանակէր գերման ազգը՝ նրա զէնքի յաջողութիւնը պիտի չհամարուէր ճշմարիտ յաղթանակ, որովհետեւ նա, իր հետ, իբրեւ զինակից ու նպատակակից, ունէր թուրքը:

Պատերազմող կողմերի հետապնդած նպատակներո՛վ է բնորոշւում նրանց յաղթանակի բարոյական մեծութիւնն ու արժէքը: Չի՛ կարելի Նոր Եւրոպայի՝ նոր մարդու եւ մարդկայնութեան մասին խօսել, եւ թուրքի զինակցութիւնը փնտրել: Աւելին, վաղուայ աշխարհի շահը պահանջում է թրքութիւնը դնել մի այնպիսի դրութեան մէջ, որ դա անկարող լինի նորանոր չարիքներ նիւթել իր արիացեղ հարեւանների դէմ, որ դադարի օգտուել եւրոպական պետութեանց ներքին հակամարտութիւններից՝ իր ձեռքում պահելով իրեն միջազգային կշիռ ընծայող նեղուցներն ու Պոլիսը:

Ահա՛ թէ ինչո՛ւ, մարդկօրէն մօտենալով *«ո՞վ կը շահի ճշմարիտ յաղթանակի պսակը»* խնդրին, պատասխանում եմ - նա՛, ով մեռնող հին Եւրոպային կապուած գորդեան հանգոյցների հետ՝ կը լուծի նաե՛ւ Պոլսի պրոբլեմը, ով այս պատերազմում գլուխ կը հանի այդ երբեմնի Բիւզանդիոնի ապաթրքացումը:

* * *

Մեր Երկրագնդի վրայ չկա՛յ աշխարհագրական մի այլ կէտ, որի հետ կապուած լինէին՝ մարդկային անուան ամօթ բերող այնքա՜ն չարիքներ, չարագործութիւններ, որքան՝ Պոլսի: Ազգերէն ամենախառնարիւնը ու բռնակալութիւններէն ամենաանասնականը - թուրքը: Եւ հենց *«Պոլիսն ու Պոլսի թրքութիւնն է եղած ցարդ ղեկավարն ու ճարտարապետը Օսմանեան պետութեան»* (պրոֆ. Մ. Մինասեան):

«Թրքութիւնը,- ըստ Շըվիլի,*- Արեւելքի մէջ տիրող դերը կատարած ժամանակ այնչափ խառնարիւն խումբ մըն էր դարձած, որուն նմանը հանդէս եկած չէ՛ աշխարհի մէջ որեւէ տեղ»:*

«Բիւզանդիոնը տեղի տուեց ո՛չ թէ սարակինացւոց կամ թրքաց առջեւ, այլ՝ յոյն եւ սլաւ արիւնէ ռազմիկներու առջեւ» (պրոֆ. Շըվիլ):

«Յոյներ, թուրքեր, սերբեր, բուլգարներ, ալբանացիներ, հայեր, վալախներ, հունգարացիներ, գերմաններ, իտալացիներ, ռուսներ, թաթարներ, մոնգոլներ, չերքեզներ, վրացիներ, պարսիկներ, սուրիացիներ, արաբներ - ասոնք էին նախնիքը օսմանացւոց» (Գիբբոնս):

Ըստ Լորդ Իվրսլիի՝ օսմանեան աշխարհակալութիւնը հանդիսանում էր Փոքր Ասիոյ ոչ-թուրք ժողովուրդներից հաւաքուող զինուորութիւնը - *«Հարազատ օսմանացի թուրքը չէր, որ յաղթանակէ յաղթանակ տարաւ սուլթաններու բանակներն ու նաւատորմիղը, ո՛չ ալ ինքն էր, որ վարեց ու պահեց զայն դարեր ամբողջ, այլ՝ հպատակ, ոչ-թուրք ժողովրդոց զաւակները, եւ երբեմն Բիւզանդական Կայսրութեան ծառայող հայ ազնուականութիւնն ու զինուորականութիւնը»:*

«Գրեթէ միշտ քրիստոնեայ դաշնակիցներու ոյժովն ու հարստութեամբ էր, որ թուրքը նուաճեց քրիստոնեաները» (պրոֆ. Ռամսէյ):

«Նախկին քրիստոնեայ տղաներէ կուգային ո՛չ միայն զինուորութիւնը ամբողջ բանակին - ենիչէրիներ եւ Բ. Դրան զինուորներ, այլ՝ այս տղայոց շարքերէն կուգային մարդիկ, զորս սուլթանը կը կարգէր իր թագաւորութեան բոլոր վարչական կարեւոր պաշտօններուն մէջ, սկսելով վեզիրէն: Բացի սուլթանէն, հազիւ թէ մէկ հատ իսլամածին մարդ գտնուէր այն դասակարգերուն մէջ, որոնց կը վստահուէին կառավարութեան գործերը սուլթան Սիւլէյմանի ժամանակ: Նախկին քրիստոնեաներն էին, որ կը շարժէին սուրն ու մականը միանգամայն» (պրոֆ. Շըվիլ):

Քրիստոնէածին տղաների հարկահաւաքութեան այդ անմարդկային արարքն է մղել Ֆրիմընին գրելու հետեւեալը.

«Սատանայի կամ մարդուս խորամանկութիւնը երբեւէ չէ կրցած հնարել այնպիսի սոսկավիթխար մեքենայ մը բռնակալութեան»:

Այո՛, այդ սոսկավիթխար չարագործութեան շնորհի՛ւ միայն Պոլիսը յաջողեց այնքա՜ն ցեղերի բազմադարեան ստրկութիւն ու տառապանք պարտադրել: Հարկահաւաքութեան այդ դիւային ձեւի միջոցաւ, նա - իբրեւ վայրագ, որով եւ՝ երկչոտ ու աւերիչ - անճիտեց ամբողջ ցեղեր, գլխատեց ժողովուրդներ, մոխրացրեց հազարամեայ մշակոյթներ, իր չարաշուք մականի տակ ապրող քրիստոնէութիւնը դարերով զրկեց իր *«հուժկու եւ ամենէն գեղեցիկ զաւակներէն, ամենէն կորովի մարմնակազմ ու ամենէն սուր իմացական կարողութիւն ունեցողներէն, այնպիսիներ, զորս բնութիւնը նախասահմանած էր առաջնորդներն եւ ազատամարտ հերոսներն ըլլալու իրենց ցեղին»:* Վատասերած՝ նա ծնաւ ոճրագործներ, մարդատիպ հրէշներ ու ապուշներ, իբրեւ գահակալներ, իր անասնական կրքերի - անգամ շնութեան վրայ, դրեց ալլահի հաստատութեան կնիքը: Պղծեց ո՛չ միայն իր կոխած երկիրների երեսը, այլ եւ՝ երկինքը, ուր փոխադրեց իր պոռնկաշունչ արքայութիւնը: Եղաւ ու մնաց սադիստ, հասցնելով մասնաւորապէս մեզ՝ հայերիս «հազար տեսակի զէնքի խոց»: Քառորդ դար առաջ, դա յղացաւ ծրագիրներէն ամենադիւայինը - բնաջնջել մի հինաւուրց ազգ, որ դարերով ու դարերով բարիք ու լոյս էր սփռել իր շուրջը: Յղացաւ ու գործադրեց: Եւ արմէնների երեք հազարամեայ հայրենիք Հայաստանը դարձաւ մեռելաստան՝ իր մէկ ու կէս միլիոն զաւակների համար:

* * *

Եւրոպական երեք մեծ ազգերի ընտրանին վաղուց է դատել թուրքը, դատել բարոյապէս:

Գերման մեծագոյն փիլիսոփան՝ Կանտ այսպէս է ներկայացրել թուրքը. *«ժողովուրդի մը համար յայտնորոշ նկարագիր մը իւրացնելու տեսակէտէն՝ Եւրոպական Թուրքիա կոչուածը երբեք չեղաւ, եւ ո՛չ ալ պիտի ըլլայ»:*

Աւելի խիստ է ֆրանսացի ծանօթ պատմագէտ Ժորժ Մորգանի դատաստանը. *«Որքան ծանրապէս կը սխալին անոնք, որ հակառակ ամէն բանի, տակաւին կ'ըսեն, թէ թուրք ժողովուրդը ուղղելի է, թէ պէտք չէ ջնջել իր անունը քարտէսի վրայէն»:*

Արդարագոյնը, սակայն, կը մնայ անգլիացի Բրայսի դատաստանը. *«Թուրքիան առ յաւէտ պէտք է դադարի կառավարելէ ուրիշ կրօնի պատկանող ժողովուրդները: Թուրք կառավարութիւնը դարերէ ի վեր*

մարդկութիւնը տառապեցնողներուն ամենէն զարհուրելին եղած է: Թուրքերը միշտ եղած են, ինչ որ նախորդ սերունդին պատկանող նշանաւոր պատմաբան մը զանոնք անուանած է՝ գողերու խմբակ մը»:

Ահա՛ թէ որոնցի՛ց պիտի ազատել մարդկութեան տառապող ցեղերից շատերը: Ահա՛ թէ ինչո՛վ եւրոպական մի որեւէ պետութիւն կարող է արդար համարել պատերազմի իր նպատակը եւ յեղափոխիչ՝ իր յաղթանակը:

Պոլսի ապաթրքացումը պիտի համարել մեծագոյն յեղափոխութիւն:

Վաղուց է, ինչ մարդկային ցեղի պատմութիւնը ճշմարիտ յաղթականներ չի ունեցել: Ճշմարիտ յաղթանակի դափնին վայել է նրան, ով այս պատերազմում գործում է Արդարութեան ու Մարդկայնութեան հրամանով:

Արդար է, որ չարաչար պարտուի պատերազմող այն կողմը, որ հաշիւ ունի՝ դեռ ապրեցնել թրքութիւն կոչուած կենդանի չարիքը:

Նոյնքան արդար է, որ յաղթանակի նա, ով ուխտ ունի՝ Եւրոպայից ու Պոլսից, անդարձ կերպով, ճամբու դնելու թուրքը:

Չպատժուե՞ց թուրքն այս պատերազմում - այդ պատերազմն էլ պիտի համարել չարիք:

Չի՛ կարելի նոր, աւելի մարդկային աշխարհի մասին զառանցել՝ մեր Երկրագնդի ամենաբախտորոշ մէկ կէտի վրայ պահելով թուրքն, իբրեւ եւրոպական պետութեանց փոխյարաբերութիւններն անբարոյացնող, յաճախակի ազգամիջեան արիւնայեղութիւններ պատճառող, եւ, վերջապէս, յաւէտ զինակցութիւն կեղծող - երեկուայ իր թշնամուն այսօր բարեկամութիւն ցոյց տուող, եւ օրուայ իր զինակցին վաղը մահացուօրէն թշնամանող ոյժ:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 13, 14, 15

Ե՛Ւ ՁՈՀ, Ե՛Ւ ՁՈՀԱՐԱՐ*

Թուրքը, համաշխարհային պատերազմի օրերին, իր տկարութեան սարսափից խթանուած՝ յղացաւ ծրագիրներից ամենադիւայինը՝ բնաջնջել մի հինաւուրց ցեղ, որ դարերով լոյս եւ քրտինք էր սփռել իր շուրջը:

Յղացաւ ու գործադրեց:

Եւ մի օր, թրքահայութեան ողջակիզումի առաջին օրը, ծագող արեւը Հայաստան երկրի փոխարէն տեսաւ մի կատարեալ գեհէն:

Տեսաւ խաչի նսեմ ստուերն ընկած մեր հազարամեայ հայրենիքի վրայ: Տեսաւ, թէ ինչպէ՛ս մի խաւարասէր ազգ - վախկոտ, բայց յարձակողական, փոքրոգի եւ աւերիչ - կը հրոսէր մի անզէն ու անպաշտպան ժողովրդի դէմ՝ զայն իր պատմական հայրենիքից արմատախլելու խելագարութեամբ: Տեսաւ, թէ ինչպէ՛ս կը մոխրանային հազարամեայ օրհնութեամբ լեցուն գիւղերը մեր, կը պղծուէին եկեղեցիները, վանքերը, գրադարանները հազա՛ր: Տեսաւ խուժդուժ գործը տապարի, եաթաղանի կապարի - ամէն տեսակի եւ չափի գործիքների, որոնցմով սպանել ու աւերել կարելի է: Այլեւս Հայաստանով անցնող գետերը արիւն էին կտրել, իսկ կիրճերը՝ դիակնաստան: Տեսաւ, թէ ինչպէ՛ս իրենց ամուսինների եւ ծնողների ներկայութեան կը խլուէին ու կը բռնաբարուէին կանայք:

Գործի վրայ տեսաւ թրքական սանձարձակ շնութիւնը, որ անասուններին իսկ կը գերազանցէ: Տեսաւ սարսափից խելագար մեր աղջիկները, որոնք Եփրատի ալիքները կը գրկէին: Տեսաւ, թէ ինչպէ՛ս հայրը հաւաքեց ընտանիքն իր յարկի տակ եւ այրեց ողջ. թէ ինչպէ՛ս սովահար հայ մանուկները իրենց մորթուած մայրերի դիակներին կպած՝ ծիծ կը ծծէին:

Արեւը տեսաւ տուն, տանիք, ճամբաներ՝ արիւնով ներկուած: Տեսաւ բարձունքների վրայ, գետափներին եւ ձորերի մէջ մահուան հետ կռուի մտած արնաթաթախ հայորդիներ: Տեսաւ, թէ ինչպէ՛ս «շներն ու շնագայլերը մեր սիրելիների սրտերը կը կրծէին»: Տեսաւ իրենց գողգոթայի ճամբին անասունների պէս վաճառքի հանուած հայ կիներ ու մանուկներ, եւ լուսաւորեց խաչի ճամբան ծերերի, կաղերի, կոյրերի: Տեսա՛ւ, հայոց արեւը տեսա՛ւ այդ ամէնը, եւ խաւարեց այդ օրը:

Մի օր էլ, երբ ամէն ինչ տխրօրէն կատարեալ էր, բնութիւնը նստաւ սգալու Հայոց Աշխարհի մոխրակոյտերի վրայ...

---

* *Սույն հրապարակումը մշակված տարբերակն է «Ցեղային արթնություն» հոդվածաշարի՝ «Հայը եւ թուրքը» գլխի:*

Եւ թուրքը, եղեռնից յետոյ, սովորական շնականութեամբ ասաց եւրոպացուն. «Զարդէն վերջը աղօթք մը ըրի եւ արդարացայ»*:

Իսկ դիւանագիտական խարդաւանքների վարպետ Մոսկուան, յանձին Ռադեկի, եկաւ արդարացնելու Թուրքիոյ հայաջինջ քաղաքականութիւնը. «Իթթիհատը, իր երկրին անկախութիւնը պահելու համար, ըրաւ ինչ որ կրնար: Ան վճռեց ոչնչացնել ամբողջ հայ ժողովուրդը: Եւ կասկածէ դուրս է, որ Պոլսոյ մէջ նստած իթթիհատական ղեկավարները այս հարցին մէջ շարժեցան *պետական անհրաժեշտութեան* գաղափարով: Թուրքերի համար խնդիրը շատ սուր էր դրուած - ապրել կամ մեռնել: Անոնք նախընտրեցին ապրել**:

Այսպէ՛ս խօսեց կարմիր հրէշը՝ սեղմելով Թուրքիոյ արնոտ թաթը:

Քրիստոնեայ աշխարհն էլ լրբութիւն ունեցաւ, որպէս կարեկցանքի արտայայտութիւն, մեզ նետելու մի երկբառ նախադասութիւն՝ «մարտիրոս ժողովուրդ»:

Իսկ հա՞յը - նա տեսաւ ու զգաց հայաքանդ եղեռնի ահաւորութիւնը միայն:

Մարդկութեան հետ, սակայն, նա էլ դեռ չի չափել *վեհութիւնը* այն աստուածային շարժուձեւի, *մեծութիւնը* մարդկային ցեղի պատմութեան մէջ նախընթաց չունեցող այն գերմարդկային արարքի, որով *մեր ժողովուրդն իր կէսը ողջակիզեց՝ ցեղի հոգին, արիւնը փրկելու համար:*

Պատմութեան ծանօթ որոշ ժողովուրդներին յատուկ տկարութեամբ - ցեղուրացութեամբ - հայն էլ կարող էր փրկել իր ֆիզիքականը, բայց բիւրիցս փա՜ռք իրեն, նա չունեցաւ այդ տկարութիւնը:

Գիտակցօրէն, շատ տեղերում, թէկուզ կրաւորական հերոսացումով, նա զոհեց կէսն իր մարմինէն՝ *իր ցեղային էութեան դէմ չմեղանչելու համար:*

Նա դարձաւ իր սեփական Զոհը եւ Զոհարարը միաժամանակ:

Եւ փրկուեց ցեղը:

* * *

Սպասելի էր, որ այդ օրէն ողջ հայութիւնը փարի ցեղին, թիկունք դարձնելով ժողովուրդները հոգեւորապէս բոլշեւիկացնող ստադեմոկրատիզմին, լիբերալիզմին, սոցիալիզմին եւ գաղափարախօսական այլ կարգի հնոտի եւ սնոտի մոլորանքներին:

---

* *Մի թուրք հարիւրապետի խօսքերը՝ Ֆօն Գորդոնին:*

** *Տե՛ս բոլշեւիկեան «Նոր Աշխարհ»ի թիւ 3-ը, 1922, հոկտեմբեր, Թիֆլիս:*

Հէնց այդ օրէն հայութեան որոշ տարրերը ցեղն ընդունեցին իբրեւ միակ ապաւէն եւ սրբութիւն - դարձան ցեղակրօն:

Հայութեան որոշ մասը, սակայն - հակառակ որ թուրքը մեզ հարուածեց իբրեւ ցեղի, հայութիւնը իրեն վիճակուած անօրինակ եղեռնի ու տառապանքի մէջ առաքինացաւ իբրեւ ցեղ - մեր ժողովրդի որոշ մասը շարունակում է մնալ անցեղահաղորդ՝ գերին «եւրոպական» կապկութեանց:

Այդ որքան տխուր, այնքան ամօթալի իրողութիւնը պիտի բացատրել այն բանով, որ այդ տարրը *իբրեւ հայ* չապրեց իր հայրենիքին եւ ազգին վիճակուած անմարդկային ողբերգութիւնը, եւ մնաց իբրեւ ազգային մեր տկարութիւնը սնուցանող չարիք:

Ապրիլեան եղեռնէն յետոյ *հայօրէն խորթ եւ պակասաւոր պիտի համարել անցեղակրօն հայը:*

Օրուայ մեր ամօթանքը եւ թուրքի շահը պիտի համարել հէնց այդ հայօրէն պակասաւոր, այդ անցեղակրօն տարրերի գոյութիւնը:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 17

ՀԱՅՈՒ ՃԱՄԲԱՆ՝
ՄԵԾ ԶՂՋՈՒՄԻ ՃԱՄԲԱՆ

Ա

Կանգնէ՛ք, հսկումի՛ կանգնէք քարտէսի առջեւ, մտովի գծէ՛ք Հայաստան անունը կրող երկրի սահմանները, եւ դուք Հայոց պատմութեան ամէն մի էջի, տողի, բառի տակ, ինձ հետ պիտի կարդաք հետեւեալ ճշմարտութիւնը - *այդ ազգի կենսունակութեան գաղտնիքը նրանում է, որ նա շնչել է ցեղի միջոցաւ, որ իր գոյութեան բոլոր դարերում - ազատ թէ նուաճուած, յաղթական թէ իբրեւ վսեմ պարտեալ - ապրել է, պայքարել, ստեղծագործել ցեղօրէն, խորապէ՛ս ցեղօրէն:*

Այո՛, նայէ՛ք քարտէսին, եւ պիտի համոզուէք, որ հայութիւնը կարողացել է քայլել ժամանակների հետ իբրեւ ցեղ, եւ ոչ իբրեւ ցեղային բովանդակութիւնից դատարկուած ժողովուրդ:

Շատե՛րը, իր հասակակիցներից շատե՛րն այսօր չկան - նրանք վաղուց են չքացել մեր Երկրագնդից:

Իսկ Հա՞յը, որ ըստ որոշ պատմաբանների վաղուց անտի մեռած պիտի լինէր, անգիտանալով պատմութեան երկաթէ օրէնքները, դեռ կայ ու կը մնայ:

Գիտենք, որ *մշտատեւ վտանգն է օրօրել հայութեան մանկութիւնը: Իսկ վտանգի ենթակայ ամէն ժողովուրդ ապաւինում է իւր ցեղային արթուն բնազդին, իր ներցեղային բարոյականին:*

Գիտենք եւ այն, որ ուրիշ եւ ո՛չ մի երկիր այնքան արտաքին թշնամանք ու ախորժակներ չէ՛ գրգռել, որքան Հայաստանը:

Պատճա՞ռը - Դա համարուել է ո՛չ միայն բարեբեր ու հարուստ երկիր, այլեւ՝ իբրեւ գերազանց կարեւորութիւն ներկայացնող ռազմագիտական մի կէտ, իբրեւ երկու աշխարհամասեր իրար միացնող մի կամուրջ:

* * *

Մարդկային անհատների պէս՝ ժողովուրդներն էլ ունեն իրենց բարոյականը:

Կենսաբանօրէն բարոյական է նա, որի կեանքում ցեղի կամքը կատարում է գերագոյն գործոնի դեր, նա, ով իր ստեղծած հոգեւոր եւ նիւթական արժէքները - մասնաւորապէս առաջինները՝ կրօն, իմաստասիրութիւն, արուեստներ՝ յարմարաբար ծառայեցնում է իր ցեղի յաւերժացման, իր

երկրի ինքնապաշտպանութեան գործին: Ցեղօրէն խաթարուած է այն ժողովուրդը, որ ասում է՝ *աշխարհն է իմ հայրենիքը:*

Աշխարհ ասելով՝ ցեղօրէն առողջ ժողովուրդները հասկանում են նա՛խ իրենց կոսմիքական օրօրանը, իրենց հայրենի երկիրը:

Նմաններից է հայը, որը ո՛չ միայն իր ամբողջական երկիրը, այլեւ՝ իր երկրամասերն անուանել է աշխարհ, օրինակ՝ Այրարատեան Աշխարհ, Տարօն Աշխարհ, Սիւնեաց Աշխարհ եւ այլն:

Այդ ըմբռնումի արդիւնքն է իր մշտաթարմ աշխարհազգացողութիւնը:

Ճշմարիտ է պատմութեան միայն ցեղային (մարդաբանական) փիլիսոփայութիւնը: *Ցեղը - կոսմիքական սկզբունք է - դա նշանակում է, որ ժողովուրդների պատմութեան սաղմերը պիտի փնտրել իրենց արեան եւ երկրի բնութեան մէջ:*

Ցեղը արիւն է, որի ձայնը լռեցնել կարելի է, բայց ո՛չ եւ մեռցնել:

Ցեղը ճակատագիր է: Նրանից չի՛ կարելի խուսափել: Կարող ես Եւրոպայի գիտական փառքը հանդիսացող Այնշտայնը լինել, բայց եւ այնպէս՝ էութամբ կը մնաս հրեայ: Կարող ես Սարոյեանի պէս ամերիկեան գրող լինել, բայց չես խուսափի հարազատ ցեղէդ:

Մեր արեան մէջ դրուած է մեր ցեղի գաղափարը - հայկակա՛նը, բնազանցութիւնը, նպատակաբանութիւնը, ինչպէս եւ այդ վերջինների իրականացման համար անհրաժեշտ զօրութենականութիւնը, կարողական ոյժերը:

Ամէն ցեղ մեր Երկրագնդի վրայ կոչուած է իրականացնելու մի որոշ առաքելութիւն: Հայը պիտի չկարողանար իրականացնել գաղղիական ազգին տրուած պատմական առաջադրութիւնը, անգա՛մ այն դէպքում, եթէ ողջ հայութեան արտօնուէր ապրել Փարիզում:

Ժողովուրդն ընդօրինակող է, ցեղը՝ ստեղծագործ ինքնատիպութիւն: Իբրեւ անկրկնելի անհատականութի՛ւն՝ դա թոյլ չի տալիս ժողովրդին դիմազրկուելու եւ կորչելու «մարդկութեան» մէջ: Իբրեւ բնակենսաբանական գործօն՝ *ցեղը ներգործում է ազգութեան վրայ՝ սնուցանելով նրա արմատները: ժողովուրդը հոգեւոր ցրուածութիւն է. ազգը՝ ոգի, որի ամենակատարեալ արտայայտութիւնը հանդիսանում է հանճարը, սուրբը, հերոսը - ընտրանին, ցեղը կենտրոնացուցիչ ոյժ է:*

Առաջինին յատուկ է եսականութիւնը, երկրորդին՝ այլասիրութիւնը, երրորդին՝ նաեւ՝ մերձաւորի համար գիտակցօրէն մեռնելու ուրախութիւնը:

* * *

Ազգութեան գաղափարի թշնամին է ո՛չ միայն մեծամասնականը, այլեւ՝ ընկերավարականը, դեմոկրատը, լիբերալը: Ընկերավարութիւնը

ենթադրում է հակամարդ դասակարգեր, որ ասել է՝ պառակտուած ժողովուրդ: Ամէն ժողովուրդ, որ վերածւում է դասակարգերի, դեմոկրատիայի, յարանուանութեանց՝ մահացուօրէն մեղանչում է իր ազգային ոգու դէմ, քանդում է այդ ոգին: Նաե՛ւ՝ *ամէն պետութիւն, որ յանուն վերացական միջազգայնութեան, հալածանք է սկսում ազգային գաղափարի դէմ՝ կորցնում է իր հոգեւոր ստեղծագործութեան խանդը:* Օրինակ՝ սովետական երկրներում կայ մեռեալ շինարարութիւն, բայց ո՛չ եւ ստեղծագործութիւն. այնտեղ խօսք լինել կարող է նիւթական որոշ բարիքների, բայց երբե՛ք՝ յաւիտենական արժէքների մասին: Այսօր այնտեղ գոյութիւն ունի աղքատիկ քաղաքակրթութիւն, բայց ո՛չ եւ մշակոյթ:

Արդ թէ ինչո՛ւ հաւասարապէս արդար եւ անհրաժեշտ է, որ ժողովուրդը գիտակցօրէն եւ միստիքաբար ենթարկուի ցեղին, եթէ չի ուզում դատապարտուել հոգեւոր ամլութեան ու կորչել:

Բ

Հայաստանի ու հայութեան բոլոր թշնամիները, բոլոր դարերում, իրենց մահացու հարուածը միշտ էլ հասցրել են մեր ցեղը մշտնջենաւորող ընտրանիին:

Հազար տարի առաջ եւ հազար տարի յետոյ մեր թշնամիները - արաբ, թուրք, բոլշեւիզմ - փորձեցին սպանել ցեղը հայութեան մէջ՝ ոչնչացնելով մեր ազգի ցեղազգաց տարրերը:

Չմոռանա՛նք, չմոռանա՛նք, չմոռանա՛նք այդ իրողութիւնը, որպեսզի այսուհետեւ աւելի ջերմ պաշտամունքով փարինք մեր ցեղին, իբրեւ մեր միակ ապաւէնին, իբրեւ մեր երկրորդ աստուածութեան:

* * *

Ժողովուրդների համար - որոնք իրենց պատմութեան մէջ յայտնաբերում են այն, ինչ որ զօրութենապէս դրուած է իրենց արեան մէջ - ժողովուրդների համար խորապէս ցեղօրէն ապրելը (ներցեղային բարոյականով առաջնորդուելը) դառնում է անհրաժեշտութիւն հետեւեալ պատճառներով.

ա) երբ իրենց վիճակւում է ապրել աննպաստ աշխարհագրական միջավայրում.

բ) երբ, կորցնելով իրենց պետական անկախութիւնը, նրանք կորցնում են բնականոն գոյութեան կարելիութիւնը.

գ) երբ իրենց վտանգ կը սպառնան թուով ու քաղաքականապէս աւելի հզօր, ցեղօրէն ու կրօնապէս օտար հարեւանները եւ այլն:

Այդ իսկ պատճառներով, ահա՛ հայութիւնը իր պատմութեան ողջ ընթացքին, հանդէս է եկել իբրեւ *ցեղավար ժողովուրդ:*

Այսպիսի՛ն էինք, թէկուզ մեր անկախութիւնը կորցրած, բայց ցեղօրէն արթուն, ռազմունակ եւ ստեղծագործ:

Այսպիսին էինք - ցեղավայել կեցուածքով Աւարայրից առաջ, եւ Աւարայրից յետոյ՝ մեր վարած բոլոր պատերազմներում:

Ցեղամարդ էր հայը՝ յաւիտենականի ու կատարելութեան, ընկերային արդարութեան ու հերոսականի, միութեան եւ ուղղութեան զգացումներով զօրաւոր:

Առհաւական՝ իր աշխարհիկ գուսաներգութեան եւ կրօնական շարականների, իր մատենագրութեան եւ արուեստների մէջ:

Մի եւ անբաժան էինք մտածողութեամբ, կամքով, բազուկով, որովհետեւ *ցեղը կենտրոնացուցիչ ոյժ է:*

Ա՛յս էինք մինչեւ անցեալ դարի 90-ական թուականները, երբ եւրոպական սոցիալիստների եւ ռուսական սոցիալիստ-յեղափոխականների քանդիչ ազդեցութեան ենթարկուած հայ մտաւորականութիւնը, շեղուելով ցեղային գծից, պառակտեց հայութիւնը, կասեցնելով նրա բնական զարգացումը եւ վտանգելով նրա ապագան:

Այդ օրերից, ահա՛ հայութիւնը՝ դատարկուելով ցեղային իրականութիւնից, կը դառնար վայրկեանի արտաքին շահերով ապրող ժողովուրդ՝ ատակ իր ապրած աղէտներին, եւ արժանի օրուայ իր ճակատագրին:

Օտար, փոխառիկ, կեղծ գաղափարները այլեւս պղտորել էին հայկական տոհմիկ, վճիտ - եւ իր խորքում՝ բարոյական - մտածողութիւնը:

Այլեւս հայութիւնը մի եւ անբաժանելի չէ՛ր՝ մտքով արժէքապրումով, կամքով:

Այլեւս սկսուած էր *ազգի ապազգայնացումը* - ազգաքանդութիւնը, մի բան, որ դեռ շարունակւում է մեր ապրած օրերի եւ մեր ցեղի էաբանական խորքի հետ կապ չունեցող խմբակցութիւնների կողմից:

Պարտուեց Ֆրանսան, խայտառակօրէն, որովհետեւ իր զինուորները ու զօրավարները չգիտէին, թէ ի՛նչ է նշանակում դեմոկրատիա, որի անունից օդի մէջ կը խօսէր իր կառավարութիւնը: Անբարոյ եւ ապականարար դեմոկրատիայէն ծնաւ խուժանավարութիւնը: Ազգը վերածուեց խուժանի, եւ գաղափարավար ու ցեղավար մի ժողովրդի կողմից զարնուեց գետին, նուաստութեան փոշիների մէջ, երեսի վրայ:

Այսպէ՛ս, ցեղից պարպուած ժողովուրդներին այսպէ՛ս է պատժում պատմութիւնը: Պատմութիւնը՝ դատաւորներից ամենաարդարը, աւելի անողոք եղաւ մեր հանդէպ՝ ապրեցնելով մեզ Դեր Զօրի ողբերգութիւնն ու նուաստութիւնը: Ֆրանսան - զարնուած Ֆրանսան, իր պարտութեան երկրորդ օրն իսկ գտաւ իր փրկիչը՝ յանձին իր մի զինուոր զաւակի: Ո՛չ թէ

դեմոկրատիա, այլ՝ իդէօկրատիա - գաղափարավարութիւն: Ազգերը խուժանացնող դեմոկրատիայի փոխարէն՝ վերանորոգուող ֆրանսացին այսօր դաւանում է մի նոր երրորդութիւն - Հայրենիք, աշխատանք, ընտանիք:

Իսկ Հա՞յը - քառորդ դար է անցել Դեր Զօրէն, եւ դեռ նա քարշ է գալիս մոլորանքի ճամբաներին: Շարունակւում է ազգասպանութիւնը: Եւ հայութեան որոշ մասը դեռ զգաստութեան եւ զղջումի նշաններ ցոյց չի տալիս:

Ցեղապրումից զուրկ այդ տարրերը շարունակում են մնալ իբրեւ *կենդանի դիակներ նոր ժամանակի ճամբին,* որ իր յաղթական վազքի մէջ այնքան անողոք է: Դանդաղ, շա՛տ դանդաղ է հասունանում հայ քաղաքական միտքը:

Կա՛մ վերանորոգուի՛ր, կա՛մ մեռի՛ր - գոռում է նոր օրը:

Հասկանա՛նք, քանի ուշ չէ՝ հասկանանք, որ կեանքի պէս յաւիտենական է նաե՛ւ վերանորոգումը: Իսկ *վերանորոգիչ ոյժ է միա՛յն ցեղը:*

Հոգեվերանորոգւում է ժողովուրդը՝ դառնում ազգութիւն, երբ սկսում է շնչել ցեղի միջոցով:

Ցե՛ղն է միացնում, կենտրոնացնում, ներդաշնակում ժողովուրդը կազմող մարդկային անհատներին:

Դէպի՛ ցեղը, չմեռնելու համար. դէպի՛ ցեղը, դէպի՛ *հայու ճամբան՝ մե՛ծ զղջումի ճամբով:*

«Ռազմիկ»,1941թ., թիւ 24, 25

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ

Ա

«Պատմութեան մեծ կործանարարներ» - այսպէս է որակել սուտ, մոլար գաղափարները Ֆրանսայի օրուայ մեծագոյն գիտնականներից Լը Բոնը:

Նման կործանարարներից է բոլշեւիզմը: Այդ մոլար վարդապետութիւնը ծնունդ առաւ անցեալ համաշխարհային պատերազմում ռուսների կրած պարտութիւնից, եւ այսօր, նոր պատերազմում, գերման բանակների կողմից յանձնւում է հողին:

Ամբողջ քսան տարի կրկնեցինք ու կրկնեցինք, թէ ո՛վ գիտակցաբար կամ անգիտակցօրէն *հոկտեմբերեան բունտը* համարում է յեղափոխութիւն, դա հայհոյում, անարգում է պատմութեան ծանօթ բոլոր յեղափոխութիւնները:

Դա ամէն ինչ էր - պարտուածների բունտ, աստուածամարտութիւն, հոգեւոր վայրենացում, դարձ դէպի հեթանոսութիւն, պետական բանդիտիզմ, զանգուածային աւազակութիւն - բայց ո՛չ եւ յեղափոխութիւն՝ քաղաքական ու սոցիալական իմաստով:

Ազգերի յառաջադիմութեան զարկ տուող յեղափոխական ցնցումները միշտ էլ եղած են *լաւերի յղացում, լաւագոյնների գործ:* Ճշմարիտ յեղափոխութիւնը ծնունդ է առնում ոգուց, ոգու մարդկանցից, ընտրանիից: Ռուսականը արդիւնք էր վատերի ու վախկոտների - պարտականութեան ճակատից փախած զինուած խուժանների եւ դիւաբախ ու տգէտ խուժանավարների:

Դա պարտութեան, որով եւ՝ տկարութեան ու նուաստութեան յեղափոխութիւն էր: Ճիշտ է նկատել ռուս փիլիսոփայ Բերդեաեւը - բոլշեւիկեան յեղափոխութիւնը իբրեւ համաշխարհային պատերազմի մի դրուագ՝ ռուս ժողովրդի համար ունի, ամէն բանից առաջ, մի դառն ու նուաստացուցիչ իմաստ, ա՛յն է, որ նա չկարողացաւ տոկալ պատերազմի մեծ փորձութեան եւ դուրս եկաւ սնանկ: Այո՛, *դա հոգեւոր սնանկութեան յեղափոխութիւն էր:*

* * *

Այն իրողութիւնը, որ բոլշեւիկները հոկտեմբերեան բունտի հէնց առաջին օրերին, բացելով բանտերի դռները - այդ բանտերը բաստիլիա չէին - իրենց շարքերին միացրին հարիւր հազարի չափ գռեհիկ

յանցագործներ - այդ պատմական իրողութիւնը լրջագոյն հաստատութիւն է այն մասին, որ *բոլշեւիզմը ո՛չ թէ քաղաքական, այլ՝ ախտաբանական երեւոյթ է:*

Հաւանական ամէն հակահարուած անկարելի դարձնելու նպատակով՝ կեանքի կոչուեց ամենակուլ Չեկան՝ միահեծան տէրը աշխարհի մի վեցերորդ մասի վրայ ապրող ժողովուրդների հացի եւ ճակատագրի:

Բռնութիւնը հռչակուեց նորաստեղծ «պետութեան միստիկ բանականութիւնը»: Հազար շրթունքներով քարոզուեց բռնութեան պաշտամունք, մշակուեց բռնութեան կախարդանքը:

«Թող կորչի՛ ռուս ժողովրդի 9/10-ական մասը, բաւական է որ մի տասներորդականն ապրի մինչեւ համաշխարհային յեղափոխութեան մոմենտը» (Լենին):

«Անկցի՛ սէրը դէպի մերձաւորը. մենք պէտք է ատենք. մենք պէտք է աւելի ատել գիտնանք - միայն այսպէս՛ւ կարելի է նուաճել աշխարհը: Մենք ատում ենք քրիստոնէութիւնը, որովհետեւ նրանք կարեկցանք են քարոզում» (Լունաչարսկի):

«Ո՛չ մի յեղափոխութիւն հնարաւոր չէ, քանի դեռ գոյութիւն ունի ընտանիքը. քանդեցէ՛ք, քանդեցէ՛ք դա» (Կոմինտէրն):

Կրօնը յայտարարուեց «գերագոյն յիմարութիւն». եւ ատէիզմ ասելով բոլշեւիկները հասկացան ո՛չ միայն անաստուածութիւն, այլեւ՝ թշնամախառն անհաւատութիւն դէպի ոչ-համայնավար մարդը: «Բարոյական է,- կը պատգամէր Լենինը,- ամէն բան, որ օգտակար է կոմունիստ կուսակցութեան»: Սրա արդիւնքը եղաւ այն, որ «պրոլետարական դիկտատուրա»ի դեռ առաջին տասնամեակում Ռուսաստանում կային 25 անգամ աւելի բանտեր, քան գոյութիւն ունէին Ցարի օրով: Հապա կոնցենտրացիոն լագերնե՞րը, ուր նահատակուեց ռուս մտաւորականութեան ամենահիդէալիստական մասը. արհեստական սովե՞րը, Չեկայի կողմից բեմադրուած «ապստամբութիւննե՞ր»ը, զանգուածային ջարդե՞րը, կղերականութեան գողգոթա՞ն, սպայութեան ոչնչացո՞ւմը եւ այլ մութ չարագործութիւններն ու կատակոմբնե՞րը, որոնց մասին դեռ ոչինչ գիտէ արտաքին աշխարհը:

Դաժանութեան ու ոճիրների գործում բոլշեւիկներն ունեն իրենց հոգեւոր պապերը - թուրքերը:

Այսպէս, տեւական սարսափով, ջարդերով ու սովերով ստեղծուեց արեան ռեժիմը, որը մի տասնամեակի ընթացքում աւելի տառապեցրեց մարդկութիւնը (ինչպէս եւ՝ աւելի անբարոյացրեց նրա որոշ տարրերը), քան պատմութեան ծանօթ որեւէ մութ հարիւրամեակ:

* * *

Ի՞նչ է բոլշեւիզմը իբրեւ քաղաքական վարդապետութիւն: - Հոգու եւ մտքի ապականարար՝ ամէն բանից առաջ, պատմական նիւթապաշտութիւն. աւելի պարզ՝ մարքսեան աշխարհըմբռնում, ըստ որի՝ ամէն բանի բազան նիւթեղէն է, ամէն ինչ՝ նիւթ. կրօն, արուեստ, բարոյական՝ սրանք միայն «վերնաշէնքեր» են եւ ուրիշ ոչինչ: Դա վճռական ժխտումն է պատմութեան իդէալիստական բացատրութեան:

Բնագիտական այդ գռեհիկ բացատրութեամբ, բոլշեւիկները վճռաբար ժխտեցին բարոյականը, ընտանիքը, հայրենիքը, անգամ ոչ-մարքսեան փիլիսոփայութիւնը: «Մարդս այն է, ինչ որ ուտում է» - խոզային այդ վարդապետութեամբ՝ նրանք փորձեցին խաթարել մարդկային հոգեւոր կերպարանքը, թունաւորել նրա էութիւնը, նրա մէջ մարել յաւիտենականի կարօտը, սեղմ ասած՝ մարդը վերածել հոգուց եւ ոգուց դատարկուած մի մարդատիպ անասունի:

Երբե՞ք այնքան խորապէս ընկած չէր մարդը՝ (նաեւ, իբրեւ հակազդեցութիւն, երբե՞ք այնքան առաքինացած չէր հակաբոլշեւիկ մարդը):

«Թալանի՛ր» - ա՛յս էր «ամենայեղափոխական» լոզունգը՝ տրուած կարմիր ամբոխներին, իրենց խուժանավար առաջնորդների կողմից: Լենինն այս ձեւով կը լուծէր ընկերային խնդիրը: Ստոր կրքերի այդ մթնոլորտում, յեղափոխական յորձանքի մէջ սկսուեց բոլշեւիկների կուսակցադաւանական զօրահաւաքը:

Բոլշեւիկացաւ ամէն սրիկայ, ո՛վ որ պակասաւոր էր իբրեւ մարդ եւ հասարակութեան անդամ, ո՛վ իր մութ անցեալը մոռացութեան քօղով ծածկել կը կարօտէր, ո՛վ սեփական հայրենիքը զոհելու գնով ուզեց ապահովել իր հացը: Դաւաճանը, լրտեսը, ցարի օրով դահիճի պաշտօն ունեցող հրէշը, դեւոտը, պսիխոպատը, սադիստը, ամէն կարգի գահընկեց - նման ամէն մարդատիպ աճապարեց զինուորագրուել լենինեան դրօշին:

Այսպէ՛ս ստեղծուեց բոլշեւիկեան կուսակցութիւնը: Այսպէ՛ս հրէութիւնը ծնաւ Մարքսը, Մարքսը ծնաւ Լենինը, Լենինը ծնաւ միջազգային գայթակղութիւնը:

«Աստծու աշխարհը կողոպտելու եւ նրանում ամէն վեհութիւն ոչնչացնելու ծարաւ» - ահա՛ թէ ինչի՛ վերածուեց բոլշեւիզմ կոչուած չարութեան ու գայթակղութեան վարդապետութիւնը:

* * *

Ի՛նչ է նշանակում «սովետներ»:

Արդեո՞ք դա հայրենիք է, ազգ, գերագոյն իրականութիւն: - Ո՛չ մէկը եւ ո՛չ միւսը: Դա նաե՛ւ յաւիտենապէս ապրելու եւ ստեղծագործելու սահ-

մանուած ազգերի ու հայրենիքների միութիւն չէ: Սովետները - հոգեւոր եւ ազգային տեսակէտով ո՛չ Ռուսիա է, ո՛չ Ուկրաինա, ո՛չ էլ Հայաստան: Դա օրգանական ամբողջութիւն չէ: Դա քանակական զանգուած է, զանգուածների մեռեալ միութիւն, եւ ո՛չ մի դէպքում՝ ազգ, հայրենիք: Այդ դիմազուրկ ու անստեղծագործ բաբելոնում ո՛չ ոք է իր ցեղային եւ հոգեւոր դիմագծութեան, իր ճակատագրի, իր երկրի տէրը: Այնտեղ չկա՛յ ազգայինը: Այդ միութեան մէջ ո՛չ ոքի է իրաւունք տրուած խորհել ու գործել ըստ իր երկրի պայմանների եւ իր պատմական առաքելութեան:

Սովետ ժողովուրդները տառապում են նաե՛ւ *կուլտուրական պարտուողականութեամբ,* անտարբերութեամբ, որովհետեւ նրանց արգիլուած է ապրել իրենց անցեալը: Անհեթեթութիւն է «ձեւով ազգային, բովանդակութեամբ սոցիալիստական» մշակոյթը, որի մասին յաճախ կրկէսային աղմուկ է բարձրացնում սովետական մամուլը: Այդ պայմաններում տեղի է ունենում ժողովուրդների հոգեւոր ֆելլահացումը: Այդ միութեան գլխին - որի անդամները թքով ու սարսափով են կպուած իրար - կանգնած է մի հատիկ մարդ՝ Ստալինը, որից վար ամբոխներ են, վերեւը՝ «գոյութիւն չունեցող աստուած»:

Այսպէս ստեղծուեց բռնակալութիւններից ամենաասիականը, որում վաղուց են մոռացուել մարդն ու մարդկայինը:

Բ

Սովետները աւելի «ինտերնացիոնալ» եղան, քան՝ պետութիւն: Դա պետութիւն է այն չափով, ինչ չափով պետականութեան երեւոյթը անհրաժեշտ էր օտար երկիրների հետ դիւանագիտական կապ պահելու՝ հէնց այդ վերջինները ականելու համար:

«Որքան վատ (մարդկութեան համար), այնքան լաւ» - ա՛յս եղաւ ու մնաց իր դիւային նշանախօսքը: Ամբողջ երկու տասնամեակ՝ նա օրօրուեց համաշխարհային բունտի ցնորքով, որի պրոպագանդի համար ոսկու Նիագարա թափեց:

Դաւանելով միայն եւ միմիայն բացասական իդէալներ՝ նա մնաց նիհիլիստ, քանդիչ թէ՛ միութեան ներսում եւ թէ՛ արտաքին քաղաքականութեան մէջ:

Արդի՞ւնքը - իր երկրի կեանքը վերածեց դժոխքի, արտաքին յարաբերութիւնները՝ դաւադրութեան: Նա չդադարեց օգտագործել ազգերի ներքին վարչաձեւային, սոցիալական, տնտեսական դժուարութիւնները, ազգամիջեան ոխերը, նախանձները, փառասիրութիւնները: Մասնաւորապէս շահագործեց ազգային խնդիրը - երկդիմօրէ՛ն, Ասիան գրգռելով Եւրոպայի, գունաւոր ցամաքը՝ ճերմակ ցեղի դէմ:

Չմնաց կազմակերպութիւն, հաստատութիւն, որի մէջ պղծութիւն չմտցնէր: Չմնաց ոյժ, տէրութիւն, որ կաշառել չփորձէր:

Օգտուեց միջազգային սպորտից, ֆրանմասոնութիւնից, շարժանկարից, ազատ քրիստոնէութիւնից - անգա՛մ եկեղեցուց՝ այդ բոլորը լծելով իր պրոպագանդի արնոտ կառքին: Լինելով կապիտալիստ երկիրների մահացու թշնամի, բարեկամութիւն կեղծեց բոլորի հանդէպ՝ խռովքի ու տագնապի մէջ պահելով ողջ մարդկութիւնը: Մասնակցեց համաշխարհային շախմատախաղին, սակայն միշտ էլ՝ անպատիւ, խաղանենգ: Խաղաղութեան թշնամի՝ դաշինքներ կնքեց՝ իբրեւ թէ խաղաղութեան ծառայելու եւ պատերազմը սահմանափակելու հաշիւներով: Թուրքը նաե՛ւ արտաքին քաղաքականութեան մէջ հանդիսացաւ բոլշեւիկների պապը: Մոսկուան՝ մեր օրերի կարմիր «հիւանդ»-ը՝ համիդաբար օգտուեց Եւրոպայի ներքին անհամաձայնութիւնից - երկարաձգելով իր քաղաքական հոգեվարքը: Ո՛չ թէ դեմոկրատիա, այլ՝ դեմոնոկրատիա-*դիւապետութիւն,* ահա՛ թէ ինչի՛ վերածուեց սովետիզմը:

* * *

Այդ դիւապետութիւնը, միշտ հաւատարիմ իր օձային բնութեան, բարեկամութիւն կեղծելով Ռայխին՝ դաւեց վերջինի դէմ եւ առիթ տուեց պատերազմի իր եւ երէկուայ իր «բարեկամ»-ի միջեւ:

Այժմ «աշխարհի մի վեցերորդ»-ի եւ համաշխարհային յեղափոխութեան երազի պաշտպանութիւնը յանձնուած է Կարմիր բանակին: Ի՞նչ է, սակայն, այդ ոյժը իբրեւ կազմակերպութիւն, տեխնիկա, բարոյական: Բանա՞կ է դա՝ օրուայ հասկացողութեամբ, թէ՞ մեծազանգուած մի բանդա - ատակ սանձուած պահելու միութեան ժողովուրդների դժգոհութիւնը եւ ո՛չ թէ արտաքին թշնամին: Բանակ չէ՛ դա, այլ՝ կուսակցական զինեալ ամբոխ՝ ընդունակ միայն շուք եւ փայլ տալու բոլշեւիկեան բազմապիսի հանդէսներին: «Քսերքսէսի բանակում չափից աւելի մարդ եւ չափազանց քիչ զինուոր կայ» - Հերոդոտի այդ խօսքը հարազատօրէն պատշաճում է նաե՛ւ սովետական զօրքերին:

Յաղթում են նրանք, որոնք իրենց կամքը դնում են ի սպաս մի գերագոյն, մի սրբազան կամքի: Բանակ դառնալու համար՝ Կարմիր բանակին պակասում է հէնց այդ գերագոյն կամքը: Անկրօն էակը հրաշունչ զինուոր չի դառնայ: Լենինեան նիւթապաշտութիւնը ռուս բանակը վերածեց անաստուած սրիկաների: Մարտական ոգուն թշնամի է ո՛չ միայն հակակրօնը, այլեւ կրօնապէս անտարբերը: Յաղթական մարդիկ չեն ծնւում նիւթապաշտիկ մարքսականութիւնից, ընկերվարութիւնից: Զինուորութիւնը - ամէն բանից առաջ - հոգեվիճակ է: Իբրեւ արուեստ՝ դա

հայրենի հողի համար խիզախել ու մեռնել գիտնալու արուեստ է: Կարմիր բանակը թիւ ունի, տեխնիկ ունի, ամուր դիրքեր, «աշխարհի մի վեցերորդ»-ն ունի, բայց զուրկ է ռազմախանդի աղբիւրներից:

Սոցիալիզմի կաթեխիզմում ասուած է. «Բանուորը հայրենիք չունի»: Բոլշեւիկները - չարութեան ու քանդումի ուսուցիչները միայն չհասկացան, որ անհայրենիք թշուառականներից բանակ չի՛ ստեղծուի: Անաստուած ու հոգեբանութեամբ անցեղ, որով՝ յաւիտենականի զգացումից զուրկ է կարմիր բանակայինը. իսկ նմանը զինուոր չէք դարձնի, եթէ նրան զինէք անգա՛մ ամենաարդիական զէնքերով: Դա կը մնայ մարդկային փոշի, երբ ցեղային տարերքի մէջ մկրտուած գերման զօրքի հարուածները թողնում են երկնքից ընկած շանթաքարի տպաւորութիւն:

Խորհրդային զօրքին պակասում է ո՛չ միայն բարոյականութիւնն ու հաւատը, այլեւ՝ ուղեղը. դա շտաբ, սպաներ չունի:

Որքան առաջացել է ռազմարուեստի բարեշրջումը՝ այնքան յետ է մնացել Կարմիր բանակը: Մոսկուան չհասկացաւ, որ ազգերի պէս, բանակներն էլ չեն կարող զօրաւոր լինել՝ առանց հոգեւոր հիմքերի, արժէքների, սրբութեան զգացումի: Դասակարգային անկերպարան ու անհոգի կոլեկտիւն սպանեց մարդ-անհատը, նրա նախաձեռնութեան ոգին, պատասխանատուութեան զգացումը:

Ապագան ու յաղթանակը պատկանում են ո՛չ թէ զանգուածին, այլ՝ ոգուն:

Յաղթանակը ո՛չ զէնքերի մէջ է, ո՛չ էլ մոտորի, այլ՝ այդ վերջինները շարժող ոգու: Գոգոլեան «մեռեալ հոգիներ» - ահա՛ կարմիր զինուորը: Չարաբախտ Տրոցկին, հոկտեմբերեան յեղափոխութեան առաջին օրերին, Կարմիր բանակին ուղղուած իր մի հրամանագրի մէջ ասել է. «Ընկերնե՛ր, մի՛ մոռանաք, որ Կրիմ են փախել Ռուսիոյ բոլոր կապիտալիստները: Բոլոր հարստութիւնները ձե՛զ, առէ՛ք այդ հարստութիւնները: Յառա՜ջ, այնտեղ ձեր քաշած զրկանքների համար ձեզ սպասում է արդար վարձատրութիւն»:

Կողոպո՛ւտ - ահա՛ խայծը, որով Ռուսական յեղափոխութեան գռեհկահոգի առաջնորդները կարմիր զինուորը կը մղէին կռուի: Թաթարականութի՛ւն է դա, որով դաստիարակուեց Կարմիր բանակը: Փորձեցէ՛ք բաղդատել երրորդ ինտերնացիոնալի այդ կողոպտասէր ամբոխը Ֆրանսական յեղափոխութեան զինուորների հետ - որոնք իրենց քաղցը մոռանալու համար՝ պահակրակների շուրջը խանդավառօրէն «Մարսելեզ» կ'երգէին - եւ դուք այլեւս պիտի չհարցնէք, թէ ո՛վ կը յաղթի՝ ցեղախառով Բերլի՞նը, թէ՞ տարիներով ֆասոն, ոյժ, մեծութիւն կեղծող Մոսկուան:

* * *

Մարդը - իբրեւ անհատ թէ հաւաքականութիւն - հոգեւորապէս աճում է այնքան, որքան ազնիւ են իր հետապնդած նպատակները:

Տարիներով կարմիր մարդը դատարկուեց այն ամէնից, ինչ որ մարդկօրէն ազնիւ է եւ ազնուացուցիչ:

Միայն տգէտները, միամիտներն ու անձնապէս շահագրգռուածները շլացան Մոսկուայի ցիրկային գովքից իր բանակի մասին:

Մոլորանք ստեղծելու սահմանուած պրոպագանդային մեծխօսիկութիւն էր իր՝ «Մենք աճում ենք երկաթից» աղմուկը:

Գերման բանակի առաջին հարուածները եկան հաստատելու, որ Կարմիր բանակը կաւ է, եւ ոչ երկաթ:

Տասներորդ օրն է, ինչ Հիտլերի բանակի խօլական զարկերի տակ սովետիզմի կաւէ կառոյցը խորտակւում է իբրեւ պետութիւն, բանակ եւ վարդապետութիւն:

Եւ բիւրիցս արդար է, որ կործանւում է բոլշեւիզմը իբրեւ *միջազգային ապականարար, դաւադիր եւ հրձիգ:*

Տեղի է ունենում պատմութեան դատաստաններից ամենաարդարն ու անողոքը: Պատմութիւնն այս անգամ դատաւոր է կարգել գերման ցեղը:

Այն առասպելը, թէ որեւէ պետութիւն չի՛ յանդգնի չափուել Խ. Միութեան հետ՝ չուզելով իր բանակը վարակել բոլշեւիկեան ուրացութեամբ՝ այլեւս ցնդած է, որովհետեւ բոլշեւիկեան բանակը յեղափոխական ու մարդկային ոչինչ ունէր իրեն հարուածող թշնամի բանակները հաւատափոխելու համար:

Չէ՛, նրան էլ չե՛ն փրկի ո՛չ ռուսական անծայրածիր տափաստանները, ո՛չ Խորհրդային Միութեան ժողովուրդների «աստղագիտական» թիւը, ո՛չ կուտուզովեան ռազմավարութիւնը, ո՛չ էլ լորդիզմը:

Ճիշտ է, պատմական չարագործութիւնները դարաշրջան չունին, բայց եւ այնպէս՝ բոլշեւիզմ կոչուած միջազգային չարիքը կը մնայ իբրեւ specificum մեր ժամանակաշրջանի համար:

Մօտաւորապէս քառորդ դար դա տառապեցրեց ու վատասերեց մարդկութիւնը, եւ այսօր պատմութեան Նեմեսիսի կողմից յանձնւում է հողին:

Մեռնում է բոլշեւիզմը, որովհետեւ ապրել են ուզում եւրոպական քաղաքակրթութիւնը, քրիստոնէութիւնը եւ մարդկային անունը:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 26, 27

ՄԻ ՁԻՆՈՒՈՐԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Երբ պայքարը սուրբի եւ սինլքորի միջեւ է՝ միշտ էլ առաջին պահուն յաղթում է սինլքորը:

* * *

Նա, ով իր հայրենիքի թշնամիներին, վտանգը, մահը տեսած է իր սրի տարածութեան վրայ՝ չի կարող ասպետ չլինել:

* * *

Սինլքորը չէ՛ ձգտում անկարելիին - յաղթանակի՝ սուրբի դէմ, այլ՝ վերջինի ժամանակաւոր նուաստացումին: Եւ հենց սրանում է ողբերգութիւնը եւ ո՛չ թէ առաքինի մարդուն պարտադրուած տառապանքի փաստի մէջ:

* * *

Բարձրօրէն հոգեւոր կեանքի սկզբունքը հակասութեան սկզբունք է: Պէ՛տք էր մի յուդա, մարդկային մի սեւ չարութիւն, մի ուրացում, որպէսզի իրենց գերագոյն ողբերգութեան մէջ յաղթանակէին Նազովրեցին ու բարութիւնը:

* * *

Ամէն մի ողբերգութեան մէջ թաքուն ուրախութիւն կայ - այն գիտակցութիւնը, որ մեր ոգին ողբերգութիւնից դուրս պիտի գայ աւելի՛ հզօրացած:

* * *

Աւելի հեշտ է արդար լինել, քան՝ ամէն գնով արդարութիւնը պաշտպանել: Արդար կարող է լինել անգամ ամենախեղճ մարդը: Արդարութիւնը, սակայն, պաշտպանելու համար պէտք է լինել ո՛չ միայն արդար, այլ եւ՝ տղամարդ, եօթնի՛ցս տղամարդ:

* * *

Ազգերից առաջինն է Հայը, որի մէջ մարդ արարածը այնքա՜ն հեշտօրէն դառնում է չարագործ իր եղբօր հանդէպ:

* * *

Երբ առաքինի եւ արդար է հալածուող հանրային գործիչը՝ հալածանքը հարիւրապատկում է նրա հոգեկան ոյժերը, նրա իմաստութիւնը, ինչպէս եւ՝ նրա բարոյական ազդեցութիւնը:

* * *

Միշտ էլ, երբ զանգուածներին պակասել է Գաղափարի մարդու կողքին վճռաբար կանգնելու բարոյական արիութիւնը՝ մեր աշխարհի սրիկայութիւնը նորանոր Յիսուսներ է խաչել:

* * *

Նախանձ, թշնամանք, չարութիւն - այդ մութ ոյժերը գործի են անցնում, հէնց որ քուն է մտնում *Աստուածայինը* հասարակութեան մէջ: Այնտեղ, ուր արթուն է խղճմտանքը՝ հանրային կեանքը թունաւորող այդ ոյժերը, եթէ չեն զինաթափւում, առնուազը դառնում են կրաւորական:

* * *

Գեղեցիկ է դափնիով պսակուած ճակատը. սրբազնագոյնն ու համբուրելին, սակայն, կը մնայ ճշմարտութեան համար փշերով պսակուածը:

* * *

Հայութեան մէջ չարերն աւելի ակտիւ են, քան՝ բարիները, եւ հէնց ա՛յդ է պատճառը, որ դատերից արդարագոյնն անգամ դժուար է պաշտպանել մեր կեանքում:

* * *

Երբեմն երկչոտ որսորդն իսկ յաջողում է առիւծ թակարդել. դրանով, սակայն, չի՛ տկարանում նրա երկիւղախառն ափսոսանքը դէպի իր արքայական որսը, ինչպէս եւ՝ դրանով երկչոտը չի դառնում առիւծասիրտ:

* * *

Աշխատի՛ր առիւծի հետքեր թողնել ցեղիդ պատմութեան մէջ, եւ բնա՛ւ մի՛ մտածիր այն մասին, թէ մի օր աղուէսը կարող է իր ապականութիւնը փռել թողածդ հետքերի վրայ:

* * *

Մի ժողովուրդ, որի կեանքում աղուէսներին յաջողւում է առիւծ խեղդել՝ նուազ, շատ նուազ թուով առիւծասիրտ որդիներ է ծնում:

* * *

Հեռո՜ւ առիւծ խեղդող աղուէսներից:

«Ռազմիկ», 1941թ., թիւ 33

ՑԵՂ, ԹԷ՞ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

Չէ կարելի ներքնապէս ճանաչել կուսակցութիւնները եւ վճռապէս չժխտել կուսակցականութիւնը:

Կէս դար առաջ, Թրքահայաստանի պայմաններում գոյութեան իրաւունք եւ յաջողութիւն կարող էին ունենալ գերազանցօրէն ազգային շարժումներ - նմանները միայն:

Աշխարհածանօթ իրողութիւն է, որ հայութիւնը վտանգուած էր ազգովին, եւ կ'ակնկալուէր, որ Հայոց յեղափոխութիւնը ծնունդ առնէ մեր վտանգուած Ցեղի խռովքէն ու գործէ ողջ ազգի անունով, ողջ ազգի համար, ազգի բովանդակ ոյժերով:

Ցեղօրէն անխաթար ժողովուրդների մէջ՝ ինքնապաշտպանութեան բնազդը ուժեղանում է իրեն սպառնացող վտանգի համեմատութեամբ:

Բացարձակ է եւ հետեւեալ ճշմարտութիւնը. - *Վտանգի ժամանակ զանգուածների մէջ երեւան է գալիս ընդհանրականը, ցեղայինը,* որի առջեւ տեղի են տալիս անհատականն ու հատուածականը:

Ուզում եմ ասել - Ցեղի՛ն է ու Ցեղի՛ց է ինքնապաշտպանութեան բնազդը: Ժողովուրդը Ցեղո՛վ է արթուն, զօրաւոր, ինքնապաշտպանունակ - ահա՛ թէ ինչո՛ւ ֆիզիքական գոյութիւնը վտանգուած, որով եւ՛ ինքնապաշտպանութեան կարօտ հայութեան մէջ երեւան պիտի գային զուտ ցեղա-ազգային կազմակերպութիւններ, եւ ո՛չ թէ քաղաքական կուսակցութիւններ:

Միայն խորապէս ցեղա-ազգային յեղափոխութիւնը կարող էր գլուխ հանել դարերով օտար լծերի տակ իր տոհմիկ առաքինութեանց մէջ տկարացած մեր ժողովրդի ազգային ինքնագիտակցութեան վերազարթնումը, միայն դա՛ կարող էր համախմբել ու ակտիւացնել հայութեան ոյժերը - անհրաժեշտ նախապայմանը ազգային ամէն պայքարի յաջողութեան:

Վերածնունդ-յեղափոխութիւն՝ այդպիսի՛ն պիտի լինէր մեր յեղափոխական շարժը:

Հայոց շարժումների վարիչները, դժբախտաբար, չեղան ամէն բանից առաջ *համահայկականութեան, ցեղային ամենամիութեան, քաղաքական միակրօնութեան* (ա՛յն, որ այսօր մենք դաւանում ենք իբրեւ ցեղակրօնութիւն) գաղափարախօսներ: Ազգային կուռ գաղափարախօսութեան պակասի պատճառով, օտար փոխառիկ գաղափարները եկան խռովելու, շարժելու, բայց ո՛չ եւ յեղափոխելու մեր ժողովուրդը, նա՛խ նրա

մտածողութիւնը: Այդ իսկ պատճառով՝ ունեցանք շարժում, աւելի ճիշտը՝ շարժումներ, բայց ո՛չ *ազգային վերանորոգիչ յեղափոխութիւն:*

* * *

Պէտք է ենթադրել, որ Հայոց յեղափոխութեան ձեռնարկողները լաւապէս ճանաչում էին երեք բան - իրենց ժողովրդի հոգեւոր ժառանգականութիւնը, նրա դարաւոր թշնամու հոգեբանութիւնը եւ արտաքին աշխարհի պայմանները:

Մեր պատմական անցեալը, մեր Ցեղի մշակութային փառքը - այդ կը պարտադրէր լինել հոգեւորապէս աւելի անկախ եւ ծունկ չծռել օտար - յաճախ խաբուսիկ - արժէքների առջեւ: Արտաքին ազդեցութիւնները, սակայն - որոնց դեռ այսօր էլ առատ տուրք են տալիս հայ կուսակցութիւնները - պատճառ դարձան, որ հայ մտաւորականութիւնը խզէ հայութեան զարգացման գիծը, որ հրամայաբար պիտի պահուէր մեր նախայեղափոխական անցեալի եւ յեղափոխականութեան շրջանի միջեւ: Աղէտալի եղաւ հայ վարիչ մտաւորականութեան ցեղային անլիակշռութիւնը - իմա՛ նրա նուաստութեան զգացումը - դա նրան դարձրեց անուղղայ ընդօրինակող: Կէս դար է, ինչ գոյութիւն ունին հայ կուսակցութիւնները, բայց եւ այնպէս՝ նրանցից եւ ո՛չ մէկը դեռ ձեւաւորուած չէ՛ ծրագրօրէն, նրանք դեռ չունի՛ն հիմնաւորուած աշխարհայեցողութիւն:

Նրանց ծրագիրները - մէկը միւսից մոդայիկ - մի քիչ ռուսական, մի քիչ եւրոպական - միայն անունով են հայկական: Նմանուելու այդ ախտից - արդիւնք՝ ազգային տկար ինքնագիտակցութեան - դեռ այսօր էլ զերծ չեն հայ կուսակցութիւնները:

Այս կամ այն ժողովուրդը քաղաքականապէս ազատագրուելուց առաջ պէտք է - իբրեւ նախապայման - նախ ազատագրել նրա մտածողութիւնը օտար կապանքներից: Այդ չհասկացաւ հայ մտաւորականութեան մի մասը: Լծուելով լիբերալիզմի, սոցիալիզմի, անկրօնութեան կառքերին՝ նա չհասկացաւ, որ Հայոց յեղափոխութեան առաջին գործը պիտի լինէր այնպէս դաստիարակել հայութիւնը, որ նրա հասարակական խաւերը զօրութենապէս լրացնեն եւ օժանդակեն իրար, եւ ո՛չ թէ կատաղի պայքար բանան իրար դէմ: Արդի՞ւնքը - ժողովուրդը հոգեբանօրէն, մտածումով ու ապրումով միատարրելու փոխարէն, պառակտեցին՝ կասեցնելով մինչեւ այդ սկսուած նրա վերածնունդը, մի բան, առանց որի ո՛չ միայն ձախողւում են յեղափոխական փորձերը, այլեւ՝ յաճախ լրջօրէն վտանգում են ազգերի ապագան: Հայ կուսակցութիւնները լաւապէս չէին ճանաչել նաե՛ւ թուրքը: Այլապէս՝ մեր ազատագրական գործունէութիւնը պիտի ունենար տարբեր տարողութիւն ու մեթոդ:

Իսկ արտաքին պայմաննե՞րը, Եւրոպա՞ն, որը Հայկական հարցը ծառայեցրեց իբրեւ առիթ՝ Թուրքիոյ ներքին գործերին միջամտելու եւ

սակարկելու նրա հետ - ճանաչո՞ւմ էին Եւրոպան, որի խաչին եւ մարդկայնութեան այնքան սին յոյսեր էին կապել: Ի զուր անցան Հայոց վերածնունդի ռահվիրաների կանչերը՝ յոյս չդնե՛լ Եւրոպայի վրայ. «Հայաստանի մէջ է բո՛ւն հայկական խնդիրը, եւ մենք Բերլինի մէջ կ'որոնենք զայն»: Հայ ցեղաշունչ գրողի - Սրուանձտեանցի - համար՝ Հայաստանը՝ դա Հայ ցեղն ու Հողն է, որոնց պաշտամունքից պիտի քաղեն իրենց նուիրումին ոյժը հայութեան ճակատագրով ապրող մեր բոլոր սերունդները: «Հայաստանի մէջ է բո՛ւն հայկական խնդիրը» - դա ասել է՝ դարերով իր գոյութեան թշնամուն եւ մահուան հպատակ մեր ժողովուրդը ի՛ր մէջ, միայն իր Ցեղի մէ՛ջ պիտի փնտռէ իր փրկութիւնը: Դա ասել է՝ հայութիւնը պիտի առաջնորդուի էաբանակա՛ն հրամայականով՝ նա՛խ ինքդ օգնիր քեզ:

Հայ մտաւորականութեան մի մասը, մեղանչելով այդ հրամայականի դէմ, սոցիալիստացաւ եւ իր յոյսը դրեց արտաքին ոյժերի - Երկրորդ, Երրորդ Ինտերնացիոնալների, «քսան միլիոնոց միջազգ. բանուոր. բանակի» եւ նման այլ յիմարութիւնների վրայ: Մեր մտաւորականութիւնը չհասկացաւ, որ ինքն - իբրեւ ազգի գիտակցութեան օրօրանը - կուսակցականանալով, դադարում է ծառայել ազգին: Այո՛, հատուածականացած մտաւորականութիւնը ճշմարիտ մտաւորականութիւն չէ. նմանը մեղանչում է իր կոչումի դէմ:

Հայութեան ու Հայաստանի թշնամիների, ինչպէս եւ օտար, վատասերիչ միջավայրի դէմ յաջողաբար գործել կարող է միայն ցեղային համամիութիւնը եւ ո՛չ թէ քաղաքական այս կամ այն փոխառիկ գաղափարի շուրջը հատուածական շահերի նոյնութեամբ ժամանակաւորապէս միացած անհատների խմբակցութիւնը: Մեր մտաւորականութեան անցեղապաշտ մասի թեթեւամտութեան համար դժուար թէ մեղմացուցիչ պարագաներ գտնեն օրուայ հասարակագէտն ու վաղուայ պատմաբանը:

«Բուն հայկական խնդիրը» - դա օտար լծերի տակ ուծացած հայկական զանգուածները վերստին ազգի վերածելու մէջ է: Հասկանա՛նք այս: Իսկ դա հնարաւոր է միայն քաղաքական միակրօնութեամբ, մի բան, որ կ'ընծեռէ մեզ ցեղը, Ցեղակրօնութիւնը: Հայը՝ դեռ անհայրենատէր, կուսակցականացաւ, հատուածականացաւ - մի պարագայ, որի պատճառով թերի մնաց Նազարեանների օրով սկսուած այնքան խոստմնալի իր վերածնունդը: Այդ իսկ պատճառով՝ հայութիւնը չկարողացաւ յաղթահարել իր ներքին տկարութիւնները - չկարողացաւ թարմանալ ցեղօրէն, վերանորոգուել, ամբողջանալ իբրեւ ազգ: Սրանո՛վ - բնաւ չանգիտանալով արտաքին պատճառները - նաե՛ւ սրանով պիտի բացատրել մեր ժողովրդի կրած թէ՛ աղէտները եւ թէ՝ օրուայ անզօր ու անկար վիճակը:

«Ռազմիկ», 1942թ., թիւ 3

ՉՕՐ. Գ. ՆԺԴԵՀԻ ԽՕՍՔԸ

Հայաստանի Անկախութեան 25-ամեակի
տօնակատարութեան առթիւ

Հայրենակիցնե՛ր,

Այսօր, Եւրոպայի պատմութեան ամենախռովքոտ մոմենտին, երբ մահու եւ կենաց պայքարի մէջ են ազգաւեր մարքսիզմն ու ցեղային գաղափարաբանութիւնը, երբ վերաստեղծւում են աշխարհն ու մարդը, հայ երիտասարդութեան մի մասը դեռ շարունակում է ողորմելիօրէն քարշ գալ բախտորոշ անցքերի ետեւից:

Նա շարունակում է սնուել հին, մեռնող աշխարհի հոգեւոր փշրանքներով, նրա հնոտիներով եւ սնոտիներով:

Կտրուած Մայր հողից եւ հայրենի ժողովրդի կենցաղից՝ նա դարձել է հոգեպէս անհող եւ անհայրենիք: Գաղափարաբանօրէն մոլորուած ու պատեհապաշտ՝ նա չի հասկանում, որ սեմիտական ազգաքանդ ու պառակտիչ մտածողութիւնը վաղուց է իր կնիքը դրել օտարամոլութեամբ հիւանդ բոլոր ժողովուրդների հոգու վրայ: Սեմիտականութիւնը - հոգեւոր այդ քաղցկեղը - վաղուց է կրծում եւ թունաւորում ազգերի հոգին: Դա կեղծում է ամէն արժէք, կասկածի տակ դնում ամէն ճշմարտութիւն, տրորում ազգային ամէն հեղինակութիւն, ծիծաղելի յայտարարում ամէն սրբութիւն: Անիշխանացուցիչ եւ ստրկացուցիչ է դա: Նրանով բռնուած ժողովուրդները յիմարանում են ազգովին եւ դադարում անգա՛մ իրենց հայրենիքում մնալ տէրը իրենց սեփական ճակատագրի:

Մեր երիտասարդութեան անցեղակրօն մասը դեռ չի հասկացել, որ Հայաստանից դուրս, օտարութեան մէջ, միայն Ցեղի գաղափարն ու պաշտամունքը կարող են փոխարինել հայրենի հողն ու ժողովուրդը. որ Ցեղակրօնի մտածողութիւնն է հարազատօրէն հայկական ու արիական, որ կտրուելով Ցեղից՝ անհատը խորթանում է իր էութիւնից եւ բաց աչքով՝ նաւարկում դէպի անդունդ եւ կորուստ, որ մի ժողովուրդ այնքա՛ն համերաշխ է, մարտունակ ու ստեղծագործ, որքան որ ցեղաշունչ է. որ միայն Ցեղակրօնութի՛ւնն է ընդունակ ստեղծելու անհրաժեշտ հոգեբանական մթնոլորտը ազգային ընդհանուր աշխատանքի ու յաջողութեան համար՝ համախմբելով բոլորի՛ն, բոլորի՛ն մի նպատակի շուրջ:

Հայ երիտասարդութեան մի մասը դեռ չի գիտակցում, որ ժողովուրդների դժբախտութիւնը պայմանաւորւում է նրանով, որ նրանց պակասում է մի մեծ, մի դինամիկական առաջնորդող գաղափար: Այդ դէպքում, մանր, պարազիտային գաղափարները ծնունդ են տալիս միջակութեան

բռնակալութեան, որ եղած է ու կը մնայ բռնակալութիւններից ամենէն ամօթալին ու կործանարարը: Նա չի՛ գիտակցել դեռ նաեւ այն, որ մի ժողովրդի վերածնունդն ու փրկութիւնը սկսւում է այն վայրկեանից, երբ մի մեծ գաղափար գալիս է ենթարկելու իրեն՝ գոյութիւն ունեցող բոլոր երկրորդական գաղափարները: Դա ասել է՝ այլեւս վե՛րջ խոտոր ճամբաներին, անպտուղ ճիգերին, ներքին իրերակերութեանն ու թշնամանքին: Դա ասել է՝ խոր հաւատ, լաւատեսութիւն, անսպառ կորով: Դա, մե՛ծ գաղափարը, ստեղծում է ոգու միութիւն, որով վերակառուցում է կուսակցութիւնների եւ յարանուանութեանց կողմից պառակտուած ազգը: Այդ դէպքում՝ ազգը ճանաչում է պայքարի մը հատիկ ձեւ - կազմակերպել յաւերժօրէն հայկականը՝ Ցե՛ղը ամէնի դէմ, որ խորթ են հայ էութեան:

Այդ մեծ, այդ փրկարար գաղափարը հայ կեանքում Ցեղակրօնութիւնն է, որ գալիս է պառակտուած ժողովուրդը վերածելու ազգի՝ փրկելով վերջինը իր բացասական, իր ցեղաշեղ տարրերի չարաշահութիւնից եւ խուժանավարութիւնից:

Հայրենակիցնե՛ր,

Ցեղօրէն անխաթար ժողովուրդների մէջ ինքնապաշտպանութեան բնազդը ուժեղանում է իրեն սպառնացող վտանգի համեմատութեամբ:

Բացարձակ է եւ հետեւեալ ճշմարտութիւնը. - Վտանգի ժամանակ զանգուածների մէջ երեւան է գալիս ընդհանրակա՛նը, ցեղայի՛նը, որի առջեւ տեղի են տալիս անհատականը, հատուածականը, կուսակցականը: Ցեղի՛նն են ու ցեղի՛ց են համերաշխութիւնն ու ինքնապաշտպանութեան կարողութիւնը: Ժողովուրդը Ցեղո՛վ է արթուն, զօրաւոր եւ ինքնապաշտպանունակ:

Ահա՛ թէ ինչո՛ւ, այսօր, երբ քննութեան է դրուած նաե՛ւ եօթնիցս սուրբ մե՛ր Հայրենիքի ճակատագիրը, ես հայ զօրականի խօսքն եմ ուղղում ձեզ, ձեր գուրգուրանքին յանձնելով երկու, միա՛յն երկու բան, այն է՝ մեր փրկարար Ցեղային Շարժումը եւ Հայկական Լեգէոնները: Այդ երկուսից դուրս ամէն ինչ երկրորդական է ու փանաքի: Այսօր, մխիթարութեան ու հպարտանքի երկու առարկայ ունինք - Ցեղային Շարժումը եւ մեր մարտական ոյժը: Ապրեցրէ՛ք երկուսն էլ, որ ապրէք իբրեւ Ազգ եւ Հայրենիք:

«Ռազմիկ», 1943թ., թիւ 114

ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐ

Դեռ այսօր էլ, երբ մահու եւ կենաց պայքարի մէջ են ազգաքանդ մարքսականութիւնն ու ազգի գաղափարը, երբ հին աշխարհը կերպարանափոխելու աստիճան վերաքննւում են բոլոր արժէքները, դեռ այսօր էլ հայ երիտասարդութեան մի մասը շարունակում է սնուել հայ էութեան եւ գոյութեան հետ որեւէ կապ չունեցող վարդապետութեանց փշրանքներով:

Գաղափարաբանօրէն մոլորուած՝ նա դեռ չի հասկանում, որ անհատը, կտրուելով իր ցեղից, խորթանում է իր էութիւնից եւ բաց աչքով նաւարկում դէպի վատասերումի անդունդը, դէպի կորուստը:

Նա չի հասկանում, որ մի ժողովրդի համերաշխութիւնը պայմանաւորւում է նրա ցեղաշնչութեամբ, որ անցեղահաղորդը միշտ էլ անմիաբան է, որ ցեղի գաղափարն է հոգեբանօրէն միատարրում ժողովուրդը՝ մի նպատակի շուրջ համախմբելով բոլորի՛ն, բոլորի՛ն:

Ցեղը - ժողովրդի կենսաբանական անփոփոխելի տարրը - վերջինի համար խաղում է այն դերը, ինչ դեր որ կատարում է ուղեղը օրգանիզմի համար: Ցեղը, ցեղայինը ներդաշնակում է ազգային օրգանիզմի գործունէութեան գլխաւոր տարրերը, համադրում նրա բովանդակ ոյժերը:

Ցեղը հաւաքիչ է, ցեղային ապրումը՝ կենտրոնաձիգ:

* * *

«Մեր պապերից մեր ականջն է ընկել, մեզնից մեր որդիքը կ'իմանան»... ահա՛ ցեղային օրգանական մտածողութիւնը, որ այսօր պայքարի մէջ է ազգալուծիչ եւ ապականարար սեմիտական ոգու հետ:

Սեմիտականութի՛ւն - ահա՛ այն հոգեւոր քաղցկեղը, որ թունաւորում է ազգերի հոգին, կեղծում ամէն արժէք, կասկածի տակ դնում բարոյական ամէն ճշմարտութիւն, տրորում ազգային ամէն հեղինակութիւն եւ ծիծաղելի յայտարարում մարդկային ամէն սրբութիւն, կատարեալ դարձնելով մարդկային էակի վերջնական նաւաբեկութիւնը:

Այդ ահաւոր ախտով բռնուածները - առաջին հերթին ցեղային անլիարժէքութեամբ տառապողները - յիմարանում են ազգովին, խորթանում, ստրկանում, իրենց իսկ հայրենիքում ձեռքից հանելով սեփական ճակատագրի ղեկը:

Հոգեւոր միութիւնը խախտուած նման հասարակութեան մէջ անհատը՝ անհաղորդ ցեղին, իր ազգային ընդհանրութեան, ճանաչում է մի հատիկ իրականութիւն միայն - նիւթակա՛նը, ժխտում ամէն կարգի գերագոյն արժէք եւ բարոյական պատասխանատուութիւն: Նման հասարակութեան

մէջ բարոյապէս հրէշանում է անհատը եւ դառնում գործակալը իր ազգին սպառնացող վատասերումի եւ մահուան:

Ուշի ուշով դիտէ՛ք նման ազգերի կեանքը եւ պիտի տեսնէք, որ այդ դժբախտներին ամէն բանից առաջ պակասում է մի մեծ առաջնորդող գաղափար, մի մահացու պակաս, որի դէպքում բազում երկրորդական պարագիտային գաղափարներ շարունակում են ծծել այդ ազգերի հոգեւոր կորովը, նրանց ոյժերը: Այդ երկրներում իշխում են միջակութիւնը, տգիտանքն ու նախանձը - բռնակալութիւններից ամենակործանարարն ու ամօթալին:

* * *

Նման ժողովուրդների ճշմարիտ փրկութիւնը սկսւում է այն վայրկեանից, երբ մի մեծ եւ դինամիկական գաղափար, մի արեւ - գաղափար գալիս է իրեն ենթարկելու գոյութիւն ունեցող բոլոր երկրորդական ու երրորդական գաղափարները:

Կա՞յ մեծ գաղափարը - դա ասել է՝ այլեւս վե՛րջ խոտոր ճամբաներին, անպտուղ ճիգերին, խարխափումներին, ներքին թշնամանքին, իրերակերութեան:

Նման գաղափարը՝ միշտ էլ վերանորոգչական՝ իր հետ բերում է խոր հաւատ, լաւատեսութիւն, անսպառ կորով, ոգու լիութիւն, միութեան ծարաւ, որով եւ՝ վերակառուցում է քանդիչ ոյժերի կողմից պառակտուած ազգը:

Այդ մեծ, փրկարար գաղափարը հայ կեանքում հանդիսանում է ցեղակրօնութիւնը, որի միջոցաւ միայն կարելի պիտի լինի պառակտուած ժողովուրդը վերածել ազգի, փրկելով վերջինը իր բացասական տարրերի չարաշահութիւնից:

Ցեղաշեղ խուժանավարը - ծնունդ հոգեբանութեամբ սիմիտականացած կուսակցութիւնների - հասարակութեան մէջ փնտռում է տգէտը, միամիտը, չարարուեստը, եւ նրանց տկարութեան վրայ կառուցում իր հոգեւոր իշխանութիւնը: Ցեղավարն, ընդհակառակը, իր ժողովրդի ծոցի մէջ փնտռում է հայօրէն եւ մարդկօրէն անշահասէրն ու առաքինին, եւ նրանց վստահում ազգի գործը, դատը, ճակատագիրը:

Մեր իրականութեան մէջ ցեղակրօնութիւնը լոյսի տակ դրեց *հայօրէն չարն ու բարին,* արժէքաւորն ու անարժէքը, եւ հենց այդ է պատճառը, որ չարութեամբ ու կեղծիքով գործողները թշնամանեցին նրան:

Հի՛ն է, աշխարհի չափ հի՛ն է այդ երեւոյթը: Մեր Երկրագնդի վրայ ամէն մեծ գաղափար ունեցել է իր մանր թշնամիները: Տարբեր ճակատագիր չէ՛ր կարող ունենալ նաեւ ցեղակրօնութիւնը, որ ասել է՝ ցեղաձգտում, ցեղանմանում, հաւատարմութի՛ւն մեր սեփական էութեան:

Մեզ թշնամանեցին՝

Նրա՛նք, որոնց մասին երկու հազարամեակ առաջ ասել է Նազովրեցին. «Միայն նա՛ կը հասկանայ, որին տրուած է հասկանալ»:

- Նրա՛նք, որոնց համար ազգ պառակտելը համազօր չէ՛ ազգասպանութեան - կուսակցականացածնե՛րը:

- Եւ նրա՛նք, որոնք մեզ դեռ չեն հասկանում, որովհետեւ զուրկ են հասարակագիտական անհրաժեշտ պատրաստութիւնից:

Մենք հայօրէն ցաւում ենք Նազովրեցու կողմից աստուածօրէն արգահատուած դժբախտի համար, որին տրուած չէ մեզ հետ համազգալ ցեղը եւ հարազատել մեր քարոզած այն ճշմարտութիւնը, *թէ առանց ցեղապրումի չկա՛յ վերանորոգում, չկա՛յ ճշմարիտ մշակոյթ, իսկ առանց այդ վերջինին՝ մեզ նման ոգեսպառ ժողովուրդների համար կայ ու կը մնայ ստոյգ մահը:*

Մենք միամիտ չենք լաւ բան սպասելու հատուածականացածներից, որոնցից ամենայետինը կարող է Հայաստանի կէսի կործանման պատճառ դառնալ եւ ո՛չ միայն անպատիժ մնալ, այլեւ՝ խօսել ազգի անունից:

Մեր խօսքը ուղղուած է միայն նրանց - հայ երիտասարդութեան՝ կուսակցական ախտից զերծ մնացած ա՛յն իննսուն տոկոսին, որը վաղուց է ճշմարտել, թէ հայ կեանքի մահաբեր քաոսի յաղթահարումը ու հայ մարդու վերանորոգումը հնարաւոր է միա՛յն ցեղակրօնութեան միջոցաւ:

«Ռազմիկ», 1943թ., թիւ 159

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԶՕՐԱՎԱՐ Գ. ՆԺԴԵՀԻ ՀԵՏ

- Պատերազմ է, եւ մութ ոյժեր վերստին կը դաւեն մեր գոյութեան եւ ազգային համբաւի դէմ, բայց եւ այնպէս՝ գաղութահայը իրերու այդ դրութեան մէջ իսկ՝ անհրաժեշտ ցեղային զգաստութիւնը ցոյց չի՛ տար: Ինչո՞ւ այդպէս:

- «Ձիրար կը խածանէին եւ իրարու կը չարաբանէին ու կը նենգէին»:

Հայոց պատմութիւնը այդ բառերով է բնութագրել Ներսէս Մեծի ժամանակաշրջանի հոգեվիճակը: Ամօթախառն դառնութեամբ պիտի հաստատագրել, որ այդ շրջանի եւ օրուայ գաղութահայութեան հոգեվիճակների միջեւ, ըստ էութեան, տարբերութիւն գրեթէ գոյութիւն չունի: Հոգեբանութիւնը նոյն է ե՛ւ այսօր. տարբեր են նրա արտայայտութեան ձեւերը միայն:

- Որո՞նք են այդ հոգեվիճակին պատճառները:

- ա) Ստրկութեան դարերի առաջացրած հոգեկան ախտերը, որ պիտի չկարողանար դարմանել հայոց յեղափոխութիւնը: Այդ վերջինը, դժբախտաբար, չեղաւ ներքին հոգեփոխիչ յեղափոխութիւն, միաժամանակ, եւ այդ իսկ պատճառով, մեր ժողովրդի մեծամասնութիւնը մնաց պաղ եւ յաճախ՝ թշնամի դէպի մեր կուսակցութիւնները, մնաց առանց վերածնունդի, չվերանորոգուած:

բ) Օտար լուծերի ազդեցութիւնը հայն զգալիօրէն խորթացրել է իր էութիւնից, տկարացրել նրա ցեղային նկարագիրը:

գ) Մեր ստրկութեանը միշտ էլ ընկերացած են եղել ջարդն ու հալածանքը: Եւ այդ այդպէս - Սասանեան Արտաշիր թագաւորից մինչեւ հայոց նորագոյն եղեռնը: Մեր հայրենիքին տիրող բոլոր թշնամիները - թէեւ իրար օտար ցեղով, կրօնով, ժամանակաշրջանով - հայ ժողովրդի կենսաբանական ապագան վտանգելու եւ իրենց իշխանութիւնը տեւականացնելու հաշիւներով՝ պարբերաբար ոչնչացրել են նրա ընտրանին, նրա ամենակենսունակ եւ վարիչ տարրերը: Գիտենք, որ ընտրանիի պակասի պատճառով, ժողովուրդները իրենց կրած ամէն մի պարտութիւնից յետոյ, հեշտութեամբ դառնում են պարտուողական: Այդպիսին է օրուայ հայը, եւ հէնց դրանով պիտի բացատրել նրա օրուայ կեցուածքը: Քաղաքական եւ հոգեբանական յոռետեսութեամբ է համակուած նա:

դ) Իբրեւ արդիւնք ջարդերի եւ հալածանքների՝ տեղի են ունեցել պարբերական բռնագաղթեր, որով՝ հայը զրկուելով իր բնա-հայրենական

միջավայրից, հարկադրուել է յարմարուել օտար միջավայրերի: Գիտենք - կենսաբանութիւնը վաղուց է հաստատել - որ ամէն յարմարում տեղի է ունենում ի վնաս յարմարուողի:

Ցեղօրէն՝ գունատուած է օրուայ հայը:

ե) Չկան անթերի ժողովուրդներ: Անթերի չէ եւ հայը: Մեր նկարագրի որոշ գծերը մասամբ պէտք է վերագրել մեր երկրի տեղագրութեան, որ պատմական անցեալում անկարելի դարձրեց հայ նախարարական տներն հոգեբանօրէն միատարրելու - ազգային մի ամբողջութեան վերածելու գործը: Եւ այդ է պատճառը, որ մեր պատմութեան ամբողջ ընթացքում մեր արտաքին թշնամիները իրենց դէմ ծառացած չտեսան հայութիւնը՝ միաճակատ եւ միաբանակ:

զ) Հանգոյն այլ ժողովուրդների, նուազ թէ առաւել չափով, հայը եւս տուրք պիտի տար արդի քաղաքակրթութեան վատասերիչ ազդեցութեան: Կենսաբանօրէն տկարացած է օրուայ հայը - տկարացած է նրա կենսազօրութիւնը:

Ահա՛, մօտաւորապէս, այն գլխաւոր թերիները - որոնք արդի հոգեբանութեան եւ հասարակագիտութեան օրէնքների եւ սկզբունքների լոյսի տակ քննելով միայն կարելի է արմատագիտօրէն հասկանալ օրուայ հայութեան հոգեվիճակը:

- Ինչպէ՞ս կրնանք սահմանել մեր ազգային հարցադրութիւնը - այսինքն՝ մեր ժողովուրդի ճակատագիրը շօշափող բոլոր խնդիրները եւ անոնց լուծումները, որոնք կոչուած են ծառայելու իբրեւ Ազգային Հանգանակ հայութեան համար:

- Պաշտպանութիւն՝ ա) մեր ժողովրդի ֆիզիքական գոյութեան, բ) մեր ցեղային դիմագծութեան, գ) մեր ազգային պատուի - ահա՛ այն հիմնական խնդիրները, որոնց դրական լուծումով միայն կարող ենք պահել մեր տեղը, դիմագծութիւնն ու բարոյականը մարդկութեան ընտանիքում:

- Ի՞նչ միջոցներով կրնան լուծուիլ մեր գոյութեան հետ կապուած այդ խնդիրները:

- Վերանորոգմա՛մբ, միայն եւ միմիայն վերանորոգմամբ: Իսկ վերանորոգուել նշանակում է՝ վերստին դառնալ ա՛յն, ինչ որ էինք եւ ինչ որ չենք այսօր: Դա նշանակում է՝ ինքնանալ, դառնալ ինքնատէր, տէ՛ր իր ցեղային էութեան: Վերանորոգչականն էապէս նոր բան չէ՛ աւելացնում իր ժողովրդի էութեան, նա վերականգնում է այն, որ խորապէս դրուած է նրա բնակչութեան մէջ՝ իբրեւ ցեղային ժառանգականութիւն: Էականը վերանորոգչականի համար հայ մարդկանց միջեւ գոյութիւն ունեցող ընդհանրականն է, միացուցիչը - իմա՛ ցեղայինը, եւ ո՛չ մի դէպքում այն, որ զատում, բաժանում է ժողովուրդը եւ զայն կազմող անհատները: Ոգեսպառուածին վարում են իր անձնական կրքերն ու հաշիւները:

Չվերանորոգուած ժողովուրդ - ասել է՝ առօրեական մանրուքների եւ իր տկարութեանց գերի ժողովուրդ: Վերանորոգչական շունչից զուրկ է օրուայ հայ խօսքը, հրապարակախօսութիւնը, եւ այդ իսկ պատճառով՝ դա քանդիչ է, պառակտիչ:

Պղծաբանում է նա, ով խօսում է համերաշխութեան մասին, բայց դէմ է վերանորոգչական շարժման: Դէ՞մ ես վերանորոգման - դէմ ես կեանքին, դու աշխատում ես մահուան համար: Հայը դեռ չի հասկացել, որ համերաշխութեան ընդունակ են լայնախոհ եւ բարեշունչ անհատները միայն, իսկ այդպիսին դառնում ենք վերանորոգուելով: Հայութիւնը Հայաստանից դուրս, փրկարար վերանորոգիչներ մատակարարեց զանազան երկիրների - Ռուսաստանին՝ Լորիս Մելիքով, Եգիպտոսին՝ Նուբար փաշա, Պարսկաստանին՝ Եփրեմ, եւ սակայն, ինքը մնաց չվերանորոգուած: Ժամանակին հայ կուսակցութիւնները սատար հանդիսացան Երիտասարդ թուրքերի վերանորոգչականին, որը պիտի նախապատրաստէր քեմալական յաղթանակը՝ ստոյգ մահից փրկելով թուրքն ու Թուրքիան: Իսկ այսօր, որոշ հոսանքներ՝ ճղճիմ հաշիւներով, թշնամանում են հայոց վերանորոգչականներին - մի սեւ ընթացք, որով աւելի եւս խորանում է ամօթանքի մեր ողբերգութիւնը:

Մեզ համար գիտական է հետեւեալ ճշմարտութիւնը. իր մերձաւորին, ազգին եւ հայրենիքին արդիւնապէս եւ անշահասիրօրէն ծառայել կարող է միայն վերանորոգուած անհատը:

- Ինչո՞վ է հնարաւոր վերանորոգումը:

- Դա հնարաւոր է ցեղով, ցեղային արժէքներով, ցեղային պատկանելիութեան զգացումի խոր ապրումով, սեղմ ասած՝ ցեղակրօնութեամբ: Իսկ ցեղակրօնութիւն նշանակում է՝ հաւատարմութիւն նա՛խ մեր ցեղային էութեան, ապա անցած գոյ ու գոլոց սերունդների եւ նրանց մեզ ժառանգութիւն թողած արեան եւ արժէքների հանդէպ: Հայը դեռ չի՛ գիտակցել, որ ցեղի դէմ գործողը մեղանչում է ո՛չ միայն հարազատ ժողովրդի, այլեւ՝ ընդհանրապէս կեանքի նուիրականութեան դէմ: Էականը ցեղակրօնի համար դասակարգայնացած, յարանուանացած, առօրեականացած մակերեսը չէ՛, այլ՝ խորքը, ուր ապրում է համահայկականը: Եւ հէնց այդ համահայկականն է, որ հայը հայուն դիտել է տալիս իբրեւ արիւնի եւ ճակատագրի եղբայր ու իբրեւ հարազատ:

Իմ ցեղը, իմ ժառանգած էութիւնը, իմ նախահոգին - ահա՛ տիեզերաընդբռնումի միակ բանալին:

Միայն ցեղն է ընդունակ իրեն ենթարկելու օտար արժէքը, վարդապետութիւնը, կրօնքը:

Ժողովուրդն, ընդհակառակը, անկարող մարսելու փոխառիկ օտարը՝

ինքնախորթանում է: Ժողովուրդը գումարն է ապրող անհատների, ազգը՝ անցած ու գոյ սերունդների - դա ճակատագրի ընդհանրութիւն է. իսկ ցեղը՝ արեան ընդհանրութիւն, որ մշտնջենապէս պայքարի մէջ է օտար ազդեցութիւնների դէմ: Ցե՛ղն է մեր ոգու եւ մարմնի քանդակագործը: Ցեղն աստուածային այն բրուտն է, որ Հայաստանի հողից ստեղծեց մեր մարմինը, հայոց պատմութիւնից՝ մեր ոգին:

Ժողովուրդների կործանումն արագացնող վատասերումն է անցեղակրօնութեան պատիժը: Դէ՞մ ես ցեղին, ասել է՝ կողմնակից ես ժողովրդիդ ապազգայնացման, նրա մահուան: Ցե՛ղն է ժողովրդի օրգանական միութեան միակ գործօնը:

Ընդունել ցեղի գերագահութիւնը ժողովրդի վրայ, նշանակում է՝ ընդունել յաւիտենականի գերագահութիւնը առօրեայի, ոգուն՝ նիւթի վրայ: Եւ միայն այսպիսով է հնարաւոր հոգեբանօրէն միատարրել, ամբողջացնել մի կոտորակուած ժողովուրդ, ինչպիսին է հայութիւնը, եւ զայն վերածել ազգի: Յաւիտենականն է իմաստնաւորում անցաւորը, առօրեան եւ վերանորոգում զայն: Չմոռանա՛նք այդ:

- Ձեր կարծիքով՝ ի՞նչն է, որ կը դժուարացնէ եւ ի՞նչը կրնայ հեշտացնել հայոց վերանորոգումը:

- Ի զուր սկզբունք, գիտականութիւն կը փնտռէք մեր կեանքում - այնտեղ դուք կը լսէք կարծիքներ, միա՛յն կարծիքներ: Ուզում եմ ասել, որ մեր ժողովուրդը շարունակում է ապրիլ առանց աշխարհայեցողութեան: Բացայայտ է, որ օրգանապէս ամբողջական մի պատկերացում աշխարհի եւ իր սեփական գոյութեան իմաստի մասին՝ պիտի հեշտացնէր իր պարբերական վերանորոգումները, որով եւ՝ իր ինքնապաշտպանութիւնը: Ճշդելով մեր վերաբերմունքը դէպի մեր ներքին մարդը՝ մեր անձը, մենք էապէս ճշտում ենք մեր վերաբերմունքը դէպի մեր նմանները, մեր ցեղը, մեր արարիչը: Այդ ակտին ընդունակ է իմաստասիրօրէն հիմնաւորուած աշխարհայեցողութեան տէրը միայն: Ժողովուրդները այն չափով են ստեղծագործ եւ ինքնապաշտպանունակ, ինչ չափով որ նրանք տէր են մի կուռ եւ վսեմ աշխարհայեցողութեան: Դա՛ է իմաստաւորում, ներդաշնակում եւ նպատակայարմարօրէն ուղղում ժողովուրդների առած քայլերը:

Իմաստասիրութիւն ստեղծել եւ նրա միջոցաւ աշխարհայեցողութիւն կառուցել - ահա՛ մարդկային մտքի անդադրում շարժումը: Աշխարհայեցողութեան - այդ լուսարձակի - պակասի պատճառով՝ հայութիւնը շարունակում է մնալ ենթակայ չար պատահականութեանց, եւ այդ իսկ պատճառով՝ յաճախ աղիտւում է: Աշխարհայեցողութիւնը նրան վերաքննել ու վերաիմաստաւորել պիտի տայ մի շարք հասկացողութիւններ, որով եւ՝ պիտի արագացնէ նրա վերանորոգումը:

- Որո՞նք են այդ հասկացողութիւնները:

- Կրօն:

Կրօնականութեան պակաս, ասել է՝ աստուածութեան, սրբութեան զգացումի պակաս, որի պատճառով հոգեւոր շփոթի է մատնուած օրուայ մարդկութիւնը:

Հակառակ իր ստեղծած մեծ քաղաքակրթութեան՝ մարդը այսօր էլ դեռ աւելի կաւ է, քան՝ ոգի: Այդ իսկ պատճառով, նա յաճախ առհաւօրէն մղւում է ընդվզելու այն բոլոր զսպիչ արժէքների, ճշմարտութեանց եւ սրբութիւնների դէմ, որոնք կոչուած են սանձուած պահելու անասունն ու անասնականութիւնը նրա մէջ: Եւ միշտ էլ բարոյապէս տկարացած մարդը իր անկումն արդարացնելու հաշուով, փնտռել է մի տեսութիւն, մի դաւանանք, մի իմաստասիրութիւն: Մեր օրերի հակակրօն հովերը պիտի բացատրել մարդկային տիպի հոգեւոր անկատարելութեամբ: Առողջ հոգեվիճակ չէ՛ անկրօնութիւնը: Մարդ միշտ էլ նա՛խ հեռանում է իր նմաններից եւ ապա յետոյ՝ իր Աստծուց: Ո՛վ հեռանում է կրօնից՝ անձնասպանօրէն կտրում է իր հոգեւոր զարկերակը: Իր արարչի դէմ գործողը պիտի չքաշուի գործել եւ իր նմանների դէմ: Կրօնը - իմաստասիրօրէն առնուած - միայն արարածի եւ Արարչի յարաբերութիւն չէ՛, այլ եւ՝ մարդու եւ մարդու, անհատի եւ հաւաքականութեան, անձի եւ ճշմարտութեան յարաբերութիւն: Կոյր պատահականութեան ծնունդ չէ՛ տիեզերքը, եւ ես միակ չեմ տիեզերական անսահմանութեան մէջ - այդ սփոփարար հաւատքն է տալիս մեզ կրօնը: Կրօնաշունչ է, ընդհանրապէս, կեանքի մասին իդեալիստական ըմբռնում ունեցող ամէն մարդ: Նա, ո՛վ ընդունում է Աստուծոյ գոյութիւնը՝ ընդունում է նաեւ իր պարտականութիւնը հանդէպ գերագոյն իրականութեանց - ազգ, հայրենիք, պետութիւն: Ուզո՞ւմ էք խորապէս ճանաչել մէկին՝ խօսէ՛ք եւ խօսեցրէ՛ք նրան Աստուծոյ մասին, եւ նա իր պաշտանքի կամ անհաւատութեան միջոցաւ պիտի մատնէ իր հոգեւոր հասակը: Անաստուա՞ծ ես, ասել է՝ զուրկ ես սրբութեան նուիրումից, պարտականութեան զգացումից. ասել է՝ վաղ թէ ուշ դու պիտի դաւաճանես նմաններիդ: Կեղծ եւրոպականութեան գերի՝ հայ կուսակցութիւնները կրօնական պաղութիւն մտցրին մեր ժողովրդի մէջ: Մարդկութեան թշնամի է ամէն «գիտնական», որ թութակում է «գիտութիւնը ո՛չ կրօն ունի, ո՛չ էլ հայրենիք»: Մեր Երկրագնդի վրայ անհայրենիք, անցեղ եւ անաստուած է մարդկային տկարութի՛ւնը, ստորութի՛ւնը միայն:

Գիտութիւն, կրօն՝ սրանք թշնամիներ չեն, այլ՝ զինակիցներ, որոնցից մէկը գործում է մտքի, միւսը՝ սրտի միջոցով: Չարութիւն է շնչում ամէն անկրօն: Մարդկային անհատը միայն ա՛յն չափով է ընկերային, ինչ չափով

որ դա կրօնաշունչ է: Կրօնապէս տկարացա՞ւ մարդկութիւնը - եւ ահա՛ այլեւս երկինք չունի նա. փլաւ նրա յոյսերի աշխարհը. այսօր այնտեղ էլ մահն է գործում իր դէմ:

- Մշակոյթ:

Հայեացքը երկնքից չկտրող սուրբը, կռուից վերադարձող յաղթական զինուորը, իր ժողովրդի ցաւերն եւ ուրախութիւնները երգի վերածող աշուղը, արուեստագէտը՝ գեղեցիկի երկրպագու, իմաստասէրը, պետական գործիչը, բարերարը, գիտութեան մարդը - սրանք բոլորը, իրենց միաբան եւ ստեղծագործ դեգերումներով, նպաստում են իրենց ժողովրդի մշակոյթին: Արժէքներ՝ գիտական, գեղարուեստական, բարոյական - ահա՛ մշակոյթը: Աւելի ճիշտը՝ դա արժէքների նուիրապետօրէն կազմակերպուած ամբողջութիւն է:

Սրբագրե՛նք այն մեծ մոլորանքը, ըստ որի՝ գոյութիւն ունի մի ընդհանուր, միջազգային, համամարդկային մշակոյթ: Միջազգային է քաղաքակրթութիւնը, նաե՛ւ ապակրօն, եւ այդ է պատճառը, որ դա խեղդում է մշակոյթը: Կեղծի՛ք է նման մշակոյթը, անգո՛յ: Ճշմարիտ մշակոյթը միշտ էլ կրում է տուեալ ժողովրդի անհատականութեան կնիքը: Ամէն ժողովուրդ՝ իբրեւ անկրկնելի անհատականութիւն, ունի իր զարգացման - իր ինքնակառուցումի եւ ինքնայայտնաբերումի ուրոյն ճամբաները: Օտար մշակութային արժէքների իւրացումը - մասնաւորապէս նրա արտաքին փայլի, նրա բացասական կողմերի իւրացումը - տկարացնում է իւրացնողի ազգային ոգին: Չկա՛յ մշակոյթ առանց կրօնականութեան զգացումի: Ցամաքում են նրա ստեղծագործ խանդի աղբիւրները, հէնց որ դա դառնում է նիւթապաշտիկ: Հայը պիտի դաւանի <հոգու> առաջնութիւնը նիւթի նկատմամբ, եւ աշխատի, որ հայ մշակոյթը ո՛չ թէ տօնուի տարին մի անգամ, այլ՝ իբրեւ հոգեւոր արժէքների ամբողջութիւն՝ ապրուի ամէ՛ն օր: Ժողովուրդներն իրենց մշակոյթի մէջ դնում են իրենց կատարելութեան ձգտումը:

Մարդս այն է հոգեւորապէս, ինչ որ է իր ստեղծած մշակոյթը:

Մի այլ մոլորանք: Արդեո՞ք ամէն ժողովուրդ կուլտուրական է, քանզի լեզու եւ գրականութիւն ունի: Ո՛չ, ի հարկէ: Ճշմարտապէս կուլտուրական կոչուելու համար բաւական չեն գրողն ու գիրքը, գիտնականն ու գիտութիւնը: Կասկածելի է այն մշակոյթը, որի ստեղծիչի հոգեւոր կեանքում աւելի փուշ ու տատասկ են աճում, քան՝ բարութեան ծաղիկներ: Բնաւ կուլտուրական չէ՛ ներքին իրերակերութեամբ բռնուած ժողովուրդը: Մշակոյթը ենթադրում է սրտի ջերմութիւն, մարդկայնութիւն, խղճմտանքի արթնութիւն, մտածումի եւ յարաբերութեանց ազնուութիւն, նպատակների վսեմութիւն - արժէքներ, որոնց

պակասի պատճառով օրուայ հայ կեանքը վերածուած է դժոխքի:

Մինչեւ որ մեր զոյգ սուրբերին՝ Սահակ-Մեսրոպին չմիանայ մտածումի, ապրումի եւ գործի ազնուութիւնը՝ պիտի չկարողանամ առանց ամօթախառն ցաւի մեզ կուլտուրական անուանել:

- Դաստիարակութիւն:

Ազգային նկարագրերի եւ ճակատագրերի տարբերութիւնը ենթադրում է վախճանաբանութիւնների տարբերութիւն: Գոյութիւն չունի՛ եւ չի՛ կարող ունենալ կրթական ընդհանուր իդէալ: Ամէն ժողովուրդ իր կրթական իդէալն ունի, որ բղխում է իր ոգուց եւ կարիքներից: Մեռեալ միակերպութիւն չի՛ վերցնում դաստիարակութիւնը: Ժողովուրդներն իրենց աշակերտող սերունդը պատրաստում են համաձայն իրենց հոգեբանութեան եւ կարիքների: Ազգային չէ՛ հումանիտարիստական կոչուած դաստիարակութիւնը: Հայրենատիրութեան հզօր կամքով օժտուած ցեղամա՛րդը պիտի լինի անհայրենիք հայ դպրոցի իդէալը: Լուսաւորութիւնն առանց ազգային մեծ նուիրումի՝ անհատը դարձնում է յոռետես, եսական եւ ցեղօրէն անպէտք: Հայ դպրոցը չգիտէ՛, չգիտէ՛ ամենէն էականը, որ հող թէ հոգի մշակելու եւ նրանց տիրելու համար նախապայման է նրանց խորապէս ճանաչելը: Ցեղաճանա՞չ են օրուայ մեր ուսուցիչները: Խօսքս բացառութիւնների մասին չէ:

- Մարդկութիւն:

Փորձեցէ՛ք ազգային ոգին դատարկել այն բովանդակութիւնից, որ պատմութիւնը կուտակել է նրանում, եւ դուք ազգը կը վերածէք մի դիմազուրկ զանգուածի:

Մարդ եւ մարդկութիւն հասկացողութիւններն, ընդհանրապէս, որոշ իմաստ են ստանում միայն այս կամ այն ազգի ոգու միջոցաւ: Ազգային հանճարն է որոշ բովանդակութիւն հաղորդում համամարդկայինին: Ազգութեանց փլատակների վրայ ճշմարիտ մշակոյթ չի՛ կարող ծաղկել: Տուեալ ազգութիւնից դուրս՝ կեղծ են մարդն ու մարդկութիւնը:

Մարդկայինը ազգայինին ներդաշնակելով՝ շահում է թէ՛ մէկը, թէ՛ միւսը: Եւ, ընդհակառակը, ազգայինը «համամարդկայինին» զոհելով՝ կորցնում է թէ՛ ազգը, թէ՛ մարդկութիւնը: Ո՛չ թէ մարդն, ընդհանրապէս, որ անգոյ մի բան է, այլ՝ դիմագծօրէն ազգային մարդը, որ խորհում էր ազգութեան միջոցաւ. մարդը, որ բովանդակում է իր հայրենի բնութիւնն ու պատմութիւնը: Օրուայ մարդը, աշխարհաքաղաքացիական խորթացուցիչ վարդապետութիւնների ազդեցութեան տակ, կորցնելու վրայ է իր իրական հոգեւոր կերպարանքը, իր բնացեղային էութիւնը: Անհրաժեշտ է մի արմատական յեղափոխութիւն, մի դարձ անարիւն վերացական

մարդկայնութիւնից՝ դէպի օրգանականը, դէպի ցեղամարդը - իրակա՛ն մարդը, որն իր հողին եւ ցեղին կապուած է իր էութեան բոլո՛ր թելերով:

«Եւրոպական մարդկութիւն» (ԺԸ. եւ ԺԹ. դարերի), «Համաշխարհային մարդկութիւն» (Ի. դարի) - ես չեմ հաւատում ո՛չ մէկին, ո՛չ էլ միւսին: Եթէ գոյութիւն ունեցած լինէր եւրոպական մարդկութիւն՝ տեղի պիտի չունենային եւրոպականութեան համար դարերով ասիական խաւար ոյժերի դէմ ճակատած մեր ժողովրդի աննախընթաց ջարդերը:

- Անհատ:

Դասակարգային սոցիալիզմը, քարոզելով սէր դէպի հեռաւորը - երբ համազգի մերձաւորների մեծագոյն մասը վատասերւում էր թշուառութեան մէջ - հակամարտութեան մէջ դրեց անհատն ու հաւաքականութիւնը, եւ այսպիսով խախտեց ազգն իբրեւ հոգեւոր ամբողջութիւն:

Անհա՛տ, դու ազատ ես երջանկութիւնդ կառուցելու անգա՛մ նմաններիդ դժբախտութեան վրայ - այս էր երէկ եւ է՛, մասամբ, եւ այսօր: Իրերի այդ անբնական ու անբարոյական դրութեան մէջ, մարդկային բարոյական միտքը որդեգրեց ընդհանրապաշտութիւնը (ունիվերսալիզմը) իբրեւ հակոտնեայ՝ անհատապաշտական լիբերալիզմի:

Անհա՛տ, ոյժերդ միացո՛ւր արիւնակիցներիդ ոյժերին՝ յանուն մեծ ամբողջի երջանկութեան - ա՛յս է օրուայ եւ վաղուայ ընկերային հրամայականը: Այլ խօսքով՝ անհատն իր բարիքը պիտի փնտռէ հանրութեան բարօրութեան մէջ: Ո՛վ հակադրում է անհատն ընդհանրութեան՝ մեղանչում է թէ՛ մէկի, թէ՛ միւսի դէմ: Ազգի կեանքից, բովանդակութիւնից դուրս ոչինչ է անհատը:

Ընդհանրականութիւնն է կամուրջ ձգում անհատների էութեանց միջեւ: Եւ ոգեխառնուելով միայն անհատը դառնում է հոգեւոր անձնաւորութիւն - արժէքաստեղծ ոյժ: Դասակարգային վարդապետութիւնները, պառակտելով ազգը, զայն վերածում են դիմազուրկ զանգուածների: Զանգուածն սպանում է ցեղազգացումը, առանց որի անհատի մէջ մեռնում է նաեւ ազգականութեան զգացումը: Ահա՛ թէ ինչո՛ւ մենք ժխտում ենք լիբերալիստօրէն խորհող եւ գործող անհատն ու դասակարգը եւ դաւանում ազգն իբրեւ արժէքային ամբողջութիւն:

- Ընկերային խնդիր:

Ո՛չ թէ սոցիալիստը, այլ՝ սոցիալական մարդը: Լիբերալիզմը - ֆրանսական յեղափոխութեան այդ թունաւոր պտուղը պղծեց մարդկային բոլոր հոգեւոր հասկացողութիւնները: Դա օրինականացրեց աղքատութիւնը, որով եւ՝ ընկերային քօղարկուած անբարոյականութիւնը: Միեւնոյն ժողովրդի ծոցի մէջ մերձաւորին փշրանք նետելը հռչակեց

բարեգործութիւն: Անհատի իմ իրաւունքը ե՛ւ քո իրաւունքն է, ինչպէս քո պարտականութիւնը նաեւ ի՛մ պարտականութիւնն է:

Ապրելու եւ անկաշկանդ կատարելագործուելու իմ բնական իրաւունքը պայմանաւորում է իմ սեփական պարտականութեամբ՝ յարգելու նմաններիս նոյն իրաւունքը: Հաւասարապէս հակաընկերային են այն անհատներն ու ընկերային խաւերը, որոնք ասում են իրենց մասին՝ «ես ամէն ինչ եմ» կամ՝ «ես ոչինչ եմ»: Ազգերի կեանքում միայն մեծ ամբողջն է «ամէն ինչ», եւ ո՛չ ոք իրաւունք ունի լինելու «ոչինչ»: Ո՛չ թէ սոցիալիստը, այլ՝ սոցիալական անհատը - ահա՛ նոր բարոյականութիւնը, որով լուծւում է ընկերային խնդիրը եւ վերջ տրւում ժողովուրդների ներքին իրերակերութեան:

- <u>Մտածողութիւն</u>:

Մեր երկրի մարդը նա՛խ կը մտածէ եւ յետոյ կը խօսի - հայկական այդ մի հատիկ առածը կը բաւէ հաստատելու արիականութիւնը մեր ցեղի եւ մեր մտածողութեան: Ցեղօրէն առողջ հայու մէջ խոր է յարգանքը դէպի միտքը: Նրա մտածողութիւնը օրգանական է, իր խորքում՝ բարոյական: Դա իր սնունդն առնում է գոյութեան արմատներից, եւ հենց սրանում է գաղտնիքը իր արտայայտութեան միջոցների անբաւ հարստութեան:

Դժբախտաբար, ազդեցութիւնները իրենց կնիքը պիտի դնէին մեր մտածողութեան վրայ՝ մասնաւորապէս Հայաստանից դուրս: Ուշացաւ, շատ ուշացաւ մեր ազատագրումն օտար մտածողութիւնից:

Արդարեւ, աղքատ չէ՛ հայ ուղեղը, բայց վերջին տասնամեակներում հայութիւնը մեծ իմաստուններ - Խրիմեաններ չծնաւ: Հոգեւորապէս պաղ է հայ մտածողութիւնը - պաղ է հայ մարդու մտքի կորովը, դրա համար էլ դա դժուարանում է թափանցել իրերի եւ էութիւնների խորքը: Նրա մտածողութեան պրոցեսը տեղի է ունենում կրքերի ճնշման տակ: Կուսակցական նեղմտութիւնն է վարում ամէն մի եզրակացութիւնը: Մեր կեանքում, հրապարակի վրայ, յաճախ կը տեսնէք. կեղծիքը՝ ճշմարտութեան քղամիդը հագած: Առաւելապէս կուսակցութիւնները զարգացրին մտքի այդ աճպարարութիւնը:

Հայ մարդն այսօր աւելի երեւակայութիւն ու կիրք է, քան՝ իմացականութիւն, իսկ նմանը - անընդունակ առարկայական ճշմարտութեան - հեշտութեամբ կտրւում է իրականութիւնից եւ ամէն ինչ կառուցում օդի մէջ:

Ազգերն իրենց ճակատագիրը բարւոքելու մի հատիկ միջոց ունեն - պատճառագիտական մտածողութիւնը: Այդ մտածելակերպն է պակասում օրուայ հայուն: Այդ պակասով է պայմանաւորւում մեր դժբախտութիւնը: Գիտական է այդ մտածողութիւնը: Անհատներն ու հաւաքականութիւն-

ները սրա միջոցով են ազդում անցքերի ընթացքի վրայ եւ իրենց զերծ պահում դիպուածի հարուածներից:

Ոգեսպառուածի մտածողութիւնը ժխտական է լինում:

Այդպիսին է օրուայ հայկականը: Ազգի հետ եւ ազգի առջեւ խօսողի համար ներելի չէ՛ մտածումի ստորնութիւնը:

«Սովորեցէ՛ք լաւ մտածել - ա՛յդ է բարոյականի հիմքը»:

Սովորեցէ՛ք հայօրէն մտածել - դա՛ է ազգային բարոյականի հիմքը:

- Պատմութիւն:

Մի ժողովրդի ինքնագիտակցումը հնարաւոր է միայն իր պատմութեան միջոցաւ:

Ժողովուրդներն այն չափով են ազգ, ինչ չափով որ բիւրեղացած եւ զօրաւոր է այդ ինքնագիտակցութիւնը: Չկա՛յ աւելի մեծ յանցանք, ուրացում, քան՝ իր սեփական պատմութեան անծանօթ լինելը: Նմանը - զուրկ պատմական զգացումից եւ յիշողութիւնից - ազգ չէ՛: Սեփական պատմութի՛ւնն է մեր իմաստուն խորհրդականը, մեր ոգու դայեակը, մեր ազգային խղճմտանքի վարիչը:

Իր պատմութեան ծանօթը երկու բան լաւապէս գիտէ - նա գիտէ, թէ ի՞նչ կարող է անել եւ ի՞նչ պէտք է անել՝ Հայն ու Հայաստանը յաւերժացնելու համար:

Ցեղօրէն անինքնաճանաչին պակասում են հէնց այդ զոյգ բաները, որ ասել է՝ սեփական ճակատագրի դասերից օգտուելու եւ սեփական հայրենիքին օգտակար լինելու կարելիութիւնը:

Քանի դեռ մեր ժողովրդին տրուած չէ՛ իր պատմութեան իմաստասիրութիւնը - նա պիտի չկարողանայ օգտուել նրանից: Հայութեան ճակատագրական ծառայութիւն մատուցած կը լինի նա, ո՛վ կ'իմաստասիրէ նրա պատմութիւնը:

- Կուսակցականութիւն:

Մի ամբողջ յիսնամեակ է, ինչ հայութիւնը միջկուսակցական պայքարներով, ներքին ճակատի վրայ, սպառում է իր ոյժերը եւ բաց աչքով ծառայում իր գոյութեան թշնամիներին: Մեր վերջին կիսադարն եկաւ հաստատելու, որ հայ մարդը, ընդհանրապէս, ատակ չէ՛ կուսակցականանալու՝ առանց չարիք դառնալու իր ժողովրդի համար: Այդ իրողութիւնը ունի իր հոգեբանական պատճառները, իր բացատրութիւնը: Անշուշտ, ճիւաղաբարք չէ՛ ամէն կուսակցականացած հայ, բայց միջկուսակցական պայքարներում նա հեշտութեամբ դառնում է այդպիսին: Տուրք տալով կեղծ եւրոպականութեան՝ հայ կուսակցութիւնները իրենց թշնամին եւ հակառակորդը փնտռեցին իրենց ժողովրդի ծոցի մէջ, եւ խախտելով

ազգի հոգեւոր ամբողջականութիւնը՝ թուլացրեցին ճակատագրի կապը արիւնակիցների միջեւ: Միջկուսակցական պայքարատենչութիւնը ենթակաների մէջ մշակեց բարոյական անխտրականութիւն, որով՝ սովորական դարձան պարբերական սեւացումները, դաւերը անգա՛մ՝ սպանութիւնները: Շոյելով կուսակցական պատկանելիութեան զգացումը՝ կուսակցութիւնները իրենց հետեւորդների մէջ տկարացրին ցեղ-ազգային գիտակցութիւնը: Տկարացաւ հայկականը ի հաշիւ խմբակցականի: Նրանք դարձան փակ հասարակութիւններ՝ հասարակութեան մէջ, որով՝ մի զատիչ պատ իրենց եւ ազգի կենդանի ոյժերի միջեւ:

Դարձասէր հայը՝ կուսակցականանալով՝ դառնում է անզիղջ, քանզի կուսակցութեան մէջ նա կորցնում է մտածողութեան ու խղճմտանքի անկախութիւնը եւ սկսում խորհել, զգալ եւ գործել կանոնադրօրէն:

Համակ ատելութիւն է օրուայ կուսակցականութիւնը: Ծիծաղ եւ արգահատանք են շարժում հայ կուսակցութեանց երեմիականները համերաշխութեան մասին: Իմաստասիրօրէն տգէտ՝ նրանք չեն հասկանում, որ ամէն ատելութիւն անկարելի է դարձնում ճանաչումը, որով եւ՝ իրար հասկանալը: Բերգսոնեան փիլիսոփայութեան յայտնաբերած այդ ճշմարտութեանը դեռ անծանօթ է հայ կուսակցականը:

Հասկանա՛նք, վերջապէս, քանի ուշ չէ, հասկանա՛նք, որ հայը պատճառ չունի՛ կուսակցականանալու: Իսկ մեր ժողովրդի թուական տկարութիւնը, մեր հայրենիքի աշխարհագրական դիրքը եւ երէկուայ մեր եղեռնը կը բաւեն գիտակցելու, որ հայը կուսակցականանալու նաեւ իրաւո՛ւնք չունի:

- <u>Հայրենիք</u>:

Հայրենիք - սկիզբն ու վախճանն է մեր մտածումի, ապրումի եւ գործի: Երբ մեր շրթունքները մրմնջում են ցեղի մասին, մեր աջը ցոյց է տալիս Հայաստանը: Մենք հաւատո՛ւմ ենք Հայաստանին - դա նշանակում է, որ կեանքում սրբազնագոյնը մեզ համար Հայրենիքն է: Մենք շնչում, ապրում ենք Հայաստանով, մի՛շտ պատրաստ տառապելու, գործելու եւ մեռնելու նրա համար: Դա՛ է արժէքների արժէքը մեզ համար: Դա՛ է մեր սրբազան ցաւը, կարօտը, ուրախութիւնը, մեր գոյութեան իմաստն ու իրաւունքը, մեր անմահութիւնը՝ միաժամանակ:

Ազատութի՞ւն - այո՛, երբ հայրենի<օրէն> եւ ազատօրէն գործելու եւ կատարելագործուելու կարելիութիւն կայ:

Իրաւո՞ւնք - միայն սեփակա՛ն հայրենիքում, ուր արդար իրաւունք մեզ տալիս է մեր՝ դէպի նմանները ունեցած պարտականութեանց անթերի կատարումը:

Երջանկութի՞ւն - հայրենազուրկներիս համար՝ Հայաստանից դուրս

խաբուսիկ են բոլոր տեսակի երջանկութիւնները: Երջանկութի՛ւն - մեր ժողովրդի ճակատագիրը բարւոքելու համար թափուած, մեր աշխատանքով սրբագործուած ուրախութեան գնով:

Չկա՛յ, կեանքն ազգին եւ հայրենիքին պատարագելու չափ մեծ երջանկութիւն չկա՛յ աշխարհում:

Հայրենատիրութի՛ւն - ահա՛ վերանորոգչականի մեր դաւանանքը, որի իրականացումը պիտի ուշանայ այնքան, որքան ուշացաւ մեր ժողովրդի վերանորոգումը:

- Երիտասարդ սերունդ:

Ճակատագրական է ամէն մի նոր սերունդ: Աւելի քան այդպիսին է օրուայ մեր երիտասարդ սերունդը: Իր ձեռքում է գտնւում ցեղի եւ հայրենիքի ճակատագիրը. Հայաստանը կը լինի կամ չի լինի, եւ դա կախուած է իրենից: Նրանից է կախուած - թագաւոր թէ թափառական ժողովրդի վերածել հայութիւնը: Ա՛յդ, միայն ա՛յդ գիտակցութեամբ ապրող սերունդը կարող է ծառայել իր ցեղի յաւիտենականին: Կործանարար ու դժբախտ է անհաւատ սերունդը - նա՛, որի համար տիեզերքը անհոգի նիւթ եւ շարժում է միայն: Հաւասարապէս դժբախտ եւ արգահատելի է այն սերունդը, որ բաւարարւում է օտարութեան հացով: Մեր նորահասը պիտի իւրացնէ հայ վերանորոգչականի դաւանանքը - Աստուած, ցեղ, հայրենիք, որպէսզի իր ժողովրդի անցեալը, ներկան եւ ապագան կապակցաբար, ստեղծագործօրէն ապրել կարողանայ: Նա իր ամբողջ հասակով պիտի նետուի հրապարակ՝ սատարելու հայոց վերանորոգումին, եթէ չի ուզում ապրել, տառապել եւ մեռնել անհայրենիք:

- Ընտրանի:

«Երկրի աղը» - արդա՛ր որակում:

Ոգու ծնունդ՝ դա՛ է ապրեցնում մարդկային ոգին: Կրո՛ղը սրբութեան, հերոսականի եւ հոգեւոր գեղեցկութեան զգացումների: Նրա շնորհիւ են զարգանում կրօն, արուեստներ, իմաստասիրութիւն: Նա՛ է կապը յաւիտենականի եւ առօրեայի միջեւ: Ճշմարի՛տ առաջնորդ, առանց որին ոչինչ են իշխանութիւնն ու իշխանաւորը:

Նրանն է կոչումներից ամենասրբազանը, պատասխանատուութիւններից ամենամեծը: Ազգերը մի հատիկ ճշմարիտ ազնուականութիւն ունին - դա էլ ընտրանին է: Նրա միջոցաւ են բարձրանում եւ նրա հետ են ընկնում ազգերը: Հասարակութեան մէջ շատերը կարող են մեղանչել օրէնքի, բարոյականի, հաւաքական շահերի դէմ, բայց այդ մեղանչումներից չի՛ խախտուի հանրային բարոյականը, չի՛ անբարոյականանայ հասարակութիւնը: Սակայն, բաւական է, որ ընտրանիին պատկանող

մէկը կոպտօրէն մեղանչեց իր կոչումի դէմ - այլեւս քանդուած համարէք ժողովրդի հաւատքը, համարումը, բարոյականը: Ընտրանին իր կեանքի կենդանի օրինակներով է վարում ժողովուրդը:

Կրօնապէս պա՞ղ է եկեղեցականը՝ հակակրօն է ժողովուրդը:

Հոգեպէս էսնա՞ֆ է ուսուցիչը, այլեւս կարիք չկա՛յ աւելի մեծ դժբախտութիւն բաղձալ նրա ազգին: Յաւիտենականի շունչից՝ զո՞ւրկ է գրողը՝ նա անխուսափելիօրէն պիտի դառնայ ստորնութեան քարոզիչը:

Պարտուողակա՞ն է զինուորը՝ այլեւս նա հեռացած է իր սրբազան առարկայից - հայրենիքից, եւ վաղն իր ուրացումը կարող է դաւաճանութեան հասցնել:

Շահասէ՞ր է ազգային գործիչը՝ նուազ ազգասիրութիւն ու նուիրում փնտռէ՛ք ազգի լայն խաւերի մէջ:

Այսպէ՛ս է ընտրանին - նա գործում է իր կեանքի օրինակներով:

Եկեղեցական, ուսուցիչ, գրող, գիտնական, զօրական, գործիչ - ահա՛ ընտրանին: Սրանց կոչումը հրամայողաբար պահանջում է ամբողջական եւ ներոյժ կեանք:

Օրգանապէս ապաքաղաքական է ընտրանին, որով՝ բացարձակապէս անկուսակցական պիտի լինի դա:

Շեղուե՞ց իր կոչումէն - ժողովրդի անկումը դառնում է անխուսափելի:

- <u>Ազգային բարոյական</u>:

Դա է անհրաժեշտ հիմքը ազգի հոգեւոր կառոյցի, եւ դրանում է կայանում ազգի իրական ոյժը: Կա՞յ այդ բարոյականը - կայ ազգը. պակասո՞ւմ է դա - նուազում է կարեւորութիւնը բնական գործօնների - ցեղի, հայրենի հողի, ինչպէս եւ ազգութիւն ստեղծող այլ կարգի ստորոգեալների: Մեր վերաբերմունքը դէպի մեր կենսաբանական արարիչ ցե՛ղը՝ սրանում փնտռէ՛ք ազգային բարոյականի արմատը: Ցե՛ղն է ազգի գերագոյն օրէնսգիրը բարոյական բնագաւառում: Ազգային բարոյականը ենթադրում է մի օրինակարգ եւ հանրապարտադիր ընթացք, որից ամէն շեղում համարւում է հոգեւոր մահափորձ ազգի դէմ: Իսկ ընթացքը - ըստ վաղեմագոյն մի իմաստասէրի - դա ա՛յն է աշխարհի համար, ինչ որ է գետանցքը՝ գետի համար: Արդեօք, այսօր խախտուած չէ՞ գաղութահայու ազգային բարոյականը: Այդ հարցին պատասխանելու համար, պէտք է ճշդել, թէ իրենից ի՞նչ է ներկայացնում օրուայ հայն իբրեւ միտք, զգացում եւ կամք: Աւելի պարզ՝ պէտք է ճշդել, թէ այսօր ինչպիսի՞ զգացումներ են տիրապետում նրա հոգում: Այդ իմաստով բարոյահասարակագիտական մի վերլուծում տրտմութեամբ պիտի համակէ ձեզ: Ի՞նչ էինք երէկ: Այդ մասին թող խօսի ինքը՝ դարերի հայը. «Մի տնից չէինք, բայց մի ձէնով էինք»: Ցեղօրէն բարոյական էր հայը. «Մէջք մէջքի տանք՝ սարեր շուռ

տանք»: Սոցիալապէս առողջ էր նա. «Հացն Աստծուց, ես էլ հետը, ո՛վ հասնի՝ թող ուտի»: Սոցիալապէս արդար էր. «Այն մարդը, որ Աստուած ունի՝ աղքատ չէ»: Իդէալիստ էր նա. «Հող ու մոխիր կե՛ր, տմարդէն հաց մի՛ մուրար»... Ցեղօրէն հպարտ էր. «Հայը չյոգնի՝ չի՛ նստի». Ծուլութեան հացը չսիրող է. «Ոտքդ քարին զարնուի՝ խղճմտանքդ քննէ՛»: Բարոյապէս զգայուն էր. «Իր ծառը ծարաւ թողած ուրիշինը ջրողը ո՛չ յարութիւն ունի, ո՛չ էլ թողութիւն»: Ազգայնօրէն զգաստ էր. «Առիւծը կատուին խեղդել չեմ տայ»: Տղամարդ էր հայը:

Ա՛յս էինք երէկ - որակի՛ ազգ:

Մէջբերածս՝ հայկական առածների այդ փոքրիկ ծաղկաքաղը - որի մէջ մեր ժողովուրդը դրած է դարերի իր բարոյա-ազգային փիլիսոփայութիւնը - կը բաւէ հաստատելու, որ ստրկութեան մէջ, օտար լուծերի տակ անգամ մենք եղել ենք ազգային բարոյականով զօրաւոր ժողովուրդ: Եւ հենց դրանում չէ՞ գաղտնիքը, որ մենք կանք ու կը մնանք, իսկ մեզ հասակակից շատ ազգերից մնացել է քարէ յիշատակ միայն: Ապա ուրեմն՝ եթէ մեր սերունդները մտածէին, ապրէին եւ գործէին օրուայ հայու նման՝ այսօր հայութիւնից արեւի տակ մնացած կը լինէր մի սեղմ տապանագիր միայն: Տեսանք, թէ ի՛նչ էինք երէկ, զգում ենք, թէ ինչ չե՛նք այսօր, եւ գիտենք, թէ ի՛նչ պիտի դառնանք վաղը՝ իբրեւ ազգ չկորչելու համար:

Ազգային բարոյականի տեսակէտից՝ մի Գիւլբենկեան աւելի չարժէ, քան՝ Հայաստանի մի գեղջուկ, եւ մի զօրավար, մի ուսուցչապետ, քան՝ մի համեստ արհեստաւոր, էականը յաւիտենական հայկականութիւնն է, որ ազգութիւնը նուիրագործում է իր ամէն մի անդամի մէջ:

Ազգային բարոյականը - ամէն բանից առաջ - պայմանաւորւում է մի ժողովրդի ստեղծագործ համերաշխութեամբ: Դրսեցի թէ տեղացի, իմաստասէր թէ անգրագէտ, չէզոք թէ կուսակցական - հայ մարդիկ են սրանք, որոնց հանդէպ տածածդ պաղութիւնը կայէնութեան է համազօր: Ներազգային կեանքում սպանում է ո՛չ միայն սուրը, թոյնը, այլեւ՝ անտարբերութիւնը: Ճակատագրի եղբայր է ամէն հայ: Աւելին՝ ամէն հայ՝ դա դո՛ւ ես - ահա՛ ազգային բարոյականի անխախտելի օրէնքը: Այդ օրէնքի դէմ մեղանչողը քանդում է իր ազգութեան հիմերը, դա թշնամին է իր ազգի: Որակի՛ ազգ էինք երէկ: Չաղէտուելու եւ չկորչելու համար՝ վերստին պիտի դառնանք այդպիսին՝ հրամայողաբա՛ր: Անվերջ որակաւորուելու, ազգ դառնալու պրոցեսի մէջ են բոլոր ժողովուրդները: Իբրեւ ոգու ժողովուրդ՝ մեզ համար աւելի հեշտ է որակաւորուել: Աշխատենք դառնալ «թանկարժէք քար», որպէսզի «ծանր կշռենք եւ շատ արժենք»: Դա՛ է պահանջում մեզանից ազգային բարոյականը, մասնաւորապէս մեր բնաշխարհից դուրս:

- Պրոպագանդ:

Զգո՞յշ, մէկ էլ զգո՞յշ, դարձեալ զգո՞յշ, քանզի թշնամիներ ունես եւ դաւադրուած ես - ահա՛ արդի քաղաքական մոմենտի հրամայականը հայերիս համար: Մեր ժողովուրդն այսօր աւելի՛ մեծ թուով թշնամիներ ունի, քան ունէր կէս դար առաջ: Եւ պատճառ չունինք կարծելու, թէ վաղը մեր թշնամիները կը դադարեն թշնամանել մեզ: Խօսքս մեր կոտորածների հեղինակի մասին չէ, այլ՝ այն օտարազգի պետական, հասարակական, գիտական գործիչների, որոնք վատահամբաւելով մեզ իբրեւ ժողովուրդ՝ սուրն ու տապարը դրին մեզ ջարդողի ձեռքը: Նմանների թիւն այսօր աւելի՛ մեծ է, եւ թոյնը՝ աւելի՛ զօրաւոր, քան էր անցեալ պատերազմի նախօրեակին: Այսօր էլ չարահամբաւուում է հայութիւնը: Ինչո՞ւ օտարը մեր մէջ այնպիսի յատկութիւններ է տեսնում, որոնց բնաւ տէր չենք:

Վերջին երկու տասնամեակների ընթացքին մեզ վերագրեցին հետեւեալ մահացու մեղքերը - թափառատենչութիւն, անմարտունակութիւն, հրէական ընչաքաղցութիւն եւ այլ նման յատկութիւններ, որոնց կրողը, օրուայ եւրոպացու հասկացողութեամբ, բարոյապէս կորցնում է իր գոյութեան իրաւունքը: Այդ յատկութիւններից եւ ո՛չ մէկն է հայկական, բայց եւ այնպէս՝ վերագրուեցին մեզ: Ինչո՞ւ - որովհետեւ տասնամեակներ են, ինչ հայութիւնն էապէս կատարում է միայն իր տկարութիւնների պրոպագանդը: Միակողմանի կը լինէր, եթէ փորձէինք միայն քաղաքական հաշիւներով բացատրել հակահայ պրոպագանդը: Սփռուած երկրէ երկիր եւ անմիաշունչ՝ հայութիւնը միջկուսակցական պայքարներում դրսեւորում է իր էութեան ամենաբացասական գծերը, եւ, այսպիսով, նիւթ մատակարարում հակահայ քարոզչութեան:

Այն, ինչ որ ցուցահանում է հայը Հայաստանից դուրս, մեզ իրաւունք չի՛ տալիս հակահայ ամէն վատութեան համար միշտ էլ միայն օտարները դատապարտել: Այսօր - երբ հայկական ճակատագիրը մէկից աւելի անդունդների վրայ պիտի կոխի եւ անցնի - այսօր իսկ պակաս չեն ինքնավարկաբեկումի դէպքեր որոշ տարրերի կողմից:

Պրոպագանդ, ասել է՝ ինքնայայտնաբերում, ինքնաներկայացում:

Պրոպագանդն ամէն բանից առաջ մատնում է պրոպագանդիստի ներքին մարդը: Հայը - որի համար այսօր գոյութիւն չունի հանրապարտադիր եւ ո՛չ մի ճշմարտութիւն, արժէք, հեղինակութիւն - օրուայ իր հոգեվիճակով ատակ չէ՛ կառուցողական եւ հայասիրական պրոպագանդի: Օտարասէր՝ նուաստ կոչուելու աստիճան եւ անինքնաճանաչ՝ օրուայ հայն ընդունակ չէ՛ արժէքային քարոզչութեան: Պրոպագանդն, ամէն բանից առաջ, պահանջում է ինքնայարգանքի խոր զգացում՝ ծնունդ սեփական արժէքների եւ արժանաւորութեան գիտակցութեան, մի

հոգեվիճակ, որ հայ մարդու մէջ կը ստեղծէ միայն վերանորոգումը: Պէտք է գիտակցել եւ այն. որ ո՛վ հայերիս խորապէս չի՛ ճանաչում եւ հասկանում՝ նա մեզ բնաւ չի ճանաչում:

Մեռեալ լեզուաբանութեամբ եւ աղքատիկ պատմագիտական ծանօթութիւններով կարելի է միայն մօտաւորապէս ճանաչել հայը: Մեր հանդէպ արդար լինելու համար՝ մեզ պէտք է ճանաչել սպառիչ կերպով, քանզի հայը ոգո՛ւ ժողովուրդ է, իսկ այդպիսին տէր է աւելի խոր եւ բարդ էութեան:

Մի ճշմարտութիւն եւս - որպէսզի օտարը մեզ ճանաչի՝ նախապայման է, որ նախ մենք մեզ ճանաչենք իբրեւ ցեղային կարողականութիւն եւ էութիւն:

- Պիտի ուզէի լսել ձեր կարծիքը հայ վերանորոգչական շարժման մասին:

- Պայքարներից ամենածանրը եւ միաժամանակ ամենասրբազանը - դա ցեղային տեսակի յաւերժացման համար մղուող պայքարն է: Այդ պայքարին են լծուած հայ վերանորոգչականները: Ցեղօրէն ու մարդկօրէն առողջ ժողովուրդներն իրենց պայքարը կենտրոնացնում են իրենց գոյութեան եւ էութեան սպառնացող ամենամեծ չարիքի դէմ: Դա նշանակում է, որ նրանք ընթանում են ամենամեծ ընդդիմութեան գծով: Հայ կեանքում միայն վերանորոգչականներն են վարւում այսպէս, որով՝ նրանց ընթացքն հայօրէն եւ մարդկօրէն բարոյական է:

Կեանքի ստիպողականութի՛ւնն է վերանորոգումը, նրա օրէ՛նքը, հրամայակա՛նը - վերանորոգուի՛ր կամ մեռիր: Կ'ուզէի, որ ամէն հայ մարդ զգար վերանորոգչական գործի վեհութիւնն ու վերանորոգչական գործիչի ողբերգութիւնը:

Մարդկային ցեղերի պատմութիւնը չգիտէ՛ աւելի մեծ եւ աւելի սուրբ գործ, քան մի ժողովրդի վերանորոգումը:

Չվերանորոգուածի համար՝ դժուար է հասկանալ վերանորոգուածին - ահա՛ ակն ու աղբիւրը մեր ողբերգութեան:

Վերանորոգումի ատակ է միայն նա՛, ով սկսել է զգալ, ընդհանրապէս, օրուայ աշխարհի, եւ, մասնաւորապէս, հայ կեանքի հոգեւոր դատարկութեան զարհուրանքը:

- Ձեր վերջին խօսքը:

- Ազգովին խորհինք, ապրինք եւ գործենք այն, որ բարի է Հայաստանի համար:

«Ռազմիկ», 1943թ., թիւ 169-174

ՀԵՐՈՍԸ ԵՒ ՀԵՐՈՍԱԿԱՆԸ*

Խորհրդածութիւններ

Ազգերն իրենց հայրենիքի գոյութիւնը մարդկութեան առջեւ արդարացնում են իրենց հերոսների մահով, հերոսներ, որոնց համար մահը յաղթանակ ու յարութիւն է միաժամանակ:

* * *

Հերոսը - դա յաւիտենականի կրողն ու սպասաւորն է մեր անցաւոր կեանքում:

* * *

Մարդս հերոսանում է աշխարհի յաղթահարումով, այսինքն՝ երբ յաջողում է աշխարհին հակադրել իր յաղթական ինքնագիտակցութիւնը՝ դառնալով հող իբրեւ մարմին, պիտի յաւերժանայ որպէս ոգի:

* * *

Յաղթանակում, հերոսանում է նա, ով իր մէջ բնութիւնը ոգուն ենթարկելու աստիճան զօրաւոր է:

Վախը դադարում է, վտանգը տեղի է տալիս, մահը մեռնում է, հէնց որ մարդու որդին իր գիտակցութեան ամբողջ զօրութեամբ կրկնում է - ե՛ս էլ Աստծու որդին եմ:

* * *

Վերացնելով մահուան ու կեանքի միջեւ գոյութիւն ունեցող անջրպետը, Նազովրեցին ժխտեց մահը, որովհետեւ հանդիսացաւ յաւիտենական սերմացանը ոգու հսկաների՝ սուրբերի, նահատակների, հերոսների:

* * *

Հաշտուելով մահուան գաղափարի հետ՝ մարդս դառնում է եղբայրն ու զինակիցը այն բոլորի, որոնք մարդկային ցեղի պատմութեան բոլոր դարերում եկել ու անցել են մեր աշխարհով իբրեւ լոյսի, հաւատքի եւ սուրի հերոսներ:

---

* *Գրությունն անստորագիր է, բայց ակնհայտորեն պատկանում է Նժդեհի գրչին, որն այն ժամանակ «Ազատ Հայաստան»-ի փոխխմբագիրն էր:*

* * *

Ներհայեցողութեան մարդ է հերոսը: Մտատեսաբար՝ նա մի տեսակ շօշափում է իր յաւիտենականը եւ ի տես նրա խանդավառւում՝ անգիտանալով դժուարութիւնները, վտանգը, մահը:

* * *

Մի՛ մտածիր հերոսականի մասին, եթէ գերագոյն պարտականութեանց կատարման ժամանակ քեզ համար աշխարհային ամէն բան չի կորցնում իր կարեւորութիւնը:

* * *

Ձիջո՞ւմ - հերոսի համար չէ դա: Երբ անհրաժեշտ է, նա պիտի չափուի մահուան հետ եւ ընկնի բիւրեղաբիւրեղ եւ օծուն ճակատով:

* * *

Հերոսը, ճշմարիտ հերոսը ճանաչում է մի հատիկ վախ՝ «փոքրիկ մահով» մեռնելու վախը:

* * *

Ես յաւիտենականը պիտի շահեմ մի վայրկեանի մէջ: Ահա՛ հերոսական մտածումը, մայրը գերագոյն ուրախութեան: Այսպէս են հաշւում հերոսները:

* * *

Հերոսական են մարդկային այն գործերը միայն, որոնց վրայ ժամանակն ու մահը իշխանութիւն չունին:

* * *

Ի՜նչ երջանկութիւն - մեռնել այն յուսավառ հաւատքով, որ քո աճիւնից շանթանման հերոսներ պիտի ծնին:

«Ազատ Հայաստան», Բեռլին,
1943թ., թիւ 2/3

ԱՆՁՆԱՎԿԱՅՈՒԹԻՒՆ*

*

Կրելով կնիքը Հայաստանի բնութեան ու պատմութեան՝ հա՛յ եմ ես:
Մտածումով եւ ապրումներով, սակայն, ես մարդ եմ, համամա՛րդ:
Ես ընկերն եմ անիրաւուածի, եղբայրը՝ հալածուողի, եւ զինակիցը՝ բեւեռէ բեւեռ աւելի արդար աշխարհի համար մարտնչողների:
Դաւանանքս է - մարդկայնութի՛ւն, աւելի՛ մարդկայնութիւն:

*

Ոգու մարդ եմ, եւ իբրեւ այդպիսին, միանգամայն անյարմար այն բոլոր պաշտօնների համար, որոնք ենթակայից որոշ աստիճանաւորութիւն են պահանջում:
Ինձ տրուած չէ քայլել մարդու հետեւից, եթէ նա թագաւոր իսկ լինի:
Ոգու մարդուն վայել չէ՝ նաւաստանալ անգամ իր աստծու առջեւ:

*

Խղճմտանքէս զատ ես ճանաչում եմ երկու գերագոյն դատաւորներ եւս - Աստուած եւ Ժողովուրդ:
Առաջինի դէմ գուցէ եւ մեղանչել եմ, իսկ երկրորդի դէմ՝ երբե՛ք:

*

Հերոսական գործերից ոչ նւազ ներշնչող է մահը հերոսական: Ապա ուրեմն, մեռիր այնպէս, որ մահդ էլ ծառայի հայրենիքիդ:
Ահա՛ իմ դաւանած հայրենասիրութիւնը:

---

* *«Անձնավկայություն» եւ «Ռազմիկը չէ՛ մեռնում» ձեռագրերը, որ գրվել են բանտում, Նժդեհը նվիրել է իր երիտասարդ զարմիկին (եղբոր տղային)՝ «Հրանդիս ալբոմում» մակագրությամբ, եւ տեսակցության ժամանակ հանձնել հարազատներին:*

*

Ների՛ր, Տէ՛ր, ների՛ր ինձ, եթէ մի օր հայրենիքիս օգտակար լինելու մտօք մեղանչեմ կամքիդ դէմ:

Արդա՛ր է հայրենիքին ծառայել ամէն ինչով, բացի ստորութիւնից:

*

Կեանքիս գարնան՝ պատանու իմ միտքն ու սիրտը իրենց սնուցիչներն ունէին.

- Արարա՛տը, որ թէեւ քանիցս խլւեց մեզնից, բայց երբեք չեղաւ օտարին, եւ չի՛ լինելու.

- Հայ լեզուն, որ օտար լուծ ու նւաստութիւն չճանաչեց, ու մնաց ստեղծագործ անգամ պատմութեան ամենամթին դարերում, երբ օտարը կ'իշխէր Հայաստանում.

- Եւ շինարարական խանդը հայու, որը դէպի իրեն յարգանք ու հիացմունք պարտադրեց իր գոյութեան ե՛ւ բարեկամին, ե՛ւ թշնամուն:

Սրբազա՜ն երրորդութիւն...

Այժմ, երբ մահաշունչ զնդաններում կեանքիս աշունն եմ բոլորում, դարձեալ նոյն իդէալական արժէքներն [են] սնուցանում հայ մարդու իմ սէրն ու հպարտանքն արդար:

*

Ըստ իս՝ ամէն մարդ - անինքնաճանաչ մի Պրոմեթեիդ է, որով՝ մարդկային ամէն մի էութիւն - մի շղթայւած զօրութիւն:

Իր կարողական ուժերից առաւելագոյն չափով օգտւում է նա միայն, ով, ինձ պէս, յաջողում է ոգու լարւածութեամբ շղթայազերծել իր էութիւնը:

*

Ինձ յատուկ է ազգային մտքի կրքոտութիւնը, իբրեւ արգասիք խոր հաւատի ու համոզւածութեան, թէ հայը, իբրեւ ուրոյն ստեղծագործ ազդակ, նոյնչափ պէտք է մարդկութեան, որքան եւ թւապէս եւ քաղաքականապէս հզօրագոյնն ազգերից:

*

- Ինչպէ՞ս կ'ուզէիք, որ վարուենք ձեզ հետ՝ հարցրին ինձ:
- Որպէս ռազմիկի, որը տմարդներին, թէեւ յաղթական լինեն, իրեն արժանի թշնամի չէ համարում:

*

Մէկն սպառնաց ինձ:
- Մահւամբ չեն վախեցնում նրան, որից - ինչպէս գիտէք - յաճախ վախեցել է մահը՝ ասացի ես:
Եւ... լռութիւնը կնքեց մեր կարճ փոխասացութիւնը:

*

Չեմ սիրում միջակութիւնը նպատակի, զոհաբերութեան, տառապանքի:
Միջակութեամբ չես աճի, չես հսկայանայ հոգեպէս:
Հերոսանում է նա, ով ընթանում է գերպարտականութեան ճամբով:

*

Անիծեցի ես աշխարհավար մեծերին.
- Չկա՛ն մեծեր, կայ մեծութիւն, հոգո՛ւ մեծութիւն: Կա՞յսր ես՝ եղիր Աւրելիոս. իմաստասէ՞ր ես՝ Սոկրատ եղիր. զօրավա՞ր ես՝ Աւարայրի Վարդա՛ն:
Մեծ անունները առանց հոգու մեծութեան նման են կաւէ անդրիի՝ դրուած ոսկէ պատւանդանի վրայ՝ Մասիսն ինձ ասաց:

*

Սո՞ւրը թէ գրի՞չը: - Թէ՛ մէկը, թէ՛ միւսը - ես սիրեցի ու գործածեցի երկուսն էլ:
Սակայն, դրուած երկընտրանքի առջեւ՝ ես պիտի նախընտրէի առաջինը, քանզի լինում են ժամանակներ, երբ գրիչը, խօսքը, ճշմարտութիւնը իրենց ճամբան հարթելու համար կարիք են զգում սրի:
Սիրո՜ւմ եմ գրիչը, որը, միաժամանակ, ե՛ւ սուր է, որ գիտէ ի պաշտպանութիւն արդար դատերի հազար սրազէն բազուկներ բարձրացնել:

Սիրո՜ւմ եմ սուրը Հայոց արքայի, որը «գետին չընկաւ», այլ իբրեւ հրեղէն կանթեղ, մնաց կախուած Սեպուհ լեռների վրայ, եւ պատմութեան անաստղ գիշերներին հայու դարաւոր ճամբան լուսաւորեց:

Սուր եւ գրիչ - աստուածայի՜ն զէնքեր, տրուած մարդուն՝ պաշտպանելու իրաւունքն ու սրբութիւնն աշխարհում - իմ ձեռքում էլ յաճախ փոխարինեցին իրար:

Եւ... չպարտուեց, «գետին չընկաւ» ե՛ւ իմ սուրը...

*

Մի յաղթանակի օր Սիւնեաց իմ արծիւ զինակիցները ասացին ինձ.

- Երբ մեռնես՝ գլխիդ տակ կը դնենք սուրդ, եւ կը քանդակենք գերեզմանաժայռիդ վրայ՝ Այստեղ հանգչում է նա, որ գործեց իբրեւ կենդանի սուր...

*

Հոգիս վերստին արդար հզօրանքի է ծարաւի եւ ահա՛ անճառելի հպարտանքով կրկնում եմ մի տողը ստոիկեան իմաստասէրի*. «Արքա՛ն Հայաստանի անտառների - կատաղի առիւծը ոսկէբաշ»...

Ի՞նչ, Թրովադան երբեմն է՞ր, ստե՞ր մեծ անցեալի, թէ գրական մի յուշ միայն:

Ո՛չ, ո՛չ, դեռ այսօր էլ՝ մեր պատմութեան բարձունքից դիտելով՝ Հայաստանում ես տեսնում եմ աւելին, քան այն, ինչ որ դա ներկայացնում է իբրեւ հողային տարածութիւն, եւ իբրեւ թիւ բնակչութեան:

Թէեւ մեզնից խլւած են առիւծաբնակ մեր երկրամասերը, հայ էութեան ներյատուկ առիւծութիւնը, սակայն, մնում է, եւ պիտի մնայ:

Սպանւում է ե՛ւ առիւծը, առիւծութիւնը՝ երբե՛ք:

---

* *Սենեկա*

ՌԱԶՄԻԿԸ ՉԷ՛ ՄԵՌՆՈՒՄ

*

Մարդը գիտէր իրերի կարգը, գիտէր, որ երբ կայ կեանքը՝ չկայ մահը, նա գիտէր այդ, եւ անխռով կը վայելէր իրեն տրուած օրն ու արեւը:

Ի՛նձ, սակայն, ինձ էր ճակատագրուած կեանքն ու մահը ապրել միաժամանակ:

Վաղուց է, ինչ աշխարհն ինձ մեռած է կարծում, թէեւ ես դեռ կոխում եմ երկրի երեսին, թող որ երկրագնդից, անծայր ու անծիր, ինձ թողնուած է մի տարածութիւն - կալանաւորի մի կոյր խցիկ, որը դժւար թէ կարողանար երկու մեռելների գերեզման տալ:

Ես մեռայ՝ դեռ չմեռած: Աւելի ստւեր քան ապրող էակ, ես ե՛ւ կամ, ե՛ւ չկամ: Թէեւ կայ կեանքի անօթը՝ կեցութեան ձեւը, բայց չկայ կեանքը, կեանքի զգացումը չկայ:

Ես ապրում եմ՝ կեանքն ու մահն իրար խառնած: Ա՜հ, կարող է, մարդ կարող է փոխել բնութեան կարգը: Կեանքն առանց կեանքի՜... Ո՞վ էր ապրել այդ:

Ես կամ եւ չկամ... Եւ, բաբէ՜, այդ իսկ վիճակում կ'ուզէի մեռնել մարտական մահով, եւ կանգնել Յաւէրժութեան սեմին՝ դեռ չսպիացած վէրքերով... Չէ՛, ռազմիկը չի՛ մեռնում: Մեռնե՞լ... Բայց մի՞թէ դեռ կամ, դեռ ապրում եմ ես...

*

Ես ասում եմ՝

- Ժամանա՛կն է ամենածանր բեռն աշխարհում, եւ՝ ամենաթեթեւը, միաժամանակ: Եթերի պէս անզգալի նրանց համար, որոնք երանօրէն ժպտում են երկնքի վճիտ ովկիանին, կամ դաշտերում բացուած ծաղկին, մի այլ հոգեվիճակում՝ դա տիեզերաշէնքի ծանրութեամբ է ճնշում մեր էութեան ամէն մի հիւլէի վրայ:

Կալանաւոր եմ, եւ ահա՛ լսում եմ սրտիս զարկը - մէ՛կ, ե՛րկու... Ո՛չ, ո՛չ, դա սիրտս չէ, այլ ժամանակի ծանր ձեռքը, որն իր երկաթէ մուրճն է իջեցնում գանգիս վրայ - մէ՛կ, ե՛րկու...

Ես կամ,- ասում է ժամանակը,- նրանց համար, որոնք պատճառ ունեն զգալու իմ առկայութիւնը, համրելու իմ օրերը, ժամերը, վայրկեանները՝ ես կամ...

*

Կայ Պրոմեթէյը տառապող - կան նաեւ նրա ցաւերն ամոքող ովկիանիդները: Տրւում է ցաւը մարդուն, նրա հետ՝ նաեւ այն մեղմելու կարելիութիւնը:

Յաղթահարել նիւթը - զրկել ժամանակն իր կապարից, ցաւն՝ իր սրութիւնից, լեարդ պատառոտող անգղին՝ իր ճիրաններից - ահա՛ գերագոյնն արւեստներից՝ մայրը բոլոր արւեստների, որոնց ծնունդ է տւել մարդը: Ատարաքսիա՝ պիտի ասէր դասական դարերի յոյնը. ստեղծագործ խանդ՝ ասում է մերօրեայ արւեստագէտը. ներքին երկուացում, որի դէպքում զատւում ես քեզ մտրակող ցաւից, եւ մտահայեցողաբար այն դիտում իբրեւ իմաստասիրական նիւթ՝ ասում եմ ես:

Յաղթահարել ժամանակը՝ այն անզգալի դարձնելու աստիճան - աստւածային այդ արւեստին հաւատարիմ՝ ամէն օր մտովի ես անցնում եմ այն ճամբաներով, որ կոխել են աստւածները հին, այցելում եմ Հելլադան՝ ճեմում ու վիճում Աթէնքի իմաստասէրների հետ, յայտնւում պատմութեան ծանօթ ռազմադաշտերում, թեւս երկարում զինաթափւելու պատրաստ մարտիկին, վիրաւորին եւ, վերջապէս, սրիս եւ Մասսին կռթնած - արթուն հսկում եմ Հայաստանի սահմանների վրայ...

P.S.

*

Չհասկանալ նրան, ով խօսում է Հայաստանի համար ստացած վէրքերի լեզւով, նշանակում է ո՛չ հայ, ո՛չ էլ հայրենասէր լինել:

*

Ամենասրբազանը խաչերից, միաժամանակ եւ ամենածանրը - դա ճակատագիրն է հարազատ ժողովրդի:

Այն կրողին ե՛ւ վա՜յ, ե՛ւ պատի՜ւ եօթնիցս:

*

Հերո՞ս ես, ապա ուրեմն, տուր ապացոյցը, որ աշխարհէն - կեանքէն ու մահէն էլ զօրաւոր ես դու:

1955, մայիս

ՄԵՏԱՊՈԼԻՏԻԿԱ:
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ*

Մարդս չի ծնվում կատարյալ, դա դառնում է ինքնամշակմամբ, ինքնահաղթահարումով, որով՝ կյանքը առաքելություն է:

Կուլտուրական մարդը - դա ներքին կյանքի մարդն է (ամբոխներին պակասում է այդ ներքին կյանքը - նրանք ապրում են առանց ինքնաճանաչումի եւ աշխարհաճանաչումի, առանց ղեկավարող սկզբունքների՝ քաշված կյանքի եւ պատմության օրենքներից):

Պրոգրեսը կարելի է արագացնել անշուշտ, բայց ոչ այն չափով, ինչ չափով կարծում են, թե կարելի է արագացնել կաբինետային երազատեսները: (Բնությունը սոտեռններ չի սիրում), պրոգրեսը ենթարկվում է բնության այդ օրենքին:

Կյանքի դարաշրջանները այլ բան չեն, քան հոգեկան հասունության ֆազաներ: Ոչ մի հասունացում հնարավոր չէ արհեստական ձեւով, առանց խեղելու դա (այդպես է բնության մեջ, նույնը՝ մարդկության):

Մի ժողովուրդ զարգանում է բնականորեն եւ կանոնավոր կերպով, երբ աստիճանաբար անցնում է իր հասունության բոլոր ֆազաները (որոնցից ամեն մեկը հնարավոր է դարձնում մյուսը):

Պրոգրեսի նորմալ ընթացքը (ժողովրդի կյանքի կառուցման, պետական սարք ու կարգի հաստատման) - նախ օրենքները հաստատվում են ոգիների մեջ, վերջը՝ ընդունում սահմանադրության ձեւ:

Այսինքն՝ հոգեւոր պրոգրեսի ճամփով դեպի արտաքին պրոգրեսը: Հասարակական խղճմտանքը արդյունք չէ պետական օրենքների, ընդհակառակը, պատմությունը հաստատում է, որ օրենքներն են հայելին հասարակական հոգու, որ պետական ռեժիմը արտացոլում է ժողովրդական խղճմտանքը:

Օրենքը չէ ստեղծում մարդը, այլ մարդը՝ օրենքները:

«Օրենքները փոխելուց առաջ, անհրաժեշտ է փոխել մարդկանց» (Aug. Conte, Philosophie positive):

---

* *«Մետապոլիտիկա: Պատմության փիլիսոփայությունը»,* ինչպես նաև *«Երջանկության պրոբլեմը»* ձեռագիր տետրակներն առաջին անգամ տպագրվել են 2002 թվականին, Երեւանում: Ձեռագրերը գրվել են, հավանաբար, անցյալ դարի 30-ական թվականների վերջին ու թեեւ ավարտուն աշխատություններ չեն (այլ՝ գրառումներ), այդուհանդերձ, ունեն անգնահատելի արժեք:

Օրենքը - դա ընկերային մի մեծ ուժ է, ժողովրդական մի հզոր պաշտպանություն, երբ ծնունդ է առնում մարդկանց ներքին կյանքում եւ ապա նվաճում նրանց արտաքին կյանքը:

Կատարյալ ներդաշնակություն հաստատությանց եւ մարդկանց միջեւ, հանրային իրավակարգի եւ ժողովրդի ոգեկառույցի միջեւ:

Երբ ժողովրդի հոգին ավելի կուլտուրական է, քան իրավակարգը, պետական ռեժիմը փոխվում է բռնությամբ, հեղափոխությամբ:

Երբ հակառակն է՝ պետության ղեկավարությունը անցնում է բախտախնդիրների ձեռքը, բռնակալների, որոնք օգտվելով զանգվածների հոգեկան կուրությունից, երկիրը դարձնում են իրենց կրքերի եւ անձն[ական] շահերի շահաստան (այդպես են Եվրոպայի հարավարեւելյան երկրները՝ Հունաստանը, Սերբիան, Ռումանիան, Բուլղարիան, Թուրքիան):

Քաղաք[ական] ազատությունը ծնունդն է բարոյական ազատության:

Ազատ կյանք կա միայն այնտեղ, ուր անխաթար խղճմտանքներ կան (Ռենան):

Մարդս տալիս է իր մերձավորներին միայն այն, ինչ որ ունի:

Ազատության նախապայմանը - ինքնատիրապետումն է, ինքնահաղթահարումը, իր տկարությանց հաղթահարումը:

Ազատագրությունը - դա զենքի գործ է, հաջողության, հաղթանակի:

Ճշմարիտ ազատությունը - դա սկսվում է բարոյական վերանորոգմամբ, վերածնունդով:

Ամենահմաստուն եւ ամենազորավոր հեղափոխականը ժամանակն է:

Դիպվածական եւ լրիվ ազատագրություն առանց հոգեւոր վերադաստիարակության եւ առանց քաղաքաց[իական] տղամարդացումի, գիտական անհեթեթություն է:

Սեկտանտն ասում է՝ գաղափարն ամեն ինչ է, մարդը՝ ոչինչ (հաստատությունները ամեն ինչ, անհատը՝ ոչինչ): (Հաստատությունը - դա կոնկրետացյալ գաղափար է): Դա ասել է՝ հաստատությունները չեն ստեղծված մարդու համար, այլ մարդը՝ հաստատության: Նմանները մոռանում են, որ ամենապայծառ գաղափարը մնում է իբրեւ չոր աբստրակցիա, երբ կապը կտրված է նրա [եւ] հասարակական ոգեկառույցի միջեւ:

Ռեժիմը չի ուղղում մարդկանց, ընդհակառակը՝ մարդիկ են սրբագրում, փոխում ռեժիմը:

Հաստատությունները պիտի արտահայտեն կենցաղը, ավանդությունները, հավատալիքները, ձգտումը ցեղային առանձնահատկությունների այն ժողովրդի, որի համար կյանքի են կոչված (քրդերին տալ շվեյցարական սահմանադրություն ! ?):

Ինձ կարելի է պարտադրել մի օտարոտի ռեժիմ, բայց ինձ չի կարե-

լի դա դարձնել հասկանալի եւ ընդունելի: (Իսկ մարդս չի կապվում այն բանին, որ չի հասկանում):

Հաստատությունները հոգի ունեն: Հոգի ունեն նաեւ ժողովրդ[ա-կան] զանգվածները: Անհրաժեշտ է սերտ կապ սրանց միջեւ: Միայն այդ դեպքում [է] բարերարը:

Օրենքը՝ նախ մտայնություն ոգու մեջ եւ ապա հետո՝ իբրեւ սահմա-նադրություն: (La loi écrite suppose la loi non écrite. Renan).

Պետություն, որ նման է ձեզ (Սոլոն):

Ոչ թե նորը, այլ նորոգում (Ցիցերոն) (Non nova, sed noviter!):

Օրենսդիրը ոչինչ պիտի ստեղծի, որ կկրեր աբսոլյուտ նորության բնույթ (չտեսնված, չլսված, չսպասված): Նա նախ պիտի ուսումնասիրե հասարակական պսիխիկան եւ յուր օրենքը պիտի հարմարացնե նրան:

Չի կարելի արագորեն հասունացնել: Գոյություն չունի արագ պրոգրես: Արհեստականորեն արագացված պրոգրեսը արհեստականո-րեն արագացված անկում է:

Պատմությունը մի բան գիտե - աստիճանական տրանսֆորմացիա:

Կատարելությունը չի կարելի իմպրովիզե՛ անել: Գազան-անասունը մարդու մեջ ավելի է ուժեղանում, երբ ուզում ենք մեկեն, առանց աստիճանական բարելավումի - դարձնել կատարյալ էակ:

Բոլոր վերանորոգումները պետք է հաշտեցնենք ավանդությունների հետ: (Հյուս[իսային] բեւեռում վարդեր չեն բացվում):

(Ժողովրդիս սոցիալիզմ տվի, կարծելով, որ դա էլեքսիր է երջան-կության, բայց դուրս եկավ, որ սոցիալիզմը նրա համար մահաբեր թույն է:

Եվ այժմ մեռնում եմ այն սպանիչ գիտակցությամբ, որ սպանել եմ ժողովուրդս):

Ամեն քաղաքա-սոցիալական բռնացում՝ խեղում է ժողովրդի հոգին:

Պրոգրեսը փիլիսոփայության խնդիր չէ, այլ ժամանակի: Քաղա-քականության եւ պատմության մեջ պետք է թիկունք դարձնենք տեսու-թյուններին եւ հենվենք փաստերին:

Իր աճումի մեջ բռնացումի ենթարկվող ժողովուրդը մեռնում է հոգե-պես: (Բարին բնության մեջ աստիճանական բարին է - պտուղը, երեխան, աշակերտը դպրոցում...):

Ընդհանուր բարիքը դառնում է չարիք, երբ չի արտացոլում մաս-նավոր բարիքը:

Երբ ես լավ եմ - ասել է լավ է հասարակությունը: (! ? Չէ, երբ լավ է ժողովուրդը - լավ եմ եւ ես):

Նորվեգիացին՝ ամեն բանից առաջ հայրենիքս:

Շվեդացին - ես ազատ եմ (երգում է), բայց իմ ազատությունից պիտի օգտվեմ օրենքին ենթարկվելու համար:

Իտալացին եւ իսպանացին, երբ դժգոհ է, իրեն համարում է օտարական յուր սեփական երկրում (քաջությունը սրանց մոտ ճշմարիտ արիություն չէ, հերոսություն չէ: Դա մոտենում է այն համարձակության, որ արեւելցիները անվանում են փեհլեւանություն):

Նա, ով ասում է ես ամեն բանից առաջ, ամեն բանից վեր - չի կարող ծառայել ո՛չ գաղափարի, ո՛չ դրոշակի, ո՛չ ցեղի: Դա ծառայեցնում է իրեն ե՛ւ գաղափարը, ե՛ւ դրոշակը, ե՛ւ ցեղը:

Տկար կուլտուրայի տեր ժողովուրդների մոտ գոյություն չունի իդեական կուսակցական պայքար, այլ՝ կա պարտիզանականություն, իսկ պարտիզանականությունը ժխտումն է իդեականությանն:

Բուլղարիան - քաղաք[ական] սպանությունների դասական երկիրը:

Պարտիզանշչինան ենթադրում է խղճմտանքի եւ բարոյականի անկում:

Գիտությունը հաստատում է, որ քաղաքականության մեջ բացարձակը բացարձակորեն հարաբերական է:

Փաստերը իրավանց բարձրության վրա են - ուր ռեժիմը եւ օրենսդրությունը զարգանում են համաձայն ժողովրդի հոգեւոր մշակույթի:

Չկան մշտական կոնսերվատորներ եւ հեղափոխականներ: Իմաստուն գործիչը պիտի լինի միաժամանակ թե՛ մեկը, թե՛ մյուսը: Ես պահպանողական եմ, երբ վտանգ կա փողոցային անարխիայից, հեղափոխական՝ երբ հանրային մտածողության ու կյանքի քարացում կա: (Ես հանրապետական եմ, երբ գտնվում եմ Շվեյցարիայում, Խուժաստանում՝ մոնարխիստ):

Ժամանակի, տվյալ մոմենտի համար արժեք չունի այն բանը, որ արվում է առանց հաշվի առնելու ժամանակը:

Հոգով թաթարացած ռուսը ազատությունը հասկացավ այնպես, ինչպես որ հոգեհիվանդ Նիցշեն հասկանում է հզորությունը՝ «Իմ մեծության արձանը պիտի ցցվի փլատակներից եւ դիակներից կազմված մի լեռան վրա»:

De la doctrine à la pratique il y à du chemin.- Դոքտ[րինայից] մինչեւ պրակտիկան մեծ ճամփա կա (Գամեքարու):

Իմ նպատակն է մասնավոր փաստերից եւ երեւույթներից բարձրանալ մարդկության ընդհանուր օրենքներին: Դա question de fact - է, փաստի հարց է:

Ընդհանուր վտանգի ժամանակ միջկուսակցական կռիվները ազգասպանության են հավասար:

Իշխանությունը դառնում է օրինականացյալ անիշխանություն, երբ ընդհանուր խղճմտանքի կոնտրոլ չկա:

Փնտրիր պատճառը անցքերի եւ իմաստը փաստերի - հասարակագիտական մեծ սկզբունքների լույսի տակ:

Քաղ[աքական] ազատությունը ծնունդ է առնում բարոյականից:

Սոցիալական խնդիրը բարոյական խնդիր է: Օրենքը փոխելե առաջ, փոխիր մարդը:

Ergo*, քաղաք[ական] ռեժիմը պիտի ներդաշնակ լինի մշակույթին:

Ամբողջական էմանսիպացիան մեկեն գիտական ересь** է:

Ազատ օրենքները դառնում են տեւական, երբ զարգանում են հասարակ[ական] ոգուն զուգահեռ:

Օրենքները լինում են երկարատեւ միայն այն ժամանակ, երբ համապատասխանում են բարքերին:

Գրված օրենքի աղբյուրը չգրված օրենքն է (որ գրված է սրտում):

Բարքերը զարգանում են եւ ուշ թե <շուտ> պարտադրվում որոշումներով:

Ամեն բարեփոխում պետք է սկսվի խղճմտանքից:

Ահա այն սկզբունքները, որոնց վրա հանգչում է պատմության փիլիսոփայությունը:

Իմաստաբար դեն ենք նետում միայն այն, որը կարող ենք հաջողաբար փոխարինել:

Որքան արժեն մարդիկ, այնքան էլ արժեն նրանց տրված ֆունկցիաները:

Ազատությունը չի առնվում, այն սովորում են:

Ամեն մի աղետի, դժբախտության արմատում գտնում ենք մի սխալ կամ մի մոլորանք:

Միայն իրերի սիրտը թափանցելով կարելի է նրանք վերստեղծել:

Ինչ որ ընտրողներն են, այն էլ ընտրյալները:

Իրավունքն առանց ուժի պարզ աբստրակցիա է:

Իդեոլոգները սխալվում են կարծելով, թե ազատությունը կարող է իմաստություն ծնել, ընդհ[անուր] իմաստությունն է ծնում ազատությունը:

Կոպիտ բռնությունը միշտ էլ առաջացնում է ընդդիմություն:

Հանրապետություն սահմանադրելը հեշտ է, դժվար է սահմանադրականներ ստեղծելը:

Քաղաքականությունը հավասարակշռության գիտություն է:

Քաղ[աքական] իմաստությունը գտնվում է չափավորության մեջ:

Սրանք են պատմության պոզիտիվ դասերը, պրոգրեսի օրենքները:

(Գիզո, Շատոբրիան, Տիերի, Մինե, Տիետ, Միշել, Տոկվիլ, Կինե, Դյուրյուր, Ռենան, Տեն, Բարանտ, Կուլանժ, Օգ. Կոնտ):

---

* *Ergo - (լատ.)՝ հետեւաբար:*

** Ересь - հերձված:

ԱՇԽԱՐՀԱՅԱՑՔԱՅԻՆ ԱՐԴԱՐԱՑՈՒՄՆԵՐ. ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՐԴԸ

Ռենեսանսը վերանորոգեց նախաքրիստոնեական դասական մարդու իդեալը: Հակառակ միջնադարին, որ գտնվում էր եկեղեցու հեղինակության իշխանության տակ, Ռենեսանսը ձգտում էր մարդու լրիվ ազատագրության: Ազատություն եւ անհատապաշտություն - այդ երկու հիմնական գծերն էին բնութագրում վերածնն[դի] շարժումը: Ոչ մի մորալ, սահմանափակում - թողնված ինքն իրեն - մարդս ինքը պիտի գտնի իր երջանկության ճամփան: Այստեղից է բնորոշ գիծը Ռենեսանսի - օպտիմիզմը: Այսպիսով ազատագրվեց էգոիզմը:

Մարդու «ազատագրության» 2-րդ քայլը կատարեց ռացիոնալիզմը, որը հեռացրեց <Աստծուն> աշխարհից եւ մարդուց: Ըստ նրա՝ աշխարհում գոյություն ունի միայն մեքենական պատճառականություն: Տիեզերքի կատարյալ մեխանիզմում տեղ չկա արտաքին միջամտությանն: Դեիզմը Աստծու տեղը որոշեց տիեզերքեն դուրս (Տրանսցենդենտ Աստված):

Երրորդ քայլը կատարեց պոզիտիվիզմը, աստվածաբանությունը եւ մետաֆիզիկան համարելով մարդկության կողմից ապրված-անցած զարգացման երկու ստադիաներ: Մարդս պիտի հետաքրքրվի միայն փորձառական իրականությամբ:

Այդ աշխարհայացքային ըմբռնումները գործադրություն գտան նաեւ էկոնոմիկական գիտության մեջ եւ ազդեցություն՝ տնտեսական կյանքի եւ արտադրության վրա: Ազատատենչությունը՝ այնքան հատուկ Ռենեսանսի էպոխային՝ թափանցեց տնտեսագիտական մտածողության մեջ: Ազատություն մտքի, սրտի եւ աշխատանքի - այսինքն՝ անձնավորության եւ նրա հանրային հարաբերությանց - սա պիտի անդրադառնար կյանքի ամենալայն ասպարեզի - տնտեսության վրա:

Ադամ Սմիտը (1723-1790), որից սկսվում է տնտեսագիտությունը՝ ստեղծեց էկոնոմիկական լիբերալիզմը: Ըստ նրա, ինչպես տիեզերքը մի մեխանիզմ է, որ հետեւում է իր օրենքներին, կատարյալ ներդաշնակության մեջ, առանց կարիքն զգալու Աստծո միջամտության, այնպես էլ հասարակությունը մի մեխանիզմ է, որ ինքն է ղեկավարում իր ուժերը եւ օրենքները, եւ այսպիսով ձեռք բերում անհրաժեշտ ներդաշնակությունը:

Տնտեսական գործունեությունը - դա մի փակ մեքենական սիստեմ է, որ կարող է ամենալրիվ ներդաշնակությունը ստեղծել, երբ պետությունը եւ բարոյական օրենքը չեն միջամտում:

Երեք ֆակտորներ են շարժում տնտեսական կյանքը - ազատություն, շահ, մրցում, որոնք փոխադարձաբար կանոնավորում են իրար: Շարժիչը - տնտեսական էգոիզմն է:

Ergo գոյության պայքարը հասարակ[ության] կյանքում չպետք է սահմանափակել, այլ պիտի թողնել ազատ, քանզի դա է օրենքը առաջադիմության:

Դարվինը այդ օրենքը վերագրեց ողջ օրգանական բնության: Ամեն կենդանի արարած գտնվում է մշտատեւ գոյության պայքարի մեջ: Հաղթում է ավելի զորավորը եւ ավելի հարմարը: Այս ճամփով է տեղի ունենում բնական ընտրողությունը. արժեքավորը եւ զորավորը կյանքում: Նույնը տնտեսության մեջ:

Տնտեսապես տկարները եւ սակավարժեքները կկորչեն, իսկ զորավորները եւ արժեքավորները կշարժեն տնտես[ական] կյանքը: Ընկածները կծառայեն իբրեւ τοpr առաջադիմության:

Այսպես տնտեսագիտությունը արտացոլեց էպոխայի գաղափարները - ազատություն, անհատապաշտություն, ռացիոնալիստական լավատեսություն եւ էգոիզմ, իբրեւ օրենք գոյության պայքարի: Պոզիտիվիզմը ետ մղելով հավատը եւ մետաֆիզիկան՝ կտրեց մարդկ[ային] միտքը գերբնական իրականությունից: Այսպիսով ծնունդ առավ մատերիալիզմը, որը ավելի եւս ազդեց տնտեսագիտության վրա:

* * *

Քաղաքականությունը նպատակ ունի կարգավորելու մարդկային շահերը, անալիզ անելու նրանց փոփոխականությունը:

Քաղաքականությունը փոփոխական է, ինչպես ինքը՝ կյանքը: Դա կրոնական դոգմա չէ: Դա ապրիոր բաների վրա չի հանգչում: Դա ընթանում է կյանքի հետեւից եւ ստանում նրանից լոզունգներ:

Պետական գործիչը պիտի 3 գիտությանց տվյալներով - պատմափիլիսոփայության, հասարակագիտության եւ զանգվածների հոգեբանության, <տա> ճշմարիտ դիագնոզն այն չարիքի, որ մի ընկերաբան պիտի անվաներ հայկ[ական] ազգային չարիք:

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ

ԵՐՋԱՆԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՏԱՌԱՊԱՆՔ:
ԿԱՐՕԻՔ ԵՐՋԱՆԿ[ՈՒԹՅԱՆ] ՄԱՍԻՆ

Ամենայն ուղխք ի ծով վազեն, եւ ծով ոչ լնու:

Ամենից անհաստատ դաշինքն այն է, որ կնքում ենք բախտի հետ:

Մշտականությունը օտար է իմ բնության: Ես դարձնում եմ իմ անիվը ահա՛ իմ խաղը: Ուժգնորեն դարձնում եմ անիվս. բարձրացի՛ր նրա վրա, եթե չես վախենում՝ վաղը գլխիվայր դուրս գալ:

Ճշմարիտն ասելով՝ ինքդ քեզ պատկանող բարիքներից զրկվեցիր: Իրավունք չունես տրտնջալու իմ դեմ՝ զրկվելով քեզ չպատկանող բաներեն: Հարստություն, դիրք, աստիճան եւ այլն ինձ են պատկանում:

Բախտը նախազգուշացնում է մեզ՝ դավաճանելով:

Պատահական երջանկությունը ե՛ւ անարժեք է, ե՛ւ անարդար:

Ո՞վ է անմատչելի մարդկային չարության եւ զրպարտության համար:

Ապերջանկությունը անհրաժեշտ է առաջադիմության համար:

Բախտն այնքան էլ անսիրտ չէ՝ նա ամեն ինչ չի խլում մեզնից:

Լավագույն ճակատագիրը աշխարհում՝ կյանքի քաղցրություններին մի քիչ դառնություն խառնել:

Երջանկության ծոցում հանգչող սիրտը դեպ ձախորդությունները ավելի զգայուն է լինում:

Մահկանացո՛ւ, ինչո՞ւ քեզնից դուրս կփնտրես երջանկությունը, որը քո մեջ կկրես: Մոլորանքի եւ տգիտության մռայլ ամպը խանգարում է ձեզ՝ տեսնելու զայն:

Պատահական երջանկությունը լինում է վաղանցիկ: Նրա վարդերը շուտ են թառամում եւ մնում է միայն փշալի ոստը:

Եթե երջանկությունը մեզ չի ազատում վախեն՝ անարժեք է դա:

Եթե իմ հարստությունը դառնում է պատճառ ուրիշների չքավորության՝ անեծք է դա: Ինչո՞ւ ես մուրացկանորեն ուրիշեն՝ բախտեն բարիքներ սպասում, երբ կարող ես սեփականդ ունենալ:

Հարստությունը, ճիշտ է, կխոստանա, բայց չի տար մեզ երջանկություն (հարցրո՛ւ հարուստին, թե իր հոգին մի վայրկյան ազա՞տ է հոգսերից եւ ծանձրույթից: Չկորցնել, ավելին շահել...):

Գերագույն երջանկությունը դա է, որ պատճառ կդառնա եւ այլոց երջանկության:

Աստիճանն արգելո՞ւմ է տկարությանց մուտք գործելու մեր սիրտը: (Թերությունը, մեղքը, հանցանքը աստիճանավորի մոտ ավելի մատնիչ են եւ ավելի զզվելի):

Արդյո՞ք նվազ են խծբծում նրան, որի ճակատը լուսավորված է փառքի ճառագայթներով:

Երջանկությունը զորությո՞ւն է, հապա ինչո՞ւ նրա առջեւ կդողա երջանիկը (դա կորցնելու մտածումեն կդողա):

Կան հաճույքներ, որոնք սիրինային ցանցեր են:

Հաճախ ասելով այդ, մենք ավելի մոտեցած կլինենք ճշմարտության սրբարանին, հաճախ մեզ այցելում է երջանկության ուրվականը, նրա կրկներեւույթը եւ մենք՝ երջանկածարավ մարդը միամտորեն այն երջանկության տեղ է ընդունում:

Ճշմ[արիտ] երջանկությունն այն է, որը միաժամանակ բարի է դարձնում մարդս:

Իմ թախծության գլխավոր պատճառը այն է, որ Չարը գոյություն ունի եւ ընթանում է առանց պատժի այն աշխարհում, որի թե՛ ստեղծիչը եւ թե՛ վարիչը անսահման բարի էակ է:

Առաքինությունը ոչ թե չէ վարձատրվում, այլեւ հալածվում է անողոքաբար: Դա ոտնակոխ ընկած է մեղքի ոտքերի առջեւ եւ խմում է դառն բաժակը՝ որը չարագործները պիտի դատարկեին:

Սխալ է, միայն ազնիվն է զորավոր:

Մեղքը չի մնում անպատիժ, առաքինությունը՝ չվարձատրված:

Արատավորությունը տկարություն է:

Առաքինությունը՝ հզորություն:

Անզորությունը հավիտենական ճամփորդակիցն է չարաբարոյության:

Չարություն գործելը - անզորության նշան է:

Կարելիություն ունենալ չարիք գործելու - հզորություն չէ:

Ուրախացուցիչ խղճմտանքը հետեւանք է բարեսիրության:

Երջանկություն - դա մեղանչելու ազատություն չէ, ինչպես եւ անպատժելիություն չէ:

Չարերի հզորությունը ցնորք է:

Իմաստունը չի լքվում, երբ բախտը զինվեց նրա դեմ, ինչպես քաջ զորականը չի զայրանում, երբ նրա ականջին զենքերի շաչյունն է հասնում:

Մաքուր մարմինը՝ դա անսահման ուժերի ամբար է:

Երջանկության փոխարեն մենք նրա ստվերն ենք հալածում:

Քաղաքականապես ազատ ենք, բայց եւ այնպես ստրկականության շղթաների հետքեր ենք թողնում:

Ամեն մի ձախորդությանդ դեմ տուր առաքինությանդ եւ հույսիդ վահանը:

Ամեն ինչ կատարիր արթուն խղճմտանքիդ աչքի առջեւ:

ԿՈՐԾԱՆԻՉ, ԿՈՐՍՏԱԲԵՐ ԵՐԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԱՐՀԵՍՏԱԿԱՆ, ԽԱԲՈՒՍԻԿ ԴՐԱԽՏԸ

Որոնք են նախապատճառները՝ հաշիշի, մորֆինի եւ կոկաինի միջոցով արբենալու պահանջի. երեք են պատճառները՝ անձնական, հասարակական, միջազգային:

Բարձր կյանքի կարիքը, ֆիզիկական եւ հոգեւոր ուժերի ազատ արտահայտության կյանքի կարիքը, հարստանալու ծարավը, քանզի առօրյան հաճախ ծանր եւ անուրախ է: Այնքան պարտականություններ կծանրանան ու կճնշեն անհատի հոգու վրա, դա վարում է մի անհավասար գոյության պայքար, ենթակա այնքան զրկանքների եւ ստորացում-ների: Ոչինչ խորապես չի շոշափում մեր հոգին: Չկան տոներ, չկա շեփոր, չկա խենթացուցիչ ուրախություն: Այդ պայմաններում մարդուս թե՛ ֆիզ[իկական] եւ թե՛ հոգեւ[որ] ուժերը նվազում են եւ աշխարհը սկսվում է թվալ միօրինակ եւ անհրապույր:

Կյանքի տնտեսական եւ ընկերային պայմանները, ուր իշխում են անհրավությունն ու անարդարությունը, ուր հաղթական են ճարպիկ, անգրոշ միջակությունները, անձնակենտրոնները, սակավարժեքները, ուր ավելորդ մարդ են սեւատեսները, մելանքոլիայի ենթակաները, տկարակամները եւ ազնիվները:

Արդար է Բոդլերը՝ մարդկ[ային] սիրտը իր մեջ կրում է սաղմը ավելի բարձրիբարձր կյանքի, որի մեջ նա իրեն տեր եւ ոչ ստրուկ պիտի զգա, որի մեջ գեղեցկություն, ուրախություն, թեթեւություն պիտի զգա՝ տոն կուզե:

Նա, եղել է մի վայրկյան, երբ ճաշակել է երջանկությունը եւ գիտե նրա քաղցրությունը, գիտե, թե որքան գեղեցիկ է եւ մեծ աշխարհը, երբ երջանիկ ես, եւ վերստին կփնտրե հինը…

Նա գիտե, որ հնարավոր է երջանկությունը, բայց կդժվարանա իրեն երջանիկ զգալ - ահա նրա ողբերգության ակն ու աղբյուրը:

Սոցիալիզմի դար է - քրիստ[ոնեության] երկինքեն զատ կա երկիրը, որի վրա Դրախտ կփնտրե, կկարոտե, կերազե:

Ձղերի դար է, հիվանդ, անասելիորեն զգայուն՝ երջանկությունը, որը հաշիշի դեր կատարեր իր ցավերի դեմ:

Բայց խուսափում է մեր կարելիություններեն, այդ Դրախտը, մենք նկրտում ենք մտքով խաբել կյանքը, մենք նետվում ենք դեպ արհեստական ու խաբուսիկ դրախտը՝ էվֆորիստիկ թույների, նարկոտիկների խաբուսիկ Դրախտը, մենք խորտակում ենք նրա դռները եւ ներս

խուժում… Մենք հիվանդոտ երանություն ենք փնտրում, որը մեզ առերեւույթ ազատում է կյանքի վշտերեն եւ պարտականություններեն, եւ մթագնելով մեր գիտակցությունը եւ էքզալտե անելով մեր զգացումները՝ մեզ տալիս է խոր ապրումների իլյուզիան:

«Մի ժամ առանց օպիումի, ահա՛ սարսափը, անզերծանելի ցավը, որից չկա փրկություն, քանզի այդ ծարավը եւ նրա հագեցումը չի կարող դա մարել: Ես անիծյալն եմ, որը тльещава жертва-են ազատվելու համար ընկնում է հալած արճիճի մեջ» - (Կլոդ Ֆաբետ) «մի բան միայն, մի բայ - տառապում էր»:

«Ո՛չ երջանկությունը, ո՛չ էլ դժբախտությունը ստեղծած են մի մեծ բան կյանքում»:

Եթե կյանքի նպատակը հաճույքը համարեցիր՝ վախճանդ կորուստն է:

Այլ է կյանքի նպատակը՝ ուրախ զոհաբերության ճամփով դեպ կատարելություն: (Եթե հաճույքը լիներ կյանքի նպատակը - սողողները եւ պարալիտիկը երջանիկ պիտի համարվեն, քանզի ապրում են մի անհեթեթ հաճույքի փղոսկրյա ապարանքներում…):

Մոռացում կա՛մ էկզալտացիա - ահա թե ինչ է փնտրում նարկոտիկը - կա՛մ մարել ցավը, կա՛մ սաստկացնել գրգիռը ոգու:

Արեւելքը հաշիշիստ է եւ օպիումիստ:

Արեւմուտքը - ալկոհոլ եւ կոկաին:

Հաշիշը ոչինչ չի տալիս, նա միայն ամպլիֆե է անում, մեծացնում այն, ինչ որ կա ենթակայի մեջ եւ նրանից դուրս:

Խորացված անալիզը հաշիշարբեցումի ֆիզիկական եւ հոգեւոր բավականության սուտ զգացողություն, անճառելի ուրախություն:

Կա գաղափարների հիպերտրոֆիայի ֆազան: Գաղափարները ծնում եւ զարգանում են հրեշային արագությամբ: Կարծեք ասոցիացիայի օրենքներեն դուրս լինեն:

«Ամենապարզ բաները - Շարլ Ռիշե - թվում են թատրոնականորեն էֆեկտավոր»:

Անձնական գերազանցության գաղափարը չափազանց զորավոր է հարբած հաշիշիստի մոտ:

Փախուստ ներկայեն: Ուշադրության եւ տրամաբանության վրա, որոնք մթագնում են եւ կորչում, իշխում են հիշողությունը եւ երեւակայությունը, որի շնորհիվ իրերը եւ անցքերը մեր շուրջը դառնում են օտար եւ անհատը, ամբողջապես անցյալի եւ ապագայի իշխանության տակ է - մեկը տրված հիշատակների եւ ապրումների, մյուսը՝ երեւակայության մեջ:

Հիշողությունը եւ զգայարանքները սրվում են, եւ որպես հետեւանք՝ հիշատակներն ու պարագաները ընդունում են տարօրինակ չափեր: Ոգին

անսահմանության, անմահության դռներն է բախում, մեր էության նեկտարը խմում:

Գույները սկսում են երգել, հնչյունները ստանում են երանգներ, պարֆյումների մեղեդիներ:

Անձնավորությունը սկսում է կորչել եւ միաձուլվում է իրերի հետ: Գաղափարը՝ ժամանակի եւ տարածության, չքանում է: Ակնթարթերը թվում են որպես հավիտենականություն, եւ հավիտենականությունը խտանում է մի ակնթարթի մեջ: Ահա ձեզ ռելատիվ տեսությունը՝ տրված հիվանդոտ ապրումների մեջ:

Պասիվ հայեցումն աշխարհի - ահա արեւելքցու փնտրածը: Իսկ հաշիշիստը չի կարող մի բարդ եւ զորավոր շարժում կատարել դեպի տվյալ նպատակը: Դժվար կկենտրոնացնի իր ուշադրությունը (պսիխոլոգ եւ ֆիզ[իոլոգ] Լանգե):

Գերզգայականությունը հաշիշային արբեցումի դեպքում (պսիխիատոր Բենե) լսողական եւ տեսողական հալյուցինացիաներ: Հակում դեպի մակրոսկոպիա - ամեն ինչ մեծացված վիճակի մեջ տեսնել: Պատկերների եւ դատողությանց քառատրոփում (գալ օպերուկիստ):

«Խենթության ալիք» - զգացողական դեֆորմացիաներ, գաղափարային դեֆորմացիա, որի դեպքում մի տեսակ «շոգի» է բարձրանում երկրից եւ պատում նրանց մարմինը: Այդ աուրան: Հեռավոր եւ քաղցր մի կարոտ եւ անհանգստություն է լեցնում մեզ:

Երբեմն դա հասցնում է կոսմիկական չեզոքացումի, առանձնացումի զգացողության: Անհատը մենակ նետված է տիեզերական լռության մեջ:

Ճշմարիտ է ասում Բոդլերը՝ «Ով որ չէ ծնել ընդունելու կյանքի պայմանները, ծախում է իր հոգին»:

Հիպերակուզիա - լսողության կենտրոնը թունավորված է - անհեթեթ ֆանտաստիկա:

Իդեֆիքսեր - սեռային անամոթություններ, էքսհիբիցիոնիզմ, բռնություն:

Միջակության օրենքը, որը ղեկավարում է ամբողջ բիոլոգիան: Ամեն մի օրգանիզմ ունի իր չափը, ամեն մի խելք՝ իր սահմանները, եւ որոնք հաղթահարելը կամ անցնելը մեզ չէ թույլատրված: Պետք է միջակ լինել մեծ անձի հանդեպ, թող որ դա տառապանք է ընտրյալ ոգիների համար:

Մեր բնազանցական կարոտը բացարձակեն չենք առներ ոչ հեշտասիրական ցնցումների, ոչ մեր խելագար ամբիցիաների, ոչ միստիկ արբեցումների, ոչ էլ արտաիրական հայեցողությունների մեջ:

Պետք է կյանքն ընդունել այնպես, ինչպես որ է դա եւ ազնիվ ճիգերով ծառայենք նրան՝ զայն ավելի եւ ավելի գեղեցկացնելու եւ իմաստավորելու համար:

Ապրեցա՜, կարող է բացականչել միայն նա, որը գիտե վարել իր հստակ, կամային եւ զորաց միտքը, որի զգացումը արթուն է, որը ջրդեղել է իր կամքը ժայռեր խորտակող, հատուկ է մեծ զոհաբերությանց եւ մեծագործությունների համար: Նա, որն ընդունում է, թե տառապանքը կարեւոր եւ անհրաժեշտ բաժինն է մեր գոյության:

Հաշիշը տկարացնում է եւ հաճախ իսպառ ոչնչացնում մեր քննադատական վերաբերումը դեպ աշխարհն ու իրերը, ինչպես եւ մեր ինքնակոնտրոլը, տալով մեզ վայրկյանորեն երջանկություն:

Իլյուզիան՝ դա մեզ, ապուշացրած, դարձնում է ճշմարտորեն ապերջանիկ:

ՎՃԱՐԵԼ «ԿԱՆԱՑԻ ԴՐԱՄՈՎ» («ЖЕНСКОЙ МОНЕТОЙ»)

D.-r էրնեստ Շամբարը իր «Մորֆինոմոզներ» գեղեցիկ գրքի մեջ, իմիջիայլոց ասում է՝ «Կենդանիների թագավորը թանկ է գնում իր գերազանցությունը եւ իր հզորությունը - նա ճանաչում է վիշտը, հետաքրքրությունը եւ ձանձրույթը: Եվ սրա համար նա չէ <խնայում> ամեն տեղ եւ ամեն ժամ միջոցներ՝ փախչելու իր չքավորության գիտակցությունեն: Եվ սրա համար նա գտել է 3 ճամփաներ - մահը, գործունեությունը եւ ցնորքը: Առաջինը պահանջում է համարձակություն, 2-րդը՝ կորով, իսկ ցնորքը բոլորի կարելիությանց սահմաններում է գտնվում: Եվ «մտքի թույները» ընձեռում են մարդուն, ով որոշում է մոռանալ կյանքը, գրեթե անսպասելի միջոցներ»:

Տառապանքը անհրաժեշտ մաս է մարդկ[ային] մեծության, եւ նա, որ ճգնում է հեռացնելու դա՝ սպանում է մարդկային բնության ամենաազնիվ կողմը:

ԿՈԿԱԻՆՅԱՆ ԱՐԲԵՑՈՒՄ

Սկսվում է մի քանի վայրկյանեն եւ շարունակվում 2-3 ժամ: Տարածվում է ցրտությունը դեմքի վրա: Հետո գալիս է էֆորիան - ներքին խոր բավականությունը ոգու՝ արթնցած, թեւառած, թռած բարձրորեն կյանքի վշտերի, նվաստությունների եւ միզերիաների վրա: Պարտականությունները, հրամանները օրենքի եւ մորալի թվում են մանր եւ հիմար պայմանականություններ, որոնց մասին չպետք է մտածել: Ծնունդ է առնում զորության եւ ուժի զգացումը: Միտքն իշխում է եւ կարող է ամեն ինչ անել: Մի գործոն, հաղթական ուրախություն է հեղեղել մեր հոգին: Մորֆինիզմը ձգտում է իրականացնելու առօրեայի իդեալը - նիրվանա, քաղցր ինքնախորացում եւ անդորր: Իսկ կոկաինիզմը ձգտում է Նիցշեի իդեալին՝

հզորության կամքը - անձնավորության գործուն՝ հաղթական արտահայտությունը աշխարհի վրա:

Ազատ է, համարձակ, ունի անդուլ գերազանց զգացում: Երջանիկ է, որ ապրում է:

Պակասում է դիսցիպլինե եղած կամքը:

Սեռական Նագունը էկզալտե է եղած եւ համարձակ է:

Անցավ արբեցումը՝ գալիս է դեպրեսիան:

Դա դառնում է մռայլ, գերագրեսիվ, միզանտրոպ եւ հարձակողական:

* * *

Հավիտենական ու կատաղի պայքար ճակատագրի հետ - ահա անհատ, թե հավաք մարդու կյանքը:

Հաղթանակը (ազատ տերն զգալու համար):

Չկա Հայաստանը՝ ինձ համար չկա երջանկություն: Հարստություն, փառք, դրախտ - անզոր են ինձ երջանկացնելու:

Այսօր կա մեղքի եւ տկարության գիտակցությունը՝ սպանիչ:

Երկինքը նվազ կնայենք…

Գիտության լույսի հետ կաճե հիվանդությանց թիվը:

Փիլիսոփ[այական] սիստեմները դեռ երեկ փրկարար՝ այսօր կցնդեն…

Ըստ ամենայնի անբարոյական է իրեն երջանիկ զգացող անհայրենիքը, լինի դա անհատ, թե ժողովուրդ:

ՄԱՏՆՈՒԹԻ՞Ն, ԹԷ՞ ՊՐՈՎՈԿԱՑԻԱ

Որոշ թերթերում կարդացի մի յայտարարութիւն իմ մասին:

Որպէս թէ «հակակուսակցական» եւ «հակակարգապահական» ինչ-որ «արարքներու համար» հեռացուած եմ Հ. Յ. Դաշնակցութիւնից:

Երրորդ պրովոկացիան է դա, որ տեղի է ունենում վերջին երկու տարուայ ընթացքին Բուլղարիայում ապրող, երկրից եկած, որոշ մտաւորականների դէմ:

Անմիջապէս ասեմ, որ այդ բոլորի հեղինակը Ռուբէն Տէր-Մինասեանն է՝ տարիների իմ անձի եւ իմ քարոզած ցեղահոգ - դասակարգ, հատուածականութիւն եւ սուտ սոցիալիզմ ժխտող - դաշնակցականութեան թշնամին:

Աշխարհը գիտէ, որ Բուլղարիայում քաղաքական կուսակցութիւններ չկան եւ կուսակցական պատկանելիութիւնը պատժւում է:

Տէր-Մինասեանը գիտէ նաեւ այն, որ դեռ երէկ էր, ի՛նչ Եավորովի արձանի բացման եւ Քրիստափորի մահուան 30-ամեակին նուիրուած մեր հանդիսութեանց առթիւ՝ մեզնով զբաղուող եւ մեր ցեղի գոյութեան թշնամի երկրի մամուլը մերկացումներ եւ յարձակումներ կատարեց իմ դէմ:

Այժմ, որի՞ն է ծառայում այս մարդը եւ ի՞նչ է իր կատարածը - պրովոկացիա՞, թէ՞ մատնութիւն:

Չորրորդ տարին է, ինչ լռում եմ այն մասին, որ այդ մարդը անձնական հաշիւներով դաւեր է նիւթել իմ սկսած ցեղակրօն շարժման դէմ, այդ վերջինը Ամերիկայով սահմանափակելու եւ իր խանձարուրի մէջ խեղդելու նպատակով:

Այդ եւ ուրիշ աւելի ծանր խնդիրների կապակցութեամբ՝ ես վաղուց նրան մեղադրել եմ որպէս դաւադիր եւ պահանջել մերկացումը նիւթուած դաւերի: Այդ կարելիութիւնը, շատ հասկանալի պատճառներով, ինձ չտրուեց եւ ես ժամանակին նաեւ սոֆիաբնակ երեք անձերի ձեռքով յղած եմ իմ հրաժարականը: Որից յետոյ մի գրութեամբ ինձնից խնդրել են ետ առնել հրաժարականս: Ես այդ խնդրանքն անգա՛մ պատասխանի չեմ արժանացրել: Իսկ այժմ դուրս է գալիս, որ ո՛չ թէ ես եմ հեռացել՝ ներքին դաւադրութեան մէջ մեղադրելով Տէր-Մինասեանին, այլ որպէս թէ «հակակուսակցական» ընթացքի մէջ եմ գտնուել եւ «հեռացուել»:

Նման բարոյականով կարելի՞ է հայրենիքին եւ ազգին օգտակար լինել:

Հասկանալի չէ՞, որ իր ողջ կեանքը նման բանսարկութիւններով, ընկերադաւութիւններով լեցնող եւ անձնանպատակ թայֆաներով Դաշ-

նակցութեան ներքին կեանքը թունաւորող մէկի հետ կարելի չէ միեւնոյն յարկի տակ լինել:

Վաղուց է, որ այս մարդու ներկայութիւնը ղեկավարութեան մէջ՝ համարել եմ եւ համարում եմ կատարեալ աղէտ Դաշնակցութեան համար, եւ համոզուել, որ քանի նա դեռ կը յաջողի իր գիտցած ճամբաներով իրեն պարտադրել, իրական եւ կրող ղեկավարութիւն չի ունենայ Դաշնակցութիւնը:

Չեմ ցաւում, որ դեռ 1921 թուականին Հայաստանի մտաւորականութեան հետ փրկել եմ ե՛ւ սրա կեանքը:

Գիտեմ, որ հերթական իր այս տկարութիւնը արդիւնք է իր միակ ընդունակութեան - իր ամէն մի ձախողանքից եւ ուրիշների ամէն մի յաջողութիւնից յետոյ՝ արուեստական թնճուկներ ստեղծել եւ հանրութեան ուշադրութիւնը հեռացնել իր անձէն:

Տէր-Մինասեանի վատութիւնը խորանում է նրանով, որ նա ո՛չ միայն խեղաթիւրում է այսօրուայ մեր յարաբերութիւնների բնոյթը, այլ եւ օգտւում է անցեալի իր մի այլ վատութիւնից:

Ասւում է, որ ես 1921 թուին էլ «պատժուել» եւ «ներուել եմ 10-րդ ընդհ. ժողովի կողմից»: Թէ ո՞վ է «ներուել» այդ ժողովից եւ ո՞վ իբրեւ Թաւրիզի դաւադիր ստացել բարոյական իր պատիժը, երեւում է հէնց նոյն այդ ժողովից, որ ամօթանքով լռել է Տէր-Մինասեանի ստեղծած Կարսի մասին, իսկ իմ վարած Սիւնեաց գոյամարտի վերաբերեալ, թողել է հետեւեալ որոշումը.

- «Զանգեզուրի ապստամբական շարժումները եւ անոր շարունակութիւնը ունեցած են արտակարգ նշանակութիւն՝

1) Մեծամասնականները զգաստացնելու, անոնց բռնութեանց եռանդը չափաւորելու, 2) Փետրուարեան յեղափոխութենէն յետոյ նահանջող ընկերներու, բանակի եւ գաղթականութեան թիկունքը ապահովելու եւ անոնց Պարսկաստան անցքը դիւրացնելու, 3) Զանգեզուրի ամբողջ գաւառը Հայաստանի Հանրապետութեան միացնելու, 4) Արտաքին աշխարհին մէջ մեր հարցի քաղաքական դիրքը ամրացնելու տեսակէտէն»:

Հայրենասէր եւ բարոյականի տէր երկրի ո՞ր հայը դեռ 1921թ.-ին Թաւրիզում չհասկացաւ, որ հենց Կարսի աղէտը աննշան թողնելու եւ անպատասխանատու մնալու նկատումով վայրկեանի պահանջ էր Հայաստանի համար «արտակարգ նշանակութիւն» ունեցող իմ այդ ծառայութեան դէմ դաւել եւ գրել ինձ. *«Թո՛ղ Անդրանիկութիւններդ: Անդրանիկն էլ քեզ պէս վարուեց եւ այժմ անտէր թափառում է Եւրոպայում»:*

Նմանապէս ո՞ր հայն այսօր պիտի չհասկանայ, որ ցեղակրօն շարժումից, վերանորոգչական եւ վերաքննական ոգի ստեղծելու մեր ճիգից,

մեր ստեղծած ցեղային խռովքից եւ մանաւանդ իր համար այնքան անհաճոյ տարօնականութիւնից յետոյ, Տէր-Մինասեանը հոգեբանական նոյն հաշիւներով անհրաժեշտ պիտի չհամարէր կրկնել 1921թ.-ի դաւը իմ դէմ, որպէսզի արուեստական թնճուկով հրապարակը վերստին աղմկելով՝ մոռացնել տար տարիների իր ունայնագործութիւնը եւ ծածկել ներքին պառակտիչի իր մեղքերը:

Ո՞ր հայը չգիտէ, որ խորապէս տարբեր են իմ եւ Տէր-Մինասեանի ըմբռնումները «կուսակցականութեան» եւ «կարգապահութեան» մասին, եւ ո՞վ չգիտէ, որ իմ հասկացած դաշնակցականութիւնը հայութեան տուել է Զանգեզուրը, մահէն փրկել Հայաստանի Դաշնակցութիւնը, իսկ Տէր-Մինասեանի «կուսակցականութիւն»ը եւ «կարգապահութիւն»-ը Կարսի ամօթանքը եւ Քան լերան անօրինակ ողբերգութիւնը:

Երբե՛ք չեմ զարմանում, որ Տէր-Մինասեանը գոհ է այսօրուայ վիճակից եւ սիրտ ունի հայ ժողովրդի աննախընթացօրէն ծանր եւ փափուկ այս դրութեան մէջ իր անձնական թշնամանքն ու ընկերադաւութիւնը հրապարակել արուեստական թնճուկներ ստեղծելու հաշիւներով: Ես, դժգոհ օրուայ կացութիւնից, այսօր չէ, որ հայութեան փրկութիւնը տեսնում եմ վերանորոգումի մէջ: Դժգոհ եւ դաւադրուած՝ ես հեռացայ եւ արիութիւն ունեցայ լռել իմ առած քայլի մասին: Ի՞նչը կարող էր առիթ տալ, որ իմ կողմից դատապարտուածը հրապարակէր իր թշնամանքը՝ խեղաթիւրելով ճշմարտութիւնը:

Ռուբէն Տէր-Մինասեանը տրամադի՞ր է ստանձնել իր ընկերադաւութեան հետեւանքների պատասխանատուութիւնը:

«Ռազմիկ», Սոֆիա, 1938թ., 7 դեկտ., թիւ 59

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

1. XIX դարի երկրորդ կեսերին արեւմտահայերն ապրեցին իրենց պատմության առավել տագնապալից ժամանակաշրջանը: Լինելով դատապարտված պարբերաբար ստրկացման, բռնի մահմեդականացման եւ ֆիզիկական ոչնչացման՝ նրանք վերածվել էին անպաշտպան եւ անօգնական ստրուկների, որոնց հրեշավոր սուլթանականությունը զրկել էր ապրելու տարրական իրավունքներից, ունեցվածքից ու մարդկային արժանապատվությունից:

Եվրոպան ու քաղաքակիրթ մարդկությունը ոչ միայն ոչ մի օգնություն չցուցաբերեցին, այլեւ նույնիսկ հանդես չեկան բարոյական վրդովմունքի սովորական արտահայտություններով:

Այսպիսի քաղաքական իրադրությունում հայերին մնում էր երկուսից մեկը. կա՛մ հարմարվել՝ գոյատեւելու համար, կա՛մ ապստամբել: Նրանք ընտրեցին վերջին ճանապարհը: Հայերը նույնպես ստիպված եղան գնալ հեղափոխական ուղիով, որով մոտ անցյալում գնացել էին թուրքական լծի դառնությունը ճաշակած բոլոր ժողովուրդները:

Այդ ժամանակահատվածում գերիշխում էր «աշխարհին ղեկավարում է կարծիքը» տեսակետը:

Այդ ժամանակվա Եվրոպան ազատության ձգտող ժողովուրդներից պահանջում էր «հավելյալ արյուն»՝ միակ ապացույցը նրա, որ տվյալ ժողովուրդն արժանի է ավելի լավ ճակատագրի: Եվ հայ ժողովուրդը կտրեց իր զարկերակը: Սկսվեց հայ ազատագրական շարժումը՝ որպես պատմական պահի պահանջ:

2. Արեւմտահայերի հեղափոխական շարժմանը շուտով միացավ ռուսահայերի համալսարանական ուսանողությունը: Անցած դարի 90-ական թվականներին առաջացավ Դաշնակցություն կուսակցությունը. այն ստեղծեցին Քրիստափոր Միքայելյանը, Ռոստոմ Զորյանը եւ Սիմոն Զավարյանը: Նրանք սկզբում ուզում էին իրականացնել Դաշնակցության հեղափոխական նախորդների՝ արմենականների ու հնչակյանների համատեղ գոյակցությունը, որոնց գործունեությունը կրում էր անջատ բնույթ: Նրանք փորձեցին ստեղծել հայ ժողովրդի՝ գոյություն ունեցող բոլոր ազատագրական ուժերի միություն: Սակայն, դա չհաջողվեց, եւ, այդպիսով, Դաշնակցությունը, փոխարեն դառնալու հայ հեղափոխականների դաշնակցություն (միություն), մնաց որպես հայ հեղափոխական դաշնակցություն:

Իր գոյության սկզբում այս կազմակերպությունը բնույթով առավելապես հեղափոխական, մարտական եւ ազգային էր: Այդպիսին նա մնաց մինչ 1907թ.: Նրա ծրագրային խնդիրները որքան համեստ էին, այնքան եւ հասկանալի՝ արեւմտահայերի կյանքի, ունեցվածքի ու պատվի ապահովում. այլ կերպ ասած՝ բարենորոգումներ:

Նա որպես մարտավարական զենք ընդունեց հայդուկային հարձակումները, ահաբեկչությունը եւ քարոզչությունը: Առավել գործող էր նրա ահաբեկչական զենքը: Կարճ ժամանակում նա իր ակտիվում ունեցավ որոշ արգասավոր արդյունքներ. օրինակ՝ Օտոմանյան բանկի գրավումը Ստամբուլում, Խանասորի արշավանքը, սուլթան Աբդուլ Համիդի վրա մահափորձը եւ այլն:

«Հայկական պայքարը ցնցել է Եվրոպայի հասարակական կարծիքը»,- գրում էին ֆրանսիական թերթերը սուլթանի դեմ մահափորձի առթիվ:

Դաշնակցությունը վճռականորեն հանդես եկավ նաեւ այն օրերին, երբ ցարական կառավարությունը պատրաստվում էր բռնագրավել եկեղեցական ունեցվածքը: Նա փրկիչ դեր խաղաց հայ-թաթարական ընդհարումների ժամանակ, երբ ցարիզմը ազգամիջյան երկպառակություններ հրահրելով՝ փորձում էր անդրկովկասյան աշխատավորական զանգվածներին հեռու պահել մոտեցող ռուսական հեղափոխության մասնակցությունից:

Հեղափոխական հայդուկը կոփվեց հեղափոխական պայքարում ու դարձավ անձնվիրության եւ անձնազոհության մարմնավորում: Առաջին շրջանի հայդուկներին կարելի է դնել մեր դասական հայրենասերների կողքին՝ չմեղանչելով մեր հերոսական անցյալի դեմ:

Ոչ պակաս հեղինակություն էին վայելում հայ մտավորական հեղափոխականները՝ ժողովրդի վիշտը կիսող նրա զավակները: Նրանց, ինչպես նաեւ հայդուկների համար ազգային գործը սուրբ էր, որին ծառայելը նրանք համարում էին պարտք ու պատիվ:

Իր առաջին շրջանի ժողովրդականության ու հերոսականության համար Դաշնակցությունը պարտական էր հենց այդ երկու կարգի հեղափոխականներին, որոնց առկայությունը պայմանավորված էր Դաշնակցության հիմնադիրների բնութագրերի արտակարգ բարոյականությամբ: Նրանք իրականում մեծություններ էին՝ հայտնի իրենց կենցաղի համարյա զինվորական խստությամբ, ուղիղ նայում էին վտանգի աչքերին, վայելում անվիճելի հեղինակություն: Նրանց համար գերագույն օրենք էր անձնազոհությունը: Նրանք բոլորն էլ չունեին անձնական կյանք եւ մահացան վտանգներով լի հեղափոխական պայքարի դիրքերում:

Անհնարին է զուգահեռներ անցկացնել Դաշնակցության սկզբնական եւ այժմյան ղեկավարների, այն ժամանակվա հայդուկների ու հետո եկած

մաուզերիստների միջեւ՝ առանց հիանալու առաջիններով եւ՝ խորապես նողկալու վերջիններից: Իսկապես, ի՞նչ համեմատություն կարող է լինել Նիկոլ Դումանի եւ ավազակ Դրոյի, լեգենդար Սերոբի ու մորթապաշտ Տեր-Մինասյանի (Ռուբեն փաշա) միջեւ:

3. Սակայն, կուսակցության հիմնադիրների մահը եւ բարձրագույն կուսակցական մտավորականության՝ տեսաբանների ու ղեկավարների ոչնչացումը (հայոց մեծ ողբերգության օրերին՝ Ստամբուլում եւ Թուրքահայաստանում) հոգեպես գլխատեցին Դաշնակցությանը, որն անճանաչելիության աստիճան այլասերվեց:

Նոր ղեկավարության հոգեւոր աղքատությունը շուտով իր կնիքը դրեց Դաշնակցության դեմքին ու գործունեությանը: Լինելով փոքր տրամաչափի բարոյական մարդիկ՝ նոր ղեկավարները եղան անարժան ու անհավատարիմ իրենց առաջնորդներին, որոնց համար կյանքի հիմնական սկզբունքը, ինչպես պատմական անցյալում, այնպես էլ իրենց ապրած օրերին, եղավ գաղափարների սրբությունը, որին նվիրեցին իրենց եւ հենց այդ վեհ գաղափարներով էլ ձեռնամուխ եղան հայ ազատագրական շարժմանը:

Նոր ղեկավարները հեղափոխական շարժումն առաջնորդելու իրենց անկարողությանն ավելացրին նաեւ կեղծ բարեպաշտական (երկերեսանության) հոգեբանությունը, որի հետեւանքով Դաշնակցությունում այլեւս հմուտ ղեկավարություն երեւան չեկավ: Նրա բյուրոն ոչ մի անգամ չկանգնեց պահի բարձունքին: Գաղափարական առաջնորդների գործի շարունակողները դարձան միջակ շեֆերը:

Դաշնակցությունը դարձավ «շեֆական» կուսակցություն, եւ, քանի որ «շեֆականությունը», հայտնի հոգեբանական օրենքների համաձայն, միշտ հանգեցնում է «թայֆականության», դրանով Դաշնակցությունը կորցրեց իր գաղափարական եւ կազմակերպական միասնությունն ու միածույլ բնութագիրը: Միասնական Դաշնակցությունը դադարեց գոյություն ունենալ. առաջացան Դաշնակցություններ, տեղի ունեցավ խորը պառակտում:

«Շեֆականությունը» միշտ ուղեկցվում է կարիերիզմով, շահամոլությամբ ու մանրոգիությամբ: «Շեֆականությունն» անկարող է գաղափարին տրվել ամբողջությամբ, անկարող է առաջացնել խանդավառություն, առանց որի անհնար է որեւէ հեղափոխական գործ, նա թշնամին է տեսական խղճմտանքի. բնորոշ գծեր, որոնց բացակայության դեպքում ղեկավարությունը վերածվում է լոկ ղեկավարության ծաղրանկարի: Այդպիսին դարձավ Դաշնակցությունն իր հիմնադիրների մահից հետո, այդպիսին նա դարձավ Հայաստանի Հանրապետության ժամանակ, այդպիսին է այժմ, երբ արդեն չի արդարացնում իր

հեղափոխական, մարտական ու ազգային ատրիբուտներից եւ ոչ մեկը:

4. Զրկված լինելով պատմափիլիսոփայորեն հիմնավորված աշխարհայացքից՝ դաշնակցական ղեկավարությունը չհասկացավ պատմական երեւույթների դիալեկտիկան, չհասկացավ հասարակական օրենքների օրինաչափությունը, որպեսզի գործի համապատասխանորեն: Նա տրվեց պատահականություններին եւ գործեց իրականությունից կտրված՝ առանց հաշվի առնելու տեղի ու պահի կոնկրետ պայմանները:

1907թ. նա որդեգրեց սոցիալիզմը, որը ոչ միայն ուտոպիա էր, այլեւ պետք է կրեր լոկ քարոզչական բնույթ: Դաշնակցական սոցիալիզմը չդարձավ կենդանի գործ, քանի որ դրա համար պակասում էր անհրաժեշտ (համապատասխան) իրավիճակը:

Այն չէր բխում մեր սոցիալական միջավայրից եւ, դառնալով սոցիալական քվիետիզմ (*անտարբեր եւ հայեցողական վերաբերմունք իրականության հանդեպ* - խմբ.), ծառայեց միայն որպես հարմար թեմա նշանավոր արեւմտահայ գրող, երգիծաբան Երվանդ Օտյանի այրիչ երգիծանքի համար: Դաշնակցության գաղափարական զգեստափոխումը, նրա «սալոնային» սոցիալիզմը ոչ մի օգուտ չբերեցին հայ աշխատավորին, բայց մեծ չարիք պատճառեցին հայ ազատագրական պայքարին:

Հայկական կուսակցությունների քաղաքական պայքարը խորապես պառակտեց հայ ժողովրդին՝ թուլացնելով նրա դիմադրական ուժն այն պահին, երբ, Թուրքիայում տեղի ունեցող հեղափոխական իրադարձություններին համապատասխան, հայությունից պահանջվում էր լինել համերաշխ, միակուռ, ընդունակ ինքնապաշտպանության: Հայության ակտիվ տարրերը, ի ուրախություն մեր արտաքին թշնամիների, այդ օրերին, երբ սուլթանական բռնակալության դեմ պայքարող Երկրի հայերը նրանց աղաչում էին ուղարկել ղեկավար ուժեր ու զինամթերք, իրենց ժամանակը եւ ուժը վատնում էին ներքին ճակատում: Բռնկված ներքին հակամարտությամբ՝ նրանք թշնամուն հնարավորություն ընձեռեցին անգիջում եւ անպատիժ շարունակել հայերի ոչնչացման քաղաքականությունը: Կովկասի հայերը պայքարող թուրքահայերի համար պիտի հանդիսանային որպես պահուստային ուժ եւ քաղաքական թիկունք: Փոխարեն էլ ավելի ամրապնդելու իր թիկունքը եւ առավելագույնս օգտագործելու այն, Դաշնակցությունը բարձրացրեց սոցիալիզմի դրոշը եւ դրանով զգալիորեն բարդացրեց Երկիր մարտական ուժեր ու զենք առաքելու կենսապես անհրաժեշտ գործը:

Սուլթանականության դեմ հանդես գալով հեղափոխական պայքարով՝ Դաշնակցությունը, միաժամանակ, պիտի ջանար թեկուզ ապահովել հայ բուրժուազիայի տրամադրած նյութական օգնության առաքումը:

Հայկական կուսակցությունների ներքին գզվռտոցն ու Դաշնակցության սոցիալիզմն այն դարձրին անհնարին:

Հեղափոխությունը եւ հեղափոխական պայքարը չեն հանդիսանում լոկ քարոզչության նյութ. նրանք նախապատրաստվում են: Իսկ Դաշնակցությունը չէր նախապատրաստել պայքարը: Մի խոսքով, Դաշնակցությունը կոպտորեն մեղանչեց հեղափոխական ռազմավարության տարրական պահանջների դեմ: Մինչ պայքարի սկսվելը, նա չկարողացավ կազմակերպել այն հոգեբանորեն, քաղաքականապես եւ նյութապես: Այդ պատճառով էլ Թուրքահայաստանում հեղափոխական կռիվները եղան ողբերգականորեն հերոսական, բայց քիչ արդյունավետ:

5. Ինչպես Դաշնակցության աշխարհայացքը, այնպես էլ՝ նրա քաղաքականությունը միշտ տառապել են հակասություններից, բայց առավել աղաղակող հակասությունը մնում է այն հանգամանքը, որ նա, նույնիսկ սոցիալիզմի որդեգրումից հետո, հայկական հարցի լուծման համար (ինչպես ժամանակին Գրիգոր Արծրունին եւ մշակականները) լծվեց եվրոպական իմպերիալիզմի կառքին:

Սպասվում էր, որ Դաշնակցության ղեկավարությունը, իր անհաջողություններից հետո, էմիգրացիայում հանգամանորեն կվերանայի սեփական գործունեության ակտիվն ու պասիվը: Այո, դա սպասվում էր, բայց տեղի չունեցավ, չնայած բոլորը ազգային, հասարակական կազմակերպությունները, որ ունեն պատասխանատվության զգացում, հետագա սխալներից եւ աղետներից խուսափելու համար վերլուծում են իրենց գործունեության անցած ուղին: Ցավոք սրտի, դաշնակցական ղեկավարությանը միշտ չի հերիքել պատասխանատվության զգացումը: Այդ պատճառով էլ նրա սխալները ընդունեցին ազգային աղետի չափեր: Դաշնակցական համագումարները զբաղվում էին չնչին հարցերով, բայց ոչ կուսակցության գործունեության բնույթի վերանայմամբ: Դաշնակցական մտավորական երիտասարդության որոշ ռեւիզիոնիստական փորձեր մնացին անարդյունք:

Փորձեր արվեցին ճշտել պատասխանատվությունը 1915թ. Տարոնում (Մուշ), 1920թ. Նախիջեւանում եւ Շուշիում հայերի կոտորածների ու Ղարսի խայտառակության համար: Դեռ Հայաստանում դաշնակցական իշխանության ժամանակ փորձեր արվեցին հայտնաբերել ու պատժել ներքին գործերի նախարար Կարճիկյանի (որն այդ օրերին ջանում էր սանձահարել մաուզերիստներին) սպանողներին, հատկապես՝ սպանության ոգեշնչողին:

Հարցեր հարուցվեցին պարսկական հեղափոխական շարժման առաջնորդ Եփրեմ-Խանի եւ Տարոնի լեգենդար հերոս Գեւորգ Չաուշի սպանությունների վերաբերյալ: Սակայն, այդ փորձերը դաշնակցության

ղեկավարության կողմից խեղդվեցին իրենց սաղմնային վիճակում: Դաշնակցական բյուրոն, իրենից բացի, ոչ մի դատական ատյան չի ճանաչում եւ դաժանորեն հետապնդում է բոլոր նրանց, ովքեր հայրենասիրական մտահոգություններից դրդված՝ պատասխանատվության մասին որեւէ հարց են հարուցում: Դաշնակցությունում պարբերաբար ծագող բոլոր ներքին խռովությունները՝ Վարդ Պատրիկյանի եւ Սաֆոյի հակակուսակցական ելույթները 1906-1907թթ. Բալկաններում, միհրանական շարժումը 1908թ. Թիֆլիսում, Լեւոն Աթաբեկյանի անջատողական շարժումը 1909թ. Բաքվում, Անդրանիկի ու Սմբատի շարժումները 1917թ. Թիֆլիսում, Ֆերահյանի եւ Շահան Նաթալիի շարժումները, մարտկոցականների խռովությունը, նույնը Նիկոլ Աղբալյանի եւ Լեւոն Շանթի գլխավորությամբ՝ 1936-1937թթ. Սիրիայում, վերջապես, իմ կողմից սկսած շարժումը 1937թ. Բուլղարիայում. այս բոլորը հայրենասիրական եւ հեղափոխական գիտակցության դրսեւորումներ են: Իսկ որոշ դեմքեր, հանդիսանալով ազգային աղետների պատճառ, շնորհիվ դաշնակցական կուսակցությանն իրենց պատկանելությանը, ոչ միայն մինչ այժմ մնացել են անպատիժ, այլեւ շարունակում են զբաղեցնել կուսակցական ղեկավար պաշտոններ:

Հակառակ իր ֆորմալիզմին եւ ցուցադրական դեմոկրատիզմին, դաշնակցական ղեկավարությունը չի հանդուրժում կուսակցական ընկերների քննադատությունը: Սակայն, ստեղծարար քննադատության փոխարեն, ղեկավար շրջանակներում հրեշավոր չափերի հասան խարդավանքները, բանսարկությունները, թայֆականությունը:

Աննկարագրելի անհանդուրժողական ու սառն են հարաբերությունները Բյուրոյի անդամների միջեւ, երբ խոսքը գնում է խառը բյուրոյի մասին, երբ նրա կազմում գտնվում են երկու ճամբարների ղեկավարները: Այս դեպքում ներքին հակամարտությունը միանգամայն կաթվածահար է անում բյուրոյի աշխատանքը: Հենց այդպիսի պատկեր էր ներկայացնում Դաշնակցությունը մինչ Փարիզի 12-րդ կուսհամագումարը, որտեղ ընտրվեց միասնական բյուրո: Այժմ Դաշնակցության գերագույն մարմինը նորից հանդիսանում է երկճամբարային: Նրանում մասնակցում է Դրոն՝ որպես Սիմոն Վրացյանի խմբի ներկայացուցիչ: Ռուբեն Տեր-Մինասյանի բյուրոն ատում է Դրոյին: Դոկտոր Օհանջանյանի ու Նավասարդյանի աչքերում Դրոն «գյադայի» տիպար է՝ ընդունակ ցանկացած հանցագործության: Տեր-Մինասյանն ինձ ուղղած մի նամակում Դրոյին անվանել է «հայ ժողովրդի դավաճան», որն «իր կամավորական հարձակումներով հարուցեց հայ ժողովրդի սպանդը Թուրքիայում»:

Չնայած դրան, Տեր-Մինասյանի բյուրոն 1938թ. Դրոյին ընդգրկեց բյուրոյի կազմում՝ Վրացյանի լռությունը «գնելու» համար, որն իր կողմից

խմբագրվող «Վեմ» ամսագրում առաջ էր քաշել Տարոնում (Մուշ) հայերի կոտորածի հարցը: Փաստորեն, Տեր-Մինասյանը, տվյալ դեպքում, Դրոյի նկատմամբ իրեն պահեց ճիշտ այնպես, ինչպես 1919թ. վերջին, երբ հարկ եղավ իր համար ապահովել ռազմական նախարարի պաշտոնը, որին ձգտում էր նաեւ Դրոն: Այդ օրերին Դրոյին Երեւանից հեռացնելու լավագույն միջոց համարվեց մուսավաթական Ադրբեջանի դեմ ապստամբություն կազմակերպելու առաքելությամբ նրան Լեռնային Ղարաբաղ ուղարկելը:

Հետեւանքները մեզ հայտնի են. մուսավաթական ուժերի կողմից կատարված հայերի սպանդը Շուշիում եւ երկու տասնյակից ավելի հայկական բնակավայրերում: Բոլորը վրդովված էին Դրոյից, ղարաբաղցիները պահանջում էին դատի տալ նրան, իսկ Դրոն անվրդով շարունակում էր «քեֆ անել Երեւանի այգիներում»: Եվ այսպես, Տեր-Մինասյանը ղարաբաղյան ժողովրդի արյան գնով դարձավ նախարար: Այս դեպքում նույնպես, որպեսզի Տեր-Մինասյանը շարունակի հանգիստ նստել Բյուրոյի իր պաշտոնում, Դրոյին հնարավորություն ընձեռվեց մեր ժողովրդին նետելու նոր արհավիրքների գիրկը:

Վերջին համաշխարհային պատերազմի օրերին Դրոն պակաս ակտիվ կլիներ, եթե չլիներ Բյուրոյի անդամ: Այդ մասին գիտեին նրանք, ովքեր մտցրել էին Դրոյին Բյուրոյի կազմի մեջ. նրանք գիտեին, որ Դրոն հեշտությամբ կարող է հասնել մինչեւ հայրենիքի դավաճանության: Այնուամենայնիվ, նրանք Բյուրոյում Դրոյին տեղ տվեցին, որպեսզի Սիմոն Վրացյանը լրիվ չբարձրացնի Տարոնում հայերի ջարդի պատճառների քողը, որի տակ թաքնվում է Տեր-Մինասյանը:

6. Սպասվում էր նաեւ, որ Դաշնակցությունն էմիգրացիայում կվերանայի իր աշխարհայացքն ու գործունեության մեթոդները՝ հարմարեցնելով դրանք մեր ժամանակի ոգուն եւ մեր ազգային գոյատեւման իրական պայմաններին: Բայց այստեղ էլ չիրականացան նրանց հույսերը, ովքեր տառապում էին հայ կյանքի դատարկությունից եւ անդեմությունից:

Փոխարեն իրենց մտածողության ու գործունեության մեջ մի փոքր գիտակցություն դնելու, պարզություն մտցնելու կուսակցության գաղափարական կերպարանքում, Բյուրոյի գործավար (քարտուղար) Տեր-Մինասյանը մի սվաղ եւս քաշեց կուսակցության աշխարհայացքի վրա: 1935թ. լույս ընծայվեց նրա «Հ.Յ.Դ. կազմակերպությունը» բրոշյուրը: Այդ բրոշյուրից տպավորություն է ստացվում, թե հեղինակը հանդիսանում է Դաշնակցության երդվյալ թշնամին, եւ որ ինքը որոշել է բարոյապես այլանդակել, մեռցնել Դաշնակցությունը: Հաստատելով, որ չի ունեցել տեսաբաններ եւ այժմ էլ չի զգում նրանց կարիքը, որ Դաշնակցության ծրագրում տեղ են գտել տարբեր ուսմունքներ՝ սկսած մանր բուրժուակա-

նությունից մինչեւ կոմունիզմ՝ նա անում է անվերապահ հետեւություն. Դաշնակցության համար նշանակություն չունի ո՛չ բարոյականությունը, ո՛չ տեսական պատրաստվածությունը, ո՛չ կուսակցական ստաժը: Ո՞րն է արժեքավոր: «Կարգապահությունը»,- պատասխանում է Տեր-Մինասյանը: Իսկ ի՞նչ բան է կարգապահությունը. բոլոր դեպքերում՝ Տեր-Մինասյանը եւ նմանները պիտի մնան անպատիժ, իսկ շարքային անդամները՝ լռակյաց:

7. Էմիգրացիայում Դաշնակցությունն իր աշխարհայացքի անորոշության, քաղաքական անհիրազեկության եւ պատասխանատվության զգացումի բացակայության հետեւանքով դարձել ու շարունակում է մնալ քայքայիչ եւ խորտակիչ ուժ:

Դաշնակցության առավել աններելի արարքների թվում հարկավոր է նշել քաղաքական սպանությունները, որոնք էլ ավելի պառակտեցին արտասահմանի հայերին:

Դաշնակցությունը, ինչպես նաեւ նրա քաղաքական հակառակորդները՝ հնչակներն ու ռամկավարները, անուղղակիորեն խթանում են հայերի, մասնավորապես, նրա երիտասարդ սերնդի ուծացումը: Իր մեջ պառակտված ժողովուրդն ավելի շատ ցուցաբերում է սեփական բնավորության բացասական գծերը, այդ պատճառով էլ դառնում ավելի վանող այն ժողովրդի աչքում, որի երկրում նա ժամանակավորապես ապաստանել է: Երբ օտարերկրացիների նկատմամբ ատելությունը դանում է գերիշխող երեւույթ, տարրական իմաստությունը եւ ազգային արժանապատվությունը հայ քաղաքական կուսակցություններից պահանջում են լինել առավել շրջահայաց:

Մեր ժողովուրդը ոչ միայն քաղաքականապես խաբված է, այլեւ բարոյապես զրպարտված Եվրոպայում եւ Ամերիկայում: Այդ պատճառով հայը պարտավոր պիտի լինի հանդես գալ որպես «ցեղորեն գիտակից էակ», այսինքն, ինչպես ասում է Մարքսը, «էակ, որը ցեղին (ժողովրդին) վերաբերվում է այնպես, ինչպես իր սեփական անձին»: Դա է պահանջվում կենսաբանորեն բարոյական ժողովրդից: Սեփական ինքնապաշտպանությունը դժվարեցնող ժողովուրդն արժանի է արհամարհանքի, արժանի է իր ճակատագրին՝ ինչքան էլ որ այն ծանր լինի: Այս տեսանկյունից՝ Դաշնակցությունը, որպես հզոր գաղութային կազմակերպություն, ունի ամենամեծ մեղքը: Այն, ինչն արտասահմանում կոչում են հայկական քարոզչություն, ոչ այլ ինչ է, քան գթասրտություն աղերսող լալկան նվնվոց, որն արտասահմանցիների մոտ առաջացնում է լոկ խղճահարություն եւ շարունակ աճող արհամարհանք: Դաշնակցական ղեկավարությունն իսկական քարոզչության մասին հասկացողություն չունի: Նա ցուցադրում է իր այժմյան հոգեւոր ցնցոտիքը՝ անվանելով այն քարոզչություն:

Նա չկարողացավ օգտագործել հայ ժողովրդի պոտենցիալ ուժը հեղափոխության շրջանում, քանզի չէր ճանաչում սեփական ժողովրդին, եւ այժմ ի վիճակի չէ տանել ազգային իրական արժեքների քարոզչությունը, որովհետեւ հիմնավոր չգիտի հայոց պատմությունը, այդ պատմության փիլիսոփայությունը:

Եթե նույնիսկ, վերջին քառորդ դարում, որեւէ եվրոպական լեզվով լույս է տեսել այս կամ այն հայամետ գիրքը, ապա հեղինակը արտասահմանցի է եղել:

Այսպես կոչված հայասեր քարոզչության համար Դաշնակցությունը ոչինչ չի արել: Ժամանակ չուներ: Նա զբաղված էր Անդրանիկին սեւացնելու անշնորհակալ գործով: Անդրանիկին վարկաբեկելու համար, Դաշնակցության պատվերով հրատարակվեց նրա դեմ ուղղված մոտ 1000 էջանոց երկհատոր աշխատություն: Ամբողջովին Անդրանիկին նվիրված Սեպուհի հուշերը հանդիսանում են այդ ազգային հերոսին իր փառքի բարձունքից տապալելու դատապարտելի փորձ: Հենց որ Անդրանիկը հեռացավ Դաշնակցությունից, միանգամից դարձվեց «հարբեցող», «անկիրթ», «վախկոտ», «այս կամ այն ճակատում իր մասնակցության համար նախօրոք սակարկող», «աննշան գործողությունների ճանապարհով մեծ դափնիներ քաղող» եւ այլն:

Բոլոր ջանքերը ներդրվեցին Անդրանիկին «զարդարելու» քաջնազարյան (դոնքիշոտյան) որակումներով, չգիտակցելով, որ դրանով իրականում ծիծաղում են հայ ազատագրական շարժման վրա, քանզի ժողովուրդն Անդրանիկին համարում է հայ ազատագրական պայքարի խորհրդանիշ:

Անկում են ապրում բոլոր այն ժողովուրդներն ու կուսակցությունները, որոնք թեթեւամտորեն են վերաբերվում սեփական հերոսականությանն ու հերոսներին: Այդ հոգեւոր վայրագությունը մեր երիտասարդ սերնդի վրա թողեց առավել քայքայիչ ազդեցություն:

1921թ., Զանգեզուրից իմ հեռանալու հաջորդ օրը, Արաքսի պարսկական ափին ես թույլ տվեցի «անտակտություն»՝ պատժելով երկու դաշնակցական նախարարների՝ Հակոբ Տեր-Հակոբյանին ու Եփրեմ Սարգսյանին, միաժամանակ եւ՝ Բյուրոյին փոխարինած Գերագույն մարմնի անդամներին: Այդ դեպքից մի քանի օր անց ես Ս. Վրացյանից ստացա նամակ, որում ասվում էր.

«Դու թո՛ղ քո այդ անդրանիկյան արարքները: Անդրանիկը պահում էր իրեն այնպես, ինչպես դու, իսկ այժմ անօգնական թափառում է Եվրոպայում: Կուսակցությունը որոշ հույսեր էր կապում քո անվան հետ: Լսիր քո հին ընկերներին, չլսես՝ քեզ համար վատ: Միայն գիտեմ, որ մարդիկ բարձրանում են մեծ դժվարությամբ, շատ տարիների ընթացքում, բայց ընկնում են մեկ վայրկյանում»:

Այսպիսով, ինձ հետ արդեն անշնորհակալ էին վերաբերվում, սպառնում սեւացնել մեկ ակնթարթում, գահընկեց անել, որովհետեւ ես մտրակով ծեծել էի երկու վախկոտի: Այո, ես հաշվի չէի առել, որ դաշնակցական ղեկավարները օգտվում են մի տեսակ արտոնյալ դիրքից եւ ազատ են ամեն կարգի պատասխանատվությունից:

Ինձ սպառնում էին Անդրանիկի ճակատագրով:

Վերը նշված նամակի ստացման օրը ես խորապես ափսոսացի, որ մտրակելու փոխարեն չգնդակահարեցի Դաշնակցության Գերագույն մարմնի այդ երկու անդամներին: Նույն օրը ես զգացի ինձ հոգեպես հեռացած, կտրված Դաշնակցությունից:

8. «Դաշնակցությունը՝ Դաշնակցության համար»: Հայաստանից դուրս՝ Բյուրոն հավատարիմ մնաց այս լոզունգին: Էմիգրացիայում նա չուներ որոշակի հետեւողական քաղաքական գիծ կամ, ավելի ճիշտ, այն հետեւողական էր միայն ինքնապահպանման գործում՝ գաղափարապես մնալով ռուս նարոդնիկների հին «ճանապարհներին»: Դաշնակցությունն իր քաղաքական գիծը չէր պայմանավորում հայ ժողովրդի բացառիկ դրությամբ: Իր հանցագործ անփութությամբ Դաշնակցությունն արհամարհեց մեր ժողովրդին սպառնացող թուրքական (Երկրի հայերի համար) եւ ուծացման (արտասահմանի հայերի համար) վտանգները:

Նրա շատ անդամներ համոզված են, որ Հայաստանի ցուցադրական անկախացման գաղափարը կարող է դառնալ նրա գերեզմանափորը: Նրանք դա գիտեն, բայց մինչ այժմ ինքնանպատակ կուսակցականությունը եւ կուսակցական եսապաշտությունը չեն թույլատրել դաշնակցական ղեկավարությանը խելամիտ հարաբերությունների մեջ մտնել սովետական իշխանության հետ:

Ճշմարիտ չէ այն հայրենասերը, ով իր հայրենասիրությունը բոլոր դեպքերում կապում է հայրենիքում այս կամ այն վարչակարգի հետ:

Անձամբ ես քարոզել եմ սովետների դեմ, բայց իմ անբարյացակամ վերաբերմունքը սովետական իշխանության հանդեպ պայմանավորված էր ոչ թե Հայաստանում գոյություն ունեցող վարչակարգով, այլ բացառապես այն բարեհաճությամբ, որ սովետները ցուցաբերում էին Թուրքիայի նկատմամբ:

Բացի այդ, իմ քարոզչությունը ոչ մի անգամ չի կրել հակահայաստանյան բնույթ, ընդհակառակը՝ ես արտասահմանի հայերին համարել եմ Հայաստանի հպատակներ ու մարտիկներ՝ անկախ նրանց սոցիալական, քաղաքական եւ կրոնական պատկանելությունից: Այս ճշմարտության վկան է հանդիսանում Ցեղակրոն ուսմունքը: Մեր ազգային բարոյականության նշված հայեցակարգն ինձ էմիգրացիայում թույլ չի տվել երբեւէ թեկուզ մեկին այս կամ այն առաքելությամբ Հայաստան ուղարկել:

Դաշնակցությունը պաշտոնապես չմտավ «Պրոմեթեւս»-ի մեջ (դրան խոչընդոտեցին կուսակցության շարքային անդամները), բայց, վերջին պատերազմի նախօրեին, դաշնակցական բյուրոյի կողմից հայ-թուրքական հարաբերությունների վերանայման հարցի շուտափույթ քննարկումը հաստատեց, որ նրան տրված չէ սեփական սխալներից դասեր քաղելու կարողություն: Նա այժմ թուրքերի հետ մերձենալու փորձեր է անում՝ հաշվի չառնելով, որ ներկայիս պայմաններում թուրքերի հետ ընդհանուր լեզու գտնելու փորձերը նշանակում են բարոյապես տանուլ տալ հայկական հարցը: Սեփական թուլությամբ թելադրված այս քաղաքական ակտը արտասահմանի հայերի մոտ առաջացնում է խորը բարոյազրկում, իսկ քաղաքակիրթ մարդկության մոտ՝ նողկանք: Այն հանգամանքը, որ Անգլիան այժմ հանդիսանում է Թուրքիայի բարեկամը, ամենեւին էլ չի արդարացնում Դաշնակցության ուխտադրժությունը (ուրացությունը): Որպես առաջնակարգ իմպերիալիստական տերություն, Անգլիան շարունակում է վարել իր ավանդական գաղութային քաղաքականությունը. ընդ որում, նա թուրքերին հովանավորելու ոչ քիչ հիմքեր ունի՝ ի հաշիվ հայերի արյան: Ավելի քան 100 տարի Անգլիան պարբերաբար հայտարարում է, որ իր դրոշը ծածանվում է Միջին Արեւելքի ծովերի վրա, որպեսզի ապահովի եւ պաշտպանի իր հին դաշնակցի՝ Թուրքիայի անկախությունը: «Որտեղ հասնում են մեր թնդանոթները, այնտեղ մեր դաշնակիցները պիտի վայելեն հարգանք», - գրում էին անգլիական թերթերը Ղրիմի ռուս-թուրքական պատերազմի օրերին:

Եթե հայերը ցանկանային, որ անգլիական թնդանոթները հասնեն մինչեւ Արաքսի ափերը, ապա իրենք, որպես թույլ կողմ, ստիպված պիտի լինեն հարգել Թուրքիայի՝ Անգլիայի դաշնակցի կամքը:

Այժմ Դաշնակցությունը գտնվում է «ո՞ւմ հետ լինելու» երկընտրանքի առջեւ՝ թուրքերի՞, թե՞ ռուս մեծ ժողովրդի: Նա դավաճան կլիներ, եթե վճռականորեն չպատասխաներ. «Ռուսների հետ՝ Թուրքիայի դեմ»:

Հենց այս քաղաքական կողմնորոշումն են պահանջում մեր ազգային եւ մարդկային արժանապատվությունն ու հայ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովման շահը:

9. Երկրորդ համաշխարհային պատերազմում դաշնակցական բյուրոն հանդես եկավ պառակտված ճակատով: Ինչո՞վ էր դա պայմանավորված՝ արկածախնդրությա՞մբ, թե՞ կանխամտածված երկերեսանի քաղաքականությամբ: Այս հարցում ես հակված եմ երկրորդ տարբերակին. դաշնակցական ղեկավարությանը հատուկ է թեթեւամտությունը:

Այն հանգամանքը, որ Դրոն Բալկաններում, Փարիզում, Բեռլինում բազմիցս ժողովներ գումարեց եւ ստեղծեց քաղաքական կոմիտե, ապացուցում է, որ նրան չհաջողվեց ապահովել Բյուրոյի պաշտոնական

հավանությունն իր արկածախնդրական նախաձեռնություններին: Մինչ Սարգիս Արարատյանի հետ ընդհարումը եւ դրանից հետո, Դրոն չդադարեց ջանալ ապահովել իր թիկունքն անհաջողության դեպքում: Նա կանգ չառավ նույնիսկ Հայաստանի ժողովրդին սադրելու փորձի դեմ: Արդյունքում՝ նա հասավ մինչեւ հայրենադավության:

10. Մեր ժողովրդին բաժին ընկած աննախընթաց դժբախտությունների պատճառը, ինչպես պատմական անցյալում, այնպես էլ նոր ժամանակներում, հանդիսանում է հայկական տխրահռչակ, անհաղթելի անհատապաշտությունը՝ պայմանավորված մեր պատմական կյանքի ու տեղագրական առանձնահատկություններով, դարերով ապրած ստրկությամբ: Այս հոգեւոր հատկանիշը, հատկապես այնպիսի փոքր ազգերի մոտ, որպեսզին մենք ենք, դառնում է չարիքների աղբյուր՝ անհատին վերածելով անարխիստի՝ բառիս առավել բացասական իմաստով: Վերջին շրջանի դաշնակցական մտավորականությունը, լինելով եվրոպականության գերին, փոխարեն հաղթահարի իր մեջ անհատապաշտությունը, հռչակեց այն որպես հոգեւոր դրական հատկանիշ եւ ջանում էր իր մեջ ավելի զարգացնել այդ անհատական-անիշխանական տարերքը:

Ժողովրդի համար չկա ավելի մեծ չարիք, քան անհատապաշտություն դավանող ղեկավարը: Նա հեշտությամբ է դառնում կոլեկտիվ ջանքերի ու շահերի թշնամին: Այդպիսի ղեկավարն ավելի շուտ ընկնում է սեփական իրավունքների, քան պարտականությունների հետեւից: Նրա իդեալը մեկուսի անձնական երջանկությունն է:

Այսօր այդպիսին են նրանք, որոնք կոչված են ղեկավարելու Քրիստափորի ու Ռոստոմի կուսակցությունը:

11. ա) Աշխարհայացքի անորոշություն,

բ) քաղաքական անկարողություն,

գ) ոչ բավարար պատասխանատվության զգացում.

ահա այն երեք չարիքները, որոնցից աղետալի կերպով տուժել է մեր ժողովուրդը եւ ինքը՝ Դաշնակցությունը:

Դաշնակցությունն այժմ հանդիսանում է որպես մեռնող երեւույթ: Նրա գոյությունն այսուհետ անօգուտ է, անտրամաբանական, ոչ անհրաժեշտ: Նա գտնվում է հակասության մեջ ներկա ժամանակաշրջանի հետ: Նա պե՛տք է հեռանա:

Այս գիտակցումով էլ ես հեռացա Դաշնակցությունից:

Տեր-Հարությունյան Գ.

(թարգմ. ռուսերենից) *Հունվար, 1947թ.*

Հայկական ՍՍՀ ՊԱՆ ներքին բանտ

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

1. Բուլղարիայի Դաշնակցությունն այդ կուսակցության հնագույն շրջանային կառույցներից է:

Հիմնադիրներ Քրիստափոր Միքայելյանը եւ Ռոստոմ Զորյանն իրենց առաջին հեղափոխական քայլերն արել են այս երկրում: Բուլղարիան որպես հենակետ է ծառայել Դաշնակցության հակաթուրքական գործունեության համար: Այստեղ է առաջացել հայ-մակեդոնական եղբայրությունը՝ որպես սուլթանական Թուրքիայի դեմ ընդհանուր ճակատ:

Օտոմանյան բանկի ստամբուլյան բաժանմունքի զինված ներխուժման եւ սուլթան Աբդուլ Համիդի դեմ մահափորձի բոլոր նախապատրաստական աշխատանքներն անցկացվել են Բուլղարիայում: Հենց այդ ժամանակահատվածում էլ տեղի ունեցավ առաջին պառակտումը Դաշնակցությունում: Ստամբուլյան հայտնի չհաջողված մահափորձից հետո նրա մասնակիցներից երկուսը՝ Սաֆոն* ու Քրիսը, դժգոհ կուսակցության գործողությունների ոճից, սկսեցին շարքային դաշնակցականներին լարել Բյուրոյի դեմ: 1906թ. Վառնայում հայտնի հեղափոխական գործիչ Վարդ Պատրիկյանի խմբագրությամբ սկսեց լույս տեսնել «Շարժում» թերթը (բացահայտորեն ուղղված Բյուրոյի դեմ): Զգալի թվով շարքային անդամներ հեռացան Դաշնակցությունից եւ հարեցին Վարդ Պատրիկյանի շարժմանը: Վերջինս 1917թ. սպանվեց դաշնակցական ահաբեկչի կողմից: Այսպիսով, Դաշնակցությունում տեղի ունեցավ ճեղքվածք:

2. 1906թ. Բուլղարիան դեռ Թուրքիայից կախված վասալ երկիր էր: Բուլղարական կառավարության թույլտվությամբ Դաշնակցությունը պատմական Ռիլա վանքում կազմակերպեց իր զինվորական դասընթացները, որոնցում բուլղար սպաները սկսեցին պատրաստել շուրջ 50 երիտասարդ հեղափոխականների: Դասընթացների խնդիրն էր նրանց՝ որպես զինվորական հրահանգիչների, նախապատրաստական աշխատանքներ տանելու համար ուղարկել Թուրքիայի հայերով բնակեցված եվրոպական ու ասիական շրջանները:

Այդ դասընթացների ղեկավարներից Փանովը (Նժդեհի համագյուղացի Ռաշիդ Տեր-Մաթեւոսյան - *խմբ.*) կուրսանտների շրջանում սկսեց

---

* Սաֆո - *Մարտիրոս Մարգարյան, ՀՅԴ գործիչ, Քր. Միքայելյանի զոհվելուց հետո ստանձնում է սուլթան Համիդի սպանության գործը, որի ձախողման պատճառով 1907թ. հեռացվում է Դաշնակցությունից:*

քննադատել դաշնակցական ղեկավարության գործելաոճը: Նրան հաջողվեց բաժանել նրանց երկու մասի՝ Բյուրոյի կողմնակիցների ու հակառակորդների: Նշանակված քննությամբ պարզվեց, որ Փանովը համագործակցում է Թիֆլիսի մշակականների հետ, որոնք այդ ժամանակ կրքոտ պայքար էին մղում Դաշնակցության դեմ: Բյուրոն որոշեց Փանովին պատժել մահվամբ: Փանովը հեռացավ Ռիլայից ու անհետացավ: Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, գործելով բուլղարական բանակի շարքերում, նա իրեն դրսեւորեց որպես առաջնակարգ մարտավար: Պատերազմից հետո նա նորից անհետացավ:

3. 1907թ., Բուլղարիայի ռազմական նախարարության թույլտվությամբ, ես ընդունվեցի սպայական ուսումնարան՝ չնայած այնտեղ օտարահպատակների ընդունման արգելքին:

Նպատակը. ավարտելուց հետո նվիրել ինձ հակաթուրքական պայքարին: 1912թ. Բուլղարիայի կառավարությունը հանձնարարեց ինձ կազմավորել հայկական կամավորական վաշտ, որն իմ հրամանատարությամբ եւ Անդրանիկի զինվորական ղեկավարության ներքո, բուլղարական բանակի հետ կողք-կողքի, գործեց Բալկանյան պատերազմում: Վաշտը մեծ հաջողությունների հասավ, որոնց արձագանքը հանդիսացան այդ ժամանակ Սոֆիայում որպես էմիգրանտ ապրող Տրոցկու՝ հայ կամավորների սխրանքների մասին գովասանական հոդվածները: Այս հայկական վաշտը չուներ կուսակցական բնույթ: Այն ստեղծել էին բուլղարահայերը: Սակայն, վաշտի հեղինակությունից զգալիորեն օգտվեց Դաշնակցությունը:

Լոնդոնում, բուլղարա-հունական նախնական բանակցությունների ժամանակ, Ֆերդինանդ թագավորը, հաշվի առնելով հայ կամավորների մասնակցությունը Բալկանյան պատերազմին, հայասեր ժեստ արեց. առաջ քաշեց նաեւ Թուրքիայում ապրող հայերի անվտանգության հարցը:

Առաջին համաշխարհային պատերազմի նախօրեին, համաներում ստանալով ցարական կառավարությունից, ես եւ Անդրանիկը մեծ թվով կամավորների հետ վերադարձանք Անդրկովկաս՝ մասնակցելու Թուրքիայի դեմ սկսվելիք պատերազմին: Մինչեւ 1914թ. Անդրանիկն ապրում էր Բուլղարիայում, Վառնայի մոտակայքի բնակավայրերից մեկում՝ մեկուսացած ու խորապես դժգոհ դաշնակցական ղեկավարությունից: Նրա հետ շփվում էին դաշնակցական գործիչներ Ե. Ալաջաջլին ու Ղուկաս Մինասյանը՝ նույնպես դժգոհ դաշնակցական վերադասից: Արդեն կարելի էր նկատել, որ Անդրանիկը հոգեբանորեն հետզհետե հեռանում էր Դաշնակցությունից: Նա ժամանեց Կովկաս որպես Բյուրոյի անհաշտ հակառակորդ: Նրա հետագա հակադաշնակցական ելույթներն ու պայքարը հարկ է բացատրել Բուլղարիայում ապրած խորը հիասթափությամբ:

4. 1919թ. Սոֆիայում բացվեց Հայաստանի Հանրապետության առաջին հյուպատոսությունը: Հասկանալի է, որ դա պիտի բարձրացներ Դաշնակցության հեղինակությունը: Սակայն, նրա վարկի բարձրացումը շարունակվեց միայն մինչեւ Հայաստանի խորհրդայնացումը, որի հետեւանքով Բուլղարիայի հակադաշնակցական տարրերը վերակենդանացան եւ ավելի ակտիվացան: Նորից երեւան եկավ եկեղեցու ու դպրոցի, ծխական ու հոգաբարձական խորհուրդների շուրջ մղվող միջկուսակցական մանրախնդիր պայքարը: Խմբային կրքերի բորբոքմանն առավել նպաստեց թեմական խորհուրդը: Սկսվեցին խժդժությունները հնաբնակների ու նորեկների (փախստականների), բուլղարահպատակների ու նանսենականների (նրանց Ազգերի Լիգային կից Նանսենյան բյուրոյի կողմից տրված էին անձնագրեր, որոնցով քաղաքացիություն չէր ճանաչվում) միջեւ:

Որեւէ ազգային հաստատությունում գերիշխանության ձգտող խմբավորումներն առաջնորդվում են ոչ թե այս կամ այն քաղաքական դոկտրինայով, այլ լոկ մտածում են սեփական կապերի ու շահերի ապահովման մասին: Շնորհիվ իրենց պաշտոնական բնույթի, թեմական ու ծխական խորհուրդները միշտ կարողանում են բուլղարական իշխանությունների հետ իրենց կապերը ծառայեցնել սեփական սոցիալական բարեկեցությանը: Բուլղարիայում այդ տարրերը հայտնի են իրենց երեսպաշտությամբ՝ ձեւանալով ցանկացած վարչակարգի բարեկամ ու գաղափարական համախոհ՝ անկախ նրա որդեգրած սոցիալական քաղաքականության էությունից:

Այս կարգի ականավոր տիպար է հանդիսանում Գրիգոր Զաքարյանը՝ մի անկիրթ հարուստ, որը, որպես թեմական խորհրդի նախագահ, 15 տարի Բուլղարիայի հայկական գաղութի անդամներին զրկեց ազգային անձնագրերից՝ ընտրություններին մասնակցելու տարրական իրավունքից եւ դրանով նրանց բուլղարական իշխանությունների աչքին ներկայացրեց որպես քաղաքականապես անվստահելի անձեր: Մինչ Երկրորդ համաշխարհային պատերազմի սկսվելը, նա հանդուրժեց թեմական խորհրդում հնչակյանների ներկայությունը, բայց հենց երեւացին գերմանացիները, առանց ձեւականության, վռնդեց հնչակներին ու փոխարենը հրավիրեց դաշնակցականներին:

Հայերը Բուլղարիայում ունեն նաեւ իրենց մշակութային, մարզական, բարեգործական կազմակերպությունները. անօթեւան աղքատների օգնության անկուսակցական միությունը, որի շուրջ հավաքվել են ունեւոր խավի կանայք, կին արհեստավորների միությունը, «Քնար» երգչախումբը՝ կազմված բոլոր հոսանքների ներկայացուցիչներից, Կովկասի հայերի եղբայրությունը, որը ջանում է օգնել իր ընչազուրկ անդամներին,

հայկական մարզական միությունը՝ ներառյալ սկաուտները, որը պառակտված է, բայց ոչ թե գաղափարական հենքի վրա, այլ այս կամ այն ղեկավարի շուրջ համախմբվելու արդյունքում՝ անկախ նրա կուսակցական պատկանելությունից:

5. Դաշնակցությունը Բուլղարիայում միշտ ունեցել է իր Կենտրոնական կոմիտեն եւ մամուլի օրգանը՝ շաբաթաթերթ կամ օրաթերթ: Վերջինը եղել է «Ազատ խոսք» թերթը, որը խմբագրել է Օնիկ Մխիթարյանը: Այդ ժամանակահատվածում ներքին դժգոհություններին ու գժտություններին վերջ չկար:

1926թ. տեղի կուսակցական կազմակերպությունները բաժանվեցին Նժդեհի եւ Բյուրոյի կողմնակիցների: Բուլղարիայում Դաշնակցության այս պառակտումն ազդանշան հանդիսացավ նաեւ մյուս շրջաններում (Ամերիկա, Ֆրանսիա, Հունաստան) կուսակցության պառակտման համար: Այդ օրերին, որպես Ռուբեն Տեր-Մինասյանի «Հայ-թուրքական կնճիռը» գրքի պատասխան, լույս տեսավ իմ «Որդիների պայքարը հայրերի դեմ» գիրքը: Դաշնակցական բյուրոյի քարտուղարն իր այդ գրքում պաշտպանում է հետեւյալ դրույթը. Թուրքիայի հետ լեզու գտնելը կարելի է եւ ցանկալի: Ես պաշտպանում եմ տրամագծորեն հակառակ տեսակետը, որն է. մեր ժողովրդի ապագայի ու շահերի տեսանկյունից՝ Թուրքիայի հետ ցանկացած հաշտություն կբերի աղետալի հետեվանքների: Այսպիսով է արտահայտվում կուսակցությունում «եռացող» դժգոհության պատճառը, որի հետեւանքով Դաշնակցության ներսում հրապարակավ դրվեց կողմնորոշման հարցը. ո՞ւմ հետ՝ Խորհրդային Միությա՞ն, թե՞ Թուրքիայի, որի թիկունքում, որպես խոշոր հովանավոր ուժ, կանգնած է Անգլիան: Միայն անգլիասեր հայն է ձգտում լեզու գտնել Թուրքիայի հետ:

Իսկ հայը, որ ընդդեմ Թուրքիայի կեցվածք է ընդունում, այդպիսի դիրք է բռնում նաեւ Անգլիայի նկատմամբ: Լեզու գտնել, հաշտվել Թուրքիայի հետ՝ նշանակում է բացահայտ լծվել Անգլիայի իմպերիալիստական կառքին, նրա դրդմամբ կռիվ հայտարարել Խորհրդային Միությանը, այսինքն՝ ինքնասպանության մատնել մի բուռ ժողովրդին:

Իմ «Որդիների պայքարը հայրերի դեմ» գրքի հետ լույս տեսան Զարեւանդի «Կրնա՞նք հաշտվիլ թուրքին հետ», եւ «Պանթուրանիզմ» գրքերը: Այս վերջինները նույնպես գտնում են, որ մերձեցումը Թուրքիայի հետ մահացու վտանգավոր է հայ ժողովրդի համար: Հայ-թուրքական հարաբերությունների մասին հարցերը գրքերից անցել են հայկական մամուլի էջերին: Փոխվե՞լ է Թուրքիան, թե՞ ոչ. ահա հարցը, որին ջանում են պատասխանել մեր թերթերը:

Նրանք, ովքեր գտնում են, որ Թուրքիան առաջընթաց է ապրել,

էապես փոխվել, որ նա արդեն հին Թուրքիան չէ, խորհուրդ են տալիս շուտ բարեկամություն հաստատել նրա հետ: Հակառակ հայացքի կողմնակիցները զգուշացնում են հայ ժողովրդին՝ հեռու մնալ Թուրքիայից: Դաշնակցական հրապարակախոսությունը շուրջ երկու տասնամյակ՝ մինչ երկրորդ համաշխարհային պատերազմը, քննարկում էր այդ նույն հարցը. փոխվե՞լ է Թուրքիան, թե՞ չի փոխվել:

6. Ես հեռացա Դաշնակցությունից 1937թ.՝ Բյուրոյի դեմ ծանր մեղադրանքներ ներկայացնելով կուսակցության համագումարին: Սոֆիայում սկսեցին լույս ընծայվել Դաշնակցությունից հեռացածների օրգան «Ռազմիկ» թերթը եւ Տարոն-Տուրուբերան հայրենակցական միության (մի քանի տասնյակ հազար անդամներով) պաշտոնական օրգան «Տարոնի արծիվ» ամսագիրը: Երկու օրգանների քարոզչությունն էլ կրում էր բացահայտ ռեւիզիոնիստական բնույթ՝ խնդիր դնելով արտասահմանի հայերի մեջ ստեղծել «Հայկական Իռեդենտա» բազմաքանակ հզոր կազմակերպություն, որն, իր վրա վերցնելով Թուրքիայում հայկական տարածքների խնդրի լուծումը, Դաշնակցության գոյությունը կդարձներ ավելորդ եւ, այդպիսով, արտասահմանի հայության բոլոր տարրերին հոգեպես կկապեր Խորհրդային Հայաստանի հետ: Դաշնակցական բյուրոն սկսեց գործի դնել իր սովորական սպառնալիքները. մեր «Ռազմիկ» թերթի ու նաեւ «Տարոնի արծիվ» ամսագրի խմբագիր, փիլիսոփայության դոկտոր Հայկ Ասատրյանի անվամբ ստացվեցին սպառնալից նամակներ՝ այդ երկու օրգանների հրատարակությունների դադարեցման պահանջով, որոնք, սակայն, դրանից հետո ավելի ակտիվացան՝ տանելով զուգահեռ քարոզչություն: Իմ կողմից որոշակի գործնական աշխատանքներ տարվեցին Դաշնակցությունից հեռացածների ու Բալկաններում, Հունաստանում (Սալոնիկի շրջան), Ամերիկայում, Իրանում, Ֆրանսիայում, Ռումինիայում մեր շարժման համակիրների առաջին համագումարի նախապատրաստման եւ անցկացման համար: Թուրքական մամուլը մեր շարժման հանդեպ ցուցաբերեց հասկանալի վերաբերմունք: «Ջումուրիեթ» ու «Ջաման» թերթերը հարձակվեցին ինձ վրա. «Օձը գործում է», «Գեներալ Նժդեհը ջանում է ստեղծել Մեծ Հայաստան»: Այս երկու հոդվածներով թուրքական թերթերն իրենց կառավարությանը խորհուրդ էին տալիս դիմել բուլղարական իշխանություններին՝ Բուլղարիայից ինձ վտարելու պահանջով: Իրողությունների այսպիսի դասավորության պայմաններում էլ բռնկվեց Երկրորդ համաշխարհային պատերազմը:

7. Պատերազմի առաջին իսկ օրերին Բուլղարիայում սկսվեց հակահայկական շարժում: Որոշ բուլղարական ազգային կազմակեր-պություններ՝ «Կուրբատը», «Լեգեոներները» (պահեստի սպաների), «Ենթասպաների միությունը» եւ ուրիշներ, իրենց տարեկան համագումարում ընդու-

նեցին հակահայկական բանաձեւեր՝ իշխանություններից պահանջելով հրեաների նկատմամբ կիրառվող օրենքները գործադրել նաեւ հայերի նկատմամբ: Ազգային ժողովում որոշ պատգամավորներ հանդես եկան հակահայկական ելույթներով (պրոֆեսոր Ստոյանովը եւ ուրիշներ): Առավել տարածված «Զարա» թերթը հարձակվեց հայերի վրա՝ որպես բոլշեւիկյան տարրերի:

«Ռազմական միտք» ամսագիրը գրում էր. «Վտարե՛լ հայերին երկրից»: Տագնապալից վիճակ էր ստեղծվել հատկապես Թրակիայի հայերի համար, որտեղ նրանց տալիս էին օրական 150 գրամ հաց: Հայերին արգելված էր մի շրջանից մյուսը տեղաշարժվել:

Այդ օրերին Ռումինիայի հայերն իրենց եկեղեցիներում կազմակերպեցին սգո խաղաղ ցույցեր, որովհետեւ վարչապետ Անտոնեսկուն, մի քանի ֆրանկմասոնների ձերբակալման կապակցությամբ, հրամայել էր Բուխարեստից եւ այլ հայկական մեծաքանակ բնակչություն ունեցող քաղաքներից վտարել հայերին:

Ֆրանսիայում պրոֆեսոր Մարշալը պահանջում էր «հավաքել հայերին ու նետել ծովը»:

Գերմանական «Վիներ թագեբլատ» եւ «Ալգեմայնե ցայտունգ» թերթերը հրապարակեցին հայերին ծայրաստիճան վարկաբեկող հոդվածներ՝ արդարացնելով նախորդ պատերազմում հայերի կոտորածներն ու տեղահանությունները: Թուրքական ռադիոն հեռարձակում էր մտացածին լուրեր, թե իբր Երուսաղեմի հայոց պատրիարքն ու Խորհրդային Հայաստանից ժամանած մեկ այլ հոգեւորական Սիրիայում կազմավորում են կամավորական լեգեոններ, որոնք սովետների ու անգլիացիների դրոշների ներքո պիտի պայքարեն գերմանական բանակի դեմ:

Գերմանիայում հայերի ոչ արիական ծագման մասին պաշտոնապես հարց հարուցվեց: Եվ վերջապես, որպես այդ հակահայկական սադրանքների արդյունք, Բեռլինում պաշտոնապես հայտարարվեց, թե հայերը վերջնականապես անցել են Գերմանիայի թշնամիների կողմը, եւ որ համապատասխան նախարարությունն այժմ Բեռլինում ուսումնասիրում է այդ հարցը, ու եթե պարզվի, որ բոլոր հայերը հակագերմանական տրամադրություններ ունեն, ապա գերմանական կառավարությունը հայերի նկատմամբ կկիրառի առավելագույնս խիստ միջոցներ (հրապարակվել է բուլղարական թերթերում. նայիր 1942թ. Պլովդիվի «Վոլյա» թերթը):

Վտանգի կանխման համար բուլղարա-հայկական մշակութային կոմիտեն (նախագահը պրոֆեսոր Կացարովն էր, փոխնախագահը՝ ես) կազմեց հայերի համար նպաստավոր հուշագիր՝ ստորագրված բուլղարական հայտնի պետական ու հասարակական գործիչների

կողմից, եւ ներկայացրեց Սոֆիայում գերմանական դեսպանատուն:

Այս հուշագրում խոսվում էր հայ ժողովրդի արիական ծագման, մարդկության քաղաքակրթության գործում նրա ունեցած մեծ ավանդի մասին:

Հուշագիրը խնդրում էր Հիտլերին միջոցներ ձեռք առնել, որպեսզի անհնարին դարձվեն հայերի տեղահանություններն ու կոտորածները, որոնք տեղ էին գտել անցած պատերազմում:

Գերմանիայի դեսպանն ու բուլղարական իշխանությունները խորհուրդ տվեցին որեւէ մեկին Բեռլին ուղարկել, որպեսզի նա տեղում անհրաժեշտ բացատրություններ տա եւ հայերին ազատի հրեաների ճակատագրին արժանանալուց: Բուլղարա-հայկական կոմիտեի ու Սոֆիայի հայերի ցանկությամբ, ես մեկնեցի Բեռլին:

8. Հենց սկսվեց գերմանա-սովետական պատերազմը, որպես Բյուրոյի անդամ, Դաշնակցության անունից ասպարեզ ելավ Դրո Կանայանը: Նախ եւ առաջ, նա Բուխարեստում ժողով հրավիրեց, որին մասնակցում էին պատվիրակներ Հունաստանից, Բուլղարիայից: Ժողովին ներկա էին Արամ Հակոբյանը եւ Հակոբ Ինջեյանը:

Այդ ժողովից հետո հայ բնակչության հետ աշխատանքներ տանելու համար Ռումինիայից Բուլղարիա ժամանեց Դրոյի մտերիմ աշխատակից Հովհաննես Դեւեջյանը: Նա սկսեց ցուցակագրել զինվորներին, արհեստավորներին, բժիշկներին եւ այլ մասնագիտություն ունեցողների՝ միաժամանակ տանելով գերմանասեր քարոզչություն: Ռումինիայում ստեղծվեց քաղաքական կոմիտե, որն էլ ձեռնամուխ եղավ դեռ գոյություն չունեցող հայկական կորպուսի համար (որի հրամանատարն էր նշանակված Կանայանը) մեծ գումարներ հավաքելուն: Այս միջոցառումներն իրականացնելուց հետո, Դրոն մեկնեց Գերմանիա, որտեղ շուտով իր գերմանամետ գործունեությանը միացրեց իրեն այնքան հատուկ խարդախությունը:

Իրեն մեծ կշիռ տալու նպատակով, նա սեփական նախաձեռնությամբ անում էր ավելին, քան պարտավորվել էր կատարել քաղաքական կոմիտեն: Նա ժամանակին հաշվի չնստեց Հյուսիսային Կովկասի հայության վիճակի հետ: Ազգային շահի տեսանկյունից՝ Դրոն շարունակում էր ձեռնարկել անազնիվ ու աղետաբեր քայլեր:

Գործակցելով գերմանական որոշ սպաների հետ՝ նա խրվեց խոշոր առեւտրային, թալանչիական գործողությունների մեջ: Դրոն ձեռնամուխ եղավ ոսկու եւ արծաթի հավաքմանը ու միլիոններ կուտակեց: Բացի այդ, որոշ գերմանական հաստատություններում նա ցույց էր տվել կեղծ փաստաթուղթ՝ դաշնակցական բյուրոյի կեղծած ստորագրությամբ: Իմանալով Դրոյի այս մութ մեքենայությունների մասին՝ Արարատյանը ընդհարվեց նրա հետ ու հայտնեց այդ մասին Դաշնակցության Ֆրանսիայի կենտրոնական կոմիտեին, որից հետո վերադարձավ Ռումինիա, հեռա-

ցավ քաղաքական կոմիտեից ու հանդես եկավ Դրո Կանայանի անօրինակ արկածախնդրության դեմ:

Որոշ ժամանակ անց, Դրոյի դեմ հանդես եկավ նաեւ Դաշնակցության Ֆրանսիայի կենտկոմի մեծամասնությունը:

Ինքնապաշտպանության նպատակով, Դրոն Բեռլինում Դաշնակցության երեք շրջանային կազմակերպությունների պատվիրակների մասնակցությամբ նորից ժողով «սարքեց»:

Այդ օրերին, Դրոյին սանձահարելու նպատակով, մենք դոկտոր Հայկ Ասատրյանի հետ ստորագրեցինք ու Արարատյանին ուղարկեցինք (այդ ժամանակ վերջինս դեռ չէր հեռացել Դաշնակցությունից) Կանայանի դեմ ուղղված մեղադրական ակտ՝ սպառնալով փոխանցել այն հանրային դատարանին, եթե Դրոն չվերադառնա արեւելյան ռազմաճակատից: Մեր այս նամակը քաղաքական կոմիտեի անդամ Դավիթ Դավիթխանյանի միջոցով փոխանցվել էր Դրո Կանայանին: Որպեսզի բարձրացնի իր վարկը գերմանացիների մոտ եւ, ունենալով մեզ ու Ս. Արարատյանին նրանց ձեռքով ոչնչացնելու ստոր ցանկություն, Դրոն մեր նամակը հանձնեց էսէսականներին:

Խելահեղորեն տարվելով հարստություն դիզելու ցանկությամբ՝ Դրոն այդպես էլ սանձարձակ մնաց:

Արարատյանը հեռացավ Դաշնակցությունից:

Գ. Տեր-Հարությունյան

(թարգմ. ռուսերենից) *1947թ.*

Հայկական ՍՍՀ ՊԱՆ ներքին բանտ

Գ. ՆԺԴԵՀԻ ՆԱՄԱԿԸ Ս. ՎՐԱՑԵԱՆԻՆ*

Սիրելի Սիմոն,

Գիտեմ, տեսնելով ձեռագիրս՝ պիտի խռովես հոգով: Նժդեհը կենդանի՞, հաւատա՞լ:

- Այո՛, ձայնս գալիս է ոչ թէ գերեզմանից, այլ՝ բանտից, ուր ինձ վիճակուած է ապրել կեանքն ու մահը իրար խառնած, անտրտունջ, քանզի սեփական ձեռքով ես հարթեցի իմ զնդանի ճամբան՝ հաստատելով Արեւելքի հին խօսքը, թէ ամէն մարդ ինքն է կառուցում իր բանտը:

Լսի՛ր, թէ ինչո՞ւ եւ ինչպէ՞ս:

1944-ի աշնան, երբ Կարմիր բանակը գտնւում էր Ռումինիայում, եւ հազարաւորները իրենց քաղաքականապէս վտանգւած համարելով հեռանում էին՝ ես չհեռացայ Բուլղարիայից, թէեւ իդէալական կարելիութիւններ ունէի ուզածս վայրկեանին անցնելու ուզածս երկիրը: Ես մնացի, որովհետեւ պէտք էր մնալ: Մնացի, որովհետեւ շատերի պէս ես էլ կը կարծէի, թէ Կարմիր բանակը պիտի շարժւի Թուրքիոյ դէմ, որով իրականացած կը լինէր մեր ազգային երազը: Կար ե՛ւ այն տանջող միտքը, թէ իմ հեռանալը կարող է պատճառ դառնալ շատերի ձերբակալման: Աւելացնեմ եւ այն, որ հաւատում էի, թէ իմ արած ասպետա-հայրենասիրական քայլը - իմ մնալը - բաւական կլինի խորհրդ. իշխանութեան մոռացնել տալու իմ հակասովետական անցեալը: Ահա՛, մօտաւորապէս, այն դրդապատճառները, որոնք ստիպեցին ինձ մնալ, չհեռանալ: Դժբախտաբար խորհրդ. բանակը չշարժւեց Թուրքիոյ դէմ, եւ հենց դրանով էլ պայմանաւորւեց իմ ողբերգութիւնը: Մի օր, Կարմիր բանակի ժամանումից ամիս անց՝ ինձ հրաւիրեցին խորհրդ. լիգացիա, օդանաւով փոխադրեցին Մոսկուա եւ առաջնորդեցին... բանտ:

Գիտես, սիրելի՛ս, որ կեանքում իմ ուրախութիւնն ու վիշտը մի հատիկ անուն ունէին - Հայաստա՛ն: Երբ կեանքիս մայրամուտին ինձ չյաջողւեց, իբրեւ զօրական, կռւել ու մեռնել հայ հողի համար՝ վճռեցի մեռնել բանտում իբրեւ նահատակ: Այս ապրումներով, 1948-ի ամռան, փոխադրւեցի հեռաւոր հիւսիս: Ուժասպառ էի, բայց ոչ ոգեսպառ: Ապրում էի նահատակի կրքոտութեամբ եւ ուրախութեամբ: Ճիգ էի անում, ինչպէս եւ այժմ, մնալ ոտքի վրայ եւ մեռնել գիրքը ձեռքիս: Այս վիճակում էի, երբ անսպասելիօրէն, որպէս Deus ex machina, յայտնւեց Յովի. Դէւէջեանը - նրան էլ բերին նոյն բանտը եւ նոյն խուցը, որում գտնւում էի ես:

Գիտես, որ տարիներով մենք խորթացած էինք իրարից: Խոր տառապանքը ենթակային ամէն բանից առաջ երես երեսի է բերում ճշմարտու-

թեան հետ: Բաւական եղաւ, որ իրար աչքերում ուրախութեան արցունք տեսնենք, որպէսզի անխօս հաշտւենք, եղբայրանանք:

Եւ, այնուհետեւ սկսեցին մեր անանձնական մտմտուքները: Ի լուր խմորուող նոր համաշխարհային սպանդի - որ կարող է անդարմանելի անդրադարձում ունենալ մեր ժողովրդի ճակատագրի վրայ՝ մենք ե՛ւ խորհրդածում էինք, ե՛ւ տագնապում: Պատերազմ - անյայտութեան թագաւորութիւն է դա: Վաղը կարող են տեղի ունենալ այնպիսի քաղաքական անակնկալներ, որոնք մերօրեայ Մետերնիխների եւ Տալէյրանների մտքով իսկ չեն անցնում: Ի՞նչ կլինի վաղը - չգիտե՛նք:

Սակայն, հաշւի առնելով՝ մարդկութեան պատմութեան մէջ նախընթաց չունեցող թշնամատեցութեան պարոկսիզմի եւ նորահնար զէնքերի իրողութեան փաստը՝ չենք կարող հայօրէն չանհանգստանալ, թէ վաղը մահացուօրէն կարող է աղէտուել Հայաստանը:

Մեկնելով այն իրողութիւններից,

1) որ թրքութիւնը պատմականօրէն հաստատած է, թէ պատրաստ է ամենայն չարիք հասցնելու հայութեան.

2) որ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքին տեղի ունեցան հայկական կոտորածներ, եւ եղեռնագործ ազգը մնաց անպատիժ.

3) որ վերջին պատերազմին միլիոնաւոր հրեաների ջարդը արժանացաւ՝ մարդկութիւն եւ արդարութիւն ծաղրող դատական մի ֆարսի միայն.

4) որ ազգերի միութեան կողմից առնւած որոշումը «Գենոսիդ»ի մասին՝ թելադրւած է այն մտահոգութեամբ, թէ ամբողջ ժողովուրդների ոչնչացումը անհաւանական չէ ե՛ւ վաղւայ պատերազմի ժամանակ.

5) որ մեր երկիրը իր աշխարհագրութեան բերումով նախասահմանւած է վաղը դառնալու ռազմագիտական ակտիւ պլացդարմ կամ ինքնապաշտպանութեան բազա, որով - երկու դէպքում էլ - թշնամու առաջին հարւածը տրւելու է Հայաստանին, եւ որ հարւածողը լինելու է թուրքը՝ իբրեւ զինակից եւ հովանաւոր ունենալով մի շարք զօրաւոր պետութիւններ.

6) որ Թուրքիոյ վճռական մասնակցութիւնը գալիք պատերազմին, նրան վստահւած աւանգարդի դերը, եւ այն, որ նա երեւան է գալու ազգերի միութեան դրօշի տակ - այդ եւ այլ կարգի իրողութիւններ երկիւղի լուրջ հիմքեր են տալիս ենթադրելու, որ շատ հեշտութեամբ կարող է «գենոսիդ» տեղի ունենալ Հայաստանում - կարող է գլխովին ոչնչանալ մեր ժողովուրդը:

Թուրքը փորձեց՝ Առաջին համաշխարհային պատերազմին, բայց չկարողացաւ սեփական ուժերով միանգամից թաղել հայութիւնը եւ իր դատը: Այժմ նա իր հայասպան ծրագիրը պիտի աշխատի իրագործել թէ իր եւ թէ այլոց ձեռքերով:

Ճիշտ է, մեծ են Հայաստանի պաշտպանողական միջոցները, եւ

անսպառ՝ Խորհրդ. Միութեան պոտենցեալը: Այդ այդպէս լինելով հանդերձ՝ պանթուրանական երազներով ապրող Թուրքիոյ ներկայ վճռական կեցուածքը, նրա մահացու թշնամանքը դէպի հայութիւնը, ինչպէս եւ այն պարագան, որ պատմութեան մէջ առաջին անգամ լինելով համընկնում են, համերաշխում քրիստոնեայ Արեւմուտքի եւ Թուրքիոյ շահերը՝ լուրջ հիմք են տալիս խորապէս մտահոգւելու մեր ժողովրդի ճակատագրով:

Մի ափ երկիր, որի վրայ կենտրոնացած է հայութեան 2/3-ը - ահա՛ օրւայ Հայաստանը: Նման վիճակում, պատերազմի ժամանակ, գլխովին չոչնչանալու համար պէտք է կենդանի Արարատ լինել:

Նկատի ա՛ռ - թուրքերը հակախորհրդային օդային ուժերի համար պիտի կատարեն «սրբագրիչ»ի դեր՝ իրենց ուզած ուղղութիւնը եւ օբյեկտները տալով իրենց քրիստոնեայ զինակիցներին: Նրանք պրովոկատիւ հաշիւներով, հազար ու մի մեքենայութիւններով պիտի գրգռեն իրենց զինակիցներին Հայաստանի ու հայութեան դէմ: Օգտւելով առիթից՝ նրանք կաշւից դուրս պիտի գան՝ կործանելու Թուրանի ճամբան կտրող մեր երկիրը:

Նշեմ ե՛ւ այն, որ վաղւայ պատերազմը, լոկ իր գոյութեան փաստով, եւ անկախ պատերազմող կողմերի կշռից ու պատերազմի այս կամ այն ելքից, կարող է անդարմանելիօրէն աղետել մեր ժողովուրդը:

Չպիտի մոռանալ, որ աւելի քան հաւանական է ազգերի միութեան եւ որոշ քրիստոնեայ պետութիւնների անւան չարաշահումը թուրքերի կողմից՝ Հայաստանը կործանելու նպատակով:

1952-ի ամռան, Վանի մէջ տեղի է ունեցել մի հակահայ ցոյց՝ իբրեւ արձագանք Անգարայում եւ Պոլսում կատարւած հայադաւ գրգռութեանց: Այդ առթիւ «Վան Սեսի» թերթը կոչ է ուղղել թրքութեան՝ «ոչնչացնել հայերին մինչեւ վերջին մարդը»: Ըստ այդ թերթի՝ «թուրքերի պանթուրանական երազը կարող է իրականանալ միայն այն ժամանակ, երբ Թուրքիոյ բոլոր անկիւնները կը մաքրւեն հայ ազգաբնակութիւնից»: Ինչպէս տեսնում ես՝ հայերի նոր ջարդի խնդիրը թուրքերը ծեծում են հրապարակաւ - հոգեբանօրէն եւ քաղաքականապէս նախապատրաստում 1915-ի արիւնոտ ռեցիդիվը: Գիտցիր եւ այն, որ թուրքերի սպառնալիքն ուղղւած է ոչ միայն Թուրքիոյ մէջ ապրող հայերի, այլեւ՝ Խ. Հայաստանի դէմ: Վերոյիշեալ թերթը՝ թուրքերին համարելով ուրարտացի, իսկ Խ. Հայաստանի տարածքը՝ բաղկացուցիչ մասը հին Ուրարտական թագաւորութեան՝ ժխտում է հայերիս պատմական իրաւունքը մեր հայրենիքի եւ նախահայրենիքի վրայ: Սխալ կը լինէր Վանի թուրքերի հակահայ ելոյթը համարել իբրեւ սպորադիկ (եզակի, պատահական - *խմբ.)* ելոյթ - դա մատնում է թուրք կառավարութեան եւ զանգւածների ընդհանուր մտայնութիւնը: Ահա՛ թէ ինչու օր առաջ միջազգային հրապարակ պիտի դրւի մեր ժո-

ղովրդի բացառիկ վիճակի խնդիրը: Միայն այսպիսով կարելի է կանխել աղէտը՝ նախապատրաստուող:

Արտաքնապէս հակաթուրք Եւրոպա կար, բայց եւ այնպէս տեղի ունեցան հայկական ջարդերը: Այսօր, երբ այնքան թրքապաշտպան ուժեր կան, ի՞նչ երաշխիք, որ թուրքն իբրեւ պատմութեան ծանօթ ռեցիդիվիստ՝ չի՛ կրկնի իր եղեռնագործութիւնը: Ապա ուրեմն՝ ի՞նչ անել, որ պատերազմի դէպքում նկատի առնւի մեր ժողովրդի անօրինակ աղետւածութեան փաստը (Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ) եւ օրւայ իր բացառիկ վիճակը ու հիւլէականով չռմբակոծւի Հայաստանը...

12 մարտ 1953թ.,
Երեւանի բանտ

---

* Այս փաստաթղթի բնօրինակը տրամադրել է ՊԱԿ պաշտոնաթող գնդապետ Վաչե Հովսեփյանը: Նախկին հետախույզը 1952-53թթ. Երեւանի ներքին բանտում, ծառայողական հանգամանքներում հանդիպել է Գարեգին Նժդեհին, իսկ դրանից շուրջ 40 տարի անց՝ 1992-ին, զորավարին արդարացնելու առիթով, կրկին առնչվել Նժդեհի՝ Հայաստանի ՊԱԿ-ում պահվող գործի հետ:

1946-48թթ. Երեւանում արդեն քննվել էր Նժդեհի «քրեական գործը», եւ 25 տարվա ազատազրկման վճռով զորավարին Վլադիմիր էին տեղափոխել: 1953-ի սկզբին նա կրկին բերվում է Երեւան: Դա, ինչպես վկայում է Նժդեհի բանտակից Հովի. Դեւեջյանը, պայմանավորված էր նրանով, որ Նժդեհը դիմել էր խորհրդային ղեկավարությանը՝ առաջարկելով իր միջնորդությունը Հ.Յ.Դ.-ի եւ խորհրդային իշխանության միջեւ ընդհանուր հասկացողություն եւ հակաթուրքական հողի վրա գործակցություն ստեղծելու համար: Թուրքիայի նկատմամբ մշակվող նոր քաղաքականության պայմաններում՝ ԽՍՀՄ ղեկավարությունը Հայաստանի ՊԱԿ-ին հանձնարարել էր Նժդեհի հետ համագործակցության եզրեր որոնել: Այդ նպատակով պետք է գաղտնի կապ ստեղծվեր Նժդեհի եւ Սփյուռքի հեղինակավոր ղեկավարների միջեւ: Նժդեհը հատկապես ընտրել էր Հայաստանի առաջին Հանրապետության նախկին վարչապետ Սիմոն Վրացյանին, որն այդ տարիներին ապրում էր Բեյրութում եւ ղեկավարում էր ՀՅԴ հետախուզական դպրոցը: Սակայն, քանի որ Նժդեհի եւ Վրացյանի միջեւ ժամանակին տարաձայնություն էր եղել, նամակը

գրվեց այդ ժամանակ Նժդեհի հետ միեւնույն բանտախցում գտնվող սփյուռքահայ գրող եւ դաշնակցական գործիչ Հովհաննես Դեւեջյանի հետ համատեղ, որը Վրացյանի ամենամոտ մարդկանցից էր: Ի դեպ, Նժդեհի եւ Դեւեջյանի հարաբերությունները, մինչեւ բանտում հանդիպելը, կազմակերպական ներքին տարակարծությունների հետեւանքով, խիստ լարված վիճակում էին, եւ միայն բանտում հանդիպելով, ընդհանուր տառապանքի թելադրմամբ հաշտվել են: 1955-ին Դեվեջյանը բանտից ազատվել է եւ 15 տարի հետո գրել իր հայտնի հուշերը Նժդեհի մասին:

Նամակը, որ գրվել է Ստալինի մահվանը հաջորդող օրերին, կարող էր ճակատագրական լինել ե՛ւ զորավարի, ե՛ւ հայության համար, եթե վերստին չփոխվեր Թուրքիայի հանդեպ Խ. Միության վարած քաղաքականությունը: Մոսկվայում նպատակահարմար չգտան նամակն ուղարկել, եւ այն այդպես էլ հասցեատիրոջը չհասավ՝ մնալով որպես պատմական փաստաթուղթ:

Արդ ներկայացված է համատեղ նամակի Նժդեհի գրած հատվածը:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀ (կենսագրական ակնարկ) 3

ԳՐՔԵՐ, ԳՐՔՈՒՅԿՆԵՐ

ԷՋԵՐ ԻՄ ՕՐԱԳՐԷՆ 21

ԲԱՑ ՆԱՄԱԿՆԵՐ ՀԱՅ ՄՏԱՒՈՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ 53

ՈՐԴԻՆԵՐԻ ՊԱՅՔԱՐԸ ՀԱՅՐԵՐԻ ԴԷՄ 74

ՅԵՂԻ ՈԳՈՒ ՇԱՐԺԸ 145

ԱՄԵՐԻԿԱՀԱՅՈՒԹԻՒՆԸ - ՅԵՂԸ ԵՒ ԻՐ ՏԱԿԱՆՔԸ 185

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ 266

ԲԱՆՏԱՅԻՆ ԳՐԱՌՈՒՄՆԵՐ 337

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ՊԱՆԹԵՈՆԸ 408

ԽՈՒՍՏՈՒՊԵԱՆ ԿԱՆՉԵՐ 418

ՀՈԴՎԱԾՆԵՐ, ՆԱՄԱԿՆԵՐ, ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ՃԱՌԵՐ

ԻՆՔՆԱԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ 430

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆԵ՞ՐԸ 435

ՄԵՐ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԵԱՆ ԱՐԱՐԻՉԸ 437

ԱՆԱՐԻՈՒԹԻՒՆԸ - ՄԱՅՐ ՉԱՐԵԱՑ 440

ՕՐԵՐԻ ՕՐԸ 444

ՏԱՐԱԾՈՒՈՂ ԱՆԻՆ 448

ԿԵԱՆՔԻ ՕՐԷՆՔԸ 451

ՀԱՅ ԴԱՍԱԿԱՆ ԱՐԻՈՒԹԻՒՆԸ 457

ԲԱՑ ՆԱՄԱԿ ՄԱՅՔԼ ԱՐԼԷՆԻՆ 461

ԻՆՉՈ՞Ւ ՍՏԵՂԾՎԵՑ ՑԵՂԱԿՐՈՆ ՇԱՐԺՈՒՄԸ 474

ՑԵՂԱԿՐՕՆՈՒԹԻՒՆ ԻԲՐ ՅԱՂԹԱՆԱԿԻ ԶՕՐՈՅԹ 480

ՑԵՂԱՅԻՆ ԱՐԹՆՈՒԹԻՒՆ 490

ՑԵՂԱԿՐՕՆՆԵՐՈՒՆ 519

ԽՕՍՔ ՀԱՅ ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹԵԱՆԸ 522

ՑԵՂԻ ՅԱՒԻՏԵՆԱԿԱՆ ԶԷՆՔԸ 525

ԻՆՉՈ՞Ւ ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ 537

ԶՕՐԱՎԱՐ Գ. ՆԺԴԵՀԸ ՏԱՐՕՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ 552

ՄԵՌՆԵԼՈՒ ԿԱՄՔ 556

ՈՅԺԻ ՊՐՈԲԼԵՄԸ 562

ՄԵԾ ԵՒ ԲԱԽՏՈՐՈՇ ՕՐԵՐ. *ՄԱՅԻՍ 24-28* 564

ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ 568

ԶԱՒԱԿՍ 569

ՀԱՅՐԵՆԻՔ. *ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ* 572

ԺՈՂՈՎՈՒՐԴ ԵՒ ԱՌԱՋՆՈՐԴ 576

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ 581

ՄԵՐ ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴԸ 584

ԱՀԱ՛Ռ ՄԱՐԴԸ (ECCE HOMO) 590

Գ. ՆԺԴԵՀԻ ՆԱՄԱԿԸ ՏՐԱԵԱՆՈՎԻՆ 593

Գ. ՆԺԴԵՀԻ ԴԱՄԲԱՆԱԿԱՆ ՃԱՌԸ
ԼԵՈՊՈՎԻ ԴԱԳԱՂԻ ԱՌԱՋ 596

ՑԵՂԻՄԱՍՏՈՒԹԻՒՆ 599

ԵՐԲ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԸ ՑԵՂԱՍԻՐՈՒԹԻՒՆ ՉԷ 601

ՊԱՏԵՐԱԶՄ՝ ՅԵՂԱՓՈԽՈՒԹԻՒՆ 605

ԵՒ ԶՈՀ, ԵՒ ԶՈՀԱՐԱՐ 613

ՀԱՅՈՒ ՃԱՄԲԱՆ՝ ՄԵԾ ԶՂՋՈՒՄԻ ՃԱՄԲԱՆ 616

ՊԱՏՄՈՒԹԵԱՆ ԴԱՏԱՍՏԱՆԸ 621

ՄԻ ԶԻՆՈՒՈՐԻ ՃՇՄԱՐՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ 628

ՅԵ՞Ղ, ԹԷ՞ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ 630

ԶՕՐ. Գ. ՆԺԴԵՀԻ ԽՕՍՔԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՌԹԻՒ 633

ՄԵԾ ԳԱՂԱՓԱՐ 635

ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ ՄԸ ԶՕՐԱՎԱՐ Գ. ՆԺԴԵՀԻ ՀԵՏ 638

ՀԵՐՈՍԸ ԵՒ ՀԵՐՈՍԱԿԱՆԸ 654

ԱՆՁՆԱՎԿԱՅՈՒԹԻՒՆ 656

ՌԱԶՄԻԿԸ ՉԷ՛ ՄԵՌՆՈՒՄ 660

ՄԵՏԱՊՈԼԻՏԻԿԱ:
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅՈՒՆԸ 662

ԵՐՋԱՆԿՈՒԹՅԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ 669

ՄԱՏՆՈՒԹԻ՞ՒՆ, ԹԷ՞ ՊՐՈՎՈԿԱՑԻԱ 676

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ
ՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ 679

ԴԱՇՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ 691

Գ. ՆԺԴԵՀԻ ՆԱՄԱԿԸ Ս. ՎՐԱՑԵԱՆԻՆ 699